

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1915-1922ԹԹ.



Գ. Չոփրյան



Միանանի



Լ. Թղվադյան



Ա. Չարտարյան



Տ. Չուկոյան



Գ. Կարոնյան



Ի. Ասլան



Երուխան



Ա. Կարապետյան



Տ. Բեկչյան



Գեղինակ՝ ՀԱՅԿ ԳԱԶԱՐՅԱՆ
Խմբագիր՝ Լ.Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

- Քարտեզում բլբերով նշված են՝
- | | | | |
|-----------------|---------------|-----------------|---------------------|
| 1 Դարեվանք | 7 Ալեքսանդրոս | 13 Կապան-Մաղին | 19 Աղբանար |
| 2 Արմաշ | 8 Ռայո | 14 Սր. Գևորգ | 20 Գողգոթ վ. |
| 3 Կաթողիկոսարան | 9 Ազազ | 15 Սր. Միարոն | 21 Սր. Բարդուղիմեոս |
| 4 Այաշ | 10 Ֆրնուզ | 16 Սր. Կարապետ | 22 Սեծովիվանք |
| 5 Մամուրա | 11 Յարվուզ | 17 Սր. Առաքելոց | 23 Կարաբլյես |
| 6 Իսախիտ | 12 Ծմշկաձագ | 18 Նարեկա վ. | |

ՄԱՍՇՏԱՐ 1 : 3 500 000
0 35 70 105 140 175 կմ

- Հայկական վիլայեթներ
- Տրապիզոնի
 - Սրվազի (Սեբաստիա)
 - Երզրումի (Կարին)
 - Խարբերդի
 - Դիարբեքի
 - Բիլիսի (Բաղեշ)
 - Վանի

Քարտեզագիր՝ Գ. Գ. ՍԱՐԳՅԱՆ



Գ. ՉԱՄՈՍ

РОССИЙСКАЯ АКАДЕМИЯ ЕСТЕСТВЕННЫХ НАУК
(Армянский филиал)

ГАЙК КАЗАРЯН

**СЕВРСКИЙ
ДОГОВОР И
АРБИТРАЖНОЕ РЕШЕНИЕ
ВУДРО ВИЛЬСОНА
О РАЗГРАНИЧЕНИИ
ТЕРРИТОРИЙ МЕЖДУ
АРМЕНИЕЙ И
ТУРЦИЕЙ**

ЕРЕВАН 2012

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
(Հայկական մասնաճյուղ)

ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆ

**ՍԵՎՐԻ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ
ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԻ
ԻՐԱՎԱՐԱՐ ՎՃԻՌԸ
ՀԱՅԱՍՏԱՆ - ԹՈՒՐԿԻԱ
ՍԱՀՄԱՆԱԲԱԺԱՆՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԵՊՀ Գրադարան



SU0214382

ԱՎԱՂԵՄԻԿՈՍ
ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆԻ
ՖՈՆԴ

233202

ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյան 2012 թվականի հունիսի 15-ին
Sarkis and Marie Izmirlian Library of YSU
Библиотека ЕГУ им.Саркиса и Марии Измирлианов

СЕВРСКИЙ
ДОГОВОР 1920 ГОДА
И ПРОВОЗГЛАШЕНИЕ
ОБЪЕДИНЕННОЙ И
НЕЗАВИСИМОЙ
АРМЕНИИ

книга первая



ՄԵՎՐԻ
1920 ԹՎԱԿԱՆԻ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ
ՄԻԱՅՅԱԼ ԱՆԿԱԽ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀՌԶԱԿՈՒՄԸ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ



ԽՄԲԱԳԻՐ՝ պատմական գիտ. դոկտոր-պրոֆեսոր Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅԿ ՄԻՐԶԱԶԱՆԻ

Ղ 158 Սևրի 1920 թվականի պայմանագիրն ու միացյալ անկախ Հայաստանի հռչակումը: Հայկ Ղազարյան, գիրք առաջին, Եր. Էդիթ Պրինտ, 2012, 732 էջ:

Սերկա մենագրությունը բաղկացած է երկու գրքից և հանդիսանում է հեղինակի **հիսունամյա** անդադրում աշխատանքի արգասիքը: Դիվանագիտական բնույթի վավերագրերի, թվաշատ ժողովածուների, բազմալեզու հարուստ գրականության, պարբերական մամուլի, ժամանակակիցների մեծաքանակ հուշերի ընծեռած **լեռնակուտակ** ու անժխտելի հետաքրքիր փաստերին կոթնած՝ հեղինակը շարադրել է 1914-1922 թթ. միջազգային հարաբերությունների, ապա այդ ֆոնի վրա ներկայացվող հայ ժողովրդին հուզող, բախտորոշ, բազում խնդիրների պատմությունը: Առանձնակի ուշադրության են արժանացել **Սայքս-Պիկոյի, Փարիզ-Վերսալի, Սան Ռեմոյի և հատկապես Սևրի դաշնագրերը**, այնտեղ ամփոփված այն հողվածները, որոնք վերաբերում են **Հայկական խնդրին և մեծ Հայաստանի սահմանների որոշմանը**: Իր տեսակի մեջ **եզակի**, նախադեպը չունեցող, բազմաբովանդակ ու սովորածավալ սույն մենագրությունը ստեղծելիս նպատակ է հետապնդվել փաստական նյութ տրամադրել դիվանագիտական աշխարհի բարձրաստիճան այն պաշտոնյաներին, որոնք, զինվելով նման վավերագրերով, **ելքուղի** կգտնեն բարդ խնդիրներն առավել դյուրին լուծելու համար: **Նրանք** այսօրվա թուրքերից ու **Թուրքիայից** պետք է պահանջեն 325 հազ. քառ. կմ բռնակցված Հայաստան և 100 միլիարդ ԱՄՆ-ի դոլարի արժեքով բռնազավթած ազգային ունեցվածք: Պահանջատիրությունն անխոցելի դարձնելու մտապահությամբ հայոց պատմության մեջ առաջին անգամ ընթերցողին և դատական ատյանների ուշադրությանն ենք ներկայացնում վերոհիշյալ բոլոր դաշնագրերը, այն էլ աշխարհի հինգ լեզուներով, հատկապես՝ թուրքերենով:

ՀՏԴ 941 (479.25): 32.001
ԳՄԴ 63.3(27)+66.01

ISBN 978-9939-52-509-9

© ՂԱԶԱՐՅԱՆ Հ. Մ., 2012 թ.
Աշխատության կազմը՝ ՎԱՀԱՆ ԶՈՉԱՐԻ

**Երկու գրքին
մեկ
առաջաբան**

- 1 -

Ամփոփելով կես հարյուրամյակում մեր հավաքած լեռնակուտակ փաստերն ու վավերագրերը, 2001 թվականին, այսինքն՝ դեռևս Մեծ եղեռնի 90-ական տարելիցից շուրջ մեկ հնգամյակ առաջ, հրատարակեցինք «Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին» սրվարածավալ մենագրությունը: Ինչպես որ սպասելի էր, աշխատությունն անմիջապես արժանացավ հայ ընթերցողի սևեռուն ուշադրությանը, ոչ միայն արագ սպառվեց, այլև առթեց Հայրենիքին ու հատկապես սփյուռքահայ մտավորականներին մամուլով, թե նամակների միջոցով քաջալերել հեղինակիս, միաժամանակ իրենց սրտի խոսքն ասել ցեղասպանության երևույթի դատապարտման մասին:

Ոգեռված ընթերցողների ջերմ վերաբերմունքից, ոչ միայն անմիջապես վերահրատարակեցինք այդ մենագրությունը, այլև չեռնամուխ եղանք հայ ժողովրդի ցեղասպանության պատմությանը վերաբերող լայնակիրավ մի այնպիսի նոր աշխատության սրելծմանը, որը պետք է տարբերվեր մինչ այդ լույս տեսած տասնյակ ու տասնյակ մենագրություններից, լրացներ այն բացը, որը քաղաքական կոնյունկտուրայի պարճատով մեր ավագ ու փառաբանավոր ընկերները ժամանակին հնարավորություն չէին ունեցել ո՛չ գրելու և ո՛չ էլ հրատարակելու:

Մեծ եղեռնի 90-ամյա տարելիցին ընդառաջ ավարտեցինք «Հայ ժողովրդի ցեղասպանությունն օսմանյան կայսրությունում» երկհատորյակը, որը, այդ գրքի հետագա գրախոսների միաձայն վավերացմամբ, **իր տեսակի մեջ եզակի էր թե՛ ընդգրկումով, թե՛ ամփոփած բազմալեզու, բազմաթեմային (մամուլ, գրականություն, հարկապես՝ արխիվ), նորահայտ նյութերով և թե՛ կառուցման մեթոդաբանությամբ:**

Շարադրված էր ոչ միայն հայ ժողովրդի ապրած ողբերգության, այլև **Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության պատմությունն ընդհանրապես՝ ժայռաքելեր վերցնելով երկիրն օսմանյան թուրքերի կողմից զավթելու պահից, եզերելով քեմալականների ասպատակություններն արդեն Արևելյան Հայաստանում:**

Կրանում: Նպատակը մեկն էր, հատկապես օտար լեզվով ստեղծված ծովածավալ գրականության ընձեռած փաստերով, արխիվային կուսական նյութերով թուրք և եվրոպացի ընթերցողին, հազար ու մեկին լրացուցիչ, մեկ անգամ ևս ապացուցել, թե ցեղասպանությունը Հայոց կյանքում գազաքնակետն էր այն անտանելի սոցիալական շահագործման, ազգային ճնշումների, կրոնական խտրականության, որոնց ենթարկվել էր անպաշտպան արևմտահայությունը **վեց հարյուրամյակ անընդմեջ ու շարունակ:**

Առաջին եզրահանգումն այն էր, որ մահմեդապաշտ այդ ազգն ու իսլամական այդ տերությունն ի սկզբանե անհանդուրժողաբար էր վերաբերվել այլազգի, այլակրոն ու այլալեզու իր հայատակների նկատմամբ, «կթան կովի պես» քամել էր հյուրը վերջիններիս օրգանիզմից՝ վայելելով աշխատանքի պտուղները, միաժամանակ նրանց պահելով ստորացուցիչ կացության մեջ, անարգելով, վիրավորելով մեր ժողովրդի կրոնական ու ազգային զգացումները:

Ելնելով ժողովուրդների բարեկամության պաշտպանության մեր սրբազան սկզբունքներից, այդ թեզի փեսանկյունից հեփագոյությունով փաստերը, չենք կարող չարձանագրել, որ տիրապետող ու հայատակ ազգերի միջև եղած հակասությունները, ավելի ճիշտ՝ հակամարտություններն ու թշնամանքը, չէին սահմանափակվել միայն **թուրք վերնախավի** ու այլահավատ, թուրքահպատակ այլազգիների միջև:

Հայերի, հույների, ասորիների, եզդիների նկատմամբ թշնամաբար էր տրամադրված ողջ իսլամապաշտ ժողովուրդը (բացառությունները չնչին էին, փոքրաթիվ): Մահմեդականների ու քրիստոնյաների միջև թշնամանքը գալիս էր դարերի խորքից և, դժբախտաբար, շարունակվում է մինչև այսօր (**դրա վավերական վկայությունը թուրքական սահմանադրության 301-րդ հոդվածն է, Հրանդ Դինքի դավադիր սպանությունը, Օրհան Փամբուքին և Կ Պոլսի Հայոց Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյան պատրիարքին արված մահվան սպառնալիքները և այլն):**

Մեր մոլորակի վրա ապրող բոլոր ժողովուրդները բարեկամ են, բոլոր վերնախավերն են, որ թշնամանք են սերմանում նրանց միջև: Այս բացարձակ ճշմարտությունը Թուրքիայում չի կիրառվում, թուրքերին չի վերաբերվում: Հայաստանի նկատմամբ անթաքույց թշնամի են և՛ Թուրքիան, և՛ Ադրբեջանը, հայ ժողովրդին ոչնչացնելու, պատմության բեմահարթակից վերացնելու մարմաջով, զառանցանքով են տարված և՛ թուրքերը, և՛ ազերիները: Կես հազարամյակ հարատևող այս երևույթը կոծկվում էր կոմունիստական վարչակարգի յոթ տասնամյակների տարիներին՝ պատմաբաններին հարկադրելով կեղծել իրողությունը, ցույց տալ, որ այդ կառավարությունները մեր եղբայրներն են եղել: **Այնհայտ է, որ Հայաստանի անկախությունից առաջ, հայրկապես Մեծ եղեռնի պատմությանը նվիրված հայրենիքում սրեղծված ողջ գրականությանը պեպք է վերաբերվել քննադատաբար, շարք թեզեր մերժելով, կոթնելով ճշմարտացի փաստերին՝ նորովի շարադրել նոր և նորագույն պատմությունը:**

Առաջնորդվելով վերոհիշյալ սկզբունքներով, սակայն, մենք չենք չգրել թուրքերի ու Թուրքիայի նման թշնամանք սերմանել մեր և մեր հարեանների միջև: Մեր նպատակն է եղել, կրկնում ենք, մեկ անգամ ևս ապացուցել ցեղասպանության գոյության փաստը, Թուրքիային հարկադրել ճանաչելու այդ դա-

ժան իրողությունը, համաշխարհային հանրության արդարամիտ ճնշման ներքո վերանայել այն պայմանագրերը, որոնք կնքվել են զենքի ուժով, ունեն հակահայկական ու հակամարդկային բովանդակություն: Պահանջում ենք փոփոխություն, բայց ոչ պայտերազմի և ոչ էլ արյունահեղության, այլ խաղաղ, արդարամիտ երկխոսության միջոցով միայն:

Մենք պատերազմին ու զոհերին դեմ ենք եղել, այսօր էլ շարունակում ենք երազել հարևան երկու ժողովուրդների միջև խաղաղության դրոշը պարզելուն, սակայն կուտակված խնդիրները լուծելուց հետո միայն, քանզի առանց դրանց այդ խաղաղությունը **շարք պատիկ կյանք ու փիպուն ամրություն կունենա:**

Երկհատորյակը, հատկապես գրքի **երկրորդ** հրատարակությունը պատրաստելիս, ընդառաջելով բազում ընթերցողների արդարացի ցանկություններին, պետք է որ ճշմարտացի ու հստակ արտացոլվեր ցեղասպանության պատմության պարբերացումը: Մեր կարծիքով, ճիշտ են այն պատմաբանները, հատկապես սփյուռքահայ այն հետազոտողները, որոնց դիտարկմամբ՝ հայոց ցեղասպանությունը սկսվել է XIX հարյուրամյակի 90-ական թվականներից, բաժանվել է մեծ ու փոքր **երեք շրջափուլի** և ավարտվել 1922 թվականով միայն:

Գահակալության նախավերջին տասնամյակներին Արդուլ Համիդ սուլթանը, օգտվելով մեծ տերությունների իրար միջև ունեցած, թշնամանքի հասնող հակամարտություններից, կարողացավ ոչնչացնել մայրաքաղաքում ու Արևմտյան Հայաստանում խարսխված շուրջ **300.000 անպաշտպան** արևմտահայությանը: Այն բացարձակ **ցեղասպանություն էր**, տարբերվելով մինչ այդ Թուրքիայում հարատևող, անընդհատական, բայց մասնակի ջարդերից: 1890-ականների հայկական ջարդերը Թուրքիայում մենք բնորոշել ենք իբրև Հայոց ցեղասպանության **առաջին շրջափուլ:**

Չմոռանալով Ադանայի ողբերգությունը (1909), Հայ ժողովրդի ցեղասպանության **երկրորդ**, հիմնական շրջափուլն ընդգրկում է 1915-1918 թվականները, այսինքն այն քառամյակը, երբ երիտասարդ թուրքերը, պետական մակարդակով օգտագործելով Առաջին աշխարհամարտի ընձեռած հնարավորությունները, ձեռարձակ ոչնչացրեցին արդեն **մեկուկես միլիոն արևմտահայերի, հիմնովին հայազրկեցին Արևմտյան Հայաստանը:** Նրանք բռնագաղթեցրեցին **մեկ ամբողջ ժողովուրդ, փիրացան նրա բնօրրանը հանդիսացող պատմական հայրենիքին:**

Ցեղասպանության այս շրջափուլում տիրապետող ազգն ու իշխող կրոնն աշխարհին զարմացրեցին, որ դանակով թե քարով, թնդանոթով թե հրացանով ոչնչացրեցին սեփական հայատակներին, այսինքն՝ **սեփական ժողովրդին**, տեղահանեցին հրաշքով փրկված փոքրաքանակ մարդկանց, սպանեցին Հայոց գեներալները, երեխաներին մղեցին դեպի իսլամի փարախը, կանանց և աղջիկների հետ վարվեցին անասնական անառակությամբ: Միայն ոչնչացումը չէր այս շրջափուլի բնորոշ գիծը, այլ այն իրագործելու բարբարոսական ձևերն ու մեթոդները:

Այստեղ էր, որ երևաց, թե մարդը մարդու հետ ավելի զազանաբար է վարվում, քան թե զազաններն՝ իրար: Չայրացկուտ մեր այս արտահայտություններն արդյունք են այն նյութերի ընթերցման, որոնք մեզ են թողել Մեծ եղեռնի ականատեսները, հատկապես օտար թղթակիցներն ու դիվանագետները:

Յեղասպանության ոչ պակաս ծանր ու ոչ պակաս ողբերգական **երրորդ շրջափուլն** իրականացվեց Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, ավելի կոնկրետ՝ 1919-1922 թվականներին: Հատկանշականն այն է, որ այդ տարիների պատմության մասին շատ քիչ է գրվել, նույնիսկ չի գրվել, քանզի խնդիրներն առնչվում էին Վ. Ի. Լենին, Իոսիֆ Ստալին – Մուստաֆա Քեմալ, Քյազիմ Կարաբեքիր փոխհարաբերություններին: Մոսկվան դրանք համարում էր վտանգավոր, այդ պատճառով էլ փաստաթղթերն ընդարմացնում էր արխիվային այնպիսի ֆոնդերում, որոնք, ունենալով «Сoвeршeннo сeкрeтнo» մակագրություն, չէին տրամադրվում հետազոտողներին: Հակառակվողները կամ պատահականորեն հոսանքի դեմ գնացողները պատժվում էին «օրենքի խտությունը», ընդհուպ մինչև կուսակցության շարքերից վտարումը կամ սիբիրյան սառնամանիք արտաքսվելը:

Հայաստանում քիչ թվով, բայց և այնպես եղան ճշմարիտ խոսք ասողներ, ենթատողերով արտահայտվողներ, որոնք հարկադրված վայր դրեցին ՄՍԿ անդամության տոմսը: Բարեբախտաբար, դրանց թիվը մեծ չէր:

Քանի որ հիմա արդեն բացվել են Երևանի, Մոսկվայի և Մանկոտ Պետերբուրգի արխիվների **գաղտնագրված ֆոնդերը**, պատմաբաններն արդեն կարող են ծանոթանալ մինչ այդ փականքի տակ դրված փաստաթղթերին, ուստի քիչ ավելի հանգամանորեն անդրադառնանք այս շրջափուլի պատմությանը, կատարելով հատկապես սիյուռքահայերից ստացված մասնակների հեղինակների պահանջները մեզանից:

Առաջին աշխարհամարտն ավարտվեց գերմանա-թուրքական խմբավորման խայտառակ պարտությանը, 1918 թ. օգոստոսի 30-ին: Թուրքական կողմի խնդրանքով զինադադարի բանակցությունները սկսվեցին Ամտանտի տերությունների, հատկապես անգլիական հրամանատարության հետ և ավարտվեցին հոկտեմբերի վերջին:

Թուրք-Դաշնակիցների միջև ռազմական գործողությունները դադարեցվեցին հոկտեմբերի 30-ին, հինգշաբթի օրվա ժամը 15-ից: Մինչ այդ թուրքերն ահ ու սարսափի մեջ էին: Նրանք կարծում էին, որ նախկինում գործած ծով մեղքերի համար Դաշնակիցների հաղթական բանակը կմտնի մայրաքաղաք և իրենց հետ կվարվի այնպես, ինչպես իրենք վարվեցին Բյուզանդական կայսրության հետ 1453 թ. մայիսի 26-29-ը: Դժբախտաբար, թե բարեբախտաբար, քրիստոնյա Եվրոպան մնաց իր բարձրության վրա, բարբառոտությանը պատասխանեց քաղաքակիրթ եղանակով:

1918 թ. հոկտեմբերի 30-ին կատարվեց երկու կարևոր իրադարձություն: Նախ Լեմնոս կղզու **Մուդրոս** նավահանգստում անգլիական «Ազամեմնոն» գրահանավի վրա ստորագրվեց թուրք-անգլիական զինադադարի պայմանագիրը, որը պատմության մեջ մտավ **Մուդրոսի զինադադար** անունով: Նույն օրն անգլիական հրամանատարությունը, սպիտակաբաշ ձիեր հեծած, քառատրոփ քայլերով անցավ Ստամբուլի (վերանվանված Կոստանդնուպոլսի) փողոցներով:

Փաստորեն Թուրքիայի համար պատերազմն ավարտվեց նախավերջին սուլթանի և երկրից ճողոպրած երիտթուրքական շնագայլերի կարծածից ավելի

«թեթև» տարբերակով: Լռեցին թնդանոթները, սկսեցին գործի անցնել դիվանագետները՝ ձեռներին բռնած գծագրական դաժան գործիքները, որոնք առանց ծանր ու թեթև անելու վերագծում, «վերադասավորում» էին պարտված երկրների, հատկապես Թուրքիայի քարտեզը: Նրանք այս դեպքում ելակետ ունեին ոչ թե անհրաժեշտությունն ու արդարամտությունը, այլ յուրաքանչյուրը յուրովի կանխամտածած սեփական շահերը, որոնք իրողության վերածելու ակնկալիքով էլ չորս տարի առաջ մտել էին այդ դժոխքի հորձանուտների մեջ:

Ճարճատվելով կոտրվում էր թուրքական պետական մեքենայի առանց այն էլ հնամենի մեխանիզմը, որը դարեր շարունակ այդքան վիշտ ու տառապանք էր պատճառել ոչ միայն հարևան բազում երկրներին, այլև այլախավատ սեփական ժողովուրդներին՝ **հայերին, հույներին, ասորիներին, եզդիներին**: Ի պատասխան այդ ամենի, Եվրոպայի ու Ամերիկայի առաջավոր մարդիկ թուրք ղեկավարությունից պահանջեցին դատել զոհն այդ տասնամյակի ցեղասպանության մասնակիցներին:

1919 թ. փետրվարին Մեհմեդ Զ վերջին սուլթանի հրամանով սկսվեց հայկական ցեղասպանության մեղավորների դատավարությունը: Պրոցեսը ղեկավարում էր գեներալ Մուստաֆա Նազըմ փաշան: Շուրջ հինգ ամսվա դատական միատերից հետո, հուլիսի 5-ին, **թուրքական, կրկնում ենք, թուրքական զինվորական դադարանը, թուրք դատավորների, դադարանի թուրք անդամների, թուրք դատապաշտպանների մասնակցությանը վճիռ կայացրեց**: Ըստ այդ որոշման՝ իբրև ցեղասպանության կազմակերպիչներ ու գլխավոր հանցագործներ, հեռակա կարգով **մահվան դատապարտեցին** ներքին գործերի մինիստր, ապա մեծ վեզիր Մեհմեդ Թալեաթին, ռազմական մինիստր Էնվերին, ծովային մինիստր Ջեմալին, երիտթուրքական կուսակցության գլխավոր քարտուղար դոկտոր Նազըմին և այլոց:

Այս որոշումը (որը բնագրով մենք հրատարակել ենք թուրքերենով լույս տեսած մեր մենագրության երկրորդ մասում) այլևս կասկած չի թողնում, որ ի տարբերություն այսօրվա «նոր թուրքերի», «հին թուրքերը» ժամանակին ընդունել են իրենց ծովացած մեղքերը, դատապարտել ցեղասպանության կազմակերպիչներին ու գլխավորներին՝ հրապարակայնորեն **ներողություն խնդրելով ողջ հայ ժողովրդից**:

– 2 –

1967 թվականին **Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի** գիտահրատարակչական խորհրդի (ՊՈՇՕ) որոշմամբ, **պատմության ինստիտուտի** գիտական խորհրդի երաշխավորությամբ լույս աշխարհ եկավ «Արևմտահայերի սոցիալ-փնդեասական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ.» վերտառությունը կրող մեր ծավալուն (672 էջ) մենագրությունը: Գիրքն իր տեսակի մեջ եզակի էր, դրա համար էլ ոչ միայն արժանացավ **համազգային ուշադրության**, այլև հիմք ծառայեց մեր դոկտորական դիսերտացիայի պաշտպանության համար:

Ուշագրավն այն էր, որ ինչպես մինչ այդ, այնպես էլ մեր մյուս աշխատություն-

ները բարձր գնահատականի արժանացան ինչպես Մայր Հայրենիքում աշխատող կոմունիստ գրախոսողների, այնպես էլ Մփյուռքում խարսխված **«ՀԳ կուսակցության, Հնչակյաններ և Ռամկավար մրավորականների կողմից»** Մեր գործերը դրվատեցին կոմկուսի Կենտկոմի օրգաններ **«Լենինյան ուղիով»**, **«Մովեկական Հայաստան»**, **«Коммунист»** պարբերականների խմբագրությունները, ինչպես նաև ՀՀԿ կուսակցության կենտրոնական օրգաններ **«Հայրենիք»**, **«Բազին»**, **«Ազդակ»** ամսաթերթերը:

Ահա թե 1967 թվականին ինչ է գրում Հայկոմկուսի կենտրոնական օրգան **«Լենինյան ուղիով»** ամսագիրը Ղազարյանի **«Արևմտահայերը...»** ծավալուն (42 մամուլ) աշխատության մասին. «Հ. Ղազարյանի աշխատությունը անվիճելի նվաճում, երևույթ է մեր պատմագիտության մեջ: ...Սակայն հեղինակը հազար անգամ իրավացի է, որ այսօր, առավել քան երբևէ, հրամայական պահանջ է դարձրել գիտական ու գաղափարական հիմնավոր պայքար մղել հակառակորդների (թուրք պատմաբանների) դեմ, **ապացուցել մեր ճշմարտագիտությունը**: Մենք կարծում ենք, սակայն, որ մեր ճշմարտությունը մեզ համար ապացուցելը դեռևս քիչ է: Հարկ է, որպեսզի աշխատությունը, որը լիովին պատասխան է տալիս առաջադրված խնդրին, լույս ընծայվի ռուսերեն, որպեսզի ռուսաց լեզվի միջոցով մեր ճշմարտագիտությունը հասնի բովանդակ առաջադեմ մարդկությանը» (**«Լենինյան ուղիով»**, 1968, հունվար, էջ 103):

Զարմանալի է, բայց փաստ, որ վերոհիշյալ մենագրությունը (**կոմունիստ Աշոտ Հովհաննիսյանի խմբագրությամբ**) ամենաբարձր գնահատականի արժանացավ Բեյրութում լույս տեսնող ՀՀԿ կուսակցության կենտրոնական օրգան **«Բազին»** ամսագրի կողմից, որի խմբագրական կոլեգիայի անդամներն էին **Սիմոն Վրացյանը, Կարո Մասունին** և այլք: Վարիչ խմբագիրն էր **Կարո Մասունին**, ընդարձակ գրախոսության հեղինակն էր **«Լ. Մ.»** ստորագրած անձնավորությունը: Ահա մի քանի հատվածներ այդ գրախոսությունից. **«Ղազարյանի աշխատությունն իր փեսայի մեջ առաջինն է, որտեղ բազմակողմանիորեն ներկայացվում է արևմտահայության համարյա մեկ դար ժամանակաշրջան ընդգրկող պարամությունը»** (**«Բազին»**, 1969, փետրվար, էջ 36):

«Անտարակույս, Ղազարյանի աշխատությունն այն գրքերից է, որոնք արժանի են ոչ միայն ռուսերեն, այլև եվրոպական կարևոր լեզուներով քարոզման վերջ: Եվ այդ գործն այսօրվա հայության համար, կարծում ենք, որևէ էական դժվարություն չի ներկայացնում (մենք այս դեպքում նկատի ունենք թե՛ Հայաստանի և թե՛ Մփյուռքի ուժերը միասնաբար)» (**«Բազին»**, էջ 76-77):

Ծավալուն գրախոսականի հեղինակը, արտահայտելով իր կուսակցության կենտրոնական մարմնի կարծիքը, եզրափակում է. **«Եվ այսպես, Երևանում տպվեց մի ուշագրավ պատմագիտական աշխատություն... որը պատկանում է երիտասարդ գիտնական Հայկ Ղազարյանի գրչին: Մենք ցանկացանք ընթերցողի ուշադրությունը հրավիրել այդ գրքի վրա, անել որոշ խորհրդածություններ և մեր ձայնը գունարել նրանց ձայնին, ովքեր անկեղծորեն հաստատում են, որ Ղազարյանը լավ գործ է կատարել, շնորհակալության արժանի գործ:**

Նման գործերի գոյությունն իսկ պերճախոս վկայություն է, որ չի կարելի մշտապես փակել մի ամբողջ ստեղծագործ ժողովրդի բերան, չի կարելի կենդանի

ժողովրդի սրտից հիմնովին հանել կենսական ազատության և ուղեցույց ճշմարտության սերը, մարել իր արժանիքներին գիտակից հպարտության զգացումը, խորտակել բարբարոսների կամքին չհպատակվելու բնատուր ոգին: Ղազարյանի աշխատությունը, որքան էլ ջանանք խուսափել պաթոսից, այսպիսի դեպքերում, վերջիվերջո, ամեն ինչ պաթոս է դառնում, **հաշվողականության, գեղնաբարձության, ամեն ինչին ծափահարելու զգվելի սովորության մերժումն է, սիրո և խղճի գործ, կորույթի և հոգևոր խոյանքի արտահայտություն: Ուստի փեղին է հանչնարարել՝ «կարդացեք և փարսածեք»** (**«Բազին»**, էջ 79): Այստեղ է, որ պետք է ասել՝ **ավելին ավելորդ է»**:

Եվ այսպես, դեռևս կես դար առաջ հարցը հասունացել էր՝ Հայոց ցեղասպանության պատմությանը վերաբերող օտար լեզուներով աշխատություններ ստեղծելու: Ռոմանտիկներն օրորվում էին այն **«վառ երազներով»**, թե Հայրենիքն ու Մփյուռքը, ձեռք ձեռքի տված, անպայման կլուծեն հույժ կարևոր և այժմեական այդ խնդիրը: Ինչպես գիտեք, այդպես չեղավ: Բայց մենք էլ չնոռացանք ժամանակին մեզ **փրված հանչնարարականը**:

Ամփոփենք. վավերագրական ամուր հենքին կոթնած, հատկապես նորահայտ փաստերով զինված, մենք ստեղծեցինք և հայ ընթերցողի դատին ներկայացրեցինք ներկա մենագրության **երրորդ ծնունդը**, որը երեք անգամ խմբագրված լինելով հանդերձ, սպասում է իր արդարացի և անկողմնակալ գնահատողների նոր շարասյանը:

Մեծամտությամբ երբեք չենք տառապել, խոսելուց և գրելուց առաջ աշխատել ենք ունկնդրել մասնագիտական գնահատումներին, բարյացակամ, երբեմն էլ կողմնակալ անձանց դիտողություններին: Այժմ էլ այն կարծիքին ենք, որ մենագրությունն այս վիճակում էլ կունենա թերություններ, զրքում տեղ գտած կլինեն վրիպումներ: Նախ աշխատության հսկա ծավալը, **ապա իմ մենակ աշխատելն ու պատկանելի փարիքը չեն բացառում նման թերությունների առկայությունը**: Այս դեպքում ևս իմ բարեկամն ու **օգնողներն ընթերցողներն են**, որոնց մատնաչափ անճշտություններին, հայտնած ցանկություններին, հույս ունենք, կանդրադառնանք հաջորդ հրատարակության ժամանակ:

Եվ այսպես, հայոց լեզվով մեր մենագրությունների հրատարակման և վերահրատարակմանը զուգընթաց մենք փորձեցինք ձեռնարկել **մեկ այլ, ոչ պակաս հանդուգն ու բարդ, առավել աշխատառատ, միաժամանակ նյութական մեծ գրողություններ պահանջող խնդրի լուծումը**: Այդ այլևս անհետաձգելի խնդիրը ցեղասպանության մասին **սկզբում մեկ, քիչ անց նաև մի քանի օրսար լեզուներով աշխատությունների սրբեղծումն էր, որոնց կարիքն այսօր, առավել քան երբևէ, զգացվում է**:

Բանաչեհներ, մինչև մեր աշխատությունների լույս աշխարհ գալն օտար լեզուներով որևէ այնպիսի ծանրակշիռ մենագրություն չի հրատարակվել, որը կարողանար մյուս ժողովուրդներին լիարժեք պատկերացում տալ հայկական նման գողգոթայի վերաբերյալ: Չենք մոռանում իհարկե ԱՄՆ-ում և հատկապես Ռու-

ասատանում լույս տեսած մի քանի գրքերը, որոնք այսօր էլ դեռևս անծանոթ են մնում (տպաքանակը շատ փոքր լինելու պատճառով) նույնիսկ հայրենիքի ընթերցողներին:

Նվիրական այդ աշխատանքն սկսեցինք **ռուսաց լեզվով** մենագրության ստեղծումից: Երկարատև մտորումներից հետո միայն հանգեցինք այն եզրահանգմանը, որ ռուս ու ռուսալեզու ընթերցողներին ոչ թե պետք է ներկայացնենք երկհատորյակն ամբողջությամբ, այլ նյութը **խարացնենք, վերաշարադրենք և մատչելի լեզվով հրատեղենք նրանց**: Գրքում միաժամանակ զետեղեցինք նորահայտ բազմաթիվ վավերագրեր, որոնք գուցեև օգտագործվեն Հայկական հարցը միջազգային դատարանում քննարկելու ժամանակ (**միշտ է, ռուսներին է, բայց մենք հավատում ենք նրան**):

Եվ այսպես, 2004 թ. հունվարին Ռուսաստանի Բնական գիտությունների Ակադեմիայի (հայկական մասնաճյուղ) մակնիշով լույս տեսավ «Геноцид армянского народа в Османской империи» մեր աշխատությունը (412 էջ ծավալով)՝ համապատասխան քարտեզներով և հեղինակագրված այն նկարներով, որոնց տեղերը՝ լինելով պետական ու քաղաքական, համաշխարհային մակարդակի մեծություններ, այցելել էին **Ծիծեռնակաբերդը**, գրառման մատյանում իրենց ձեռագրով դատապարտել ցեղասպանությունն ու ցեղասպաններին:

Աշխատությունն անմիջապես իր վրա հրավիրեց և՛ մասնագետների, և՛ հրապարակախոսների, և՛ հատկապես ռուսախոս լայն ընթերցողների սևեռում ուշադրությունը: Մամուլի բազմաթիվ օրգանները, հայալեզու և մասնավորապես ռուսալեզու հայկական ու օտար պարբերականները դրվատանքի շուրջ խոսքեր պարունակող գրախոսականներ զետեղեցին իրենց էջերում (դրանց մի մասը տեղադրել ենք երկրորդ հատորի հավելվածում): Խնդրին անմասն չմնացին ռադիոն և հեռուստատեսությունը: Մենագրությունը ջերմ ընդունելության արժանացավ Մոսկվայում: Այն, նախ, մեծ լսարանով քննարկվեց Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ակադեմիայի **ընդհանուր պատմության ինստիտուտում**, որի տնօրեն, ակադեմիկոս **Ա. Օ. Չուբարյանը** հատուկ կարծիք ուղարկեց մեզ, որը նույնպես զետեղել ենք աշխատության վերջում: Պակաս դրական չէր **Ռուսաստանի Միջազգային հարաբերությունների ինստիտուտի (МГИМО) կարծիքը**:

Աշխատությունն անձամբ հանձնել են Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ակադեմիայի նախագահին, Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի համալսարանի ռեկտորին, նույն բուհի մասնագիտական 12 ամբիոններին, նույնիսկ՝ ուսանողական խորհրդի նախագահներին ու անդամներին: Գիրքը՝ մակագրությամբ, ցեղասպանության քանգարան-ինստիտուտում հանձնվեց Ամենայն Ռուսիո և Մոսկվայի պատրիարք **Ալեքսի Երկրորդին**, Ռուսաստանի նախագահներ **Բ. Ն. Ելցինին**, **Վ. Վ. Պուտինին**, **Դ. Ա. Մեդվեդևին**, արտաքին գործերի նախարար (ծագումով հայ) **Ա. Ի. Լավրովին**, դիվանագիտական բազմաթիվ այլ աշխատողների, որոնք այցելել էին Ծիծեռնակաբերդ և հարգանքի տուրք մատուցել անմեղ զոհերի հիշատակին: Մեր կարծիքով, գիրքն իր նպատակին ծառայեց, քանզի նրա շուրջ 600 օրինակներն էլ խանութներում վաճառվեցին և հասան իրենց հասցեատերերին:

Ռուսալեզու մենագրության ոչ անսպասելի հաջողություններից ոգևորված,

մենք փորձեցինք մի հանդուգն քայլ ևս կատարել, այսինքն՝ բավարարել անգլերենով ընթերցող բազմամիլիոն հետաքրքրասերների պահանջները: Այո, դա դժվար էր, քանի որ **գիրքը ոչ թե սուսկ քարզմանություն պիտի լիներ ռուսերենից, այլ նոր մենագրություն, բոլորովին նոր փաստերով ու փաստաթղթերով համեմատ**: Մենք շարադրեցինք մի աշխատություն, որը կհետաքրքրեր **և՛ անգլիացուն, և՛ ամերիկացուն**: Այնտեղ զետեղված փաստերի մեծ մասը քաղեցինք այդ երկրների ու ժողովուրդների ժամանակի մեծերի աշխատություններից, մեծերի, որոնք թուրքական բարբարոսության ականատեսն ու դատապարտողն են եղել, զորավիգ են կանգնել յաթաղանով հնձված ժողովրդի հրաշքով փրկված, բեկորացված գաղթականներին, հազարավոր ու հազարավոր ծնողակորույս որբերին: 2005 թ. կեսերին անգլերենով **քարզմանաբար** լույս տեսավ մեր հաջորդ մենագրությունը՝ «The Genocide of the Armenian people in the Ottoman Empire» խորագրով:

Անգլերենի կարիքը վաղուց էր զգացվում, այսօր էլ զգացվում է, քանի որ խորամանկ Ալբիոնը, նստած Թեմզայի մառախլապատ ափերին, դեռևս լռում է և չի սատարում ցեղասպանությունը դատապարտողներին: Ոչ պակաս, նույնիսկ առավել դատապարտելի է օվկիանոսի մյուս երեսին փռված գերտերության նախագահների, այո, նախագահների երկերեսանի խոստումնազանցությունը, որը շատ ծանր է նստում ոչ միայն այդ երկրում ապրող շուրջ մեկուկես միլիոն հայերի, այլև ողջ հայ ժողովրդի ուսերին:

Ցեղասպանության դատապարտման խնդրում ԱՄՆ-ի նախագահների դիրքորոշումից դժգոհ ենք ոչ միայն մենք՝ հայ հասարակայնությունը, ամերիկահայությունը, այլև բուն **Ամերիկայի ժողովրդի սրվար հայրվածը**: Դրա առհավատչյան Կոնգրեսում խնդրի քննարկումներն են, կոնգրեսականների մեծ մասի արդարախոս ելույթները, ի վերջո՝ դրանց սառեցումը նախագահների վետոյի իրավունքով:

Միս թե ինչու մենք այսպեղ էլ բռնեցինք առճակարման ճանապարհը: 2005 թ. հուլիսին անգլերենով հրատարակված (335 էջ) մեր հերթական աշխատության էջերում ընդհանրացված տեսքով ներկայացրեցինք հայոց պատմության համառոտ շարադրանքը սկզբից մինչև XX դարամուտը: Դրանով անգլախոս տերությունների նորարոյս ղեկավարությանը հիշեցրեցինք, որ մենք հին ազգ ենք, չար հին ժողովուրդ ենք, և ոչ ոք իրավունք չունի անտեսելու մեր իրավունքները, առավել ևս մեզ զրկի ապրելու, հարստեղելու հնարավորություններից: Մեր խնդիրը, սակայն, ցեղասպանության պատմության համառոտ շարադրանքն էր, որպեղ ընդգրկված զնգացող փաստերն ու առաջադրվող պահանջարկությունը հնչում են անբարբերության ախտով փառապող պետական այրերի քանչրաքաղանք ականջներին, նրանց մղում քաղաքական կոնյունկտուրայի երեսյթներից չերբազարվելու մարդահանձ գործողությանը:

Աշխատության առաջին հրատարակության շուրջ 700 օրինակները խլխլվեցին, անմիջապես սպառվեցին թե՛ Հայաստանում և թե՛ հատկապես հայկական Մփյուռքում: Մեկ տարի չանցած, մենք ուրախությամբ **վերահրատարակեցինք** անգլերեն մենագրությունը, նրա երկրորդ հատվածում զետեղելով շատ արժեքավոր բազմաթիվ վավերագրեր: Կարծում ենք, ի վերջո, ԱՄՆ-ը և նրա ձայնավողը

դարձած Միացյալ Թագավորությունն իրենց վատ կզգան, երբ կարդան ցեղապանությունը ճանաչած և դատապարտած 25 այն երկրների բարձրագույն ատյանների որոշումները, որոնք անհամբերությամբ Թուրքիայից պատասխանի են սպասում:

Պակաս ապտակ չեն Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան (1914-1917 թթ.) **Հենրի Մորգենթաուի** սաստող կոչերն օսմանյան սուլթանին ու կառավարությանը, ժամանակի նախագահ **Վուդրո Վիլսոնի** 1920 թ. նոյեմբերի 22-ի ելույթը, Սևրի (1920 թ. օգոստոսի 10-ի) պայմանագրի բնագիրը, որն ստորագրել են և՛ ԱՄՆ-ը, և՛ Անգլիան, զավեշտական է, նաև օսմանյան Թուրքիան: Մեր նպատակն է եղել անգլերեն գրքով կոչ անել այդ երկրներին պաշտպանելու ոչ թե Թուրքիային, այլ պատմական իրողությունը: Ամերիկայում խարսխված Հայ դատի ներկայացուցիչներին օգնելու նպատակով մեր մենագրության բազմաթիվ օրինակներ ուղարկեցինք Նահանգներ: Դիվանագիտական հայ աշխատողների միջոցով մենք տեղեկացանք, որ այն հասել է **Քիլ Քլիմպոնին**, հայր և որդի **Քուլչերին**, սևամորթ ու սպիտակամորթ պետական քարտուղարներին, 50-ից ավելի այն կոնգրեսականներին, որոնք մեր բարեկամներն են և կողմնակիցը ցեղասպանության ճանաչման գործում: Գիրքը նվիրել են Վաշինգտոնի ցեղասպանության պատմության ինստիտուտի տնօրեն պրոֆ. **Վահագն Դադրյանին**, Կալիֆորնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ պրոֆ. **Ռիչարդ Հովհաննիսյանին**:

Անգլերենը, լինելով միջազգային լեզու, ունենալով շատ ընթերցողներ, հեշտությամբ տարածվեց աշխարհով մեկ: Գիրքն ուղարկել են Անգլիայի **Եդիսաբեր** թագուհուն (փոստով), Լորդերի պալատի 15 անդամներին, արտաքին գործերի իրար հաջորդող երկու նախարարներին: Երկու օրինակ փոստով ուղարկել են **Քենթրիջի համալսարանի գրադարանին**: Ինձ (Մոսկվայում) պատասխանել են գրքերը հասցեատերերին հանձնելու մասին, քանզի առաքումը կատարվել էր ցպահանջ: **Աշխատությունն անչամբ նվիրել են Հայաստանում Գերմանիայի դեսպան, բարեբախարար, մասնագիտությանը պատմաբան Անդրեա Վիկտորին, որի հեղու ունեցած երկժամյա գրույցն ինչ բավարարեց, քանզի նա դատապարտեց ցեղասպանության փաստը և խոստացավ հեղու, մեկ անգամ ևս հանդիպել և գրուցել այդ մասին:**

Գիրքը ժամանակին ուղարկել են (անչամբ) Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան Չոն Էվերսին և կարծում են, որ նրա հայանպասպ ելույթի գործում աշխատությունն անպայման իր դերը կատարած կլինի: Հայաստան ժամանելու փաստերորդ օրը մենագրությունն իմ մակագրությամբ ուղարկել են ԱՄՆ-ի նոր դեսպան Մարի Յովանովիչին:

Հանրապետության գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանը 30 օրինակ գիրք վերցրեց ինչանից և իր հեղու փարավ Մյուլենիա: Վերադարձին նա ինչ անչամբ ասաց, որ անգլալեզու գրքերը պակաս դեր չխաղացին Մյուլենիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում:

Հանրահայտ է, որ հանրապետություն մտնող աշխարհի բոլոր կամ գրեթե բոլոր մեծամեծ պաշտոնյաները, իբրև կանոն, գնում են Եդեռնի հուշարձան, ապա գրառումներ կատարում հուշամատյանում: Այդ խոշոր գործիչները ոչ միայն եղևնի են տնկում հուշարձանի պուրակում, այլև ինստիտուտի այն ժամանակվա

տնօրեն Լ. Բարսեղյանից, իբրև նվեր, ստանում համապատասխան գրականություն: Այդ նվիրատվությունների մեջ 2005-2006 թթ. առաջինը եղել է մեր անգլալեզու մենագրությունը: Այսպիսով, ոչ լրիվ և ոչ ամբողջապես մեզ բավարարելով, բայց և այնպես Հայկ Ղազարյանի անգլերեն գիրքը կարծեք թե իր նպատակին մասամբ ծառայել է և շարունակում է ծառայել: Ավելին անել չէինք կարող...

Ֆրանսիան հայ ժողովրդի և Հայաստանի ամենաջերմ բարեկամն է: Ֆրանսահայ գաղութը թերևս ամենաուժեղն է Սփյուռքում: Դրա առհավատյան են աշխարհահռչակ երգիչ **Շառլ Ազնավուրի** հնչող ձայնն աշխարհի բեմերում, իրար հերթափոխող հայ նախարարների պաշտոնավարությունը Ֆրանսիայի կառավարության կազմում, Ազգային ժողովի մերագգյա անդամները, որոնք հայ համայնքի գլուխն անցած՝ կարողացան հեղափոխական այդ երկրից ստանալ ամենաարմատական որոշումը Հայոց ցեղասպանության դատապարտման մասին: Այդ բոլորն ի նկատի ունենալով հանդերձ, 2005 թ. մենք ֆրանսերենով հրատարակեցինք մեր «Le Genocide du peuple Armenien dans l'Empire Ottoman» գիրքը (278 էջ), որը նույնպես արագ տարածվեց Ֆրանսիայում և արտասահմանյան ֆրանսախոս շատ երկրներում:

Նախ, պաշտոնական փարսածումը 2006 թ., երբ հանրապետության նախագահի գլխավորած պատվիրակությունը Ֆրանսիա էր մեկնում, Ռ. Ս. Քոչարյանի աշխատակազմի ղեկավարի, իր ասելով, նախագահի խնդրանքով **փաստ** օրինակ ֆրանսերեն լեզվով գիրք ինձնից վերցրեց: Իբրև նվեր (այսինքն՝ անվճար) ուղարկած իմ գրքերից Ֆրանսիայի նախագահի օրինակը գեղեցիկ ձևավորումով են մակագրել, ապա ճշգրտված իմացել են, որ հայոց նախագահը հանձնել է Ֆրանսիայի նախագահին: Մնացած օրինակները բաշխվել են ֆրանսիացի բարձրաստիճան մյուս պաշտոնյաներին: **Այս մի փաստը միայն բավարար էր հայ պատմաբանիս համար, երբ իմ աշխատությունը բազմաթիվ չեղքով հանչնվում էր բազմաթիվին: Բայց ոչ միայն այդ...**

2006 թ. մայիսին մեր գրքից 50 օրինակ գնեցին Հայաստանում Ֆրանսիայի դեսպանն ու դեսպանության աշխատողները ոչ միայն իրենց համար, այլև ուղարկեցին Փարիզ: 2008 թ. նոյեմբերին Ֆրանսիայի նոր դեսպանն ու նրա նոր աշխատակիցները ևս **փաստ** օրինակ գիրք գնեցին ինձանից, իսկ թե ինչքա՞ն են գնել գրախանութներից՝ հայտնի չէ... Պաշտոնականից զատ, գիրքը նվիրել են աշխարհահռչակ երգիչ, մեծ հայ, հայրենամուկեր հայ, Հայ դատի անփոխարինելի պաշտպան **Շառլ Ազնավուրին (որը Երևանում էր Ժակ Շիրակի հեղու)**, ֆրանսիական պատվիրակության կազմում Երևան ժամանած բազմաթիվ հայ գործիչների, մտավորականների, պատմաբանների: Գիրքը նյութական մեծ դժվարությամբ հասել է Փարիզ (30 օրինակ) և վաճառվում է Ֆրանսիայի մայրաքաղաքում:

Երկրագնդի գույգ աշխարհամասերում այսօր էլ սպրում են շուրջ 400 միլիոն իսպանախոս քրիստոնյաներ: Պատկառելի այդ թվաքանակը նկատի ունենալով, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար **Վարդան Օսկանյանը**, առանց իմ գիտության, մենագրության ռուսական տարբերակը վերցրել էր և հանձնարարել քարգմանել **իսպաներենին**: Թարգմանությունից հետո ձեռագիր գիրքը տվեցին ինձ և հեռու քաշվեցին: Մենք հարկադրված էինք

խայաներեն լեզվով գիրքը (ձեռագրով) կարծիքի ու խմբագրման տալ Մոսկվայում հաստատված ու պաշտոնավարող **Կուրայի, Արգենտինայի և Իսպանիայի** դիվանագիտական աշխատողներին: Գրական, խրախուսական հորդորներ ստացանք և արդեն առանց երկնչելու որոշեցինք այն տպագրել: Հրատարակելու համար, սակայն, միջոցներ էին հարկավոր: Արտգործնախարարը հրաժարվեց ֆինանսական որևէ օգնություն տրամադրելուց: Մենք հարկադրված էինք այս անգամ ևս մեր տնային որոշ իրեր վաճառել, որպեսզի հոգայինք հրատարակության ծախսերը:

2006 թ. հրատարակեցինք իսպաներենով պատրաստված մեր մենագրությունը՝ «Genocidio del pueblo Armenio en il Otomano» խորագրով: Ի տարբերություն մյուս լեզուների, իսպաներեն գիրքը զարմանալիորեն շատ դանդաղ է տարածվում: Միայն փոքր քանակի գրքեր են կարողացել ուղարկել Արգենտինա և Իսպանիա (հատկապես Մադրիդ ու Բարսելոնա): Գիտենք, սակայն, որ մենագրությունն ունի իր ընթերցողները, հետևաբար՝ այստեղ առաքման դժվարություններն են, որ դանդաղեցնում են աշխատության մասսայականացումը: Այդուհանդերձ, իսպաներենն այս դեպքում կատարեց մի լայն քայլ, որը մեզ համար գոնե անսպասելի էր...

2008 թ. հուլիսին Մադրիդ էր մեկնում բնության և հասարակության մասին **միջազգային և ուսանկան գիտությունների** ակադեմիաների (հայկական մասնաճյուղի) նախագահ, **ակադեմիկոս Ռաֆայել Գեղամի Մելիք-Օհանջանյանը**: Նա առաջին հայ գիտնականն էր, որն ընտրվել էր Իսպանիայի Թագավորական Ակադեմիայի ակադեմիկոս՝ ղեկավարություն մասնագիտությամբ, ու այդ բաժանմունքում ակադեմիկոս Ռ. Գ. Մելիք-Օհանջանյանը Իսպանիայի թագավոր Խուան Կարլոս Առաջինի հյուրն էր: Նորընծա ակադեմիկոսը թագավորի ձեռքից ստացավ դիպլոմն ու համապատասխան շքանշանը (այդ մասին գրվեց «ԳՕՍՈՑ» պարբերականի 2008 թ. հոկտեմբերի 28-ի համարում):

Վերադարձին ակադեմիկոս Ռ. Գ. Մելիք-Օհանջանյանը մի քանի այլ գիտնականների հետ (նկատի ունենալով իմ վաստակը, հատկապես իսպաներեն գրքի գոյությունը) գործերս ներկայացրեց Իսպանիայի նույն Ակադեմիայի ակադեմիկոսի կոչմանը՝ **պատվոթյան բաժանմունքում**: Գործերի և գրքի մասին ստացել ենք **դրական արձագանքներ և սպասում ենք վերջնական պատասխանի**: Այստեղ ոչ պակաս կարևոր ու ոգևորիչն այն էր նաև, որ ցեղասպանության մասին Մադրիդ ուղարկված մեր մենագրությունը՝ մակագրությամբ, հանձնվել է Իսպանիայի թագավորին և արժանացել դրական գնահատականի: **Կարծում ենք, ընթերցողը կկիսի մեր ոգեկորության և բարոյական շոյանքի մի մասը: Չէ որ ոչ բոլոր գրքերն են արժանանում նման ճակատագրի: (Մենագրությունը պատրաստ էր տպագրության, երբ սրացացվեց ինչ Իսպանիայի թագավորական Ակադեմիայի ակադեմիկոսի կոչմանն արժանացնելու ուրախալի լուրը: Սպասում ենք թագավորի հրավերին):**

Մեր բոլոր բարեկամները, բազմալեզու գրքերիս ընթերցողները, Հայաստանի և Սփյուռքի ցեղասպանագետները, Մեծ եղեռնից տուժածների շառավիղները, արդեն փոքր թիվ կազմող ցեղասպանության ակամատեսները մի տեսակ հրամայականի նման մեզ խորհուրդ էին տալիս, բարեկամաբար պահանջում՝ **մենագրու-**

բյունը հրատարակել նաև թուրքերենով: Այդ պահանջը մեր ականջին հնչել էր դեռևս անցյալ դարի 60-ականների վերջերին, երբ ույս աշխարհ եկավ մեր առաջին ու ծավալուն մենագրությունը, երբ դրա մասին գրախոսականներ տպագրեցին հակադիր բևեռներում կանգնած «Բազին» և «Լեմինյան ուղիով» ամսագրերը:

Թուրքերենով աշխատություն արեղծելու խնդիրը, ինչպես փեսաք, վաղուց էր հասունացել: Սակայն դա դժվար խնդիր էր, աշխատատար, նյութական մեծ գոհողություններ պահանջող, մանավանդ, **երբ հայրենի կառավարությունն էլ չևերեր լվացել և հեռու էր քաշվել**: Ցավոք, այսօր էլ այդպիսին է... Տևական մտորումներից հետո միայն վերջապես որոշեցինք հայոց լեզվով շարադրել բոլորովին նոր մեր աշխատության այն տարբերակը, որը կթարգմանվեր թուրքերեն: Լեզվի խնդիրը մեծ բարդույթ էր ստեղծում ոչ միայն Երևանում, այլև Ռուսաստանի մայրաքաղաքում, որտեղ այդ պահին ապրում ու ստեղծագործում էի ես: Այդուհանդերձ, Մոսկվայի **«Թարգմանիչների բյուրոն»** թուրքերեն թարգմանեց այդ գիրքը, որի ձեռագիրը վերցրած՝ վերադարձա Հայաստան: Երևանում պարզվեց, որ մենագրությունը լեզվական խմբագրության կարիք ունի:

Քաջ գիտակցելով, որ ցեղասպանության պատմությանը նվիրված **թուրքերենով** առաջին գիրքը հրատարակելով, մենք պայքարի ձեռնոց ենք նետում «թուրք հետադիմական պատմաբաններին», առավել ևս պետական բարձրատիճան այրերին, որոշեցինք մասնագիտական լուրջ և մանրակրկիտ խմբագրության տալ մենագրությունը: Մեզ հատկապես մտահոգության տեղիք էր տալիս հայկական աշխարհագրական անվանումների, տերմինների թուրքական ու թուրքալեզու ձևը, գրքի լեզվական ընդհանուր մակարդակը:

Ահա այդ հոգսերով ծանրաբեռնված, մենագրության ձեռագրի մեկ օրինակը «մի հնարքով» ուղարկեցինք Ստամբուլ (Կոստանդնուպոլիս), որտեղ թուրքագետ, հայրենամետ մեր բարեկամները, նույնիսկ չերկնչելով թուրքական 301-րդ հոդվածից, լեզվական լուրջ խմբագրության ենթարկեցին այն և «գրագետ ձևով» վերադարձրին Երևան: Այստեղ մեզ հետաքրքրում էր նաև ռիսկի ու վստահության խնդիրը: Չէ որ հրատարակում էինք մենագրություն, որի տառերը չէինք ճանաչում (այս բոլորը մենք թղթին ու դրա միջոցով ընթերցողի ուշադրությանն ենք հանձնում, որպեսզի նա իմանա, թե ինչպիսի հոգսաշատ տանջանքներ ենք կրել գիրքը թուրքերենով հրատարակելիս): Պրոցեսը բարեհաջող ավարտվեց: Թուրքերեն մենագրությունը 2006 թ. հունվարին ստացավ իր ավարտական տեսքը և տպագրվեց «OSMANLI IMPARATORLUĞU'NDA ERMENI HALKININ SOYKIRIMI» վերտառությամբ, 486 էջ ծավալով, 12 քարտեզներով, նկարազարդ, շքեղ ձևավորմամբ, ընթերցողներն ու մասնագետներն ասում են՝ նաև հարուստ բովանդակությամբ:

Մասնագիտական գրախոսների արդարամիտ կարծիքով, օտար լեզուներով տպագրած մեր մենագրությունների մեջ ամենահաջողվածը թուրքերենն է, մի պարագա, որը մենք ջանացել ենք իրողության վերածել, և որի համար ուրախ ենք: Ուրախ ենք, քանզի ցեղասպանության մասին թուրքերենով գրված առաջին գիրքն է **մեր այդ մենագրությունը և այն պատասխան պետք է փա պատմության կեղծարար թուրք պատմաբաններին, սթափեցնի նրանց՝ ասելով, թե բավական է գոռոռաք, չեք արխիվներում եղած հակահեղեղյան փաստերի մասին խոսելով, դուք այսպեղ էլ սխալ եք, սուրյեկոյիվ և հակամարդկային:**

Գիտակցելով, որ մյուս մեծագույն մեծ քանակով ենք մղելու գաղափարական, քաղաքական և հատկապես հակաազգայնորեն տրամադրված մեր հակառակորդների դեմ, ջանացել ենք հնարավորինս աշխատությունը շարադրել՝ կոթնած օտար սկզբնաղբյուրներին, արխիվային նորահայտ վավերագրերին: Թարգմանաբար «*մեզ են տրամադրել*» ժամանակի **թուրքական սկզբնաղբյուրներից** քաղված նյութեր, որոնք կարող են ռումբի մյուս պայթել թուրք կեղծարարների գլխին:

Խոսենք միայն մի սկզբնաղբյուրի մասին: Պատերազմում հաղթանակած եվրոպական մեծ ու փոքր տերությունների դիվանագետների պահանջով սուլթանական Թուրքիան Մեհմեդ VI Վեհաետդին (1861-1929) վերջին **սուլթանի հրամանով** 1919 թ. կազմակերպեց կայսրության մեջ **սեփական ժողովուրդներին ցեղասպանության ենթարկած երիտթուրքերի դապավարության պրոցեսը**: Դատարանն ուներ դատավորներ՝ **թուրքեր**, այո, միայն **թուրքեր**, դատախազ՝ **թուրք**, դատապաշտպաններ՝ **թուրքեր**, նիստերը սղագրողները, արձանագրողները՝ **թուրքեր**: Դատական պրոցեսը գնում էր **դոնբաս**, մասնակիցները հազարներ էին՝ թե՛ թուրքեր և թե՛ հատկապես եվրոպական թերթերի թղթակիցներ: Հսկայական թիվ էին կազմում թուրք վկաները, իրենց մաշկը փրկել ջանացող թուրք ակադեմիստները:

Մյուսերու-և Պոլսում գործող թուրքական դատարանը երկարատև ու համակողմանի հետազոտությունից, թեր ու դեմ վկաների հարցաքննելուց հետո հանց մի վճիռ, որն այսօր էլ հանդիսանում է ցեղասպանների գերեզմանափոսը: Ըստ այդ վճռի՝ «Միություն և առաջադիմություն» (ի՛նչ ամպագոռոտ անվանում) կուսակցությունն անբողոքությամբ, իսկ նրա դեկավար կազմը հատկապես կազմակերպել էին ցեղասպանություն, և նրանք պետք է պատժվեին: **Թուրքական դապարանը, այո, դապավարության արարաբատ թուրքերեն նյութերով հասարակած փաստերով 1919 թ. վճռեց երիտթուրքերի չորս դեկավարներին (Թալևաթ, Էնվեր, Չեմալ, դեկա. Նազրմ)՝ իբրև մի ամբողջ ժողովրդի սպանողների, դապապարտել մահվան: Դապարանը հետևյալ կարգով էր վճիռն արչակում, քանզի այդ շնագայլերը վաղուց ճողոպրել էին իրենց եվրոպական փիրոջ մայրաքաղաքը: Դապարանը մյուս 36 թուրք մեղադրյալներին, նորից հայասպանության մեղադրանքով, դապապարտեց փարբեր ասպիճանի քանդակարարության կամ արտրի:**

Մեծագրության էջերում համառոտակի ներկայացրել ենք (ծավալի պատճառով) դատավարության գրեթե բոլոր նիստերի արձանագրությունների բովանդակությունը: Դատական պրոցեսը, որը երկար, շատ երկար տևեց (նույնիսկ հասավ մեկ տարվա, ժամանակի, աշխարհի ամենաաղմկալից դատավարությունն էր), իր վրա հրավիրեց առաջավոր մարդկության սևեռում ուշադրությունը: Դատական նիստերի արձանագրությունները նույն օրը կամ մեկ օր հետո **արարաբատ թուրքերենով** պատրաստվում էին, հազվադեպ թուրք գրագետների կողմից խմբագրվում և հաջորդ օրը, ի լուր աշխարհի, տպագրվում էին **թուրքական պեպարան, պաշտոնական օրաթերթերում**: Մեզ են հասել Ստամբուլում տպագրված այդ բոլոր նյութերը, որոնց վերջակետն այն էր, թե 1915-1916 թթ. օսմանյան կայսրությունում տեղի է ունեցել **ցեղասպանություն, մորթ**

վել փեղահանվելով՝ ճանապարհին ոչնչացվել է մի ամբողջ ժողովուրդ, այն է՝ հայ ժողովուրդ:

Թուրքալեզու մեր մեծագրության հավելվածում գետնեղել ենք թուրքական դատավարության արձանագրությունների մի հատվածը միայն (ընդհանուր ծավալը մեծ է), մնացած բոլոր արձանագրությունների պատճենահանած բնագրերը մեր ձեռքի տակ են: **Թուրքերը եթե շատ աղմկեն և «պատնան իրենց արխիվադարաններով», մենք կհրապարակենք այդ նյութերը ևս, որոնք, թերևս, կհարձակենք մյուս մորթապաշտների լեզուն: Ահա միայն այս մի երևույթի ներկայացումը, կարծում ենք, կհեղափոխի մեր ընթերցողներին, մնացած մասերը թող կարդան թուրքերը՝ գրագետ թե անգրագետ, երիտասարդ թե փարիքավոր:**

Թուրքերեն մեծագրության լույս ընծայման առիթով, սակայն, չեն կարող չքարծրացնել իմ մի շատ կարևոր **դժգոհություն** ևս: Տարիներ, տասնամյակներ շարունակ գրեթե բոլոր գրագետ ու հայրենամկեր մտավորականները, հազարհազարավոր սովորական ընթերցողները թե՛ բանավոր և թե՛ հատկապես գրավոր խոսքի ժամանակ ուղղակի, երբեմն էլ իմիջիայլոց ասում էին, որ **եթե ցեղասպանությանը նվիրված աշխատությունները թուրքերեն լինեին, դրանք էապես կսարարեին մեր նպաստակներն իրողության վերածելուն:**

Միևնույն ընթերցողներ, կարծում են, որ դուք արդեն գոնե պատկերացում կազմում եք, թե ես ֆինանսական ինչպիսի գոհություններ եմ արել, ինչքան ժամանակ ու ֆիզիկական կարողություններ եմ մաշել, հոգեկան ինչպիսի տվայտանքներ եմ ունեցել՝ ստեղծելով ցեղասպանությանը վերաբերող թուրքալեզու առաջին լուրջ մեծագրությունը հայ պատմագրության անդաստանում ընդհանրապես: Աշխատության հրատարակումից արդեն անցել է **յոթ փարի, այո, յոթ** երկար ու ձիգ տարիներ: Այդ տարիների ընթացքում ես մնացել եմ զարմացած, միաժամանակ հիասթափված, դարձել եմ անհավատ առատաղբյուր այն խոստումներից ու քահասթափված, դարձել եմ անհավատ առատաղբյուր այն խոստումներից ու քաջալերանքներից, որոնց ականջալուր էի լինում գիրքը ստեղծելու ընթացքում: Թերևս դժգոհությունս կայանում է նաև նրանում, որ այդ խոստումները դարձան վերոհիշյալ պատգամը կատարելու նպատակամղողները: Չմոռանամ հիշեցնելու, որ ես արդեն անցել եմ իմ կյանքի ութերորդ տասնամյակը, որ ես թուրքերեն չգիտեմ, այսինքն՝ աշխատությունը պատրաստել եմ թարգմանիչների ձեռքերով, որոնք ապրում էին **Մոսկվայում, Երևանում, Մյուսթուլում: Մյուսթուլում եմ պահանջվող աշխատությունը և քննությունը բռնել, սակայն մնացել եմ չբավարարված...**

Դժգոհությունս հարուցողները միայն սովորական քաղաքացիները չեն, այլ պեպարան ու քաղաքական բարչրասպիճան այն պաշտոնյաներն են, հանրապետության իրար հաջորդող նախագահներն են, վարչապետներն ու արտաքին գործոց նախարարները, որոնք կարծես թե սառն անփարբերությամբ են վերաբերվում իմ կապարածներին, նույնիսկ արժանավայել ուշադրություն չեն դարչնում իմ վաստակին: Պեպարան այդ գործիչները գրեթե ամեն օր հրապարակալ թե մեկուսի, երկրի ներսում, թե նրա սահմաններից դուրս թուրքերից պահանջում են ճանաչել հայերի ցեղասպանությունը, դապապարտել այդ երևույթը: Նրանք արդարամտորեն չգտնում են իրողության վերածել հայրենիքում, հարկապես հայկական Միյուրքում հարկադրաբար դեզերող, ցեղա

րից: Նշանաբանն էր՝ Թուրքիան միայն թուրքերին է պատկանում, կրոնը, պաշտամունքը Մուսուլմանի երկրպագուներինն են: Ցավալին այն է, որ կերածը դեռևս չմարսած վիճակում հայտնված այսօրվա «հանրապետական» թուրք ղեկավարները հավատարմորեն շարունակում են վարել նույն քաղաքականությունը, մենք կասեինք՝ ավելի վատ ու վատթարագույն ձևերով:

Ի նկարի ունենալով վերոհիշյալ հանգամանքները, մենք կարծում ենք, որ թուրքերի որդեգրած քաղաքական-դիվանագիտական հնարքների դեմ նույն չեով ու նույն մեթոդներով պայքարի մարտադրոշ պետք է պարզեն ցեղասպանության ենթարկված մյուս բոլոր ազգությունները, նրանց գլխամասը կազմող պարմաբանները՝ հասկապես: Ասել, թե այդ ուղղությամբ ոչ մի գործ չի արվել՝ սխալ է և անարդարացի, սակայն արվել է զարգաց, երբեմն իրար չլրացնող չեկերով ու մեթոդներով: Չէ՛ որ ցավն ընդհանուր է, հեղեղապես ցավողներն էլ պիտի որ միավորվեն: Կոլեկտիվ զգացողությունը, համակամ պայքարն առավել դյուրին կդարձնեն հաղթանակի հնարավորությունները, կկրկնապարկեն զոհերի զավակներին փայփայած ոռնակների, այն է՝ ցեղասպանության ճանաչում և անպայման կատարվածի համար արդարացի հատուցում:

Հակաթուրքական պայքարն առավել ուժեղացնելու, մեզ բախտակից մյուս ժողովուրդների ապրած ծանր ողբերգությունը ևս ցույց տալու նպատակով 2010 թվականին հրատարակեցինք «Օսմանյան բռնապետության ներքո ապրող հայ և մյուս ժողովուրդների ցեղասպանության պատմությունը 1453-1922 թթ.» մենագրությունը (776 էջ), որտեղ ցույց տվեցինք **հույն, բուլղար, ասորի, եզդի ժողովուրդների կրած մեծ կորուստներն** Առաջին աշխարհամարտի տարիներին: Զանի որ հասել ենք մեր նպատակին, ուստի փորձենք փոքր-ինչ մամրամասնել:

Հազարամյակների հոլովության հորձանուտներում մարդկության կերտած պատմությունն այն **լուսաբու փարոսն** է, որը լուսարձակել է ամեն մի ժողովրդի անցնելիք մայրուղին՝ զգուշացնելով նրան **անցյալից պարզապես դասեր քաղել**, որպեսզի չկրկնվեն նախորդների թույլ տված ճակատագրական սխալները: Չույզ կիսագնդերի տրոհված, **հողազնդի թե՛ արեելյան և թե՛ արևմտյան** հատվածներում խարսխված ու արարող մարդը երկար ճանապարհ էր կտրել, որը, բնականաբար, միայն **քաղաքական, փնտեսական ու մշակութային** զարգացման հաղթարշավ պողոտա չէր, այլ ավելի շատ ու ավելի շուտ միջպետական ու միջցեղային գոռ ու արյունահեղ պատերազմների ընթացքը ներկայացնող **դեպքերի գրավոր արձանագրություն:**

Անվերջ շարունակվող այդ պատերազմները խաթարում էին մարդաբնակ աշխարհամասերի բնականոն զարգացման առաջընթացի ճանապարհը, պատճառ դառնում պետական փոքր թե՛ հզոր միավորումների, նույնիսկ բազմամարդ ժողովուրդների առեղծվածի զինաբախումների, շատերի՝ պատմության բեմահարթակից վերացմանը:

Հին աշխարհից սկսած եղել են ռազմատենչ բազում զորավարներ, որոնք զուտ համաշխարհային փառք նվաճելու մարմաջով տարված՝ արշավել են շատ ու շատ երկրներ, զավթել են դրանք և ձևավորել լայնարձակ կայսրություններ:

Բնականաբար, իբրև կանոն, դրանք երկար կյանք և խաղաղ ընթացք չեն ունեցել:

Ալեքսանդր Մակեդոնացին (356-323 մ.թ.ա.) անտիկ դարաշրջանի այն անդրանիկ զորավարներից հատընտիրն էր, որը մտադրվեց քաղաքակիրթ աշխարհի նվաճմանը: Նա հանճարեղ Արիստոտելի տաղանդավոր աշակերտն էր, հոր՝ Մակեդոնիայի թագավոր Փիլիպոս Երկրորդի ռազմատենչ զավակը: Այդ հատկանիշները գումարվելով իրար՝ նրան մղեցին նվաճելու աշխարհը: Մակեդոնացին կարճ ժամանակամիջոցում նվաճեց պարսկական հզոր տերությունը, ապա անցավ հին քաղաքակրթության օրրան Եգիպտոս, Փոքր Ասիայի հունաբնակ քաղաքները, Միջին Ասիա և վերջում ներխուժեց առասպելական ու ընդարձակ Հնդկաստան:

Ա. Մակեդոնացին նվաճած երկրների ժողովուրդներին, սակայն, չէր ոչնչացնում: Ընդհակառակը, նա կյանքի կոչեց **70-ից ավելի քաղաք-պետությունների**, որոնք հենք դարձան **հելլենիզմի** ձևավորմանն ու զարգացմանը: Մեկ խոսքով, այդ նոր բռնակալն ամեն ինչ էր, բայց ոչ **ժողովրդասպան**, առավել ևս՝ **ցեղասպան:**

Նապոլեոն Բոնապարտը (1769-1821) հանճարեղ մտածող էր, ականավոր պետական գործիչ, սակայն անսահման փառասեր ու նվաճողական գործողություններով տոգորված մի անձնավորություն, որի արշավանքներին զոհվեցին տասնյակ ու տասնյակ ինքնուրույն պետություններ: Ի վերջո, իր կյանքը հեռավոր արտրավայրում ավարտած այդ անհատը մեկ տասնամյակ տիրել էր քաղաքակիրթ աշխարհի մեծ մասին: **Նա նվաճող էր, երբեմն դաժան բռնակալ, սակայն ոչ ցեղասպան և ոչ էլ ժողովրդասպան:** Բոլոր դեպքերում, Նապոլեոն Բոնապարտը մարդկության պատմության էջեր **մտավ իբրև նվաճող՝ եվրոպական ոճի:**

Վաղ և ուշ միջնադարում եղել են մաս մարդկային ջարդերի այլ, առավել բարբարոսական մեթոդներ, որոնցից հիշատակենք մի քանիսը միայն:

Ալբիգոյացիները հանդես եկան Հարավային Ֆրանսիայում XII հարյուրամյակում, հարում էին **կաթարների և վալդենսների** աղանդին: Մրանք աշխարհը, հատկապես կաթոլիկ եկեղեցին համարում էին **սաբանայի սքեղծագործություն**, ժխտում էին կրոնական քարոզչության հիմնական սկզբունքները, պահանջում էին եկեղեցու ձեռքից ետ խլել ընդարձակ հողատարածքները, գյուղացուն ազատել տասանորդի տուրքից, որի ծանրության տակ կքվում էր հարկատուի առանց այդ էլ կորացած մեջքը: Ալբիգոյացիները գնալով մարդաշատ էին դառնում, զինված էին և հակառակորդների հետ խոսում էին սրի ու հրազենի լեզուներով: Նրանք XIII դարում ընդարձակեցին իրենց գործողության շրջանակները, որից վախեցած կաթոլիկ եկեղեցին կազմակերպեց **աղանդավորների զանգվածային ջարդեր:** Կոտորվեցին 60 հազար ալբիգոյացիներ, ինչը պատմության էջեր մտավ որպես մինչ այդ եղած կոտորածներից ամենախոշորը:

Պատմության էջեր է մտել **բարդուղիմետոսյան գիշեր** քնավոր արտահայտությունը, որը բացահայտում էր, թե 1572 թ. օգոստոսի 24-ի գիշերը Ֆրանսիայում ինչպես կոտորեցին **կրեք հազար հուգենոսների**, այդ թվում և նրանց առաջնորդ **Կոլինյիին:** Այդ մտադարձը պատճառ է դառնում Ֆրանսիայում վերսկսելու ժամանակավորապես դադարած կրոնական պատերազմները, որին գոհ գնացին հարյուր հազարավոր խաղաղ բնակիչներ:

Համաշխարհային պատմության արյունամերկ էջերից է *Ինկվիզիցիան՝ հավաքարձնությունը*, որը կաթոլիկ եկեղեցու հետախուզական և դատական կազմակերպություն էր, խնդիր ուներ հալածելու և պատժելու հոգևոր այդ ուսմունքի հակառակորդներին: Այն սկզբնավորվել է XIII դարասկզբից, գործել մինչև XIX հարյուրամյակը, իր սև գործողությունները ծավալել *Ֆրանսիայում, Գերմանիայում, Իսպանիայում և Պորտուգալիայում*¹:

Ինկվիզիտորներն իրենց գործողություններով դաժան էին Մադրիդում ու Բարսելոնում: Իսպանական գլխավոր ինկվիզիտոր *Տորկվենադալի*² 18 տարվա գործունեության ընթացքում *խարույկների վրա ողջակիզվել են* շուրջ 18 հազար «անհավատներ», այսինքն՝ կաթոլիկ եկեղեցու հակառակորդները: Օգտագործվել է լրտեսություն, մատնություն, երբեմն՝ գրայարտչություն: Մահապարտվածներին հրապարակայնորեն այրել են խարույկների վրա, վերջիններիս ունեցվածքը բռնագրավել են և հանձնել կաթոլիկ եկեղեցուն՝ սեփականատիրության իրավունքով:

Խնդիրը գնալով համաշխարհային կերպարանք ստացավ, որի «օրինականացումը» ազդարարեց 1542 թվականին Հռոմում (Վատիկան) հիմնված ինկվիզիցիայի գերագույն տրիբունալը: Ինկվիզիցիան առաջավոր մարդկության դեմ ուղղված ահավոր զենք էր, որին զոհ գնացին *Չորդանո Բրունոն, Չոն Վանինին* և շատ ուրիշներ: Ակնհայտ է, որ ինկվիզիցիան հակամարդկային, հակագիտական հզոր «միջոց» էր, որին առանց ազգային խտրականության զոհ գնացին հազարհազարավոր անմեղ մարդիկ:

Ճերդինանդն ու Բզարիլան 160 հազար հրեաներ Իսպանիայից արտրեցին Ասիա, այո, արտրեցին և ոչ թե ոչնչացրեցին:

Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք, հարյուրամյակների ընթացքում Եվրոպայում խիստ դատապարտելի մարդկային մսաղացը, ժողովուրդների տեղահանումն ու արքորը մեծ թիվ չեն կազմել:

Այլ էին Ասիայում, այլ էր Մոսկվայի փարախում հայտնված, իսլամապաշտ ցեղերի կատարած բարբարոսությունները, որոնք սկզբնավորվելով XII հարյուրամյակում՝ շարունակեցին իրենց արյունամերկ արկածներն ընդհուպ մինչև անցյալ դարակեսը:

*Սելջուկ-բուրքեր, բաբար-մոնղոլներ և Միջին Ասիայի անապարներից Առաջավոր Ասիա, ապա Եվրոպա (հարկապես Ռուսաստան) քափանցած քոչվոր այլ ցեղախմբերը շուրջ չորս հարյուրամյակով դանդաղեցրին, կանգնեցրին մարդկության զարգացման առաջընթացը, անթիվ ու անհամար խաղաղ բնակիչներ ոչնչացրեցին, ամբողջական քաղաքներ հիմնովին կործանեցին, ժողովուրդներ սրահողորդ արեցին: Սակայն նրանց փված դասերը սերտած աշխարհին սպասնում էին նոր ջարդարարներ՝ օսմանյան քուրքերը*³:

1. **ՀՈՒՅՆԵՐԸ:** Օսմանյան բռնապետության ճիրաններում խոշտանգվող քրիստոնյա հպատակ ազգերից *երկրորդը հույներն էին*, անշուշտ, արևմտա-

¹ «Հայկական Սովետական Հանրագիտարան» (այսուհետև՝ ՀՍԴ), հատ. 4, Երևան, 1978, էջ 345:
² Երկու տեղում:

³ *Հայկ Ղազարյան*, Օսմանյան բռնապետության ներքո ապրող հայ և մյուս ժողովուրդների ցեղապանության պատմություն 1453-1922 թթ., հատոր երրորդ, Երևան, 2010, էջ 4-10:

հայությունից հետո: Մարդկության համաշխարհային պատմության էջերում ոսկե տառերով իրենց կենսագրությունը կերտած հին և նոր Հունաստանի ժողովուրդը ցեղասպանության մահասարսուռ գերանդուն զոհ տվեց անթիվ ու անհամար քաղաքացիներ, կորցրեց զավակներ, որոնք արարում էին այդ աշխարհում, ստեղծագործական հանճարեղ կոթողներ պարզևուս հանուր մարդկությանը:

Անշուշտ, քաղաքակրթությունն ընկել էր բարբարոսների լծի փակ, սրեղծագործող հանճարեղ մարդը դարձել էր ավարածարավ, անչնական հաճույքներով փարված, թուրք ու քուրդ փիրողներին կերակրողների առաջին շարքերում, նրանց բնահաճույքները բացարձակապես բավարարող սպրուկ, զինմի, ճորպ: Բրիտանի խաչն անարգվում էր Մոսկվայի մահիկը և կիսալուսինը պաշտողների բացարձակ իրավասությանը:

Արդարամտությունը պահանջում է, սակայն, արձանագրել, որ թուրքերը հույների նկատմամբ *ցեղասպանություն* կատարեցին ավելի վաղ, քան հայատակ մյուս ազգերին կոչնչացնեին: Այդ կատարվեց հույների մայրաքաղաքի բռնագավթման պահին, այսինքն՝ 1453 թվականի մայիսի վերջին, հունիսի սկզբի օրերին: Կոստանդնուպոլսի բռնագավթումը, *60 հազար հույն կանանց, աղջիկների և փոքրահասակ փղանների գերեվարումը*, երկրի ներսի և օտար շուկաներում անուրդով նրանց վաճառքը վեր էր մարդկային երևակայությունից: Դրան գումարվում են շուրջ *հարյուր հազարի հասնող հույն քաղաքացիների կոտորածը մայրաքաղաքում, նրա շրջակայքում:* Միայն Սուրբ Սոֆիայի տաճարում կատարած գողգոթան բավարար է, որը գումարվելով մյուս կոտորածներին՝ երևույթը կոչեինք իր անունով: Այո, կատարվածը սովորական ողբերգություն չէր, հերթական կոիվ կամ պատերազմ չէր, *այլ ցեղասպանություն էր, հունասպանություն, ազգասպանություն*, որը պետք է ստանա իր ճշմարտացի գնահատականը, դատապարտվի, հատուցում պահանջվի, որպեսզի նորից չկրկնվի և մարդկությանը նորանոր չարիքներ չպատճառվեն:

Հույների *երկրորդ խոշոր ջարդը* տեղի ունեցավ 1821-1829 թթ. ազատագրական ոգորումների ժամանակ, երբ հույն ժողովուրդը մահու և կենաց մարտեր էր մղում՝ ձգտելով փշրել իր ձեռքերին պրկած թուրքական չորսհարյուրամյա շրթամղում՝ ձգտելով փշրել իր ձեռքերին պրկած թուրքական չորսհարյուրամյա շրթամղումը: Եվրոպան օգնում էր հույներին, Ռուսաստանը կանգնած էր Հունաստանի թիկունքում, Չորջ Բայրոնը մեկնում է Ելլադա և մեռնում այդ ժողովրդի համար: *Այդ օրերին Հունաստանը փվեց շուրջ 60 հազար զոհ:*

Հույների ապրած *երրորդ* և ամենալուրջ ողբերգությունը կատարվեց Պոնտոսում, որտեղ աշխարհամարտի հետևանքով համահավաքված էին շուրջ 700 հազար հույներ: *Բացարձակ ցեղասպանության, փարագրության ժամանակ* կրած զրկանքների, քաղցի, հիվանդությունների պատճառով Պոնտոսի հույները տվեցին շուրջ *երեք հարյուր հիսուն հազար մարդկային կորուստ:* *Այդ է պարճառը, որ մայիսի 19-ը համարվում է Պոնտոսի հույների ցեղասպանության օր:* *Նրանք ամեն փարի համայնքով բարձրանում են* Ծիծեռնակաբերդի բարձունքը, ծաղիկներ դնում զոհվածների հիշատակը հավերժացնող անմար կրակի շուրջը և աշխարհին աղաղակում՝ ճանաչել հույների ցեղասպանության փաստը, իրենց վերադարձնել ունեցածն ու կորցրածը:

Հայների ապրած անօրինակ ողբերգության վերջնակետը *Չմյուռնիայի գող-գործն էր, Իզմիրի հրդեհները*, որին զոհ գնացին շուրջ հարյուր հազար հայ և հատկապես *հայն* գաղթականներ ու տեղաբնիկներ:

1922 թվականի սեպտեմբերի 13-ն էր, չորեքշաբթի, օրն արևոտ էր և լի ողբերգական բովանդակությամբ: Այդ օրը հրդեհվեց երեքհազարամյա Չմյուռնիան, հատկապես նրա հունական և հայկական այն թաղամասերը, որոնք երեկ էին բաղանվել բռնապղծվել թուրքական «կանոնավոր» բանակի և խաժամուժ ամբոխի ձեռքերով: «Թայնս» թերթի թղթակիցը վկայում է, որ հրդեհը միաժամանակ բռնկվել է *հայկական և հունական երեք թաղամասերում*: «Մանչեստր Գարդիան» թերթի Կ. Պոլսի թղթակիցը լրացնում է, թե հայկական թաղամասերը նավթով այրել են թուրքերը, որպեսզի վերացնեն իրենց կատարած զազանությունների հետքերը, ապա նաև այրել հազարավոր անթաղ մեռելների դիակները, որոնց նեխածության հուռը բռնել էր ողջ քաղաքը՝ սպառնալով խոլերայի համաճարակով¹:

Եվրոպական թերթերի թղթակիցների շրջանառության մեջ դրած լեռնակուտակ նյութերը գումարելով իր տեսածին ու լսածին՝ *Ռենն Պյուռը* այսպես է ընդհանրացնում հրդեհի բռնկման իրողությունը. «Երբ առաջին կանոնավոր զորքերը քաղաք ներխուժեցին, Քենալի ներկայացուցիչները որևէ ջանք չգործադրեցին քաղաքի կառավարումն իրենց ձեռքում կենտրոնացնելու համար, որը մի փոքր անց լցվեց, դժվար չէ հասկանալ, թե ինչ նպատակ հետապնդող ամանուն բանակի զինվորներով: Կողոպտուհին, որը սկսվեց հայկական թաղամասում, անմիջապես հետևեցին հրդեհները: Անգլիացի և սերբ ակամատեսներն ինձ հետ ունեցած զրույցի ընթացքում ամենաորոշակի ձևով հավաստել են, որ տեսել են, թե ինչպես են թուրք զինվորները նպատակ հրդեհի ծավալմանը: Նման դիրքորոշման պատճառը չի կարող միանշանակ լինել: Առաջին պատճառն այն էր, որ քենալականները՝ վճռած լինելով Չմյուռնիան վերածելու գուտ թուրքական քաղաքի, ամենամարատակահարմար միջոցը համարել են եվրոպական առևտրական թաղամասի և եվրոպական ռեզիդենցիաների ավերումը, իսկ մյուս կողմից այն, որ Քենալն իրեն մատուցած ծառայությունների դիմաց անկանոն բանակի զինվորներին վարձատրույթ լինելու այլ միջոցներ չունեց: Ես այս եզրակացություններին հանգել եմ (ասել է, ամփոփելով իր խոսքը, «Մորնինգ փոսթի» թղթակիցը), միայն և միայն ի մի թերված վկայությունները քննության առնելուց հետո»²:

*Ռենն Պյուռ*ի հուշագրության շնորհիվ թարգմանիչ Վարուժան Պողոսյանն իր թարգմանությանը կցած առաջաբանում բերում է հետևյալ զարիուրելի մտքերը ևս, որոնք արտաբերել էր գարշելի մի անձնավորություն՝ *Մուսաֆա Քենալը*, հետագայում՝ *Աբաթյուրքը*: Այնտեղ ասված է. «Ֆրանսիացի դիվանագետ Ժան-Պոլ Գարնիեն 1973 թ. Փարիզում լույս ընծայած «Օսմանյան կայսրության վախճանը՝ Կարմիր սուլթանից մինչև Մուստաֆա Քենալ» գրքում նշել է, որ հիացած իր գլխավորած վայրագությամբ, հրկիզվող Չմյուռնիային ի տես, Քենալը հայտարարել է. «*Երկար նայեցեք այս փաստանի: Մա մեր երկրում օդաբ մի-*

¹ *Ռենն Պյուռ*, Չմյուռնիայի վախճանը, Երևան, 2001, էջ 12-13:
² Նույն տեղում, էջ 15-16:

ջանությունների վախճանն է: Այս կրակը դրա խորհրդանիշն է: Այն նշանակում է, որ մեր հայրենիքը վերջնականապես ազապագրվել է դավաճաններից և առեկրահաններից: Այսուհետև ազապագրված ու մաքրագրված Թուրքիան կպարկանի միայն և միայն թուրքերին»:

Այսպիսով, Անտանոյի տերությունների՝ Թուրքիայում հաստատված դիվանագետների ֆիզիկապես բաց և *փեսողությամբ* կույր աչքերի առջև բնաջնջվեց Չմյուռնիայի վիլայեթի և *այնպեղ ճողոպրած հույն ու հայ բնակչությունից շուրջ 100 հազար հոգի*: Հայերի մի մասը նավերով մի կերպ անցավ Հունաստան, իսկ մյուս հատվածը վերադարձվեց Թուրքիայի խորքերը և զանգվածորեն ոչնչացվեց:

2. ԲԱԼԿԱՆՅԱՆ ԱԶԳԵՐ: Ասիական անապատներից իրենց սև գործն սկսած, ավարածարավ ու նվաճումների ցավով տառապող օսմանյան բարբարոս հորդանները, *գորշ գայլի* պատկերով դրոշակը ձեռքերն առած, կարճ ժամանակամիջոցում տիրեցին Առաջավոր Ասիայի մեծ մասին և որոշեցին տեր դառնալ *Հին Աշխարհի երեք ցամաքամասերին: Թուրք, օսմանցի թուրք վանող* վերնագիրն առած այդ ցեղախմբերը բուռնցքի ծանր հարվածներն իջեցրին հազարամյակներ առաջ Բալկանյան թերակղզու վրա հաստատված *Բուսինայի, Հերցեգովինայի, Չերնոգորիայի, հասկապես Սերբիայի և Բուլղարիայի գլխին*:

Այդ արշավանքների ընթացքում ձեռք բերած հաջողություններով բարբարոս այդ ցեղախմբերը սկիզբ դրեցին Բյուզանդական կայսրության կործանմանը և սլավոնաբնակ երկրների նվաճմանը:

1363 թ. գրավելով Ադրիանապոլիսը և այն դարձնելով իրենց մայրաքաղաքը, թուրքերը շարունակում են հարձակողական գործողությունները մի կողմից Մարիցայի հովտի, մյուս կողմից՝ Թեսալոնիկի ուղղությամբ: Նրանց հաջողվում է գրավել *Մարաս Չագորաս և Պոլովիկի քաղաքները*: 1389 թ. տեղի ունեցավ Կոստվոյի հայտնի ճակատամարտը, որտեղ, չնայած սերբական և բուսինական զորքերի ցույց տված հերոսական դիմադրությանը, թշնամու գերազանց ուժերին հաջողվեց հաղթանակ տանել¹: Այդ ճակատամարտում թուրքերի տարած հաղթանակը լիովին ապահովեց նրանց գերիշխանությունը թերակղզու արևելյան և հարավարևմտյան շրջանների նկատմամբ, իսկ ստ վտանգավոր վիճակ ստեղծվեց Բուլղարական թագավորության համար՝ մոտեցնելով նրա վերջին ժամը: 1393 թ. Բուլղարական թագավորության համար՝ մոտեցնելով նրա վերջին ժամը: 1393 թ. հուլիսի 17-ին թուրքական զորքերը 3-ամսյա պաշարումից հետո գրավում են Տիր-հուլիսի 17-ին թուրքական զորքերը 3-ամսյա պաշարումից հետո գրավում են Տիր-հուլիսը, իսկ 1395 թ.՝ Դոբրուչան, որով և վերջ է տրվում Բուլղարիայի անկախությանը: 1444 թ. Վառնայի ճակատամարտում թուրքերը ջախջախում են լեհ-հունգարական միացյալ ուժերին²:

Սկսվում են բալկանյան ժողովուրդների, հատկապես Բուլղարիայի պատմության սև էջերը, որոնք հարատևում են շուրջ *կես հազարամյակ*: Ավելորդ է փաստեր բերել՝ ապացուցելու, թե սոցիալ-քաղաքական ինչպիսի ճնշումների, ազգային խտրականության ու կրոնական ինչպիսի հալածանքների ենթարկվեցին բալ-

¹ Ա. Ն. Ներսիսյան, Բուլղար ժողովրդի պայքարը սուլթանական Թուրքիայի դեմ XIX դարի 70-ական թթ., Երևան, 1978, էջ 6-7:
² Նույն տեղում, էջ 8:

կանյան ժողովուրդները, հատկապես բուլղարներն օսմանյան գաղջ տիրապետության հարյուրամյակներում: Նոր դարաշրջանում բալկանյան ժողովուրդների ծով համբերության բաժակն արդեն լցվել էր: Միջազգային չափանիշներով ձևավորվում էր գորոյսն հանգույցը, ասել է թե՛ Արենլյան հարցը, նրա մասնաբաժինները կազմող Հայկական հարցը, Բալկանյան հարցը, Բուլղարական հարցը և այլն: Եվրոպայի վերջո գարթնում է լոքարինգյան քնից և թումբ է կանգնում արդեն ռազմատնտեսական ճգնաժամ ապրող սուլթանական բռնապետության առաջխաղացմանը: Պատմության բեմահարթակ է իջնում օր առ օր հզորացող Ռոմանովյան Ռուսաստանը, որը, հենվելով թուրքահպատակ սլավոնական ազգերի որդեգրած ռուսական կողմնորոշման վրա, մաս առ մաս, հատված առ հատված խուզում է Թուրքիայի կայսերական տարածքները, ծնունդ տալիս սլավոնական նոր ու անկախ պետությունների ձևավորմանը: Սակայն այդ ամենը դյուրին ու առանց զոհերի չէր իրականացվում:

Ոգևորված Ռուսաստանի տված առատադրյուր խոստումներից բալկանյան ժողովուրդները, մասնավորապես՝ Բուլղարիան, պարզում են ապստամբության դրոշմը, որի գագաթնակետը դառնում է 1876 թվականի հերոսապատումը Պանագյուրիշպեն ավանում, այն էլ ապրիլ ամսին: Ապրիլյան ապստամբությունը հապշտապ էր կազմակերպված, դրա համար էլ պարտություն կրեց: Գիշտ է, ապստամբությունն ընդգրկեց ողջ երկրի տարածքը, բայց ճնշվելուց հետո շատ ծանր նստեց բուլղար ժողովրդի ուսերին:

Երբեք, ոչ մի երկրում ժողովրդի նկատմամբ այնքան դաժան չեն վարվել, ինչպես թուրքերը վարվեցին բուլղար ապստամբների, նրանց ընկալակների, այսինքն՝ անպաշտպան ծերունիների, անչափահաս մանուկների, կանանց ու դեռահաս աղջիկների հեղ:

Հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ ծանր մարտեր մղելով՝ ապստամբները սկսում են նահանջել լեռները: Թուրքերը, մոտենալով քաղաքին, սկսում են ռմբակոծել: Պանագյուրիշտոցիները շարունակում են անհավասար և օրհասական դիմադրություն ցույց տալ: Իրենց ամուսինների ու եղբայրների կողքին հերոսաբար կռվում են նաև կանայք: Սակայն թուրքերին հաջողվում է երեք կողմերից ներխուժել քաղաք և արյունալի մարտեր սկսել փողոցներում ու տներում: Ով ինչով կարող էր հարվածում էր թշնամուն, սակայն դիմադրությունը շուտով ճնշվում է: Ապրիլի 30-ին ընկնում է Պանագյուրիշտեն: Ամբողջ քաղաքը բռնկվում է հրդեհի բոցերով, իսկ փողոցներով հոսում է զոհերի արյունը: Թուրքական հրամանատարությունը գործողության լիակատար ազատություն է տալիս թուրք զինվորներին ու բաշխրզուկներին, որոնք չտեսնված բարբարոսություններ են կատարում: Քաղաքը և նրա շրջակա բոլոր գյուղերը կողոպտվում, այրվում ու մոխրակույտի են վերածվում:

Կենդանի մնացած բնակչությանը պրովոկացիոն կերպով քաղաք են կանչում և բոլորին սրի քաշում: Կոտորում են տղամարդկանց, կանանց ու երեխաներին: **Ապրիլյան ապստամբության պարտության մեջ հռչակված ժողովրդական ուսուցչուհի Ռայնային, որն իր չեղքով էր ասեղնագործել հեղափոխության դրոշակը,** չտեսնված խոշտանգումների ու անպատվությունների են ենթարկվում, իսկ նրա հոգևորական հորը զիսատում են: Բազմաթիվ կանայք ու տղամարդիկ

իրենց պատիվը փրկելու համար ինքնասպանությամբ վերջ են տալիս իրենց կյանքին: Հերոսական մահով է ընկնում նաև Պանագյուրիշտեի ապստամբության առաջնորդ Բենկովսկին, որը ճակատամարտերի ընթացքում Պանագյուրիշտենում չէր, այլ իր ջոկատով շրջում էր գյուղերում՝:

Ապրիլյան ապստամբության պատմության մեջ իրենց բացառիկ հերոսությամբ ակնառու տեղ են գրավում երկու գյուղեր՝ **Պերուշտիցան և Բալուսկը:** Պերուշտիցան գուտ բուլղարական մի գյուղ էր, Պրովիվից 2-2,5 ժամվա հեռավորությամբ: Այստեղ, ինչպես ապստամբության մյուս վայրերում, արագորեն պատրաստվում էին ապստամբության: Մոտավուտ ազատության հույսերը մեծ ոգևորություն էին առաջացրել տեղական երիտասարդության շրջանում, որոնց հետ լուրջ հույսեր էր կապել Բենկովսկին: Ապստամբությունն այստեղ սկսում են ապրիլի 25-ին, որի գլուխ է կանգնում Պյոտր Բոնկը: Նրա օգնականներն էին Կոչո Չիստենսկին և Սպաս Գիմովը, ապստամբների թիվը հասնում է շուրջ 600 հոգու, որոնց մեջ 56 հոգի կանայք և 15 տարեկան պատանիներ: Ապստամբները հերոսաբար պայքար են մղում հարձակվող բազմաքանակ բաշխրզուկների դեմ, որոնք ամխնա կերպով սրի են մատնում ծերերին ու երեխաներին: Սկսվում է արյունալի դրաման: Գործի են դրվում յաթաղանները, մորթում են բոլորին՝ առանց հաշվի առնելու հասակը և սեռը: Տեսարանը սարսափելի էր: **Չ. Մյոյանովը** հաշվի առնելու հասակը և սեռը: Տեսարանը սարսափելի էր: **Չ. Մյոյանովը հեռակայ կերպ է նկարագրում այդ սուսկալի տեսարանը.** «Մի տեղ սպիտակահերթեք ծերունիներն գիշարիչ բաշխրզուկի ոտքերն ընկած փրկություն է խնդրում, սակայն այդ գազանը ծերունու սրտին կրակելով՝ անտարբեր ու շփուստ հեռանում է ուրիշ որսերին հասնելու, բոլորովին ուշադրություն չդարձնելով արյունաքարախ դիակին... երիտասարդ մայրը համբուրում է արյունաքարախ դանակի կոթը և աղերսում խնայել իր սիրասուն երեխայի կյանքը, սակայն չալմայով մարդը, կորցնելով մարդկային կերպարը, սրահարում է ն՝ մորը, ն՝ չալմայով մարդը, կորցնելով մարդկային կերպարը, սրահարում է ն՝ մորը, ն՝ փաթաթվելով այդ սատը և սարսափելի գործիքին, որն անխնա կտրում է նրանց մարմինները, հուսահատ ճիչեր էին արձակում: Մորի կնիծից և սարսափից մեռնող մայրը մեկնում է չեղքերը՝ ձգվելով մի կերպ օգնել իր փոքրիկին, սակայն մեկ ուրիշ բաշխրզուկի յաթաղանը կտրում է այդ չեղքերը և մայրը երեխայի հեղ միասին արյունաքարախ փոխում են իրենց ընկած եղբայրների կողքին»²:

Պերուշտիցայի հերոսական պաշտպանությունը տևում է երեք օր: Ապրիլի 30-ին սկսում են ռմբակոծել եկեղեցին, որտեղ ապաստանել էին բազմաթիվ կանայք ու երեխաներ: Նման պայմաններում գնալով անհնարին է դառնում պաշտպանությունը: Ազատության մարտիկները՝ Կոչո Չիստենսկին, Սպաս Գիմովը, Իվան մոյսյանը: Ազատության մարտիկները՝ Կոչո Չիստենսկին, Սպաս Գիմովը, Իվան մոյսյանը: Երկուսն էլ անտանելի դարձնում են ոգևորել Նանը մետվելով կովոդների շարքերը, ամեն կերպ աշխատում են ոգևորել մրանց: Ծուռով քանդվում են եկեղեցու պատերը և էլ անտանելի դարձնում պաշտպանների վիճակը: **Ապստամբների ղեկավարներից Կոչոն և Գիմովը, տեսնելով, որ դրությունը անհուսալի է դառնում և չցանկանալով կենդանի թուրքե-**

¹ Ա. Ն. Ներսիսյան, Բուլղար ժողովրդի պայքարը սուլթանական Թուրքիայի դեմ XIX դարի 70-ական թթ., Երևան, 1978, էջ 132:

² Յ. Տոլնոբ, Записки о болгарских восстаниях, перевод с болгарского, Москва, 1953, стр. 653.

քի չեքքը հանչեն իրենց կանանց ու երեխաներին, իրենց չեռքերով սպանում են երանց: Առաջին օրինակը փայլա է Կոչոն՝ սպանելով սիրած կնոջն ու երեխային: Ականաբեաններից մեկն այդ մասին հեղեղայն է պատմում. «Երբ Կոչո Չիպրեանիին արքանակի ուրբը բարչրացնելով ասում է իր հավատարիս կնոջը՝ Թոխային, որ նա պեպր է մեռնի, դժբախտ կհինը... ծունկի գալով ամուսնու առաջ, կրծքին սեղմելով սիրասուն աղջկան ու չեռքերով փակելով աչքերը, մեծագույն հանգստությամբ պատրաստվում է ընդունել սուկայի մահը: Նա միայն մի բան է խնդրում խելագարության հասած ամուսնուց, որ առաջ իրեն սպանի, որ երեխայի փանջանքներին ականապես չլինի... ու քաղի մեկ գերեզմանում: Նա դեռ չէր հասցրել իր վերջին խոսքերը արտասանել, երբ երկուսը միասին... բարախում են արյան մեջ և քավալվում գեղմին»: Կոչոյի օրինակին հեղեղում են շարերը, որոնք նույնպես սպանում են իրենց կանանց ու երեխաներին, ապա ինքնասպան լինում: Եկեղեցին ամբողջապես հրդեհվում է ու մոխրակույրի վերածվում, իր փլուզվածների փակ թողնելով 400 հոգի: Թուրքերը եկեղեցուց կենդանի դուրս են բերում 150 փղամարդու ու 600-ից ավելի կանանց ու երեխաների, որոնց ըշում են Պլովդիվ:

Ապրիլի 30-ից Բատակի դեմ ռազմական գործողություններ է սկսում արյունաբքու ու խորամանկ Ահմեդ աղա Բարուտինյին: Թուրքական զորքերի և իրենց զազանություններով հռչակված բաշիբոզուկների մեծ բազմության երևալը հորիզոնում ազդում է ապստամբների որոշ մասի տրամադրությունների վրա, որից աշխատում են օգտվել չորբաջիները: Հայրենիքի այս դավաճաններին հաջողվում է համոզել ապստամբների մի մասին՝ թողնել հարմար մարտական դիրքերը, նահանջել գյուղ և պաշտպանական դիրքեր գրավել իրենց տներում, հիմնավորելով այդ նրանով, թե հետագայում նրանք դատական ատյանների առաջ կարող են արդարանալ, որ ոչ թե ապստամբել են, այլ իրենց տները պաշտպանել բաշիբոզուկներից: Օգտվելով դրանից, թուրքերը գրավում են նրանց թողած դիրքերը և ուժեղ ճնշում գործադրում իրենց մարտական դիրքերում մնացած ապստամբների վրա՝ հարկադրելով նրանց ևս նահանջել դեպի գյուղ: Չբավարարվելով դրանով, չորբաջիները դավաճանական նոր քայլ են կատարում, նրանք ծրագրում են դավադրություն կազմակերպել, ձերբակալել և թուրքերին հանձնել ապստամբության դեկավարներին, սակայն վերջիններիս հաջողվում է փախչել:

Չրկվելով դեկավարությունից, ապստամբների առանձին խմբեր շարունակում են անհուսալի պայքարը, որը երկար տևել չէր կարող: Ներխուժելով գյուղ՝ թուրքերն սկսում են փողոցային արյունալի մարտերը: Ապստամբների մի մասը տեսնելով, որ դիմադրությունն անհուսալի է և հավատալով իրենց կյանքը խնայելու մասին Ահմեդ աղայի երդմանը, հանձնվում է, որին հետևում են նաև ուրիշները: Չինաթափ անելով տղամարդկանց և հասկանալով իրեն ենթակա մարդանման կենդանիների տրամադրությունները, նրանց զազանային կրքերը, սրի մատնելու, այրելու, ավերելու, կողոպտելու նրանց ձգտումը, արյունաբքու աղան հրաման է տալիս բաշիբոզուկներին՝ կոտորելու անհավատներին: Սկսվում է մարդկային սրտամտության մեջ մինչ այդ չլսված ու չտեսնված մի սուկայի տեսարան: Սրի են

մատնում բոլորին՝ ամենասարսափելի ձևերով, շատերին կտոր-կտոր են անում, ոմանց աչքերը հանում և ապա սպանում, շատերին էլ կենդանի այրում: Բատակը կորցնում է շուրջ 5000 մարդ: Անդրադառնալով Բատակի արյունալի դեպքերի նկարագրությանը, նրա պատմական նշանակությանը, Չ. Ստոյանովը հետևյալ սրտաճմլիկ տողերն է գրում. «Կոչ են անում բոլոր իսկական բուլղարներին, բոլոր նրանց, ովքեր ազնվորեն սիրում են իրենց հայրենիքը, այցելեն ինձ հետ բուլղարական սրբավայրը (Բատակ), մեր ազատության զոհարանը, որը հազարավոր տանջվածների ու սրբերի, հարյուրավոր փոքր երեխաների, բազմաթիվ անմեղ պատանիների ու աղջիկների արյունով է շաղախված: Բայրակ, փառապանծ և չարաբախար Բայրակ: Մի՞թե կգրվեն բուլղարական սրբեր, որոնք չեն բարախի քո անունը հիշելիս... Չեն հավատում: Եթե 500 փարիսների ընթացքում երբևէ բռնկվել են կայծեր որպես նշան այն բանի, որ Բուլղարիան կենդանի է և փառս բուլղար ժողովրդի, ապա քո մոխրակույրը, որպես աճյունները, խառնված քո զոհերի ոսկորների հեպ, գրավում են առաջին փեղը նրանց շարքում, որպես փեղի են ունեցել հիշարժան հանրահռչակ դեպքերը»:

Այսպիսով, ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմի նախօրյակին բալկանյան ազգերը, մասնավորապես՝ Բուլղարիան, կորցրեցին շուրջ երկու հարյուր հազար բնակիչներ, որոնց ոչնչացման և՛ ձևը, և՛ հատկապես մեթոդները գեներոսի էին: Չարմանալի է, անհավատալի, որ անկախ, արդեն հզոր Բուլղարիան ձայն չի բարձրացնում, թուրքերից չի պահանջում ճանաչել իրենց կատարած չարագործությունները, դատապարտել դրանք և վճարել այդ ողբերգության դիմաց: Ցավալի է, որ Բուլղարիան մինչև օրս չի ճանաչել հայ ժողովրդի ցեղասպանության անժխտելի փաստը և չի դադարապարտել այն:

3. ԱՍՈՐԻՆԵՐ: Արդուլ Համիդի, երիտթուրքերի, ապա նրանց բռնարարքները շարունակող քեմալականների իրականացրած չարդարարական ցեղասպանության քաղաքականությանը զոհ գնացած ոչ թուրք, այլազգի ու այլակրոն ժողովուրդների շարքերում էին բազմահազար ասորիներ:

Ասորիներն Առաջավոր Ասիայի հնաբնակ այն ժողովուրդներից մեկն էին, որոնց սկզբնավորման և էթնոգենեզի ծայրափեղերը թաղված են պատմության ետմախորքերում, սակայն շատ վաղնջական ժամանակներից էլ կորցրել էին իրենց ազգային պետականությունը: Համաշխարհային քաղաքակրթության պայմանության էջերում ոսկե փառերով դրոշմելով անցյալում արարած իրենց սիրանքները, կերպած հոյակերպ հուշարձանները, հիմնած ու զարգացած բազմաթիվ քաղաքները, բերդերն ու ամրոցները, սակայն չկարողացան դիմագրավել շրջապատից սրացած հուժկու և անխնա հարվածներին:

Ասորիները սկզբնավորման հարյուրամյակներում խարսխված էին Տիգրիս գետի միջին հոսանքն իր գույգ ավերի մեջ առնող տարածքում, փոխված էին մինչև Չագրոսյան լեռները, ապա հարավ-արևմուտքում հասնում էին Չավ գետին, արևմուտքում ներառնում էին Միջագետքի անապատները: Մ. թ. ա. XIX հարյուրամյակում ասորիները (սկզբնական անվամբ խուրդիները և սուրարիները) ձևավոր

¹ Ա. Լ. Լեբրոնյան, Նշված աշխատությունը, էջ 135-136:

² 3. Стоянов, Записки о болгарских восстаниях, перевод с болгарского, Москва, 1953, стр. 668-669.
³ ԳՄԷ, հատ. 1, Երևան, 1974, էջ 566-571: «Ասորեստան» բառ-հոդվածը:

րեցին մի հզոր պետություն, որն առևտրատնտեսական աղերսներով կամրջվում էր շրջակա բազմաթիվ երկրների, հատկապես Հայկական բարձրավանդակի հետ:

Մ. ք. ա. XVIII-XIII դարերում Ասորեստանը հզոր տերություն էր՝ բազմամարդ ու մարտունակ բանակով, ստրկատիրական համակարգով, սակայն ոչ ամուր ներքին հարաբերություններով: Ասորեստանի հզոր պետությունը ներքին հակասությունների, արտաքին արշավանքների հարվածներից թուլացավ և 612 թ. Նինվեի կորստից հետո իբրև ինքնուրույն տերություն դադարեց գոյություն ունենալուց: **605 թ. մ. թ. ա. Կարենիշի ճակատամարտում** ջախջախվելուց հետո ասորիները ցրվեցին տարածքով մեկ:

Պեղականահրույս ստորիները, հեյրազայում շարունակելով սայրել իրենց պարանական հայրենիքում, առել է թե՛ Բեքնահրինում, փարածվեցին Պարսից ծոցի, Միջերկրական ծովի, Ուրմիա լճից մինչև Միջագետքի անապատներն ընդգրկող փարածքներում և փորձեցին պաշտպանել մայրենի լեզուն և ազգային սովորույթները, համայնքային ամբողջապիտությունը, որը չափազանց դժվար էր՝

Առաջին աշխարհամարտից առաջ ասորական համայնքները սփռված էին Արևմտյան Հայաստանի գրեթե վեցը վիլայեթներում, հայրկապես Վանի նահանգի Հեքյարի և Չուլամերիի գավառներում: Դրանցից զույր, ասորիներ էին սայրում Իրանի՝ Ուրմիայի, Իրաքի՝ Մոսուլի, Սիրիայի հյուսիսային նահանգներում: Անցյալ դարակազմին այդ երկրամասերում սայրում էին մոլորավորապես մեկ միլիոն ասորիներ՝ իրենց միասնական լեզվով, մշակույթով և ազգային սովորույթներով:

Ասորիները, հաստատվելով Հայկական բարձրավանդակում, բարեկամական աղերսներ ունենալով թուրքական բռնապետության երկաթե արցանի մեջ արյունաքամվող հայ ժողովրդի հետ, բնականաբար, կիսում էին նրա և՛ ուրախությունը (որ շատ չէր), և՛ լեռնակուտակ վիշտը: Օսմանյան թուրքերին քաջ հայտնի էր հայ-ասորական բարեկամության առկայությունը, դրա համար էլ նրանց երկուսին պատճառաւոր ռոբերտություններն իրարից չէին զանազանում:

Ինչպես արևմտահայության, այնպես էլ ասորիների նկատմամբ թուրքերը ջարդեր կազմակերպեցին և 1895-1896 թվականներին, առավել ևս Առաջին աշխարհամարտի տարիներին, այսինքն՝ Հայոց մեծ եղեռնի օրերին:

Ասորիների առաջին ջարդերը ծայր առան 1895 թվականի աշնանը, երբ «Համիդի» արյունախում ջոկատները հարձակվեցին Դիարբեքիի վիլայեթի հայ և ասորի անպաշտպան ժողովրդի վրա: Այդ ամիսներին 245 գյուղերում բնակվող ասորիներից շուրջ 100 հազարին հարկադրեցին իսլամապաշտ դառնալ կամ սրահույրոր արեցին կամ էլ քեցին (կանանց և աղջիկներին) թուրքական հարանները: **Յեղասպանությունն իրականացվում էր աննադաժան մեթոդներով: Ոչնչացնում կամ փանջամահ էին անում չհարցնելով ոչ սեռը, ոչ փարիքը, ոչ ունեցվածքն ու զարգացման մակարդակը:**

¹ *Անահիտ Խոսրովա*, Ասորիների ցեղասպանությունն օսմանյան Թուրքիայում և հարակից թուրքական վայրերում (XIX դարի վերջ – XX դարի առաջին քառորդ), Երևան, 2004, էջ 3-5:

² *Л. М. Саргисов, Дружба, идущая из глубины веков (Ассирийцы и армяне)*, «Атра», № 4, СПб, 1992, стр. 71. Տե՛ս նաև *Անահիտ Խոսրովա*, նշված աշխատությունը, էջ 43-45:

1895 թ. հոկտեմբերին Եդեսիա արշաված մեկուկես հազարանոց համիդիական զորքը սրի հարվածներով (փամփուշտները խնայում էին) ոչնչացրեց 15 հազար ասորիների, հողին հավասարեցրեց նրանց շեն ու բարգավաճ գյուղերը: Նույն ճակատագրին արժանացան Հեքյարի, Սարայի, հատկապես **Դերե, Յեյլա, Պակե** գյուղերում ապրող ասորիները:

Եթե ընդհանրացնելու լինենք 90-ականներին ասորական ջարդերին վերաբերող, հատկապես օտարների թողած հաղորդագրությունները, ապա անվարանդեն կարող ենք արձանագրել, որ այդ տասնամյակում համիդիե թուրքական զորքն ու համիդիե քրդական զորաջոկատները **սրահույրոր արեցին շուրջ վաթսուն հազար ասորիների**: Անշուշտ, սա ցեղասպանության առաջին և «հաջողված» փորձն էր, որը գումարվում էր **երեք հարյուր հազար** ոչնչացված հայերի քվաքանակին և ժամանակի Եվրոպային ամոթի ու պատկառանքի կոչում, որը քվաքանակին և ժամանակի Եվրոպային ամոթի ու պատկառանքի կոչում, որը աչքերը զոցեց այդ ամենի առաջ և փաստորեն Թուրքիայի դեմ ճանապարհ հարթեց պլանավորել և իրագործել **մեծ ցեղասպանություն, մեծ եղեռն**, այլազգի հպատակ ժողովուրդների համատարած կոտորած: Եվ դա կատարվեց Առաջին աշխարհամարտի տարիներին:

Պատերազմի ընթացքում հայերին համահավասար եղեռնի բաժին դարձան և՛ Թուրքիայում, և՛ Պարսկաստանում բնակություն հաստատած ասորիները: Նրանց ջարդում էին հայերի համար մշակված սցենարով, այն է՝ **զորահավաք, զինաքափում, Դեր-Չոր**, արքայի ու սովամահություն: Ոչնչացված ասորիների քվաքանակն այդ տարիներին հասավ **երկու հարյուր հիսուն հազարի**, որը փաստորեն ջարդեց այդ ժողովրդի մեջքը:

Ասորիների հարցն այսօր միջազգային լուծում է պահանջում: Այս խնդիրն առ այսօր դուրս է մնացել համաշխարհային հասարակայնության ուշադրությունից: Արդարության վերականգնման, ժողովուրդների ինքնության ճանաչման և մշակութային զարգացման համար այսօր Թուրքիան պետք է դատապարտվի, քանի որ.

1. Թուրքիայի Հանրապետության հռչակումից ի վեր անտեսվել են միջազգային օրենքներն այս երկրում:
2. ՄԱԿ-ի անդամ Թուրքիան իրագործում է իր իսկ ընդունած չափանիշներին անհամապատասխան որոշումներ:
3. Թուրքիան չի կատարում միջազգային պայմանագրերով իր վրա դրված պարտավորությունները:
4. Զճանաչելով ՄԱԿ-ի «Ազգերի և ժողովուրդների իրավահավասարության և ազատ ինքնորոշման» սկզբունքը՝ Թուրքիան ոտնահարում է տեղի ասորիների իրավունքները:
5. ՄԱԿ-ի կողմից որպես մարդկության դեմ ծանրագույն հանցագործություն հռչակված «ցեղասպանություն» որակավորումը Թուրքիան այսօր էլ հետևողականորեն կիրառում է ասորիների նկատմամբ:
6. Շարունակվում է ասորիների արտաքսումը, որը ՄԱԿ-ի կողմից որակվել է որպես ոճիր:

7. ՄԱԿ-ը դատապարտում է ազգային խտրականությունը: Թուրքիան շարունակում է մասն իր նախորդների որդեգրած ծովման քաղաքականությունը՝ «Մեկ ազգ, մեկ լեզու, մեկ կրոն, մեկ դրոշ, մեկ երկիր» նշանաբանով:

8. ՄԱԿ-ը դատապարտում է ահաբեկչությունը, սակայն Թուրքիան այսօր էլ դեռ շարունակում է ահաբեկչական քաղաքականություն կիրառել ասորիների հանդեպ՝ վերացնելով նրանց հոգևոր և նյութական արժեքները:

9. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ընդունած «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» հոդվածները չեն հասնում Թուրքիայի տարածք:

Ասորի ժողովուրդն այսօր պահանջում է, որ Թուրքիան դադարեցնի միջազգային արյանների կողմից, որ ցեղասպանության հեղուկներով արածքների և նյութական արժեքների կորուստները հապուցվեն միջազգային նորմերի սահմաններում՝ մոտացության չմարտնչելով, որ ցեղասպանության մահացու վարակը մարդկության սպազան կանգնեցնում է վրանգի առաջ¹:

4. **ԵԶՂԻՆԵՔ:** Իբրև ինքնուրույն ժողովուրդ եզդիների հարատևության իրողությունը, ցավոք, ցայսօր էլ դեռևս վիճաբանության առարկա է հանդիսանում: Մեզ բարոյական իրավունք չվերապահելով խառնվել զույգ՝ **քուրդ և եզդի** ժողովուրդների էթնոգենեզի խնդիրների վճռմանը (թող այդ բարդ, նուրբ ու վիճահարույց խնդիրները վճռեն երկու ազգերի բարձրաստիճան մտավորականները), սակայն հարկադրված ենք անել մի քանի դատողություններ:

Սկսած XVIII հարյուրամյակից հայ պատմաբանները, աշխարհագետները, գրողներն ու հրապարակախոսներն իրարից զատվառում են **քուրդ և եզդի** ժողովուրդներին: **Միքայել Չանյանը, Ղուկաս վարդապետ Ինճիճյանը**, մեծն լուսավորիչ **Խաչատուր Աբովյանը, Բաֆֆին, Գարեգին վարդապետ Սրվանցյանցը, Սիրուիչ Խրիսյանը, Արզար Հովհաննիսյանը, Գրիգոր Արծրունին, Մեղրակ Տեր-Մարգարեանը (Տեկանցը) և շարք այլ մրավորականներ որոշակիորեն եզդիներին սահմանազայրում են քրդերից և համեմատաբար դրական են ներկայացնում առաջինների անցած ճանապարհը:**

Եզդիներն աշխարհի հնագույն ժողովուրդներից են: Նրանց նախահայրենիքը եղել է **Հնդկաստանը**, ավելի կոնկրետ՝ **Բռնրա (Բռնրի)** քաղաքը: Եզդիները հեթանոս են, պաշտում են **Մալաքե Թաուսին** (սիրամարգի տեսքով):

Եզդիների համաշխարհային ասոցիացիայի պրեզիդենտ Ազիզ Թամոյանի շարադրանքի համաձայն՝ «Պատմական հեռավոր ժամանակներում, ժողովուրդների տեղաշարժերի ընթացքում եզդիները Հնդկաստանից տեղափոխվեցին Բիրմայե, Կանդահարե (Աֆղանստան) քաղաքները, ապա Իրան, որտեղ և դարձան արևապաշտ: Հետագայում եզդիներն Իրանից տեղափոխվել են Թուրքիայի Խարզա (Խազալիե), Ավախե, Անթապե, Շարկ ու Շամե, ապա Շանգալ, Կամշլու, Բասրա, Քուֆ, Բաղդադ քաղաքները: VII դարից եզդիներն իրենց նախահոր անունով իրենց համարեցին եզդի: Հիշենք, որ Եզդի Մավիայի որդին է՝ Կարմիր Սուլթան Եզդի անունով: Սակայն հիշենք նաև, որ եզդիները վաղմջական ժամանակներից կոչվել են Մալաքե Թաուսի ժողովուրդ, հետագայում աղավիներ (աղավիներ), ապա սունիներ: 683 թ. հոկտեմբերի 10-ին Քերքալայի դաշտում սպանվում է Շիա Ալու՝ Ալիե Շերի որդի Հուսեյնը, այնուհետև ֆիզիկապես անհետա-

նում է Կարմիր Սուլթան Եզդիը (նրա ճակատագիրը մինչև այսօր անհայտ է): Հիշենք, որ Քերքալայի դաշտում Հուսեյնի սպանությունից հետո մուսուլմանները, որպես սուգի նշան, կապույտ շոր են հագնում: Մինչև այսօր էլ կապույտ շոր հագնելը եզդիների համար մեղք է համարվում: Հիշենք նաև, որ Քերքալայի դաշտում Հուսեյնի սպանության ժամանակ, երբ Սուլթան Եզդիը ներկվեց կարմիր արյամբ, սկսեց կոչվել Կարմիր Սուլթան Եզդի: Հետաքրքիր փաստ է նաև այն, որ եզդիների դրոշմ մինչև Քերքալան եղել է սպիտակ (քե լաքաքիե): Քերքալայի կովից հետո, ի նշան թափած կարմիր արյան, եզդիների դրոշմ դարձավ կարմիր և սպիտակ ու այդպես էլ պահպանվում է մինչև այսօր»¹:

Եզդիներն այժմ իրենց հայրենիքը համարում են **Իրաքը**: Նրանց հիմնական սրբավայրը գտնվում է Իրաքի հյուսիսում ընկած **Լալըշի** խոր ձորում, որտեղ և այսօր էլ նստում է ազգի առաջնորդը՝ **Միրին** (Միրեշեխան): Կրոնական շարժառիթներով XI դարից սկսած եզդիների մի սովոր հատված Իրաքից գաղթեց և բնակություն հաստատեց Արևմտյան Հայաստանի **Կարինի, Կարսի, Դիարբեքի և Վանի** վիլայեթներում:

Մեր օրերում եզդիները բնակվում են Հայաստանի Հանրապետությունում, Իրաքում, Թուրքիայում, Վրաստանում, Սիրիայում, Ուկրաինայում: Վերջերս եզդիների մի մեծ խումբ ներգաղթեց Գերմանիա և ԱՄՆ: Ժողովրդի ցրվածության պատճառով կանոնավոր մարդահամար չի անցկացվել: Եզդիների ղեկավարության կարծիքով՝ աշխարհում ապրում են **երկու միլիոն եզդիներ**: Ինտերնետային տվյալներով՝ նրանց թիվը հասնում է մինչև **500 հազարի**: Թվերի ճշգրտումը թողնում ենք այդ ազգի հոգևոր և քաղաքական առաջնորդների հայեցողությանը:

Իրաքում հաստատված եզդիներն ապրում են **Այն-Սիֆնի, Մինջարի և Դոխուկի** շրջաններում, որոնք ամփոփված են Մոսուլի նահանգի սահմաններում: Իրաքի եզդիների թվաքանակը հաշվվում է մինչև 500 հազար: Հայաստանում եզդիները գաղթել են Առաջին աշխարհամարտի նախօրյակին, որոնց վերահաստատման պրոցեսում խոշոր դեր են խաղացել **Ուսուպ բեկը և Չհանգիր** աղան:

Եզդիները Հայաստանում ապրում են իրավական, տնտեսական ու քաղաքական պատշաճ պայմաններում: Դեռևս 1990-ական թվականների սկզբին հաստատվեց եզդիների այբուբենը, բացվեց պարբերաթերթ, որը «Եզդիների ձայն» անվանումն է ստացել: Այժմ Հայաստանում ապրում են **60 հազար եզդիներ**:

Թուրքիայի **Մարդինի, Սղերդի, Ուրֆայի և Դիարբեքիի իլերում ապրում են շուրջ 50 հազար եզդիներ**, որոնք հալածվում են այնպես, ինչպես երկրի այլազգի մյուս ժողովուրդները:

Ռուսաստանում եզդիները բնակվում են **Կրասնոդարի** երկրամասում, **Նիժնեգորոդյան** մարզում, **Յարոսլավլի** մարզում, **Սպասկոպոլի** երկրամասում, **Նովոսիբիրյան** մարզում, **Մոսկվայում ու Ռոստովի** մարզում: Եթե դրան գումարենք **Վոլգոգրադի** մարզում ապրող եզդիներին, ապա Ռուսաստանում նրանց ընդհանուր թվաքանակը կհասնի հարյուր հազարի²:

2009 թ. ապրիլի 2-ին Իրաքում ապրող եզդիները հապուկ գրությանը դիմե-

¹ Տառացիորեն կրկնում ենք ազգությանը ասորի աղջկա՝ **Անահիտ Խարոնայի** աշխատության էջերում առաջադրած պահանջները, որոնց մեծը ամբողջովին համաձայն ենք: **Անահիտ Խարոնա**, նշված աշխատությունը, էջ 98:

² **Ազիզ Թամոյան**, Մի գերդաստանի պատմություն, Երևան, 2006, էջ 11-12:

³ **И. Н. Березин**, Езиды, Москва, 1854. **Д. Р. Полатов**, Езиды, религия и народ, Москва, 2005.

ցին ԱՄՆ-ի նոր պրեզիդենտ Բարաք Օբամային՝ հայտնելով, որ 1916 թվականին Թուրքիայում ցեղասպանության են ենթարկվել իրենց՝ շուրջ մեկ միլիոնի հասնող ծնողներն ու հարազատները:

Այսպիսով, Թուրքիայում ցեղասպանության ենթարկված արևմտահայության շարքերումն էին հույները, բուլղարները, ասորիները, եզդիները և արաբները, որոնց ապրած ողբերգությանն է նվիրված սույն շարադրանքը: Հեղինակը՝ մենք միասնաբար հաշիվ ենք պահանջում այսօրվա քուրդերից, որոնց երեկվա սերունդը բարբարոսաբար ոչնչացրեց հինգ ժողովուրդների և բռնությամբ սեփականացրեց նրանց ունեցվածքն ու Հայրենիքը:

- 5 -

Համաշխարհային պատմության մեջ կան իրադարձություններ, որոնք երբեք անցյալ դառնալ կամ, առավել էս, մոռացվել չեն կարող, քանզի նրանցից յուրաքանչյուրի մեջ խտացված ու ամփոփված է հարազատ ժողովրդի ամբողջական նկարագիրը: Այդ եղելություններից մեկն ու անմոռանալի ցեղասպանությունն էր, որն իր ապրած անմախաղեպ դաժանությամբ, զոհառատությամբ ոչ միայն հայոց անցած դժվարանց ճանապարհի ամենասև էջերից դարձավ, այլև բացահայտեց զարմանահրաշ այս ժողովրդի հերոսական ոգին, անկոտորում կամքը, մեծաբանակ թշնամուն փոքրաթվով դիմագրավելու կորովը, մարտնչող ոգին և ամենատուժեղ այլ գծեր:

Ծանրագույն այդ դեպքերի ընթացքում բացահայտվեցին երկատված, պետականակորույս ժողովրդի բնավորության անօրինակ այնպիսի հատկանիշները, որոնք կարծես թե յուրահատուկ են միայն իրեն: Նա մահվանը կյանքով էր դիմագրավում, բարբարոսությանը՝ սրեղծագործական հանճարով, զենքին՝ գրիչ ու վրչին էր հակադրում, ավերածություններից հեղու շարունակում էր կատուցել, վերակառուցել, հնի վրա վերընչյուղելով նորը, երկիրը դարձնում էր անճանաչելի, ժողովուրդը՝ մարդաշատ:

Հազարամյակների ճանապարհ է անցել հնամենի, միաժամանակ հերոսացած հայ ժողովուրդը՝ իր բնօրրան Հայկական բարձրավանդակում կերտելով սեփական ազգի այնպիսի պատմություն, որն անչափ առատ է անկրկնելի դրվագներով, մարդկային երևակայությունից վեր՝ խիզախումներով, ստեղծագործական հանճարեղ պոռթկումներով, դրանց զուգընթաց մաս կրած պարտությունների հետևանքով ունեցած ողբերգական անհամար կորուստներով:

Հայաստան աշխարհը խարսխված է աշխարհագրական, հետևաբար և ռազմատարատեղական անբարենպաստ դիրքերում: Աշխարհամասի այդ խաչմերուկներում փռված լայնածավալ երկիրն ի սկզբանե և ընդմիջտ ենթարկվում էր առավել հզոր ու ռազմատենչ հարևանների, հեռուներում, թե մոտակայքում հիմնված տերությունների պարբերական հարձակումներին: Անհավատալիության չափ աներեր ժողովուրդը դիմագրավում էր դրսաշխարհից եկած հարձակումներին, թշնամիներին ջախջախելով՝ ետ էր շարտում:

Շուրջ երկու հազարամյակ է հարատևել (ընդմիջումներով) հայոց հզոր պետականությունը: Այդ դարաշրջաններում իրար հաջորդող թագավորական շորս

դինաստիաները, նրանց աջ ու ահյակ բազուկները դարձած պետականամետ գորավարները (սպարապետները), իբրև կանոն, իրենց կյանքն ավարտել են պատերազմների բեմահարթակներում (հազվագյուտներն են հանգչել սեփական անկողնում, սեփական հարկի տակ):

Եղել են նաև փոքրաթիվ թուլամորթներ, հայրենիքի դավաճաններ, կենտրոնախույս ուժերի գլխավորներ (Վասակ Սյունի, Պետրոս Գետադարձ, Վեստ Սարգիս, Մելիք Ֆրանգյույ): Մրանց անունները նույնպես մնացել են պատմության մատյաններում, նշանախեց դառնալով քննադատների համար, ընդգծվելով իբրև «ազգի անարժան զավակներ»:

XII հարյուրամյակից սկզբնավորված, իրար հերթափոխող, քրիստոնեական վարդապետության պաշտողների նկատմամբ թունոտ ատելությամբ լցված, խլամապաշտ, մահմեդական վայրենաբարո գիշատիչները, ոչ թե կորցրած, այլ դեռևս չգտած մարդն ու մարդկայինը, ներխուժեցին Անդրկովկաս:

Նրանք ծանր, շատ ծանր հարվածներ հասցրեցին տեղաբնիկ ժողովուրդներին: Սելջուկ, քաթար, մոնղոլ, թուրք ասպատակիչներն անասնական բարբարոսությամբ ոչնչացրեցին, կերան իբրև փյունիկ վեր խոյացող Անդրկովկասյան ծառի սկզբում ծաղիկները, ապա տերևներն ու ճյուղերը: Վերջում կործանվեց, զետնվեց հաստաբուն կաղնին: Պետականագրկվեցին տեղաբնիկ բոլոր ժողովուրդները, այդ թվում՝ պաշտպանվելու տեսակետից արդեն տկարացած հայն ու Հայաստանը: Ընկավ երբեմնի հզոր, շատ հզոր հայոց պետականությունը, ոչնչացվեց դարերով հարատևած երկրի կառավարման ինքնատիպ ձևն ու ընդօրինակելի բովանդակությունը: Հայաստանը բաժան-բաժան արվեց, ծվատվեց, հիմնականում երկատվեց գիշատիչ բռնապետությունների միջև:

Այդ ցավալի, ողբերգական վիճակը հարապեց շուրջ վեց հարյուր երկար ու ծիգ փարիներ: Չարմանալին այն է, որ ինչքան մոտենում ենք նոր պատմության արշալույսին, այնքան լավ ենք գիտակցում, թե օսմանյան թուրքերն ինչպես էին կատարելագործում կայսերահպատակ ոչ թուրք ժողովուրդների, առաջին հերթին երեք միլիոնանոց արևմտահայության սկզբում ուժացման (համաձուլման), վերջում ֆիզիկական ոչնչացման իրենց հնարներն ու մեթոդները:

Ծայր առան հայկական ջարդեր, ցեղասպանություն, որը սկզբնավորեց Արդու Համիդը, ապա նրան շարունակեցին, նրան գերազանցեցին երիտթուրքերը՝ սկզբում Ադանայում, քիչ անց՝ ողջ Արևմտյան Հայաստանում:

1914 թ. օգոստոսի 1-ին բռնկված Առաջին աշխարհամարտն աղեկաբեր ու զոհառատ եղավ աշխարհի 33 երկրների համար, սակայն առավել բախտորոշ դեր կատարեց զույգ բռնապետությունների միջև բաժանված, երկատված, նրանց գաղջ տիրապետության տակ ընկած Հայաստան աշխարհի պատմական ճակատագրում: Քաղաքականապես իրավագուրկ ժողովուրդը, պետականակորույս երկիրը դարձավ հզոր ախոյանների երկարատև պատերազմական գործողությունների բեմահարթակ:

Շուրջ յոթնամյակ Հայկական լեռնաշխարհով ետ ու առաջ արեցին շահող ու պարտվող բազում ճակատամարտեր վարող հիմնականում ռուսական, երբեմն էլ թուրքական բանակները: Ժողովրդի կրծքավանդակը տրորող օտար գորաբանակներից մեկը՝ ռուսականը, օգնության ձեռք էր կարկառում անպաշտպան հայ

ժողովրդին, մյուսը՝ **թուրքականը**, ամենուր տարածամ մահ տարածելով, սրի հարվածով կտրում էր «իրենցից օգնություն» ակնկալող հպատակների կապկապած ձեռքերը: Ժողովրդի բոքը արյամբ ներկվում էին սեփական ու պատմական հայրենիքի ամեն մի գավառը, ամեն մի գյուղը, քարն ու թուփը:

Հիմնականում երեք աշխարհամասերի վրա ծավալվող, մարդկային մեծ կորուստների պատճառ դարձած դաժան պատերազմը սանձագործող կողմերն այնքան հոգաաշատ էին դարձել, որ, իրենց առտնին գործերից գատ, այլ խնդիրներով զբաղվելու ժամանակ քիչ ունեին: Օգտվելով աշխարհամարտի ընձեռած հնարավորություններից, հայ ժողովրդի համար չափազանց անբարենպաստ, Թուրքիայի ու թուրքերի համար հակառակը՝ արհեստականորեն ստեղծված նպաստավոր պայմաններից, երիտթուրքական բորենիները հապշտապ սկսեցին **արևմտահայության ցեղասպանության** բիրտ, անմարդկային, ազգաջինջ քաղաքականությունը:

Մեկ ամբողջ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման, նրա հազարամյակների հայրենիքի բռնազավթման, աշխարհիկ ու հոգևոր գանձերի բարբարոսաբար ոչնչացման, **թուրքացման** ոճրագործ քաղաքականության իրականացումն աննախադեպ, միաժամանակ աներևակայելի երևույթ էր համաշխարհային պատմության մեջ: Այն, պատմության ետնախորքից սկսած, հանուր մարդկության սեփական ձեռքերով սևագրված կենսագրության ամենաողորմագրական էջն էր, որն այսօր պետք է գնահատվի օբյեկտիվորեն և **դապապարզվի հավուր պատշաճի**: Նման առաքելությունը մեր վրա վերցնելով, փորձենք պարզել, թե 1915-1923 թթ. ինչքա՞ն հայ է զոհ գնացել թուրքական սրի անխնա հարվածներին և՛ Արևմտյան Հայաստանում, և՛ օսմանյան կայսրության հայաբնակ մյուս նահանգներում:

Մենք ընդգծեցինք **մուսավորապես**, քանզի ինչպես այն օրերին, առավել ևս դրանից հետո ոչ մի ճշգրիտ վիճակագրություն չի կատարվել: Դժվարությունը կայանում է նաև նրանում, որ ժողովրդի ոչնչացման պրոցեսն իրականացվել է տարբեր ձևերով ու մեթոդներով: Նախ, այն էլ հիմնականում, հայ ժողովրդի ցեղասպանությունը կատարվել է թուրք բարբարոսների **անմիջական ջարդարարության** մեթոդով՝ սրով ու հրացանով, քարով ու քարասպանությամբ: Մեծ է եղել բռնազարթեցման ճանապարհին ուժասպառ եղած, հիվանդությունների համաճարակից մահացածների թիվը: Հազար հազարներ են մահացել բնական, ապա արհեստականորեն ստեղծված սովից ու սովամահությունից: Մահմեդական մուլլաները ջանք չեն խնայել՝ հայերին կրոնափոխելու (մանավանդ կանանց, աղջիկներին, երեխաներին), իսլամացնելու: Բռնության բիրտ գավազանի հարվածի սպառնալիքների տակ շատերը հարկադրված համաձայնվել են: Եղան նաև հազարավորներ, որոնք մահը գերադասեցին մահմեդականամալուց, հետևաբար բռնեցին **ինքնասպանության** ճանապարհը: Եվ մի՞թե կրոնափոխներին չպետք է համարել եղեռնի, այսինքն՝ հայասպանության զոհեր:

Այնչափ է, որ ինչպես մեզանից առաջ կատարված բոլոր հաշվարկումները, այնպես էլ մեր տվյալները ցեղասպանության զոհերի վերաբերյալ **մուսավոր** եղել են և մնում են: Հետևաբար, ընդհանրացնելով վիճակագրական լեռնակուտակ նյութերը, մենք հանգում ենք հետևյալ եզրահանգումների:

Օսմանյան Թուրքիայում ցեղասպանության պրոցեսը սկզբնավորվել է շատ

վաղ, սակայն զանգվածորեն կենսագործվել է 1890-1922 թվականներին: Այն իրականացվել է երեք փուլով.

ա) **1890-1896 թթ.**, երբ կոտորվեց շատերի հաշվարկումներով **300 հազար**, մեր հաշվարկումներով՝ **400 հազար հայ** բնակչություն: Մենք այս շրջափուլի մեջ ենք մտցնում նաև դարավերջին Սասունում և այլուր կատարված ջարդերը, հատկապես **1909 թ. Աղսնայի 30 հազար հայերի ոչնչացումը**:

բ) **Մեծ եղեռնը** սկսվեց 1915 թ. ապրիլի 24-ով և ավարտվեց Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությամբ, այսինքն՝ Մուղրոսի զինադադարով: Այստեղ թվերը հակասական են, երբեմն իրարամերժ: Դրա համար մենք վերցնում ենք նվազագույնը, այսինքն՝ երիտթուրքերի յաթաղանին զոհվածների թիվը հաշվում ենք **մեկ և կես միլիոն**, այն, ինչ վկայում են հատկապես օտար հեղինակները, պետական այրերը, լրագրողները, ուղեգրողները, ականատեսները և այլք:

գ) Ցեղասպանության վերջին, ամենաողորմագրական փուլը 1919-1922 թվականներն էին, երբ քեմալականներն ավարտին էին հասցնում Աբդուլ Համիդի սկսած գործը, Թուրքիան և Արևմտյան Հայաստանը, Կիլիկիան և Չմյուռնիան զրկում հայ բնակչությունից՝ թողնելով այդ վայրերում հատուկեմտ այն հայերին, որոնք ընդունել էին **մահմեդականություն**:

Այսպիսով՝ 1890-1922 թվականներին ցեղասպանության մեթոդներով արևմտահայությունը մոտավոր հաշվարկներով, կտրացված տվյալներով տվեց **երկու միլիոն երկու հարյուր հազար** զոհեր, որոնց թափած ծով արյան համար այսօրվա թուրքական պետությունը, թուրք ժողովուրդը (իրենց հայրերի ու պապերի փոխարեն) պետք է գոնե բարոյական պատասխանատվություն կրեն: Մեր կարծիքով, հայ ժողովուրդը, հատկապես **Հայկական դափի** պաշտպան նրաներկայացուցիչներն ուրիշ որոշում կայացնել չեն կարող և իրավունք էլ չունեն, քանզի եթե չբողոքեն վերապրողները, ապա զոհվածներն անեծքի մեծ բաժին կհանեն սխալվողներին, զիջման գնացողներին:

Դժբախտությունն այն է, որ մարդկության պատմության էջերը կարմիր են ներկված այն ծովածավալ արյունով, որը թափվել էր հին աշխարհից սկսած, այսօրվա նոր դարաշրջանով եզերված: Բռնկվել են նաև անթիվ պատերազմներ, կոտորվել են անհամար մարդիկ, և ինչքան ժամանակները նորանում են, այնքան պատերազմները թեժանում են, նույնիսկ երկու անգամ վերածվում աշխարհամարտերի: «Զաղաքակրթություն կոչված մարդկային ձեռակերտի պատմության գրեթե բոլոր էջերը արյուն կկաթկթի դժբախտաբար, – գրում է սիյուռքահայ հետազոտող **Գերսամ Մհարոնյանը**: – Բոլոր ցամաքներում վրա և բոլոր դարերում, աշխարհակալներ, թե տիտղոսավոր ավազակներ «թշնամին» ջարդած են հազարներով, հարյուր հազարներով, միլիոններով՝ վասն փառքի, կողոպուտի ու տիրակալության: Եվ այս տեսակետով իրարու ըսելիք չունին պատմության մեջ «մեծ» որակավորման արժանացած պետությունները»: **Անժխարելի է նաև, որ պարերազմների ժամանակ երկուստեք հեղած արյունը փարբերվում է զանգվածային այն ջարդերից, որոնք կիրառվել են մեծերի կողմից փոքրերի նկատմամբ, ունեն պայքարի անհավասար սկզբունքներ և իրավամբ սրբանում են գեւոցիդ անվանում:**

«Այդ քստմենտի, ահագնեցիկ մարդկային դրամային մեջ, – շարունակում է Գերսամ Ահարոնյանը, – եղած են ցեղեր կամ ազգեր սակայն, որոնց միակ «առաքելությունը» եղած է կարծեք ոճիր գործել, քանդել, ավերել, թալանել: Մինչ իսպանացիք կամ անգլիացիք... սպանելեն ետք սկսած են շինել ու քաղաքակրթություն կերտել, անդին եղած են սակավաթիվ ցեղեր, որոնք միայն հրկիզած են ու բնաջնջած և հետո ոչինչ ստեղծած են, ոչինչ կերտած: Ահա այդ վերջին տեսակի **ցեղերուն ցանկին գլուխը գրված է թուրք: Ցեղ մը, որուն գլխավոր մասնագիտությունը եղած է ցեղասպանությունը, որուն գլխավոր «շնորհքը» եղած է քանդումը: Անկեա «մարդը մարդու դեմ գայլ» չէ եղած, այլ «գայլ՝ մարդու դեմ գայլ եղած է, - գիշարիչ գայլերու ոհմակ պարզապես ու փեռապես: Եվ իզուր չէ, որ թուրքը իբրև ցեղային խորհրդանիշ նախընտրած և որդեգրած է Գորշ գայլը»:**

Ակամայից կարծեք թե գայրույթ, մի քիչ էլ վիրավորանքի երանգ կա եղեռնից մազապուրծ ընտանիքի վերջին շառավիղներից մեկի՝ սիյուրքահայ հրապարակախոսի վերոհիշյալ տողերի մեջ: Բայց չէ՞ որ այդպես է իրողությունը: Ապացույցներից բերենք միայն մեկը. երեկ, այսօրն՝ 1995 թ. թուրք «դեմոկրատական մտավորական» Դուրու Արդուկադիլը հրապարակեց հետևյալ տողերը. «**Ոչ թուրքերը – կամա թե սկամա հանդիսանում են թուրքերի թշնամիները, – գրում է նա, – քանզի նրանք չունեն մեր ազնվաբարո, վեհանջն գծերը**»: Ստացվում է այնպես, որ աշխարհի քրիստոնյա բոլոր ժողովուրդները, ինչպես նաև մահմեդապաշտ, ոչ թուրք մյուս ժողովուրդները, քանի որ չունեն թուրքերի «ազնվաբարո և վեհանջն» գծերը, հետևաբար, բոլորը թուրքերի թշնամիներն են:

Թուրքական ցեղասպանությունն այսօր ևս շնչում է Բոսֆորի ափերին, քանի որ քրդերի և ոչ թուրք հպատակ այլ ժողովուրդների ցեղասպանությունը շարունակվում է օրը ցերեկով, առանց արգելքի: Թուրքերը, այո, գրեթե ողջ ազգը և ոչ թե միայն կառավարող շրջանները, հայերից և քրդերից զատ, գուցե և ավելին, թունոտ ատելությամբ են լցված Ռուսաստանի, ռուս ժողովրդի, ընդհանրապես սլավոնական ցեղակրոնական միավորման դեմ: Յուրսել Օսման Սերչենգեշտին «Ենի Իսթանբուլում» (Նոր Իսթանբուլ, 2.IX.1967) գետեղված պանթուրքիստական թույնով ներծծված հողվածում ոչ միայն պահանջում է օսմանյան լայնածավալ կայսրության վերակենդանացումը, այլև նախկին ԽՍՀՄ իսլամապաշտ երկրներից «ռուսներին դուրս վոնդելը»:

Մուստաֆա Քեմալն ու Զյազիմ Կարաբեքիրը, օսմանյան ամբողջ կայսրությունը դատարկելով արևմտահայության վերջին բեկորներից, հայասպանությունը շարունակեցին **Արևելյան Հայաստանում, Նախիջևանում և Լեռնային Ղարաբաղում**, թուրք ազերիների ձեռքերով մոխրակույտի վերածեցին հեթանոսային գեղեցկությամբ օժտված Շուշի և Կարս բերդաքաղաքները, գրեթե հայազրկեցին Բաքուն, ասպատակեցին Ալեքսանդրապոլը (Գյումրի) և ընդհուպ մոտեցան Երևանի մատույցներին: Օսմանյան կայսրությունում, թե Անդրկովկասում բնակվող թուրք ցեղի բոլոր դասերի ու դասակարգերի ներկայացուցիչները, չնչին բացառությամբ, ձեռք ձեռքի տված վայրենաբարո քուրդ ու չերքեզ ցեղախմբերի հետ, խախտելով միջազգային բոլոր տեսակի օրենքները, կատարեցին ցեղա-

սպանություն, ավելի կոնկրետ, **արմենոցիդ** (հայասպանության մի նոր արարողություն, որն իր դաժանությամբ գերազանցում էր նախորդ երկու շրջափուլում կատարվածին):

Իրենց գործած մարդասպանության ձևերով ու աներևակայելի մեթոդներով **թուրքերը դապարկեցին մի ամբողջ ժողովրդի սրբազան Հայրենիքը**, մոխրակույտի վերածեցին հազարամյակներով ստեղծած նրա հուշարձանները, հոյակերտ վանքերն ու սրբազան եկեղեցիները, քաղաքներն ու ավանները: Գտնվելով զարգացման ցածր մակարդակի վրա՝ նրանք մարդասպանությունը կատարեցին բարբարոսական մեթոդներով, այնպիսի վիշտ ակոսեցին իրենցից անհամեմատ բարձր կանգնած հայ ժողովրդի սրտում, որը ոչ միայն չի մոռացվում, այլ գնալով ավելի է խորանում, այսօրվա և հաջորդ սերունդներին պատգամելով, **թե հիշելն ապրել է, մոռանալը՝ մահ...**

Իբրև ցեղասպանության անմիջական հետևանք, աշխարհի գրեթե բոլոր երկրներում ձևավորվեցին հայկական գաղութներ, որոնք ընդհանուր անունով կոչվեցին **Սփյուռք**, ավելի կոնկրետ՝ **Հայկական սփյուռք**: Այնտեղ վերապրողները ցեղասպանությունից մազապուրծ հայկական բեկորներն էին, այն ծնողների հայրենագուրկ զավակները, որոնք պարտականություն ունեին պաշտպանել իրենց և հայրենակիցների ոտնահարված իրավունքները՝ **փայփայելով իրական այն հույսերը, թե մի օր կվերադառնան Հայրենիք-Ժննդավայր, գոնե հողին կհանջնեն մինչև օրս անթաղ մնացած հարազատների ոսկորները**:

Առաջին աշխարհամարտն ավարտվեց գերմանա-թուրքական խմբավորման խայտառակ պարտությամբ, 1918 թ. օգոստոսի 30-ին: Թուրքական կողմի խնդրանքով զինադադարի բանակցությունները սկսվեցին Անտանտի տերությունների, հատկապես անգլիական հրամանատարության հետ և ավարտվեցին հոկտեմբերի վերջին:

Թուրքերի և Անտանտի միջև ռազմական գործողությունները դադարեցվեցին հոկտեմբերի 30-ին, հինգշաբթի օրվա ժամը 15-ից: Մինչ այդ թուրքերն ահ ու սարսափի մեջ էին: Նրանք կարծում էին, որ նախկինում գործած ծով մեղքերի համար դաշնակիցների հաղթական բանակը կմտնի մայրաքաղաք և իրենց հետ կվարվի այնպես, ինչպես իրենք վարվեցին Բյուզանդական կայսրության հետ 1453 թ. մայիսի 26-ից 30-ը: Դժբախտաբար թե բարեբախտաբար, քրիստոնյա Եվրոպան մնաց իր բարձրության վրա, բարբարոսությանը պատասխանեց քաղաքակիրթ եղանակով:

1918 թ. հոկտեմբերի 30-ին կատարվեց երկու կարևոր իրադարձություն: Նախ՝ Լեմնոս կղզու **Մուդրոս** նավահանգստում անգլիական «Ազամեսնոն» զրահամավի վրա ստորագրվեց թուրք-անգլիական զինադադարի պայմանագիրը, որը պատմության մեջ մտավ **Մուդրոսի զինադադար անունով**: Նույն օրն անգլիական հրամանատարությունը, սպիտակաբաշ ձիեր հեծած, քառատրոփ անցավ Ստամբուլ վերանվանված Կոստանդնուպոլսի փողոցներով:

Փաստորեն Թուրքիայի համար պատերազմն ավարտվեց նախավերջին սուլթանի և երկրից ճողոպրած երիտթուրքական շնագայլերի կարծածից ավելի «թեթև» տարբերակով: Լռեցին թնդանոթները, սկսեցին գործի անցնել դիվանագետները, ձեռքներին բռնած գծագրական «դաժան» գործիքները, որոնք առանց

ծանր ու թեթև անելու վերագծում, «վերադասավորում» էին պարտված երկրների, հատկապես Թուրքիայի քարտեզը: Նրանք այս դեպքում ելակետ ունեին ոչ թե անհրաժեշտությունն ու արդարանությունը, այլ յուրաքանչյուրը յուրովի կանխատեսած սեփական շահերը, որոնք իրողության վերածելու ակնկալիքով էլ չորս տարի առաջ մտել էին այդ դժոխքի հորձանուտների մեջ:

Ճարձատվելով կոտրվում էր թուրքական պետական մեքենայի առանց այն էլ հեռանձի մեխանիզմը, որը դարեր շարունակ այդքան վիշտ ու տառապանք էր սրտոնառել ոչ միայն հարևան բազում երկրներին, այլև այլահավատ սեփական ժողովուրդներին՝ *հայերին, հույներին, ասորիներին, եզդիներին*: Ի պատասխան այդ ամենի Եվրոպայի ու Ամերիկայի առաջավոր մարդիկ թուրք ղեկավարությունից պահանջեցին դատել գոնե այդ տասնամյակի ցեղասպանության մասնակիցներին:

1919 թ. փետրվարին Մեհմեդ Չ սուլթանի հրամանով սկսվեց հայկական ցեղասպանության մեղավորների դատավարությունը: Պրոցեսը ղեկավարում էր գեներալ Մուստաֆա Նազըմ փաշան: Շուրջ հինգ ամսվա դատական նիստերից հետո, հուլիսի 5-ին, *թուրքական, կրկնում ենք, թուրքական զինվորական դաշտապետներ, թուրք դատավորների, դատարանի թուրք անդամների, թուրք դատապաշտպանների մասնակցությամբ վճիռ կայացրեց*: Ըստ այդ որոշման՝ իբրև ցեղասպանության կազմակերպիչներ ու գլխավոր հանցագործներ, հեռակա կարգով *մահվան դատապարտեցին* ներքին գործերի մինիստր, ապա մեծ վեզիր Թալեթին, ռազմական մինիստր Էմվերին, ծովային մինիստր Ջեմալին, երիտթուրքական կուսակցության գլխավոր քարտուղար դոկտոր Նազըմին և այլոց:

Այս որոշումը (որը բնագրով մենք հրատարակել ենք թուրքերենով լույս տեսած մեր մենագրության երկրորդ մասում) այլևս կասկած չի թողնում, որ, ի տարբերություն այսօրվա «նոր թուրքերի», «հին թուրքերը» ժամանակին ընդունել են իրենց ծովացած մեղքերը, դատապարտել ցեղասպանության կազմակերպիչներին ու գլխավորներին, հրապարակայնորեն *նկրողություն խնդրելով ողջ հայ ժողովրդից*:

Դատավարության պրոցեսին զուգընթաց լարված աշխատանք էր ծավալվում երկկողմ հաշտության պայմանագիր ձևակերպելու նպատակով: Կրքերը գնալով բորբոքվում էին, գործին խառնվում էր ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը: Ջրի երես էին դուրս գալիս Եվրոպական մեծերի, հատկապես անգլո-ֆրանսիական հակամարտությունները, որոնք երբեմն սպառնում էին զինված կոնֆլիկտի վերածվելու: Եվ վերջապես, Ռուսաստանում հաղթանակած հեղափոխության ալիքի տարածումից երկնչած, մեծ տերությունները գալիս են փոխզիջման և Թուրքիայի հետ ստորագրում հաշտության պայմանագիր:

Հաշտության պայմանագիրը ստորագրվեց 1920 թվականի օգոստոսի 10-ին, Փարիզի մերձակայքում գտնվող *Մեր քաղաքում*, որը պատմության մեջ մտավ *Մերի հաշտության պայմանագիր* անունով: Փաստաթուղթը Թուրքիայի կողմից ստորագրում էին սուլթանական կառավարության ներկայացուցիչներ դոկտոր *Ռեֆիկը և Ռեշադ Խալիլուրը*: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը գլխավորում էր *Ավետիս Ահարոնյանը, որը և Լուդրոնի հայ կառավարներից մեկից իբրև նվեր սրացած ոսկեծայր գրչով ստորագրում է հայ ժողովրդին «երջանկացնող» այդ փաստաթուղթը*:

Բացի վերոհիշյալ երկուսից, Սևրի պայմանագիրն ստորագրեցին Բրիտանական թագավորությունը, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Բելգիան, Հունաստանը, Հեջազը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբա-Խորվաթա-սլավոնական պետությունը և Չեխոսլովակիան: Սևրի պայմանագիրը համաշխարհային պատմության, առավել ևս հայ ժողովրդի ճակատագրում ունեցել է բախտորոշ նշանակություն: Նկատի ունենալով այդ պայմանագրի ոչ միայն հույժ կարևորությունը, այլև չափազանց այժմեությունը, փորձենք փոքր-ինչ մանրամասնել դեպքերի զարգացման ընթացքի մասին մեր դիտարկումները, հատկապես բացենք Հայկական հարցին վերաբերող փակագծերը:

Նախ՝ Սևրի պայմանագիրը միանգամից չստեղծվեց: Վավերագրին նախորդել էին 1916 թ. ձևակերպված *Մայրս-Պիկոյի համաչայնագիրը*, 1918 թ. *Մուդրոսի զինադադարի* և վերջապես 1920 թ. *Սան-Ռեմոյի* կոնֆերանսի որոշումները: Դաշնակիցները մեծ դժվարություններով բանակցությունների ընթացքում իրար դեմ դիվանագիտական մարտեր մղելով՝ քայլ առ քայլ էին մոտենում Սևրի բարձրագույն ամբիոնին և վերջապես հաստատում *հիմնական պայմանագիրը*, որը ժամանակակիցների բերանով ստացավ *Թուրքիայի մահախոսական* անունը:

Սևրի ընդարձակ պայմանագիրը բաղկացած էր 433 հոդվածներից, բաժանվում էր 13 մասերի, ուներ փոքր նախաբան և ստորագրող երկրների ու նրանց ներկայացուցիչների ցուցակը: Այդ հոդվածները վերաբերում էին սահմանային և քաղաքային փոքրամասնությունների պաշտպանությանը, ռազմածովային, օդային, գերիների և պատիժների, տնտեսական և ֆինանսական, նավագնացության, ջրային և երթուղային ճանապարհների, աշխատուժի հարցերին:

Սևրի պայմանագիրը վերաձևում էր Թուրքիայի նախկին քարտեզը: Սուլթանին Եվրոպական Թուրքիայում մնում էին Կոստանդնուպոլիսն ու շրջակայքը, ապառազմականացվում էին Բոսֆորն ու Դարդանելը: Օսմանյան Թուրքիան (երիտթուրքերի ղեկավարներն արդեն ճողոպրել էին) հրաժարվում էր Թրակիայի նկատմամբ ունեցած իր գերիշխանությունից, ինչպես նաև Էգեյան ծովում կղզիներից, Կիպրոսից, Եգիպտոսից և արաբական տիրույթներից:

Ըստ պայմանագրի, որպես մանդատային տարածքներ, Պաղեստինն ու Իրաքը տրվում էին Անգլիային, Սիրիան և Լիբանանը՝ Ֆրանսիային: Թուրքիան հրաժարվում էր արաբական թերակղզու և Աֆրիկայի նկատմամբ ունեցած ամեն տեսակ հավակնություններից, ճանաչում էր Անգլիայի գերիշխանությունը Եգիպտոսի նկատմամբ և Կիպրոսի անգլիական անբսիան: Իտալիային էին անցնում Դոդեկանեզի կղզիները (Էգեյան ծով), Հունաստանին՝ Արևելյան Թրակիան Էդիրնեի (Ադրիանապոլիս) հետ, Գալլիպոլի թերակղզին և Չմյուռ-Մրակիան Էդիրնեի (Ադրիանապոլիս) հետ, Գալլիպոլի թերակղզին և անցնում ևս: Նեղուցների գոտին ենթակա էր լրիվ ապառազմականացման և անցնում էր Անտանտի ստեղծած Նեղուցների միջազգային հանձնաժողովի հսկողության տակ:

Անշուշտ, մեզ հետաքրքրողը Հայաստանին, արևմտահայությանը և Հայկական հարցին վերաբերող խնդիրներն են: Քանի որ այդ խնդիրներն այսօրվա թուրքերի համար կարող են նյարդային ջղաձգումների պատճառ դառնալ, ավելին, անհավատալի թվալ իմ հայ եղբայրներին ու քույրերին, ուստի մեջբերում ենք Հայաստանի քաղաքական նոր իրավիճակին վերաբերող որոշումները:

1. **Սևրի պայմանագրով օսմանյան Թուրքիան Հայաստանը ճանաչում էր ազատ, անկախ պետություն:** Հայաստանի նման կարգավիճակն էին ճանաչում պայմանագիրն ստորագրող **դասակները** մեծ ու փոքր այն պետությունները, որոնք Առաջին աշխարհամարտից հետո իրենց սրերը հաղթանակով էին դրել պատյանները: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար **Ավետիս Ահարոնյանը**, որպես լիազոր ներկայացուցիչ, **որպես անկախ պետության ներկայացուցիչ**, պայմանագրեր էր ստորագրում մյուս բոլոր պետությունների ղեկավարների հետ համահավասար: Մեկ խոսքով, և՛ իսլամապաշտ Թուրքիան, և՛ քրիստոնյա Եվրոպան անվերապահորեն ճանաչեցին Հայաստանի անկախությունը:

2. **Թուրքիան համաձայնում էր, կրկնում ենք, թուրքական պետության ներկայացուցիչները համաձայնում էին Արևմտյան Հայաստանի տարածքից Էրզրումի (Կարին), Վանի, Բիթլիսի (Բաղեշ), Տրապիզոնի վիլայեթները հանձնել իրենց իսկական տիրոջը՝ Հայաստանին:** Դաշնակիցները վավերացնում էին այդ որոշումը՝ միաժամանակ Ամերիկայի պրեզիդենտ **Վուդրո Վիլսոնին** իրավունք վերապահում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանագիծն անցկացնել այնպես, որ վերջինս Տրապիզոնի երթուղիներով ազատ ելք ու մուտք ունենար դեպի Սև ծով:

1920 թ. նոյեմբերի 22-ին Վ. Վիլսոնը ներկայացրեց իր որոշումը, որի համաձայն՝ սահմանը երկու երկրների միջև անցնում էր Կոտուրի կիրճով, ձգվում դեպի Վանա լճի հարավ-արևմուտք և Բիթլիս ու Մուշ քաղաքներից հարավ-արևմուտք: Ընդհանուր տարածքից դուրս էին մնում Վանի վիլայեթի կեսից ավելին և Սդերդի գավառը: Այնուհետև սահմանը ձգվում էր դեպի հյուսիս, անցնում Երզնկայից քիչ հեռու, որովհետև ըստ բնական աշխարհագրական պատմեշի: Դեպի Սև ծով մուտք գործելու համար Հայաստանի համար ելք էր որոշվում Դերսիմից հյուսիս ընկած տարածքը և ապա անցնում դեպի Տրապիզոն ու Ջանիկ:

Համաձայն վիլսոնյան ծրագրի՝ Հայաստանի տարածքը կազմում էր քառասուն հազար քառակուսի մղոն, որը հավասար էր շուրջ 98-100 հազար քառակուսի կիլոմետրի:

3. Տարածքի խնդիրն այժմ ընդհանրացնենք. 100 հազար քառակուսի կմ տրվում էր Սևրի Հայաստանին - Արևմտյան Հայաստանի երեք հարյուր հազար քառակուսի կիլոմետրից:

Արևելյան Հայաստանի տարածքն **այդ պահին 30 հազար քառ. կմ էր: Կարսի մարզը 17 հազ. քառ. կմ էր:** Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանը շուրջ 30 հազ. քառ. կմ էին: Հետևաբար, Սևրի պայմանագրի ստորագրումով և նրա սահմանաձև տարածքային պահանջները բավարարելու դեպքում Հայաստանի Հանրապետությունը կունենար շուրջ **հարյուր յոթանասուն հազար քառակուսի կիլոմետրանոց Հայոց հայրենիք, սեփական անկախ պետություն, զինանշան և օրհներգ:** Ահա այս խնդիրների լուծումն էր, որ Հայաստանը դարձնում էր երանավետ երկիր, հայ ժողովրդի այդքան կրած վերքերի սիոփարան:

Շատ երկար չուեց որդեկորույս, հայրենակորույս հայ ժողովրդի ցնծությունը, որը նրան էր պարգևել **Սևրի պայմանագիրը:** Պատերազմը դեռևս չավարտված, օսմանյան լայնարձակ կայսրության տարածքները բաժան-բաժան անելու խնդիրներով մտահոգված, Անտանտի տերությունները (երեկվա սրտակից եղբայր-

ները) դիվանագիտական գաղտնուղիներում սկսեցին ոչ միայն տարանջատվել իրարից, այլև դավեր լարել մեկը մյուսի դեմ:

Լոնդոնն ու Փարիզն առանձին-առանձին ընդունում էին Ստամբուլից ժամանած բանագնացներին և ծնունդ տալիս զարմանք պատճառող գրավոր ու բանավոր բազմատեսակ դաշնագրությունների: Դաշնակիցների միջև առաջացած երկփեղկումն աստիճանաբար լայնանում էր, վերածվում ոչ միայն հակասությունների անդունդի, այլև՝ բացահայտ հակամարտությունների:

Օգտվելով նման պառակտումներից, գործելու հրապարակ իջավ Մուստաֆա Բենալը, որն իր մայրաքաղաքն ընտրելով **Անկարան** (Անգորա, Ենիկյուրի), միջոցները գործադրելու մեջ խտրություն չդնելով, բոլոր ջանքերն օգտագործեց Թուրքիան փրկելու մասնատումից, այսինքն՝ տարածքային մեծ կորուստներից: Դժբախտաբար, նրան այդ հաջողվեց, քանզի վերևում թվարկված նպաստավոր պայմաններին զուգընթաց կատարվեց համաշխարհային մեկ այլ թուրքափրկիչ իրադարձություն:

1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում հաղթանակեց բուլշևիկյան հեղաշրջումը: Ռուսական լայնարձակ կայսրության մեծ մասի տարածքի վրա ձևավորվեց մի նոր պետություն, որն սկսեց ահ ու սարսափ տարածել բուրժուական աշխարհում: Հեղափոխության ալիքը տարածվում էր ամենուրեք, որին թուրք կանգնելու մտահոգությունն Անտանտի տերություններին հարկադրում էր խաչակրաց արշավանքի դուրս գալ լեմինյան Ռուսաստանի դեմ:

Խորհրդային պետությունը կարծես թե մեկուսացված էր: Այդքան թշնամիների գորաբանակների դեմ պայքարելու գործում նրան դաշնակիցներ էին անհրաժեշտ, վերջիններս լինեին թույլ, թե հզոր: Զգալով այդ ամենը, խորամանկ, խարդախության մեջ իրեն մրցակից չունեցող Մուստաֆա Բենալը, պարելով գույգ լարերի վրա, նամակով դիմեց Վ. Ի. Լենինին, նրան «բարեկամության» և «եղբայրության» առաջարկ արեց, փոխարենը պահանջելով **ռսկի, շապ ռսկի, զենք, զինամթերք:**

Կարճ ժամանակամիջոցում խորհրդա-թուրքական հարաբերությունները դրվեցին բարձր մակարդակի վրա, որին զոհ գնացին **հույն և հայ ժողովուրդների ազգային շահերը**, նրանց հայրենիքը: Բենալն ու Կարաբեքիրը, զինված ռուսական զենքով, բանակը հանդերձավորած խորհրդային արտահագուստով, սկզբում բռնազավթեցին Արևելյան Հայաստանի մեծ մասը, ապա հունական և հունաբնակ տարածքը: **Ավարպեցին այդ երկու ժողովուրդների ցեղասպանության վաղուց սկսած պրոցեսը:**

Լենին-Բենալ այլանը լուրջ ջանքեր գործադրեց չեղյալ համարելու, վատագույն դեպքում՝ չճանաչելու Սևրի պայմանագիրը: Նրանք Սևրին հակադրեցին 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված ռուս-թուրքական պայմանագիրը, որն **առանց հայ ժողովրդի մասնակցության** ստրկացուցիչ, Հայաստանը Բենալին նվիրող մի անտանտի վավերաթուղթ էր: Ավելին:

Բուլշևիկյան Ռուսաստանն ընդառաջելով քեմալականների հանցավոր, հայապաշտ պահանջներին, Հայաստանի Հանրապետությանը ստիպեց 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրել մեկ այլ պայմանագիր, որով հաստատում էր Մոսկվայի դաշնագիրը: Ստացվեց այնպես, որ պատերազմում խայտառակ

ձևով պարտված Թուրքիան հաղթողների ճամբարում եղած Հայաստանից խլեց ոչ միայն նրա ամբողջ արևմտյան հատվածը, այլև **Կարսի մարզն ու Մուրմալու-Իզդիրի գավառները: Կարսի պայմանագիրը հայ ժողովրդի հազարամյակների պատմության մեջ եղած ամենատղբերգական դաշնագիրն էր, որի վերացմանը, չեղյալ հայտարարմանը չգտել են բոլորը, դրանով իսկ փորձելով վերականգնել պատմական արդարությունը:**

Ավարտվեց Երկրորդ աշխարհամարտը: **Իոսիֆ Ստալինը**, որը ժամանակին ակտիվորեն մասնակցել էր Մոսկվայի ու Կարսի ամօրինական պայմանագրերի կնքման պրոցեսին, Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսում շատ հետևողականորեն բարձրացրեց այդ դաշնագրերը չեղյալ հայտարարելու, **Կարսը՝ Հայաստանին, Արդահանը՝ Վրաստանին վերադարձնելու խնդիրները:**

Բնականաբար, նրան ձայնակցեցին Վ. Մ. Մոլոտովը, Ա. Վիշինսկին, Գ. Ա. Հարությունյանը, Գևորգ Զ Չորեքչյանը, մեկ խոսքով՝ ողջ խորհրդային ղեկավարությունը և ողջ հայ ժողովուրդը թե՛ Հայրենիքում և թե՛ Միյուտքում: Դժբախտաբար, այս անգամ էլ խնդրի լուծմանը դեմ կանգնեցին Ուինստոն Չերչիլն ու Հարրի Տրումենը: Ատոմային ռումբը պայթեց ճապոնական կղզիներում, ջրածնային ռումբի սարսափները տարածվեցին Մոսկվայում ու Երևանում: Ծիշտ է, պայքարը շարունակվեց, բայց ոչ երկար:

Կրկին օրակարգից դուրս ընկավ հայկական խնդիրը, սակայն ապագա, այսօրվա մեր սերնդին խստորեն պատգամելով՝ **չմոռանալ Հայրենիքի կարուքը, չուրանալ բուրբերի կարարած ցեղասպանության փաստը, հարմար պահին, հերքական անգամ ես բարձրացնել Արևմտյան Հայաստանը, հարկապես Կարսն ու Արդահանը, Իզդիրն ու Մուրմալուն եր պրանալու երազանքը: Հանցնարարականն էր. ոչինչ չի մոռացվել, ոչ ոք չի մոռացվել:**

Եղեռնի զոհերից գերեզման չունեցողները, հողաթմբի ծածկոցից զրկված անթաղ մեռելների ոսկորներն արևի տակից շարունակում էին, այսօր էլ շարունակում են անեծք սրմնջալ **այն գավառների ու բոռների ականջին, որոնք սակարկության են արժանացնում ցեղասպանության փաստը, հրաժարվում են պահանջարկությունից, նյութականը գերադասելով հոգեկանից, մոռանում են ցեղասպանված հայերին և կորուսյալ Հայրենիքը: Այսօր, առավել քան երբևէ, քննարկվում են վերոհիշյալ խնդիրները:**

- 6 -

2010 թվականին լույս տեսավ «Մոսկվայի և Կարսի պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում» խորագրված ծավալուն մեր նոր մենագրությունը (988 էջ):

Արդ, որո՞նք են այդ մենագրության, հարկապես այնպեղ զեպեղված նորահայր վավերագրերի հայրնագործման ու գիտական շրջանառության մեջ դնելու դրդապատճառները:

Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումից փոքր անց (Թուրքիան առաջիններից մեկն էր, որը ճանաչեց մեր ժողովրդի համար բախտորոշ այդ ակտը), Անկարան զայրացավ Լեռնային Ղարաբաղն իր իսկական Հայրենիքին

վերամիավորելու փաստից: Մեծ ու պուճուր թուրք «եղբայրները», ձայն ձայնի տված, 1993 թվականից սկսած դիվանագիտական հարաբերությունները խզեցին մեր երկրի հետ, փակեցին պետական սահմանները և դաժանորեն կիրառեցին շարաքաստիկ **301-րդ հոդվածը:**

Անցած երեք հնգամյակներին քիչ չեն հայ-թուրքական նեգատիվ հարաբերությունների գործադրման փաստերը, Բոսֆորի առափնյա շրջաններում դեռևս հարատևող հայ զանգվածների նկատմամբ կիրառված անմարդկային դաժանությունները, սպանությունները (**Հրանդ Դինք** և այլք), մշակութային կոթողների ավերումը, պղծումը, **այն կզակների ջարդումը, որոնք կարգապահներն էին «հայերի ցեղասպանություն» բառահասկացությունը:** Կարծես թե այդպես շարունակելն այլևս հնարավոր չէր:

Վերջերս մամուլից, հարկապես Սպանություն և Անկարայում լույս տեսնող բուրբական պաշտոնական թերթերի էջերում զեպեղված նյութերից հայրենի դարչավ, որ Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պետական այրերը վաղուց, զաղպնագրված բանակցություններ են վարել Անկարայի հեպ, չգտել են կանոնավորել հարեան երկու փերությունների փոխհարաբերությունները, սպա անդրադառնալ կուրակված խնդիրների քննարկմանն ու դրանց լուծման եղանակների որոնմանը:

Հանրահայտ է, սակայն, որ Հայաստանի Հանրապետության նախագահ Ս. Ա. Սարգսյանը մեծ ջանքերի գնով կարողացավ կազմակերպել իր և Աբդուլա Գյուլի հանդիպումը թե՛ Երևանում և թե՛ Թուրքիայում: Այդ հանդիպումներն ու ասուլիսները պատմության էջերում ստացան «**Ֆուրբուլային դիվանագիտություն**» շատ անմեղ անվանումը, որի մութ ծալքերի մեջ թաքցված էին հայ ժողովրդի մեծ կորուստները թե՛ տարածքային և թե՛ բարոյաքաղաքական իմաստով:

Չարժե մոռանալ մի կարևոր իրադարձություն ևս: 2009 թվականին (հունվարի 20-ին) ԱՄՆ-ում նախագահ ընտրվեց սևամորթ **Բարաք Օբաման:** Նա մինչև ընտրությունները բազմիցս արտասանել էր **հայերի ցեղասպանություն, զենցիղ բառահասկացությունները, նահանգներում ապրող շուրջ երկուս և կես միլիոն հայ զանգվածին, այսինքն՝ իր ընկրողներին, խոստացել** նախագահ ընտրվելու դեպքում պաշտպանելու իր կարծիքը: Մեր ժողովուրդն ամենուր մեծ սպասելիքներով հետևում էր ԱՄՆ-ի 44-րդ նախագահի ապրիլի 24-ին արտասանելիք ճառին, որով հետևում էր ԱՄՆ-ի 44-րդ նախագահի ապրիլի 24-ին արտասանելիք ճառին, նրա սևամորթ շուրթերից լսելու **զենցիղ, ցեղասպանություն բնութագրությունը:**

Ինչպես որ սպասվում էր, խելոք, փորձված մարդիկ ինչպես որ ենթադրում էին՝ **Բարաք Օբաման** իր նախորդների նման երկու տարում, երկու անգամ երևույթը կոչեց **XX դարի առաջին ողբերգություն, Մեծ եղեռն**, այսինքն՝ բացահայտորեն դրժեց տված խոստումը, փաստորեն, խաբեց հայ ժողովրդին: Սակայն, դժբախտաբար, խնդիրը դրանով չավարտվեց:

2009 թվականի ապրիլի 22-ին, ոմանց կարծիքով՝ ապրիլի 2-ին (Անդրանիկ Միհրանյանը Հանրային հեռուստակայանով ի լուր աշխարհի հայտարարեց, թե այդ փաստաթուղթը ընդունվել է ապրիլի 2-ին և հանդիսանում է հայ դիվանագիտական մտքի **հանճարի փայլաբանությունը**) Ըվեյցարիայում, գիշերով համաձայնեցվեց խայտառակ մի փաստաթուղթ, որը պատմության էջեր մտավ **«Ճա-**

ճանապարհային քարտեզ» հորջորջմամբ: Այդ վավերաթուղթը թելադրված էր ԱՄՆ-ի նոր պրեզիդենտի շուրթերով, հակահայկական էր, ողբերգական, հետևաբար և Հայաստանի հանրությանը նրա բուն բովանդակության մասին տեղյակ չպահվեց: Ավելին, սկսվեց գովք այդ հանդիպման ու ստորագրված ակտի վերաբերյալ՝ բոլորովին չբացելով փակագծերը:

Գործին «**օգնեցին**» թուրքական պաշտոնական պարբերականները, որոնք կարծես թե հանուր հայ ժողովրդի նյարդերի հետ խաղալով, տպագրեցին «Ճանապարհային այդ քարտեզը», հայերին ասելով, թե շատ էիք ուզում լսել Բ. Օրամային, այժմ լսեք: Ժնևյան որոշումը, որի տակ դրված է Հայաստանի Հանրապետության դիվանագետի ստորագրությունը:

Չերկարացնենք մեջբերենք «Մարտի» օրաթերթի (թուրքական պաշտոնական լրագիրն է) 2009 թ. ապրիլի 24-ին, իբրև «նվեր», հայերին ծաղրող հոդվածն ամբողջությամբ, որի խկությունը մինչ օրս չի ժխտվել ոչ Հայաստանի և ոչ էլ Թուրքիայի դիվանագետների կողմից: Այն այսպես է սկսվում.

ՀԻՆԳ ՔԱՅԼՈՎ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Աղբյուր. «Մարտի» – 24.04.2009
Դույզու Գյուլենչ-Անկարա

Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման պրոցեսում, առաջին հայտարարությունը եղավ նախորդ կես գիշերին: Ըստ Մարտիից ստացած տեղեկատվության, «Ճանապարհային քարտեզը» 5 հիմնական հոդվածի վրա է հիմնված, որի համաչայնեցման մասին արագորժնախարարությունը հայտնեց:

1. Հայաստանը կճանաչի Կարսի պայմանագիրը:
2. Կբացվեն սահմանները, կստորագրվեն համաձայնագրերը:
3. Փոխադարձ կբացվեն դեսպանատներ:
4. Մեջլիսը կհաստատի «Ճանապարհային քարտեզը»:
5. Պատմաբանների հանձնաժողովին կարող են մասնակցել երրորդ երկրների պատմաբաններ:

Թուրքիա-Հայաստան հարաբերություններում «Ճանապարհային քարտեզի» հարցում փոխադարձ համաձայնության տեքստի պատրաստությունից հետո «սկզբի» համար մեկնարկը տրվեց: Արտգործնախարարության նախորդ գիշերվա հայտարարությունից հետո աչքերը սևեղվեցին երկու երկրների կողմից չճշտված «Ճանապարհային քարտեզին»: Ըստ «Մարտիի» հաղորդած լուրերի, երկու երկրների համաձայնագրում տեղ չի գտել Լեռնային Ղարաբաղի հարցը: Սակայն հայտնվեց, որ միմյանց զուգահեռ քայլեր պարունակող «Ճանապարհային քարտեզը» և Լեռնային Ղարաբաղի խնդիրները «փաստացի» մեկգմելու կապված են: Բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը Լեռնային Ղարաբաղի խնդրում նշեց Կիպրոսի օրինակը: «Թուրքիա-ԵՄ հարաբերություններում Կիպրոսը նախապայման չէ, սակայն իրականություն է: Լեռնային Ղարաբաղն էլ այսպիսին է...»:

Նշվեց, որ համաձայնությունը կարող է հրապարակվել մայիս ամսին, կախված Միսկի խմբից: Այս պնդումն առաջ քաշող բարձրաստիճան պաշտոնյան ասաց. «Թերևս մայիսին, թերևս սեպտեմբերին, սակայն բոլոր դեպքերում գործընթացը սկսվել է»: Երկու երկրների հարաբերությունների նորմալացման համար կճանապարհվեն հանձնաժողովներ և ենթահանձնաժողովներ: Ենթահանձնաժողովները կգրադվեն 1915 թ-ի դեպքերի, առևտրի, դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, մաքսային, տրանսպորտային և այլ հարցերով: Թուրքերի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ համաձայնագրում կլինեն հետևյալ կետերը.

1. Հայաստանը նույնությամբ կճանաչի Ռուսաստան-Թուրքիայի կողմից ստորագրված Կարսի պայմանագիրը: Պայմանագիրը նորից վիճարկման ենթակա չի դառնալու:

2. Պատմաբանների հանձնաժողովին, որը կգրադվի ցեղասպանության կատարված փաստի հաստատմամբ կամ մերժմամբ, կարող են մասնակցել երրորդ երկրները:

3. Կբացվեն երկու երկրների միջև սահմանները և կհամալրվեն առևտրի համար ի գործ տնտեսական համաձայնագրերը:

4. Երկու երկրները նախ փոխադարձ կհավատարմագրեն Թբիլիսիի իրենց դեսպանատները, ապա կբացվեն դեսպանատներ Անկարայում և Երևանում:

5. «Ճանապարհային քարտեզի» կիրառման հետ կապված այն համաձայնագրերը, որոնց համար պարտադիր է Մեջլիսի հաստատումը՝ կներկայացվեն Մեջլիսին:

«ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՆ ԶՈՒԳԱՀԵՈ»

Հակառակ ԱՄՆ-ի դրական արձագանքին, Աղբյուրի արտգործնախարարության խոսնակ Էլիսան Պոլուկյովը համաձայնության հայտարարման առնչությամբ ասաց. «Յուրաքանչյուր անկախ պետություն իրավունք ունի հարաբերություններ հաստատել այլ պետությունների հետ: Աղբյուրից մտածում է, որ Թուրքիա-Հայաստան հարաբերությունների նորմալացումը և սահմանների բացումը կիրականանան՝ հայկական զինուժի՝ աղբյուրանական տարածքներից հեռացմանը զուգահեռ»: Թուրքական դիվանագիտական աղբյուրները պնդեցին նաև, որ Միջուրը փորձել է կանխել սույն հրապարակումը, որը փեղի ունեցավ ապրիլի 24-ի նախօրեին¹:

«Ճանապարհային քարտեզը» ընկավ եվրոպական մամուլի բերանը: Ճիշտ էր այն արվասցույում փաստաթուղթը, թե սխալ, այդպես էլ մնաց անհայտ, որովհետև Հայաստանի արտգործնախարարությունը չարքազանքեց դրան: Եթե կեղծված էր իրողությունը, չժխտվեցին վերջինիս բովանդակված փողերը, փաստերը, եզրակացությունները (կերպագրեր, որ այն սխալ լինել, ինչպես թուրքերին է հարուկ, կեղծ բովանդակություն ունենար): Դեպքերը, սակայն, շարունակեցին սրընթաց զարգանալ:

¹ <http://arsiv.sabah.com.tr/2009/04/24/heber.029BE163F763414CBBF8B3E8018C2094.html>

2009 թ. հոկտեմբերի 10-ին, դարձյալ գիշերային ուշ ժամերին, դարձյալ Եվեյ-ցարիայում, բայց այս անգամ *Յյուրիխում* ստորագրվեց *հայ-թուրքական* մի ուրիշ համաձայնագիր, որն ըստ երևույթին կոլեկտիվ փաստաթուղթ էր, և որի պատրաստմանը մասնակցել էին օվկիանոսի աջ ու ձախ կողմերում փռված գեր-տերությունները: Հեռուստատեսությամբ բազմաթիվ անգամ ցուցադրված փաս-տաթղթի ստորագրման պրոցեսը հիշեցնում է *մի շոու*, որ հետագայում կստանա պատմության արդարացի գնահատականը, կբացահայտի ստորագրության պրո-ցեսին ներկա դիվանագետների մասնակցության չափն ու շահագրգռվածության աստիճանը:

Այսօր, սակայն, արդեն պարզ են ԱՄՆ-ի պետական քարտուղար *Հիլարի Բլինքենի* հարկադրական քայլերը կողմերի վրա, խտովկանքի պահից մինչև ստորագրումն ընկած շուրջ երկու ժամում նրա խոսակցությունները Հայաստանի արտգործնախարար Է. Ա. Նալբանդյանի հետ: Դիվանագետը կաշվից դուրս էր գալիս, համոզում Նալբանդյանին, օգտագործում նույնիսկ կանացի իր հմայքը, միայն թե հասներ նպատակին: ԱՄՆ-ն իր սատելիտ Թուրքիային խոսք էր տվել, որ կնպաստի այն եղելությանը, ինչը դրոշմված էր թղթի վրա: Եվ նրանք մեկ ան-գամ ևս, իհարկե հայ ժողովրդի շահերը զոհելու գնով, հասան իրենց նպատակին:

Երկրորդ փաստաթուղթը գայրույթի ծփացող ալիք առաջ բերեց Հայաստանում, առավել ևս Միջուրքի հայ գաղթաշխարհում: Բողոքը գնում էր, այսօր էլ շարունակում է գնալ այդ «դաշնագրի» երկու կեղծերի դեմ: «Ճանապարհային քարտեզում» հայկական կողմը համաչայնում էր ճանաչել Կարսի պայմանագ-րի լեզիփոխությունը, դրանով հրաժարվում էր Կարսից ու Արդահանից, Սուր-մալուից և Իզդիրից: Ավելին փաստորեն մենք դեմ չէինք, որ Նախիջևանը մնար Ադրբեջանի «հովանավորության ներքո», այսինքն՝ հավերժանար նրա իրավունքը պայմանական Հայաստանի սրբազան այդ նահանգի վրա:

Երկրորդ փաստաթուղթն առավել ողբերգական է: Ըստ այդ դաշնագրի, Հա-յաստանի Հանրապետությունը *ճանաչում է այսօրվա Թուրքիայի տարածքա-յին ամբողջականությունը:* Այդ նշանակում է, որ մենք չեղյալ ենք համարում Փարիզի 1919 թ. խաղաղության պայմանագիրը, Լոնդոնի կոնվենցիան, *Սերի, այո՛, երանավեպ Սերի դաշնագիրը*, վիլսոնյան քարտեզն ու նրանում ամփոփ-ված կետերը: Ավելի մանրամասն բացատրենք, որ օգոստոսի 31-ի համաձայնագ-րով և հոկտեմբերի 10-ի գույգ արձանագրություններով *Հայաստանի կառավա-րությունը Թուրքիայի սեփականությունն է համարում Արեւելյան Հայաստանի 290 հազ. քառ. կմ և Հայկական Կիլիկիայի 40 հազ. քառ. կմ տարածքները:*

Չավեշտականն այն է, սակայն, որ *Արդուլա Գյուլի և Ռեջեփ Թայիբ Էրդո-ղանի Թուրքիան* դրանով չի բավարարվում: Գրավորից գատ, նրանք բանավոր պայմաններ են առաջադրում, ասելով, թե փաստաթուղթը կվավերացնեն, սահ-մանները կբացեն միայն այն դեպքում, երբ Հայաստանը Ադրբեջանին վերա-դարձնի «ազատագրված» (իրենց բառերով՝ գրավված) յոթ շրջանները սկզբում, ամբողջ Լեռնային Ղարաբաղը (Արցախը) վերջում: Տեսնո՞ւմ եք, ինչպիսի ախոր-ժակով է օժտված «դեմոկրատական Թուրքիան», որը սողալով դեպի Եվրոպառ-լամենտ է ձգվում:

Մի հայաստան պահանջ ևս. «Ճանապարհային քարտեզում» բացահայտ,

օգոստոսյան խայտառակ փաստաթղթում քողարկված ձևով *կասկածի փակ է դրվում հայ ժողովրդի ցեղասպանության խնդիրը:* Ըստ այդ վավերագրերի, հանձնաժողով թե ենթահանձնաժողով է ստեղծվում, որը «*արխիվային նյութե-րի*» հիման վրա կորոշի «*թուրքերն են հայերին սպանել, թե հայերն են թուրքե-րին սպանել*»:

Չայրացուցիչը, սակայն, միայն այս պահանջը չէ, բանգի սա թուրքական հայեցակարգ է և շրջանառվում է շուրջ ինը փաստանյայտ: Չայրացուցիչը, ան-հավատալին, աներևակայելին այն է, որ հայ ժողովրդին խորությամբ վիրավորող այդ թղթի կտորի տակ իր ստորագրությունն է դրել *հայ մարդը:*

Միրելի հայրենակիցներ, դուք թուրքերից վախենո՞ւմ եք, *մեկը լինի ասող, իսկ հայ ժողովրդից չէ՞ք վախենում, պայմանության դադարանքից չէ՞ք վախենում, ցեղասպանության գերանդիից հնչված երկուս և կես միլիոն զոհվածների հայ-րական, մայրական, եղբայրական անեծքից չէ՞ք վախենում,* ամենակարող Աստծո պատժից չէ՞ք վախենում՝:

Այդ երկու վավերագրերով կորստի է մատնվում Հայրենիքը, որի մասին կուզե-ինք խոսեր մեծն բանաստեղծ *Պարույր Սեակը.*

*Հայրենիքն այն է, որ ոչ թե կորչում է,
այլ ընդամենը հափշտակվում է,
ինչպես որ ձեռքի ափը չի կորչում, երբ նա փակվում է,
բայց և չի կարող միշտ մնալ փակված,
ինչպես հայրենին՝ միշտ հափշտակված...*

*Հայրենիքն այն է, որ չեն որոնում:
Հայրենիքն այն է, որ գտնված է
ի սկզբանե, ի հեն և միշտ,
ուրեմն նաև, նա չի էլ կորչում:*

Իսկ մերը... կորավ...

Եվ ընդմիջում:

Օ, ո՛չ:

¹ Կարսի խայտառակ դաշնագրի համաձայն՝ քեմալական Թուրքիան բռնազավթեց նաև Երևանի նա-հանգի *Սուրմալու և Իզդիր* երկրամասերը: Սույն աշխատությունն առավել ամբողջական կլիներ, եթե գր-վեր նաև այդ տարածքների պատմությունը: Այդ բացը մեզանից առաջ շատ շնորհալի ձևով լուծել են «*Սուրմալու-Իզդիր*» հայրենակցական միությանը պատկանող գիտնականները: 2000 թ. լույս են տեսել «*Սուրմալու*», իսկ 2007 թ. «*Սուրմալու-Իզդիր պատմական քառուղիներում*» արժեքավոր աշխա-տությունները: Հայրենամակեր այդ հետազոտողների կատարած աշխատանքը բարձր գնահատելով, միա-տույնությունները: Հայրենամակեր այդ հետազոտողների կատարած աշխատանքը բարձր գնահատելով, միա-տույնությունները: Հայրենամակեր այդ հետազոտողների կատարած աշխատանքը բարձր գնահատելով, միա-տույնությունները: Հայրենամակեր այդ հետազոտողների կատարած աշխատանքը բարձր գնահատելով, միա-տույնությունները:

«Մոսկվայի և Կարսի 1921 թվականի պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում» (2010 թ. – 988 էջ) մեր հերթական մենագրությունը սպասվածից առավել ջերմ ընդունելության արժանացավ թե՛ Հայաստանում, թե՛ առավել ևս **հայկական՝ արտերկրում**։

Գրքի լույս ընծայմանը հաջորդած առաջին իսկ շաբաթներից մեր գլխին սկսեցին տեղալ բազմաթիվ ընթերցողների նամակներ, որոնց հեղինակները դրական, ամենատարբեր հանձնարարականներ էին տալիս, առաջարկելով դրանք կատարել, եթե փորձենք վերահրատարակել աշխատությունը։ Ընդհանրապես ընդունելով «**նամակաչե-գրախոսողների**» առաջարկները, նրանց խոստանում ենք կատարել ընդունելի ցանկությունները, քանի որ շուտով կվերահրատարակենք այդ աշխատությունը։

Մենագրության պատմագիտական ընդարձակ շարադրանքի, հատկապես **բազմալեզու դաշնագրերի** (այդ թվում և թուրքերեն) բնագրերի գիտական շրջանառության մեջ դնելը **դիֆերանսների** արժանացան հեռուստատեսության բազմաթիվ ալիքներով և մամուլի էջերով։ **Մոսկին ալիքը, Հ 2-ը, Արմենիան, Շանքը, Հայելի ակումբը (Անժելա Թովմասյան)**՝ յուրաքանչյուրը շուրջ մեկ ժամանոց հաղորդում նվիրեց մենագրության ստեղծագործական ծնունդի փակագծերի բացմանը։

Կարս քաղաքի, մարզի, Սուրմալու-Իզդիրի պատմության ու դրանց հետազոտողի նկատմամբ անտարբեր չմնացին հայ պարբերական մամուլի օրգաններից շատերը։ «Ազգ» «Հայկական աշխարհ» «Հայացք» (Երևան), «Հայկական հայագիտական հանդես» (Բեյրութ), «Ալիք» (Թեհրան) պարբերականները ծավալուն գրախոսականներ տպագրեցին և այս, և մեր մյուս աշխատությունների մասին։

Հիշատակենք այդ գնահատականներից մի քանիսը միայն։ **Հակոբ Ավետիսյանի** խմբագրած «Ազգ» պարբերականի 2010 թ. օգոստոսի 19-ի համարում «Վավերագրերն ու դատարանները մերկացնում են, նաև՝ պարզավորեցնում» խորագրված՝ **Ռոման Դալլարյանի** ծավալուն, շատ ծավալուն գրախոսություն-հոդվածն ավարտվում է այսպես. «Եվ այսպես, պրոֆեսոր Հայկ Ղազարյանի **խորհմաստ ու խորաքափանց լայնընդգրկուն մենագրությունը հայ պատմագիտության, հայաբանության ակնառու նվաճումներից է**։ Նա արդի **տեղեկատվական պայքարի** և **ճիշտ ու սքափ քաղաքական դիվանագիտություն վարելու անսպառ աղբյուր** ու **գինանոց է**։ Նրանից **գործնականորեն կարող են** և **պարզավոր են** օգտվել **մեր պետական այրերը, դիվանագիտությանը, ազգային անվտանգությանը գրադվող մարդիկ՝ ե՛ւ մայր հայրենիքում, ե՛ւ Միջուրքում, Հայաստանի Հանրապետության և ափյուրքի հասարակական-քաղաքական, մշակութային կառույցների պատասխանատուները, ուսանողները և այլ գրադմուրքի անչինք**։

Պեպր է մշտապես հիշել ու իմանալ, որ մենք արդար պահանջարկ ենք, Հայ դատի անվարան իրականացնողները։ Եվ եթե մենք՝ Հայաստանում ու Միջուրքի բոլոր համայնքներում ապրող հայերս, մեր բարեկամների հետ մեկ-

տեղ, չբողոքենք ու անզիջում չպայքարենք, նզովքի ու անեծքի կարծանանանք միլիոնավոր աննեղ զոհերի կողմից։

Միաժամանակ **հարկավոր է հաստատապես իմանալ, որ արդի կեղծ հանրապետական, ժողովրդավարական կոչվող Թուրքիան, նրա կառավարող շրջանակները շարունակում են վարել իրենց արյունարբու նախնյաց նույն ֆաշիստական, շովինիստական, պանթուրանական քաղաքականությունը՝ ավելի խորամանկ ու թրծված, խարդախված, սպոր ու այպանելի մեթոդներով և եղանակներով։ Իսկ մենք այլևս սխալվելու ու խտրորվելու իրավունք չունենք. պիտի առաջ գնանք միասնական ու միակամ, մեր ազգային խնդիրները ճիշտ ու սքափ լուծելու վճռականությամբ։ Հենց այդ է մեզ պարզավորեցնում Հայկ Ղազարյանի հույժ ուսանելի աշխատություն-մենագրությունը»։**

Անդրադառնալով մենագրության ստեղծագործական աշխատանքի պրոցեսին, Ռ. Դալլարյանը գրում է. «Նորից ընդգծեմ, որ գրախոսվող աշխատության և հեղինակի մյուս մենագրությունների՝ հայոց լեզվով տպագրվելուն և վերապատկանելուն զուգընթաց՝ Հայկ Ղազարյանը չեղնարկել և նյութական մեծ դժվարություններով իրականացրել է մի ծանրագույն խնդրի լուծում այդ անհետաձգելի խնդիրը ցեղասպանության մասին մի քանի օրսար լեզուներով մենագրությունների սրեղծումն էր, որ պահանջեց նյութական մեծ ծախսեր, ուժերի լարվածություն և կարարյալ գիտնականի փառապալից, բայց Հայ դատի իրականացմանը նպաստող արգասաբեր ու ազգօգուտ աշխատանք։ Անչափ գնահատելի է նաև այն իրողությունը, որ հեղինակը անչափ կամ փոստային առաքումներով (պարգևները ներկայացված են գրախոսվող գրքում) իր մենագրությունները նվիրել է վարբեր պետությունների ղեկավարների, դիվանագիտության ոլորտների շար ներկայացուցիչների։

Մի կարևոր հանգամանք էս սույն մենագրությունը ո՛չ թե նախորդ գրքերի տակական վերարտադրությունն է, այլ հիմնովին վարբերվում է փոփոխված խնդիրների ընդգրկման տեսանկյունից նույնպես այսինքն՝ հեղինակը ներկայացրել է ո՛չ միայն հայ ժողովրդի ողբերգությունը 1890-1922 թվականներին՝ նոր հավելումներով ու գնահատումներով, այլև Թուրքիայում ապրած ալազգի ժողովուրդների (հույների, ասորիների, բուլղարների, մակեդոնացիների, եզդիների) ցեղասպանության մանրամասները»։

«Հայկազեան հայագիտական հանդէսի» (Պէյրութ, 2011, հատ. ԼԱ, էջ 700-707) էջերում պատմագիտության դոկտոր, ցեղասպանության պատմության ճանաչված հետազոտող Վարուժան Պողոսյանը գրում է. «Կասկածից վեր է պրոֆ. Հայկ Ղազարյանի գրքի քաղաքական նշանակությունը, որը Հայաստանի պետական և քաղաքական գործիչներին կարող է օժանդակել ճիշտ կողմնորոշվելու Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կերպման քառուղիներում (Հ. Հ. Հ., հատոր ԼԱ, էջ 707)»։

Առանց **ենթադրողների** գրված վերոհիշյալ մտքերին թերևս ականջալուր կլինեն հանրապետության դիվանագետներն իրենց վարած բանակցությունների ժամանակ, մտքներում պահած կլինեն մեր աշխատության էջերում զետեղված վավերագրերի պարունակած փաստերը։

2011 թվականի հուլիսի 8-ի (№ 45(62) համարում «Հայացք» օրաթերթի էջե-

րում տպագրվեց **Գոհար Մարդարյանի** մեր հետ ունեցած հարցազրույցը, որը վերաբերում էր **ե՛ր Կարսի, ե՛ր Սևրի** պայմանագրերի ունեցած դերակատարման պատմության վերլուծությանը: «**Հայ-թուրքական կնճիորը՝ Սևրի լույսի ներքո**» ծավալուն հարցազրույցը սկսվում էր այսպես:

Հարց. – Պարոն Ղազարյան, կարծես մենք ամեն ինչ գիտենք Սևրի դաշնագրի, Վիլսոնի իրավարար վճռի ու հայկական մանդատի մասին, բայց գուցեև ոչինչ չգիտենք:

Պատասխան. – Սևրի պայմանագիրը կնքվեց վիլսոնյան փաստաթղթերից հետո: Այն պարունակում է 437 հոդված: 88-92-րդ հոդվածները վերաբերում են Հայաստանին: Պայմանագրի 88-րդ կետն ասում է՝ Թուրքիայի կառավարությունը ճանաչում է Հայաստանի ազատ, անկախ հանրապետությունը: Հայաստանի Հանրապետության տարածքը պետք է վճռվի վիլսոնյան ստորագրություններով:

Հաջորդ հոդվածով նշվում է, որ Հայաստան ասելով հասկացվում է Արևմտյան Հայաստանի չորս վիլայեթները: Միաժամանակ Հայաստանի նորաստեղծ պետությունը պետք է ելք ունենա դեպի ծով, ուստի Տրապիզոնի վիլայեթով կստեղծվի միջանցք, դուրս կգանք Սև ծով, ապա՝ Վրաստան, այստեղից էլ՝ արտաքին աշխարհ:

Թուրքական հարեմներում, ընտանիքներում գտնվող այն հայ կանայք, ովքեր կրոնավորապես են դարձել սոփադոսաբար և բռնությամբ հայտնվել են որպես կին, հարձ կամ աշխատող, կարող են իրենց կամքով վերադառնալ հայկական համայնք:

91-րդ հոդվածով սահմանվում էր, որ Կիլիկիայում ևս հայերը կարող են օջախ ստեղծել, անկախություն ստանալ և Միջերկրական ծովով դուրս գալ համաշխարհային շուկա:

Թուրքիան պարտավորվում է հայերին վերադարձնել բանկերում և ֆինանսական այլ կառույցներում եղած 14 մլրդ 375 հազ. 147 ֆրանկ գումարը:

Հարց. – Գուցե ընթերցողին ասե՞ք, թե ինչ եք ներկայացնելու Ձեր նոր գրքում, որը կոչվելու է «Սևրի 1920 թվականի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար որոշումը Հայաստանի և Թուրքիայի սահմանների վերաբերյալ»:

Պատասխան. – Ըստ Մոնրոյի դոկտրինի՝ ԱՄՆ-ը ամերիկացիների համար էր: Վերջինս իր մայրցամաքից դուրս այլ երկրների գործերին չպետք է խառնվեր: Այլ երկրներն էլ իր գործերին չպետք է խառնվեին: Բայց Վիլսոնը խախտեց այս սկզբունքը: Նա 1918 թ. աշխարհին դիմեց 14 կետից բաղկացած փաստաթղթով, որը պատմության մեջ մնաց «Վիլսոնյան փաստաթղթեր» անունով: Նա հայտարարում էր, որ բոլոր ժողովուրդները հավասար են, և բոլոր ճնշված ազգերը պետք է ստանան անկախություն: Այն երկրների համար, որոնք չեն կարողանում իրենց անկախությունը պահել սեփական զենքով ու զորքով, կստեղծվեն մանդատներ: Խոշոր երկրները որոշակի ժամանակով կվերցնեն դրանք, այսինքն՝ կհովանավորեն այդ երկրներին, մինչև վերջիններս կարողանան ինքնուրույն ասպրել:

Փաստաթղթի 13-րդ կետը հետևյալն է. Թուրքիան՝ որպես վարակիչ հիվանդություն, որպես ժողովուրդների թշնամի, որպես պատերազմի հրձիգ, որպես ցեղասպանության մեղսակից երկիր, առանձին պետություն չպետք է մնա: Թուրքական կայսրությունը պետք է բաժանվի երեք հիմնական մասի: Առաջին մասը, որը

կոչվում է Ասիական Թուրքիա, պետք է հատկացվի Միջագետքին, Սիրիային, Պաղեստինին, Իրաքին, Իրանին: Երկրորդ՝ Եվրոպական Թուրքիան պետք է գտնվի Հունաստանի տիրապետության տակ: Թուրքերին կթողնվի միայն Բոսֆորի, Դարդանեղի նեղուցների մի փոքր հատված: Այն էլ՝ միջազգային հսկողության տակ:

Մրանք փաստեր են, որոնց մասին գաղափար չունեն նույնիսկ մեր պատմաբանները: 14 կետի մասին համալսարանում դասախոսություն են կարդում, բայց չգիտեն, թե որոնք են դրանք: ԱՄՆ-ում՝ ժամանակին տպագրված գրքերից ես գտել եմ մասն հայկական մանդատը, որը 10-12 էջանոց փաստաթուղթ-կոնցեպցիա է: Այն վիլսոնյան փաստաթղթերի հետ կհրապարակեմ գրքիս մեջ:

Հարց. – Դուք մեր երկրի վարած փաստական քաղաքականությանն ինչքանով եք օգնում Ձեր աշխատանքով:

Պատասխան. – Ես ստեղծում եմ հիմքերը, ձևակերպում եմ կոնցեպցիան, տալիս եմ բանալին: Ցույց եմ տալիս, թե ինչ կարող են ասել, ինչ կարող են անել, և ինչու այդպես անեն: Ես արտգործնախարարի ձեռքը փաստաթղթեր եմ տալիս, որ դրանցով գնա միջազգային դատարան: Ես պատերազմի կողմնակից չեմ. Թուրքիայում մինչև 75 մլն բնակչություն կա: Այդքանի դեմ ի՞նչ կարող ենք անել: Թուրքիայում մինչև 75 մլն բնակչություն կա: Այդքանի դեմ ի՞նչ կարող ենք անել:

Հարց. – Մասնավորապես, կարևոր ի՞նչ փաստաթղթեր եք դնում նրանց տրամադրության տակ:

Պատասխան. – 1919 թվականին, ինչպես ասացի, եղել է թուրքերի դատավարությունը: Դատավորը եղել է թուրք, դատախազը եղել է թուրք, դատարանի անդամները եղել են թուրքական բարձրաստիճան ներկայացուցիչներ: Իսկ թուրքներն այսօր ասում են՝ մենք փաստեր ունենք, որ ցեղասպանություն չի եղել, դուք մեզ սպանել: Բայց եղել է, չէ՞, թուրքական դատավարություն. դատավարությունն ընթացել է թուրքերենով, իսկ արձանագրությունները կազմվել են արաբատառ թուրքերենով: Խնդրեմ. ամբողջ արձանագրությունների նկարը (scan արած) ընդգրկել եմ գրքիս մեջ:

Գրքիս մեջ ներդնելու եմ մասն Սևրի պայմանագրի թուրքերեն տարբերակը, որպեսզի իրենք էլ իմանան, թե ինչի հետ գործ ունեն:

Կամ ժամանակին Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջի խոսքերն են զետեղել: Նա իր «Ճշմարտությունը խաղաղության պայմանագրերով» երկհատորյակում է՝ Հայաստանը ողջակիզվեց Անգլիայի զոհասեղանին: Եթե չլիներ Անգլիագրում է՝ Հայաստանը ողջակիզվեց Անգլիայի զոհասեղանին: Եթե չլիներ Անգլիայի խաղաղախ քաղաքականությունը հայերի նկատմամբ, չէին լինի ո՛չ 1894-96 թթ. կոտորածները, ո՛չ Ադանայի ջարդը, ո՛չ էլ 15-ի ցեղասպանությունը: Ամբողջ մեղքը կարողված է մեր ուսերին, և մենք անպայման պետք է լուծենք հայկական հարցը:

Իսկ Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոն, ում անվանում էին դիվանագիտական վագր, և ով ղեկավարում էր 1919-1921 թթ. ընթացող Փարիզի խաղաղության կոնֆերանսը, երեք անգամ կրկնել է, որ հայերի մեղքը Ֆրանսիայի ուսերին է, որ անպայման հայերին պետք է տան իրենց քվեի և աջակցեն, որպեսզի ստեղծեն սեփական անկախ պետությունը:

Հարց. – Մեր իշխանություններն ինչպե՞ս են օգտագործում այդ հնարավորությունը:

Պատասխան. – Մեր դիվանագիտությունը թույլ է: Մենք այնքան բան ունենք

Թուրքիայից ու Ադրբեջանից պահանջելու: Մեր պահանջները թողած՝ դեռ կատվի նման կուչ ենք եկել, ու թուրքերն են մեզ խեղդում և հետ ուզում մեր ազատագրած դարաբաղյան շրջանները: Մերոնք թող ասեն՝ Սևրի պայմանագիրը սա՛ է ասում, Մոսկվայի պայմանագիրը սա՛ է ասում. դուք էսքան մեզ պարտք եք, ձեր պարտքը տվեք, նոր մտածենք այդ շրջանները վերադարձնելու մասին:

Հարց. – Իսկ կա՞ կոնկրետ ատյան, որտեղ Սևրի պայմանագիրը կվիճարկվի:

Պատասխան. – Հաագայի միջազգային դատարանն է, որը հիմնվել է 1906 թվականին:

Ինչպես մեր մյուս մենագրությունները, այնպես էլ վերջին աշխատությունը **հեղինակային մակագրությամբ նվեր ուղարկեցի Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Ազարի Սարգսյանին և արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանին:** Ծիշում ասած, սկզբում մտահոգված էի, թե նրանք ինչպե՞ս կընդունեն իրենց հասցեին արված այն քննադատությունը, որ արձանագրված էր մենագրության էջերում: **Կարարվեց ճիշտ հակառակը՝ անսպասելին:**

Աշխատությունն ստանալուց երկու շաբաթ անց արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանին հիմն հրավիրեց իր մոտ և շուրջ երեք ժամ **վեռողությամբ** գրույց ունեցանք իրար հետ: Ասուլիսը հաճելի էր, գիտական, գործնական բովանդակություն ուներ և ես լիովին բավարարված հեռացա նախարարի առանձնասենյակից: Իր ասելով, ինքը առավել ևս գոհ էր մնացել:

Բացարձակորեն անսպասելի էր, նույնիսկ անհավատալի նախագահի արձագանքը մենագրության ստանալուց **մեկ ամիս անց:** 2010 թվականի օգոստոսի 26-ին Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմից պաշտոնական, զինվորական փոստատարի միջոցով **սպացա մի նամակ:** Գրությունն ավելի քան նախնական արձանագրված էր. «**Հարգելի պարոն Ղազարյան, Հայաստանի Հանրապետության նախագահի և իմ անունից խորին շնորհակալություն եմ հայտնում Ձեզ «Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի կյանքում» ծավալուն մենագրության օրինակները նվիրելու համար:**» Ստորագրել էր նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ (այժմ արդեն ղեկավար), մասնագիտությամբ պատմաբան Վիգեն Սարգսյանը:

Դրանց նախորդել էր Հայաստանի Հանրապետության Մահմանադրական դատարանի 2010 թվականի հունվարի 10-ի որոշումը, որտեղ պաշտոնապես հայտարարվեց, թե 2009 թ. նոյեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրված հայ-թուրքական արձանագրությունները **բովանդակում են նախապայմաններ, հեղեարար դրանք չի կարելի վավերացնել Ազգային ժողովում:**

Հայկական սիյուրքի (մեծ մասի), Հայաստանի մրավորականների ոչ մեծ զանգվածի (այդ թվում մեր աշխատությունների բովանդակ փաստերի ազդեցությամբ ևս) սկզբունքային պայքարի գնով կանգնեցվեց հայ-թուրքական արձանագրությունների վավերացման պրոցեսը:

Եվ այսպես, քաղաքակիրթ մարդկությունը, հայկական Սիյուրքի և Հայաստանի կառավարության վարած հետևողական քաղաքականության պրոպագանդայի ճնշման ազդեցության տակ, աստիճանաբար ճանաչում և դատապարտում է Թուրքիայի կատարած ցեղասպանությունը հայ ժողովրդի գույզ հատվածներում (1890-1922 թվականներին): Ֆրանսիան, Շվեյցարիան օրենք են ընդունում՝ ցեղասպանությունը չճանաչողների նկատմամբ դրամական մեծաքանակ տուգանք, նույնիսկ քրեական պատժամիջոցներ սահմանում: Բելգիան, Հոլանդիան այդ ճանապարհի վրա են կանգնած:

Քաղցր չէ խնդրի ամենամեծ ու հիմնական **հանցագործ, այսօրվա Թուրքիայի կյանքը:** Հարյուրամյա քար լռությունից հետո Անկարայի պետական ամենաբարձր ատյաններում վերջապես հնչում է Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի դատապարտող խոսքը հայ ժողովրդի ցեղասպանության վերաբերյալ: Ստամբուլ այցի ժամանակ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը, թուրք ամբոխի արյունախում հայացքին դեմ հանդիման, առանց երկնչանքի բարձրացնում է հայերի ցեղասպանության խնդիրը՝ այսօրվա Թուրքիայից պահանջելով դատապարտել իր նախորդների ազգասպան գործունեությունը:

Կարծեք թե թուրք ժողովուրդը, հատկապես նրա մտավորականությունը, չնայած հրապարակային մերժողական կեցվածքին, սկսում է գուցեև հոգու խորքում մտահոգվել, թե միմչև ե՞րբ կարելի է շարունակել մերժողական այդ պահվածքը: Թուրքական հաստաշերտ սառույցն աստիճանաբար սկսում է ճեղքեր տալ, կործանվող նավի վրայից առաջինը փախչող առնետների մնաց պետական այրերն են հանդես գալիս, որոնք իրենց նախագահին ու օրվա վարչապետին խորհուրդ են տալիս միջոցներ որոնել, որպեսզի նվազ կորուստների գնով դուրս գան մնաց փակուղուց:

Դեպի Եվրոպառլամենտ սողացող Թուրքիայի առջև, Կիպրոսից գատ, դրված է Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը: Թերևս այդ է պատճառը, որ վարչապետ Էրդողանը նամակներով դիմում է Սերժ Սարգսյանին, խնդրելով հանձնաժողով ստեղծել, բացել արխիվները, պատմաբանների մակարդակով պարզել այդ խնդրում եղած աջո ու ահյակը:

Եվրոպան ևս, հետևելով դեպքերի զարգացման ընթացքին, պասիվ ճանաչողական քայլերից ու Թուրքիայի՝ Եվրախորհուրդ մտնելու գործում նրա առջև անհաղթահարելի պատնեշներ ստեղծելուց գատ, խրախուսում է այդ երկրի թուրք և ոչ թուրք քաղաքացիներին, որոնք բարձրաձայնում են, թե անցյալ հարյուրամյակի առաջին **քառորդում իրոք եղել է հայերի ցեղասպանություն՝**

¹ Ծավալուն սույն մենագրության էջերում **գիտակցաբար** կատարել ենք որոշ հարցերի պատմության շարադրանքի **կրկնություններ:** Երկու գրքերում էլ անդրադարձել ենք վիլսոնյան «Տասչորս կետերին», ԱՄՆ-ի պրեզիդենտի **Չայաստան-Թուրքիա սահմանաբաժանման իրավադար վճռին**, **Չայաստանի մանդատին**, **Սան Ռեմոյի կոնֆերանսին**, **Սևրի ու Վերսալի պայմանագրերին:** **Մի քանի անգամ կրկնել ենք հայ ժողովրդի պահանջատիրությունն այսօրվա Թուրքիայից:** Մեր կարծիքով՝ մենք դա արել ենք խնդիրների դյուրամարտության նպատակով: Եթե որոշ ընթերցողներ կզուտեն, որ ճիշտ չենք արել, ապա հայցում ենք նրանց ներողանությունը:

Եվրոպան խաղում է Թուրքիայի հետ, ինչպես կատուն կզվարճանար ուտելուց առաջ իր բռան մեջ պահած մկան հետ: Ասում են, ծերուկ Եվրոպան, առավել էս պատերազմի Միացյալ Նահանգները, Թուրքիայի ռազմաարտադրական դիրքով է ունեցած քննարկման առեղծի պաշարներով պայմանավորված, նրան դիմում են իբրև իրենց հրապարակ, գեղեցիկ սիրուհու, սակայն ժամանակներն անցնում են և ոչ ապահարզան են փայլա այդ գեղեցիկուհուն և ոչ էլ անտեսանում են նրա հեք: Մեր կարծիքով, այդպիսի վիճակը երկար չի հարաբերի, բանգի բազմաթիվ մարդկությունն իր հիշողությունից երբեք չի կարող ջնջել Թուրքիայի կազարած բարբարոսությունները:

Եզրափակելով

Վերջին երկու տարիներին Հայաստանի Հանրապետության ղեկավարության դիվանագիտական գործունեությունը հայ-թուրքական խզված հարաբերությունները վերականգնելու, երկրի առաջ փակ սահմանները վերաբացելու ուղղությամբ, մեզն առած, ցանկալի վերջավորություն չունեցան: Դիվանագիտական մրցամարտերի ասպարեզում անհրաժեշտ փորձ և պատշաճ հմտություն չունեցող մեր երիտասարդ բանագնացները ջանացին «ֆուտբոլային դիվանագիտության» պարզ և ազնիվ ճանապարհով լուծել վիճահարույց, բայց և կնճոտ խնդիրներ, մրցամարտի բռնվելով մի տերության ղեկավարության հետ, որոնք շարունակ իրենց անցած ճանապարհը կառուցել են սպի, կեղծիքի, խաբեության ու շանթաժի վրա, որոնց հետագծի պատմության էջերից միայն արյուն է կաթում, այն էլ հպատակ, այլազգի, քրիստոնյա ժողովուրդների արյունը:

Հանրապետության նախագահը, բնականաբար, շահագրգռված լինելով իր երկրի առջև փակված դռները բացելու խնդրով, սկզբում գնաց զիջումների, այսինքն՝ այդ նպատակն իրողության վերածելու ժամանակ, չնկատելով խնդրի ծանրությունը, համաձայնեց նախապայմաններին:

Մահճանագրական դադարանք շուկեց թույլ տրված սխալները և իր որոշմամբ դարձավ Թուրքիայի բննադատության նշանախեց: Աստիճանաբար բացահայտվեցին նախապայմանները, հատկապես Լեռնային Ղարաբաղի սրբազան տարածքի վերադարձի պահանջի բարձրաձայնումը:

Նախագահ Ս. Ա. Սարգսյանը արտասահմանում արտասանած իր ճառերում, օտար լրագրողներին տված հարցազրույցներում մերժեց թուրքերի պահանջները ցեղասպանության խնդիրը վերաբնակելու, Արցախի ազատագրված շրջանները ետ վերադարձնելու վերաբերյալ: Դիվանագիտական պայքարը «ֆուտբոլի» պարզ խաղից փոխանցվեց մեկ այլ, ավելի բարդ հարթության վրա:

Ոտքի կանգնեց Հայրենիքի և Սփյուռքի անկողմնակալ ու անկուսակցական մտավորականությունը, ժողովրդի գերակշիռ հատվածը: Երկրի նախագահը չէր կարող հաշվի չնստել իր ժողովրդի մեծամասնության կարծիքի հետ: Նա հարկադրված էր սրբագրել իր կարծիքը հայ-թուրքական հարաբերությունների հաստատման ուղղությամբ ստեղծված վավերագրերի բովանդակության վերաբերյալ:

2010 թ. ապրիլյան վերջին օրերին, երբ ԱՄՆ-ում ընդունվում էր 252-րդ բա-

նաչեք, երբ Բարաք Օբաման, դրժելով իր խոսքումը, ցեղասպանության փոխարեն արտասանում էր Մեծ եղեռն բառակապակցությունը, նախագահ Ս. Ա. Սարգսյանն էլ, ի պարասխան թուրքերի «հաղթական խրախճանքին», սկզբունքային դիրքերից Ազգային ժողովից ելք կանչեց ցյուրիիայան արջանագրությունները և ժամանակավորապես սատեցրեց դրանց վավերացումը:

Չերկարացնենք. ճիշտ կլինի ընդհանրապես մերժել այդ արջանագրությունները և նման նախապայմաններով չզնայ սահմանների բացմանը: Ժողովուրդը ցույցերի է գնում «ոչ արջանագրություններին» լողունգներով, մեր կարծիքով, ճիշտ կլինի անսալ ժողովրդի ջայնին, բանգի անհապները կարող են սխալվել, բայց ժողովուրդը՝ երբեք:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱՍԿԱՆՈՒԿՆԵՐԻ ԺԽՏՈՒՄԸ ԸՆԴՈՒՄՆԵՆ Է ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՍԵՍՎԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԽՏՈՒՄԸ ՊԱՏԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ¹

2011 թ. դեկտեմբերի 7-ի երեկոյան Ֆրանսիայի Ազգային ժողովի օրենսդրության հարցերով հանձնաժողովը հաստատել է Վալերի Բոյերի հեղինակած օրինագիծը, որով նախատեսվում է քրեականացնել Հայոց ցեղասպանության ժխտումը: Այս մասին հաղորդում է panorama.am-ը՝ վկայակոչելով Reuters գործակալությանը:

Հանձնաժողովի շուրջ հինգ տասնյակ անդամների աջակցությունը ստացած օրինագծով նախատեսվում է մեկ փարվա ազատագրելու և 45 հազար եվրո փուզանք սահմանել այն անչանց համար, ովքեր կժխտեն Հայոց ցեղասպանության փաստը:


Օրինագծի հեղինակ Վալերի Բոյերը ներկայացնում է նախագահ Նիկոլա Սարկոզիի գլխավորած «Միություն հանուն ժողովրդական շարժման» կուսակցությունը:

Ուշագրավ է, որ օրինագծի հարցով քվեարկությունը Ֆրանսիայի ԱԺ-ում կայացել է հենց այն բույեներին, երբ Մարսելի քաղաքապետարանում ի պատիվ ՀՀ նախագահի կազմակերպված ընդունելության ժամանակ ելույթ էր ունենում քաղաքապետ Ժան-Կլոդ Գոդենը: Վերջինս իր խոսքում նշել էր, որ օրինագծի ընդունման հնարավորություններ են առկա:

Հիշեցնենք, որ Հայաստան կատարած պետական այցի ընթացքում՝ այս տարվա հոկտեմբերի 7-ին, Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Մարկոզին խոսելով Հայոց ցեղասպանության մասին, մասնավորապես հայտարարել էր, որ երբ Թուրքիան չառերեկալի իր պարմության հեք՝ Ֆրանսիան Հայոց ցեղասպանության մահաչման ու դադարապարման հարցում ավելի հեռուն կզնայ՝ քրեականացնելով ցեղասպանության ժխտումը:

¹ <http://news.am/arm/news/84992.html>

09:31 • 14.12.11



Դեկտեմբերի 13-ի երեկոյան ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատը ընդունել է թիվ 306 բանաձևը, որը կոչված է սփիպելու Թուրքիային հարգել քրիստոնյաների՝ իրենց կրոնն ազատ կերպով դավանելու իրավունքը, ինչպես նաև հայերին, ասորիներին, հույներին և այլ քրիստոնյա համայնքներին վերադարձնել բռնագրավված եկեղեցական ունեցվածքը:

Ինչպես ավելի վաղ հայտնել էինք, այս տարվա հուլիսին Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը ձայների 43 կողմ, 1 դեմ հարաբերակցությամբ ընդունել էր ամերիկացի կոնգրեսականներ Էդ Ռոյսի և Հովարդ Բերմանի կողմից մշակված բանաձևը, որը Թուրքիային կոչ է անում իրենց օրինական տերերին վերադարձնել բռնագրավված քրիստոնեական եկեղեցական ունեցվածքը և դադարեցնել քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող ճնշումները:

Ինչպես նշվում է Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի տարածած հաղորդագրության մեջ, բանաձևը 4 հիմնական կետ է պարունակում:

1. Դադարեցնել բոլոր տեսակի կրոնական խարսխանությունները:
2. Իրենց օրինական տերերին վերադարձնել բոլոր քրիստոնեական եկեղեցիները, պաշտամունքի այլ վայրերը, դպրոցները, հիվանդանոցները, հուշարձանները, սրբավայրերը, այդ թվում՝ շարժական գույքը (հին ձեռագրերը, արվեստի գործերը):
3. Քրիստոնյա համայնքներին թույլ տալ, առանց սահմանափակումների, զբաղվել եկեղեցիների, պաշտամունքի այլ վայրերի, դպրոցների, հիվանդանոցների վերակառուցման և վերականգնողական աշխատանքներով:
4. Եկեղեցական կառույցներին, առանց որևէ սահմանափակման, թույլ տալ կրոնական ծեսեր իրականացնել, կրթական, սոցիալական և այլ ծառայություններ մատուցել:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

1. 1920 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-ԻՆ ՓԱՐԻՉԻ ՍԵՎՐ ԱՐՎԱՐՉԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԴԱՇՆԱԿԻՑ ՏԱՍՉՈՐՄ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԹՈՒՐԲԻԱՅԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՆ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԸՆՉՅՈՒՂՈՒՄ ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ ԵՎ ՄԻԱՅՅԱԼ ԸՆԴԱՐՉԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ:

2. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱԿԱՄ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՈՒ ՀԱՆՉՆԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ՝ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ (ԱՄՆ) 28-ՐԴ ՊՐԵՉԻԴԵՆՏ ՎՈՒԴՐՈ ԹՈՄԱՍ ՎԻԼՍՈՆՆ ԻՐԱՎԱՐԱՐ ՎՃԻՌ Է ԱՐՉԱԿՈՒՄ ԵՎ ՄԻԱՅՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԲԱԺԱՆՈՒՄ Է ԵՐԲԵՄՆԻ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԲՈՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ:

¹ <http://www.emedia.am/arm/article/9045>

Գլուխ առաջին

Ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի ունեցած կորուստներն ու պահանջափրությունը ժամանակակից Թուրքիայից

*Արդարությունը մեկ չեղբով բռնել է կշեռքը, մյուսով
սուրբ: Կշեռքով կշռում է իրավունքը, սրով պաշարպա-
նում և հավերժացնում է այն: Մուրն առանց կշեռքի
մերկ բռնություն է: Կշեռքն առանց սրի՝ իրավունքի ան-
գորություն:*

ԵՆՐԻԿ

1. Ցեղասպանության հարյուրամյակի նախաշեմին

Չանրահայտ է, որ պատմությունը մարդկային հիշողությունն է, ասել է թե՛ նրա պետություն, ամեն վայրկյան սևագրելով իր կենսագրությունը, երբ հետադարձ հայացքով փորձում է *մաքրաջրել* այն, տեսնում է, որ այլևս անհնարին է: Ստացվում է այնպես, որ իրար հերթափոխելիս սերունդները հաջորդներին հանձնում են կատարված գործերի *սևագրությունը* միայն: Թերևս այդ պարագան է հարկադրում ամեն մի սերնդի, որպեսզի իր կյանքը սևագրի այնպես, որ *հետո կարդալիս ամոթի կամ ամփոսանքի զգացում չապրի*: Եթե ընդհանրացնելու լինենք ասվածը, ապա կարծանագրենք, որ սևագիր գիրքը հնարավոր է մաքրագրել, լավացնել, խմբագրելով փոփոխության ենթարկել, *իսկ ապրած կյանքի պատմությունը հավերժ մնում է անփոփոխ, այսինքն՝ սևագիր*:

Չայտնի է նաև, որ հավաքական մեծ միավորները, պետություններն ու նրանց կառավարող ժողովուրդներն իրենց ղեկավարողների կազմը համահավաքում են *ընտանիքներից*: Ուժեղ ու հզոր է այն *տերությունը*, որի կազմում ապրող ժողովուրդների ընտանիքներն ամուր են, բազմամարդ, համերաշխ, դաստիարակված: Այստեղ կարելի է վկայակոչել հանճարեղ մտածողի այն քննադիր խոսքը, թե *բոլոր բախտավոր ըն-*

տանհիքներն իրար նման են, յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովի (Լ. Ն. Տոլստոյ, «Աննա Կարենինա»-ի մուտքի առաջին տողերը):

Եթե ամփոփելու լինենք վերոհիշյալ խորաթափանց բնութագրությունները, կստացվի այնպես, թե բախտավոր մարդիկ, հաջողակ աստղի տակ ծնված ազգերը կամ հետաքրքիր կենսագրություն չունեն, կամ էլ աղքատիկ է այն: Այո, հարուստ, շատ դեպքերում ուսանելի, փորձություններով լի կենսագրություն են կերտել միայն այն երկրներն ու ժողովուրդները, որոնք անցել են բոցառատ կրակների միջով, ենթարկվել են բնության «պարզևած» մակընթացություններին և տեղատվություններին: Վերջիններս էլ իրենց ալ կարմիր արյամբ են ներկել հայրենի սեփական հողի ամեն մի թիզը, ապրել են այնպիսի վայրերում, ուր նրանց կրծքավանդակի վրայով վերուվար են արել մշտնջենապես իրար «հերթափոխող», ասպատակությամբ պարապող ցեղերն ու ժողովուրդները: Հավերժ պայքարի մեջ մխրճված, պատմության քառուղիներում հայտնված այդ ազգերը հիմնականում ուրիշների, մասամբ էլ իրենց սխալներից են դաս քաղել, սովորել են, սովորածը կիրառել են, դրանով իսկ ոչ միայն պահպանել են ֆիզիկական գոյությունը, այլև մնացել են պատմության բեմահարթակի վրա: Անշուշտ, աշխարհագրորեն գտնվելու վայրը ևս կատարել է իր որոշակի դերը: **Այդ ազգերի առաջին շարքերումն են հայն ու Հայաստանը:**

Հայ ժողովուրդը, լինելով աշխարհի հնագույն, նույնիսկ հիմնարար ժողովուրդներից մեկը, համաշխարհային քաղաքակրթության մայրուղիներում կերտեց սեփական և ինքնատիպ, միաժամանակ խիստ ընդգծված այնպիսի ձեռագիր, որն իրավամբ զանազանվում է մյուսներից, այսօր, առավել քան երբևէ, զարմանք ու հիացմունք պատճառում հանուր մարդկությանը: Անհայտ չէ, որ յուրաքանչյուր ազգի **կենսագրությունը**, ասել է թե՛ **պատմությունը**, աշխարհի մշակույթի **ոսկյա ֆոնդում** մուտք արած նրա գրավոր ու ճարտարապետական կոթողներն են՝ հանուրին թողած, հանրաճանաչ դարձած ականավոր դեմքերի մեծ ու փոքր գործերը¹:

Գրականության, առավել ևս դասագրքերի էջերից ջնջեցեք **կեսարների ու ալեքսանդրների, արիստոտելների ու պլատոնների, նապոլեոնների ու կուտուզովների** անունները, այնուհետև դժգույն ու անհետաքրքիր կդառնա մակեդոնական, հունական ու հռոմեական, հատկապես ֆրանսիական ազգի արդեն ուսանելի դարձած անցյալի պատմությունը: Հետևաբար, ապրել են, ապրում են, այսուհետև ևս կապրեն այն ժողովուրդները, որոնք իրենց անցյալով հպարտանալու իրավունք են նվաճել, ստեղծագործական արարումներով ամուր աղերսված են **ներկային և վստահորեն քայլում են դեպի առաջ՝ խոստումնալից ապագան:**

Իբրև մեծ ինտելեկտի տիրապետող ազգ, համաշխարհային պատմության հաշվեկշռում հայ ժողովուրդն ունի առյուծի իր բաժինը: Բոլոր ժամանակներում ու կյանքի բոլոր բնագավառներում նա տվել է **անկրկնելի դեմքեր՝ արժանի մեծարանքի: Մեսրոպ Մաշտոց ու Մովսես Խորենացի, Անանիա Շիրակացի ու հազարամյա հորեյար Գրիգոր Նարեկացի, Թորոս Ռուսլին ու Սարգիս Պիծակ, Մարտիրոս Սարյան ու Երվանդ Քոչար, Կոմիտաս ու Արամ Խաչատրյան, Վիկտոր Համբարձումյան ու զույգ Օրբելիներ, Հովհաննես Թումանյան ու Ավետիք Իսահակյան, Եղիշե Չարենց ու Ակսել Բակունց, Գրիգոր Չոփրապ ու Սիամանթո, Հովհաննես Շիրազ ու Պարույր Սևակ, Բաֆֆի ու Դերենիկ Դեմիրճյան, Համո Սահյան ու Վահագն Դավթյան.** ահա մի կաթիլ հայ համճարի փայլատակունցներից, որոնցից ամեն մեկը կարող է զարդարել մի ամբողջ ժողովրդի կենսագրություն, իրեն ծնող մայր հայրենիքին իրավունք նվաճելով ապրելու համամարդկային հպարտությամբ:

¹ **Հայկ Դազարյան**, Օսմանյան բռնապետության ներքո ապրող հայ և մյուս ժողովուրդների ցեղասպանության պատմությունը (1453-1922 թթ.), հատոր երրորդ, Երևան, 2010, էջ 339-340:

Եվ այսօր էլ կենսունակ, ապրող, արարող, ազգային և՛ անհատական, և՛ հավաքական հանճարով աշխարհին զարմացնող այդ ժողովրդի նկատմամբ զարգացման դեռևս նոմադական աստիճանավանդակին կառչած, այլադավան ու բարբարոս մի տերություն XIX հարյուրամյակի մայրամուտին և XX դարի առաջին երկու տասնամյակներին որդեգրեց հիմնովին բնաջնջելու սահմուկեցուցիչ մի քաղաքականություն, որն իր տեսակի մեջ անմախաղեպ էր դաժանություններով, դրանով էլ մնաց **եզակի:**

Առաջին աշխարհամարտը, ինքնին խոշոր աղետ դառնալով աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների գլխին, առավել ծանր ու ողբերգական հետևանքներ ունեցավ երեք հզոր տերությունների միջև բաժանված ու բզկտման առարկա դարձած Հայաստանի համար: Գերտերությունների ոչ միայն պաշտպանությունից զրկված, այլև նրանց զավթողական պլանների իրականացման համար մանրադրամի դերակատարի վերածված Հայաստան աշխարհը միայնակ, դեմ առ դեմ կանգնեց մինչև ատամները զինված մահմեդական բորենիների անխնա հարվածներին, անզոր լինելով դիմագրավել այդ ամենին՝ տվեց մարդկային **անթիվ** ու **անհամար** զոհեր: Կատարվեց **ժողովրդասպանություն**, որը միջազգային իրավաբանական բնորոշումներով **գենոցիդ** - ցեղասպանություն, **արմենոցիդ** - հայասպանություն անվանումներ ստացավ:

Ցեղասպանությունն օսմանյան կայսրության մեջ ընդհանուր շղթա էր, երկարատև նախապատրաստության «արգասիք», որն սկզբնավորվեց 1890-ին և եզերվեց 1922 թվականով: Այդ երեսնամյա շղթայի **բարձրակետը 1915 թվականն էր**, դրա համար էլ այն իրավամբ ստացավ **Մեծ եղեռն** անվանումը: Գենոցիդը, սակայն, խնամքով պատրաստված էր, բոլոր բարդույթները ծանրութեթև արված, նույնիսկ մտահոգված՝ կատարողների հետագա պատասխանատվությունից խուսափելու մասին:

1996 թ. Հայոց ցեղասպանության 80-ամյակի առիթով ԱՄՆ-ում լույս տեսավ **Գ.Ս. Գրեյբերի «Քարավանները դեպի մոռացություն, ցեղասպանություն. 1915»** գրքի վերնագրված (210 էջանոց) աշխատությունը, որի առաջաբանը գրել էր իրավագիտության դոկտոր **Ռոջեր Սմիթը**¹: Այդ առաջաբանում կարդում ենք. «Ցեղասպանություններ կատարվել են մարդկության պատմության բոլոր շրջաններում, սակայն այն հատկապես ակնառու դարձավ XX դարում: Այս դարը՝ շատ առումներով ողջամիտ և առաջադիմական լինելով հանդերձ, **նաև ցեղասպանության դարաշրջան է**, երբ տարբեր քաղաքական ռեժիմներում ազգայնամուլությունը խլել է ավելի քան **60 միլիոն մարդկային կյանք**: Չնայած նացիստական Գերմանիայի պարտությունից հետո հնչեց **«Երբեք նորից»** ճիշդ, ցեղասպանություններ դրանից հետո էլ բազմիցս կատարվեցին Ասիայում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում և Եվրոպայում: 1945 թվականից հետո կատարված ցեղասպանություններն ավելի շատ մարդկային կորուստներ են պատճառել, քան նույն ժամանակում բոլոր քաղաքացիական և ազգամիջյան պատերազմները միասին վերցրած»²:

Ռ. Սմիթը նշում է, որ **չատերն այն սխալ պատկերացումն ունեն, որ ցեղասպանությունը պարզունակ, անասնական կամ պարզապես խելագար գործողություն է: Մինչդեռ այն պահանջում է մեծ կազմակերպվածություն, խելք և հմտություն՝ կատարվածը վերջում ժխտելու: Ամեն ինչ մանրամասն հաշվարկվում է: Նախապատրաստողներն ընտրում են հարմար պահ իրենց ծրագրի իրագործման համար: Ցեղասպանություն կարող են ծրագրել և իրագործել թե՛**

¹ Caravans to Oblivion: the Armenian Genocide 1915 / G.S. Grober – 1996, USA, 1996-2010 pp.: Այն համառոտ բովանդակությամբ թարգմանել է **Արմենուհի Մարտիրոսյանը** և տպագրվել է **ՀՄՄՀ ԳԱ** լրատվության և տեղեկատվության կենտրոնում. «Հայոց ցեղասպանության պատմությունից» վերնագրով (Երևան, 1998) աշխատության երկրորդ բաժնում:

² Նույն տեղում, էջ 9:

հետամնաց, թե՛ առաջադեմ հասարակություններում: Միայլ պատկերացումները խանգարում են հասկանալ՝ ինչու և ինչպես են դրանք կատարվում¹:

Ծիշտ են նկատել ամերիկացի հետազոտողները, որ երիտթուրքական ջարդարարները, հայ քաղաքական էլիտային խաբեչու, նրանց օգնությամբ իշխանության գալով, դեռևս համերաշխություն խոստացող փաստաթղթերի թանաքը չչորացած կազմակերպեցին Ադանայի 30 հազարանոց հայության կոտորածը (1909) և դա անտրտունը մարսելուց հետո արդեն բացահայտ հայտարարեցին, թե «**Թուրքիան թուրքերի համար է**»: Եվրոպայի թողտվությունից, ինչպես նաև հայ ավագանու ճարահատյալ լուծությունից լկտիացած, առանց երկնչելու՝ նրանք բանաձևեցին. «**Թուրքական սահմանադրությունից ու պառլամենտական օրենսդրությունից կօգտվեն նրանք, ովքեր կթուրքանան: Հակառակվողները պետք է սրբվեն պատմության բեմահարթակից**»²:

Ս. Ակունին, իբրև դեպքերին ակնատես, այդ մասին գրում է. «Օսմ. Սահմանադրության հրատարակումն ենթ իթթիատը **մեծ համաժողով մը գումարած է Սելանիկի մեջ**, ճշտելու, թե երկրի ղեկը ձեռք առնելն հետո, ի՞նչ պիտի ըլլա իր դիրքը հանդեպ քրիստոնյա տարրին, որ այնքան էլ զանցառելի քանակ մը չէր ներկայացներ: Թուրք նշանավոր փաստաբան Մանիսսեր գատե Բեֆիք պեյի նախագահության տակ գումարված այդ համաժողովը գրեթե միաձայնությամբ որոշում տված էր, թուրքաբնակ քրիստոնյա տարրը ենթարկել **այնպիսի վիճակի մը, որ ստիպված իսլամանա կամ շատ-շատ անունով պահե իր ազգությունը**: Ծիշտ այդ նպատակով էր, որ մեջտեղ նետվեցան «Թուրքիան թուրքիացիներուն» և տիրող տարրի (միլլեթը հաքիմե) նշանաբանը... Երեսփոխանական ժողովի ընտրությանց պահին պայքարը անգամ մը ևս շեշտվեցավ, երբ տեսնվեցավ, որ իթթիատը մեպուսանի մեջ տեսնել այնպիսի դեմքեր միայն, որոնք հլու գործիքներ ըլլան իթթ. «**Քամարիալ**»-ին և եթե մի քանի քրիստոնյա կարող ազգասեր անձեր կրցան աթոռ ունենալ իրեն, ատիկա ալ բացարձակապես հակառակ իթթիատի կամքին եղած էր: **Իրերն այդ վիճակի մեջ էին, երբ մարտ 31-ի դեպքին առիթով կատարվեցավ Ատանայի ջարդը**»³: **Հետևաբար, այդ թուրքաժողովը գումարվել էր 1909 թ. ապրիլից առաջ, և հայերի հետ հաշվեհարդար տեսնելու որոշումը կայացվել էր Համիդի գահընկեցությունից մի քանի ամիս անց**.

Իթթիատականների խաղաքարտերը հայ ժողովրդի նկատմամբ բռնելիք ընթացքի մասին զնալով մերկապարանոց էին դառնում: 1910 թ. հոկտեմբերի 31-ին Սալոնիկում գումարվեց երիտթուրքերի հերթական համաժողովը, որը համագումարի նշանաբանով էր գնում և տևեց շուրջ երկու շաբաթ: Այստեղ, բազմաթիվ խնդիրների հետ մեկտեղ, քննարկվեց նաև **ազգային հարցի նկատմամբ իթթիատականների բռնելիք դիրքորոշումը**, որը պաշտոնապես բանաձևում էր «**Թուրքիան միայն թուրքերի համար**» ցեղապաշտական սկզբունքը⁴:

Սալոնիկի խառնաժողովի որոշման 12-րդ կետում արձանագրված էր. «Սպանել դեպի ազգային ինքնորոշում տանող ամեն տեսակ ձգտում, որ կարող է արտաքին հաջողություններ ապահովել: **Աստիճանաբար խլել ազգային հին առանձնաչորհումները և Թուրքիո մեջ ապրող զանազան ազգությունները վերածել մեկ ընդհանուրի: Սահմանափակել ոչ թուրք դպրոցներու բացվիլը և արդեն գոյու-**

¹ G.S. Grober. Caravans to Oblivion: The Armenian Genocide 1915 / – 1996, USA, p. 92-93.
² Հրանդ Գանգրունի, Ցեղասպան իթթիատը (1908-1923), Պեյրուք, 1994, էջ 15, 79:

³ Պատրաստեց Ս. Ակունի (Բ. տպագրություն), Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը, Կ. Պոլիս, 1921, տպագր. Ս. Ասատուրյան որդիք, էջ 3-4:

⁴ Ծ. Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 455:

թյուն ունեցողներու մեջ պարտադիր դարձնել թուրքերենը: Բոլոր ազգերու համար բանալ պետական թուրք դպրոցներ: Ընդհանրապես ջանալ ոչ թուրք ազգությանց ազգային նկարագիրը խաթարելու և հանդուրժել միայն կրոնական համոզումները, որոնք ավելի քիչ վնաս կարող են տալ»⁵:

Թուրքական աղբյուրներին լավածանոթ, ցեղասպանության պատմության խորաքնին հետազոտող **Հայկազն Գ. Ղազարյանը** գրում է. «1910-ի Սելանիկի ժողովին իթթիատը արդեն իր դիմագիծը հրապարակ դրավ: 13 օր տևեց ժողովը: Ժողովին մեջ ընդունված էր բնաջնջելու հատուկ ծրագիր: Այդ ժողովին հիմքը կազմեցին **թուրք կառավարության ցեղասպանության հետագա քաղաքականություն. զինվորական բռնի ուժով բնաջինջ ընելու ոչ թուրք տարրերը՝ թուրք միացյալ պետություն մը կազմելու համար** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»⁶: Կամ «1909-ի իթթիատի ժողովին մեջ հետևանքը եղավ դպրոցներու վրա թրքական հակակշիռին, հալածանք ոչ թուրք լեզուներու դեմ: **Մեկ խոսքով չափեր, ձևեր էին Թուրքիան միայն թուրքերուն լոզունգը**»⁷:

Հրանտ Գանգրունին, մանրամասնելով Սալոնիկի ժողովի պատմությունը, նյութեր քաղելով թուրք պատմաբան Կուզթեմփուլիի գրքի 4-րդ բաժնից, վկայում է, որ «1910-ին Թալեաթը կըսեր Սելանիկի համագումարին...

Մենք ուզեցանք գեավորը օսմանցի դարձնել, չկրցանք: Այժմ միակ միջոցը կմնա զենքով ծգմել զանոնք...: Ապա ժողովն ընդունեց կեդրոնաձիգ ճնշողական քաղաքականություն՝ բանթուրքիզմի գործադրություն, ջարդի միջոցներով»⁸:

Գնալով իթթիատականներն առավել սանձարձակ էին դառնում հայասպանության իրենց որոշումների մեջ: Սակայն զարմանալին այն էր, որ հայ ավագանու մեծ մասն ընդգրկող հատվածը, նկատելով կատարվածն ու կատարվելիքը, համապատասխան եզրակացության չէր հանգում: Բացառություն էր կազմում Հնչակյան գործիչների մի մասը, հատկապես նրա վարիչներից **Ս. Սապահ-Գուլյանը**: 1916 թ. ապրիլին Հելիոպոլսում (Եգիպտոս) լույս տեսավ «**Պատասխանատուները**» վերնագրված նրա աշխատությունը, որը քննավերլուծական շարադրանք էր ամփոփում եղեռնի մեղավորների, ինչպես նաև նրա պատճառների և հետևանքների վերաբերյալ:

Մեջբերենք այդ աշխատության առաջաբանից մի հատված. «**Պատմական** բոլոր շրջանները իրարու հետ սերտ կերպով օղակված, գոդված են, նրանք իրարուց բոլորովին գատված, առանձնացած, կղզիացած ժամանակամիջոցներ չեն՝ առանց հաղորդակցության ներքին կապերի: - Ո՛չ: Պատմությունը մի ամբողջություն է, շրջանները, եղելությունները, մանր ու խոշոր անցքերը, նրա ձևերը, արտահայտության մասերը, չուկետները, ժամանման կետերն էին, նրանց ընդհանուր բնաշրջումի, էվոլյուցիայի, հարատև գարգացման զանազան մասնիկները, պրոցեսուաները, բջիջներն են, միևնույն ամբողջական շարունակության մասունքները, հուլովվող միևնույն պատմա-մարմնի պեսպեսագույն երեսները, դասավորությունները, կտորտանքները, - մեկը մյուսի հետ ընդելուզված:

Պատմական ո՛չ մի հոսանք, հետք ձգող, արժեք ներկայացնող, վերհիշումի առարկա համարվող ոչ մի իրողություն կա, որ իր նախընթաց ազդակները, կանխորոշ նախապատճառները ունեցած չլիներ, եթե հաճախ՝ շատ հեռավոր»⁹:

⁵ Ծ. Պ. Աղայան, նշված աշխատությունը: Տե՛ս նաև ԱԳՅԱՐՄ, фонд 2000, 1910, дело 2451, лл. 17-18:

⁶ Հայկազն Գ. Ղազարյան, Ցեղասպան թուրքը, Պեյրուք, 1968, էջ 15:

⁷ Նույ տեղում, էջ 16:

⁸ Հրանդ Գանգրունի, Ցեղասպան իթթիատը (1908-1923), Պեյրուք, 1994, էջ 15-16:

⁹ Ս. Սապահ - Գուլեան, Պատասխանատուները (Բ. տպագրություն), Պեյրուք, 1974, էջ 7:

Հետևաբար, եղեռնի էությունը ճիշտ հասկանալու համար, անհրաժեշտ էր բացահայտել նրա պատճառները, կատարողներին, որպեսզի դրանցից ապագա սերունդներն անհրաժեշտ դասեր քաղեն:

Նախքան Մեծ եղեռնի բուն եղելության պատմությունը շարադրելը, ներկայացնենք ժամանակակիցների հրապարակած մի քանի վկայություններ, որոնք նոր լույս են սփռում դեպքերի ընթացքի վրա: **1919 թ. մայիսի 14-ին**, այսինքն՝ Մուրդուսի գինադարից փոքր անց, Բոստոնում լույս տեսավ **Յ.Պ. Պողոսյանի «Հայ ցեղը և հալածանքները. հոգեբանության լույսին տակ»** փաստառատ աշխատությունը, որտեղ ականատեսների եզակի գրառումներ են պահպանվել հայ ժողովրդի ողբերգության մասին¹: Բերենք դրանցից մեկը:

Նա վկայակոչում է **Գ. Փափազյան** ազգանունով մի հայ մտավորականի, որը հաղորդել է, թե «Շա՛տ թարմ և շատ ալ սարսազդեցիկ է մտքիս և սրտիս վրա տպավորությունը ընդհանուր պատերազմին այն գուժկան լուրի՛ն, զոր առաջին անգամ, աղվոր ու պայծառ առավոտ մը մեզ կբերեր իթֆիհատի խայտառակ փրոփակամտին անամոթ գործիք Միլլի ընկերությունը, օգոստոս 2. 1914-ին: Սահմուկած էինք... նախընթաց գիշերին տրված հրամանով մը պահարանները բացված են պարունակալը (կանաչագույն թղթի վրա՝ կայսրական զինանշանով գարդարված, **Օսմանըլլար** վերնագրով և խոշոր ու կարմիր գրեթով գրված նախադասություններ). պատերու և հրապարակներու վրա փակցված էր: **Սեֆերպերիք վար, 20-45 սիննիտե օլանլար սիլահ պաչընա**: Ջորահանություն կա, 20-45 տարեկանները ի գե՛ն: Աղետալի լուր մըն էր, արյունոտ, նույնիսկ եթե մեզ մտավախ ընող հայկական հավանական սարսափներու հեռանկարն ալ կտանջեր մեր միտքը, որոշ էր, որ երկիրը մեծապես պիտի տառապեր, քանի որ ամեն մի երևույթ և ընթացք ցույց կուտային, թե իթֆիհատը հրդեհին պիտի մոտենար հրձիգներով, զորս պատրաստած էր արդեն, 1913-ին գարնանամուտին իսկ, բանակը հանձնելով Ջանտերս Լիմանի ոհմակին, հակառակ համաձայն տերություններու ամենաբուռն բողոքներուն»²:

Դեպքերին մեկ այլ ժամանակակից **Հրոպըրդ Էտըմզ Կիպինզը** դեռևս 1916 թ. զորահավաքի մասին գրում էր. «1914 թ. աշնանը թուրքերը բանակին համար քրիստոնեաներու և իսլամներու զորահավաքումի սկսան: Բովանդակ թուրքիո մեջ, լման վեց ամիս, հայերը զինվորական ծառայության կանչվեցան: Ունևորներեն զինվորական փրկանք ընդունվեցան: Բայց քանի մը շաբաթ վերջ՝ անկատ թողած զինվորական փրկագնի ստացագիրները՝ անոնց տերերուն զինվորագրությունը վերսկսավ: Պոլսո շրջակաները գտնվող հայ դեռատի դասու զինվորները գործոն բանակին մեջ գետեղվեցան, ինչպես պալքանյան պատերազմի ատեն: Իսկ չափահասներ և հեռավոր վայրերու հայեր գործածվեցան ճամբաներու, երկաթուղիներու և ամրություններու շինությանց»³:

Օտարերկրացու վկայությամբ՝ հայ երիտասարդներն ինչպիսի հանձնարարություն որ ստացան, իրականացրին ամենայն բարեխղճությամբ: Կատարվեց հակառակը: 1915 թ. ապրիլին մայրաքաղաքից հրաման ստացվեց, թե քանի որ հայերը Փոքր Ասիայում «ապստամբության են նախապատրաստվում», **ապա կանխել այն**: Նույնիսկ եղան թուրքեր, որոնք պատասխանեցին, թե իրենք նման հակապետական արարք չեն նկատել: Այդ հաշվի չառնվեց: Հրամանը հրաման էր, և սկսվեցին հաշվեհարդարները:

¹ Յ. Պ. Պողոսյան, Հայ ցեղը և հալածանքները. հոգեբանության լույսին տակ, Պոստըն, 1919:
² Նույն տեղում, էջ 29-30:
³ Հրոպըրդ Էտըմզ Կիպինզ, ժամանակակից պատմության սևագույն էջը, 1915-ի հայկական դեպքեր, իրողություններ և պատասխանատվություններ: Թարգմանեցին Ա. Սաղաթեյանը և Ե. Մորկեանը, Նիւ Եորք, 1916, էջ 25-26:

Կիպինզը շարունակում է. «Եվ հայկական քարոզերու նոր թվական մը սկսավ... Նախ, այս ծեռնարկը կարելի ամենաքիչ դժվարությունով գործադրելու համար, դեռևս քաղաքներու և գյուղերու մեջ մնացած հայ բնակչության ուժեղ տղամարդիկը ազդարարություն ստացան հավաքվիլ հարմարագույն վայր մը, ընդհանրապես քաղաքեն դուրս: Ժանդարմներ և ոստիկաններ այս հրամանին գործադրության խստիվ հսկեցին և ոչ ոք աչքե վրիպեցավ: **Չանոնք ժողովելե վերջ բոլորը սուրե անցուցին...** Մեծ քաղաքներու մեջ սակայն, Պոլսո հրամանները, այսքան ճիշտ ու պարզ կերպով կատարել, կարելի չէր միշտ: Հայ երևելիները իրենց տուններուն մեջ սպանվեցան: Ներքին քաղաքներու այրեր հսկողությամբ «ուրիշ քաղաք» դրկվեցան: Քանի մը ժամեն վերադարձան պահապանները՝ առանց իրենց բանտարկյալներու... Ծովեզրյա քաղաքներու հայերը նավակներով «ուրիշ նավահանգիստ» մը տարվեցան: **Նավակները զարմանալիորեն շուտ վերադարձան՝ պարպված իրենց ծամփորդներեն**»¹:

Ջորահավաքի պրոցեսի և թուրքական դաժանությունների մասին դեպքերի ականատես ու ժամանակակից Յ. Պողոսյանը շարունակում է պատմել. «**Սեֆերպերիքը, mobilisation**, բառ մըն է թուրքիո մեջ, որ ամեն տգետ թուրք կամ քուրդը աչքը **զոց գիտե**, և որը հավասար է սարսափի, կաշառակերության, անիրավելու և քայքայումի:

Բոլոր այրերը, իսլամ կամ ոչ իսլամ, առանց որևէ կարգի և կանոնի, 20-45 տարեկան, խունբերով հավաքել, զորանցներու, մզկիթներու, պանդոկներու մեջ պարզապես խմբել, անոթի, ծարավ և վրա-գլուխ բաց, օրերով արգելափակել, 2-5, 10 դուրուշ կաշառք տալով՝ պահակ ոստիկաններու կամ զինվորական հսկիչների թույլտվությամբ տուն դառնալ, անպաշտպանները և անողոքները միայն ամենեն առաջ դեպի բանակատեղիները դրկելով, ազդեցիկ եղողներն ու պաշտպան ունեցողները, միշտ **թեհճիլ** ընել, հետածագել, կաշառք չի տվող կամ **քիպար** բառով միջոց չապահովող արհեստավոր կամ վաճառական դասին քանի մը օր իսկ պայման չտալ... կնշանակե քայքայել ժողովուրդներու և երկրին տնտեսական կյանքը»²:

Մանրամասն նկարագրվում է, որ երիտթուրքական մարդագայլերը գերադասում էին զորահավաքի ենթարկել ավելի քան հայ գրագետ ու վաճառական դասերին, քան սովորական երկրագործներին: Ձինվորագրումից հետո հայերի շինությունները, ընդհուպ մինչև կանոնավոր բնակարանները բռնազավթում էին, վերածում զինվորական պահեստների, հիվանդանոցների, թուրք հրամանատարների կացարանների: Ապա շարունակում. «**Մեր շրջանին մեջ, մեծապես փույթ կտարվեր, որ հայ զինվորները դեպի Սուրիա, Միջագետք և կամ Պաղեստին դրկվին և հայ բժիշկներն ու դեղագործները ավելի շուտով զինվորագրվեցան, քան իրենց թուրք արհեստակիցները, որոնք կառավարության և պաշտոնական հիվանդանոցներու պաշտոններով օգտվեցան...**»³:

Ջորահավաքի սարսափազդու դեպքերի մասին անհավատալի ու ծանրագուր փաստեր է հրապարակում եղեռնի թույնը մինչև վերջին մրուրն ընկած խարբերոցի գրագետ **Վահե Հայկը**, որը հեղինակն է «**Խարբերոցը և անոր ոսկեղեն դաշտը**» ծավալուն հուշապատում-հատորյակի, պատվավոր անդամը Հայաստանի

¹ Հրոպըրդ Էտըմզ Կիպինզ, ժամանակակից պատմության սևագույն էջը, 1915-ի հայկական դեպքեր, իրողություններ և պատասխանատվություններ: Թարգմանեցին Ա. Սաղաթեյանը և Ե. Մորկեանը, Նիւ Եորք, 1916, էջ 28-29:
² Յ. Պ. Պողոսյան, նշված աշխատությունը, էջ 32-33:
³ Նույն տեղում, էջ 33-34:

Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի: Նա պատմում է, որ զորահավաքից անմիջապես հետո «նորագիր հայ զինվորներու, մասնավորապես դպրոցական և ուսյալ երիտասարդներու ձեռքեն զենքերը առնվեցան: Անոնց ամենքին էլ խառնեցին զործավորական բանակին «ամելե թապուրի» և տարվեցան ամայի լեռներն ու ձորերը ճամբաներ շինելու համար»¹:

Հայ զինվորներից մեկը, որը հրաշքով փրկվել էր մահվանից, պատմում է. «Մենք ճամբաներ չենք շիներ հոն, այլ խրամներ կրանանք, այսինքն երկար գերեզմանի փոսեր, որոնց մեջ թաղվելու համար... Մեր աշխատանքները պատերազմի մոտ տեղերու վրա չեն ըլլար, այլ բոլորովին ամայի վայրեր. քիչ մը հաց կատանանք միայն, ջուրն ալ եթե մոտ է հազիվ կրնանք ունայ մը խմել: Մեկ բառ եթե խոսինք՝ հրացանի հսկա կոթը կիջնե մեր գլխուն և մենք կիյնանք մեր փորած փոսին մեջ, մեր ընկերներն ալ հող կլցնեն: Ատ կըլլա մեր վերջավորությունը... Քանիներն այդպես թաղվեցան»²:

Հայ ժողովրդի ցեղասպանությունը մեկ անգամ ևս հաստատում է թուրք պետական գործիչ Նայիմ բեյը: Նա եղել է արևմտահայերի բռնագաղթեցման Հալեպի կոմիտեի քարտուղարը, հավաքել, դասդասել է անմարդկային այդ ոճրին վերաբերող բազում վավերագրերը, որոնք ստորագրել էին ներքին գործերի նախարար հայա-կուլ Թալեաթը, նրա կամակատար գեներալ-նահանգապետ Մուստաֆա Արդու-հալիբը, աքսորման գլխավոր կոմիտեի ներկայացուցիչ Արդուլահ Նուրի բեյը և այլք: Դրանց գումարելով իր սեփական դիտարկումների գրավոր հուշապատումները, Նայիմ բեյը, փաստորեն, ստեղծել է մի այնպիսի մեղադրական եզրակացություն, որին որևէ այլ աշխատություն փոխարինել ղժվար թե կարողանա:

Մենք թուրքերին պատասխանում ենք ոչ թե թուրքավարի, այլ թուրքերի լեզվով ու ընձեռած փաստաթղթերով: Դա Նայիմ բեյի վերոհիշյալ հաստատված թղթապանակն է, որը նա տրամադրել է հրապարակախոս, նկարիչ Արամ Անտոնյանին: Վերջինս թուրքական եռյակի անմարդկային ոճրագործության մութ ծալքերը բացող փաստերը գրեթե անփոփոխ հրապարակել է վերջում կցելով դրանց լուսապատճենները³:

Նայիմ բեյի ընձեռած փաստերի և փաստաթղթերի պատմաքննական վերլուծությանը զբաղվել են Ջ.Ս. Կիրակոսյանը⁴, Ռ.Գ. Սահակյանը⁵, Ծ.Պ. Աղայանը⁶, Գ.Ահարոնյանը⁷, Մ.Գ. Ներսիսյանը⁸ և այլք: Նրանք տարբեր տեսանկյուններից արժեքավորել են թուրք պաշտոնյայի պահպանած և հայ մտավորականին հանձնած վավերա-

¹ «1915-1965 Յուշամատենան Մեծ եղեռնի», Պէրոս, 1965, էջ 560:
² Նույն տեղում, էջ 561:
³ Գիրքն առաջին անգամ լույս է տեսել ֆրանսերենով 1920 թ., տե՛ս *Aram Andonian, Documents officiels concernant les massacres arméniens. Reproduction photographique d'un grand nombre de documents, Paris, 1920*: Նույն թվին գիրքը հրատարակվեց անգլերենով, այն էլ Լոնդոնում: Տե՛ս *Aram Andonian, The Memoirs of Naim Bey. Turkish Official Documents Relating of the Deportations and Massacres of Armenians, London, 1920*: Քիչ անց արարատում վավերագրերը թարգմանվեցին հայերենի և լույս տեսան հայոց լեզվով: Տե՛ս *Արամ Անտոնյան, Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, պաշտոնական հեռագրեր, Պոստըն, 1921*: Այն լույս տեսավ մի քանի անգամ, այդ թվում նաև երևանում:
⁴ *Ջ. Ս. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1983, էջ 20-22*:
⁵ *Р. Г. Саакиан, Документы младотурецкого комитета о геноциде западных армян 1915-1916 гг., "Известия АН Арм. ССР, Общественные науки, Ереван, 1965, № 3"*.
⁶ *Շ. Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 487-490*:
⁷ «Յուշամատենան Մեծ եղեռնի», էջ 1095-1096:
⁸ «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 558-577, 736-737:

գրերը, դրանցով իսկ, գուցե ոչ ավելորդ անգամ, այսօրվա թուրք պատմաբաններին հիշեցնելով, թե իզուր է ձեր համառությունը ցեղասպանությունը չընդունելու գործում:

Օտար սկզբնաղբյուրների, իրենց իսկ թուրք գործիչների վկայություններն աներկբա են դարձնում, որ հայ ժողովրդի կոտորածները եղել են զանգվածայնորեն, **կազմակերպվել և իրողության են վերածվել պետական մակարդակով**: Այդ պարզ ճշմարտությունն այսօր ժխտվում է, փաստերն աղավաղվում են, երբեմն եղելությունը ցույց է տրվում ծուռ հայելու միջով:

Հետևաբար, մենք այստեղ, փորձելով ներկայացնել Մեծ եղեռնի համառոտ պատմությունը, անհրաժեշտ չենք համարում բացել նրա բոլոր մութ ծալքերն ամբողջապես: Դա, նախ, ծավալով հատորներ կպահանջի, մանավանդ որ, այդ մասին ստեղծվել է համապատասխան լեռնակուտակ գրականություն:

Սույն և հետագա շարադրանքով մենք գերխնդիր ունենք **մեկ անգամ ևս ապացուցելու, որ եղածը ցեղասպանություն էր, և կատարվածի համար պատասխանատուներ և հաշվետուներ պիտի լինեն**: Այդ ամենը պիտի քննի միջազգային դատական ատյանը (ինչպես կատարվեց հիտլերյան ֆաշիզմի նկատմամբ նյուրնբերգյան պրոցեսը) և **կայացնի արդարացի, անկողմնակալ որոշում**¹:

2. Հայ մտավորականության գողգոթան

Հայ ժողովրդի ցեղասպանության պրոցեսը ծայր է առել 1890 թ. և եզերվել 1922 թվականով: Ինչ վերաբերում է **Մեծ եղեռնին**՝ ցեղասպանության իրականացման կուլմինացիային, ապա ինչպես հայ, առավել ևս օտար հետազոտողները դրա սկզբնավորումը համարում են **ողբերգական 1915 թվականը**:

1915 թ. ապրիլի 15-ին պատերազմական նախարար **Էնվերի**, ներքին գործերի նախարար և վարչապետ **Թալեաթի** և հայատյացությամբ տառապող **Նազըմի**՝ եռյակի ստորագրությամբ Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի հայաբնակ բոլոր նահանգների թուրք ղեկավարությանն է ուղարկվում (խիստ զաղտնի, ծածկագրված) **հիմնական հրամանագիրը** հայ ժողովրդի **համատարած բռնագաղթի, ֆիզիկական ոչնչացման վերաբերյալ**²:

Ահա հայասպանությունը պարտադրող այդ հրամանը.
«Իսլամ և թուրք ժողովուրդը ներկայացնող կառավարությունը և «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, միացած ուժերով, ինչ որ ալ պատահի, որևէ հաշտության սեղանի վրա, որևէ ձևով հայկական հարցի մը դրվելը կանխելու համար, օգտվելով պատերազմին մեզ բերած սա անկախութենեն, որոշեցինք վերջնական հաշվեհարդարի ենթարկել զայն, բնաջնջելով անհարազատ այդ տարրը, քչելով զանոնք դեպի Արաբիո անապատները, համաձայն տրված մեր գաղտնի հրահանգին... Արդ, կառավարությունն ու Իթթիհատի մեծ կոմիտեն կոչ կընենք ձեզ և ձեր հայրենասիրության և կիրամայենք, որ ձեր բուրնի տրամադրելի ուժերով աջակցիք «Միության և առաջադիմության» տեղալու մարմիններու, որոնք 24 ապրիլի արևածագեն սկսյալ, գաղտնի ծրագրի մը կան մարմիններու, որոնք 24 ապրիլի արևածագեն սկսյալ, գաղտնի ծրագրի մը համաձայն, զործադրության պիտի ղնեն այս հրամանը: Որևէ պաշտոնատար համաձայն, զործադրության պիտի ղնեն այս հրամանը: Որևէ պաշտոնատար ու անհատ, որ կհակառակի այս սրբազան ու հայրենասիրական գործին ու չի տրամադրվիր իրեն հանձնված պարտականության և որևէ ձևով այս կամ այն

¹ *Հայկ Ղազարյան, Հայ ժողովրդի ցեղասպանությունն օսմանյան կայսրությունում, հատոր երկրորդ, Երևան, 2007, էջ 283-289*:
² *Թեոդիկ, Յուշարձան մահատակ մտավորականության, Երևան, 1985, էջ 25*:

հայր պաշտպանելու կամ պահելու փորձ կրնե, հայրենիքին և կրոնքին թշնամի կնկատվի և ըստ այնմ ալ կպատժվի»¹:

Ամեն ինչն սկսվեց Կոստանդնուպոլսից, որտեղ խարսխված էր բազմահազարանոց արևմտահայությունը:

1915 թ. ապրիլի 23-ն էր, օրը շաբաթ էր: Երեկվա գատկի տոների արարողությունից հոգնած հայ համայնքը հանգչում էր երանավետ նիրհով, գուցեև ապրում նոր երազանքներով: Քաղաքը «անհոգ» անդորրի մեջ էր, բացի Այասոֆիայի տաճարի մոտ տեղակայված ոստիկանատան կենտրոնակայանից: Խորին գաղտնապահությամբ այստեղ մուտք ու ելք էին անում ոստիկանները, որոնք հերթականությամբ հասցեներ էին ստանում և հայ մտավորականության ձերբակալության հրամաններ: Իթիհատական մարդակուլ ոստիկանները շտապ-շտապ ուղևորվում էին իրենց գոհերի տները, իսկ նրանց թիվը փոքր չէր?...

Մայրաքաղաքում այդ պահին ապրում էր ողջ հայ մտավորականության փայլատակող փառանգը. **196 գրող, 168 նկարիչ, 575 երաժիշտ, 336 բժիշկ, դեղագործ, ատամնաբույժ, 176 ուսուցիչ, քուլեջների պրոֆեսոր, 160 իրավաբան, 62 ճարտարապետ, 64 դերասան:** Այդքան մեծ էր հայ մտավորականների թիվը, քանի որ Ստամբուլում այդ պահին ապրող 800-850 000 ընդհանուր բնակչության մեջ արևմտահայերի քանակը հասնում էր 175-200 հազարի: Այս պարագան ևս զայրույթ էր պատճառում մահմեդապաշտ իթիհատականներին, իսլամի երկրպագուներին:

Ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը թուրքական ցեղապաշտների զինված հրոսակները ներխուժեցին հայ մտավորականներից շատերի բնակարանները: Մարդկային երևակայությունն անգոր է պատկերացնել կատարվածը: Գիշերվա խաղաղ երկնքի տակ կարծեք թե ռումբեր էին պայթել: Մինչև առավոտյան աղջամուղջն այդ մեծ քաղաքը վերածվել էր դժոխքի, **քանի որ իրողության էր վերածվել վաղորդ, պետականորեն մշակված հայ մտավորականության ցեղասպանության ծրագիրը:**

Ապրիլի 24-ի կիրակին դա մի արհավիրք էր հայ ժողովրդի գլխին: Կարծեք թե դժոխքի մեջ կալանավորված ավազակներն ու մարդասպանները խորտակել էին գեհենի դարպասները, խուժել ներս և ահեղ ուրվականի մահացու կատաղությամբ պայթել գաղթօջախի մտավորականության գլխին: «Եվ ամբողջ մտավորական սերունդ մը, – գրում է **Անդրանիկ Անդրեասյանը**, – գրագետ ու խմբագիր, ուսուցիչ, թե արվեստագետ, եկեղեցական կամ հանրային գործիչ, – ով որ գեղեցկության փառք և ճշմարտության լույս կերգեր, որ ոգիի ազնվացման ու ձերբազատ գոյության տեսիլին կձգտեր՝ զարնվեցավ շղթայի և քաշկռտվեցավ դեպի մահվան գողգոթան: Ինչպես անարգ ստահակ մը կրնա գռիհներու գարշ դիրտով խեղդել արևը... **Քայց ինչպե՛ս թուրք խավարի ու եղեռնի մատները կրցան քարով ձգմել, կացի՞նով մորթել ու դանակով պատռել հայ գրողների գլուխները ու սիրտերը, որոնցմե ոգիի ու միտքի հանձարին շալլը կիսուեր, արևի շողերուն նման վճիտ, տաք ու հավերժական** (ընդգծումները մերն են – Գ. Ղ.)»²:

¹ **Ա. Քեղեան**, Կարմիր դրվագներ հերոսներու կյանքեն (1915-1918), հ. 1, Բուխարեստ, 1938, էջ 63-64: Տե՛ս նաև ՉՄԳ, հ. 7, Երևան, 1981, էջ 425: **Մ. Արզումանյանի** «Մեծ եղեռն» հոդվածը:

² «Յուշամատենան Մեծ եղեռնի», էջ 35: **Ա. Ն. Մնացականյանի** հոդվածը. «Չայ ժողովրդի Մեծ եղեռնը և Ազգային վերածությունը»: Տե՛ս նաև «Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke». Herausgegeben und eingeleitet von Dr. **Johannes Lepsius**, Potsdam, 1919, S. 113-142.

³ «Յուշամատենան Մեծ եղեռնի», էջ 64: **Անդրանիկ Անդրեասյանի** հոդվածը. «Սուգի և ուխտի յիսնամակը»:

Միայն ապրիլի 24-ին հասցրեցին ձերբակալել 235 անվանի մտավորականի, պետական և քաղաքական գործիչի: Հաջորդ մի քանի օրերում ևս կալանավորեցին 300-ից ավելի մարդկանց: Ձերբակալվածների ընդհանուր թիվը հասավ շուրջ **ութ հարյուրի**, որոնցից **ութին միայն հաջողվեց հրաշքով փրկվել մահվան ճիրաններից:**

Մտավորականների խմբերը սկզբում աքսորվեցին երեք վայրեր. քաղաքականությանը զբաղվողները՝ **Այաջ գյուղը**, մյուսները՝ **Անկարայի և Փաստեմունիի** միջև գտնվող **Չանղըր** փոքրիկ քաղաքը և Չանղըրի ու Ամասիայի միջև գտնվող **Չորում** վայրը: Սկզբում նախատեսվում էր Անկարայում զինվորական դատարան գումարել և նրանց դատել, հետո աքսորյալներին հավաստիացնում էին, թե նրանք դատարանի առջև կկանգնեն Դիարբեքիում և այլուր: Օրինակ, Գրիգոր Ջոհրապը համոզված էր, որ ինքը հնարավորություն կունենա դատարանում մերկացնել թուրքական կառավարողների անօրինակ խժոժությունները: Սակայն զո՛ւր հույսեր էին դրանք: Նախ՝ թուրքական կառավարությունը և ոչ մի փաստ չունեց այդ մարդկանց դեմ մեղադրանք հարուցելու, և հետո՝ նրա նպատակը շատ ավելի պարզ էր. ուղղակի ոչնչացնել հայ անվանի մարդկանց աքսորի ճանապարհին:

Անշուշտ, կտեղահանվեին Կ. Պոլսի ամբողջ հայ բնակչությունը, եթե երիտթուրքական կառավարողները դրա համար ունենային տեխնիկական հնարավորություններ: Կայսրության մայրաքաղաքը ժամը կացության մեջ էր, Ամտանտի զինված ուժերը լրջորեն սպառնում էին նրան: Այսպիսի պայմաններում իթիհատական կենտրոնում բուռն վիճաբանություններից հետո հաղթեց առայժմ միայն հայ անվանի մարդկանց աքսորելով բավարարվելու, իսկ մնացածին ավելի պատեհ ժամանակ տեղահանելու տեսակետը¹:

Կ. Պոլսից աքսորված և տարբեր վայրերում խողխողված հայ անվանի մտավորականների շարքում էին հայ ականավոր գրող, հասարակական-քաղաքական գործիչ, 1908-1912 թթ. օսմանյան պառլամենտի երեսփոխան, հրապարակախոս, իրավաբան **Գրիգոր Ջոհրապը** (1860-1915), տաղանդավոր բանաստեղծ **Միամանթոն** (Ատոմ Յարճանյան, 1878-1915), բանաստեղծ, ուսուցիչ **Դանիել Վարուժանը** (Չիպուրքեարյան, 1884-1915), անվանի գրող, մանկավարժ, հրապարակախոս **Ռուբեն Չարդարյանը** (1874-1915), բանաստեղծ, բժիշկ, բժշկական ընկերության նախագահ **Թորոսյանը**, բժիշկ, բանասեր, հրապարակախոս **Նազարեթ Տաղավարյանը** (1862-1915), բժիշկ, բանաստեղծ **Ռուբեն Սևակը** (Ռուբեն Չիլինկիրյան, 1885-1915), ուսուցիչ, գրող, հրապարակախոս **Յրանտը** (Մելքոն Կյուրճյան, 1859-1915), գրող, մանկավարժ **Թլկատիցին** (Յովհաննես Յարուբյունյան, 1860-1915), բանաստեղծ, քննադատ **Արտաշես Յարուբյունյանը** (1873-1915), նովելիստ, ուսուցիչ, խմբագիր **Երուխանը** (Երվանդ Սրմաքեշխանյան, 1870-1915), արձակագիր, բանաստեղծ, խմբագիր **Տիգրան Չեոկուրյանը** (1884-1915), բազմաթիվ վեպերի և պատմագիտական ուսումնասիրությունների («Բանտե բանտ», «Ելլըզգե Սասուն», «Վեղարավոր հերոսը», «Ավարայրի արծիվ» և տե՛ս բանտ), «Ելլըզգե Սասուն», «Վեղարավոր հերոսը», «Ավարայրի արծիվ» և այլն) հեղինակ **Սմբատ Բյուրատը** (1862-1915), բանաստեղծ, թարգմանիչ **Լևոն Լարենցը** (1875-1915), **Ժակ Սայապալյանը** (Փայլակ)՝ հայտնի իր թարգմանություններով ու արձակ գրվածքներով (1875-1915), երգիծաբան, խմբագիր **Գրիգոր Թորոսյանը** (1884-1915), արձակագիր **Գեղամ Բարսեղյանը** (1883-1915), հայտնի դերասան **Ենովք Շահենը** (1881-1915), հրապարակախոս, պատմաբան, «Բյուզնի դերասան **Ենովք Շահենը** (1862-1915), բանասեր **Յովհանն-զանդիոն**» թերթի խմբագիր **Տիրան Քելեկյանը** (1862-1915), բանասեր **Յովհանն-**

¹ **Ջ. Ս. Կիրակոսյան**, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, 1914-1916 թթ., երկրորդ հրատարակություն, Երևան, 1967, էջ 294: Տե՛ս նաև **Թեոդիկ**, Գողգոթա, հ. Ա, մաս Ա, «Պոլսի աքսորյալները» գլուխը, Անթիլիաս, էջ 26:

Նես Ղազանյանը (1870-1915), հասարակական հայտնի գործիչ, խմբագիր, հրապարակախոս **Եսալենը** (Գարեգին Կոզիկյան, 1878-1915), բանասեր, պատմաբան, հրապարակախոս **Գագիկ Օզանյանը** (1882-1915), նկարիչ **Չրանտ Աստվածատրյանը** (1884-1915) և շատ-շատ ուրիշներ¹:

Ութ հարյուր նահատակներին մեկ առ մեկ բնութագրել, նրանց կենսագրական մանրամասնությունները հաղորդել ընթերցողին նախ մեր հետապնդած նպատակը չէ, մանավանդ, որ հնարավոր էլ չէ, թեկուզ գրքի ծավալի պատճառով: Համեմայնդեպս անհրաժեշտ ենք համարում նրանցից մի քանիսի մասին բնութագրական խոսքեր ասել:

Ապրիլյան օրերը հայոց բազմադարյան պատմության մեջ մտան իբրև **ամենամոայլ ու սև տարեթիվ**, իսկ 24-ը ստացավ «**արյունոտ կիրակի**» անունը²: Կ. Պոլսի «օպերացիան» կազմակերպում և գլխավորում էր մայրաքաղաքի ոստիկանապետ **Պետրի բեյը**³ օգնականներ ունենալով **Ռեշադին** (քաղաքական գծով), **Ջանկուլադին** (ապահովության գծով): Նախօրոք կազմված ցուցակները ձևավորելիս **գարշելի մատուցիչի դեր էին կատարել** Արթին Մկրտչյանը, Հմայակ Արամյանը և Գամեր Շիրինյանը⁴:

Ապրիլի 24-ի գիշերը կենտրոնական բանտ (Միթթերհանե) բերվեց կալանավորների առաջին խումբը: «Ամենքս ալ, – գրել է Գ. Պալաքյանը, – հետամուտ էինք լուծելու այս առեղծվածը և պատասխան կփնտրեինք այս հարցերուն, բայց ինչո՞ւ հավաքական սա հարյուրավոր ձերբակալություններ և արդյոք ի՞նչ պիտի ըլլա ասոր վախճանը»⁵:

Բանտարկվածները շվարած, ոչինչ չհասկանալով դեռևս ենթադրում էին, թե այն թյուրիմացություն է կամ սխալմունք: Շատերը նույնիսկ գիշերային հագուստով, առանց կոշիկների էին բերման ենթարկվել: Նրանց բնակարաններն առանց զուլազանցման ներս խուժող ոստիկանները վերջիններիս թուրքավարի խաբել էին, թե տանում են ոստիկանապետի մոտ «մի կարևոր հանգամանքի մասին փոքրիկ զրույցի»: Չկար ո՛չ մեղադրական եզրակացություն, ո՛չ հարցաքննություն, ո՛չ դատ: Ամեն ինչը կատարվում էր ապօրինի, անմարդկային և ստոր մեթոդներով: **Այս ամեն ինչը անժխտելի վկայություն է հայ ժողովրդի ցեղասպանության, բառ, որից այդքան սարսափում են թուրքիայի այսօրվա պետական այրերը:**

Եվ այսպես, համառոտակի ներկայացնենք ձերբակալվածների ցուցակը՝ նրանցից ոմանց փոքր բնութագրումներով: **Գրիգոր Չոհրապ** (Կ. Պոլիս, 1860-1915), ականավոր իրավաբան, հանճարեղ գրող, թուրքական խորհրդարանի անդամ, հայ նորավեպի հիմնադիր-սկզբնավորողը⁶:

Գր. Չոհրապին բնութագրելիս արարական ազգային-ազատագրական գործիչներից, այսինքն՝ ազգությամբ արար շեյխ Ֆազիլ-էլ Ղուսեյնը գրում է. «Ամբողջ աշխարհը գիտի այն մասին, թե ով էր Կ. Պոլսի հայ պատգամավորը, որի անունը սահմանադրության հռչակումից հետո փառաբանում և ողջունում էին: Նա փայլում էր որպես հռետոր, իր գիտելիքներով և իմաստությամբ: Նա բարձր կրթության տեր մարդ էր, իրավունքի հարցերի գիտակ և ոչնչի առաջ կանգ չէր առնում, երբ խոսքը գնում էր ազգային շահերի պաշտպանության մասին»⁷:

¹ Ջ. Ա. Կիրակոսյան, նշված աշխատությունը, էջ 236: Տե՛ս նաև **Թեոդիկ**, Յուշարձան նահատակ մտավորականության (Գալուստ Գալոսյանի առաջաբանով, էջ 5-15), Բ տպագրություն, ապրիլ 24, 1985, էջ 15-70: Տե՛ս նաև **Թեոդիկ**, Գողգոթա, էջ 26-27:
² J. Lepsius, նշված աշխատությունը, էջ 20:
³ Մ. Արզումանյան, Հայաստանը 1914-1917, Երևան, 1969, էջ 320-321:
⁴ Գրիգորիս Ժ. Վարդ. Պալաքյան, Հայ Գողգոթան, հ. Ա, Վիեննա, 1922, էջ 75:
⁵ Մինաս Հուսյան, Գրիգոր Չոհրապ, կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1957: Տե՛ս նաև Ժ. Ղ. Սարգսյան, նշված աշխատությունը, էջ 236-237:
⁶ Ֆազիլ-էլ Ղուսեյն, Զարթոն Հայաստանի մեջ (ակնամտեսի վկայություններ): Ֆրանսերենից թարգմանեց Գր. Պասմաշեան, Գահիրե, 1960, էջ 9-10:

Ապրիլի 24-ի երեկոյան **Վահրամ Փափազյանը** Գատը գյուղի թատերասրահում Օթելլո էր խաղում: Իմանալով բանտարկությունների մասին՝ նա դիմաներկով ու թատերական հանդերձանքով ճողոպրում է, խույս տալիս գաղտնի ոստիկանության ճանկերից, մտնում ֆրանսիական նավը և հասնում Օդեսա: Հանճարեղ դերասանը մտերիմն էր Գր. Չոհրապի և Սիամանթոյի: Ահա թե ինչ է գրում. «**Գրիգոր Չոհրապը մաքուր սփողոցի վրա թանկարժեք բակարա բաժակի մեջ մատուցված փրփրալից ու հարբեցնող շամպայն եղավ նոր Բյուզանդիոնի խնջույքի սեղանին, որի կիսախումբ բաժակն իր փրփրոտ հափրանքը չվերջակետեց, որովհետև վայրենի ու սինլքոր ձեռքերը փշրեցին նրան անզգա սալաքարերի վրա, մինչդեռ նա դեռևս կարող էր ամբոխներ արբեցնել երկար տարիներ»¹:**

Հայ մեծ երգիծաբան Երվանդ Օտյանը տեղեկություններ է հաղորդում Գր. Չոհրապի սպանության մասին. «Ձազրելի չարագործություն կատարվեց Ուրֆայից մի քանի ժամվա ճանապարհի հեռավորության վրա: Թուրք պաշտոնյաների խումբը էնվերի ազգական հալիլ բեյի գլխավորությամբ (որը հետագայում Բաղդադի բանակի գլխավոր հրամանատար նշանակվեց) հարձակվեց կառքի վրա և գազանաբար սպանեց Գրիգոր Չոհրապին»²:

Ատոմ Յարձանյանը (Սիամանթոն, Ակն, 1878-1915) սկզբնական կրթությունն ստացել է Կ. Պոլսում: Համիդյան ջարդերի (1894-1896) պատճառով տարագրվել է բազմաթիվ երկրներ: Որոշ ժամանակ մնալով Կահիրեում՝ տեղափոխվել է Ժնև, քիչ անց **խարսխվել Փարիզում**, դառնալով Սորբոնի հռչակավոր համալսարանի գրական բաժնի ազատ ունկնդիր: Եվրոպայում ապրած տարիներին սկսել էր հնչել ու աստիճանաբար հուժկու դառնալ բանաստեղծի քնարական ձայնը, ձևավորվել նրա աստիճանաբար հուժկու դառնալ բանաստեղծի քնարական ձայնը, ձևավորվել նրա գաղափարաբանությունը հայ ազատամարտի մասին: Նա համազգային փառքի հագաղափարաբանությունը հայ ազատամարտի մասին: Նա համազգային փառքի հասավ 1902 թ. հրատարակած «Դյուցազնորեն» ժողովածուով: Այն մաս-մաս և ամբողջությամբ երիտասարդությանն ուղղված պատգամներ են, որոնց առաքելական խորհուրդն ուղենշում է «Բիզվեդա»-ից վերցրած բնաբանը. «**Այնքան արշալույսներ կան, որ տակավին չեն ծագած...**»: Դա պայքարի ու սթափումի նշանաբանն էր, որ բանաստեղծն ավանդում էր ժամանակակիցներին³:

Սիամանթոյին որևէ մեկն ավելի լավ չի բնութագրել, քան **Վահրամ Փափազյանը: Մեծ դերասանը հանճարեղ գրողին համեմատել է Դանթեի հետ և հպարտացել, որ ինքը ծանոթ է եղել նրան: Նա գրել է. «Թե հնարավոր լիներ մեր այս ներկա ժամանակներում ոգեկոչել մեր թվականությունից շատ առաջ ապրած եզեկիեղին, նրան, որ մի ամբողջ դաշտ լիքը ոսկորներ տեսավ իր շլմորած աչքերի առաջ, նրան, որ սարսափից խլացած իր ականջներում հանկարծ լսեց անհայտությունից խոսող ձայնը, որ հրամայում էր ուտել այդ ոսկորները, նրան վերջապես, այդ ահավոր տեսանողին, որ աղիողորմ թախանձանքով կանչում էր աշխարհի չորս հողմերին՝ պաղատելով շնչել ոսկորների վրա ու կենդանացնել մեռյալներին... Եթե հնարավոր լինի այսօր լսելի դարձնել անլուր ոճիրների դեմ ծառայող այդ ահարկու փոթորիկը՝ եզեկիեղը, այսօր մենք կտեսնեինք մեր աչքերի առաջ Սիամանթոյին, չնայած իր անդարձ մեկնումին անհնարին խոշտանգումների ծանապարհով, մի խոսքով Սիամանթոյին, որի ձայնը խոսում է ու կխոսի այսօրվա հայի ականջին, ինչպես և իր ստեղծած ահարկու պատկերների քերականական օրենքների դեմ ըմբոստ, ահռելիորեն գեղեցիկ լեզվով վաղվա հայի ականջին: Այն լեզվով, որ ինքն ստեղծեց, որ իրենը եղավ...**

¹ «Վասն Հայության» շարաթաթեր, Երևան, 2002, 23 ապրիլի, էջ 20:
² "Наше время", 27.04.1919.
³ ՀՄԳ, հ. 10, Երևան, 1984, էջ 353: Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, Երևան, 1961, էջ 813-814:

եղան օրեր, որ ես ինձ հպարտ էի զգում, որ գիտեմ *Դանտեին*... Եվ որ Ալիգրերին իմ մտայնությանն այնքան է հարազատ, որքան իմ եսն իմ էությանը...

եղան և օրեր, սակայն, որ ես ինձ հպարտ զգացի մեր մեծ բանաստեղծին՝ Յարձանյան Ատոմին ծանաչելով... որն իր ստեղծած անկրկնելի անբավ հարստությամբ աղքատ չէ 14-րդ դարու տոսկանացուց»¹:

Դանիել Վարուժանը (Զիպուքքեարյան Դանիել Գրիգորի, գյուղ Բրզինք, Սեբաստիայի նահանգ, 20.04.1884—1915) *հանճարեղ* գրող էր, մասնագիտությամբ ուսուցիչ, հասարակական-քաղաքական ակտիվ գործիչ: Միջնակարգ կրթությունն ստանալով Կ. Պոլսում՝ ուսումը շարունակել է *Բելգիայում*, որտեղ և ավարտել է *Գենտի* համալսարանը: Նրա գլխավոր գործերն են՝ «Սարսուռներ», «Ցեղին սիրտը», «Չեթանոս երգեր» և «Հացին երգը», որը դարձավ բանաստեղծի կարապի երգը²: Վարուժանի երգերը թարգմանվել են ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն և արևմտաեվրոպական այլ լեզուներով: Բեռլին գրիչ, անգուգական ու ինքնատիպ ունակություններ ունեցող գրական հսկայի մասին մի քանի տող գրելով՝ չես կարող ներկայացնել նրան: Ուստի թող հանճարի մասին *հանճարը* խոսի՝ *Վահրամ Փափազյանը բնութագրի թուրքական յաթաղանին զոհ գնացած իր վաղամեռիկ դասընկերոջը*: Նա գրում է. «Օ՛, իմ դասկից ընկեր, դու, որի պոետական տավիղը ունեցավ բոլոր լարերը, դու, որի մատները հնչեցնելուց հետո «Չեթանոս երգերի» մոռացված հմայքը տեղ ու ժամանակ կարողացան գտնել և սեփական հոգուդ լարերի վրա գուրգուրանքով հպել՝ երգելու համար «Միջօրեի դադարն» ու «Մեռնող բանվորը», դու, որի հոյակապ տողերի մեջ անծանոթ ծայրին լսող «Ճերմակ աղջիկը» հանուն «առաջին մեղքի» մաքուր խիճերի վրա «սպիտակ ուլը մորթոտեց», դու, որ մի ամբողջ աշխարհի գրկելով հանդերձ եղար ու մնացիր մի պարզ հայրորդի, հարազատ մի բեկորը սերնդիդ...

Օ՛, իմ անմոռաց ընկեր... կա՞, մնացե՞լ է արդյոք քո էությունից մի արծազանք, մի թրթռում այն մեծ սիմֆոնիայից, որ դու եղար... Եվ եթե կա, ապա որտե՞ղ, հայտնի որ ինձ: Հայտնի, որովհետև ուզում եմ բուրվառել հոգիդ, երբ չկաս հիմա... իզուր որոնելուց հետո քո հիշատակը միջոցի մեջ, գալ ծնրադրել անհայտ գերեզմանիդ և մեծ հոգիդ խնկարկելու անանց պահանջից հետո՝ գերեզմանահարդարը լինել անհայտ շիրմիդ»³:

Ներկայացնենք նաև մի քանի այլ մտավորականների, որոնք այդ ոճագործության գոհ դարձան:

Ռուբեն Ասակ (Զիլինկիդյան Ռուբեն Հովհաննեսի, Սիլիվրի (Կ. Պոլսի մոտ), 15.02.1885-26.08.1915): Հայ հանճարեղ բանաստեղծ, արձակագիր, լրագրող, մասնագիտությամբ բժիշկ: Սևակի մեջ ապրում էին բանաստեղծի առատածեռն մուսան և Հիպոկրատի հունամիստական հանճարարությունները: 1910 թ. լույս ընծայեց «*Կարմիր գիրքը*» բանաստեղծությունների ժողովածուն՝ նվիրված Հայրենիքին, սիրուն, հատկապես Ադանայի 1909 թ. կոտորածին: Նրա գլուխգործոցն են համարում «*Լիմանի լիճը*» բանաստեղծությունների ժողովածուն, «Բժշկին գիրքն փրձված էջերը և քերթվածները» արձակ ստեղծագործությունները: Սևակն արևմտահայ բանաստեղծության, առավել ևս արձակի բնագավառում ստեղծեց նոր ժանր, կատարեց բազմաթիվ թարգմանություններ, որոնց մեջ առանձնանում էին Հայնրիխ Հայնեի գործերը: Սպանվեց Չանդղում, չեթների դաժան ու անմարդկային ձեռքերով, զարհուրելի դաժանությամբ⁴:

¹ «Վասն Հայության», 23 ապրիլի, 2002, էջ 20:
² *ՉՄ*, հ. 11, Երևան, 1985, էջ 348-349: *Հ. Ոչտունի*, Դանիել Վարուժան, Երևան, 1961:
³ «Վասն Հայության», 23 ապրիլի, 2002, էջ 20:
⁴ *Թեոդիկ*, Յուզարձան նահատակ մտավորականության, Երևան, Բ տպագրություն, ապրիլի 24, 1985: Տե՛ս նաև *ՉՄ*, հ. 10, Երևան, 1984, էջ 312-313: *Զ. Կիրակոսյանի* հոդվածը:

Ռուբեն Չարդարյան (Արևմտյան Հայաստանի *Սևերեկ* գավառ, 1874-1915): Հայ գրող, հրապարակախոս, հրատարակիչ, խմբագիր, անվախ ու աներեր քաղաքական գործիչ: 1910 թ. իր արձակ էջերը հավաքելով հրատարակել է մեկհատորյակում՝ «Ցայգալույս» վերտառությամբ: Նրա ստեղծագործություններից ուշագրավ են «Սարերու տղան» (1902), «Վախես մեռնելի» (1904), «Սև հավը կանչեց» (1906), «Պահակները արթուն են» (1907) և այլ գործեր: Նա թողել է գրականագիտական մի շարք աշխատություններ, որոնցից առանձնանում են «Վաղվա գրականությունը» (1900), «Թլկատիցին» (1908), Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը (1910): Չարդարյանը թարգմանություններ է կատարել Մ. Գորկուց, Վ. Կորոլենկոյից, Է. Վերհարնից, Վ. Հյուգոյից, Ա. Ֆրանսից: «Ցայգալույս» 1912 թ. Փարիզում լույս տեսավ ֆրանսերենով և ցնցեց գրական հասարակայնությանը: Եղել է մի շարք պարբերականների խմբագիր և իր շուրջն է համախմբել սփյուռքահայ գրողներին ու հրապարակախոսներին¹:

Խաչատուր Մալումյան (Է. Ակնունի) ծածկանվամբ, Մեղրի, 1860-1915), հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅ Դաշնակցության կուսակցության ղեկավար անդամներից: Նրա գործերից են «Կովկասյան վերքեր» (հայերեն և ֆրանսերեն), «Գրիգոր Արծրունի», «Դեպի կռիվ», «Դեպի երկիր», «Մեծ իդեալիստը», «Հարգանքի պսակ» (Մ. Փորթուգալյանի հոբելյանի առիթով): «Ազատամարտի», հատկապես անստորագիր խմբագրականների մի մասը պատկանում են *Ակնունու* գրչին: Մեծ մտածողի, հայրենամովեր պայքարամարտիկի գրական ժառանգության համտեսի նպատակով կարդացեք նրա կարծիքը Հայրենիքի մասին²:

Ազգային և քաղաքական գործիչներից զոհ գնացին հարյուրավորներ: Դրանցից հիշատակենք մի քանիսին միայն: *Համբարձում Պոյաճյան (Մուրատ)*³ (1867-1915), քաղաքական գործիչ, օսմանյան խորհրդարանի անդամ: *Վարդգես (Յովհաննես Սերենկյուլյան)* (1871-1915): *Հարություն ճանկուլյան* (1855-1915): *Հրաչ (Հայկ Թերեքյան)* (1871-1915), հեղափոխական գործիչ, օսմանյան բանկի ցույցի կազմակերպիչներից *Միհրան Հայկազ* (1864-1915), քաղաքական գործիչ, ազգային ժողովի երեսփոխան⁴: Եվ այս շարքը կարելի էր ոչ միայն տասնապատկել, այլև հարյուրապատկել:

Այսպիսով, երիտթուրքական մարդասպանները մեկ գիշերվա ընթացքում ձերբակալեցին և մայրաքաղաքի բանտեր լցրեցին հայ գրողներին ու հրապարակախոսներին, թուրքական մեջլիսի հայ պատգամավորներին, բժիշկներին և իրավաբաններին, ուսուցիչներին և դերասաններին, ճարտարապետներին և շինարարներին, դեղագործներին և գիտնականներին, արդյունաբերողներին և վաճառականներին: Դրանք բոլորն էլ արարող, ստեղծագործող, Թուրքիան ծաղկեցնող մարդիկ էին, որոնցից և ոչ մեկի մտքով նույնիսկ չէր անցնում «ապստամբության դրոշ պարզել» իթքիատականների բռնապետության դեմ:

Եվ, ընդհանրապես, 1915 թ. ապրիլի առաջին հնգօրյակում Բոսֆորի ափերը խաղաղ էին, ոչ մի կրակոց չէր արձակվել, նույնիսկ սովորական, խաղաղ ցույցեր չէին կազմակերպվել: Այդ օրերին բանաստեղծներն անհոգաբար հանճարեղ ոտանավորներ էին երկնում, բժիշկները բուժում էին հայ և թուրք հիվանդների վերքերը, ճար-

¹ *Թեոդիկ*, նշված աշխատությունը, էջ 31: Տե՛ս նաև *ՉՄ*, հ. 3, Երևան, 1977, էջ 665-666: *Հ. Սարգսրյանի* հոդվածը:
² Նույն տեղում, էջ 31:
³ «Յուզամատեան Մեծ եղեռնի», էջ 517-518:
⁴ Նույն տեղում, էջ 518-519:

տարապետները կառուցում ու վերակառուցում էին մզկիթներ, հիասքանչ պալատներ, կամուրջներ և փողոցներ, ուսուցիչները կրթում էին և՛ քրիստոնյա, և՛ մահմեդական երեխաներին, դեղագործներն ու վաճառականները զբաղված էին իրենց սովորական առևտրով¹: Նրանք բոլորն էլ խաղաղ, ստեղծագործող մարդիկ էին, որոնց բանտարկելիս թուրք ոստիկանները ոչ մի արծանագրություն չկազմեցին, ոչ մի մեղադրանք չներկայացրին, բացի մեկից, այն է՝ **դուրք հայ եք, հետևապես գյավուր եք և պետք է մեռնեք**: Թուրքերն այսօր կարո՞ղ են ետադարձ հայացքով փաստաթղթեր «սարքել», կարծում եմ, որ ոչ, քանի որ փորձաքննություն կոչվող գիտություն գոյություն ունի:

Չերթակալված հայ մտավորականության առաջին խմբին 24 ժամ մայրաքաղաքի բանտախցերում տանջահար անելուց հետո ապրիլի 25-ի գիշերը տեղափոխում են **Չայդար փաշայի** կառամատույցը և այնտեղից, խիստ հսկողությամբ պաշտպանված, գնացքով «սուրգյուն անում» Իզմիթ-Անկարա ուղեգծով: Հրեշավոր այդ գործողությունն իրողության էր վերածվում Ստամբուլի բանտապետ չեթի Իբրահիմ բեյի գլխավորությամբ, որի սահիստական հրամանով ու ներկայությամբ կտտանքների էին ենթարկում հայ կալանավորներին, ծաղրուծանակի դատապարտում նրանց, արհամարհում, ծեծում, ձեռքերից խլում մի կտոր հացը, զրկում ջուր խմելու իրավունքից, երբեմն մերկացնելով՝ զավթում արժեք ներկայացնող նրանց հագուստները²:

Ապրիլի 28-ին գնացքը կանգնեցվում է Սեմճան-քեոյ կայարանում, ձերբակալվածներից իջեցնում են 75 հոգի և տանում Այաշ ոչնչացնելու³: Հուլիսի 7-ին Ուրֆա-Տիգրանակերտ ճանապարհին քարաջարդով սպանում են հայ մտավորականության մեկ այլ խմբի: Հերթականությամբ, իրենց՝ թուրքերին հարմար վայրերում, գաղտնապահությամբ սպանեցին մյուսներին:

Թուրք կառապանի հաղորդմամբ՝ պատմությանն են մնացել **Դանիել Վարուժանի** և **Ռուբեն Սևակի** դաշունահարման մանրամասները: 1915 թ. օգոստոսի 26-ին Չանկրից քիչ հեռու **Գայլալիճ** կոչվող ձորակ են բերվում երկու մեծ գրողները և նրանց հետ եղած երեք այլ կալանավորներ: Ոստիկանների հրամանով վրա են հասնում չորս զինված «չեթներ», մերկացնում Վարուժանին, նրա չորս ընկերներին, որպեսզի հագուստը չարյունոտվի և «չփչանա»: **«Չեն կրնար նկարագրել այն տեսարանը, որուն ներկա եղա, – հաղորդում է թուրք կառապանը: – Այս խեղճ զոհերը մեկիկ-մեկիկ ծառերուն կապվեցան: Իրենց ձեռքերը կապված ըլլալով չէին կրնար ինքզինքը պաշտպանել: Հետո չեթեպետը և իր մարդիկ իրենց դաշույնները մերկացուցին և սկսան դանդաղորեն և հանդարտ կերպով զանոնք մորթել: Դատապարտեալներու աղաղակը և անոնց հուսահատ կատաղությունը սիրտս կծմլեն** (ընդգծումները մերն են – Յ. Ղ.)»⁴:

1915 թ. ապրիլ-հուլիս ամիսներին Կ. Պոլսի սալահատակները ներկված էին հայոց անմեղ և թանկարժեք արյամբ, կախաղանների սյուները ճոճվում էին նրանց ծանրության տակ, բանտախցերը բերմբերան լիքն էին հայ բանտարկյալներով: **Նրանք դեպի մահ էին գնում հպարտությամբ, փոխվրեժի կոչը շուրթերին:** Հետևաբար, սխալվում են նաև հայրենի ու օտար այն հետազոտողները, որոնց կար-

ծիքով ժողովուրդն ու նրա քաջարի զավակներն առանց դիմագրավելու են թուրքական զոհասեղանին մոտեցել⁵:

Մեղադրական աթոռին էին նստած Մատթեոս Սարգսյանը (Փարամազ ծածկանունով, էջմիածնեցի), Թորոս (Պենե) Մանուկյանը, Գեղամ Վանիկյանը, Արամ Աշկըրաշյանը, Հովհաննես Եղիազարյանը, Երեմիա Մանուկյանը, Հրանտ Եկավյանը, Պողոս Պողոսյանը և այլք, թվով քսան երիտասարդներ⁶:

Նրանց մեղադրանք էր ներկայացվել օսմանյան Թուրքիայում ժողովրդին «ապստամբության» կոչելու, հայ և թուրք ժողովուրդների ազատագրման, անկախ, ազգային պետությունների ձևավորման ակնկալիքների համար: Սոցիալիստական գաղափարապաշտության այդ ջատագովները, իրոք, կայսերահպատակ, ճնշված բոլոր ժողովուրդների, այդ թվում և թուրք ժողովրդի ձեռքերին պրկած շղթաների խորտակման կոչեր էին արել:

Դատական քննությունը և բանտախցային տանջանքները տևել էին շուրջ տասը ամիս: 1915 թ. ապրիլի 27-ին, Արևմտյան Հայաստանում անկախ պետություն ստեղծելու, այսինքն՝ «Պետական դավաճանության» մեղադրանքով նրանց դատապարտեցին մահվան՝ կախաղանի միջոցով⁷: Մահվան սարսուռի տակ դատապարտյալներն ապրեցին մի քանի ամիս:

1915 թ. հուլիսի 15-ին Կ. Պոլսի սուլթան Բայազետի հրապարակում կողք կողքի շարված էին քսան կախաղանասյուներ: Օրը բնությամբ ու բովանդակությամբ մռայլ էր, երկինքը՝ թխպոտ: Ոստիկանության քառաշարք հսկողությամբ վերջապես հրապարակ բերվեցին մահապարտները:

«Քայլեցե՛ք, ընկերներ, գլուխներդ միշտ բարձր», – լսվում է մահապարտներից մեկի խրոխտ ծայրը: Դա Փարամազն էր, որը կախաղանասյունի առաջ ասաց. «Այնտեղ, ուր կախաղաններն են ձոճվում, ազատություն է ման գալիս»: Նրա վերջին խոսքն էր. «Դուք մեր մարմինը միայն կարող եք կախել, իսկ մեր գաղափարները՝ երբեք: Դուք վաղը պիտի տեսնեք Արևելքի հորիզոնի վրա ազատ և անկախ Հայաստան»: Նրա երազանքն իրականացավ, դժբախտաբար, առանց իրեն:

3. Հայ ժողովրդի ցեղասպանության պրոցեսը 1915-1918 թվականներին

Հայ ժողովուրդը ողջակիզվեց երիտթուրք-իթթիհատականների կառուցած բարբարոսական զոհասեղանի վրա: Այդ գողգոթայի երեսունամյա պրոցեսի պատմության ամենասև էջերը գրվեցին 1915 թվականի **ապրիլ-դեկտեմբեր ամիսներին**, սկզբնավորվելով Կ. Պոլսի հայ էլիտայի բռնագաղթով ու ոչնչաց-

¹ «Քսան կախաղաններ»-ի մասին ստեղծվել է ծավալուն գրականություն: Տե՛ս **Թեոդիկ (Լեպոհիճյան Թեոդոս Գրիգորի)**, Գողգոթա, հատ. առաջին (Ա մաս), Անթիլիաս, 1966, «Պոլսի կախաղանները» գլուխը, էջ 32-35: **Ա. Նազդաշյան**, Հայ մտավորականության ձերբակալությունը և Այաշի բանտը, Պէյրուս, 1969, էջ 108-114: **Չավեն արքեպիս.**, Պատրիարքական յուշերս, Գահիրե, 1947, էջ 94-96: **Պէյրուս**, 1969, էջ 108-114: **Չավեն արքեպիս.**, Պատրիարքական յուշերս, Գահիրե, 1947, էջ 94-96: **«1915-1965 Յուզամատեան Մեծ եղեռնի»**, Պէյրուս, 1965, էջ 376: **«Պատմություն Ս. Ղ. Հնչակյան կուսակցության»**, հատ. Ա, էջ 391: **«Հայկաշեն տարեգիրք»**, Կ Պոլիս, 1922: **Ա. Ն. Մնացականյան**, Հայ ժողովրդի ողբերգությունը, Երևան, 1965, էջ 46-48: **Մ. Վ. Արզումանյան**, նշված աշխատությունը, էջ 326:

² **Թեոդիկ**, նշված աշխատությունը, էջ 32:

³ «Արարատ» օրաթերթի (Բեյրուս) 1962 թ. հունիսի 17-ի համարում տպագրված է դատավճռի տեքստը:

¹ «Յուզամատեան Մեծ եղեռնի», էջ 39-40:

² **Մ. Արզումանյան**, նշված աշխատությունը, էջ 321: **Գրիգոր Պալաքեան**, Հայ Գողգոթան, հ. Ա, Վիեննա, 1921, էջ 78-82: «Յուզամատեան Մեծ եղեռնի», էջ 39-40:

³ Նույն տեղում:

⁴ «Յուզամատեան Մեծ եղեռնի», էջ 376: Տե՛ս նաև «Հայկաշեն, Տարեգիրք», Պոլիս, 1922:

երկար ու բարակ քննարկումների, ընթերցվեց հայերի կոտորածներին վերաբերող հրամանի ընդարձակ տեքստը, ստորագրվեց վերոհիշյալ եռյակի կողմից և ուղարկվեց բոլոր նահանգների նահանգապետերին:

1915 թ. ապրիլի 15-ի հրամանը այն փաստաթուղթն էր, որով հանձնարարվում էր հայ ժողովրդի տեղահանությունը, ապա զանգվածային ջարդերը երկրի և՛ եվրոպական, և՛ ասիական բոլոր վիլայեթներում: Հրամանագիրը փաստորեն զրպարտչական մի ամբաստանագիր էր, որի մեջ հայ ժողովրդին մեղադրանք էր ներկայացվում «թշնամական բանակներում» (Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա) կամավորական ջոկատներ ունենալու համար, քանզի, իբր թե այդ կամավորները մեծ վնաս էին պատճառում թուրքական զորամասերին: Պակաս կարևոր չէին համարում երկրի ներսում ապրող հայերի ձեռքին ունեցած «անհամար քանակությամբ զենք ու զինամթերքի առկայությունը»: Նրանք չէին նշում, որ այդ զենքն ու զինամթերքն արդեն խլել են հայերի իսկ զենք կրող արական սեռի երիտասարդ առողջ տղամարդկանցից, նրանց տեղահանել և ոչնչացրել էին աքսորի ճանապարհին:

Հրամանագրի հիմնական հատվածում արձանագրված էր. «Այսպիսով կառավարությունը և իթիհատի կենտրոնական կոմիտեն դիմում են ձեզ ու ձեր հայրենասիրությանը ու հրամայում են ձեր տրամադրության տակ եղած բոլոր ուժերով աջակցել «Միություն և առաջադիմություն» կուսակցության տեղական օրգաններին, որոնք ապրիլի 24-ին արևածագի հետ, գաղտնի հրահանգի համաձայն, կձեռնարկեն այս հրամանի կատարումը»:

Այդ հրամանագրով թուրքերին հաղորդվում էր. «...Մեր հայրենիքը, ազգը, պետությունը և կրոնը այդպիսի վտանգի հնարավորությունից պաշտպանելու համար կառավարությունը, որ ներկայացնում է իսլամն ու թուրք ժողովուրդը և «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, ինչ էլ որ լինի, նպատակ ունենալով կանխել որևէ մի տեղ և որևէ մի ձևով հայկական հարցի առաջացումը, օգտվելով անկախությունից, որ մեզ ընձեռել է պատերազմը, որոշեց վերջնականապես վերջ դնել այդ հարցին, հայերին քշել արաբական անապատները, բնաջնջելով այդ խորթ տարրը, համաձայն մեր արված գաղտնի հրահանգի»: **Նույն օրերին մեծ եպարքոս Սայիտ Հալիմ փաշան, ջանալով գերազանցել երիտթուրքական եռապետերին, իրար հետևից կոչեր էր հղում իսլամ խուժանին: Նրա կոչերից մեկն ավարտվում էր այսպես. «Սպանեցեք նրանց, ովքեր մեր Ալլահի կողքին թույլ են տալիս գոյություն ունենան ուրիշ աստվածներ, սպանեցեք ամենուրեք, որտեղ էլ նրանց գտնեք, բռնեցեք նրանց, կանգնեցրեք նրանց, փակեցեք նրանց բոլոր ճանապարհները, վերջապես սպանեցեք նրանց ամեն տեղ, ուր որ գտնեք»:**

Հայերի տարագրությունն ու ջարդերն իրականացնելու պահին ևս թալեաթը իրար հետևից ծածկագրված հեռագրեր էր ուղարկում «Հատուկ կազմակերպության» ղեկավարներին, քայլ առ քայլ հետևում, որ հանկարծ աքսորյալներից որևէ մեկը չազատվի՝ այն լինի կին թե տղամարդ, մեծահասակ թե փոքր երեխա: Նախարարն առանձնակի վախ ուներ փոքրահասակներից, որոնք մեծանալով կարող էին վրեժխնդիր լինել իրենց ծնողների համար: «...Իրենց հանցավոր ձեռքերի վրա հետքեր չթողնելու համար, - գրում է ջարդերի ակնաստես, գերմանացի գրող Արմին Վեգները, - գերեվարողները ժողովրդին իր առաջնորդներից ու պատգամավորներից զրկելուց հետո քշեցին քաղաքներից դուրս... կողոպտեցին նրանց տները, կրակի տվեցին գյուղերը, եկեղեցիները քարուքանդ արեցին կամ մզկիթների վերածեցին, հափշտակեցին անասունները, բռնագրավեցին բոլոր սայլերը, հացը խլեցին իրենց զոհերի բերանից, հանեցին նրանց հագի շորերը, նրանց գլխի ոսկեղեն գարդերը պոկեցին... նրանք քշեցին ամբողջ մի ժողովրդի՝ տղամարդկանց ու կանանց, ալեհեր ծերունիներին ու մանուկներին, հղի կանանց ու ծնկեր երեխաներին դեպի

արաբական անապատները՝ չունենալով այլ նպատակ, քան թողնել նրանց սովից տանջամահ լինելու...»: Երբ նրանք «երկար» էին դիմադրում մահվանը, թուրք դահիճները տեղն ու տեղը սպանում էին նրանց:

«Հայերին խնայելով հեռացնում էին ու սպանում ամենադաժան եղանակով: Չէին խնայում ո՛չ հիվանդներին, ո՛չ մանուկներին, ո՛չ էլ տարեց մարդկանց», - վկայում է թուրք պաշտոնյա, աքսորյալ հայերի՝ Հալեայի կոմիտեի գլխավոր քարտուղար Նայիմ բեյը: «Նրանցից ոչ ոքի կենդանի չթողնեք, առանձնապես 5-7 տարեկանից բարձր երեխաներին, հակառակ դեպքում նրանք կարճ ժամանակում հասակ կառնեն և կփորձեն վրեժ լուծել», - ազդարարում էր իր ժամանակի ամենամեծ մարդասպան թալեաթ փաշայի հրամանը: Արդար վրեժի հանդեպ տածած վախն էր արյունախում այդ զագանին թելադրում «չխնայել անգամ օրորոցի երեխաներին», և նա գիշատիչ աչքերով հսկում էր, որ հրաշքով փրկված երեխաներն անգամ չվրիպեն մահվան ճիրաններից:

Որպեսզի ընթերցողը մեկ անգամ ևս պատկերացնի, թե ինչ նյութից էր ձևավորված թալեաթը՝ հայակեր այդ հրեշը, բերենք ծածկագրով ուղարկված նրա հեռագիր կարգադրություններից երեքը.

1. «Հալեայի նահանգապետին.

Շարունակելով որբերի աքսորը նախատեսված ուղղությամբ, դաժան սառնամանիքի պայմաններում, մենք նրանց հավերժական հանգիստը կապահովենք: Հետևաբար, խնդրում ենք հաշվետվություն ներկայացնել մեզ կատարվածի մասին:

Ներքին գործերի մինիստր թալեաթ»:

2. «Հալեայի նահանգապետին.

21 սեպտեմբերի 1915 թ. - Որբանոցի ոչ մի անհրաժեշտություն չկա: Ժամանակը չէ սենտիմենտալությանը անձնատուր լինելու և կերակրելու որբերին՝ երկարածելով նրանց կյանքը: Քշե՛ք բոլորին անապատ և տեղեկացրեք մեզ այդ մասին: **Թալեաթ»:**

3. «Հալեայի նահանգապետին.

Հավաքեք մի տեղում հայերի այն երեխաներին, որոնք պատերազմական նախարարության հրամանով հանձնված են զինվորական իշխանությունների խնամքին: Հեռացրեք նրանց այն պատրվակով, որ նրանց մասին հոգալու է տեղահանման կոմիտեն: Ոչնչացրեք նրանց և զեկուցեք: Ներքին գործերի մինիստր **Թալեաթ»:**

Այսպիսով, իթիհատականները 1915 թվականի մարտ-ապրիլ ամիսներին, նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո, սկսեցին Մեծ եղեռնը, սկզբում Ստամբուլում (այդ մասին մենք խոսել ենք վերևում, մամրամասնաբար), սկզբում Ստամբուլում (այդ մասին մենք խոսել ենք վերևում, մամրամասնաբար), սկզբում Ստամբուլում (այդ մասին մենք խոսել ենք վերևում, մամրամասնաբար), ապա ամբողջ օսմանյան կայսրությունով մեկ: Արևմտահայության զանգվածային բռնագաղթեցման, ապա հրեշավոր մեթոդներով ոչնչացման հանձնարարականով իթիհատականների կենտրոնական կոմիտեն առանձնացրեց գործը գլխավորող մի իթիհատականների կենտրոնական կոմիտեն առանձնացրեց գործը գլխավորող մի իթիհատ Շյուքրին: Ըմբռնելով խնդրի տարողունակությունն ու բարդությամբը՝ նրանք Արևմտյան Հայաստանը և հայաբնակ վիլայեթները (ինչպես նշեցինք վերևում) բաժանեցին երեք գոտիների, սահմանեցին կոտորածի ժամկետները, հաստատեցին յուրաքանչյուր գոտու ղեկավարին:

Ձանգվածային ջարդերի ազգասպան գործողությունները սկսվեցին Վասպուրականից, հատկապես Վանի վիլայեթից, որտեղ հայ բնակչությունն ապրում էր կոմպակտ ձևով, խիտ էր բնակեցված, սահմանակից էր Արևելյան Հայաստանին և թուրքերին դաս էր տվել դեռևս XIX դարի 90-ականներին:

Համաշխարհային պատմության մեջ իրադարձություններ կան, որոնք երբեք անցյալ դառնալ կամ, առավել ևս, մոռացվել չեն կարող, քանզի նրանցից յուրա-

բուրդը պիտի ընկնեին գնդակահար ու սրախողխող, իսկ կանայք, օրիորդները և փոքրիկ տղաներն ու աղջիկները պիտի բաժանվեին մահմեդականների վրա. յուրաքանչյուր հավատացյալ կարող էր անարգել գերել, առևանգել իր ուզած հայ կինը, օրիորդը և երեխան: Հայերի բնաջնջման այս ահավոր ծրագիրը թելադրված էր Պոլսից, բայց Պոլսին էլ թելադրել էին Ջևհեթը և Վանում գործող իթթիհատական կուսակցության պատկանող անդամները»: Ա-ԴՅԸ, շրջելով գյուղ առ գյուղ, տեսնելով սարսափազդու տեսարաններ, լեռնակուտակ փաստեր է հրապարակում Վասպուրականի հայության ապրած ողբերգության վերաբերյալ: Սակայն ամենասահմանակեցուցիչն այդ փաստերից արած նրա ընդհանրացումն է: Նա գրում է. «Նախորդ գլխում (խոսքը նրա աշխատության մասին է) մենք տեսանք ահավոր ջարդեր, որոնք ընթանում էին մի անօրինակ, անդիմադրելի թափով, և որոնց դեմ բողոքի հուժկու ձայն չէր լսվում, ըմբոստացած ոգու մարտնչում չէր երևում: Մարդիկ տասնյակներով, հարյուրներով ու հազարներով զոհ էին գնում նենգամիտ խաբեությունների. մեկեն իրենց զգում էին շղթայի գարկված, կապանքների տակ և լուռ ու անխոս առաջնորդվում էին սպանդանոցներ ու այնտեղ մորթոտվում, ինչպես մսացու կենդանիներ՝ մսագործի դանակի տակ: Մարդկանց այսօրինակ մորթոտվելը զարհուրելի կլիներ, եթե ամեն տեղ պատկերը նույնը լիներ, եթե ամենքն ընկնեին լուռ հնազանդությամբ»:

Հայ ժողովուրդը՝ այդ թե կին, երիտասարդ թե տարիքավոր, մահվանը կյանքով էին պատասխանում: Ջարմանահրաշ էր վասպուրականցի հայ կինը: Խիզախ ու աներեր, մահվանը բաց աչքերով նայելով և տղամարդուն համահավասար, նա գնում էր դեպի ողջակիզումը, կախաղանը, ամենաբնորոշը՝ վրեժխնդրության ցասումը: Կ. Պոլսի պատրիարքն այդ մասին գրում է. «Ոստիկան զինուոր մը որ Հալեպէն Մուսուլ հայ տարագրեալներու կարաւանի մը ընկերացած էր, պատմած է թէ սիրուն աղջկան մը առաջարկած է իրեն կին ըլլալ եւ ազատիլ իր ենթարկուած տառապանքէն եւ մահէն: Աղջիկը պատասխանած է թէ «եթէ ձեր մարգարէն է որ հրամայած է ձեզի այդպէս անմարդկային կերպով վերաբերուիլ մեզի հետ, այդպիսի մարգարէ մը պաշտողին կին չեմ ըլլար, իսկ եթէ անիկա չէ հրամայած այս բանը եւ դուք այսպէս կը վարուիք, ես այսպիսի անկրօն եւ անաստուած մարդու կին չեմ ըլլար, հոգ չէ թէ մեռնիմ»: Տգէտ ոստիկան զինուորը այս պատմութիւնը պատմած է Մուսուլի մէջ, անվերապահ իր հիացումը յայտնելով Հայուն տոկուն նկարագիրին եւ աննկուն ու անընկճելի կորովին ու մանաւանդ հաւատքին ջերմութեան վրայ: **Նոյնքան հոյակապ էր խօսքը հայ կնոջ մը որ շոգեկառքին մէջ իրեն ընկերացող թուրք ճամբորդի մը ըսած է թէ «կոտորեցիք եւ տակավին կը կոտորէք մեր այրերը, բայց գիտցէք, որ եթէ մէկ հատ իսկ այր մարդ չմնայ մեր ազգին մէջ, մենք կ'ինքնս ձեզմէ զաւակ պիտի ունենանք եւ զանոնք պիտի մեծցնենք ու կրթենք իբր Հայ, մեր վրէժը ձեր ազգէն լուծելու համար»:**

Մենք, համենայնդեպս, մեծաքանակ ժողովուրդ չենք և հայոց լեզուն էլ մատչելի չէ աշխարհում բոլորին: Այս դեպքերը եթե կատարված լինեին Արևմուտքի մեծ տերություններում և եվրոպական որևէ լեզվով հրատարակվեին, ապա կոթառնային համաշխարհային գրականության հսկաների ուշադրության առարկա և կցնցեին հանուր մարդկությանը:

1915 թ. փետրվար-մարտ ամիսներին թուրքական զորքերը, ավարածարավ թուրք ամբոխն ու քրդական հրոսակները բառիս իսկական իմաստով հոշոտեցին հայ բնակչությանը Վասպուրականի գավառներում: Հրաշքով փրկված հայկական բեկորները մի կերպ տեղափոխվեցին Վան-Այգեստան և իրենց բախտը կապեցին քաղաքի բնակչության ճակատագրի հետ: Շուրջ 50 հազար հայ բնակչություն «հավաքած» քաղաքն ինքնապաշտպանության դրոշ պարզեց և նախապատրաստվեց դիմադրության: Ինքնապաշտպանության գործը գլխավորելու համար հայ քաղաքա-

կան-հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից ստեղծվեց «Զինվորական շտաբ»՝ գերագույն մարմին, որը ստանձնել էր ժողովրդի պաշտպանության ղեկավարությունը: **Նրա գլուխ կանգնած էր Արմենակ Եկարյանը, որն ինքնապաշտպանության օրերին աչքի ընկավ իր հնարամտությամբ ու արիությամբ, կազմակերպչական ու ռազմական տաղանդով: Մարմնի մյուս անդամներն էին Արամ Մանուկյանը, բուլղարացի Գրիգորը (դաշնակցականներ), Հրանտ Գալիկյանը, ականավոր նկարիչ Փանոս Թերլեմեզյանը և ուրիշներ: Զինվորական մարմնին ենթակա ստեղծվել էին օժանդակ մարմիններ՝ հայթայթիչ, պարենավորման, տեղեկատու, Կարմիր խաչի և այլն, որոնք հատկապես կարգավորում էին շրջակա գյուղերից քաղաք թափված բնակչության ամենատարբեր պետքերը:**

Ինքնապաշտպանական գործողությունները ծավալվեցին հիմնականում Այգեստանում, որը, շրջապատված լինելով կառավարական զորքերի կողմից, կտրված էր քաղաքի կենտրոնից: Այգեստանի պաշտպանության շտաբը կազմակերպեց հրաձգային գունդեր, ոստիկանական ջոկատ՝ թաղամասի ներսում կարգ ու կանոնին հետևելու համար, վիրակապության կայան և հիվանդանոց: Քաղաքի պաշտպանների մեջ իշխում էր խստագույն կարգապահություն և կազմակերպվածություն: Կատաղի կռիվների ժամանակ մարտիկներին ոգևորելու համար դպրոցականներից կազմված «Ֆանֆառ» փողային նվագախումբը «Մարսեյեզ» և հայկական ժողովրդական երգեր էր նվագում: Վանի բոլոր բնակիչները համակված էին մի գաղափարով՝ լավ է մեռնել, քան թե անձնատուր լինել թուրք դահիճներին: Նրանք, ովքեր զենք ունեին, գնում էին կռվելու թշնամու դեմ, իսկ մնացածները ամրություններ էին կառուցում: Մարտերին մասնակցում էին աղջիկներ, անչափահաս պատանիներ: Կանայք խնամում էին հիվանդներին ու վիրավորներին, պահում երեխաներին և մարտիկների համար հագուստ պատրաստում:

Չնայած քաղաքի համարյա չդադարող հրետանային գնդակոծմանը (Վանի վրա արձակվեց մոտ 16 հազար արկ), թուրքերին չհաջողվեց ընկճել նրա պաշտպանների մարտական ոգին: Թուրքական հրետանու կողմից քանդված ամրությունները գիշերները վերստին վերականգնվում էին: Ռազմական գործողությունները կատաղի գիշերները վերստին վերականգնվում էին: Ռազմական գործողությունները կատաղի բնույթ ընդունեցին: Դիրքերը հաճախ ձեռքից ձեռք էին անցնում: Թուրքերին այդպես բնույթ ընդունեցին: Դիրքերը հաճախ ձեռքից ձեռք էին անցնում: Թուրքերին այդպես էլ չհաջողվեց կտրել հայերի դիմադրությունը: Վանի պաշտպանությունը տևեց 27 օր: Փանոս Թերլեմեզյանը, բնութագրելով Վանի հերոսամարտը, նշում էր, որ այն «բացարձակապես ժողովրդական պատերազմ է, և որը այս ու այն կուսակցության և անհատներու վերագրելը հիմնովին թյուրիմացություն մ'է»:

Մայիսի 16-ին թուրքերը լուր առնելով, որ մոտենում են ռուսական զորամասերն ու հայ կամավորները, վերջին անգամ գնդակոծեցին քաղաքն ու հեռացան: Հաջորդ օրը երեք հայ կամավորական ջոկատները՝ Վարդանի հրամանատարությամբ, մտան Վան: Մայիսի 19-ին Վան մտավ նաև ռուսական բանակը՝ գեներալ Նիկոլայի հրամանատարությամբ: Ժողովրդի ցնծությանը չափ ու սահման չկար: Վանը թուրքական արյունոտ տիրապետությունից ազատ մնաց հազիվ 80 օր, մինչև 1915 թվականի հուլիսի 18-ը: Քաղաքում կարգ ու կանոն հաստատվեց, առաջին քայլերն արվեցին քանդված շինությունները վերականգնելու, որբերին խնամելու, համաճարակի դեմ պայքարելու և ընդհանրապես Բորմալ կյանք հաստատելու ուղղությամբ:

Ռուսական բանակի նահանջի ժամանակ նրանց ետևն ընկած նահանջեց նաև Վասպուրականի բազմահազար հայությունը: Նա փրկվեց թուրքական սրից, բայց շատերը զոհ գնացին սովին և հիվանդություններին: Համենայնդեպս, Վասպուրականը գրեց իր հերոսապատումը:

Մեծն Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ում քարտեզագրված պատ-

մական Հայաստանի տասնհինգ նահանգներից մեկն էր Բարձր Հայքը՝ Կարին կենտրոնով, որը Հայոց հազարամյակների պատմության մեջ կերտեց իրենը, հնքնուրույնը և կենտրոնականը: Կարին-երզրումն իր դերը չկորցրեց օսմանյան կայսրության կեսհազարամյա տիրակալության ժամանակաշրջանում ևս: Առավել, այն իր դերը կարևորեց ռուս-թուրքական վերջին պատերազմների ժամանակ, երբ ռուսական զորքերն ամեն անգամ ազատագրում էին նահանգն ու քաղաքը, հայ համայնքին հույս ներշնչում թուրքական բռնապետությունից ազատագրվելու, իսկ վերջում դիվանագիտական ներքին հաշիվների ու խարդավանքների պատճառով վերադարձվում սուլթանների:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին ԿԱՐԻՆ ՎԻՂՅԵՔՆ ՈւՆԵՐ 645.700 բնակիչ, որոնցից 227 հազարը քրիստոնյաներ էին: Վիլայեթը համահավաքում էր 235.000 հայ, 12.000 հույն բնակիչներ: Իսլամ բնակչությունից թուրք ու թուրքմեն էին 240 700-ը, 120.000-ը՝ քրդեր (այդ թվում 45.000-ը՝ նստակյաց, 30.000-ը՝ չազա, 45.000-ը՝ վաչկատուն), 25.000-ը՝ ղալբաշ, 7.000-ը՝ չերքեզ, 3.000-ը՝ եգիպտացի: Կարին, Բաբերդ, Խնուս, Դերջան քաղաքների մեջ հայերը կազմում էին ընդհանուր բնակչության մեկ երրորդից մինչև կեսը: Հայերի մարդաշատությունից երկնչելով՝ թուրք կառավարությունը, տվյալ պահին իթթիհատականները, դեռևս դիմակավորված, հայ քաղաքական ուժերի, հատկապես դաշնակցական կուսակցության հետ սիրախաղերը շարունակում էին՝ «եղբայրացման» պրոցեսը ձգելով մինչև հարմար պահը: Եվ այդ պահը չուշացավ:

Կարինը, գտնվելով երկու տերությունների սահմանագծում, դարձավ թուրքական զինվորականության նստատեղի, որոնց ուղեկցում էին «Հատուկ կազմակերպության» հայակուլ ունակները և սկսում իրենց ազգասպան գործողությունները: Կարինի վիլայեթում, ականատեսի վկայությամբ, «նվազագույն պատճառաբանությամբ և հաճախ առանց անոր, ձերբակալվեցան հայեր: Մեծ ու պզտիկ ենթարկվեցան ծեծի և խոշտանգումի, կողոպուտի և բռնաբարումի, սպանության և կախաղանի, և տակավին թուրքերը որոնեցին զենք, ուզեցին զենք, պահանջեցին զենք ու երբ չգտան զայն ու երբ անիկա չտրվեցավ իրենց՝ վերստին ծեծեցին ու խոշտանգեցին, կողոպտեցին ու բռնաբարեցին, սպանեցին ու կախաղան բարձրացուցին: Ոճիրի, քանդումի և կողոպուտի արշավ մըն էր, որ սկսավ. մնաց ո՛չ ինչքի և պատվի և ո՛չ ալ կյանքի ապահովություն»:

Կարին քաղաքի և ընդհանրապես վիլայեթի հայ բնակչության բռնազաղթի հրամանն արձակվել էր 1915 թ. մայիսի 5-ին: Սակայն նախքան այդ, նույն թվի հունվարի վերջերին, սրանցից բռնագրավել էին ունեցած ու «չունեցած» զենքերը, իսկ ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը ձերբակալվել էին չորս հարյուր մտավորականներ, հատկապես ականավոր դեմքեր: Սրանց մեջ էին «Հառաջ» թերթի խմբագիր Արամ Ատրուսին, Ստեփան Ստեփանյանը (Մառալ), Գրանտ Քեոսեյանը, Լևոն Պալասանյանը, Փիլոս Փափաքյանը: Բանտարկության հաջորդ օրը բանտարկյալներին տեղափոխում են Երզնկա, ուր և գնդակահարում են: Մնացածներին բանտում մարմնական և հոգեկան ծանր տանջանքների ենթարկելով, ամեն մեկին փայտի քառասուն հարված հասցնելով, ևս տանջամահ են անում:

Կարին քաղաքում գնալով մթնոլորտը շիկանում էր: Ցեղասպանությանը կոչող թուրքերի ելույթները վերածվում են բազմամարդ հանրահավաքների և հրապարակային ձևով որոշումներ ընդունում ժողովրդի կոտորման վերաբերյալ: Այդ զավեշտական, անմարդկային միտինգներից մեկի մասնակից մի թուրք թողել է ներքոհիշյալ վկայությունը. «1915 թ. մայիսի մեջ մուսուլմանները ընդհանուր միտինգի հրավիրեց բոլոր թուրքերուն քաղաքն դուրս փաշա Քիոշքի ըսած տեղը: Հավաքվեցան 10 հազարե ավելի թուրքեր. հայ երեք չթողացին այնտեղ: Վալին՝ Թահսին փաշան, սկ-

սավ խոսել. ըսավ, ցավոք սրտի ձեզ հայտնեմ, որ հայերը մեր ձեռքեն վանը խլեցին և հանձնեցին մեր թշնամուն՝ Մոսկովին: Հայերը մեծ վտանգ են մեր կառավարության, ուստի որտեղ հայ կա, հոն վտանգ կա վանա տխուր իրականության կրկնումն: Ձեզ հարցնեմ. ի՞նչ ընթացք պետք է բռնենք դեպի հայերը: Բոլոր ժողովուրդը պոռացին՝ կոտորենք, ոչնչացնենք գյավուրներուն: Խոսեցավ Սեյֆուլլան... Բոլոր ժողովը միաբերան գոռացին՝ սպանենք, ոչնչացնենք հային, գյավուրներուն: Հետո խոսած է Մեֆերը, առաջարկելով բոլոր հայերուն կոտորել անխնա, մեծ, պզտիկ և ազատել երկիրը անոնցմե. ըսավ, մենք 1895-1896-ին խնայեցինք երեխաներին, բայց որքան սխալվեցանք, մեր խնայած այդ երեխաներն այսօր մեծացած իբր կամավոր մեզ դեմ կապար կնետեն, մեզ կկոտորեն, վանը կառնեն մեր ձեռքեն և վտանգ կա, որ մյուս քաղաքներս ալ խլեն մեր ձեռքեն: Միտինգը միաձայն կվճռե անխնա կոտորել բոլոր հայերուն: Սակայն դոկտոր Նազըմը կառաջարկե քաղաքներու, զեղերու մեջ արյուն չթափել, որովհետև կսե կհոտին դիակները և հիվանդություններ առաջ կուգան, լավ է քշել հեռու ամայի վայրեր և անդ կոտորել ու ջուրը ձգել: Այսպես ալ կորոշվի և բանաձևը ստիպողական հեռագրով կօժանուցի Պոլիս»:

Նախքան քաղաքի բնակչության բռնազաղթումը, իթթիհատականները որոշեցին նախ հաշվեհարդար տեսնել նահանգի գյուղացիության հետ: Սեպուհ Ակունի վկայությամբ 1915 թ. հունիս 6-ին. «Տեղահան կըլլան Կարնո հարյուր գիւղերու Հայութիւնը երկու ժամուան մեջ և քիչեր միան Երզնկա կը հասնին, որովետև կոտորածը կը սկսի ճամբան: Մաս մը Հայեր կ'ապաստանին Գրզըլպաշներու մօտ: Տեղական կառավարութիւնը քիւրտ ազդեցիկ պէկերու թելադրութեան վրայ կ'ուզէ պատժել քիւրտ մը հայ ջարդած ըլլալուն համար, սակայն նոյն ճիւղը ազատ կը մնայ որևէ հետապնդութենէ, ցուցնելով թուրք մը որուն վրայ գրուած էր իր առած իրամանը՝ հայ ջարդելու մասին»: Գաղթի ու ջարդի պրոցեսն ավելի ողբերգական կերպարանք ստացավ վիլայեթի Խնուս քաղաքի ու նրա կազայի մեջ մտնող հայկական 38 գյուղերի նկատմամբ: Ձեյմս Բրայսը վկայում է, որ 1915 թ. մայիսի 16-ին, երբ վանը ազատագրվեց, դրանից թուրքերն ավելի զազազեցին և նույն օրը սկսեցին Խնուսի կոտորածները: Այա շարունակում. «Խնուսի դաշտին մեջ կգտնվեին զուտ և խառն հայաբնակ 38 գյուղեր, որոնք Խնուս բերդին հետ ունեին ավելի քան 20 հազար հայ ազգաբնակչություն: Բոլոր այրերը սուրի անցուցվեցան, որոնցմե 400-500 հոգի ռուսական հողը ապաստան գտան: Երբ ռուսները հաղթականորեն Խնուս մտան, հոն գտան 3000-ի չափ վերապրող կիներ և մանուկներ, որոնք բնականաբար Կովկաս անցան՝ երբ ռուսները պարտավորվեցան ետ նահանջել»: Խնուսը հիմնովին դատարկվեց, հետևաբար և հայազրկվեց:

Գնալով օղակը նեղանում էր: Երզրումի վիլայեթի մեջ մտնող գավառների հետ հաշվեհարդար տեսնելուց հետո իթթիհատականները վերջապես որոշեցին սկսել ջարդը քաղաքում, ուր նստած էին եվրոպական մի շարք երկրների հյուպատոսներ և ջարդը քաղաքում, ուր նստած էին եվրոպական մի շարք երկրների հյուպատոսներ և փոխհյուպատոսներ, կային արևմտյան միսիոներներ, գթության քույրեր: Թուրք-գերմանական ունակն այդ ամենն արհամարհում էր և նախապատրաստվում էր մարդամորթության զազանային պրոցեսին՝ բուն Կարին քաղաքում:

Կարինի ջարդարարներն իրենց «ծանր բեռը» թեթևացնելու նպատակով նախ կազմակերպեցին **Երզնկայի ջարդը**: 1915 թ. մայիսի 25-ից 26-ը Երզնկայում կուտակված 25 հազար հայերին դուրս բերեցին քաղաքից և միացնելով Կամախի գաղթականությանը, այնտեղ կազմակերպեցին ահավոր ջարդ, որը տևեց չորս օր:

Վիճակն օր առ օր ծանրանում էր և դառնում անտանելի: Արդեն քաղաք էին տեղափոխվում ռազմաճակատից բերված առաջին վիրավորները: Ասում են՝ տկլոր մարմնի վրա կատու են թողնում: Ահագնացող սովին զումարվում էր ժանտախտի համաճարակը, որը երեկվա ծաղկուն քաղաքը վերածել էր գորշ ու հսկա մի մեռելա-

տան: «Մահն իր մանգաղը սրած ման եկավ փողոցներու մեջ և կոտորեց անխնա: Չազարավոր գինվորներ մեռան մայթերու վրա, ուրիշներ՝ փողոցներուն մեջ մնացին սառած: Տուներ գտնվեցան, որոնց դռները այլևս չբացվեցան արևի ծագին: Մահն ու ցուրտը թևանցուկ քալեցին փողոցե փողոց, տունե տուն, սեմե սեմ և Կարինն ու շրջակայքը վերածեցին մեծ լուռության մը»: Դա 1914 թ. ծնեռն էր:

1915 թ. մայիսին Կարին ժամանեց հայասպան Բեհաեդդին Շաքիրը, որին ուղեկցում էին գերմանացի մի խումբ էմիսարներ՝ հանձնարարություն ունենալով բուն քաղաքի հայության տեղահանումն ու բռնազաղթեցումը: Այդ անտանելի պրոցեսի մասին փաստերն առատ են, սակայն բավարարվեց **պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի** բերած մի վավերագրի կրճատ ներկայացմամբ, որը վերնագրված է **«Յուշեր էրզրումի գավառի հայ ժողովրդի կրած արհավիրքների, գաղթի և բնաջնջման մասին»**: «Կարնո գյուղերի քարավանը քալեց դեպի Մամախաթուն երեք մեծ խմբերով: Առաջինը՝ բաղկացած Դարարգ, Օձնի, Չիֆթլիկ, Կեզ և Արծաթի գյուղերի բնակչությունից, երկրորդը՝ Կան, Իլիճե, Չիթոզ, Մուտուրկան, Յինձք, Դվնիկ և ուրիշ գյուղերից հասան Մամախաթուն, երբ դեռ ճանապարհ չէր ելած երրորդ խումբը: Առաջին խումբը առանց ընդհանուր ջարդի հասավ Երզնկա, երկրորդ խումբը՝ Մամախաթունից սկսավ ջարդվել, թափթփուկվեցին միայն հասավ առաջին խմբին, որը նստած էր Երզնկայի հարավային կողմը Եփրատի ափին: Երրորդը՝ բաղկացած Ումոսդումի, Պատալիմի, Թարգուննիի, Ուզդաձորի, Երկանիստի, Նորաշենի և ուրիշ գյուղերի ժողովուրդից, հասան Մամախաթուն, անկե առաջնորդվելով տեղույն գայմագամի և չեթեներե կողմանե հասան մինչև Խաուխըն և Փիրիզի մոտերը գրեթե բոլորը ջարդվեցին, որոնցմե փախստական ազատվածներն ընկան Կարին և լեցվելով առաջնորդարան պատմեցին իրենց գլխին եկած փորձանքը: Չմոռանամ ըսել, որ երբ գյուղերը սկսան քանդվել, կառավարությունը քաղաքի համար հայտարարեց, որ Կարինը պիտի մնա ու չքանդվի, գյուղերը քանդվեցին, որովհետև հոն ապրող հայերը մեղավորներ ու հանցավորներ էին: Ահա այսպես, մի կողմանե քաղաքացիք խաբելով, մյուս կողմե գյուղացիները մաքրագործելով հասավ մայիսի 15-ը...

Քաղաքը սկսավ տակն ու վրա ըլալ. գաղթումի և զուլումի կասկածը սուր կերպով անցավ բոլորի սրտից և գալարեց աղիքները... Կուսակալը նախ ուրացավ գյուղացիների կոտորվելը և ստեց անոնց գլխին պայթած փորձանքը և երդվեցավ կրոնին վրա, որ քաղաքի հայության մեկ մասը միայն պիտի հեռանա, այն էլ մինչև Խարբերդ. կառավարության կողմանե պիտի տրվի ամեն կարգի ապահովությանց միջոցներ...»: Կատարվեց հակառակը: Դաժանություններին չափ չկար: Միայն թուրքերը կարող էին կրակի վրա երեխաների խորովել, ծնողների ձեռքով հարազատ երեխաներին մորթել տալ ու նրան արյունը խմեցնել: Այսպիսի փաստերը հարյուրավոր են: Չնարավոր չէ դրանք նկարագրել կամ այդ մասին տարբեր աղբյուրների հավաստի լինելն ապացուցել: Սակայն մի բան պարզ է, որ այդ մասին են պատմում հազարավոր սովորական, աշխատանքի մարդիկ, որոնք կորցրել են իրենց զավակներին ու հարազատներին, անցել թուրքական դժոխքի միջով:

Այդպիսով, Կարինը դատարկվեց հայերից: Այնտեղ մնացին մոտ 20 հայ արհեստավորներ (թուրքերին արհեստ սովորեցնելու և ընդհանրապես նրանց ծառայելու համար), 50 որմնադիրներ և 18 հայ աղջիկներ, որոնք ապաստան էին գտել օտարերկրացիների մոտ: Սակայն դրանց կյանքն էլ երկար չտևեց: Չայոց որմնադիրներին ստիպեցին հայոց գերեզմանաքարերով իթթիհատական ակունք կառուցել, որից հետո տարան Երզնկա ու գնդակահարեցին: Նույնպես վարվեցին հայ արհեստավորների հետ: Մնում էին պատսպարված հայուհիները. թուրքերը որոշեցին իրդեհել Ստեպլտոնի տունը և տիրել հայ աղջիկներին: Բայց այդ ժամանակ ռուսական բանակը մոտենում էր Կարինին, և Թահսին բեյը խնդրեց Ստեպլտոնին, որ իշխանու-

թյունների հեռանալուց հետո ներկայանա ռուսական բանակի հրամանատարությանն ու հայտնի, որպեսզի նրանք խնայեն Կարինի թուրք ազգաբնակչությանը, որն իրը մեղք չունի հայերի տեղահանության մեջ: Ստեպլտոնը կատարեց այդ խնդրանքը, երբ ռուսական բանակը 1916 թվականի փետրվարի 16-ին մտավ Կարին: Ռուսական բանակի հետ եկած հայ կամավորները շրջեցին քաղաքը, բայց հայեր չգտան, բացի թուրքական տներում եղած 4 աղջիկներից, որոնք Ստեպլտոնի պատսպարած հայուհիների հետ միասին կազմում էին Կարինի ողջ հայ բնակչությունը (22 հոգի):

Կարինի հայկական մշակութային հիմնարկներն այրված էին, իսկ հայերի տներում տեղավորված էին թուրքեր. «Այո՛, փոխված էր քաղաքը և անոր հետ նաև ամբողջ գավառը: 1914-ին երկու հարյուր տասնհինգ հազար հայ ազգաբնակչություն հաշվող Կարինը և շրջակայքը հեղակարծորեն առեր էին սև քղամիդը թրջության: Ըրված, ավերակույտի վերածված տեսք մըն էր ամբողջ նահանգի ունեցածը, որուն հիմա կարոտով կնայեր ռուսական սահմանեն Կովկաս անցած յուրաքանչյուր կարնեցի, քղեցի, բաբերդցի կամ երզնկացի: Անոնք, որոնք կարող էին հասնել Միջագետքի և Սիրիո անապատները, ցավով կհուսալին այն օրը, երբ պիտի արդարություն ըլլար կոտորակված, բզկտված, խորտակված հայության»: Կարինի հայության բնաջնջումը երիտթուրքերը դիտում էին որպես իրենց «սխրագործություն»: Դրա ակտիվ մասնակից խալիլ բեյը Բաղդադում՝ իթթիհատական ակունքում մեծագույն իրձվանքով ասաց. «Չայաստանի սիրտը խլեցի, հանեցի, կարգը եկավ արաբականին: Ով որ օսմանյան մահիկին տակ գլուխ չի ծռեր՝ Չայաստանի վիճակին կենթարկվի»:

Բիթլիսի վիլայեթը փռված էր պատմական Չայաստանի Տուրուբերան նահանգի ընդարձակ տարածքի վրա: Այն, իբրև վարչական առանձին միավոր, ձևավորվել էր Բեռլինի վեհաժողովից, հատկապես 1882 թ. վարչական բաժանումներից հետո: Վիլայեթն ընդգրկում էր Սասունը, Սալմո ձորը, Չարքը, Ապահունիքը, Չաշտեանքը, Մուշն ու Մշո դաշտը, Խնուսը, Մանազկերտը՝ կենտրոն ունենալով գեղեցիկ ու առևտրաշատ Բիթլիս (Բաղեշ) քաղաքը: Մյուսների համեմատ նահանգն ուներ չափազանց բարդ կառուցվածք՝ թե՛ աշխարհագրական դիրքով և թե՛ բնակչության ազգային կազմով:

Բիթլիսի վիլայեթի անառիկ բերդ-ամրոցն էր համարվում **Սասունը**՝ իր աշխարհագրական դիրքով, 60-70 կիլոմետր լայնությամբ և 100 կիլոմետր երկարությամբ: «Սասունն ինքնին համագումար մըն է սեպ ու ցցված գազաթներու, որոնց ծանոթները կկոչեն Անտոք, Գերին և Տարկոշ»: Ռազմաստրատեգիական հարմարավետ դիրքը, թերևս, եսկան նշանակություն է ունեցել լեռնահամայնքների համար, որ լինեին ըմբոստ, պաշտպանեին իրենց կիսանկախ, երբեմն էլ անկախ կացությունը:

Չայոց պատմության բոլոր դարաշրջաններում, ամպերի մեջ մխրձվող, երկնաքերծերի տեսք ունեցող այդ պարսպապատերի ու լեռնամրոցների օդակումն էր ապրում մի լեռնահամայնք, որն ըմբոստ էր իր հայրենի լեռների պես, հպարտ էր նրա գազաթների բարձրության չափ, կարծր էր նրա ժայռերի ամրության նման: Նա, հիմնավորվելով այդ լեռնակղզում, ընտրել էր ոչ շատ հարուստ ապրելու կյանք ու կենցաղ, սակայն գերադասել էր ազատությունը՝ բոլոր ժամանակների և բոլոր տիրակալների գահակալության հարյուրամյակներում:

Աշխարհամարտի առաջին ամիսների հաշվեհամարով Բիթլիսի նահանգն ուներ 398 հազար բնակիչ, որից 195 հազարը քրիստոնյա էին, այսինքն՝ 180 հազար հայ և 398 հազար ասորի: Մնացած 200 հազարից 40 հազարը թուրք էին, 45.000-ը՝ նստակ-15 հազար ասորի: Մնացած 200 հազարից 40 հազարը թուրք էին, 45.000-ը՝ չերքեզ, յաջ քուրդ, 47.000-ը՝ վաչկատուն քուրդ, 47.000-ը՝ գազա քուրդ, 10.000-ը՝ չերքեզ, 8.000-ը՝ ղալբաշ, 5.000-ը՝ եզիդի: **Չայերը կազմում էին բնակչության համարյա կեսը, սակայն քանակը չէր կարևորը, այլ որակը, քանզի այստեղ արժե հիշա-**

տակել ֆրանսիացի մեծ զորավարի թևավոր խոսքը: Երբ Նապոլեոն Բոնապարտը փորձում է մի ծակատամարտ տալ և հարցնում է, թե թշնամին ինչքան զորք ունի, նրան պատասխանում են, թե հարյուր հազար: Նա շարունակում է, որ Ֆրանսիան ունի հիսուն հազար և Նապոլեոն Բոնապարտին, որը հավասարեցնում է հաշիվը: Այո, հայերն ունեին 180 հազար բնակիչ, բայց սասունցի և տարոնցի առյուծներ, որոնք հինգ հարյուրամյակ անկախության դրոշմ վառ էին պահել:

Ինչպես մյուս վիլայեթների, այնպես էլ Տարոնի եղեռնը սկսվում է զորահավաքով ու պատերազմական տուրքով, որոնք վեր էին ածվում վայրի կամայականության հայ ժողովրդի նկատմամբ: Դեռ 1914 թվականի նոյեմբերի 8-ին Տարոնի առաջնորդ Ներսես եպիսկոպոս խարախանյանը հաղորդում է պատրիարքարան. «Ժամանակը վտանգներով հոյ է. ժողովուրդն ամեն բանն զրկվիլ հանձն առած է, միայն թե կյանքի ապահովություն մը ունենա. բայց ո՞վ պիտի տա անոր ցանկալի ապահովությունը. կառավարությունը. այն է արդեն ամեն կերպ անկարգության և չարիքներուն աղբյուրը: Հանգամանքները կհաստատեն, որ ժողովրդի այդ կասկածներն անհիմն չեն: Կառավարությունն իր վարվելակերպով հայտնի կընեն, որ հայերու վրայեն վստահությունը բոլորովին վերցուցած է և ինքն է, որ մութ տարրերը կգրգռեն հայերու դեմ... Հաստատուն մշաններ կան, թե կառավարությունը պատրվակ կփնտրեն գավառիս հայերը աղետներու ենթարկելու. և այս տագնապալի վիճակին հանդեպ չվարած, բացի երկնային պաշտպանութենն՝ ուրիշ միջոց մը չենք տեսներ»:

Բիթլիսի շրջանում ջարդը կատարվեց ամենագազանային ձևով: Սկզբում սրի քաշվեցին զորանոցների կառուցման վրա աշխատող հայ տղամարդիկ, այնուհետև հավաքեցին մոտ 9000 կանանց ու երեխաների և երկու օր պահելուց հետո քշեցին Տիգրիսի ափը, որտեղ և բոլորին ջարդեցին ու թափեցին գետը: Միայն մի գյուղում տների մեջ հավաքել և այրել էին 1000 մարդ: Բիթլիսի 3000 տուն հայերից ազատվել էր ընդամենը 600-700 հոգի: Թուրքական բանակի սպա Հազգի էֆենդին իր ձեռագիր հուշատետրում արձանագրել է. «Այսօր ճանապարհին (Բիթլիս-Դիարբեքիր) հանդիպեցինք երկու ժանդարմների, որոնք տանում էին 40-50 հատ կիներ, տղամարդիկ և երեխաներ, ոտաբորիկ էին նրանք և լալիս էին. հաց էլ չունեին: ...Ժանդարմներին հարցրինք, թե ո՞ր են տանում սրանց ու պատասխանեցին, թե մի քիչ տեղ էլ պիտի տանենք ու հետո բոլորին սպանենք»: Այնուհետև նա նկարագրում է Բիթլիսում տեղի ունեցածը: «Ժանդարմները բաց են անում տների դռները և դուրս հանելով ներսը գտնվողներին՝ հավաքում են մի հրապարակի վրա: Հավաքվածների թիվընքը պահում են ժանդարմները: Մարդիկ ոչ մի դիմադրություն ցույց չտվին: Վերջապես Բիթլիսն էլ մաքրվեց»:

Բաղեշից հետո հերթը հասավ Մշո դաշտին և բուն քաղաքին: Հայկական այդ ողբերգության, գողգոթայի մասին փաստերն առատ են, վկայությունները բազում ու սրտաճմլիկ, պատմաբանների ստեղծած շարադրանքը ևս քիչ չէ: Տեղի սղության պատճառով մեջբերենք լորդ Բրայսի՝ այդ մասին հավաքած նյութերի ամփոփագիրը, որը վերնագրված է «Մուշի ջարդերը – խարոյկներու վրա խորոված դիակները»: Այնտեղ կարդում ենք. «Պիթլիսի այս ահաւոր ջարդերն շատ առաջ՝ Տիարպեքիրի քիւրտերն ու թուրքերը Պէքրան և Պէլէք արիւնարբու աջակցութեամբ սրբած էին Սլիվանի, Պիշերիկի և Տիարպեքիրն Սասուն տարածուող ընդարձակ դաշտագետիսի հայութիւնը: Քանի մը հազար փախստականներ Սասուն ապաստանած էին, իբրև ապահով վայր, որ գերծ էր մեծատարած սարսափներն: Ասոնք սասունցիներուն պատմեցին գործուած ահաւոր չարիքները: Ասոր վրայ Սասունցիք գծեցին իրենց հետեւելիք ընթացքը: Անոնք ամեն գնով պիտի ընդդիմանային թուրքերուն:

Թուրք խուժանը խոյացաւ անմեղ կանանց ու մանուկներու վրայ և զանոնք քաղաքէն դուրս հանելով խուժներով այրեց ու ջարդեց: Ալիճան, Մեղրագոն,

խասագեղ և ուրիշ հայ գիւղերու բնակիչները շեղջակոյտ փայտերով շինուած խարոյկներու վրայ խորովեցին: Շատերն այս ահաւոր տեսարանին առջեւ խեղազարեցան, ուրիշները բոցերու ծարձատիւներու մէջ ծնրադիր կ'աղօթէին, իսկ ոմանք սարսափած ողորմելի ճիչերով օգնութիւն կը հայցէին: Դահիճները, որոնք բոլորովին անզգայ կը մնային այս յուզիչ տեսարաններու առջեւ, մանուկներու սրունգներէն բռնած՝ գանոնք կը նետէին բոցերուն մէջ, հրկիզուող իրենց մայրերուն, վայրենի պոռչտուքներով. «Ահա ձեզ ձեր առիւծները»: Ռուսերու ձեռքը ինկած թուրք գերիները կը պատմէին, թէ այս բարբարոսութիւններէն օրեր վերջ տակաւին օղը տոգորուած էր մարդկային այրուած դիակներու հոտովը...»:

Մուշի բնակչության մի ստվար մասը, տեսնելով այդ անտանելի պրոցեսը, դիմում է ինքնապաշտպանության, որը ղեկավարում էր **քաջ հայդուկ Կոտոյի Հաճին**: Նա հմուտ ազատամարտիկ էր, հայ ազատագրական պայքարի բոցերի միջով անցել էր, սկսած 90-ականներից: Այժմ նա կանգնած էր «կենաց ու մահու» միջև տարբերություն չհնող, մինչև վերջը պայքարող տարոնցի քաջերի ինքնապաշտպանական շարժման գլուխ և ժողովրդին առաջնորդում էր կռիվների՝ մահ կամ ազատություն կարգախոսով: Քաղաքի բնակիչների դիմադրությունը տևեց մի քանի օր: Կռվող մարտիկների թիվը այստեղ հասնում էր 60 հոգու, որոնք ունեին մի քանի տասնյակ հրացաններ և 30 հազար փամփուշտ, որից 24 հազարը կրակվեց երկու օրում: Վերջին օրը հայերը զգացին, որ անհնարին է դիմադրել թուրքական այդ ահռելի ուժերին և որոշեցին ժողովրդի հետ դուրս գալ քաղաքից, անցնել գետը և բարձրանալ դեպի Սասունի լեռները: Այդպես էլ արվեց: Սակայն, երբ բնակչությունն անցնում էր գետը, թշնամին նկատում է և սկսում է նրա վրա կենտրոնացնել կրակը: Փախստական հազարավոր բնակիչների թուրքական զորքերը սպանում են Քոփ ու Կերմավ գյուղերի մոտ, նրանց մի մասին միայն հաջողվում է ազատվել կոտորածից և բարձրանալ Սասուն: Թուրքական ջարդարարների կողմից Մուշի ամբողջ արու բնակչությունը սպանվեց, իսկ կանանց և երեխաներին լցրին մարագները և այրեցին: Քանդվեց և թալանվեց Մշո Առաքելոց վանքը: Թուրքերը չխնայեցին անգամ քաղաքի գերմանական որբանոցում գտնվող 300 որբերին:

Բիթլիսի վիլայեթում հայ ազգային-ազատագրական շարժման ամենակարևոր կենտրոններից մեկը, աննկուն ոգի և հարատևելու կամք ունեցող մնաց Սասունը, որի գլխով շատ մահաբեր խորշակներ էին անցել: Մուշի և նրա շրջակա գյուղերի մեծ մասի անկումից հետո նա նորից դարձավ կատաղի կռիվների բեմահարթակ: Դարերի ըմբոստության ոգին նորից սավառնում էր Հավատորիկի, Ծիրինկատարի, Կուրտկի, Դլավերի, Անդոքի և այլ լեռների վրա, որտեղից Սասունի քաջերը սկսեցին իրենց նոր հերոսամարտերը: Լեռնականները, կռվելով թուրքական ու քրդական զինված ուժերի դեմ, միաժամանակ պաշտպանում էին լեռնագավառ տեղափոխված հայ ազգաբնակչությանը:

Տեյմս Բրայսը գրում է. «Հայերը պարտավորուած էին իրենց պաշտպանութեան արտաքին գիծերը լքել և օրէ օր ետ քաշուիլ դէպի Անդոկի 10000 ոտք բարձրութիւն ունեցող կեղրոնական կատարը: Ոչ-պատերազմիկ կիներն ու տղաք, ոչխարաց հօտերն ու արջառները մեծապէս կը խանգարէին մարտիկներուն ազատ շարժումները, որոնց ունեցած երեք հազարանոց ուժը կոտորակուելով իջած էր մինչև 1500-ի: Ահաւոր խուճապ կը տիրէր թուրքերու բուռն յարձակումներուն և Հայոց հակայարձակումներուն ընթացքին: Հայերէն շատերը իրենց վերջին փամփուշտները սպառնելով՝ ապառաժներու վրայ ջախջախեցին իրենց հրացանները և փարեցան իրենց ատրճանակներուն ու դաշոյններուն: Թուրք զինուորներն ու քիւրտերը, որոնք 30000- է կը բաղկանային, աստիճանաբար կը մօտենային Հայոց դիրքերուն:

Ասկէ վերջն էր որ տեղի ունեցաւ այն յուսահատական և հերոսական պայքարնե-

րեն մին որ միշտ լեռնականներու հպարտութիւնը կազմած է: Մարդիկ, կանայք և մանուկներ կռուեցան դանակներով, գերանդիներով, քարերով և ամեն բանով որ կրնային ձեռք անցնել: Անոնք լեռան զառիթափերէն վար կը գլտորէին ապառաժի խոշոր կտորներ, սպաննելով թշնամիէն շատեր: Կուրծք կուրծքի ահաւոր կռիւի մը մէջ կիներ գտնուեցան որոնք իրենց դաշոյնները բազմաթիւ թուրքերու կոկորդը մխրճեցին: Օգոստ. 5-ին, կռիւի վերջին օրը, արիւնով ներկուած Անդրկի ապառաժները ինկան թուրքերուն ձեռքը: Սասունի հայ մարտիկները, բացի անոնցմէ որոնք թուրքերու ետեւը անցեր էին՝ զարնելու համար անոնց կողերը, ինկան ճակատամարտի մէջ: Երիտասարդ կիներէն շատերը թուրքերուն ձեռքը չիյնալու համար՝ ապառաժներէն վար զահալիժեցան, ոմանք իրենց սիրասուն մանուկները իրենց կուրծքին վրայ սեղմած: Վերապրողները ասպատակախուճքեր կազմելով կը նեղէին թուրքերը: Ռուբէն եւ Վահան Փափագեան փոքրիկ խումբերով վան անցան, որոնք Սեպտեմբերի վերջերը Երեւան հասան: Ասոնց տուած տեղեկութեանց համաձայն վերապրողներուն թիւը 30000-ի չափ է, սակայն ուտելիք չունենալուն համար կ'ենթադրուի թէ շատ երկար չիյնանալով քիւրտերուն կողմէ և կամ թշուառութենէ մեռած ըլլան»:

Մահվան թուրքական գերանդին հերթականութեամբ հնծում էր Արևմտյան Հայաստանի բոլոր նահանգների հայ բնակչությանն անխտիր: **Պակաս ողբերգական ու դաժան չէր Սեբաստիայի (Սվազի) հայ բնակչության ճակատագիրը:** Վիլայեթն իր մեծությամբ առաջինն էր հայկական նահանգների ցանկում: Պատերազմի նախօրյակին այնտեղ ապրում էր երեք հարյուր հիսուն հազար հայություն, որը դարերի ընթացքում կերտել էր մշակութային անկրկնելի կոթողներ: Սեբաստիան՝ իր կրթական-մշակութային հիմնարկություններով, հանճարեղ ու հայրենանվեր զավակներով, խորը հետք է թողել ոչ միայն հայոց, այլև համաշխարհային պատմության էջերում: Նա մարդկությանը տվել է Ամիրդովլաթ Ամասիացուն, Մխիթար Սեբաստացուն, Ղևոնդ Ալիշանին (Ավարայրի բլբուլը), Դանիել Վարուժանին, Սեբաստացի Մուրադին, Նորատունկյան տոհմի հայրենակարոտ ու գործունյա ներկայացուցիչներին: Շապին-Կարահիսարում է ծնվել ու նախնական դաստիարակությունն ստացել Անդրանիկ Օզանյանը, հայ ժողովրդի ազատագրական պայքարի փառասանը՝ Զորավար Անդրանիկը:

Սեբաստիան, իր դիրքով ու գեղեցկությամբ, հազարամյակների անցած ճանապարհով միշտ չէ, որ կյանք է վայելել: Այն, լինելով Փոքր Հայքի թագուհին, Հայոց Արծրունյաց տոհմի արծաթազարդ մայրաքաղաքը, անընդհատ կռվախնձորի դեր է կատարել քրիստոնյա, ապա իսլամապաշտ հարևանների համար: Սակայն երկրամասը երբեք չի ընկրկել և չի կորցրել ազգային, հայկական դիմագիծը: Դառն եղավ նահանգում ապրող ժողովրդի ճակատագիրը, երբ Արևելք թափանցեցին մահմեդական հրոսակները: Գեղեցիկ երկիրը պարբերաբար ասպատակվում էր, ավերվում մուսուլման բարբարոսների կողմից, ապա շուտով վերականգնվում էր: Երկրահատվածը «Սև հողեր» հորջորջում էր ստացել օտարների կողմից, սակայն նրան սպառնացող աղետը դեռևս առջևում էր:

1912 թ. գարնանը՝ Սալոնիկի տխրահռչակ համաժողովից հետո, Սեբաստիայի վալի է նշանակվում հայատյաց, միաժամանակ թունոտ իթթիհատական Մուամմեթը, որն իբրև թե պատմաբանի մասնագիտություն ուներ և «անցյալն ուսումնասիրում էր ապագա գործողությունները ծավալելու նպատակով»: Այդ մարդազայլ իրեշի գործերին անդրադառնալիս Սեպուհ Ալունին գրում է. «Մուամմեթը, որը նախապես իթթիհատի պատվիրակն էր Սեբաստիայի և ամենաազդեցիկ դեմքը քաղաքին մէջ, համբավ ուներ պատմագետ մը ըլլալու: Սակայն, փաստը ցոյց տուաւ որ, փոխանակ պատմութիւնը ուսումնասիրած ըլլալու իր քաղաքակրթական բոլոր կողմերովը, ընդհակառակը, միտքը յոգնեցուցած էր աւելի, սերտելու համար թէ, Ասորեստանի բռնակալները, ինչ միջոցներով քար ու քանդ ըրած են բարգաւաճ քաղաքներ, իրենց

արշաւանքներու պահուն, թէ ինչպէ՛ս մորթագերծ կ'ընէին գերիները, թէ ինչպէ՛ս Սպարթացիները մէկ գիշերուան մէջ, բնաջինջ կ'ընէին Հիլօթները կ'աներեւութացնէին անոնց քաղաքներն ու գիւղերը, թէ Ներոն, ինչպէ՛ս կրակի կուտար Հռոմը: Ինքը նախանձեղով այս տխրահռչակներուն, կ'ուզէր հետեւիլ անոնց օրինակին և ըլլալ Աթիլա մը, ճինկիզ Խան մը, Լենկթիմուր մը:

Իր նախածեռնութեամբն էր որ Պալքանեան պատերազմէն ետք պայքօթ հրատարակուած էր քրիստոնեաներու դէմ, և կազմուած էին թուրք ընկերակցութիւններ, քրիստոնեաներու, մասնաւորապէս Հայերու ձեռքէն առնելու համար քաղաքին վաճառականութիւնը, ճարտարարուեստը և հասցնելու թուրք արհեստաւորները: Դժուար պիտի ըլլար անշուշտ, մէկ անգամէն և շուտով գլուխ հանել այս ծրագիրը, որով իր նպատակին հասնելու համար խորհած էր կրակի տալ նահանգին այն թաղերը, ուր հաստատուած էին հայ վաճառականները: Եւ ահա, յանկարծ օր մը, կը տեսնուի որ սիսթեմաթիք կերպով կ'այրուին և մոխրակոյտի կը վերածուին Մարգուանի, Ամասիայի, Սեբաստիայի և Եւդիկիայի (Թոգատ) ամբողջ շուկաներ. միայն այս վերջին քաղաքին մէջ պատճառելով 300 ոսկիի կորուստ: Հրդեհի կը տրուին նաև Մարգուանի, Սեբաստիայի և Ամասիայի ալիւրի գործարանները, բոլորն ալ սեփականութիւն Հայերու: Իթթիհատի նախապատերազմեան ծրագիրն էր այս, Հայերը տնտեսական տեսակետով 560 տարի ետ նետելու համար»:

Սկսվեց պատերազմը: Իթթիհատականները նախապատրաստվեցին հայկական ջարդերին: Վաղօրոք վիլայեթներ ուղարկեցին երիտթուրքերի կենտկոմի անդամներին: Սեբաստիան բաժին ընկավ Բեհաեդդին Շաքիրին, որը Մուամմեթի հետ միասին սկսեց հայկական գողգոթան: Նրանք դիմեցին պրովոկացիոն քայլերի, որոնցով ուզում էին մահմեդական ամբոխին գրգռել, որոնք առանց այդ էլ գրգռված էին, և հեշտացնել հայերի բնաջնման խնդիրը: Կ. Պոլսի Ջավեն պատրիարքն իր հուշերի մէջ գրում է. «1913 թ. օգոստ. 3-ին ամերիկացի միսիոներ Հօլպրուք՝ Էնտրեսի մօտ սպանուեցաւ, նոյնիսկ տեղւոյն գայմագամին հրամանով՝ թուրքերու կողմէ: Դատաւարութեան ատեն կառավարութիւնը չքաշուեցավ Հայերը զրպարտել, բայց չկրցաւ կլլեցնել, ոճրագործը անծանօթ մնաց ըսելով՝ փակել ուզեց խնդիրը: Երբ տակաւին Թորգոմ եպս. Սեբաստիոյ առաջնորդ էր, այսինքն՝ 1914 գարնան, թուրք կառավարութիւնը ուզեց Սեբաստիոյ հայ գիւղերու սեպիական իրաւունքը եղող արօտատեղիները՝ արդարութեան բացարձակապէս հակառակ ըլլալով՝ թուրքերու յատկացնել: Բողոքները անլսելի մնացին: Նմանապէս Ս. Նշանի վանքապատկան հողերուն վրայ թուրք զորանոցներ և շենքեր կառուցանել սկսան: «Կառավարութիւնը ուզեց ճնշել Հայը մտաւորապէս ալ: Դպրոցներու մէջ աւանդուած ազգ. պատմութեան ևն, դասերը վերցուեցան ու անոնց տեղ թուրքերէն դասեր նշանակուեցան. նոյնիսկ աղջիկներու բաժնին տարրականին մէջ, ուր տակաւին հայերէն չսկսած՝ թուրքերէն պիտի սովորէին: Թուրքերէնի ուսուցիչը իրենց ուզածը կ'ընտրէին»:

«1915 Յունուարի վերջերը, թուրքերը ամբաստանեցին Հայերը, թէ Սահակ վարդապետի սպանութեան փոխարէն թուրք զօրքին հացը թունաւորած են: Բոլոր հայ փոռապանները և կարգ մը զինուորներ բանտ նետուեցան: Մուամմեթը կ'ուզէր Հայերը զրպարտել և զանոնք ջարդարար խուժանին ցասմանը ենթարկել: Իբր թէ հացը շուներուն վրայ փորձեր են և քանի մը շուներ սատկեր են: Քննութիւն մը կատարուեցաւ Հայերու մասին և ստութիւնը մէջտեղ ելաւ: Խնդիրը հողեցին, ըսելով որ քաղաքապետութիւնը շուները մէջտեղէն վերցնելու համար թունաւորեր է»:

Գնալով Սեբաստիայում հայ-թուրք հարաբերությունները շիկանում են: Մուամմեթի հրամանով, գաղտնապէս սպանվում է տեղի հոգևոր առաջնորդ Սահակ վարդապետը, մի քանի երևելի հայերի բանտարկում և գաղտնապէս ոչնչացում: Վիճակն այդպիսին էր, երբ 1915 թ. հունվարի 5-ին, Կարինից վերադարձի ճանապարհին, Սե-

«Հունիսի 26-ին Տրապիզոնում հանրային կոչը հռչակեց, որ բոլոր հայերը պետք է թողնեն քաղաքը: Հունիսի 1-ին բոլոր փողոցները գրավված էին սվիճներն հրացաններին անդադրած ժանդարմներով: Մեկ նրբանցքում կազմավորում էին հայերի 100 հոգանոց խմբերի և քաղաքից դուրս էին հանում, որտեղ նրանց հավաքում էին 2000 հոգանոց մեծ խմբերի մեջ: Հաջորդ երեք օրում տանում էին օրը մեկ 2000 հոգանոց խումբ, ընդամենը 6000, այնուհետև, հաջորդ չորս օրում նորից տարան շուրջ 4000 հոգու... Նրանց թույլատրել էին իրենց հետ վերցնել միայն այն, ինչ որ կարող էին տանել իրենց մեջքին: Եթե ճանապարհին հոգնաժողովուրդից որևէ մեկը ընկնում էր կամ հետ էր մնում, նրան խոցոտում էին սվիճներով: Տրապիզոնի մոտ ծովը թափվող գետով դեպի ծով էին լողում դիակների կույտեր և կրկին հետ լողում դեպի ափը»: Տրապիզոնի հայերի կոտորածի պատկերը լրացվում է իտալական հյուպատոսի վկայություններով: Նա հաղորդում էր, որ հայերին արտաքսել էին իրենց տներից, հավաքել մեկտեղ, որից հետո փողոցներով քշել ծովի կողմը: Նրանց նստեցրել էին առագաստանավեր, տարել ափից մի փոքր հեռու և ծովը նետել: Այդ եղանակով ամբողջ հայ ազգաբնակչությունը՝ 8-10 հազար մարդ, ոչնչացվել էր մի քանի օրվա ընթացքում նահանգապետ Ազմի բեյի անմիջական ղեկավարությամբ: Մահվան դատապարտված այս հրեշը հետագայում սպանվեց հայ ժողովրդական վրիժառուների ձեռքով:

Այսպիսով, չափազանց դառը ճակատագիր վիճակվեց Տրապիզոնի վիլայեթի հայ բնակչությանը: Շուրջ 60 հազար հայությունից հրաշքով փրկվեցին 600 ինքնապաշտպաններ, որոնք, բարձրանալով լեռները, անհավասար մարտեր մղեցին իսլամ հազարավոր բորենիների դեմ, դրանով իսկ ոչ միայն պաշտպանեցին իրենց կյանքը, այլև հերոսանալով ապացուցեցին, որ հայը մեռնելու չէ որ գնում է, այլ նա նաև խիզախ գիտե, պաշտպանվել կարող է: Նրանք մնացին հայոց պատմության մեջ, հետադարձ հայացքով հիշեցնելով, որ եթե իրենց օրինակին շատերը հետևեին, նրանք ևս կփրկվեին: 1916 թ. փետրվարի 18-ին ռուսական բանակը մտավ Տրապիզոն և հայերի փրկված բեկորներն ազատագրելով՝ տեղափոխեց Ռուսաստան:

Այսպիսով, միայն մեկ տարում, այսինքն՝ 1915 թվականին, հիմնովին դատարկվեց, հայազրկվեց Արևմտյան Հայաստանը, ջարդերից հրաշքով փրկվածներն աքսորվեցին արաբական անապատները՝ Ռես-ուլ-Այն, Տեր-Ձոր և այլ գավառներ, որոնք դարձան մահվան ճամբարներ:

Իթքիհատականների ջարդարարական ծրագրերում նախատեսված էր բռնագաղթեցնել կամ ոչնչացնել նաև Կենտրոնական և Արևմտյան Անատոլիայում ապրող հայերին, որոնք պատերազմի բեմահարթակից հարյուրավոր կիլոմետրերով հեռու էին և «թուրքերի հորինվածքի» համաձայն՝ կայսրությանը ոչ մի վտանգ չէին ներկայացնում: Երկրորդ գոտու մեջ մտցված այդ նահանգների դատարկումն ապացույց էր, որ երիտթուրքերն իրենց հարվածն ուղղել էին ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև ամբողջ հայ ժողովրդի դեմ: Նրանց բացահայտ նպատակն էր ցեղասպանությունը, որն էլ իրականացնում էին հետևողականորեն, առանց որևէ խղճահարության, տարակուսանքի, վրիպումների: Դիմենք փաստերին:

1915 թ. ապրիլյան ողբերգությունից հետո Ստամբուլի հայությունն այլևս մասսայական կոտորածների չենթարկվեց: **ԻՉՄԻՐԻ (Չմյուռնիա) հայ գաղութն իր կյանքը երկարաձգեց մինչև 1922 թ. սեպտեմբերը:** Կայսրության հայաբնակ մյուս բոլոր նահանգները հիմնովին հայազրկվեցին, այսինքն՝ կամ բռնագաղթեցին, կամ էլ ոչնչացվեցին: Այդ նահանգներից Իզմիտն (Նիկոմեդիա) ուներ 72 500 հայ բնակիչ, որոնցից 52 500-ը կոտորվեց. միայն 20 հազարը դեպորտացվեց: Ադրիանապոլսից համապատասխանաբար 27 500-ից գաղթի ենթարկվեցին միայն 7000-ը, մնացածը ոչնչացվեցին: Բրուսայի 78 000-ից կենդանի մնացին 7000-ը: Իկոնիայի 25 000-ից կենդանի մնացին և գաղթեցվեցին միայն 10 000-ը: Հալեպի 99 000 հայությունից փրկ-

վեց 7000-ը: Եվ այսպես հերթականությամբ, գավառ առ գավառ ոչնչացվում էին հայ զանգվածները:

Հայ բնակչությանը ոչնչացնում էին ամենադաժան մեթոդներով: Ջարդը կազմակերպվում էր կանոնավոր բանակի, ոստիկանության, «Հատուկ կազմակերպության» անդամների, հիմնականում թուրք, քուրդ և չեչեն խուժանի ձեռքերով: Ականատեսներից մեկը վկայում էր, որ հայերին ոչնչացնում էին այնպես, «ինչպես գարնան ծառերը կհատեն հատոցով. արյունածարավ ամբոխը գործում էր կացիններով, սակրեթով, բահերով ու բրիչներով: Հարձակվում էին թշվառ կանանց և երեխաների 400-ից ավելի խմբի վրա, սկսում չարչարանք կոտորել և կտրատել ասոնց մարմիններում դուրս մնացած բոլոր մասերը, քիթը, ականջը, ոտքը, ձեռքը, մատները, ուսերը: Մանուկները մայրերի աչքերի առջև քարերին կխփեն, ալլա՛հ, ալլա՛հ գոռալով»:

Յեղասպանությունը ծանր նստեց Կեսարիայի նահանգի, հատկապես քաղաքի հայ ազգաբնակչության վրա: Պատերազմի նախօրյակին քաղաքն ուներ 60-70 հազար բնակիչ, որից 20 հազարը հայեր էին: Կեսարիան ուներ փարթամ տնտեսություն, հարուստ առևտրականներ, որոնց գործարքները ձգվում էին մինչև հեռավոր Ամերիկա: Կեսարիայում իրենց վաճառաշահ գործերն սկսեցին Գյուլպենկյան գերդաստանի անդամները, որոնց հարստության մասին այսօր էլ հեքիաթներ են պատմում:

Կեսարիան ենթարկվեց մեծ աղետի: 1915 թ. մայիս-հունիս ամիսներին ինչպես քաղաքը, այնպես էլ ամբողջ գավառը հիմնովին դատարկվեց հայերից: Երկիրը քաղաքը, աշխատող, արարող ազգից, դարձավ թուրքական, բարբարոսական, անազրկվեց աշխատող, արարող ազգից, դարձավ թուրքական, բարբարոսական, անապատական: Դարերով ստեղծագործած ժողովուրդը կամ ոչնչացվեց տեղում, բռնագաղթի ճանապարհին, կամ էլ հրաշքով փրկվելով՝ հասավ Տեր-Ձորի աքսորավայրը: Կեսարիան հայոց պատմության մեջ մնաց միայն հուշ ու հիշողություն, միաժամանակ՝ հավիտենական անեծք ջարդերի կազմակերպիչ հայասպան թուրքերի հասցեին:

Այդ մասին ավելի լավ է, որ թողնենք իր անեծքի խոսքն ասի եղեռնից մազապուրծ Վահան Կեսարացին: Ահա նրա գրության ամփոփագիրը: «Մահապարտի ծանր խաչ մը ուսին, անծայրածիր ու անջրդի անապատներէն անցաւ իմ դժբախտ ծանր խաչ մը նոր Գողգոթա մը դիմաւորեց, ամէն ժամ նոր խաչելութեան մը ահացեղս: Ամէն օր նոր Գողգոթա մը դիմաւորեց, ամէն ժամ նոր խաչելութեան մը ահալոր դառնութիւնը ճաշակեց ցմրուր, միշտ հայու կուռ եւ անմար հաւատքով գօտեանդուած եւ իր նախահայրերուն պաշտած Աստծոյ հոգեպար աղօթքը իր շրթունքին: Անթիւ հազարներով ինկան իմ հէգ եղբայրներէս, ոմանք կացինահար, ուրիշներ մերկ, անօթի, հիւանդութեան ու պէսպէս բռնութեանց ճիրաններուն մէջ, միշտ իյնալով, ելլելով իրենց տառապանքի անհատնում ճանապարհին վրայ: Յաւերժական հանգիստ եւ անդորր մինչ մը պարգեւող համեստ շիրիմ մը իսկ գլացուեցաւ մեր նահատակներուն, որպէսզի իրարայաջորդ հայ սերունդներ ուխտի գային իրենց, ջուխտ մը մոմ վառէին ու պուտ մը խունկ ծխէին՝ անդարձ մեկնած սիրելիներուն անմար յիշատակը ոգեկոչելով:

Անարգ թշնամին քանդեց մեր հայրենական երկրի գերեզմանատուներն իսկ, զորս հովին տուաւ մեր մեռելներուն սուրբ նշխարները եւ աղբ ցանց անոնց հողերուն վրայ: Թող նախախնամութեան վրիժառու թաթը անպակաս ըլլայ նամարդ դահիճներուն վրայէն, թող յամեցող արդարութիւնը վերջապէս յայտնուի օր մը եւ միլիոնաւոր անմեղներու արեան գինը պահանջէ այդ անխիղճ բռնակալներէն»:

Այո՛, ի հեծուկս թուրքերի, ապրեց և այսօր էլ ազգային, անկախ հանրապետության դրոշի ներքո արարում է այն ժողովուրդը, որը ճաշակեց անբուժելի ողբերգական դաժանություններ: Նա ապրում է, կապրի և իր պահանջը կառաջադրի թուրք բորենիներին:

Դաժան ճակատագիր վիճակվեց Եոզղատ գավառի և հատկապես համանուն քա-

նոր ազգակիցները, հեռաւոր ճամբէ մը, փոխանակ Սիսի վրայով տարուելու: Ոչ մասնակի աքսոր տեղի ունեցած է Յաճընի մէջ, ընդհանուր տեղահանութենէն առաջ և ոչ ալ ուէ ձեռնարկ Յայերու կողմէ իսլամանալու նպատակով. միայն թէ տեղահանութեան միջոցին խտրութիւն չէ դրուած և հաւասարապէս հանուած են թէ՛ լուսաւորչականը, թէ՛ կաթոլիկը և թէ՛ բողոքականը: Հագիւ մաս մը այրի կիներ մնացած են քաղաքը, իբր զհնուորի ընտանիք: Տեղահանութիւնը վարած են զլիսաւորաբար Սիսի այն ատենուան կառավարիչը, ոստիկան զինուորներու հրամանատար Ավնի, Իթթիհատի տեղւոյն քլիպի անդամները, եւն:

Տեղահանութիւնը վերջանալէն յետոյ Ավնիի հրամանով քաղաքը այրուած է, պարզապէս զայն անգամ մըն ալ բնակելի վիճակէ դադարեցնելու համար:

Չինադադարին Յաճընի 25000 հայութենէն հագիւ 5000 վերապրողներ գտնուած և դարձեալ իրենց ծննդավայր հաստատուած են»:

Անցյալից դաս առնելով՝ անձնական փորձով իմաստնացած հաճընցիները 1920 թ. ապրիլին ինքնապաշտպանութեան դրոշ են պարզում: Փոքրաթիվ մարդկանցով նրանք մի քանի ամիս շարունակուած են պայքարը քեմալական հզոր ռազմական մեքենայի դեմ: Ինքնապաշտպան հերոսներն առավել կոյմանային, եթէ իրենց կոկորդը չսեղմեր սովի ոսկրոտ ձեռքը: Իսկ Ֆրանսիա՞ն, իսկ եվրոպական շահամուլ քրիստոնյա տերութիւնները, նույնիսկ փարիսեցի ԱՄՆ-ի ներկայացուցիչները: Այդ բոլորի հասցեին ամոթանքի դառը խոսքեր է ասում Գնել վարդ. ճերմեմյանը: Նա քրիստոսի անունից, իբրև քրիստոնյա հոգևորական, քրիստոնեական անեծք է կարդում ոչ միայն թուրքերին, այլև Արևմտյան տերութիւններին:

Սրբազանը գրում է. «Ալճիրա Մարոք, եւ այլն եւ անոնց ոչ-զանցառելի ռազմամթերքն ալ կը սահեցնեն ֆրանսական մեծագոր բանակի «աղքատ» զինամթերանոցին մէջ: Ո՛վ կրնայ ժխտել թէ այդ ռազմանիւթն ալ ֆրանսացիք, ձեռքի տակէ, թուրքերուն չյանձնեցին, որպէսզի անոնք հայուն զենքով հայ խողխողեն...: «Ասպետական» Ֆրանսա՝ ասպետական ոգիէն պարպուած, ասպետականի պիտակին տակ միայն թաքնուած, իսկական ասպետական հայուն դէմ դաւաճանեց, որ իր արիւնն անգամ չէր սակարկած Ֆրանսիայի փառքին ու պատիւին համար:

Ամօթ...

Ամօթ նաեւ ամբողջ քաղաքակիրթ աշխարհին, որ լսեց ու կարդաց Ատանայի հաճընցի ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ ՈՒ ՔՈՅՐԵՐՈՒՆ ԿՈՉԸ, ՄԱՅՐԵՐՈՒՆ ՏՕՆԻ վաղորդայինն, 1920 Մայիսի 14-ին եւ խուլ ձեւացան ու խեղդեց խղճի ու խղճմտանքի ձայնը, զուրթ ու կարեկցութեան զգացումը իր ներսիդին, եւ թոյլ տուաւ որ հայ մայրեր ու քոյրեր որբանան ու այրիանան Յաճընի մէջ, օր ցերեկով, արեւու բորբ շռայլներուն տակ: Ամօթ նաեւ Միացեալ Նահանգներու եւ Անգլիոյ վարիչներուն, որոնք 1920 թուի Յունիսի 29-ին, ստացան աղերսագրեր, Ֆրանսայի վարիչներուն հետ, Միացեալ Նահանգներու հաճընցիներուն կողմէ, եւ դիւանագիտութիւն խաղալով՝ չուզեցին վշտացնել այսօրուան ու վաղուան իրենց դաշնակից թուրքերուն սիրտը, եւ կռնակնին դարձուցին, աչքերնին փակեցին ու ակամքները խցեցին, չտեսնելու ու չլսելու համար այն բոլորը, որոնք կը կատարուէին քսաներորդ դարու ԶԱՂԱԶԱԿԻՐԹ ՈՒ ԺՈՂՈՎՐԴՎԱՐ ազգերու աչքերուն առջեւ, քիչ մը անդին, Յաճընի մէջ:

Ամօթ, հազար ամօթ...»:

Թողնենք թող խոսի վարդապետը. «Ինկավ Յաճըն ու մեռաւ հաճընցիութեան մեծագոյն մասը, մօտ 10000 հոգի, բայց մէկի փոխարէն բուսան սունկի պէս, երկու Յաճըններ. մէկը միւսէն աւելի գեղեցիկ ու աւելի փառաւոր, - մէկը Լիբանանի գեղածիժաղ ու հիւրընկալ ափերուն վրայ, Պէյրութի մէջ, Նոր-Յաճըն անունին տակ, իսկ միւսը՝ հայրենի օրինեալ ու փառաւորեալ հողին վրայ՝ քաղաքատիպ Յաճըն Աւան անունի տակ, Արզնի բուժավայրին մօտիկը:

Ու հաճընցին չկորա՛ւ»:

1915-1916 թվականները դարձան օսմանյան կայսրութեան հայերի ցեղասպանութեան բարձրակետը: Բայց և հետագա տարիներին էլ հայերի կոտորածները շարունակվեցին ընդհուպ մինչև 1920-ական թվականների սկիզբը: Այդ ընթացքին հավատարիմ էին ինչպէս երիտթուրքերը, այնպէս էլ նրանց փոխարինած քեմալականները:

Թեև արդեն 1917 թ. պարզ դարձավ, որ Գերմանիան և նրա դաշնակիցները դատապարտված են պարտութեան Առաջին աշխարհամարտում, սակայն բուլշևիկյան հեղաշրջումը Ռուսաստանում, դրան հետևած Ռուսաստանի դուրս գալը պատերազմից և ռուսական զորքերի հեռացումը Արևմտյան Հայաստանից, որը նրանք գրավել էին պատերազմի ընթացքում, ոչ միայն փոքր-ինչ թեթևացրեց Գերմանիայի դրությունը, այլև թույլ տվեց թուրքերին հարձակում ծավալել Կովկասյան ռազմածակատում, որն ըստ էության պահվում էր սոսկ հայկական ազգային զորամասերի կողմից: Այդ հարձակման (1918 թ. փետրվար-մայիս) հետևանքով հաջողվեց ոչ միայն վերադարձնել Արևմտյան Հայաստանի կորցրած մարզերը, այլև ներխուժել Անդրկովկաս, ստեղծել Արևելյան Հայաստանի և Երևանի գրավման սպառնալիք, որը կանխվեց Սարդարապատի և Բաշ Ապարանի ճակատամարտերում թուրքերի նկատմամբ հայկական զորքերի տարած հաղթանակի շնորհիվ:

Թուրքերի ներխուժումը սովորական պատերազմի բնույթ չէր կրում, այն ուղեկցվում էր զավթած շրջանների հայ ազգաբնակչության անխնա կոտորածով: Մասնավորապէս՝ հայերի քաջարի դիմադրությունից հետո ներխուժելով Ղարաբաղի սահմանները, 1918 թ. սեպտեմբերին, թուրքական զորքերը մտան Բաքու և ադրբեջանական ազգայնականների հետ մեկտեղ կազմակերպեցին քաղաքի հայ ազգաբնակչության կոտորած, որին զոհ գնաց 30 հազարից ոչ պակաս մարդ: Այդ նույն ամսի վերջերին թուրքերը ներխուժեցին Լեռնային Ղարաբաղ, ավերեցին տասնյակ հայկական գյուղեր և ոչնչացրին բնակչությանը:

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից հետո երկրում իշխանութեան գլուխ անցան քեմալականները, որոնք օգտվում էին Խորհրդային Ռուսաստանի և նրա բուլշևիկյան առաջնորդների աջակցությունից: Շատ շուտով պարզ դարձավ, որ Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ քեմալականները մտադիր են շարունակել իրենց նախորդների՝ երիտթուրքերի քաղաքականությունը: 1920 թ. մարտին թուրքական զորքերը ադրբեջանական մուսավաթականների հետ միասին սոսկալի ավերածութեան ենթարկեցին Շուշին՝ սպանելով ավելի քան 30 հազար հայ և հրկիզելով քաղաքի հայկական մասը: Նույն թվականի սեպտեմբերին Թուրքիան և իր կիզելով քաղաքի հայկական մասը: Նույն թվականի սեպտեմբերին Թուրքիան պատերազմ սկսեց Հայաստանի Հանրապետության դեմ, թուրքական զորքերը գրավեցին Կարսը, Ալեքսանդրապոլը, ավերեցին Ալեքսանդրապոլ գավառի տասնյակ վեցին Կարսը, Ալեքսանդրապոլը, ավերեցին Ալեքսանդրապոլ գավառի տասնյակ գյուղեր, կոտորեցին մի քանի տասնյակ հազար խաղաղ բնակիչների, հասցրին նյութական մեծ վնասներ:

1920-1921 թթ. արյունալի իրադարձությունները շարունակվեցին **ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ**, ուր պատերազմում Թուրքիայի կրած պարտությունից հետո վերադարձել էին ջարդը և տեղահանությունը վերապրած հայերը: Առ 1920 թ. Կիլիկիայի հայ ազգաբնակչության թվաքանակը հասավ 160 հազարի: Համաձայն դաշնակիցների միջև եղած պայմանավորվածության՝ Կիլիկիան ներառված էր Ֆրանսիայի աղդեցության ոլորապայմանավորվածության՝ Կիլիկիան ներառված էր Ֆրանսիական հրամատարությունը միջոցներ ձեռք չառավ՝ ապահովելու ազգաբնակչության անվտանգությունը, որից չհապաղեցին օգտվել քեմալականները: Չնայած հայերի դիմադրությունը, որից չհապաղեցին օգտվել քեմալականները: Չնայած հայերի դիմադրությանը, քեմալականներին հաջողվեց հաշվեհարդար տեսնել Մարաշի, Ադանայի, ինչպէս նաև Ջեյթունի և տասնյակ գյուղերի հայ ազգաբնակչության հետ: Հայերի մի

մասը կոտորվեց, մյուս մասը զոհվեց մարտերում դիմադրություն ցույց տալիս, իսկ ողջ մնացածներն անցան Սիրիա: Դրանով իսկ քեմալականներն ավարտեցին երիտթուրքերի սկսած՝ Կիլիկիայի հայ ազգաբնակչության ոչնչացումը:

Հայերի ցեղասպանության տարեգրության մեջ վերջին էջը դարձավ հայերի կոտորածն արևմտյան շրջաններում: 1922 թ. սեպտեմբերին՝ հասնելով բեկման հունաթուրքական պատերազմում, քեմալական զորքերը ներխուժեցին Իզմիր (Ջմյուռնիա), որտեղ դաժան հաշվեհարդար տեսան քրիստոնյա ազգաբնակչության՝ հույների և հայերի հետ: Այդ կոտորածի ականատեսը եղավ երիտասարդ Է. Հեմինգուեյը, կանադական թերթերից մեկի ճակատային թղթակիցը, որը տեսածը նկարագրել է իր հոդվածներում:

Ջմյուռնիայի ողբերգությամբ ավարտվեց Թուրքիայի հայ ազգաբնակչության ցեղասպանության շրջանը, որը սկիզբ էր առել դեռևս XIX դարի վերջին¹:

4. Ցեղասպանությունը շարունակեցին և «ավարտին հասցրեցին» Մուստաֆա Բեմալն ու Քյազիմ Կարաբեքիրը

Այսպիսով, բաժան-բաժան եղած ժողովուրդն ու պառակտված Հայրենիքն այլևս չէին կարող դիմագրավել քեմալական արշավանքին այնպես, ինչպես, անօրինակ սխրանքներ գործելով, 1918 թվականին: Ազգը միասնական չէր, բանակը հայ ժողովրդի հատուկ հայրենասիրական կորովով տոգորված չէր. ուստի պիտի պարտվեր, հետևաբար և պարտվեց: Կարաբեքիրը դրանից շատ լավ օգտվեց, և ցավով պիտի արձանագրենք, որ այն ճակատագրական, բացասական դեր խաղաց մեր ժողովրդի կյանքում²:

Մի հանգամանք ևս: Մենք նպատակ չունենք մանրամասն քննել քեմալական ասպատակություններին առնչվող բոլոր դեպքերը: Մեր նպատակն այս մենագրության էջերում այն է, որ ցույց տանք, թե քեմալական արշավանքը Հայոց ցեղասպանության **օրգանական շարունակությունն էր**, ինչպես նախորդները՝ կազմակերպված, նախապատրաստված, իրականացված **պետական մակարդակով, քաղաքակիրթ մարդկության «կույր» աչքերի առաջ, երբեմն էլ նրա մի մասի ոչ միայն լուռ համաձայնությամբ, այլև օգնությամբ ու խրախուսմամբ**:

Քեմալական զորքերը, խախտելով սահմանը, 1920 թ. սեպտեմբերի 22-ին մտան Հայաստան և շարունակեցին խորանալ նրա տարածքով մեկ: Կարաբեքիրն առանց լուրջ դիմադրության սեպտեմբերի 29-ին գրավեց Սարիղամիշը, ապա Կաղզվանը: Հոկտեմբերի 30-ին ընկավ Կարսի անառիկ ամրոցը, նոյեմբերի 7-ին՝ Ալեքսանդրապոլը, նոյեմբերի 12-ին՝ Ադիլը: Թուրքական բանակը մոտենում էր մայրաքաղաքին, դրա համար էլ երկար դիմադրությունից հետո Հայաստանի ղեկավարությունը հարկադրված եղավ ընդունել դեռևս նոյեմբերի 9-ին Կարաբեքիրի կողմից ներկայացված վերջնագրի դաժան պայմանները³: Դա ցեղասպանություն էր, և տեսնենք, թե այդ մասին ի՞նչ են ասել իրար հակադիր երկու կուսակցությունների առաջին դեմքերը:

¹ Մանրամասն տես *Ռուբեն Սահակյան, Կոստանդին Խուրապեղոյան*, Հայոց ցեղասպանությունը տասնամյակների լույսի տակ, Երևան, 1995, էջ 31-32:

² *Պարրիշ Լազեան*, Հայաստան եւ Հայ դատը, Հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991, էջ 261-262:

³ «Հայկական հարցը, Հանրագիտարան», Երևան, 1996, էջ 458-459:

Պրոֆ. Մ. Արզումանյանը, պատմելով այդ մասին, բերում է **Ալեքսանդր Մյասնիկյանի** վկայությունները, որոնք մենք կրկնում ենք առանց վիրահատության. «Թուրքական զորքերը հոկտեմբերի 30-ին գրավեցին Կարսը, իսկ նոյեմբերի 7-ին՝ Ալեքսանդրապոլը: Նրանք դաժանորեն բնաջնջում էին հայ բնակչությանը, կողոպտում նրա ունեցվածքը, ավերում երկիրը: Պատերազմի ընթացքում թուրքական բարբարոսները, ոչ լրիվ տվյալներով, **կոտորեցին 198 հազար մարդ և կողոպտեցին ու ոչնչացրին 18 միլիոն ռուսլու (ոսկով) հարստություն**: Միայն Ղաթաղչի գյուղում հետագայում (թուրքերի գնալուց հետո) հայտնաբերվեցին «11.836 թաղված դիակներ, որոնց 90 տոկոսը կանայք ու երեխաներ էին, իսկ 10 տոկոսը՝ տղամարդիկ: Դիակների վրա եղած վերքերի հետքերից երևում էր, որ կոտորածը տեղի էր ունեցել գազամաքար, օրինակ, դիակների վրա կարելի էր տեսնել սվինի ու դաշույնի 10-15 վերք, բազմաթիվ դիակներ առանց գլուխ էին և ամենաստակալի այլանդակված ձևով, իսկ սպանվածների մի մասը վառվել է շենքում»: Մի այլ հաղորդագրության մեջ նշվում է, որ թուրքերը «Ալեքսանդրապոլի և Ախալքալաքի շրջանում սրի են քաշել մոտ 30 գյուղ, փրկվածների մի մասը գտնվում է ամենաթշվառ դրության մեջ... Կոնֆիսկացիայի ու բռնագրավման գործում թուրքերն իրենց գերազանցել են: Դուրս է տարվում բացարձակապես ամեն ինչ, նույնիսկ կրոնական բովանդակություն ունեցող նկարները... նրանք փողոցներում նույնիսկ օրը ցերեկով կողոպտում են քիչ թե շատ լավ կոշիկներ կամ վերարկու ունեցող քաղաքացիներին»⁴:

Այսօրվա Հայաստանի սահմանագլխին կանգնած **ԿԱՐՍ** քաղաքի մասին մի փոքր մանրամասնենք:

Քյազիմ Կարաբեքիրի գլխավորած քեմալական բարբարոսներն արևելահայության նկատմամբ կիրառած վայրագություններով ձգտում էին գերազանցել Էմվերի բանակի մարդասպաններին, կողոպտիչներին: Կարսի գրավման ժամանակ թուրքերի վայրագություններին ականատես Ռուսիայի քաղաքացի Վ. Ինեսկուն 1921 թ. հունվարի 27-ին գրած իր նամակով հաղորդում է. «Ես թուրք բժիշկ Նուրի-բեյից իմացա, որ քաղաքում սպանվել են 8 հազար հայեր (կանայք, երեխաներ ու տղամարդիկ), սակայն իմ դիտումներով սպանվածների թիվը պետք է լինի 10-12 հազարից ոչ պակաս: Տները ամբողջովին կողոպտված են... Ալեքսանդրապոլից մինչև Նալբանդ կայարանը ամեն ինչ գտնվում է թուրքերի ձեռքում և այդ շրջանում... ոչնչացվել է կայարանը ամեն ինչ գտնվում է թուրքերի ձեռքում և այդ շրջանում... ոչնչացվել է 140 հայկական գյուղ և գլխովին սրի են քաշվել 18-ից մինչև 45 տարեկան տղամարդիկ: Մի խոսքով, այդ շրջաններում մնացած հայերի, ինչպես և գերիների դրությունը հուսահատական է: Շատ գերիներ սառչում են և շատերը մահանում քաղցից»⁵:

Մեկ այլ փաստաթղթով հաղորդվում է, որ Կարսի գրավման ժամանակ թուրքերի բարբարոսությունները շարունակվում էին երկու շաբաթ անընդմեջ: Սպանվածների թիվն անհամար էր. «Գրավելով Կարսը, թուրքերն անմիջապես ձեռնամուխ եղան այնտեղից Սարիղամիշ ու Կարին փոխադրելու այն ամենը, ինչ իրենցից արժեք էին ներկայացնում. գենք, արկեր, մեքենաներ գործարաններից և արհեստանոցներից, տնային կահ-կարասի և այլն»⁶:

Կարսի մարզը կազմավորվել էր 1878 թ., Բեռլինի կոնգրեսից հետո, երբ ռուսական բանակի հաղթարշավից հետո այն ազատագրվեց թուրքական բռնապետությունից և միացվեց Ռուսաստանին: Մարզի տարածքը կազմում էր **16.869 քառակուսի վերստ**

⁴ Մ. Վ. Արզումանյան, Դարավոր գոյամարտ, Երևան, 1989, էջ 542: Տե՛ս նաև Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 438-439:

⁵ «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», стр. 395-397. Տե՛ս նաև Ե. Ղ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 498:

⁶ Центральный государственный архив Красной армии (այսուհետև՝ **ЦГАКА**), фонд 109, опись 3, дело 241, л. 12.

և բաժանվում էր չորս օկրուգի: Արդահանի, Կաղզվանի, Կարսի, Օլթիի: Գլխավոր քաղաքներն էին Կարսը, Սարիղամիշը, Կաղզվանը, Արդահանը, Օլթին: 1913 թվականի տվյալներով, մարզում կային 85 հայաբնակ, 21 ռուսաբնակ գյուղեր՝ խիտ բնակեցված բնակչությամբ: Կային նաև մահմեդականներով բնակեցված այլ գյուղեր:

Պատերազմի սկզբում Կարսի մարզի բնակչության թիվը հասնում էր 404405-ի: Պրանց մեջ ամենամեծ տոկոսը, բնականաբար, կազմում էին հայերը: Նրանց թիվը հասնում էր 123028-ի, կազմելով ընդհանուր բնակչության 30,7 %-ը¹:

Անհրաժեշտ է չնոռանալ մի կարևոր հանգամանք ևս: Կարս բերդաքաղաքը, այսօրվա Չայոց Բազրատունիների մայրաքաղաքներից մեկը, ռազմաստրատեգիական տեսանկյունից ուներ գրեթե անառիկ դիրք, պաշտպանվելու համար անհրաժեշտ ամրություններ, բավականաչափ զենք, զինամթերք և քաղաքապահ զինվորներ: Ժամանակակիցները զարմանում են, ականատեսները զայրանում, որ բերդամրոցն այդքան հեշտությամբ հանձնվեց թուրք-քեմալականներին: Հանձնողները հետագայում արդարանում են, պատճառաբանելով, որ, իրենց կարծիքով, արշավող թուրքերը հեղափոխության զինվորներ էին, նույնիսկ շատերի գլխարկների ծակափակն դրոշմված էին հնգաթև կարմիր աստղեր, դրա համար էլ իրենք նրանց հանձնեցին քաղաքը:

Գրավելուց հետո Կարաբեքիրի դահիճներն անտանելի կոտորած կազմակերպեցին քաղաքում, որին հետևեց նաև խաբված, բայց հայրենասեր հայերի ողբերգությունը: Պրանցից էր բարձրաստիճան զինվորական Մազմանյանը, որը, տեսնելով քաղաքի վիճակը, սեփական ատրճանակի կրակոցով ինքնասպան եղավ:

Կարսի անկումը մեծ ողբերգությամբ ընդունեց եղիշե Չարենցը: Քաղաքը նրա ծննդավայրն էր (1897 թ. Կարս – 1937 թ. Երևան), սակայն 1919 թ. նա մասնակցում էր Ռուսաստանում ծավալված քաղաքացիական կռիվներին և, բնականաբար, բացակայում էր Հայաստանից: Վերադարձին հանձարեղ բանաստեղծն ու հայրենամուտը քաղաքացին, իմանալով Կարսի անկման մասին, ծանր վիշտ ապրեց և իր անձնական ապրումները գումարելով համազգային կորստատիրոջ զգացումներին, այդ ամենին գրական կերպարանք տվեց՝ չարենցյան շնչով ու իրեն հատուկ բանաստեղծական հանձարեղ պաթոսով: 1922-1925 թվականներին «Նորք» հանդեսում շարունակաբար լույս տեսավ եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» վեպը, որը բաղկացած էր երեք մասից՝ «Քաղաքը և բնակիչները», «Դեպի Նաիրի», «Երկիր Նաիրի» վերնագրերով: Գրական այդ ինքնատիպ ու բարձրարժեք ստեղծագործությունը խորհրդային հայ արձակի հիմնաքարերից էր, ուրույն հոգեբանական բարդությամբ, հակասություններով ու հակադրություններով առկայում: Վեպին նյութ են ծառայել 1920 թ. Կարսում ծավալված իրադարձությունները, դրանք սկսելով Առաջին աշխարհամարտի սկզբից, եզերելով քաղաքի անկումով: «Կարսի աղետային վիճակի միջոցով, – գրում է Ս. Աղաբաբյանը, – Չարենցը ներկայացրել է հայ ժողովրդի ողբերգական վիճակը, ինչպես նաև ազգային շարժման մակարույծների հոգեկան վերասերումը» (ընդգծումները մերն են – Յ. Ղ.): Վեպում երգիծական մտորակման ոճի հետ միասին Չարենցը դիմել է քնարական պաթետիկային, մեծարել և մի քիչ էլ իրավամբ աստվածացրել Երկիր Նաիրիի գաղափարը: Համենայնդեպս,

¹ Ա. Ս. Պողոսյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կարսի մարզում 1878-1920 թթ., Երևան, 1961 (այդ մասին տես Չայի Ղազարյանի գրախոսականը, «Երեկոյան Երևան», 1962, 15-ը հունվարի): Տես նաև Ա. Կ. Յոթաթի, К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947: Տես նաև ՉՄԳ, հ. 5, Երևան, 1979, էջ 346-347:

² ՉՄԳ, հատ. 8, Երևան, 1982, էջ 870-872: Ս. Աղաբաբյանի հոդվածը «Չարենց (Սողոմոնյան) եղիշե Արզաթի» վերնագրով:

Կարսին նվիրված նրա բոլոր գործերը սկզբնաղբյուրի ուժ ունեն և հուշարձան են Հայոց հնագույն այդ քաղաքի, վավերաթղթեր բանաստեղծի ծննդավայրը թուրքերից ետ պահանջելու համար:

ԱՄՓՈՓԵՆՔ

Օսմանյան կայսրությունում 1890-1922 թթ. ցեղասպանության հետևանքով զոհված հայ ժողովրդի թվաքանակը հաշվվում է այսպես.

ա. 1890-1896 թվականներին սուլթանի հրամանով, այսինքն՝ համիդյան ջարդերին Արևմտյան Հայաստանում հայաբնակ վիլայեթներում և բուն մայրաքաղաքում հրի ու սրի զոհ դարձան երեք հարյուր հազար «անզեն ու աննպար» արևմտահայեր: Ժողովրդի մի մեծ բեկորն էլ կամ բռնագաղթեցվեց, կամ մահից սարսափած ցրվեց աշխարհով մեկ: Փաստորեն այդ տարիներին ձևավորվեց Հայկական Սփյուռքը:

բ. 1909 թ. ապրիլի առաջին շաբաթում հայ մտավորականության զորակցությամբ իշխանության եկած երիտասարդ թուրքերը մահասարսուռ գերանդիով հնձեցին երեսուն հազար աղանազիների: Նրանց բողոքը քիչ արձագանք գտավ Բոսֆորի ափերին հավաքված մեջլիսի դեպուտատների թանձրաթաղանթ ականջին, ապա այնտեղից, եվրոպական դիվանագետների միջոցով, տեղեկացվեց Արևմուտքին: Ցավոք, ամեն ինչ մնաց «ծայն բարբառո յանապատի»:

գ. 20-րդ դարի սկզբին, բայց ընդունված է թվագրել, թե ողբերգական 1915 թվականին, այսինքն՝ Մեծ եղեռնի մեկ տարում թուրքիայում սպանվեց, բռնագաղթի ճանապարհին սովից ու հիվանդություններից մահացավ, քուրդ ու թուրք խուժանի արյունոտ ձեռքերով քարասպան եղավ մեկնկես միլիոնանոց ժողովուրդ: Դատարկվեցին, անմարդաբնակ դարձան հայկական վեց վիլայեթները:

դ. Երիտթուրքերի հայասպանության պրոցեսը շարունակվեց մինչև 1918 թ. հոկտեմբերի 31-ը, այսինքն՝ մինչև Մուղոսի զինադադարը: Այդ տարիներին, շատ պակասավոր թվերով, եղեռնին զոհ գնացին ևս հինգ հարյուր հազար հայեր: Հայերի վերջին բեկորների մի մասն էլ «տեղափոխվեց» արաբական անապատները, որոնցից փոքրաթիվ, շատ փոքրաթիվ «երջանիկները» մահից մազապուրծ եղան և լրացրեցին արդեն ձևավորված սփյուռքահայերի շարքերը:

ե. Բուլշևիկյան Ռուսաստանի զորակցությամբ, լեմինյան ոսկյա շեղջերով զենք գնած ու զինված Մուստաֆա Քեմալը, իշխանության գալով, 1919-1922 թվականներին «հայերից մաքրեց» չքնաղ Կիլիկիան, Չմյուռնիա հավաքված հայ և հույն գաղթականներին թափեց «հոնիական ջրերը», ջրախեղդ արեց և փաստորեն ավարտեց արևմտահայության ցեղասպանության պրոցեսը: Քեմալական արշավանքին միայն արևմտահայերից զոհ գնացին չորս հարյուր հազար հայ խլյակներ:

զ. Արևմտահայերի հետ «հաշիվը մաքրելուց» հետո Մուստաֆա Քեմալն ու Քյազիմ Կարաբեքիրը 1920 թ. որոշեցին «Հայաստան անունը ընդհանրապես ջնջել քարտեզի վրայից»: Սեպտեմբերի 22-ին բռնկված թուրք-հայկական պատերազմի ժամանակ թուրքերը հայաթափեցին նաև Կարսի մարզը, աներևակայելի ջարդ կազմակերպեցին Արևելյան Հայաստանում, ավելի կոնկրետ՝ Ալեքսանդրապոլ քաղաքում և Շիրակի գյուղերում: Թուրքական հորդանների՝ Արևելյան Հայաստանում կատարած չարագործությունները վեր են մարդկային երևակայությունից:

Արևելահայ բնակչության վիճակը քիչ է ասել, թե ծանր էր Ալեքսանդրապոլում,

որը նույնպես առանց լուրջ դիմադրության հանձնվեց Քյազիմ Կարաբեքիրին ու նրա հայակուլ ասկարներին: 1920 թ. դեկտեմբերի 10-ին կապի աշխատող **Կոստանա-զվիլին** իր մի զեկուցագրում Ալեքսանդրապոլում թուրքերի կատարած զազանու-թյունների մասին այսպես է արտահայտվել. «Թուրքերը հանեցին հեռագրային բոլոր սարքավորումները, կտրեցին քաղաքն ամբողջ աշխարհից և ձեռնամուխ եղան իրենց հրեշավոր պլանի իրագործմանը՝ մի ամբողջ ժողովրդի ոչնչացման ծրագրին: Քաղաքից դեպի գյուղ և գյուղից դեպի քաղաք տանող բոլոր ճանապարհները փակվեցին: Քաղաքում սննդամթերք չկար: Այստեղից մի հետևություն՝ որոշված էր բնակչությանը սովամահ անել: Թուրքերի համար արդյունքները փայլուն էին, չքավոր բնակչությունը և գաղթականները մահանում էին հարյուրներով: Դիակները հավաքելու համար փոխադրական միջոցները չէին բավարարում... Տեղական իշխանությունների կողմից ստեղծված հանձնաժողովի մոտավոր հաշվումների համաձայն՝ քաղաքի և Ալեքսանդրապոլի գավառի օկուպացման շրջանում բնակչության կորուստները հետևյալն են. տղամարդիկ՝ 30 հազար սպանված, 20 հազար վիրավոր, 16 հազար գերի ընկած, 10 հազար սովից մահացած: Կանայք՝ 15 հազար սպանված, 5 հազար վիրավոր, 3 հազար գերի տարված, հազար հոգի սովից մահացած: Երեխաներ՝ 5 հազար սպանված, 3 հազար վիրավոր, 10 հազար քաղցից մահացած»¹:

Խորհրդային Հայաստանի նորանշանակ ժողովրդային Մախազահ **Ա. Ն. Մյասնիկյանը** **ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովում Գ. Վ. Հիչերինին 1921 թ.** հունիսին հաղորդում էր, որ Ալեքսանդրապոլից թուրքական զորքերի հեռանալուց հետո քաղաքի շրջակայքում հայտնաբերվել են կանանց ու երեխաների հազարավոր դիակներ. «Չետաքննող հանձնաժողովն այժմ վերջացրել է իր աշխատանքները, որի արդյունքների մասին հաղորդում ենք Ձեզ ի գիտություն... Հանձնաժողովը Ադրուլաղի ու Ջաջուռի շրջաններում հաշվել է 12 050 դիակ, որից 80 տոկոսը 5-ից մինչև 12 տարեկան երեխաներ են, երիտասարդ կանանց և աղջիկների բազմաթիվ դիակներ կան»: Այնուհետև ասվում էր, որ Ալեքսանդրապոլի հանձնաժողովի հավաքած տվյալների համաձայն, թուրքերի կողմից սրի մատնվածների ընդհանուր թիվը **կազմում է 60 հազար, որից տղամարդիկ՝ 30 հազար, կանայք՝ 15 հազար, երեխաներ՝ 5 հազար, աղջիկներ՝ 10 հազար: Վիրավորների թիվը՝ 38 հազար, որոնցից տղամարդիկ՝ 20 հազար, կանայք՝ 10 հազար, դեռատի աղջիկներ՝ 5 հազար, երեխաներ՝ 3 հազար**»²:

Այսպիսով, թուրք-հայկական պատերազմը շատ ծանր նստեց հայ ժողովրդի ուսերին: Խնդրի խորաքննի հետազոտող արոՖեսոր Աշոտ Հարությունյանը, ընդհանրացնելով հայ ժողովրդի կրած կորուստները, գրում է. «Ոչ լրիվ տվյալներով հայ-թուրքական պատերազմի ժամանակ Հայաստանի կորուստները (միայն թուրքերի գրաված շրջաններում) կազմեցին 198 հազար մարդ: Թուրքերը թալանեցին և ոչնչացրեցին մոտ 20 միլիոն ռուբլու (ոսկով) գույք»³:

Է. Մեծ թուրքերի «թողած պակասը» լրացրեցին նրանց կրոնակից ու ազգակից եղբայրները, «**փոքր թուրքերը**», – ասել է թե՛ **ազերը**, որոնք իրենց նոմադական բարբարոսությամբ ձգտեցին գերազանցել Մուստաֆա Քեմալին և Քյազիմ Կարաբեքիրին: Եվ այսպես, հայկական ջարդերը շարունակվեցին Անդրկովկասում, հատկապես **Բարսիլում** և **Լեռնային Ղարաբաղում**:

Հենվելով թուրքական աղբյուրների ընձեռած փաստերի վրա, Վահագն Դադր-

յանը գրում է. «О том, что Энвер тайно пользовался установленным в его доме телеграфным аппаратом, говорит в своих мемуарах турецкий автор, получивший эту информацию от адъютанта Халиля-паши, командующего турецкими войсками, которые в сентябре 1918 г. атаковали Баку и способствовали его захвату. Согласно условиям Брест-Литовского договора от 3 марта 1918 г., Баку должен был остаться за русскими, и немцы, союзники турок, не хотели, чтобы они захватили Баку. Тем не менее Энвер отправил телеграфом следующий приказ: “Немедленно организуйте местные силы и попытайтесь захватить Баку. При этом вам самим следует сохранить видимость нейтралитета. Бои должны вести местные азербайджанские силы”. После того, как 15 сентября 1918 г. Халиль проинформировал турецкое верховное командование о взятии Баку, верховный командующий Энвер в полночь послал следующий приказ: “Баку должен был остаться за русскими. С какой стати вы решили, что его необходимо захватить? Вы должны быть в Карсе. Что вы делаете в Баку? Сейчас же вернитесь в Карс!” Однако через каких-то три часа Энвер паша выслал следующую телеграмму: “С большой радостью я узнал новость о захвате города Баку, расположенного на берегу Каспийского моря и принадлежащего Туранской империи. Эту вашу великую заслугу не забудут в турецкой и исламской истории. Я целую глаза наших ветеранов войны и предлагаю вам стихи из первой главы Корана в память о наших погибших героях”. Как отмечает турецкий автор, первая и третья телеграммы были отправлены Энвером тайно, когда он был один в своем доме. Вторая же – настоящая шарада, была отправлена из Генштаба, по всей видимости для того, чтобы пустить пыль в глаза начальнику штаба, немецкому генерал-лейтенанту Зеекту. Необходимо отметить, что одной из причин, по которой немцы пытались (но не смогли) контролировать действия турок, отправив с этой целью кавалерию, было желание предотвратить вполне предсказуемую резню бакинских армян; турки сорвали это усилие, взорвав один или два моста, и, как было запланировано, принялись за резню (см. главу 19, прим. 12).

В еще более вопиющей форме эта традиция лицемерия проявилась в планах новоиспеченного правительства Анкары, которое намеревалось завершить искоренение армянского народа, распространив иттихадистский геноцид на Российскую Армению»⁴.

Ազգությամբ հրեա, բուրժուազիկ ցիտամարան **Ա. Ֆ. Միլլերը** Բարսիլ ջարդերի մասին գրում է. «В конце марта 1918 г. турецкие войска вторглись в пределы Закавказья, в апреле они заняли Батуми и Карс. Закавказские контрреволюционеры – азербайджанские мусаватисты, грузинские меньшевики и армянские дашнаки – облегчили задачу турецких интервентов, провозгласив по требованию Турции “независимость” Закавказья от Советской России и заключив с турками соглашения, открывавшие им путь для дальнейшего продвижения к бакинской нефти и другим богатствам Кавказа.

Здесь, на Кавказе, проявились разногласия уже между немцами и Энвером,

¹ Политический архив МИД СССР, инв. № 53351, л. 14.
² АВП СССР, фонд 132, опись 4, папка 6, дело 14, л. 52.
³ Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՄԳ), հատ. 6, Երևան, 1980, էջ 163:

⁴ Ваган Н. Дадрян, История армянского геноцида, этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Ереван, 2007, стр. 493-494.

главным образом на почве дележа награбленной добычи. Немцы хотели захватить грузинский марганец, бакинскую нефть и другие богатства Кавказа, — и все это для себя, а Энвер, возрождая свои пантюркистские и панисламистские планы, стремился сам овладеть всем Кавказом и опять мечтал о походе на Волгу, в Туркестан, в Индию. Немцы теперь были этим явно недовольны, так как это противоречило их плану укрепления своего господства и ограбления Кавказа”¹.

Ամերիկահայ անվանի թուրքագետ **Վահագն Ղադրյանը**, մանրակրկիտ քննելով Բաքվի հայության կոտորածների խնդիրը, շարունակում է **էրնստ Պարակինը**. “В докладе о резне в Баку 15-17 сентября 1918 г. в высшей степени осуждающей форме говорится об истреблении армян Турции, а затем и резне бакинских армян. В последней Паракин особенно обвинял турецких военных командиров, а именно: генерала Нури, двадцатисемилетнего брата Энвера, который, будучи главнокомандующим исламской армией, вместе со своим дядей, генералом Халилем, вошел в Баку и оккупировал его. Согласно Паракину, турецкий генерал Мюрсел, командир пятой дивизии, который руководил укреплениями города Баку, поставил его в известность о планах татар уничтожить армян Баку, как только город будет захвачен турецкой армией. Только после трех дней безжалостной резни турецкий командующий и брат военного министра Энвера Нури, получив предостережение от Паракина, ввел военное положение. Турецкое командование действительно дало татарам возможность отомстить. Это предлагалось открыто и постоянно [die vielfach offen ausgesprochene Ansicht]. “О планируемой кровавой бойне [Gemetzeln] предсказывали еще за несколько недель, и она не имела абсолютно никакого отношения к тактическим фазам” военных операций [ohne jeden Zusammenhang mit taktischen Vorgängen]. То, что эта резня имела место, было подтверждено и турецким майором, который, вернувшись из инспекционной поездки 17 сентября 1918 г., сказал немецкому начальнику штаба: “Вы правы. В городе было ужасно. Никто не может отрицать этого” [...ist es schrecklich zugegangen. Man kann es nicht leugnen]. В связи со своими протестами по поводу резни в Баку Паракин в конце концов был освобожден Халилем от занимаемой должности”².

Հայկական աղբյուրները միաբերան հաստատում են, որ **1918 թ. սեպտեմբերի 15-17-ը** Բաքվում թուրք-ազերի «ծեռքերով» ցեղասպանության են ենթարկվել **երեսուց հազար հայեր**: Սպանել են՝ հաշվի չառնելով ոչ սեռը, ոչ տարիքը, այսինքն՝ սրակոտոր են արել բոլորին՝ ծերերին, կանանց, երեխաներին, նրանց մեղքն այն է եղել, որ պատկանել են հայ ազգին:

Բաքվի և **Գյանջայի** (Կիրովաբադ) հայերի ճակատագրին արժանացավ **Շուշվա** բնակչությունը: 1920 թ. հունվարի սկզբին մուսավաթական կառավարությունը, յոթը հազար զինվոր տալով գեներալ **Ալի աղա Շեխինսկուն**, նրան հանձնարարեց հարձակվել Շուշի քաղաքի վրա և հայազրկել այն: Չնայած որ մեկ զիշերում սպա եցին քաղաքի արվարձաններում ապրող 500 հայերի, այնուամենայնիվ, «հիմնական խնդիրը նրանք չկարողացան իրողության վերածել»:

Գլխավոր ջարդի անմարդկային արարողությունը վերապահված էր առաջիկային: 1920 թ. մարտի 23-ին **Խոսրով բեկ Սուլթանովի** գլխավորությամբ թուրք-մուսավաթական բանդաները գիշերով հարձակվեցին Շուշի քաղաքի վրա և իրակա-

նացրեցին վաղամտած ծրագրերը: Նրանք սպանեցին **երեսուց հազարանոց** Շուշվա հայ բնակչությանը, չխնայելով գրեթե ոչ ոքի: Ճանապարհները փակել էին, որպեսզի ոչ ոք չկարողանա փախչելով իր կյանքն ազատել թուրքական յաթաղանից:

Մեծ ոճիրն իրականացնելուց հետո թուրքերը հրդեհեցին քաղաքը: Աշխարհին հիացնող Շուշին մեկ օրվա ընթացքում վերածվեց մոխրակույտի: Հետագայում արդեն վերաբնակվողների մեծ մասը թուրքեր էին, որոնցից վրեժը լուծվեց մեր օրերում:

1992 թվականի մայիսյան հերոսական շաբաթվա 9-րդ օրվա ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնապաշտպանական ուժերը նույնպես մեկ զիշերվա ընթացքում ազատագրեցին Շուշին, ազերիներին չսպանեցին, այլ փախուստի ճանապարհ տալով՝ հեռացրեցին քաղաքից: Շուշին վերադարձվեց իր իսկական տիրոջը, քաղաքը վերջին քսան տարիների ընթացքում վերստանում է հայկական նախկին տեսքն ու հայեցի բովանդակությունը: **Շուշին այսօր վերակառուցում է ողջ հայ ժողովուրդը՝**

եվ այսպես, մոտավոր, շատ պակասավոր հաշիվներով **Թուրքիան և Ադրբեջանը 1890-1922 թվականներին ցեղասպանության ենթարկեցին շուրջ չորսը միլիոնանոց հայ զանգվածներին և տեր դարձան նրանց սրբազան Հայրենիքին:**

5. Հայաստանի զույգ հաղվածներից Թուրքիային բռնակցված հայկական նահանգները

Մեծ եղեռնի իրականացումից հետո քեմալական Թուրքիան շարունակեց բռնագավթած պահել ոչ միայն ողջ **Արևմտյան Հայաստանն** ու ծովահայաց, գեղատեսիլ **Հայկական Կիլիկիան**, այլև **Կարսի մարզը**, **Արդահանն ու Սուրմալուն**: Հետևաբար, բարոյական բավարարվածություն պատճառելով Մեծ եղեռնից վերապրողների զավակներին, նրանց հարազատներին, Թուրքիան պարտավոր է հայ ժողովուրդին վերադարձնել նրա հնամենի ու պատմական հայրենիքը՝ **Արևմտյան Հայաստանն** ու **Հայկական Կիլիկիան**, միայն վերջերս բռնագավթած Կարսի մարզը, որոնք այսօր **հայազրկված են**, մեծ մասն անվանափոխված, տիրապետողների դաժան ձեռքով **թուրքացած** ու **քրդացած**:

Ներկայացնենք հայկական վիլայեթների համառոտ ցանկն իրենց տարածքով. **էրզրումի** նահանգ (72 հազար քառ. կմ), **Վանի** (39 հազար 300 քառ. կմ), **Բիթլիսի** (Բաղեշ - 27 հազար քառ. կմ), **Սեբաստիայի** (Սվազ - 83 հազար 700 քառ. կմ), **Դիարբեքիի** (Տիգրանակերտ - 37 հազար 500 քառ. կմ), **Խարբերդի** (Մամուրեթ-ուլ-Ազիզ - 32 հազար 900 քառ. կմ), **Ադանայի** (40 հազար քառ. կմ), **Հալեպի** (հայկական գավառները 10 հազար քառ. կմ): Պատմական Հայաստանի որոշ գավառներ կցված են եղել **Տրապիզոնի** և **Կեսարիայի** վիլայեթներին:

Ամփոփելով այս ամենը՝ **մոտավոր, պակասավոր** հաշիվներով միայն Արևմտյան Հայաստանի և հայաբնակ նահանգների տարածքը կազմում է **280 հազար քառակուսի կիլոմետր**: Հայկական Կիլիկիան ունի **45 հազար քառակուսի կիլոմետր տարածություն**: Հետևաբար, Թուրքիան պարտավոր է հայ ժողովուրդին վերադարձնել շուրջ **երեք հարյուր քսանհինգ հազար քառակուսի կիլոմետր տարածք**, որնել շուրջ **երեք հարյուր քսանհինգ հազար քառակուսի կիլոմետր տարածք**, որպեսզի այնտեղ վերադառնան աշխարհով մեկ սփռված, եղեռնից մազապուրծ հայկական բեկորները և ծաղկեցնեն իրենց հայրենի օջախները, միաժամանակ ողբան իրենց հարազատների ոսկորների վրա:

¹ А. Ф. Миллер, История Турции, Москва, 1948, стр. 162-163.

² Ваган Н. Дадрян, Գշված աշխատությունը, էջ 450-451:

¹ «Հայկական հարց, Հանրագիտարան», Երևան, 1996, էջ 368:

Հայ ժողովրդի կորուստները, սակայն, դրանցով չսահմանափակվեցին: Կարսի պայմանագրով (13.X. 1921) լեհիստանի Բուսաստանը քեմալական թուրքիային նվեր տվեց **Կարսի մարզը՝ 18 000 քառ. կմ:** Եվ ոչ միայն այդ: **Թուրքերը «ստացան» Սուրմալու գավառը՝ 3650 քառ. կմ տարածքով, իսկ Ադրբեջանը՝ Նախիջևանի մարզը՝ 5500 քառ. կմ տարածքով:**

6. Հայ ժողովրդի ունեցած նյութական աներևակայելի կորուստները

Հայ ժողովուրդը թուրքիային բռնակցված, ցեղասպանության ենթարկված հայրենիքի հետ, բնականաբար, նաև **նյութական ահռելի կորուստներ է ունեցել:** Արևմտյան Հայաստանի և Անդրկովկասի հայ բնակչության կրած նյութական կորուստների չափաբաժնին են անդրադարձել Փարիզի խաղաղության կոնֆերանսին մասնակցող պատվիրակության գլխավորներ **Ավետիս Ահարոնյանն** ու **Պողոս Նուբար փաշան:** Այդ հաշվեկշիռը խնամքով մշակել և հրապարակել են **«Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի» հանձնաժողովի անդամները¹:** Վավերագիրը, սկզբնաղբյուրի ուժ ունենալով, բնականաբար, **հիմք է ծառայել խնդրով զբաղվող հետագա գրեթե բոլոր հետազոտողներին**, լրացումներ կամ որոշ փոփոխություններ կատարելով՝ համաշխարհային հանրության ուշադրությանը ներկայացնել հայ ժողովրդի **նյութական պահանջները:**

Խնդրին վերաբերող թուրքական և արևմտյան սկզբնաղբյուրների ընձեռած փաստերը գումարելով վերոհիշյալ հաշվեկշիռն՝ **Հայկազն Գ. Ղազարյանն** արել է մի շարք ընդհանրացումներ, որոնք հետաքրքրել են մասնագիտական հետազոտություններ կատարողներին²: Այդ տեսանկյունից նայելով՝ հետաքրքիր ու արժեքավոր է ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, պատմագիտության դոկտոր **Լ. Ա. Բարսեղյանի** գրքույկը՝ ոչ միայն իբրև հետազոտություն, այլև պաշտոնական փաստաթուղթ՝ ուղղված այսօրվա թուրքիայի ղեկավարությանը³:

Խնդիրը հետազոտող հեռավոր ու մոտավոր Սփյուռքի գիտնականներից առանձնանում է իրավագիտության դոկտոր, Մոսկվայի հայ մտավորականներից **Յուրի Բարսեղովը:** Նրա երկու աշխատությունների էջերում ամփոփիչ նյութեր և արժեքավոր եզրահանգումներ կան հայ ժողովրդի պահանջատիրության մասին⁴: Սակայն պահանջատիրության, այն էլ ժողովրդի նյութական կորուստների խնդիրը հիմնավորապես քննել է **Լևոն Վարդանը:** Ծանրակշիռ ու ծավալուն (342 էջ) նրա աշխատության⁵ էջերում, Փարիզի խաղաղության կոնֆերանսին հայկական պատվիրակության ներկայացրած նյութերին գումարելով թուրքական սկզբնաղբյուրները, սփյուռքահայ գիտնականը հիմնավոր վերլուծության է ենթարկել հայ ժողովրդի կորցրած գույքերի չափաբաժնին վերաբերող փաստերը:

Այդուհանդերձ, վերոհիշյալ բոլոր հեղինակները, հատկապես արևելահայության

կրած նյութական կորուստների խնդիրը քննարկելիս հարկադրված են հիմք ընդունել **1919 թ. կազմված հաշվեկշիռը:** Այդ պարագան պայմանավորված է նաև նրանով, որ նման ընդհանրացնող, հավաստի ուրիշ սկզբնաղբյուր չկա: Ուստի մենք ևս որոշեցինք ընթերցողի ուշադրությանը ներկայացնել այդ վավերագիրն այնպես, ինչպես հրատարակել են Մեծ եղեռնի 50-ամյա հորեյանական հանձնաժողովի անդամները՝ **Բեյրութում գործունեություն ծավալած հայրենանվեր տաղանդավոր մտավորականները՝ Գեոսամ Ահարոնյանի և Անդրանիկ Անդրեասյանի գլխավորությամբ:** Ահա այդ փաստաթուղթը.

Ա) ԱՄԲՈՂՁՈՎԻՆ ԱԲԵՐՈՒԱԾ ԵՒ ՔԱՆՂՈՒԱԾ ՇՐՋԱՆՆԵՐ, ՈՐՈՆՑ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ ՏԵՂԱՅԱՆՈՒԱԾ Է

121,800 ընտանիքներ, որոնց՝

ա) 97,400ը հողամշակութամբ կը զբաղէին,

բ) 24,360ը՝ առեւտուրով, ճարտարարուեստով և զանազան արհեստներով՝ 121,800

1. Այս 97,440 ընտանիքները, միջին հաշուով

եւ հիմնուելով այժմու գիներուն վրայ, նոր

օճախ մը հիմնելու համար պէտք ունին

խրաքանչիւրը, -

Ֆրանք

I.- Կալուածներ

Տուն, մառան, ախոռ, ջաղացք, պարտէզ,

անտառ եւ այլազան ծառերու տնկարան

3000

2.- Կահ-կարասիներ

Կահ-կարասիներ եւ հագուստեղէն

1600

3.- Երկրագործական գործիքներ

Արօր, մանգաղ, սայլ

1200

4.- Արջառ

Սսացու կենդանիներ, կով, ձի, ջորի, ոչխար եւ այժ

4500

5.- Դեկավարումի դրամագլուխ

Պարէն, հունտ, յարդ, պարարտացուցիչ

3250

13 550

Այսինքն՝ 97 440 ընտանիքներու համար՝
ընդհանուր գումար

1 320 312 000

II.- Միւս 24 360 ընտանիքները, որոնք կը զբաղէին առեւտուրով, ճարտարարուեստով եւ այլ արհեստներով, հիմնուելով այժմու գիներուն վրայ, պէտք ունին իւրաքանչիւրը, -

1.- Կալուածներ

Տուն, գործատեղի, գործարան, խանութ, առեւտրական հաստատութիւն, պարտէզ

10 000

2.- Կահ-կարասիներ

Կահ-կարասիներ, հագուստեղէն եւ գործիքներ

5000

3.- Դրամագլուխ

Պարէն, աշխատանքի անհրաժեշտ նիւթեր, դեկավարումի դրամագլուխ

6000

21 000

Այսինքն՝ 24 360 ընտանիքներու համար

511 560 000

¹ «1915-1965 Յուշամատենան Մեծ եղեռնի», Պէյրութ, 1965, էջ 1025-1028:

² Հայկազն Գ. Ղազարյան, Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968, էջ 27-40:

³ «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները», Երևան, 1999: Տեղեկատվության հեղինակ՝ Լ. Ա. Բարսեղյան:

⁴ Ю. А. Барсегов, Геноцид армян — преступление по международному праву, Москва, 2000. Տե՛ս նաև Յուրի Բարսեղով, Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը (խմբագիր՝ Լ. Ա. Բարսեղյան), Երևան, 1999:

⁵ Լևոն Վարդան, Հայկական տասնհինգը և հայերու լքեալ գույքերը (քննական ակնարկ ըստ թրքական վավերագրերու), Պէյրութ, 1970:

1 831 872 000

Բ) ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ ՉԼՔՈՒԱԾ, ՍԱԿԱՅՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՊԵՐՈՒՆ, ԲՈՆԱԳՐԱԻՈՒՄՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՆՈՒԱԶՈՒՄԻՆ ԴԵՏԵԻԱՆՔՈՎ ՏՈՒԺՈՂ ՇՐՋԱՆՆԵՐ

154 000 ընտանիքներ
Ա.- 123 200ը կը գրադէին երկրագործութեամբ
Բ.- 30 800ը՝ առեւտուրով, ճարտարարուեստով եւն.
154 000

I.- Այս 123 200 ընտանիքներէն իւրաքանչիւրը իր օճախը վերակերտելու համար պէտք ունի

- 1) Մսացու եւ ընտանի կենդանիներու զննան համար
- 2) Երկրագործական գործիքներ
- 3) Շինութեանց վերանորոգում եւ գործի դրամագլուխ

3000
800
4200
8000
985 600 000

Այսինքն՝ 123 200 ընտանիքներու համար

II.- Միւս 30 800 ընտանիքներէն իւրաքանչիւրը միջին հաշուով պէտք ունի

- 1) Տուներու, աշխատատեղիներու, մթերանոցներու եւ այլ ձեռնարկութեանց վերանորոգման համար
- 2) Ճարտարարուեստական եւ առեւտրական ձեռնարկութեանց վերակազմակերպման համար

4000
6000
10 000
308 000 000
1 293 600 000

Այսինքն՝ 30 800 ընտանիքներու համար

Գ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՈՐՈՒՄՆԵՐ

- 1) Ուղղանկատի վրայ ինկած զինուորներ և սպաներ Մօտաւորապէս 35 000 ընտանիքներ հատուցումներ եւ յատկացումներ՝ ընտանիքներուն, որբերուն եւ ժառանգորդներուն, իւրաքանչիւր ընտանիքի համար 5000 ֆրանքի հաշուով
- 2) Հաշմանդամ եւ վիրավոր սպաներ, զինուորներ եւ սիվիլներ Մօտաւորապէս 90 000 անձեր հատուցումներ եւ յատկացումներ (5000 ֆր.ի հաշուով)
- 3) Զարդուած կամ սովի եւ տարագրութեան հետեւանցներով մեռած անձեր Մօտաւորապէս 100 000 անձեր յատկացումներ և հատուցումներ (5000 ֆր.ի հաշուով)
- 4) Հատուցումներ պատուոյ բռնաբարումներու համար Մօտաւորապէս 12 000 անձեր իւրաքանչիւր ընտանիքի համար 1000 ֆր.ի հաշուով

175 000 000
450 000 000
500 000 000
12 000 000

- 5) Աշխատազրկութեան համար հատուցումներ աքսորեալներուն, գաղթականներուն: Հատուցումներ սեփականազրկումի եւ աշխատանքի իրաւունքի զրկումների համար Մօտաւորապէս 35 000 ընտանիքներ իւրաքանչիւր ընտանիքի համար 4000 ֆր.ի հաշուով **140 000 000**
- 6) Կովկասի եւ Պարսկաստանի հայ գաղթականներու համար եղած ծախսեր Հիւանդանոցներու պահպանում, մատակարարման կեդրոններ, որբանոցներ, բժշկական օգնութիւն **100 000 000**
- 7) Վերաշինութիւն եւ վերանորոգում դպրոցներու, եկեղեցիներու եւ այլ հանրային շէնքերու **10 000 000**
- 8) Հանրապետութեան մէջ երկաթուղիներու եւ հաղորդակցութեան ուղիներու վերաշինութիւն **20 000 000**
1 407 000 000

ՎԵՐԱՔԱՂ

Գումար Ա. գլուխի 1 831 872 000
Գումար Բ. գլուխի 1 293 600 000
Գումար Գ. գլուխի 1 407 000 000

Կովկասի Հայկական Հանրապետութեան

ընդհանուր գումար **4 532 472 000**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԱՔԱՂ

Համագումար՝ Թրքահայաստանի համար **14 598 460 000**
Համագումար՝ Կովկասի Հայկական Հանրապետության **4 532 472 000**
Ընդհանուր համագումար **19 130 932 000**

Այս տախտակներու թիւերուն ի պաշտպանութիւն՝ օգտակար կը նկատենք յիշեցնել թէ հայերը՝ աշխատանքի իրենց սիրով, խնայողութեան իրենց ոգիով, առեւտուրի եւ ճարտարարուեստի համար իրենց ծանօթ կարողութիւններով, իրենց բոլոր դրացիներէն շատ աւելի բարձր վիճակ մը ունէին:

Տեղեկագիրները, զորս ներկայացուցինք մեր Հուշագրին մէջ՝ յղուած խաղաղութեան Վեհաժողովին, կը հաստատեն թէ առեւտուրի եւ ճարտարարուեստի ջախջախիչ մեծամասնութիւնը կը գտնուէր Փոքր Ասիոյ եւ Կովկասի հայերուն ձեռքին մէջ:

Դարերու յամառ աշխատանքներով շինուած գործունէութեան այս օճախներն են, որ աւերակի վերածուած են, եւ զորս հայերը վերակերտելու են:

Ա. ԱՅՐՈՆԵԱՆ

Նախագահ խաղաղութեան Վեհաժողովէն
նրա Հայաստանի Հանր. Պատուիրակութեան

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Նախագահ Հայ Ազգային
Պատուիրակութեան

Եվ այսպես, կարելի է բերել նոր ու **բազմաթիվ, բազմաթիվ** այլ փաստեր, աշխարհի շատ երկրների արխիվադարաններում մինչև վերջերս ընդարձացած, սակայն հատկապես մեր օրերում արդեն հայտնաբերված ու գիտական շրջանառության մեջ դրված այլ վկայություններ, որոնք **միակամ վավերացնում են**, թե քսանե-

¹ «1915-1965 Յուշամատեան Սեօ եղեռնի», Պէյրուք, 1965, էջ 1026-1028:

գիտնալ, որ վերել գծուած սահմաններուն մէջ՝ վանք չէ եղած, որ անձեռնմխելի մնացած ըլլայ, եկեղեցի չէ մնացած, որ կամ քանդուած կամ պղծուած եւ կամ մզկիթի փոխարկուած չըլլայ»¹:

90-ական թվականների հայկական ջարդերից հայ ժողովրդի կրած վնասների մասին էջմիածնի Մայր Աթոռի պաշտոնական ընդհանրացնող մի գրության մեջ 1896 թ. արձանագրված է. «Մահմեդական խուժանն յուր կատաղութիւնն ամենն ավելի թափեց հայ վանորէից, եկեղեցեաց, դպրոցաց և մատենադարանաց վրա: Ասոնք, այսօր, առհասարակ անբերական կոյտեր դարձած են, մանաւանդ գիւղերու եւ գաւառներու մէջ: Աղթամարի վանուց դրսի տունն, ուր՝ բացի եկեղեցական անօթներէն եւ ծանրագին սպասներէն ու սփռոցներէն, կը գտնուէր վանուց բոլոր հարստութիւնն, կողոպտուեցաւ: ...**Կողոպտուեցան եւ մեծաւ մասամբ այրեցան Նարեկի, Վարագի, Կարմրաւորի, Սուրբ Խաչի, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի, Մեծօփայ, Անգղի Սուրբ Աստուածածնայ, Սպիտակ Վանուց եւայլն, մեծ ու փոքր վանօրայք, եւ վանահարք ու միաբանական անդամք այլ մեծաւ մասամբ սպանուեցան: Կողոպտուեցան դարձեալ Լիմ ու Կտուց Անապատներու դրսի տներն եւ Ս. Էջմիածնի վանքը: ...Կողոպտուեցան դարձեալ վանօրէից եւ եկեղեցեաց եկեղեցական թանկագին սպասներն, անօթներն, սփռոցներն, եւն, որոց գումարը կը կազմէ ահագին հարստութիւն: Միայն Նարեկի եւ Վարագայ վանուց կողոպտած շարժական եւ անշարժ հարստութիւնը կը հասնի 5-10.000 լիրայի, թողունք նշանաւոր հնութիւնները, հին ձեռագիրները, մատենադարանները, որոնք կողոպտուեցան եւ կամ բզիկ-բզիկ կտրտուեցան: Նարեկայ վանուց մէջը գտնուած Կենաց Փայտի մասունքն եւ ուրիշ զանազան մասունքներն ալ գերուեցան. **իսկ Սբ. Գրիգոր Նարեկացիի գերեզմանն ալ խորտակուեցաւ:** Այսօր զօրքեր եւ ուրիշ թիւրք կամ քիւրդ ատարաւորներն կը բերեն ու կը ծախեն կամ ջարդել կը տան արծաթեայ եւ ոսկեայ ծանրակշիռ սկիհներ, խաչեր, գաւազաններ, թագեր, բուրվառներ, արծաթապատ կամ ոսկեպատ անտարաններ եւ այլն: ...Հանգոյն վանօրէից այրուեցան ու կողոպտուեցան շատ մը գիւղական եկեղեցիներն ու դպրոցներն, սպանուեցան քահանաներն եւ ուսուցիչներն...»²:**

Վեներիկի Մխիթարյաններից ծայրագույն վարդապետ սրբազան **Տաճատ Եարտըմյանը**, մանուկի, գրականության էջերից և արխիվներից հատիկ-հատիկ հավաքելով փաստական նյութեր, վկայում է, որ 90-ականներին **Բաբերդի** գյուղերում կողոպտվել են 36 եկեղեցիներ, **Երզնկայի** շրջանի մեջ կոտորածների հետևանքով կործանվել 12 վանքեր: Խիզանի Սուրբ Խաչ վանքը կողոպտվեց, ապա այրվեց, որտեղ կրակին զոհ գնացին շուրջ 1000 անուն հնատիպ գրքեր: Ականատեսը վկայում է. «Աչքերիցս սկսեց հոսել արտասուքը, երբ տեսա բոլորը մոխիր դարձած... Այրել էին վանքին մնացած շինությունները»³: Սպարկերտում «հիմնահատակ ավերված են բոլոր եկեղեցիներն ու վանքերը, ոմանք ալ մզկիթի փոխած: Այրած են բոլոր եկեղեցական գրքերը և եկեղեցական զգեստները»⁴:

XIX դարի 90-ական թվականների հայկական ջարդերը, ինչպես նաև հայոց մշակութային հոգևոր ու աշխարհիկ հուշակոթողների ոչնչացումը, ճիշտ է, **ցեղասպանություն էին** բառիս բուն իմաստով, սակայն իրենց չափերով և գործադրության ամենադաժան մեթոդներով, թերևս, նախադուռն էին, սկիզբն այն ահավոր ողբեր-

¹ **Մաղաքիա Օրմանեան**, Ազգապատում, հատոր 9, Երուսաղեմ, 1927, էջ 5029-5030:

² Երևան տեղում, էջ 503:

³ **Տաճատ Եարտըմյան**, Ազգային աշխատությունը, էջ 28-29: Տե՛ս նաև «Դրոշակ», 1896, հունիս, № 16, էջ 122-123:

⁴ «Դրոշակ», 1896, ապրիլ, № 11, էջ 86:

գության, որն իրականացվեց 1915 թվականին և համաշխարհային պատմության էջերում ստացավ **Մեծ եղեռն**. **Գենոցիդ, արմենոցիդ-հայասպանություն** բնորոշ անունները:

Դժվար է այդ պրոցեսին վերաբերող հսկայածավալ նյութերի ներկայացումը: Ուստի բավարարվենք միայն մի քանի գավառների վիճակի նկարագրմամբ: Սկսենք Այնթապ գավառից ու քաղաքից. հայ ժողովուրդն «իր սեփական ու մերձավոր պատմութեան ընթացքին երկու անգամ յափշտակութեան ու կողոպուտի ենթարկուած է դրացի թուրքին կողմէ: Սոյն երկու թալանները քսան տարիի ժամանակամիջոցով մը կը բաժնուին իրարմէ: Ա. – 1895ի թալանն ու սպանող. Բ. – 1915ի Մեծ Պատերազմի շրջանին Տեղահանութիւն անունով, իր տեսակի մէջ աննախընթաց ու եղերական: ...Հաշուեկշիռը ծննդավայրի սոյն առաջին թալանին եղած է... 600 հայ տուներու եւ խանութներու թալան եւ յափշտակութիւն ապրանքի եւ ինչքերու... (Իսկ 1915ին) տուներու առջեւ եւ փողոցները կարծես պագարի վերածուած են, կառավարութիւնը արգիլած է թուրք ժողովուրդին գնել զանոնք, սակայն այսպէս թէ այնպէս, գաղտագողի այդ գոյք ապրանքները կը փոխանցուին թուրքին՝ հարկւրին երկու երրորդի ոչինչ գինով: ... Կարաւան կարաւանի կը յաջորդէր: Այնթապի հայութիւնը կը հեռանար արցունքոտ աչքերով, լքելով իր գոյքերը, մերկացած իր հարստութիւններէն, լքելու ստիպուած իր տունն ու այգիները, իր եկեղեցին ու դպրոցները: ...Այնթապի գործի հրապարակին տիրող տարրն էր հայը, իր սեղանաւորներով, վաճառականներով եւ արհեստաւորներով: Քաղաքացի թէ գիւղացի թուրքը միշտ պարտական էր անոր՝ մուրհակներով եւ տետրակի ընթացիկ հաշիւներով, եւ երբ թալուած ինչքի ու գոյքերուն վրայ անելուցնէն նաեւ հայոց զանազան տեսակի առեւտրական առնելիք պահանջները թուրքերէն, որոնք տեղահանութեան պատճառաւ յօդս ցնդեցան, կ'ունենանք միմիայն նիւթական կորուստի մեծ եւ արժէքաւոր գումար մը, հաւասար միլիոնաւոր դեղին ոսկիներու: ...Այնթապի հայ ժողովրդեան կալուածները, որոնք նուազագոյն գին՝ չորս-հինգ միլիոն մետաղ ոսկիներու արժէք մը կը ներկայացնեն, առանց հատուցումի եւ փոխարհնութեան իւրացուած են թուրք կառավարութեան կողմէ, «Լքեալ Գոյք» անունով մշաթեան իւրացուած են թուրք կառավարութեան համաձայն: Պէտք է նկատի ունենալ, որ թուրքերու օրէնքի մը տրամադրութեան համաձայն: Պէտք է նկատի ունենալ, որ թուրքիոյ մէջ Այնթապի պէս եւ ատկէ զատ անելիով ստուարաթիւ հայ բնակչութեան տէր քաղաքներու, ինչպէս նաեւ անոնցներու եւ գիւղաքաղաքներու ժողովրդական կալուածները միեւնոյն յափշտակութեան ենթարկուած են թրքական «Լքեալ Գոյք»ի կամայական օրէնքով»¹:

Հայ ժողովրդի մեծ բարեկամ, Առաջին աշխարհամարտի պատմությանը լավագուծանք **Յոհաննես Լեփսիուսը** 1915 թ. դեգերում էր թուրքիայի հայկական նահանգներում և ականատեսի լավատեսությամբ թողել է ներքոհիշյալ հավաստի վկայությունը. «1000է անելի եկեղեցիներ ամայացած են: Անոնք փոխուած են մզկիթներու... կամ անբերական վերածուած են: Հայ ժողովուրդին սքանչելի դպրոցական կազմակերպութիւնը, որ 120.000է անելի աշակերտներ ունէր, բնաջինջ եղած է: Գրաւորած են դպրոցական շէնքերը եւ դպրոցներու համար պահուած դրամագլուխները...: Հայ ազգին բնաջնջման քաղաքական հետեւանքները այսօր երեւան ելած են: Բոլոր ջանքերը՝ թուրքիոյ մէջ ստեղծելու համար տնտեսական ու մտաւորական զարգացում մը, մեծապէս անդամալուծուած պիտի ըլլան, սեփականագրկուծովը հայ մտա-

¹ **Գ. Սարաֆեան**, Պատմութիւն Անթապի հայոց, հտ. Ա, Լոս Անձելոս, 1953, էջ 922-929: Վանի, Տարոնի, Կարինի, Խարբերդի, Տիգրանակերտի եւ այլ վայրերի կոտորածների մասին տե՛ս Ս. Արզումանյան, Հայաստան 1914-1917, Երևան, էջ 294-434: **Զ. Կիրակոսյան**, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967, էջ 259-408:

ցի եւ աշխատատեղ ժողովուրդին եւ Թուրքիոյ ամենէն թանկագին ոյժերուն բնաջնջումովը»¹:

4. Պոլսի հայոց պատրիարք Ընորի արքեպիսկոպոս Գալստյանը 1980 թ. արձանագրում է, թե օսմանյան կայսրությունում եղած հայկական 2000 եկեղեցիներից այսօր մնացել է միայն վեցը²:

Մեծատաղանդ և վաստակաշատ պատմաբան, Համիդի գահակալության դժոխային տարիների 4. Պոլսի հայոց պատրիարք, սկզբնաղբյուրներին լավագիտակ *Մաղաթիա արքեպիսկոպոս Օրմանյանը* հիմնավորապես անդրադառնում է նաև հայոց հոգևոր արժեքների պատմությանը: Նրա քննախույզ հիմնավորմամբ 1912 թ., այսինքն՝ մինչև Մեծ եղեռնը Արևմտյան Հայաստանում կանգուն վիճակում կային *երկու հազար երկու հարյուր եկեղեցիներ և վանքեր*³:

1919 թ. Փարիզի խաղաղության կոնֆերանսը քննում էր Հայկական հարցը: Այնտեղ Հայաստանը ներկայացնում են Ավետիս Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան: Նրանք իրենց հետ Ֆրանսիայի մայրաքաղաք էին տարել ճշգրտված թվեր ցեղասպանությունն ապրած արևմտահայ կորուստների վերաբերյալ: Այդ ընդհանրությունից վերաքաղ անելով՝ նրանք գրում են. «Դարերով համառ աշխատանքներով շինված գործունեության այդ օջախներն են, որ *ավերակի* վերածված են, և զորս հայերը վերակերտելու են, դրանք էին.

83 առաջնորդարան

1860 եկեղեցի և մատուռ

229 վանք

26 վարժարան և դպրեվանք

1439 դպրոց և 42 որբանոց, ներառյալ կահկարասիներ, մագաղաթներ և կրոնական հնություններ»⁴:

Թուրքիայում եղած հայկական վանքերի և եկեղեցիների համրանքին անդրադառնալով, Գևորգ Մեսրոպը գրում է. «Մեր պատրաստած մէկ ցուցակէն կ'երեւի թէ ամբողջ Թուրքիոյ հայ վանքերուն թիւը 1914ին 210 էր, իսկ եկեղեցիներուն թիւն էր 1.639...: Մեր ցուցակին մէջ առնուած չեն հայ կաթոլիկ եկեղեցիներն ու վանքերը... թէև իմ մէկ պակասաւոր ցուցակն իսկ բաւական աչքի զարնող թիւ մը ցոյց կու տայ: Ամբողջ Թուրքիոյ մէջ հայ բողոքականները ունէին 310 ժողովարան, որոնց բացարձակ մեծամասնութիւնը, գրեթէ բոլորը հիմնայատակ կործանած են...: Այժմ, այդ 310 ժողովարաններէն միայն 23ը կը գործածուին իրենց նպատակին: ... Վերոհիշեալ հայ վանքերէն ու եկեղեցիներէն աւելի քան 1.000ը հիմնայատակ կործանած է, 691ը կիսակործան վիճակի մէջ են: Անոնց ընդհանուր թիւէն 1.727ը ամբողջապէս եւ անխնայ կողոպտուած են թուրք պետութեան ու ժողովուրդին կողմէ: Պէտք է յիշեցնենք թէ հայ սրբարաններուն թիւը՝ միայն մեր ցուցակին համեմատ ներկայացուած թիւը չէ...: Իւրաքանչիւր վանք մեկէ աւելի սրբարաններ կամ տաճարներ կը համրէր իր մէջ: Վանքեր կային որ 5-10 մատուռներ կամ եկեղեցիներ ունէին: Դետեւարար, հարկ է հայ եկեղեցիներու թիւին վրայ աւելցնել նաեւ միջին հաշիւով 3-4 եկեղեցի կամ մատուռ՝ համրելով ստացուած գումարը: Որով, միայն վանական մատուռներու թիւը կ'ըլլայ շուրջ 600-700»⁵:

¹ «Հայկական ջարդերը» տողը. *Յոհաննես Լեփիտոսի* տեղեկագիրը, Պէրիոք, 1965, էջ 244: Տե՛ս նաև նույնի՝ «Հայաստանի ջարդերը», գերմաներենից թարգմանությունը Մ. Շամտանաճեանի, 4. Պոլիս, 1919, էջ 314:

² «Հայրենիք», ԳՅԴ օրգան, օրաթերթ, Պոսթըն, 1980, 14 նոյեմբերի:

³ *Մաղաթիա արքեպիսկոպոս Օրմանյան*, Հայոց եկեղեցին, Թիֆլիս, 1913, էջ 259-262:

⁴ «Յուշամատեն մեծ եղեռնի», էջ 1025, 1028:

⁵ *Գևորգ Մեսրոպ*, Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922-ին, «Հայաստանի կոչնակ» (շաբաթաթերթ, Բոստոն), 1931, № 25, էջ 809: Տե՛ս նաև *Տաճատ եպարտըմեան*, նշված աշխատությունը, էջ 48-49:

երիտթուրքերի բարբարոսական գործունեությունից անմասն չմնացին Կիլիկիայի վանքերն ու եկեղեցիները, հատկապես երբեմնի թագավորանիստ ու կաթողիկոսանիստ Սիս քաղաքն իր եկեղեցիներով ու վանքերով:

1915 թ. սեպտեմբերի 3-ին Սսի հոգևոր կենտրոնի բռնազավթման պրոցեսին ակամատես *Խաղ եպիսկոպոս Աջապահյանը* հետազայում գրել է. «1915 սեպտեմբերի 3-ին կաթողիկոսական փոխանորդ՝ գերաշնորհ տեր եղիշե արքեպիսկոպոս Կարոյանը Սսոյ կառավարչին քովեն (Սսի) վանք վերադարձին, մեզի կը բերե տարազրութեան մահաբոյր գոյժը, ըստ որում տաս օր պայմանաժամ տրուած էր միաբանութեան՝ երթալու համար Հալէպ: Պոլսէն հասած տոյն հրամանը վերջնական ըլլալով, պայմանաժամի միջոցին՝ գիշեր-ցերեկ չարաչար կ'աշխատինք Սսոյ ութաբեան պատմական Աթոռին թանկարժեք անօթներն ու ծանրագին զգեստները, ինչպէս նաեւ հին գրքերը՝ մասնաւոր պատրաստուած սնտուկներու մէջ տեղաւորելու հոգեմաշ գործով եւ վանքին գոյքերէն կարելոր մաս մըն ալ բեռներ կապած՝ կը սպասենք մեկնումի հրամանին:

13 Սեպտեմբեր՝ Խաչվերացի Կիրակին՝ լացուկոծի պատմական օր մը կ'ըլլայ թէ՛ միաբանութեան եւ թէ՛ ալ Սսոյ մէջ մնացող ափ մը հայութեան համար: **Նոյն օրը, վանքին բանալիները տրցակով կը յանձնուին կառավարութեան: Սրտածնիկ էր պարզուած տեսարանը, հասած ըլլալով այլեւս մեկնումի վերջին ժամը, բաւեր պարզուած տեսարանը, հասած ըլլալով այլեւս մեկնումի վերջին ժամը, բամանք բարովի լալագին համբոյր մը եւս տալով Մայր Տաճարի սրբատաշ քարերուն, կը մեկնինք անդարձ, բարբարոս ձեռքերու յանձնելով երջանկաշատակ Կիրակոս մեծագործ Կաթողիկոսին օրով շինուած Սսոյ թագմադարեան Աթոռին հոյակապ Մայրավանքը, իր վեհաշուք Կաթողիկոսարանով եւ յարակից բոլոր շէնքերով:**

Հոս կ'արժէ յիշել Մայր Տաճարի աւագ սեղանին խաչկալը եւ Հայրապետական մարմարեայ գեղակերտ Աթոռը: Առաջինը՝ գեղաքանդակ եւ համակ ոսկեզօծ, հայկական գեղարուեստի գլուխգործոց մը: Երեք մեթր լայնքի վրայ՝ խորանը ունէր տասներկու աստիճաններ, չորս նրբաքանդակ սիւներու վրայ բարձրացած հսկայ եւ ակնախտիղ գմբէթով, որուն ճակատը զարդարուած էր հայկական արծուանշանով մը: Նոյնպէս խորանին ետեւը տանող երկու կողմի դռներուն վրայ մէկական գմբէթներ՝ խաչկալին ձեւն ու տեսքը աւելցնող: Իսկ Հայրապետական Աթոռը՝ միակն էր իր տեսակին մէջ»¹:

Կիլիկիայի հայությունը Մեծ եղեռնի նախօրյակին ուներ 119 եկեղեցի: Երկրահատվածը հիմնականում ամփոփված էր Ադանայի վիլայեթի մեջ, որոշ գավառներ, հատկապես Ջեթունն իր շրջակայքով մտցված էին Հալեպի վիլայեթի կազմում: հատկապես Ադանայում իթթիհատի ներկայացուցիչը Ջեմալ բեյն էր (Բեհաեդդին Շաքիրի մտերի-Ադանայում իթթիհատի ներկայացուցիչը Ջեմալ բեյն էր (Վանի վալին), Աբդուլ-ամը), որի գլխավորությամբ այստեղ ուղարկված Ջևդեթ բեյը (Վանի վալին), Աբդուլ-ամը), որի գլխավորությամբ այստեղ ուղարկված Ջևդեթ բեյը (Վանի վալին), Աբդուլ-ամը), որի գլխավորությամբ այստեղ կազմակերպեցին կիլիկիա հայության տեղահատ Նուրին, Էյուբ և Էմին բեյերը կազմակերպեցին կիլիկիա հայության տեղահատությունը, կոտորածը, հայկական եկեղեցիների բռնազավթումը, թալանն ու ավերանությունը²:

Ավելի մանրամասն. Ադանան (գավառը) իր շրջակայքով ուներ 12 եկեղեցի, Սիսը՝ 6-ը եկեղեցի, մեկ վանք (այստեղից Սահակ Բ Խապայան Կաթողիկոսն աքսորվեց): Հաճընն ուներ 8 եկեղեցի, Ֆռնուզը՝ 10, Մարաշն իր շրջակայքով՝ 24 եկեղեցի, Ջեյ-

¹ *Բյուզանդ եղիսեան*, ժամանակակից պատմություն կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 166-167, 276-277: Տե՛ս նաև *Տաճատ եպարտըմեան*, նշված աշխատությունը, էջ 65-67:

² *Հայկազն Գ. Ղազարեան*, Ցեղասպան թուրքը, էջ 216:

թուճն իր շրջակայքով ուներ 14 եկեղեցի և 4 վանք (քաղաքի նախադռան մոտ գտնվող Ս. Ստեփանոս հանրահռչակ վանքը լրիվ հողին հավասարվեց): Ուրֆայի շրջանի հոգևոր առաջնորդը Արտավազը վարդապետ Գալանտերյանն էր: Գավառում գործում էին տասը եկեղեցի և երկու վանք: Հալեպի նահանգում կային նաև գործող ութ եկեղեցի: Այնթապի գավառի հոգևոր առաջնորդն էր Հարություն տեր Մելքոնյանը, որի խնամակալության տակ էին վեց եկեղեցի¹:

Ամփոփելով ասեմք, հոգևոր այդ հաստատությունների հզոր ցանցը հիմնովին ոչնչացվեց, քանզի երիտթուրքերը սարսափում էին կիլիկիահայությունից և ամեն պահ մտածում էին, թե այստեղ կարող էր վերականգնվել Ռուբինյանների կամ Շեթունյանների իշխանությունը – **անկախ Կիլիկիան**:

Հայոց վանքերի և եկեղեցիների ճակատագրին արժանացան կրթական հիմնական հաստատությունները՝ դպրոցները: Հայկական վեց նահանգներում այդ պահին գործում էին (այդ թվում 38 քաղաքներում և գյուղերում) 438 դպրոց: Կիլիկիայի վեց քաղաքների և գյուղերի մեջ կար 90 դպրոց: Հայաբնակ մյուս նահանգներում կար (18 քաղաքներում և գյուղերում) 275 դպրոց: 1902 թ. տվյալներով Թուրքիայի ասիական վիլայեթներում 802 դպրոցներում սովորում էին 81 426 աշակերտներ: Ստավոր հաշվով ուսուցչության թիվը հասնում էր 2100-ի: Եղեռնը շնչահեղձ արեց ժողովրդին, հետևաբար և հիմնավորապես կործանեց հայ դպրոցն ու դպրությունը, ուսուցչին և աշակերտին, հոգևորականին և վանականին: Մեկ խոսքով՝ թուրքական արյունոտ թաթը սպանեց հայոց միտքն ու մտավորականությունը:

8. Զեռագիր մատյանների ոչնչացումը կամ կորուստը

Հայ ժողովուրդն աշխարհի հիմնարար ժողովուրդներից մեկը լինելով, բնականաբար, համաշխարհային մշակույթի գանձարանն է ներդրել մեծարժեք ու անկրկնելի այնպիսի կոթողներ, որոնք **շեղևը** դարձած այսօր էլ զարմանք ու հիացմունք են պատճառում քաղաքակիրթ համուր մարդկությանը: **Ճիշտ է նկատվել, դիպուկ է բնութագրվել, որ Հայաստանը եղել և մնում է իր և թանգարան բաց երկնքի տակ:**

Մշակութային քարակերտ ու հոյակապ այդ հսկաների մեծ մասը ստեղծվել է հայոց պետականության գոյության հազարամյակներում, երբ աշխարհիկ և հոգևոր բարձրաստիճան այրերը կառուցում էին իրար հետ միասին, այն էլ **ձեռք ձեռքի տված**: Հայոց մեծագործ արքաները, շինարար ու հայրենամուկ իշխանները, երբեմն նրանց կանայք ու դուստրերը, հիմնականում պետականորեն, մասամբ միայն **մասնավոր նվիրատվությամբ**, խոշոր ու փոքր թվովներին դիմացող մնայուն կառույցներ արարելիս, հոգևոր ու մշակութային անկրկնելի կոթողների կառուցումը հովանավորելիս խորհրդակցում էին բարձրապատիվ հոգևորականության հետ՝ **նրանցից ակնկալելով համաձայնություն և օրհնություն**:

Հայ եկեղեցու դերն անժխտելի և անուրանալի է ճարտարապետական մեծ ու փոքր հուշարձանների, վանքերի ու եկեղեցիների կառուցման, միլիոնավոր զարմանահրաշխաքարերի **գեղանախշման** և պահպանման գործում: Դա և՛ բնական է, և՛ բանական, քանզի առանց հոգևորականության թափած տիտանական ջանքերի ժողովուրդը միայն ինքնաբուխ մղումով այդքան հուշարձաններ կերտել չէր կարող: Շեշտեմք, որ այդ ամենը կառուցվել են Սայր Հայրենիքում – Հայաստանի երկու

¹ **Հայկազն Գ. Ղազարեան**, նշված աշխատությունը, էջ 296: Տե՛ս նաև **Գր. Գալուստեան**, Սարաշ կամ Գերմանիկ և հերոս Չէթուն, Լիւ Եորթ, 1934, էջ 761-774:

հատվածներում և Հայկական Կիլիկիայում ազգային պետականության գոյության ժամանակաշրջանում:

Գյուտ արած չենք լինի, եթե բանաձևենք այսպես. **Հայոց պետականության կորստից հետո ժողովրդի հայապահպանության երկու գործը կռվան էին մնացել. դրանք էին՝ Հայ առաքելական եկեղեցին և մեսրոպատառ հայոց լեզուն, որոնք գործում էին միակամ ու գիրկընդիսառն: Ճիշտ և դիպուկ է ասված. օտար ասպատակողներին դիմագրավելիս միլիոնավոր հայ զորականներ իրենց մահկանացուն կնքեցին ռազմի դաշտում, սակայն մաշտոցյան երեսունվեցը (հայոց տառերը)՝ ժողովրդի հետ միասին և նրանց «գլուխն անցած», անվթար հասան այսօրվա մեր սերնդին և հպարտորեն քայլում են դեպի ապագան:**

Առավել ևս մեծ էր հայ հոգևորականության, Հայ առաքելական եկեղեցու դերը հայապահպանության դժվարին, սակայն սրբազան այդ գործում: Նրանց մշակութային գործունեությունը մնում էր երբեմն բոցկլտացող, երբեմն մարող ճրագների՝ խավարապատ Թուրքիայի թխալոտ ու մթագնած երկնակամարում: Հոգևոր հայրերի վանական մենախցերում երբեմն ամբողջ կյանքն անցկացրած մարդկանց՝ գրիչների ու ծաղկազարդողների ոսկյա մատներով են ստեղծվել հայկական հազարավոր ձեռագիր մատյանները՝ գեղեցիկ ու նկարազարդված, ամուր ու դիմացկուն: Ամեն մի վանական գրիչ, փաստորեն, մի տպարանի դեր էր կատարում, կորստից փրկելով այնպիսի փաստեր-նշխարներ, որոնց բացակայությունը թերևս զրկեր հայոց պատմության շարադրողին անհրաժեշտ պատմական ատաղ-ծից:

Պետականությունից զրկված ժողովրդի համար վանական համալիրները դպրոց էին ու համալսարան (Գլաձոր, Տաթև և այլն), գրչության կենտրոններ էին և որք, անտերունջ երեխաների հանգրվանավայր, թուրքերին ցանկալի թե անցանկալի անցորդների գիշերելու, ի հարկին պատսպարվելու վայրեր: Թուրքերն այդ բոլորը գիտեին և այժմ հարմար ժամանակի էին սպասում՝ հաշվեհարդար տեսնելու այդ ամենի հետ¹:

Հայկական մշակույթի ամենաթանկարժեք նմուշների՝ **ձեռագիր** մատյանների ոչնչացումը մահնեղական բարբարոսների կողմից ծայր է առել դեռևս խոր միջնադարում, հատկապես այն հարյուրամյակներում, երբ Անդրկովկաս սկսեցին թափանցել թուրք սելջուկները, ապա՝ մոնղոլ **թաթարները**, և վերջապես՝ օսմանյան **թուրքերը**:

Հանրահայտ է, որ հայկական հազարավոր ձեռագրերը գրվում էին **վանքերում, մենաստաններում**, պահվում դրանց կից կառուցված, գրապահոցի դեր ստանձնած հատուկ շինություններում, ապահովության համար նաև զաղտնարան-քարանձավներում: Մինչև Գուտենբերգի հրաշակերտ գյուտը, այսինքն՝ երբ տպագրական մեքենան կճռնչար հայոց գետնի վրա, նույնիսկ մինչև **Հակոբ Մեղապարտի** անզուգական գործունեությունը, ձեռագիր մատյանները ստեղծվել և պահվել են վարագավանքում, Աղթամարում, Մշո Ս. Կարապետի և Առաքելյոց վանքերում, Տաթևում, Գլաձորում, Արմաշի դպրեվանքում, Բարձրաբերդում, Ակնում²:

¹ Սույն թեմայի պատմությունը շարադրելիս օգտագործել ենք հետևյալ գրականությունը. **Մ. Արզումանյան**, Հայաստանը 1914-1917 թթ., Երևան, 1967, էջ 227-330: «Յուշամատենան Մեծ եղեռնի», էջ 1020-1028: **Մերի Քեշիշյանի** «Հայկական մշակութային արժեքների եղեռնը օսմանյան կայսրությունում» հոդվածը՝ տպագրված Տեղեկագրի № 6-ում, էջ 3-10: **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հ. Գ, նույն» հոդվածը՝ տպագրված Տեղեկագրի № 6-ում, էջ 3-10: **Մ. Օրմանեան**, Հայոց եկեղեցին, Թիֆլիս, 1913, էջ 259-270: **Տաթարուհեան**, 1927, էջ 5029-5035: **Մ. Օրմանեան**, Հայաստանի վանքերում և եկեղեցիներում մշակութային կորուստը 1894-1896 և 1915-1925 տարիներում, Վենետիկ, 1995, էջ 30-31: **Կ. Խյժեթբաշև**, **Ք. Տեղևան**, Генуция армян сквозь призму десятилетия, Ереван, 1995, стр. 37-40:

² **Մաղաքիա Օրմանեան**, Հայոց եկեղեցին, Թիֆլիս, 1913, էջ 240-259:

Յետագայում ստեղծվել են Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյան մատենադարանները, Երուսաղեմի Սրբոց-Չակոբանց վանքի գրատունը: Ձեռագրերը, արդեն տպագիր գրքերը և XVIII հարյուրամյակից իր գործունեությունն սկսած պարբերական մամուլը կենտրոնացվում էին վերոհիշյալ հաստատություններում, պահվում ամենայն խնամքով ու հոգատարությամբ: Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսությունը Մայր Հայրենիքից բացակայելու պատճառով դեռևս իր փառահեղ ու մենատիրական դերը չէր ստանձնել:

Ամենայն Հայոց կաթողիկոսությունը, երբ տեղափոխվեց Էջմիածին, արմատապես փոխվեց հարաբերակցությունը եկեղեցու և պետության միջև, որը հետագայում հասցրեց նրան, որ 1959 թ. մարտի 2-ին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ Երևանում հիմնադրվեց հին ձեռագրերի ինստիտուտը՝ **Մատենադարանը**: 1962 թ. մայիսից այն ստացավ **Մ. Մաշտոցի անունը**:

Պետականորեն ճանաչված գիտահետազոտական այդ ինստիտուտը, մեկը մյուսից արժանավոր իր **տնօրեններով**, կարծես թե հատուկ ընտրյալ, հայրենամարտի գիտնականներով, փառահեղ շենքի կամարների տակ առավ հայրենիքում եղած ձեռագիր մատյանները, գնելով, նվիրատվությամբ հավաքելով նոր ձեռագրերը՝ դրանք պահեց և այսօր էլ պահում է «բժշկական հոգատարությամբ»:

Հողագնդի երկու կիսագնդերում գոյություն ունի մոտավորապես 25 հազար հայերեն ձեռագիր: Ձեռագիր այդ մատյանները բովանդակում են Մաշտոցից մինչև գրատպության զարգացումը, այսինքն՝ V դարի արշալույսով սկսած, XVIII դարի մայրամուտով եզերված պատմաշրջանում ստեղծված այնպիսի գործեր, որոնք պատմիչների, բանաստեղծների, աստվածաբանների, փիլիսոփաների, բժիշկների, աստղաբաշխների երկեր են, ինչպես նաև հույն, ասորի, արաբ և այլ ազգերի հեղինակների աշխատությունների թարգմանություններ: Վերջիններից շատերն են մեզ մոտ պահվում թարգմանաբար այն դեպքում, երբ դրանց բնագրերը հետագայում ոչնչացվել են:

1981 թ. (մարտ) տվյալներով՝ Մ. Մաշտոցի անվան Երևանի հին ձեռագրերի ինստիտուտ-մատենադարանի ձեռագրերի թիվը հասել էր 16189 միավորի (այսօր ավելի շատ), որոնցից 13623-ը հայերեն են, 2466-ը՝ օտար լեզուներով: Մնացած ձեռագրերը խնամքով պահվում են Մխիթարյանների գրապահոցներում, Երուսաղեմում, Անթիլիասում և այլուր: Որտեղ հայ գաղութ կա, այնտեղ էլ պահվում են հայ ձեռագրերը:

Այդքանից գատ, շատ ձեռագրեր ոչնչացվել են օտարների կողմից կատարված ասպատակությունների ընթացքում: Ստեփանոս Օրբելյանը հաղորդում է, թե 1170 թ. Բաղաբերդում սելջուկ-թուրքերը թալանել են շուրջ **10 հազար հայերեն ձեռագիր մատյան**¹:

Մովսես կաթողիկոսի գահակալության տարիներին (1629-1632), Առաքել Դավրիժեցու վկայությամբ, Էջմիածնի վիճակը XVI-XVII դարերում դարձել էր անտանելի, քանի որ Հայաստանի գեղնի վրա ծավալվել էին թուրք-պարսկական ավերիչ արշավանքները. «Ըստ այսմ սարասի, – գրում է Ա. Դավրիժեցին, – գոզցես և զաստուածաբնակ Սուրբ Աթոռս, զի ամենևինք ունայնացեալ էր ի ստացուածոյ և կողոպտեալ էր ի զարդոց, ոչ զհրք, զի ոչ էր անդ ժամասեալ և կամ ընթերցումն»²:

Հայ մշակութային գանձերի վիճակն ավելի օրհասական եղավ **Դավիթ-Դանիելյան գավազանակալի** տարիներին³: 1804 թ. Դավիթ կաթողիկոսն իր մտերիմների

օգնությամբ Էջմիածնի թանկարժեք իրերը, հատկապես ձեռագրերը **փոխադրում է երևանի բերդը**, որպեսզի դրանք չընկնեն ռուսների ձեռքը⁴: Այդ արժեքների հավաքածուի մեջ եղած «բազմաթիվ ընտիր **գրչագիր մատյաններ** այլևս չվերադարձվեցին Մայր Աթոռ»⁵: Թալանված ձեռագրերը Թավրիզի առևտրական հրապարակում «վաճառքի էին հանվում բեռներով ու հազարներով»⁶:

Հայ **գրչագիր մատյանները և ընդհանրապես մշակութային արժեքներն** անդամալի կորուստներ կրեցին Առաջին աշխարհամարտի տարիներին: Թուրք բարբարոսների անտանելի ջարդարարության պատճառով ոչ միայն հայազրկվեցին հայրենի երկրի նահանգներն ու գավառները, այլև ցեղասպանված ժողովրդի բախտին արժանացան հայոց վանքերն ու եկեղեցիները, թանգարաններն ու գրապահոցները⁷: Ոչնչացված, տարագրված և բնավոր խլյակի վերածված, թուրքական յաթաղանից մազապուրծ, փոքրաթիվ վերապրողների նման ու նրանց հետ աշխարհով մեկ ցրվեցին կրակի բոցերից ազատված հայկական ձեռագիր հուշարձանները: Փրկվեցին հիմնականում այն նահանգների մշակութային արժեքները, որտեղի ժողովուրդը հերոսաբար մաքառեց ջարդարար հրոսակախմբերի դեմ: Դրանցից առանձնանում էին **Վասպուրականն** ու **Տարոնի** աշխարհը:

1915 թ. հուլիսին հերոսացած Վասպուրականը, նրա մշակութասեր մայրաքաղաք Վանը, ողջ բնակչությամբ կռվելով, բայց տեսնելով, որ ուժերն անհավասար են, դիմադրությունը՝ անմիտ, բռնում է գաղթի ճանապարհը: Գաղթագնացներն Էջմիածին են բերում **284 ձեռագիր** (Աթամարից՝ 201, Վանից ու նրա շրջակայքից՝ 61, Լիմ անապատից՝ 22): Մնացած ձեռագրերը խնամքով պահվում են գաղտնարաններում կամ ուղղակի թաղվում հողի տակ⁸:

1915 թ. հոկտեմբերին ռուսական բանակը, հայ կամավորները վերագրավեցին և ազատագրեցին Վասպուրական աշխարհը: **Գևորգ Հինգերորդ Սուրենյանց Տփիսխեցի** (1911-1930) կաթողիկոսը, անհանգստացած մնացած ձեռագրերի ճակատագրով, վարդապետներ է ուղարկում Վան՝ հանձնարարելով զբաղվել թաքցված ձեռագրերի ճակատագրով: Այդ մասին կաթողիկոսական դիվանապետ Բաբկեն վարդապետը ցավով գրում է. «Ոչ միայն հայ ժողովուրդն է ենթարկվել սոսկալի աղետների, այլև նրա հնադարյան ժառանգության մնացած թանկագին պատմական հիշատակարաններն ու թանկարժեք հնությունները, այն էլ, դժբախտաբար, բարեկամ կարծեցյալ անարժան մարդկանց ձեռքով»⁹:

Տիտանական ջանքեր թափելով՝ հայ հոգևորականները կարողանում են դարեր շարունակ Վասպուրականում ստեղծված, գնված, նվիրատվությամբ ստացած հազարների հասնող ձեռագրերից հրաշքով փրկել միայն **1473-ը**, որոնք այսօր էլ խնամքով պահվում են Մաշտոցյան Մատենադարանում: Մնացածների ճակատագիրը մինչև օրս էլ մնում է անհայտ¹⁰: Հավանական է, որ դրանք ընկան նոմադական, ցեղային մակարդակի վրա գտնվող, գիրք ու մատյան չտեսած, թուրք ու քուրդ բարբարոսների ձեռքը և կրակի հրեղեն լեզվի ճարակ դարձան:

Հայոց ձեռագրերի հիմնական ոչնչացումը, բռնագավթումը, երկրից հանումն ու օտար ափեր տեղափոխումը կատարվեց Մեծ եղեռնի, այսինքն՝ **ցեղասպանության**

¹ Մ. Օրմանեան, Ազգապատում, 4. Պոլիս, 1914, էջ 3335:

² «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Ա, Երևան, 1965, էջ 22: Օ. Եզանյանի ներածականը:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 93-94:

⁵ «Արարատ», Էջմիածին, 1915, № 11-12, էջ 865:

⁶ Նույն տեղում, էջ 865: «Վանի շրջանի հնությունների մասին» հոդվածը:

⁷ «Ցուցակ ձեռագրաց...», հ. Ա, էջ 92-98:

¹ ՀԱԳ, հ. 7, Երևան, 1985, էջ 284-285, Մատենադարանի փոխտնօրեն Բաբկեն Չուքասալյանի հոդվածը:
² Նույն տեղում, էջ 285:
³ Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1884, էջ 232-233:
⁴ «Հայ ժողովրդի պատմություն», հատոր V, Երևան, 1974, էջ 117:

երկրորդ տապում՝ 1916-1922 թվականներին: Դժվար է պարզել, թե այս բնագավառում հայ ժողովուրդն ինչքան կորուստներ է ունեցել, բայց փորձենք եղած փաստերով, թեկուզ համառոտակի ներկայացնել մշակութասպան այդ պրոցեսը:

Ձեռագրերով հարուստ է եղել Մշո Ա. Կարապետ վանքը: Ցեղասպանության տարիներին տարոնահայությունը համախմբվեց այդ սրբավայրերի շուրջը և հերոսաբար պաշտպանվեց թուրքական սրից: Մշո հերոսները ոչնչացումից փրկեցին 1750 ձեռագիր մատյան, գաղթելով Արևելյան Հայաստան, դրանք հասցրեցին Մայր Աթո՛ւ: Հրաշքով փրկվել և երևանի Մատենադարան է հասել «Մշո ճառընտիր» տոնական հայերեն ամենամեծ մագաղաթյա ձեռագիրը, որը ստեղծվել է 1200-1202 թթ.: Ձեռագիրն ունի 601 մագաղաթյա թերթ, կշռում է 28 կիլոգրամ: Ձեռագրի փրկության շուրջ լեգենդներ են հյուսվել²:

Այդուհանդերձ, ոչնչացվել են շատ ձեռագրեր: Վանքի Ս. Գևորգ վկայարանի մատենադարանը հարուստ է եղել խազազարդ, անգին քարերով ընդելուզված մագաղաթներով, որոնք մեծ արժեք են ներկայացրել: Դրանց հետ «անհայտացել» են նաև Վանի Վարագավանքում պահված 150 կտոր մագաղաթյա ձեռագիր մատյաններ³:

Սփյուռքահայ անվանի մտավորական **Աևոն Վարդանը**, խորությամբ հետազոտելով հայ ժողովրդի ունեցվածքի բռնազավթմանը վերաբերող փաստական նյութերը, հատկապես թուրքական վավերագրերը, Սեբաստիայի վիլայեթի եկեղեցական գույքի, մասնավորապես, **ձեռագրերի վաճառքի**, ոչնչացման կամ Կ. Պոլիս ուղարկելու մասին, անում է ներքոհիշյալ ուշագրավ ընդհանրացումը.

«Եկեղեցիներու իրեղենները վաճառել էտք ձեռք գարկին Ս. Նշան վանքին: Նախապես, պահարան-զանձատուներն գատ, վանքին երեք եկեղեցիներուն ու սենեակներուն եւ զանազան վայրերուն մէջ գտնուած գորգ, կապերտ, եկեղեցական թանկագին սպասք, արծաթեղէն, ոսկեղէն իրեղեններ, վարագոյրներ, շապիկներ, շուրջառներ եւ գիրքեր վերցնելով՝ տարած էին Սեբաստիոյ **թասֆիէ քոմիսիոնին**: 900-ամյա հնամենի այս վանքին գաղտնի պահարանի բանալին չէին գտած: Գործաւորական վաշտերու մէջ գործող քանի մը զինուորներով, լծակներով, մուրճերով կողպանքը կոտրած եւ պատի մէջ ծեփուած երկաթեայ դուռը բացած էին: Հոն գտան **չաթալ-թագեր, գրքեր, անգին ձեռագիրներ, ոսկի եւ արծաթ իրեղեններ, հնութիւններ, ինչ որ կար, մօտ 3000 կտոր արժէքաւոր առարկաներ, 293 ձեռագիրներ**: Այս արարին ներկայ եղող **թասֆիէ քոմիսիոնի** անդամները, **միւտայի ումումի** Ասաֆ պէկը, **քոմիսիոնի ռէիս վերիլի** եւ **մուարիֆ միւտիլի** Թեւֆիգ էֆէնտին եւ Ջրաաթ Պանքի **միւտիլը**: Սապրի էֆէնտի տեղեկագիր մը պատրաստեցին եւ ստորագրեցին, գոյքերը վերցնելով տարին Սեբաստիոյ քաղաքէն տարագրուած հայու մը՝ Աֆիոնեան Յակոբ էֆէնտիի տունը, իբր պահեստատեղի, **եւ գիրքերն ու ձեռագիրներն ալ՝ մուարիֆ միւտիլիի հրամանին տակ եղած թրքական գրադարան մը տարին կառքերով** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»:

«Մնացած իրերուն մէկ մասը վաճառեցին, մէկ մասն ալ Կ. Պոլիս դրկեցին, անոնց հետ նաեւ՝ եկեղեցիներուն զանգակները»⁴:

Հայկական ձեռագրերի ոչնչացման և այլևայլ ճանապարհով անհայտացման մա-

¹ Հ. Ոսկանեան, Տարոն-Տուրքերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 31-50:
² ՀՄԳ, հ. 7, էջ 659: Ա. Մաքևոսյանի հոդվածը:
³ Մերի Յեշիշյան, նշված հոդվածը, էջ 7: Ս. Յուլանջյան, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին» ամսագիր, 1966, թիվ Ը, էջ 28, թիվ Ե, էջ 143:
⁴ Աևոն Վարդան, Հայկական տասնհինգ և հայերու լքույ գույքերը (քննական ակնարկ ըստ թրքական վավերագիրների), Պէյուք, 1970, էջ 115:

սին ժամանակին փաստառատ հետազոտություններ են հրապարակել պատմաբան **Սուրեն Քոլանջյանը**¹ և Վենետիկի սուրբ հայրերից **Տաճատ վարդապետ Եսարտըմեանը**²: Նրանց հրապարակած փաստերի համաձայն՝ հայկական ձեռակերտ գերակշիռ մեծամասնությունը կամ ոչնչացվեցին, կամ էլ աստանդական հայերի հետ միասին սփռվելով աշխարհով մեկ՝ դրանցից շատերը մինչև օրս էլ տունդարձի ճանապարհ չբռնեցին, չվերադարձվեցին և չհանգրվանեցին Մատենադարանում:

Դեպքերին ականատես, անզուգական ձեռագրագետ, պատմաբան-բանասեր (ժամանակի պատրիարք) Մաղաքիա Օրմանյանը գրում է. «**Վանք չէ եղած, որ անձեռամխելի մնացած ըլլա, եկեղեցի չէ մնացած, որ կամ քանդված, կամ պղծված և կամ մզկիթի փոխարինված չըլլայ... Մահմետական խուժանն իր կատաղութենն ամենն ավելի թափեց հայ վանորեցի, եկեղեցեաց, դպրոցաց և մատենադարանաց վրա**»³:

Համիդյան շրջանի հայկական վանքերի և եկեղեցիների կողոպտման, եկեղեցական սպասքների, հատկապես ձեռագրերի ոչնչացման մասին «Էջմիածին» ամսագրում կարդում ենք. «Հայ փախստականները և հայ աշխարհականները քաջաբար կարողանում էին դիմադրել խիզանի Սբ. Խաչ վանքում (Վասպուրական), սակայն թշնամին նենգորեն կարողանում է մտնել վանքի դռներից ներս և մորթազերծ անում վանահայր Սահակ վարդապետին: Հայերը մինչև իրենց վերջին շունչը դիմադրում են և ընկնում պատվով: Ազատվող միակ անձը, որը կռվում վիրավորվել էր և սակայն կարողացել էր թաքնվել, նկարագրում է, թե ինչպես վանքը կողոպտվում է և այրվում:

Եկեղեցում ոչինչ չէր մնացել, արծաթյա անոթները տարել էին, ջարդոտել էին պատերի քանդակները, քանդել դարպասը: Միաբանության խուցերը, առաջնորդարանը, բոլորը տակնուվրա էին արել, **գրադարանը նույնպես, որը պարունակում էր իր մեջ 1000-ի չափ ընտիր գրքեր... աչքերիցս սկսեց հոսել արտասուքը, երբ տեսա բոլորը մոխիր դառած** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»⁴:

Գարեգին Հովսեփյանի լավատեսական վկայությամբ՝ 1693 թ. Լիմ անապատի վանքի մեջ խնամքով պահված են եղել 3124 ձեռագրեր, որոնց ճակատագիրն անհայտ է 1915 թ. հետո⁵:

Առավել ցավալի է հեղինակների ձեռքով գրված միօրինակ ձեռագրերի կորուստը: Դրանցից ողբերգականը սուրբ Գրիգոր Նարեկացու ձեռքով գրված «Մատյան ողբերգության» հանձարեղ ստեղծագործության մագաղաթյա ձեռագիրն է, որը կորսվեց 1915 թվականին:

Հովհաննես վարդապետ Հյուսյանն իր գրավոր զեկույցներով հաղորդում է, թե թուրքական զորքերը, երբ մտան Վան, ստուգեցին հայկական բոլոր վանքերը, հավաքեցին եղած ձեռագրերը և տարան Կ. Պոլիս: Նա հիշում է նաև, որ Վանի սանջակի Այուր գյուղի Ս. Գրիգոր Նարեկացի վանքի մեջ էր պահվում «Մատյան ողբերգության» ձեռագիրը⁶:

¹ Սուրեն Քոլանջյան, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, հոդվածաշար, տպագրված «Էջմիածին» ամսագրի 1965 թ. № Բ-Դ, էջ 96-107, № Ե, էջ 133-144: 1966, № Ը, էջ 27-37: № Թ-Ժ, էջ 88-93: 1967, № Ե, էջ 46-57: № Զ, էջ 50-55:
² Հ. Տաճատ վրդ. Եսարտըմեան, Հայաստանի վանքերուն և եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 և 1915-1925 տարիներին, Վենետիկ, Ս. Ղազար, 2001, էջ 85-91:
³ Մաղաքիա Օրմանեան, Ազգապատում, հատոր Գ, Երուսաղեմ, 1927, էջ 5029-5030:
⁴ Սուրեն Քոլանջյան, նշված աշխատությունը, «Էջմիածին», 1965, № Բ-Գ, էջ 103: Տե՛ս նաև Տաճատ Եսարտըմեան, նշված աշխատությունը, էջ 87:
⁵ Գարեգին Հովսեփյան, Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մատենադարանները հին հայոց մեջ, «Պայքար» (Բոստոն), 1946, բացառիկ համար:
⁶ Տաճատ վարդ. Եսարտըմեան, նշված աշխատությունը, էջ 89:

Նա գրում է. «Երկու արծաթապատ Նարեկներ, որոնցմե մին, որ մագաղաթ էր, **Ժ դարու գործ, գրված էր սուրբ Գրիգոր Նարեկացու մատներով: Սուրբ Գրիգոր Նարեկացու Նարեկը իր իսկ ձեռքով գրված ըլլալը հաստատված էր: Այդ անման հույսի, լույսի և հավատքի գանձը... իբրև հայտնի հրաշագործ հռչակված էր շրջանի համայն գյուղերուն և ժողովուրդին մեջ: Սույն անգին գանձն ալ մեր հրեշտակային վարդապետի լուսեղ մտքի, լուսաբուխ աղբյուրն ալ՝ մնացածներուն հետ կորստյան մատնվեցան»¹:**

1923 թվականին Մալաթիայի մեջ տեղի է ունեցել հետևյալ **սարսափազդու դեպքը**: Թուրք գաղթականները վառելափայտ փնտրելու ժամանակ հանդիպում են մի քաքստոցի, որտեղ պահված են եղել մագաղաթյա բազմաթիվ ձեռագիր մատյաններ: «Բայրամի առաջին օրն էր, – բերում է Ս. Քոլանջյանը, – երբ կալերի մեջ հավաքված քուրք ժողովրդի ներկայությամբ՝ հանդիսավոր խարույկի բոցերին հանձնեցին նաև մեր մագաղաթյա հավաքածուն: Միքայելի 12 տարեկան տղան, որն այդ վայրկյանին ներկա էր խարույկի բոցավառությանը, փորձում է կրակից ազատել այն գրչագիր ավետարանը, որի առջև գաղտնաբար իրենք ամեն երեկո ծնրադրում էին: **Վայրենի ամբողջ բռնելով տղան՝ ավետարանի հետ միասին հանձնում են կրակի բոցերին, աղաղակելով՝ ձեր աստվածը թող փրկի քեզ այս կրակից** (այս տեղի ունեցավ 1923 թվականին) (ընդգծումները մերն են – Յ. Ղ.)»²:

Հայ մշակույթի անդամալի կորուստների շարքում առանձնանում են **Արմաշ դպրեվանքի** հարուստ հավաքածուի կողոպուտն ու ոչնչացումը, ինչպես նաև Սեբաստիայի, Կեսարիայի, Տրապիզոնի նահանգներում եղած ձեռագրերի անհայտացումը: Գևորգ Մեսրոպի վկայությամբ՝ **երկու հարյուր հազար գիրք է ոչնչացվել** այդ օրերին, այն էլ այնպիսի գրքեր, որոնց արժեքն անգնահատելի էր:

Արևմտյան Հայաստանի, Հայկական Կիլիկիայի, Թուրքիայի հայաբնակ նահանգներում խարսխված հայ բնակչությունը եղեռնի տարիներին կորցրեց շուրջ **4000** ձեռագիր մատյաններ: Դրանցից ամեն մեկը մի գրավոր հուշարձան էր, մի **սրբոց-սրբարան, մի հրաշակներու մասունք**, որոնց կորուստն անդամալի է, անփոխարինելի, քանի որ այդ բացն այլևս ոչ մի այլ բանով լրացնել հնարավոր չէ: Թուրքերի ու քրդերի ջարդարար այդ զանգվածը, ոչնչացնելով գրավոր հիշատակարանները, փաստորեն ոչնչացնում էր հայոց պատմությունը, հեռամետ մտածելով ապագայում փրկվել ահեղ դատաստանից: Իզուր... Պահանջատիրության համար բավարար փաստեր մնացել են:

Գարեգին Ա. Հովսեփյանց կաթողիկոսը, անդրադառնալով ձեռագրական անդամալի այդ կորուստներին, գրում է. «**Այդ ձեռագիրներուն մեջ մարմնավորված էր հայ արվեստը, հայ մշակույթը, հայ միտքը, դարերի ընթացքում հայի ստեղծագործությունները, հայ ոգին, պահված էին հայ մտքի և անցյալի ամբողջ արտադրությունը, մեր ազգային ամենամեծ հարստությունը**»³: Պահանջատիրության ակնոցներով նայելով, իսկապես, ինչպիսի՞ արժեք կարելի է սահմանել այդ ձեռագրերին, մենք դժվարանում ենք ասել:

Այդ կորուստը **ո՛չ կշեռքի ճծարներով կարելի է կշռել և ո՛չ էլ ուրիշ արժեքներով հնարավոր է փոխարինել: Դրանք անփոխարինելի են, թերևս ամենաողբերգականներից մեկը թուրքերի պատճառած վնասների մեջ**⁴:

¹ Ա. Ն. Մնացականյան, Հայ ժողովրդի ողբերգությունը, Երևան, 1965, էջ 187: Տե՛ս նաև *Սուրեն Զոլանջյան*, նշված հոդվածաշարը, 1965, № 6-7, էջ 143: Տե՛ս նաև *Տաճատ եարտըմեան*, նշված աշխատությունը, էջ 89:
² *Տաճատ եարտըմեան*, նշված աշխատությունը, էջ 92-93: Տե՛ս նաև *Ս. Քոլանջյան*, նշված հոդվածաշարը, էջ 93:
³ *Գարեգին Ա. կաթող. Հովսեփյանց*, Դեպի լույս և կյանք, Բ. տպագրություն, Անթիլիաս, 1986, էջ 302-303:
⁴ *Տաճատ եարտըմեան*, նշված աշխատությունը, էջ 95:

9. Ի՞նչ է պահանջում հայ ժողովուրդն այսօրվա Թուրքիայից (համառոտագրված)

1. Հանուր մարդկությանը հայտնի է, որ 1894-1896 թթ. սուլթան Աբդուլ Համիդը գազանաբար ոչնչացրեց **երեք հարյուր հազար արևմտահայերի**: Սուլթանական Թուրքիան մեծ տերությունների դեսպանների, դիվանագիտական դիտորդների աչքերի առջև, առանց արգելքի փորձեց դատարկել Արևմտյան Հայաստանը, այնտեղ շերտընդմեջ բնակեցրեց քրդերին և մահմեդական ռազմատենչ այլ ցեղերի, որպեսզի հետագայում հեշտությամբ կարողանար ոչնչացնել մի ամբողջ, այն էլ անպաշտպան ժողովրդի: Ջարդերը շարունակվեցին 1900-1908 թթ.:

1909 թ. երիտթուրքերը գաղտնի հրահանգավորումով Ադանայում **երեսուն հազար** անպաշտպան հայերի ոչնչացրին: Հայոց եկեղեցիները դարձան դժբախտ զոհերի գերեզմանատեղեր: **Երեսուն հազար** հայեր էլ քարասպան եղան կամ սրախողխող դարձան քաղաքամերձ շրջաններում:

Առաջին աշխարհամարտը դարձավ Հայոց ցեղասպանության գագաթնակետը: 1915-1918 թթ. Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ այլ նահանգներում բնաջնջվեց շուրջ **մեկուկես միլիոն արևմտահայություն**: Քեմալականները, հավատարմորեն շարունակելով երիտթուրքերի քաղաքականությունը, դատարկեցին ողջ Կիլիկիան, 1922 թ. սեպտեմբերին տեղահանվեց, Իզմիրի ծովախորշում ջրախեղդ արվեց կամ էլ **ոչնչացվեց երկու հարյուր հազար հայ**:

Այսպիսով, մոտավոր հաշվարկներով 1890-1922 թթ. Թուրքիան ոչնչացրեց շուրջ **երկուսուկես միլիոն հայ բնակչություն**: XX դարում մարդկության պատմության մեջ կատարվեց **ցեղասպանություն**:

Թուրքական յաթաղանին զոհ գնացին հայ անվանի մտավորականներ, գրողներ ու հրապարակախոսներ, գիտնականներ և պետական գործիչներ՝ Գ. Ջոհրապը, Դ. Վարուժանը, Սիամանթոն, Ռ. Սևակը, Հ. Թլկատինցին, Երուխանը, Ռ. Ջարդարյանը, Ա. Հարությունյանը, Տ. Չյուկուրյանը, Տ. Քելեկյանը: Խելագարվեց հանճարեղ Կոմիտասը:

Հետևաբար, հայ ժողովրդի օրինական պահանջն է, որ **Թուրքիայի ղեկավարությունը նախ ճանաչի ու դատապարտի Հայոց ցեղասպանությունը, ապա նախագահի ու վարչապետի մակարդակով գլխիկոր ներողություն խնդրի Մեծ եղեռնի վերապրողներից, Հայոց բարձրաստիճան պետական այրերից, հոգևոր առաջնորդներից, մեր մտավորականությունից, հանուր հայ ժողովրդից**: Այդ խիստ անհրաժեշտ արարողությունը ոչ թե կնսեմացնի թուրք պետական այրերին, այլ ցույց կտա նրանց **«մեծահոգությունը»**, կկանխի հետագա ցեղասպանության կենսագործումը քուրդ և այլ ժողովուրդների նկատմամբ:

2. Բարոյական բավարարություն պատճառելով Մեծ եղեռնից վերապրողների զավակներին, նրանց հարազատներին՝ Թուրքիան պարտավոր է հայ ժողովրդին վերադարձնել նրա հնամենի ու պատմական Հայրենիքը՝ **Արևմտյան Հայաստանն** ու **Հայկական Կիլիկիան**, **Կարսի մարզն** ու **Սուրմալուն**, որոնք այսօր հայազրկված են, անվանափոխված, տիրապետողների կարծիքով՝ **թուրքացած ու քրդացած**:

Ահա հայկական նահանգների համառոտ ցանկը. **Էրզրումի** (Կարինի), **Վանի, Խարբերդի, Դիարբեքի** (Տիգրանակերտի), **Քիթլիսի** (Բաղեշի), **Սվազի** (Սեբաստիայի), **Տրապիզոնի, Ադանայի** վիլայեթներն իրենց հարակից շրջաններով: Միայն Արևմտյան Հայաստանի և հայաբնակ նահանգների տարածքը կազմում է **280 հազար քառակուսի կիլոմետր**: Հայկական Կիլիկիան ունի **45 հազար քառակուսի կիլոմետր** տարածություն, Կարսի մարզն ու Սուրմալուն ունեն **30 հազար քառա-**

կուսի կիլոմետր: Հետևաբար, Թուրքիան պարտավոր է հայ ժողովրդին վերադարձնել շուրջ երեք հարյուր քառասունհինգ հազար քառակուսի կիլոմետր տարածք, որպեսզի այնտեղ վերադառնան աշխարհով մեկ սփռված, եղեռնից մազապուրծ հայկական բեկորները և ծաղկեցնեն իրենց հայրենի օջախները, տեր դառնան անթաղ մեռելների ոսկորներին:

3. Հայ ժողովուրդը 1915-1922 թթ., բարոյականից զատ, կրել է նաև նյութական մեծ կորուստներ: Հայ ժողովրդի կրած նյութական վնասների մոտավոր հաշվեկշիռը կազմվել է Հայ ազգային պատվիրակության (նախագահ՝ **Պողոս Նուբար**) և Հայաստանի Հանրապետության պատվիրակության (նախագահ՝ **Ա. Ահարոնյան**) կողմից և համատեղ ստորագրությամբ որպես հուշագիր ներկայացվել 1919 թ. Փարիզում հրավիրված խաղաղության վեհաժողովին:

«Մոտավոր հաշվարկների համաձայն, Առաջին համաշխարհային պատերազմի և ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանում և Հայաստանի առաջին հանրապետության տարածքում 1914-1919 թթ. ընթացքում հայ ժողովրդի կրած նյութական վնասների հավելյալը կազմում է 19 միլիարդ 130 միլիոն 932 հազար ֆրանկ (1919 թ. Ֆրանսիայում գործող գներին համապատասխան)»¹: Եթե սրան ավելացնենք, և անպայման պիտի ավելացնենք, տոկոսները, այն էլ՝ միջազգային տոկոսադրույքով, ապա այդ գումարը **կկազմի հարյուր միլիարդ ԱՄՆ դոլար** (շատ պակասավոր):²

Թուրքիան հասկանում է, որ Եղեռնի ճանաչումից հետո համաշխարհային հանրության բարոյական, ինչու չէ, նաև ֆիզիկական ճնշման ներքո հարկադրված կլինի ժամանակի ընթացքում վճարել այդ գումարներն այնպես, ինչպես Գերմանիան վճարում է հրեաներին: Ահա այս պարագան է Թուրքիային վախենալու առիթ տալիս, որ նա հրաժարվի Ցեղասպանության ճանաչումից: **Սակայն միանշանակ է, որ այսօր կամ վաղը կճանաչվի Ցեղասպանության փաստը, և հայ ժողովուրդն իր դահիճների ժառանգներից կստանա թափված այն ծով արյան, կորցրած ունեցվածքի արժեքը, հատկապես՝ սրբազան Հայրենիքը: Մենք դրանում բուլորովին չենք կասկածում:**

¹ «1915-1965 Յուզամատեան Մեծ եղեռնի», Պէյրուս, 1965, էջ 1226:

² Այս պահանջների մասին ասվել է և կասկի մեծագրության հաջորդ գլուխներում ևս: Մենք դա գիտակցաբար ենք կրկնում, վերակրկնում, որպեսզի հասնի թուրք պետական գործիչների բթացած ուղեղներին:

Գլուխ երկրորդ

Մուլթանական բռնապետական լծից Արևմտյան Հայաստանի և Հայկական Կիլիկիայի ազապագրման ծրագրերը 1915-1916 թվականներին: Ջեմալ Ահմեդ փաշայի «առեղծվածը»

Եվ երբ մենք տեսանք Թուրքիայի այդ զոհին՝ մեզ հատված մարդ աչքերով, որոնց մեջ հույսի շող առկայծեց, մենք վերջապես հասկացանք, որ այդ մեր քույրն է մեռնում Արևելքում և մեռնում է հենց նրա համար, որ նա մեր քույրն է, որի հանցանքն այն է, որ նա համակված էր մեր զգացումներով, սիրում էր այն, ինչ մենք ենք սիրում, մտածում էր այնպես, ինչպես մենք ենք մտածում, հավատում էր նրան, ինչին մենք ենք հավատում, և մեր նման զնահապում էր իմաստությունը, արդարությունը, քերթությունը, արվեստը: Մա էր նրա անբավելի հանցանքը:

Հայաստանը վերջին շնչումն է, բայց նա կվերածնվի:

Արյան այն փոքր քանակությունը, որը նա դեռևս պահպանում է, բանկազին արյուն է, որից հերոսական սերունդ է ծնունդ առնելու: Այն ժողովուրդը, որը մեռնել չի ուզում, նա երբեք չի մեռնի...

ԱՆԱՏՈՒԼ ՏՐԱՆՍ
9-ը ապրիլի, 1916 թ.

1. Ռուս առաջավոր պետական գործիչների և հայ մտավորականության ակնկալիքները 1915-1916 թվականներին

Առաջին աշխարհամարտի ռազմաբեմներում հոխորտացող թնդանոթների գոռ ու խելացնոր ծայնը, բնականաբար, ազդեցին հողազնդի մարդկության նյարդերի վրա: Սկսեցին հայեցակարգեր մշակել աշխարհի վերաբաժանման վերաբերյալ: Այդ պրոցեսը կարգավորողներին, անշուշտ, հայտնի էին արևմտահայության ապրած

ողբերգության մանրամասները, մեկ ամբողջ ժողովրդի ցեղասպանության ենթարկելու դաժան պրոցեսը: Հաշվի առնելով կատարվածը, նրանք «խեղդվելուց» հրաշքով փրկվածների նախնի առաջնություն համար հարմարավետ նավահանգիստ էին որոնում:

Հանրահայտ է, սակայն, որ խնդիրն ի սկզբանե բարձրացնում էին **հայազգի** այն մտավորականները, օտար արքունիքներում խարսխված պետական այն պաշտոնյաները, դիվանագետները, որոնք դեռևս իրենց կապերը չէին խզել **Մայր Հայրենիքից** և շարունակում էին ամբողջ հոգով ապրել նրա ճակատագրով: Սրանց բանակին միանում էին օտարազգի հումանիստները, գրողներն ու հրապարակախոսները, որոնք սփռված էին թե՛ Ռուսաստանով և թե՛ Արևմուտքով մեկ:

Ռուսաստանի զույգ մայրաքաղաքներում խարսխված շատ ռուս մտավորականներ պատերազմի առաջին իսկ օրերից սկսած գորավիզ էին կանգնում որդեկորույս ու հայրենակորույս հայ բեկորներին և դրանց ճակատագրով մտահոգված՝ ծրագրեր էին մշակում ապագա Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ:

Դրանց շարքերում առաջինը Պետերբուրգում հրատարակվող «Речь» պարբերականի խմբագիր **Պավել Նիկոլաևիչ Միլյուկովն էր (1859-1943)**: Նա ականավոր պետական գործիչ էր, պատմաբան, Կադետական կուսակցության հիմնադիր անդամներից մեկը, ժամանակավոր կառավարության օրերին՝ Կերենսկու կաբինետում՝ **Արտաքին գործերի մինիստր**¹:

Պ. Ն. Միլյուկովն առաջիններից մեկն էր, որն արձագանքեց սուլթանական բռնապետության երկաթյա մագիլներում արյունաքամված արևմտահայությանը հուզող խնդիրներին: Իր խմբագրած հանդեսի էջերում, 1914 թ. դեկտեմբերի 5-ի համարում նա տպագրեց ծավալուն մի հոդված, որն ուներ **«Արևմտյան Հայաստանի ծակատագիրը»** վերտառությունը²:

Հոդվածի հեղինակն այս դեպքում ռուս հասարակական-քաղաքական գործիչ Պ. Ն. Միլյուկովն էր, որն ի մի բերելով խնդրի մասին հայտնված մտացրիվ կարծիքները՝ շարունակում էր.

«Այսպիսով, Տաճկական Հայաստանի ծակատագիրը քննելու վաղաժամության խնդիրն ինքն իրան վերանում է: Հայ գործիչների մասնակցությամբ արդեն այս խնդրի քննությունն սկսվել է փաստապես: Ապագա լուծումների հիմնական տարրերը հենց այժմ արդեն բավականաչափ պարզվում են: Ի հարկե ռազմաբեմներում կատարվող դեպքերի ընթացքն ու զինագիտական բանակցությունների ընթացքը միայն կարող է այս լուծումներն այս կամ այն վերջնական ուղղությունը տալ: Սակայն հենց այժմ, քանի դեռ բուն իսկ հայկական միջավայրում վերջնական կարծիք չե ձևակերպվել, տեղին և այսպիսի կարծիք մշակելու գործում մասնակցություն ունենալ՝ անձնական հայացքն անկեղծորեն արտահայտելու միջոցով:

Տաճկական Հայաստանի «ավտոնոմիա» թե «աննեկսիա», - այսպես է դրված խնդիրը հայ գործիչների վորոշ մասի համար: Մյուս մասն առարկում է, իսկ ինչո՞ւ չի չինի «ավտոնոմիա» ու «աննեկսիա»:

Այն ընթերցողի համար, վորը չի հետևել վեճին, անհրաժեշտ են ավելի մանրամասն պարզաբանություններ: Տաճկական Հայաստանի «ավտոնոմիա»-ն հասկացվում է իբրև դրություն ավտոնոմ մարզի՝ վորը իր գոյությունը պահպանում է Տաճկաստանի սահմաններում, բայց գտնվում է Ռուսաստանի «պրոտեկտորա-

¹ «Հայկական Սովետական Հանրագիտարան» (այսուհետև՝ ՀՍՀ), հատոր 7, Երևան, 1971, էջ 538:
² «Речь», 1914, 5-ը դեկտեմբերի: Հոդվածը հայերեն է թարգմանել ականավոր տնտեսագետ, պատմաբան, բանասեր **Թադևոս Ավդալբեգյանը** (1889-1937) և տպագրել է «Հայաստանի Ավտոնոմիան և Անտանտան» (Երևան, 1926, էջ 82-90) գրքույկի էջերում:

տի» տակ: **Ընդ սմին, մարզի կազմի մեջ մտցնում են վոչ միայն Մեծ Հայաստանը 7 վիլայեթներով, այլև այսպես կոչված Փոքր Հայաստանը, այսինքն Կիլիկիան կամ Ադանայի վիլայեթը մինչև Ալեքսանդրետտա, այն է՝ մինչև Միջերկրականի ծովափը: Այս հայացքի կողմնակիցները համոզված են, վոր ավտոնոմ Հայաստանի սահմանների խնդիրն այսպես ընդարձակ լուծելուն կը համաձայնեն մեր դաշնակիցներն էլ, պայմանով, վոր նորակազմ մարզի մեջ տաճկական գերիշխանությունը պահպանվի: Ինչ վերաբերվում է «աննեկսիա»-ին, այսինքն՝ Հայաստանը լիովին Տաճկաստանից բաժանելուն ու Ռուսաստանին կցելուն, ապա նույն հայ գործիչների համոզմունքով դաշնակիցներն այսպիսի լուծում կը թույլատրեն, յեթե միայն Հայաստանն ավելի նեղ սահմաններ ունենա - լինի առանց Փոքր-Հայաստանի ու առանց Միջերկրական ծովը յեթ ունենալու: Բացի սրանից՝ այսպիսի լուծումը Տաճկաստանի վերջնական բաժանումն է յենթադրում:**

Այս վեճից գլուխ հանելու ու սրա նկատմամբ վորոշ դիրք բռնելու համար անհրաժեշտ է ուշադրությամբ քննել այն մի շարք առանձին յենթադրություններն ու նախադրյալները, վորոնց վրա հիմնված են մատնանշած զույգ լուծումները¹:

Արևմտյան Հայաստանի ապագա ճակատագրի մասին մտահոգություն էր հայտնել նաև հայազգի ոմն **Ս. Աճեմովը**, որը զայրույթ էր առաջ բերել նույնիսկ ռուս մտավորականների շրջաններում: Նրա կարծիքով, քանի որ պատերազմից հետո **«Տաճկական պետությունը պետք է շարունակի ապրել»**, ուստի **«Նպատակահարմար կլինի, որ արևմտահայությունը մնա վերջինիս գերիշխանության ներքո»**²:

Ապագային այս անձնավորության հակահայ կոնցեպցիան քննադատության նշանախեց էր դարձրել հայրենամկեր հայ մտավորականության էլիտան, որի առաջնաշարքերումն էր **Ալեքսեյ Կարապետի Ջիվելեգովը (1875, Նոր Նախիջևան - 1952, Մոսկվա)**³:

Ա. Կ. Ջիվելեգովը հայազգի ականավոր պատմաբան էր, բանասեր, արվեստաբան, պատմական գիտ. դոկտոր-պրոֆեսոր, **ՀՍՄՀ ԳԱ թղթակից անդամ**:

Բովանդակ կյանքն անցկացնելով Ռուսաստանում, հատկապես մայրաքաղաք Մոսկվայում, նա ոչ արմատներով, ոչ էլ գործունեությամբ չկտրվեց Մայր Հայրենիքից, հայ ժողովրդի ազգային վիշտը համարեց անձնական ողբերգություն և իր գրիչն ու կյանքը նվիրաբերեց արևմտահայության փրկության գործին:

Բազում են տնտեսագիտական բնագավառին վերաբերող նրա խորաքննիչ հետազոտությունները, ահռելի թիվ են կազմում բազմաշխատ գիտնականի թարգմանությունները: **Գովեստի են արժանի հայոց պատմությանը վերաբերող** նրա գրքերը, գրքույկներն ու ծավալուն հոդվածները:

Ա. Կ. Ջիվելեգովի գրչին են պատկանում **«Ձեյթունի հերոսամարտերը»** (1899), **«Հայերը Ռուսաստանում»** (1906), **«Ձանաշիան և Հայկական հարցը»** (1901), **«Թուրքական Հայաստանի ապագան»** (1911), **«Հայերը»** (1912), **«Հայաստանը»** (1913), **«Հայ գրականությունը»** (1914) և բազմաթիվ ու բազմաբովանդակ այլ աշխատություններ:

Առանձնակի ուշադրության են արժանի գիտնական-քաղաքացու այն աշխատությունները, որոնք լույս աշխարհ եկան Առաջին աշխարհամարտի առաջին երկու տարիներին, և որոնք նվիրված էին արևմտահայության ապրած ողբերգության

¹ «Речь», 1914, 5-ը դեկտեմբերի: Տե՛ս նաև «Հայաստանի Ավտոնոմիան և Անտանտան», Երևան, 1926, էջ 82-83:
² Նույն տեղում, էջ 81:
³ Մանրամասն տե՛ս **Джон Киракосян, Алексей Дживелегов и его историко-публицистическое наследие**, Ереван, 2007.

պատմությանը, հատկապես պատերազմից հետո հայ ժողովրդի ապագայի վճռման խնդիրներին:

Ջիվելեգովի հայագիտական աշխատությունների զարդն են կազմում «Будущее Турецкой Армении», «Судьба Армении» վերնագրված ժավալուն հոդվածները, որոնք ոչ միայն քննարկում են ստեղծված իրավիճակն Արևմտյան Հայաստանում, այլև փորձում են ցույց տալ անտանելի այդ լաբիրինթոսից դուրս գալու երթուղիները¹:

1915-1916 թվականներին ռուսական մամուլի էջերը լեցուն են Ջիվելեգովի հոդվածներով, որոնց մասին Կ. Ն. Միլյուկովը գրում է. «Տաճկաստանում բնակվող առանձին ազգություններն ինքնուրույն ու անկախ գոյության իրենց ձգտումների իրականացումը պետք է գտնեն հենց պարտված Տաճկաստանում: Նույնպես վորոշակի արտահայտվում է Ա. Կ. Ջիվելեգովն էլ (հոդված «Деш» լրագրում, «Ավտոնոմ Հայաստանի տերրիտորիան» վերնագրով): «Ավտոնոմ Հայաստանի գաղափարը հենվում է յերկու հաստատուն յենթադրությունների վրա, առաջին՝ վոր Տաճկաստանը պետք է իր բախտը հանձնի հաղթողների վողորմածությանը, յերկրորդ՝ վոր, բարձր դիվանագիտական տեսակի նկատառումներով, հաղթող պետությունները Տաճկաստանի նկատմամբ լավագույն յելք կհամարեն վոչ թե սրա լիակատար ու վերջնական բաժանումը, այլ օսմանյան կայսրությունը շատ թուլացած ձևով պահպանելը, այնպիսի ձևով, վոր Արևելյան հարցն էլ չկարողանար ապագայում պղտորել միջազգային հարաբերությունները»: Այն ժամանակ, Ա. Կ. Ջիվելեգովի կարծիքով, «Տաճկաստանի տերրիտորիայի վրա պետք է ձգվեն, համենայն դեպս, յերեք նոր ավտոնոմ մարզեր – Արաբիան՝ Միջագետքով հանդերձ, Միրիան ու Հայաստանը: Առաջինը կը լինի Անգլիայի պրոտեկտորատի տակ, յերկրորդը՝ Նրանսիայի, յերրորդը՝ Ռուսաստանի»:

Այս բոլորը շատ հնարավոր է, սակայն յես չգիտեմ, թե ինչո՞ւ այս յենթադրություններն այնպես «հաստատուն» են արդեն: Համաձայն չեմ նաև Ա. Կ. Ջիվելեգովի այն նկատառումին, թե «թուլացրած ձևով» Տաճկաստանի պահպանումը վերջ կը դնե միջազգային դժվարություններին: Ընդհակառակը, յես կարծում եմ, վոր այս դժվարությունները կը շարունակվեն, և վոր նրանց կարող է վերջ դնել միայն այն, վոր Տաճկաստանը վերադառնա մինչև իր ազգագրական սահմանները, այսինքն՝ Տաճկաստանին մնա Փոքր-Ասիայի այն մասը միայն, ուր անպայման գերակշռող է տաճիկ բնակչությունը:

Հիշածս հայ գործիչները համաձայն չեն սրան: Նրանց ընթրնումով, Տաճկաստանի գոյությունն ու սուվերենիտետը կարծեք թե հարկավոր են այն բանի համար, վոր Հայաստանն ավտոնոմ լինի, իսկ Ռուսաստանին նրանք վերապահում են բավական անորոշ «պրոտեկտորատ» Հայաստանի նկատմամբ. «Биржевые ведомости» լրագրի անկետային արձագանքում յուր վերջին պատասխանի մեջ, Ա. Կ. Ջիվելեգովը մանրամասն գծում է Հայաստանի ավտոնոմ կազմության պատկերը: Ավտոնոմ նահանգի գլուխ է կանգնելու վոչ-տաճկահպատակ, քրիստոնյա գեներալ-նահանգապետը, «վորը պետք է, ըստ հնարավորության, բարձր ժազում ունեցող կամ բարձր պաշտոն զբաղող անձ լինի»: Նրան պետք է հանձնարարե Ռուսաստանը և պարտադրաբար հաստատե Տաճկաստանը: Գեներալ-նահանգապետին կից կազմվելու յե խորհուրդ՝ հայերից ու մուսուլմաններից, սկզբում հավասար թվով, իսկ հետո, յերբ պարզվեն տեղական պայմանները, բնակչության թվական կազմի համեմատ: Գեներալ-նա-

¹ Տե՛ս *Давид Кеменов*, նշված աշխատությունը, էջ 113-135: Տե՛ս նաև «Հայաստանը և Անտանտան» վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից, *Արտո Հովհաննիսյանի* առաջաբանով, Երևան, 1928, էջ 83-85:

հանգապետը պետք է պատասխանատու լինի այս խորհրդի առաջ: Սրանք են հայկական մարզի այս կազմության հիմնական գծերը՝ ըստ Ջիվելեգովի: *Ս. Գ. Մամիկոնյանը, նախագահը Մոսկվայի հայոց Կոմիտեյի, վորի անդամն է Ջիվելեգովը, պատկերը լրացնում է մի պատմական համեմատությամբ. «պատմության մեջ յեղել են այսպիսի որինակներ: Որինակ, Մոլդավ-Վալախիան, այժմյան Ռումինիան, 50 տարի առաջ յեղել է Տաճկական Սուլթանի իշխանության ներքո, բայց Ռուսաստանի պրոտեկտորատի տակ»:* Նույն Կոմիտեյի քարտուղար Կ. Բ. Կուսիկյանն ավելացնում է, վոր տաճկական Հայաստանը «քաղաքական անկախ գոյության իրավունք ունի» և վոր «Տաճկական Հայաստանի ներքին կազմությունը տաճկահայերի իրանց գործն է... Յերբ պատերազմը կվերջանա, հարկ կլինի հենց իրենց, տաճկահայերի ցանկություններն ու կարծիքներն իմանալու և ժողովրդի կամքի համաձայն՝ կերտելու նրա կյանքը»:

(Յերբ այս հոդվածը գրված էր արդեն, սրանից հետո Ա. Կ. Ջիվելեգովը «Деш» թերթում տպագրեց Տաճկական Հայաստանի յենթադրյալ ներքին կազմության ավելի մանրամասն նկարագրությունը):

Պ. Ն. Միլյուկովն ու Ա. Կ. Ջիվելեգովը դեռևս 1916 թվականին քննարկում էին նաև պատերազմից հետո թուրքական լծից ազատագրված Հայաստանի՝ դեպի Եվրոպա Տրապիզոնի վրայով Սև ծով ելք ունենալու խնդիրը: Նա բերում է. «Հայ գործիչները պնդում են Միջերկրական ծովում յելք ունենալու վրա՝ այս համարելով Ռուսաստանի համար մեծ առավելություն, վորը ինք ըստ ինքյան պետք է հակե ռուս դիվանագետներին խնդրի այն լուծման կողմը, վորը ցանկալի յե հայերի համար: Գ. Թ. Տիգրանովը նույնիսկ ակնարկում է, վոր Միջերկրական ծովում յելք ունենալը մեզ համար «առանձնապես կարևոր է, յեթե նեղուցները մեր ձեռքը չտրվեն», ընդ սմին ավելացնելով, վոր Հայաստանը Ռուսաստանի համար կծառայի «իբրև մի տեսակ բուֆեր՝ Միջերկրական ծովի կողմից»: Ահա մի տարրիմակ թեգիս. վորի առավելությունը չեմ կարողանում ընթրնել, դեռ չխոսելով այն մասին, վոր նեղուցների փոխարեն Ալեքսանդրետտայով սահմանափակվելու հնարավորության միտքն անգամ ինձ անպայման անթույլատրելի յե թվում: Սակայն Ալեքսանդրետտան մեր կողմից գրավելու կողմնակիցների մեծամասնությունն անտես է առնում նեղուցների խնդիրը և Կիլիկիայի հարցը վճռում է նեղուցների խնդրից անկախ: Մենք էլ պետք է այս խնդիրը լուծենք այն յենթադրությունը նկատի ունենալով, թե կարող է պատահել, վոր հնարավոր լինի բացի նեղուցներից՝ տիրանալու նաև Միջերկրական ծովը հանող յելքին: Այսպիսի հնարավորության իրականացումը ցանկալի է»²:

Ծրագիր-հոդվածում Տրապիզոնից բացի քննարկվում էին նաև Հայկական Կիլիկիան ամփոփող չորս նահանգները Ռուսաստանի գերիշխանությանը հանձնելու «բարդ ու կնճռոտ խնդիրները»:

Նա գրում է. «Ակնհայտ է, վոր հայերին ձեռնտու յե հայ մեծամասնություն ունեցող այս տերրիտորիաները զատելով՝ հատուկ մարզ կազմել: Այսպես է նայում խնդրին նաև Ա. Կ. Ջիվելեգովը, վորն առաջարկում է ավտոնոմ Հայաստանի տերրիտորիան վորոշելիս՝ սրանից կտրել, անջատել վիլայեթների զուտ տաճկական այն մասերը, վորոնք մատնանշված են մեր քարտեզում: Սակայն նա մյուս կողմից լրացնում է ավտոնոմ Հայաստանի տերրիտորիան – ավելացնելով նախ՝ Տրապիզոնի վիլայեթը, բացի սրա արևմտյան մասից, ու յերկրորդ՝ Ադանայի վիլայեթը, այսինքն՝ այսպես կոչված Փոքր-Հայաստանը՝ կցելով հյուսիսային մի նեղ շերտ Հալեբի վիլայեթից (Այնթապ, Սարաշ, Քիլիս, Ուրֆա):

¹ «Հայաստանի Ավտոնոմիան Յեվ Անտանտան», էջ 83-84:

² Նույն տեղում, էջ 86:

Ինչ վերաբերում է Տրապիզոնի վիլայեթին, վորը տաճկական Հայաստանին հնարավորություն է տալիս յեւք ունենալու դեպի Սև ծովը, ապա այստեղ աշխարհագրական սկզբունքն անկասկած պետք է գերակշռե ազգագրական սկզբունքին: Անկարելի յե ծովափնյա նեղ շերտը թողնել մի այլ տիրապետության տակ, քան նրա, վորի ձեռքում է գտնվում հայկական Hinterland-ը: Այս միացման բնականությունն ընդգծում էյին հենց իրենք, տաճիկները, վորոնց առաջարկով Տրապիզոնի վիլայեթը կցվեց մնացած վեց վիլայեթներին՝ կազմելով սրանց հետ մի մարզ, վորը 1914 թվի, հունվարի 26-ի ռուս-տաճկական արձանագրության համաձայն՝ պետք է ինքնավարություն ստանար:

Բոլորովին այլ է Կիլիկիան ու Հալեթի վիլայեթի հյուսիսային մասը կցելու խնդիրը: Այս հենց այն մասն է, վորը հայ գործիչների տեղեկությունների համաձայն՝ մեր դաշնակիցները վոչ մի կերպ չէյին համաձայնիլ թողնելու Ռուսաստանի անմիջական տիրապետության տակ, և վորի համար նախագծվում է, թե այնտեղ պետք է պահպանվի Տաճկաստանի գերիշխանությունը»¹:

Պ. Ն. Միլյուկով քաղաքական գործիչն ու կայսերապաշտ դիվանագետն ընդհանրացնելով 1916 թվականին տիրապետող տեսակետներն ապագա Հայաստանի սահմանների կարգավիճակի մասին, գրում է . «Կասկածից դուրս է համենայն դեպս, թե տաճկական կախումից լիովին ազատագրվելն է միայն ապահովում այն բանը, վոր հայերը մեծագույն չափով մոտենան իրենց ամենավիրական ցանկությունների իրականացմանը, այսինքն՝ հայ ժողովրդի յերկու մասերի միացմանը՝ մեկ պետական հարկի տակ: Այսպիսի միացման համար բարենպաստ հանդիսացող պայմաններ հազվադեպ են ստեղծվում, իսկ կրկնվում են ավելի քիչ անգամ: Իսկ մի անգամ, վոր այսպիսի պայմաններ կան արդեն, սրանցից անհրաժեշտ է ոգտվել՝ լուծելու համար ազգային խնդիրներից ամենադժվարինը, այն է՝ ազգային միավորությունը:

Պ. Միլյուկով»²:
Այս ծրագրին կողմ չէին հայ մտավորականները, հասարակական-քաղաքական որոշ գործիչները, այդ թվում և բոլշևիկները: Վերջիններս այն անվանում էին «անբարի», հետևաբար և՛ ռուսական կայսրության ուժեղացում: Աստիճանաբար հասունանում էր այդ հին բեռի թոթափման և ազատ, անկախ, միացյալ Հայաստան տերության ստեղծման առաջարկի շրջանառության մեջ դնելու անհրաժեշտությունը:

2. Էջեր Ջեմալ Ահմեդ փաշայի կենսագործունեության պատմությունից

Խորհրդային, առավել ևս խորհրդահայ պատմագրության ձևավորման ակունքներից ծայր առած սկզբնավորվել է թյուրքմոնեղի մի վարկած, որի համաձայն, իբրև թե Ջեմալ Ահմեդ փաշան ոչ միայն հիմնավորապես զանազանվել է երիտթուրքերի կուսակցության մյուս անդամներից, այլև նույնիսկ ջանքեր է թափել դրական դեր կատարել ցեղասպանության ժամանակ զոհված հայ ժողովրդի ծակատագրում:

Սխալ ու վտանգավոր այդ հայեցակարգը պատմության էջերից մաքրաջերելու, դրա առաջացման պատճառները հիմնավորապես ցույց տալու ակնկալիքներով մենք փորձում ենք ներկայացնել ժշմարտացի իրողությունը, մնացածը թողնելով անկողմնակալ ընթերցողի գիտական ու մարդկային խղճին:

¹ «Հայաստանի Ավտոնոմիան Ցեվ Անտանտան», էջ 97:
² Նույն տեղում, էջ 90:

Ջեմալ Ահմեդ փաշան (1872-1922) երիտթուրքական կուսակցության երրորդ դեմքն էր և Մեհմեդ Թալեաթի գլխավորած կառավարության կազմում զբաղեցնում էր **ռազմածովային մինիստրի** աթոռը: Ցեղասպանությունը ծրագրող և իրականացնող եռյակի անդամներ՝ Թալեաթի և Էնվերի հետ **միակամ**, նա ստորագրել ու «կյանքի էր կոչել» բոլոր այն իրահանգները, իրամանագրերը, որոնք վերաբերում էին **հայ, հույն, ասորի, եզդի, հատկապես արաբ** ժողովուրդների ապրած ազգային մեծ ողբերգությանը:

Ջեմալ Ահմեդը, ծնվելով մայրաքաղաքում (1872 թ.), նախնական կրթությունը ստացել էր ծննդավայրի ֆրանսիապատկան **մասոնական-միսիոներական** քոլեջում, ապա մեկնել էր Փարիզ, որտեղ դասախոսություններ էր լսել մի քանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Նրան սկզբնապես հետաքրքրում էր ռազմածովային գործը՝ **մղվելով դեպի զինվորական ծառայությունը**:

Ֆրանսիայի մայրաքաղաքում Ջեմալ Ահմեդը ծանոթացավ հայ այն ուսանողների հետ, որոնք սովորում էին **Սորբոնի** և այլ համալսարաններում:

Այստեղ էր, որ ուսանող Ջեմալը մշտական հանդիպումներ ունեցավ **Գր. Չոհրապի, Սիամանթոյի, Ռուբեն Սևակի, Երուխանի և հայ այն ուսանողների հետ**, որոնք մտերմանալով՝ միակամ որոշեցին կայսրություն վերադառնալիս անզիջում պայքար մղել համիդյան բռնապետության դեմ, հնարավոր և անհնարին ամեն բանն անել՝ այն հիմնավորապես տապալելու:

Ջեմալն հավատարիմ մնաց իր խոստմանը, այսինքն՝ երիտթուրքական հեղաշրջման պահին նա գլխավորեց Սալոնիկի զինվորական վարժարանի հակահամիդյան ցույցը, իսկ քիչ անց դարձավ իթթիհատական կուսակցության գաղտնագրված անդամներից մեկը¹:

Թուրքիայում կատարված կիսատ-պռատ հեղաշրջումից հետո Ջեմալ Ահմեդը նշանակվեց **Ադանայի վիլայեթի** զինվորական կոմիսար, որտեղ և նրա ձեռքերը կարմրեցին (1909 թ.) **կիլիկիահայության թափած ծով արյան մեջ**:

Երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ **Մուլան Չաղե Րիֆաթը**, որն ականատեսն ու մասնակիցն էր Թուրքիայում կատարված դեպքերին (1908-1923 թթ.), պատմում է **Ահմեդ Ջեմալի և Գրիգոր Չոհրապի մտերմության մասին** զավեշտական մի փաստ: Նա գրում է. «Պոլսոյ երեսփոխան Չոհրապ էֆենտի, տակալին Սկիւտարի կառավարիչ եւ Իթթիհատ-Թերագզի հիմնադիրներէն ճեմալի հետ մտերիմ բարեկամ էր: Ճեմալ իր պատկանած կուսակցութեան իրահանգով Չոհրապէն խնդրած էր, որ իրեն Ատանայի կուսակալութեան թեկնածութեան ներկայացման համար Դաշնակցութեան մօտ բարեխօսէ եւ այս կերպով Դաշնակցութեան համատուրիւնը ապահովելով ճեմալ Ատանայի կուսակալ նշանակուած էր:

Ճեմալին Ատանայի կուսակալութեան նշանակումը երեւութապես այսպես կատարուած եւ սակայն իրականին մէջ անոր նշանակումը Իթթիհատ եւ Թերագզի կողմէ որոշուած էր, եւ միայն Դաշնակցութիւնը զոհ ձգելու եւ ընդդիմադիրներու հետ անոնց յարաբերութիւնը խզելու համար խաղցուած խաղ մըն էր, մէկ քարով երկու թռչուն զարնուած էր»²:

Գր. Չոհրապ – Ահմեդ Ջեմալ փարիզյան ուսանողական «բարեկամության» շարունակությունն էր այս, ասել է թե՛ հայ մտավորականության կատարած ճակատա-

¹ Ջեմալի կենսագրության մասին տե՛ս **Александр Сваранц**, Панторкизм в геостратегии Турции на Кавказе, Москва, 2002, стр. 578. Տե՛ս նաև **Дж. С. Киракосян**, Младотурки перед судом истории, Ереван, 1986, стр. 112, 428:

² **Մուլան Չաղե Րիֆաթ**, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը եւ Իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Երևան, 1990, էջ 111:

գրական սխալներից մեկը, որի «առաջին պտուղները քաղեց» ադանահայու-թյունը՝ տալով երեսուն հազարի հասնող մարդկային զոհեր:

Ջեմալը կազմակերպեց, ապա իրականացրեց Ադանայի հայերի կոտորածը, հետո էլ փորձեց ոչ միայն խնամքով թաքցնել կատարվածը, այլև դեպքերի ամբողջ մեղքը բարոյեց Մուշեղ Եպիսկոպոս Սերոբյանի ուսերին: 1922 թ. անգլերենով լույս տեսան Ջեմալ փաշայի հուշերը, որոնք 1923 թ. ռուսերեն թարգմանվեցին և «լույս աշխարհի բերվեցին» Թիֆլիսում, այն էլ Անդրերկրյանի հրատարակչության մակ-նիշով:

Խայտառակության հասնող կեղծարարությամբ լիքը Ահմեդ Ջեմալի *Յուշերում* գետեղված է մի բաժին, որը վերնագրված է *“Армянский вопрос, исторический обзор”*: Հոդվածի երկրորդ մասը կոչվում է. *“Аданские события и позднейший период”*: Հոդվածն ամբողջությամբ, Ադանայի դեպքերին նվիրված հատվածը՝ հատկապես ժամանակին զայրույթի ալիք բարձրացրեց ոչ միայն հայ մտավորա-կանների, այլև դեռևս բանականությունը չկորցրած հատուկներ թուրք ժամանակա-կիցների շրջանում:

Ջեմալ Ահմեդի խզրզանքից չափազանց դժգոհ է մնացել Մելան Ջադե Բիֆաթը, որը թարգմանաբար մեջբերել է Ադանային վերաբերող շարադրանքից մի հատված: Կրկնենք Մելան Ջադեի թարգմանությունը.

«Ճեմալ փաշա 1922ին հրատարակած իր յուշերուն մէջ Ատանայի կոտորածին մասին հետեւեալը կը գրէ. –

«Պոլսոյ 31 Մարտի դէպքի ընթացքին թուրքերու եւ հայերու միջեւ մեծ կոտորած սկսած էր:

«1909ի Օգոստոսի կէտերուն, Ատանայի Կուսակալ նշանակուած ըլլալուս, Օսմանեան Սահմանադրութեան ամենասեւ էջը եղող այս կոտորածին պատճառները մանրամասնօրէն քննող ինձմէ գատ ոեւէ մէկը չէ գտնուած»:

Ճեմալ փաշա այս նախաբանէն վերջ, կ'ըսէ.

«Ատանայի նահանգին բնակչութեան մեծամասնութիւնը թուրքերէ կը բաղ-կանայ: Ասոնցմէ վերջ՝ հայերը եւ աւելի վերջն ալ՝ արաբ ուշադը կոչուած արաբներ եւ յոյներ: Նահանգին ընդի. բնակչութեան թիւը 550,000ը անց է: Ասոր մօտաւորապէս 60 հազարը հայ, 20-25 հազարը արաբ ուշադը, 10-15 հազարը յոյներ եւ մնացեալը թուրքեր են:

«Գրեթէ բոլորն ալ երկրագործներէ բաղկացած, անոնց մէջ դարերէ ի վեր սէր եւ համերաշխութիւն կը տիրէր:

«Անհերքելի ճշմարտութիւն է, որ Ատանայի նահանգը օսմանցիներէ շատ առաջ թուրք էր, թէւ Կիլիկիա կոչուած այս հողամասին մէջ խաչակրութեան ժամանակ հայկական իշխանութեան մը գտնուիլը պատմութիւնը կ'արձանագրէ, սակայն այն ժամանակ այս մասին մէջ շատ մը թուրքեր կը բնակէին եւ ասոնց աւատապետները այս իշխանութեան հանգիստ չէին տար:

«Ներկայիս Ատանայի նահանգին մէջ բնակող հայերու շատերը հարստանալու նպատակով 19րդ դարու ընթացքին Տիգրանակերտէն, Սեբաստիայէն եւ Խարբերդէն գաղթողներ են:

«Բուն տեղացի հայերը, նահանգին Հիւսիսային սահմանին մէջ գտնուող Հաճնոյ գաւառակին, Գոզանի գաւառակին կեդրոնը եղող Սոյ եւ անոր քանի մը գիւղերուն

եւ Իսկէնտրուհի ժոցին եզերքը գտնուող Տօրթ Եօլի եւ անոր մօտ քանի մը գիւղե-րու բնակիչներն են:

«Արաբ ուշադներն ալ Ապտիւ Ազիզի գահակալութեան ժամանակ Լաթաքիայէն գաղթածներ են:

«Նահանգին հայ եւ թուրք բնակչութիւնը վերեւ յիշուածին պէս իրարու հանդէպ վստահութեամբ եւ առանց տարակարծութեան կ'ապրէին:

«Այն աստիճան, որ 1894-1896ի յեղափոխութեան եւ կոտորածներու ժամանակ, Ատանայի նահանգին մէջ ոչ մէկ դէպք պատահած է, եւ այս խառնակութիւններէն իրենց նահանգին չազդուելուն համար հայ-թուրք միասին աշխատած եւ յաջողու-թիւններ արձանագրած էին:

«Սահմանադրութեան հռչակումէն ետք Ատանայի մէջ կազմուած թուրք յեղափո-խական կուսակցութիւններու դէմ հայերն ալ Դաշնակցական, Հնչակեան եւ վերա-կազմեալ Հնչակեան կուսակցութիւններու մասնաճիւղեր բացած, աւելի ճիշդը հիմէն գործող գաղտնի կազմակերպութիւնները երեսան հանած էին:

«Այն ժամանակ Ատանայի Առաջնորդը՝ Մուշեղ Էֆէնտի անունով փառասէր եւ երի-տասարդ եկեղեցակաճն էր:

«Մուշեղ Եպիսկոպոս Սահմանադրութեան հռչակման վաղորդայնին ինքզին-քը Ատանայի հայոց քաղաքական եւ կրօնական ամենամեծ պետը կը նկատէր:

«Կառավարութեան պաշտօնեաներուն ապիկարութիւնէն օգտուելով՝ օր մը Նահանգային Վարչական ժողովին մէջ կուսակալին հանդէպ խիստ անարգա-կան դիրք բռնած եւ անմիջապէս երթալով ոստիկան-գօրաց հրամանատարը ապտակել ուզելը յայտարարելով, ժողովը կէս ձգած ըլլալը ինձի պատմեցին:

«Նոյնպէս հայերը ինձի պատմեցին, թէ այդ ժամանակ շատ մը հայ երիտասարդներ Մուշեղ Եպիսկոպոսին գօրափոխ եղած են: Հոս հոն գումարուած միթիւններուն յանդգ-նած է յայտարարել, որ հայերուն թուրք լուծէն ազատագրուելու ժամանակը ուշ չէ:

«Մուշեղ Եպիսկոպոս ասով ալ չի գոհանալով, իր մարդիկը զինելու համար Եւրո-պայէն զէնք բերել տալ սկսած էր. այն ժամանակ կառավարութիւնը ինչպէս ամէն բան, զէնքի ներածումն ալ ազատ ձգած էր:

«Մուշեղ Եպիսկոպոս բացէ ի բաց կը յայտարարէր, թէ հայերը զինուած ըլլալուն այլեւս 1894ի կոտորածներուն նման դէպքերէն պիտի չվախնան եւ եթէ հայու մը մա-զին դպչին՝ փոխարէնը տասը թուրք պիտի սպաննուի:

«Մուշեղ Եպիսկոպոսի այս շփացածի յայտարարութիւնները Ատանայի թուրքե-րուն փոխադարձ միջոցառումներու դիմելուն պատճառ դարձած էր:

«Ատանայի կառավարութեան ամենամեծ պատասխանատուութիւնը հոս կը սկսի. անոր տկարութիւնը եւ ապիկարութիւնը չի կրնար զայն արդարացնել: Մուշեղ Եպիս-կոպոսին այս յորդումը իսլամ ժողովուրդին մտահոգութիւն պատճառելուն՝ Մուշեղ Եպիսկոպոսն ալ, անոր ուժ տուողներն ալ, թուրքերէն խառնակութիւն հանելու ձգ-տող անձերն ալ ձերբակալել, բանտարկել եւ դատարան յանձնել եւ ի հարկին պա-տերազմական վիճակ յայտարարել ամենէն յարմար միջոցն էր:

«Այն ժամանակ Ատանայի կուսակալը ճեւատ պէյ, թէւ բարոյականի տէր, սակայն վարչականօրէն անկարող ըլլալուն՝ կուսակալութիւնը վարելու պայմաննե-րը չէր ներկայացնէր:

«Զօրաբանակի հրամանատարն էր Մուսթաֆա Բեմզի փաշա անունով ծեր զի-նուորական մը: Երիտասարդութեան համբաւ շահած այս հին զինուորը ամբողջ իր կեանքը պատուով եւ հայրենասիրութեամբ անցուցած եւ սակայն ծերացած ըլլա-լուն՝ կարգապահութեան պաշտօնը վարելու անկարող էր:

«Ճեպէլ Պէրէթթի գաւառակին կառավարիչն էր Արիֆ պէյ. այս մարդը շուքէն վախ-ցող ըլլալուն, չեմ կրնար հասկնալ, թէ ինչո՞ւ կառավարիչ նշանակած էին:

¹ "Записки Джемал-пашы 1913-1919 гг.", перевод с английского В. Т. Руденко, с предисловием Сим Такоева, Тифлис, 1923.
² Նոյն տեղում, էջ 210-239:

«1909 տարուան սկիզբը, ամեն ոք կը խօսէր, թէ ի մօտոյ հայերը յեղափոխութիւն պիտի հանեն եւ թուրքերը բնաջնջեն եւ այս առիթով այս նահանգը եւրոպական տորմիդին կողմէ գրաւուելով Հայաստան մը պիտի ստեղծուի:

«Թուրքերը այս տարածայնութեան այնչափ հաւատք ընծայած էին, որ երեւելիներէն շատեր իրենց ընտանիքները ապահով վայրեր դրկել կը խորհէին:

«1909ի Ապրիլին կողմերու միջեւ լարուածութիւնը այնչափ սաստկացած էր, որ ժամ ժամ ժողովուրդին իրարու վրայ յարձակելու լուրին կը սպասուէր:

«Վերջապէս Ապրիլ 14ին Մուշեղ Եպիսկոպոսի հրամանով առաջին անգամ հայերու կողմէ սկսած յարձակումը «Ատանայի դէպքը» յառաջացուցած էր:

«Ատանայի, Տարսոնի, Համիտիէի, Էրզնի, Տօրթ Եօլի, Ազիզի, Վերջապէս հայերու բնակած վայրերու մէջ այնպիսի սահմանափակ կոտորածներ կատարուեցան, որոնց նկարագրութիւնը կարողաւ անգամ մարդ կը շշմեցնէ:

«Ահաւասիկ Ատանայի առաջին դէպքին պատճառները ասոնք են: Երկրորդ դէպքը, որ առաջինէն 10 օր ետք տեղի ունեցած է միայն Ատանա քաղաքին մէջ կատարուած էր, գիշերանց հայ երիտասարդներուն զինուորական կեդրոնին վրայ կրակ բանալով սկսած է աւելի ծայրահեղ եղած է:

«Իմ համոզումովս Ատանայի կոտորածին միակ պատասխանատուն *Les vèpres ciliciennes*ի հեղինակ Մուշեղ Եպիսկոպոսն է: Անոր հետապնդած նպատակները ըմբռնելով հանդերձ հարկ եղած միջոցները ձեռք չառնող այդ ժամանակուան Ատանայի կառավարութիւնն ալ նոյնպէս, ըստ իս, պատասխանատու է:

«Ատանայի դէպքին 17 հազար հայ եւ 1850 իսլամ սպանուած է. այս թիւերը ցոյց կու տան, որ եթէ Ատանայի հայերը մեծամասնութիւն ըլլային, հակառակը պիտի պատահէր եւ հայերը թուրքերը սպաննած պիտի ըլլային: Ջարդի ընթացքին երկու կողմերու ցոյց տուած «քաջութիւնները» հաւասար էին:

«Մանտելչքայն իր գիրքին 205րդ էջին մէջ որչափ որ իր հակաթուրք հրատարակութիւններով ծանօթ Ատոսիտէս անուն յոյնին երկին յենելով գրած է, թէ Ատանայի անարժէքներէն միայն 9 հոգի կախաղան հանուած են, սակայն թէ Ատոսիտէս եւ թէ Մանտելչքայն կը ստեն: Ատանա ժամանելէ չորս ամիս ետք միայն, Ատանա քաղաքին մէջ պատերազմական ատենի դատապարտուածներէն 30' եւ երկու օր ետքն ալ Էրզն գաւառակի մէջ 17 իսլամներ կախաղան հանել տուի: Ասոնց հետ միայն մէկ հայ: Կախաղան հանուածներուն մէջ Ատանայի ամենահին եւ հարուստ ընտանիքներուն պատկանող երիտասարդներ եւ Պաղչէ գաւառակին միւֆթին ալ կային:

«Այս միւֆթին շրջանի թուիքերուն մօտ մեծ հեղինակութիւն ունէր: Շատ կը ցաւիմ որ դէպքին երկրորդ օրը օտար նաւով մը Աղեքսանդրիա փախչող Մուշեղ Եպիսկոպոսը չկրցայ ձեռք անցնել: Եթէ պատերազմական ատենի կողմէ ի բացակայութեան մահուան դատապարտուած այս անձը ձեռք անցնէի, զինք Պաղչէի Միւֆթինն դիմաց կախաղան հանել կու տայի»²:

Ատանայի ջարդը իր բոլոր մանրամասնութիւններովը եւրոպական թերթերու մէջ արծազանգ գտած եւ Իթքիատ եւ Թերագզըի դէմ գրուած աննպաստ հրատարակութիւնները, սոյն կուսակցութեան ղեկավարներուն վախ ազդած ըլլալով, սկսած էին տարածայնել, թէ այս յետադիմական շարժումը ընդդիմադիրներու կողմէ կազմակերպուած է: Հայ կուսակցութիւններն ալ սիրաշահելով կրկին իրենց կողմը գրաւել խոր-

հող Իթքիատ եւ Թերագզըի ղեկավարները, նոյնիսկ Դաշնակցական կուսակցութեան խնդրած էին, որ յետ այսու Ատանայի կուսակալ նշանակուելիք անձերը իրենք ներկայացնեն:

Դաշնակները, Իթքիատը եւ Թերագզըի խռովարարներուն այս առաջարկը առանձնաշնորհում նկատելով գոհ մնացած, բառին բուն նշանակութեամբ խաբուած էին, նոյնիսկ «նշանաւոր» ճեմալին Ատանայի կուսակալութեան նշանակումը իրենց առաջարկով կատարուած ըլլալը յայտարարելէ եւ պարծենալէ չէին քաշուած: Դաշնակ թերթերը ամիսներով այս խնդիրը յեղեղած էին»¹:

Ջեմալ փաշայի կեղծարարութիւնը նույնիսկ անդուրեկան է թվացել որոշ թուրք մտավորականների, որոնք ժամանակին քննադատության նշանախեց են դարձրել այն: Միայն Ադանայի դեպքերին նրա բերած մասնակցությունը բավարար է, որպէսզի ցույց տրվեր նրա հայասպան գործունեությունը:

Ադանայում կատարածը «*բարձրացրեց թուրքի հեղինակությունը*» «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարության աչքում: Կարճ ժամանակ անց նա ընտրվեց այդ կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, իսկ 1911 թվականին գումարված *Սալոնիկի* համագումարից փոքր անց նշանակվեց *Բաղդադի վիլայեթի* վալի (նահանգապետ):

Բալկանյան պատերազմի ժամանակ Ջեմալը դիվիզիայի հրամատար էր, ապա նշանակվեց *Ստամբուլի* նահանգապետ, հասարակական աշխատանքների միմիստր: Փաշայի տիտղոս ստանալով՝ երիտթուրք այդ գործիչը դարձել էր կուսակցության «չտապ օգնությունը» և որտեղ բարդ խնդիրներ էին առաջանում, նրան ուղարկում էին այնտեղ՝ հարցերը լուծելու:

Թուրքահայատակ քրիստոնյա ազգերի, հատկապէս հայ ժողովրդի ցեղասպանության իրականացման գործում *Ջեմալ Ահմեդը* «առաջնության դափնին» գրեթե ոչ մի թուրքի չէր գիջում: Այդ պրոցեսի համար նա «*մասնագիտական գաղափարական, քաղաքական ու ռազմական պատրաստություն էր ստացել*»: Քրիստոնյա հպատակ ազգերի, հատկապէս հայ քաղաքական կուսակցությունների զորակցությամբ իշխանության գալու առաջին իսկ ամիսներից, նույնիսկ առաջին իսկ շաբաթներից «Միություն և առաջադիմություն» կուսակցության պանթուրքիստական ղեկավարները մտահոգված էին թուրանիզմի հաղթարշավով, գործում էին *մեկ ազգ, մեկ պետություն* կարգախոսով: Ցեղասպանությունը ծրագրվում էր նրանց գաղտնախոսությունների ժամանակ և մտահոգությունը մեծ էր այդ «*համարձակ ծրագիրը*» իրողության վերածելու պատճառով:

Երկրում *կուսակցական դիկտատուրա* հաստատած երիտթուրքական *քառյակը* (*Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, Նազըմ*), հետագոտելով Թուրքիայի պատմության հեռավոր և մոտավոր անցյալը, գերադասեց *ենիչերիներ-համիդիներ* զորախմբերի նմանությամբ ձևավորել զինվորական մի նոր կառույց, որի ձեռքերով կարողանար ոչնչացնել մի ամբողջ ժողովուրդ:

Այդ կառույցը *Թեջրիլաթի մախսուսեն* (*Հատուկ կազմակերպություն*) էր, որի հետ էին կապված հայ ժողովրդի ցեղասպանության իրականացման ամբողջ հույսերը²: Թուրք պատմաբան *Սուլատ Պարլարն* ուղղակի նշում է, որ . «*Բռնագաղթեց-*

¹ Սոյն թիւը չի համապատասխաներ իրականութեան, կախտողներն են 10 հոգի. *Սուհամմետ էֆ.ի Պաղտատ Օղլու* եւ եղբայրը՝ *Իսմայիլ էֆ.ի* ու իրենց երկու փեսաները եւ վեց հայեր:

² Սոյն յուշերուն հրատարակումով ճեմալ փաշա ուզած է Ատանայի դէպքին պատասխանատուութիւնը հայերուն, մասնաւորապէս *Մուշեղ Եպիսկոպոսին վերագրել*, սակայն ներկայ գրքոյկին հեղինակն իսկ կ'ընդդուի եւ կը փաստէ, թէ այս եւ ուրիշ կոտորածներ՝ Իթքիատ եւ Թերագզըի կողմէ նախապէս որոշուած եւ գործարկուած են:

¹ *Սուլան Ջատե Բիֆաթ*, նշված աշխատությունը, էջ 108-111: Տե՛ս նաև «Заниски Джемал-паша 1913-1919 гг.», Тифлис, 1923, стр. 210-217:

² Թեջրիլաթի մախսուսեի մասին ստեղծվել է ծավալուն գրականություն, հրապարակվել են բազմաթիվ ու նորահայտ վավերագրեր: Թվարկենք դրանցից մի քանիսը՝ կարևորները, որոնք օգտագործել ենք այս գլուխը շարադրելիս: *Արամ Անտոնեան*, Մեծ ոճիրը, Պոսթըն, 1921, էջ 276-304 (թուրքական վավերագրեր): *Գրիկեր*, Եղզատի հայասպանության վավերագրական պատմությունը, Նիւ Եորք, 1980, էջ 215-263 (գլուխ ԺԳ, երկու տեսակ Թեջրիլաթի մախսուսեն): *Հայկազն Գ. Ղազարեան*,

ման մասին օրենքի իրականացման պարտականությունը դրված էր *Teskilate-i Mahsusa* կազմակերպության վրա, որն այդ պահին գլխավորում էր Անատոլիայի թուրքացման գործընթացը¹: Նրան լրացնում է մեկ այլ թուրք պատմաբան, *Թամեր Ալչամը*, գրելով. «Անատոլիայի ոչ թուրք ժողովուրդների ոչնչացման կարևոր կետերից մեկի կենսագործելու պարտականությունը դրված էր *Teskilate-i Mahsusa* վրա, որը գործում էր Արևելյան Անատոլիայում»²: Թուրքերի նման ուղղակի խոստովանությունը, իրենց մեղքն իրենց վիզը վերցնելու պարագան հայ պատմաբաններին հարկադրում է քիչ ավելի հանգամանորեն բացահայտել հայասպան վերոհիշյալ կազմակերպության գործունեության թեկուզև մանրամասները:

Անշուշտ, անհետաքրքիր չէ, թե երբ է ձևավորվել այդ կազմակերպությունը և ինչու հատկապես այդ թվականին: Թուրքական սկզբնաղբյուրներում բազմաթիվ վավերագրեր են պահպանվել «Միություն և առաջադիմություն» կուսակցության գաղտնի գործունեության մասին, հատկապես 1909-1911 թվականներին: Արսեն Ավազյանը, հենվելով վերոհիշյալ փաստերի վրա, ցույց է տվել, որ 1909-1912 թվականներին, ապա նաև բալկանյան պատերազմների ժամանակ օսմանյան ռազմաճակատում գործել է մարդաշատ մի կազմակերպություն, որն իբրև ծխածածկույթ իր վրա է վերցրել «Ֆիդայիների կազմակերպություն» անվանումը³:

Այդ կազմակերպության մեջ սկզբում մտնում էին միայն այնպիսի զինվորականներ, որոնք պատրաստ էին «իրենց կյանքը զոհել»⁴ Իթքիհատի որոշումների կենսագործմանը, առավել ևս ահաբեկչության ենթարկելու կուսակցության Կենտրոնական կոմիտեի որոշումներին հակադրվող անձնավորություններին՝ որ ազգությանն էլ պատկանելիս լինեին նրանք: Այսպես, օրինակ, Իթքիհատի ԿԿ-ի 1909-1911 թթ. որոշումներով «Ֆիդայիները» կազմակերպեցին թուրք երեք ընդդիմադիր թերթերի խմբագիրներ *Չասան Ֆեհմի բեյի*, *Ահմեդ Սամիմ բեյի* և *Չեքքի բեյի* ահաբեկչական սպանությունը: Հայկական աղբյուրները վկայում են նաև, որ 1909 թ. Ադանայի կոտորածի եղելությունը քննող հանձնաժողովի միակ հայ անդամ *Հակոբ Պապիկյանի* սպանությունը կազմակերպել և իրականացրել են թուրք «Ֆիդայիները»:

«Ֆիդայիների կազմակերպության» անդամների թիվն ու ունեցած ազդեցությունը գնալով մեծանում էր և վախեցնում նույնիսկ յուրայիններին: 1912 թ. այդ կազմակերպության անդամներն էին դարձել հանրահայտ «հրացանակիրներ», կռիվներում ճանաչում ստացած սպաներ *Յակոբ Ջեմիլը*, *Թուֆչա Իխսանը*, *Արդուլ Կադիրը*, *Սա-*

պանդջալի Հակկին, *Էնվերի* հորեղբայր *Խալիլը*, *Խոսրոդ Սեհմին*, *Սուլեյման Ասքարին*, *Օմեր Նադժին* և այլք: Այդ խմբին հարեցին նաև ոստիկանական բնագավառի սպաներ *Կուչչուբաշի Էշրեֆը* և նրա եղբայր *Սամի բեյը*, որոնք արդեն հեղինակ էին մի շարք արկածախնդրությունների և հատկապես տեռորիստական բնույթի սպանությունների⁵: Կարծեք թե զինվորական մասը պատրաստ էր: Մնում էր քաղաքականը, որը նույնպես ձևավորման պրոցեսում էր:

1911 թ. փետրվարին Ստամբուլում ստեղծվեց «*Թուրք օջաքը*» («*Թուրքական օջախ*») միջազգային, պանթուրքիստական կազմակերպությունը, որի ծայնափողն էր «*Թուրք յուրդու*» («*Թուրքական հայրենիք*») պարբերականը, խմբագիրը՝ ռուսական էմիգրանտ *Յուսուֆ Ալչուրան*⁶: Կազմակերպության լիդերներն էին *Յուսուֆ Ալչուրան*, *Խանդուլա Սուրխին*, *Ահմեդ-բեկ Աղանը*, *Կարաբեկովը*⁷: «Թուրքական օջախը» գերխնդիր դարձրեց կայսրության բնակչությանը, հատկապես երիտասարդ թուրքերին ներարկել պանթուրքիստական հաշիշը, նրանց գաղափարապես պատրաստել *մեկ ազգ, մեկ պետություն կամ Թուրքիան՝ թուրքերի համար* կարգախոսի իրականացմանը:

Ծավալված իրադարձությունները կարճ ժամանակ անց նպաստեցին պանթուրքիստական մեծ ու փոքր խմբերի, հատկապես վերոհիշյալ երկու կազմակերպությունների միավորման, քրիստոնյա հպատակ ժողովուրդների բնաջնջման ծրագրերի իրականացմանը:

1911 թ. բռնկված *թուրք-իտալական* պատերազմն ավարտվում է Թուրքիայի հերթական պարտությամբ, որի արդյունքում վերջինս կորցնում է Տրիպոլիտանիայի և Կիրենիկայի նահանգները, այսինքն՝ *Լիբիան*: 1912 թ. Բալկանյան առաջին պատերազմում Թուրքիան ջախջախիչ պարտություն է կրում և այս անգամ հարկադրված էր ազատություն տալ տերության եվրոպական վիլայեթների բնակչությանը:

Եղավ այնպես, որ Ավստրո-Հունգարիան գրավեց *Բոսնիան և Հերցեգովինան*: Ավտոնոմ իրավունքներ ստացան *Թրակիան և Մակեդոնիան*:

Երիտթուրքերի վարած պատերազմական անհաջողություններից օգտվելով՝ 1911 թ. կազմավորված «Հուրիեթ վե իթքիլաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցության պարագլուխները 1912 թ. ամռանը կարողացան ոչ երկար ժամանակով զավթել իշխանությունը⁸:

Երիտթուրքական վերնախավը, նրան գաղափարապես սնող պանթուրքիստները, իշխանությունը կորցնելով, արդեն ակամայից համաձայնում էին օսմանյան երբեմնի հզոր կայսրության ամբողջականությունը պահպանելու անհնարինության մտքի հետ: Նրանք հաշվարկում էին, որ յուրաքանչյուր պատերազմ ավարտվում էր Թուրքիայի հերթական պարտությամբ, հետևաբար և նոր հողերի կորստով:

Բալկանյան պատերազմից հետո երիտթուրքերը բացեիբաց հայտարարում էին, որ քանզի Ռուսաստանին առայժմ հաղթելը հնարավոր չէ, ուստի անհրաժեշտ էր փրկության նոր միջոցներ որոնել: Այդ մասին անգլիական պատմաբան *Բերնարդ Լևիսը* գրում է. «Կայսրության անկման գաղափարը նոր էր և շատերը շվարած էին. փոքր շրջագծով ազգային-նահանգ մը անբաւարար եւ անգրաւիչ կը գտնէին: Փանթուրքական շրջանակներում մէջ եւ մասնաւորաբար թաթար վտարանդիներում մօտ, այս մտահոգութիւնը առօրեական էր: Անոնք կը հաւատային թէ նոր կայսրութեան մը

¹ Յեղասպան թուրքը, Պէյրուք, 1968, էջ 50-61 (Թեշքիլաֆի մախսուսեն): Պրոֆ. *Վահագն Տարբեան*, Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Պայքար, 1915, էջ 127-140: (Հատուկ կազմակերպությունն իբրև հայկական ցեղասպանության գլխավոր գործիչ գլուխը): *Vahakn N. Dadrian*, The History of the Armenian Genocide, Oxford, 1995, p. 235-237. *Արսեն Աճալան*, Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решения, Ереван, 1999, стр. 68-86. *Ահմեդ Ռեֆիկ*, Երկու կոմիտե, երկու ոճիր, Երևան, 1997, էջ 32-33: *Ю. Г. Барсегов*, Геноцид армян — преступление по международному праву, Москва, 2000, стр. 136. *Александр Сваранци*, Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Москва, 2002, стр. 191-192. *Ստեփան Պողոսյան*, *Կարո Պողոսյան*, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմությունը, հ. II, գիրք առաջին, Երևան, 2001, էջ 448-470 (գլուխ տասներկուերորդ- Թեշքիլաֆի մախսուսեն՝ Հատուկ կազմակերպություն): *Ազատ Համբարյան*, *Ստեփան Ստեփանյան*, Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1995, էջ 15:

² *Suat Parlar*. Osmanlı'dan Günümüze Gizli Devlet. İstanbul, 1997, s. 76.
³ *Tamer Akçam*. İnsan Hakları ve Ermeni Sorunu İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı'na. İstanbul, 1999, s. 221. Տե՛ս նաև *Արսեն Աճալան*, Գշված աշխատությունը, էջ 70:
⁴ *Արսեն Աճալան*, Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решения, Ереван, 1999, стр. 71-72.

⁵ *Suat Parlar*. Osmanlı'dan Günümüze Gizli Devlet. İstanbul, 1997, s. 50. Տե՛ս նաև *Արսեն Աճալան*, Գշված աշխատությունը, էջ 93:
⁶ *Александр Сваранци*, Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Москва, 2002, стр. 191.
⁷ Տոքթ. *Եղիկ Ճերճեան*, Փանթուրքիզմը, Պէյրուք, 1998, էջ 23-24:
⁸ *И. Л. Фадеева*, От империи к национальному государству, Москва, 2001, стр. 51. Տե՛ս նաև *Александр Сваранци*, Գշված աշխատությունը, էջ 115:

ճակատագիրը կը սպասէ թուրքիոյ՝ որուն պարտականութիւնն է ոչ թէ վերագարթնել բազմալեզու եւ բազմազգ Օսմանեան Կայսրութիւնը, այլ ստեղծել թուրք եւ թաթար ժողովուրդներէ բաղկացած նոր, Պանթուրքական Կայսրութիւն մը, որ կը տարածուի եգեական Ծովէն Չինական Ծով»¹:

Այնհայտ է, որ երիտթուրքերն օսմանյան կայսրութեան ամբողջականութիւնը պահպանելու հեռանկարը փոխարինում էին մի նոր, ավելի ընդարձակ ու ավելի հզոր կայսրութիւն կազմավորելու բարբառանքով: Այդ կայսրութիւնը լինելու էր թուրանական խալիֆաթը, որից թուրքերը ձեռք չեն քաշել մինչև այսօր²:

Ահա գլխավոր այն պատճառը, երբ առաջին անգամ աշխարհի թուրքերի, հատկապէս երկու խոշոր հատվածները՝ օսմանյանը՝ իր պետական, ռուսականը՝ իր ազգային (ձգտումներով) գաղափարախոսութեամբ կհանդիպեն, կողջագուրվեն իրար հետ՝ ենթահող ունենալով պանթուրքիզմի ցնորամիտ երազանքը³:

Ճիշտ է նկատվում, որ գորավարները ծնվում են պատերազմների դաշտում, գաղափարաբանները՝ գաղափարական պայքարի հորձանուտում: Այնպես որ, իթիլաֆականների թուլութիւններից օգտվելով, իթիլաֆականները հրապարակ նետեցին պանթուրքիստական քրիստոնեատյաց երկու գաղափարաբանների՝ Յուսուֆ Ալչուրային և Ջիա Գյոք Ալփին: Սրանք իրար գիտեին ստեղծագործութիւններով, այժմ անձնական ծանոթութեամբ, մտերիմ կապեր էին հաստատում, համալսարանական ամբիոններից թուրք երիտասարդութեանը կոչում պանթուրանական ծրագրերի իրականացման համար մղվող պայքարի մարտադաշտ նետվել⁴:

Կարճ ժամանակ պահանջվեց իթիլաֆականներից, որպեսզի կարողանային տիրապետել թուրք երիտասարդութեան շովինիստական զգացմունքներին՝ և՛ համալսարանում՝ ուսանողության, և՛ բանակում՝ զինվորների ու զինվորականների շրջաններում: Պանթուրանիզմի ցնորամիտ դոկտրինան թևածում էր ոչ միայն Սալոնիկի մասոնների շրջաններում, այլև Կ. Պոլսում և թուրքական մյուս քաղաքներում:

Խնդիր դրվեց իշխանութիւնը ետ խլել իթիլաֆականներից: Մթնոլորտը շիկացած էր հօգուտ պանթուրանիստ իթիլաֆականների: Այդ էր պատճառը, որ առանց մեծ դժվարութիւնների վերջիններս 1913 թ. հունվարի 10/23-ին պետական հարվածով տապալեցին իթիլաֆականների դիկտատուրան և իշխանութիւնը վերցրին իրենց ձեռքը:

1913 թ. հունվարի 15-ից թուրքիայում ավարտվեց մի տեսակ **երկիշխանութեան** շրջափուլը: «Միութիւն և առաջադիմութիւն» կուսակցության կենտրոնական կոմիտեն, իշխանութիւնն իր ձեռքը վերցնելով, իթիլաֆականներից **ձևավորեց նոր կառավարութիւն**, որը, տեռորի, ուղղակի բանտարկութիւնների, աքսորի ու ահաբեկումների ճանապարհով «մաքրելով» մայրաքաղաքը, հասավ **կուսակցական բացարձակ դիկտատուրայի**⁵:

Իշխանութիւնն անցավ **եռապետերին**: Ներքին գործերի նախարար Թալեաթը տեռորի ու աքսորի ճանապարհով վնասագերծեց երեկվա իր հակառակորդներին:

¹ **Bernard Lewis**, The Emergence of Modern Turkey, London, 1961, p. 358.
² Իսլամական խալիֆաթի ցնորական երազանքը քարոզվում է մինչև այսօր, որի մասին դատապարտող, միանգամայն արդարացի գնահատականով հանդես եկավ Ռուսաստանի Դաշնութեան նախագահ Վ. Վ. Պուտինը 2002 թ. դեկտեմբերի 19-ի հեռուստաեւելույթով:
³ **Երկի ճերմեան**, Փանթուրանիզմ, էջ 23-24:
⁴ **Մ. Մ. Փաթեթ**, Աշխատութիւնը, էջ 50: Ձարմանալին այն է, որ ազգութեամբ ռուս այդ տիկիւնը կարծեք թե սիրահարված է «իր հերոս» **Ջիա Գյոք Ալփին** և այնպես է ներկայացնում պանթուրանիստ այդ թուրքին, որ կարծեք թե նա մի համձարեղ ազատարար էր: Մինչդեռ Դիարբեքիի ծնունդը, ճիշտ է, կրթութիւն էր ստացել Եվրոպայում, սակայն մնացել էր և՛ բարբարոս, և՛ հայատյաց:
⁵ Պրոֆ. **Վահագն Տառնեան**, Դայական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, «Պայքար» հրատարակչութիւն, 1995, էջ 128:

Ոստիկանութիւնը հանձնվեց ընդդիմադիր թուրքերի, ինչպես նաև հայերի կատաղի թշնամի հանդիսացող **Պետրիիս**: Նա նոր թափ հաղորդեց հակահայկական լրտեսական աշխատանքներին, պատրիարքարանն ու հայ քաղաքական կուսակցութիւններին կենտրոնականացնելը ողողվեցին լրտեսներով: Այդ օրերից վերջացավ հայ-թուրք հարաբերութիւնների «երանավետ շրջանը», և հայկական ջարդերի ծրագրման շրջափուլներն արդեն բացահայտ էին:

Փոփոխութեան ենթարկվեց նաև «Միութիւն և առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտեի ղեկավար կազմը: Այնտեղ թափանցեցին և **Էնվերի, Թալեաթի ու Ջեմալի** կողքին հաստատուն աթոռներ ստացան բժիշկներ **Նազըմ բեյը, Բեհաեդդին Շուքրին** և պանթուրքիզմի առաջին դրոշակակիր **Ջիա Գյոք Ալփին**: Վերջին երեքը բացահայտեցին իրենց հակամարդկային դեմքը և բացարձակորեն բռնեցին հակահայկական քաղաքականութիւնը վարելու կողմնակցութիւն, այնքան հայատյաց, որ այդ պահին դժգոհեցրեցին ապագա հայոց **«ջարդերի ճարտարապետ»**, մարդակուլ Թալեաթին: Հատկապէս **Ջիա Գյոք Ալփին** չափազանց մտահոգված էր ոչ միայն հայերի նկատմամբ կիրառվելիք ռեֆորմներով, այլև «Հայաստանի կորուստով», որն անկախանալով կարող էր թուրք կանգնել թուրքիայի՝ դեպի Արևելք ընդարձակվելու դեմ: Նորից շեփորվեց **«Թուրքիան թուրքերի համար»** կարգախոսը, նորից առարկայական դարձավ արևմտահայութեան բնաջնջման խնդիրը: Պանթուրանիստները շտապում էին, վախենում էին, թե շուտով, Ռուսաստանի ճնշման ազդեցության տակ, Հայաստանը կբարեփոխվի, դրա համար էլ մեծ հույսեր էին կապում բանակի, հատկապէս երրորդ բանակի հետ, որը պետք է անցներ իրենց ղեկավարութեան տակ:

Այսպիսով, 1915 թ. մայիսի 14-ին սկսվեց «Հատուկ կազմակերպութիւն» Բեհաեդդին Շուքրիի գլխավորած բաժանմունքի ձևավորումը: Խիստ կարևոր համարվեց կադրերի ընտրութեան խնդիրը:

Կազմակերպութիւնն իր երկու ճյուղերով գտնվում էր Ջեմալի, Էնվերի և Թալեաթի գերիշխանութեան տակ, առատորեն ֆինանսավորվում էր պատերազմական և ներքին գործերի նախարարութիւնների կողմից, կատարում նախարարների ամենատարբեր հանձնարարութիւնները: 1919 թ. երիտթուրքերի դատաւարութեան խաչածն հարցաքննութիւնների ժամանակ պարզվեց, որ «Հատուկ կազմակերպութեան» սև գործերին խառն են եղել և մեղսակից **Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Իբրահիմը, Շուքրին, Խալիլ և Ահմեդ Նեսիմին**, Իթիլաֆի ընդհանուր քարտուղար **Միդհատ Շուքրին**, դոկտոր **Ռուսուկսին, Բեհաեդդին Շուքրին, Նազըմ բեյը, Աքըֆը, Ռիզան**, ընդհանուր ապահովութեան նախկին նախարար **Ազըմ բեյը**¹, այսինքն՝ «Միութիւն և առաջադիմութիւն» կուսակցութեան ողջ ղեկավար կազմը, որոնք էլ պատասխանատվութեան ենթարկվեցին դատական ատյանի կողմից այն օրերին... իսկ այսօրվա թուրքերը ուրանում են կատարվածը²:

Կազմակերպութեան գործունեութեանը վերաբերող բազմաթիւ, հազվագյուտ վավերագրեր է ձեռք բերել, թուրքերենից հնտորեն թարգմանել և վերլուծական շարադրանքով ներկայացրել **Գրիկերը**, որի ժողովածուն անփոխարինելի նյութեր է պարունակում այս խնդիրների վերաբերյալ³:

Հնուտ թուրքագետը հայատառ թուրքերենով մի շարք փաստաթղթեր թարգմանաբար, կողք կողքի գետեղված ձևով հրատարակելով, անում է ուշագրավ ու վավերական ներքոհիշյալ ընդհանրացումը.

¹ **Մուլան Գադե Ռիֆատ**, Աշխատութիւնը, էջ 119-120:
² **Արամ Անտոնեան**, Մեծ ոճիրը, Պոսթըն, 1921, էջ 273-274:
³ Պատրաստեց **Գրիկեր**, Եոզղատի հայասպանութեան վավերագրական պատմութիւնը: Նիւ Եորք, 1980, էջ 215-270:

«Պոլսոյ մէջ երիտասարդ թուրքերու կուսակցութեան ակումբը Նուր էլ Օսմանի դարձած էր պետական որոշումներու եւ գործունէութեան ընդհանուր կեդրոն կամ կառավարական զանազան վարչական մասնաճիւղերու գործատեղի: **Յոն էր որ վճռած էին Յայերու տեղահանութեան գործողութեան մանրամասնութիւնները, հոն էր որ ծրագրած էին Յայերու կոտորածներուն մանրամասն որոշումները եւ ոճիրներու գործադրութեան վայրերը կանխապէս նշանակուած էին, հոն էր որ վճռած էին բանտերէն ազատ արձակել դատապարտեալ ոճրագործները: Նոյնպէս կուսակցութեան կեդրոնական կոմիտէն Օսմանեան կայսրութեան հայաբնակ նահանգներուն, գաւառներուն եւ գաւառակներուն մէջ տարածած էին կազմակերպական ցանցեր հոն նշանակելով պատասխանատու քարտուղարներ եւ պատուիրակներ, որոնք տեսակ մը լիազօրութիւն ունէին պաշտօնական վարչութեան վրայ հայերու տեղահանութեան եւ բնաջնջումի գործերուն կարգադրութեան մէջ»¹:**

Այսպիսով, «Թեշքիլաթի մախսուսեյի» գործավայր-կենտրոնը հաստատուած էր երիտթուրքերի կենտկոմի տեղակայված շենքում, այսինքն՝ 4. Պոլսի Նուր էլ Օսմանիեում: Կազմակերպության ղեկավար կազմը փաստորեն իթթիհատականների կենտկոմի անդամներն էին, որոնք և առանց բացառության, 1919 թ. հեռակա թե առկա, դատապարտվեցին մահվան:

Եռյակի հիմնադիր անդամն էր նաև 4. Պոլսի քաղաքագլուխ Ջեմալ փաշան: Աշխարհամարտի բռնկումից երկու ամիս առաջ Ջեմալը նշանակվեց Թուրքիայի ռազմածովային ուժերի մինիստր: Կազմավորվեց զինվորական նոր դիկտատուրա, այն է. Թալեաթը՝ վարչապետ, էնվերը՝ թուրքական ցամաքային զորքերի գլխավոր հրամանատար, Ջեմալը՝ ծովային մինիստր: Ահա այն երեք հրեշները, որոնք դարձան դահիճն ու դահճապետը, իրականացնելով ցեղասպանությունը Թուրքիայում:

1914 թվականի վերջին արդեն ռազմածովային մինիստր նշանակված Ջեմալ Ահմեդը գաղտնագրված հանձնարարությամբ ուղևորվեց Ֆրանսիա, որտեղ փորձեց շոշափել Փարիզի զարկերակը, Անտանտի մյուս տերություններից գաղտնի կնքելու թուրք-ֆրանսիական դաշնագիր: Ավանդական հովանավոր բրիտանական կղզիներից հուսախաբված թուրքերը նոր մեկենաս էին որոնում Սենայի ափերին, որը և դարձավ Ջեմալի առեղծվածի համար կեղծիքի հիմք: Չուր հույսեր, ապարդյուն փորձեր...

1915 թվականի մարտ-ապրիլ ամիսներին Ջեմալ Ահմեդը գլխավորում էր Չորրորդ բանակը, որն արյան գետերով հեղեղում էր արաբախոս աշխարհը՝ Սիրիան, Պաղեստինը և Լիբանանը: Այստեղ նա գլխավորում էր «մահապարտների» այն ուժերին, որոնք հայ բռնազաղթյալներին «քշում էին դեպի Դեր Ջորի անապատները»²: Նրան վստահվեց նաև հայերից Կիլիկիան դատարկելու բարդ ու դժվարին խնդիրը, քանզի կիլիկիախայությունը զինված էր և պատրաստ էր պայքարելու մինչև արյան վերջին կաթիլը: Ջեմալն այստեղ դիմեց թուրքին «բնատուր խարդավանքների»:

Նա անձամբ գնաց Կիլիկիայի հայոց Սահակ կաթողիկոսի «ոտքը» և, խաբելով նրան, զինաթափել տվեց հայ զանգվածներին, ապա կազմակերպեց անգլեն բնակչության տեղահանությունն ու ոչնչացումը: «Ժամանակակիցների վկայությամբ, - բերում է Հ. Պողոսյանը, - Սահակ կաթողիկոսը կը հորդորե ճեմալ փաշա-

¹ Գրիկեր, նշված աշխատությունը, էջ 229-230:

² Մանրամասն տե՛ս «1915 թվականի աղետն ու վերածնունդը», Փարիզ, 1952, էջ 25-30:

յի հրամանը իր բոլոր թեմերուն, եկեղեցոյ պաշտոնեաներուն միջոցով, եւ մասնավոր եկեղեցեկաններ կը դրկե Ջեյթուն, Հաճըն, Տեորթ-Յուլ, որպեսզի կացութեան բացառիկ դժվարութիւնները հաղորդեն ժողովրդին»¹:

Ջեմալ Ահմեդը կազմակերպեց նաև կայսրահպատակ քրիստոնյա արաբ (ղաթիներ) և մահմեդական բնակչության տեղահանության և աքսորի պրոցեսը, հարյուր հազարավոր արաբների «առաջնորդեց» դեպի գերեզման: 1917 թ. գարնանը նա կրկին գլխավորում էր թուրքական ռազմածովային նավատորմը, որն իրար հետևից պարտություններ էր կրում Ուինստոն Չերչիլի գլխավորած բրիտանական ծովային հետևակի հուժկու հարվածներից: Դարդանելի օպերացիան նրա ռազմական կարիերայի մայրամուտն էր, հետևաբար և Թուրքիայի պարտությունն Առաջին աշխարհամարտում:

Ինչպես ասացինք, Ջեմալ Ահմեդը երիտթուրքական մյուս ղեկավարների հետ Մուդրոսի զինադադարից առաջ, գիշերային մթությունից օգտվելով, ճողոպրեց Օդեսա, այնտեղից էլ «մեծ եղբոր»՝ Գերմանիայի մայրաքաղաք: Ի տարբերություն մյուսների, նա երկար չմնաց Բեռլինում: Փորձված շնագայլը 1920 թվականի հունվարին Մոսկվայի վրայով Գ. Չիչերինի օգնությամբ անցավ Աֆղանստան՝ բուլշևիկներին խոստանալով լուրեր հաղորդել Անտանտի զորքերի ռազմական գործողությունների մասին: Նա իր լրտեսական միսիան լիուլի կատարելուց հետո որոշեց այս անգամ էլ վերադառնալ Անկարա, զինվորագրվել Մուստաֆա Քեմալի բանակին, մասնակցել հայ և հույն ժողովուրդների վերջին բեկորների ոչնչացման պրոցեսին:

1922 թ. հունիսին Ջեմալ Ահմեդը, դուրս գալով Աֆղանստանից, դժվարությամբ հասավ Անդրկովկաս: Նրա ճանապարհն այս դեպքում անցնում էր Թիֆլիսի վրայով, քանզի լուրեր ուներ հաղորդելու խորհրդային հակահետախուզությանը: 1922 թվականի հուլիսի 25-ին նա, դուրս քալով Թիֆլիսի Պյոտր Մեծ փողոցի ծայրամասում գտնվող հյուրանոցից, դեմ առ դեմ հանդիպեց իրեն որոնող հայ վրիժառուներին: Պետական անվտանգության կոմիտեի հարևանությամբ եղած նեղ նրբանցքում Պետրոս Տեր-Պողոսյանը և Արտաշես Գևորգյանը գնդախորով արեցին հայ ժողովրդի երրորդ թշնամուն: Նրանք իրականացրեցին թուրքական դատարանի այն վճիռը, որի համաձայն Ջեմալ Ահմեդը հեռակա կարգով դատապարտվել էր մահվան, սակայն չէր կախվել, քանի որ այդ պահին արդեն ճողոպրել էր արտասահման:

Վրացական խորհրդային Անվտանգության կոմիտեի աշխատակիցները մասսայական որոնումներ կատարելով՝ 250 կասկածյալ կալանավորեցին, բարեբախտաբար, դրանց մեջ չէին հայ հայրենասերները: Նրանք խնամքով ծափվել էին և հանձնարարությունը պատվով կատարելով՝ թողել էին Վրաստանի մայրաքաղաքը:

Այդպիսին էր Ջեմալ Ահմեդի անցած ճանապարհը, որը շաղախված էր թուրքահպատակ ազգերի, հատկապես հայ և արաբ ժողովուրդների թափած ծով արյան գետերով: Նա իրավամբ համարվեց մեր ժողովրդի երվյալ թշնամին և հատուկ որոշումով պատժի ենթարկվեց:

Արձանագրենք, որ մեր համառոտագրությունը պատմության մեկ իսկական երեսն է, սակայն «ստեղծվել է», «մոգոնվել է» նաև մեկ այլ հորինվածք, որի բուն էության բացահայտմանն էլ փորձենք անդրադառնալ այստեղ այսօր:

¹ Հ. Մ. Պողոսյան, Ջեյթունի պատմությունը (1909-1921), Երևան, 1969, էջ 391:

² Դժ. Ս. Կրաբոսյա, Младотурки перед судом истории, Ереван, 1986, стр. 112. Տե՛ս նաև «Հայկական հարց, Հանրագիտարան», էջ 382: Ե. Ղ. Սարգսյան, «Ջեմալ փաշա» բառ-հոդվածը:

3. Հայկական հարցի պատմության հետազոտության սկզբնավորումը Խորհրդային Հայաստանում

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից ուղիղ երկու տարի անց (այսինքն՝ 1922 թ.) Հայկոմկուսի կենտրոնի գլխավոր (генеральный) քարտուղար ընտրված **Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանը** (Շուշի, 17. VI. 1887 - Երևան, 30. VI. 1972) մասնագիտությամբ պատմաբան էր և իր ուսումնառության պրոցեսն անցկացրել էր Գերմանիայում՝ տիրապետելով եվրոպական **երեք լեզուների**։

Լուսավորության ժողովուրդից ազնվելով նոր պաշտոնին, նա իր շուրջը համախմբեց հայրենիքում և Սփյուռքում դեգերող կարող բոլոր ուժերին և սկսեց հետազոտել **Հայկական հարցի** պատմությունը՝ ներառելով ծայրաթելերը՝ սկզբից մինչև իր գործած ժամանակահատվածը։

Զարմանալի ժամանակներ էին այդ տարիները։ Եղեռն տեսած, հազար ու մեկ վայրիվերումների ենթարկված մեր ժողովուրդը հասունացրել էր խանդավառ ու ռոմանտիկ մի սերունդ, որի ներկայացուցիչներից ամեն մի անունն արժանի է մեծարանքի։ Նրանք հասունացրեցին լույսի ու հույսի ճրագներ վառող մտածողներ ու քաղաքական այնպիսի գործիչներ, որոնք խթանեցին քաղաքակրթության առավել ներմուտը հայ իրականության խաչուղիներում, հետագա ժառանգորդներին փոխանցեցին նորաստեղծ գաղափարներ, դրանցով իսկ հավերժանալով ժողովրդի հիշողության ծալքերում։

Այդ ուղղությամբ կատարված առաջին խոշոր քայլը էջմիածնի **Կուլտուր-պատմական ինստիտուտի** հիմնադրումն էր, որին հաջորդեց 1925 թ. հունվարին կազմակերպված **ՀՍՄ Գիտության և արվեստի ինստիտուտը**։ Ինստիտուտն ուներ մի քանի բաժանմունքներ, որոնց շարքում ամենաբեղմնավոր աշխատանքը ծավալեց հասարակական գիտությունների մասնաճյուղը՝

Բաժանմունքը համախմբում էր այնպիսի պատմաբանների և բանասերների, ինչպիսիք էին Գ. Մանանդյանը, Լեոն (Ա. Բարախանյան), Աշոտ Հովհաննիսյանը, Մ. Աբեղյանը, Ց. Խանզադյանը, Ա. Տերտերյանը, Զր. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Գ. Ազատյանը, Եղիշե Չարենցը, Մ. Սարյանը, Ա. Սպենդիարյանը, Դ. Դեմիրձյանը, Ռ. Մելիքյանը և շատ ուրիշներ։ Սա մի փառանգ էր, մի փայլուն աստղաբույլ, որի քանակն ու որակը, կարծես թե, մեր ժողովուրդը երբեք չէր տեսել։

Հայկոմկուսի կենտրոնի գլխավոր քարտուղար, գերմանական համալսարանների փիլիսոփայական գիտությունների դոկտոր, շուշեցի **Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանի** նախագահությամբ, ապագա ականավոր բանասեր, տնտեսագետ, պատմաբան, թարգմանիչ **Թադևոս Ավդալբեգյանի** (1889-1937) քարտուղարությամբ կազմվեց պատկառելի մի հանձնաժողով, որն իր ուսերին վերցրեց **Հայկական հարցին** վերաբերող մեծագրությունների և վավերագրերի ժողովածուների ստեղծման բարդ ու աշխատատար գործի իրականացումը։

Այդ նախաձեռնության արգասիքը դարձած անդրանիկ աշխատության առաջաբանում 1926 թ. փետրվարի 9-ին խմբագիր **Աշոտ Հովհաննիսյանը** գրում է. «Հակասությունների շփոթը վերացնելու յեվ յերեվոյթները պատմական-հասարակական իրենց եյությամբ լուսաբանելու այժմեյականությունն է, վոր հարկադրում է մեզ դիմելու վոչ միայն «հայոց հարցի» տեսական-սկզբունքային վերլուծության, այլև նրա կոնկրետ-պատմական ուսումնասիրության։

Այս տեսակետից է, վոր անկարելի յե դրական քայլ չհամարել աշխատանքի այն

¹ Մանրամասն տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն» (1917-1941), հատոր VII, ՀՍՄ ԳԱ իրատարակչություն, Երևան, 1967, էջ 448։

ծրագիրը, վոր մշակել է **Հայաստանի Հեղափոխության Թանգարանին կից կազմված հանձնաժողովը**, վոր նպատակ է դրել իրեն՝ ժողովել, ուսումնասիրել յեվ իրատարակել **«հայոց հարցի»** անցյալին վերաբերող յեվ այժմեյությունն ներկայացնող տպագրված յեվ անտիպ նյութեր։ Մշակված ծրագիրն ընդգրկում է «հայոց հարցը» պատմական իր ամբողջ հասակով՝ հեռու միջնադարից մինչև մեր ժամանակները՝ «Հայկական ոճախի» յեվ Լոզանի կոնֆերանսի շրջանը։ Ծրագրի սահմաններում հանձնաժողովը յենթադրում է լույս ընծայել իրատարակությունների յերկու սերիա՝ **ա) նյութեր յեվ բ) ուսումնասիրություններ**։ Հրատարակություններն արվելու յեն բնականաբար վոչ նախագծված հերթով, այլ ներկայացված նյութերը յեվ ուսումնասիրությունները տպագրության համար հասունանալու յեվ հանձնաժողովի հավանությունը գտնելու կարգով։

Ներկա առաջաբանով լույս ընծայվող հատորը վերաբերում է **«հայոց հարցի»** ձեկակերպությանը՝ իմպերիալիստական պատերազմի շրջանում, յերբ հայ նացիոնալիստների նախաձեռնությամբ հրապարակ էր գալիս «Հայաստանի ավտոնոմիայի» խնդիրը։ Այստեղ ամփոփված գաղտնի վավերագրերը, վոր շոշափում են «Հայաստանի ավտոնոմիայի» այդ խնդիրը, առնված են Ս. Խ. Գ. Մ. արտաքին գործերի կոմիսարիատի հրատարակությունից, վոր լույս տեսավ Մոսկվայում 1924 թվին՝ «Ասիական Տաճկաստանի բաժանում» խորագրի տակ. («Раздел Азиатской Турции», По секретным документам б Министерства иностранных дел, под ред. Е. А. Адамова. Издание Литиздата Н. К. И. Д. Москва, 1924 г.):

Վավերագրերի հայերեն թարգմանությունը կատարել է Թ. Ավդալբեգյանը¹։

Ժողովածուի կազմողներն ընտիր թարգմանությամբ առանձնացրել ու ընթերցողի ուշադրությանն են ներկայացրել այն վավերագրերը, որոնք վերաբերում են հայ ժողովրդին և Հայաստանին, նրա ապագա հայեցակարգին։ Այդ բոլորի ներկայացումը թողնելով սույն մենագրության մեկ այլ բաժնին, այստեղ առանձնացնենք այն փաստերն ու փաստաթղթերը, **որոնք վերաբերում են Հայաստանի նկատմամբ Ջեմալի ունեցած ծրագրերին**։

Անտանտի տերություններին, հատկապես կայսերական Ռուսաստանին ամենից առավել հետաքրքրում էին Կոստանդնուպոլսին և նրան երկատող ջրուղիներին տիրանալու խնդիրը։ Դաշնակիցները վաղօրոք եկել էին այն համաձայնության, որ աշխարհամարտի ավարտից հետո ռուսական մավատորմը տիրակալի իրավունքով կլողա Բոսֆորի և Դարդանելի նեղուցներով։ Սուլթանին Ստամբուլից կարտաքսեն, որից հետո Ռոմանովների շառավիղներից որևէ մեկը կբազմի **Երլորդ Զյոշքում** և կկառավարի թուրքերի բռնապետությունից ազատագրված հավիտենական քաղաքը։

Այդ մասին Նևայի ափին նստած բրիտանական դեսպանը 1915 թ. մարտի 12-ին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր **Սերգեյ Դմիտրիևիչ Սազոնովին** գրում է.

«Պետրոգրադի Մեծ-Բրիտանական դեսպանության հուշաթուղթը ռուսաց արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին Յեռագիր

Այն դեպքում, յեթ պատերազմը կհասնի իր հաջողակ վախճանին և յեթ կիրականանան Մեծ-Բրիտանիայի ու Ֆրանսիայի ցանկություններն ինչպես Ռոմանյան կայսրության մեջ, այնպես և այլ վայրերում, ինչպես այս մատնանշված ե ներքոհիշ-

¹ «Հայաստանի հեղափոխության թանգարան», **գիրք առաջին** «Հայոց հարցի շարքը», «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», **Աշոտ Հովհաննիսյանի** առաջաբանով, Երևան, 1926, էջ 12։

յալ ռուսական հաղորդագրության մեջ, – նորին մեծության կառավարությունը կհամաձայնե կայսերական կառավարության՝ Կոստանդնուպոլսի ու նեղուցների վերաբերյալ հուշաթղթին, վորի բնագիրը նորին մեծության դեսպանին հաղորդել էր նորին բարձր գերագանցություն Սազոնովը սույն տարվա փետրվարի 19/ մարտի 4-ին:

12 մարտի 1915 թ.»¹:

Կոստանդնուպոլսի և նեղուցները Ռուսաստանին հանձնելու մասին Պետրոգրադի ֆրանսիական դեսպանը ևս Ս. Դ. Սազոնովին գրում է.

«Իր կառավարության կարգադրությամբ և մատնանշելով այն պահանջները, վոր կայսերական կառավարությունը ձևակերպել էր 1915 թվի մարտի 4-ի հուշաթղթում, ֆրանսիական դեսպանը պատիվ ունի հայտնելու նորին գերագանցություն պ. Սազոնովին, վոր կայսերական կառավարությունը լիովին կարող է հույս դնել հանրապետության կառավարության բարյացակամ վերաբերմունքի վրա՝ **Կոստանդնուպոլսի ու նեղուցների խնդիրը Ռուսաստանի ցանկությունների համաձայն լուծելու հարցում:** Այս խնդիրն, այլև այն հարցերը, վորոնցով շահագրգռված են Ֆրանսիան ու Անգլիան Արևելքում ու այլ վայրերում, և վորոնք կայսերական կառավարությունն իր կողմից համաձայնում է լուծել Ֆրանսիայի ու Անգլիայի ցանկությունների համեմատ, – իրենց վերջնական լուծումը կստանան հաշտության դաշնագրի մեջ, վորը 1914 թ. սեպտեմբերի 4-ի հայտարարության համաձայն, պետք է քննեն միատեղ և միաժամանակ ստորագրեն բոլոր յերեք դաշնակից պետությունները:

8 մարտի 1915 թ.»²:

Ֆրանսիայի կառավարության բարձրագույն ատյանը, հանգամանորեն քննելով 4. Պոլիսն ու նեղուցները Ռուսաստանին հանձնելու ցարի պահանջարկը, իր դեսպանի խողովակով Նևայի ափամերձ շինությանն հաղորդեց.

«Պետրոգրադի Մեծ-Բրիտանական դեսպանության հուշաթուղթը ռուսաց արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին Դեռագիր

Նորին մեծության կառավարությունն եյական է համարում, վոր այն թույլտվությունները, յերբ տաճիկներն, ինչպես սպասվում է, կչքանան Կոստանդնուպոլսից, մի վորևէ այլ վայրում կազմվի անկախ մուսուլմանական իշխանություն, իբրև Իսլամի քաղաքական կենտրոն: Հաստատապես պահանջվում է մի այնպիսի իշխանության գոյություն, վորը լինի կատարելապես մուսուլմանական, թեև վոչ անպայման տաճկական, և (մուսուլմանական) սրբազան վայրերը բնականաբար պետք է լինեն նրա կենտրոնը: Այդպիսի մուսուլմանական պետությունը հավանաբար կընդգրկե Արաբիան: Նմանապես անհրաժեշտ է վճռել այն խնդիրը, թե պե՞տք է արդյոք նրա կազմի մեջ մտնի Փոքր-Ասիայի վորևէ այլ տերրիտորիա, և յեթե այո, ապա հատկապես վո՞րը:

Նորին մեծության կառավարությունը, քանի հիշյալ մուսուլմանական պետության հարցը չէ լուծված, վաղաժամ է համարում քննել Միջագետքի, Սիրիայի, Պաղեստին-

¹ «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», էջ 8:
² Սույն տեղում, էջ 7:

նի ու հարևան մարզերի՝ (область) մեծ պետությունների միջև հնարավոր բաժանման խնդիրը:

20 մարտի 1915 թ.»¹:

Կոստանդնուպոլսի և նեղուցների խնդիրն առավել հիմնավորապես քննել է ռուսականավոր պատմաբան և դիվանագետ **Ե. Ա. Ադամովը:** 1925 թ. «Եվրոպական տեղություններն ու թուրքիան համաշխարհային պատերազմի ժամանակ» մակնիշով, «Константинополь и проливы по секретным документам 6. Министерства Иностранных дел» վերտառությամբ լույս տեսավ ծանրակշիռ մի աշխատություն՝ **Ե. Ա. Ադամովի** խմբագրությամբ:

Աշխատությունը բաղկացած է երկու ընդարձակ բաժիններից: Առաջին բաժինը ներկայացնում է խմբագրի ծավալուն առաջաբան-հետազոտությունը 4. Պոլսի և նեղուցների պատմության վերաբերյալ՝ ընդհանրապես: Երկրորդ բաժինն ընթերցողի ուշադրությանն էր արժանացնում գաղտնագրված վավերագրերը, որոնք վերաբերելով թուրքերի մայրաքաղաքի ապագա ճակատագրին՝ առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ և նոր լույս են սփռում միջազգային դիվանագիտության պատմության վրա:

1915 թվականին, այո, միայն այդ տարում, թուրքիայի մայրաքաղաքին և նրան կիսող ջրուղիներին տիրանալու խնդիրը ժամանակի խորհրդային ռուս պատմագրության ուշադրության կենտրոնումն էր: Որպեսզի առավել հասկանալի դառնան Ջեմալ Ահմեդ փաշայի դիվանագիտական մարզանքները, որոշեցինք այդ մասին եղած Ադամովի գրվածքները մեջբերել ամբողջությամբ:

4. Դաշնակից տերությունների քանակություններն ապագա Հայաստանի կարգավիճակի և սահմանների շուրջը 1915-1916 թվականներին: «Առեղծվածային գրագրություններ» Ջեմալ փաշայի հակապետական ձգտումների մասին

Ապագա Հայաստանի կարգավիճակը հետաքրքրում էր Անտանտի տերությունների դիվանագետներից սկսած, վերջացրած պրեզիդենտներով և **կայսր-թագավորներով:** Նրանց այդ զբաղմունքը սկզբնավորվել էր Աշխարհամարտի նախօրեին և գործնական կերպարանք ստացել 1915-1916 թվականներին:

Սենայի ափերին հաստատված Ռուսաստանի դեսպան **Ա. Պ. Իզվոլսկին**, 1915 թ. մայիսի 4/17-ին երկրի արտգործնախարար Դմիտրի Սազոնովին գրում էր, թե ինքը ստացել է այն հեռագիրը, որով առաջարկվում էր Պետերբուրգի գերիշխանության ներքո ստեղծել **Ավտոնոմ Հայաստան նոր վարչամիավոր:** Նա միաժամանակ ավելացնում էր, որ ինքը դեմ չէ նման մտահղացման իրողության վերածելուն և այդ մասին արդեն հաղորդել է Ֆրանսիայի գերագույն ատյաններին:

Չանցած մեկ շաբաթ, **Ա. Պ. Իզվոլսկին** Պետերբուրգին լրացուցիչ հաղորդում էր, թե **Ռ. Պուանկարեն** և **Ժ. Կլեմանսոն** համաձայն են Հայաստան վարչամիավոր ստեղծելու Ռուսաստանի նախագծի հետ: Ավելին, **Սազոնով-Իզվոլսկու** նոր նա-

¹ «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», էջ 9-10:

խագծով (որին դեմ էր *Նիկոլայ Երկրորդ* կայսրը) Հայաստան վարչամիավորը պետք է դրվեր Ռուսաստանի գերիշխանության ներքո, որի կազմում պետք է ընդգրկվեին թուրքական բռնապետությունից ազատագրված *յոթ վիլայեթները* (ի նկատի ունեին նաև *Տրապիզոնի* վիլայեթը), Կիլիկիայի առափնյա շրջանները, ընդհուպ մինչև Ալեքսանդրեոսի սանջակն ու *Մերսին* նավահանգիստը¹։
Թողնենք թող խոսի Ա. Պ. Իզվոլսկին։ Նա գրում էր.

Փարիզի ռուսական դեսպան Ա. Պ. Իզվոլսկին արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին

№ 318

4/17 մայիսի 1915 թ.

Ստացա № 1721-ը։

Այստեղ յեկած դոկտոր Ջավրիևն ինձ մի հուշաթուղթ ներկայացրեց՝ մեր արտաքին գործերի մինիստրության մեջ իր ունեցած զուլյցների հետևանքների մասին։ Այս թղթում, ի միջի այլոց, ասված է, վոր Ռուսաստանը մտադիր է պետություններին առաջարկելու, *վորպեսզի Տաճկաստանի սահմաններում ստեղծվի ավտոնոմ Հայաստան՝ Տաճկաստանի գերիշխանության ներքո ու յերեք պետությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի պրոտեկտորատի տակ։ Իբրև թե Հայաստանի տերրիտորիան պետք է ընդգրկե վոչ միայն բոլոր հայկական վիլայեթները, բացի մի քանի ժայրամասերից, այլև Կիլիկիան՝ Միջերկրական ծովի վրա նավահանգստով, վոր պիտի լինի Մերսինում, ի բաց առյալ ամբողջ Ալեքսանդրեոսայի ծովածոցը՝ Յումուրթալիկով հանդերձ։* Այնուհետև թղթում նշանակված է, վոր թեև այս ծրագրին հավանություն է տվել մեր արտաքին գործերի մինիստրությունը, վորն այս իրականացնելու գործում խոստացել է իր ոգնությունը Լոնդոնի ու Փարիզի իր դեսպանների միջոցով, — հայ պատվիրակները խուսափելու համար Ֆրանսիայի ու Անգլիայի կասկածներից, մանավանդ Կիլիկիայի խնդրում, գործելու յեն առանց ռուս դեսպանների տեսանելի միջամտության, վորը կարող է տեղի ունենալ դժվարին դեպքերում միայն, այլև այն ժամանակ, յերբ իրենք, դեսպանները հնարավոր կըզտնեյին այս։ Ինձ հայտնի յե, վոր *ինչպես դոկտոր Ջավրիևն, այնպես և վերադարձած Պողոս Նուբար փաշան վերոգրյալ իմաստով արդեն արտահայտվել են այստեղի արտաքին գործերի մինիստրության անդամների առաջ։ Ուստի մի մերժեք տեղեկացնելու ինձ, թե վերոհիշյալ ծրագրին դուք իրո՞ք հավանություն եք տվել և թե ի՞նչ չափով յես պետք է պաշտպանեմ այդ ծրագիրն այստեղ։ Կիլիկիային վերաբերող կետն ինձ հատկապես փափուկ է թվում, վորովհետև Ֆրանսիան մեզ արդեն հայտարարել է իր հավակնությունների մասին այս մարզի նկատմամբ։*

Իզվոլսկի²

Ա. Դ. Սազոնովը պատասխանում է Ա. Պ. Իզվոլսկուն (5/18 մայիսի 1915 թ.)

¹ Տե՛ս «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», *Աշուտ Գովհամնիսյամի* խմբագրությամբ և առաջարկով, Երևան, 1926, էջ 12-13:
² «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան» էջ 10-11: Տե՛ս նաև «Раздел Азиатской Турции», под редакцией *Е. А. Адамова*, Москва, 1924, стр. 125-126.

Ռուսաց արտաքին գործերի մինիստր Ե. Դ. Սազոնովը Փարիզի դեսպան Ա. Պ. Իզվոլսկուն Հեռագիր

№ 2307

5/18 մայիսի 1915 թ.

Ձեր № 318 հեռագիրն ստացված է։

Հայերի հետ ունեցած զրույցները զուտ ակադեմիական բնույթ եյին կրում։ Չավրիևին վոչ մի վորոշ ծրագիր մատնանշված չի յեղել։ Նրա այն խնդրին, վոր մենք ի նկատի ունենանք հայերի բաղձանքները՝ Կիլիկիան մտցրած տեսնելու ապագա հայկական մարզի սահմանների մեջ, պատասխան է տրված յեղել, վոր մենք չենք կարող պաշտպանել այդպիսի մի ցանկություն՝ ի նկատի ունենալով Կիլիկիայում ֆրանսիական շահերի տիրապետող լինելը։

ՍԱԶՈՆՈՎ¹

Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության համապատասխան դեպարտամենտում պահվող մինչ այդ գաղտնագրված փաստաթղթերը լույս աշխարհ գալով հաստատում են, որ արևմտահայության ղեկավարությունը Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցի համաձայնությամբ և արտոնությամբ պատվիրակություն է ուղարկել Եվրոպա՝ Հայոց հարցի լուծման թեմայով բանակցություններ վարելու։ Պատվիրակության կազմումն էին *Հակոբ Չավարյանը (բժիշկ Չավրիև) և Պողոս Նուբար փաշան։*

1915 թ. հունիսի 1/14-ին Ա. Պ. Իզվոլսկին Փարիզից Նևայի ափեր է հեռագրում, որում Ա. Դ. Սազոնովին տեղեկացնում է Յ. Յ. Դաշնակցության կուսակցության պատվիրակ *Հակոբ Չավրիևի* (բժիշկ Չավարյան, 1866-1929) և Ամենայն Հայոց կաթողիկոս, «աջ բազուկ Պողոս Նուբար փաշայի» Ֆրանսիա ժամանելու մասին։ Հայ բանագնացները Սենայի ափերում հանդիպումներ էին ունեցել միջազգային լրագրողների, ֆրանսիացի «բարձրապատիվ պետական այրերի հետ», որոնց խնդրել են զորավիզ կանգնել իրենց ծրագրերը իրողության վերածելու պրոցեսին։

Պողոս Նուբար փաշան, որը փայլուն տիրապետում էր ֆրանսերենին, ուներ դիվանագիտական աշխատանքի հարուստ փորձ, Իզվոլսկուն ասում է. «Պատվիրակությանը հանձնարարված է պաշտպանել «*Ավտոնոմ Հայաստան*» ձևավորելու պրոցեսն, այն հաշվով, որ վարչաքաղաքական նոր միավորը դրվի Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի «պրոտեկտորատի տակ»։

Ահա Իզվոլսկու հեռագրի տեքստն ամբողջությամբ.

Պետերբուրգի արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին Հեռագիր

№ 377

1/14 հունիսի 1915 թ.

Փարիզում գտնվող դոկտոր Ջավրիևն ու Նուբար փաշան ինձ իրագել են պահում ֆրանսիական կառավարական անձանց, քաղաքական գործիչների ու լրագրողների հետ իրենց ունեցած խոսակցություններին, վորոնց նպատակն է՝ սրանց թեքել հայկական այն բաղձանքներն ընդունելու կողմը, վորոնք շարադրված են ձեզ հայտնի հուշաթղթում (իմ № 318 հեռագիրը)։ Նրանց ասելով՝ թեև այստեղի արտաքին գործերի մինիստրության մեջ շարունակում են պնդել, վոր Ֆրանսիայի համար

¹ «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», էջ 11: Տե՛ս նույնպես *Е. А. Адамова*, նշված աշխատությունը, էջ 126:

անհրաժեշտությունն է վոչ միայն Սիրիային, այլև ամբողջ Կիլիկիային մինչև Տավրոս տիրելը, այնուամենայնիվ բազմաթիվ ազդեցիկ անձինք նրանց ներկայացրած փաստարկությունների ազդեցության տակ իբրև թե քիչ-քիչ թեքվում են այն մտքի կողմը, վոր ստեղծվի ավտոնոմ Հայաստան՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Անգլիայի յեռակի պրոտեկտորատի ներքո, հետև առած նաև Կիլիկիան՝ Ադանա ու Մերսին քաղաքներով, սակայն իրաց առյալ Ալեքսանդրետտայի ժովածոցն՝ Ալեքսանդրետտա նավահանգստով հանդերձ, վոր պիտի անցնի Ֆրանսիային: Նուբար փաշան այս խնդրի մասին Դելկասեյին մի հատուկ հուշաթուղթ է տվել, վորում Ֆրանսիայի ինքնասիրությունը պաշտպանելու նպատակով այն միտքն է հայտնում, վոր Ֆրանսիան ստանալով ամբողջ Կիլիկիան՝ կարող է իր սեփական նախածնունդով զիջել վերոհիշյալ յերկրամասը հայերին: Այս հուշաթղթում յեմքաղրվում է նաև, ի միջի այլոց, վոր պետք է ստեղծվի առանձին ավտոնոմ Քուրդիստան՝ վերոհիշյալ պետություններից մեկի կամ բոլոր յերեքի պրոտեկտորատի ներքո: Ձեր № 2307 հեռագիրը նկատի ունենալով յես շարունակում եմ ջանադիր կերպով ձեռնպահ մնալ Ձավրիևի ու Նուբար փաշայի ցանկություններին վորևե ոժանդակություն ցույց տալուց: Այն դեպքում, յեթե այստեղ իրապես հակում արտահայտվեր վերոհիշյալ ծրագիրն ընդունելու, մի մերժեք տեղեկացնելու ինձ, թե վորչափով ձեր կողմից համակրության է հանդիպում այս ծրագիրը:

ԻԶՎՈՒՍԿԻ¹

Երեք օր չանցած Դ. Սազոնովը ոչ միայն Ա. Պ. Իզվոլսկուն տեղեկացնում է հեռագրի ստացման մասին, այլև Կիլիկիան Ֆրանսիայի տիրապետության տակն անցնելու դեպքում, դեսպանին հանձնարարում Ռուսաստանի բռնելիք դիրքորոշումը:

Ռուսաց արտաքին գործերի մինիստր Ա. Դ. Սազոնովը
Փարիզի դեսպան Ա. Պ. Իզվոլսկուն
Հեռագիր

№ 2850

3/16 հունիսի 1915 թ. (ցերեկվա ժ. 61/2-ին)

Հաղորդում է Լոնդոն

Ձեր № 377 հեռագիրն ստացված է: Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Անգլիայի յեռակի պրոտեկտորատի տակ լինելիք ու հնարավոր ավտոնոմ Հայաստանի սահմանների միջից Կիլիկիան Ադանայով ու Մերսինով հանդերձ հանելը տեղի ունեցավ մեր այն ցանկության շնորհիվ, վորով ուզում էյինք մեր կանխահաճ վերաբերմունքը (предупредительное отношение) ցուցադրել Ֆրանսիայի այն հավակնությունների նկատմամբ, վոր ունի այս տերիտորիայի վերաբերմամբ: Իսկ յեթե հայ պատվիրակներին կըհաջողվի Փարիզի կաթինետը հակել Կիլիկիան ապագա հայկական մարզի կազմի մեջ մտցնելու կողմը, ապա կայսերական կառավարությունը կարող է համակրություն տածել տաճկահայերի ցանկությունների իրագործման նկատմամբ, վորոնց նա ի վաղուց անտի հովանավորել է:

ՍԱԶՈՆՈՎ²

Փարիզում գործերն ավարտած համարելուց հետո Պողոս Նուբար փաշան մեկնում է Լոնդոն, որտեղ, հանդիպումներ ունենալով ռուսական դեսպան Ա. Կ. Բենկեն-

¹ «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», էջ 11-12:
² Լույն տեղում, էջ 12:

դորֆի հետ, նրանից խնդրելում է Անտանտի տերությունների համաժողովներում պաշտպանել իր և Իզվոլսկու միջև կայացած համաձայնությունը ապագա Հայաստանի վերաբերյալ:

Ա. Կ. Բենկենդորֆը համաձայնվում է Պողոս Նուբարի առաջարկի հետ, սակայն հուլիսի 2/15-ին հեռագրում է Ս. Դ. Սազոնովին, իր վերադասին տեղյակ պահում կայացած երկխոսության մասին:

Բերենք այդ հեռագիրն ամբողջությամբ.

Լոնդոնի ռուսական դեսպան կոմս Ա. Կ. Բենկենդորֆն
արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին
Հեռագիր

№ 462

2/15 հուլիսի 1915 թ.

Ինձ այցելեց Նուբար փաշան: Նա ասաց ինձ, վոր յեկել է Փարիզ ու Լոնդոն՝ իբրև հավատարմատար կաթողիկոսի, վորի ծրագիրն ընդունել է կայսերական կառավարությունը: Այս ծրագիրն է վեց վիլայեթների ավտոնոմիան՝ Կիլիկիայով հանդերձ, վորը չեզոք հայտարարված պիտի լինի յերեք պետությունների պրոտեկտորատի ներքո: Նա ինձ ասաց, վոր այս ծրագիրը համապատասխանում է Ռուսաստանի տնտեսական ու բարոյական շահերին, ինչպես և Ֆրանսիայի ու Անգլիայի բարեհաճ ուշադրությանը, վորովհետև տաճկական կայսրության Ասիական մասի բաժանումն անխուսափելի յե դարձել: Նա ինձ ասաց, վոր Դելկասսեյի խնդրանք ինքը խոստացել է նրան մի հուշագիր ներկայացնել. նմանապես Նիկոլսոնի խնդրանք ինքը սրան հանձնել է նույնպիսի մի հուշագիր՝ աննշան փոփոխված խմբագրությամբ: Նա պատճենը կըթողնե իմ տրամադրության տակ: Նա կարծում է, վոր իր Փարիզ գնալը վորոշ ազդեցություն է ունեցել Ֆրանսիական կառավարության վրա, վորովհետև նրա գալուց առաջ Ֆրանսիան պահանջում էր Կիլիկիան: Նա աշխատել է ապացուցել, և ինչպես ինքը կարծում է, վոչ առանց հաջողության, վոր նման քաղաքականությունը կորստաբեր է Ֆրանսական շահերի համար և Ֆրանսիայի, Ռուսաստանի ու Անգլիայի հետ ունենալիք ապագա հարաբերությունների տեսակետից: Ճիշտ չիմանալով կայսերական կառավարության հայացքները՝ յես սահմանափակվեցի բացառապես վստահեցնելով ու հաստատելով այն մեծ նշանակությունը, վոր Ռուսաստանը տալիս է հայկական խնդրին և այն մեծ շահագրգռությունը, վոր հարուցանում է նույն խնդիրը:

ԲԵՆԿԵՆԴՈՐՖ¹

Հեռագիրը ստանալուց մեկ շաբաթ անց, խորհրդակցելով Նիկոլայ Երկրորդի հետ, Ս. Դ. Սազոնովը Ս. Դ. Բենկենդորֆին տալիս է նոր բացատրություն և ոչ այնքան պարզորոշ հանձնարարական:

Ահա այդ նոր գրության տեքստը.

¹ «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», էջ 13:

№ 3476

7/20 հուլիսի 1915 թ.

Մատնանշում եմ իմ № 2850 հեռագիրը:

Չեր № 462 հեռագիրն ստացված է:

Սուլթանի գերիշխանության ներքո և Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Անգլիայի յեռակի պրոտեկտորատի տակ ավտոնոմ հայկական մարզ ստեղծելը բնական զարգացում կըլիներ այն ի վաղուց անտի բարյացական վերաբերմունքի, վոր տաճկահայերի նկատմամբ ունեն վոչ միայն Ռուսաստանն, այլև նրա դաշնակիցները: Սակայն կայսերական կառավարությունն այս խնդրի նկատմամբ վերջնական վճիռ դեռ չե կայացրել, և հայ լիազորների հետ ունեցած բոլոր զրույցները զուտ ակադեմիական բնույթ են կրել:

ՍԱԶՈՆՈՎ¹

Անգլո-ֆրանս-ռուսական եռակողմ բանակցությունների ընթացքում պարզվում է, որ հայ բժիշկ Ջավրիևը (Ջավարյանը) տեղեկացվել է, թե «**Ջեմալ Ահմեդ** փաշան դժգոհում է երիտթուրքերի կառավարության վարած քաղաքականությունից»: Նա այդ լուրերը հաղորդում է Բուխարեստի ռուսական դեսպան **Պոկլևսկուն** և նրա խողովակով՝ Արտգործախարարության քաղաքական երկրորդ բաժնի խորհրդական **Ն. Կ. Գուլկեիչին** և վերջապես Դ. Ս. Սազոնովին: Լուրն ապշեցուցիչ էր, անհավատալի, դրա համար էլ այդ թեմայով վարված բանակցությունները կատարվում էին «**հույժ գաղտնի**» մակագրության տակ: Բերենք դրանցից մի երկուսը:

1915 թ. նոյեմբերի 28 - դեկտեմբերի 11-ը թվագրված հեռագրում կարդում ենք.

Բուխարեստի ռուսական դեսպան Ս. Ա. Պոկլևսկին
արտաքին գործերի մինիստրության II քաղաքական բաժնի
խորհրդական Կ. Ն. Գուլկեիչին
Յեռագիր

№ 778

28 նոյեմբերի / 11 դեկտեմբերի 1915 թ.

Անձնական. խնդրում եմ ծածկագիրը բաց անել անձամբ:

Ջավրիևին տեղեկություններ են հասել Ջեմալ փաշայի ու տաճիկ կառավարության միջև ծագած գժտությունների վերաբերյալ, վորոնք վորոշ հույս են տալիս այն մասին, վոր թերևս կըհաջողվեր Ջեմալին դրդել Կոստանդնուպոլսի դեմ կատարելիք բացահայտ յեղույթի, յեթե համաձայնության պետությունները նրան խոստանային, վոր ինքը կիշխե Փոքր-Ասիայում: Ջավրիևը հարցնում է, թե վորչափով վերոգրյալը համապատասխանում է կայսերական կառավարության հավակնություններին, վորովհետև այն ժամանակ հայերը վորոշ միջոցներ ունեն Ջեմալի վրա ազդելու համար:

ՊՈԿԼԵՎՍԿԻ²

1915 թ. նոյեմբերի 29-ը դեկտեմբերի 12-ին ուղարկված հեռագիրն այսպիսի բովանդակություն ուներ:

¹ «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», էջ 13-14:
² Երևան տեղում, էջ 14:

№ 6150

29 նոյեմբերի / 12 դեկտեմբերի 1915 թ.

Չեր № 778 հեռագիրն ստացված է:

Ամեն մի տարածայնություն Տաճկաստանում, մասնավորապես կառավարական շրջաններում, մեզ ձեռնտու միայն կարող է լինել: Ջեմալին կարելի յե տալ ամենալայն խոստումներ: Դաշնակից պետությունների համաձայնությունն այս խոստումների նկատմամբ կըստացվի, յերբ վոր այս անհրաժեշտ կըլինի: Մինչև այն ժամանակ անհրաժեշտ է գործը վարագուրել ըստ կարելվոյն մեծ գաղտնապահությամբ:

ԳՈՒԼԿԵՎԻՉ¹

Գնալով Ջեմալ Ահմեդ փաշայի հակապետական գործունեությունն առավել լուրջ բնույթ էր ստանում: Դմիտրի Սազոնովի 1915 թ. դեկտեմբեր 12/25-ին եվրոպական տերություններում հաստատված Ռուսաստանի դեսպաններին հղած բացատրական-հանձնարարական գրությունից պարզ է դառնում Թուրքիայի ռազմածովային ուժերի մինիստրի մտադրությունները: Դրանք էին.

1. **Ապստամբության դրոշ պարզել Մեհմեդ Թալեաթ փաշայի իշխանության դեմ, եթե.**

2. **Դաշնակից տերությունները միաբերան իրեն հռչակեն թուրքական սուլթան և իր մահից հետո, ժառանգաբար, որդուն ճանաչեն իրավահաջորդը:**

3. Դրան, որպես հատուցում, «**նորընծա սուլթանը**» համաձայնում էր մայրաքաղաք Կոստանդնուպոլիսն ու զույգ ջրուղիները (նեղուցները) հանձնել Անտանտին, ավելի կոնկրետ՝ Ռուսաստանի սրի ողորմածությանը, եթե.

4. Ասիական Թուրքիայի վիլայեթներից ձևավորվեր **Ավտոնոմ** նահանգներ՝ **Սիրիա, Պաղեստին, Միջագետք, Արաբիա** (այսինքն՝ Իրաք) անվանակոչումներով: **Հայոց 7 վիլայեթներից կազմավորվեր Ավտոնոմ Հայաստան** նոր վարչամիավոր, որի կազմում պետք է մտցվեր Կիլիկիան (ամբողջությամբ): Խոստացվում էր անկախ **Քուրդիստանի** ավտոնոմիայի կյանքի կոչումը:

Ջեմալ Ահմեդը պահանջում էր, որ այդ բոլոր ավտոնոմ վարչամիավորները դրվեին իր գերիշխանության ներքո և շարունակեք գոյատևել **Թուրքիա տերությունը** կայսրության ասիական տարածքի վրա, նոր սահմաններով, նոր կարգավիճակով:

5. Ջեմալը միաժամանակ պարտավորվում էր արշավել Կոստանդնուպոլսի վրա, ոչ միայն իշխանությունից զրկել Թալեաթի կառավարությանը, այլև գահընկեց անել **Մեհմեդ V սուլթանին**, նրան հանձնել Անտանտի զինվորականներին, եթե վերջիններս իրեն ապահովեին ֆինանսական միջոցներով, **տրամադրեին զենք (հատկապես հրետանի) և զինամթերք:**

6. Ջեմալը պարտավորվում էր հպատակ հայերին փրկել կոտորածներից (sic), նրանց ապահովել սնունդով և այլաբնույթ օգնությամբ (խաբելու ինչպիսի՝ ստոր ձևաչափ, ամոթանքի ինչպիսի՝ անչափություն):

7. Դ. Սազոնովը այդքան էլ չէր հավատում «նոր սուլթանի առատադրյուր խոստումներին», սակայն կարծում էր, որ նրա ձեռքով Թուրքիայում խռովություն կառաջանար, որն օգտակար էր դաշնակիցներին²:

¹ «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», էջ 15:
² "Раздел Азиатской Турции", Москва, 1924, стр. 142-144.

Հայկոմկուսի Կենտկոմի գլխավոր քարտուղար, բայց այս պարագայում պատմաբան Աշոտ Չովհաննիսյանը, գնահատելով Դ. Սազոնովի վերոհիշյալ հեռագրի կարևորությունը, **Թաղևոս Ավդալբեգյանին** հանձնարարել էր խնամքով թարգմանել այն: Ավելին (**ինչպես ինքն ինձ պատմեց**). երկուսով համեմատել էին տեքստում օգտագործված բառերն ու արտահայտությունները, հնարավորինս դրանց հայեցի տեսք տվել: Որպեսզի ընթերցողն ամբողջական պատկերացում կազմի խնդրի էության մասին, մեջբերենք այդ փաստաթուղթն ամբողջությամբ, առանց որևէ վիրահատության: Ահա այն.

**Ռուսաց արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովը
Փարիզի, Լոնդոնի ու Չոունի դեսպաններին՝
Ա. Պ. Իզվոլսկուն, կոմս Ա. Կ. Բենկենդորֆին ու Մ. Ն. Գիրսին
Չեռագիր**

№ 6391 12/25 դեկտեմբերի 1915 թ.

Կոստանդնուպոլսի հայկական շրջաններից հաղորդում են, վոր իբրև թե հույս կա Ջենալին թեքելու Կոստանդնուպոլսի կառավարության ու գերմանացիների դեմ լինելից բացահայտ ապստամբության կողմը, յեթ պետությունները նրան առաջարկեն հետևյալ պայմանները.

1) Պետությունները յերաշխավորում են անկախությունն ու անձեռնմխելիությունն Ասիական Տաճկաստանի, վորը պետք է կազմված լինի Սուլթանի գերիշխանության ներքո գտնվող հետևյալ ավտոնոմ նահանգներից – Սիրիայից, Պաղեստինից, Միջագետքից, Արաբիայից, **Հայաստանից՝ Կիլիկիայով հանդերձ** ու Զուրդիստանից:

2) **Սուլթանն ե հայտարարվում Ջենալ փաշան՝ հորից ավագ վորդուն անցնելու ժառանգական իրավունքով:**

3) Ջենալը պարտավորվում է Կոստանդնուպոլսի կառավարությունն ու Սուլթանին, իբրև գերմանացիների ձեռքում գերի յեղածների, գահընկեց հայտարարելու, այլև արշավելու նրանց վրա:

4) Կ. Պոլսի վրա կատարելից նրա արշավանքի ժամանակ պետությունները նրան մատակարարելու յեն զենք, մթերք ու հրետանի:

5) Պատերազմի վերջնալուծց հետո պետությունները Ջենալին ֆինանսական ռժանդակություն ցույց կըտան:

6) Ջենալը հաշտվում է Կ. Պոլսի ու նեղուցների կորստի հետ:

7) **Ջենալը պարտավորվում է հենց այժմ և եթ միջոցներ ձեռք առնելու՝ հայերին փրկելու և վերջիններիս մինչև պատերազմի վախճանը կերակրելու համար:**

Ամեն տեսակի ներքին բարդությունները կարող են Տաճկաստանի ույժերը թուլացնել միայն և ծառայել մեր ոգտին: Այս նկատի ունենալով՝ կարծում են, վոր պետք էր մեզ անձնվեր հայերի միջոցով Ջենալի հետ գաղտնի բանակցությունների մեջ մտնել: Յեթ վերջինիս չհաջողվեր ել գերմանացիներին արտաքսել ու Կոստանդնուպոլսի կառավարությունը տապալել, այնուամենայնիվ ոգտակար կըլիներ Ռսմանյան կայսրության մեջ խռովություն առաջ բերելը:

Բարեհաճեցեք խորհրդաբար բացատրվել արտաքին գործերին մինիստրի հետ ու շտապ հեռագրել:

ՍԱԶՈՆՈՎ՝

«Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից, Երևան, 1926, էջ 15:

Ջենալ փաշայի հետ վարվելից բանակցություններն օր առ օր դառնում էին տեսլական: Նա դեկտեմբեր ամսին գտնվում էր Եգիպտոսում, և դրկտոր Ջավրիևի հաղորդած տեղեկությունների համաձայն, սպասում էր դաշնակից տերությունների արտաքին գործերի նախարարությունների ներկայացուցիչներին, որպեսզի համաձայնության փաստաթուղթ ստորագրվեր և ինքն անցներ բացահայտ գործողությունների:

1915 թ. դեկտեմբեր 12/25-ին Բուխարեստի ռուսական դեսպան Ս. Ա. Պոկլևսկին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության քաղաքական երկրորդ բաժնի խորհրդական Կ. Ն. Գուլկևիչին (ի պատասխան նրա ուղարկած № 6150 հեռագրի) հեռագրով հաղորդում է փաստեր, որոնք նոր լույս էին սփռում խնդրի հետագա զարգացման պատմության վրա, հաստատվում էին:

Ահա այդ հեռագիրն ամբողջությամբ.

**Բուխարեստի ռուսաց դեսպան Ս. Ա. Պոկլևսկին
արտաքին գործերի մինիստրության II քաղաքական բաժնի
խորհրդական Կ. Ն. Գուլկևիչին
Չեռագիր**

№ 815 12/25 դեկտեմբերի 1915 թ.

Ստացա Ձեր № 6150 հեռագիրը:

Ջավրիևը կարծում է, վոր Ջենալին վերաբերող նախագիծը հաջողության ավելի մեծ հավանականություններ կունենար, յեթ իրագործվեր արտաքին գործերի մինիստրության գործակալների միջոցով, ըստ վորում հայերը միայն աջակցություն ցույց կըտային այնտեղ, վորտեղ հարկավոր է: Սակայն յեթ պահանջվում է, հայերը պատրաստ են բանակցություններն սկսել ու անմիջապես յերկու վստահելի անձանց ուղարկել Յեգիպտոս Ջենալի հետ իրենց ունեցած կապը վերականգնելու համար: Նախատեսելով այն դժվարությունները, վորոնց այս անձինք կարող են հանդիպել իրենց ուղևորության ընթացքում, այլև Յեգիպտոսում, Ջավրիևն անհրաժեշտ է համարում, վոր արտաքին գործերի մինիստրությունը 1) յերկու հոգուն ել հարկավոր անցաթերթեր ու յերաշխիքներ տա, 2) կարգադրե, վոր Ռուզենի սահմանի վրա գտնվող սահմանապահ իշխանություններն անարգել բաց թողնեն այս յերկու հոգուն յերկու սահմաններից ել, 3) ցուցումներ անե Ֆրանսիայում ու Անգլիայում յեղած մեր դիվանագիտական ներկայացուցիչներին, վոր սրանք աջակցեն հիշյալ անձանց՝ առանց արգելքի յերկու յերկիրներից անցնելուն և ապահովեն նրանց արագ ուղեկցությունը ծովով դեպի Յեգիպտոս, 4) վոր մինիստրությունը նախազգուշացնե Յեգիպտոսի տեղական իշխանություններին այն մասին, վորպեսզի սրանք խոչընդոտ չհանդիսանան հիշյալ անձերի աշխատանքին, վոր կատարվելու յե այն ուղղությամբ, վոր նրանք հարկավոր կըհամարեն, 5) վոր Յեգիպտոսի մեր դիվանագիտական ներկայացուցիչին հանձնարարե այս յերկու անձին ցույց տալ անհրաժեշտ հովանավորությունը, պաշտպանությունն ու ձեռքից յեկած աջակցությունը, 6) թույլատրե հիշյալ յերկու անձանց հեռագրով հարաբերություն պահպանել Ջավրիևի հետ՝ Յեգիպտոսի ու այլ յերկիրների մեր դիվանագիտական ներկայացուցիչների հետ: Գործուղվող անձանց վրա պարտականություն է ընկնում Ջենալի հետ հարաբերություններ սկսելու ուղիներ գտնել, աշխատել նրան շահագրգռելու արվող առաջարկով ու նրան բանակցությունների քաշելու, ընդվորում, հաջողության դեպքում, հայերը կըչեզոքանան գործից, և այն ժամանակ արտաքին գործերի մինիստրությունը բուն բանակցությունների վարումը պետք է հանձնե հատուկ մարդկանց: Գործուղվող անձինք իհարկե չեն յերաշխավորում, վոր նրանց փորձերը հաջողու-

թյամբ կրպակվեն, մանավանդ ի նկատի ունենալով այն փոփոխությունները, վորոնք կարող են տեղի ունենալ Ջեմալի տրամադրությունների մեջ այն վիթխարի տպավորության ազդեցության ներքո, վոր գործել են Տաճկաստանում գերման-բուլղարական բանակի հաջողություններն ու Գալլիպոլի թերակղզու մի մասը անգլա-ֆրանսացիների կողմից պարսելը: Գործուղվող անհատներից մեկը **ռուսահպատակ** է, իսկ մյուսը՝ **անգլահպատակ**: Խնդրում են ցուցումներ:

ՊՈՎԵՎՍԿԻ՝

Ռուսաստանի արտգործնախարարության արխիվից հանված փաստաթղթերից պարզ էր դառնում, որ **Ջեմալ** – **Անտանտա** գործարքը խրախուսում և հովանավորում էր **Չմեռային պալատը**, քանզի Պետրոգրադին խոստացվել էր տիրանալ **Կոստանդնուպոլսին և նեղուցներին**: Իրականացնում էր Ռոմանովների գահակալների վաղեմի երազանքը, և **Նիկոլայ երկրորդն** ու իր մինիստրներն այնքան ոգևորված էին, որ արդեն մոռացել էին հայ ժողովրդին տված խոստումները: «Ասիական Թուրքիան», այսինքն՝ Արևմտյան Հայաստանը նորից մնալու էր Ահմեդ Ջեմալի գերիշխանության ներքո՝ իհարկե, Ավտոնոմիայի իրավունքով (sic):

Այդ ծրագրին շուտով դեմ արտահայտվեցին Փարիզն ու Լոնդոնը: Ֆրանսիան դժգոհեց, որովհետև նրանից «**վերցվում էին**» **Կիլիկիան, Սիրիան և Պաղեստինի** մի մասը (որոնք մինչ այդ խոստացվել էին Պուանկարեին):

Բրիտանական կղզիները գաղտնի բանակցություններ էին վարում **Մեքքայի շերիֆի հետ**, խոստանալով ստեղծել արաբական ընդարձակ խալիֆաթ՝ Լոնդոնի հովանու ներքո: Այժմ Ջեմալի գործարքը փաստորեն խառնում էր բոլոր խաղաքարտերը: Մեկ խոսքով, դեռևս բանակցությունները չսկսված, Անտանտի շղթայում բացահայտ ճեղքեր էին երևում, որի մասին 1915 թ. դեկտեմբերի 16/29-ին **Ս. Դ. Իզվոլսկին** Փարիզից ահազանգում էր Ս. Դ. Սազոնովին:

Նա գրում էր.

Փարիզի ռուսաց դեսպան Ա. Պ. Իզվոլսկին արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին Հեռագիր

16/29 դեկտեմբերի 1915 թ.

№ 854

Պատճենը Լոնդոն:

Մատնանշում եմ իմ **№ 851** հեռագիրը:

Բրիանը, վորի հետ մինիստրների խորհրդից հետո տեսնվեցի այսօր, ինձ ասաց, վոր ինքը կատարելապես ըմբռնում է **Ջեմալի հետ ունենալիք բանակցությունների շեր ծրագրի ամբողջ կարևորությունը, սակայն այս ծրագիրն այն ձևով, ինչպես դուք եք ներկայացրել, ֆրանսական կառավարության կողմից լուրջ առարկություններ է առաջ բերում, վորովհետև շեր նկատի ունեցած պայմանների իրագործումը յենթադրում է, վոր Ռուսաստանն իրեն կպահե Կոստանդնուպոլսին ու նեղուցները, այն ինչ Ֆրանսիան պետք է հրաժարվի այն հողերից, վորոնք նրա համար ապահովված են մեզ հետ կնքած համաձայնությամբ, այսինքն՝ պետք է հրաժարվի Սիրիայից, Պաղեստինի մի մասից ու Կիլիկիայից**: Ֆրանսիայի համրային կարծիքը չի ըմբռնիլ մի այդպիսի հրաժարում ճիշտ այնպես, ինչպես ռուս հասարակական կարծիքը չէր ըմբռնիլ Ռուսաստանի՝ Կոստանդնուպոլսից ու նեղուցներից հրաժարվելը: Բացի սրանից, չի կարելի մոռացության տալ,

¹ «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», էջ 16-17:

վոր **Անգլիան նկատի ունի ստեղծել մի անկախ արաբական խալիֆաթ և արդեն այս մասին բանակցություններ է վարում Մեկկայի շերիֆի հետ**: Վերջում Բրիանը ինձ կասկած հայտնեց այն մասին, թե արդյոք շեր նկատի ունեցած ծրագիրը կարող է (իրապես) գլուխ բերել Ջեմալը, վորը շատ սահմանափակ թվով զորք ունի: Յես պատասխանեցի (Բրիանին), վոր, իմ համոզմունքով, շեր առաջարկով հանդես գալով՝ Դուք (ամենից) առաջ նկատի ունեյիք այն վիթխարի ոգուտը, վոր բոլոր դաշնակիցներին կտա Ռոմանյան կայսրության մեջ ծագող խռովությունը, վոր ընդ սմին դուք հեռու յեք յեղել Ֆրանսիայի շահերն անտես առնելուց և վոր շեր ծրագրի մշակման ժամանակ հիշյալ շահերը, ինչպես և Անգլիայի շահերը, կարող են ապահովվել զանազան կոմբինացիաների միջոցով: Գլխավորն այն է, ավելացրի յես, վոր ձեռքից բաց (չը)թողնենք բարդություններ առաջ բերելու ներկայացող առիթը, բարդություններ, վորոնք մի անգամից պատնեշ կը կանգնեցնեն Գերմանիայի արևելյան ծրագրերի իրագործման հանդեպ: Բրիանն այս վերջին մտքին համաձայնեց և ինձ ասաց, վոր ինքը պատրաստ է Ջեմալի հետ ունենալիք շեր առաջարկած բանակցություններին դիմելու, միայն թե այս դեպքում կատարելապես վորոշակի վերապահվեյին Ֆրանսիայի՝ Ասիական Տաճկաստանի այն մասերի վրա ունեցած իրավունքները, վորոնց տիրելը Ֆրանսիայի համար ապահովված է մեզ հետ կնքած համաձայնությամբ:

ԻԶՎՈՒՍԿԻ՝

Քննարկվող խնդրին ամենից լուրջ ուշադրություն էր դարձնում Ս. Դ. Սազոնովը: Նա ոչ միայն տարածքներ ձեռք բերելու ակնկալիքներ ուներ, այլև ձգտում էր ներսից պայթեցնել Օսմանյան սուլթանատը, դրանով իսկ հեշտացնել դաշնակիցների ծավալած ռազմական գործողությունները և՛ Դարդանելում, և՛ Ասիական նահանգներում: Բացատրական այդ գրությունները, գաղտնագրված հեռագրով դուրս էին գալիս Պետերբուրգից և կրկնօրինակված ուղարկվում **Փարիզ** ու **Լոնդոն**:

Բերենք այդ հեռագիրն ամբողջությամբ.

Ռուսաց արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովը Փարիզի դեսպան Ա. Պ. Իզվոլսկուն Հեռագիր

№ 6459

Փարիզ, շտապ.

Հաղորդվում է Լոնդոն:

17/30 դեկտեմբերի 1915 թ.

Չեր **№№ 854** ու **855** հեռագրերն ստացված են:

Ջեմալի հետ ունենալիք բանակցությունները համարելով մի միջոց, վորով կարելի յե Տաճկաստանի մեջ խռովություն առաջ բերել ու Յեգիպտոսի վրա կատարելիք արշավանքը խափանել, յես հարկ համարեցի հայերի առաջարկած ծրագիրը բառացի ներկայացնել դաշնակիցների քննության՝ չառնելով նրա մանրամասնություններին գնահատության մեջ և չպաշտպանելով Ջեմալի ցանկությունները: Յես յենթադրում եյի հիշյալների քննությանն անցնել այն բանից հետո միայն, յերբ **կընդունվեր Ջեմալի հետ բանակցություններ սկսելու բուն իսկ գաղափարը, բանակցությունները, վորոնք ամենևին չեն յենթադրում համաձայնություն այն բոլոր կետերի նկատմամբ, վոր առաջարկել են հայերը**: Հնարավոր է, վոր կհաջողվի Ջեմալի պատվասիրությունն ոգտագործել այլ պայմաններով ել: Դուք կարող եք վս-

¹ «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», էջ 16:

տախազնել Բրիանին, վոր յես թույլ չեմ տալիս մտածել վորևե կերպ նվազեցնելու իրավունքները մեր դաշնակիցների, վորոնք այնպիսի անձնավորությամբ մեզ հետ միասին կրում են պատերազմի ծանրությունները: Վորովիետև արտաքին գործերի միջխտորը տվել ե իր սկզբունքային համաձայնությունը, ապա բարեհաճեցեք պարզել այն պայմանները, վոր նա Ֆրանսիայի համար ընդունելի յե համարում:

ՍԱԶՈՆՈՎ՝

Իբրև նոր տարվա շնորհավորանք, 1915 թ. դեկտեմբերի 19-ին, 1916 թ. հունվարի 1-ին Ա. Պ. Իզվոլսկին Ա. Դ. Սազոնովին նույնպես հեռագրով պատասխանում է (Փարիզից):

№ 861 **19 դեկտեմբերի 1915 թ. / 1 հունվարի 1916 թ.**
Պատճենները Լոնդոն ու Ղեռվմ:

Ստացա ձեր № 6459 հեռագիրը: Անմիջապես հաղորդեցի նրա բովանդակությունը Բրիանին, վոր մի անգամ ել հայտնեց ինձ, վոր թեև **Ֆրանսական կառավարությունն առանձնապես չի հավատում Ջեմալի՝ սրա համար** նախանշված դերը կատարելու ընդունակություններին և նույնիսկ վորոշ չափով վախենում ե, թե այս նրա կողմից մի թակարդ լինի, այնուամենայնիվ **Ֆրանսական կառավարությունը** պատրաստ ե համաձայնելու նրա հետ բանակցություններն սկսելու, միայն թե այս դեպքում վորոշակի վերապահվեն Ֆրանսիայի այն իրավունքները Սիրիայի (Կիլիկիայով հանդերձ) ու Պաղեստինի նկատմամբ, վորոնք ծանաչված են Կոստանդնուպոլսի ու նեղուցների մասին մեզ հետ կնքած համաձայնությամբ: Յես լոկ իմ կողմից հարցրի Բրիանից, թե արդյոք նա դիտավորություն ունի՝ անպայման պահանջելու, վոր հիշյալ վայրերը Ֆրանսիային կցվեն, թե՛ նա հնարավոր ե համարում վորևե այլ կոմբինացիա, որինակ պրոտեկտորատ՝ նոր Սուլթանի անվանական գերիշխանությունը պահպանելով: Այսպիսի կոմբինացիան, ավելացրի յես, **վոչ միայն կարող ե հեշտացնել Ջեմալի հետ** ունենալիք բանակցությունները, այլ և նույնիսկ ավելի գործնական ու նպաստավոր կարող ե լինել հենց իրեն, Ֆրանսիայի համար: Բրիանը պատասխանեց ինձ, վոր առայժմ ինքը չի կարող իմ տված հարցի մասին վորևե կարծիք հայտնել, բայց յեթե Ջեմալի հետ ունենալիք բանակցությունները հանգեն վորևե նման կոմբինացիայի, ապա վերջինս պետք ե հատուկ քննության յենթարկել: Ընդհանուր առմամբ Ձեր հեռագիրը Բրիանի վրա գեղեցիկ տպավորություն ե գործել և ինչպես յերևում ե, նրան հանգստացրել ե:

ԻԶՎՈՒՍԿԻ՝

1915 թ. հունվարի 1-ին Դ. Սազոնովը Փարիզի և Լոնդոնի ռուսական դեսպաններին տեղեկացնում է, որ

№ 6518 **Ղեռագիր**
20 դեկտեմբերի 1915 / 2 հունվարի 1916 թ.

Սատնանշում եմ Փարիզից ստացած № 861 հեռագիրն ու Լոնդոնից ստացած № 886 հեռագիրը: Միջնորդները, վորոնք առաջարկում են Ջեմալի հետ բանակցությունների մեջ մտնել, ավելի հարմար են համարում այս բանակցու-

¹ «Ղայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», էջ 19-20:
² Լույն տեղում, էջ 22:

թյունները Յեգիպտոսում վարել: Արդյոք դաշնակից պետություններն այս նկատի ունենալով՝ հանձն չե՞ն առնիլ հիշյալ աշխատանքը, թե՞ գերադասում են նախապես բացատրվել Չավրիևի միջոցով, վոր գտնվում ե Բուխարեստում:

ՍԱԶՈՆՈՎ՝

1915 թ. հունվարի 12-ին Սազոնովը Փարիզում հաստատված Ա. Պ. Իզվոլսկուն բաց խաղաքարտերով հեռագրում է.

Ռուսաց արտաքին գործերի մինիստր Ա. Դ. Սազոնովը
Փարիզի դեսպան Ա. Պ. Իզվոլսկուն
Ղեռագիր

№ 6633 **30 դեկտեմբերի 1915 թ. / 12 հունվարի 1916 թ.**

Սատնանշում եմ իմ № 6518 հեռագիրն ու Լոնդոնի դեսպանի № 906 հեռագիրը: Միանում եմ Գրեյի կարծիքին, թե հայերի միջոցով Ջեմալի հետ ունենալիք հարաբերություններն ամենից լավ կլինի կենտրոնացնել Ֆրանսացոց ձեռքում: Բարեհաճեցեք այս իմաստով բացատրվել Բրիանի հետ՝ մատնանշելով, վոր առաջ հայտնած նրա կշռադատությունները նկատի ունենալով՝ յես հարկավոր եմ համարում Ֆրանսիային թողնել դեկավարող դերն այն բոլոր խնդիրներում, վորոնք կարող են շոշափել Սիրիայի ծակատագիրը: Ինձ ցանկալի յե, իհարկե, բանակցությունների ընթացքին իրազեկ լինել, և յես կհամձնարարեմ մեր բոլոր ներկայացուցիչներին՝ ամեն կերպ աջակցություն ցույց տալ մեր Ֆրանսացի ընկերակիցներին:

ՍԱԶՈՆՈՎ՝

Ասիական Թուրքիան բաժանելու ռուս-անգլո-ֆրանսիական բարձր մակարդակի բանակցությունները շարունակելու պրոցեսն աստիճանաբար սառում էր: Դրա պատճառն այն էր, որ Ֆրանսիան դեռևս պատերազմից առաջ մտադրվել էր տիրանալ բամբակաշատ Կիլիկիային, իսկ բրիտանական ծովառնյուծը բանակցում էր **Մեքքայի** շերիֆի հետ և կարծես թե հասել էր հաջողության, այն է. **զավթել նավթառատ Իրաքի երկրամասը:**

Թերևս դրանք էին այն պարագաները, որոնք խաթարելով անգլո-ֆրանսիական զավթողական պլանները՝ պատճառ էին դառնում նոր ծրագրերի մշակման: Նրանք Ռուսաստանից գաղտնի որոշեցին ձևավորել նոր փաստաթուղթ, որը պատմության մեջ մտավ **Սայքս-Պիկոյի համաձայնագիր անունով:**

Ի հաստատումն մեր եզրակացության, 1915 թ. մարտի 9/22-ին Փարիզի ռուսական դեսպան **Ա. Պ. Իզվոլսկին** Ռուսաստանի արտաքին գործերի նախարար **Ա. Դ. Սազոնովին** իբրև «**եզրափակիչ ակտ**» հեռագրում է.

Փարիզի ռուսաց դեսպան Ա. Պ. Իզվոլսկին
արտաքին գործերի մինիստր Ա. Դ. Սազոնովին
Ղեռագիր

№ 196 **9/22 մարտի 1916 թ.**

Պատճենը Լոնդոն:

Մի քանի ժամանակ սրանից առաջ, այստեղ յեկավ Չավրիևը: Ղիմնվելով Ձեր նախկին ցուցումների վրա՝ յես նրան աջակցեցի տեսակցելու Բրիանի հետ, վորին

¹ «Ղայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», էջ 24:

նա հաղորդեց Ջեմալի հետ բանակցություններ վարելու ծրագիրը: Բանակցությունները պետք է վարվեն վստահելի անձանց միջոցով, վորոնց Ձավրիևը յենթադրում է Յեզիպտոս ուղարկել: Բրիանը Ձավրիևին ուշադիր ընդունելություն ցույց տվեց, բայց նրան խուսափողական պատասխան տվեց՝ պատճառ բերելով Ջեմալի դրության մասին ունեցած տեղեկությունների անորոշությունը, այլև այն, թե վորչափ Ջեմալը պիտանի յե նրա համար նախանշված դերը կատարելու: Բրիանը ինձանից չթագրեց, վոր ինքն անհարմար է համարում Ջեմալի հետ վորևե բանակցությունների մեջ մտնելը, վորովհետև այս բանակցությունները համարում է անհարիր Ասիական Տաճկաստանի կազմությանը վերաբերող անգլա-ֆրանսական նախագծի հետ, վորի մասին բանակցություններ են վարվում Պետրոգրադում: Բրիանի բացասական վճռի մասին յես հաղորդեցի Ձավրիևին, վորը այս որերս մեկնում է Պետրոգրադ:

ԻՉՎՈԼՍԿԻ

Ըստ յերևույթին հենց սրանով էլ Ջեմալի հետ ունենալիք բանակցություններն ավարտվեցին՝

Ամփոփենք. ա) **Ջեմալ Ահմեդ** փաշայի հետ ծրագրվելիք բանակցությունները տեղի չունեցան, հետևաբար և **ոչ մի հետք չթողեցին** ոչ ընդհանուր և ոչ էլ Հայոց պատմության էջերում:

բ) Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, միաժամանակ ականավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի հանձնարարությամբ **Թադևոս Ավդալբեգյանը**, ռուսերենից թարգմանելով և հրատարակելով Ջեմալին վերաբերող վերոհիշյալ փաստաթղթերը, նպատակ ուներ ժխտել այն վերսիան, թե այս թուրքը իր մյուս ընկերներից տարբերվում է արդյոք: Ասել է թե՛ նա հայ ժողովրդի կյանքում ոչ միայն դրական որևէ դեր չէր կատարել, այլև կազմակերպել և իրականացրել էր ցեղասպանությունն Արևմտյան Հայաստանում:

գ) **Ջեմալի «հայափրկիչ» միսիան ժխտելու նպատակով մենք փորձեցինք խնդիրը փոքր-ինչ հիմնավորված ներկայացնել, ցույց տալով իրականությունը, այն է՝ եռապետության այս երրորդ «հենասյունը» հայ ժողովրդի դահիճներից մեկն էր, և նրա մեղքերը հայոց ցեղասպանության կազմակերպման գործում ոչնչով պակաս չէին իր կուսակիցներից:**

դ) Ջեմալի ծով մեղքերը ապացուցում են ոչ միայն ժամանակակիցները, այլև նրա թողած սերնդի վերջին շառավիղները: 2009 թ. հունիսին Երևան ժամանած Ջեմալ Ահմեդի **հարազատ թոռը**, քաղաքացիական քաջություն ունենալով ճշմարտության երեսին բաց աչքերով նայելու, ծաղկեպսակով գնաց **Ծիծեռնակաբերդ** և չմարող կրակի առջև ներողություն խնդրեց հայ ժողովրդից **պապի կատարած հայասպան գործողությունների համար:**

ե) **Ջեմալի թոռան կատարած խրախուսելի քայլը մեկ անգամ ևս վավերացրեց մեր զարգացրած այս հայեցակարգը, և որն օրինակ պետք է ծառայի այսօրվա թուրք ղեկավարությանը: Թուրքիայի բարձրաստիճան պետական այրերը ոչ թե այսօր էլ հոխորտանքով պետք է խոսեն մեզ հետ, այլ գլխիկոր ներողություն խնդրելով ցեղասպանությանը զոհված ժողովրդի զավակներից՝ նրանց վերադարձնել Հայոց Հայրենիքն ու բռնազավթած մշակութային կոթողների գինը, որն անգին է:**

1 «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», էջ 21:

Գլուխ երրորդ

Սայրս-Պիկոյի համաձայնագիրն (9. VI, 1916 - 6. XI, 1916)

Ասիական Թուրքիայի փարածքի մասնափաման, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի սահմանների ու դրանց նոր կարգավիճակի մասին

Չենքերը վար չպիտի դնենք, մինչև որ Թուրքիայի կողմից ճնշված ազգերը չզարնեն իրենց ազատությունը: Թուրքիան իր վայրագությանը կտրեց անցավ իր տերերին՝ գերմանացիներին: Հայերի հանդեպ գործադրած մեթոդիկ ջարդերը մեզ կարիպեն Եվրոպայի վրայից ավելու այդ փոքր ու վատառողջ ավազակախումբը:

ՎՈՐԴՈ ԹՈՍԱՍ ՎԻՍՈՆ

1914 թվականի հուլիսի 28-ին Բոսնիայի **Սարաևո** քաղաքում սերբացի համալսարանական ուսանող **Պրինցիպը**, ձեռքին բռնած ատրճանակը, մտադրվել էր փորձել զենքի ուժը: Նման կանխամտածությամբ քայլելով քաղաքի կենտրոնական պողոտայով, նա հանկարծ նկատեց, որ շքեղագարդ կառքով անցնում են Ավստրո-Հունգարիայի թագաժառանգ **Ֆրանց-Ֆերդինանդն** ու նրա գեղեցկուհի տիկինը՝ **Էրցեբրգո Տրոհեն Բուրկը**: Տեսնելով այդ գեղեցիկ զույգին, գուցե և չար նախանձից դրդված, Պրինցիպը աջ ձեռքի ցուցամատով մեխանիկորեն քաշեց ատրճանակի բլթակը և իրար հետևից արձակեց մի քանի գնդակներ: Սպանվեցին և՛ **թագաժառանգը**, և՛ **նրա դեռատի տիկինը**:

XX հարյուրամյակի նախաշնչից սկսած աշխարհը կարծես թե վաղուց շունչ պահած սպասում էր նման հարմար առիթի: Թերևս այդ էր պատճառը, որ սովորական, անվարժ ուսանողի արձակած գնդակների ծայրն անմիջապես լսելի դարձավ **Եվրոպայում և Ասիայում, Ամերիկայում և Ավստրալիայում**: Այն արձագանքվեց հողագնդի վրա կառուցված բոլոր զինապահեստներում, այնտեղ, որտեղ տարիներ շարունակ ընդարմացվել էին անսահման քանակության հասնող վառող, տաք ու սառը զենքեր:

Մեկ ատրճանակից արձակված չորս կրակոցներին անմիջապես հաջորդեցին **Առաջին աշխարհամարտն** ազդարարող տերությունների բազում վերջնագրեր, անհամար ճակատամարտեր, ժողովուրդների կրծքավանդակների կամ տերությունների տարածքների վրայով վեր ու վար անող զորաբանակների արյունահեղ զորաշարժերը: Եվ այսպես, անմիջապես ծայր առավ Առաջին աշխարհամարտը, որն իր ընդգրկումով,

տևականությամբ, հողագնդի տարբեր աշխարհամասերում շարժված գործազուրկությունների քանակով աննախադեպ էր հանուր մարդկության պատմության ընթացքում:

Ռուսաստանը հուլիսի 29-ին հայտարարեց մասնակի, իսկ հուլիսի 30-ին՝ լրիվ գործազուրկացում: Գերմանիան օգոստոսի 1-ին պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, իսկ օգոստոսի 3-ին՝ Ֆրանսիային: Անգլիան օգոստոսի 4-ին պատերազմ հայտարարեց Գերմանիային: Օգոստոսի 23-ին Գերմանիայի դեմ ելավ ճապոնիան: Հոկտեմբերի 29-ին **գերմանա-ավստրիական խմբավորմանը միացավ Թուրքիան**: Այնուհետև Անտանտի կողմում պատերազմի մեջ մտան Իտալիան (1915-ի մայիսի 23), Ռումինիան (1916-ի օգոստոսի 27), ԱՄՆ (1917-ի ապրիլի 6):

Պատերազմին սկզբում մասնակցում էր 8 պետություն՝ 732 մլն բնակչությամբ (գաղութներով): Պատերազմի վերջում նրա հորձանուտի մեջ էին ներքաշված աշխարհի 59 պետություններից 33-ը՝ ավելի քան 1,5 մլրդ բնակչությամբ (երկրագնդի բնակչության 87%-ը): Պատերազմն ընդգրկել էր Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի ավելի քան 4 մլն քառ. կմ տարածք: Սկզբում հակառակորդ կողմերը դուրս են բերել 484 դիվիզիա (9747 հազ. մարդ): Պատերազմի ընթացքում գեներալ էր կոչվել մոտ 74 մլն մարդ (Անտանտի երկրներում՝ 48355 հազար և գերմանական խմբավորման երկրներում՝ 25 160 հազար մարդ): 1917 թ. մայիսին հաշվվում էր 889 դիվիզիա (Անտանտ՝ 525, գերմանական խմբավորման պետություններ՝ 364): Անտանտի պետությունների գերակշռությունը գերմանա-ավստրիական խմբավորման նկատմամբ ակնհայտ էր: Սակայն գերմանական զինված ուժերն ունեին ավելի լուրջ կազմակերպվածություն և մարտունակություն, ավելի շատ ծանր սպառազինություն, քան հակառակորդների բանակները: Ընդհանուր առմամբ, Գերմանիան ավելի լավ էր նախապատրաստված պատերազմին, քան որևէ այլ պետություն:

Առաջին աշխարհամարտը տևեց չորս տարի երեք ամիս և 10 օր: Պատերազմում սպանվածների թիվը հասավ տասը միլիոնի, վիրավորներինն ու հաշմանդամներինը՝ **քսան միլիոնի**, համաճարակներից և սովից մահացավ **տասը միլիոն մարդ**:

Դրանցից Ռուսաստանը կորցրեց 2,3 միլիոն, Գերմանիան՝ 2 միլիոն, Ավստրո-Հունգարիան՝ 1440 հազար, Ֆրանսիան՝ 1 383 հազար, Անգլիան՝ 744 հազար, Իտալիան՝ 700 հազար, ԱՄՆ-ը՝ 53 հազար մարդ: Պարտված Թուրքիան կորցրեց 325 հազար զինվոր, որը մնացածների համեմատ զոհերի չնչին թվաքանակն էր կազմում: Փոքրիկ Հայաստանը, դիտարկվելով Անտանտի դաշնակից, իբրև թե պատերազմից «հաղթող» դուրս եկած կողմ, կորցրեց **չուրջ ոչ միայն երկուս և կես միլիոն ազգաբնակչություն**, այլև իր տարածքի հիմնական մասը՝ և՛ Արևմտյան, և՛ Արևելյան Հայաստաններում:

¹ ՉՄԷ, հատ. 1, Երևան, 1974, էջ 527:

² Լույն տեղում, էջ 529:

³ "Всемирная история", том VIII, Москва, 1961, стр. 99.

⁴ **Մ. Վ. Արզումանյան**, Դարավոր գոյամարտ, Երևան, 1989, էջ 568: Տե՛ս նաև **Մյուսթաֆա Կեմալ**, Путь новой Турции, том I, Москва, 1934, стр. 21:

⁵ Հետազոտվող խնդրի մասին ստեղծվել են, ճիշտ է, փոքրաթիվ, սակայն լրջմիտ հեղինակների խորաքննիչ հետազոտություններ: Նշենք դրանցից կարևորները. «Հայերի ցեղասպանությունն ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի»: Առաջարանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ **Ա. Գ. Փափազյանի**, Երևան, 1988: Պրոֆ. **Վահագն Տատրեան**, Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Պայքար, 1995: **Զ. Կիրակոսյան**, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք երկրորդ, Երևան, 1983: **Հրանդ Գանգրու**, Յեղասպան իթթիհատը (1908-1923), Պէյրուս, 1994: **Ալեքսիս Փափազյան**, Հայոց ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում, Երևան - Լոս Անջելես, 1995:

⁶ **Հայկ Ղազարյան**, Հայ ժողովրդի ցեղասպանությունն օսմանյան կայսրությունում (երկրորդ վերաճակված հրատարակություն), Երևան, 2007, էջ 547:

XIX դարի կեսերին Թուրքիայում ապրում էին յոթ միլիոն թուրք, երեք միլիոն հայ, երկու միլիոն քուրդ, մեկ միլիոն յոթ հարյուր հազար հույն: Կային նաև աջարներ, հրեաներ, ալբանացիներ, բոսնիացիներ, եգիպտեր, խորվաթներ, որոնք կազմում էին ընդհանուր ազգաբնակչության 45%-ը: Դեռևս լրիվ չէին թուրքացել թախտաջինները, արդալները, գեյրեկները: Ցայսօր շարունակվում է համաճնցիների (մեծ մասամբ հայեր են) համաձուլման պրոցեսը:

Ինտերնետում տեղադրված, ազգությամբ հույն Թեոդոր Յունիցայի «Հույն-թուրքական 1919-1923 թթ. պատերազմը (համառոտ ակնարկ)» խորագրված հոդվածում, հենվելով հունական սկզբնաղբյուրների ընձեռած փաստերի վրա, հեղինակը փաստում է, թե 1912 թվականին օսմանյան կայսրությունում ապրող ազգաբնակչության ընդհանուր թվաքանակը հասնում էր 10 239 689 մարդու: **Դրանցից հույներն էին 1982 376, հայերը երեք միլիոն էին:** Ստացվում էր այնպես, որ թուրքական սուլթանության ազգաբնակչության **19,35%-ը հույներ էին, 25%-ը՝ հայեր:**

Թվերի տոկոսային նման փոխհարաբերությունները լրջորեն անհամապատասխանում էին Բարձրագույն Դռան պաշտոնյաներին, մանավանդ որ, լրտեսական ցանցի գաղտնի հաղորդագրություններից պարզում էին, թե հույները ծրագրում են Բյուզանդական կայսրության վերականգնումը: Պանթուրքիզմի գաղափարաբանությամբ կերակրվող երիտթուրքերի **եռյակը գործի անցավ**՝ նպատակադրվելով «պակասեցնել» հույների և հայերի թվաքանակը, որպեսզի այլևս չհնչեն անկախ պետություն վերականգնելու «նրանց երազանքները»:

Սկսվեց Աշխարհամարտը: Կառավարական հրամանագրերով, Սոհամեդ Թալեաթի կարգադրությամբ զանգվածորեն փակում էին հայկական ու հունական դպրոցները, արգելում էին ազգային լեզվով մամուլի հրատարակությունը: Օրենք ընդունեցին, որի համաձայն մինչև **44 տարեկան** հայ և հույն տղամարդկանց բանակ էին զորակոչում և ստրկական աշխատանքով, իբրև իսկական ստրուկներ, աշխատեցնում էին բանվորական գումարտակներում: Այդ մեթոդով սկսեցին տեղափոխել հայ և հույն բնակչությանը և քստորել կենտրոնից հեռու: Այժմ էլ Արևելյան Թրակիայից դեպի Փոքր Ասիայի արևմտյան ափերը և Պոնտոս բռնագաղթեցին շուրջ **500 000 հույներ**: Հույների գլխավոր ջարդը և տեղահանության պրոցեսի իրականացումը վերապահված էր Մուստաֆա Քեմալին:

Գլխավոր նպատակը հետապնդող մայրուղուց մի ակնթաթ շեղվելով և հրապարակելով վերոհիշյալ թվերը, մենք ջանացինք ցույց տալ, թե երիտթուրքերն **ինչպիսի ծանր հարված հասցրեցին հայ և հույն ժողովուրդներին**, հատկապես պատերազմի տարիներին: Միաժամանակ ընթերցողին փաստեր տվեցինք, որպեսզի պատկերացում կազմեր, թե այդ մեծ կորուստների հորձանուտում, հայ ժողովրդից պատկերացում կազմեր, որպեսզի հետաքննարկվեցին ցեղասպանության ծանրածանր հարվածներին: Այդ երկու ժողովուրդներն էին, որոնք պատերազմից հետո փայլաբաշտում էին անկախ պետականության վերականգնման վարդազույն երազանքներ:

Եվ այսպես, Առաջին աշխարհամարտը թե՛ ձևով և թե՛ հատկապես բովանդակությամբ երկու խմբավորումների կողմից էլ **նվաճողական-զավթողական էր**: Բացառություն էին կազմում փոքրիկ **Սերբիան ու Հայաստանը**, սրանց թիկունքում վարագուրված զինավառ **Հունաստանը**: Այս երեք երկրների ժողովուրդները վարում էին **ազգային-ազատագրական բնույթի արդարացի պատերազմներ**, քանի որ մաքառում էին իրենց ձեռքերին դարերով պրկված թուրքական շղթաները ոչնչացնելու հայրենամարտ, ազատաբաղձ մտադրությամբ:

¹ Մանրամասն տե՛ս **Հայկ Ղազարյան**, Մոսկվայի և Կարսի պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում, Երևան, 2010, էջ 131-133:

1914 թվականին արդեն բացահայտ էր, որ դեռևս երկու տասնամյակ առաջ ծրագրված, բայց այդ պահին միայն գործարարական ներուժը բոլոր տերություններն էլ մեկ գերագույն նպատակ էին հետապնդում: Այն է. որքան **հնարավոր է շատ տարածքներ բռնազավթել**: Նորանոր երկրների անուններ գումարել նախկինում ունեցած գաղութների ցանկին:

Իր մեծությամբ և ընդգրկումով մարդկության պատմության մեջ նախորդ չունեցող այս Աշխարհամարտի մասնակիցները վաղորդ մտածել էին **բաժանված աշխարհի վերաբաժանման մասին**: Հետևաբար՝ բացահայտ ու գաղտնաձեռնակ հակասություններով առկայություն էին ոչ միայն երկու խմբավորումների մեջ գումարված տարբեր տերությունների հակամարտությունները, այլև միևնույն դաշինքի մեջ ծվարած, դաշնակից, սրտակից տերությունների **շահախնդրությունները**:

Մի կարևոր և լուծման կարող խնդիր ևս: Անկախության վերջին գույգ տասնամյակներին, գրչի ազատ շարժման և արտահայտվելու պատշաճ հնարավորությունների համար ստեղծված նոր պայմաններում, հույժ անհրաժեշտ է բարձրաձայնել, թե քննարկվող խնդիրները, հատկապես պատերազմի և դրան հաջորդող միջազգային հարաբերությունների պատմությունն անցյալում ծուռ հայելու միջով են բեկվել, ապա նոր միայն ներկայացվել ընթերցողին:

Այժմ արդեն հասունացել է պահը կատարելու **ինքնախոստովանություն**, այսինքն՝ պատասխան տալ իմ ու նախորդ սերնդի այն պատմաբանների փոխարեն, որոնք շատ դեպքերում մեղանջել են պատմական ճշմարտությունների առաջ և երևույթները ներկայացրել են գլխավոր վիճակում:

Ընդհանրապես համերաշխելով գրչակից մեր եղբայրներին, ասել է թե՛ խորհրդային և խորհրդահայ պատմաբանների հզոր ու բեղմնավոր վաստակ ունեցող սերնդի հետ, արձանագրենք սակայն, որ **յոթ տասնամյակ** անընդմեջ **ոմանք «համոզված»**, **ոմանք տուրք** տալով դիվանագիտությանը և միջոց դարձնելով անձի ինքնապաշտպանությունը, ոչ մի զանազանություն չէին դնում Արևմուտքի բոլոր տերությունների հետապնդած նպատակների միջև:

Ավելին. ամեն ինչն ընթերցելով **բուլշևիզմի ակնոցներով**, երկնչելով ստալինյան սաստերից, նրանք ընդունել և պրոպագանդել են **«քեմալիզմի հեղափոխականությունը»**: Հայաստանն ու Հունաստանը գնահատվել են իբրև իմպերիալիստական, իսկ թուրքական ագրեսիան՝ ազգային-ազատագրական (sic): Ձավեշտն այն էր, որ թուրքերի դեմ կռվող վիլսոնյան Ամերիկայի ճակատին ևս հակաժողովրդական պիտակ են խարանել:

Գտնվեցին նաև հատուկեմտ մտածողներ, իշխող հայեցակարգին **կիսաբերան** դեմ արտահայտվողներ, որոնք կամ «լքեցին» կոմկուսի շարքերը, կամ էլ հյուրընկալվեցին սիբիրյան տալգայի սև ու սպիտակ արջերի կողմին:

Ասում են՝ ճշմարտությունը հիվանդանում է, բայց երբեք ու ընդմիշտ չի մահանում: Այժմ արդեն ժամանակն է բարձրաձայնել, թե չի կարելի **վիլսոնյան Ամերիկան, լլոյդջորջյան Անգլիան** համարել ագրեսոր, բռնազավթող, իսկ քեմալին ու քյազիմ Կարաբեքիրին **«Արևելքի ժողովուրդների ազատարարի»** պատվանուն շնորհել:

Փորձենք էլ ավելի պարզ խոսել: Եղե՞ն տեսած ժողովրդին ավելի հարմար չէր ապրել **քրիստոնյա որևէ տերության հովանու ներքո**, փրկել իր ֆիզիկական գոյությունը, քան թե շարունակել մնալ օտտոմանյան բռնապետության կազմում: Մի՞թե կարելի էր հավասարության մշան դնել Արևելյան և Արևմտյան Հայաստանների կրոնական ու քաղաքական իրավիճակների միջև: **Հարկավ, ոչ**: Անշուշտ, ամենաապատվաբեր **այսօրվա ազատ, անկախ Հայաստանի կարգավիճակն է** (չնայած որոշ դժվարությունների):

Ելնելով մեր զարգացրած հայեցակարգից, փորձենք ցույց տալ թուրքերի կատարած գարշելի դերը հայ և հայատակ մյուս ժողովուրդների կյանքում, պարզենք, թե ինչպիսի՞ պայքարի գնով է ձեռք բերվել այսօրվա անկախությունը:

Թուրքիան պատերազմին մասնակցեց փոքր-ինչ ուշացումով, չնայած որ խիստ շահագրգռված էր դրանում: Երիտթուրքերը ձգտում էին վերադարձնել բալկանյան երկու պատերազմների ժամանակ կորցրած երկրամասերը, կայսրության զիջած առանձնաշնորհումները: Եվ ոչ միայն դրանք:

Բոսֆորի ափերին կրկին գլուխ էին բարձրացրել **պանիսլամիզմի և պանթուրքիզմի** խելացնոր ծրագրերը կյանքի կոչողները: Մեհմեդ Թալեթի կառավարությունը ձգտում էր կայգերական Գերմանիայի օգնությամբ ստեղծել «ընդարձակ Թուրանիա»: **«Երիտթուրքերն իրենց հիմնական նպատակը հռչակեցին Օսմանյան մեծ կայսրության ստեղծումը, կայսրություն, որի կազմում պետք է մտնեին նաև Կովկասը, Ղրիմը, Բաշկիրիան, Թաթարիան, Միջին Ասիան, Սիբիրը և Տիբեթը: Այդ ծրագիրն ուներ բացահայտ հակառուսական բնույթ, քանի որ երիտթուրքերը հենց Ռուսաստանն էին համարում իրենց պանիսլամիստական նպատակների իրականացման հիմնական հակառակորդ»**¹:

Ակնհայտ էր, որ օրորվելով հեռավոր անցյալի տխրահռչակ հուշերով՝ երիտթուրքերն ամենից առավել պատերազմ էին փափագում նաև մի քանի այլ պատճառներով:

ա) Նրանք **Սալոնիկում** ծրագիր էին մշակել. ընդարձակելով երկրի սահմանները, կենդանություն տալ **Չինգիզ-խանի կամ Լենկթեմուրի** անձայրածիր տերությանը, որի կազմում ամփոփելով թուրքալեզու, մահմեդապաշտ բոլոր ժողովուրդներին, ճոթերով շփվել մի քանի ժովերի և օվկիանոսների հետ (ցնորական այդ երազանքն այսօրվա թուրքերը ևս բարձրաձայնում են):

բ) Համիդ Երկրորդի և Մեհմեդ Թալեթի կառավարությունները զայրացած էին հայատակ, քրիստոնյա այն ազգերի, առավել ևս **հայերի և հույների** վրա, որոնք պարբերաբար դիմում էին Արևմուտքի հավատակից տերությունների դեկավորներին, նրանցից խնդրելով ձեռք կարկառել իրենց կյանքում բարեփոխությանը կատարելու գործում: Կառավարող թուրքերը որոշեցին պատժել «բողոքավորներին»: Փորձեցին նրանց **համաձուլել, թուրքացնել**, հաջողության չհասան: Որոշումը խստացրեցին, սարսափազդու դարձրեցին:

Հին ու նոր թուրքերը ծրագրեցին այլազգի հայատակներից **«ազատվելու»** առավել դաժան մեթոդներ գործադրել: Այժմ գերադասվեց զանգվածային **տեղահանության**, ապա **ցեղասպանության** մեթոդներով Մուհամեդի զոհասեղանին ողջակիցել քրիստոնյա **«անհավատարիմ»** ազգերին՝ **հայերին, հույներին, ասորիներին, եզդիներին**: Նրանք գիտակցում էին, որ խաղաղ պայմաններում ամբողջական ազգեր ոչնչացնելը դյուրին գործ չէ: Ուստի **«տեղն ու հարմար ժամանակն ընտրեց պատերազմը»**:

գ) Թուրքիայի անցյալի, ներկայի և ապագայի համար հզոր հակառակորդ էր հանդիսացել ռուսական կայսրությունը՝ **Պյոտր Մեծով** սկսած և **Նիկոլայ Երկրորդով** վերջացրած: Ռոմանովների գահակալները երեք հարյուրամյակներում **տասը անվարարվելով**, այժմ էլ աչքը դրել էին **Արևմտյան Հայաստանի, Կոստանդնուպոլսի և նեղուցների վրա**:

Պատերազմի հորձանուտներում հայտնվելով, Թուրքիան, **Եռյակ** դաշինքը

¹ Ե.Ղ. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում, 1914-1918, Երևան, 1964, էջ 128-129:

վերածելով **Քառյակի**, նպատակ ունենալով Գերմանիայի հզոր զինուժն օգտագործելով վրեժխնդիր լինել անմրցակից հակառակորդ Ռուսաստանից: Թալեաթն ու նրա ոհմակը որոշել էին ոչ միայն ետ վերադարձնել **Ղրիմն ու Պոլոլժիեն**, այլև տեր դառնալ ողջ **Անդրկովկասին, Սիբիրին և Միջին Ասիային**:

դ) Սուլթանական տերությունը տնտեսական խոր ճգնաժամ էր ապրում: Երկրի պետական բանկը հիմնովին դատարկվել էր: Կառավարության ունեցած պետական պարտքի քանակն աստղաբաշխական թվերի էր հասնում: Արդյունաբերական հատուկենտ ձեռնարկությունները քայքայման եզրին էին կանգնած: Գյուղատնտեսության անեկամտաբեր դառնալու պատճառով, հարկաքանակը կտրուկ նվազել էր: Ժողովրդի ապրելակերպը, դառնալով անտանելի, ասիական նահանգներում դժգոհության ալիք էր բարձրացրել: Ամենուրեք վառողի հոտ էր զգացվում: Պատերազմը կկանխեր հեղափոխությունը:

ե) Գնալով ուժեղանում էին ոչ թուրք, բայց իսլամապաշտ մյուս ժողովուրդների, հատկապես **արաբների, պաղեստինցիների, Սիրիայի, եգիպտոսի** ազգային-ազատագրական պայքարի ոգորումները: Անկախ պետություններ ստեղծելու անկոտրում կամքով պայքարի հրապարակ նետված այդ ժողովուրդների բողոքի, գայրույթի, ընդվզման ալիքն այլևս կանխել, խեղդելը դարձել էին անհնարին: Որի՞ն խեղդել, ինչքա՞ն խեղդել, ինչպե՞ս խեղդել:

Սալոնիկի մասոններն այս խնդրի լուծման բանալին ևս որոնում էին **«հաղթական պատերազմի ռազմաբեմներում»**: Այսպիսով, թուրքերն իրենց մտահոգող բոլոր խնդիրների լուծման ելքը տեսնելով պատերազմի սանձազերծման խաչողիներում, միաժամանակ ձգտում էին վաղորդք ավելի մեծ խոստումներ ստանալ Քառյակից, ավելի շատ նյութական ու ռազմական միջոցներ պոկել Գերմանիայից ու նրա սատելիտներից: Պատերազմը դեռևս չսկսված, ծայր առան մրցամարտեր Թուրքիայի և Քառյակի մյուս տերությունների միջև:

Երկարատև բանակցություններից հետո **1914 թ. օգոստոսի 2-ին** Թուրքիան ռազմական միավորման գաղտնագրված պայմանագիր ստորագրեց **Կայզերական Գերմանիայի հետ**, պարտավորվելով պատերազմ հայտարարել **Անտանտի տերություններին**: Օգոստոսի 3-ին երկրում հայտարարվեց ռազմական դրություն, սկսվեց զորահավաք: **Չենքի տակ դրվեց 650 000 մարդ**:

Երիտթուրքերը Գերմանիայից ստացան մեծաքանակ վարկեր, միաժամանակ **ադմիրալ Սուլշոնի** գլխավորած գերմանական **«Գեբեն»** և **«Բրեսլաու»** ռազմանավերը թուրքական դրոշով մտան Դարդանել և հոկտեմբերի 29-ին, առանց պատերազմ հայտարարելու, սկսեցին ռմբակոծել Ռուսաստանի առափնյա Սևաստոպոլ և այլ ամրոցաքաղաքները: Այդ նավերը վերանվանվել էին, թուրքացվել **«Յավուդ Սուլթան Սելիմ»** և **«Միդիլլի»** նոր անվանակոչումով: Այսպիսով, 1914 թ. հոկտեմբերի 29-ին Թուրքիան մխրձվեց Առաջին աշխարհամարտի մեջ և մտահոգվեց կյանքի կոչելու պանթուրքիստական իր պլանները:

1914 թ. դեկտեմբերի 14-ին թուրքական մեջլիսի բացման խոսքում սուլթան Մեհմեդ V-ը հայտարարեց, թե. «Երբ օսմանյան կայսերական կառավարությունը վճռականորեն որոշել էր պահպանել զինված չեզոքություն, Սև ծովում կայսերական մեր նավատորմը հարձակման ենթարկվեց ռուսական նավատորմի կողմից, որից հետո Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան սկսեցին թշնամական գործողու-

թյուններ՝ մեր սահմաններ զորք ու զինամիջոցներ ուղարկելով: Ուստի Ալլահի շնորհով և Մարգարեի օգնությամբ, պատերազմական վիճակ հայտարարեցինք այդ տերությունների դեմ և հրամայեցինք մեր սահմանապահ բանակներին առաջ շարժվել»¹:

«Ոչ հարգարժան» սուլթանը ստում էր, թյուրիմացության մեջ էր զգում թուրք երեսփոխաններին: Պատերազմը Թուրքիան էր սկսել և ոչ թե Դաշնակիցները:

Գերմանա-թուրքական դաշինքի ստորագրումից անմիջապես հետո Ավստրո-Յունգարիան ևս պետք է նույնանման պայմանագիր ստորագրեր երիտթուրքական կառավարության հետ²:

Մինչդեռ հուլիսի 28-ին Ավստրո-Յունգարիան հարձակվեց Սերբիայի վրա: Օգոստոսի 1-ին Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, իսկ օգոստոսի 3-ին՝ Ֆրանսիային: Հաջորդ օրն իսկ Բրիտանական կայսրությունը Գերմանիայի հետ իրեն պատերազմական վիճակի մեջ համարեց: Թշնամական երկու խմբավորումների տերություններն էլ սկսեցին եռանդուն կերպով իրենց համար նոր դաշնակիցներ հավաքագրել: Նման պայմաններում երիտթուրքական ղեկավարների ձգտումը՝ Թուրքիան միացնել գերմանա-ավստրիական խմբավորմանը, ամբողջովին համապատասխանում էր Գերմանիայի շահերին:

Թուրք-գերմանական բանակցությունների հետևանքով 1914 թվականի օգոստոսի 2-ին, ցերեկվա ժ. 4-ին, Ստամբուլում, խիստ գաղտնի պայմաններում երկու երկրների միջև դաշնակցային պայմանագիր կնքվեց: Թուրքական կողմից այն ստորագրեց մեծ վեզիր Սաիդ Հալիմ-փաշան, գերմանական կողմից՝ Վանգենհայմը: Պայմանագրի ստորագրման ժամանակ ներկա էին Էնվերը և Թալեաթը: Պայմանագիրը բաղկացած էր հետևյալ հոդվածներից:

«1. Պայմանավորվող կողմերը Ավստրո-Յունգարիայի ու Սերբիայի միջև գոյություն ունեցող կոնֆլիկտում չեզոքություն կպահպանեն:

2. Այն դեպքում, եթե Ռուսաստանը միջամտի կոնֆլիկտին իսկապես ռազմական միջոցառումների օգնությամբ և, այդպիսով, Գերմանիայի համար անհրաժեշտ դարձնի իր պարտքն ու պարտականությունների կատարումը իր դաշնակցի՝ Ավստրո-Յունգարիայի նկատմամբ, ապա այդ պարտքն ու այդ պարտականությունները ենթակա են կատարվելու նաև Թուրքիայի կողմից:

3. Պատերազմի դեպքում գերմանական ռազմական միսիան կմնա օսմանյան կառավարության տրամադրության տակ: Օսմանյան կառավարությունը կապահովի այդ միսիայի իրական ազդեցությունն ու իրական իշխանությունը թուրքական բանակի ընդհանուր գործողությունների վրա:

4. Եթե օսմանյան տերիտորիաները սպառնալիքի ենթարկվեն Ռուսաստանի կողմից, Գերմանիան կպաշտպանի Թուրքիային, հարկ եղած դեպքում՝ զենքի ուժով:

5. Հիշյալ համաձայնագիրը, որը կնքված է երկու պետություններին պաշտպանելու միջազգային այն բարոյություններից, որոնք կարող են առաջ գալ ներկա կոնֆլիկտից, ուժի մեջ կմտնի նրա ստորագրման օրից և ուժի մեջ կլինի մինչև 1918 թվականի դեկտեմբերի 31-ը:

6. Եթե պայմանավորվող երկու կողմերից ոչ մեկը նրանից չհրաժարվի ժամկետը լրանալուց վեց ամիս առաջ, ապա ներկա համաձայնագիրը առաջվա պես ենթակա է կատարման հաջորդ հինգ տարիների ընթացքում:

¹ *А. М. Шамсутдинов*, Национально-освободительная борьба в Турции (1918-1923), Москва, 1966, стр. 5.

² *Վ. Նավասարդյան*, Լեզուները (Վոսիոր եւ Դարդանել), Թրքական ջրուղիները եւ Հայ դատը, Գահիրե, 1947, էջ 35-37:

¹ «The Orient», 14 դեկտեմբերի, 1914, էջ 445:

² *Ф. И. Номович*, Дипломатическая борьба в годы Первой мировой войны, М.-Л., 1947, стр. 100.

8. Ներկա համաձայնագիրը կմնա գաղտնի և կարող է հրապարակվել պայմանա-կորվող երկու կողմերի միջև գոյացած համաձայնությունից հետո միայն»¹:

Յոթերորդ հոդվածով նախատեսվում էր պայմանագիրը վավերացնել նրա ստորագրումից հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Պայմանագրի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ հոդվածների բովանդակությունից երևում է, որ այն կազմվել էր տակավին ավստրո-գերմանական ընդհարման ժամանակ: Մինչդեռ նրա ստորագրման պահին պատերազմը Գերմանիայի ու Ռուսաստանի միջև արդեն իրական փաստ էր, ուստի կնքելով այդ դաշնակցային պայմանագիրը Գերմանիայի հետ պատերազմը սկսվելուց հետո, Թուրքիան իր վրա պարտավորություն էր վերցնում անհապաղ պատերազմի մեջ մտնել Կենտրոնական տերությունների կողմում:

Օգոստոսի 3-ին գերմանա-թուրքական դաշինքին միացավ նաև Ավստրո-Յուն-գարիան:

Գերմանիայի ու Թուրքիայի միջև կնքված պայմանագրի տեքստը վկայում էր այն մասին, որ պայմանագիրն առաջին հերթին ուղղված է Ռուսաստանի դեմ: Այդ հանգամանքը խոստովանում էին հենց իրենք՝ երիտթուրքական կուսակցության գործիչները: Այսպես, խոսելով օգոստոսի 2-ի պայմանագրի մասին, Քյազըմ Կարաբեքիրը ընդգծում էր. «3-րդ հոդվածի համաձայն... մենք Գերմանիային օգնելու համար պետք է ոչ միայն փակեինք նեղուցները, այլև պատերազմի մեջ մտնեինք»²:

Քանի որ այս պահին մեզ հետաքրքրում է Սայքս-Պիկոյի համաձայնագիրը, ուստի կենտրոնանանք ռուս-թուրքական ռազմաճակատում կատարված իրադարձությունների պատմության վրա:

Ռուս-թուրքական կամ, ինչպես ընդունված էր ասել, Կովկասյան ռազմաճակատը ուներ 720 կիլոմետր երկարություն և ձգվում էր Սև ծովից մինչև Ուրմիա լիճը: Այստեղ գործում էր թուրքական III բանակը, որի կազմում կար մոտ 300 հազար զինվոր: Բանակի հրամանատարն էր Յասսն Իզզեթ փաշան: Կովկասյան ռազմաճակատում գործողությունների թուրքական պլանը, որը կազմվել էր զինվորական մինիստր Էնվեր փաշայի ղեկավարությամբ և հավանության արժանացել գերմանական զինվորական մասնագետների կողմից, նախատեսում էր զորքերի ներխուժում Անդրկովկաս՝ Բաթումի և Իրանական Ադրբեջանի կողմից և ապա ռուսական զորքերի շրջապատում ու ոչնչացում: **Ենթադրվում էր արդեն 1915 թվականի սկզբին գրավել ամբողջ Անդրկովկասը և ռուսական զորքերին ետ շարտել Կովկասյան լեռնաշղթայից այն կողմ: Թուրքական հրամանատարությունը որոշակի հույսեր էր կապում Անդրկովկասի մուսուլման բնակչության օգնության հետ, սակայն այդ հույսերը չարդարացան:**

Ռուսաստանի կողմից գործում էր Կովկասյան բանակը, որը կազմավորվել էր 1914 թվականի օգոստոսին. բանակի հրամանատարն էր Կովկասի փոխարքա գեներալ Վորոնցով-Դաշկովը: Կովկասյան բանակի մեջ մտան նաև հայկական ու վրացական կամավորական ջոկատներ: Ռուսական զորքերի ընդհանուր թիվը հասնում էր 200 հազարի³:

Կովկասյան ռազմաճակատի պատերազմական գործողությունները հիմնականում տեղի են ունենում Հայաստանում: Էնվեր փաշան և նրա շտաբի պետ գերմանական գեներալ Ֆոն-Շելենդորֆը իրենց գլխավոր ուժերը կենտրոնացնում և ընդհանուր հարձակում են սկսում Սարիղամիշի ուղղությամբ՝ նպատակ ունենալով պա-

շարել և ջախջախել ռուսական զորքերին: 1914 թ. դեկտեմբերի 9-ից մինչև 1915 թ. հունվարի 5-ը Սարիղամիշի մոտ տեղի են ունենում առաջին վճռական մարտերը: Չմռան դաժան ցրտերի ու սառնամանիքների պայմաններում երկու կողմերն էլ մարտնչում էին չտեսնված համառությամբ: Թուրքերը, հույս դրած իրենց թվական գերակշռության վրա, ամեն կերպ ձգտում էին հասնել հաղթանակի: Էնվեր փաշան Սարիղամիշի ճակատամարտի հաղթանակի հետ էր կապում Կովկասի գրավման իր ավանտյուրիստական պլանների իրագործումը: Բայց նրա սկսած հարձակումը անփառունակ վախճան ունեցավ:

Ռուսական քաջարի զինվորները Օլթիի, Բարդուսի և Սարիղամիշի մոտ ջախջախիչ հարվածներ հասցրեցին թուրքական զորքերին: Թուրքական 3-րդ բանակի 9-րդ հարվածային կորպուսը գրեթե գլխովին ջախջախվեց, 10-11-րդ կորպուսները արյունաքամ արվեցին: Կասեցվեց թուրքերի հարձակումը: Դեկտեմբերի 22-ից ռուսական զորքերը հակահարձակման անցան: Գոռոզամիտ Էնվեր փաշան իր ջարդված ու բարոյալքված բանակի խղճուկ մնացորդների հետ բռնեց փախուստի ճանապարհը՝ հազիվ փրկվելով գերի ընկնելուց⁴:

Թուրքական 3-րդ բանակը Սարիղամիշի մոտ գտավ իր գերեզմանը: 90 հազար հոգուց թուրքերը կորցրին 70 հազար, որից 30 հազարը՝ ցրտահարված: Ռուսները կորցրին 20 հազար, որից 6 հազարը՝ ցրտահարված:

Սարիղամիշի ճակատամարտում ռուսական զորքերի տարած փայլուն հաղթանակը վճռական նշանակություն ունեցավ ամբողջ Կովկասյան ռազմաճակատի պատերազմական գործողությունների հետագա ընթացքի համար: Թուրքական զորքերը, բացի Աջարիայի աննշան մասից, դուրս մղվեցին Կովկասի սահմաններից: Անդրկովկասի ժողովուրդները փրկվեցին թուրքական զորքերի ներխուժման, մասսայական կոտորածի և կողոպուտի վտանգից: Չախողվեց Կովկասը գրավելու գերմանա-թուրքական զավթիչների զավթողական պլանը:

Սարիղամիշի օպերացիան նպաստեց նաև Դաշնակիցների գործողությունների ակտիվացմանը Իրաքում և Սուեզի շրջանում: Անգլիացիները վախենալով, որ ռուսական զորքերը կմտնեն Կ. Պոլիս, 1915 թ. փետրվարին սկսեցին Դարդանեյի օպերացիան: Պարսկաստանը և Աֆղանստանն ավելի աչալուրջ դիրք բռնեցին իրենց պատերազմի մեջ ներքաշելու թուրք-գերմանական արվովկացիների նկատմամբ⁵:

1915 թ. սկզբներին Կովկասյան ճակատի ռազմական գործողություններն արդեն ընթանում էին Արևմտյան Հայաստանի տարածքում: Կովկասյան բանակի չորրորդ կորպուսի զորամասերը, որոնք գործում էին Երևանի ուղղությամբ և տակավին պատերազմի սկզբներին մտել էին Բայազետի ու Ալաշկերտի հովիտները՝ ռուսական զորքերի ձախ թևն ապահովելու նպատակով, Սարիղամիշի տակ թուրքական զորքերի ջախջախումից ու ռուսական բանակի հաջող հարձակումից հետո ավելի աշխուժացրին իրենց գործողությունները: Նրանց անընդմեջ հարվածների տակ թուրքական զորքերն անկանոն ձևով նահանջում էին դեպի Մուշ և Բիթլիս, թալանելով հայկական գյուղերը, ոչնչացնելով նրանց բնակիչներին: Հետապնդելով հակառակորդին, ռուսական զորքերը 1915 թ. փետրվար-մայիս ամիսներին գրավեցին Մանազկերտը, Բաշկալեն, Շատախը, Կոթուրը, Արճեշը, Վանը: Արդու-Քերիմ փաշայի հրամանատարության ներքո խոշոր ուժեր կենտրոնացնելով (89 զու-մարտակ), թուրքական հրամանատարությունը չորրորդ կորպուսի զորամասերի դեմ հակահարձակման կարգադրություն արեց:

¹ Проф. Ключников Ю. В. и Андрей Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. II, М., 1926, № 4.

² Լույնությամբ տե՛ս Ե. Ղ. Սարգսյան, նշված աշխ., էջ 149-150:

³ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 425:

⁴ Մանրամասն տե՛ս Վ. Ա. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն (1801-1917), հատոր երրորդ, Երևան, 1967, էջ 438:

⁵ Լույն տեղում, էջ 438-439:

Թուրքական զորքերի թվական զգալի գերազանցության պատճառով չորրորդ կորպուսն ստիպված էր նահանջել դեպի Ալաշկերտի հովիտը: Հուլիսի վերջին օժանդակ ուժեր ստանալով, կորպուսի զորամասերն իրենց հերթին անցան հակահարձակման և, թուրքերին հետ շարտելով, նորից դուրս եկան Վանա լճի ափը: Շուտով Արևմտյան Հայաստանի ամբողջ հարավարևելյան մասն ազատագրվեց թուրքական զորքերից: Այժմ արդեն Կարս-Կարինի ուղղությամբ գործող զորքերի ձախ թևը, որտեղից նախապատրաստվում էր հարձակում Կարինի վրա, լիովին ապահովված էր:

Սկզբում այդ հարձակումը ծրագրվում էր ձեռնարկել 1916 թ. գարնանը: Սակայն Գալիպոլիի թերակղզում դեհանտ իջեցնելու գործողությունը, որը կազմակերպել էր Մեծ Բրիտանիայի ռազմածովային մինիստր Չերչիլը, կատարելապես ձախողվեց և անգլիական հրամանատարությունը ստիպված իր զորքերը 1916 թ. հունվարին փոխադրել Ալալուիկի ճակատը: Այդ պատճառով էլ Կովկասյան բանակի հրամանատարությունը որոշում ընդունեց արագացնել Կարինի վրա նախապատրաստվող հարձակումը: Հարկավոր էր կանխել Գալիպոլիի թերակղզուց թուրքական V բանակի գործառնների ժամանումն Արևելյան Անատոլիա: Սև ծովում ռուսական նավատորմի գերակշռությունը հեշտացնում էր ծովային ճանապարհով նոր ուժերի տեղափոխումը Կովկասյան ճակատ:

1916 թ. հունվարի 11-ին Կովկասյան բանակը հարձակման անցավ ամբողջ ճակատով: Ռուսական զորքերը շարժվում էին երեք ուղղությամբ. Օլթիի՝ թուրքական 11-րդ կորպուսի ձախ թևը շրջանցելու նպատակով, Կարս-Կարինի և Ալաշկերտի: Ալաշկերտի ուղղությամբ շարժվող զորքերի առջև խնդիր էր դրված Վանա լճի շրջանում գործող հակառակորդի ուժերը կտրել Կարինը պաշտպանող զորամասերից: Ռուսական զորքերի ճնշմամբ թուրքերը ստիպված եղան նահանջել դեպի Մուշ: Կարս-Կարինի ուղղությամբ առաջացող զորամասերի հանկարծակի հարվածով թուրքական ուժերը շարտվեցին դեպի Թորթում լիճը:

Ռուսական զորքերը հունվարի 16-ին հասան մինչև Քյուփրի-քյոյ, ուր համառ կռիվներից հետո ջախջախեցին թուրքական երեք դիվիզիա, որոնց մնացորդները ետ շարտվեցին դեպի Կարին: Այնուհետև երեք կողմից շրջապատեցին Կարինը: Հարյուրհազարանոց թուրքական բանակը չկարողացավ այն իր ձեռքում պահել: Հնգօրյա գրոհից հետո, փետրվարի 16-ին, ռուսական զորքերը մտան Կարին և գրավեցին բերդը: Կարինի համար մղած ամբողջ մարտերի ընթացքում՝ հունվարի 11-ից մինչև փետրվարի 17-ը, թուրքերը կորցրին 60 հազար մարդ, իսկ ռուսները՝ 16.735:

Կարինի գրավումը ռազմատարատեգիական մեծ նշանակություն ուներ, քանի որ այն Արևմտյան Հայաստանի բանալին էր և կարևոր դիրք էր գրավում Անդրկովկասից դեպի կենտրոնական Անատոլիա գնացող գլխավոր զծի վրա: Ռուսական բանակի գլխավոր շտաբի բնութագրումով՝ «Կարինի բերդը միակ կետն է ամբողջ ասիական Թուրքիայում, որը միաժամանակ պաշտպանում է և՛ Անատոլիան, և՛ Սիրիան, և կարգավորում ստրատեգիական շարժումը դեպի Միջագետք: Ընդհուպ մինչև Բոսֆորը այդպիսի մի ուրիշ կետ չկա»¹:

1916 թվականի հունվար-փետրվար ամիսներին, այսինքն՝ աշխարհամարտի դեռևս երկու տարին չբոլորած, որոշակիորեն զգացվում էր Դաշնակիցների հաղթանակը, հետևաբար և գերմանական խմբավորման պարտությունն անխուսափելի էր:

¹ Н. Г. Корсун, Эрзерумская операция на Кавказском фронте мировой войны в 1915-1916 гг., Москва, 1938, стр. 126. Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հատոր VI, Երևան, 1981, էջ 540-541:

Անտանտի տերությունները, զգալով այդ, սկսեցին առավել լրջորեն մտահոգվել պատերազմից հետո «ավարի բաժանմանը» պատրաստվելու խնդիրներով: Սկզբում Փարիզն ու Լոնդոնը, քիչ անց սրանց միացած *Չմեռային պալատը* որոշեցին մի փաստաթուղթ ստեղծել՝ օսմանյան սուլթանության տարածքի մասնատման վերաբերյալ:

Այդ վավերաթուղթը *Սայքս-Պիկոյի համաձայնագիրն էր*, որը, փաստորեն, դարձավ *Վերսալի, Սան Ռեմոյի* և հատկապես *Սևրի պայմանագրերի* այն հողվածների նախնական տարբերակը, որը վերաբերում էր *արաբական* աշխարհին, հատկապես *Հայաստանին*: Թերևս այդ պարագան մեզ ստիպեց ավելի հանգամանորեն անդրադառնալ այդ համաձայնագրի ստեղծման պատմությանը:

ԽՍՀՄ արտաքին գործերի երկարամյա ու վաստակաշատ նախարար Անդրեյ Անդրեևիչ Գրոմիկոյի խմբագրությամբ 1986 թվականին լույս աշխարհ եկած «Դիվանագիտական բառարան»-ում լակոնիկ ոճով արձանագրված է.

САЙКА - ПИКО СОГЛАШЕНИЕ 1916 (секретное) о разделе Азиатской Турции было оформлено обменом нотами между Францией и Россией - 13(26). IV, Францией и Великобританией - 16. V; получило название по имени соавторов проекта С. британского дипломата М. Сайкса и французского дипломата Ф. Ж. Пико. 6(19). XI к С. присоединилась Италия¹.

Հիմք ունենալով կարծես թե պաշտոնականի ուժ ստացած վերոհիշյալ շարադրանքը, փորձենք բացել փակագծերը և ջանանք մեր հարցասեր ընթերցողի հետաքրքրություններին բավարարություն տալ:

Նախ Սայքս-Պիկոյի համաձայնագրի պատմության մանրամասները մեզ հետաքրքրել են տասնամյակներ առաջ: Իբրև ապացույց մեջբերենք ներքոհիշյալ քաղվածքը: Մենք ժամանակին գրել ենք.

«*Հույն-թուրքական պատերազմների, Հունաստանի տարածքային ամբողջականության* վերականգնման պատմության արդարացիության հիմնավորման անհրաժեշտությունը գալիս էր Աշխարհամարտի բռնկման առաջին տարվանից, սակայն այն գաղտնագերծվեց և գիտական ու քաղաքական հետաքրքրասեր հասարակայնության սեփականությունը դարձավ միայն Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղաշրջման հաղթանակից հետո:

Դրանց հիմքում ընկած էին դիվանագիտական բնույթի մի շարք վավերաթղթեր, որոնցից մի քանի ակտերին անդրադառնալու անհրաժեշտություն է առաջացել սույն խնդիրների պատմությունը հետազոտելիս: Առաջին փաստաթուղթը *Սայքս-Պիկոյի* համաձայնագիրն էր, որը ձևակերպվեց Անգլիայի և Ֆրանսիայի միջև 1916 թվականի մայիսի 16-ին: Այն պատրաստել էին անգլիացի դիվանագետ *Մարկ Սայքսը* և ֆրանսիացի միջազգայնագետ *ժորժ Պիկոն*: Այստեղից էլ առաջացել է Սայքս-Պիկոյի համաձայնագիր անվանումը:

Վավերագրի հիմնական սկզբունքները վաղօրոք համաձայնեցվել էին *Չմեռային պալատի* հետ, ապա ստորագրվել և վերջնական կերպարանք էին ստացել Լոնդոնում, վերջին հողվածով նախատեսելով այն մինչև վերջ էլ պահել գաղտնիության մեջ: Դեռևս 1915 թվականին անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրին միջոցառում բանակցությունների ժամանակ Անգլիան և Ֆրանսիան Կ. Պոլսի և նեղուցների դիմաց Ռուսաստանից պահանջել էին ճանաչել իրենց հավակնություններն արաբական Արևելքի նկատմամբ:

Հիշյալ բանակցությունները ջրի երես դուրս բերեցին Անգլիայի և Ֆրանսիայի

¹ "Дипломатический словарь", том III, С-Я, Москва, 1986, стр. 7.

միջև վաղուց խմորված հակասությունները, որոնք չափավորվեցին 1915 թվականի նոյեմբերին ծայր առած նոր բանակցություններով: 1916 թ. փետրվարին կազմված Սայքս-Պիկոյի համաձայնագրի համաձայն՝ թուրքահպատակ արաբական երկրները բաժանվում էին հինգ գոտիների (*որոնց մեջ էին մտցրել Արևմտյան Հայաստանը և պայմանական անվանում ստացած Քյուրդիստանը*):

1. *Կապույտ գոտին*, որն ընդգրկում էր Արևմտյան Սիրիան, Լիբանանը, Կիլիկիան, Այնթապը, Ուրֆան, Մարդինը, Դիարբեքիը և Հեքիարի մարզը (Վանա լճից հարավ), անցնելու էր Ֆրանսիայի տիրապետության տակ: 2. *Կարմիր գոտին*, որն ընդգրկում էր Իրաքի հարավային մասը (Բաղդադով և Բասրայով), ինչպես նաև պաղեստինյան նավահանգիստներ Հայֆան և Աքքան, անցնում էր Անգլիայի տիրապետության տակ: 3. *Դարչնագույն գոտին* ընդգրկում էր Պաղեստինը, որտեղ հաստատվելու էր միջազգային վարչություն, որի ձևը որոշվելու էր Ռուսաստանի և մյուս դաշնակիցների հետ համաձայնություն կայացնելուց հետո: 4. *«Ա» գոտին* (Արևելյան Սիրիան և Մոսուլի վիլայեթը) դառնում էր Ֆրանսիայի ազդեցության ոլորտ: 5. *«Բ» գոտին* (Անդրհորդանանը և Կենտրոնական Իրաքը) դառնում էր Անգլիայի ազդեցության ոլորտը: Ապա «Ա» և «Բ» գոտիները իբր պետք է միավորվեին որպես «անկախ» արաբական պետություն կամ արաբական պետությունների ֆեդերացիա:

Երբ 1916-ի փետրվարին ռուսական բանակը գրավեց Երզրումը և Բիթլիսը, մոտեցավ Իրաքի և Սիրիայի մատույցներին, Դաշնակիցները շտապեցին իրենց նախագիծը համաձայնեցնել Ռուսաստանի հետ, և 1916-ի մարտի 9-ին Պետրոգրադում Սայքսը և Պիկոն Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Դ. Սազոնովին հանձնեցին հուշագիրը: Որպես հակապայման՝ Ռուսաստանը մասնավորապես պահանջեց իրեն հանձնել *«Թուրքահայաստանը»*, Հեքիարի մարզը և Սև ծովի հարավային ափի մի մասը: Հանգելով փոխզիջումների, համաձայնությունը կայացավ: Սայքս-Պիկոյի համաձայնագրի բովանդակությունը համաշխարհային հասարակայնությանը հայտնի դարձավ 1917-ի նոյեմբերին, երբ սովետական կառավարությունը (Վ. Ի. Լենինի ցուցումով) հրապարակեց նրա տեքստը: Համաձայնագիրը, հոգուտ Անգլիայի, փոփոխություններով դրվեց 1920-ի *Սան Ռեմոյի* կոնֆերանսում ընդունված համաձայնության հիմքում:

Սայքս-Պիկոյի համաձայնագիրը հիմք դարձավ Սան Ռեմոյի կոնֆերանսի որոշումներին, այս անգամ էլ առանց Ռուսաստանի և ընդդեմ Ռուսաստանի¹:

* * *

Սայքս-Պիկոյի համաձայնագրի ձևավորման պրոցեսն անցել է դիվանագիտական պայքարով առեցուցու, միաժամանակ ստեղծագործական կյանքի բավական բարդ, ամեն տեսակ բախումներով հարուստ ու տևական մի ճանապարհ²: Թերևս

¹ *Հայկ Ղազարյան*, Օսմանյան բռնապետության ներքո ապրող հայ և մյուս ժողովուրդների ցեղասպանության պատմությունը (1453-1922 թթ.), հատոր երրորդ, Երևան, 2010, էջ 200-201:

² Հետազոտվող խնդիրն անմշակ է: Դրա մասին գրվել են բազմաթիվ հոդվածներ, հրատարակվել են գրքեր բոլոր վավերագրերը: Հիշատակենք դրանցից մի քանիսը. "Раздел Азиатской Турции по секретным документам б. Министерства иностранных дел", под редакцией *Е. А. Адамова*, Москва, 1924. Տե՛ս նաև «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», պրոֆ. *Ջ. Ս. Կիրակոսյանի* խմբագրությամբ, Երևան, 1972: Ժողովածուի մասին ժամանակին հրատարակել ենք ծավալուն գրախոսական. տե՛ս *Հայկ Ղազարյան*, «Սովետական Հայաստան», 1973, 23-ը մարտի: Տե՛ս նաև նույնի «Աշխարհ», Փարիզ, 1973, 2-ը հունիսի: Տե՛ս նաև *Ֆիզրան Սախակյան*, Ցավալի պայմանագրեր, Երևան, 2007, էջ 22-30:

այդ է պատճառը, որ համաձայնագրի մասին ինչպես իր ժամանակի, առավել ևս մերօրյա հետազոտողների կարծիքները միանշանակ կամ գոնե իրար համերաշխող չեն: Դա բնական էր, քանի որ դրանք ձևակերպվել են տարբեր պատմաշրջաններում, քաղաքական տարբեր և նույնիսկ իրարամերժ կառույցների շնչառության ներքո:

Հետևաբար, մեր խնդիրն ենք համարում, գրչի և խոսքի այսօրվա ազատության պայմաններում մինչ այս հայտնված կարծիքների համադրման, նույնիսկ հակադրության ճանապարհով *հասնել քիչ թե շատ ընդունելի*, ճշմարիտ տեսակետի մշակմանն ու հրապարակմանը:

Սկսենք նրանից, որ Ռուսաստանում կատարված Հոկտեմբերյան հեղաշրջման հաջորդ օրը Պետրոգրադի Տավրիկյան պալատում կայացած սովետների երկրորդ համագումարի ամբիոնից հնչեց *«Խաղաղության մասին Լենինյան դեկրետը»*, որին հաջորդեցին նորակազմ ՌՍՖՍՀ-ի ժողովուրդի դիմումն ամբողջ աշխարհին, որոնցով կոչ էր արվում հանուր աշխարհին գաղտնագրեթե՛լ բոլոր այն պայմանագրերը, որոնք վերաբերում էին Առաջին աշխարհամարտին: Այդ պայմանագրերից առաջինը Սայքս-Պիկոյի համաձայնագիրն էր, որը ստորագրվել էր դաշնակից երեք տերությունների միջև և մինչ այդ պահվում էր «հույժ գաղտնի» որոշման տակ:

Խորհրդային Ռուսաստանի աշխարհին ուղղած, բայց արդեն օրենքի ուժ ստացած դեկրետի էջերում կարդում ենք. "Тайную дипломатию Правительство отменяет, со своей стороны выражая твердое намерение вести все переговоры совершенно открыто перед всем народом, приступая немедленно к полному опубликованию тайных договоров, подтвержденных или заключенных правительством помещиков и капиталистов с февраля по 25 октября 1917 года. Все содержание этих тайных договоров, поскольку оно направлено, как это в большинстве случаев бывало, к доставлению выгод и привилегий русским помещикам и капиталистам, к удержанию или увеличению аннексий великороссов, Правительство объявляет их немедленно отмененным."

Обращаясь с предложением к правительствам и народам всех стран начать немедленно открытые переговоры о заключении мира, Правительство выражает со своей стороны готовность вести эти переговоры, как посредством письменных сношений, по телеграфу, так и путем переговоров между представителями разных стран или на конференции таковых представителей. Для облегчения таких переговоров Правительство назначает своего полномочного представителя в нейтральные страны.

Правительство предлагает всем правительствам и народам всех воюющих стран немедленно заключить перемирие, причем со своей стороны считает желательным, чтобы это перемирие было заключено не меньше, как на три месяца, т. е. на такой срок, в течение которого вполне возможно как завершение переговоров о мире с участием представителей всех без изъятия народностей или наций¹.

Օգտվելով նման բացառիկ հնարավորություններից, հեղաշրջումից փոքր անց արդեն *«խորհրդայնացած»* ռուս պատմաբանները սկսեցին քրքրել կայսրության արխիվները և ջրի երես հանեցին այնպիսի վավերագրեր, համաձայնագրեր, դաշնագրերի *գաղտնագրված հոդվածներ*, որոնց մասին նույնիսկ երևակայել չէր

¹ "Декреты Октябрьской революции от октябрьского переворота до роспуска учредительного собрания", Москва, 1933, стр. 3-4.

կարելի: Դրանց առաջին շարքերումն էին **Ե. Ա. Աղամուլը**, պրոֆեսորներ **Կլուչնի-կովն** ու **Սաբանիզը**: Հարստացավ պատմական փաստերի այն ատաղձը, որին հենվելով սկսեցին գրել դիվանագիտության բազմահատոր պատմությունը: Ելնելով այդ նյութերի՝ Հայոց պատմության համար ունեցած արժեքավորությունից, մենք փորձում ենք դրանց մի մասին **երկրորդ կյանք պարգևել**:

* * *

1916 թվականի փետրվարի 25-ին (մարտի 9-ին) Պետերբուրգում հաստատված **Մեծ Արիտանիայի և Ֆրանսիայի** դեսպանները Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր **Սերգեյ Դմիտրիևիչ Սազոնովին** (1860-1927) պաշտոնապես մի հուշագիր հանձնեցին, որը **Սայքս-Պիկոյի համաձայնագրի** առաջին տարբերակն էր:

Փաստաթուղթը վաղորդ ստորագրել էին դաշնակից երկու տերությունների ղեկավարները ոչ միայն առանց Ռուսաստանի մասնակցության, այլև, նույնիսկ, առանց Չմեռային պալատի գիտության: Այժմ վիճակը փոխվել էր: Ռուսական բանակը հայ կամավորական ջոկատների մասնակցությամբ, ողջ հայ ժողովրդի բոլորանվեր օգնությամբ ու աջակցությամբ փայլուն հաղթանակներ էր տանում **Կովկասյան ռազմաճակատում**: Երկնչելով ավելորդ անախորժություններից, Դաշնակիցները հարկադրված բացեցին իրենց ունեցած գաղտնածածուկ խաղաքարտերը և ոչ միայն Ռուսաստանին տեղյակ պահեցին համաձայնագրի գոյության փաստի մասին, այլև առաջարկեցին մասնակցել նրա վերջնական տարբերակի ձևավորմանը:

Համաձայնագրի այս տարբերակն ավելի քան վերաբերում էր թուրքահպատակ **արարական երկրամասերի բաժանման** առաջարկներին: Փաստաթուղթը թարգմանվել է բազմաթիվ հեղինակների գրչով, շատ անգամ աղավաղվել է, ուստի որոշեցինք ընթերցողին ներկայացնել նրա ռուսալեզու հրապարակումը **բնագրով**:

**Памятная записка великобританского и французского посольств
в Петрограде российскому министру иностранных дел С. Д. Сазонову¹**

Французское и английское правительства, убедившись, на основании дошедших до них сведений, что арабские народности как на Аравийском полуострове, так и в провинциях Османской империи живейшим образом настроены против турецкого владычества, и что в настоящее время было бы возможно образовать арабское государство или федерацию, одновременно враждебные турецкому правительству и благоприятно настроенные по отношению к державам Согласия, - вступили в переговоры и совместно рассмотрели этот вопрос. В результате этого обмена мнений они пришли к соглашению относительно следующих принципов, которые оба правительства желают сообщить российскому правительству, прежде чем идти дальше².

¹ Остальная часть этой телеграммы касается вопросов: а) определения будущей границы Германии и Австрии, б) государственного устройства Польши, в) необходимости удержать Швецию от выступления против держав Согласия и желательности привлечь на их сторону Норвегию, г) вмешательства в войну Румынии, д) вытеснения германского капитала с китайского рынка. Как неимеющая непосредственного отношения к разделу Азиатской Турции, эта часть телеграммы опускается.

² Перев. с фр.

Статья 1. Франция и Великобритания готовы признать и взять под свое покровительство независимое арабское государство или федерацию арабских государств под сюзеренитетом арабского вождя в зонах (А) и (В), указанных в прилагаемой при сем карте. В зоне (А) Франция и в зоне (В) Великобритания будут иметь право приоритета в предприятиях и местных займах. В зоне (А) Франция и в зоне (В) Великобритания будут иметь исключительное право назначать иностранных советников и чиновников, по просьбе арабского государства или федерации арабских государств.

Статья 2. В синей зоне Франция и в красной зоне Великобритания будут в праве установить, по соглашению с арабским государством или федерацией арабских государств, такое управление, прямое или косвенное, или такой контроль, которые они пожелают и которые они сочтут подходящими¹.

Статья 3. В коричневой зоне будет учреждено международное управление, форма которого будет решена после совещания с Россией, а также по соглашению с другими союзниками и представителями меккского шерифа.

Статья 4. Великобритании будет предоставлено: 1) порты Кайфа и Акра; 2) гарантия определенного количества воды Тигра и Ефрата в зоне (А) для зоны (В). Правительство его величества обязуется со своей стороны не вступать ни в коем случае в переговоры в целях уступки Кипра третьей державе². Без предварительного согласия французского правительства.

Статья 5. Александретта будет вольным портом, поскольку это касается торговли Британской империи, и здесь не будет установлено ни различия в отношении портовых сборов, ни особых привилегий, в которых было бы отказано английским флоту и товарам; будет установлена свобода транзита для английских товаров через Александретту и по железной дороге, пересекающей синюю зону, независимо от того, идут ли эти товары в красную зону, зону (В), зону (А) или идут оттуда; также не будет установлено никакого различия в режиме (прямого или косвенного) в ущерб английским товарам на какой бы то ни было железной дороге, равно как и в ущерб английским товарам и судам во всех портах, обслуживающих упомянутые зоны.

Кайфа будет вольным портом, поскольку это касается торговли Франции, ее

¹ Упоминаемая здесь карта в деле отсутствует. Прилагаемая нами карта перечерчена с карты раздела Азиатской Турции, находящейся в деле французского посольства в Петрограде. Карта эта воспроизводит деление на три зоны: французскую, английскую и итальянскую и относится к эпохе переговоров с Италией летом 1917 г. Русская зона на карте не отмечена.

² В 1878 г. Кипр был оккупирован англичанами, в силу так наз. Кипрской конвенции от 4 июня того же года, ставшей его под контроль Англии. Первоначально управлялся британским верховным комиссаром. В 1880 г. был подчинен министерству колоний, хотя официально и продолжал именоваться частью Османской империи. Аннексирован Англией 5 ноября 1914 г. Статьями 115, 116 и 117 Севрского договора от 10 августа 1920 г. был признан владением Англии. Под "третьей державой" здесь подразумевается Греция, которой в октябре 1915 г. великобританское правительство предлагало уступить остров, в случае ее вмешательства в войну на стороне держав Согласия для поддержки Сербии в ее борьбе с Болгарией. Греческое правительство отклонило это предложение, мотивируя свой отказ опасением военного поражения Греции (телеграмма российского посланника в Афинах Э. П. Демидова от 6/19 и 7/20 октября 1915 г. №№ 479, 480, опубли. в изд. Наркомдела: "Европейские державы и Греция в эпоху мировой войны", Москва, 1922 г., стр. 22 и 23).

ու քրդական զոնա յե, «Ե»-ն՝ զուտ քրդական ե, «Շ»-ի բնակիչները բացառապես լազերն են:

2. Ֆրանսիան ստանում է Հայաստանն, իբրև Հայաստան և ֆրանսական զոնան կրառնա հայ ազգային զգացումների կենտրոն: Այս չափազանց ձեռնտու կլինի Ռուսաստանին, վորովհետև Փոքր Հայաստանի հայերը կղերական ու պահպանողական տրամադրություններով են տոգորված հակառակ կովկասահայերի ու արևելահայերի, վորոնք անարխո-սոցիալիստներ են: Յեթե հայերի ազգային զգացման կիզակենտրոնը (Ֆոկուս) երգումը լիներ, ապա անարխո-սոցիալիստներն իրենց ձեռքը կառնեյին հայ ամբողջ քաղաքական մեխանիզմը և կամրապնդեյին վերջինս: Իսկ այս դրության ժամանակ չափավոր տարրերն իրենց կենթարկեն հայոց ազգային ձգտումները ֆրանսական հովանու ներքո, վոր կրթիսե Փոքր Հայաստանից:

Հայկական չափավոր շրջանների նպատակը կլինի սեփական սահմաններում զարգանալը և Կովկասի ու Ադրբեջանի անարխո-սոցիալիստներից զատվելը, վորոնց հետ նրանք յերբեք չեն կամեցել միասին ընթանալ:

Այնուհետև, ֆրանսական զոնան ընդգրկում է հայ պատմական Ձեյթուն, Հաջին, Դիարբեքի, Սուֆարդին, Սըվազ քաղաքներն ու մարզը, վորը կառավարում եր վերջին հայ թագավորը, վորին վիճակված եր մեռնել Փարիզում:

Բացի սրանից այս մարզն իր մեջ պարունակում է հաչակրաց արշավանքների շրջանի Յեդեսական դքսությունը, վորտեղ թագավորում եր Լուսինյան Գյուլին: Այս նշանակություն ունի իբրև չուկետ (отправный пункт) հայ պատմական նացիոնալիզմի համար, վորը մոռացել է ժողովրդական յերգերն ու ավանդությունները Վանի ու երզրումի, վորոնք հայ անարխո-սինդիկալիստական պրոպագանդայի գաղափարական բազա յեն հանդիսանում:

Այնուհետև Փոքր Հայաստանի հայերը կապված չեն Կովկասի արդյունաբերական հայերի հետ, և իրոք այս յերկու հատվածներն ընդհանուր բան քիչ ունեն:

Յես անձամբ կասեյի, թե ավելի լավ կլիներ, յեթե միայն հնարավոր ե այս, վոր Մշի հովիտը մտներ ֆրանսական զոնայի մեջ, վորովհետև այս հանգամանքը Ռուսաստանին կազատեր հեղափոխական գործունեության տնկարանից և կովկասյան հեղափոխականների պրոպագանդայի համար ամենանպաստավոր մարզերից մեկը կըկտրեր նրանց գործունեության վոլորտից:

Այս վերջինն, ի հարկե, մի չնչին մանրամասնություն է և սրա առավելություններն ու թերությունները քաղաքական ու ռազմագիտական գործի մասնագետների ուսումնասիրության են յենթակա: Քաղաքականապես ռուսաց շահերի տեսակետից, ավելի լավ կլիներ, յեթե այս մարզը ռուսներին չպատկաներ, այլ լիներ ռուսական վերահսկողության տակ: Յես կարծում եմ, թե սրանք են այն հարցերը, վոր մենք հարուցինք մեր յերեկվա գրույցի ժամանակ:

ՄԱՐԿ ՍԱՅՔՍ՝

Նամակագրական այդ **ասուլիսներից զատ**, բրիտանական **Գևորգ VI** թագավորը գաղտնի բանակցում եր **Ռայմոն Պուանկարեի և Ժորժ Կլեմանսոյի** հետ՝ Ասիական Թուրքիան, հատկապես Արաբական աշխարհն ու Կիլիկիան բաժանելով իրար միջև, միայն **«Տաճկաստանի մոթերն էին»** բաժին թողնում Չմեռային պալատին:

Ս. Դ. Սազոնովը ռուսական հետախուզության և հակահետախուզության միջոցներով տեղեկանալով այդ ամենի մասին, խիստ անհանգստացած դաշնակիցների **«անբարո վարքագծից»**, ընդարձակ բացատրագրով դիմում է Նիկոլայ

¹ «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից, **Աշուտ Դովհանմիսյանի** առաջաբանով, երևան, 1926, էջ 27-28:

երկրորդ կայսրին, նրանից խնդրելով խորհրդակցություն հրավիրել և գորոյան հանգույցի վերածված այդ խնդրին վճիռ առաջարկել: Բերենք 1916 թ. մարտի 1-ին ցարին ուղղված գրության տեքստը:

Ռուսաց արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովի ամենահպատակ գրությունը

Պատերազմի հաղթական վախճանը նախատեսելով, այլև նկատի ունենալով, վոր Տաճկաստանի ասիական տիրապետությունների ճակատագրի խնդիր ե ծագելու, ֆրանսական ու անգլիական կառավարությունները մեր քննության են ներկայացրել Փոքր Ասիայի բաժանման նախագիծը, վոր կազմել են այս վայրերի նշանավոր իրազեկները - **պ. Պիկոն և սեր Մ. Սայքսը:**

Այս նախագծի հիմնական թեզիսները սրանք են.

Այն ամբողջ տարածությունը, վորն ընկնում է Սև ծովի ու այն գծի միջև, վոր սկսվում է Ուրմիոյ լճից և հասնում է Անամուռին՝ անցնելով Վանի, Բիթլիսի, Սշի ու Խարբերդի, հարավից Տավրոսի ու Անտիտավրոսի լեռնաշղթաների վրայով, - թողնվում է Ռուսաստանի տրամադրության տակ, վորն ապագայում պետք է իր սահմանները վորոշի Անատոլիայի տաճկական սուլթանի հետ:

Ֆրանսիայի տիրապետության ե անցնում Սիրիայի ու Կիլիկիայի ծովափնյա նեղ շերտը, վոր սկսվում է մոտավորապես Աքիայից և հասնում է Անամուռին, այլև այն տերիտորիաները, վորոնք ընկնում են նշված ռուսական սահմանից հարավ, վոր անցնում է մոտավորապես Այնթապ-Ուրֆա-Մերդին-Ուրմիա գծով:

Անգլիան ստանում է այն նահանգը, վոր այժմ հայտնի յե Արաբական Իրաք անունով և վորը կից է Պարսկաստանին ու Պարսից ծոցին:

Ֆրանսական ու անգլիական տիրապետությունների միջև ընկած ամբողջ մարզը կկազմե արաբական անկախ պետություն (խալիֆաթ) կամ մի քանի արաբական իշխանությունների ֆեդերացիա:

Սրա հյուսիսային մասը ֆրանսական ազդեցության շրջանի մեջ է առնվում, իսկ հարավայինն՝ անգլիական:

Պաղեստինը կազմում է առանձին ավտոնոմ նահանգ՝ միջազգային վերահսկողության ներքո:

Բացի սրանից՝ Ֆրանսիան ու Անգլիան հանձն են առնում մի ամբողջ շարք փոխադարձ պարտավորություններ, վորոնցով ապագա արաբական պետության տերիտորիայի այն զոնաներում, վորոնք նրանց ազդեցության շրջան են համարվում, միմյանց վերապահում են առևտրային ու տնտեսական բնույթ ունեցող ամեն տեսակի արտոնություններ ու դյուրություններ:

Այս նախագծի մեջ մեզ համար ամենից ավելի եյական նշանակություն ունի անգլա-ֆրանսական առաջարկվող սահմանը, վորը պետք է մեր ապագա տիրապետությունները բաժանե ֆրանսական տիրապետություններից:

Տեղագրական տեսակետից այս սահմանը բավական բնական է, վորովհետև ընթանում է գլխավոր լեռնազանգվածի ուղղությամբ, սակայն քաղաքական ու ռազմագիտական կշռադատությունների տեսակետից այն հազիվ թե կարելի յե ընդունելի համարել: Մեր ասիական սահմանի յերկար տարածության վրա, այն դուրսնելի համարել: Մեր ասիական սահմանի յերկար տարածության վրա, այն դուրսնելի համարել: Մեր ասիական սահմանի յերկար տարածության վրա, այն դուրսնելի համարել, վոր յերևան գա և անկյունի ձևով ռուս-պարսկական սահմանի արանքը համարել, վոր յերևան գա և անկյունի ձևով ռուս-պարսկական սահմանի արանքը մտնե մի մեծ յեվրոպական պետություն, թեկուզ ներկայումս նա հենց դաշնակից ել լինի մեզ: Բացի սրանից՝ չենք կարող մասնավորապես Ուրմիայի շրջանում մի ուրիշ

պետության կամ պետությունների ֆեդերացիա կազմելու մասին, այլև Սիրիայի, Կիլիկիայի ու Միջագետքի ապագա վիճակի մասին, կայսերական կառավարությունը պատրաստ է վավերացնելու այս համաձայնությունը, վոր կայացրած է այն հիմունքներով, վորոնք հաղորդված են նրան՝ ստորև հիշված կետերը պահպանելու պայմանով:

1) Ռուսաստանն աննեկսիայի յե յենթարկում երզրումի, Տրապիզոնի, Վանի, ու Բիթլիսի շրջանները՝ մինչև ապագայում սահմանվելիք մի կետ Սև ծովի ափին, Տրապիզոնից արևմուտք:

2) Քուրդիստանի այն շրջանը, վոր ընկնում է Վանից ու Բիթլիսից հարավ, Մշի, Սդերդի, Տիգրիսի հոսանքի, Ջեզիրե-Իբն-Ռմարի ու Արմատիայի վրա իշխող լեռնագագաթների գծի ու Մերգևերի մարզի միջև՝ կը զիջվի Ռուսաստանին, վորը, սրա փոխարեն Ֆրանսիայի սեփականություն կծանաչի այն տերրիտորիաները, վորոնք ընկած են Ալադաղի, Կեսարիայի, Ադ-Դաղի, Իլդիզդաղի, Ջարայի, Եգինայի (Ակն) ու Խարբերդի միջև: Բացի սրանից, Մերգևերի շրջանից սկսած՝ արաբական պետության սահմանը կանցնի այն լեռնագագաթների գծով, վորոնք ներկայումս ոսմանյան տերրիտորիան բաժանում են պարսկականից: Այս սահմանները մատնանշված են ընդհանուր գծերով, և ընդունվում է, վոր կարող են մանրամասնությունների մեջ տեղի ունենալ փոփոխություններ, վոր կառաջարկե սահմանաբաշխման հանձնաժողովը, վորը հետագայում գումարվելու յե տեղերում:

Կայսերական կառավարությունը, բացի սրանից, համաձայնում է թույլատրել, վոր այս կերպով Ռուսաստանին զիջած ոսմանյան տերրիտորիայի բոլոր մասերում պահպանվեն յերկաթուղային և այլ կոնցեսսիաները, վոր ոսմանյան կառավարությունը տվել է ֆրանսական քաղաքացիներին: Յեթե կայսերական կառավարությունը ցանկություն կը հայտնե, վոր հիշյալները հետագայում փոփոխության յենթարկվեն՝ կայսրության որենքների հետ համերաշխելու նպատակով, ապա այս փոփոխությունը տեղի կունենա հանրապետության կառավարության հետ կայացրած համաձայնությամբ:

Ինչ վերաբերում է այն հիմնարկներին, վարչություններին, կրոնական, դպրոցական ու հիվանդանոցային հաստատություններին և այլն, վորոնք կախումն ունեն այս յերկու ազգերից, ապա նրանք այսուհետև ել կոգտվեն այն արտոնություններից, վոր մինչև այժմ նրանց համար ապահովում եյին ոսմանյան կառավարության հետ կնքած դաշինքները, համաձայնություններն ու պայմանագրությունները: Համենայն դեպս, ուժի մեջ է մնում այն, վոր հիշյալ վերապահությունն ընդունելով՝ յերկու կառավարությունները նկատի չունենին պահանջել, վոր ապագայում ել պահպանվեն յուրիսդիկցիայի, կրոնական պրոտեկտորատի ու կապիտուլացիաների իրավունքներն այն մարզերում, վորոնք այսպիսով աննեկսիայի կենթարկվեն Ռուսաստանի ու Ֆրանսիայի կողմից, այլ միայն ապահովել հետագա գոյությունը հիմնարկությունների ու հաստատությունների, վորոնք կան ներկայումս և ճանապարհ հարթել՝ հաշտություն կնքելուց հետո, յերկու պետությունների միջև լինելիք բանակցությունների համար:

Վերջապես յերկու կառավարություններն ել սկզբունքով ընդունում են, վոր տաճկական տերրիտորիան աննեկսիայի յենթարկող պետություններից յուրաքանչյուրը պետք է մասնակցե «ոսմանյան հանրային պարտքի» որգաններին:

**ՍԱԶՈՒՈՎ՝
13/26 ապրիլի 1916 թ.**

* «Հայաստանի Ավտոնոմիան յով Անտանտան», էջ 50-52:

1916 թ. մարտ-ապրիլ ամիսներին խորհրդակցություններն անպակաս էին: Վճռվելու էր Ասիական Թուրքիայի վերջնական բաժանման, հատկապես Արևմտյան Հայաստանին և Կիլիկիային տիրանալու խնդիրները: Այդ խնդիրների շուրջ անհամաձայնությունը մնում էր Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև, որը կարծես թե լուծվում էր ապրիլի 26-ի **հուշագրով**:

1916 թ. ապրիլի 26-ին Պետրոգրադի ֆրանսիական դեսպան **Պալեոլոգը** Ս. Դ. Սազոնովին հաղորդում էր.

**Պետրոգրադի ֆրանսական դեսպանության հայտագիրը՝
ռուսաց արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին**

Պատիվ ունեմ տեղեկացնելու այն հաղորդագրության ստացման մասին, վոր առաքել է ինձ այսոր Չերոզ գերագանցությունը, վորով կայսերական կառավարությունն ընդունում է հետևյալ պայմաններով այն համաձայնությունը, վոր պետք է կնքվի Ֆրանսիայի ու Անգլիայի միջև՝ արաբական պետություն կամ արաբական պետությունների ֆեդերացիա կազմելու մասին և Ֆրանսիայի համար ապահովելու Սիրիայի, Կիլիկիայի ու Միջագետքի տերրիտորիաներն այն հիմունքներով, վոր մատնանշել է կայսերական կառավարությանը՝ ֆրանսական կառավարության հատուկ լիազորը:

Յուր կողմից հանրապետության կառավարությունը հանձնարարել է ինձ՝ տեղեկացնել Չեզ, վոր ինքը վճռել է վավերացնել այն համաձայնությունը, վորին վերաբերում է խոսքը:

1) Ռուսաստանն աննեկսիայի յե յենթարկում երզրումի, Տրապիզոնի, Վանի ու Բիթլիսի շրջանները՝ մինչև ապագայում սահմանվելիք մի կետ Սեվ ծովի ափին, Տրապիզոնից արևմուտք:

2) Քուրդիստանի այն շրջանը, վոր ընկնում է Վանից ու Բիթլիսից հարավ, Մշի, Սդերդի, Տիգրիսի հոսանքի, Ջեզիրե-Իբն-Ռմարի ու Ամատիայի վրա իշխող լեռնագագաթների գծի ու Մերգևերի մարզի միջև՝ կզիջվի Ռուսաստանին, վորը սրա փոխարեն Ֆրանսիային կթողնե այն տերրիտորիաները, վորոնք ընկած են Ալադաղի, Կեսարիայի, Ադ-Դաղի, Իլդիզդաղի, Ջարայի, Եգինայի ու Խարբերդի միջև: Բացի սրանից՝ Մերգևերի շրջանից սկսած՝ արաբական պետության սահմանը կանցնի այն լեռնագագաթների գծով, վորոնք ներկայումս ոսմանյան տերրիտորիան բաժանում են պարսկականից: Այս սահմանները մատնանշված են ընդհանուր գծերով և ընդունվում է, վոր կարող են մանրամասնությունների մեջ տեղի ունենալ փոփոխություններ, վոր կառաջարկե սահմանաբաշխման հանձնաժողովը, վորը հետագայում գումարվելու յե տեղերում:

Հանրապետության կառավարությունը զոհությամբ տեղեկանում է, վոր կայսերական կառավարությունը բացի սրանից՝ համաձայնում է թույլատրել, վոր այս կերպով Ռուսաստանին զիջած ոսմանյան տերրիտորիայի բոլոր մասերում պահպանվեն յերկաթուղային ու այլ կոնցեսսիաները, վոր ոսմանյան կառավարությունը տվել է ֆրանսական քաղաքացիներին: Յեթե կայսերական կառավարությունը ցանկություն կհայտնե, վոր հիշյալները հետագայում փոփոխության յենթարկվեն, կայսրության որենքների հետ համերաշխելու նպատակով, ապա այս փոփոխությունը տեղի կունենա հանրապետության կառավարության հետ կայացրած համաձայնությամբ:

Ինչ վերաբերում է այն հիմնարկներին, վարչություններին, կրոնական, դպրոցական ու հիվանդանոցային հաստատություններին և այլն, վորոնք կախումն ունեն այս յերկու ազգերից, ապա նրանք այսուհետև ել կոգտվեն այն արտոնություններից,

շահերին՝ վո՛չ ներքին ու վո՛չ էլ արտաքին քաղաքականության տեսակետից: Ինչ վերաբերում է հայերին լայն ավտոնոմիա տալուն, ապա չպետք է մոռանալ, վոր Մեծ Հայաստանում, վոր այժմ նվաճել է Ռուսաստանը, հայերը յերբեք մեծամասնություն չեն կազմել, իսկ այն պատժիչ միջոցներից հետո, վոր տաճիկները կիրառել են նրանց վերաբերմամբ պատերազմի ժամանակ և այն էլ հենց իրենց, հայերի վկայությամբ, զարհուրելի չափերով, - թվական այս հարաբերությունն էլ ավելի յե փոփոխվել է ի վնաս հայերի, վորոնք ներկայումս դժվար թե կազմեն բնակչության նույնիսկ 1/4 մասը: Այսպիսի պայմաններում հայերի ավտոնոմիան իրապես այն անարդար հետևանքը կունենա, վոր փոքրամասնությունը կստրկացնե մեծամասնություն կազմող տարրին:

Միաժամանակ չի կարելի համաձայն լինել նաև այն կարծիքին, թե հայկական տարրը պետք է զոհաբերվի մուսուլմանականին և թե, այս յերկուսի մաքառման միջոցին, կառավարական իշխանությունը պետք է պահե մուսուլմանական տարրի կողմը: Այս կնշանակեր հայերին դնել ավելի վատ դրության մեջ, քան այն, վոր նրանք ունեյին տաճկական իշխանության ներքո: Այս կնշանակեր հայերին հարկադրել, վոր իրենց հայացքները նախանձով դարձնեն դեպի իրենց արտասահմանյան հայրենակիցները, վորոնց համար, այսպես թե այնպես, ազատ զարգացումն ապահովված կլինի: Բացի սրանից՝ խնդրի այսպիսի լուծումը կարող է Ռուսաստանին անհարմար դրության մեջ դնել, վորովհետև բոլոր պետությունների միջից Ռուսաստանն էր, վոր ամենից ավելի յեռանդով պաշտպանում էր Տաճկական Հայաստանում լայն բարենորոգումներ մտցնելը:

Այս նկատառումներով, ինձ թվում է, թե Տաճկաստանի նորանվաճ մարզերի կազմակերպման միջոցին, մեզ համար ամենալավ յելք կլիներ յերկրում գոյություն ունեցող բոլոր բազմազան տարրերի նկատմամբ յստորեն ղեկավարվել որինականության, արդարության ու միանգամայն անաչառ վերաբերմունքի սկզբունքներով՝ առանց այս տարրերը միմյանց հակադրելու և առանց բացառիկ հովանավորություն ցույց տալու վորևէ մեկ ժողովրդի՝ ի վնաս մեկ ուրիշի: Այսպիսով հնարավոր կլիներ հայերին վերապահել վորոշ շրջանակներում դարոցական ու յեկեղեցական ինքնուրույնություն, մայրենի լեզվից ոգտվելու իրավունք, այլ և քաղաքային ու գյուղական ինքնավարություն՝ ընտրությունների ժամանակ պահպանելով բնակչության տոկոսային փոխհարաբերությունները: Վոչ քրիստոնյա տարրերի նկատմամբ էլ պետք է կիրառել նույն այս սկզբունքները, վոր չափով այս թույլ են տալիս տեղական պայմաններն ու նրանց կուլտուրական զարգացման աստիճանը:

Վերոհիշյալ ժամանակավոր որենքների նախագիծը մասամբ արդեն կանգնում է այս տեսակետի վրա՝ ինքնավարության վորոշ բաժին վերապահելով «գյուղական հասարակություններին» ու «գյուղական շրջաններին»:

Որինականության ու անաչառության միևնույն սկզբունքը պետք է պահպանվի՝ տեղական հողատիրության ու գաղութացման խնդիրները վճռելու ժամանակ: Այս տեսակետից միանգամայն անհրաժեշտ է յխիստ հետապնդման յենթարկել վերջին ժամանակներս տեղի ունեցած այն բոլոր բազմաթիվ դեպքերը, յերբ մուսուլմաններն ինքնական տիրացել են այն գույքերին, վորոնք պատկանելիս են յեղել գաղթեցրած կամ սպանված հայերին: Միաժամանակ՝ պետք է վերականգնել իսկական սեփականատերերի կամ սրանց ժառանգների իրավունքները:

Իմ խորին համոզմամբ, վերոհիշյալ սկզբունքների իրականացումը կյանքում՝ տեղական բնակչությանը կներշնչե հարգանք դեպի տեղական իշխանությունը, ներքին ու արտաքին ամեն մի անառողջ ագիտացիայի վտրքի տակից կխլե հողը և

տեղական բնակչության համար կստեղծե կյանքի այնպիսի պայմաններ, վորոնց ժամանակ այդ բնակչությունն առանց ափսոսանքի կհիշե տաճկական տիրապետության անցյալ ժամանակները¹:

Սա ոչ թե սովորական նամակ էր, այլ Հայաստանի ճակատագրին վերաբերող որոշման նախագիծ: Այդ մտահղացումն հասկանալով, փոխարքա Նիկոլայ Նիկոլայևիչը նույնպես ոչ «սովորական նամակի» կարգավիճակով 1916 թ. հուլիսի 3/16-ին պատասխանում է, հայտնելով իր *համաձայնությունը* երկրի արտաքին գործերի նախարարի հետ: Բերենք այդ նամակը ևս.

**Կովկասի փոխարքա Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայևիչը՝
արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին
Նամակ**

№ 21083

Թիֆլիս, 3/16 հուլիսի 1916 թ.

Սերգեյ Դմիտրիյևիչ,

Ի պատասխան սույն հունիս 14-ի Ձեր № 540 դիմումի, վոր ուղղել էյիք ինձ, յես լիովին համաձայն եմ Ձեզ, վոր չափազանց ցանկալի կլիներ հենց այժմ ևեթ, պատերազմի վերջանալուց առաջ, նշել այն սկզբունքը, վորով պետք է ղեկավարվել Տաճկաստանի մարզերը Ռուսական կայսրության սահմանների մեջ մտնելու խնդիրը վճռելիս և շատ լավ գիտակցում եմ հայոց հարցի լուծման բարդությունն ու դժվարությունը:

Իմ խորին համոզմամբ ներկայումս գոյություն ունեցող Ռուսական կայսրության սահմաններում հայոց հարց բոլորովին չկա և չպետք է նույն իսկ թույլատրել այսպիսի մի հարցի հիշատակումն, վորովհետև փոխարքայության մեջ յեղած ռուսահպատակ հայերն իրավահավասար ռուսական հպատակներ են՝ մուսուլմանների, վրացիների, ռուսների նման: Յես կարծում եմ, թե ինձ հանձնված Կովկասյան ժայրերկրում իշխանությունը պիտի ձգտի, վոր բոլոր ազգություններն, առանց բացառության, կատարելապես իրավահավասար լինեն, և չեն կարող թագցնել, վոր ժայրերկրում գոյություն ունեցող ազգային գոտությունների մեջ լուրջ ազդեցություն է ունեցել, թերևս և անգիտակցաբար, ժայրերկրային իշխանության ուղղությունը: Յես խորապես հավատում եմ, վոր դարավոր տարածայնությունների ստեղծած այս գոտությունը կհարթվի, յեթե յանությունն անխախտելի կերպով գիտակցե, վոր Կովկասյան ժայրերկրում բնակվող բոլոր ազգությունները պետք է ոգտվեն ռուսահպատակների միևնույն իրավունքներից և հավասարապես մոտ են Ցարի սրտին: Վերտակների միևնույն իրավունքներից և հավասարապես մոտ են Ցարի սրտին: Վերտակների միևնույն իրավունքներից և հավասարապես մոտ են Ցարի սրտին: Վերտակների միևնույն իրավունքներից և հավասարապես մոտ են Ցարի սրտին: Վերտակների միևնույն իրավունքներից և հավասարապես մոտ են Ցարի սրտին:

Անցնելով ձեր արտահայտած կարծիքին ըստ եյության, յես անչափ ուրախ եմ նշելու, վոր իմ հայացքն ու ձեր նկատառումները նույնամուն են լիովին:

Ռուսաստանը, վոր ամենից ավելի յեռանդագին է պաշտպանել տաճկական Հայաստանում լայն ռեֆորմներ մտցնելը, ի հարկե չի կարող հաշվի չառնել այն տանջանքները, վոր ներկա պատերազմի ընթացքում հայ ժողովուրդը կրել է մուսուլմանական ճնշման հետևանքով: Կասկած չկա, վոր Տաճկաստանի նորանվաճ մարզերի կազմակերպման ժամանակ պետք է ամենախիստ կերպով

¹ «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», Երևան, 1926, էջ 55-56:

հիմք դնել ու հետևել նվաճած մարզերում բնակվող բոլոր ազգությունների նկատմամբ որինականության, արդարության ու լիակատար անաչառության սկզբունքին: Յես չեմ շոշափում Ռուսաստանի հովանու ներքո Հայաստանին ավտոնոմիա տալու խնդիրը, մի խնդիր, վոր ամենայն հավանականությամբ առայժմ կյանքի չե կոչվելու դեռ, և իմ կարծիքով լուկ կարող եր վտանգավոր կերպով բարձրացնել այն հարցերի խաղաղ լուծումը, վորոնք ծագել են ներկա պատերազմի ժամանակ: Սակայն և այնպես յես, ի հարկե, կատարելապես համաձայնում եմ Ձեզ, վոր պետք է, և լիովին հնարավոր է, հայերին տալ դպրոցական ու յեկեղեցական ինքնուրույնություն, յեկեղեցական կապիտալներն ու գույքերը կառավարելու իրավունք, մայրենի լեզվից ոգտվելու իրավունք՝ այն պայմանով միայն, վոր բոլոր պաշտոնական հանգամանքներում ռուսերենն առաջնություն ունենա, նմանապես և քաղաքային ու գյուղական ինքնավարություն՝ ընտրությունների ժամանակ պահպանելով բնակչության տոկոսային փոխհարաբերությունը: Ի հարկե վոչ քրիստոնյա տարրերի վերաբերմամբ ել պետք է կիրառել նույն սկզբունքները՝ համաձայն տեղական պայմաններին ու նրանց կուլտուրական զարգացման աստիճանին:

Ինչ վերաբերում է տեղական հողատիրության ու գաղութացման խնդիրները վճռելու ժամանակ նույն որինականությունն ու անաչառությունը պահպանելուն, ապա յես, ի հարկե, ամբողջապես համաձայն եմ այն կարծիքին, վոր արտահայտել եք դուք: Իբրև ապացույց իմ ու Ձեր կարծիքի համերաշխության՝ գրությանս, ի գիտություն Ձեր, կցում եմ պատճենը ս. ք. մարտի 19-ի № 21 իմ հրամանի, վորը մեր նվաճած տաճկական մարզերում արգելում է ամեն տեսակի ինքնական հափշտակությունները:

Վերջում չեմ կարող լռության մատնել այն, վոր իմ մեջ լուրջ յերկյուղ է զարթնում պարենավորման հասունացող ճգնաժամի նկատմամբ, վոր սպառնում է լուրջ հետևանքներ ունենալ ինչպես բանակի, այնպես և Կովկասի համար, ուստի և չեմ կարող ամենամտահոգ ուշադրություն չդարձնել այնքան ծանր ու վերահաս վտանգը վերացնելուն և այս պատճառով հենց այժմ և եթ հրաման տվի դիմելու այն խնդրի քննությանը, վոր վերաբերում է հայ գաղթականներին Տաճկաստանի մեր նվաճած մարզերը վերադարձնելուն ու իրենց հողերի վրա բնակեցնելուն, վորպեսզի սրանց՝ իրենց հայրենի հողամասերի վրա նորից հաստատվելու հնարավորություն տալով՝ մեծ չափով թեթևացնենք գաղթականների պարենավորման ծախսերը և միաժամանակ կյանքի վերակոչենք տաճկական Հայաստանի արգավանդ հողերը, վորն անկասկած լուրջ կերպով կթեթևացնի բանակի պարենավորման գործը:

Խորապես Ձեզ հարգող՝ ՆԻԿՈԼԱՅ՝

Փաստորեն, այս երկու նամակները դարձան Սայքս-Պիկոյի համաձայնագրի եզրափակիչ ակտերը և, Հայաստանն այլևս կայսերական Ռուսաստանի փաստաթղթերում անկախության կարգավիճակ չստացավ:




Խրիմյան Հայրիկ

¹ «Հայաստանի Ավտոնոմիան յեվ Անտանտան», Երևան, 1926, էջ 57-58:



Ավետիս Ահարնյան



Արղիշտիս Հովհաննիսյան



Անդրանիկ
Օզանյան

Նժդեհ
/Գարեգին
Տեր-Հարությունյան



Գանիել
Բեկ-Փրումյան



Թովմաս
Նազարբեկյան



Մովսես
Միլիկյան /Միլիկով/



Համո Օհանջանյան




Դասամաս
Կանայան (Դր)



Գևորգ Սուրենյանց



Գարեգին Նորատունկյան



Գևորգ VI Չոբեզյան



Աղխանդր Իսախյան



Արսակ Ներսիսյան
(Մեղուհ)



Արամ Մանուկյան



Միմոն Վրացյան



Գեներալ
Վասիլի
Դավթի Կորզանով



Վազգեն Առաջին



Կարո Սարգսյանի



Արսախեստ Բադալյանի



Լուսն Շահյան



Հովհաննես Քաջազնունի

Վիլսոնյան ծրագիրը պատերազմող կողմերին հաշտության կոչելու առաջարկություն էր, բացի Թուրքիային վերաբերող 12-րդ կետից: Այնտեղ կարդում ենք. «**Ներկայիս օսմանյան կայսրության թուրքական տարածքներին պետք է երաշխավորվի հուսալի անկախություն, բայց մյուս ազգություններին, որոնք այժմ գտնվում են թուրքական տիրապետության տակ, պետք է երաշխավորվի անվիճելի կենսական անվտանգություն և ինքնավարության զարգացման բացարձակ անվտանգ հնարավորություն: Դարդանելը պետք է մշտականորեն բոլոր պետությունների համար բաց լինի՝ որպես ազատ անցուղի նավագնացության և առևտրի զարգացման համար, ըստ միջազգային երաշխիքների**»¹:

Օսմանյան բռնապետության «բարբարոս թուրքերի», «վայրենաբարո քրդերի», երկրի կառավարման «սուլթանական եղանակի» նկատմամբ Վուդրո Վիլսոնի մթերած բացասական, անհանդուրժողական վերաբերմունքը վաղեմի անցյալ ուներ: Դեռևս Պրինստոնի համալսարանի նորաթուխ ռեկտորը բուժման նպատակով ժամանել էր **Լոնդոն, այսինքն՝ իր նախնիների հայրենիքը**:

1906 թ. մարտ-հոկտեմբեր ամիսներին Վ. Վիլսոնն ապրում էր Թեմզայի մառախլապատ ափերին թառած, սովորական հյուրանոցի անշուք մի համարում: Բուժման կուրսն ընդունելուց զատ, երիտասարդ պրոֆեսորն ազատ ժամերին հաճախում էր **Քեմբրիջի և Լոնդոնի այլ համալսարաններ**²՝ դասախոսություններ էր լսում, հատկապես միջազգային հարաբերությունների մասին: Այստեղ նրան գրավեցին Բրիտանական Միացյալ Թագավորության երբեմնի վարչապետ **Վիլյամ Յուարտ Գլադստոնի** (1808-1896) պետական ու հասարակական գործունեության մասին արժանահիշատակ պատմության հետաքրքիր դրվագները: Նա մեծ հետաքրքրությամբ էր ունկնդրում այն դասախոսությունները, որոնց բովանդակած փաստերը վերաբերում էին XIX դարի 90-ականների Թուրքիայում Արդուլ Չամիդի հրամանով սեփական ժողովրդին ցեղասպանության ենթարկելու իրողությանը:

Վուդրո Վիլսոնը հիացմունքով ընդունեց Յու. Գլադստոնի թևավոր այն խոսքը, թե **«ժառայել Դայաստանին, դա նշանակում է ժառայել քաղաքակրթությանը»**: Ամերիկացի երիտասարդ պրոֆեսորը 86-ամյա Գլադստոնի թողած գրառումներից արտագրելով, վերցրեց 1896 թ. սեպտեմբերի 24-ին **Լիվերպուլում** արտասանած նրա ճառից այն կտորները, որոնք վերաբերում էին Թուրքիային, նրա բուրգի գագաթին թառած Աբդուլ Չամիդին: Այդ ճառում Յու. Գլադստոնը բացեիբաց պահանջում էր գահընկեց անել հայասպան սուլթանին: Այդ «ճառը, դժբախտաբար, անգլիացի երբեմնի հզոր պետական գործչի վերջին ելույթն էր, որտեղ թուրքերին բնութագրում էր իբրև **«անկանխազուշակելի ազգ»** և պահանջում էր **«թուրքական կայսրությունը սրբել քարտեզի երեսից»**: Սուլթանական բռնապետությունը նա համարում էր **«քաղաքակրթության ամոթանք»**, **«անեծք մարդկության հասցեին»**: Չառանյալ անգլիացին սուլթանին բնութագրեց «մեծ մարդասպան Աբդուլա» այն դեպքում, երբ ֆրանսիացիները Երլտըզի բռնակալին արդեն անարգանքի սյունին գամելով՝ **«արյունոտ սուլթան»** «պատվանուն» էին խարանել նրա անամոթ ճակատին»³:

Թուրքիայի և թուրքերի կատարած ազգասպան գործունեության մասին Գլադ-

¹ Վերոհիշյալ փաստաթղթի **անգլերեն** բնագիրը, նրա **հայերեն և ռուսերեն** թարգմանությունները գե-տեղված են աշխատության երկրորդ գրքում: Տե՛ս **Վավերագիր № 5-7**:

² **Лорд Кемпос**, Расцвет и упадок османской империи. Перевод с английского М. Пальникова, Москва, 1999, стр. 610.

ստոնի ասածներին իբրև օրգանական շարունակություն արդեն ԱՄՆ-ի 28-րդ պրեզիդենտ դարձած Վ. Վիլսոնն առատ տեղեկություններ էր ստանում Ստամբուլում դեսպան հաստատված **Յենրի Մորգենթաուից** (1858-1946)⁴:

Յ. Մորգենթաուն պատերազմի տարիներին Կ. Պոլսում ներկայացնում էր նաև **Միացյալ Թագավորության, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի և Բելգիայի** շահերը: Նա Մերձավոր Արևելքում Ամերիկայի կոմիտեի (Ամերկոմ) փոխնախագահն էր: Յետևաբար՝ պաշտոնի բերումով դեսպանն այս կամ այն կերպ շփվում էր ցեղասպանության զոհերի կենսագիրների, այսինքն՝ **արևմտյան միսիոներների հետ**, որոնք փաստառատ զեկուցագրեր էին ներկայացնում **«խիզախ ամերիկացուն»**, օրորվելով նրանից օգնություն ստանալու ռոմանտիկ հույսերով:

1915 թ. ապրիլի 30-ին Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպանը հաղորդել է Պետդեպարտամենտի քարտուղարին, որ Թուրքիայի ռազմական նախարարը, ի պատասխան Կ. Պոլսում Չայոց պատրիարքի, Իտալիայի դեսպանի, Բուլղարիայի արտգործնախարարի և ԱՄՆ-ի դեսպանի կոլեկտիվ դիմումի, արդարացրել է հայերի դեմ գործադրվող բռնարարքները, պատճառաբանելով, որ դրանում մեղքն ընկնում է ռուսական հայերի վրա, որոնք Վանում անկարգություն են հրահրել⁵:

Թուրքական իշխանությունները միաժամանակ փորձել են թյուրիմացության մեջ զցել ԱՄՆ-ի դեսպանին, տեղեկացնելով, որ իբր թե հրահանգ է տրված տեղական իշխանություններին պաշտպանելու անմեղ մարդկանց, և որ պաշտոնատար անծինք զուշացվել են, որ այս հրահանգը խախտողները կենթարկվեն պատասխանատվության⁶:

Մայիսի 4-ին ԱՄՆ-ի պետական դեպարտամենտում ստացվել է Անգլիայի հայ ազգային միությունների հեռագիրը, որտեղ նշվում է, որ շարունակվում են հայերի զանգվածային կոտորածները, և պատասխանատու են թուրքական իշխանությունները⁷:

Այս ամենի մասին Մորգենթաուն ժամանակին տեղյակ է պահել իր կառավարությանը, իսկ պետական քարտուղարին հասցեագրված 1915 թ. հուլիսի 10-ի հեռագրում նշել է. «Իմ գործադրած ջանքերն ապարդյուն են եղել, քանի որ թուրքական իշխանությունները որոշակիորեն ինձ տեղյակ են պահել, որ ես իրավունք չունեմ խառնվելու իրենց ներքին գործերին»⁸:

Մորգենթաուն առաջիններից մեկն էր, որ ճիշտ հասկացավ երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության նպատակը: Կանխազգալով հայերին սպառնացող վտանգը, Մորգենթաուն խորհուրդ էր տալիս իր կառավարությանը կազմակերպել արևմտահայերի զանգվածային ներգաղթը ԱՄՆ: Նա պարզ գիտեր, որ «ենվերի և Թալեաթի իրական նպատակը հայերին ոչնչացնելն էր»⁹:

Մեծ էր Մորգենթաուի դերը հեռավոր Թուրքիայում տառապող հայերի ողբերգական վիճակին ամերիկյան հասարակայնությանը տեղյակ պահելու խնդրում: Չայա-

⁴ Այդ վավերագրերը վերջերս են հրատարակվել: Տե՛ս «Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915-1916 թթ. Չայոց ցեղասպանության մասին», Երևան, 2002, կազմեց և ծանոթագրեց **Տիգրան Չաքարյանը**: Տե՛ս նաև «ԱՄՆ-ի պաշտոնական վավերագրերը Չայոց ցեղասպանության մասին», Երևան, 2004, կազմեց **Արա Սարաֆյանը**, թարգմանիչ՝ **Չամիկ Չայրապետյան**, խմբագիր՝ **Լ. Ա. Բարսեղյան**:

⁵ National Archives (Washington), 867, 4016/59 (microgopy № 353, Roll. 44).

⁶ Նույն տեղում, 867, 4016/60:

⁷ Նույն տեղում, 867, 4016/70:

⁸ "Papers Relating... 1915 Supplement. The Wold War", p. 983, 984; National Archives (Washington), 867, 4016/58a.

⁹ **Henry Morgenthau**, Ambassador Morgenthau's Story. Garden City, New York, 1918, p. 310.

նպաստ մեծ գործունեություն էր ծավալել հայկական կոտորածների ուսումնասիրման ամերիկյան կոմիտեն, որի նախագահն էր Սամյուել Դաթընը¹:

1915 թ. հուլիսի 16-ին ԱՄՆ-ի պետական նոր քարտուղար Ռոբերտ Լանսինգը խորհուրդ է տվել Մորգենթաուիսն փորձելու ձեռք բերել Գերմանիայի և Ավստրիայի դեսպանների աջակցությունը՝ թուրքական իշխանությունների վրա ազդելու նպատակով: «Պետական դեսպարտամենտը, - ավելացրել է Լանսինգը, - չի կարող նոր առաջարկ անել այս չափազանց բարդ իրադրության վերաբերյալ, քան այն, որ շարունակեք գործել, ինչպես նախկինում...»²:

Երբ իր կառավարության հանձնարարությունը կատարելու նպատակով ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուսն հանդիպել է Թալեաթ փաշային և փորձել իր դժգոհությունը հայտնել հայերի կոտորածների վերաբերյալ, վերջինս վճռականապես հրաժարվել է խոսել հայերի մասին և ցինիկաբար հարցրել է դեսպանին, թե «Մի՞թե նրանք (*հայերը*) ամերիկացիներ են»³: Ճիշտ է նկատել դեպքերին ժամանակակից ու ականատես, ազգությամբ թուրք քաղաքական գործիչ և պատմաբան *Ահմեդ Ռեֆիկը*, որ «*Թուրքիայում բարոյականության, տոկունության և պատվի զգացում չէր մնացել*»⁴:

Ցեղասպանության պատմության հետազոտողներին համար հրատարակված արժեքավոր ամերիկյան վավերագրերին կցված՝ *Արտակ Ջաքարյանի* գրած առաջաբանում կարդում ենք. «Այսպիսով, ամփոփելով բերված փաստաթղթերի ներկա վերլուծությունը, մեկ անգամ ևս անհրաժեշտ է շեշտել դրանց կարևորությունը մի քանի առումներով: Նախ՝ այս փաստաթղթերը Հայոց ցեղասպանության մասին ամերիկյան վավերագրերին հաղորդում են հավաքական ամփոփիչ արժեք, քանի որ նրանցում պարունակվող, հիմնականում չմանրամասնացրած տվյալներն իրականում բյուրեղացնում են այլ ծավալուն վկայագրերը: Այդ վկայություններում բավական հստակ է նշմարվում տեղի ունեցող ողբերգությանը տրվող գնահատականի աստիճանական զարգացումը, որի վերջնական փուլում դրանք միաբերան պնդում են՝ դրանք ծրագրվել են թուրքական իշխանությունների կողմից, որոնք կոտորածների և բռնի տեղահանումների միջոցով նպատակ ունեին հայերին ոչնչացնել:

Մեկ այլ կարևոր հանգամանքն է այն, որ այս փաստաթղթերը որոշակի պատկերացում են տալիս հետազոտողին Հայոց ցեղասպանության տարիներին այդ հարցի նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշման, նրա ձեռնարկած պատասխան քայլերի մասին, թեև պետք է խոստովանել, որ դժվար է այս առումով ամբողջական պատկերացում կազմել: Եվ վերջապես, այս նյութերը բավական առատ են Հ. Մորգենթաուի Կ. Պոլսում ամերիկյան դեսպան եղած ժամանակ հայօգուտ գործունեության մասին: Դրանք լի են դիվանագետի ակտիվ ջանքերի մասին վկայություններով, որ նա գործադրել է մի քանի ուղղություններով, դիվանագիտական միջամտություններից սկսած մինչև զուտ մարդասիրականը: *Մորգենթաուի կերպարը՝ իբրև մարդասեր և հայասեր, մեզ ավելի հստակ է ներկայանում նրա՝ հայերի մազապուրծ բեկորների փրկությանն ուղղված նախաձեռնությունների ուսումնասիրություններից, նախաձեռնություններ, որոնց միայն մի մասը, ցավոք, իրականացավ,*

¹ Richard Kloian, The Armenian Genocide, News Accounts from the American Press (1915-1922), Berkeley, 1985.
² "Papers Relating to the Foreign Relations of the United States, 1915. Supplement. The World War", p. 984. Վերցրել ենք *Փալուստ Փալոյան*, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917թ.), Երևան, 2004, էջ 704-706:
³ E. B. Terpe, Соч. том V, Москва, 1958, стр. 402.
⁴ *Ահմեդ Ռեֆիկ*, Երկու կոմիտե, երկու ոճիր, Երևան, 1997, էջ 16:

*սակայն իր զգալի դերն ունեցավ արևմտահայության որոշ բեկորներ այդ ծանր արհավիրքից փրկելու գործում»*¹:

Երկրորդ ժողովածուի խմբագիրն է և ցեղասպանության բանգարան-ինստիտուտի այն ժամանակվա տնօրեն *Լ. Ա. Բարսեղյանը*: Նրա գրած առաջաբանում, իբրև ընդհանուր բնութագրություն, կարդում ենք. «Գնահատելով Հայոց ցեղասպանության մասին ամերիկյան դիվանագետների հաղորդագրումների ակադեմիական արժեքը, ժողովածուի կազմողն այն տեսնում է վկայությունների մասնավոր և հավաքական որակի մեջ: Մասնակի որակն ըստ նրա ներառում է այնպիսի գործոններ, ինչպիսիք են տեղի ունեցած իրադարձությունների հետ ականատեսների անմիջական շփումները, ականատեսների պատմածների մանրամասն վերաշարադրանքը կամ ուղղակիորեն բառացի գրանցումը, կոնկրետ դեպքերի նկարագրությունը և ճշգրիտ գնահատականներ տալը: Նյութերի հավաքական որակը խիստ արժևորում է դրանք որպես փաստական վավերագրեր՝ արխիվային սկզբնաղբյուր գնահատելիս:

Փաստաթղթերի ընդհանուր դիտարկումը վկայում է այն մասին, որ ամերիկյան դիվանագետների զգալի մասը որդեգրել էր հետաքննիչի հիանալի դեր, որը դրսևորվում էր հայերի նկատմամբ անաչառ վերաբերմունքով, հատկապես կոտորածների և գաղթականների իրավական վիճակի ճշմարտացի ու մանրամասն նկարագրությամբ: Ժողովածուի երրորդ հատորը կազմված է Օսմանյան Թուրքիայի կենտրոնական շրջաններում 1915-1917 թվականներին տեղի ունեցած դեպքերի առթիվ ամերիկյան դիվանագետների գեկուցագրերից, որոնց մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում 1915-1916 թթ. Խարբերդից կենտրոն դիվանագետ Լեսլի Դևիսի ուղարկած հաղորդագրումները: Ամերիկյան դիվանագետի բոլոր գեկուցագրերը կազմված էին անձնական դիտարկումների հիման վրա, երբ նա մոտիկից շփումների մեջ էր մտնում տեղահանվողների հետ, այցելում նրանց ճամբարները, նրանց ցույց տալիս մարդասիրական օգնություն»²:

Հազարների, տասնյակ հազարների հասնող անթիվ ու անհամար այդ գեկուցագրերը մեծ դժվարությամբ (Թուրքիայում գրաքննությունը չափազանց խիստ էր) հասնում էին *Վաշինգտոն – Սպիտակ տուն* և դառնում պետական դեսպարտամենտի, հատկապես պետական քարտուղարների դատապարտման հիմնավոր պատճառը:

Պատերազմի ողջ ընթացքում Սպիտակ տունը գլխավորում էր *Վուդրո թոմաս Վիլսոնը*, իսկ նրա պետական քարտուղարն էր *Ռոբերտ Լանսինգը*: Ավելին. Ռ. Լանսինգը, պրեզիդենտի բացակայության պայմաններում, Փարիզի վեհաժողովում դեկավարում էր ամերիկյան պատվիրակությանը, կայացնում լիարժեք որոշումներ, հարկավ, դրանք համաձայնեցնելով Վ. Վիլսոնի հետ: Այսպիսով, ԱՄՆ-ի նախագահն ու նրա պետական քարտուղարը հիանալի տիրապետում էին օսմանյան Թուրքիայում կատարված ցեղասպանության իրողությանը և *միասնաբար*, առանց դույզն-ինչ տարակուսանքի, ունեին իրենց դատավճիռը բռնապետության ապագայի վերաբերյալ: Նրանք համակամ էին ձևակերպել *12-րդ կետը* (14 կետերում), նրանք վերջնական էին որոշել սուլթանական տերության բաժանման, *սուլթանին «իր մայրաքաղաք Ստամբուլից արտոթելու» արդարամիտ դատավճիռը*:

Վիլսոնյան հայեցակարգին անվարան տիրապետող ու պաշտպան պետական քարտուղար *Ռոբերտ Լանսինգը* 1918 թ. սեպտեմբերի 21-ին, այսինքն՝ զինադադա-

¹ «Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության մասին», էջ 25:
² «Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին», Երևան, 2004, էջ 5-6:

րից շուրջ 40 օր առաջ, ի լուր եվրոպական դիվանագետների, կազմեց 29-ը կետից բաղկացած մի հուշագիր և այն հրապարակեց Լոնդոնի և Փարիզի կենտրոնական թերթերի էջերում:

Պատմության համար չափազանց կարևոր այդ հուշագրի մասին Աևրի և Լոզանի պայմանագրերի բնագրերին կցած բնութագրական իր առաջաբանում պրոֆ. Յու. Վ. Կլյուչնիկովը (կարևորությունից դրված, մեջբերենք առանց բարձրանության) գրում է. «21 сентября 1918 года Лансинг, государственный секретарь при Вильсоне, составил меморандум по территориальным вопросам для представления его президенту в тот момент, когда нужно будет готовиться к мирным переговорам. Из 29 пунктов этого меморандума 6 непосредственно касались Турции. Согласно им, Османская империя должна свестись к одной Анатолии и не иметь никаких владений в Европе; в скобках значилось, однако, что этот пункт требует еще рассмотрения. Константинополь вместе с прилегающей к нему зоной превращается в международный протекторат, управляемый международной комиссией по мандату держав. Комиссия определяет форму правления в новом протекторате, а также распоряжается судоходством в Дарданеллах и Босфоре. Армения и Сирия становятся протекторатами одного правительства или нескольких правительств, в соответствии с местными и международными интересами, при чем в них самым строгим образом должна проводиться политика «открытых дверей» и возможно скоро устанавливается самоуправление. Палестина выделяется в автономное государство под общим международным протекторатом или под протекторатом одной державы по мандату других держав. В Аравии создается одно государство или несколько государств, и ей обеспечивается «полный или частичный суверенитет» (Lansing: «The Peace Negotiations», p. 174).

Этот меморандум одинаково ярко обнаруживает и то, насколько мало Америка была осведомлена о намерениях своих союзников, и то, насколько неустойчивы были намерения Антанты в отношении Турции¹:

Պատերազմի վերջում դաշնակիցները ևս հերթականությամբ հրապարակում էին իրենց պլանները Թուրքիայի բաժանման վերաբերյալ:

Ահա Իտալիայի պլանը, որը քննարկման մյուս դարձավ Անտանտի մյուս տերությունների դիվանագիտական ատյաններում: Այդ մասին Յու. Վ. Կլյուչնիկովը գրում է. «Окончательную форму выработанные в апреле условия приняли в августе того же 1917 года в порядке обмена соответствующими меморандумами и нотами Римом, Лондоном и Парижем с сообщением текста условий для отзыва Петрограда. Исчерпывающим образом все итальянские требования были перечислены в меморандуме от 18 августа итальянского посла в Лондоне маркиза Имперали. Первое требование сводилось к тому, чтобы наряду с синей французской и красной английской зонами в Малой Азии — в Анатолии — появилась «зеленая» итальянская зона, а наряду с французской и английской сферами влияния, зонами «А» и «В», — сфера итальянского влияния, зона «С». Зеленая зона должна была на востоке непосредственно примыкать к синей зоне на пространстве от средиземноморского побережья и на север, немного не доходя до уровня Кайсарие, а оттуда итти почти по прямой линии на запад до Эгейского моря, захва-

¹ «Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне», полный перевод французского текста, под редакцией проф. Ю. В. Ключникова и проф. А. В. Сабенина, Москва, 1927, стр. 9.

тывая Конию, Адалию и Смирну и прилегающие к малоазиатскому берегу Спорадские острова. Зона «С» должна была находиться к северу от зеленой итальянской зоны, прилегая к ней со стороны Эгейского моря на протяжении приблизительно половины ее пограничной линии, а по размерам составляя приблизительно одну четверть этой зеленой зоны. Остальные главнейшие требования итальянского меморандума в основе своей сводились к тому, чтобы в разных вопросах Италии были обеспечены такие же льготы в Малой Азии, какие Англия и Франция обеспечили в ней друг другу. Ответной нотой от того же 18 августа Бальфур подтвердил Имперали, что его меморандум правильно воспроизводит результаты переговоров между тремя правительствами, и таким образом формально подтвердил от имени Англии состоявшееся соглашение. 21 и 22 августа аналогичными сообщениями обменялись итальянский посол в Париже и французский министр иностранных дел. Еще 10 августа Карлотти было предложено известить о соглашении Петроград. Но временное правительство так и не надумало, что сказать по его поводу, а итальянское правительство не торопилось с ответом. По его мнению, Италии было «выгоднее не получить никакого русского ответа, чем получить ответ неблагоприятный»².

Վերոհիշյալ ընդհանուր պլաններից զատ, գոյություն ունեւ Իտալիայի կոնկրետացված ծրագիր՝ **Հայաստանի և հայ ժողովրդի ծակատագրի վերաբերյալ: Ռ. Գ. Դովհաննիսյանը** բերում է. «Իտալացիները և, ավելի շատ ընդգծված՝ հույները, ավելացրին իրենց ձայնը ի նպաստ հայկական բաղձանքների: Պատերազմի վերջին ամիսներին մի խումբ իտալացի բարձրաստիճան պաշտոնյաներ, ներառյալ **Չոմի քաղաքագուլուխ և նախկին վարչապետ Լուիջի Լուզատին, հիմնեցին Հայաստանի անկախության իտալական կոմիտեն**³: 1918 թ. հոկտեմբերին արտաքին գործերի նախարար բարոն Գ. Սիդնի Սոնինոն գրում էր Նուբար փաշային. «Ես հավատացնում եմ Ձերդ գերազանցությանը, որ Թագավորական կառավարու- «Ես հավատացնում եմ Ձերդ գերազանցությանը, որ Թագավորական կառավարու- թյունը կգործի ծայրաստիճան հոգատարությամբ՝ պաշտպանելու Հայաստանի շա- իերը, որի տառապանքները խորապես ցնցել են մեզ»: Այնուհետև, Հայաստանի ան- կախության ամերիկյան կոմիտեից Ջեյմս Ջերարդին հղած ուղերձում Սոնինոն հաս- կախության ամերիկյան կոմիտեից Ջեյմս Ջերարդին հղած ուղերձում հաս- ռավարությունը հետևում է Հայաստանի անդուլ և ազնիվ ջանքերին՝ իր անկախու- թյան և միասնության համար»⁴: Երբ առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց, իտալական Պատգամավորների պալատը ընդունեց հայկական անկա- խությանը հավանություն տվող բանաձև, իսկ 1918 թ. նոյեմբերի 18-ին վարչապետ **Վիտորիո Էմանուել Օռլանդոն բացականչեց. «Ասացե՛ք հայերին, որ ես նրանց դատը կդարձնեմ իմ դատը**»⁵:

Եշանակալի էր, որ Հայաստանի վերաբերյալ Դաշնակից պետությունների հաշ- տության ետպատերազմյան ձևակերպումների դեմ տարածայնության ամենաբարձր նոտան հնչեցրին ֆրանսիացիները, չնայած այն փաստին, որ վարչապետ ժորժ Կլե-

¹ «Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне», стр. 7.

² Լոնդոնի «Morning Post»-ից, ինչպես արտատպել է «New Armenia», vol. X, September, 1918, p. 144:

³ «Il Giornale d'Italia», 4 հոկտեմբերի, 1918 թ., ինչպես արտատպված է «New Armenia», vol. X, November, 1918, p. 175:

⁴ James W. Gerard, England and France in Armenia, New York, 1920, p. 2.

⁵ ՀՀ Պատ. Դիւան, գործ 344/1, ՀՀ Դոմի ներկայացուցչություն էլ իտալական կառավարութիւնը, 1918 թ.: «New Armenia», vol. X, December, 1918, p. 191. Տե՛ս նաև **Ռիչարդ Գ. Դովհաննիսյան**, նշված աշ- խատությունը, էջ 297:

մանսն 1918 թ. հուլիսին հավաստիացրել էր Պողոս Նուբարին, որ Ֆրանսիական Հանրապետությունը «չարունակում է հայ ազգին դասել այն ժողովուրդների շարքը, որոնց ճակատագիրը հաշմակիցները նպատակ ունեն լուծել համաձայն Մարդկության և Արդարության գերագույն օրենքների»: 1915-1916 թվականների Անտանտի գաղտնի համաձայնագրերը Ֆրանսիային էին վերապահել ամբողջ Կիլիկիան և Սեբաստիայի, Խարբերդի ու Դիարբեքի մեծ մասը, տարածքներ, որոնք այժմ պահանջվում էին Հայաստանի համար: Թեև նույնիսկ ցարական Ռուսաստանը տապալված էր և բուլշևիկյան կառավարությունը մերկացրել էր այդ համաձայնագրերը և հրաժարվել դրանցից, Ֆրանսիան դեռևս վկայակոչում էր դրանք՝ իբրև ընդհանրապես իրավական ուժ ունեցող ակտերի, հատկապես նկատի ունենալով, որ Մեծ Բրիտանիան իր հետպատերազմյան միջինարևելյան քաղաքականությունը հիմնականում խարսխում էր դրանց վրա: **1918 թ. դեկտեմբերի 27-ին նախկին վարչապետ Արիստիդ Բրիանը Ներկայացուցիչների պալատում** հայտարարեց, որ պատերազմի ժամանակի համաձայնագրերը պետք է հարգվեն, եթե վավերացվեն Ֆրանսիայի օրենսդիր մարմնի և Հաշտության վեհաժողովի կողմից: Երկու օր անց արտաքին գործերի նախարար Ստեֆեն Պիչոնը հայտարարեց, որ Ֆրանսիայի անհերքելի իրավունքներն ու շահերը Կիլիկիայում և Արևմտյան Ասիայի մյուս երկրներում հիմնված են «պատմական համաձայնագրերի և ավելի մոտ ժամանակների պայմանագրությունների վրա»:

Կիլիկիայի հավաստի յուրացմանը հասնելու ակնհայտ խաղաքայլով Ֆրանսիան պնդում էր, որ այդ տարածաշրջանը միացվի Սիրիային, մի երկրի, որը որոշակիորեն վերապահված էր ֆրանսիական կառավարմանը, չնայած որ բրիտանական զինված ուժերը դեռևս կանգնած էին այնտեղ: Քե դ'Օրսեից արտաքին գործերի նախարարությունը եռանդուն աջակցություն էր ցուցաբերում մի սիրիական համաժողովի, որը, գումարվելով Մարսելում, Կիլիկիան պահանջել էր Սիրիայի համար: Երբ 1919 թ. փետրվարին հաղորդագրություններ ներթափանցեցին Փարիզ՝ Ադանայում և Հալեպում հայերի դեմ մահմեդականների նոր խժոժությունների մասին, հայասերները ժորժ Կլեմանտոյի կառավարությանը մեղադրեցին նրանց հետ համագործակցելու մեջ, իսկ Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն սպառնաց բացահայտել գաղտնի նոդակալի դավադրությունը: Մեղադրանքը չէր կարող ապացուցվել, իհարկե, և եթե անգամ ֆրանսիական խարդավանքը գոյություն ունենար, ըստ երևույթին, համաշխարհային կարծիքը բավական ազդեցիկ էր, որպեսզի երաշխավորեր Հայաստանի ժավալվելը դեպի Միջերկրական ծով: Իրենց՝ ֆրանսիացիների մեջ կար պատկառելի մի խումբ, որը պաշտպանում էր Հայաստանի համար ոչ նվազ բարենպաստ լուծում, քան հանձնարարվում էին ամերիկյան և բրիտանական ղեկավար ցուցումներում: Հայաստանի համար, սակայն, դժբախտություն էր, որ հաշմակիցների հակասությունները բազմապատկվելու էին 1919 թ., ամեն մի շաբաթվա հետ միասին: Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Իտալիան բարձր խաղազուճար էին դնում Միջերկրականում և Մերձավոր Արևելքում, մինչդեռ Միացյալ Նահանգներն անընդունակ գտնվեց գործելու հստակ վճռականությամբ: Արդյունքում՝ հաշտություն կնքելու ձգձգումները հաշմակից տերությունների շատ մտահոգացումներ պետք է հասցնեին ծախսողման, իսկ բառի բուն իմաստով՝ կործանարար էին լինելու Հայաստանի համար»¹:

Որպես կանոն, Թուրքիային վերաբերող խնդիրները վճռելիս վերջին ու վճռական խոսքի իրավունքը վերապահվում էր բրիտանական ծովագայլին, որի վարած հակա-

¹ Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 2005, էջ 301-302:

ռուսական քաղաքականության պատճառով միշտ էլ քավության նոխագ էին դարձել **հայն ու Հայաստանը: Կրկնենք. վարչապետ Դեվիդ Լյոյդ Ջորջի** քննադատալիտող՝ իր երկրի մեղսակցությունն ընդունող խոստովանախոսքը:

Շուրջ վաթսուց տարի պիտի անցներ այս տողերը գրվելուց հետո, որպեսզի իր հեղինակավոր ներկայացուցիչներից մեկի՝ Լյոյդ Ջորջի բերանով Անգլիան ինքն ի լուր աշխարհի խոստովաներ, թե հայերի նկատմամբ Բեռլինի կոնգրեսի ընդունած որոշումն ամբողջովին իր սպառնալից ճնշման արդյունքն էր: «Այս որոշումը, - գրում էր **անգլիական նախկին վարչապետը, - մեծարվում էր մեր կողմից որպես Անգլիայի մեծագույն հաղթանակը, նրա թելադրած պատվավոր խաղաղությունը: Հայաստանը ողջակիզվեց մեր կառուցած հաղթանակի զոհասեղանի վրա... Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897, 1909 թվականների սուկալի ջարդերին և 1915 թվականի ամենասարսափելի կոտորածին** (ընդգծումները մերն են - Յ. Ղ.)»²:

Այժմ կարծես թե փոխվել էին ժամանակները, փոխվել էին բրիտանական գերագույն աթոռներին բազմած պաշտոնյաները, հետևաբար և Հայաստանի նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքը: **Մեծ Բրիտանիան**, այսինքն՝ **Լյոյդ Ջորջը** և **ԱՄՆ-ը**, այսինքն՝ **Վուդրո Վիլսոնը**, Հայաստանի խնդիրները վճռելիս գործում էին գրեթե միանման, առանց էական և լուրջ տարածայնությունների:

Ամերիկահայ պատմաբան **Ռիչարդ Հովհաննիսյանն** այս խնդիրները քննելիս գրում է. «Հաշտության բրիտանական առաջնորդող սկզբունքները ամերիկյան ծրագրից տարբերվում էին միայն մանրամասներում: Մեկ անգամ չէր վարչապետ Դեվիդ Լյոյդ Ջորջը բացականչել, որ **Հայաստանն այլևս երբեք չի ենթարկվի «թուրքի անիծյալ բռնակալությանը»**³: Համանման հայտարարություններ էին արել արտաքին գործերի նախարար **Արթուր Ջեյմս Բալֆուրը** և արտաքին գործերի նախարարի տեղակալ լորդ **Է. Ա. Ռոբերդ Սեսիլը**, որը խորհրդարանում հայտարարել էր. «Մենք չպետք է թույլ տանք, որ թուրքերի հանցագործությունները նվազանցեն հայերի ժառանգությունը... որ չպետք է լինի Հայաստանի ոչ մի բաժանում և զեցնեն հայերի ժառանգությունը...»⁴: **1917 թ. հունվարին** որ նրան պետք է վերաբերվել **որպես մեկ ամբողջության...**⁵: **1917 թ. հունվարին** հաշմակից կառավարություններն իրենց պատերազմական նպատակներից մեկը հասնանցեցին՝ «Թուրքերի բռնությունից հպատակ ազգաբնակչությունների ազատագրումը և Եվրոպայից արևմտյան քաղաքականությանը լիովին խորթ Օսմանյան կայսրության վտարումը»⁶: **Մեկ տարի անց, Լյոյդ Ջորջը հրապարակայնորեն հայտարարեց, որ «Արաբիան, Հայաստանը, Միջագետքը, Սիրիան և Պաղեստինը, մեր տեսակետից, իրավունք ունեն ճանաչվելու որպես առանձին ազգային կացություն ունեցող երկրներ»**⁷: 1918 թ. նոյեմբերի 8-ին, Օսմանյան կայսրության անձնատուր լինելուց կարճ ժամանակ անց, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի՝ համատեղ հռչակած մերձավորարևելյան քաղաքականության նպատակներն էին հա-

¹ *Դեյվիդ Լլոյդ Ժորժ*, Правда о мирных договорах, Москва, 1957, том II, стр. 390. Այս մտքերը մենք գիտական շրջանառության մեջ ենք դրել դեռևս 1967 թ.: Տե՛ս *Հայկ Դազարյան*, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 599:

² Տե՛ս, օրինակ, Great Britain, Parliament, House of Commons, Parliamentary Debates, 5th series, vol. C, 1917, column 2220; David Lloyd George, War Memoirs, Boston, 1954, vol III, p. 64.

³ House of Commons, Parliamentary Debates, 5th series, vol. CXC, 1918, column 3268. Սեսիլի կողմից համանման արտահայտությունների վերաբերյալ տե՛ս "Current History", vol. IX, pt. I, December, 1918, p. 401-402; "New Armenia", vol. X, November, 1918, p. 175.

⁴ *David Lloyd George*, Memoirs of the Peace Conference, 2 vols., New Haven, 1939, vol. II, p. 496, որն այսուհետև նշվում է որպես Conference Memoirs.

⁵ Carnegie Endowment for International Peace, Official Statements of War Aims and Peace Proposals, December 1916 to November 1918, Washington, D. C., 1921, p. 231.

մարվում «լրիվ և վերջնական ազատագրումը այն բոլոր ժողովուրդների, որոնք այդ-
քան երկար ժամանակ ճնշվել են թուրքերի կողմից», ինչպես և «ազգային կառավա-
րությունների ու վարչությունների» ստեղծումը, «որոնք իշխանությամբ կօժտվեն
բուն այդ ժողովուրդների նախածնունդությամբ՝ նրանց ազատ կամքով»¹: Այս հայտա-
րարությունը պարզապես հաստատում էր այն, ինչն առավել զգացական և պերճա-
խոս ձևով նշվել էր անգլիական խորհրդարանում և ֆրանսիական Ներկայացուցիչ-
ների պալատի սրահներում: Բրիտանական *տեսակետն ամփոփեց վարչապետ
Լլոյդ Ջորջը*. «Պատերազմ հայտարարելու պահից ի վեր, չկար որևէ կուսակցու-
թյան պատկանող բրիտանական քաղաքական գործիչ, որն ի նկատի չունենար, որ
եթե մենք հաջողենք պարտության մատնել այդ անմարդկային կայսրությանը, հաշ-
տության եական պայմաններից մեկը, որ պետք է պարտադրենք, լինելու էր հայկա-
կան հովիտների մեկընդմիջտ ազատագրումը այն արյունոտ բռնապետություննե-
րից, որի ապականությամբ էին հատկանշվում թուրքերի վայրագությունները»²:

**1918 թ. վերջին շարաքներին թուրքական խնդրի լուծման համար Անգլիայի
արտաքին գործերի նախարարությունը պատրաստեց նախնական, բայց որո-
շակի առաջարկություններ:**

Այսպիսով, դաշնակից չորս տերությունների ղեկավարները, երբեմն զատ-զատ,
երբեմն միասնաբար հայտարարություններ էին տարածում Թուրքիայի մասնատ-
ման, նրա մայրաքաղաքի ապագա կարգավիճակի վերաբերյալ: Քաղաքակիրթ
մարդկությանը, *տարբեր կրոնների ու դավանանքի տեր ժողովուրդներին* հայտ-
նի էին, որ *ժողով Կլեմանսոն, Դեվիդ Լլոյդ Ջորջը, Վուդրո Յուզո Կլիտոնը և Վի-
տարո Էմմանուել Օռլանդոն* արդեն ներքին համաձայնության էին եկել օսմանյան
կայսրության տարածքի բաժանման վերաբերյալ: Կասկած չէր մնացել, որ *թուրքե-
րին պետք է «աքսորեն Կոստանդնուպոլիսից»*, և նեղուցներն ու դրանց զույգ
ափերին փռված մայրաքաղաքը պետք է դրվեր՝ *մեկ, երկու, թե կոլեկտիվ հսկողու-
թյան ներքո*: Իհարկե, կային նաև հակասություններ:

Թուրքիան ուներ բերրի և ոչ բերրի, բնական հարստություններով (նավթով) հա-
րուստ թե աղքատ վիլայեթներ: Շատ եական էին՝ ռազմաստրատեգիական նշանա-
կությամբ կարևոր թե անկարևոր, ծովային թե ցամաքային դիրք ունեցող նահանգ-
ներին տեր դառնալու դեպքում ո՞վ կշահեր, ո՞վ նյութական վնասներ կկրեր: Այդ հա-
կասությունները սկիզբ էին առել դեռևս 1916 թ. կնքված *Սայքս-Պիկոյի համաձայ-
նությամբ* և շարունակվում էին հարատևել մինչև *Մուղոսյան զինադադարը*:
Առատ, հարուստ ավարը բաժանելիս ամեն ինչը չէ, որ հարթ էր ընթանում:

Գոյություն ուներ նաև մի շատ կարևոր հանգամանք, որը Դաշնակիցները դեռևս
հաշվի չէին առել: Գրավել Կ. Պոլիսը, սուլթանին վտարել իր նստավայրից՝ *այդ նշա-
նակում էր, որ քրիստոնյա աշխարհը մարտահրավեր էր նետում մահմեդա-
պաշտ ժողովուրդների հոգևոր առաջնորդներին, սուլթան-խալիֆին*:

Սուլթանական լայնարձակ կայսրությունն ընկած էր Եվրոպայի, Ասիայի ու Աֆրի-
կայի մայր ցամաքների վրա, *ուներ ռազմաավատական ու թեոկրատիկ բնույթ*:
*Պետության գերագույն սյուզերենը սուլթանն էր, որը ղեկավարում էր երկրի աշ-
խարհիկ գործերը, ուներ անսահմանափակ իշխանություն, միաժամանակ դիտ-
վում էր իբրև ողջ մահմեդական աշխարհի հոգևոր պետը*³:

¹ Paris Peace Conference, vol. II, p. 274-275. Մի շարք աղբյուրներ և հեղինակներ այս փաստաթուղթը
թվագրում են կամ նոյեմբերի 7-ով, կամ նոյեմբերի 9-ով:

² Lloyd George, Conference Memoirs, vol. II, p. 811-812.

³ Մանրամասն տես Չ. Սահակ Տեր-Մովսեսյան, Պատմություն հայոց սկիզբն մինչև մեր օրերը, հա-
տոր Բ, Վեներտիկ - ս. Դագար, 1924, էջ 678-679:

«Սուլթանը, իբրև Ալլահին շուքն երկրի վրայ, - գրում է Սահակ Տեր-Մովսեսյանը,
- կը համարեր թե իր թագն Աստուծո՞ւմ ստացած է, և ուստի միահեծան տեր էր քաղա-
քական ու կրօնական խնդիրներու մեջ, պետ համօրեն պետութեան և մեծ Իմամ մահ-
մեդական կրօնին, և ասոր համար կը կոչուէր Փատիշահ, Սուլթան, Գիւնքեար, այ-
սինքն՝ թագաւոր, տեր և իշխան կայսրութեան և ըստ կամոք տնօրինող իր հպատա-
կաց ինչքին, ազատութեան, կեանքին:

Իբրև խաքան կամ խան, միահեծան կայսր կամ ինքնակալ էր ծովու և ցամաքի,
և իբրև «Ամիրապետ», խալիֆա, Մահմետի փոխանորդն էր, և հետևաբար միսիլ-
ման կրօնին մեծ Իմամն էր: Սուլթան, յաստուածային իրաւանց, ոչ ոք կարող էր հա-
կակշռել և սահմանափակել իր իշխանութիւնը:

**Իբրև բացարձակ տեր, Սուլթանին կամքն էր միայն կենդանի իրաւունքն և
կենդանի օրէնքը: Փատիշահը ճշմարտապէս կրնար գրուցել Թագաւոր-Արևուն
պէս. «Բովանդակ պետութիւնն իր մէջն էր, ժողովրդեան կամքն իր սրբազան
կամքին մէջ ամփոփուած է»: Գետնաբար, Փատիշահն ուզածին պէս կը ծախ-
սէր պետական եկամուտը, կը հրատարակէր պատերազմը, կը կնքէր խաղաղու-
թեան դաշինքը, կը կապէր դաշինքներն երբ և ինչպէս որ իրեն հաճելի էր:**

Այդ բացարձակ միապետութիւնն ինքնօրէն էր: Ան կարող էր վերջ դնել իր հպա-
տակներուն կենաց և ազատութեան և անոնց ինչքը յարքունիս գրաւել: Սուլթանա-
կան մէկ ակնարկով կամ արքունի հրամանագրով մը, ֆէրման... ան կարող էր աքսոր-
ել, բանտարկել, թունաւորել, խեղդել կամ սպանել տալ զով որ ուզէր, մինչև իսկ իր
զավակները: Քիչ չէ թիւն այն սուլթաններուն՝ որոնք վարագուրի մը ետև ծածկուած,
անկարելիք ներկայ գտնուեցան իրենց եղբայրներուն բնաջինջ կոտորածին: Այդ եղ-
բայրասպան կոտորածը սկզբունքի և օրէնքի կարգն անցած էր, պետական նուիրա-
գործուած օրէնք մը. հարկ էր գահն ապահովել յանդուգն թագապահանջի մը փորձե-
րէն և Կայսրութիւնը փրկել քաղաքական պատերազմի մը աղետներէն»:

Ժառանգաբար գահ բարձրացող սուլթանները նախորդ դարերում վարում էին չա-
փազանց պարզ կենցաղ, քնում էին վրանների տակ, իսկ պատերազմների պահին
առաջնորդում աշխարհասասան բանակները, մասամբ և որի մեջ էր գուցե նրանց
հաղթանակների գրավակամը:

Նոր պատմաշրջանում անցյալի սուլթաններից քիչ բան էր մնացել, և այս տեսա-
կետից նրանք դարձել էին անճանաչելի: Սուլթաններն այժմ իրենց շուրջը հավաքած
«խոնաված բանբիրներ», բազմամարդ կանանոցներ, հարձերի բազմություններ, տար-
ված մեղկ ու շվայտ կյանքով, հազվադեպ էին դուրս գալիս հարեմներից: Բայց եթե
տարին մի քանի անգամ, մեծ թափորով, պալատից դեպի «ժողովուրդ» դուրս գալով
կամ ամեն ուրբաթ օր մզկիթը ծիսակատարության գնալիս լինեին, երթուղարձին
նրանք անցնում էին կրկնակի սյունաշարքի միջով, որոնք սրանց երեսը ծածկում էին
հպատակների խռոված հայացքներից:

Սուլթանն ուներ բազմամարդ արքունիք, արքունի թիկնապահ զնդեր, ոստիկան-
ներ, թեթևազեն հեծյալներ, հետևազոր-առնաուտ զնդեր, դաշույններով զինված
բազմահազարանոց ենիչերիների բանակ, անհամար բազմությամբ սենեկապետներ,
նաժիշկներ, աղախիներ, մանկավիհներ, ջրկիրներ, փայտահատներ, սպիտակ ու
սևամորթ ներքինիներ, ախոռապետներ, 770 պարտիզայաններ, որսորդներ, բարա-
կապահներ: Ահա այս էր օսմանյան արքունիքը, որը և զերեզման էր դառնում մահ-
կապահներ: Ահա այս էր օսմանյան արքունիքը, առավել ևս հպատակ այլազգիներին, հարկային ու
մեղական աշխատավորությանը, առավել ևս հպատակ այլազգիներին, հարկային ու
սոցիալական ծանր բեռի տակ կքում նրան, կորացնում գյուղացու մեջքը⁴:

⁴ Չ. Սահակ Տեր-Մովսեսյան, Պատմություն Հայոց, հատոր Բ, էջ 678-679: Տես նաև Հայկ Դազարյան,
Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը... էջ 48-49:

Սուլթաններին ժառանգաբար տրված **թեոկրատիկ անսահմանափակ** իշխանությունից վարպետորեն օգտվեց Համիդ Երկրորդը (1876-1909): Նա քրիստոնյա հպատակ ազգերի, հատկապես հայ ժողովրդի թափած ծով արյամբ կարմիր ներկեց իր կառավարած ողջ կայսրությունը, որը դժգոհության նոր ակիք բարձրացրեց բռնապետական այդ երկրում:

1908 թ. երիտթուրքերի կատարած կիսատ-պռատ հեղաշրջումից հետո Արդուլ Համիդը գահընկեց արվեց և մայրաքաղաքից արտաքսվեց: Նրան փոխարինելու եկավ թուլական թալեաթի կաբինետի ձեռքին խաղալիք դարձած **Մուհամեդ Բեշատ Ե** (1909-1918) սուլթանը: Սրա գահակալության տարիներին էր կատարվել **մեծ ողբերգությունը**՝ ցեղասպանությունը, ինչպես նաև Առաջին աշխարհամարտը, որի բեմահարթակի վրա կատարված մտաղացը տնտեսապես և քաղաքականորեն շատ ծանր նստեց նաև թուրք ժողովրդի ուսերին:

1918 թ. ապրիլի 14-ին նախավերջին սուլթանը «հանկարծամահ» եղավ: Հունիսի 4-ին ելլող Զյոշքին տիրացավ օսմանյան վերջին սուլթանը՝ իրեն վերանվանելով Մուհամեդ Վեհաետդին խան Զ (1918-1923, 1864-1930): Այս սուլթանի մասին «դրական» են արտահայտվում թուրքերից շատերը, նույնիսկ գոհ են, որ նրա հրահանգով կազմակերպվեց ցեղասպան թուրքերի դատավարության պրոցեսը:

Հայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ հանդես եկած Մելան Ջադե Բիֆաթը գրում է. «Սուլթան Մուհամեդ Վեհաետդին խան Զ լուրջ, կամքի եւ կորովի տեր ըլլալով, աշխարհի քաղաքականութեան ալ տեղեակ էր: Ան թուրքիոյ տխուր կացութիւնը լաւ կերպով ըմբռնած եւ զայն փրկելու ձգտած էր, նոյնիսկ Չուիցերիա գտնուող Պերնի դեսպանին միջոցաւ անպաշտօն կերպով անջատ հաշտութեան բանակցութիւններուն ձեռնարկել տուած էր: Աւա՛ղ, որ գէշ ժամանակ մը զահ բարձրացած էր: Պատերազմէն ետք ընդդիմադիրներու անունով զինք շրջապատողներուն անձարակութիւնները, տէրութիւնը իր գահավիժումէն փրկելու հնարաւորութիւն չէր ձգած»:

Այդուհանդերձ, պատերազմը մոտենում էր իր ավարտական եզրագծին: Ավելորդ արյունահեղությունից խուսափելու նպատակով Դաշնակիցները 1918 թ. հունվարին Թուրքիային զենքերը վար դնելու առաջարկ արեցին, որին ի պատասխան երիտթուրքերից կտրուկ մերժում ստացան:

Չայրացած Դաշնակիցները ուժեղացրեցին իրենց հարձակումը թուրքական ռազմաճակատներում, մտապահելով արագացնել այդ երկրի կապիտուլյացիան, իրենց նավատորմի դեմ բացել նեղուցները և վերջապես տեր դառնալ «**Հավիտենական մայրաքաղաքին**»:

Մերձավոր արևելյան ռազմաճակատում հարձակումն ուժեղացրեց **Մեծ Բրիտանիան**, քանի որ օր առաջ ուզում էր տեր դառնալ **Իրաքին, Պաղեստինին, Հորդանանին, Արաբական ողջ թերակղզուն, Աֆղանստանին**, անվտանգ դարձնել դեպի **Հնդկաստան** տանող իր ճանապարհները: Անգլիային անհրաժեշտ էին մերձավոր արևելյան երկրներում եղած հումքը՝ **նավթը, բամբակը, սև ու թանկարժեք մետաղահումքը**: Նման շահագրգռությամբ անգլիական բանակը սկսեց իր առաջխաղացումը: Հետաքրքիր էր, որ Թուրքիայի սահմանագլուխներին Դեվիդ Լլոյդ Ջորջը կուտակել էր **կես միլիոնանոց** բրիտանական բանակ¹:

¹ Մելան Ջադե Բիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ ժալքերը և իթթիհատի հայաքինը ծրագրերը, Երևան, 1990, էջ 164:
² Մանրամասն տես **А. М. Шамсутдинов**, Планы раздела султанской Турции и использование ее в вооруженной интервенции Антанты против Советской России в 1918-1919 гг., "Турецкий сборник", Москва, 1958, стр. 35-36:

Անգլիական և արաբական զորքերի գլխավոր հարձակումը սկսվեց 1918 թ. սեպտեմբերի երկրորդ կեսին, որի արդյունքում ջախջախիչ հարվածներ ստացան թուրքական **Հորրորդ, Յոթերորդ և Ութերորդ բանակները**: Դրանցից մնացորդները կամ հանձնվեցին իբրև զերի, կամ էլ ճողպրեցին Անատոլիայի խորքերը¹: Անգլիական զորքերը հոկտեմբերի սկզբներին ամբողջովին տիրացան Պաղեստինին, Հորդանանին, Սիրիային, Իրաքին: Առայժմս, դեռևս Թուրքիայի կազմում մնաց **Մոսուլը**:

1918 թ. սեպտեմբերի 15-ին Դաշնակիցների զորքերը, ճեղքելով **Մակեդոնիայի ռազմաճակատը, շարժվեցին դեպի Կոստանդնուպոլիս**: Թուրքիայի կրած խայտառակ պարտությունը կասկածից վեր էր: Թալեաթի կաբինետը, գնահատելով իրավիճակի անհուսալիությունը, **Դաշնակիցներին հանձնվելու խնդրանք ներկայացրեց**: Հատկանշական է, որ այս անգամ էլ Անտանտի առաջնորդները մերժեցին երիտթուրքերի հետ բանակցություններ վարելու առաջարկը:

1918 թվականի հոկտեմբերի 7-ին Թալեաթն իր գայլախմբով հարկադրված հրաժարական տվեց և, ավերված իրենց երկիրը թողնելով բախտի քմահաճույքին, մառախլապատ գիշերով գերմանական հաժանավով Օդեսայի վրայով **ճողպրեց Գերմանիա**:

Իթթիհատականների գողեգող փախուստի մասին թուրք **Ռեֆաթ Խալիդ բեյն** իր օրերին հրատարակել է **«Պարոններ, դեպի ո՛ւր»** վերնագրված չափազանց բնութագրական մի հոդված, որն ընթերցողի ուշադրությանը ներկայացնելով՝ նպատակ ունենք նրան պատկերացում տալու, թե Թալեաթն ու իր խումբն ինչքան ատելի էին դարձել նույնիսկ թուրքերից շատերի համար:

Մելան Ջադե Բիֆաթն իր հուշագրում այդ հոդվածից վերահրատարակում է հատվածներ: **Կրկնենք** այդ երկու թուրքերին, որոնք դիմելով Թալեաթին և իր կուսակից **փախստականներին**, ասում են².

«Պարոններ, դեպի ո՛ւր.
«Խնճոյքը լրացաւ. բերաննիդ չի սրբած, ձեռքերնիդ չլուացած եւ վրան ալ լեղի սուրճ մը չառած՝

«Պարոններ, դեպի ո՛ւր:
«Ամրան սկիզբը չորցած, նիհար կմախք դարձած մլուկներ դուրս կու գան, մեր մարմնին կը փակին, մեր մորթերը կ'այրեն, արիւննիս կը ծծեն եւ առտուան դէմ պարարտացած կը սկսին հոս ու հոն փախչիլ, կ'երեւի արշալոյս է, արեւը պիտ ծագի.

«Մլուկներ, դեպի ո՛ւր:
«Բարձր լեռներու վրայ կրակոտ աչքերով, սուր ժանիքներով, մագերնին փուչ փուչ անօթի գայլեր կը շրջին, պահապան շուն չունեցող հօտերու վրայ կը յարձակին, ոչխարները կը բզբտեն, չորս կողմերնին արիւն եւ ոսկոր դիզելով փորերնին կշտացած իրենց որջը կը փախչին, կ'երեւի հովիւր տեսաւ, շուները հաջել սկսան.

«Կշտացած գայլեր, դեպի ո՛ւր:
«Կատու չգտնուող տուններու մէջ մուկեր կը գտնուին, մարանները կը մտնեն, դարակները կը ծակեն, աս ան կրծելով աջ ու ձախ կը վազեն եւ տան ամենապատուաւոր անկիւնները կը պտտին, փոքր ձայն մը առնելուն պէս ծակերը կը մտնեն, կ'երեւի հոտ առին, կատուն կու գայ.

«Մուկեր, դեպի ո՛ւր:
«Երբեմն այրի կիներ անառակ զաւակներ կ'ունենան, որոնք սնտուկները կը բա-

¹ Տես **Д. Ллойд Джордж**, Военные мемуары, том VI, Москва, 1938, стр. 139.
² Նույնությամբ վերցրել ենք **Մելան Ջադե Բիֆաթ**, Օսմանյան հեղափոխության մութ ժալքերը և իթթիհատի հայաքինը ծրագրերը, Երևան, «ԿՓՀ», 1990, էջ 186-191:

նան, դրան կը գողնան, հազուատեղէն թռցնելով հրեաներուն կը ծախսեն եւ յետոյ վախճալով փողոց փողոց կը փախչին, կ'երեւի գողութիւննին յայտնուելով օձիքը ձեռք պիտի տան...

«Անառակ որդիներ, դէպի ո՛ր»:

«Զարկին, կուտրեցին, քանդեցին, սպաննեցին, այրեցին եւ մեր դիակները մէջտեղ նետելով օձերու պէս փախան, թշնամին մեր տունը մտնելուն կորսուեցան.

«Չիմուած, աչքերնին արիւնոտ փաշաներ, դէպի ո՛ր»:

«Այն ժամանակ գրիչներ՝ կուտրուած, աչքեր՝ փակ, վզեր՝ ծռած եւ բերաններ՝ կղպուած էին: ԵՎՈՒՐ, կը հրամայէիք, ժողովուրդը գետնաքարշ կը վազէր, ձեր ոտքերուն տակ կը դողդողար: ԳՆԱՎ, կը հրամայէիք, հազիւ դուռը բացած աստիճանները չորս չորս իջնելով հոգին կ'ազատէր...

«Դուք ոչ թէ նախարար, այլ աւազակապետ էիք, դուք ոչ թէ պետ՝ այլ յելուզակներ էիք. դուք ոչ թէ կուսակալ՝ այլ ապստամբապետ էիք, ըմբոստներուն մատ խածնել տուիք: «Զազըճի»ին երանի կարողալ տուիք, «Գապագճը»ն խաւարի մէջ ձգեցիք, եթէ քիչ մըն ալ անցներ իբր սուրբ հանրային կիները պիտի պաշտէիք: «Մըսալլըները» հերոս ճանչնալով անոնց արծանը պիտի կանգնեցնէիք, «Սազալլը»ներուն կեանք տալով դիրքերու պիտի բարձրացնէիք:

«Մահ, ըսելուդ պէս շարք շարք կախաղանները կը պատրաստուէր. այրեցէք, ըսելուդ պէս բոցեր կ'արծարծէին, յարծակում ըսելուդ պէս՝ գունդ գունդ ոստիկան զինուորները կը վազէին: Չեռքերնիդ բանտերու բանալին, մէջքերնիդ կախաղանի չուաններ, կռակնիդ կախաղաններ՝ նահանգ նահանգ պտտեցաք, Ալին սպաննեցիք, Վէլին կախաղան բարձրացուցիք, Ահմէտը այրեցիք, Սուհամմէտը խանձեցիք: Զինգ տարի է, ամէն կողմ մարդկային դիակներէ ազոաներուն խնձոյքներ սարքեցիք, գանոնք երեխներու միտով կերակրեցիք, արծիւները մարդկային միտէն պծագուցիք:

«Ընդդիմադի՞ր է, վար առէք. հրապարակագի՞ր է, գարկէք գլխուն, թո՛ւրք է, դէպի մահ առաջնորդեցէք. յո՞յն է, դրամը ուզեցէք. հա՞յ է, գլուխը կտրեցէք, արա՞բ է, կախաղան հանեցէք, կի՞ն է, տունը դրկեցէք, աւազա՞կ է՝ վեր հրամմեցէք, սրիկա՞յ է, քովս բերէք. հրեա՞յ է, ի՞նչ կ'ուզէ հարցուցէք, մնացածներուն գաւազանը քաշեցէք, դրամներն ալ գրպաննիս դրէք:

«Ահաւասիկ ձեր ծրագիրը, ահաւասիկ ձեր գործը նեղուցները փակելով ներսը ուզածնիդ ըրիք, մեզ կողոպտեցիք. սպանեցիք:

«Կը բացուին մեր խանութները ամէն առտու առանց ծառայի, մեր ուսուցչապետն է դահճապետ Գարա Ալի:

«Նշանատախտակը ձեր գլխուն վրայ կախած սուրերով. գաւազաններով գործի սկսաք. խումբերով մարդիկ լեռները տանելով սուրէ անցուցիք, անմեղ հայրեր ու գաւակներ սպաննեցիք եւ Անատոլի մէջ այրի կիներէ եւ որբերէ զատ մարդ չձգեցիք: Այս արիւնոտ գործերը, այս բարբարոս արարքները, այս քաղաքականութիւնը ի՞նչ օգուտ պիտի ունենար, ի՞նչ պիտի շահէինք, աշխա՞րիդ պիտի գրաւէինք, Եգիպտոսի թագաւո՞ր թէ Զնդկաստանի կայսր պիտի ըլլայինք:

«Վարչապետութիւն, Ընդհ. հրամանատարութիւն, Նախարարութիւն ձեր ծակ աչքերը չէին կշտացուցած. ո՞վ թագաւորութիւն երազողներ, քիչ մնաց որ Դամասկոսի եւ Զալէպի մէջ ձեզի համար աղօթքներ մըմնջել տալով՝ ձեր անուան ալ դրամներ պիտի հանէիք:

«Քաջը դուք էիք, հերոսը դուք էիք, հրամայողը դուք էիք, ամէն բան ձերն էր:

«Զիմա մուկերու պէս առաստաղէ առաստաղ դէպի ո՛ւր, այո՛, ո՛ւր կ'երթան, թաղային սրճարանի անկիւնէն մէկ անգամէն վարչապետութեան, զինտան ցած աթոռներէն նախարարութեան, հրշէջներու շարքէն կուսակալութեան բարձրացող նորելուկներ՝

«Դէպի ո՛ւր կ'երթան»:

«Իրենք մուշտակներու փաթուեցան՝ ժողովուրդին մորթը քերծեցին, իրենք սնուկներու մէջ ոսկիներ դիզեցին, մեր գրպանները թուրթի կտորներ թխմեցին, ժողովուրդը մերկ եւ թշուառ մզկիթներու բակին մէջ պառկած ժամանակ, իրենք ազարակներ գնեցին, ապարանքներ շինել տուին, անօթութենէ մեռնողներուն բերնի պատանը առնելով բոզերուն խնձոյք սարքեցին. ծարաւէն մարողին կուժը գողանալով իրենց աւազանները լեցուցին եւ վրան նաւակնին պտտեցուցին. պանդոկները փլցնելով կախաղաններ պատրաստեցին, օճախներ մարեցին, քաղաքներ քանդեցին. գողցան ծախեցին. ո՛չ ձերուկին խնայեցին եւ ո՛չ մանուկին, ո՛չ թագաւոր ճանչցան, ո՛չ օրէնք, ո՛չ գուք ունեցան եւ ո՛չ խիղճ:

«Ժողովուրդը փողոցներու մէջ կաշիի կտորներ կրծած ժամանակ, իրենք ապարանքներու մէջ պլպուլի ուղեղ կերան, թռչունի կաթով սնանեցան, մայրերնիս անարգեցին, հայրերնիս ծեծեցին, մեր եղունգները հանեցին»:

«Վերջապէս այս կայսրութիւնը ոտքերէն բռնելով գետին զարկին, քուրջի վերածեցին»:

«Այլեւս վստահ թող ըլլան, որ ազգը մեռցուցին, որովհետեւ եթէ մեր երակներուն մէջ կաթիլ մը արիւն, եթէ մեր բազուկներուն վրան քիչիկ մը ուժ մնացած ըլլար, անոնց օձիքէն բռնելով մեր վրէժը կը լուծէինք, մինչդեռ անոնք ազատ համարձակ ձեռքերնին, թեւերնին շարժելով եւ մեր երեսին ալ թքնելով հեռացան...»

«Ապրի՛ք. ձին ալ ձեզի կը վայելէ, զէնքն ալ: Երբ մենք այսպէս թմրած վիճակ մը, իսկ դուք չխայնող երես մը ունիք, օր մը կրկին կու գաք, ձեր փէշերը համբուրել կու տաք, սրտերնիս կը քաշէք, կը հանէք»:

«Մենք ձեզի չկրցանք հարցնել. թէ քառասուն ջա՞րդ կ'ուզէք, թէ քառասուն սուր:

«Ուրեմն վաղը ձեր իրաւունքն է մեզի ըսել. - «Մահերէն մահ նախընտրեցէք»:

«Մեզի արժանի փաշաներ, դէպի ո՛ւր»:

Եվ այսպէս, պատերազմն ավարտված էր, իթիհատականները ճողոպրել էին Գերմանիա, երկրում ստեղծվել էր անիշխանական դրություն: Սկսվել է աստիճանաբար տարածվում էին սովը, տարափոխիկ հիվանդությունները: Անկառավարելի այդ իրադրությունից դուրս գալու առաջին հաջող ու անհաջող փորձեր էր անում **Մեհմեդ Վեհաետդին VI խանը** (սուլթանը), որն օգտվելով իրեն տրված թեոկրատիկ իշխանությունից՝ դիմում էր աշխարհի մուսուլմաններին, հատկապէս Զնդկաստանի իսլամական համայնքներին և օգնություն խնդրում: Նրա խնդրանքն անարձագանք չմնաց:

Այդ մասին ռուս ականավոր արևելագետ Յու. Վ. Կլուչնիկովը գրում է. «Заявление союзников о том, что турки должны быть изгнаны из Константинополя, произвело громадное впечатление в мусульманском мире. **27 ноября 1917 г. один из виднейших мусульманских деятелей Индии Магомет-Али приехал в Лондон для заявления Ллойд Джорджу протеста от имени 70 миллионов мусульман Индии, и на этот протест британское правительство было вынуждено реагировать.** Под его влиянием Ллойд Джордж сделал 5 января 1918 г. важное заявление, нашедшее широкий отклик и послужившее основанием для разрешения вопроса о турецкой столице и о судьбе турецкой империи в последующих переговорах с союзниками и мирном договоре. — «Хотя мы не хотим угрожать сохранению турецкой империи в пределах коренных земель турецкого народа с их столицей в Константинополе, - говорил он, - тем не менее проход между Средиземным и Черным морями должен быть интернационализован и между Срединным и Черным морями должен быть интернационализован и нейтрализован, а Аравия, Армения, Месопотамия, Сирия и Палестина должны получить признание их особых национальных условий».

Помимо протестов мусульманского мира, в меньшей степени на судьбу воп-

роса о Константинополе повлияло и провозглашение принципа национального самоопределения русской революцией. То же влияние сказалось и на точке зрения президента Соединенных Штатов Вильсона, проделавшего быструю и сложную эволюцию от признания чуть ли не полной тождественности военных целей обеих воюющих лагерей к солидаризированию с нотой союзников, требовавшей на пороге 1917 года изгнания турок из Европы, и вплоть до "14 пунктов", опубликованных ровно через 3 дня после заявления Ллойд Джорджа":

Անդրկովկասի, մասնավորապես Հայաստանի նկատմամբ զավթողական իր պահանջներով հանդես եկավ նաև **մահմեդապաշտ** մեր մյուս հարևանը՝ **Շահական Պարսկաստանը**:

Պարսկաստանը, ձևականորեն չեզոք լինելով համաշխարհային պատերազմի ընթացքում, այսուհանդերձ, դարձավ գերմանական գործակալների և ռուսական, բրիտանական ու թուրքական բանակների օրինականացված որսը: Արտաքին գործերի նախարար Ալի Ղուլի խան Մոշավեր ուլ-Մամալեքը այժմ հայտնվեց Փարիզում՝ փոխհատուցման հասնելու գերմանացիների, ռուսների և թուրքերի պատճառած ավերածությունների դիմաց և վերջ դնելու հատուկ առանձնաշնորհումներին, որոնք Պարսկաստանից կորզել էին որոշակի բռնադատող պետություններ¹: Պարսկական տարածքային պահանջները, որոնք 1919 թ. մարտին հուլիսի 2-ին ներկայացվեցին Հաշտության վեհաժողովին, նպատակ էին դնում վերականգնել "L'Empire Persan" (Պարսկական կայսրությունը): Հուլիսի 2-ին առաջարկվում էր նոր Պարսկաստանին վերադարձնել ընդարձակ տարածություններ Կենտրոնական Ասիայից, որոնք ձգվում էին Անու Դարյա (Օքսուզ) գետից մինչև Կասպից ծով, և անդրկովկասյան երբեմնի խանությունները, որոնք ցարական Ռուսաստանին էին անցել 19-րդ դարում, այսինքն՝ Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների գրեթե ամբողջ տարածքը և Հյուսիսային Կովկասի մի մասը: Բայց միայն սրանցով չէին սահմանափակվում պարսկական հավակնությունները, քանզի ներկայացվում էր նաև պահանջ Քրդստանի նկատմամբ, մի երկրի, որը, ըստ հուլիսի 2-ի, հաստատապես բնակեցված է «իրանական» տարրերով և ընդգրկում է, ըստ կցված քարտեզի, հյուսիսային Միջագետքը, և Թուրքահայաստանից՝ մասնավորապես Վան, Բիթլիս, Դիարբեքիր և Խարբեթի վիլայեթները²: Ալի Ղուլի խանի թվարկած աներևակայելի հավակնությունները ծաղրանքով ընդունվեցին Դաշնակից խաղաղարարների կողմից, որոնք, բրիտանական պնդմամբ, պարսկական պատվիրակությանը չտրամադրեցին ո՛չ նրա պահանջած տեղը վեհաժողովի նիստերում և ո՛չ էլ նույնիսկ արժանացրեցին պաշտոնական ունկնդրության³:

¹ "Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне", Москва, 1927, стр. 8-9.

² Անգլիաներ վարչապետ Վուդրո Էդ-Պուլիսին ակնհայտորեն իր «դժվարություն հարուցող» արտաքին գործերի նախարարին ուղարկեց Փարիզ, որպեսզի ազատվի նրանից այն ամիսներին, որոնք ընթացքում բանակցություններ էին տեղի ունենալու, և որոնք հանգեցնելու էին 1919 թ. օգոստոսի անգլո-իրանական պայմանագիրը կնքելուն:

³ Claims of Persia before the Conference of the Preliminaries of Peace at Paris, March, 1919, Paris, 1919. Տե՛ս նաև "Christian Science Monitor", 19 ապրիլի, 1919, էջ 1; Miller, Documents, vol. XVII, p. 452-453.

⁴ Արտաքին գործերի նախարարության և Կայսերական պատվիրակության արձանագրությունները ցույց են տալիս, որ Լոնդոնը որոշել էր մերժել Պարսկաստանին Հաշտության վեհաժողովում տեղ հատկացնելուն և հնարավոր ամեն ինչ անել՝ չեզոքացնելու Մոշավեր ուլ-Մամալեքին: Միացյալ Նահանգների պատվիրակությունը սկզբնապես հակված էր տեղ հատկացնել Պարսկաստանին և Հաշտության վեհաժողովի ընթացքում այս վիճելի հարցը բարձրացվեց մի քանի ուրիշ պատվիրակությունների կողմից, բայց առանց դրական արդյունքի: Սե՛ս Բրիտանիայի պարսկական քաղաքականության վերաբերյալ կարևոր գրությունները տե՛ս Britain, FO 371, File 150/34, 1919, FO 608, File 375/17 և 375/3/5, և Cab 27/38, no. 2772: Տե՛ս նաև Paris Peace Conference, vol. I, p. 245-263, 310, և vol. V, p. 153, 498; Miller, Documents, vol. XVII, p. 40-42; Dillon, նշվ. աշխ., էջ. 444-445:

Ամերիկյան և եվրոպական մի քանի անսագրեր խիստ մեկնաբանություններ տվեցին պարսկական հուլիսի 2-ի, մինչդեռ Երևանում կիսապաշտոնական «Յառաջ» օրաթերթը ժխտում էր Ռուսահայաստանի կամ Թուրքահայաստանի նկատմամբ պարսիկների իրավունքը: Այսքանով էլ հարցը սպառվեց: Ալի Ղուլի Մոշավեր ուլ-Մամալեքը շուտով դեսպան նշանակվեց Կոստանդնուպոլիսում, իսկ հետագայում ճանապարհվեց Մոսկվա՝ մասնակցելու այն բանակցություններին, որոնք հանգեցրին 1921 թ. Խորհրդային Ռուսաստանի և Իրանի հանրապետության միջև: Պարսկական կառավարությունը լռելյայն հրաժարվեց 1919 թ. մարտ ամսի հուլիսի 2-ից, և այդ փաստաթուղթը ոչ մի շոշափելի անբարենպաստ հետևանք չթողեց հայ-պարսկական հարաբերությունների վրա⁴: Պահանջները նույնիսկ չէին հիշատակվում Երևանի և Թեհրանի միջև տեղի ունեցած պաշտոնական գրագրություններում: Ամբողջ 1919 թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունը Պարսկաստանին համարում էր իր միակ բարյացակամ հարևանը⁵:

Այսպիսով, բարդ իրադրության պայմաններում անհրաժեշտություն զգացվեց կազմել նոր կառավարություն, որը կկարողանար զինադադարի բանակցություններ վարել Դաշնակիցների հետ: Երեք ամիս առաջ սուլթանի գահին տիրացած **Մեհմեդ Վեհաբտդին VI-ի** հանձնարարությամբ այդ կառավարությունը կազմեց **«Ազատություն և համաձայնություն» («Հյուրիյեթ վե Իթիլաֆ»)** կուսակցության նախագահ **Ահմեդ Իզզեթ-փաշան**, որը անգլիական կողմնորոշում ուներ: Նա գերեվարված անգլիացի զենեռալ **Թունսիսենդի** միջնորդությամբ կազմակերպեց զինադադարի բանակցությունների արարողությունը:

1918 թ. հոկտեմբերի 25-ին **Էգեյան ծովի Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում** տեղի ունեցան հաշտության բանակցությունները: Թուրքիայի կառավարական պատվիրակության կազմում էին արտաքին գործերի նախարարության ծովային գործերի ղեկավար **Ռաուֆ-բեյը**, արտգործնախարարի խորհրդական **Ռեշիդ Հիքմեթը** և գլխավոր շտաբում աշխատող գնդապետ **Սասդուլլան**: Դաշնակիցների կողմից բանակցությունները վարում էր անգլիական ադմիրալ **Յոֆ Զալթրոփը**:

Բանակցությունները վարվում էին Մուդրոսի ծովածոցում խարիսխ օգած անգլիական **«Ազամեմնոն»** ռազմանավի տախտակամածի վրա. **դրանք տևեցին հինգ օր**: 1918 թվականի հոկտեմբերի 30-ին ստորագրվեց **զինադադարի**, ավելի ստույգ կլինի ասել՝ **երիտթուրքերի կապիտուլյացիայի ակտը**, որով կարծես թե ավարտվում էր Առաջին աշխարհամարտը: Այդ փաստաթուղթը համաշխարհային պատմու-

¹ Պարսիկ հայրենասերին խորամանկորեն պաշտոնի էին ուղարկել Կոստանդնուպոլիս, որպեսզի կամենա իր վերադարձը Պարսկաստան, որտեղ, ենթադրվում էր, նա տեսնություն կպատճառեր անգլիաներ տարրերին: Տե՛ս British Documents, vol. IV, 1952, p. 1234; Britain, FO 608/98, 375/17/14200: Բրիտանական ռազմավարությունը, ինչպես ցույց է տալիս գրագրությունը լորդ Քերզոմի և արտաքին գործերի նախարար Բալֆորի միջև, Փարիզում պարսկական հարցն անորոշ վիճակում պետք է պահեր այնքան ժամանակ, մինչև որ ավարտվեր անգլո-իրանական պայմանագրի կնքումը, որից հետո Մոշավեր ուլ-Մամալեքը և մյուսները կկանգնեին կատարված փաստի առջև: Պարսիկ նախարարին Կոստանդնուպոլիս ուղարկելու լուրն առնելով, Բալֆորը չարախնդաց. «Որքան ավելի շուտ գնա, այնքան ավելի լավ»: Տե՛ս File 375/17, հատկապես № 8172 և 14243.

² Վարչապետ Վուդրո Էդ-Պուլիսի խառնակ դատապարտեց Ալի Ղուլի խանի «անկախ գործողությունները» և բացատրեց բրիտանական պաշտոնատար անձանց, որ պարսկական պատվիրակության՝ Փարիզում հայտնած տեսակետները չեն արտացոլում Թեհրանի կառավարության դիրքորոշումը: Տե՛ս Britain, FO 608/101, File 375/3/5, հատկապես № 12175:

³ Բրիտանական չափերը Պարսկաստանում անգլո-իրանական պայմանագրով պաշտպանվելուց հետո արտաքին գործերի նոր նախարար, արքայազն Ֆրոուդ Միդլե Լուսթրա Էդ-Պուլիսի իրավիճակը Լոնդոն՝ հետագա բանակցությունների համար: Այս շարադրանքը տե՛ս **Ռիչարդ Գ. Հովհաննիսյան**, նշված աշխատությունը, էջ 308-310:

թյան էջեր մտավ **Մուղրոսի** զինադադարի դաշնագիր անվամբ, որը վաղուց էր մշակվել Լոնդոնում, խմբագրվել Փարիզում և Զոնոնում: Այստեղ կատարվեցին խմբագրական բնույթի մասնակի վերահատումներ¹:

Նախքան այս հիմնական փաստաթուղթը, Մեծ Բրիտանիան գաղտնի պայմանավորվածություններ ուներ Թուրքիայի հետ՝ Մերծավոր Արևելքի բաժանման, այնտեղ իր մեծ կտորներն ստանալու վերաբերյալ: Իհարկե, գաղտնագրված նման «թղթերը» անհայտ չէին մնում ֆրանսիացիների սրտես աչքերից, և առաջին իսկ օրերից, Մերծավոր Արևելքը բաժանելու պատճառով, սրվում էին հակասությունները Դաշնակիցների ճամբարում: **Լյուդ Ջորջը** հիշում է. «**Ձինադադարի պրոցեսը թուրքերի հետ մեկ անգամ ևս սրեցին հակասությունները իմ և Կլեմանտոնի միջև**»²: Անգլիայի բռնած դիրքից չափազանց դժգոհ էին Իտալիան և վերջում միայն պատերազմի մեջ մտած ԱՄՆ-ը: Կարծես պայթյուն էր սպասվում Անտանտի ճամբարում և այդպես էլ կլիներ, եթե չլիներ վտանգը. միասնաբար հանդես գալ կոմունիստական Ռուսաստանի դեմ: Շուտափույթ արշավի կազմակերպումը ստիպում էր հետաձգել Մերծավոր Արևելքը կտոր-կտոր անելու համար մեծ տերությունների միջև թեժացող հակամարտությունները:

Մուղրոսի զինադադարն ազդարարող վավերաթուղթը բաղկացած էր **25 հոդվածից**: Այն ավելի քան վերաբերում էր Արևմտյան տերությունների՝ Սովետական Ռուսաստանի դեմ կազմակերպվելիք զինվորական ինտերվենցիային, քան Թուրքիայի ու Բուլղարիայի տարածքների վերաբաժանմանը:

Հոդված առաջինը նախատեսում էր. Դարդանելի և Բոսֆորի նեղուցներն իրենց դռները բացում են Դաշնակիցների առջև, ասել է թե՛ Սև և Միջերկրական ծովերը օկուպացնում են մեծ տերությունները և այնտեղ մտնող ու դուրս եկող ռազմական ուժերին ուղղում են Ռուսաստանի նորաստեղծ տերության դեմ:

Երկրորդ և երրորդ հոդվածները Թուրքիային պարտադրում էին ցույց տալ այն կետերը, որտեղ տեղադրված են ականները, այդ թվում՝ և՛ ծովում, և՛ ցամաքում:

Չորրորդ հոդվածը վերաբերում էր հայ ռազմագերիների վերադարձին:

Հինգերորդ հոդվածը թուրքերին պարտադրում էր բանակի անհապաղ զորացրումը:

Հոդված վեցերորդը Դաշնակիցներին իրավունք էր վերապահում գրավել թուրքական բոլոր ռազմանավերը՝ դրանք տեղակայված լինեին օսմանյան ջրուղիներում, թե այլ երկրների ծովածոցերում:

Հոդված յոթերորդով Անտանտի տերություններն իրավունք էին ստանում անարգել գրավել Թուրքիային պատկանող ցանկացած ռազմաստրատեգիական կետ, եթե այնտեղից իրենց անվտանգությանը որևէ սպառնալիք էր սպասվում:

Ութերորդ և իններորդ հոդվածներով Դաշնակիցներն իրավունք էին ձեռք բերում օգտագործել թուրքական բոլոր նավահանգիստները: Միաժամանակ արգելվում էր թշնամական տերությունների կողմից դրանց օգտագործումը:

Տասներորդ և տասնմեկերորդ հոդվածները Դաշնակիցներին արտոնում էին տիրանալ **Տավրոսի բոլոր թունելներին**, ինչպես նաև գրավել ու հսկողության տակ վերցնել **ռադիոհաղորդիչ** սարքերը՝ հողի վերևով թե ընդերքով գնացող բոլոր հեռագրագծերը (հոդված տասներկուերորդ):

Տասներեքերորդ հոդվածով սուլթանական տերությանն արգելվում էր ոչնչացնել ծովային ու ցամաքային ռազմական-տնտեսական գույքը:

Տասչորսերորդ հոդվածը թուրքերին պարտադրում էր վառելիքով, այսինքն՝ նավթով, մագուրով, ածուխով ապահովել Դաշնակիցների և՛ ռազմական, և՛ առևտրական նավատորմին:

Տասնհինգերորդ հոդվածով որոշվում էր Դաշնակիցների զինվորականների հսկողության տակ դնել Անդրկովկասում եղած բոլոր այն երկաթուղիները, որոնք պատերազմի ժամանակ բռնազավթել էին թուրքերը: Միաժամանակ արձանագրվում էր, որ եթե Անտանտի երկրները ցանկանան գրավել **Բաթումը և Բաքուն**, ապա Թուրքիան ոչ մի առարկություն չպետք է անի:

Հոդված տասնվեցերորդով Թուրքիայից պահանջվում էր Դաշնակիցների զորահրամանատարությանը հանձնել **Ասիրի, Եմենի, Սիրիայի և Միջագետքի բոլոր կայազորները**: Թուրքական զորքերը պետք է **անմիջապես դուրս բերվեին Կիլիկիայից**:

Հոդված տասնյոթերորդ. Տրիպոլիտանիայում և Կիրենիկայում «հավաքված» թուրքական բոլոր սպաներն անմիջապես պետք է անձնատուր լինեին իտալական կայազորներին:

Տասնութերորդ հոդվածով պահանջվում էր Դաշնակիցներին հանձնել Տրիպոլիտանիայի և Կիրենիկայի բոլոր նավահանգիստները:

Հոդված տասնիններորդը Թուրքիայից պահանջում էր մեկ ամսվա ընթացքում իր երկրից դուրս հանել (եվակուացնել) գերմանական և ավստրիական սպայակույտերը, խզել իր կապերը կենտրոնական տերությունների հետ:

Հոդված քսաներորդ. Դաշնակիցներին էին հանձնվում թուրքական բանակին պատկանող ամբողջ զենքն ու զինամթերքը:

Հոդված քսանմեկերորդ. Դաշնակիցների ներկայացուցիչները, իբրև հսկիչներ, պետք է նշանակվեին Թուրքիայի պարենային մինիստրությունում:

Հոդված քսաներկուերորդ. Թուրքական ռազմագերիները կմնային Դաշնակիցների տրամադրության տակ: Կուսումնասիրվեին թուրքական քաղաքացիական գերիներին և զինվորական ծառայության տարիքն անցած քաղաքացիներին թուրքերին հանձնելու խնդիրները:

Հոդված քսաներեքերորդ. Թուրքիան պարտավոր էր դադարեցնել բոլոր տեսակի հարաբերությունները կենտրոնական տերությունների հետ:

Հոդված քսանչորսերորդ. Հայկական վիլայեթներում անկարգություն ծագելու դեպքում Դաշնակիցներն իրավունք ունեին դրանք գրավել մասերով կամ ամբողջությամբ:

Հոդված քսանհինգերորդ. Դաշնակիցների և Թուրքիայի միջև պատերազմական գործողությունները դադարեցվում էին 1918 թվականի հոկտեմբերի 31-ին, հինգշաբթի օրը, տեղական ժամանակով **կեսօրին**¹:

Այսպիսով, 1918 թ. հոկտեմբերի 31-ին **ստորագրված Մուղրոսի զինադադարի** հնչել անվանումը ստացած վավերաթուղթն իր բազմակողմանիությամբ և կարևորությամբ ոչ միայն զինադադարի, այլև պայմանագրի ուժ և հեղինակություն ստացավ: Այդ փաստաթղթի արժեքը հայ ժողովրդի համար այն էր, որ դեռևս երկրի պատվիրակություններն իրենց պահանջները չներկայացրած, Դաշնակիցները լուծումներ էին առաջարկում **Հայկական հարցի, Մեծ ու Փոքր Հայաստան պետությունների ստեղծման** վերաբերյալ:

Ելնելով մեր ժողովրդի համար ունեցած **կարևորությունից՝ կրկնենք**.
1. Ձինադադարի որոշման 24-րդ հոդվածը նախատեսում էր, որ եթե Հայկական

¹ *А. М. Шамсутдинов*, Национально-освободительная борьба в Турции (1918-1923 гг.), Москва, 1966, стр. 14-15.

² *Д. Ллойд Джордж*, Военные мемуары, том VI, Москва, 1938, стр. 165.

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Երևան, 1972, էջ 537-539:

վիլայեթներից որևէ մեկում «անկարգություններ ծագեին», Դաշնակիցներն իրենց իրավունք են վերապահում **դրանց վերագրավումը**: Սա լուրջ նախազգուշացում էր ցեղասպան թուրքերին, որպեսզի վերջիններս չշարունակեն իրենց հայասպան քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում:

2. Զինադադարի որոշման **տասը և տասներկուերորդ** հոդվածներն ապառազականացնում էին Տավրոսի, այսինքն՝ Կիլիկիայի ողջ տարածքը: Դաշնակիցներն իրավունք էին ստանում տիրանալու **Կիլիկիայի բոլոր թունելներին** (երկրախորշերին), ինչպես նաև իրենց հսկողության տակ վերցնել **ռադիոհաղորդիչ սարքերը**: Նման որոշումը ենթադրում էր, որ Անգլիան և հատկապես Ֆրանսիան նախապատրաստվում էին Կիլիկիան (և՛ լեռնային, և՛ դաշտային) պոկել թուրքական դաժան շղթայից: Թե հետագայում ո՞ւմ բաժին կհասներ այն, կորոշեին Դաշնակիցներն **ապագայում՝ համակամ**:

3. **Չողված չորրորդով Դաշնակիցները Թուրքիայից պահանջում էին Կոստանդնուպոլսում հավաքել բոլոր ռազմագերիներին և առանց որևէ նախապայմանի նրանց հանձնել Անտանտի ղեկավարությանը: Քանի որ գերեվարվածների գերակշիռ մասը հայեր էին, ուստի այդ մեթոդով մեծ քանակությամբ հայեր փրկվեցին օսմանյան յաթաղանից:**

4. **Տասներկուերորդ** հոդվածի համաձայն՝ թուրքերը պարտավորվում էին դուրս գալ Անդրկովկասում իրենց բռնազավթած երկրամասերից և դրանք հանձնել Դաշնակիցներին: Այդ նշանակում էր, որ չեղյալ էին համարվում **Բրեստի և Բաթումի** քաղաքական պայմանագրերը, և լայն դարպաս էր բացվում հայանպաստ նոր դաշնագրերի ստորագրման համար:

5. **Չեղյալ հայտարարելով վերոհիշյալ պայմանագրերը, Կարաբեքիրի Թուրքիան Հայաստանի նորածին հանրապետությանն էր վերադարձնում Կարսի մարզը, Իգդիրը ու Արդահանը, որոնք մի քանի ամիս առաջ էին բռնակցվել արդեն մահվան մահիժում գամված օսմանյան երբեմնի կայսրությանը:**

6. Մուղրոսի քսանհինգ կետերը ենթադրում էին **սուլթանի գահընկեցությունն ու արտաքսումը Ստամբուլից**: Չգալով այդ «վտանգը», Սեմեդ VI Վեհաբտդինը, կորցնելով ինքնասիրությունը, թախանձազին բովանդակությամբ նամակով դիմեց Անգլիայի **Քևորդ V թագավորին**, նրանից խնդրելով, որ ինքը բոլոր տեսակի զիջումներին համաձայն է, միայն թե մնա սուլթանական գահի վրա: Այդ մասին մնացել է ներքոհիշյալ խոստովանությունը. «Мы, - заявил на заседании палаты депутатов Ллойд Джордж, - получили сообщение, что турецкий султан хотел бы обеспечить только два пункта в любом соглашении, которое будет ему предложено: 1) он сохраняет трон; 2) Турция остается независимой страной»¹:

Մուղրոսի զինադադարի փաստաթուղթը, որը փաստորեն նախնական պայմանագրի ուժ ձեռք բերեց, մշակվել էր Արևմուտքի տերությունների այնպիսի ղեկավարների «հմուտ» ձեռքերով, որոնք արդեն համաշխարհային ճանաչում ունեին: Դրանք էին՝ **Վուդրո Վիլսոնը** (ԱՄՆ-ի նախագահ), **Դեվիդ Լլոյդ Ջորջը** (Մեծ Բրիտանիայի վարչապետ), **Ռևինստոն Չերչիլը** (այդ օրերին Անգլիայի ռազմական մինիստր), **ժորժ Կլեմանսոն** (Ֆրանսիայի վարչապետ): Որոշ հարցերի մշակման պրոցեսին մասնակից էին դարձրել Հունաստանի վարչապետ **Էլևթերիոս Վենիզելոսին**, ենթադրելով, որ այդ օրերի հունական մարտունակ բանակը կօգտագործեն Թուրքիային մեկընդմիջտ ծնկի բերելու գործում:

1918 թ. նոյեմբերի 13-ին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Հունաստանի, քիչ

անց նաև ԱՄՆ-ի ռազմական եսկադրաները մտան **Ոսկե եղջյուրի** ծովածոցը և խառնիսխ գցեցին սուլթանական **Դումաբախչե** պալատի դեմ դիմաց: Եսկադրայի գլխավոր խնդիրն էր հսկողություն սահմանել նեղուցների վրա և այնպիսի դիրք գրավել, որ ջրուղիների դռները փակ մնան ռուսական և՛ առևտրական, և՛ ռազմական նավերի առջև: Հեղափոխական վարակից երկնչած բուրժուական Արևմուտքը որոշել էր թունք կանգնել սոցիալիստական գաղափարների տարածման դեմ: Նրանք վախենում էին Արաբական Արևելքում տարածվելիք ազատագրական գաղափարներից, քանզի այնտեղ պարարտ հող կար դրանց համար:

Սկսվեց դաժան պայքար օսմանյան Թուրքիայի տարածքի բաժանման, վերաբաժանման, իրար ձեռքից համեղ պատառներ խլելու ձգտումով: Երեկվա **Անտանտի**, այսինքն՝ **«սրտակից բարեկամների»** միջև էր գնում մրցումը, հակամարտությունների թեժացումն այն աստիճանի էր, որ մի պահ թվում էր, թե զինաբախումներն անխուսափելի են: Կրկին ջութակի առաջին լարերը Անգլիայի, Ֆրանսիայի և քիչ հետո նաև ԱՄՆ-ի ձեռքումն էին: Մյուս տերությունները կարծես թե երկրորդական շարքումն էին հայտնվում: Այդուհանդերձ, որոշվեց միջազգային ընդլայնված մի համաժողով գումարել, որը նախ կօրինականացներ գրաված տարածքների նոր տերերի իրավունքները, ապա վերջ կդնեն կուլիսային, գաղտնագրված որոշումներին, համեմայնդեպս՝ կբացահայտեր դրանք:

Որոշվեց Մուղրոսի զինադադարի հոդվածները և ընդհանրապես Առաջին աշխարհամարտի ավարտական փուլին վերաբերող բազում ու կնճռոտ խնդիրները քննել միջազգային, բազմամարդ մի նոր համաժողովում: ԱՄՆ-ի պրեզիդենտ **Վուդրո Վիլսոնի** առաջարկով, Անտանտի տերությունների ղեկավարները համաձայնեցին այդ կոնֆերանսը հրավիրել Փարիզում՝ 1918 թվականի դեկտեմբերի 18-ին: Սակայն հետո որոշ ժամանակով այն հետաձգվեց:


Փարիզի խաղաղության կոնֆերանսը հրավիրվեց 1919 թ. հունվարի 18-ին: Անգլիական պատվիրակության քարտուղար **Հարոլդ Լիկոլտոնի** այն հարցին, թե ինչո՞ւ հետաձգվեց կոնֆերանսը, մեծ տերությունների ղեկավարները միաբերան պատասխանեցին, թե «Այն օրերին Ռուսաստանում, ինչպես դուք հիշում եք, տիրում էր անկարգություն: Նույնն էր նաև Գերմանիայում: Մենք կարծում ենք, որ եթե մի փոքր սպասեմք, շատ բաներ իրենք իրենց կկարգավորվեն»:

1919 թ. հունվարի 18-ին Փարիզում բացվեց **խաղաղության կոնֆերանսը**, որն ընդհատումներով շարունակվեց մինչև 1920 թվականի հունվարի 21-ը: Մարդաշատ համաժողով էր հրավիրվել Առաջին աշխարհամարտում պարտված պետությունների հետ հաշտության դաշնագրեր մշակելու և վավերացնելու նպատակով: Բայց միայն այդ չէր: Փարիզի խաղաղության կոնֆերանսը վերաճեց էր աշխարհի քարտեզը, հաշվի չառնելով փոքր ժողովուրդների ու տերությունների ազգային նախասիրությունները: Գաղտնապահված սկզբունքն էր՝ **հզորների առջև միշտ էլ թուլերն են մեղավոր**:

¹ Д. Ллойд Джордж, Военные мемуары, том VI, стр. 140-141.

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՓԱՐԻՋԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ

Մասշտաբ 1:2 000 000



- Պետական սահմանները 1914 թ.
- - - Ռուսական կայսրության նահանգների, մարզերի, օկրուգների և Օսմանյան կայսրության վիլայեթների սահմաններ
- - - Ռուսական կայսրության գավառների, շրջանների և Օսմանյան կայսրության սանջակների սահմաններ
- Հայաստանի Հանրապետության հյուսիսային և արևելյան սահմանները համաձայն Հայաստանի կառավարության 1919 թ. Փարիզի խաղաղության կոնֆերանս ներկայացված սահմանների նախագծի

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԹՆՈԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Երևանի նահանգ	Եզդիներ - 6032
հայեր - 669 871	ռուսներ, հույներ և այլք - 15 596
թաթարներ - 365 841	Կարսի շրջան
թուրքեր - 8000	հայեր - 80 752
բրդեր - 36 508	թաթարներ, թուրքեր - 51 659
գղիներ - 12 624	բրդեր - 10 911
այլք - 21 854	եզդիներ - 5123
Կարսի մարզ	ռուսներ - 1598
Երզրահանի շրջան	հույներ և այլք - 4041
հայեր - 470	գնչուներ - 23 504
թաթարներ, թուրքեր - 15 550	Օլթիի շրջան
բրդեր - 8100	հայեր - 4953
գղիներ - 4000	թուրքեր - 390
Կարսի մարզ	բրդեր - 5179
հայեր - 34 721	վրացիներ - 4095
թաթարներ, թուրքեր - 5782	եզդիներ - 21 779
բրդեր - 20 677	այլք - 206

Թիֆլիսի նահանգ	հայեր - 61 000
Ախալքալաքի գավառ	թաթարներ - 9000
հայեր - 82 275	հույներ, ռուսներ - 1929
թաթարներ - 8308	Շուշիի գավառ
բրդեր - 904	հայեր - 98 000
վրացիներ - 7428	թաթարներ - 30 000
ռուսներ և հույներ - 7759	Հայերի թիվը Կովկասի փոխարքայության մնացած տարածքներում
Բորչալուի գավառ	Սևծովյան նահանգ
հայեր - 64 000	հայեր - 18 050
թաթարներ - 9600	Սուխումի օկրուգ
վրացիներ - 1150	հայեր - 20 743
հույներ - 11 000	Քուրայիսի նահանգ
ռուսներ - 9500	հայեր - 4605
Ելիսավեպոլի նահանգ	Թիֆլիսի նահանգի մնացած տարածքում
Ելիսավեպոլի գավառ	հայեր - 264 000
հայեր - 52 000	Ելիսավեպոլի նահանգի մնացած տարածքում
թաթարներ - 16 500	հայեր - 64 000
ռուսներ - 8200	Բարվի նահանգ
Կարյազինի գավառ	հայեր - 120 087
հայեր - 22 000	Ղազարանի մարզ
Չանգեզուրի գավառ	հայեր - 4752
հայեր - 100 000	
թաթարներ - 50 000	
Ղազախի գավառ	

Հյուսիսային Կովկաս	հայեր - 55 001
Հայերի թիվը Անդրկովկասում	1 785 000
Անրոզ Կովկասում	1 863 000
Հայաստանի Հանրապետության բնակչությունը	59,87 %
հայեր - 1 293 000	
թաթարներ, թուրքեր, դարափափախներ, թուրքմեններ և այլք - 588 000	27,22 %

բրդեր - 82 000	3,79 %	գնչուներ - 24 000	1,11 %
եզդիներ - 50 000	2,31 %	Ընդամենը 2 160 000	
ռուսներ, հույներ, վրացիներ - 123 000	5,70 %		
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ			
բրիտանացիներ - 65,6 %	Ծնբ. Բնակչության կազմը տրված է համաձայն Կովկասի բնակչության պաշտոնական տվյալների ("Кавказский календарь", 1917 г.):		
մասնդակացներ - 31 %			
եզդիներ - 2,3 %			
գնչուներ - 1,11 %			

Գլուխ հինգերորդ

**Նայկական զույգ պարվիրակությունների
դեգերումներն ու ծավալած գործունեությունն
Արևմտյան Եվրոպայում:
Դիվանագիտական պայքարն անկախ, մեծ ու
միասնական Նայաստան պետության
վերընձյուղման բաղձանքներով**

*«Մեծ Հայաստանը պետք է կազմավորված լինի հետևյալ
շրջաններից.*

*1. Վանի, Բիթլիսի (Բաղեշ), Դիարբեքրի (Տիգրանակերտ),
Մեքապոլիսի (Սվազ), Էրզրումի (Կարին), Տրապիզոնի վիլայեթներից, դուրս բողնելով Տիգրիսից հարավ ընկած շրջանները:*

2. Կիլիկիայի չորս շրջաններից, այսինքն՝ Մարաշը, Սիսը, Չեքելի-Բերեքեքը, Ադանան, ներառած Ալեքսանդրեթի սանջակը:

3. Կովկասի Հայկական Հանրապետության ամբողջ տարածքը, այսինքն՝ Երևանի գավառն ամբողջությամբ, Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Գանչակի նահանգի արևմտյան մասը, Կարսի մարզը, բացի Արդահանից հյուսիս ընկած շրջանները»:

**ԱՎԵՏԻՍ ԱՅԱՐՈՆՅԱՆ, ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ.
12 փետրվարի 1919 թ.: Պահանջը ներկայացված է
Փարիզի խաղաղության կոնֆերանսին:**

1918 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, հերթականությամբ զենքերը վար դնելով, իրենց պարտված ճանաչեցին և զինադադարի ստորագուցիչ պայմանագրեր ստորագրեցին գերմանական Քառյակն ընդգրկող բոլոր տերությունները: Պատերազմական տակնուվրայությունը միանգամից դադարեցվեց: Բոլոր ռազմաճակատներում լռեցին ավերածություններ պատճառող

թնդանոթների ծայրերը: Տիրեց համեմատական «խաղաղության» մթնոլորտ, որին չորս տարի սրտատրոփ սպասում էր **«խելակորույս հողագունդը»:**

Աշխարհն այժմ ջրբաժանվեց հաղթող և պարտված պետությունների խմբավորումների: Սկսեցին նախապատրաստական լուրջ աշխատանք ծավալել Դաշնակից տերությունները, մտապահած լինելով իրողության վերածել ինչքան հնարավոր է նվաճած երկրներից շատ տարածքներ բռնազավթելը, շատ ռազմատուգանքներ ստանալը: **Հրացանին փոխարինելու եկան գրիչն ու քանոնը, գեներալին հաջորդեց անուսադիր դիվանագետը, մարշալին՝ արտգործնախարարը:**

Այսպիսով, ծայր առան դիվանագիտական մրցամարտեր, որոնցից իրենց ակնկալիքներն ունեին և՛ հաղթող, և՛ պարտված պետություններից յուրաքանչյուրը յուրովի: Այդ պայքարի հորձանուտի մեջ մտնելով՝ իր ակնկալիքներն ուներ նաև որդեկորույս և հայրենակորույս հայ ժողովրդի **էլիտան**, որը համակված էր **Մեծ Հայաստան վերընծյուղելու խանդավառ հույսերով:**

Քանի որ բախտորոշ այդ որոշումները կայացվում էին միջազգային դիվանագիտական հրապարակային, մեծիմասամբ ընդհատակյա գաղտնուղիներում, ուստի դրանց մասնակից դառնալու արդարացի իրավունքով, իրենց բաժինը ստանալու ձգտումով ուղքի կանգնեցին հայ ժողովրդի բոլոր հատվածները թե՛ Հայրենիքում և թե՛ հատկապես աշխարհատարած Սփյուռքի գրեթե բոլոր գաղթավայրերում:

Նախապատրաստական աշխատանքի այս պրոցեսում, առավել ևս հետագա դիվանագիտական մրցամարտի ժամանակ լուրջ դեր կատարեց **Գևորգ Ե Տիփսիսեցի Սուրենյանց** (1847-1930) Ամենայն Հայոց կաթողիկոսը: Վեհափառ հայրապետը ծանր ժամանակներում բազմեց Մայր աթոռի բազմոցի վրա: Նրա գահակալության տարիներին էջմիածնի պատերի տակ խռնված էին անընդհատ եկող հայ գաղթականները, որոնք հաց, բժիշկ ու դեղորայք էին աղերսում միաբաններից:

Նա հասցնում էր օգնության ձեռք պարզել ոչ միայն իր աչքերի մեջ նայող, օգնություն աղերսող, թուրքական սրից փրկված անտուն-անօթևան խլեակներին, այլև պայքար էր կազմակերպում Կարաբեքիրի անասնական հորդանների դեմ:

Սարդարապատի բախտորոշ շաբաթում, կյանքին վտանգ սպառնացող **Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի** մարտերի նախօրեին **Նա չլքեց էջմիածինը:** Բայց ոչ միայն այդ: Ճակատամարտի սկսման վաղ առավոտյան մթնշաղից առաջ, իբրև **ազգափրկիչ Քրիստոս**, Վեհափառը հառնել էր Մայր աթոռի կենտրոնում, և հնչում էին բոլոր եկեղեցիների զանգերը: Նա ի գեմ, ի մարտ էր կոչում իր հովվալուծներին և կարծես թե ամեն մի զինվորի կողքին կանգնած՝ դիմագրավում էր թուրքական հորդաններին: Հաղթեց և՛ Վեհափառը, և՛ նրա հովված հայ ժողովուրդը: **Բայց այդ հաղթանակը սովորական չէր, այլ իր տեսակի մեջ եզակի, մայիսյան հաղթանակ էր, Վարդան Մամիկոնյանի հաղթանակին համահավասար և գուցե մի քիչ էլ նրանից առավել բախտորոշ:**

Նա իր ժողովրդի միաբան, համազգային կռիվներով, Հայաստանն ու հայը փրկեց միանգամայն կորստից, դրա համար էլ **հետագայում դասվեց սրբերի դասին:**

1918 թվականի մայիսյան հաղթանակներից, հատկապես Հայաստանի առաջին հանրապետության հռչակումից հետո կարծես թե ամեն ինչը մնում էր ետևում: Այժմ անհրաժեշտ էր պայքարի գնալ Արևմտյան եվրոպա, որտեղ վճռվելու էր պետականագրված փոքր երկրների ճակատագիրը: Այդ բանակցությունները վարող հմուտ, լեզվիմաց, հասարակության կողմից ընդունելի դիվանագետների անհրաժեշտություն էր զգացվում: Նորից գործի անցավ Վեհափառ հայրապետը:

Գևորգ V Սուրենյանցի հրամանով կազմվեց Փարիզ մեկնող **Ազգային պատվիրակություն:** Արևմտահայերի շահերը պաշտպանելու հանձնարարություն ստացած այդ պատվիրակության ղեկավար հաստատվեց **Պողոս Նուրար փաշան** (4. Պոլիս,

1851 - Փարիզ, 1930): Նրան հանձնարարվեց ձևավորել իր գլխավորած պատվիրակության կազմը:

Նախ նախագահի մասին. **Պողոս Նուրար-Նուրարյան փաշան** հայ հասարակական կյանքում արդեն հանրահայտ, ճանաչված քաղաքական գործիչ էր:

Նա եզրափակական արքունիքում վարել էր մի շարք բարձր պաշտոններ: Հասնելով տնտեսական հզորության, Պողոս Նուրարը 1906 թ. հիմնեց **«Հայկական բարեգործական ընդհանուր միությունը»**, որը գործում է մինչև օրս: Միության խողովակներով նախագահն օգնության ձեռք էր մեկնում հայ գաղթականներին, ոչնչացումից կամ իսլամացումից փրկում էր հազարավոր հայ որբերի: Նա իր դրամական միջոցներով ամենուրեք հիմնում էր հիվանդանոցներ, դպրոցներ, նույնիսկ **մատենադարան:** Նուրար փաշայի փողերով երևանի արվարձաններից մեկում հետագայում կառուցվեց գեղատեսիլ մի թաղամաս, որը մեկենասի պատվին **Նուրարաշեն պատվանունը ստացավ:**

1918 թվականի նոյեմբերի 30-ին կազմավորված հայ Ազգային պատվիրակության մյուս անդամը **Գարրիել Գրիգորի Նորատունկյանն** էր (4. Պոլիս, 1852 - Փարիզ, 1936): Նա ժամանակի կրթված մարդկանցից էր: Ուսումնառությունը ստացել էր նախ ծննդավայրում, ապա **Սորբոնի** հռչակավոր համալսարանում, որտեղ տիրապետել էր գիտության բազմաթիվ ճյուղերի, հատկապես **ֆրանսերեն, անգլերեն և թուրքերեն** լեզուներին:

Գ. Նորատունկյանը Թուրքիայում վարել էր մի շարք բարձր պաշտոններ: Երիտթուրքերի հեղաշրջումից հետո նա նշանակվել էր **առևտրի, ապա հանրօգուտ աշխատանքների մինիստր**, 1912-1913 թվականներին՝ երկրի արտաքին գործերի նախարարն էր: 1922-1923 թվականներին Նորատունկյանը Պողոս Նուրարից հետո գլխավորում էր **Լոզանի կոնֆերանսի հայկական պատվիրակությունը:** Նրա մեծ ծառայությունն էր **«Օսմանյան կայսրության միջազգային վավերագրերի ժողովածուի»** հրատարակումը, **չորս հատորով, ֆրանսերենով, 1897-1903 թվականներին:**

Ազգային պատվիրակությանն առանձնակի փայլ ու շքեղություն էր հաղորդում **Հովհաննես խան Մասեհյանի** (Թեհրան, 1864 - Խարբին, 1931) մասնակցությունը: Լեզուներին, հատկապես **անգլերենին և ֆրանսերենին** կատարյալ տիրապետումը Մասեհյանին հնարավորություն էր ընձեռել ոչ միայն թափանցել շահերի պալատը՝ իբրև թարգմանիչ, այլև անընդհատ շրջազայել եվրոպական երկրներ մերթ թարգմանչի, մերթ պատվիրակի, մերթ էլ դիվանագետի կարգավիճակով:

Նա եղել էր Պարսկաստանի դեսպանը **Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում, Տոկիոյում:** Նրա լեզվագիտական կարողություններն անսպառ էին և զարմանահարաշ: Հ. խան Մասեհյանը հմուտ դիվանագետից գատ աշխարհին հայտնի է **Վիլյամ Շեքսպիրի** գործերի հայերենի այնպիսի թարգմանություններով, որոնք մինչև օրս էլ մնում են անգերազանցելի և չեն իջնում հայկական թատրոնի բեմահարթակից¹:

Ազգային պատվիրակության մյուս անդամներն էին **Վահան Թեքեյանը** (1878, 4. Պոլիս - 1945, Կահիրե), **Արշակ Չոպանյանը** (1872, 4. Պոլիս - 1954, Փարիզ), **Հարություն Մոստիշյանը, պրոֆ. Աբրահամ Տեր-Հակոբյանը** և այլք:

Պատվիրակության ղեկավարը, գաղափարական առաջնորդը, եվրոպական մեծերի հետ առայժմ բանակցություններ վարողը **Պողոս Նուրար փաշան** էր, որը չբավարարվելով իր ունեցած լիազորություններով, հավակնում էր առավելին: Իմիջիայլոց արձանագրեմք, որ 1918 թ. մայիսի 28-ին ստեղծված **Հայաստանի Հանրապետության կառավարությունը** ոչ Պողոս Նուրարի, ոչ զորավար Անդրանիկի և ոչ

¹ ՀՍՀ, հատ. 7, երևան, 1981, էջ 266-267:

էլ արևմտահայ մեծամեծերից որևէ մեկի սրտովը չէր: Նրանք ոչ ավել, ոչ պակաս այն անվանումն էին «Արարատյան Հանրապետություն»:

Նման մտահոգությամբ Պողոս Նուբարը 1918 թ. հոկտեմբերի 18-ին Փարիզում խորհրդակցություն հրավիրեց՝ վերջնականապես ճշգրտելու Ազգային պատվիրակության իրավունքներն ու պարտականությունները: Ժողովն ընթացավ բավական լարված մթնոլորտում: Սրվեցին արևելահայ, արևմտահայ փոխհարաբերությունների խնդիրները՝ մեծ թե փոքր Հայաստան պահանջելու լիազորությունները:

Կրքերը դադարեցնելու, որոշումները ժողովրդին դուրեկան դարձնելու լուրջ մտահոգությամբ որոշվեց Փարիզում հրավիրել **Ազգային համագումար**, որի որոշումները պարտադիր կդառնային Եվրոպայի մայրաքաղաքներում դեգերող հայ բանագնացների համար: Սկսվեց պատգամավորների ընտրության պրոցեսը, որը նույնպես ցավազին էր ընթանում¹:

Ազգային համագումարի նիստերի հրապարակված համառոտ հաշվետվությունը ցույց է տալիս, որ հաստատված էին 38 պատգամավորների լիազորագրերը, և որ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունից **Ավետիս Ահարոնյանն ու Համո Օհանջանյանը** մասնակցում էին խորհրդակցական ձայնի իրավունքով: Պատգամավորների անվանացանկը նույնպես արձանագրում է ակնաավոր ազգային դեմքերի մասնակցությունը, այդ թվում՝ Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան՝ գիտնական և Կոստանդնուպոլսի նախկին պատրիարք, Գաբրիել Նորատունկյան և Գրիգոր Սինապյան՝ օսմանյան նախարարների խորհրդի նախկին անդամներ, Հովհաննես խան Մասեխյան՝ Պարսկաստանի երբեմնի դեսպանը Սեֆ Բիտանիայում և Գերմանիայում, ակնավոր գրողներ Լևոն Շանթ, Արշակ Զոպանյան և Վահան Թեքեյան: Պողոս Նուբար փաշան հանդես էր գալիս և՛ իբրև ճավայի ու Հնդկաստանի հայերի ներկայացուցիչ, և՛ իբրև Ազգային պատվիրակության նախագահ: **Քաղաքական պատկանելության իմաստով պատգամավորները բաժանվում էին սահմանադիր ռամկավար, դաշնակցական և անկուսակցական մոտավորապես հավասար խմբավորումների, ընդ որում՝ վերջինները հակվում էին դեպի Ռամկավար կուսակցության պահպանողական կամ սահմանադրական-քարեշրջական դիրքորոշումը**²:

Ազգային համագումարի նիստերը սկիզբ առան **1919 թ. փետրվարի 24-ին** և շարունակվեցին մինչև **ապրիլի 22-ը**: Դրանք այն օրերն էին, երբ Փարիզում կյանքը եռում էր: Դաշնակիցները խաղաղության կոնֆերանսի նիստերի դահլիճներում վերածնունդ էին աշխարհի քարտեզը, մեկին տալով շատ, մյուսին՝ ոչինչ:

Համագումարը բազում որոշումներից զատ Պողոս Նուբար փաշային հանձնարարեց իր գործունեությունը սերտացնել Հայաստանի Հանրապետության ղեկավարության հետ և Հայկական խնդիրներին վերաբերող հարցերը բարձրացնելիս լուծման միանման եղանակ որոնել: **Կրկնեմք**. Արևմտահայ Ազգային պատվիրակության կազմը և՛ ընտրել, և՛ հաստատել էր Ամենայն Հայոց կաթողիկոսը: Նրանց **Ճանաչել էին** դաշնակից տերությունները և հատկապես **Միացյալ Նահանգները**³:

¹ Տե՛ս Վահան Փափագեան, Իմ Յուշերը, հատոր երրորդ, Գահիրե, 1957, էջ 34-41:

² Ռիչարդ Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր առաջին, էջ 500-501: Տե՛ս նաև Ամփոփում Հայ ազգային համագումարի աշխատությանց եւ որոշմանց (փետրուար 24-էն մինչև ապրիլի 22), որն այսուհետև նշվում է որպես Ազգային համագումար: Պատգամավորների ցուցակը և նրանց վերաբերյալ տեղեկությունները տրված են նաև Փափագեանի կողմից, նշվ. աշխ., հ. III էջ 38-44, և Թերզիպաշեան, նշվ. աշխ., էջ 245-253: Տե՛ս նաև, Britain, FO 608/97, 375/1/1466/1484/2347, և FO 371/3657, 30411/58/512: «Հայրենիք» (օրաթերթ), 2 փետրվարի, 1919 թ., էջ 1, և 6 փետրվարի, 1919 թ., էջ 1: Գ. Գ. Պատ. Դիան, գործ 231/130, որտեղ նշվում են բոլոր պատգամավորների փարիզյան հասցեները:

³ Մամուկ Գ. Ճիզմեճեան, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925, Ֆրեզնո, 1930, էջ 394-395:

Բնականաբար, հարց էր առաջանում, իսկ Մայր Հայրենի՞քը, իսկ Հայաստանի նորաթուխ Հանրապետությունը:

Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը, հետևելով սիյուրքահայերի օրինակին, ինքը ևս ստեղծեց **պատվիրակություն** և նրան հանձնարարություն տվեց թափանցել միջազգային այն ատյանների գաղտնուղիները, որտեղ վճռվելու էին Հայաստանին վերաբերող խնդիրները: **Հայաստանի Հանրապետության պատվիրակություն** անվանակոչում ստացած մարմնի ղեկավար կարգվեց **Ավետիս Ահարոնյանը**:

Ավետիս Առաքելի Ահարոնյանը (1866, Սուրմալու - 1948, Փարիզ) իր ութսունամյա անցած ճանապարհին կերտել է հարուստ և ուսանելի կենսագրություն: Նա հասարակական, քաղաքական գործիչ էր, գրող: Եղել էր ՀՀԴ անդամ: Ուսանել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, **Լոզանի և Սորբոնի** համալսարաններում: Աշխատակցել է «Մուրճ» ամսագրին, «Հառաջ», «Ալիք» և այլ թերթերին: Դասավանդել է Գևորգյան ճեմարանում, Իզդիրի և Նոր Բայազետի ծխական դպրոցներում: 1909 թ. ծերբակալվել է ցարական ոստիկանության կողմից՝ «դաշնակցության գործով»: 1917 թ. Թիֆլիսում ընտրվել է Հայոց ազգային խորհրդի նախագահ, 1919 թ.՝ Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամ, ապա՝ նախագահ: **1919-1923 թթ. խաղաղության կոնֆերանսներում ղեկավարել է Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը: Նրա ստորագրությունն է դրված Սևրի դաշնագրի վավերագրերի տակ:** Հայկական հարցին անդրադարձել է 1943 թ. տպագրված «Սարդարապատից մինչև Սևր և Լոզան» գրքում⁴:

Պատվիրակության մյուս անդամն էր **Համո Օհանջանյանը** (1873-1947 թթ.), պետական, քաղաքական գործիչ, հրապարակախոս: ՀՀԴ անդամ: Սովորել է Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, ապա Մոսկվայում և Լոզանում: 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո եղել է Համառուսաստանյան սահմանադիր ժողովի պատգամավոր: 1918 թ. պաշտոնավարել է Անդրկովկասյան սեյմում: Փարիզի խաղաղության կոնֆերանսում եղել է Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամ: 1920 թ. սկզբից զբաղեցրել է Հայաստանի Հանրապետության արտգործնախարարի, ապա նաև վարչապետի պաշտոնները: Նրա օրոք է ստորագրվել Սևրի պայմանագիրը⁵:

Սրանց եռյակի կազմումն էր **Միքայել Պապաջանյանը** (Պապաջանով), որին բնութագրելիս Մամուկ Ճիզմեճեանը գրում է. «**Միքայել Պապաջանեան** եղած է քաղաքական ու հասարակական գործիչ Կովկասի մեջ: Ան Կովկասահայ ժողովուրդի ներկայացուցիչն էր Ռուս պետական Դումային մեջ: Եւրոպա կ'անցնի իբր Հ. Հանրապետութեան ներկայացուցիչ, սակայն քիչ յետոյ իր յարաբերութիւնը կը խզէ Ա. Ահարոնեանի հետ եւ կը գործէ Թրքահայ Ազգային Պատուիրակութեան հետ: Պատասխանատու պաշտօն կը վարէ Հայ. Բարգ. Ընդի. Միութեան, Ֆրանսայի ՀՕԿ-ի եւ Ռամկ. Ազատական Կուսակցութեան Կեդր. Վարչութեանց մեջ: Հայաստան մեկնած էր կարելոր գործերով: Թիֆլիսի մեջ կաթուածահար մեռաւ Դեկտ. 23, 1929»⁶:

Եվ այսպես, զույգ պատվիրակությունները պատրաստվում էին փարիզյան գործունեությանը, երբ առաջ եկան նոր ու ներքին բարդություններ:

Արևելահայ-արևմտահայ փոխհարաբերությունների կանոնավորման պրոցեսը լրջորեն մտահոգել էր Երևանում գումարված զույգ համագումարներին: Արևմտա-

⁴ Տե՛ս «Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական-դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923 թթ.», Երևան, 2010, հատոր Բ, էջ 242:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 243:

⁶ Մամուկ Գ. Ճիզմեճեան, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925, Ֆրեզնո, էջ 401:

հայերի երևանյան **Առաջին համագումարը գումարվեց 1917 թ. մայիսի 2-ին և շարունակվեց իր նստաշրջանը մինչև մայիսի 11-ը:**

Համագումարը պատվավոր նախագահ ընտրեց **Չորավար Անդրանիկին**, ապա նրա նախագահությամբ քննարկեց արևմտահայերի ներքին կյանքին վերաբերող խնդիրները: Միջոցներ մատնանշվեցին գաղթականներին սովի և հիվանդությունների սպառնացող ճիրաններից փրկելու ուղղությամբ:

Ընտրվեց Ազգային խորհուրդ: Համագումարի մասնակիցների 59-ը պատգամավորներից Ազգային խորհրդի կազմում ընդգրկվեցին 15-ը, որոնցից 9-ը դաշնակցական էին, 6-ը՝ **ռամկավար**: խորհրդի կազմումն էին **Չորավար Անդրանիկը, Չապել Եսայանը, Գուրգեն Հայկունին, Ա. Թերզիպաշյանը, Լևոն Շանթը, Կարո Սասունին, Արտակ Դարբինյանը** և այլք¹: Ազգային խորհուրդն ի սկզբանե լուրջ պարտականություններ վերցրեց իր ուսերին և կարծես թե պատվով այդ ազգափրկչական միսիան կատարեց:

Ավելի քան լուրջ էին արևմտահայերի երկրորդ և նույնպես երևանյան համագումարի քննարկած խնդիրները, դրանց մասին ընդունած վճիռները: Երկրորդ համագումարը տեղի ունեցավ 1919 թ. փետրվարի 6-ից 13-ը (19-ից 26-ը): Այն հրավիրելով վաղօրոք ընտրված 55-ը պատգամավորների, նույնպես լուրջ մտահոգությունների առարկա դարձրեց Հայաստանի Հանրապետություն գաղթած անտուն, անօթևան արևմտահայ գաղթականությանը գոնե ֆիզիկապես փրկելու ազգանվեր խնդիրները: **Համագումարում, սակայն, առավել սուր բնավորություն ստացան հայոց երկու հատվածների ղեկավարության փոխհարաբերությունների խնդիրները:**

Դեպքերին ոչ միայն ականատես, այլև մասնակից ու բոլոր գործերին քաջատեղյակ **Սիմոն Վրացյանը**, հետագայում արտասահմանում, գերծ ամեն տեսակի կողմնակալություններից, արծանագրել է, թե. «1919 թ. գարնանը Հայաստանի կյանքի կարևոր երևույթներից մեկն էր և **Արևմտահայ երկրորդ համագումարը:**

Հայաստանի Հանրապետության գոյության սկզբի շրջանում արևմտահայությունը իրեն մեկուսացած էր պահում պետական կյանքից: Դա արտահայտվում էր շատ բաներում. պետական հիմնարկություններում համեմատաբար քիչ արևմտահայ պաշտոնյաներ կային. արևմտահայ երիտասարդությունը պարտադիր զինվորակոչից խուսափում էր: Ուրիշ պետական պարտավորությունների հանդեպ էլ արևմտահայությունը վերապահ էր և, առհասարակ, հարազատ չէր զգում իրեն հանրապետության մեջ: **Անդրանիկը, որ Բաթումի դաշնագրից հետո իր գործամասով ու գաղթականներով հեռացել էր Հայաստանից** և ապա ամրացել **Չանգեզուրում**¹՝ թշնամական դիրք բռնելով «թուրքերի ձեռքով ստեղծած» հանրապետության նկատմամբ, զգալի չափով արտահայտիչ էր արևմտահայերի այն ժամանակվա մտայնությունը: Ազգային պատվիրակությունը **Փարիզում Պողոս փաշա Նուրարի գլխավորությամբ ավելի** հեղինակություն էր վայելում արևմտահայերի մեջ, քան Հայաստանի Հանրապետության կառավարությունը: «Հայաստանի Հանրապետություն» խոսքն էլ ընդունելի չէր շատերի համար՝ եղածը սոսկ **«Արարատյան Հանրապետություն էր»:**

Ընդհակառակը, «Արարատյան Հանրապետության» կառավարությունն ամեն կերպ աշխատում էր վերացնել այդ խորթությունը և, առհասարակ, հատվածական խնդիրը Հայաստանում՝ մի գործ, որ, իհարկե, հեշտ չէր այն ժամանակվա պայմաններում: Տասնյակ տարիներ հայ քաղաքական միտքը դաստիարակվել էր այն ուղղությամբ, որ Հայաստանը այնտեղ էր, **Բարթոլյան** լեռնաշղթայի մյուս կողմը, հայկական հարց, Հայաստանի ինքնավարություն, հայ պետություն կարող էր լինել մի-

այն Թուրքահայաստանում, և հանկարծ բոլորովին չսպասված տեղից՝ մեջտեղը բռնում է ինչ-որ մի «Հայաստանի Հանրապետություն»՝ մարտելի՞ բան էր այդ: Հետո այդ «Հանրապետության» մեջ դեռ շատ բանից՝ օրենքներից ու լեզվից սկսած մինչև ներքին կարգերը, մինչև հանրային կենցաղն ու բարքերը՝ ռուսի հոտ էր բուրում: Արևմտահայության մտքին ու զգացմունքներին խորթ էր այդ, անհարազատ:

Ուստի և զարմանալի չէ, որ անկախության առաջին օրերից հենց նրանք սկսել էին մտածել «ինքնորոշման», իրենց քաղաքական դիրքն ու ընթացքը որոշելու մասին: **Այդ նպատակին ծառայեց Արևմտահայ երկրորդ համագումարը երևանում փետր. 6-13-ին»¹:**

Համագումարը ճիզ ու ջանք չէր խնայում **միասնական** Հայաստան, նրա ղեկավար **միասնական կառավարություն** և ամենակարևորը՝ հայ ժողովրդի շահերը պաշտպանող **միասնական պատվիրակություն** ստեղծելու լուրջ մտահոգություններով: Այդ մտահոգությամբ **Նիկոլ Աղբալյանին և Գևորգ Խատիսյանին** համծնարարություն տրվեց՝ կազմել մի փաստաթուղթ, դիմել հանրությանը միասնականության կոչով:

Ահա այդ հայտարարությունը. **«Հայաստանի** ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի ու ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբր անկախ պետական միություն:

Ուղիղ մի տարի առաջ ռուսահայերի համագումարից ընտրված Հայոց ազգային խորհուրդը հայտարարեց իրեն անդրկովկասյան հայկական գավառների բարձրագույն իշխանություն: Ազգային խորհրդի կազմած կառավարությունն այդ քաղաքական ակտի մասին պաշտոնապես պետությանց ներկայացուցիչներին հայտնելուց հետո, այս մի տարվա մեջ փաստորեն հաստատել է իր իշխանությունն Անդրկովկասի հայկական գավառներում:

1919 թ. փետրվար ամսին երևան քաղաքում կայացած Արևմտահայ երկրորդ համագումարը հանդիսավոր կերպով հայտարարեց, որ Հայաստանը միացյալ և անկախ է ճանաչում:

Այժմ Անդրկովկասում և Օսմանյան կայսրության սահմաններում գտնված պապեմական հայկական երկրների միացման և անկախության այս ակտը կատարելով՝ Հայաստանի կառավարությունը հայտարարում է, որ միացյալ Հայաստանի պետական ձևն է ռամկավար հանրապետություն, և որ ինքը հանդիսանում է միացյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Այսպիսով, ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջացած հայրենիքի գերագույն տերն ու տնօրենը, և Հայաստանի խորհրդարանն ու կառավարությունը հանդիսանում են միացյալ Հայաստանի ազատ ժողովուրդը շարկապող բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանությունը:

Հայաստանի կառավարությունը սույն ակտը հրատարակում է 1919 թ. ապրիլի 27-ի խորհրդարանի որոշմամբ կառավարությանը տրված հատուկ լիազորությունների հիման վրա:

Նախարարների խորհրդի նախագահի և արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար **Ալ. Խատիսյան**
Ներքին գործերի նախարարի պաշտոնակատար **Ս. Մանասյան**
Զինվորական նախարար գեներալ-մայոր **Բ. Արարատյան**

¹ Տե՛ս «Հայկական հարց, Հանրազիտարան», Երևան, 1996, էջ 59:

¹ **Սիմոն Վրացյան**, Հայաստանի Հանրապետությունը, Երևան, 1996, էջ 270-271:

Արդարադատության նախարարի պաշտոնակատար **Յ. Չմշկյան**
Հանրային կրթության նախարար **Գ. Մելիք-Ղարապետյան**
Խնամատարության նախարար **Ս. Թորոսյան**
Պարենավորման նախարար **Զ. Վերմիշյան**
Ֆինանսների նախարարի պաշտոնակատար **Գ. Ջաղերյան**
Գործերի կառավարիչ **Գ. Խատիսյան**

1919 թ. մայիսի 28-ին, Երևան քաղաք»¹:

Առանձնապես մեծ տպավորություն գործեց Գևորգ Ե կաթողիկոսի համագումարում ունեցած ելույթը՝ ուղղված և՛ համագումարականներին, և՛ ողջ հայ ժողովրդին: Նա կոչ անելով դիմում էր հայ ժողովրդին. հույս չդնել օտարի վրա, որովհետև մեր ժողովրդի բարօրությունն ու առաջադիմությունը մեզանից է կախված բացառապես: Այժմ, երբ Մասիսը մագնիսի պես քաշեց և միացրեց հայության երկու հատվածները, երբ ստեղծվեց միացյալ Հայաստան, այժմ պետք է լարենք մեր ազգային բոլոր կարողությունները՝ փրկելու և դաստիարակելու համար մեր ժողովուրդն ի փառս իր ազատ Հայրենիքի²:

Մայրաքաղաքում տիրող խանդավառությունը փոխանցվեց գավառներ, և հանդիսությունները համազգային կերպարանք ստացան ոչ միայն **Արևելյան Հայաստանում**:

1919 թ. ապրիլի 2-ին Ազգային համագումարը կազմեց նոր Ազգային պատվիրակություն, որը վերստին գլխավորում էր Պողոս Նուբար փաշան և բաղկացած էր երեք գլխավոր հոսանքների ներկայացուցիչներից՝ Արշակ Չոպանյան և Վահան Թեքեյան (ռամկավարներ), Գարեգին Փաստրմաճյան և Հակոբ Նևրուզ (դաշնակցականներ), պրոֆեսոր Աբրահամ Տեր-Հակոբյան և Պողոս Նուբար (անկուսակցականներ)³: Ոմանք գտնում էին, որ դաշնակցականներին ընդգրկելը կնպաստեր ավելի սերտ կապերի հաստատմանը Փարիզում գտնվող երկու պատվիրակությունների միջև, մանավանդ որ Փաստրմաճյանը (Արմեն Գարո), լինելով Դաշնակցության բյուրոյի անդամ և Հանրապետության ոչ պաշտոնական ներկայացուցիչը Միացյալ Նահանգներում, առաջներում համագործակցել էր Նուբարի հետ: Պատվիրակությունների վերջնական միացումը անհրաժեշտ էր թվում, քանի որ բազմաթիվ դեպքերում **Ավետիս Ահարոնյանը և Պողոս Նուբարը արդեն միացել էին՝ հանդես գալով հանուն ամբողջական Հայաստանի**:

Ապրիլի 22-ի վերջին նիստում Ազգային համագումարը, ի լրումն նախագահ Վիլսոնին և վարչապետներ Կլեմանտոյին, Լևոյի Զորջին և Օռլանդոյին հղված համապատասխան ուղերձների, հրապարակային դիմում ուղղեց Դաշնակից պետություններին, որպեսզի մեկ անգամ ևս ընդգծի «հայ ժողովրդի վճռականությունը՝ ունենալու ազատ հայրենիք իր բոլոր հողերով» և հորդորելու ամբողջ աշխարհի քաղաքացիներին՝ «միացնելու ձեր ծայները մեր ծայնին՝ պահանջելու Հաշտության վեհաժողովից Հայկական հարցի շուտափույթ լուծումը»⁴: Մեկ ուրիշ հասցեով Ազգային համագումարը «պարտք համարեց իր եղբայրական ջերմ ողջույններն ուղղել Հայկական Հանրապետությանը, ամոր մեջ տեսնելով ոգեշնչող մարմնավորումը վեց հարյուր տարիե ի վեր՝ առաջին անգամ վերագարթնող հայ ազատության հրճվառիթ

պատկերը»: Երևան հղված բուն հեռագրում ասված էր. «Փարիզ համախմբված Հայ Համագումարը, իր առաջին նստաշրջանին փակման առթիվ, Հայկական Հանրապետության կողմից իր եղբայրական խանդաղատագին ողջույնը: Սրտագին կը մաղթենք, որ ընդհուպ իրականանա Միացյալ Հայաստանի Հանրապետության կազմակերպությունը և լիափութեցնեք, որ ձեր և մեր ջանքերով պիտի պսակվին մեր իղձերը ընդհանուր խաղաղության կնքման պահուն՝ ազգային դատին կատարյալ հաղթանակովը»:՝ Այս խոսքերով Հայ ազգային համագումարը ավարտում էր իր աշխատանքն այն հավատով, որ կգումարվի մի ուրիշ անգամ ևս, երբ կբացվի արդարության օրը:

Դժբախտաբար, խնդրի լուծումը դրանով չավարտվեց: Ընդհակառակը, սկսվեցին գաղտնի գրագրություններ, որոնք նոր լույս են սփռում եղածի բուն էության վրա: 1918 թ. ապրիլի 25-ին, ասել է թե՛ Փարիզի Ազգային համագումարի ավարտից երկու օր անց **Ավետիս Ահարոնյանը** գաղտնագրված նամակներ է ուղարկում Հայաստանի արտաքին գործերի նախարար **Ս. Տիգրանյանին**:

Փարիզից Երևան առաքած այդ նամակներից մեկում կարդում ենք. «Բաշան մեզ հետ իբր թե բանակցելով, միաժամանակ մեզանից ծածուկ աշխատում էր իր Պատուիրակությունը ճանաչել տալ որպես Հայաստանի կառավարութեան պատուիրակություն: Նրա ներկայացուցիչ Սըվազլիի ջանքերը Ամերիկայում այդ ուղղութեամբ մեզ այստեղի էին, թեև ինք հերքում է»:

Ահարոնյան կը շարունակէ. -

«...Ես փորձեցի այստեղի իրադարձութեան ճշգրիտ պատկերը տալ ձեզ, Պարոն նախարար, բայց եւ այնպէս, ինչպէս նկատում էիք, միացեալ Հայաստանի կառավարութեան եւ պարլամենտի խնդիրը մնում է առկախ: Ժամանակը հասած է վերջ տալու այս տուալիզմին (երկուութեան) եւ քաղաքային աշխարհի առջեւ ներկայանալ մի ճակատով: Եւտով միջազգային յանձնառութիւններ պէտք կը լինի անել, պայմանագրեր ստորագրել, ֆինանսական ու տնտեսական փոխառութիւն կնքել, մանտատ յանձն առնող պետութեան հետ յարաբերութեան մէջ մտնել, նոյն իսկ մանտատի պայմանները քննութեան ենթարկել: Այս բոլորի համար անհրաժեշտ է միացեալ Հայաստանի միացեալ կառավարութիւն, որպէս զի կարողանայ յանուն համայն հայութեան, իբրեւ կազմակերպուած պետութիւն գործել, այլապէս՝ մանտատորը կարող է վարել իր ուզածի պէս եւ մեր քաղաքական ազատութիւնն ու անկախութիւնը կը վտանգվի: Ահա թէ ինչու Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութիւնը եւ խորհրդականները, Պ. Ս. Աճեմեան, Յովհաննէս Խան Մասեհեան, Ս. Վարանդեան, որ քարտուղարն է մեր պատուիրակութեան, ինչպէս եւ Լեւոն Շանթ, Պրոֆ. Աստուածատուր Խաչատրեան, Փաստրմաճեան, միաձայն եկան այն եզրակացութեան, որ Հանրապետական կառավարութիւնը պէտք է միջոցներ ձեռք առնի այդտեղ, Երեւանում, գլուխ հանելու Միացեալ Հայաստանի միացեալ կառավարութիւն ու պարլամենտ, համաձայնելով տեղւոյ Արեւմտահայ խորհուրդի հետ, որ յոյս ունենք աւելի առողջ մտածումներով է առաջնորդում անշուշտ, քան այստեղի թիրքահայ համագումարը: Ընտրութիւնների կանոնաւորութեանը շատ արժէ տալու չէ, քանի որ այս բոլորը ժամանակաւոր է: Հեշտութիւն ունէք հրաւիրել ներկայացուցիչներ եւ Կ. Պոլսից եւ մանաւանդ Ամերիկայից: Մնացած գաղութները կարելի է միանգամայն անտես առնել. թուով ու որակով միանգամայն անարժէք են: Որպէս Միջազգային Հայութեան ներկայացուցիչ կարելի է այստեղից հեռագրով հրաւիրել եւ Պրոֆ. Խաչատրեանին, Կիլիկիայում ընտրուած ազգային մարմին կայ արդէն, որ նոյնպէս կարող է իր ներկայացուցիչն ուղարկել: Կարծում եմ որ Կովկասի Արեւմտահայ խորհուրդը եթէ կամենայ

¹ *Միմուն Կրացյան*, Հայաստանի Հանրապետությունը, Երևան, 1996, էջ 279-280:

² Նույն տեղում, էջ 280:

³ «Ազգային համագումար», էջ 4-5: Գ.Յ. Դաշնակցութեան Դիւան, գործ 1283/26, Գ.Յ.Դ. Արեւմտեան եւրոպայի Կենտրոնական Կոմիտե, 1919 թ.:

⁴ «Միացեալ եւ Անկախ Հայաստան», էջ 70: «Ազգային համագումար», էջ 4-5:

¹ *Ռիչարդ Գ. Չովհաննիսյան*, Հայաստանի Հանրապետություն, հատոր առաջին, էջ 504-505:

եւ ձեռնբերելու և ստանձնի մեր կառավարութեան հետ, կարճ ժամանակում հնարաւոր կը լինի գլուխ բերել միացեալ կառավարութիւն եւ պարլամենտ»¹:

Աստիճանաբար բացվում են խաղաքարտերը: **Պողոս Նուբար փաշան** ևս գործի է անցնում: Նպատակ հետապնդելով Երևանի միջամտութեամբ ստեղծել «կոալիցիոն այնպիսի դահլիճ», որը, զերծ մնալով որևէ կուսակցութեան քաղաքական ազդեցութիւնից, Հայկական հարցը կարողանար օտարներին ներկայացնել **համազգային մակարդակով՝ անկողմնակալութեամբ**:

Այդ նպատակով նախ բանակցում են **Պողոս Նուբարն ու Ավետիս Ահարոնյանը**: Բանավեճը, երկար տևելով, ավարտվում է ապարդյուն: Պողոս Նուբարը հուսախաբվելով դիմում է այլ միջոցների:

1919 թ. սեպտեմբերի 28-ին Փարիզից Երևան են ուղևորվում Պողոս Նուբարի բանագնացներ **Վահան Թեքեյանն ու Ն. Տեր-Ստեփանյանը**, իհարկե, սրանց միանալու իրավունք վերապահելով **Սամսոն Հարությունյանին**: Հայաստանի Հանրապետության ղեկավարության կողմից վերջիններիս հետ բանակցություններ պետք է վարելին **Շավարշ Միսակյանը, Մարտին Հարությունյանը և Սիմոն Վրացյանը**²:

Բանակցող կազմերի քննարկմանը ներկայացվեց Վահան Թեքեյանի առաջարկած ծրագիրը, որը **հավանության էր արժանացել Փարիզում խարսխված պատվիրակության բոլոր անդամների կողմից**: Ահա այն.

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՎԱՆ ԱՌՃԱՄԵՆԱՅ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Անդրկովկասեան Հայաստանի մէջ ներկայիս իրականապէս (de facto) գոյութիւն ունեցող Հայ Հանրապետական Կառավարութեան եւ նախկին Օսմանեան Հայաստանի հայերը ներկայացնող Ազգային Պատուիրակութեան միջեւ կը կնքուի համաձայնութիւն մը հետեւեալ հիմունքներուն վրայ:

Ա. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

1. Կը կազմուի Առժամեայ Կառավարութիւն մը, որու Նախարարական Խորհուրդը կը բաղկանայ 9-13 անդամ:

2. Նախարարական Խորհուրդին մէջ կը մտնեն 4-6 արեւելահայ եւ 4-6 արեւմտահայ նախարարներ, իւրաքանչիւր կողմին համար հաւասար թուով. Պատերազմական Նախարարի անձնաւորութիւնը այս նկատողութենէն դուրս կը մնայ:

3. Նախարարական Խորհուրդը նոյնպէս կէս առ կէս կը կազմուի՝ առաջին կէսը Դաշնակցական եւ երկրորդ կէսը Ժողովրդական եւ Ռամկավար անդամներէն: Պատերազմական Նախարարը անկուսակցական է եւ կ'անուանուի երկու կողմերու համաձայնութիւնով:

4. Վարչապետը կ'ըլլայ արեւմտահայ մը, որ կը ներկայացուի Ազգ. Պատուիրակութեան կողմէ. Հանրապետութեան ներկայ Խորհրդարանը կը վաւերացնէ անոր Վարչապետի պաշտօնը:

5. Ըստ որում Վարչապետը Փարիզ կը մնայ իբրեւ նախագահ Խաղաութեան Հա-

¹ «Պահակ», 6-ը հունիսի 1922, տն'ս նաև *Մանուկ Ճիզմէճեան*, 1890-1925, Ֆրեզնո, 1930, էջ 396-398:
² Ս. Վրացյան, Բանակցութիւններ Ազգային պատվիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ, Պոսթըն, 1920, էջ 16-17:

մաժողովին մեր Հայկական Պատուիրակութեան (տես յետագայ գլուխը), Նախարարական Խորհուրդին մէջ իր անձնաւորութիւնը հաշուի կ'առնուի, թուի, հատուածի եւ հոսանքի տեսակետներէն:

6. Վարչապետին Փարիզ մնալուն պատճառաւ, Հանրապետութեան ներկայ Խորհրդարանը կ'ընտրէ դեր-Վարչապետ մը (vice-president), ով եւ ինչ հատուած ու հոսանքէ որ ինքը ուզէ: Դեր-Վարչապետին ներկայացուցած հատուածն ու հոսանքը հաշուի կ'առնուին Նախարարական Խորհուրդի կէս առ կէսի կազմին մէջ:

7. Նախարարական միւս թղթապանակները կը բաշխուին կողմերու փոխադարձ համաձայնութեամբ: Անոնց յատկացումը կը մտնէ կնքուելիք վերջնական համաձայնագրի մէջ:

8. Եթէ ոեւէ պատճառով Նախարար մը պակսի, իր յաջորդը կը նշանակուի միեւնոյն հատուածէն եւ հոսանքէն եւ միեւնոյն եղանակով, որով նշանակուած էր պակսող անդամը:

9. Նախարարական Խորհուրդի անդամներուն մէջ Դաշնակցական հոսանքի պատկանող կէս մասը կը նշանակուի ներկայ Խորհրդարանի մէջ մեծամասնութիւն կազմող նոյն կուսակցութեան բաժինէն (fraction), կամ ուրիշ ոեւէ պատասխանատու մարմինէ մը՝ թէ արեւելահայ եւ թէ արեւմտահայ Դաշնակցական Նախարարներու վերաբերմամբ. գալով միւս կէսը կազմող մասին՝ անոնցմէ արեւմտահայ նախարարները կը ներկայացուին Ազգային Պատուիրակութեան կողմէ եւ արեւելահայ նախարարները՝ ժողովրդական Կուսակցութեան պատասխանատու մարմինին կողմէ:

10. Նախարարական Խորհուրդը արտաքին թէ ներքին քաղաքականութեան վերաբերեալ եւ բացառիկ կարեւորութիւն ունեցող որոշումներ տալու ժամանակ - ինչպէս պատերազմի յայտարարութիւն եւ հաշտութեան կնքում, Խորհրդարանական ընտրութիւններ, ընկերային բարենորոգումներ եւ այլն - կը փնտռէ բոլոր անդամներու թիւին վրայ 7-ի՝ եթէ 9 է այդ թիւը, եւ 10-ի՝ եթէ 13 է, մեծամասնութիւնը:

11. Եթէ Նախարարական Խորհուրդը պէտք ունենայ իրահանգներ տալու Պատուիրակութեան, այդ իրահանգները քուէարկուած կը համարուին միայն այն ժամանակ, երբ նախարարներու երկու-երրորդը միաբանած են որոշման վրայ: Այս պարագային կը դիմուի նաեւ արտասահման կամ այլուր բացակայ գտնուող Վարչապետին եւ ուրիշ նախարարներու ձայնին:

Բ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

1. Ամբողջական Հայաստանի Միացեալ Կառավարութիւնը կ'ունենայ միակ Պատուիրակութիւն մը, որ կը ներկայացնէ Հայ ազգը Խաղաղութեան Համաժողովին մօտ:

2. Պատուիրակութիւնը կը բաղկանայ 7 անդամէ, որոնց 4-ը արեւմտահայ եւ 3-ը արեւելահայ:

3. Պատուիրակութեան նախագահն է Հանրապետութեան Կառավարութեան Վարչապետը:

4. Պատուիրակութեան կազմին մէջ՝ մէկ կողմէ Դաշնակցական Կուսակցութիւնը եւ միւս կողմէ ոչ-Դաշնակցականները ներկայացուած կ'ըլլան հաւասար թուով, այսինքն 3 առ 3, Նախագահ Վարչապետը, իբրեւ անկուսակցական դուրս կը մնայ ուժերու այս յարաբերութենէն:

5. Պատուիրակութիւնը, նման Կառավարութեան, կը մնայ անփոփոխելի մինչեւ Ամբողջական Հայաստանի Խորհրդարանի գումարումը: Անդամներու պակասման պարագային՝ անոնց յաջորդները կ'որոշուին նոյն հատուածէն եւ հոսանքէն եւ նոյն եղանակով, ինչպէս եղած էր պակասած անդամին համար:

6. Պատուիրակութեան արեւմտահայ անդամները կ'առնուին Արեւմտահայ Ազգային Համագումարին կողմէ ընտրուած ներկայ Ազգային Պատուիրակութեան անդամներու մէջէն՝ պահելով հոն ներկայացուած հոսանքներուն համեմատութիւնը. այն է՝ 2 ոչ-Դաշնակցական եւ մի Դաշնակցական. ի փոխարէն 3 արեւելահայ անդամները կ'որոշուին Հանրապետութեան ներկայ Խորհրդարանի կողմէ. այսպէս՝ 2 Դաշնակցական եւ մի ժողովրդական. - սոյն վերջինը կ'ընտրուի եւ ցոյց կը տրուի ժողովրդական կուսակցութեան պատասխանատու մարմինին կողմէ:

7. Պատուիրակութիւնը լայն իրաւասութիւն կ'ունենայ բանակցելու Համաձայնական Պետութեանց եւ Խաղաղութեան Համաժողովին հետ եւ հետապնդելու՝ Համաժողովին ներկայացուած Յիշատակագրին սահմաններուն մէջ՝ հայկական դատի լուծումը:

8. Պատուիրակութիւնը ինքը կը նշանակէ, երբ պէտք ըլլայ, վերոյիշեալ պետութեանց մօտ Հայաստանի դեսպանները: Եթէ Կառավարութիւնը պէտք զգայ նոյն պետութեանց մօտ քաղաքական առաքելութիւններ ղրկելու, նախապէս կ'ստանայ այդ մասին Պատուիրակութեան հաւանութիւնը:

9. Պատուիրակութիւնը, նման Կառավարութեան, իր գործունեութեան համար պատասխանատու է Ամբողջական Հայաստանի Խորհրդարանին:

Գ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

1. Հանրապետութեան ներկայ Խորհրդարանը սոյն համաձայնագիրը վաւերացնելէ ետք, երբ անոր հիման վրայ կազմուած նոր Առժամանակեայ Կառավարութիւնը կը ձեռնարկէ իր պաշտօնին, ինքզինք լուծուած կը հռչակէ, տալով իր օրէնսդրական իրաւունքները Առժամանակեայ Կառավարութեան եւ պարտք դնելով անոր վրայ շուտով մշակել ընտրութեանց հրահանգը եւ ընտրել տալ Ամբողջական Հայաստանի Խորհրդարանը:

2. Ամբողջական Հայաստանի Խորհրդարանը, որը իսկապէս Նախա-Խորհրդարան (Pres-Parlement) մըն է, կը գործէ մինչեւ Սահմանադիր ժողովի (Constituent) գումարումը, որ միմիայն կարելի է հայկական դատին լուծումէն եւ հայկական հողամասերու գրաւումէն ետք:

3. Խորհրդարանը կը բաղկանայ ընդամենը 80 անդամ, որոնց կէսը կ'ընտրեն արեւմտահայերը եւ միւս կէսը՝ Արեւելեան Հայաստանի ժողովուրդը:

4. Նկատելով, որ Թրքահայաստանը գրաւուած չէ տակաւին, եւ արեւմտահայ ժողովուրդը մեծ մասամբ երկրէն դուրս կը գտնուի, արեւմտահայոց մասին ընտրութիւնները կը կատարուին երկրի մէջ եւ այլուր գտնուող բոլոր արեւմտահայերու կողմէ, ուր որ հնար է: Արտասահմանի մէջ քուէարկող արեւմտահայերը այսպէսով յանձնառու եղած կը նկատուին, ինչպէս պէտք է յայտարարուի կանխաւ, Հայաստանի քաղաքացիներ դառնալու:

5. Խորհրդարանը օրինաւորապէս իր առաջին նիստը կը գումարէ, երբ ընտրուած արեւմտահայ ներկայացուցիչներու առնուազն երեք-չորրորդը եւ Արեւելեան Հայաստանի ներկայացուցիչներուն նոյնպէս երեք-չորրորդը հաւաքուած ըլլան:

Դ. ՎԱԵՐԱՑՈՒՄ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅ ՀԱՍՆԱԶՅՆԱԳՐԻ

Ներկայ համաձայնագիրը այժմու Խորհրդարանին կողմէ վաւերացուելէ եւ երկու կողմի լիազօրներու ստորագրութիւնը ստանալէ ետք՝ կ'ստանայ օրէնքի ոյժ եւ կը հրատարակուի:

Հրատարակութիւնը կը կատարուի բանածելով մը, որուն մէջ կը շեշտուի թէ նախկին Թրքահայաստանն է, որ կազմած է իր Կառավարութիւնը եւ անոր միացած է Անդրկովկասի մէջ իրականապէս (de facto) գոյութիւն ունեցող Արեւելեան Հայաստանի Անկախ Հանրապետութիւնը, թէ Երեւանը ընդունուած է իբրեւ առժամեայ մայրաքաղաք եւ թէ Ամբողջական Հայաստանի վերջնական մայրաքաղաքը պիտի ըլլայ նախապէս Թուրքիոյ մաս կազմող Հայաստանի քաղաքներէն մին:

Վ. ԹԵՔԵՆՆ

Երեւան, 21 Հոկտեմբեր 1919՝

Երկու պատվիրակութիւններու ներկայացուցիչների միջև բանակցությունները ծայր առան 1919 թ. հոկտեմբերի 29-ին, վիճավայր ընտրելով վարչապետ **Ալեքսանդր Խատիսյանի** աշխատասենյակը, միջնորդ անձնավորության իրավունքը վերապահելով վերջինիս: Նոյեմբերի 4-ին սեղանի վրա դրվեցին երկու կողմից վաղուց կազմված ծրագրային փաստաթղթեր, որոնք իրարամերձ էին:

1919 թ. նոյեմբերի 7-ին Սիմոն Վրացյանը գրավոր դիմում է Կահան Թեքեյանին՝ հետևյալ բովանդակությամբ.

«Մեծարգո պրն. Վ. Թեքեյան»

Ի պատասխան ձեր Նոյ. 6 գրութեան, պատիւ ունիմ հաղորդելու, որ ձեր գրութեան մէջ յարուցուած բոլոր հարցերի պատասխանն արդէն տրուած կայ բանակցութեանց նիստերի արձանագրութիւնների մէջ: Առաջ եմ բերում այդ պատասխանները համաձայն ձեր դրած կէտերի:

Ա. - Ազգային Պատուիրակութեան առաքելութեան հետ բանակցողները ներկայացուած են Հայաստանի Նախարարապետ Ա. Խատիսյանի կողմից եւ լիազօրուած են պաշտօնապէս բանակցելու:

Բ. - Մեր նկատողութիւնն Ազգ. Պատ. «արեւմտահայութեան մէկ մասի» ներկայացուցիչ լինելու մասին արուած է այն մտքով, որ Հայաստանի սահմաններում ապրող արեւմտահայութիւնը մասնակցելով Պարլամենտի ընտրութիւններին՝ արդէն իսկ միացած է Հանրապետութեան, եւ հետեւաբար, Ազգ. Պատուիրակութիւնը ներկայացնում է Հայաստանից դուրս ապրող արեւմտահայերին:

Գ. - Մեր դիտողութիւններն Ազգային Պատուիրակութեան ուղարկած առաքելութեան կազմի մասին նպատակ չունին առաքելութեան մերժումը: Մենք կարծում ենք, որ բանակցութիւնների յաջողութեան համար իսկ անելի օգտակար կը լինէր առաքելութեան մէջ տեսնել Ազգային Պատուիրակութիւնը կազմող բոլոր հոսանքներից ներկայացուցիչներ:

Այս բոլոր դիտողութիւնները, սակայն, ամենեւին արգելք չեն շարունակելու համար բանակցութիւնները: Մեր նպատակը չէ առաքելութեան որեւէ անդամի կամ անբողջութեան դէմ որեւէ առարկութիւն հանել: Որքան եւ թերի լինէր կազմուած Ազգ. Համագումարն ու Պատուիրակութիւնը, տուեալ պայմաններում նրանք ճանաչուած են արեւմտահայերի ներկայացուցչութիւն, եւ մեր անկեղծ փափաքն է գտնել համաձայնութեան գետին երկու հատուածների միջեւ:

Յուսալով, որ ներկայ բացատրութիւնները բաւական կը լինեն ցրելու համար ձեր տարակուսանքները՝ սպասում ենք ձեր պատասխանին մեր կողմից ներկայացուած հակաառաջարկներին, որպէսզի կարելի լինի գումարել նիստ՝ ցանկալի վախճանին հասցնելու համար սկսուած բանակցութիւնները:

Յարգանքօք՝ **Ս. ՎՐԱՅԵԱՆ**՝²

¹ Ս. Վրացյան, Բանակցություններ Ազգային պատվիրակության և Հայաստանի Հանրապետության միջև, էջ 19-25: Տե՛ս նաև Մանուկ Յիզմէճեան, նշվ. աշխ., էջ 400-405:

² Սիմոն Վրացյան, նշված աշխատությունը, էջ 57-59:

Այսպիսով, երկու թևերի միջև համաձայնություն չկայացավ, սակայն միասնական պատվիրակությունը կազմվեց, որը շարունակեց իր բուռն գործունեությունը Ֆրանսիայի մայրաքաղաքում, երբեմն էլ՝ Լոնդոնում և Յոնոնում:

Խիստ անհրաժեշտություն էր զգացվում այնպիսի փաստաթղթերի ստեղծման, որոնք պետք է ներկայացվեին մեծ տերությունների ղեկավարությանը՝ ապացուցելով մեր պահանջների արդարացիությունը: Պատվիրակության երկու ղեկավարները՝ Ավետիս Ահարոնյանը և Պողոս Նուրար փաշան, ձեռնամուխ եղան այդ փաստաթղթերի ձևավորմանը:

* * *

Պատերազմի ավարտման սկզբնական ամիսներին դեպքերի զարգացման հետագա ընթացքը գնում էր հոգուտ Հայաստանի նորածին Հանրապետության և աշխարհով մեկ սփռված նրա հայրենակորույս զավակների: Դեռևս Մուղրոսի գինադարարի թանաքը չչորացած, **այսինքն՝ 1918 թ. դեկտեմբերի 9-ին, Անտանտի մեծերը, սկզբում զատ-զատ, քիչ անց բոլորը միակամ հրապարակավ Հայաստանի Հանրապետությունը ճանաչեցին իբրև պատերազմին մասնակից, այն էլ՝ հաղթող տերություն:**

Փաստորեն լեգիտիմ ճանաչվեց Հայաստան պետության գոյության փաստը, որն ընդլայնեց նրա իրավունքները միջազգային համաժողովներում՝

Դե յուրե և դե ֆակտո ճանաչման այս եղելությունը գործունեության լայն ճանապարհ բացեց ինչպես Հայաստան պետության ղեկավարության, այնպես էլ արդեն Փարիզում խարսխված Հայոց զույգ պատվիրակությունների առջև:

1918 թ. դեկտեմբերի 11-ին հանրապետության մինիստր-նախագահ (այդպես է ստորագրված վավերագիրը) **Հովհաննես Քաջազնունին** 25 կետերից բաղկացած մի հուշագիր դրեց շրջանառության մեջ, որը փաստորեն դարձավ հետագայում կազմվելիք բոլոր ծրագրերի հիմքը, քանզի այն ամփոփում էր հայ ժողովրդի պահանջատիրությունն առաջիկա խաղաղության կոնֆերանսից²:

Հայ քաղաքական և դիվանագիտական մտքի **էլիտան**, սևագրական հենք ունենալով Հ. Քաջազնունու կազմած **հուշագրի պլան-պրոսպեկտը**, որոշեց այնպիսի հիմնավոր մի փաստաթուղթ ստեղծել, որը կարողանար ամփոփել հանուր հայության ունեցած դարավոր բաղձանքները:

Այդ **ծրագիր-պահանջագիրը**՝ միաժամանակ բացատրագիրը, պետք է վեր կանգնած լիներ կուսակցությունների և քաղաքական հոսանքների միակողմակա-նությունից, արևելահայ-արևմտահայ հատվածային սահմանափակությունից, բավարարել բոլորին-բոլորին, **ամենակարևորը**՝ նպաստել հայ ժողովրդին վերստանալու իր հայրենիքը, այսինքն՝ վեց դար առաջ կորցրած ազատ, **անկախ և միասնական Հայաստանը՝ Մեծ Հայաստանը:**

Գործի անցան երկու պատվիրակությունների կողմից առանձնացված **գրագետ ու լեզվագետ, պատմաբան ու գրականագետ** մտավորականները: Ջարմանալի է, սակայն միաժամանակ փաստ, որ այդ պահին հայոց տաղանդների քանակը անտառ էր և այնքան շատ, մեկը մեկին գերազանցող, որ դժվար է առանձնացնել անտառի կենտրոնում կանգնածին՝ իր **չուրջը համախմբող կաղնու:**

Վավերաթուղթն ստեղծողների մեջ նշվում են **Նիկողայոս Ադոնց, Առաքել Բաբախանյան (Լեո), Վահան Փափագյան (Կոնս), Արշակ Չոպանյան, Հովհաննես**

խան Մասեխյան, Գաբրիել Նորատունկյան և շատ ուրիշներ: Սկզբում հայոց լեզվով կազմված, ապա անգլերեն և ֆրանսերեն թարգմանված այդ գրությունը բաղկացած էր 32 էջից և վերնագրված էր «**Հայկական հարցը Հաշտության կոնֆերանսի առաջ**»¹:

Գրքույկի տեսքով ստեղծված այդ գրությունը համագումարների մակարդակով քննարկվելուց, ընդունվելուց և հաստատվելուց հետո միայն թարգմանվեց և **1919 թվականի փետրվարի 12-ին** ուղարկվեց Փարիզում հաստատված խաղաղության կոնֆերանսի նախագահությանը, ապա բազմացվելով բաժանվեց համաժողովի գրեթե բոլոր մասնակիցներին: Գրությունն ստորագրել էին նախագահ **Հայկական Ազգային պատվիրակության Պողոս Նուրար և նախագահ Հաշտության կոնֆերանսի Հայկական Հանրապետության պատվիրակության Ավետիս Ահարոնյան**²:

Խաղաղության վեհաժողովի պատվիրակության գլխավորում բազմած **Հինգ գերագույններն** արդեն որոշել էին, որ կոնֆերանսին կմասնակցեն կամ հարցեր վճռելիս ձայնի լիարժեք իրավունք կունենան այն տերությունները, որոնք կռվել էին Գերմանիայի և նրան սատարող պետությունների գործերի դեմ, որոնք մարդկային որոշակի քանակության զոհեր էին տվել: Հայկական պատվիրակությունը, տեղեկանալով առաջադրված պահանջներին՝ պատրաստ էր պատասխանի համար փաստեր, նյութեր մատակարարել **Հինգի խորհրդին:**

Մի խնդիր ևս: Փարիզի հայկական պատվիրակությունները, հատկապես նրանց երկու ղեկավարները (**Պողոս Նուրար, Ավետիս Ահարոնյան**), ի նկատի ունենալով, որ եվրոպայի և ԱՄՆ-ի ժամանակի պետական գործիչները պատշաճ տեղեկացված չեն հայ ժողովրդի անցած ճանապարհի ուղեգծին, որոշեցին թեկուզ համառոտակի, բայց և այնպես նրանց փաստեր տրամադրել: Հատկանշականն այն էր, որ այդ գրության թարգմանական տարբերակներն **իրենց մայրենի լեզվով տպագրված տրամադրել էին Դեվիդ Լլոյդ Ջորջին, Ուինստոն Չերչիլին, Ժորժ Կլեմանսոյին, Օրլանդոյին և այլոց:** Հիշյալ տեղեկանքի պարունակած փաստերն էին թափանցել վերոհիշյալ գործիչների գրավոր աշխատությունների էջերը, առավել ևս նրանց բանավոր ելույթներում: Այդ գրության բանաձևած սկզբունքներն էին, որ դրվեցին **Սան Ռեմոյի կոնֆերանսի, Վերսալի և Սևրի՝ Հայաստանին և Հայկական հարցին** վերաբերող որոշումների հիմքում: Շատ պահանջներ ուղղակի վերցված են այդ գրությունից, ուստի և նկատելով «պահանջագիր» կարևորությունը՝ ներկայացնենք այն փոքր-ինչ մանրամասն:

Առաջինը. «Հայ ազգի անունից, որի ընտրած պատվիրակները, գալով Հայաստանից ու աշխարհի բոլոր մասերից, ներկայուն կոնֆերանս են գումարել Պարիզում, Հայոց Ազգային Պատվիրակութունը, պատիւ ունի Հաշտութեան կոնֆերանսին ներկայացնելու ներկայ յուշագիրը, որ ամփոփում է հայ ազգի տենչերն ու պահանջները:

Մեր ազգը, շարունակ ճնշելուց յետոյ, այսօր, համաշխարհային վերիվայրումի վախճանին, գտնուում է պատառ-պատառ եղած ու արիւնաքամ վիճակում, բայց կենդանի և աւելի քան երբէք վառ հաւատով հւակծամա՝ ազատագրւելու և իրականացնելու համար իր ազգային իղեւորը՝ շնորհիւ դաշնակից պետութիւնների յաղթանակին, որոնք իրենց դրօշների վրայ մակագրել են **Իրաւունքի, Արդարութեան և Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքները:**

Հիմնելով այդ վսեմ սկզբունքների վրայ՝ Հայոց Ազգ. Պատվիրակութունը թարգ-

¹ *Д. Ллойд Джордж, Правда о мирных договорах, том 1, Москва, 1957, стр. 67-71.*

² *Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 193, թերթ 11-12:*

¹ «Հայկական հարցը Հաշտության կոնֆերանսի առաջ», Թիֆլիս, 1919:

² Նույն տեղում, էջ 12:

մանը հանդիսանալով միաձայն բաղձանքի ամբողջ ազգի, որի մի մասն արդեն անկախ հանրապետութիւն է հիմնել Կովկասում, յայտարարեց ամբողջ Հայաստանի անկախութիւնն ու իր 1918 թ. նոյեմբերի 30-ի յայտագրով այդ մասին զեկուցեց դաշնակից կառավարութիւններին:

Հայաստանն իր անկախութեան իրաւունքը ձեռք է բերել կամովին և ինքնաբերաբար մասնակցելով պատերազմին՝ Կովկասեան, Սիւրիական և Ֆրանսիական երեք ծակատների վրայ, և հարիւր հազարաւոր տղամարդկանցով, կանանցով ու երեխաներով, որոնք ընկան՝ որպէս համաձայնութեան պետութիւնների դատին իր հաւատարմութեան զոհերը. որովհետև Հայաստանը, սկզբից և եթ, այդ նկատել է որպէս իր սեփական դատը: Հայաստանն իր հսկայական զոհերով ռազմաբեմերում, կոտորածի դաշտերում և տեղահանութիւնների երկար ծամբաներին՝ մահուանը վճարել է այնպիսի ծանր տուրք, որպիսին ոչ մի ուրիշ պատերազմող ազգ չի տւել:

Դաշնակիցների յաղթանակը նրան ազատեց ճնշողների լուծից և նրա դժբախտութիւնները կը բաւէին արդարացնելու նրա անկախութեան իրաւունքը. բայց, ինչպէս ստորև կապացուցւի, նա ունի և պատմական, ազգագրական, քաղաքական ու բարոյական բնոյթ կրող այլ իրաւունքներ, որոնք նւազ կարևորութիւն չունին»¹:

Այո, Առաջին աշխարհամարտի տարիներին մյուսների համեմատ փոքրիկ Հայաստանի լայնահուն ուսերին ծանր, շատ ծանր բեռ էր նստել, երբեմն ավելի ծանր, քան Ամերիկայի նման մեծ ու հզոր տերութեան:

ա) Պատերազմի տարիներին երիտթուրքական բորենիները և քրդական վայրենաբարո հորդաները ցեղասպանութեան ենթարկեցին շուրջ մեկկէս միլիոն անպաշտպան արևմտահայութեանը: Եղեռնին զոհ գնացին սկզբում 200 հազար հայ զինվորներ, ապա ծերեր, կանայք, երեխաներ:

բ) Դաշնակիցների բանակներում նրանց զորքերի շարքում Գերմանիայի և Թուրքիայի դեմ կռոււն էին հայկական զորամիավորումներ, ըստ որում ռուսական դրոշմները Կովկասյան ռազմաճակատում թուրքական բանակին ջախջախիչ հարվածներ էին հասցնում հայրենաբաղձ արևմտահայերը:

Ռուսաստանի գերագահութեան տակ ապրող շուրջ երկու միլիոն հայերից ցարական բանակ զորակոչվեցին երկու հարյուր երեսուն հազար զինվորներ, որոնք կազմում էին ամբողջ հայ բնակչության 13%-ը: Ֆրանսիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի զորքերում ծառայող հայ զինվորների թիվը գերազանցում էր 50 հազարից²: Հսկայական թիվ էին կազմում կամավորական զորամիավորումները:

Արևմտյան Հայաստանի ազատագրումը թուրքական բռնապետութունից բուռն խանդավառութուն էր առաջ բերել հայ ժողովրդի բոլոր հատվածներում: Մեծ թափ էր առել կամավորական շարժումը ոչ միայն Ռուսաստանում, այլև արտասահմանյան շատ երկրներում: Հայերն ամեն տեղից թողնում էին իրենց ընտանիքը, բնակավայրը և գալիս էին Թիֆլիս՝ զինվորագրվելու կամավորական շարժանը: Հոսքի ուժեղացման պատճառով Կորոնցով-Դաշկովը նույնիսկ արգելեց նրանց մուտքը Թիֆլիս³:

Ստեղծվել էր, այսպէս կոչված, «նազմական խորհուրդ», որը հավաքագրում էր կամավորներին, կազմում ջոկատներ և ապահովում զենքով: Այն իր ներկայացուցիչներն ուներ կայսրութեան համարյա բոլոր հայաբնակ վայրերում: Ազգային բյուրոյի

ենթաբաժիններ կային Մոսկվայում, Պետրոգրադում, Նոր Նախիջևանում, Մարիուպոլում, Բաքվում և այլուր, որոնք լայն պրոպագանդա էին մղում և նյութական ու դրամական հանգանակութեան կոչ անում՝ հօգուտ կամավորական շարժան: Շոշափելի օգնութուն ցույց տվեցին հատկապէս Մոսկվայի, Պետրոգրադի, Բաքվի, Թիֆլիսի, ինչպէս նաև Նյու Յորքի, Փարիզի և Լոնդոնի կոմիտեները: Կամավորական զորքեր կազմակերպելու գործին հիմնական նյութական օգնութունը տրվում էր ցարական կառավարութեան կողմից: Սակայն հայերը ևս միջոցներ էին տրամադրում: Միայն 1915 թ. հանգանակած գումարը կազմում էր 1.444.000 ռուբլի, որի 1.020.000 ռուբլին հավաքել էին ռուսական կայսրութունում բնակվող հայերը:

Սկզբնական շրջանում կազմակերպվեցին կամավորական չորս՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ զումարտակները, տարբեր ժամանակներում այդ ջոկատների իրամանատարներ են եղել Անդրանիկը (Օզանյան), հայդուկները՝ Քեռին (Գավաֆյան Արշակ), Խանասորցի Վարդանը (Մեիրաբյան), Համազասպը (Սրվանձտյան Գարեգին)⁴:

Կամավորական առաջին ջոկատը, որի իրամանատարն էր գորավար Անդրանիկը, և որն ամենախոշորն էր՝ բաղկացած 1200 հոգուց, ճակատ մեկնեց 1914 թ. նոյեմբերի 16-ին և գործում էր Սալմաստ-Վան ուղղութեամբ՝ գեներալ Չերնոզուբովի զորաբաժնում: Երկրորդ ջոկատը ճակատ մեկնեց նոյեմբերի 7-ին՝ Իգդիր-Բայազետ-Բերկ-Վան, երրորդը՝ նոյեմբերի 13-ին՝ Կաղզվան-Ալաշկերտ-Մանազկերտ-Բիթլիս, չորրորդը՝ նոյեմբերի 19-ին՝ Սարիղամիշ-Օրգան-Քյոփրի-քոյ-էրզրում ուղղութեամբ:

Անդրանիկի կամավորական ջոկատը նոյեմբերի երկրորդ կեսից մինչև դեկտեմբերի 18-ը մասնակցեց Կոթուրի շրջանի գրավմանը՝ փախուստի մատնելով թուրքական զորքերին: Ջոկատը գրավեց Վանից ոչ հեռու գտնվող Սարայ գյուղաքաղաքը, որով ձախողվեց թուրքական զորքերի առաջխաղացումը Վանի ուղղութեամբ⁵:

Կամավորները խիզախութեամբ օրինակներ ցուցաբերեցին բոլոր ռազմաճակատներում:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայերի մղած գոյապայքարի պատմութեան անբաժանելի մասն է կազմում Հայկական (Արևելյան) լեգեոնի պատմութունը, զորամաս, որին պատերազմից հետո մասնավորապէս բախտ էր վիճակվել նշանակալից ու կարևոր դեր խաղալու կիլիկիահայութեան պատմութեան էջերում:

Հայ ազգային պատվիրակութեան կոչով լեգեոնի դրոշմի տակ էին համախմբվել հասարակական-քաղաքական տարբեր ուղղութունների և սոցիալական տարբեր խավերին պատկանող, բայց միևնույն ցանկութեամբ ու նպատակով համակված հազարավոր երիտասարդներ: Աշխարհի գանազան կողմերից եկած ու հազարավոր կիլոմետրեր ծամվա կտրած հայ երիտասարդութեանը միավորել էր թուրքական բռնակալութեան տակ հեծող հայրենիքի ու բազմատանջ ժողովրդի ազատագրութեան նվիրական նպատակը:

Հայկական լեգեոնի ստեղծմամբ որոշակի նպատակ էր հետապնդում նաև ֆրանսիական կառավարութունը: Ֆրանսիական բանակը, որի ուժերը հիմնականում տեղաբաշխված էին ֆրանս-գերմանական ռազմաճակատում, արևելքում ներկայացված էր փոքրաթիվ զորքով, որը, բնականաբար, այստեղ մղվող մարտերում որոշակի դեր խաղալ չէր կարող: Այդ բացը լրացնելու միտումով էլ ֆրանսիական կառավարութունը որոշում է ստեղծել հայերից ու արաբներից բաղկացած զորախմբեր՝ լեգեոններ, և նրանց մասնակից դարձնել Թուրքիայի դեմ մղվող պատերազմին: Նման քայլի համար հիմք էին ծառայել մուսալեռցիները, որոնք 1915 թ. ամռան ամիսներ

¹ A. O. Арутюнян, Кавказский фронт 1914-1917 гг., Ереван, 1971, стр. 293-298.

² «Հայ ժողովրդի պատմութուն», հատոր VI, էջ 543-545:

¹ «Հայկական հարցը հաշտութեան կոնֆերանսի առաջ», Թիֆլիս, 1919, էջ 3-4:

² «Հայ ժողովրդի պատմութուն» բազմահատորյակի (ուժ հատորյակի) VI հատոր, Երևան, 1981, էջ 547:

³ Գ. Դորդանեան, Հայերի մասնակցութունը համաշխարհային պատերազմին, Փարիզ, 1921, էջ 10-12 (բարգմանութունը ֆրանսերենից):

րին ամբողջ քառասունչորս օր թուրքական կանոնավոր զորքերի ու խուժանի դեմ քաջաբար կռվելուց հետո ֆրանսիական նավերով փոխադրվել էին Եգիպտոս և ապաստանել Պորտ Սայիդում: Հայտնի է, որ Պորտ Սայիդում գտնվելու առաջին օրերից մեծ թվով մուսալեռցիներ ցանկություն էին հայտնել զինվորագրվելու դաշնակից բանակներին:

Արևելյան լեգեոնի ստեղծման գաղափարը հղացվել է 1916 թ. հուլիսին, երբ Կահիրեի «Ինթելիջենս սերվիս»-ի պետ գեներալ **Կլեյտոնը** այդ մասին հայտնել էր Լոնդոնում ֆրանսիական դեսպան **Կամբոնին**: Հետագա մեկ-երկու ամիսների ընթացքում լեգեոնի կազմակերպման հարցը մանրազնին քննարկման է ենթարկվել ֆրանսիական կառավարության կողմից և հավանության արժանացել¹:

Արևելյան լեգեոնի կորիզը դարձած **Հայկական լեգեոնը** աստիճանաբար համահավաքեց շուրջ **6000** արևմտահայ քաջ, ամերեր զինվորներ, որոնք հայկական հրամանատարությամբ, բայց ֆրանսիական դրոշի ներքո անօրինակ խիզախություն գործեցին լեռնային և դաշտային Կիլիկիայում, Սիրիայում և Պաղեստինում ծավալված պատերազմական գործողությունների ընթացքում:

Այսպիսով, և ռուսական, այսինքն՝ Արևելյան (Արևմտյան Հայաստանի տարածքի վրա) ռազմաճակատում, և մեծ տերությունների զորաշարքերում թուրքերի և գերմանացիների դեմ հերոսաբար կռվում էին հայ զինվորները: Կամավորները, աշխարհագրայինները, որոնց թափած ծով արյունը պետք է որ հաշվի առնեն Փարիզի խաղաղության կոնֆերանսը: **Հայ ժողովուրդը եվրոպական մեծերից ոչ թե խնդրում էր, այլ պահանջում էր արժանին հատուցել իր կատարած սխրագործությունների, իր ապրած ծով ողբերգության համար:**

Երկրորդ. Պատվիրակության ղեկավարները Հինգի խորհրդին ներկայացնում էին հայ ժողովրդի անցած ճանապարհին վերաբերող մի համառոտ տեղեկանք, որի ենթատողերում անթեղված էին կծու ակնարկներ՝ ուղղված Արևմուտքի այն տերությունների ղեկավարներին, որոնք չափադիտական նպատակներով ժամանակին իրենց հովանու տակ էին վերցրել Սուլթանատին, դրանով իսկ թաղել էին Հայկական հարցը, ուղղակի թե անուղղակի մեղսակից դառնալով հայոց մեծ ողբերգությանը:

* * *

Օսմանյան կայսրությունը, ձևավորվելով XV-XVI հարյուրամյակներում, հանդիսանալով երկարատև ու արյունահեղ պատերազմների արգասիք, ուներ ռազմաֆեոդալական, բռնապետական բնույթ: Թուրքիան արշավանքների, ավերածությունների, ահ ու սարսափի մեթոդներով, չխնայելով տեղական ոչ մի ժողովրդի, ոչնչացնելով երկու սեռերի բոլոր տարիքի ու ազգության պատկանողներին, հիմնեց մի ընդարձակ տերություն, որը հասնում էր առասպելական մեծության: Օտտոմանյան պետությունը, փռված լինելով երեք աշխարհամասերի՝ Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի ճոթերի վրա, իր մահասփյուռ ու ջղաձիգ բազուկների մեջ էր առել ողջ Բալկանյան թերակղզին, մերձդանուբյան երկրների մեծ մասը, Սև ծովի առափնյա շրջանները, Արիմի թերակղզին, արաբական երկրները, Աֆրիկայի հյուսիսային հատվածը, Փոքր Ասիան, Արևմտյան Հայաստանը և այլն:

¹ Մանրամասն տե՛ս Ե. Թ. Թորոսյան, Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Երևան, 1987, էջ 60-63: Տե՛ս նաև Խ. Աճեմեան, Հայկական լեգեոնը, Կահիրե, 1953, էջ 70:

Առեւի այդ տերությունը ղեկավարելու գործում առաջին սուլթանների համար մեծ դժվարություն էր ներկայացնում այնպիսի ճկուն համակարգի ստեղծումը, որը կարողանար ապահովել զարգացման տարբեր մակարդակներ ունեցող ժողովուրդների ունեցվածքի ու եկամուտների հաշվառումը, տեղական կառավարումը, հարկապահանջությունը: Եվրոպան դրա համար նախատիպ չուներ: Ուստի նրանք հետագոտեցին սելջուկ-թուրքերի, մոնղոլների, Լենկ Թեմուրի, այսինքն՝ նախորդ բոլոր **թուրքերի, այո՛, թուրքերի ստեղծած կառավարման համակարգը, կատարելագործեցին՝** գարշելի խստությունների իմաստով, և սկսեցին գործադրել XV-XVIII դարերում, սակայն՝ անընդմեջ փոփոխություններով¹:

Թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդները ենթակա էին ազգային ու քաղաքական բիրտ ճնշումների, կրոնաբարոյական անարգանքի, մարդկային արժանապատվության սանձաքծակ ոնտահարման: Որտեղ փայլատակեց սուլթանական մահասփյուռ սուրը, այնտեղ զրնգացին ստրկության թուրքական շղթաները, որտեղ վրնջացին սիպահիների հեծելազորային ծիերը, այդ վայրերն էլ վերածվեցին ավերված անապատների, քանդված գերեզմանոցների:

Կարմիր մահիկին ու սպիտակ կիսալուսնին «ապավինած» հպատակ այլազգիների բնօրրանը վերածվում էր տանջարանի՝ **հայերը, հույները, սլավոնները** զրկված էին ամենատարրական իրավունքներից: Տնտեսական, առավել ևս քաղաքական մարզում գերիշխում էր կրոնական սկզբունքը: Ոչ մահմեդական հպատակները, անկախ դասային ու ունեցվածքային տարբերություններից, կոչվում էին **ռայա, գիմմի, գյավուր** (անհավատ), անսքող խտրականություն ստեղծելով Մուհամեդի երկրպագուների ու այլահավատների միջև: Ինչ խոսք, որ դրանից առավել տուժում էին ոչ մահմեդական ժողովուրդների խոնարհ խավերը:

Հակադիր ու իրարամեծ կրոնական այս երկու ուղղություններին հարող Թուրքիայի ժողովուրդների միջև ակոսված խտրականությունը գնալով խորացել և դարձել էր ազգային հալածանքների հենքը: Սրբազան շարիաթը, իսլամի մահաբույր դոգմաները, շեյխ-ուլ իսլամների հպատակատյաց բարբառանքները վերածվում էին գրված ու չգրված օրենքների՝ դժնի տանջանքների դատապարտելով Թուրքիայի քրիստոնյաներին: «Ղուրանը և դրա վրա հիմնված մուսուլմանական օրենսդրությունը, - գրում է Կ. Մարքսը, - աշխարհագրությունը և ամբողջ աշխարհի ժողովուրդների ազգագրությունը հանգեցնում է երկու կեսի՝ ուղղահավատների և անհավատների պարզ ու հարմարին բանաձևին:

Անհավատը դա գյավուրն է, նա թշնամի է: Իսլամն անիծում է անհավատների ազգը և անընդհատ թշնամության վիճակ է ստեղծում մահմեդականների և անհավատների միջև (ընդգծումները մերն են - Յ. Ղ.)»:

Հայերի իրավագրկությունը դաժան կերպարանք առավ XVII դարի վերջին և XVIII դարի առաջին չորս տասնամյակներին: Քաղաքական ճնշումների խստացումը պայմանավորված էր նրանով, որ թուրքական ռազմատենչ հորդաները, արյունածարավ ենիչերիներն այլևս անկարող էին նոր արշավանքներ կատարել, նոր ժողովուրդներ ստրկացնել, նախկինի պես անհամար ավար ու ռազմագերիներ ձեռք բերել: Թուրքական երբեմնի ահարկու սուրն Արևմուտքում դեմ էր առել Եվրոպայի, Արևելքում՝ Ռուսաստանի հակահարձակումներին, ջարդվել ու ետ շարտվել: Սուլթաններն այժմ ստիպված էին խորհել իրենց ունեցածի պահպանության, հուսահատորեն պայքարի հրապարակ նետվող հպատակների ազգային ըմբոստացումներն արյան մեջ խեղդելու և միայն այդ միջոցով իրենց տիրապետությունը երկարաձգելու մասին:

¹ Տե՛ս Հայկ Դազարյան, Հայ ժողովրդի ցեղասպանությունն օսմանյան կայսրությունում, հատոր առաջին, Երևան, 2007, էջ 219:

Քրիստոնյա հպատակներն արդեն անբարեհույս էին համարվում սուլթանների աչքում: Մահմեդական մուլեռանդ վերնախավը, նրա հոգևոր ու աշխարհիկ պետերը, ստեղծված դրությունից ելնելու համար միջոցների մեջ խտրություն չդնելով, գերադասում էին համաձուլել այլահավատ հպատակներին, ոչնչացնել քրիստոնյաների օջախները և ստվարացնել մահմեդականների փարախը:

Տակավին XVIII դարում օսմանյան զորաբանակները, սուլթանների թողտվությամբ, հատկապես ռուս-թուրքական ու թուրք-պարսկական պատերազմների ժամանակ զանգվածներով կրոնափոխում կամ գերեվարելով վաճառում էին հայ խաղաղ բնակիչներին. «...Ձօրքն տաճկաց, - գրում է Փիրոլալեմյանը, - գերեին ազգն հայոց և բերեալ վաճառէին, կամ բռնադատէին թե ուրացիր գՔրիստոս. ոմանք հավատն ուրացան. և ոմանք որք ոչ ուրացան սրոյ ճարակ տային կամ վաճառէին, և ազգն հայոց ապուշ մնացեալ էին... յկրզումայ այնչափ գերեցին ազգն, որ մեք գրով ոչ կարացանք ճառել. զայս ամենայն բարկութիւն եկն ի վերայ մեր և մեք ոչ դարձաք ի մեղաց մերոց, վասն որոյ աւար ածին գաւառս Թիֆլիզոյ՝ մինչև ոչ մնաց մարդ. զի զոմանս գերեալ էին, և զոմանս կոտորեալ էին, և ոմանք ևս փախստական էին լեալ. մի և երկու ամսուան մանուկն կամ մայրն մերձաւորքն կու սպանէին՝ ու կին կամ որդիքն գերէին...»¹: Հայերի ազգային դիմահեղման քաղաքականությունն ավելի ուժեղացավ նոր պատմաշրջանում:

1856 թվականի փետրվարի 18-ին սուլթան Աբդուլ Մեջիդը համարյա վերակրկնեց 1839 թ. տված «Գյուլհանեի հաթթը-շերիֆը»: Ֆեսակիր ասիացին եվրոպայից ներմուծում էր կայսրությանը «վտանգաբեր» մաքսանենգ ապրանքներ և «լիբերալ օրենքներ», սակայն՝ խիզախությամբ, քանի որ գիտեր, թե դրանք երբեք էլ չեն գործադրվելու: 23 ընդարձակ հոդվածներից բաղկացած «Հաթթը հումայունի» նախաբանում կարդում ենք. «Այժմ իմ փափաքս է վերանորոգել և ալ աւելի ընդլայնել այն նոր կազմակերպությունները, որոնք հաստատուած են իմ կայսրութեանս արժանապատվութեանը, և քաղաքակիրթ ազգաց մէջ բռնած դիրքին համապատասխանող իրաց վիճակ մը յառաջ բերելու նպատակաւ... **Երջանկութիւնը աւելցնել իմ բոլոր հպատակներուս, որոնք իմ աչքիս առջև հաւասար են և հաւասարապէս սիրելի, և որոնք իրարու հետ հայրենասիրական անկեղծ կապերով կապուած են, նաև իմ կայսրութեանս բարգաւաճումը օրէ օր աւելցնելու միջոցներ երաշխաւորել** (ընդգծումները մերն են - Յ. Ղ.)»²: Առաջին հոդվածով հպատակների կյանքի, գույքի ապահովություն էր խոստացվում, օրենքի ու դատարանների առջև քրիստոնյայի և մահմեդականի հավասարություն:

Ժամանակին նկատվեց, որ այս օրենքները մնացին թղթի վրա, դիտվեցին իբրև թուրքիայի եվրոպականացման սոսկ արտաքին կեղև: Զմոռանանք, սակայն, մայրաքաղաքի հայերի դրության որոշ թեթևացումը, դրանով պայմանավորված՝ հասարակական-քաղաքական շարժումների ուժեղացումը: «Թանգիմաթից» փաստորեն օգուտ քաղեց գաղութահայ բուրժուազիան: Գավառն անտեղյակ մնաց դրան, գավառը գնալով ողբ հյուսեց իր վիճակի մասին: Այդուհանդերձ, թղթի վրա թե գործողության մեջ «Թանգիմաթն» «ապրեց» մինչև 1868 թվականը՝ սուլթանական օրենսդրական նոր ակտերը, գրաքննչական կանոնները, «Սահմանադրության» արգելման փորձերը, հայ առաջավոր մտավորականության կրած գաղափարական անդրանիկ ջարդը:

1870-80-ական թվականներին հրապարակված փաստերը, եվրոպացի ու հայ հե-

¹ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր 6332, Նշխարք պատմութեան հայոց, էջ 552:

² Բրոնֆ. Կ. Թումանյան, Պատմութիւն Արևելեան խնդրոյ և առաջնորդ Հայկական հարցի, Լոնտոն, 1905, էջ 614:

դիմակների անհամար վկայությունները կասկած չեն թողնում, որ «Թանգիմաթն» արդեն մեկընդմիջտ հանգել էր: Գազանությունների, ոճրագործությունների անթիվ դեպքերը մերթ ցատկում էին «Թանգիմաթի» վրայով, հիշեցնում սուլթանական մռայլ միջնադարը, մերթ էլ, անօրինակ դառնալով, գրեթե նմանը չէին գտնում ողջ մարդկության պատմության մեջ: «Հայկական հինգ նահանգներում հաստատված է կառավարման գազանային սիստեմ, - գրում է **Էմիլ Դիլլոնը**, - որի հետ համեմատած հարավային նահանգների ստրկական դաժանությունները հանդիսանում են միայն որպես աննշան չարաշահումներ»¹:

Սկսվեց ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմը: Կառավարության «խնդրանքով» ևս մի քանի տասնյակ թնդանոթներ պատրաստվեցին վրոպայում և ուղարկվեցին Կոստանդնուպոլիս: Ռուսական զորքերը գրավում էին թուրքիայի քաղաքներն ու բերդերը: Ստացված թնդանոթները փոխանակ ամբողջովին ռազմադաշտ ուղարկելու, **Աբդուլ Համիդը մի մասն իր պալատի բարձունքի վրա շարել տվեց՝ բերանները մայրաքաղաքին ուղղված: Վիկտոր Գյուլոյի դիպուկ բնութագրությամբ՝ գահակալության սկզբից երկյուղամու ոճրագործը 30 տարի շարունակ փակված մնաց իր պալատի խորքերում, ինչպես Կայենն իր գերեզմանում:**

Այսպիսով, 1880-ականների սկզբին սուլթանական թուրքիան արմատապես վերադիրքավորվեց հայ ժողովրդի արևմտահայ հատվածի հանդեպ: Փաստորեն «ավարտվեց» «Թանգիմաթի» ժամանակահատվածը, ի դերև ելան ժողովրդի հույսերը, ոչնչացվեցին արևմտահայերին տրված մասնակի «իրավունքները», մուլեգնելու աստիճանի հասավ քաղաքական ռեակցիան: Միդիատյան «Սահմանադրության» արգելումից հետո գործադրության իրավունքից զրկվեցին հայկական սահմանադրական հիմնարկները, կախադանները դարձան քաղաքական հանցագործների հետ հարաբերություն ունենալու գերադասելի միջոցը, բանտերը լցվեցին ռուսական կողմնորոշման կամ հեղափոխական պրոպագանդա մղելու մեջ մեղադրված «անմեղ մեղավորներով»: Բայց այս բոլորը դեռ նախերգանքն էր: «Քրիստոնյա եվրոպայի» աչքերի առաջ, նրա լուռ համաձայնությամբ արյունախում Աբդուլ Համիդը գրոհի անցավ, ծայր առան հայկական բեկորների զանգվածային ջարդերը:

1894-1896 թվականներին հայկական ջարդեր կազմակերպեց Աբդուլ Համիդ սուլթանը:

Մեր մանրակրկիտ հաշվառումները, ձեռքի տակ ունեցած բազմաբնույթ ու իրար լրացնող վավերագրերը, հայկական, հատկապես օտար աղբյուրները կասկած չեն թողնում, որ **Ստամբուլում** 90-ական թվականներին **ոչնչացվել են** շուրջ **20 հազար հայեր**: Հայազրկվել են քաղաքամերձ ամբողջական թաղամասեր, փակվել են 15-ից ավելի դպրոցներ, պարբերականներ, կամավոր կամ բռնի վտարանդվել են հարյուրների հասնող մտավորականներ, քաղաքական գործիչներ, պետական պաշտոնյա այրեր: Իզուր չէր, որ դարավերջի տասնամյակը և՛ թուրքիայի, և՛ համաշխարհային պատմության մեջ մտավ իբրև **«զուլումի»** տասնամյակ, որը զուլում էր ոչ միայն մայրաքաղաքի, այլև **ընդհանուր արևմտահայության համար: Բերենք մի քանի փաստեր ևս:**

1894-1896 թթ. հայերի զանգվածային կոտորածների զոհերի թիվը հաշվում են երեք հարյուր հազարից **մինչև կես միլիոնի**: Այս թվի մեջ, անշուշտ, մտցնում են հարյուր հազարի հասնող, բռնությամբ մահմեդականություն ընդունողներին: Յուրի Վեսելովսկին գրում էր, որ «Այդ արյունոտ դեպքերի կազմակերպիչների իսկապես ղեկավարող ցանկությունն է՝ **եթե այժմ հնարավոր չէ ամբողջովին ոչնչացնել հայկական տարրը, այնուամենայնիվ, որքան հնարավոր է՝ այն պետք է կրճատել**»:

¹ Эмил Диллон, Положение дел в Турецкой Армении (Положение армян в Турции), стр. 329. Տես նաև Հայկ Ղազարյան, նշված աշխատությունը, էջ 402-403:

Բեյրութում լույս տեսած «Յեղասպան թուրքը» ծանրակշիռ և փաստառատ աշխատության էջերում կարդում ենք. «Սուլթան Համիդի երեսուներեք տարվա բռնապետության շրջանին՝ հայ ազգը ճնշելու և հետզհետե բնաջնջելու համար, **կազմված էին թվով 94 «համիդիե» կոչված քրտական գունդեր (ալայ): Անոնց հետ թուրք խուժանի և թուրք զինվորներու գործակցությամբ տեղի ունեցած էին 1894-1896 թթ. ջարդերը, ուր հայերուն կորուստը եղած էր 300 000 և մոտ»:**

1909 թ. ապրիլ ամսին Ադանայում և ողջ Կիլիկիայով մեկ տեղի էին ունեցել անպաշտպան, անզեն ու անմեղ հայ խաղաղ բնակչության նախօրոք պլանավորված, զանգվածային ջարդեր: Այդ կոտորածներն իրենց դաժանությամբ և գործադրվելու մեթոդներով նախադեպը չունեին ոչ միայն բարբարոսական թուրքիայի, այլև համաշխարհային պատմության մեջ: Ադանայի եղեռնին չափազանց պակասեցված հաշիվներով զոհվեցին 30 հազար հայեր, տնտեսական կորուստներին չափ չկար: Ոմանց մոտավոր հաշվարկներով՝ հայերը կորցրեցին շուրջ 100 միլիոն թուրքական ոսկու արժողությամբ շարժական և անշարժ գույք:

Բնակչության նկատմամբ կիրառվեցին անչափ դաժան մեթոդներ: Փաստորեն **բնաջնջեցին** ազգի մեկ ամբողջական հատվածը, տարագրեցին հազարավոր երեխաներ՝ անչափահաս տղա, թե աղջիկ: Դրանց կրոնափոխեցին, իսլամացրեցին և իբրև ստրուկներ աճուրդով վաճառեցին շուկաներում: Կանանց հետ վարվեցին անմարդկային ձևով: Մեկ խոսքով՝ կատարվել էր ցեղասպանություն, որը նախադրում էր Մեծ եղեռնի:

Առաջին աշխարհամարտի տարիներին կատարված ողբերգությունը՝ **Մեծ եղեռնը**, սխեմատիկ է ներկայացված «տեղեկանքում»: Հեղինակները մատնանշում էին, վկայակոչում և խորհուրդ էին տալիս այդ մասին իմանալու համար կարդալ **անգլիացիներ Ջոն Բրայսի, Լյուդ Ջորջի, Ուինստոն Չերչիլի աշխատությունները, Ֆրանսիացիներ Ժակ դը Մորգանի, Անատոլի Ֆրանսի հուշերը, Ամերիկայի դեսպան Հենրի Մորգենթաուի նամակները, գերմանացիներ Յոհանես Լեփսիուսի գրական ժառանգությունը, նորվեգերեն և անգլերեն Ֆրիտյոֆ Լանսենի ողբասացությունը:**

Եզրակացություն. երիտթուրքերը 1915-1918 թվականներին մորթեցին **մեկևկես միլիոն** անպաշտպան արևմտահայերի, բռնազավթելով տիրացան, սեփականացրեցին **325 000 քառ. կմ Արևմտյան Հայաստանի և Հայկական Կիլիկիայի տարածքը:**

Երիտթուրքերի կիրառած սպանության ձևերի և մեթոդների մասին գաղափար կազմելու համար մեջբերենք **միայն մեկ քաղվածք**, որը ներկայացնում է Երզնկայից 1915 թ., հունիսի 8-10-ը կատարված բռնազաղթը: Այս տողերի հեղինակը գերմանացի Հայնրիխ Ֆիրբյուխերն է: Նա գրում է.

«Հայերի հոծ, անվերջանալի խմբերը հունիսի 8-ին, 9-ին և 10-ին դուրս եկան Երզնկայից: Նրանց ուղեկցում էր զինվորական պահակախումբը, որ մինչև տեղ հասնելը պիտի ապահովեր հետիոտներից և մոտ հարյուր եզան սայլից կազմված քարավանի անվտանգությունը: Բռնազաղթածներին քշեցին Քեմախ՝ հաջորդ գավառի կենտրոնը, բայց Եփրատի հովիտով անցած հարյուր-հազարավոր հայերից միայն մի փոքրաթիվ խումբ վերջնական հանգրվան հասավ: **Անդնդախոր կիրճում թուրք զինվորներն ու արյունարբու քրդերը շրջակա լեռներից խուժեցին, հարձակվեցին անպաշտպան գաղթականների վրա, արյան անհազ ծարավով կողոպտեցին, կոտորեցին նրանց: Ջարդարարները խելագար ոռնոցներով անդնդախոր կիրճն էին չարտում դիակներն ու մահամերձների մարմինները: Ջախջախվող ոսկորների ծարձատյունն անընդհատ արձագանքում էր ձորի նեղ պատերի մեջ, խառնվում վերևից եկող հոգեվարքների հուսահատ ծիչերին:**

Ճողղների աչքի առաջ զավակներին ու մերձավորներին բզկտում, կտոր-կտոր էին անում, արյունաշաղախ մսագոհերը խփում սուրսայր ժայռերին: Դժոխսին այդ տեսարանից իրենց կորցրած մայրերն ու կանայք երեխաների, ամուսինների ետևից նետվում էին մահվան խորխորատները, ոմանք հուսահատ ծունկ էին չորում արյունոտ ձեռքերով դահիճների առաջ, խնդրում շուտ սպանել իրենց: Կային նաև այնպիսիները, որոնք գութ էին աղերսում կամ իրենց ձեռքով զավակներին գետը նետում, որի ժայռոտ ափերին դիակներն ամբարտակներ էին գոյացրել: Ցած ընկնող անկենդան մարմիններից ալիքներն անընդհատ ձողփում էին: Եվ այդ դժոխսային սպանող, մոլագար նախճիրը ոչ թե մի երկու ժամ, անընդմեջ երեք օր շարունակվեց: Մարդկանց երկար տանջում ու մորթում էին, արյան առվակները ժայռերի արանքով դանդաղ հոսում էին ներքև, խառնվում գետի բուռն հորձանքին:

Երեք օր... Եվ արևը չէր խավարում, մոլեգնած հողմը չէր շրջում ստամբուլյան մերկ պարտեզների շենշող սեղանները, որոնց շուրջ գերմանացի ու թուրք դաշնակիցները բաժակ բաժակի էին խփում: **Մորթվող երեխաների աղիողորմ ծիչերը նույնիսկ արևելյան գայթակղիչ պատկերները չէին ցրում, որ սրճարանների մշտական հաճախորդների երևակայության մեջ ուրվագծում էին ոգելից ըմպելիքների գոլորշիները:** Մի՞թե գերմանացի ոչ մի պետական գործիչ գիշերը չգարթենց խղճի խայթից, որպեսզի բոսֆորյան պաշտոնակիցների դեմքին գոռար, որ նրանք շղթայվելու արժանի դևեր են: Մերոնք այդ ամենին այնքա՛ն անլուրջ էին վերաբերվում...»¹:

Ողբախառը նման տողերի հրապարակումից հետո պատվիրակությունը խաղաղության կոնֆերանսին ներկայացնում է իր պահանջները:

Երրորդը. Որպեսզի հարազատ մնանք բնագրին, մեջբերենք **Նուրար փաշայի և Ավետիս Ահարոնյանի** դիմում-պահանջարկը Փարիզի խաղաղության կոնֆերանսից: Ահա այն. «**ՎԵՐՈՅԻՇԵԱԼ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ, ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՔ Է ԿԱԶՄԻ ՀԵՏԵՎԵԱԼ ՀԱՅՎԱԿԱՆ ՇՐՁԱՆՆԵՐԻՑ.**

1. ՎԱՆԻ, ԲԻԹԼԻՍԻ, ԴԻԱՐԲԵԻՐԻ, ԽԱՐԲԵՐԴԻ, ՍԸԻԱԶԻ, ԷՐԶՐՈՒՄԻ ԵՎ ՏՐԱՊԻՉՈՆԻ ԵՕԹ ՎԻԼԱՅԵԹՆԵՐԸ (ՀԱՄԱՁԱՅՆ 1914 Թ. ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԱԿՏԻ), ԴՈՒՐՍ ԶԳԵԼՈՎ ՏԻԳՐԻՍԻՑ ՀԱՐԱԲ ԵՎ ՕՐԴՈՒ-ՍԸԻԱԶ ԳԾԻՑ ԱՐԵՎՍՈՒՏՔ ԳՆՏԻԱԾ ՇՐՁԱՆՆԵՐԸ:

2. ԿԻԼԻԿԵԱՆ ԶՈՐՍ ՍԱՆՁԱԿՆԵՐԸ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՄԱՐԱԸ, ԽՈԶԱՆ (ՍԻՍ), ՋԵՔԷԼ-ԲԷՐԷԹ ԵՎ ԱՂՆԱՎ՝ ԱԼԷՔՍԱՆԴՐԵՏՏԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ:

3. ԿՈՎԱՍՄԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍԲՈՂՋ ՏԵՐՐԻՏՈՐԻԱՆ, ՈՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է. ԵՐԵՎԱՆԻ ԱՍԲՈՂՋ ԳԱՎԱՌԸ, ՆԱԽԿԻՆ ԹԻՖԼԻՍԻ ՆԱԳԱՆԳԻ ՀԱՐԱԲԱՅԻՆ ՄԱՍԸ, ԳԱՆՁԱԿԻ ՆԱԳԱՆԳԻ ՀԱՐԱԲ-ԱՐԵՎՍԵԱՆ ՄԱՍԸ. ԴԱՐՍԻ ԳԱՎԱՌԸ (ԲԱՑԻ ԱՐԴԱՀԱՆԻՑ ՀԻՄՍԻՍ ԳՆՏԻԱԾ ՇՐՁԱՆԻՑ): (Տես քարտեզը):

Գալով սահմաններին, պետք է յիշեցնենք, որ երբ Աբդուլ Համիդը գծել տուեց վիլայեթների վարչական սահմանները, կարգադրեց, որ կամայականօրէն նրանցից իւրաքանչիւրին կցւեն ոչ հայկական շրջաններ, այնպէս որ մահմեդականները մեծամասնութիւն կազմեն: Այդ նոյն դիտաւորութեամբ՝ նա հայաբնակ շրջաններում հաստատեց չէրքեզների և Ռուսաստանից կամ Բալկաններից տեղափոխւած այլ մահմեդականների գաղութներ: Ուստի հարկ կը լինի սահմանների ընդհանուր վերաքննութիւն կատարել»²:

¹ Հայնրիխ Ֆիրբյուխեր, Հայաստան 1915 (գերմաներենից թարգմանեց Գրիգոր Ջանիկյանը), Երևան, 1995, էջ 46-47:

² «Հայկական հարցը խաղաղության կոնֆերանսի առաջ», Թիֆլիս, 1919, էջ 7-8:

Չորրորդը. Հայկական պատվիրակությունը խիստ մտահոգված էր, որ նորաստեղծ Հայաստան պետությունը դեպի ծով ելք պետք է ունենար: Նրանք այդ մասին վաղօրոք մտածել էին, բանակցություններ վարել հույների հետ, նրանց համաձայնությունն ստանալով՝ առաջարկում էին այդ ելքը դարձնել Տրապիզոնի վրայով դեպի Սև ծով:

Հինգերորդը. Նրանք կասկած չուներին, որ Կիլիկիան անպայման կմտնի Հայաստանի կազմում: «**Ինչ վերաբերում է Կիլիկիային, - գրում են պատվիրակները, - կամ Փոքր Հայքին, կարիք կայ ասելու, որ նա էապես հայկական է և միշտ էլ կազմել է Հայաստանի մասը: Նա մօտ չորս դար եղել է հայկական վերջին թագաւորութեան բնակավայրը՝ մինչև այն օրը, երբ յաղթելով արաբներից՝ նրա վերջին թագաւոր Լեւոն V գերի տարւեց Եգիպտոս, և ապա ազատւելով՝ իր վերջին օրերն ապրեց Պարիզում: Նա թաղւել է Սեն-Ղընիի մայր տաճարում, ուր նրա շիրիմը կայ մինչև այսօր էլ:**

Ձեյթունի շրջանը, որի լեռնականները, կռուղ ու ազատասեր ցեղից, շարունակ բուռն կերպով յարած են եղել իրենց ազգային իրաւունքներին, միշտ էլ վայելել է կեսանկախութիւն: Աւելորդ չէ յիշել նաև, որ հնուց ի վեր, ինչպէս այսօր էլ, Սիսի կաթողիկոսի, Կիլիկիայի կրօնական գերագոյն պետի, աթոռանիստ քաղաքն է եղել Սիսը, Կիլիկիայի մայրաքաղաքը»¹:

Վեցերորդը. Այդ փաստերի ներկայացումից հետո պատվիրակությունն իր պահանջներն ամփոփում էր ներքոհիշյալ հինգ կետերի մեջ:

Նրանք գրում են. **իրրև հաղթող պետություն պահանջում ենք.**

1. Ճանաչել Հայկական անկախ պետությունը, որի կազմում պետք է լինեն **հայկական յոթ վիլայեթները, Կիլիկիան, Կովկասի Հայկական Հանրապետության միացմամբ:**

2. Դաշնակից տերությունների կոմիսարների մասնակցությամբ կարողանալ գծագրել ջրբաժան սահմանները:

3. **Հայկական նոր պետությունը պետք է դրվի դաշնակից որևէ պետության հովանու ներքո: Հաճելի կլինի, եթե այդ պետությունը լիներ Ամերիկայի Միացյալ Նահանգները:**

4. Հայկական մանդատ պետք է ստեղծվի, որը ստանձնող մեծ տերությունն այն պետք է պահի **քսան տարի** ժամկետով:

5. Խաղաղության կոնֆերանսը պետք է որոշում կայացնի Հայաստանին տրվելիք գումարի մասին, որով պետք է վերականգնվի պատերազմի և ցեղասպանության պատճառով ավերված երկիրը:

6. Քրիստոնեական հավատքին պետք է վերադարձնել բռնությամբ իսլամացած կանանց, աղջիկներին և երեխաներին: Հատկապես թուրքական հարեմներից Քրիստոսի գիրկը վերադարձնել հայ կանանց:

Իրրև եզրափակում, պատվիրակությունն այդ փաստաթուղթն ամփոփում էր այսպես. «Հայերը լիովին ապավինում են հաշտութեան կոնֆերանսի արդարադատութեան և չեն կասկածում, որ նա չի նւիրագործել իրենց այդ ազգային պահանջների ծրագիրը: Պետութիւնները, որոնք այժմ ճանաչում են հայերին, որոնց ազգային զգացումը, կենսունակութիւնն ու ռազմական առաքինութիւնները հզօր կերպով արտայայտւեցին այս պատերազմի ընթացքին, կարող են վստահել նրանց: Պետութիւնները պետք է հաշի առնեն այն էներգիան, աշխատասիրութիւնն ու ընդունակութիւնները՝ մարդկային գործունեութեան բոլոր արտայայտութիւններում, որ ունի

¹ «Հայկական հարցը խաղաղության կոնֆերանսի առաջ», Թիֆլիս, 1919, էջ 8:

նշանակելիօրէն բազմածնունդ, բարձրագոյն կուլտուրային և պրոգրեսիւն պատրաստւած հայ ցեղը:

Նրանք կարող են վստահ լինել, որ Հայաստանը, այդպիսի տարրերով՝ խաղաղութեան, արդարութեան, ազատութեան ռեժիմի տակ, շնորհիւ ազգերի դաշնակցութեան հովանաւորութեան օժանդակութեան, շուտով կը դառնայ ծաղկած ու բարգաւաճ մի պետութիւն և արևելքում կը լինի խաղաղութեան ու քաղաքակրթութեան ամենակարևոր գործօններից մէկը:

Հայկական հարցը միայն տեղական ու ազգային խնդիր չէ. նա շահագրգռում է Եւրոպայի խաղաղութիւնը և նրա վճռելուց է կախւած Մերձաւոր Արևելքի խաղաղեցումը, պրոգրեսն ու բարգաւաճումը:

Պարիզ, 12 փետր. 1919

Նախագահ Հայկական Ազգ. Պատւիրակութեան՝ Պողոս Նուբար

Նախագահ հաշտութեան կոնֆերանսին

Հայկական Հանրապետութեան Պատւիրակութեան՝ Ա. Ահարոնեան»¹:

Փաստաթուղթն ունի **երկրորդ**՝ եզրափակիչ մաս, որն ամփոփում է հայ ժողովրդի կյանքին բախտորոշ **երեք** կարևոր խնդիրներ: Այնտեղ.

ա) Ընդարձակ էջեր են նվիրված Կիլիկիայի անցյալի և առկա պատմությանը, փորձ է արված գիտականորեն հիմնավորել նրա խիստ անհրաժեշտությունը՝ իր իսկական տիրոջը՝ հայ ժողովրդին: Ինչո՞ւ, ի՞նչ անհրաժեշտություն կար **ապացուցել մի իրողություն, որն ապացուցելու կարիք չուներ:**

Դրա կարիքը զգում էին պատվիրակության ղեկավարները, որովհետև վավերական աղբյուրներից տեղեկություններ էին քաղել, թե հարևան Սիրիան ամեն ինչ անում էր՝ տիրանալու բնության այդ հրաշքին՝ Կիլիկիա ընդարձակ երկրամասին: Սիրիացիները ներքին կապերի մեջ էին Ֆրանսիայի, հատկապես ժորժ Կլեմանսոյի հետ և խոստում էին պոկել, իրրև փարիզյան մանդատատեր, ողջ Կիլիկիան պետք է բռնակցվեր Սիրիային:

Պողոս Նուբար փաշան և այս խնդրում նրան թև ու թիկունք դարձած Ավետիս Ահարոնյանը հիշյալ տեղեկանքում ամփոփված փաստերով ջանում էին նախ իրենց անհամաձայնությունը հայտնել հայադավ այդ գործարքի դեմ, ապա ապացուցել, վերաապացուցել, որ **Կիլիկիան դա հայկական է. Հայաստանի պատմական** հատվածն է և պետք է անպայման մնա նորաստեղծ մեծ Հայաստան տերության կազմում:

բ) Խաղաղության կոնֆերանսականների շարքերում կային տարակուսողներ, թերիավատներ հայ ժողովրդի ցեղասպանության ենթարկվածների թվաքանակի վերաբերյալ: Իրոք, **անհավատալի էր**, բացարձակ զարմանալի, թե ինչպե՞ս կարող էր մի պետություն այդքան կարճ միջոցում ամենաբարբարոսական մեթոդներով **սպանել, կրոնափոխել, աքսորել իր սեփական** ժողովրդի ամենաընդունակ, ամենազարգացած հատվածին:

Նախ թուրքերի կատարած գեոցիդն ապացուցելու, ապա եվրոպացի տարակուսող դիվանագետների կասկածները փարատելու կրկնակի մտահոգացմամբ պատվիրակները վերահրատարակել էին պաշտոնական տվյալներ արևմտահայերի վիճակագրության վերաբերյալ:

Նրանք մեջբերել էին դեմոգրաֆիկ բազմաթիվ տվյալներ, որոնց մեջ ամենահավաստին 1912 թ. 4. Պոլսի հայոց պատրիարքարանի կատարած մարդահամարն էր: Ճիշտ է, սա հայերն էին արել, բայց լիարժեք չէր, քանի որ թուրքերը թուրք էին կանգնել այդ պրոցեսին:

¹ «Հայկական հարցը խաղաղության կոնֆերանսի առաջ», Թիֆլիս, 1919, էջ 11-12:

Ըստ այդ մարդահամարի.

1. Արևմտյան Հայաստանը պատերազմից քիչ առաջ ունեցել էր	1.403.000 հայ բնակիչ
2. Ասիական թուրքիան՝	440.000 հայ
3. 4. Պոլիսն ու Եվրոպական թուրքիան՝	183.000 հայ
Ընդամենը	2.026.000

Այս թվերով պատվիրակությունը հատուցում էր պահանջում, այս թվերով պատրիարքարանն ապացուցում էր, թե սրանք երեկ կային, այսօր չկան: Ուրեմն ցեղասպանությունն անժխտելի էր:

գ) Հայ ժողովուրդը 1915-1919 թթ., բարոյականից զատ, կրել է նաև նյութական մեծ կորուստներ: Հայ ժողովրդի կրած նյութական վնասների մոտավոր հաշվեկշիռը կազմվել է Հայ ազգային պատվիրակության (Ճախագահ՝ **Պողոս Նուբար**) և Հայաստանի Հանրապետության պատվիրակության (Ճախագահ՝ **Ա. Ահարոնյան**) կողմից և համատեղ ստորագրությամբ որպես հուշագիր ներկայացվել 1919 թ. Փարիզում հրավիրված խաղաղության վեհաժողովին:

«Մոտավոր հաշվարկների համաձայն՝ Առաջին համաշխարհային պատերազմի և ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանում և Հայաստանի առաջին հանրապետության տարածքում 1914-1919 թթ. ընթացքում հայ ժողովրդի կրած նյութական վնասների հաշվեկշիռը կազմում է 19 միլիարդ 130 միլիոն 932 հազար ֆրանկ (1919 թ. Ֆրանսիայում գործող զենքի համապատասխան)»: Եթե սրան ավելացնենք, և անպայման պիտի ավելացնենք, տոկոսները, այն էլ՝ միջազգային տոկոսադրույքով, ապա այդ գումարը **կկազմի հարյուր միլիարդ ԱՄՆ դոլար:**

Թուրքիան հասկանում է, որ եղեռնի ճանաչումից հետո համաշխարհային հանրության բարոյական, ինչու չէ, նաև ֆիզիկական ճնշման տակ հարկադրված կլինի ժամանակի ընթացքում վճարել այդ գումարներն այնպես, ինչպես Գերմանիան վճարում է հրեաներին: Ահա այս պարագան է թուրքիային վախենալու առիթ տալիս, որպեսզի նա հրաժարվի ցեղասպանության ճանաչումից: **Սակայն միանշանակ է, որ այսօր կամ վաղը կճանաչվի ցեղասպանության փաստը, և հայ ժողովուրդն իր դահիճների ժառանգներից կստանա թափած սեփական արյան գինը, կորցրած ունեցվածքի արժեքը, հատկապես՝ սրբազան Հայրենիքը: Մենք դրանում չենք կասկածում:**

Այսպիսով, Փարիզ ժամանած հայկական երկու պատվիրակության ղեկավարները (1919 թ. արդեն միավորված) փաստերով զինված դիվանագիտական մրցամարտի էին դուրս եկել, կրկնում ենք, վառ հույսերով, որ այս անգամ հուսախաբ չեն լինի և կստանան **ազատ, անկախ, մեծ Հայաստան:**

* * *

Հանրահայտ է, որ պատմությունը մարդկային հիշողությունն է, ասել է թե՛ նրա գրավոր կենսագրությունը: Յուրաքանչյուր անհատ, ժողովուրդ, նույնիսկ պետություն, ամեն վայրկյան սևագրելով այդ կենսագրությունը, երբ հետադարձ հայացքով փորձում է այն մաքրագրել, տեսնում է, որ այլևս անհնարին է: Ստացվում է այնպես, որ իրար հերթափոխելիս սերունդները հաջորդներին հանձնում են կատարված գործերի **սևագրությունը** միայն: Թերևս այդ պարագան է հարկադրում ամեն մի սերնդի, որպեսզի իր կյանքը սևագրի այնպես, որ **հետո կարդալիս ամոթի կամ ավստասանքի զգացում չապրի:** Եթե ընդհանրացնելու լինենք ասվածը, ապա կարձանա-

գրենք, որ սևագրի գիրքը հնարավոր է մաքրագրել, լավացնել, խմբագրելով փոփոխության ենթարկել, իսկ ապրած կյանքի պատմությունը հավերժ մնում է անփոփոխ, այսինքն՝ սևագիր:

Վերոհիշյալ բնութագրությունը թերևս ամենից շատ վերաբերում էր կես հազարամյակ առաջ Արևելքի աշխարհակալ զույգ բռնապետությունների միջև բաժանբաժան արված Հայաստան աշխարհին, որն իր փոքրաթիվ զինուժերով, միայնակ, օտարների դաժան լուծը թոթափել չէր կարողանում: Անհրաժեշտ էր քրիստոնյա որևէ այլ պետության զորակցություն, որպեսզի նորից վերընձյուղվեր **միասնական, անկախ, ազատ պետություն: Այդ պետությունը քրիստոնյա Ռուսաստանն էր:**

XVII դարի երկրորդ կեսից սկսվում են քաղաքական հարաբերությունները, որոնց նպատակն էր Ռուսաստանի օգնությամբ ազատագրել Հայաստանը թուրքական և պարսկական լծից: 1670-ական թթ. **Էջմիածնի կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին դիմել է Ալեքսեյ Միխայլովիչ ցարին** և խնդրել, որ նա դիվանագիտական ճանապարհով ազդի պարսից շահի վրա, որպեսզի վերջինս թեթևացնի հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող ճնշումները: Այդ նույն ժամանակ նման մի դիմում Ալեքսեյ Միխայլովիչին ուղարկել է նաև Գանձասարի (Ղարաբաղի) Պետրոս կաթողիկոսը՝ խնդրելով, որ ցարը պաշտպան կանգնի հայ ժողովրդին և «չթողնի նրան առանց ապաքինման»: Որոշակի քաղաքական բնույթ են ունեցել նաև Նոր Ջուղայի առևտրական ընկերության ներկայացուցիչ **Գրիգոր Լուսիկովի (Լուսիկենց)** 1672-1676 թվականներին Մոսկվայում ռուսական արքունիքի հետ վարած բանակցությունները, որոնք վերաբերում էին հակաթուրքական կռաւիցիա ստեղծելու հարցին: Այդ առևտրական-դիվանագետը՝ օգտվելով առիթից, ռուսական արքունիքի առաջ բարձրացրել է նաև հայ ժողովրդի ազատագրության խնդիրը:

Հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների ծավալման ու զարգացման մեջ XVIII դարի սկզբին խոշոր դեր խաղաց հայ ազատագրական շարժման ականավոր ներկայացուցիչ **Խորայե Արին**, որի դիվանագիտական առաքելությունները բաղձալի հաջողություններով շարունակվեցին:

XVIII դարի երկրորդ կեսին նորից լայնորեն արժարծվեց Հայաստանի ազատագրության խնդիրը, մասնավորապես՝ Հնդկաստանի ու Ռուսաստանի հայ գաղթօջախներում, ուր հանդես եկան մի շարք քաղաքական գործիչներ՝ **Չովսեփ Էմին, Շահամիր Շահամիրյան, Հովհաննես Լազարյան, Հովսեփ Արղության** և ուրիշներ: **Դիվանագիտական հարաբերությունների մեջ մտնելով ռուսական արքունիքի և վրաց Չերակլ թագավորի հետ, նրանք եռանդուն ջանքեր գործադրեցին հայ ժողովրդի ազատագրության գործը իրականացնելու համար:**

Ուշագրավ է հատկապես Մադրասի հայկական գաղթօջախի դերը: Այնտեղ վաճառական **Շահամիր Շահամիրյանի** գլխավորությամբ կազմակերպվում է հայրենասերների խմբակ, որն արժարծում է հայ ժողովրդի ազատագրության հարցը, պրոպագանդում այն, **բանակցություններ** վարում վրացական և ռուսական արքունիքների հետ և այլն: Մադրասի այդ խմբակն ունեցել է ռուսական կողմնորոշում և հայ ժողովրդի ազատագրության գործը կապել է Ռուսաստանի օգնության հետ: Նույն կերպ էին մտածում նաև Ռուսաստանում բնակվող հայ քաղաքական գործիչները:

XVIII դարի երկրորդ կեսին Հայաստանի ազատագրության հարցն առաջինը դրեց Էջմիածնի կաթողիկոս **Հակոբ Շամախեցին:** Ռուսական արքունիքին 1760 թ. ուղղված մի խնդրագրում, որը Մոսկվա էր ուղարկել վրաց Թեմնուրազ թագավորի միջոցով, Շամախեցին խնդրում էր ցարից, որ նա հոգատար լինի հայ և վրաց ժողովուրդների նկատմամբ:

¹ «Հայ ժողովրդի պատմություն», խմբագրությամբ **Ա. Գ. Լեռնիսյանի**, Երևան, 1972, էջ 256, 278-279:

Հայ ժողովրդի ազատագրության հարցով 1760-ական թթ. սկզբներին Ռուսաստան և Անդրկովկաս է գալիս ականավոր քաղաքական գործիչ **Յոզեֆ Էմինգ**, որը **Յոզեֆ Կալկաթա քաղաքի հայ վաճառականի զավակ էր**: Նա բանակցություններ է վարում ռուսական և վրացական արքունիքներում, բազմաթիվ տեսակցություններ է ունենում մասնավորապես **վրաց Յերակլ թագավորի հետ**: Էմինգ ծրագրում էր հայերից և վրացիներից եվրոպական տիպի հզոր մի բանակ կազմակերպել և նրա միջոցով, ռուսների օգնությամբ, ազատագրել հայ և վրաց ժողովուրդներին թուրքական ու պարսկական տիրապետությունից: Այդ ծրագիրը, սակայն, ևս չիրագործվեց¹:

XIX հարյուրամյակի վերջին երեսնամյակն առլեցուն էր այնպիսի դաժան փորձություններով, որոնք մեկը մյուսին հաջորդելով օսմանյան լծի տակ գտնվող արևմտահայության կյանքը դժոխքի էին վերածել: Նորից ռուս-թուրքական հերթական **տասներորդ** պատերազմ, արյունահեղություն, ջարդեր, **ցեղասպանություն** և այս բոլորի ամփոփագիր՝ **դիվանագիտական մուրհկություն**, թերևս փրկության հույսի և լույսի նշանավոր միակ լուսամուտը:

Դարերի մղձավանջի միջնորմներով դեգերող, մերթ գետնվելով, մերթ ըմբոստ խոյանքով ընդվզելով, համբերության բաժակը լցված արևմտահայությունը գուրգուրանքով էր փայփայել Ռուսաստանի՝ իր հայրենի երկիրը մտնելու, նրա օգնությամբ ազատագրվելու հույսերը: Այժմ իրողության էին վերածվել ժողովրդի այդ վաղեմի բաղձանքները, այժմ հույսեր էին արթնացել Հայաստանի ինքնավարության ստեղծման համար, այժմ ստրկացած, ռայա, զիմմի, գյավուր անվանված հային, թեկուզ իրենց քաղաքականության մեջ խարդավանքներով զոհելու հեռամետ դիտավորությամբ, երկուստեք խոստումներ էին շռայլում: Առաջին անգամ միջազգային դիվանագիտական վավերագրերում հիշատակում էին նրա անունը, գուցե արտաքինապես, բայց և այնպես ընդունում նրա ցասկոտ բողոքը, ունկնդրում նրա ներկայացուցիչներին:

Տվյալ պահին լռելը, ազատագրության դարավոր մտապահումները ծրագրերի չվերածելն ու եվրոպային, հատկապես Ռուսաստանին չներկայացնելն այսօրվա ակնոցով դիտարկելիս գուցե կգնահատվեր իբրև ազգային դավաճանություն կամ, լավագույն դեպքում, անթույլատրելի անտարբերություն: **Ուրեմն, խորհուրդ տային թե չտային, դիվանագիտական խարդավանքներ պատրաստեին թե** չպատրաստեին, միևնույն է, հայ գործիչները կղիմեին, կխնդրեին, կբողոքեին խեղդվող մարդու պես՝ ամեն ինչից փրկություն ստանալու հույսով, կօգտագործեին բոլոր հնարավոր ու անհնարին միջոցները: Եվ օգտագործեցին հայկական պատվիրակները, նրանց ուղղություն տվող, զորավիզ կանգնող հայկական համայնքները Հայաստանի երկու հատվածներում, բոլոր աշխարհամասերի հայկական գաղութներում: Գուցե գործելածևի մեջ խմբագրումներ լինեին, այս դեպքում էլ՝ նպատակը արդարացում է միջոցները, և դժվար է ասել, թե որի առաջադրած ուղեգիծն այսօր ճիշտ կհամարվեր:

Կարծես վերոհիշյալ քննադատներին է պատասխանում անվանի հայագետ Ն. Յա. Մառը՝ 1906 թ. գրելով. «Հայկական հարցը, հարկավ, ավելի հանրահայտ էր, հայկական կյանքի նորից գործի գցած մակույկը, մեծ տերությունների միջազգային քաղաքականության կամակոր ալիքների ազդեցության ներքո, մերթ վեր էր խոյանում համաշխարհային հետաքրքրության գլխապտույտ մակարդակը, մերթ շարժվում համընդհանուր անտարբերության անդունդը, և այնժամ մակույկավարները, հանձինս հայ եկեղեցու, որ երկար ժամանակ հայ

ժողովրդի միակ ներկայացուցիչն էր, և հանձինս մտավորականության, համառորեն և բարձրաձայն դիմում էին մարդկությանը՝ արդարության խնդրանքով: Բայց մեղքը ոչ թե մակույկավարների, այլ անվերանալի պատմական փաստի, ստեղծագործական հզորությունից դեռևս չզրկված հայ ժողովրդի զարթոնքի և նրա ազգային ինքնագիտակցության աճման ու ընդլայնման մեջ էր (ընդգծումները մերն են - Յ.Ղ.)»¹: Ինչպես ասում են՝ սրանից դիպուկ, համոզիչ պատասխան չեն գտնի նրանք, ովքեր փորձում են Թուրքիայի ու Անգլիայի փոխարեն կամ նրանց հետ մեկտեղ որոշ անորոշ մեղադրանքներ շարտել հայ գործիչների հասցեին, հետադարձ «մարգարեությամբ» քննության առնել, հանիրավի ստվերի տակ դնել նրանց հայրենամվեր գործողությունները:

Հայկական պատվիրակության Բեռլին մեկնելու և ինքնավարության պահանջի ձևակերպման խնդիրը քննարկել են նաև Միմաս Նուրիխանն ու Վենետիկի Մխիթարյանները, ջանացել ցույց տալ այն տարակարծությունները, որոնք գոյություն ունեին հայ հասարակական գործիչների մեջ դեսպանաժողովի նախօրյակին, հատկապես դեպի Եվրոպա ու Անգլիա բռնելիք ընթացքի մեջ: Մ. Նուրիխանը, հենվելով 1907 թ. «Մուրճ» հանդեսում տպագրված մի ընդարձակ հոդվածաշարի ընձեռած փաստերի և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի դիվանից ստացած վավերագրերի վրա, գրում է. «Հայրենասեր Ներսես իր մի քանի ազդեցիկ համախոհներով թև է առնում և հետևելով դիվանագիտության այն սկզբունքին, թե **ամեն միջոց ներելի է նպատակին հասնելու համար**, ծրագրում է Տաճկահայաստանի ինքնավարության հատկագիծը՝ Բեռլինի վեհաժողովին ներկայացնելու համար: Իսկ եթե մի կողմից պիտի վշտանան և խռովին տաճիկները, մյուս կողմից՝ զայրանան ու կատաղին ռուսները, դրա մասին հոգ չի անում Ներսես Վարժապետյանը, հույսը դնելով եվրոպական արիստոկրատիայի աջակցության վրա...»: Պատմական այս նշանավոր րոպեին է, որ հնչում է Կարապետ Փանոսյանի ձայնը **«Մանզումե էֆթյարի» և Ազգային ժողովի մեջ, ինչպես վիրավորված առյուծի մը մոնչյուն. «Ի՞նչ եք անում, ո՞ւր եք տանում ազգը, սևազուխ և ինքնակոչ դիվանագետներ»**²:

Եվրոպա ուղևորված հայկական պատվիրակության ղեկավար Մ. Խրիմյանի՝ Լոնդոնում ծավալած գործունեությունը, դրանից առաջ և դրանից հետո նրա գրվածքներում, նամակներում Մեծ Բրիտանիայի հասցեին արված դրական որոշ արտահայտությունները հիմք են ծառայել անվանի մտավորականի հակառակորդներին՝ Հայրիկի կողմնորոշումը բնորոշել իբրև անգլասերի: Անարդարացի են այդ գնահատականի հեղինակները: Անգլիայի մասին նրա հայտնած կարծիքները ժամանակի դեպքերի, կոնկրետ իրադարձությունների հարկադրության ծնունդ էին և ոչ հիմնավոր ուղեգիծ կամ կողմնորոշում: Այդ առումով Մ. Խրիմյանին դիպուկ է բնորոշել Ալ. Շիրվանզադեն, գրելով. **«Խրիմյանի համար չկար ո՛չ իշխան, ո՛չ ծառա, ո՛չ հարուստ, ոչ աղքատ, ամենքը միևնույն արժեքն ունեին նրա աչքերում: Այդ տեսակետից նա կատարյալ բանաստեղծ էր: Միայն մի բանի առաջ էր խոնարհվում նրա անկախ և հարուստ հոգին - ժողովրդի»**³:

Մ. Խրիմյանի ժամանակակից, կրտսեր գործընկեր, երկար ու դաժան տարիների Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանն իր **«Խոհ և խոսք»** աշխատության մեջ, որը հեղինակի ցանկությամբ **ետմահու** հրատարակություն էր, նրան բնութագրում է իբրև «սիրտ և զգացում», «խոհական զգուշավորություն, վարչական նրբու-

¹ *Н. Марр*, История Грузии (культурно-исторический набросок), СПб, 1906, стр. 47.

² *Միմաս Նուրիխան*, ժամանակակից պատմություն, 1868-1878, մասն Գ, Վենետիկ, 1907, էջ 612-613, տես նաև «Մուրճ», 1907, փետրվար, էջ 60:

³ «Ամենայն Հայոց Հայրիկ», հրատարակություն Համավասպուրականի հայրենակցական միության, Պոսթըն, 1957, էջ 84:

¹ «Հայ ժողովրդի պատմություն» Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, էջ 288-289:

թյուն, գործունեության ճարտարություն իրեն սեպհական չէին: Իր նշանաբանն ալ էր՝ *ինձ խորհելի չի*»: *Բոլոր պաշտոններ վարեց, եղավ ուսուցիչ, վարդապետ, հոգևոր առաջնորդ, վանահայր, պատրիարք, կաթողիկոս և «կըրնանք համարձակ ըսել՝ թե ոչ մեկուն մեջ նշանակալից հաջողություն չունեցավ, սակայն երբեք ընդհանուր համակրությունը և պաշտելիության հասնող հարգանքը չկորսնցուց: Այս էր Խրիմյանի բնավորության գաղտնիքը, յուր ժողովրդական վերաբերմունքը, յուր անկեղծ և անսեթևեթ խոսակցությունը, չնայելով որ կատարյալ աշուղ մըն էր, և յուր բոլոր աշխատասիրությունները այս ճյուղին կվերաբերեին, և ութսունն անցնելեն ետքն ալ տակավին բանաստեղծական քերթվածներ էին յուր ժամանակի զբաղումները»*¹:

Սան Ստեֆանոյից Բեռլին տանող ճանապարհին վանեցի հանճարել ու հայրենասեր Մ. Խրիմյանը, թևատակ առնելով *Մինաս Չերազին* և *Ստեփան Փափազյանին*, Գերմանիայի մայրաքաղաքում կատարյալ պարտություն կրեց: Պարտությունը դիվանագիտական էր, քանի որ լացով չես կարող շարժել շահամուլ եվրոպացիների գուրքը, դրա համար էլ վերադարձին հնչեցրեց *«թղթե շերեփն երկաթայնով փոխադրենելու կոչը»*:

Բեռլինի վեհաժողովի ստորագրած փաստաթղթի ձևակերպման արարողությունն այսպես բնութագրեց Մ. Սերոբյանը՝ գրելով. *«Անգլիան իրապես կսպաներ հայկական բարենորոգումների հարցը և լորդ Պիկոնսֆիլդ Պերլին կերթար անձամբ անոր թաղումը կատարելու»*² (ընդգծումները մերն են - Յ. Ղ.):

1894-1896 թթ. հայկական ջարդերի ժամանակ Անգլիան կրկին սկսեց խաղալ հայ ժողովրդի նյարդերի հետ և ակամայից առերես ցույց տալ, թե պաշտպանում է ջարդվող արևմտահայությանը: Իրականում նա նորից խարդախ քայլեր էր անում, ձգտում ամրանալ և՛ Կիպրոսում, և՛ հատկապես Եգիպտոսում, առաջնորդվելով վարչապետ Պալմերստոնի թևավոր այն արտահայտությամբ, թե. *«Անգլիան չունի մշտական բարեկամներ ու դաշնակիցներ, այլ ունի միայն մշտական շահ, որը պետք է բոլոր միջոցներով պաշտպանել»*³:

Մեծ Բրիտանիան հասավ իր նպատակին: Նա չեզոքացրեց Ռուսաստանի ազդեցությունն օսմանյան Թուրքիայում, սրեց ռուս-գերմանական հարաբերությունները, ամրապնդվեց ոչ միայն Եգիպտոսում, այլև իր ազդեցությունը տարածեց Արևմտյան Հայաստանի վրա: Այդ ամենը մարտելուց հետո, երբ հայկական պատվիրակությունը դիմեց Կոստանդնուպոլսում ֆիլանտրոպիստական, հայանպաստ ճառ արտասանած լորդ Դեֆֆերինին, ստացավ այսպիսի պատասխան. *«Անգլիան կարող է միայն նավատորմիդ ու օգնել, իսկ նրա նավատորմիդը Նոյի տապանը չէ, որ կարողանա կանգ առնել Արարատի վրա»*⁴ (ընդգծումները մերն են - Յ. Ղ.):

Փաստորեն Հայոց պատմության մեջ մեծ տերությունների, հատկապես Անգլիայի մեղքով ձևավորվեց մի ժամանակահատված, որը իրավամբ ստացավ *«գուլումի»* տասնամյակ անվանումը:

Հայկական զույգ պատվիրակությունների ոչ միայն բանիմաց ու քաղաքական լուրջ թրծվածք ունեցող գրեթե բոլոր անդամները, հանգամանորեն ժանոթանալով հայ դիվանագիտության անցյալին վերաբերող փաստերին ու փաստաթղթերին,

¹ *Մաղաքիա արքայիս. Օրմանեան*, Խոն և խոսք իր կեանքին վերջին շրջանին մեջ (ետմահու հրատարակություն), Երուսաղեմ, 1992, էջ 435:

² Մ. Սերոբյան, Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Գահիրե, 1948, էջ 283:

³ *A. C. Ерусалимский*, Внешняя политика и дипломатия германского империализма в конце XIX в., М.-Л., 1948, стр. 283.

⁴ *Е. К. Саркисян*, Политика Османского правительства в Западной Армении, Ереван, 1969, стр. 158, տես նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 283-284:

դրանցից հարկավոր եզրահանգումներ անելով՝ նաև պրակտիկ գործողություններով են մշակում իրենց ծրագրերը: Գրագրությունից զատ նրանք շրջեցին Փարիզի, Լոնդոնի, Յոնի դիվանագիտական ատյանները, հանդիպումներ ունեցան *Հինգ տերությունների* ղեկավարների (վարչապետների) հետ, լրացուցիչ բացատրություններ տվեցին նրանց և ջանացին հասնել բաղձալի նպատակին՝ *միացյալ, մեծ ու անկախ Հայաստանի ստեղծմանը*:

* * *

Առաջին աշխարհամարտի, նրան հաջորդող հնգամյակի միջազգային դիվանագիտության պատմությունն ի սկզբանե զարմանալիորեն եղել է դեպքերին ակամատես կամ մասնակից ժամանակի պետական ու քաղաքական գործիչների, դիվանագետների ուշադրության կիզակետում: Տարբեր հոսանքների պատկանող, տարբեր երկրների շահերն արտահայտող, երբեմն իրարամերժ հայեցակարգ զարգացնող, բայց գրագետ ու բանիմաց այդ սերունդն այնքան ընդգրկում էր, այնքան մարդաշատ, որ նրանց թողած գրական ու պատմագիտական սևեռուն հայացքից գրեթե ոչինչ չէր վրիպում:

Այդ աստեղաբույլի առաջնաշարքումն էր Անգլիայի վարչապետ *Դեվիդ Լլոյդ Ջորջը* (1869-1945), որի բեղուն ու շնորհալի գրչին են պատկանում այդ տարիների իրադրությունը ներկայացնող, խորաքնին, շատ դեպքերում սուբյեկտիվիզմի փոշիով ծածկված բազմաթիվ աշխատություններ: Չափազանց արժեքավոր նրա գործերի ցանկում կարևոր տեղ են գրավում *«Ճամարտությունը խաղաղության դաշնագրերում» խորագրված երկու հատորները*¹: Այդ աշխատությունն ամփոփում է նաև նրա այն ելույթները, որոնք ունեցել էր 1917-1922 թթ: *Անգլիայի վարչապետն այդ տարիներին հետևողականորեն զորավիզ էր կանգնում հայ ժողովրդին և ձգտում էր արդարամտորեն լուծել Հայկական հարցը*: Դժբախտաբար, հետագայում նա վերադիրքավորվեց, և հայկական հարցը կրկին ողջակիզվեց Մեծ Բրիտանիայի քաղաքական շահախնդրությունների զոհասեղանի վրա:

Հայկական հարցի պատմությանը բազմիցս անդրադարձել է բրիտանացի մյուս ժամանակակիցը՝ *Ուինստոն Լեոնարդ Սպենսեր Չերչիլը* (1874-1965), Մեծ Բրիտանիայի պահպանողական կուսակցության ղեկավարներից մեկը, որի դիրքորոշումը եղել է փոփոխական, ավելի կոնկրետ՝ հեղհեղուկ: Նա մերթ ամարգանքի սյունին է գամել թուրք ցեղասպաններին, մերթ զորավիզ է կանգնել նրանց՝ վերջիններիս ուղղելով ԽՍՀՄ-ի դեմ:

*1919-1922 թթ. Չերչիլը պաշտպանում էր մանդատային համակարգը, դեմ չէր, որ Հայաստանի մանդատը վերցներ ԱՄՆ-ը: Անգլիայի այդ օրերի ռազմական մինիստրը սեփականացրեց Սիրիայի մանդատը և ձգտում էր դառնալ այլ երկրի մանդատոր: Չերչիլի գրական գործերն արժանացան Նորբլյան մրցանակի, որոնց էջերում հետաքրքիր փաստեր կան Հայաստանի մասին*²:

Վերսալ-վաշինգտոնյան համակարգի, հատկապես *Փարիզի խաղաղության կոնֆերանսի* պատմության մասին *օրագիր* է կազմել և հետագայում ամբողջական գրքով այն հրատարակել է *անգլիական* ականավոր պետական գործիչ *Հարոլդ Լիկոլսոնը* (1886-1946): Նա օժտված էր գրական բարձր կարողություններով: Աշխա-

¹ *Դեվիդ Լլոյդ Ջորջ*, Правда о мирных договорах, том I-II, перевод с английского, Москва, 1957.

² *Уинстон Черчилль*, Мировой кризис. Автобиография, речи, Москва, 2003. Տե՛ս նաև հայտնի «Военные мемуары», том I-VI, Москва, 2004-2006.

տելով Փարիզում իբրև կոնֆերանսի քարտուղարներից մեկը, ապա **Ազգերի լիգա-յի** ապարատում: Գ. Նիկոլսոնը հետևում էր դեպքերի զարգացման ընթացքին, փաստեր էր գրառում, որոնք հետագայում ներառում էր իր աշխատությունների էջերում: Հայասեր անգլիացու **«Թե ինչպես բաժանեցին աշխարհը 1919 թ.»** աշխատության պատմական ատաղձի մի պատկառելի մասը վերաբերում են Հայաստանին և Հայ դատին¹:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ծավալված իրադարձությունների մասին, բնականաբար, առատ նյութեր են պահպանվել հայ այնպիսի ժամանակակիցների գործերում, որոնք, այդ պահին զբաղեցնելով պետական գերագույն աթոռներ, մասնակից, ակնատես կամ ակնաջալուր են եղել իրենց գործերում ամփոփած փաստերին: Այդ նշանակում էր, որ նրանց գրածները կասկածից վեր են:

Այդ նյութերի թիվը շատ մեծ է, սակայն դրանցից առանձնացնենք մի քանիսը միայն: Անշուշտ, վավերական են Հայաստանի Հանրապետության **երեք** վարչապետների թողած պատմագիտական գրառումները, լուրջ, ժանրակշիռ աշխատությունները:

Հովհաննես Բաջազունին (1868-1938) եղել է Հայաստանի Հանրապետության անդրանիկ վարչապետը, 1918 թ. ստորագրել է **Բաթումի** պայմանագիրը, 1919 թ. նոյեմբերին մեկնել է ԱՄՆ և օգնության խնդրանքով դիմել է և՛ պրեզիդենտ Վ. Վիլսոնին, և՛ Կոնգրեսին: Նա թողել է հուշեր Հայաստանի մասին՝ 15 էջանոց մի տեղեկանք², և մի աշխատություն՝ ուղղված ՀՀ Դաշնակցության դեմ³:

Անշուշտ, մեծ է հանրապետության վերջին վարչապետ, **փրկության կոմիտեի** նախագահ **Միմոն Վրացյանի** (1882-1969) վաստակը: Արտասահմանում հաստատված, ասել է թե՛ բոլոր տեսակի կապանքներից ձերբազատված Ս. Վրացյանը տարիներ շարունակ հրատարակում էր հայ պարբերական մամուլի գլուխգործոցներից մեկը՝ **«Վեմ»** ամսագիրը, երեքամսյա հանդեսը, ապա լույս աշխարհ բերում **«Հայաստանի Հանրապետությունը»**⁴ և **«Բանակցություններ ազգային պատվիրակության և Հայաստանի Հանրապետության միջև»**⁵ շահեկան աշխատությունները:

Ալեքսանդր Խատիսյանը (1876-1945) եղել է վարչապետ (1919-1920), ժամանակին մասնակցել է **Բաթումի և Տրապիզոնի** բանակցություններին, իր կոտրած ձեռքով ստորագրել է **Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-ի պայմանագիրը**: Վտարանդվելով Փարիզ, նա գրել է **«Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը»** աշխատությունը, որն առավել քան հուշապատում է և պարունակում է հետաքրքիր, եզակի տեղեկություններ այդ տարիների պատմության վերաբերյալ⁶:

Ավետիս Առաքելի Ահարոնյանը (1866, Սուրմալու - 1948, Փարիզ) Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավարն էր Փարիզի խաղաղության կոնֆերանսում: Մի հարուստ հայից նվեր ստացած **ոսկեծայր գրչով** նա ստորագրել է **Սևրի Հաշտության պայմանագիրը**, մասնակցել է Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսներին: Իր անցած դիվանագիտական մայրուղուն վերաբերող փաստերն օրագրի տեսքով նա հրատարակել է, որի գիտական արժեքն ու հավաստիությունը վեր են ամեն մի համեմատությունից⁷:

¹ Г. Николаев, Как делился мир в 1919 г., перевод с английского, Москва, 1945 г.
² Հովհաննես Բաջազունի, «Հուշագիր» (ձեռագիր, անգլերեն և հայերեն), տե՛ս ՀՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 2, գործ 48, թերթ 1-47:
³ Տե՛ս Հովհաննես Բաջազունի, Դաշնակցությունն անելիք չունի այլևս, Վիեննա, 1923:
⁴ Միմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, Երևան, 1998:
⁵ «Բանակցություններ Ազգային պատվիրակության և Հայաստանի Հանրապետության միջև», գրեց Ս. Վրացյան, Պոսթըն, 1920:
⁶ Տե՛ս Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պեյրուս, 1968:
⁷ Ավետիս Ահարոնյան, Սարդարապատից մինչև Սևր եւ Լոզան, Պոսթըն, 1943:

Խնդրին վերաբերող վավերական փաստեր են պահպանվել **Վահան Փափագյանի եռահատոր** հիշողությունների¹ և **Մանուկ Ճիզմեճյանի** ԱՄՆ-ում հրատարակած **«Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց»** ծավալուն աշխատության էջերում²: Բավական է արձանագրել, որ մանդատային համակարգին վերաբերող հիմնարար տեղեկություններ են պահպանվել միայն այս երկու աշխատությունների էջերում:

Ամփոփենք. Այսպիսով, փաստագրական վերոհիշյալ շարադրանքից հետո անցնենք դրան օրգանապես շարունակող հայկական պատվիրակությունների ողիսականին **Փարիզում և Լոնդոնում, Գոռում և Վաշինգտոնում**: Այդ պահին ողջ հայ ժողովրդին մտահոգող գլխավոր, գերագույն խնդիրն **ապագա Հայաստանի մեծ կամ փոքր լինելու, նրա սահմանների ունենալիք կարգավիճակի, դեպի ծով ելքի, հովանավոր պետության ընտրության** հարցերն էին: Այդ մեծ բեմի վրա էլ խաղացողների բանակի գերագույն դերակատարներն էին **Ավետիս Ահարոնյանն** ու հատկապես **Պողոս Նուբարյանը՝ Նուբար փաշան**:

Նուբարի մասին գործողություններին մասնակից, դեպքերին լավատեսյակ Սիմոն Վրացյանը գրում է. **«Ինչպես հայտնի է, զինադադարից մոտ 3 շաբաթ վերջը, 1918 թ. նոյեմբերի 30-ին, Պողոս Նուբար փաշան հրատարակել էր հետևյալ հայտարարությունը. «Հայկական ազգային պատվիրակությունը, պատասխանելու համար հայ ազգին միակամ իղձին, որուն մեկ մասը արդեն իսկ իբրև անկախ հանրապետություն կազմված է, կհայտարարե ամբողջական Հայաստանի անկախությունը, Կիլիկիայով միասին, Համաձայնական պետություններու և Միացյալ Նահանգներու հովանավորության տակ, կամ Ազգերու Դաշնակցության, երբ ան կազմվի»**: Ապա նույն էջի տողատակում կարդում ենք. **«Միաժամանակ Ազգ. Պատվիրակությունը ձեռնարկել էր ամբողջական Հայաստանի սահմանների ճշտորոշման: «Թայմսի» 31 դեկտ. համարում հրատարակվեց Պողոս Նուբարի հայտարարությունը Հայաստանի անկախության և սահմանների մասին. նույնտեղ դրված էր և անկախ Հայաստանի քարտեզը, որի վրա Ռուսահայաստանի սահմանները ցույց էին տրված խիստ համեստ չափերով, մինչդեռ Թուրքահայաստանի մեջ մտցված էին ոչ միայն Վանը, Բիթլիսը, Մուշն ու Կարի-նը, այլև Սվազը, Ադանան, Ալեքսանդրետը, Դիարբեքիրը և մի ահագին կտոր Սև ծովի եզերքից, Սամսոնի ու Բաթումի միջև: Ազգ. Պատվիրակության նախագահը հավատացած էր, որ Հայաստանը, նման սահմաններում, կարող էր իրականություն դառնալ մի քանի ամիսների ընթացքում: Առհասարակ, սահմանների հարցը ընդհանուր զբաղումի առարկա էր արտասահմանում: Շատերը նույնիսկ Պողոս Նուբարի գծած սահմանները գտնում էին անբավարար և պահանջում էին նորանոր գավառներ մտցնել Հայաստանի մեջ»**³:

Փաստորեն մարաթոնը ծայր էր առել 1918 թվականին: Հայ ժողովրդի երկու հատվածներն էլ մտացրիվ մտատանջվում էին, թե ինչպիսի՞ն կլինեն իրենց վերականգնելիք Հայրենիքն ու նրա որոշվելիք սահմանները: Նման մտահոգությամբ իրար հաջորդող համագումարների մակարդակով առաջարկներ էին արվում, օտարներից ներկայացվող փաստաթղթերի խմբագրման, լրացումների կատարման, նոր փոփոխությունների ենթարկելու վերաբերյալ:

Երկարատև մտաբախումներից հետո **1919 թ. փետրվարի 12-ին** արդեն Փարիզում հաստատված Հայկական պատվիրակությունները դիմում են խաղաղության կոնֆերանսին հետևյալ պահանջով, **կրկնում ենք, ոչ թե խնդրանքով, այլ պահանջով**:

¹ Վահան Փափագյան, Իմ Յուշերը, հատոր առաջին-երրորդ, Գափիթ, 1957:
² Մանուկ Գ. Ճիզմեճյան, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, Ֆրեզնո, 1930:
³ Միմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1998, էջ 285:

Նրանց ուղերձի մեջ կարդում ենք. «Մենք պահանջում ենք, որ այդ կերպով սահմանագծված Հայաստանը դուրի դաշնակից և գործակից պետությունների կամ ազգերի դաշնակցության հաւաքական երաշխաւորութեան տակ, որոնք երաշխաւորելու են նրա ամբողջականութիւնն ու նրա տերրիտորիայի անձեռնմխելիութիւնը: Բացի այդ, նրանք կը յանձնարարեն պետութիւններից մէկին, որ առաջին տարիների ընթացքում իր օժանդակութիւնը ցոյց տայ նոր պետութեանը՝ երկրի կազմակերպման և տնտեսական ու ֆինանսական վերականգնման համար: Այդ օժանդակութիւնն ոչ մի կերպ չպէտք է ստանայ պրոտեկտորատի կերպարանք, մինչև անգամ ժամանակաւորապէս, այլ պէտք է կատարուի յօգուտ հայ ազգի, այնպէս որ պետութեան գերիշխանութեան ոչ մի հարւած չհասցի:»

Հայոց ազգային պահանջների ծրագիրը կարող է ամփոփել հետևեալ կերպով: Մենք պահանջում ենք.

1. Ճանաչել հայկական անկախ պետութիւնը՝ կազմւած եօթ վիլայէթների, Կիլիկիայի և Կովկասի հայկական հանրապետութեան տերրիտորիաների միացումով:

Երաշխաւորող պետութիւնների պատւիրակներից բաղկացած սահմանագծման յանձնաժողովներին, աջակցութեամբ հայկական կոմիսարների, յանձնարարւում է տեղումը որոշել Հայաստանի վերջնական սահմանները: Այդ յանձնաժողովները պիտի ունենան ամենալայն լիազօրութիւններ՝ գերիշխանօրէն վերացնելու բոլոր այն դժարութիւնները, որոնք կարող են պատահել սահմանակից երկրների հետ՝ քարտէզում գծւած սահմանը հողի վրայ անցկացնելու ժամանակ:

2. Այս կերպով կազմւած հայկական պետութիւնը դրում է հաւաքական երաշխաւորութեան տակ դաշնակից պետութիւնների և Միացեալ Նահանգների, կամ ազգերի դաշնակցութեան (ընկերութեան), որին նա պահանջում է անդամակցել:

3. Հաշտութեան կոնֆերանսը պետութիւններից մէկին տալիս է յատուկ մանդատ՝ Հայաստանին օժանդակելու մի անցողակի ժամանակաշրջանի համար: Այդ մանդատն ունենալիք պետութիւնն ընտրելու համար պէտք է խորհրդակցել այժմ Պարիզում գումարւած հայկական կոնֆերանսի հետ, որ ներկայացնում է ամբողջ հայ ազգը: Մանդատի տևողութիւնը պէտք է լինի առ առաւել 20 տարի:

4. Հաշտութեան կոնֆերանսը պէտք է որոշէ մի դրամական հատուցում՝ վերականգնելու համար հայ ազգի կրած բոլոր վնասները կտորածներից, տեղահանութիւններից, կողոպուտներից ու աւերումներից:

Հայաստանն իր կողմից պատրաստ է իր վրայ վերցնելու օսմանեան հանրային պարտքի պատերազմից առաջ հաշւած գումարից իրեն ընկնող բաժինը:

5. Օժանդակող պետութիւնը պէտք է մանդատ ունենայ հետևեալների համար.

ա. Ստիպել թիւրք, թաթար և այլ իշխանութիւններին, որոնք դեռ ևս գրաւում են այդ տերրիտորիաները, պարպել նրանց.

բ. Չեղարկել ժողովուրդների ընդհանուր զինաթափութեան.

գ. Արտաքսել ու պատժել կտորածներին մասնակցողներին, ժողովուրդների վրայ բռնացողներին, թալանի մասնակցողներին կամ զոհերին կողոպտելուց օգուտողներին:

դ. Երկրից դուրս հանել կարգը խանգարող տարրերին և անհնազանդ թափառական ցեղերին:

ե. Վերադարձնել (իրենց երկիրը) մուսափիրներին (մահմեդական գաղութներին), որոնք բերւած և տեղաւորւած են համիդեան ու ժեմ-փիւրք (երիտ. թուրք - Հ.Ղ.) ռեժիմների օրով:

զ. Վերջապէս՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել, ներսում և դրսում, իրենց նախկին կրօնին վերադարձնելու բռնի ուժով իսլամացւած կամ հարեմներում արգելափակւած կանանց, աղջիկներին, երեխաներին և այլն:

Տաճկաստանը պէտք է յանձն առնէ վճարելու փոխարժէքն իր ռեկլիզիցիաների և իրաւատէր հայերին հաւասարակշիռ հատուցումով միասին վերադարձնելու՝ իր տերրիտորիայում գտնուող անշարժ կայքերը, ինչպէս և եկեղեցիները, դպրոցները, վանքերը՝ սրանց յարակից ու պատկանեալ հողերով ու ինչքերով, որոնք որևէ ձեւով խլւած են հայ համայնքի ձեռքից:

Ինչ վերաբերում է Տաճկաստանում անժառանգ մնացող ազգային կամ մասնաւոր հայկական ինչքերին, Պոլսի հայ եկեղեցական իշխանութիւններն իրաւունք են ունենալու դրանց վերցնել իրենց տրամադրութեան տակ, ծախել և արդիւնքը յատկացնել՝ իրենց հօտի կարիքներին:

Հայկական ժագում ունեցող ամեն անհատ, որ ապրում է օտար երկրում կամ դարձել է այդ երկրի բնիկը, հինգ տարւայ ընթացքում իրաւունք պիտի ունենայ, իր և իր անչափահաս երեխաների անունով, դառնալ հայկական քաղաքացի՝ նախապէս այդ մասին տեղեկացնելով երկու երկրների պատկանեալ իշխանութիւններին»¹:

Հայ դիվանագիտական մտքի ու գործի ոսկերույլը, արտահայտելով հանուր հայ ժողովրդի շահերն ու բաղձանքները, օրորվելով ոսկե հեքիաթի տված ռոմանտիկ խոստումներով, Փարիզի խաղաղութեան համաժողովից պահանջում էր ժողովից ծով Հայաստան: Նորաստեղծ այդ տերութեան ավերը մի կողմից Տրապիզոնի վրայով պէտք է ողողէին Սևծովյան նավահանգիստները, մյուս կողմից՝ Միջերկրական ջրերով Ալեքսանդրետի սանջակը: Մեծ Հայաստանի տարածքը պէտք է կազմեր երեք հարյուր քսանհինգ հազար քառ. կմ: Տերութեան կազմում ընդգրկվելիք միայն Հայկական Կիլիկիան ուներ քառասունհինգ հազ. քառ. կմ տարածութիւն:

Ընդգծենք, սակայն, որ քառասուն տարեկանում քառասունհինգը հովիտների փրկագնով հայոց գահ բարձրացած Տիգրան Մեծի Հայաստանը չէր սա, որը հետո ծովից ծով անուց ստացավ: Սա մի նոր տերութիւն էր, որը պէտք է ձևավորվեր խաղաղ մեթոդներով, դիվանագիտական քառուղիներով: Հայ դիվանագիտական էլիտան զանազանելով սրանց տարբերութիւնը՝ նետվեց պայքարի հորձանուտների մեջ:

Տարածքների խնդրի լուծումից գատ, երևի առաջնահերթը ժողովրդին սովամահութիւնից փրկելու անհետաձգելի մտահոգութիւնն էր: Դրութիւնը հուսահատական էր: 1918 թ. մայիսի վերջին մայրաքաղաքի բնակչության տրվող հացաբաժնի չափը իջեցվեց մեկ քառորդ ֆունտի (այսինքն՝ 100 գրամի), իսկ գավառների ժողովուրդը «արածում էր դաշտերում»: Սով արքայի ուրվականը սավառում էր Հայաստանի երկնակամարում²:

1919 թ. հունվարի 22-ին վարչապետ Հովհաննես Բաջազունին խորհրդարան մտավ առաջարկով. այն է՝ դիմել դաշնակից պետութիւններին, մասնավորապէս Ամերիկայի Միացյալ Նահանգներին՝ նրանից խնդրելով հաց և այլ տեսակի կենսամթերքներ տրամադրել սովահար հայութեանը: Այդ օգնութեան մասին հավաստի տեղեկութիւններ է հաղորդում դեպքերին ականատես ու մասնակից Միմոն Վրացյանը: Նա գրում է. «Հայաստանի խորհրդի ու կառավարութեան դիմումները, ինչպէս նաև արտասահմանում կատարված աշխատանքները, վերջապէս, լսվեցին, և օգնութիւնը շատ չուշացավ: Այս անգամ օգնութեան հասնողը Ամերիկան էր՝ Միացյալ Նահանգների պարենավորման դիկտատոր Հուվերը, Եվրոպայի փրկիչը հետպատերազմյան սովից: Հուվերը եղավ և Հայաստանի ժողովրդի իրական փրկիչը:

¹ «Հայկական հարցը հաշտութեան կոնֆերանսի առաջ», Թիֆլիս, 1919, էջ 12-14:

² Միմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետութիւն, Երևան, 1998, էջ 253:

Ինչ էլ լինի մեր վերաբերումը դեպի Ամերիկայի քաղաքական դերը հայկական խնդրում, ամերիկյան մարդասիրական նպաստն ու պարենը երբեք չենք մոռանա, չպետք է մոռանանք:

Մայիսի քսանին Բաթում եկավ ամերիկյան առաջին նավը՝ 125 000 փութ ալյուրով, մի շաբաթ չանցած, հասավ ևս 600 000 փութ: Այդ մթերքը Հայաստան փոխադրելու համար վրաց կառավարությունը հայկական կառավարությունից պահանջեց 579 վագոն և 14 շոգեշարժ, այն ժամանակ, երբ Հայաստանի ունեցած վագոնների ընդհանուր թիվը 520 էր և շոգեշարժներինը՝ 16: Պետք եղավ ամերիկացիների և անգլիացիների միջամտությունը, 4 օրով կանգնեցվեց Հայաստանի երկաթուղային մարդատար հաղորդակցությունը, և բոլոր միջոցները հատկացվեցին ալյուրի փոխադրությանը:

Ամերիկյան ալյուրի հասնելով՝ կամաց-կամաց սովը մեղմացավ, երկիրը սկսեց մտնել բնական հունի մեջ, և ժողովուրդն ու կառավարությունը կարողացան նվիրվել երկրի վերաշինության ու պետության կազմակերպման գործին: Հունիսին կառավարությունը հնարավորություն ստացավ Ախալքալաքի ժողովրդին էլ հաց հասցնել. **վրաց կառավարությունը, որ այնքան եռանդ էր քափում Ախալքալաքը ստանալու համար, սովից կոտորվող ախալքալաքցիներին օգնելն իր պարտականությունը չէր համարում»**¹: Նույն էջի տողատակում կարդում ենք. «1919 թվի ընթացքում Հայաստանը Ամերիկայից ստացավ 1 295 243 փութ ալյուր, 256 758 փ. ցորեն, 125 000 փ. լոբի, 68 563 փ. բրինձ, 20 000 փ. կորեկ, 8010 փ. եգիպտացորեն, 10 738 փ. վարսակ, 5 950 000 տուփ խտացված կաթ, 12 000 փ. կակաո, 44 000 փ. շաքար, 5000 փ. ճարպ, 1500 փ. թեյ: Համաձայն կնքված պայմանի, 1920 թվի սկզբին էլ գալու էր 2 170 000 փ. ալյուր: Ամերիկայից ստացվող ալյուրից 238 449 փութ ուղարկվեց Ախալքալաք: Ալյուրի մի մասն էլ գրավեց վրաց կառավարությունը, իբրև փոխադրության վարձագին»²:

Մեծ դժվարությամբ, բայց և այնպես սովի ուրվականը հեռացավ Հայաստանի երկնականարից: Այդուհանդերձ, երկրի տնտեսական զարգացման համար խիստ անհրաժեշտ էին ֆինանսներ և երկարաժամկետ վարկեր: Նման հնարավորություններ Հայաստանին կարող էր ընձեռել Ամերիկայի Միացյալ Նահանգները:

Հայաստանին օգնություն խնդրելու առաքելությամբ 1919 թ. սեպտեմբեր ամսին Ամերիկա ուղևորվեց բավական սովոր թիվ կազմող մի պատվիրակություն, որը գլխավորում էր վարչապետ **Հովհաննես Քաջազունին**: Ամերիկահայությունը մեծ խանդավառությամբ ընդունեց Մայր Հայրենիքից ժամանած պատվիրակներին: Նրանք նախ հանգանակություն կատարեցին, պատկառելի թվի հասնող գումար հավաքեցին և դրեցին Հ. Քաջազունու տրամադրության տակ: **Այնուհետև դիմումներ առաքեցին ԱՄՆ-ի Կոնգրեսին, պրեզիդենտին՝ խնդրելով պատշաճ մակարդակով ընդունել Հայաստանից իրենց երկիր ժամանածներին, ընդառաջել նրանց խնդրանքին, լուծել առաջադրված հարցերը:**

Ընդառաջելով գաղութահայության դիմումներին, Հ. Քաջազունուն ընդունեցին և լսեցին կոնգրեսականները, պետական քարտուղարը, վերջում նաև պրեզիդենտ **Վուդրո Վիլսոնը**: Նրանք պատվիրակներից պահանջեցին իրենց խնդրանքը գրավոր, հիմնավորված ձևով ներկայացնել:

Հովհ. Քաջազունին պատվիրակների օգնությամբ կազմեց մի «**Հուշագիր**», որի էջերում ներկայացրեց հայ ժողովրդի անցած ճանապարհը, ապա նրա առկա վիճակը՝ օգնության խնդրելու անհրաժեշտությունը: «Հուշագիր»-ը թարգմանվեց անգլե-

րեն, գրական մշակման ենթարկվեց և տպագրվելով՝ գրքույկի ձևով կազմվեց և բաժանվեց Ամերիկայի բարձրաստիճան պաշտոնյաներին:

Բարեբախտաբար, «Հուշագիր» անգլերենով տպագրված օրինակները («A memorandum») և հայերեն բնագրի սևագրությունը (Հ. Քաջազունու ձեռագրով) պահպանվել են Հայաստանի Հանրապետության Ազգային արխիվում³:

Ընթերցողի հետաքրքրասիրությունը բավարարելու մտահոգությամբ այստեղ տեղադրում ենք անգլերեն տպագրված օրինակի՝ **երեք էջերի լուսապատճենները**: Կանխավ նշենք, որ հայ ընթերցողի համար արտակարգ, հետաքրքրող նյութեր չկան այդ գրքույկի էջերում: Փաստաթուղթը հետաքրքիր էր ամերիկացիներին, որոնք կարողալով այն՝ **շահագրգռված կլինեին վերցնել Հայաստանի մանդատը**⁴:

Մայր Հայաստանն իր վարչապետի բերանով դիմում էր Միացյալ Նահանգներին՝ խնդրելով ֆինանսներ՝ պատերազմից ու ցեղասպանությունից ստացած վերքերը բուժելու ձգտմամբ: Նույն օրերին Փարիզում հաստատված հայկական պատվիրակությունները նույնպես գրավոր դիմում էին **Չորսի, Հիմզի, Տասի** խորհուրդներին, պետական քարտուղարներին, արտաքին գործերի նախարարներին, պրեզիդենտներին, երբեմն խնդրելով, երբեմն պահանջելով լուծել նոր Հայաստանի սահմանների, դեպի ծով ելք ունենալու, պետության իրավական կարգավիճակի խնդիրները:

Այդ գործում ակտիվ էր Նուբար փաշան՝ իր օգնականներով, Ավ. Ահարոնյանն իր խորհրդականներով: 1919 թ. հունվարի 20-ին Նուբար փաշան դիմեց Վուդրո Վիլսոնին՝ խնդրելով զորավիզ կանգնել Հայկական դատի լուծմանը: Վ. Վիլսոնը ոչ միայն դրական պատասխան տվեց Նուբարի նամակին, այլև խոստացավ լուծել Հայկական հարցն հօգուտ հայ ժողովրդի: Սիա նրա պատասխանը.

Պ. Պոլոս Նուբար
Հայկական ազգային պատվիրակություն
12, ավենյու Թրոքադերո, Փարիզ

Սիրելի պրն Նուբար,

Ստացա հունվարի 20-ի Ձեր անչափ հուզիչ նամակը և, ի պատասխան, վստահեցնում եմ Ձեզ, որ Խաղաղության խորհրդաժողովի բոլոր պատվիրակներն ամենաանկեղծ և սրտաբաց համակրանք են տածում հայերի նկատմամբ: Հիրավի, անչափ դժվար է, ինչպես որ, անշուշտ, հասկանում եք, ներկայացուցիչներ ունենալու իրավունք տալ այնպիսի պատվիրակությունների, որոնց ներկայացրած պետությունները դեռևս չեն ընդգրկվել ազգերի ընտանիքի մեջ: Սա է, անշուշտ, հայկական ներկայացուցչությանն այդպիսի իրավունք չընտրելու միակ պատճառը, որում հանդակած եմ: **Սակայն աներկբա վստահեցնում եմ Ձեզ, որ այս պարագան նվազագույն չափով իսկ չի վնասի Հայաստանի շահերին, և որ հայերի տեսակետները լիակատար կերպով նկատի կառնվեն այնպես, ինչպես եթե նրանք պատվիրակություն ունենային խորհրդաժողովում:**

Անկեղծորեն Ձերը,
ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆ
Փարիզ, 23 հունվարի 1919⁵

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային արխիվ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 498, թերթ 1-15 (անգլերեն, տպագիր): Հայերեն ձեռագիրը, սևագիր, տես նույնի էջ 1-71 (փոքրիկ թերթեր):

² Վավերագրերն ամբողջությամբ գեներալված են **երկրորդ** գրքի, երկրորդ բաժնում:

³ **Վահան Փափազեան**, Իմ Յուշերը, հատոր 3, տպարան Յուսաբեր, Գաիիթ, 1957, էջ 307: Դժբախտաբար մենք չկարողացանք վերականգնել, գտնել **Նուբար փաշայի՝ Վիլսոնին** հղած նամակի տեքստի բնագիրը:

¹ **Միմոն Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1998, էջ 255-256:

² Նույն տեղում:

THE REPUBLIC OF ARMENIA

A MEMORANDUM

ON THE RECOGNITION OF THE GOVERNMENT OF THE
REPUBLIC OF ARMENIA, SUBMITTED BY THE
SPECIAL MISSION OF THE REPUBLIC OF
ARMENIA TO THE UNITED STATES



PRESENTED BY MR. LODGE

NOVEMBER 10, 1919.—Ordered to be printed

WASHINGTON
GOVERNMENT PRINTING OFFICE
1919

A MEMORANDUM ON THE RECOGNITION OF THE GOVERN- MENT OF THE REPUBLIC OF ARMENIA.

[Dated October 28, 1919.]

SUBMITTED BY THE SPECIAL MISSION OF THE REPUBLIC OF ARMENIA
TO THE UNITED STATES.

I. THE FORMATION OF THE REPUBLIC OF ARMENIA.

The territory of the Armenian republic was formerly a part of one of the outlying Provinces of the Russian Empire, namely, Transcaucasia.

In the spring of 1917, after the outbreak of the Russian revolution, the then temporary government of Kerensky created in and for Transcaucasia a special administrative body, styled as the commissariat of Transcaucasia. But in November, 1917, when the Bolsheviki overthrew the Kerensky government and established the soviet rule in Russia, Transcaucasia declined to recognize the authority of the Bolsheviki and the commissariat of Transcaucasia on November 28, 1917, declared itself the supreme authority in Transcaucasia.

In February, 1918, the Seim, or the legislative assembly of Transcaucasia, convened in the city of Tiflis, accepted the resignation of the commissariat and in its place instituted a temporary government composed of several ministries.

Thus, in effect Transcaucasia separated herself from Russia, though there was no appropriate declaration and she was still considered as a part of the Empire. But the external and internal political conditions took such a course that they made it necessary to change the de facto to a de jure separation, and on April 22, 1918, the Seim declared the independence of Transcaucasia from Russia and her constitution as an independent state, under the name of the federal democratic republic of Transcaucasia.

The three principal peoples of Transcaucasia—Armenians, Georgians, and the Tartars of Azerbaijan, became parties to the federation, with their respective territories. The Seim and the government were composed of the representatives of the political parties among these three nationalities, almost in equal proportions.

This federal republic of Transcaucasia scarcely lasted five weeks. The cause of its instability was the fact that the political tendencies of the three constituent nations were different, even conflicting with each other.

The point at issue was the attitude of Transcaucasia to the war then still raging.

Since the beginning of the war the sympathy of the Tartars of Azerbaijan was wholly with their kin and coreligionists, the Turks. In the latter part of 1917, when the Russian armies abandoned the Caucasian front and the Turkish forces began their victorious advance on to the north, the Tartars, almost without disguise, went

to the side of Turkey. They not alone were unwilling to continue the war against Turkey, but also did all in their power to help Turkey to conquer Transcaucasia.

The Georgians had for a long time been in communication with Germany. They were seeking the protection of Germany and were at all times ready to withdraw from the war, provided the independence of Georgia was recognized and her external and internal situation made secure.

But the Armenians, on the other hand, elected to remain and did remain loyal to the cause of the Entente and associated powers, and continued to war against Turkey till the end, as more fully set forth hereinafter.

These internal conflicts, daily becoming more emphatic, made it impossible for Armenians, Georgians, and Tartars to work in harmony within the sphere of a single state.

On May 26, 1918, the Seim declared the termination of the federal republic of Transcaucasia and relinquished its authority. The same day Georgia declared her independence; and after two days, namely, on May 28, 1918, Armenia and Azerbaijan likewise declared their own independence.

From that day began the existence of the republic of Armenia.

II. THE CONSTITUTION OF THE REPUBLIC.

The republic does not yet have a written constitution, that important task having been reserved to the future constitutional convention which is expected to assemble when the State of united and integral Armenia shall have been instituted and when the present republic of Armenia shall form a part of that united and integral Armenia.

Pending that event, the Armenian republic is based upon and is operating under a democratic-republican form of government.

The republic has a legislative branch, consisting of an elected parliament, and an executive branch, consisting of a cabinet.

The republic does not have a president. The powers of the president are now exercised in part by the parliament and in part by the cabinet.

Sovereignty resides in a parliament of one house. The parliament consists of deputies elected by the entire people. The right to vote and to hold office is common and equal to all the people. Every citizen of Armenia of full age has an equal right to participate in all elections without regard to sex, race, or religion. The method of voting is direct and secret, and the elections are based on the proportional principle.

The parliament now in session, composed of 80 members, was elected in June, 1919, and commenced its session in August of this year. The composition of the parliament will, in the future, be extended to give representation to the people of the new territories that are to be added to the present republic, in proportion to the number of the population.

The cabinet contains eight ministries: (1) Foreign affairs; (2) interior affairs, including public health; (3) public works; (4) posts and telegraphs; (5) army; (6) finance, including commerce and industry; (7) education; (8) supply and relief, the latter being of a temporary kind.

Ծայր առավ հայկական պատվիրակությունների գլխավոր դեմքերի գործունեության **ողիսականը**: Գրավոր խնդրանքներին փոխարինելու եկան գործնական հանդիպումները: Սկսվեցին շփումները Արևմտյան աշխարհի մեծերի՝ **պրեզիդենտների, վարչապետների, արտգործնախարարների և կոնֆերանսականների հետ**: Կարծես թե կրկնվում էր պատմությունը, այսինքն՝ օգտագործվում էր հայ ժողովրդի 1878 թվականին ծավալված դիվանագիտական պայքարի փորձը:

Նրանք գիտեին, որ հանճարեղ վանեցին - **խրիմյան Հայրիկը**, թևատակ առած **քսանամյա Մինաս Չերազին** (իբրև թարգմանիչ) և **բացախոս**, Ազգային ժողովի երեսփոխանների սարսափազդու **Ստեփան Փափազյանին**, դուրս էր Հռոմի, Փարիզի, Լոնդոնի և վերջապես Բեռլինի մեծերի դռները, ուզում էր, ձգտում էր, տանջվում էր Հայոց հարցը լուծել **թղթե շերտիով**: **Սակայն Պողոս Նուբարն ու Ավետիս Ահարոնյանը գիտեին նաև, որ խրիմյանը մնացած բոլոր բնագավառներում անզուգական լինելով, դիվանագիտական պայքարի համար չէր ծնվել**: Ապագա հայոց մեծագործ կաթողիկոսը եվրոպա էր մեկնել՝ լացով և արտասուքով լուծելու բարդ ու կնճռոտ հայոց խնդիրները, չհասկանալով, որ որտեղ գոյություն ունի մերկ շահախնդրություն, տարածքների բռնակցման առկայություն, այնտեղ խնդիրները դիմում-բողոքներով չես կարող լուծել:

Այդուհանդերձ, հայոց նորօրյա դիվանագետներն այս բնագավառը ևս օգտագործում էին՝ հաշվի չառնելով նաև, որ իրենք տարբերվում են խրիմյանական պատվիրակությունից:

ա) Այժմ Հայաստանն արդեն ուներ միջազգայնորեն **ճանաչված** անկախ պետականություն - հանրապետության կարգավիճակով:

բ) **Հայոց դատը պաշտպանող պատվիրակությունների ոչ միայն գլխավոր դեմքերը, այլև յուրաքանչյուր անդամը տիրապետում էր եվրոպական ոչ թե մեկ, այլ մի քանի լեզուների**: Նրանք ունեին **դիվանագիտական պայքարի մեծ փորձ և հմտություն, առավել ևս՝ միջազգային ճանաչում**:

գ) Հայ ժողովուրդն այս դեպքում միջազգային վիճասեղանին մոտենում էր ոչ թե «թղթե շերտիով», այլ **թափած ծով արյան դիմաց ստանալիք հատուցման պահանջով**:

Կրկնենք. վերոհիշյալ և այլ պարագաների հաշվարկով, Պողոս Նուբար փաշան և Ավետիս Ահարոնյանը ևս սկսեցին իրենց ողիսականը, այսինքն՝ Լոնդոնի, Փարիզի, Հռոմի և Վաշինգտոնի բարձրաստիճան պետական գործիչների հետ՝ նրանց թանձրաթաղանթ ականջին հնչեցնելով այն պահանջների համառոտագրությունը, որոնք գրավոր ձևով արդեն առաքել էին կոնֆերանսականներին՝ մեծից մինչև փոքր: Այդ հանդիպումների թիվը շատ մեծ է, ուստի դրանցից առանձնացնենք և ներկայացնենք հիմնականները, կարևորները:

1919 թ. փետրվարի 25-ին Ավ. Ահարոնյանն արձանագրում է, թե մի քանի օր առաջ ինքն անձամբ հանդիպել է **Վ. Վիլսոնին**, ապա **Է. Վենիգելուսին**, պատմել հայերի պահանջների մասին և խնդրել, որ նրանք երաշխավորեն հայկական պատվիրակության լիարժեք մասնակցությունը Փարիզի խաղաղության կոնֆերանսին: Ապա շարունակում է. «Երեկ փետրուար 25-ի երեկոյան, ինձ մօտ ընթրիքի էին Westerman, ժուրնալիստ ամերիկացի Gibbonse, Պողոս փաշա, Յովհաննես Խան եւ Աջեմեան: Ընթրիքից վերջը անակնկալ կերպով ստացայ Խաղաղութեան Կոնգրեսի հրաւերը յաջորդ օրը: Ճաշից յետոյ՝ ժամը 4-ին պետք է ներկայանալ **Տասի Խորիդին** (Le Consul de Dix) հայկական պահանջները ներկայացնելու:

Բոլոր ներկաներին այդ ուրախութիւն պատճառեց: Մնում էր միայն ճշդել, թե արդեօք Պողոս փաշան էլ ստացել է նման հրաւեր, թե ոչ: Հաւատացած էինք, որ նոյնպիսի հրաւեր դրկուած կը լինի Փաշայի բնակարանը»:

Ա. Ահարոնյանը գրում է, թե. «Ես արտակարգ նիստ հրաւիրեցի պատուիրակութեան, ներկայութեամբ՝ իմ, Օհանջանեանի, Վարանդեանի, Աջեմեանի, Յովհաննէս Խանի՝ յաջորդ օրուայ իմ ասելիքները, որ վաղուց հետէ պատրաստած ունէի, նրանց քննութեան բովից անցնելու համար:

Մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշուեց, եթէ Փաշան մինչեւ վաղը չհրաւիրուի, եւ ես մենակ Կոնգրէսում, ապա ամբողջական Հայաստանի դատը պաշտպանեմ, ինքս. իսկ եթէ Փաշան յաջողեցնի ներկայանալ, այդ դէպքում ես պիտի ծանրանամ Կովկասեան Հայաստանի քաղաքական եւ էտնագրաֆիական եւ փաստական գոյութեան իրաւունքների վրայ, իսկ Փաշան պաշտպանելու է Թիւրքաց Հայաստանի իրաւունքը եւ երկուսս միասին վճռապէս, առանց վերապահութեան, պիտի յայտարարենք եւ պնդենք հայութեան երկու խոշոր հատուածների անդառնալի որոշման վրայ միանալ իրար հետ եւ կազմել Միացեալ Հայաստան Խրամ գետից ու Ղարաբաղից սկսեալ մինչեւ Կիլիկիա, մինչեւ Միջերկրականի ափերը: Միաժամանակ մասնաւորապէս Կովկասեան Հայաստանի Հանրապետութեան ծանաչումը պիտի պահանջէի, ինչպէս եւ նրա արժանի տեղը Կոնգրէսում որպէս կռուող պետութիւն (Etat belligérant)»¹:

1919 թ. փետրվարի 26-ի նիստն այսպէս վերջացավ. ամփոփում է Ավ. Ահարոնյանը. «Համապատասխան մտքով թուղթ պատրաստեցի գիշերը եւ յաջորդ առաւօտ մինչեւ ժամը 12-ը բարեկամ Վիկտոր Բերարի սիրալիր աջակցութեամբ: Եւ այդ իսկ ժամին իմացայ Փաշայից, որ նա, չստանալով հրաւեր, շտապել է անգլիական պատուիրակութիւն, դիմել է Սըր Լուի Սալլէտին, նրա հետ միասին գնացել են Բալֆուրի մօտ: Բալֆուրը ապա հեռախօսով դիմել է Ֆրանսիական արտաքին գործոց նախարար Ս. Պիշոնին, որ նախագահն էր Խաղաղութեան Կոնգրէսի Կլեմանտոյի հիւանդութեան պատճառով, եւ Պիշոնը համաձայնել է Պօղոս փաշայի ներկայութիւնը Կոնգրէսում:

Այսպիսով, թէեւ առանց գրաւոր պաշտօնական հրաւերի, Պօղոս փաշային յաջողեց ներկայանալ Կոնգրէսին ինձ հետ միասին: Ուստի, ըստ մեր կանխաւ համաձայնութեան Պօղոս փաշայի հետ.

- 1) Ես պիտի խօսէի առաջինը.
- 2) Ես պիտի ծանրանայի Հայաստանի Հանրապետութեան իրաւունքների վրայ, իսկ Փաշան Թիւրքաց Հայաստանի եւ մասնաւորապէս պէտք է ոյժ տար Կիլիկիայի խնդրին:
- 3) Երկուսով էլ մեր պահանջները պիտի վերջացնէինք վճռական յայտարարութեամբ երկու Հայաստանի միութեան»²:

«Նիստը նախագահում էր **Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Ս. Պիշոն**, փոխանակ Կլեմանտոյի, որ տակաւին չէր ապաքինուած մի երկու շաբաթ առաջ իր դէմ եղած մահափորձին ստացած վերքերից: Ներկայ էին Ամերիկայի կողմից՝ Լանսինգ եւ Ուայտ, Անգլիայի կողմից Բալֆուր եւ Հարտինգ, Իտալիայի կողմից Սանիսօ եւ Մարքիզ Ռազզի, Ճապոնիայի ներկայացուցիչների անունները չգիտեմ: Կային եւ բազմաթիւ խորհրդակցանքեր, ամբողջը մօտ 25-30 մարդ:

Ինձ առաջինը հրաւիրեցին խօսք առնել: Մենք նախ ցրեցինք բոլոր անդամներին մեր մեմօրանտումի մի մի օրինակ, եւ կարգը (քարտեզը) դասած, նրանք սկսեցին հետեւել:

Ես բարձրաձայն ու հանդարտ սկսեցի կարդալ իմ յիշատակագիրը ֆրանսերէն: Նստած էի Պիշոնի դէմ ու դէմ մի փոքրիկ սեղանի առջեւ:

¹ Ավետիս Ահարոնեան, Սարդարապատից մինչեւ Սելր եւ Լօզան, Պոսթըն, էջ 154:
² Նույն տեղում, էջ 154-155:

Մի փոքր հեռու Բալֆուրի եւ Լանսինգի դէմ առ դէմ նստած անգլիացի սպան, իմ ամէն մի պարբերութիւնից յետոյ, յիշատագիրս թարգմանում էր անգլերէն: Վերջում, իմ ընթերցումն աւարտելուց յետոյ, նախագահ Պիշոն հարցրեց ժողովականներին, թե՛ հարց տուող կա՞յ: Ոչ:

Յեռացայ սեղանից: Իմ տեղն անցաւ Պ. Նուրար փաշան: Նա աւելի երկարօրէն ծանրացաւ 1) Հայ ժողովրդի թուի վրայ՝ ցրելով մեր փոքրամասնութեան մասին մեր հակառակորդների արգումենդները եւ ցոյց տալով միաժամանակ բռնի նուազումը մեր թուի, ո՛չ»¹:

Հայկական երկու պատվիրակութիւնների հաջորդ տեսակցութիւնը Վ. Վիլսոնի հետ տեղի ունեցավ 1919 թ. ապրիլի 17-ին: Այդ հանդիպումը սղագրվել է այսպէս.

«ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԳԱՅ ՎԻԼՍՈՆԻ ԴԵՏ
17 ապրիլ, 1919
Ճաշից յետոյ, ժամը 5-ին, ներկայացանք ես, Փաշան, պրոֆեսոր Տէր Յակոբեան, որ թարգմանում էր:
Նախագահ Վիլսոն. - Յոյս ունեմ, գոհ էք, որ ձեր խնդիրը լաւ է ընթանում:
Փաշան. - Լաւ կը լինի այն ժամանակ, երբ ձեր շնորհիւ Ամերիկան կ'ընդունի Հայաստանի մանդատը:
Նախագահ Վիլսոն. - Ես էլ եմ ցանկանում, որ Հայաստանի մանդատն Ամերիկան ընդունի: Կարող եմ վստահացնել ձեզ, որ Ամերիկայի բոլոր լավագոյն քաղաքացիների մտածումն ու զգացումն էլ այդ է: Եւ եթէ երբեք Ամերիկան որեւէ մանդատ չառնէ, այդ կը լինի Հայաստանինը: Ես իմ ընկերակիցներին (Կոնգրէսի) ասել եմ յաճախ, որ Ամերիկային որեւէ մանդատ տալու դէպքում լաւագոյնը Հայաստանի մանդատն է, որովհետեւ այդ աւելի հեշտ կ'ընդունուի շնորհիւ այն խորունկ համակրութեան, որ Ամերիկան տածում է դէպի հայ ժողովուրդը: Ձեր տերրիտորիայի (հողերի) համար եւս աշխատում եմ: Ցանկութիւնս է ձեր պահանջած սահմաններում Հայաստանին տերրիտորիա ապահովել: Մրցումն կայ: Ուրիշներն էլ պահանջներ ունին: Բայց ես աշխատում եմ: Ազգերի Լիգան այսուհետեւ լաւ հովանաւոր կը լինի: Մինչեւ այժմ, երբ որեւէ պետութիւն ուրիշ պետութեան գործերին միջամտում էր, դա համարում էր թշնամութիւն: Այսուհետեւ Ազգերի Լիգան միջամտելու իրաւունք կ'ունենայ, առանց որ այդ թշնամութիւնն նկատուի:
Տեսակցութիւնը տեւեց քսան րոպէ»²:

Վ. Վիլսոնին և ԱՄՆ-ի Կոնգրէսին հայկական հարցի լուծման խնդրանքով դիմեցին նաև ամերիկահայ այն վետերանները, որոնք կռվել էին Դաշնակիցների բանակի շարքերում, որոնց մեծ մասը վիրավոր էր վերադարձել Եվրոպայից: **1920 թ. ապրիլի 14-ին 580 վետերաններից բաղկացած հայ զինվորների թափոքը** շարժվում է դեպի Արտաքին գործերի նախարարությունը և, բանավոր ելույթներից բացի, գրավոր խնդրագիր է ներկայացնում պետական դեպարտամենտին:

Որպեսզի ամեն ինչը ճշգրիտ և տպավորիչ լինի, թողնեմք թող խոսի ամերիկահայ պատմաբան ու քաղաքական գործիչ **Մանուկ Գ. Ճիզմեճյանը:**
Նա գրում է.

ՎԵՅԵՐԱՆՆԵՐՈՒ ԹԱՓՕՐԸ

Նոյն օրերուն գործի կ'սկսին Ամերիկահայ Վեթեանները, որոնք կռուած էին Ամերիկեան բանակին մէջ, այն հաւատքով ու համոզումով, ինչպէս որ Ամերիկեան պե-

¹ Ավետիս Ահարոնեան, Սարդարապատից մինչեւ Սելր եւ Լօզան, Պոսթըն, էջ 154-155:
² Նույն տեղում, էջ 161-162:

տական մարդիկ յայտարարեցին - «Թէ Միացեալ Նահանգները կը կռուին փոքր ու ճնշուած ազգերու ազատագրութեանը համար, կը կռուին իրաւունքի եւ արդարութեան համար, կը կռուին աշխարհի խաղաղութիւնը ապահովելու, կը կռուին վերջապէս արիւնն ու վանտալականութիւնը դադրեցնելու համար»:

Այս համոզմամբ լեցուն՝ մեր կռուող Վեթրանները, երբ կը տեսնեն Ամերիկայի փոխուած, անտարբեր ու մանաւանդ խոստմնադրուած քաղաքականութիւնը, կորոշեն իբրեւ «Միութիւն» (UNIT) անձամբ երթալ Ուաշինկթըն եւ յայտնել Նախագահին ու Քօնկրետին այն դառն յուսախաբութիւնը զոր Հայ ժողովուրդը զգացած է Հայկական դատին ծոգման պատճառաւ, եւ պահանջել կառավարութենէն ու Քօնկրետէն արդարութիւն եւ իրենց խոստումներուն իրագործումը:

Այս շարժումին յաջողութեանը սատարողները կ'ըլլան նիւթապէս թէ բարոյապէս՝ Հայ Ազգային Միութիւնը, Ազգային Ռամկավար կուսակցութիւնը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Թափօրը կը կազմուի Ապրիլ 14, 1920 ընդամենը 580 զինուորներով:

Թափօրը կատարեալ ու անթերի ընելու համար, անխոնջ աշխատութիւններ կը թափեն Մէյքըր Վ. Ն. Գազանճեան, Մաւային տեղակալ Գ. Պոհչէլեան (որ Հարպըրտի առաքելութեան մասնակցած էր), Քէփթըն Արօեան, Քէփթըն Վ. Հ. Պետրոսեան. Քէփթըն Ա. Ն. Լուսինեան եւ Տեղակալ Լ. Գազանճեան:

Ձինուորներու տողանցը կը շարժի դէպի Արտաքին գործոց պաշտօնատունը, որուն վրայ կը ծածանին Ամերիկեան ու Հայկական դրօշակները: Թափօրը կ'առաջնորդեն չորս սպաներ - Մէյքըր Վ. Գազանճեան, Քէփթըն Պետրոսեան, Լիւթէնընդ Սէլեան, Լիւթէնընդ Լ. Գազանճեան:

Արտաքին պաշտօնատան հիւրասենեակին մէջ Պետական քարտուղար Պէյն Պրիմ Քօլպի կ'ընդունի չորս սպաները ի դիմաց Նախագահին: Մէյքըր Գազանճեան կը կարդայ Յիշատակագիրը եւ օրինակ մը կը յանձնէ Քարտուղարին:

Մր. Քօլպի շնորհակալութիւն կը յայտնէ եւ կ'աւելցնէ «Նախագահը շատ կը ցաւի որ իրեն համար կարելի չէր ձեռք առնալ ընդունիլ: Գիտէք արդէն թէ Հայկական դատը կը վայելէ մեր համակրանքը եւ ես շատ ուրախութեամբ այս Յիշատակագիրը Նախագահին պիտի մատուցանեմ»:

Տողանցը սքանչելի կարգապահութեամբ կ'ուղղուի դէպի Քէփթըն: Հոն՝ Ծերակուտական Լաճի՝ իբրեւ Արտաքին Գործոց Յանձնախումբի Ատենապետ, կը ներկայացնեն ծանօթ Յիշատակագիրը: Լաճ՝ դժուարահաճութեամբ կը դիմաւորէ Պատուիրակութիւնը: Այս առթիւ մեծապէս աշխատած էր Տիկին Պերթա Փափագեան, որ իր անխոնջ ջանքերով կրցած էր համոզել Ծերակուտական Լաճ, անձապէս դուրս գալու եւ ընդունելու Պատգամաւորութիւնը:

Յետոյ թափօրը կը հաւաքուի Երեսփոխանական սրահին առջեւ, ուր Պատուիրակութիւնը կ'ընդունի Երեսփոխանական ժողովոյ Արտաքին Գործոց Յանձնախումբին Փոխ-Ատենապետ Մր. Հաճըրսի կողմէն: Ան ալ իր կարգին քաջալերական խօսքերով, կը խոստանայ Յիշատակագիրը ներկայացնել Երեսփոխանական ժողովին:

Ընթերցողին կուտանք Յիշատակագրին հետեւեալ մասերը.

«Մենք, հինգ հարիւր պատգամաւորներս, որ կը ներկայացնենք Հայ ծագումով Ամերիկեան Վեթրանները, - որոնց ներկայացուցիչները կռուեցան վերջին պատերազմին մէջ - Ուաշինկթըն եկած ենք ամենայն յարգանքով Նախագահին եւ Քօնկրետին յայտնելու այն խորունկ յուսախաբութիւնը զոր մենք եւ մեր ընկերները կ'զգանք Հայկական հարցի կարգադրութեան յապաղումին պատճառաւ, ուշադրութիւն հրաւիրելու՝ այն անհանդուրժելի կացութեան որուն կը շարունակեն ենթարկուիլ մեր ազգակիցները, Հայ ժողովուրդը, եւ թախանձագին աղերսելու մեր կառավարութենէն որ անոնց ընձեռն անմիջական պաշտպանութիւն եւ օժանդակութիւն»:

«Երբ մենք զէնքի կանչուեցանք, եւ մինչ պատերազմի դաշտը կը գտնուէինք, երջանիկ էինք այն համոզումով թէ մենք կը կռուէինք ոչ միայն մեր որդեգրած սիրելի երկրին պաշտպանութեան համար, այլ նաեւ յարթութեան համար անոր պաշտպանած սկզբունքներուն որոնք պիտի կիրարկուէին ազատութեան եւ պաշտպանութեան համար ճնշուած ազգութեանց, որոնց մէջ մենք բնականաբար առաջին տեղը կուտայինք մեր Մայրենի երկրին, Հայաստանի: Եւ եթէ մեզի ըսուէր թէ զինադադարի թուականէն տարիուկէս ետքն ալ մեր ազգակիցները տակաւին Թուրքին ձեռքը պիտի ըլլային, ենթակայ պիտի ըլլային բռնութեանց եւ ջարդերու եւ տակաւին պիտի արգիլուէին իրենց տուները վերադառնալէ՝ զինաթափ չեղող թշնամիի մը կողմէ, եւ պիտի բռնադատուէին ենթարկուելու ողորմութեամբ ապրելու նուաստութեան, մենք պիտի չհաւատայինք: Սակայն, դժբախտաբար, այս է ահաւոր կացութիւնը»:

«Մենք յարգանքով կը յայտնենք թէ այս բոլորովին ողբալի է, ոչ միայն մարդասիրական ընդհանուր սկզբունքներու տեսակէտէն, այլ նաեւ այն իրողութեան պատճառաւ, որ Հայաստան իրապէս Դաշնակից մըն էր, որուն Ամերիկա եւ Դաշնակից պետութիւնք երախտապարտ են իր զինուորական նշանակելի ծառայութեանց համար»:

«Թերեւս անպատշաճ չըլլայ մի քանի բառով յիշել թէ ինչ էին այդ ծառայութիւնները: Չեզի յայտնի է որ պատերազմին դեռ սկիզբը Հայ ժողովուրդին առաջարկուեցաւ - իր ներկայացուցիչներուն միջոցաւ - ինքնօրէն կառավարութիւն մը եթէ միայն անոնք եւ Ռուսական Հայաստանի իրենց եղբայրները ուզէին որոշակի դաշնակցիլ Թուրքերու եւ Կեդրոնական Պետութեանց հետ, ընդդէմ Ռուսիոյ, եւ թէ՛ զլիաւորաբար այս ընել մերժելուն համար էր որ անոնք իրենց ցեղին ընտրեալներէն կորուսին աւելի քան 800,000 հոգի, կանոնաւոր տեղահանութիւններով եւ ջարդերով, որոնց նմանը պատմութեան մէջ գոյութիւն չունի: Չեզի ծանօթ են Հայ կամաւորներուն Մեծ Դուքս Նիքոլայի բանակին մէջ կատարած դերը, նաեւ ծառայութիւնները Ռուսական բանակին 150,000 Հայ կանոնաւոր զօրքերուն որոնք երկու տարի կռուեցան Արեւելեան ճակատին վրայ, եւ որոնք, Ռուսիոյ անկումէն ետք, Կամաւորներու հետ բռնեցին Կովկասեան ճակատը եւ զայն պաշտպանեցին ամիսներով, առանց օգնութիւն ստանալու Դաշնակիցներու ռեւէ մէկէն: Չեզի ծանօթ է նաեւ որ Պաղեստինի պատերազմին մէջ կային 9000 Հայ կամաւորներ որոնցմէ մի քանի հազարը Ամերիկայէն գացեր էին, եւ թէ՛ Միացեալ Նահանգաց բանակին մէջ կային հազարաւոր Հայ զինուորներ եւ Հայ սպաներէ ալ շատ պատուաբեր թիւ մը:

«Եւ կրնա՞նք աւելցնել, թէ այս վեհանձն ծառայութեան համար զոր յարգալից կերպով կը թախանձենք որ մեր կառավարութիւնը կատարէ, մենք, Ամերիկեան Հայազգի Վեթրաններս, կը խոստանանք մատուցանել մեր ծառայութիւններն ու միջոցները, մինչեւ վերջին ծայրը»:

(Տես «ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ» «ԱԶԳ» Ապրիլ 17, 1920)՝:

«Հիշատակագրի» մյուս օրինակներն ուղարկվեցին Սպիտակ տուն և պետական քարտուղարի հաղորդմամբ՝ անձամբ հանձնվեցին Վուդրո Վիլսոնին: Այժմ այդ թղթերը պահպանվում են Վուդրո Վիլսոնի արխիվում:

Խնդրի լուծման դանդաղ կոտորումից, Ֆրանսիայի կառավարության վարած երկերեսանի քաղաքականությունից «օգտվելով», թուրքերը շարունակեցին մսաղացը **Կիլիկիայում**: Աղետաբեր լուրերը մամուլի հաղորդագրությամբ հասան Նյու Յորք ու Վաշինգտոն՝ անսահման ցավ պատճառելով ամերիկահայ տիկնանց: Ողջ

¹ «Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925», գործ Մամուլ Գ. Ճիզմէճեան, տպագրութիւն «Նոր օր»-ի, Ֆրեզնօ, 1930, էջ 460-464:

ճահանգների կանանցից ընտրվեց մի պատվիրակություն, որը թափորով շարժվեց մայրաքաղաքի կենտրոնական փողոցներով և **Վուդրո Վիլսոնին** հանձնեց իր խնդրագիրը՝ հայ ժողովրդին օգնության ձեռք մեկնելու թախանձանքով:

Ահա այդ դիմումի մանրամասները.

ԱՄԵՐԻԿԱՅ ԱԿՆԵՐՈՒ ԴԻՍՈՒՄԸ

Կիլիկիոյ արհաւիրքներուն ի տես՝ կը շարժին նոյնպէս Ամերիկահայ Տիկիմները:

Ինչպէս Վեթրաններու թափօրն ու Յիշատակագիրը, նոյնպէս Ամերիկայի Հայ Կանանց Միութեան կողմէ Պատուիրակութիւն մը կ'այցելէ Ուաշինկթըն: Պատուիրակութեան կողմէ Տիկիմ Արմենուհի Ֆ. Լեմսըն եւ Տիկիմ Ա. Գեորգեան՝ նախ Ուլսընի Զարտուղար Մր. Թիւմէլթիի միջոցաւ կը մատուցանեն Աղերսագիր մը նախագահին, որ կը բացատրէ Կիլիկիոյ ճգնաժամին դրութիւնը եւ Հաճընի վտանգաւոր կացութիւնը:

Պատուիրակութիւնը կ'ընդունի նաեւ Պետական Զարտուղար Մր. Բօլպիի, եւ Պատերազմական Զարտուղար Մր. Պէյքըրի կողմէ:

Կ'արտատպենք Հայ Տիկիմանց Միութեան Աղերսագրին հետեւեալ մասը:

«ՄԻԱՅԵԱԼ ՆԱՅԱՆՊԱՅ ՆԱԽԱԳԱՅԻՆ

Տէր

Խռովութեան, հարստահարութեան եւ ջարդի լուրերը որոնք կը շարունակեն հասնիլ Հայաստանէն, այն գրոյցը թէ մեր ազատութիւնը, որու համար մենք այնքան ահաւոր զին մը վճարեցինք, տակաւին աննկատ կը մնայ, եւ մեր հայրենի հողը, որ հերոս ու մարտիրոս այսքան Հայ սերունդներու արիւնով ներկուած է, բաժան պիտի ըլլայ մեր թշնամիներուն եւ ուրիշ օտար ազգերու միջեւ, կ'ստիպէ մեզ՝ հայածին կիներս, որ մենք իսկ այն տեղերու ահաւոր բռնապետութենէն ու խժոժութենէն ապաստան գտած ենք այս մարդասէր եւ արդար Հանրապետութեան մէջ, կոչ ընել Ձեզ, Աշխարհի Դատարանին մէջ մեր Մեծ Ներկայացուցչին, եւ խնդրել որ ըսէք վճռական խօսքը, որ ոչ միայն այլեւս պիտի կասեցնէ մեր ցեղին գոյութեան դէմ միութեամբ մեծ դաւադրութիւնը, որ նոյն իսկ այժմ ի յայտ կուգայ շարունակական ջարդերու ձեւով, այլ նաեւ պիտի չէզոքացնէ ու քանդէ այն ծրագիրները, որ կ'սպառնան մեր արդար յոյսերուն Հայկական Անկախ պետութեան մը համար, տարածուած այն հողերուն վրայ, որոնք հանուր աշխարհ գիտէ թէ մերն են»:

«Իբրեւ հայածին կիներ, մենք վստահ ենք որ այս հանդիսաւոր պահուն մենք կը խօսինք ի դիմաց բոլոր Հայերու ուր ուրեք ալ գտնուին: Մենք կը հաւատանք որ արձագանգ կուտանք Հայ մայրերու անհամար սերունդներու ոգւոյն, որոնք ամէնէն աննպաստ պարագաներու տակ, համբերութեամբ աշխատեցան առաքինի ու ազնիւ ցեղ մը յառաջ բերել, եւ միայն տեսան որ իրենց սերունդները կրկին ու կրկին բնաջինջ եղան եւ իրենց զաւակները կատաղօրէն ջարդուեցան, իրենց աղջիկները պղծուեցան, իրենց տուները քանդուեցան, իրենց ամբողջ սիրոյն, յոյսին եւ աշխատութեան արդիւնքը անողորմաբար փծացաւ»:

«Այս անգամ դատաւորներու մէջ նստած է Ամերիկա, որ արդէն իսկ պիտոյեանն է ազատութեան եւ արդարութեան: Անիկա մեծ եւ վճռական ոյժ մըն է ազգերու խորհուրդին մէջ»:

«Հետեւաբար, եթէ հարկ է, մէկ կողմ ձգելով այն յոյսը, որով մենք կը բաղձանք մեր հայրենիքին հոգատարը տեսնել Ամերիկան, եւ առանց նկատի առնելու թէ ո՞ր մէկ պետութիւն ամբողջովին կամ մասամբ պիտի ստանձնէ կամ ոչ այդ դերը, ինչ որ մենք այժմ ստիպողաբար կը բաղձանք եւ կը խնդրենք Ձեզմէ հետեւեալներն են»:

«1. Անմիջապէս ջլատել Թուրքերու զինուորական ոյժը»:

«2. Հայերուն հայթայթել բաւականաչափ միջոցներ, որպէսզի իրենք իսկ պաշտպանեն իրենց երկիրը»:

«3. Հայկական հողեր պէտք չէ բաժան ըլլան կամ ծայրատուին եւ անմիջապէս հռչակուի Հայկական պետութեան մը գոյութիւնը»¹:

Վերադառնանք Փարիզ: 1919 թ. փետրվարի 10-ին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ս. Պիշոն ընդունում է Ա. Ահարոնյանին և Պողոս Նուբար փաշային՝ վերջիններիս խնդրանքով: Հայկական պատվիրակները Ֆրանսիայից խնդրում էին օգնել իրենց՝ խաղաղության կոնֆերանսին մասնակցելու իրավունք ստանալու:

Ահա այդ հանդիպման ընթացքում ծավալված գրոյցի մի հատվածը: Զրույցը ներկայացնում է Ա. Ահարոնյանի իր անունից.

«Ներկայացանք Փաշայի² հետ:

- Թույլ տուէք ինձ, պ. նախարար, յանուն Հայաստանի Հանրապետութեան, ողջունելու ձեզ՝ ազնիւ Ֆրանսիայի ներկայացուցչին եւ ասել, որ շնորհիւ ձեր փառաւոր ու քաջարի բանակի յաղթութեան արդարութիւնն ու իրաւունքը աշխարհում տիրապետող դարձան: Հայաստանը, համայն հայ ժողովուրդը, ազգերի փրկութեան սեղանի վրայ, Դաշնակիցների կողքին, դրեց բոլորն ինչ ունէր, անգամ իր գոյութիւնը: Մասնավորապէս Կովկասում մենք մեծ-մեծակ բռնեցինք ռուսների լքած ճակատը, որ, կարող եմ ասել հպարտութեամբ իմ ազգի համար, դարձաւ հայկական ճակատ: Յանուն Դաշնակիցների, յանուն Ֆրանսիայի ամբողջ 8 ամիս մենք կռուեցինք թուրք-թաթարական-քրդական կռիւիցիայի դէմ: Չենք համարձակուում մտածել եւ յուսալ, թէ փառապանծ Ֆրանսիան պիտի սքանչանայ մեր ժողովրդի անձնուիրութեամբ եւ արիւթեան գործերով, քանի որ Հանրապետական Ֆրանսիան էր, որ սքանչացրեց աշխարհը, բայց խնդրում եմ հաւատալ, որ մենք հայերս մինչեւ վերջը լիապէս կատարեցինք մեր պարտքը: Ես եկած եմ յանուն Հայաստանի Հանրապետութեան ասելու այս բոլորը եւ լսելու Դաշնակիցների խօսքը մեր բախտի վճռական տնօրինութեան համար:

Ս. Պիշոն. - Զգացուած եմ եւ Ձեր ազնիւ զգացումների համար շնորհապարտ: Խնդրում եմ հաւատալ՝ Հայաստանի դատն ու ապագան միշտ խիստ մօտ է եղել Ֆրանսիայի սրտին եւ մօտ էլ կը լինի միշտ: Ֆրանսիան միշտ պատրաստ է հզօրապէս աջակցել ձեր ժողովրդի փրկութեան գործի լաւագոյն ելքի համար:

Ես. - Շնորհակալ եմ, պ. նախարար, եւ երջանիկ եմ, որ առաջին դիմումը Ֆրանսիային ենք ուղղում: Մեզ մեծ ցաւ է պատճառել, որ հակառակ մեր այնքան անշահախնդիր եւ անվերապահ անձնուիրութեան ազգերի դատին, այսօր Հայաստանը համապատերազմիկ (belligerent) չէ նկատուած, եւ չէ ընդունուած խաղաղութեան Կօնգրէտում:

Ս. Պիշոն. - Ճշմարիտ է, այդ ցաւալի է, բայց նկատի առէք, որ Կօնգրէտում մասնակցում են միայն կազմակերպուած պետութիւնները:

Ես. - Անշուշտ, սակայն, եթէ Թիւրքա-Հայաստանը տակաւին պետութիւն չէ, Կովկասեան Հայաստանը, որ պատիւ ունեմ ներկայացնել, արդէն շուտով 10 ամիս է ինչ պետութիւն է, կազմակերպուած ու հաստատուն: Կարծում եմ, որ հայութեան Հանրապետութիւնը կարող էր եւ իրաւունք ունէր ընդունուելու խաղաղութեան Կօնգրէտում, քանի որ իւրօ-սլաւները, արարները, չեխօ-սլովակները ընդունուած են: Մեզ մերժելու պատճառը լաւ չեմ հասկանում:

¹ Մանուկ Գ. Ճիզմէճեան, տպագրութիւն «Նոր օր»-ի, Ֆրէզնօ, 1930, էջ 464-465:

² Պողոս Նուբար Փաշա, նախագահ Ազգային Պատուիրակութեան:

Ս. Պիշոն - Ռուսական պրօբլեմը կայ:

Ես. - Կարծում եմ, սակայն, որ ռուսական պրօբլեմը ընկնում է Լեհաստանի փաստով, Ֆինլանդիայի անկախութեամբ, Բեսարաբիայի զիջումով Ռուսիային:

Ս. Պիշոն. - Ֆինլանդիան տարբեր պարագայ է, Լեհաստանը ճանաչել են իրենք՝ ռուսները, իսկ Բեսարաբիան իրենք՝ դարձեալ ռուսները, թէև բուլշեւիկ, Բրեստ-Լիտովսկի դաշնագրով զիջել են իրենց թշնամուն:

Ես. - Բաւական նշանակալից անալօգիա կայ մեր եւ Բեսարաբիայի մէջ: Ռուսները ոչ միայն մեզ լքեցին ու հեռացան, թողնելով մեզ ժառանգութիւն մի պատերազմ, որ մեր ուժերից վեր էր միմակ տանել, այլև նոյն Չեր յիշատակած դաշնագրով մեր երկրի մի քանի մասերը՝ Կարս, Արդահան, Կաղզուան զիջեցին թիւրքերին:

Ս. Պիշոն. - Իրաւունք ունիք, այո՛, իրաւունք ունիք, անալօգիա կայ: Ներկայացրեք մեր գրոյցի իմաստով մի յիշատակագիր Խաղաղութեան Կօնգրեսին, եւ ես Ձեզ խոստանում եմ իմ լիակատար աջակցութիւնը:

Այդ յիշատակագիրը ես ներկայացրի Կօնգրեսին»¹:

Հայկական պատվիրակութիւնների ղեկավարները Ս. Պիշոնին են հանձնում նախօրոք պատրաստված գրության ֆրանսերեն տարբերակը՝ հույս փայփայելով, թե իրենց թույլ կտան մասնակցելու Փարիզի խաղաղության կոնֆերանսի բոլոր նիստերին:

Պողոս Նուբար փաշան և Ավետիս Ահարոնյանը երբեմն միասին, հիմնականում առանձին-առանձին ընդունելության են արժանացել նաև *Դեվիդ Լլոյդ Տորոզի* (24. IV, 1919)², *Ռիմստոն Չերչիլի* (8. I, 1920)³, *Լորդ Քերզոնի* (8. IV, 1920)⁴, *Է. Վեմիզելուսի* (1. I, 1919)⁵, *Լորդ Ռոբերտ Սեսիլի* (22. II, 1920)⁶, *Լևոն Բուրժուալի* (9. IV, 1919)⁷, *Ժորժ Կլեմանսոյի* (10. XII, 1919)⁸, *Էմիլ Դիլոնի* (9. V, 1919)⁹, եվրոպական և ամերիկյան բարձրաստիճան շատ այլ պետական գործիչների և դիվանագետների հետ:

Հայ պատվիրակների վարած բանակցութիւնների թեման հիմնականում մեկն էր. այն է՝ ապագա Հայաստանի սահմանների, մեծ թե փոքր Հայաստանի ստեղծման, Հայկական Կիլիկիայի՝ հայ ժողովրդին վերադարձի, դեպի ծով ելք ունենալու, ամենակարևորը՝ հովանավոր մեծ պետության ընտրութեամբ մեր երկրի ունենալիք կարգավիճակի խնդիրները: Հայ պատվիրակներն իրենց անդադրում գործունեութեամբ հասնում էին նպատակներին:

Նրանց ջանքերով էր, որ վերոհիշյալ խնդիրներն իրենց արտացոլումը գտան նախ Սան Ռեմոյի, ապա Սևրի դաշնագրի էջերում: Եվ երախտագետ հայ ժողովուրդն արժանին պիտի հատուցի իր դիվանագետ, բանիմաց ու հայրենամկեր զավակներին, որոնք ոչինչ չխնայեցին՝ հասնելու առաջադրված խնդիրների արդարացի լուծմանը: Թե ինչպե՞ս: Մենք կտեսնենք մենագրության հաջորդ գլուխներում:

¹ *Ավետիս Ահարոնյան*, Սարգարապատից մինչև Սեւր ու Լօզան (քաղաքական օրագիր), Պոսթըն, 1943, էջ 7-8:

² *Դեմո Վոմո Դեօրձա*, *Правда о мирных договорах*, том второй, стр. 433.

³ *Ավետիս Ահարոնյան*, նշվ. աշխ., էջ 37-39:

⁴ Նույն տեղում, էջ 57-61:

⁵ Նույն տեղում, էջ 24:

⁶ Նույն տեղում, էջ 40-42:

⁷ Նույն տեղում, էջ 159-160:

⁸ Նույն տեղում, էջ 33:

⁹ Նույն տեղում, էջ 162:

Գլուխ վեցերորդ

Առաջին աշխարհամարտի հաղթական ավարտը:

Փարիզի խաղաղության կոնֆերանսն

(18. I, 1919 - 28. VI, 1919)

ու Վերսալի հաշտության պայմանագիրը

(28. VI, 1919)

«Թուրքական պայմանագիրը ստորագրվեց Մերում մենապակու գործարանի գրնվելու վայրում... Եվ նա ինքը փիզուն է գուցե և ջարդված սափոր: Մի դիպչեք նրան: Արդեն վերջին թուպին Հոռոս կղզու ապագա ճակատագրի հարցում Հունաստանի և Իտալիայի հակադիր տեսակետները քիչ մնաց խափանին ամբողջ գործը: Բազմիցս հայտարարված ստորագրութեան արարողութիւնն անընդհատ հեղաշրջվում էր: Այն վերջապես տեղի ունեցավ հոգնածութեան և անպարբերութեան մթնոլորտում, և ուշադիր դիտորդներից մի քանիսը միայն, ոչ առանց մեղանադութեան, նկատեցին, որ դրանով ստորագրվում է ֆրանսիական ազդեցութեան խիստ բուլացումն Արևելքում»:

ՌԱՅՄՈՆ ՊՈՒԱՆԿԱՐԵ

Ճրանսիայի պրեզիդենտ, 1919 թ.

1. Գերմանական Քառյակի կրած ջախջախիչ պարտությունը:

Առաջին աշխարհամարտի ավարտը

Քառամյա արյունահեղութիւնից, բառացիորեն մսաղացից հետո Առաջին աշխարհամարտում Դաշնակից տերութիւններն ազդարարեցին իրենց հաղթանակը: Պատմութեան ետնախորքում թողնելով բազում անակնկալներ, դառն ու դաժան փորձութիւններով առլեցուն, բազմակնճիռ իրադարձութիւններ, այո, այն իր իսկ ժամանակին վերածվեց *ուսանելի պատմութեան*¹:

¹ Այս մասին աշխարհի բազում լեզուներով ստեղծվել է *ժովածավալ* գրականութիւն, իրատարակվել են վավերագրերի ժողովածուներ այնքան առատ, որ դրանց ճշգրիտ համրանքը նույնիսկ պատմաբանիս ուժերից վեր է: Ուստի մենք դրանցից առանձնացրել ենք *հատընտիրը* և օգտագործելիս

Աշխարհամարտը, սակայն, իր աներևակայելի բացասական հետևանքներով հանդերձ, **դաս ու դասարանի** դեր ստանձնեց համահողագնդյան բեմահարթակի վրա, դեգերելով պետական այն այրերի համար, որոնք պարտադրված էին զբաղվել հանուր մարդկության ճակատագրերին վերաբերող խնդիրների լուծման առաքելությամբ¹: Նրանք մտահոգված էին այնպիսի որոշումներ կայացնել, որպիսիք բացառեին մարդկությանն այդքան չարիքներ պատճառած երևույթների շուտափույթ կրկնությունը: Դրանցում, անշուշտ, խիստ հետաքրքրված էին ժամանակի ղեկավարները, ինչու էլ, նաև այսօրվա պաշտոնյաները²:

Այդուհանդերձ, 1918 թվականի արշալույսին **Քառյակ** խմբավորումը, նրա նվազարանի առաջին լարին վաղուց տիրացած **կայգերական Գերմանիան** հուսահատական, բայց վերջին ճիգերն էին գործադրում դրությունը փրկելու սին հույսերով³:

Հանուր մարդկության, մասնավորապես անօգնական ու անպաշտպան հայ ժողովրդին այդքան վիշտ ու տառապանք պատճառած երիտթուրքերի մենտոր **Վիլհելմ կայսրը** 1918 թ. մարտի 21-ին հրաման արձակեց՝ պահեստային բոլոր ուժերը **մեկտեղելով**⁴ լայնահուն ու վճռական հարձակում ծավալել «դարավոր թշմանու»՝ **Հանրապետական Ֆրանսիայի** դեմ⁵:

Այդ պահին Սենայի ափերին վիճակն այդքան էլ մխիթարական չէր: Մարդկային ռեսուրսները գնալով նվազում էին: Բանակի երբեմնի մարտական ոգին գրեթե անհետանում էր, հեղափոխական տրամադրությունները համակել էին ավանդապես ըմբոստ ֆրանսիական զինվորներին: Այդ ամենը ճշգրտորեն հաշվարկելով, Գերմանիան որոշեց սրընթաց հարձակումով Փարիզին խոցել սրտից:

1918 թվականի ապրիլի 4-ին գերմանական բանակը սկսեց առաջընթաց **Սոմա և Լիս** գետերի ուղղությամբ: Հարվածն անսպասելի էր: Այդ պատճառով էլ ֆրան-

սիական զորքերը հանկարծակիի գալով, չկարողանալով դիմագրավել գերմանական բանակի սրընթաց գրոհներին, հարկադրված էին բռնել նահանջի ճանապարհը⁶:

Ժամանակավորապես այդ հաջողություններից ոգևորված, ինչպես նաև օգտվելով **Բրեստյան** բանակցություններից, Բեռլինը ռուսական սահմանագլխին կուտակած զորքերը ևս տեղափոխեց Արևմտյան ռազմաճակատ: 1918 թ. մայիսի 27-ին Գերմանիան, շարունակելով հարձակումը, սկսեց խորանալ Ֆրանսիայի կենտրոնական նահանգները:

Գերմանացիներին Ֆրանսիայի մայրաքաղաքից արդեն բաժանում էր **ընդամենը 70 կմ**: Անգլո-ֆրանսիական զորամիավորումների դիմադրողական կարողություններն այլևս բավարար չէին կանգնեցնելու կայգերական բանակի սրընթաց առաջընթացը: Նույնիսկ սկսվեց Փարիզի ռմբակոծումը: Սենայի ջրերը լցվեցին գերմանական հրանոթների արձակած արկերով⁷: Դաշնակիցների շարքերում խուճապ առաջացավ: Ժրժ Կլեմանսոն թախանձազին օգնություն էր խնդրում և Դ. Լյուդ Ջորջից, և Օրլանդոյից: Ստացված օգնությունը, սակայն, բավարար չէր կանգնեցնելու գերմանացիների առաջընթացը:

Թերևս գնալով վիճակն ավելի վատթարանար, եթե Անտանտի տերություններին օգնության ձեռք չմեկնեք Ամերիկայի Միացյալ Նահանգները: Պատերազմի առաջին երեք տարիներին հյուսիսային նահանգները որդեգրեցին զինված չեզոքության քաղաքականություն: **1917 թ. ապրիլի 6-ին միայն Վուդրո Վիլսոնը**, ստանալով Կոնգրեսի համաձայնությունը, պատերազմ հայտարարեց գերմանական **Քառյակին**:

ԱՄՆ-ի 28-րդը, տեղեկանալով, որ անգլո-ֆրանսիական զորքերը պարտություններ են կրում եվրոպական ռազմաճակատներում, հրամայեց՝ ավելացնել պատերազմ մեկնող իր զորքերի թվաքանակը: Նա բացեիքաց օգնության էր շտապում Ֆրանսիային նաև այն պատճառով, որ հեղափոխության զարմանահրաշ գեղեցիկ մայրաքաղաքը կարող էին ավերածության ենթարկել **գոթական բարբարոսները**:

1918 թ. հունիսին Արևմտյան կիսագնդից Եվրոպա մայրցամաք առափնեցին **ամերիկյան 278,664 զինվոր ու սպա**: Հուլիսին սրանց շարքերն **համալրեցին ևս 306,350 զինվորականներ**: Հատկանշականն այն էր, որ ամերիկյան բանակը գործում էր իր պրեզիդենտի անմիջական հրամանատարությամբ: Նման պարագան գայրույթ էր պատճառում օգնության կարոտ **ժրժ Կլեմանսոյին**, հատկապես նրա գեներալներին: Հարկադրվածությունը, սակայն, վերջիններիս ստիպում էր համբերությամբ վերաբերվել ստեղծված իրադարձություններին⁸:

1918 թ. հուլիսի 18-ից սկսած, **էյ և Բեյ** գետամեջերին ընկած 45 կմ իրարից հեռու գտնված տարածքում Դաշնակիցները փորձեցին կանգնեցնել գերմանացիների առաջխաղացումը: Նրանք մարտահրապարակ նետեցին Անտանտին պատկանող տանկերի (հատկապես անգլիական) և ինքնաթիռների ընդհանուր թվի **կեսից ավելին**: Կռիվն ասիվոր էր, արյունահեղ, առավել քան երբևէ: Դրանց ավելի ուժ տվեցին օգոստոսի 8-ին օգնության շտապող իտալական ծովային հետևակալիները:

մարաքերն ենք դրանք, զրականության վրայից «բախ ենք տվել ժամանակի կոնյունկտուրային հատուկ, բայց անցանկալի փոշու նստվածքը»: Ջանացել ենք հնարավորինս լինել անկողմնակալ, ճշմարտացի, հարկավ, թե ինչքանով ենք հասել մեր առաջադրած խնդրի լուծմանը, իր արդարացի խոսքը կասի **անկողմնակալ ընթերցողը**:

¹ Նշենք խնդրով զբաղված օտար հեղինակներից մի քանիսի անունները միայն. **Դոնաթ Լոյծ Դջորձջ**, *Правда о мирных договорах*, том I-II, Москва, 1957. **Գ. Նիկոլյսոն**, *Как делался мир в 1919 г.*, Москва, 1945. «Версальский мирный договор», со вступительной статьей **Ю. В. Ключникова**, Москва, 1925. **Уинстон Черчилль**, *Мировой кризис, Автобиография, речи*, Москва, 2003. «Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне», Москва, 1927, со вступительной статьей проф. **Ю. В. Ключникова**. Проф. **Ю. В. Ключников**, *Мирные договоры и империалистические войны в конспективном изложении*, Москва, 1925. «Вудро Вильсон, Мировая война, Версальский мир», Москва-Петроград, 1923.

² Զննարկվող խնդիրները, բնականաբար, վերաբերում էին **Հայաստանին** և **հայ ժողովրդին**: Դրանով պայմանավորված՝ **ժամանակակիցները**, դեպքերին ականատեսներն ու մասնակիցները թողել են **վավերական հուշեր**, անփոխարինելի գրառումներ, ինչպես նաև դրանց հիմքին հենված՝ ծավալուն աշխատություններ: Նշենք դրանցից մի քանիսը: **Ավետիս Ահարոնյան**, *Սարդարապատից մինչև Սեւր ու Լոզան*, Պոսթըն, 1943: **Վահան Փափազբան**, *Իմ Յուշերը*, Գահիրե, 1957: **Ալ. Խատիսեան**, *Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը*, Երևան, 1968: **Սիմոն Վրացյան**, *Հայաստանի Հանրապետությունը*, Երևան, 1998: **Մանուկ Գ. Ծիզնեճեան**, *Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925)*, Ֆրեզնո, 1930:

³ Թեմային վերաբերող խնդիրների մեծ մասի հետազոտությունն արժանացել է ազգությամբ հայ պրոֆեսիոնալ պատմաբանների ուշադրությանը: Նշենք նրանցից մի քանիսին. **Ռիչարդ Գ. Հովհաննիսյան**, *Հայաստանի Հանրապետությունը*, հատոր առաջին, Երևան, 2005: **Փալուստ Փալոյան**, *Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923)*, Երևան, 1999: **Տիգրան Սահակյան**, *Ցավալի պայմանագրեր*, Երևան, 2007: **Համբարձում Կարապետյան**, *Սևրի պայմանագիրը հայոց ճակատագրում*, Երևան, 2004: **Գ. Գ. Մաքսյան**, *Лига наций, Армянский вопрос и Республика Армения*, Ереван, 1999. **Ю. Գ. Барсегов**, *Геноцид армян...*, том 1, 2, 3, Москва, 2003-2005

⁴ Մանրամասն տե՛ս «История дипломатии», том III, Москва, 1965, стр. 107-108.

⁵ Մանրամասն տե՛ս «Документы внешней политики СССР», том I, док. 106-108.

⁶ Մանրամասն տե՛ս **Դ. Լոյծ Դջորձջ** (Бывший первый министр Англии), *Европейский хаос*, перевод с английского, Ленинград-Москва, 1924, стр. 36-38.

⁷ «Архив полковника Хауза», том II, Москва, 1937, стр. 350.

1918 թ. օգոստոսի 9-ը համարվում է գերմանական բանակի ջախջախման օրը: Նախ օգոստոսի 8-ին անգլիական տանկերը ճեղքեցին գերմանացիների ռազմաճակատի առաջին գիծը և ըստ բանակը բաժանեցին երկու մասի¹: Մյուս օրը հակահարձակումն ուժեղացրեցին ֆրանսիացիները: Դաշնակիցների հաղթանակն արդեն աներկբա էր: Նրանք իրար հետևից գրավում էին գերմանական շտաբները, գերի վերցնում զինվորներին հազարներով, տասնյակ հազարներով: Գերմանական բանակի վերջնական ջախջախումն այլևս կասկած չէր հարուցում:

1918 թ. օգոստոսի 14-ին ռադիոյով ելույթ ունենալով, գեներալ **Է. Լյուդենդորֆը** հայտարարեց, թե «**օգոստոսի 8-ը համարվում է գերմանական բանակի ամենասև օրը: Անհրաժեշտ է զործադրել բացառիկ միջոցառումներ**»²: Գերմանիան կապիտուլյացիայի ենթարկելու լուրը հաղորդվեց Դաշնակիցներին:

1918 թ. օգոստոսի 13-ին Սպա քաղաքի «**Բրիտանիկ**» հյուրանոց էին ժամանել գեներալներ **Է. Գինդենբուրգն** ու **Է. Լյուդենդորֆը**, ինչպես նաև սպայակույտի բարձրաստիճան այլ ներկայացուցիչներ: Է. Լյուդենդորֆն այստեղ առաջին անգամ պաշտոնապես խոստովանեց, որ ռազմաճակատներում Գերմանիան պատերազմը վերջնականապես արդեն տանուլ է տվել: Որպես «դեղամիջոց» նա առաջարկում էր, թե այն, ինչ Քառյակ միությունը կորցրել էր պատերազմի ռազմադաշտում, կարելի էր գտնել դիվանագիտական գաղտնուղիներում, միջազգային նոր հարաբերությունների ձևավորման **խարդախավայրերում**:

Դրության լրջությունը գիտակցելով, **Վիլհելմ երկրորդ** կայսրն օգոստոսի 14-ին, վաղ առավոտյան (ժամը 9.30-ին) կայսրական պալատ հրավիրեց գերմանական ամենաբարձրաստիճան զինվորականների մեծ մասին՝ նրանց հետ քննարկելու ճակատագրական կործանումից երկրի ելքի մայրուղիները: Բոլոր բանախոսներն էլ տխուր ներկայացրեցին երկրի վիճակը: Կայսրն, ամփոփելով ելույթների բովանդակությունը, ընդունեց պարտության առկայությունը և արտաքին զործերի նախարարին հանձնարարեց բանակցություններ սկսել **Նիդերլանդների թագուհու հետ**, նրան խնդրելով միջնորդի դեր ստանձնել պատերազմը դադարեցնելու, զինադադար հաստատելու Անտանտի տերությունների հետ³:

Նույն օրը **Սպա ժամանեցին** նաև **Կարլոս կայսրը**, Ավստրո-Յունգարիայի արտգործնախարար **Բուրիստը**, զորքերի գլխավոր հրամանատար **Ֆոն Արցը**: Սրանք նույնպես ընդունեցին իրենց երկրի պարտությունը և հետևելով Գերմանիայի օրինակին, որոշեցին **դիմել Դաշնակիցներին՝ նրանցից խնդրելով զինադադարի բանակցություններ սկսել**⁴:

1918 թ. սեպտեմբերի 14-ին Ավստրիայի կառավարության անունից **գրաֆ Բուրիանը** հատուկ ուղերձով դիմեց պատերազմի մասնակից բոլոր տերությունների ղեկավարությանը, **նրանց առաջարկելով ընտրել և հավաքվել մի չեզոք երկրում և այնտեղ քննել պատերազմը դադարեցնելու և հաշտություն կնքելու խնդիրները**⁵: Նուտան ուղարկվեց նաև չեզոք երկրներին, այդ թվում և **Ղոզմի պապին**⁶:

¹ "История дипломатии", том III, стр. 108. См'и նաև **Э. Людendorф**, Мои воспоминания о войне 1914-1918 г., том II, Москва, 1924, стр. 217.

² **Э. Людendorф**, նշված աշխատությունը, էջ 218.

³ "История дипломатии", том III, Москва, 1965, стр. 115-117.

⁴ **Г. Никольсон**, Как делался мир в 1919 г., вступительная статья И. В. Майский, Москва, 1944 (ноябрь), стр. 17.

⁵ **Гельферих**, Из воспоминаний, Москва, 1922, стр. 22.

⁶ "История дипломатии", том III, стр. 111.

Սեպարատ հաշտության Ավստրիայի առաջարկը լուրջ արձագանք գտավ խաղաղության ծարավ աշխարհում: **1918 թ. սեպտեմբերի 17-ին** ԱՄՆ-ի պրեզիդենտ **Վ. Վիլսոնն** իր պետական քարտուղարին հանձնարարեց պատասխանել Վիեննայի կաբինետին, թե ինքը վաղուց է խաղաղություն հաստատելու առաջարկին սպասել:

Սեկ օր անց Լոնդոնում հանդես եկավ **Բալֆուրը** և անհամաձայնություն հայտնեց այդ նուտայի հետ, իսկ **ժորժ Կլեմանսոն** սպառնաց Քառյակի երկրներին՝ հաշիվ տալու իրենց կատարած չարագործությունների համար: Այդուհանդերձ, գերմանական ունակի մեջ ճեղքեր առաջացան և մյուս երկրները ևս զենքը վար դնելու և հանձնվելու առաջարկներ արեցին¹:

Յերթի էր դրված **Բուլղարիայի խնդիրը**: **1918 թ. սեպտեմբերի 15-ին** անգլիական զորքերն ուժեղացրեցին հարձակումը **սլովենական** ռազմաճակատում: Բուլղարիայում այդ պահին ուժեղացել էին հեղափոխական ընդվզումները: Բանակն այլևս չէր ենթարկվում հրամանատարությանը, որը և հեշտացնում էր Դաշնակիցների զորքերի առաջընթացը: **Սեպտեմբերի 24-ին**, առանց մեծ դժվարությունների, բրիտանական ծովային ուժերը գրավեցին բուլղարական ռազմական շտաբը **Կյուստինդիլում**: Բուլղարական զորքերը հազարներով գերի էին հանձնվում:

Սեպտեմբերի 27-ին Ֆերդինանտ թագավորը փորձեց փախչել մայրաքաղաքից: Սեպտեմբերի 29-ին ԱՄՆ-ի դիվանագիտական և նույնիսկ ռազմական միջամտությամբ Բուլղարիան զենքը վար դրեց և **Սալոնիկում ստորագրեց զինադադարի համաձայնությունը**²:

Նոյեմբերի 3-ին **Ֆերդինանտ** թագավորը հրաժարվեց գահից: Բանակցությունները, սակայն, շարունակվեցին: 1918 թ. մարտին **Նոյիի** (Փարիզի արվարձան) պայմանագրով Բուլղարիան ստորագրեց իր պարտության արձանագրությունը, կտրվեց **Էգեյան** ծովից և համաձայնեց հրաժարվել նախկին տարածքների զգալի մասերից:

Դեռևս Բուլղարիայի հետ հաշիվները չմաքած, 1918 թ. սեպտեմբերի 19-ին բրիտանական զորքերը հարձակվեցին Թուրքիայի վրա: Երիտթուրքերի դիմադրությունը երկար չտևեց: **Չոկտեմբերի 30-ին կնքվեց Մուդրոսի զինադադարի ակտը, որով Թուրքիան զենքերը վար դրեց բրիտանական հրամանատարության առաջ** (այս մասին տես նախորդ ենթագլխում):

Պատերազմի «դաշտում» դեռևս մնում էր քարոզված ու հուսալքված Գերմանիան: Վրեժխնդրությամբ լցված **ժորժ Կլեմանսոն** ձգձգում էր զինադադարի բանակցությունները, որպեսզի վրեժխնդիր լիներ իր երկրին այդքան հոգսեր պատճառած գերմանացիներից: Վերջապես 1918 թ. **նոյեմբերի 5-ին** Դաշնակիցները տեղեկացրեցին Վիլսոնին, որ իրենք համաձայն են Գերմանիայի հետ զինադադարի բանակցություններ սկսել, հիմք ունենալով «**Տասչորս կետերում**» առաջարկված սկզբունքները:

Անտանտա-Գերմանիա բանակցությունների մասին ավելի քան պատկերավոր է գրված «**Դիվանագիտության պատմություն**» կոլեկտիվ աշխատության **երրորդ** հատորում: Այն մեջբերեմք ամբողջությամբ:

«События в Германии тем временем нарастали бурными темпами. В двери

¹ "Вудро Вильсон, Мировая война, Версальский мир", предисловие Мих. Павловича, Москва-Петроград, 1923, стр. 359-370.

² "История дипломатии", том III, стр. 111-113.

³ **А. М. Шамсутдинов**, Национально-освободительная борьба в Турции 1918-1923, Москва, 1956, стр. 15-17.

стучалась революция. Военное и экономическое истощение страны достигло предела. Германские империалисты принимали все меры к спасению возможно большего и прежде всего - командных кадров. Людендорф ушел в отставку, на него возложили задачу заняться выявлением и сохранением надежных частей. Гинденбург остался. Его именем пытались поддержать хоть какую-нибудь дисциплину в армии. Между генералитетом и гражданскими властями установилось своеобразное разделение труда: гражданские представители вели переговоры о мире, брали на себя обязательство выполнять честно все условия, а генералы создавали обстановку, препятствующую выполнению этих условий. Министры обязывались прекратить подводную войну, а командование прятало подводные лодки, разбирало их по частям и под видом разных машин рассовывало их по складам. Командование продолжало пиратские операции флота. Так, уже после обещания прекратить подводную войну немцы потопили пассажирский пароход "Лейнстер". Германская военщина полностью оправдывала характеристику: "В победе - жестоки, в поражении - низки".

4 ноября восставшие немецкие моряки захватили г. Киль и военные корабли, стоявшие в порту. На следующий день восставшие рабочие и матросы заняли Любек, Гамбург, Бремен. Революция распространялась по стране, проникая в армию. Повсюду создавались Советы рабочих и солдатских депутатов. 6 ноября генерал Гренер, заменивший Людендорфа на посту генерал-квартирмейстера, докладывал военному кабинету о положении на фронте. Генерал требовал "во что бы то ни стало избежать окончательного поражения армии".

Заседание военного кабинета шло в крайне нервной обстановке. Чуть ли не каждую минуту поступали тревожные телеграммы. В полдень было решено немедленно выслать делегацию, с тем чтобы она начала мирные переговоры не позже 8 ноября. Если даже не последует согласия Антанты, то германская делегация, выкинув белый флаг, должна начать переговоры о перемирии или капитуляции. С этим согласились все, и в том числе верховное командование.

Председателем германской делегации был назначен Юрцбергер. Ему выдали необходимые документы. Канцлер вручил ему чистый бланк с подписью, которым он мог распоряжаться по своему усмотрению.

7 ноября вечером автомобиль германской делегации под белым флагом пересек фронт. Эрцбергер со спутниками сел в вагон со спущенными занавесками и утром прибыл на станцию Ретонд, в Компьенском лесу, где стоял штабной поезд Фоша. В то же утро делегация была принята маршалом.

Не подав немцам руки, Фош спросил:

- Чего вы хотите, господа?...
- Мы хотим получить ваши предложения о перемирии.
- О, у нас нет никаких предложений о перемирии, - сказал Фош. - Нам очень нравится продолжать войну...
- Но нам нужны ваши условия. Мы не можем продолжать борьбу.
- Ах, так вы, значит, пришли просить о перемирии? Это другое дело¹.

Заставив, таким образом, германских делегатов просить о перемирии, Фош приказал прочесть им условия. Германия обязывалась в течение 15 дней очистить занятые территории в Бельгии, Франции, Люксембурге, покинуть Эльзас-Лотарингию, Румынию, вывести войска из Австро-Венгрии и Турции, выдать Антанте 5 тыс. тяжелых и полевых орудий, 30 тыс. пулеметов, 2 тыс. самолетов, 5 тыс. локомотивов, 5 тыс. исправных автомобилей и т. д. Антанта занимала войсками левый берег Рейна, причем содержание оккупационной армии возлагалось на Германию. Германия отказывалась от Брест-Литовского и Бухарестского договоров. Войска в Восточной Африке должны были сдаться. Военнопленные, взятые немцами, возвращались на родину, но германские военнопленные оставались в плену. Германия выдавала 6 дредноутов, 8 тяжелых крейсеров, 10 крейсеров и 300 подводных лодок; остальные суда разоружались и переходили под контроль союзников. Блокада Германии сохранялась.

Условия Компьенского перемирия свидетельствовали о намерении использовать Германию в борьбе против России. Ст. 12 предусматривала, что германские войска должны покинуть территорию России только тогда, когда "союзники признают, что для этого настал момент, приняв во внимание внутреннее положение этих территорий". А в ст. 16 указывалось, что союзники "в целях поддержания порядка" будут иметь свободный доступ на территории, эвакуированные немцами на восточных границах.

То было требование капитуляции. Германской делегации дали 72 часа для ответа - до 11 часов утра 11 ноября. Делегация направила эти условия в Берлин, а до получения ответа предложила организовать частное совещание с представителями англо-французского командования.

На совещании немцы заявили, что условия Антанты невыполнимы. Немецкие представители прибегли к прямому шантажу. Они угрожали, что требования, предъявленные Фошем, "толкнут Германию в объятия большевиков".

Особенно настойчиво протестовала германская делегация против оккупации Рейнской области, добиваясь сокращения районов, подлежащих занятию войсками Антанты. Немцы упорно настаивали на том, чтобы германская промышленность в районах, временно занимаемых союзниками, не подвергалась демонтажу, чтобы немецкий персонал оставался на месте и т. п. Основные их старания сводились к тому, чтобы сохранить производственный потенциал Германии в неприкосновенности.

Контрпредложения немцев были вручены Фошу. Делегатам предоставили возможность держать связь с Берлином. Оттуда ответили, что Вильгельм II низложен с престола и 9 ноября бежал в Голландию. Создано правительство во главе с правым социал-демократом Эбертом. Новое правительство предложило делегации выдвинуть возражения против наиболее беспощадных требований союзников; в случае отклонения возражений - подписать условия, но одновременно заявить протест Вильсону.

Немецкие представители упростили созвать новое частное совещание уполномоченных обеих сторон. Эрцбергер, по его собственному признанию, "настойчиво указывал на большевистскую опасность", добиваясь смягчения требований.

¹ Д. Ллойд Джордж, Военные мемуары, т. VI, стр. 172.

Пресловутая "большевистская опасность" стала коньком, на котором пытались выезжать все разновидности правительств германского империализма.

В частных совещаниях германская делегация добилась незначительных уступок: сокращения числа выдаваемых пулеметов с 30 тыс. до 25 тыс., самолетов — до 1700. По поводу подводных лодок она заявила, что Германия не в состоянии вернуть 300 подводных лодок, ибо налицо у нее имеется всего 100 единиц¹.

1918 թ. նոյեմբերի 11-ին, առավոտյան ժամը 10-ին ստորագրվեց զինադադարի արձանագրությունը: Գերմանիան անձնատուր եղավ, և փաստորեն ավարտվեց Առաջին աշխարհամարտը, որի պատվին հնչեցվեց հրանոթային 101 համազարկ: Առաջին զինադադարի պայմանագիրը.

"Договор о перемирии, подписанный 11 ноября в 5 ч. утра в Компьене, в вагоне маршала Фоша, заключал в себе 34 статьи и ряд приложений. В основном его условия сводились к следующему:

А. Западный фронт. Прекращение враждебных действий на суше и в воздухе (ст. 1). Очищение Бельгии, Франции, Люксембурга и Эльзас-Лотарингии в течение 15 дней (ст. 2). Выдача военного материала (ст. 4). Очищение левого берега Рейна, управление на нем при помощи местных властей под надзором оккупационных войск; создание нейтральной зоны (ст. 5). Передача локомотивов, вагонов и грузовых автомобилей; передача эльзас-лотарингских железных дорог (ст. 7). Право союзников на реквизиции; содержание оккупационных войск за счет Германии (ст. 9). Возвращение всех союзнических военнопленных без одновременного возвращения германских военнопленных (ст. 10).

В. Восточные границы Германии. Немедленный вывод германских войск из Австро-Венгрии, Румынии, а по указанию союзников и из бывших русских областей (ст. 12). Немедленный вывод немецких войск из России (ст. 13). Запрещение реквизиций и т. п. Румынии и России (ст. 14). Отказ от Бухарестского и Брест-Литовского мирных договоров (ст. 15). Свободный пропуск союзников к областям, очищенным Германией на востоке, "в целях охраны населения и поддержания порядка" (ст. 16).

С. Восточная Африка. Вывод германских войск (ст. 17).

Д. Общие постановления. Возвращение всех союзнических (но не немецких) гражданских интернированных (ст. 18).

Финансовые положения. Независимо от последующих требований союзников: возмещение убытков, запрещение изъятия публичных ценностей, могущих служить гарантией для возмещений, немедленное возвращение наличности Бельгийского Национального Банка и всяких документов, ценных бумаг и денег, относящихся к занятым областям; выдача союзникам русского и румынского золота (ст. 19).

Е. Морские положения. Выдача германского подводного флота и охрана его союзниками (ст. 22). Интернирование указанных союзниками германских судов в нейтральных или союзнических портах; помещение остальных германских судов в германских портах под надзором союзников (ст. 23). Право союзников на свободный вход судов в Балтийское море; занятие союзниками немецких фортов

¹ "История дипломатии", том III, стр. 116-118.

во всех проливах, ведущих в Балтийское море (ст. 25). Сохранение блокады; захват союзниками немецких торговых судов в открытом море; обещание союзников снабжать Германию продовольствием во время перемирия (ст. 26). Демобилизация военных воздушных судов Германии и помещение их в германских базах, указанных союзниками (ст. 27). Оставление в неприкосновенности на бельгийском побережье всего находящегося там портового имущества, судов и пр. (ст. 28). Очищение портов Черного моря; выдача захваченных там русских военных судов, возвращение нейтральных торговых судов и всех материалов (ст. 29). Возвращение торговых судов союзников (ст. 30). Запрещение перехода немецких торговых судов под нейтральный флаг (ст. 33).

Ф. Длительность перемирия: 36 дней, с правом возобновления; установление постоянной международной комиссии по перемирию (ст. 34).

Приложения касались: первое - порядка эвакуации занятых областей и порядка выдачи немцами военного материала; второе - путей и средств сообщения по левому и правому берегам Рейна, их персонала и материалов и, особо, - телеграфных и телефонных сообщений¹.

2. Եվրոպան և Ամերիկան նախապարտաստվում են խաղաղության կոնֆերանսին

1918 թ. նոյեմբերի 11-ին, առավոտյան ժամը 10-ին փաստականորեն և իրավաբանորեն ավարտվեց Առաջին աշխարհամարտը: Այն հարատևեց՝ **հիսունմեկ ամիս, երկու շաբաթ և երեք օր**: Միանգամից դադարեցվեցին երեք աշխարհամասերի վրա ծավալված պատերազմական գործողությունները: Լռեցին երկրացունց թնդանոթները: Միլիոնավոր զինվորներ զորացրվեցին և վերջապես վերադարձան իրենց հայրենի օջախը՝ սեփական ընտանիքների և հարազատների գիրկը:

Ծայր առավ ահեղացող մրցամարտի **երկրորդ շրջափուլը**: Գնալով իրար դեմ պայքարի, այսինքն՝ դիվանագիտական մրցամարտերի նոր ալիք բարձրացավ, որը պակաս դաժան ու ցավազին չէր, որքան պատերազմական թեժ կոհվները: Սրին փոխարինելու եկավ գրիչը: Հրացանով զինված զինվորի փոխարեն մրցահրապարակ իջավ **խորամանկ, երբեմն էլ խարդախ դիվանագետը**: Սկսվեց բաժանված աշխարհի վերաբաժանման պրոցեսը²:

Պատերազմին հաջորդող բարդ, խճճված, միաժամանակ բախտորոշ իրադարձությունների զարգացումը, բնականաբար, պետք է տոն տար միջազգային հարաբերություններին, ազդր հաղթանակած երկրների կառավարող առաջին դեմքերի աշխարհայեցողության վրա:

Ձարմանալով արձանագրենք, որ քաղաքակիրթ մարդկությունը երբեք տաղանդավոր ղեկավարների այդպիսի մարդաշատ **փաղանգ** չէր ունեցել, ինչպես ճակատագրական այդ օրերին: Ժամանակի մեծերի անունները պատմության էջերում դրոշմվում էին մեծատառերով: Նրանք գրեթե բոլորն էլ օժտված էին գրելու, ստեղծագործելու փայլուն կարողություններով: Թերևս այդ էր պատճառը, որ այդ օրերի դեպքերից ոչ մի բան չվրիպեց նրանց սրատես հայացքից:

¹ "Версальский мирный договор", Москва, 1925, стр. 6-7.

² Սանրանսիան տե՛ս *Գ. Կուկոսկո*, Как делался мир в 1919 г., Москва, 1945, стр. 9-29:

Եվ պատահական չէր, որ խաղաղության Նորեյան մրցանակը ծեծում էր նրանցից յուրաքանչյուրի դուռը: Հիշատակածներից երեքը Նորեյան մրցանակի դափնեկիր դարձան:

Դեվիդ Լյոյդ Չորջ (1863-1946 - Անգլիա), **Ուինստոն Լեոնարդ Սպենսեր Չերչիլ** (1874-1963 - Անգլիա), **Ժորժ Կլեմանսո** (1841-1929 - Ֆրանսիա), **Վիտարո էմանուել Օրլանդո** (1856-1927 - Իտալիա) և վերջապես **Վուդրո թոմաս Վիլսոն** (28. XII, 1856 - 3. II, 1924 - ԱՄՆ): Նրանցից յուրաքանչյուրն իր ձևով էր պատրաստվում Աշխարհի քարտեզի վերագծման պրոցեսին: Նրանցից ամեն մեկը, արտահայտելով իր թիկունքում վարագուրված պետության շահերը, ձգտում էր օր առաջ ավելին ստանալ, քան հնարավոր էր: Անշուշտ, ետպատերազմյան զարգացումներին առավել վաղ և առավել հիմնավոր էր պատրաստվել **Վուդրո Վիլսոնը**:

ԱՄՆ-ի 28-րդ նախագահի համաշխարհային ճանաչում և չխամրող փառք բերող առաջին և լուրջ քայլը «**Տասչորս կետերն**» էին, որոնք անվերապահ ու մեծ խանդավառությամբ ընդունվեցին ոչ միայն **Կոնգրեսի**, այլև հողագնդի բոլոր երկրների և ժողովուրդների կողմից: Վավերաթուղթն ընդունվել էր ճիշտ տեղին ու սպասվող ժամանակին, քանզի այն շոշափում էր այնպիսի խնդիրներ, որոնք սրտամոտ էին, անհրաժեշտ պատերազմի հորձանուտի մեջ գալարվող բազում ազգերին: Այն ուներ ծնվելու համար անհրաժեշտ նախադրյալներ: Դրանցից մի քանիսն արձանագրեցն այստեղ¹:

Առաջինը. Չորս տարի տևող և արդեն ավարտին մոտեցող Առաջին աշխարհամարտին մասնակցող, հաղթող ու պարտվող երկրների տիրակալներից յուրաքանչյուրը յուրովի էր մտահոգված հողագնդի քարտեզի վերաձևման խնդիրներով: Հաղթողները ձգտում էին ավելի շատ ավար ստանալ, պարտվողները ջանում էին ավելի փոքր կորուստներ ունենալ: Վ. Վիլսոնն այդ վավերագրում երկուսի համար էլ չափավոր դեղատոմս էր առաջարկում: Այդ էր պատճառը, որ կետերն ընդունելի համարեցին և՛ հաղթող Անտանտան, և՛ պարտվող Զառյակ միությունը:

Երկրորդը. Առաջին աշխարհամարտին աշխարհի 59 պետություններից մասնակցում էին 33-ը: Ավելի քան մեկեկես միլիարդ մարդ զենքի տակ էր և մասնակցում էր ռազմական գործողություններին: Բանվորները և շինել հազած երեկվա գյուղացիները չորս երկար ու ծիգ տարիներ կտրված էին ընտանիքից, հայրենիքից, հողից և ունեցվածքից: Նրանց մասնագիտությունն էին դարձել մարդասպանությունը, թալանը, կողոպուտը: Կռվող մարդ արարածն արդեն հոգնել էր, ծանծրացել նոր զբաղմունքից: Ձենքի տակ դրված միլիարդավոր բանակը խաղաղության կարոտ էր: Վիլսոնի կետերով պատերազմը պետք է դադարեցվեր և խաղաղություն հաստատվեր երկնակամարի տակ ապրող զինվորների համար:

Երրորդը. Աշխարհում կային գաղութատեր և գաղութացված բազմաթիվ պետություններ ու ժողովուրդներ: Մեծ ու փոքր ծավալի գաղութացված ժողովուրդները երազում էին փշրել գաղութարարների բիրտ շղթաները և ծլարծակել ազգային անկախ պետություններ: Ծայր էին առել ազգային ազատագրական շարժումներ, որոնց մասնակիցների բաղձանքները բավարարելու համար Վիլսոնն ուներ լուրջ առաջարկներ:

Չորրորդը. Դեռևս հարատևում էին Ավստրո-Յունգարիայի, Ռուսաստանի և հատկապես Օսմանյան կայսրության նման կարկատված բազմազգ, բազմատարածքային կայսրություններ, որտեղ ամենայն սրությամբ դրված էին բազմակնճիռ ազգային խնդիրներ: Նրանց կազմում կային այլազգի մի շարք ժողովուրդներ, որոնք

¹ Լույսնորայնք վերցրել ենք *Յ. Մ. Գերսոն, Вудро Вильсон, Москва, 1983, стр. 147-149:*

իրենց զարգացման մակարդակով ավելի բարձր էին կանգնած, քան մետրոպոլիան: Կետերը նախատեսում էին այդ ժողովուրդների անկախացում և ազգային պետությունների ձևավորում: Ավելի սրությամբ էր դրված ցեղասպան, մարդասպան թուրքական բռնապետության տրոհման և որպես այդպիսին պատմության բեմահարթակից վերացնելու խնդիրը:

Հինգերորդը. Վուդրո Վիլսոնը դարի գավակն էր, օժտված հարյուրամյակին բնութագրական դրական և բացասական բոլոր գծերով: Նա ծնվել էր մտավորականի աղքատիկ ընտանիքում, գոյատևել սահմանափակ կարողություններով ապրած գերդաստանում: Բնությունից օժտվածությամբ և դիվանագիտական բացառիկ կարողությունների օգտագործմամբ բարձրանալով, նա հասել էր գերադրական նման բարձրակետի: Սակայն հակասական էին նրա հայացքները, ինչպես հականարտության մեջ էին դեգերել նրա անցած տարիները: Նրա հայացքների զինանոցում մի կողմում նստած էր երբեմնի «**թշվառական, մույնիսկ հացի կարոտ թոմասը**», մյուս կողմում վեր էր խոյանում ժամանակի բուրժուական, կապիտալիստական, միլիարդատեր տերության ամենաբարձր աթոռին բազմած պրեզիդենտ **Վուդրո թոմաս Վիլսոնը**:

Նման հակադրությունները ցցուն դարձան «**Տասչորս կետերը**» մշակելիս, հատկապես ծրագրային այդ փաստաթղթում ամփոփված, Ռուսաստանին վերաբերող շարադրանքում: Թերևս բավարար կլինի այն գնահատականը, եթե ընդգծենք, թե նման փաստաթուղթը լույս աշխարհ էր եկել Վ. Ի. Լենինի հրապարակած **դեկրետներին** պատասխանելու հեռանետ դիտավորությամբ: Վիլսոնն ուզում էր կապիտալիզմը փրկել իր դեղատոմսով, այսինքն՝ ոչ թե մյուսների պաշտպանած ոստիկանական մեթոդներով, բռնությամբ, արյունահեղությամբ, այլ մասնակի բարեփոխություններով:

Ահա այդ մտահոգությունն էր նրան տանում դեպի դեկրետին դեկրետով պատասխանելու առաքելությանը:

Վ. Ի. Լենինը 1917 թ. հոկտեմբերի 26-ին գրավոր ուղերձով դիմում էր Եվրոպայի և Ասիայի գետնի վրա խարսխված բոլոր տերություններին, որպեսզի նրանք լույս աշխարհի հանեին վաղուց ի վեր կնքված գաղտնի պայմանագրերը, **այսինքն՝ միջազգային դիվանագիտությունը դառնար պարզ, հստակ և թափանցիկ**: Ի հաստատումն այդ թեզի իրականացման, սովետական պետության արտագործնախարար **Լ. Դ. Տրոցկին** հրապարակեց **Սայքս-Պիկոյի** 1916 թվականին ստորագրված **գաղտնի համաձայնագիրը** և բացահայտեց Անտանտի տերությունների մեջ Թուրքիայի տարածքների բաժանման մասին եղած որոշումները: Սա լուրջ հարված էր Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային¹:

Դեկրետով կոչ էր արվում Անգլիայի, Ֆրանսիայի և գերմանական բանվոր դասակարգին, ողջ աշխատավորությանը, որպեսզի ճնշում գործադրեն իրենց ղեկավարության վրա և նրանց ստիպեն, որ դադարեցվի արյունահեղ պատերազմը: Այն փաստորեն քայքայում էր պատերազմող երկրների ռազմաճակատները և փորձ անում «եղբայրացնել» միևնույն դասակարգին պատկանող տարբեր ազգություններին և ժողովուրդներին:

Հաշտության դեկրետի շարունակությունը հանդիսացավ 1917 թ. նոյեմբերի 2-ին հրապարակված «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որը դեռևս խոսքով հռչակում էր Ռոմանովների իրավունքների դեկլարացիան, որը ժողովուրդների հավասարության և անկախության իրավասությունը, ընդհուպ մինչև անջատվելն ու ինքնուրույն պետություններ կազմավորելը: Վերացվելու էին

¹ «Декреты Октябрьской революции», том I, Москва, 1939, стр. 3-4.

ազգային ու կրոնական բնույթի բոլոր տեսակի արգելափակումները, խտրականությունը: Այսպիսով, բոլշևիկները Վ. Ի. Լենինի ձեռքով քայքայում էին բուրժուական աշխարհի տնտեսական ու քաղաքական կացութիւնները և մարդկությանը նախապատրաստում համաշխարհային հեղափոխության:

Խաղաղության դեկրետի սկզբունքները կյանքի կոչելու նպատակով սովետական Ռուսաստանը դիմեց պատերազմող երկրներին՝ հաշտություն կնքելու առաջարկով: Անտանտի երկրները կտրուկ մերժեցին արված առաջարկը: ՌՍՖՍՀ-ն Լ. Դ. Տրոցկու և Գ. Վ. Չիչերինի բերանով 1917 թ. դեկտեմբերի 3-ին սեպարատ ձևով սկսեց հաշտության բանակցությունները գերմանական խմբավորման հետ¹: Բանակցությունները ձգձգումներով ավարտվեցին 1918 թվականի մարտի 2-ին: Մարտի 3-ին ստորագրվեց **Բրեստ-Լիտովսկի** սովետա-գերմանական թալանչիական պայմանագիրը, որը դժբախտություն էր Ռուսաստանի և ռուս ժողովրդի համար:

Բրեստ-Լիտովսկի պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանից անջատվում էին Լեհաստանը, Լիտվան, Լատվիայի և էստոնիայի գերակշռող մասը, Բելոռուսիայի մեծ հատվածը: Ռուսաստանին հարկադրում էին զորքերը դուրս բերել Լատվիայի և էստոնիայի մնացած մասերից: Գերմանիան զավթում էր Ռիգայի ծովածոցը, Մոնզոնյան կղզիները: Սովետական զորքերը պետք է թողնեին Ուկրաինան, Ֆինլանդիան, Ալանդական կղզիները, ինչպես նաև **Կարսի և Բաթումի մարզերը**, որոնք հանձնվում էին թուրքական սրի ողորմածությանը: Ամբողջը իրար հետ գումարած՝ ՌՍՖՍՀ-ն կորցնում էր **մեկ միլիոն քառակուսի կիլոմետր տարածք**: Այդ պայմանագիրն իհարկե չեղյալ հայտարարվեց **1918 թվականի նոյեմբերի 13-ին**, երբ Գերմանիայում հաղթանակեց հեղափոխությունը, և գահընկեց արվեց Վիլհելմ Երկրորդը:

Պատմաբանին, նույնիսկ գրագետ ընթերցողին հանրահայտ այս փաստերը ներկայացնելու մեր նպատակն այն էր, որ բացահայտենք **Վուդրո Վիլսոնի «Տասը կետերի»** ստեղծման անհրաժեշտությունը ոչ միայն ԱՄՆ-ի, այլև պատերազմող ողջ եվրոպայի համար:

Բոլշևիկացած Ռուսաստանն իր ձեռքին ուներ հզոր զենքեր, այն է՝ բուրժուական գրեթե բոլոր երկրներում, հրապարակավ թե ընդհատակում գործող սոցիալ-դեմոկրատական կամ կոմունիստական կուսակցությունները: Նրանց օգնությամբ Վ. Ի. Լենինը արոպագանդում էր, տարածում իր գաղափարները, փաստորեն խարխուլում էր կապիտալիզմի հիմքերը, խաղաղության ծարավ, ընչազուրկ, հողազուրկ գյուղացիությանը ոտքի հանում հեղափոխական անգիջում պայքարի, **իհարկե՝ հաղթանակի ռոմանտիկ հույսերով**:

Բուրժուական աշխարհը խիստ մտահոգված էր կապիտալիստական տնտեսակարգը փլուզումից փրկելու խնդիրներով: Նրանց աչքերի առջև հեղափոխության ալիքը, Ռուսաստանից գատ, տարածվում էր Գերմանիայում, Իսպանիայում, Արևելյան երկրներում և այլուր: Դրան թունք կանգնելու ջանքեր էին թափում **Դեվիդ Լլոյդ Ջորջը** Բրիտանական կղզիներում, **ժորժ Կլեմանսոն** Ֆրանսիայում, **Օրլանդոս** Իտալիայում: Սակայն նրանք միջազգային հեղինակությունից, ժողովրդավարության հարգանքից չէին օգտվում:

Եվրոպական երկրների դեկավարների՝ հեղափոխությանը թունք կանգնելու միակ միջոցը համարվում էր ռազմական ինտերվենցիան Ռուսաստանում և արյան մեջ խեղդելը նորաստեղծ սովետական իշխանությունը:

Այդ խնդիրը լուծելու այլ տեսակետ էր դավանում հեռավոր Ամերիկան և նրա նո-

րաթուխ արեգիդենտը, որը դեռևս իր ձեռքերը չէր արյունոտել բանվոր դասակարգի հեղափոխական շարժումները ճնշելու պրոցեսում:

Ամփոփենք. Համաշխարհային հեղափոխական շարժմանը դիմագրավելու, կապիտալի իշխանավորների կյանքը երկարաձգելու մտահոգությամբ հրապարակ իջավ ԱՄՆ-ի արեգիդենտ Վուդրո Վիլսոնը, որը շարադրեց իր տեսակետները մի վավերագրում՝ այն վերնագրելով **«Տասը կետեր»**:

1918 թվականի հունվարի 8-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի զույգ պալատների միացյալ նիստում Վ. Վիլսոնը ճառ արտասանեց, որը հետագայում ստանալով **«Տասը կետեր»** անվանումը դարձավ ծրագրային փաստաթուղթ՝ համաամերիկյան և համաշխարհային ճանաչում բերելով հռետորին:

Փաստաթուղթը կոլեկտիվ աշխատանքի արգասիք էր: Նրա մշակման, ձևակերպման աշխատանքներին մասնակցել էին Սպիտակ տան աշխատակիցները, այսինքն՝ փորձագետները, դիվանագետները, դրսից հրավիրված պատմաբանները, աշխարհագետները: Փաստաթղթի հեղինակը, սակայն, համարվեց Վ. Վիլսոնը և պատմության մեջ մտավ նրա անունով:

Ծրագրային այդ փաստաթուղթը բաղկացած է երկու մասից: Բուն կետերի սկզբնական մասում Վ. Վիլսոնը բացահայտում է իր նպատակը նման քայլին դիմելու համար: Նա չէր թաքցնում, որ իրեն մեծ հոգս է պատճառել Ռուսաստանում տիրող իրավիճակը, **Բրեստ-Լիտովսկում** ընթացող ռուս-գերմանական բանակցությունների անհաջող վերջավորությունը (այդ պահին բանակցությունները դադարեցվել էին), ինչպես նաև Պետերբուրգում ձևավորված նոր կառավարության առաջարկները կենտրոնական եվրոպայի տերություններին՝ պատերազմը դադարեցնելու վերաբերյալ:

Թողնենք թող խոսի Վ. Վիլսոնը: Նա ասաց. «Ռուսաստանի պատվիրակները ոչ միայն գերազանց ճշգրտությամբ ձևակերպված հայտարարություն ներկայացրեցին այն սկզբունքների վերաբերյալ, որոնց համաձայն նրանք կցանկանային խաղաղություն կնքել, այլ նաև այդ սկզբունքների ճշգրիտ կիրառման որոշակի ծրագիր: Կենտրոնական եվրոպական պետությունների պատվիրակներն էլ իրենց հերթին ներկայացրեցին խաղաղության հաստատման ծրագիր, որը, եթե շատ ավելի պակաս ճշգրիտ էր, ապա առաջադիմական տեսակետից էր կարծես ընդունելի՝ մինչև նրանց կողմից գործնական պայմանների մասին առանձնահատուկ ծրագրի ավելացումը: Այդ ծրագիրն ամենևին չէր առաջարկում զիջումներ ոչ Ռուսաստանի անկախության առումով և ոչ էլ այն ժողովուրդների նախապատվությունների առումով, որոնց ճակատագրին էր առնչվում հարցը, բայց ենթադրում էր, որ Կենտրոնական եվրոպական կայսրությունները պետք է պահպանեին իրենց զինուժի կողմից գրաված տարածքների ցանկացած հատված, յուրաքանչյուր գավառ, յուրաքանչյուր քաղաք, ձեռք բերված ցանկացած տեղանք որպես իրենց տարածքների և տիրապետության մշտական հավելում: Ռուսական պատվիրակները պնդել են, և այն էլ շատ արդարացի ու իմաստուն կերպով, և նաև՝ ժամանակակից ժողովրդավարության ճշմարիտ ոգով լի, որ այն համաժողովները, որոնք նրանք անցկացնում են թուրքական և տևտոնյան պետական գործիչների հետ, **պետք է անցկացվեն բաց և ոչ թե փակ դռների ետևում**, և ողջ աշխարհն ունկնդիր է եղել դրանց, ինչը և ցանկալի է եղել: Այդ դեպքում ո՞ւմ ենք մենք ունկնդրում: Նրա՞նց, ովքեր արտահայտում են գերմանական Ռեյխստագի հուլիսի 9-ի որոշումների ոգին և նպատակները, Գերմանիայի առաջադիմական առաջնորդների և կուսակցությունների ոգին և նպատակները, թե՞ նրանց, ովքեր դիմակայում և հակադրվում են այդ ոգուն և նպատակներին և պարտադրում նվաճողական և ստրկացման քաղաքականություն: Թե՞ մենք իրականում լսում ենք երկու անհաշտ կողմերի, որոնք գտնվում են բաց և ան-

¹ «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 2, Երևան, 1976, էջ 561-562:

հույս հակասության մեջ: **Սրանք շատ լուրջ և հետևանքներով հղի հարցեր են: Նրանց պատասխաններին է կախված աշխարհի խաղաղությունը»¹:**

Վ. Վիլսոնի խաղաղասիրական նկրտումների, փոքր ազգերի իրավունքների պաշտպանության, մեծ և փոքր պետությունների փոխհարաբերությունների, այդ պրոցեսում Նահանգների կատարած դերի մասին ասված է. «**Մենք մտանք այս պատերազմի մեջ, քանի որ տեղի էին ունեցել իրավախախտումներ, որոնք շատ արագ առնչվեցին մեզ, և մեր սեփական ժողովրդի կյանքը անտանելի կոտորած էր դրանք չվերացվեն և աշխարհը մեկընդմիջտ չդառնա անվտանգ և զերծ դրանց հնարավոր կրկնություններից: Հետևաբար՝ այն, ինչին մենք ձգտում ենք այս պատերազմում, ամենևին արտառոց չէ: Մեր նպատակն այս աշխարհն ապրելու համար անվտանգ դարձնելն է, և հատկապես անվտանգ բոլոր այն խաղաղասեր պետությունների համար, որոնք մեր պետության նման ցանկանում են ապրել իրենց սեփական կյանքով, որոշել իրենց սեփական քաղաքական համակարգը, երաշխիքներ ունենալ աշխարհի մյուս ժողովուրդների հետ արդար և ազնիվ հարաբերություններ ստեղծելու համար, ի հակակշիռ ուժի և շահախնդիր ագրեսիայի: Աշխարհի բոլոր ժողովուրդներն իրականում գործակիցներ են հանդիսանում այս նպատակներին հասնելու ճանապարհին, և մեր կողմից մենք պարզ գիտակցում ենք, որ եթե մենք արդար չլինենք ուրիշների նկատմամբ, ապա արդարություն չի դրսևորվի մեր նկատմամբ: Աշխարհի խաղաղության ծրագիրը, այսպիսով, մեր ծրագիրն է, և այդ ծրագիրը, մեր կարծիքով, միակ և հնարավոր ծրագիրն է»²:**

Այժմ համառոտ ներկայացնենք այդ ծրագրի բովանդակած խնդիրները, այսինքն՝ «**Տասչորս կետերը**»:

Առաջին կետով պահանջվում էր աշխարհամարտի անհապաղ դադարեցում և խաղաղության դաշնագրերի կնքում այն ակնկալիքներով, որ բացառվել **գաղտնագրված** բոլոր տեսակի պայմանագրերի գոյության փաստը: Նախագահը զգում էր, գուցե և գաղտնի հետախուզության միջոցով տեղեկացվել էր, որ նույնիսկ մեկ խմբավորման մեջ ընդգրկված տերությունները, իրարից թաքուն, ունեն ստորագրած մի շարք փաստաթղթեր: Եվ Վիլսոնն այս հայտարարությամբ չէր սխալվում:

Երկրորդ կետով նախատեսվում էր ծովագնացության լիակատար ազատություն թե պատերազմի և թե խաղաղության իրավիճակում, բացառությամբ այն պահերի, երբ իրականացվելու էին նախատեսված միջոցառումներ: Այս սկզբունքը բացահայտորեն ուղղված էր ծովային թագուհի բրիտանական կայսրության և դեռևս ահռելի նավատորմի տեր կայզերական Գերմանիայի դեմ:

ԱՄՆ-ը իր նորաթուխ նավատորմով ուզում էր ոչ միայն ծովերն ու օվկիանոսները կիսել Անգլիայի ու Գերմանիայի հետ, այլև տեր դառնալ աշխարհի ջրային ուղիներին, առևտրական ճանապարհներով անարգել կապվել Եվրոպայի և Ասիայի հետ: Այստեղ Վ. Վիլսոնի և Դեվիդ Լլոյդ Ջորջի սրերը բացարձակապես իրար էին խաչվում:

Երրորդ կետով նախատեսվում էր վերացնել **մաքսային բոլոր պատնեշները** և ազատ առևտրի հնարավորություն ստեղծել ինչպես մայր երկրներում, այնպես էլ գաղութային տարածքներում: Սրանով ևս ԱՄՆ-ը կարող էր ապահովել իր անարգել մուտքը բոլոր երկրների առևտրական հրապարակներ, հատկապես աշխարհը ոչ միայն կիսել Անգլիայի հետ, այլև մրցակցությամբ տիրել առևտրական խոշոր շուկաներին:

¹ Այս փաստաթղթի անգլերեն (բնագիր), ռուսերեն և հայերեն տարբերակները տպագրված են մենագրության երկրորդ գրքի երկրորդ բաժնում: Տես վավերագիր № 5:

² Վ. Վիլսոն, Տասչորս կետերը, երկրորդ գրքի երկրորդ բաժին, վավերագիր № 4-8:

Չորրորդ կետով պատերազմի մեջ, թե խաղաղ մնացած բոլոր տերություններից պահանջվում էր կրճատել սպառազինությունների և զինուժի թվաքանակը՝ դրանք հասցնելով ամենամվազագույն սահմանագծին: ԱՄՆ-ը պատերազմի հորձապտույտի մեջ ուշ մխրձվեց: Նրա պատերազմող բանակի թիվը մեծ չէր, իսկ արտադրած զենքի սովոր բաժինը ոչ թե օգտագործում էր, այլ վաճառում և՛ բարեկամ Անտանտին, և՛ հետագա հակառակորդ Քառյակ միությանը:

Այսօր Վիլսոնն ուզում էր փոքրացնել իր մրցակից տերությունների զենքի ու զորքի քանակը, որպեսզի վաղը չզգացվեր իր երկրի զինուժի փոքրաքանակությունը: Այս կետն էլ բացարձակապես ուղղված էր Ֆրանսիայի դեմ, որի բանակի թիվն ամենամեծն էր ոչ միայն Եվրոպայի հարթակում, այլև ասիական երկրների ռազմաճակատներում: Այս կետում իրար էին հակադրվում Վ. Վիլսոնն ու «**դիվանագիտական վագր**» **ժորժ Կլեմանսոն**:

Հինգերորդ կետը կանխորոշում էր **գաղութային ժողովուրդներին և գաղութատեր երկրներին վերաբերող խնդիրները**: Այդ որոշման կյանքի կոչվելու պահին պետք է հաշվի առնվեին ինչպես գաղութացված ժողովուրդների ազգային շահերը, այնպես էլ դեռևս նրանց տիրակալ երկրների ակնկալիքները: Խոսքով բացառվում էր գաղութատիրության հակամարդկային արատը, որը, բնականաբար, չէր կարող հաճելի թվալ պատերազմող բոլոր երկրների, հատկապես Յնդկաստանին տիրած Անգլիային և Աֆրիկայում գաղութների անտառ ունեցած Ֆրանսիային:

Վեցերորդ կետն ուղղված էր Ռուսաստանի դեմ, որտեղ երեկ էր հաղթանակել **սոցիալիստական** հեղափոխությունը: Քողարկված շղարշով, քաղցր ու մեղցր ֆրագներով Վիլսոնը բուրժուական տերություններին խելքի էր բերում, խորհուրդ տալիս այնպիսի զսպաշապիկ հագցնել Պետերբուրգի գլխին, որ նա այլևս չկարողանա իր ձեռքերը տարածել սեփական սահմանից այն կողմ: Նա փաստորեն Արևմուտքի երկրներին ռազմական ինտերվենցիայի կոչ էր անում ընդդեմ Չմեռային պալատի, որը կապիտալիստական հասարակարգի պաշտպանության կողմնակիցների սրտովն էր: Այդ ինտերվենցիան արդեն սկսվել էր, և գնալով թանձրանում էր ժամանակակիցների թվաքանակը:

Յոթերորդ կետը վճռելու էր **Բելգիայի** ճակատագիրը: Կետերի հեղինակը Դաշնակիցներին կոչ էր անում իրենց զորքերը հանել եվրոպական քաղաքակիրթ այդ երկրի տարածքից, նրան լիակատար անկախության իրավունք պարգևել, «**այլապես միջազգային իրավունքի ողջ հիմքերն ընդմիջտ կխաթարվեն**»:

Ութերորդ կետը վերաբերում էր Ֆրանսիային, ավելի ստույգ՝ Բեռլին-Փարիզ փոխհարաբերություններին: Դեռևս 1870 թվականին բռնկված ֆրանս-պրուսական պատերազմում հաղթանակած կանցլեր **Օտտո ֆոն Բիսմարկը Ֆրանկֆուրտի** պայմանագրով (1871 թ.) Ֆրանսիայից բռնազավթեց **էլզաս և Լոթարինգիա** նահանգները, **Ռուրի ավազանի** ածխահանքերի միայնակ օգտագործման իրավունքը, ինչպես նաև **հինգ միլիոն** ոսկե ռուբլի ռազմատուգանք:

Պատերազմից հետո միավորվեց վաղուց կարկատանի տեսքով ապրող Պրուսիան, ստեղծվեց գերմանական հզոր կայսրություն, որի արդյունաբերության գլխին Բիսմարկը Ֆրանսիայից խլած դրամից «**ոսկի անձրև տեղաց**»: Կարճ ժամանակամիջոցում Գերմանիան դարձավ աշխարհի ռազմամուլ ու ամենազորեղ տերությունը, որն աշխարհին «նվիրեց» սկզբում **Առաջին**, ապա **Երկրորդ** համաշխարհային պատերազմները: Փաստորեն, այդ աղետաբեր սպանդների հիմքը դրվել էր 1871 թվականին:

Վուրդո Վիլսոնը, այդ բոլոր հանգամանքները նկատի ունենալով, Գերմանիայից պահանջում էր իրենց իսկական տիրոջը վերադարձնել **էլզաս և Լոթարինգիա** նահանգները: **Ռուրի ավազանի** ածխահանքերի իրավունքը վերապահելով երկուսին

հավասարաչափ՝ «հանուն խաղաղության ապահովման համընդհանուր շահերի»:

Իններորդ կետով արձանագրվում էր դաշնակից **Իտալիայի** իրարից կտրատված սահմանների վերականգնումը, իտալական միասնական, ամբողջացված կայսրության վերընծյուղումը: Նրա գաղութների վերացման մասին Վիլսոնը դեռևս խոսք չէր բացում:

Տասներորդ կետն անդրադառնում էր **Ավստրո-հունգարական** կարկատված կայսրության ճակատագրին, տերություն, որին ԱՄՆ-ը պատերազմ էր հայտարարել դեռևս 1917 թ. դեկտեմբերի 6-ին: Վ. Վիլսոնը ձգտում էր բարեփոխել այդ երկրի պետական կարգն այնպես, որ ոչ թե հիմնովին ոչնչացնել այն, այլ այնտեղ ապրող ժողովուրդներին «պետք է տալ ազատ հնարավորություններ ինքնավարության զարգացման համար»:

Տասնմեկերորդ կետը քննարկում էր Բալկանյան ժողովուրդներին վերաբերող խնդիրները: Պրեզիդենտը պահանջում էր **Սերբիայի, Չեռնոգորիայի և Ռումինիայի** ժողովուրդներին տալ ինքնուրույն պետություններ ստեղծելու հնարավորություններ, միաժամանակ նրանց վերադարձնել վաղուց կորցրած «հայրենական նահանգները»: Սերբիան պետք է ազատ ելք ունենար դեպի ծովը, իսկ մյուս երկրների անկախության պաշտպանությունը երաշխավորվեր «միջազգային իրավասության մեջ»:

Տասներկուերորդ կետում քննարկվում էին աշխարհի ամենացավոտ, ամենաողբերգական խնդիրները, այսինքն՝ Օսմանյան կայսրության ճակատագրի և նրա արյունարբու տիրապետության տակ հաշմվող այլազգի ժողովուրդների ապագայի որոշման հարցերը: Որպեսզի հարազատ մնանք փաստաթղթերին, բերենք Վիլսոնի խոսքերն առանց մեկնաբանությունների. «12. Ներկայիս Օսմանյան կայսրության թուրքական տարածքներին պետք է երաշխավորվի հուսալի անկախություն, բայց մյուս ազգություններին, որոնք այժմ գտնվում են թուրքական տիրապետության տակ, պետք է երաշխավորվի անվիճելի կենսական անվտանգություն և ինքնավարության զարգացման բացարձակ անվտանգ հնարավորություն: Դարդանելը պետք է մշտականորեն բաց լինի բոլոր պետությունների համար՝ որպես ազատ անցուղի նավագնացության և առևտրի զարգացման համար՝ ըստ միջազգային երաշխիքների»:

Եթե բացենք փակագծերը, ապա Վիլսոնն այստեղ չէր բացառում Օսմանյան կայսրության **գոյության պահպանումը**, միայն թե նրա գերիշխանության տակ գտնվող ժողովուրդներին պետք է տրվեին «ավտոնոմիա» այնպես, որ ապահովվեր ինտերնացիոնալիզմը: Կոստանդնուպոլիսն ու նեղուցները պետք է դրվեին որևէ տերության, տվյալ դեպքում ԱՄՆ-ի հսկողության տակ այնպես, որ ապահովվեր բոլոր երկրների նավերի անարգել անցուղարձը **Քոստոպոլի**:

Տասներեքերորդ կետը վերաբերում էր **Լեհաստանին**: Հաճնարարվում էր ստեղծել լեհական ազատ ու անկախ այնպիսի պետություն, որն իր կազմի մեջ կվերցներ անվիճելի լեհական բնակչությանը բնակեցված նահանգները, նրանց կտար ազատ և անվտանգ ելք դեպի ծով, քաղաքական ապահովություն, վերջինիս իրավունքների պաշտպանությունը կերաշխավորեր միջազգային համաձայնագրերով:

Վերջին **տասչորսերորդ կետով** Վ. Վիլսոնը գաղափար էր տալիս ստեղծելու Ազգերի լիգա: Նա գրում էր. «14. Հատուկ համաձայնագրերի կնքումով պետք է ստեղծվի պետությունների ընդհանուր միություն, ինչպես խոշոր, այնպես էլ

փոքր պետությունների քաղաքական ինքնուրույնության և տարածքային ամբողջականության փոխադարձ երաշխիքներ ապահովելու նպատակով»:

Ազգերի լիգայի ստեղծման, նրա փրկարար դերի կանխորոշումը տալով, Վ. Վիլսոնը հեռանետ նպատակներ ուներ հատկապես ԱՄՆ-ի կատարելիք գործունեության պրոցեսում: 28-րդն այստեղ գործում էր քողարկված ձևով, որը երևաց, երբ ԱՄՆ-ը սկզբում չընդգրկվեց այդ կազմակերպության շարքերում:

Կոնգրեսի հավանությանը ներկայացված Վ. Վիլսոնի ծրագրային այդ փաստաթուղթը ցնցեց ամերիկյան ողջ հասարակությանը և ոչ միայն նրանց: Բուրժուական աշխարհը մեկ ամբողջ տարի խոսում էր «**Տասչորս կետերի**» մասին, իսկ մամուլը չէր դադարում դիֆերանսներ ձևել 28-րդին: Այդ վավերաթղթի ունեցած արձագանքների մասին վիլսոնագետ Ջ. Մ. Գերշովը գրում է. «Американские правящие круги приветствовали “14 пунктов”. Буржуазная печать превозносила их автора, называя его “великим борцом за мир”, “глашатаем мира” и т.д. Даже Гарви, давно расставшийся с симпатиями к Вильсону, заявил, что “14 пунктов” были “подлинным шедевром”. Основательно потрудился над пропагандой “14 пунктов” Комитет общественной информации. Благодаря его стараниям они были переведены на многие языки и распространены в виде листовок и буклетов в Европе, Латинской Америке и на Дальнем Востоке общим тиражом свыше 6 млн. экземпляров»¹:

Նոր սկզբունքներն ավելի շատ վերաբերում էին պատերազմի ավարտից հետո աշխարհի ուժերի խաղաղ համագործակցությանը, փոքր ու մեծ ժողովուրդների հասանելիք բաժինների կանխորոշմանը: Ջ. Մ. Գերշովը բերում է այլ հինգ սկզբունքներ: Դրանք էին. «1) “беспристрастная справедливость” ко всем странам, в том числе и к противнику; 2) никакое государство и никакая группа государств не должны вступать в соглашения, которые пойдут вразрез с интересами других государств; 3) внутри Лиги наций не должны быть какие-либо другие союзы, особые договоры или соглашения; 4) внутри Лиги наций также не должны быть какие-либо экономические комбинации, как и не должен быть экономический бойкот; 5) никаких тайных договоров или соглашений. Вильсон предложил главам правительств “союзных” стран изложить в ближайшее время свои взгляды по вопросу о мире и высказаться по поводу американских условий. Подчеркивая важность сохранения единства целей и суждений для достижения победы в войне, президент США призвал партнеров по войне принять его предложения.

Принципы мирного урегулирования, объявленные Вильсоном в Нью-Йорке, явились дополнением к “14 пунктам”. Своим острием они были направлены против интересов держав Антанты. Вильсон не зря говорил своему секретарю, что его речь “не понравится... империалистам Великобритании, Франции и Италии”.

Так оно и случилось.

Руководители стран Антанты, не намеревавшиеся заменить свои планы мирного урегулирования американскими, не откликнулись на призыв президента США. В этом смысле Вильсон не добился своей цели. Тем не менее ключ к решению проблем, связанных с окончанием войны, оказался в его руках»².

¹ **Յ. Մ. Գերշով**, Вудро Вильсон, стр. 151-152.

² Նույն տեղում, էջ 156-157:

¹ Տե՛ս երկրորդ գրքի երկրորդ բաժին, վավերագիր № 5:

ԱՄՆ-ի պրեզիդենտը, փաստորեն, դիվանագիտական լայնահուն պատերազմ էր հայտարարել ոչ միայն պարտության եզրագծին մոտեցող գերմանական Քառյակին, այլև իր սեփական դաշնակիցներին, այսինքն՝ ԱՄՆ-տանտի կազմում համահավաքված դաշնակիցներին: Վ. Վիլսոնը զգում էր իր բռնած գործի իրականացման դժվարությունները, դրա համար էլ չէր ընկրկում ոչ մի խնդիր լուծելիս: Նա կատարեց մյուս, ավելի լուրջ քայլը. այն է՝ խախտեց Մոնրոյի դոկտրինայի քարացած դոգմաները և հայտարարեց, թե ինքը կմեկնի Եվրոպա և այնտեղ անձամբ կմասնակցի առաջադրված խնդիրների լուծմանը: Եվ նա եկավ Եվրոպա:

Վ. Վիլսոնն իր որոշման մեջ հաստատակամ էր և անդրդվելի: Նա հաշվի չառավ ոչ բարեկամ դեմոկրատների և ոչ էլ հակառակորդ հանրապետական սենատորների մի մասի՝ իր որոշմանը թունք կանգնելը: Նրան չհուզեց նույնիսկ էքս-մախագահ Թեոդոր Ռուզվելտի սպառնալիքներով լի ելույթը Կոնգրեսում: Այդ բոլորին ի պատասխան՝ դեմ գործող նախագահը, 1918 թ. դեկտեմբերի 1-ին, ի լուր աշխարհի հայտարարեց. «**ես ուզում եմ մասնակցել խաղաղության կոնֆերանսին՝ գրպանումս ունենալով այնքան քարեր, որքան կկարողանամ տեղավորել այնտեղ**»¹:

1918 թվականի դեկտեմբերի 4-ին Վուդրո թոմաս Վիլսոնը ճանապարհ ընկավ դեպի Փարիզ: Նրա հետ դեպի Սենայի ափերն էր շտապում իրեն ուղեկցող պատվիրակության մարդաշատ կազմը: Նրանց ընդհանուր թիվը գերազանցում էր 1300 հոգուց: Դրանք էքսպերտներն էին, աշխարհագրագետ-գեոդեզիստները, տեխնիկական անձնակազմը, նախագահի անվտանգությունն ապահովողները: Պատվիրակությունը տեղավորված էր ժամանակի փառաբանված «Ջորջ Վաշինգտոն» նավի խցերում և տախտակամածի վրա ու սպասում էր ուղևորության հրամանին:

Ամերիկյան պատվիրակությունը նախագահի և նրա տիկնոջ գլխավորությամբ դեկտեմբերի 13-ին առափնեց **Քրեստ**: Մյուս օրը Վիլսոնը ժամանեց Փարիզ, որտեղ նրան ցույց տրվեց փառավոր ընդունելություն: Այն գերազանցեց բոլոր սպասելիքները, քանզի ոչ բրիտանական թագուհին և ոչ էլ բելգիական թագավորը երբեք նման ճոխ և հանդիսավոր ընդունելության չէին արժանացել: Մայրաքաղաքի ֆրանսիական մամուլը և օտարերկրյա թերթերի թղթակիցները զովասանքի խոսքեր չէին խնայում Վ. Վիլսոնի մասին գրելիս և խոսելիս: Կոմունիստական կուսակցության օրգան «Յունանիտեն» մեկ առանձին համար նվիրեց Վիլսոնի ժամանման և նրան ցուցաբերված ընդունելության արարողությանը: Անդրադառնալով նախագահի ելույթներին՝ «Յունանիտեի» խմբագրականում արձանագրվում էր, թե ի տարբերություն Եվրոպայի բոլոր պետական գործիչների, միայն Վիլսոնը կարող է խոսել «բարի կամեցողության լեզվով, մարդկային և միջազգային ճշմարտացիությանը... Իր ելույթներով Վիլսոնը շահեց ամբողջ աշխարհի աշխատավորության համակրանքը»²:

Վիլսոնի Փարիզ ժամանելու օրը համարվեց տոնական, և քաղաքում աշխատանքը դադարեցվեց: Փողոցներում և հրապարակներում ամենուր ծածանվում էին ֆրանսիական և ամերիկյան դրոշմերը, գեղեցիկ պաստառներ, որոնց վրա գրված էր «**Փառք Վիլսոն ճշմարտախոսին: Վիլսոնը մեր ժամանակների Քրիստափոր Կոլումբոսն է**»:

1918 թ. դեկտեմբերի 14-ի առավոտյան ժամը 10-ին Փարիզի գլխավոր հրապարակ եկան պրեզիդենտ **Ռայմոն Պուանկարեն**, վարչապետ **ժորժ Կլեմանսոն**, մի-

նիստրներ, պառլամենտի դեպուտատներ, ԱՄՆ-տանտի երկրների բազմաթիվ ներկայացուցիչներ: Շուրջ 20 րոպե տևեցին Վիլսոնի պատվին տրված հրանոթային համազարկերը: Հրանոթային հրավառություններից հետո Վիլսոնը Պուանկարենի ուղեկցությամբ շարժվեց քաղաքի փողոցներով: Երկու միլիոն փարիզաբնակները հանդիսավոր կերպով ողջունում էին պրեզիդենտին, որտեղով էլ որ նա շարժվում էր: Այդ առիթով Կլեմանսոն հայտարարեց. «**ես գիտեի երկրորդ կայսրության Փարիզը, բայց երբեք չէի պատկերացնում, թե իմ Փարիզը կարող էր նման խանդավառություն դրսևորել, ինչպես այս անգամ: Ես չեմ մտածում, թե որևէ մեկը, որևէ ժամանակ կարող էր արժանանալ նման վերաբերմունքի, ինչպես Վիլսոնն արժանացավ համաշխարհային պատմության մեջ**»:

Վ. Վիլսոնին և նրա գեղեցկուհի տիկնոջ **Էլլեն Էքսոնին** տրամադրված էր Փարիզի քաղաքային կենտրոնում բարձրացող «**Մյուրատ**» հյուրանոցը՝ **Մոնսոյում**: ԱՄՆ-ի պաշտոնական պատվիրակությունը տեղավորված էր «**Կրիյոն**» հյուրանոցում:

Դեկտեմբերի 14-ին, ժամը 2-ին Պուանկարեն Ելիսեյան հանրահռչակ պալատում Վիլսոնի պատվին հանդիսավոր ծաշ տվեց: Դեկտեմբերի 15-ին Վիլսոնն ընդունվեց Փարիզի քաղաքային ռատուշայում, որտեղ նրան հանձնեցին մայրաքաղաքի պատվավոր քաղաքացու կոչումը: «**Նրան նվիրվեց նաև ոսկեծայր մի գրիչ, որպեսզի դրանով ստորագրեր Ճշմարտացի, հումանիստական, ամուր որոշումներ աշխարհի խաղաղության մասին**»:

Դեկտեմբերի 15-ին կայացավ **Վիլսոն-Կլեմանսո** հանդիպումը: Նրանց գործնական խոսակցությունը ընդհանուր հարցերի շուրջ էր: Յուրաքանչյուրն իր հերթին ցանկանում էր ծանոթանալ մյուսի դիվանագիտական կարողություններին: Կլեմանսոն իր խորամանկ հարցերով ձգտում էր Վիլսոնին օգտագործել Լլոյդ Ջորջի դեմ մղվելիք առաջիկա պայքարում: Օրեցօր Փարիզն ավելի էր ջերմացնում իր վերաբերմունքը Վիլսոնի նկատմամբ: Կարևոր գերատեսչություններից յուրաքանչյուրը յուրովի էր արտահայտում իր զգացմունքները: Ֆրանսիական Գիտությունների ակադեմիան ընդունեց պրեզիդենտին, լսեց նրան, հարցերի տարափով հաղորդակից դարձավ հյուրի հայեցակարգին: Սորբոնի հռչակավոր համալսարանի շքեղազարդ դահլիճում դեկտեմբերի 19-ին Վիլսոնը ընդարձակ ճառ արտասանեց, որին հետևեցին պարզևատրությունները: **Նրան տվեցին պատմական և իրավագիտական գիտությունների դոկտորի պատվավոր կոչումներ**: Դեկտեմբերի 20-ին ԱՄՆ-ի նախագահը ճառով հանդես եկավ Սենատում, ապա հանդիսավորությամբ ընդունվեց Ներկայացուցիչների պալատի համագումար միստում:

1918 թ. դեկտեմբերի 27-ին Վիլսոնը Լոնդոնում էր: Նավամատույցում նրան դիմավորելու էին եկել թագավորն իր ընտանիքով, ինչպես նաև կառավարության մյուս անդամները: Դեվիդ Լլոյդ Ջորջը, իբրև Կլեմանսոյի մրցակից, որոշել էր Վիլսոնին ընդունել ոչ պակաս շուքով և հանդիսավորությամբ, քան նրան արժանացրեցին Փարիզում: Նույն օրվա երեկոյան Վիլսոնի պատվին Բեկինգեմյան պալատում այնպիսի բանկետ կազմակերպվեց, որը վերջին քառորդ դարում Լոնդոնը չէր տեսել: Նախագահի հետ առանձնագրույց ունեցան Դ. Լ. Ջորջը, Բալֆուրը և անգլիական պառլամենտի մյուս անդամներից շատերը: Նրանց հետաքրքրում էին Վիլսոնի տեսակետներն առաջիկա խաղաղության կոնֆերանսում քննարկվելիք հարցերի վերաբերյալ: Ջրույցներն ամենուր ավարտվում էին դրական երանգներով, և զրուցակիցները գոհ էին հեռանում հանդիպման վայրից¹:

¹ И. А. Беллвская, Буржуазный реформизм в США (1900-1914), Москва, 1957, стр. 297.

² З. М. Гершков, նշված աշխատությունը, էջ 210-211.

¹ "Версальский мирный договор", со вступительной статьей проф. Ю. В. Ключникова, Москва, 1925, стр. 8.

Բրիտանական կղզիներից Վ. Վիլսոնն ուղևորվեց **Իտալիա**: Կաթուղիկ աշխարհի մայրաքաղաքն առանձնակի շուքով և հանդիսավորությամբ դիմավորեց պատվավոր հյուրին: Նրա շրջագայած բոլոր ճանապարհներին թարմ ու բուրավետ ծաղիկներ էին փռված: Նման հանդիսավորությամբ նրան ընդունեցին **Ճենովայում, Միլանում, Տուրինում**: Ճենովացիները Վիլսոնին ընտրեցին պատվավոր քաղաքացի: Միլանում և շատ այլ քաղաքներում փողոցները տեղում տեղը վերանվանում էին Վիլսոնի անունով:

Արտաքին այդ ընդունելություններն առավել ամրապնդեցին Վիլսոնին, նրան բերելով այն հաստատ համոզման, որ մեծ հաջողություններ կունենա առաջիկա կոնֆերանսում: Դժբախտաբար, երկար չտևեցին այդ հանդեսները: Շատ շուտով նա հիասթափվեց այդ ամենից և զղջաց, որ խարդախ դիվանագիտության համար դրանք այդքան էլ մեծ արժեք չունեին: **Որտեղ շոշափվում էր մերկապարանոց շահը, այնտեղ արտաքին փայլը հավասարվում էր ոչնչի:**

* * *

Ժամ առ ժամ հասունանում էր խաղաղության կոնֆերանս գումարելու անհրաժեշտությունը: **Քառյակ** միության կազմում ծվարած բոլոր երկրների հետ գատա կնքված զինադադարի սեպարատ համաձայնագրերը Դաշնակիցներին դեռևս լիարժեք իրավունք չէին վերապահում վերջնականապես զինաթափելու պարտված տերությունների զորամիավորումներին: Անհրաժեշտ էր հրավիրել այնպիսի **համաժողով, կոնֆերանս կամ համագումար**, որը վերջակետ կդնեի աշխարհամարտի ժամանակ առաջացած բոլոր բարդ խնդիրների լուծմանը:

Եղան բազում առաջարկներ: Դեռևս օվկիանոսի մյուս երեսին գտնվելու պահին Վուդրո Վիլսոնն առաջարկեց այդ կոնֆերանսն անվանակոչել **խաղաղության** և այն հրավիրել որևէ չեզոք երկրում: ԱՄՆ-ի պրեզիդենտը մտքում պահած ուներ **Շվեյցարիան կամ Դանիան**:

Դեվիդ Լլոյդ Ջորջն ու Ժորժ Կլեմանսոն անմիջապես համաձայնեցին կոնֆերանսին տրվելիք **խաղաղության** անվանակոչման առաջարկին, սակայն առարկեցին հավաքավայրի **տեղի** ընտրությանը: Գաղտնի խորհրդակցելով Օրլանդոյի հետ, Եվրոպական Եռյակն առաջարկեց խաղաղության կոնֆերանսը գումարել կամ բուն Փարիզում, կամ էլ նրա որևէ արվարձանում: Վ. Վիլսոնը հարկադրված էր ենթարկվել մեծամասնության որոշմանը:

Եվ այսպես, չորս մեծերի միաբերան որոշմամբ խաղաղության կոնֆերանսը պետք է հրավիրվեր Փարիզում՝ 1918 թվականի դեկտեմբերի **երրորդ տասնօրյակին**, սակայն հետաձգվեց երկու պատճառով:

Նախ, խախտելով Մոնրոյի դոկտրինայի քարացած դոգմաները, Վուդրո Վիլսոնը 1918 թ. դեկտեմբերի 4-ին միայն կարողացավ ժամանել Բոստոն, որտեղ նրան սպասում էր աներիկացիների հոծ բազմություն: Բարոյապես շոյված պրեզիդենտը բոցաշունչ ճառ արտասանելուց հետո ընտանիքի և պատվիրակության անդամների հետ միասին տեղավորվեց ժամանակի աշխարհի ամենախոշոր նավի՝ **«Ջորջ Վաշինգտոն»** ընդարձակ տախտակամածի վրա և ուղղություն վերցրեց դեպի Եվրոպա:

Պրեզիդենտի պատվին հնչեցին հրամոթային համազարկեր: Նրա նավին ուղեկցում էին փոքր ու մեծ ծավալի բազմաթիվ ռազմականներ: Վերևից պատվո պահակի դեր էին ստանձնել քսանից ավելի ռազմական ուղղաթիռներ և ինքնաթիռներ: **«Նոր աշխարհից լույս, հույս և խաղաղություն էր ուղևորվում դեպի ծերուկ եվրոպա»:**

Կտրելով Ատլանտյան ջրերը, Վիլսոնյան պատվիրակությունը 1918 թ. դեկտեմբերի 13-ին առափնեց **Բրեստ**: Կարծես թևերի վրա առած՝ եվրոպացիները «անսովոր ամերիկացուն» մեկ օրում հասցրեցին Փարիզ:

Ֆրանսիան նրան ընդունեց հավուր պատշաճի, պատվով ու արժանապատվությամբ: Շարունակությունը նա վայելեց Լոնդոնում, Մանչեստրում, Դոնում, Ճենովայում: Երկու աշխարհներն իրար էին խաչաձևվում, երկու քաղաքակրթություններն իրար էին միախառնվում:

Անշուշտ, հանգստյան տողամեջերում Վ. Վիլսոնը բարդ հարցեր էր քննում Կլեմանսոյի, Լլոյդ Ջորջի և Օրլանդոյի հետ: Այդ պարագաներում, բնականաբար, կոնֆերանսի հրավիրումն ուշանում էր¹:

Երկրորդ պատճառն ավելի քան լուրջ էր: Դաշնակիցներն օրորվում էին ռոմանտիկայի այն հույսերով, թե այդ ամիսներին սովետական իշխանությունը կտապալվեր Ռուսաստանում, և վերջինս ևս իրավունք կստանար մասնակցելու խաղաղության կոնֆերանսին²:

Անգլիական պատվիրակության քարտուղար **Չարլզ Նիկոլսոնը** այն հարցին, թե ինչո՞ւ խորհրդաժողովը 1918 թ. դեկտեմբերի 18-ից փոխադրվեց 1919 թ. հունվարի 18-ը, պատասխանեց, թե «Ռուսաստանում, ինչպես դուք հիշում եք, այն օրերին տիրում էր անկարգություն: Նույնն էր նաև Գերմանիայում: Մենք կարծում էինք, որ եթե մի փոքր սպասեին, շատ բան ինքնին կկարգավորվեր»³: Այդ «կարգավորումը» Ռուսաստանում խորհրդային իշխանության տապալումն էր, որը տեղի չունեցավ:

* * *

Նախքան կոնֆերանսի բացումը, նախապատրաստական-կազմակերպչական լուրջ աշխատանք էր կատարվել: Որոշվել էր համաժողովին մասնակից դարձնել աշխարհի քարտեզի վրա գծագրված **քսանյոթ պետություններին միայն**: Գերմանիայի առաջ ամուր փակել էին կոնֆերանսի դռները: Ռուսաստանը, բնականաբար, չէր կարող Փարիզ գալ, քանի որ դեռևս դիվանագիտական հարաբերություններ չէր հաստատել Եվրոպայի որևէ տերության հետ:

Ընդմիջումներով շուրջ **հինգ և կես ամիս հարատևող** կոնֆերանսը չափից ավելի ներկայացուցչական էր: Փարիզն այդ օրերին վերածվել էր աշխարհի խճանկարի: Ամենուրեք խոսակցություններ էին լսվում հողագնդի բոլոր լեզուներով: Փողոցներում, հյուրանոցներում, ռեստորաններում, զբոսայգիներում, ամենուրեք երևում էին ազգային ամենատարբեր տարազներ կրող **սև, սպիտակ ու դեղնամորթ** դիվանագետները, նրանց սպասավորները:

Երկար թաց ու չոր ամելուց հետո **որոշվեց կոնֆերանսի պաշտոնական լեզուներ ծանաչել ֆրանսերենն ու անգլերենը**: Դրանով պայմանավորված նաև՝ Փարիզի փողոցներով քայլում էր թարգմանիչների անտառ, Զինաստանի լայնարձակ երկնակամարից սկսած, **Թեմզայի** մառախլապատ ափերով վերջացրած⁴:

Փարիզի խաղաղության կոնֆերանսը բազմամարդ էր: Նրանց ընդհանուր թվա-

¹ "Вудро Вильсон, Мировая война, Версальский мир", перевод А. Н. Карасика, предисловие Миз. Павловича, Москва-Петроград, 1923, стр. 33-36. Ст'у նաև З. М. Гершов, Вудро Вильсон, стр. 210-211.

² Չարլզ Չարլզ, Չայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 85-86:

³ Գ. Կոլոնով, Как делался мир в 1919 г., Москва, 1945, стр. 57.

⁴ Սանրաման տե՛ս "Северский мирный договор и акты, подписанные в Лозанне", стр. 6-7.

քանակը գերազանցում էր **երկու հազարից**: Դիվանագետներից զատ, Սենյաի ափամերձ հյուրանոցներում, առանձնատներում, նույնիսկ հասարակական շենքերում էին տեղավորված փորձագետներ, աշխարհագրագետներ, քարզմանիչներ, տեխնիկական կազմի այլ անդամներ¹: «**Ձորը Վաշինգտոն**»-ով դեպի Փարիզ աճապարող ամերիկյան պատվիրակության ու նրան սպասարկող անձնակազմի **թվաքանակը ձգվում էր մինչև 1400-ը**: Վաղօրոք իմանալով ամերիկյան պատվիրակության բազմամարդ լինելու մասին, **խանդոտ Դեվիդ Լլոյդ Ձորը**² մրցակցության մեջ ետ չմնալու մտահոգությամբ, Լա Մանչի վրայով դեպի Ֆրանսիա առափնեց **երկու հարյուր հոգանոց բրիտանական պատվիրակությանը**: Հարյուրական մարդուց էին բաղկացած **խալական և ճապոնական** պատվիրակությունները³:

Որոշվեց, Կոնֆերանսի կառուցվածքը: Համաժողովի բոլոր նիստերը պետք է նախագահեր մեկ անձնավորություն: **Վ. Վիլսոնի առաջարկով կոնֆերանսի մշտական նախագահ ընտրվեց դիվանագիտական «վագր» ժորժ Կլեմանսոն**: Նրա տեղակալներն էին՝ **Ռ. Լանսինգը** (ԱՄՆ - պետական քարտուղար), **Դ. Լլոյդ Ձորը** (Անգլիա), **Օրլանդոն** (Իտալիա), **Սայոնվին** (Ճապոնիա): Կոնֆերանսի ընթացքում երբեմն փոխատեղում էր կատարվում նախագահության կազմում, մասնավաճ, երբ ֆրանսիացի երիտասարդի կրակոցից ուսից ծանր վիրավորվեց Ժ. Կլեմանսոն և տեղափոխվեց հիվանդանոց՝ ապաքինվելու:

Ինչպես արձանագրեցինք, կոնֆերանսը քարզմանվում էր և սղագրվում անգլերենով ու ֆրանսերենով: Բազմամարդ էր քարտուղարությունը, որը գլխավորում էին **Դյուտաստոն և Մանտուն**: Ստեղծվեց խմբագրական հանձնաժողով, որի կազմում ներառվեցին **Ջոն Բրաուն Սկոտը** (ԱՄՆ), **Ֆրեստը** (Անգլիա), **Ֆրոմաժոն** (Ֆրանսիա), **Բուստատին** (Իտալիա), **Նագատկան** (Ճապոնիա):

Կոնֆերանսի պատվիրակների տեղերը և ս նախօրոք սահմանված էին: **Չորս մեծերը** (Անգլիա, ԱՄՆ, Իտալիա, Ֆրանսիա) կոնֆերանսում պետք է ունենային **հինգական պատվիրակներ**, որոնք օժտված էին քվեարկելու իրավունքով: Ճապոնիան ուներ **չորս** պատվիրակ:

Մեծ Բրիտանիան գաղութների (դոմինանտ) հետ միասին կոնֆերանսում զբաղեցնում էր **17 արոն**: Մի շարք փոքր երկրներ ունեին **երեքական**, ավելի փոքրերը՝ **երկուական**, նույնիսկ՝ **մեկական** ձայնի իրավունք:

Կազմավորվեցին աշխատանքային խմբեր, որոնք նույնպես բաշխված էին, կանոնակարգված և գործում էին մշտապես: Առաջին տեղում պետք է լիներ **Տասի խորհուրդը**, որն ընդգրկում էր **հինգ նախագահներին**, ապա նրանց արտգործնախարարներին: Սրանցից քարտուղարում էին **հինգը**, որոնց գլխավորում էր ֆրանսիացի **Դյուտաստը**:

Երկրորդ տեղումն էր **Հինգի խորհուրդը**: Այն համահավաքում էր մեծ տերությունների արտաքին գործերի նախարարներին, որոնք, օժտված լինելով լայն լիազորություններով, երբեմն փոխարինում էին **Չորսի խորհրդին**: Կազմավորվեցին նաև **բազմաթիվ հանձնաժողովներ**, որոնց իրավունքները երկրորդված էին, սակայն աշխատանքային պարտականություններն ու ծանրաբեռնվածությունը չափազանց մեծացված⁴:

¹ Մանրամասն տե՛ս Գ. Կոլոմբո, *Как делался мир в 1919 г.*, стр. 18.

² "Вудро Вильсон, Мировая война, Версальский мир", перевод А. Н. Карасика, Москва-Петроград, 1923, стр. 36-37.

³ "Северский мирный договор и акты, подписанные в Лозанне", со вступительной статьей проф. Ю. В. Ключникова, Москва, 1927, стр. 10-11.

"Общую обстановку конференции Кейнс рисует как сплошной хаос и мир интриг, в котором мелочи затемняли важное, где из-за пустяков разгорались ожесточенные словесные бои, в пылу которых забывались и отбрасывались важные результаты, достигнутые в заседании накануне. Несклонный к полемике Темперлей, автор и редактор трехтомного труда по "Истории Мирной Парижской Конференции", характеризует обстановку, царившую во время мирных переговоров, приблизительно в том же духе. "Конференция, - говорит он, - управлялась лицами, которых события войны сделали руководителями гораздо более грандиозных дел, чем какие существовали когда-либо ранее. Но никто из этих лиц не был человеком, способным подчиняться какой-либо системе; каждый пользовался своими материалами на-лету и кое-как, и это постоянно меняло механизм конференции в зависимости от нужд момента и положения. Невозможно описывать конференцию, как нечто устойчивое. Ее следует рассматривать, как живой организм, клетки которого постоянно менялись и который временами принимал исключительно странные и уродливые формы по повелительной воле главарей, в свою очередь, подчинявшихся великой силе общественного мнения".

Կոնֆերանսի բազմամարդ մասնակիցները տրոհված էին **չորս կատեգորիաների**: **Առաջին խմբի** մեջ էին մտնում պատերազմող, գլխավոր տերությունները, որոնք քննարկվող բոլոր խնդիրներում ունեին իրենց **հետաքրքրասիրությունները**: Այդ խմբին էին պատկանում **ԱՄՆ-ը, Բրիտանական թագավորությունը, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան**:

Սրանց էր վստահված կոնֆերանսի ղեկավարման պրոցեսը, որոնք և կազմել էին **«Տասի խորհուրդը»**:

Գնալով Տասի խորհուրդն ընդլայնում էր իր թվական կազմը, որի պատճառով էլ վերածվում էր անկառավարելի մարմնի⁵: Որպեսզի այդ լուրջ թերությունը բացառվեր, կոնֆերանսի առաջին դեմքերը **1919 թ. մարտի 25-ին** այն տրոհեցին **երկուսի**: Առաջին խմբի մեջ համահավաքեցին **Վիլսոնին, Լլոյդ Ձորին, Կլեմանսոնին, Օրլանդոյին**: Նրանց տվեցին **«Չորսի խորհուրդ»** անվանումը և գործելու լայն լիազորություններ:

Չկապորեցին նաև **«Հինգի խորհուրդ»**, որի կազմի մեջ մտցրեցին գլխավոր տերությունների արտաքին գործերի նախարարներին: Դրանք էին **Լանսինգը** (ԱՄՆ), **Բալֆուրը** (Անգլիա), **Պիչոն** (Ֆրանսիա), **Սուսինոն** (Իտալիա) և **Մակինոն** (Ճապոնիա):

Չորսի խորհուրդը դարձավ կոնֆերանսի վճռորոշ օրգանը և հարցերը քննում էր հույժ գաղտնիության սկզբունքով, այնքան գաղտնի, որ քարզմանիչ **Մանտուն** և նույնիսկ քարտուղար, անգլիացի **Խենկին** քննարկվող շատ հարցերի լուծման մասին մինչև վերջ էլ գաղափար չկազմեցին: **Հինգի խորհուրդը** զբաղվում էր երկրորդական հարցերի քննարկմամբ և վճռորոշ դեր չէր խաղում կոնֆերանսականների կյանքում:

Այդպիսին էր Փարիզի **խաղաղության կոնֆերանսի գլուխը**: Իսկ մարմինը... **Երկրորդ** խումբը համահավաքում էր **Բելգիան, Բրազիլիան, Բրիտանական դոմինանտներ, Դոմինատանը, Դոմինատանը, Գվատեմալան, Գայիթին, Հեյա-**

⁴ "Версальский мирный договор", Москва, 1925, стр. 9.

⁵ "История дипломатии", том II, Москва, 1965, стр. 140.

⁶ Գ. Կոլոմբո, նշված աշխատությունը, էջ 18:

զը, Գոնդուրասը, Չինաստանը, Կուրան, Լիբերիան, Թայլանդը, Չեխոսլովակյան Հանրապետությունը: Սրանց հետաքրքրող հարցերը մասնավոր բնույթի էին և կոնֆերանսին մասնակցու էին, եթե իրենց վերաբերող խնդիրներ էին քննվում¹:

Երրորդ խմբի մեջ մտցրել էին այն տերություններին, որոնք գերմանական բլոկի հետ հարաբերվել էին **դիվանագիտական խողովակներով**, ասել է թե՛ պատերազմի տարիներին պահվել էին Քառյակի «պահեստարանում» (ռեզերվում): Այդ պետություններն էին **Էվվադորը, Պերուն, Բուլիվիան, Ուրուգվայը**: Սրանց պատվիրակները ևս կարող էին մասնակցել կոնֆերանսի այն նիստերին, որոնց ժամանակ կքննարկվեին իրենց երկրներին վերաբերող խնդիրները:

Չորրորդ խմբավորման երկրներն էին այն չեզոք պետությունները, որոնք դեռևս գտնվում էին **կազմավորման պրոցեսում**: Սրանք կարող էին մասնակցել կոնֆերանսին, եթե հինգ խոշոր տերություններից որևէ մեկը կերաշխավորեր կամ կիրավիրեր նիստերին:

Այնուհետև ձևավորվեցին զանազանակերպ հանձնաժողովներ, որոնց գումարը հասավ 58-ի: Հինգ և կես ամիսների ընթացքում այդ **հանձնաժողովները հավաքվեցին 1646 անգամ: Տասի խորհուրդը հավաքվեց 72 անգամ, Չորսի խորհուրդը՝ 145, Հինգի խորհուրդը՝ 39 անգամ:** Փարիզի կոնֆերանսի ընթացքում բոլոր հանձնաժողովների հրավիրած նիստերի ընդհանուր քանակը հասավ 1902-ի, կամ օրական հավաքված նիստերի միջին քանակը հասնում էր 12-ի²:

3. Փարիզի խաղաղության կոնֆերանսը քննում է կայզերական Գերմանիայի խնդիրը (18. I, 1919 - 28. VI, 1919)

1919 թ. հունվարի 18-ի առավոտյան ժամը 10-ին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության Կե դը Օրսե անվանակոչված շքեղազարդ պալատի ընդարձակ դահլիճ էին հավաքվել աշխարհի 27 երկրներից հրավիրված պատվիրակներ: Նրանք Փարիզ էին բերել վառ հույսեր, անհամբեր սպասումներ՝ խաղաղության կոնֆերանսից տուն տանելու այն, ինչի մասին վաղուց էին երազել:

Տանտիրոջ իրավունքով կոնֆերանսի առաջին ու հանդիսավոր նիստը բացեց **Ռայմոն Պուանկարեն** (1860-1924): Նա մասնագիտությամբ փաստաբան էր, Ֆրանսիայի ակադեմիայի անդամ, 1913-1920 թվականներին երկրի պրեզիդենտ: Նիստի բացման խոսքում պրեզիդենտն անմիջապես հարձակում գործեց Գերմանիայի վրա, արդարամտորեն նրան մեղադրելով քաղաքակիրթ մարդկությանն ահռելի վնասներ հասցնելու համար: Վ. Վիլսոնն այդ հայացքները չէր բաժանում, քանզի մտապահել էր կոնֆերանսում պաշտպանել կայզերական տերության տարածքային ամբողջականությունը:

Այստեղ երկու նախագահների միջև եղած տարածայնություններն ուժեղացան, կրքերը թեժացան և հենց սկզբից կարող էին խաչվել Ամերիկայի և Ֆրանսիայի սրերը, սակայն խոհեմությունը հաղթանակեց, և ժամանակավորապես հետաձգվեց տարածայնություններին սուր բնույթ հաղորդելը: **Ավելին, Վ. Վիլսոնի առաջարկով, միաձայն քվեարկությամբ, խաղաղության կոնֆերանսի մշտական նախագահ ընտրվեց ժորժ Կլեմանսոն:**

Կոնֆերանսում քննարկվելիք խնդիրների շուրջ վարվող բանակցությունները տևեցին **չորս օր**: Հունվարի 25-ին միայն համաժողովն ունեցավ իր **երկրորդ**, լիագումար նիստը: Այս անգամ բանավեճը բացեց Վ. Վիլսոնը՝ նախագահությունից պահանջելով նախ հաստատել **Ազգերի լիգայի** կանոնադրությունը, ապա նոր միայն անցնել տարածքային փոփոխությունների շուրջ ծավալվելիք մտաբխումներին:

ԱՄՆ-ի նախագահի առաջարկին դեմ դուրս եկան Լլոյդ Ջորջն ու ժորժ Կլեմանսոն՝ ծածուկ ունենալով այն գաղափարը, թե Վիլսոնին ինչ-որ բանով պետք է զբաղեցնել և այդ միջոցում, առանց նրա մասնակցության, վճռել գերմանական գաղութների վերաբաժանման խնդիրը: **Վիլսոնն այդ խաղերը հասկացավ և չարացավ, զայրացած էին նաև Անգլիայի և Ֆրանսիայի վարչապետները: Փաստորեն երեք շաբաթ հետո մոռացվեցին այն ընդունելություններն ու պատիվները, որոնց արժանացրել էին ԱՄՆ-ի նախագահին**¹:

Ազգերի լիգայի խնդրի շուրջ սկսված բանավեճը շարունակելիս Վ. Վիլսոնը հայտարարեց. **«Մենք այստեղ ենք հավաքվել երկու նպատակի համար. նախ կարգավորենք խաղաղության պրոցեսը պատերազմից հետո, ապա ապահովենք խաղաղությունը երկրագնդի վրա, ըստ որում Ազգերի լիգան հնարավորություն կտա վճռել այդ երկու խնդիրները զատ-զատ կամ միասին»**²:

Վիլսոնն առաջարկեց անմիջապես հաստատել Ազգերի լիգայի գործելու իրավունքը, սակայն հանդիպեց և՛ Կլեմանսոնի, և՛ Լլոյդ Ջորջի լուրջ դիմադրությանը: Խնդիրը հետաձգելու նպատակով նրանք առաջարկեցին ստեղծել կանոնադրությունը մշակող հանձնաժողով և այդ հանձնաժողովի նախագահի պարտականությունը դնել Վուդրո Վիլսոնի վրա: **Վիլսոնն Ազգերի լիգան համարում էր իր անդրանիկ արու զավակը (ունեք երեք դուստր),** նրա նկատմամբ ուներ ապրումներ, սպասելիքներ: Հանուն այդ բոլորի՝ ԱՄՆ-ի պրեզիդենտը համաձայնեց հանձնաժողովի ստեղծմանը, նրա նախագահի պարտականությունների կատարմանը, միայն թե կյանքի կոչվեր **Ազգերի լիգան**:

Համաշխարհային պատմության մեջ միջազգային անդրանիկ այդ կազմակերպությունը ծննդյան վկայական էր ստացել 1919 թ. փետրվարի 14-ին, գործողությունը սկսել 1920 թ. հունվարի 10-ին և դադարել էր գոյության իրավունքից 1939 թվականին: Նրա փորձը հաշվի առնելով, ձևավորվեց միջազգային նոր կազմակերպություն, որը ստացավ **Միավորված Ազգերի Կազմակերպություն (ՄԱԿ) անվանումը**³:

Նախքան իր կազմակերպչական ձևավորումն ու գործելու արտոնագիր ստանալը, **Ազգերի լիգան** անցել էր մտահոգումների, մտաբխումների երկարատև և դժվարին ճանապարհ: Այդ պրոցեսում, սակայն, մի հանգամանք ընդհանուր էր, անվիճելի:

¹ **Յ. Մ. Գերսոն**, Вудро Вильсон, стр. 215-216.

² Նույն տեղում, էջ 215-216:

Այժմ պայմանագրի ստորագրման տեղի փոփոխության խնդիրը, այսինքն՝ վայրը **Փարիզից փոխատեղությունը Վերսալ:** **Սիմվոլիկ, բայց այս քայլը ևս ուղղակի պատասխան էր բիսմարկյան գերմանացիներին:**

1870-1871 թթ. **Ֆրանս-պրուսական պատերազմում** ջախջախիչ հաղթանակ տարած գերմանիայի **Վիլհելմ Առաջին** կայսրը Վերսալի ապակեպատ, շքեղատեսք այդ պալատում ընդունեց **կայսերական կոչումը, թագն ու գավազանը:** Արտաքին գործերի մինիստրության այդ պալատում միջազգային հանրությունը Վիլհելմին **ճանաչեց իբրև կայսր և շնորհավորեց նրան:** Ավելին. այդ պալատում էր **Օտտո ֆոն Բիսմարկը** հռչակվել գերմանիայի ամենաբարձրագույն ղեկավարը, որը հետագայում պատմության էջեր մտավ **«երկաթե կանցլեր»** պատվանունով:

Եկել էր պատասխանի ժամանակը: Ֆրանսիայի պրեզիդենտն ու վարչապետը, չթաքցնելով փոխվրեժի իրենց զգացումը, համաձայնեցնելով Մեծ Բրիտանիայի **Քլերոկ V թագավորի, վարչապետ Դեվիդ Լյոյդ Ջորջի հետ՝** սպանիչ պատասխան էին պատրաստել **Վիլհելմ երկրորդ կայսրի** ու նրա ջարդարար գեներալների համար: Եվ այդ ամենը պետք է իրողության վերածվեր մեկ օրում՝ **հունիսի 28-ին**²:

Վերսալի հաշտության պայմանագիրը ստորագրեցին **մի կողմից** հաղթանակած դաշնակից **հինգ մեծ տերությունները - Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները** (որի ստորագրությունը հետագայում Կոնգրեսը չեղյալ հայտարարեց): Դաշնագրի տակ իրենց ստորագրությունը դրեցին նաև քսանմեկ մյուս տերությունները: Դրանք էին - **Բելգիան, Բուլղարիան, Կուբան, Հունաստանը, Գվատեմալան, Հայիթին, Հոնդուրասը, Լիբերիան, Նիկարագուան, Պանաման, Պերուն, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբիան, Խորվաթիան, Սիամը, Չեխոսլովակիան, Ուրուգվայը, Սլովենիան:**

Պայմանագիրը մյուս կողմից ստորագրեց հանուր մարդկությանն այդքան չարիք պատճառած, աշխարհին **երկու Աշխարհամարտ «պարտադրած»** կայգերական (ու ֆաշիստական) գերմանիան: Դաշնագրի ստորագրումից հրաժարվեցին **Չինաստանը** (նրա նահանգներից երկուսը խլվել ու բռնակցվել էին ճապոնիային), **Չեչազը և Էկվադորը:** ԱՄՆ-ի Կոնգրեսի ստորագրությունից հրաժարումը պատճառաբանվում էր նրանով, թե այն հակադրվում է ավանդական դարձած **Մոնրոյի դոկտրինայի** (1823 թ.) **«սկզբունքներին»:**

Դաշնագրի տակ հինգ մեծ տերությունների պատվիրակություններից իրենց ստորագրություններն են դրել.

ԱՄՆ-ից - **Վ. Վիլսոնը, Գ. Լանսինգը, Գ. Ուայտը:**

Անգլիայից - **Դ. Լյոյդ Ջորջը, Է. Բ. Լոուն, Ա. Ջ. Բալֆուրը:**

Ֆրանսիայից - **ժ. Կլեմանսոն, Ս. Պիշանոն, Ա. Տարդեն, ժ. Կամբոնոն:**

Իտալիայից - **Ս. Սոնիոն, Ջ. Իմպերիալին, Ս. Կրենպին:**

Ճապոնիայից - **Սայոնշին, Մակիոն, Սինդեն, Սացուին:**

Գերմանիայի կողմից ստորագրեցին մի քանի օր առաջ արտաքին գործերի մինիստր նշանակված **Գ. Մյուլլերը** և դոկտոր **Բելենը:**

Վերսալի դաշնագրի տեսքտը **երկարատև աշխատանքի արգասիք էր:** Այն մշակվել էր չափազանց գաղտնագրված պայմաններում, որի վրա **շուրջ կես տարի** լարված աշխատել էին Արևմուտքի ժամանակի գերագանց իրավաբանները, դիվանագետները, աշխարհագրագետները, քարտեզագիրները և, վերջապես, ֆրանսերենին և անգլերենին կատարյալ տիրապետող լեզվաբանները: Պայմանագրի բնագիրը ձևակերպվել էր ֆրանսերենով, որի ավարտից հետո միայն թարգմանվել էր **անգլերեն:**

Պայմանագիրն ուժի մեջ մտավ և շրջանառության մեջ դրվեց 1920 թվականի հունվարի 10-ին, երբ նախ Դաշնակից չորս տերությունները, ապա նրանց հաջորդած **գերմանական ռալիստազը** երկրների բարձրագույն իրավական մարմիններում **հաստատեցին այն** և մամուլի կենտրոնական օրգաններում հրապարակեցին վավերացված տեսքով:

Դաշնագրով վերածնվեց արդեն առեւի չափերի հասած, հանուր մարդկությանն ահ ու սարսափ պատճառող **գերմանական լայնարձակ կայսրությունը:** Պայմանագրի հողվածներ ձևակերպողները ձեռքներին ունեին 1871 թ. մայիսի 10-ին կնքված **Ֆրանկֆուրտյան հաշտության** վավերաթուղթը, որով պարտված Ֆրանսիան հարկադրված էր հաղթանակող գերմանիային զիջել իր երկրի արդյունաբերության սիրտը հանդիսացող **Էլզաս-Լոթարինգիայի նահանգները:**

Վերսալի պայմանագիրը նախ չեղյալ էր հայտարարում **Ֆրանկֆուրտյան դաշնագիրը** և իր իսկական տիրոջն էր վերադարձնում **Էլզաս-Լոթարինգիայի նահանգներն ամբողջությամբ:** **Սահարայի ածխային ավազանը** վերցվում էր կայսրությունից, 15 տարվա պայմանաժամանակով դրվում էր Ազգերի լիգայի հսկողության ներքո, բայց միաժամանակ Ֆրանսիային դրանց շահագործման իրավունք էր վերապահվում:

¹ **Յ. Մ. Գերշով,** Вудро Вильсон, Москва, 1983, стр. 253-255. Տե՛ս նաև "Вудро Вильсон, мировая война, Версальский мир", перевод **А. Н. Карасика,** предисловие **Мух. Павловича,** Москва-Петроград, 1923, стр. 55-95.

² Սույն ենթադրուկը շարադրելիս օգտվել ենք. "Версальский мирный договор", Москва, 1925. "Дипломатический словарь", том I, Москва, 1985, стр. 193-196. "История дипломатии", том III, Москва, 1965. «Հայկական սովետական Հանրագիտարան», հատ 11, Երևան, 1985, էջ 418-419: «Վերսալի պայմանագիրը» բառ-հորվածը:

Գերմանիան պարտավորվում էր ճանաչել բոլոր այն պայմանագրերը, որոնք Դաշնակից տերությունները կկնքեին **Բելգիայի և Նիդերլանդների** հետ, այնպես որ, չեղյալ կհայտարարվեր **1832 թ. Չեզոքարյան համաձայնագիրը**: Գերմանիան ճանաչում էր **Էյպեն և Մալմեդիկ** օկրուգների, ինչպես նաև Պրուսիայի մասը կազմող Մորենեի չեզոք գոտու անցումը Բելգիային¹:

1919 թ. հունվարի 1-ից **Լյուքսեմբուրգը** դուրս էր գալիս Գերմանիայի մաքսային միության իրավասությունից **և ստանում էր վերջնական և անկաշկանդ անկախություն, որը հարատևում է մինչև օրս**:

Գերմանիան պարտավորվում էր ճանաչել 1919 թ. գլխավոր Դաշնակից տերությունների և Ավստրիայի միջև կնքված **Սեն ժերմենի** պայմանագիրը, որով Ավստրիան ճանաչվում էր անկախ պետություն, առանձնանում իր նոր սահմաններով²:

Գլխավոր դաշնակից տերությունները **Չեխոսլովակիան** անջատեցին Գերմանիայից: Վերջինս պարտավորվեց ճանաչել այդ պետության անկախությունը 1914 թ. օգոստոսի 3-ի այն սահմաններով, որոնք գծագրված էին **Ավստրո-Յունգարիայի և կայզերության միջև**:

Վ. Վիլսոնի **«Տասչորս կետեր»**-ից տասներեքերորդը վերաբերում էր **Լեհաստանին**: Դեռևս 1918 թ. հունվարի 8-ին ԱՄՆ-ի նախագահը Դաշնակիցներից պահանջում էր պատերազմից հետո **ստեղծել լեհական այնպիսի ազատ ու անկախ պետություն, որն իր կազմի մեջ առներ լեհերով բնակված բոլոր մարզերը, անվտանգ ելք ունենար դեպի ծով**, բնակչության իրավունքները պաշտպանվեին միջազգային օրենքներով: Վերսալի պայմանագիրը ձևավորելիս պետքարտուղար Լանսինգը պաշտպանեց վիլսոնյան վերոհիշյալ սկզբունքները և անխաթար հասավ իր նախագահի առաջադրանքի կատարմանը:

Պայմանագրով **Դանցիգը (Գդանսկ)** անջատվում էր կայսրության տարածքից և դառնում էր **«ազատ քաղաք»**³: Ազգերի լիգայի հովանու ներքո: **Մենելը (Կլապեդիան)** անցնում էր հաղթող տերությունների տնօրինությանը: Չեխոսլովակիային էր անցնում **Միլեզիայի** նահանգի մի հատվածը: Գերմանիային պարտադրվում էր հարգել Ավստրիայի և՛ անկախությունը, և՛ տարածքային ամբողջականությունը:

Յոնեոսի ձախափմյա ողջ տարածքը պետք է **ապառազմականացվեր**: Գերմանիայի ձեռքից վերցվում էին բոլոր գաղութները և մասնատվելով՝ դրանք բաժանվում էին **Միացյալ թագավորության, Իտալիայի, Բելգիայի և Ճապոնիայի միջև**:

Դաշնակից տերությունները վախենալով նույնիսկ ջախջախված, դիակի վերածված գերմանական միլիտարիզմի վերակենդանացումից, նրան **պարտադրեցին լրիվ զինաթափում**: Այդ կետի կիրառումը նրանք խիստ կարևոր էին համարում, որպեսզի եվրոպան ինքը ևս առանց երկնչանքի զինաթափվեր, **այսինքն՝ զորացրվեին զենքի տակ պահվող միլիոնավոր զորքերը**:

Գերմանական ցամաքային զորքերի թիվը չպետք է **անցներ հարյուր հազարից**: Ըստ որում, նրանք բացառապես պետք է ծառայեին երկրի ներսում կարգ ու կանոնի հաստատման գործին: Այդ զորքերի գլխավորող հրամկազմի թվաքանակը չպետք է անցներ **չորս հազարից**: Գլխավոր շտաբը վերացվում էր, խիստ կարգապահությամբ հսկվում էր, թե տերությունն ինչքան զենք պետք է ունենար, ինչպիսի զինվորական միավորումներ պետք է պահեր:

Դաշնակիցները **«դաժան վարվեցին»** գերմանական և ընդհանրապես **Քառյակի** երկրների ռազմածովային ուժերի հետ, քանի որ պատերազմի ընթացքում մեծ

կորուստներ էին կրել նրանց հասցրած հարվածներից: Անտանտի միացյալ զորքերի գլխավոր հրամանատարության խստիվ կարգադրությամբ դեռևս 1919 թ. հունվար-փետրվար ամիսներին ջրասույգ էին արվել **գերմանա-թուրքական բոլոր ռազմա-նավերը**:

Վերսալում որոշվեց Գերմանիային թուլատրել կառուցելու և պահելու վեց թեթև ռազմանավեր (կրեյսերներ), **տասներկու հակաականային** նավեր: Ըստ որում՝ այդ նավատորմը չպետք է կապ ունենար օդային ուժերի հետ, ամենակարևորը՝ չպետք է տախտակամածի վրա ունենար ծանր հրետանի:

Մեծ դժվարությամբ վճռվեցին Գերմանիայից ստացվելիք պատերազմական ռազմատուգանքների չափը, գանձման եղանակները և ստացող երկրները: Այդ մասին «Դիվանագիտության պատմություն» աշխատության էջերում կարդում ենք.

«С такой же запальчивостью обсуждался и вопрос о репарациях. Сколько можно взять с Германии? — над этим ломали голову эксперты. Комиссия под председательством австралийского премьера Юза наметила цифру в 24 млрд. ф. ст. (почти 480 млрд. золотых марок). Ллойд Джордж назвал эту цифру “дикой и фантастической химерой”, хотя сам на предвыборных собраниях в Англии обещал “вывернуть карманы немцам”. Французы требовали на одно восстановление северо-восточных департаментов 3 млрд. ф. ст. (60 млрд. золотых марок), в то время как по статистическим данным народное достояние всей Франции в 1917 г. составляло 2,4 млрд. ф. ст.

Американцы опасались, что Клемансо и Ллойд Джордж убьют курицу, несущую золотые яйца. Ведь получить долги с Англии и Франции США могли лишь в том случае, если Германия будет платежеспособной. Кроме того, США не хотели усиливать своих английских и французских конкурентов. Американский эксперт Дэвис считал возможным потребовать с немцев только 25 млрд. долл.

Такие же споры вызвал и вопрос о распределении репараций между победителями. Ллойд Джордж предлагал 50% всей суммы дать Франции, Англии — 30% и остальным странам — 20%. Франция настаивала на 58% для себя и 25% для Англии. После долгих споров Клемансо объявил, что последнее слово французов — это 56% для Франции и 25% для Англии. Вильсон предлагал 56 и 28%.

В конце концов американские эксперты предложили не фиксировать цифры контрибуции, а поручить это особой репарационной комиссии, которая должна будет не позднее 1 мая 1921 г. предъявить германскому правительству окончательные требования. Французы ухватились за это предложение, предполагая в будущем через комиссию добиться выполнения своего плана. В остальных вопросах к соглашению так и не пришли. Клемансо снова стал угрожать уходом. Вильсон со своей стороны вызвал из Америки пароход. Мирная конференция висела на волоске. Спасти ее можно было только пойдя на взаимные уступки»⁴:

Ամփոփենք. Փարիզի խաղաղության կոնֆերանսն իր աշխատանքն սկսեց 1919 թվականի հունվարի 18-ին: Մայրաքաղաքում սկսված և **Վերսալում** ավարտված հաշտության պայմանագրի առաջին տարբերակն ավարտին հասավ ապրիլի 20-ին: Մանրակրկիտ լրամշակումից հետո միայն, **1919 թվականի հունիսի 28-ին**, Վերսալում

¹ Մանրամասն տե՛ս. «Дипломатический словарь», том I, А-И, Москва, 1985, главная редакция А. А. Громыко, А. Г. Ковалев, П. П. Савельянов, С. Л. Тухвинский, стр. 193-195:

² Տե՛ս նույն տեղում, էջ 194:

⁴ «История дипломатии», том III, стр. 151.

լի ապակեպատ դահլիճում վավերագրի երկկողմ ստորագրումից հետո միայն այն պատմության համար ստացավ **Վերսալի հաշտության պայմանագիր անվանակոչումը**:

1919 թվականի **օգոստոսի 9-ին** Գերմանիայի օրենսդիր գերագույն մարմինը վավերացրեց դաշնագիրը: Օգոստոսի 10-ին այն վավերացրեցին Դաշնակից մեծ տերությունները, որով նա օրենքի ուժ ստացավ և սկսեց գործել Եվրոպայի տարածքով մեկ¹: **Օգոստոսի 11-ից Վերսալի հաշտության պայմանագիրը միջազգային իրավական ուժ ստացավ**:

Վերսալի հաշտության պայմանագրին նախորդեցին և հաջորդեցին պատերազմող երկու կողմերի միջև ստորագրված **այլ դաշնագրեր**: Սրանք ընդհանուր անուն ստացան, այն է՝ **Վերսալ-վաշինգտոնյան սիստեմ**: Այդ պայմանագրերը ևս վավերագրեցին մեծ տերությունները (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա): Դրանցով վերջակետ էին դրվում պատերազմական գործողություններին ոչ միայն Գերմանիայի, այլ նաև նրա սատելիտների հետ: **Ընդհանուր առմամբ սիստեմն ուղղված էր Ռուսական Ֆեդերացիայի դեմ**:

Վերսալ-վաշինգտոնյան սիստեմի մեջ էին մտնում **Սեն ժերմենի (1919), Նյոյի (1919), Սևրի (1920), Վաշինգտոնի** պայմանագրերն ու դրանց նախորդած կոնֆերանսները: Այդուհանդերձ, դրանք չհասան իրենց նպատակին, այսինքն՝ չկարողացան վերացնել Դաշնակից տերությունների միջև եղած և այժմ ավելի խորացած հակամարտությունները, որոնք և պատճառ դարձան այդքան արագ հասունացող Երկրորդ աշխարհամարտի բռնկմանը: **Նորից Գերմանիա, նորից Դաշնակիցներ, նորից ցեղասպանություն, նորից Եվրոպայի անտարբերություն**: Ահա նման բարդ ու խճճված իրադարձությունների միջավայրում էր քննարկվում **Չայկական հարցը, Չայաստանում մեծ պետություն ստեղծելու խնդիրը**:

Գլուխ յոթերորդ

Սևրի հաշտության պայմանագիրն (10. VIII, 1920) ու Վուդրո Թոմաս Վիլսոնի իրավարար վճիռը Նայասպան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ (22. XI, 1920)

Հոդված 88. Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են Դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն (այս և հետագա ընդգծումները մերն են - Հ.Գ.):

Հոդված 89. Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարչը պայմանավորվող կողմերը համաչայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին՝ դեպի ծով ելք տրալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր փարածրների սպառազմականացման վերաբերյալ:

Հոդված 90. Այն դեպքում, երբ 89-րդ հոդվածի համաչայն՝ սահմանագիծը որոշելիս վիլայեթների ամբողջ փարածրը կամ նրա մի մասը հանչնվի Հայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը իրաժարվում է հանչնված փարածրների նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից: Սույն պայմանագրերի որոշումները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող փարածրների նկատմամբ, այս պահից սկսած կգործադրվեն նաև այդ փարածրի նկատմամբ:

Սևրի դաշնագիր (10.VIII, 1920)

Վերջին կես հազարամյակում համաշխարհային պատմության խաչուղիներում **ՎՍևրի պայմանագիրն** (10. VIII, 1920) անդրանիկ այն **դաշնագիրն** է, որի համաձայն Եվրոպական մեծ ու փոքր տերությունները, վերջապես տեսնելով օսմանյան բռնապետության կատարած չարագործությունները, **միակամ** որոշեցին մեղադրական աթոռին նստեցնել քրիստոնյա աշխարհին այդքան վիշտ ու տառապանք պատճառած թուրք չարագործներին¹:

¹ Սահրաման տե՛ս. "Дипломатический словарь", том I, А-И, Москва, 1985, стр. 192-195:

¹ Ռիչարդ Գ. Գովհաննիսյան, Չայաստանի Չանրապետությունը, Երևան, 2005, **Չամբարձում կարապետյան**, Սևրի պայմանագիրը Չայոց ճակատագրում, Երևան, 2004: **Ю. Г. Барсегов**, Арбитражное решение президента США Вудро Вильсона, 24 ноября 2007 г. **Ռաֆայել Չամբարձումյան**, Սևրի դաշնագիրն ու **Վուդրո Վիլսոնի** իրավարար վճիռը հայկական հարցը հետապնդելու նոր ռազմավարության հիմք: «Պատմություն և մշակույթ», հատոր Ա, Երևան, 2011, էջ 117-137:

Իր ջրուղիներով Եվրոպան Ասիայի հետ կամրջող, երեք աշխարհամասերի ճոթերին փռված թուրքական լայնարձակ կայսրությունն ի սկզբանե, թևերն արյունոտած, հալածում էր նվաճած, արդեն հպատակի վերածած այլակրոն ու այլադավան ժողովուրդներին, վիրավորում նրանց կրոնական ու մարդկային արժանապատվությունը և ի վերջո կամ սրանց բնօրրանից բռնահանում էր, կամ էլ **ցեղասպանության ենթարկում: Հայեր, հույներ, ասորիներ, եզդիներ, արաբներ**՝ ահա թուրքիայի զոհ դարձածների **ազգացանկը**, որոնք դժոխային բոցերի միջով անցնելով, անթիվ ու անհամար զոհեր տալով, սրտատրոփ սպասում էին պատերազմի հաղթական ավարտին, որպեսզի բավարարեին **փոխվրեժի** իրենց զգացումները: Դաշնակիցները կարծես թե խոսք-խոսքի տված պատմության բեմահարթակից **Թուրքիա պետությունը վերացնելու որոշմանն էին սպասում:**

Դեռևս 1915 թվականին, այսինքն՝ Անտանտի զորքերի առաջին հաջողություններից հետո, Դաշնակիցները մտադրվել էին օսմանյան կայսրությունը մասնատել **էթնկական հինգ գոտիների. դրանք էին Օսմանյան Անատոլիան, Հայաստանը, Սիրիան, Քուրդիստանը և Արաբստանը** (Իրաք)՝: Նման բաժանմանը դեմ չէին հպատակ ազգերի ղեկավարները, այդ թվում հայկական էլիտան, որն իր հայրենանվեր զավակի՝ **Նիկողայոս Ադոնցի** բերանով բարձրաձայնում էր նման որոշման կողմ լինելը:

Մեկ տարին չբուրած, Անտանտի տերություններն արդեն կարիք զգացին այնպիսի գրավոր մի նոր փաստաթղթի ստեղծմանը, որով կկարողանային վճռորոշել **Թուրքիա պետության ճակատագիրը:** Այդ դաշնագիրը ձևավորվեց պատերազմի երրորդ տարում և դրա ստորագրողներն էին **Ռուսաստանը, Ֆրանսիան, Բրիտանական կղզիները:** Դա Սայքս-Պիկոյի համաձայնագիրն էր:

Սայքս-Պիկոյի համաձայնագիրն (16. V, 1916 - 3. VII, 1916) իր անունն ստացավ ի պատիվ հիմնադիրների և մինչև հոկտեմբերյան հեղաշրջումը պահվեց **«հույժ գաղտնի»**, մանավանդ որ, նրա վերջնամասում դրոշմված էին Ռոմանովյան վերջին կայսր Նիկոլայ Երկրորդի ստորագրությունն ու **«Согласен»** մակագրությունը:

Համաձայնագիրն այս պարագայում **միայն** Ասիական Թուրքիան էր կոտորակում **հինգ գոտիների:** Դրանք էին. 1. **Կասպույտ գոտին**, որն ընդգրկում էր Արևմտյան Սիրիան, Լիբանանը, Կիլիկիան, Այնթապը, Ուրֆան, Մարդինը, Դիարբեքիրը և Հեքիարի մարզը (Վանա լճից հարավ), անցնելու էր Ֆրանսիայի տիրապետության տակ: 2. **Կարմիր գոտին**, որն ընդգրկում էր Իրաքի հարավային մասը (Բաղդադով և Բասրայով), ինչպես նաև պաղեստինյան նավահանգիստներ Հայֆան և Աքքան, անցնում էր Անգլիայի տիրապետության տակ: 3. **Դարչնագույն գոտին** ընդգրկում էր Պաղեստինը, որտեղ հաստատվելու էր միջազգային վարչություն, որի ձևը որոշվելու էր Ռուսաստանի և մյուս դաշնակիցների հետ համաձայնություն կայացնելուց հետո: 4. **«Ա» գոտին** (Արևելյան Սիրիան և Մոսուլի վիլայեթը) դառնում էր Ֆրանսիայի ազդեցության ոլորտ: 5. **«Բ» գոտին** (Անդրհորդանանը և Կենտրոնական Իրաքը) դառնում էին Անգլիայի ազդեցության ոլորտը: Ապա «Ա» և «Բ» գոտիներն իբր պետք է միավորվեին որպես «անկախ» արաբական պետություն կամ արաբական պետությունների ֆեդերացիա:

Հայկական յոթ վիլայեթները և Կոստանդնուպոլիսն իր ջրուղիներով պետք է անցնեին Ռուսաստանի գերիշխանության ներքո, մի բան, որը Պյոտր Առաջինից սկսած, Ռոմանովների «ամենաբաղձալի երազանքներիցն» էր: Նման որոշմանը դեմ էին և՛ արևելահայերը, և՛ ցեղասպանության ենթարկված արևմտահայերի - սփյուռքահայերի քաղաքագետ ներկայացուցիչները:

Եվ այսպիսի մտահոգություններով 1918 թվականի երկրորդ կեսին Առաջին աշխարհամարտը կնքում էր իր մահկանացուն: Այդուհանդերձ, Թուրքիայի մեղքով պատերազմը դեռևս շարունակվում էր, որի բեմահարթակում առավել զորավում էր Մեծ Բրիտանիայի ախորժակը: Խորամանկ Ալբրիտը, որը հայտնի էր իր թուրքասիրությամբ, այժմ ձգտում էր օր առաջ տիրանալ **Իրաքին, Պաղեստինին, Հորդանանին**, ամրապնդվել **Եգիպտոսում**, սեփական զորքերն ուժեղացնել **Աֆղանստանում**, ապա հսկել գաղութացրած **Հնդկաստանի** անվտանգությունը: Այդ էր պատճառը, որ բրիտանական կղզիներն Արևելքում պահում էին կադրային զինվորներից բաղկացած **կես միլիոնանոց** բանակ, այն դեպքում, երբ Ֆրանսիայի և Իսպանիայի զորքերի միասնական թիվը չէր գերազանցում **յոթանասուն հազարից:**

1918 թվականի սեպտեմբերին ծավալվեց անգլիական և արաբական զորքերի զլխավոր հարձակումը թուրքական բանակների դեմ: Այդ վճռական մարտերում զլխովին ջախջախվեցին օսմանյան **վեցերորդ, յոթերորդ և ութերորդ** բանակները: Անգլիական զորքերն առանց լուրջ դիմադրության մտան **Հորդանան, Սիրիա, Իրաք:** Բացառություն կազմեց **Մոսուլի շրջանը:**

Ճեղքելով ռազմաճակատի ընդհանուր սահմանագիծը, 1918 թ. սեպտեմբերի 15-ի լույս 16-ի լուսաբացին Դաշնակիցների զորամիավորումները գրավեցին **Մակեդոնիան** և սրընթաց շարժվեցին դեպի սուլթանի նստավայրը՝ **Ստամբուլ:** Արդեն կասկածից վեր էր, որ Քառյակ միությունը պատերազմը տանուլ է տվել և նրա լիակատար պարտությունն օրերի հարց էր: Երիտթուրքերի զլխավոր պարագլուխներից մեկը՝ Թուրքիայի վարչապետ **Մեմետ Թալեթ** փաշան այնքան բանականություն ունեցավ, որ 1918 թ. հոկտեմբերի 7-ին իր կառավարությունը ցրելու հրաման արձակեց: Սեփական երկիրը նման անմխիթարական վիճակի մեջ թողնելով, վարչապետն իր հետ վերցնելով երեք կուսակիցներին՝ **Էնվերին, Ջեմալին, դոկտոր Նազըմին**, նոյեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը ռազմական հածանավով դուրս եկավ Բոսֆորի ջրերից և Օդեսայի վրայով ճողոպրեց Գերմանիա (**որտեղ հայոց փոխվրեժային գնդակներով ստացավ իրեն արժանի պատիժը:**)

1918 թ. հոկտեմբերի 25-ին **Էգեյան ծովի Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում** սկսվեցին հաշտության բանակցությունները: Թուրքիայի կառավարական պատվիրակության կազմումն էին արտաքին գործերի նախարարության ծովային գործերի ղեկավար **Ռաուֆ-բեյը**, արտգործնախարարի խորհրդական **Ռեշիդ Հիքմեթը** և զլխավոր շտաբում աշխատող գնդապետ **Սաադուլլահը:** Դաշնակիցների կողմից բանակցությունները վարում էր անգլիական ադմիրալ **Հոֆ Բալթրոփը:**

Բանակցությունները վարվում էին Մուդրոսի ծովածոցում խարիսխ գցած անգլիական **«Ազամեմնոն»** ռազմանավի տախտակամածի վրա. դրանք տևեցին **հինգ օր:** 1918 թվականի հոկտեմբերի 30-ին ստորագրվեց **գինադադարի**, ավելի ստույգ կլինի ասել՝ **երիտթուրքերի կապիտուլյացիայի ակտը**, որով կարծես թե ավարտվում էր Առաջին աշխարհամարտը: Այդ փաստաթուղթը համաշխարհային պատմության էջեր մտավ **Մուդրոսի գինադադարի դաշնագիր անվամբ, որը վաղուց էր մշակվել Լոնդոնում, խմբագրվել Փարիզում և Հռոմում: Այստեղ կատարվեցին սոսկ խմբագրական քննության վիրահատումներ:**

Նախքան այս հիմնական փաստաթուղթը, Մեծ Բրիտանիան գաղտնի պայմանավորվածություններ ուներ Թուրքիայի հետ՝ Մերձավոր Արևելքի բաժանման, այնտեղից մեծ ու «համով» պատահներ ստանալու վերաբերյալ: Իհարկե, գաղտնագրված նման «թղթերը» անհայտ չէին մնում ֆրանսիացիների սրատես աչքերից, և առաջին իսկ օրերից, Մերձավոր Արևելքը բաժանելու պատճառով, սրվում էին հակասությունները դաշնակիցների ճամբարում: **Լլոյդ Ջորջը** հիշում է. **«Ձինադադարի պրոցեսը թուրքերի հետ մեկ անգամ ևս սրեցին հակասությունները**

¹ Նիկողայոս Ադոնց, Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989, էջ 7:

իմ և Կլեմանտի միջև»։ Անգլիայի բռնած դիրքից չափազանց դժգոհ էին Իտալիան և վերջում միայն պատերազմի մեջ մտած ԱՄՆ-ը։ Կարծես պայթյուն էր սպասվում Անտանտի ծամբարում և այդպես էլ կլիներ, եթե **չլիներ վտանգը. միասնաբար հանդես գալ կոմունիստական Ռուսաստանի դեմ**։ Շուտափույթ արշավի կազմակերպումը դեպի խորհրդային երկիր ստիպում էր հետաձգել Մերձավոր Արևելքը կտոր-կտոր անելու համար մեծ տերությունների միջև թեժացող հակամարտությունները։

Մուղրոսի զինադադարի վավերաթուղթը **Թուրքիայի հիմնովին վերաբաժանման նախաշավիղն էր**։ Այն բաղկացած էր քսանհինգ հոդվածներից և ցնծությամբ էր ընդունվել քրիստոնյա աշխարհի կողմից։ Նախ **1918 թ. նոյեմբերի 13-ին** դաշնակից տերությունների (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Յունաստան, մի քանի օր անց՝ նաև ԱՄՆ) ռազմածովային էսկադրաները մտան **Ոսկեղջյուր** ծովածոցն ու խարիսխ զգեցին **Դոլմաբախչե** անվանակոչված սուլթանի պալատի դիմաց։ Այդ պրոցեսին եվրոպական Արևմուտքը վաղուց և սրտատրոփ էր սպասում։

Դրանից մի քանի օր անց Անգլիայի երեկվա վարչապետ (1908-1916) **Հենրի Գերբերտ Ասկվիտը** (1852-1928) լորդերի պալատում բարձրաձայնեց, թե «**Հենց օսմանյան կայսրության թաղման կանչը ոչ միայն եվրոպայում, այլև Ասիայում և դրանում ոչ թե մենք, այլև օսմանյան բռնապետությունն է մեղավորը։ Թուրքական տիրապետության չքացումով կվերանա այն խոցը, որն ուտում է երկրագնդի գեղեցկագույն մարզերը... Թուրքական կայսրությունն ինքնասպանություն գործեց և սեփական ձեռքերով փորեց իր գերեզմանը**»։

1918 թ. նոյեմբերի 21-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությունը շրջանառության մեջ դրեց մի հուշագիր, որտեղ Թուրքիայի վարած ազգասպան քաղաքականությունը խստագույնս քննադատելուց զատ, անդրադարձ արեց նաև Հայոց ապագային։ **Հուշաթղթում կարդում ենք. «Նպատակահարմար կլիներ Հայաստանի տարածքը ծավալել հնարավորին չափ լայն ընդգրկումով, այնպես, որ սահմանի հյուսիսում ներառվեն բոլոր տարածքները, որտեղ առկա է թուրքերի, հայերի և քրդերի խառը բնակչություն։ Ազգաբնակչության բոլոր տարրերի իրավահավասարության սկզբունքը չի վիճարկվում։ Մյուս կողմից, երկրի կառավարման իրավունքում այս տարրեր տարրերի համամասնական պահանջները դնելիս Հայաստանի դեպքում պետք է սահմանել, որ մահացածներն ու արքորվածները հաշվի առնվեն, և աշխարհի մյուս մասերից Հայաստան վերադառնալու համար հայ տարագիրներին պետք է ընձեռվեն նույն հնարավորությունները, ինչ շնորհվել են Պաղեստինի հրեա ներգաղթողներին, որպեսզի նրանք ևս հաստատվեն իրենց վաղնջական հայրենիքում**»¹։

Մեծ Բրիտանիայի հայեցակարգը Հայկական հարցի նկատմամբ այսպես ընդհանրացրեց Դեվիդ Լլոյդ Ջորջը. «Պատերազմը հայտարարելուց ի վեր չկար որևէ կուսակցության պատկանող բրիտանական քաղաքական գործիչ, որն ի նկատի չունենար, որ եթե մենք հաջողենք պարտության մատնել այդ անմարդկային կայսրությանը (խոսքը Թուրքիային էր վերաբերում - Գ. Ղ.), հաշտության էական պայմաններից մեկը, որ պետք է պարտադրենք, լինելու է հայկական հովիտների մեկընդմիջտ ազատագրումն այն արյունոտ բռնապետությունից, որի ապականությամբ էին հատկանշվում թուրքերի վայրագությունները (ընդգծումները մերն են - Գ. Ղ.)»²։

Անգլիացի Ա. Ռոբերտ Սեսիլը դեռևս 1917 թ. նոյեմբերին հայտարարել էր, թե. «Մենք չպետք է թույլ տանք, որ թուրքերի հանցագործությունները նվազեցնեն հայերի ժառանգությունը, որ չպետք է լինի Հայաստանի ոչ մի բաժանում, և որ նրան պետք է վերաբերվել որպես մի ամբողջության»³։

Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությունը 1919 թվականին ևս շարունակում էր պնդել, թե՝ քանի որ Հայաստանը ցեղասպանության ենթարկված երկիր է, ուստի արդարամիտ կլիներ **նրան անկախություն տալ և անջատել Թուրքիայից։ Ջորեն օֆիսի** (Անգլիայի արտգործնախարարություն) կազմած հուշագրում կարդում ենք. «**Այն, որ հայերը պետք է ազատագրվեն թուրքերի ուղղակի կառավարումից և անցնեն որևէ տերության կամ տերությունների խմբի հովանավորության ներքո, թերևս անվիճելի սկզբունք է**»⁴։

Նույն տեսակետն ամրապնդելու նպատակով Դեվիդ Լլոյդ Ջորջը (1868-1945) մեկ անգամ ևս հայտարարեց, թե. «Հայաստանը մեզ համար մնում է միանգամայն ուրիշ կարգի հիմնահարց... **Դաշնակից տերությունները միահամուռ այն կարծիքին են, որ չի կարելի թուրքերին թույլ տալ օգտվելու իրենց գազանությունների պտուղներից, իսկ հայ ժողովրդին պետք է լիովին վերադարձնել իրենց նախնիների ժառանգությունը և հնարավորություն ընձեռել վերականգնելու տերության երբեմնի հզորությունը**»⁵։

Իր վերոհիշյալ ելույթներով **Գ. Լլոյդ Ջորջը** փորձում էր քավել Անգլիայի գործած ծով մեղքերը 1878 թվականի Բեռլինի կոնգրեսի ժամանակ։

Շուրջ վաթսույն տարի պիտի անցնեն այս տողերը գրվելուց հետո, որպեսզի իր հեղինակավոր ներկայացուցիչներից մեկի՝ Լլոյդ Ջորջի բերանով Անգլիան ինքն ի լուր աշխարհի խոստովաներ, թե հայերի նկատմամբ Բեռլինի կոնգրեսի ընդունած որոշումն ամբողջովին իր սպառնալից ճնշման արդյունքն էր։ «Այդ որոշումը, - գրում էր անգլիական վարչապետը, - մեծարվում էր մեր կողմից որպես Անգլիայի մեծագույն հաղթանակը, նրա թելադրած պատվավոր խաղաղությունը։ Հայաստանը ողջակիզվեց մեր կառուցած հաղթանակի զոհասեղանի վրա... Բրիտանական կառավարության քաղաքականությունը ծակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897, 1909 թվականների սոսկալի ջարդերին և 1915 թվականի ամենասարսափելի կոտորածին (ընդգծումները մերն են - Գ. Ղ.)»⁶։

Տասնամյակներ շարունակ Հայաստանին հուզող խնդիրներով էր հետաքրքրվել նաև բրիտանական քաղաքական ու պետական մեկ այլ խոշոր գործիչ, լորդի կոչումով դիվանագետ **Արթուր Ջեյմս Բալֆուրը** (1848-1930)։ Նա 1914-1922 թթ. համայնքների պալատի, իսկ 1923 թվականից արդեն լորդերի պալատի անդամ էր։ 1902-1905 թվականներին նա Մեծ Բրիտանիայի վարչապետն էր, որի ջանքերով ձևավորվեց **Անտանտան**։ Արթուր Բալֆուրը 1916-1919 թվականներին, այսինքն՝ աշխարհում կատարվող բարդ իրադարձությունների տարիներին Անգլիայի արտաքին գործերի նախարար էր և մասնակիցն էր Փարիզի, Վերսալի կոնֆերանսներին, և ոչ սովորական դիվանագետի աստիճանով։

1919 թ. օգոստոսի 9-ին Հայաստանում տիրող իրադարձությունների մասին Բալֆուրը գաղտնի սրտաճմլիկ մի նամակ է ուղարկում **Լլոյդ Ջորջին**։ Այդ նամակում Բալֆուրը Փարիզից գրում էր իր երկրի վարչապետին կովկասյան մղձավանջի

¹ *Ռիչարդ Գ. Հովհաննիսյան*, նշված աշխատությունը, էջ 290։

² *Ռաֆայել Համարձումյան*, նշված հոդվածը, էջ 122։

³ *Պոլ Դալմեյ*, *Правда о мирных договорах*, Москва, 1957, том II, стр. 199-200.

⁴ Նույն տեղում, էջ 390։

¹ Britian, cab 27/37 E. C. 2525. Այս քաղվածքը վերցրել ենք *Ռիչարդ Գ. Հովհաննիսյան*, նշված աշխատություն, էջ 291։

² *Lloyd George, Conferance memoirs, vol II, p. 811-812.*

մասին, ապա հաղորդում, համոզում, որ ԱՄՆ-ը պետք է վերցնի **Հայաստանի մանդատը**: Այլապես արյունահեղությունն անխուսափելի է:

Ահա մի քաղվածք այդ նամակից.

«Թանկագին պրեմիեր-մինիստր,

Ես անհանգստացած եմ Կովկասում տիրող դրությունից: Ամեն կողմից մեզ վկայություններ են հասնում, որ բրիտանական **զորքերի հեռացմանը կհետևեն հայերի ամենազարհուրելի կոտորած և ընդհանուր արյունահեղություն ողջ Կովկասով մեկ**: Ես ամբողջովին կողմ եմ **զորքերի հեռացմանը**: Փաստորեն, իմ կարծիքով, դա ամեն տեսակետով կարևոր է: Բայց, խոստովանում եմ, ես չեմ ուզեմ նայել առաջ, դեպի այն օրը, երբ կասեն, որ մինչդեռ նախօրոք լիակատար նախազգուշացում ունեին, բրիտանացիները կոտորածի ենթարկել տվեցին հայերին՝ դիտավորյալ հեռացնելով իրենց զորքերն այն դեպքում, երբ բոլոր տեղական իշխանությունները տեղյակ էին պահել հնարավոր հետևանքների մասին:

Միայն մեկ ելք կա և դա այն է, որ Ամերիկյան հոգսն իր վրա վերցնի: Ծիշտ է, որ նա կարող է անել այդ, որովհետև միշտ հետաքրքրություն է հանդես բերել դեպի Հայաստանը, և միշտ խորհրդի մոտ այն տպավորությունը ստեղծել, որ մտադիր է վերցնել այդ երկրի մանդատը: Բայց ես լիովին համոզված եմ, որ նա որևէ բան չի անի այնքան ժամանակ, քանի դեռ մենք պատրաստ ենք բեռն ինքներս տանել: Մյուս կողմից, ես չեմ կարծում, թե դա լավ պլան է, որ նա հարկադրված լինի միջամտել բրիտանացիների հեռանալու հետևանքով առաջացած կոտորածի ընթացքում, մինչդեռ բրիտանացիները հնարավորություն ունեին իրենք փրկել դրությունը և հրաժարվեցին անել այդ»¹:

Բալֆուրի նամակն արժանացավ և՛ անգլիական, և՛ ամերիկյան դիվանագիտության սևեռումն ուշադրությանը: Փաստաթուղթն ըստ երևույթին ուղարկվել էր Մեծ Բրիտանիայի նորանշանակ արտգործնախարար կոմս Քերզոնին, որից լուրջ եզրահանգումներ անելով՝ ընդարձակ գրությամբ դիմել էր Լոնդոնում հաստատված ԱՄՆ-ի դեսպան **Լինդսին**:

Եվ այսպես, **1919 թ. օգոստոսի 11-ին** արդեն հայտնի էր դարձել, որ **Հայաստանի մանդատը պետք է վերցնել Ամերիկյան**, ապա հարց էր բարձրացվում, թե Լա-հանգները, որպես ապագա մանդատատեր, պատրաստ է գործ մտցնել Հայաստան: Այլապես մեծ դժբախտություն կարող էր պատահել այդ ժողովրդի հետ:

Եվրոպական համաժողովից բավական առաջ Հայաստանի ճակատագրով պակաս հետաքրքրված չէին **Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու նրա 28-րդ պրեզիդենտ Վուդրո Յուզեն** Վիլսոնը:

Վ. Վիլսոնը վաղուց էր որոշել զբաղվել թուրքերի անտանելի մագիլների մեջ արյունաքան եղած հայ ժողովրդի ճակատագրով: Դեռևս 1917 թ. հունիսին **ռաբի Ստեֆեն Ռայզիին գրած նամակում նա խոստանում էր, որ. «Երբ ավարտվի պատերազմը, կան երկու երկրներ, որոնք երբեք չեն վերադարձվի մահմեդական լծի տակ: Դրանցից մեկը քրիստոնյա Հայաստանն է, իսկ մյուսը՝ Պաղեստինը»²:**

Արդեն ավարտին էր մոտենում Առաջին աշխարհամարտը: Ինչպես Եվրոպայի մեծ տերությունները, այնպես էլ վիլսոնյան Ամերիկյան մշակում էր իր դոկտրինան՝ առաջիկա գործողությունների վերաբերյալ:

Եվ այսպես. **1918 թվականի հունվարի 8-ին** Վուդրո Վիլսոնն ԱՄՆ-ի Կոնգրեսի

գույզ պալատների ուշադրությանը ներկայացրեց **«Տասչորս կետերը»** խորագրված վավերագիրը, որն անմիջապես իր վրա հրավիրեց ողջ աշխարհի պետական այրերի, քաղաքագետների, մամուլի օրգանների ուշադրությունը: Լեհինյան խաղաղության դեկրետին հակադրվող այդ դեկլարացիան բուրժուական աշխարհին դաս էր դառնում՝ փրկվելու հեղափոխական ցնցումներից, ոչ միայն ունեցվածքի, այլև կյանքի կորստից:

Ծրագրային այդ փաստաթղթում, անշուշտ, իր բաժինն ուներ **փոքրիկ Հայաստանը**: Նրա 12-րդ կետը վերաբերում էր հայ ժողովրդի ապագային, հատկապես Հայաստանի Հանրապետությանն ու նրա նոր կարգավիճակին: 12-րդ կետում կարդում ենք. **«Ներկայիս Օսմանյան կայսրության թուրքական մասի համար պետք է հավաստել անվտանգ ի քնիշխանություն, սակայն մյուս ազգերի համար, որոնք ներկայումս գտնվում են թուրքական իշխանության ներքո, պետք է ապահովել նրանց կյանքի աներկրա անվտանգություն և ինքնավար զարգացման կատարելություն: Դարդանելը՝ որպես ազատ ջրուղի, միջազգային երաշխիքների ներքո մշտապես պետք է բաց լինի բոլոր երկրների նավերի և առևտրի համար»³:**

Այդ փաստաթղթում կոնկրետ որևէ երկիր չի հիշատակված: Սակայն անգն աչքերով տեսանելի է, որ խոսքը վերաբերում է Ցեղասպանության զոհասեղանին ողջակիզված հայերին և Հայաստանին: Ծրագիրը Վ. Վիլսոնը մշակել է և ձևավորել իր խորհրդական ու **մտերիմ բարեկամ, գնդապետ էդվարդ Հաուզի** մասնակցությամբ: Նախագահը երկար է մտորել այդ մասին, սակայն վերջում ամբողջական տեքստը թղթին է տվել հունվարի 4-ին, 5-ին և 7-ին:

Էդվարդ Հաուզն իր օրագրում հունվարի 7-ին գրանցել է. **«Երբ գրվեց Թուրքիային վերաբերող պարբերությունը, նախագահը մտածեց, որ այն պետք է դարձնել ավելի հստակ, որ Հայաստանը, Միջագետքը, Սիրիան և այլ մասերը պետք է մշակեն անուններով: Ես չհամաձայնեցի սրա հետ, հավատացած լինելով, որ այն, ինչ ասված է, բավարար է ցույց տալու դա, և, ի վերջո, ամեն ինչ մնաց այնպես, ինչպես ձևակերպված էր սկզբում»³:**

Այդուհանդերձ, հետագայում բացատրելու, պահանջներն առավել հստակ դարձնելու անհրաժեշտություն զգացվեց: 1918 թվականի հոկտեմբերի 30-ին Վ. Վիլսոնը առաջիկա խաղաղության կոնֆերանսին իր ուղարկած պատվիրակության ներկայացնելիք հուշագրում **12-րդ կետը համալրել է այսպես. «Հայաստանին պետք է տրվի նավահանգիստ Միջերկրական ծովում և հաստատվի հովանավորող ուժ: Ֆրանսիան կարող է հավակնել դրան, սակայն հայերը կնախընտրեն Մեծ Բրիտանիան»:** Գնդապետ Հաուզը, որն այդ օրերին ԱՄՆ-ի պատվիրակության ղեկավարն էր Եվրոպայում, իր օրագրում գրանցում է. **«Մերձավոր Արևելքում նախագահ Վիլսոնի նպատակն էր Կոստանդնուպոլսի համար ապահովել միջազգային վերահսկողություն, Անատոլիան տալ թուրքերին և ստեղծել անկախ Հայաստան»³:**

¹ *President Woodrow Wilson, Address to Congress, Stating War Aims and Peace Terms (Delivered in Joint Session, 8 January 1918), p. 470. (In: The Messages and Papers of Woodrow Wilson, Vol. I, New York, 1924, p. 464-72).* Տե՛ս նաև այս փաստաթղթի ամբողջական թարգմանությունը մենագրության երկրորդ գրքի վավերագիր № 5:

² *The Diary of Colonel House, 7 January 1918, p. 332. (In: The Intimate Papers of Colonel House (by Charles Seymour), Boston-New York, 1928, Vol. III).* Տե՛ս նաև *Արա Պապյան*, Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները, Երևան, 2009, էջ 44:

³ *Commentary on Fourteen Points, Colonel House to the President, p. 157. (In: The Intimate Papers of Colonel House (by Charles Seymour), Boston - New York, 1928, Vol. IV).* Տե՛ս նաև *Արա Պապյան*, նշված աշխատությունը, էջ 44-45:

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Երևան, 1972, էջ 544-545:

² *Rublic Record Office (London), FO 371/4962, p. 116.* Տե՛ս նաև *Փալուստ Փալոյան*, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 208:

Վուդրո Վիլսոնը գնալով, քայլ առ քայլ բյուրեղացնում էր իր տեսակետները Թուրքիայի մասնատման, մայրաքաղաքի հսկողությունը նրա ձեռքից խլելու և անկախ Հայաստան պետության ստեղծման մասին:

1918 թ. դեկտեմբերի 26-ին ԱՄՆ-ի պրեզիդենտը Հոուսի Բենեդիկտոս XV պապին նամակ է ուղարկում Թուրքիայում ծավալված իրադարձությունների վերաբերյալ: Այնտեղ որոշակիորեն ընդգծված է, թե. «Վստահեցնում եմ Ձեզ, որ խոսում եմ ոչ միայն իմ, այլև ողջ ամերիկյան ժողովրդի անունից, երբ ասում եմ, որ ոչ մի այլ ժողովրդի տառապանք այդքան խորապես չի խոռվել ամերիկացիներին, որքան հայերինը: Վստահաբար, իմ ամենամկրակալան ձգտումներից է լինելու կարողությանս չափով մասնակցություն ունենալ, ապահովելու համար այդ անիրավված և տարաբախտ ժողովրդի օրինավոր և ամբողջական ազատագրումը անարդար լծից»¹: Ճիշտ է ընդհանրացվում, որ Վուդրո Վիլսոնի հիմնարար սկզբունքները լրջորեն ազդեցին օսմանյան կայսրության ղեկավարության վրա՝ ծնկաչոք աղերսելու Մուդրոսի զինադադարն ազդարարող փաստաթուղթը ստորագրելիս:

1919 թ. փետրվարի 28-ին ԱՄՆ-ի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնախմբի և ներկայացուցիչների պալատի անդամների առաջ կարծես թե հաշվետու ատենախոսությամբ հանդես գալով՝ Վուդրո Վիլսոնն ամբողջովին բացեց իր խաղաքարտերը: Նա Հայաստանի և հայ ժողովրդի մասին ասաց այն, ինչը վաղուց էր մտատանջում իրեն: Բերենք այդ ընդարձակ ճառից մի փոքր հատված:

«Այժմ, ինչ կուզենայի առաջարկել, հետևյալն է. անձամբ և միայն այս սենյակի շրջանակներում ես կարող եմ բացահայտ ասել այն, ինչը, կարծում եմ, պետք է անենք: Ես կարծում եմ, որ շատ խոստումնալից սկիզբ կա Հայաստանի նման երկրների վերաբերմամբ: Ամերիկայի ամբողջ սիրտը տոգորված է Հայաստանով: Նա ավելի շատ գիտի Հայաստանի և նրա տառապանքների մասին, քան որևէ ուրիշ եվրոպական տարածաշրջանի. մենք քոլեջներ ունենք այնտեղ, մենք միսիոներական մեծ ձեռնարկումներ ունենք այնտեղ, ինչպես ունենք Ռեբերտ քոլեջը՝ Կոստանդնուպոլսում: Դա աշխարհի մի մասն է, որտեղ ամերիկյան ազդեցությունն արդեն տարածված է, մի փրկարար ազդեցություն, կրթող և բարձրացնող ազդեցություն... Ես հույս ունեմ, որ Միացյալ Նահանգների ժողովուրդն ընդունելի կհամարի ընդառաջել և դառնալ հայ ժողովրդի շահերի խնամատարը, և անտանելի թուրքին ու գրեթե նույնչափ անզիջում քրդին, որոնք բավական երկար ժամանակ նստած են եղել նրա վզին, վարվելակերպ ու քաղաքավարություն սովորեցնի և ժամանակ կտա Հայաստանի աշխատասեր ու եռանդուն ժողովրդին՝ զարգացնելու իր երկիրը, որն ի բնե ունի հարուստ հնարավորություններ»:

Վիլսոնը վարիչ մարմնի բոլոր անդամներին խնդրեց հրապարակայնորեն պաշտպանել ամերիկյան մանդատը Հայաստանի և Կոստանդնուպոլիս-Նեղուցներ տարածաշրջանում²:

Փարիզի խաղաղության կոնֆերանսից փոքր-ինչ առաջ լուրջ քննարկման խնդիր էր դարձել օսմանյան կայսրության մասնաբաժինների վերածման, Հայաստան, Սիրիա, Պաղեստին, Իրաք և այլ նոր պետությունների ձևավորման անհրաժեշտությունը: Նշանակալից քննարկումներից և փոխզիջումներից հետո դաշնակիցներն ընդհանուր առմամբ համաձայնեցին, որ օսմանյան կայսրության ոչ թուրքական մասե-

նը կհաստատվեն իբրև զարգացած տերությունների մանդատներ կամ խնամարկյալ տարածքներ: Այդպիսով, հակառակ Դաշնակիցների պատերազմական տարիների գաղտնի համաձայնագրերի, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան ուղղակիորեն չեն բռնակցելու Արևմտյան Ասիայի որևէ մաս, բայց և այնպես, անորոշ ժամանակով նրանց երաշխավորված էր հսկողության իրականացում այդ երկրներում:

Մանդատային սկզբունքի կենսագործումը Լլոյդ Ջորջը համարում էր Հայկական հարցի համար լուծում: «Ակնհայտ էր, որ մենք չէինք կարող համաձայնել, այնպիսի կարգադրության - գրում է Մեծ Բրիտանիայի վարչապետը, - որը Հայաստանի հալածված ազգաբնակչության մնացորդներին թողներ մի ցեղի անգութ ողորմածության տակ, որը կտտորել, բռնացել և կողոպտել էր նրան մի ամբողջ սերնդի ընթացքում և նույնը շարունակել պատերազմի ժամանակ՝ մինչև նրա ավարտը: Բայց Հայաստանը կտտորածների հետևանքով նվազած և հոգեպես ընկճված իր ազգաբնակչությամբ չէր կարող միայնակ դիմակայել մի կողմից թուրքերին և մյուս կողմից բուլղարիկներին: Դրա համար էլ էական էր, որ մենք գտնեինք մի մանդատատեր տերություն, որն իբրև մարդկային պարտք կստանձներ այս հալածված քրիստոնյա հանրության հովանավորությունը Հայաստանի լեռներում:

Ռուսաստանի ընտրությունն ամենահարմարը կլիներ որպես մանդատատեր՝ Հայաստանի և Նեղուցների համար: Ընդհուպ մինչև հեղափոխությունը կրոնական համակրանքները նրան ներքաշել էին հանուն Թուրքիայի քրիստոնեական համայնքների պաշտպանությանն ուղղված արշավանքների մեջ: Այդ ռազմական միջամտությունն էր, որ ազատագրեց Բալկանների քրիստոնյաներին և հայկական հովիտների քրիստոնյաների մի հատվածին: Չլինեք մեր (քրիտանական) մեղապարտ միջամտությունը, 1878 թվականի Սան Ստեֆանոյի պայմանագրով հայերի մեծամասնությունը կպաշտպանվեր ռուսական դրոշի հովանու ներքո»³:

Բայց այժմ այդ ամենն անցյալ էր: Քանի որ Ռուսաստանն այլևս ի վիճակի չէր միակցելու Արևմտահայաստանը և Կոստանդնուպոլիսը, տարածքներ, որոնք մի նոր լուծում էին պահանջում: Մնացած Դաշնակից տերություններից ոչ մեկը հակված չէր հանդես գալու իբրև մանդատատեր Հայաստանի՝ ավերված երկրի համար, որը հարուստ էր միայն կարիքներով: Ֆրանսիան, իհարկե, շատ էր ցանկանում Կիլիկիան և Սեբաստիայի ու Դիարբեքիի ուղղությամբ տարածված տնտեսական խոստումնալից հանքավայրերը, բայց այս շրջաններն այլևս Հայաստանի անբաժան մաս չէին համարվում Փարիզի գաղութարար տարրերի կողմից: Այսպիսով, եթե Միացյալ Նահանգներին կարողանային համոզել՝ ընդունելու հայկական մանդատը, եվրոպական դաշնակիցներն այդ բացը կհամարեին պատշաճ կերպով լրացված: Եվրոպական զգացումների միասնությունը այս խնդրի վերաբերյալ Լլոյդ Ջորջը հաստատում էր հետևյալ կերպ:

Ո՛չ Բրիտանիան և ո՛չ էլ Իտալիան նախապատրաստված չէին քայլելու Ռուսաստանի լքված կոշիկներով, իսկ Ֆրանսիան, չնայած պատրաստ էր և անգամ անհամբեր ձգտում էր այդ ժամանակ ապահովել իր տիրապետությունը Հայաստանի հարավային մասում, բայց ամենևին պատրաստ չէր իր հսկողությունը տարածելու երկրի հյուսիսային մասի վրա: Ֆրանսիացիները, բրիտանացիները և իտալացիները միասնական էին այն եզրակացության մեջ, որ միայն Ամերիկան է ի վիճակի կատարելու մանդատատիրոջ պարտականությունները: Երբ վեհաժողովում հավաքված մեծ տերությունների պատվիրակները քննարկում էին դժվարություն-

¹ Quoted in: Manoug Joseph Somakian, Empires in Conflict: Armenia and the Great Powers, 1895-1920, London, 1995, p. 256. Տես նաև Արա Պապյան, էջ 45:

² Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 2005, էջ 346:

³ David Lloyd George, Memoirs of the Peace Conference, 2 vols, New Haven, 1939, Vol. II, p. 810-811. Տես նաև Ռ. Գ. Հովհաննիսյան, նշված աշխատությունը, էջ 642:

ները, պարզ դարձավ, որ միայն Ամերիկյան կարող էր լինել այն մանդատատերը, որը միանշանակ ընդունելի կլիներ բոլորի համար»¹:

1919 թ. հունվարին, երբ Հայաստանի վեհաժողովի աշխատանքները նույնիսկ դեռ ավարտված չէին, անգլիական քաղաքագետները հույս հայտնեցին, որ Միացյալ Նահանգները կստանձնի Կոստանդնուպոլսի և Հայաստանի տնօրինությունը, իսկ Լլոյդ Ջորջն այդ հարցը բարձրացրեց նախագահ Վիլսոնի հետ իր հենց առաջին ետպատերազմյան աշխատանքային հանդիպման ժամանակ²: Հայկական մանդատն Ամերիկայի վզին փաթաթելու բրիտանական եռանդը միանգամայն հասկանալի էր Դեյվիդ Հընթեր Միլլերին. «Անկասկած, Միացյալ Նահանգները կստանա դրանից այն, ինչը Մեծ Բրիտանիան շատ ծանր է համարում իր համար, և դրանք Միացյալ Նահանգների ձեռքին կծառայեն իբրև Բրիտանական կայսրության համար պատնեշ, ինչպես, օրինակ, Հայաստանը»³: Հետագայում մի մեկնաբան ընդգծեց, որ «դժվարությունները, որոնք, անկասկած, ծագելու էին այս զույգ տարածաշրջաններում (Կոստանդնուպոլսում և Հայաստանում), որոշակիորեն գերազանցելու էին դրանցից ստացվելիք օգուտները՝ այնտեղ չկային հարուստ նավթահանքեր, այնպես որ, ենթադրվում էր, որ հարուստ Քեռի Մեմը պետք է խաղա բարի Սամարացու դերը»⁴: Այս տարածաշրջանները մի կողմ թողած, Միացյալ Նահանգներին, որպես մանդատատիրոջ, միահամուռ ընտրել էին ոչ միայն Դաշնակիցները, այլև ինքը՝ հայ ժողովուրդը⁵:

Մինչև 1919 թ. հունվարի 30-ը Փարիզի Հայաստանի վեհաժողովի հեղինակավոր **Տասի խորհուրդն** արդեն բավարար փոխզիջումների էր հասել մանդատային համակարգի վերաբերյալ, որպեսզի հայտարարություն ընդուներ նրա սկզբունքների մասին: Որոշվեց, որ Գերմանիան վատ է կառավարել իր գաղութները և քանի որ կարող է շարունակել օգտագործել դրանք իբրև սուզանավային սպառնացող հենակետեր, ուստի և դրանք չեն վերադարձվելու նրան: Օսմանյան կայսրությանը վերաբերող մասում ասված էր. «Համանման նկատառումներով և, մասնավորապես, թուրքերի՝ իրենց հպատակ ժողովուրդների պատմականորեն վատ կառավարման և վերջին տարիներին հայերի և այլոց սարսափելի կոտորածների պատճառով, Դաշնակից և Միացած տերությունները համաձայնության եկան, որ Հայաստանը, Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը և Արաբիան պետք է լիովին անջատվեն Թուրքական կայսրությունից: Սա չի կանխորոշում Թուրքական կայսրության մյուս մասերին վերաբերող լուծումները»: Ինքնակառավարման համար դեռևս անպատրաստ ժողովուրդներով բնակեցված գերմանական և թուրքական երբեմնի տիրույթները, ի դեմս Ազգերի լիգայի, պետք է դառնային «քաղաքակրթության սրբազան խնամքի առարկա»: Բայց օսմանյան ոչ թուրք որոշ ժողովուրդների համար պետք է փոքր-ինչ այլ կարգադրություն արվեր. «Որոշ համայնքներ, որոնք նախկինում պատկանել են Թուրքական կայսրությանը, հասել են զարգացման այնպիսի աստիճանի, ուր նրանց գոյությունը, իբրև անկախ պետություն, կարող է ժամանակավոր ճանաչման հիմք լինել՝ մանդատային տերության միջոցով վարչական խորհուրդներ և օգնություն ցույց տալով այնքան ժամանակ,

մինչև նրանք ի վիճակի կլինեն ինքնուրույն գոյատևել: Մանդատատեր տերություն ընտրելիս հիմնականում այս համայնքների ցանկությունները պետք է հաշվի առնվեն»¹:

Այդ նույն օրը **Տասի խորհրդի** հետմիջօրեի նիստում Վուդրո Վիլսոնը եռանդուն ջանքեր գործադրեց պարտավորություններից խուսափելու համար: Նա մերժեց միանգամայն ժամանակավոր մանդատներ հանձնելու առաջարկությունը, պատճառաբանելով, որ ավելի նպատակահարմար կլիներ զինվորական հսկողություն սահմանել այն շրջաններում, որոնք անջատվելու էին օսմանյան կայսրությունից: Անշուշտ, քանի որ Միացյալ Նահանգները պատերազմ չէր հայտարարել Թուրքիային, եվրոպական Դաշնակիցները պետք է որոշեին այդ հսկողության միջոցներն ու եղանակները: Դեյվիդ Լլոյդ Ջորջը կտրուկ պատասխանեց, որ Մեծ Բրիտանիան ծանրաբեռնված է օսմանյան կայսրությունում մոտավորապես միլիոն զինվորների նյութական մատակարարմամբ, իսկ նրանցից ավելի քան 300.000-ը անգլիացիներ են, և, հետևապես, պարզ պետք է լինի, որ իր երկիրը չի կարող տանել այդպիսի մի ծանր բեռ՝ սպասելով թուրքական հարցի վերջնական լուծմանը կամ Ազգերի լիգայի պաշտոնական հիմնադրմանը: Նախագահ Վիլսոնը տեխնիկական խոչընդոտներ չպետք է տեսնի մանդատային համակարգում ամերիկյան մասնակցության առջև, եզրակացրեց Լլոյդ Ջորջը, **որովհետև թուրքերը լավ գիտեն, որ պետք է կորցնեն Հայաստանը և Սիրիան, ուստի որոշակիորեն կգերադասեին Միացյալ Նահանգների, քան որևէ մեկ այլ տերության ներկայությունը Հայաստանում: Վիլսոնը կասկածում էր, թե արդյո՞ք ամերիկյան հասարակությունը կընդունի որևէ պարտավորություն Ասիայում, բայց եթե ենթադրվում էր, որ ինքը կփորձի համոզել նրան, ապա մանդատային հարցն առհասարակ պետք է հետաձգվեր, մինչև որ նախագահը կարողանար հասարակությանը բացատրել իրադրությունը**²:

Այս պայմանով, ավելի հեռավոր ժամանակների թողնելով թուրքական հարցի կարգավորումը, **Վիլսոնը** կարծես էլ ավելի էր բարդացնում հարցը՝ իր զգուշավոր դիրքորոշումը հաճախակի համեմեմելով անձնական բնույթի ձևական հայտարարություններով, թե ինքը հույս ունի, որ Միացյալ Նահանգները կընդունի մանդատը: Ազգերի լիգայի հանձնաժողովի բացման **խոսքում, 1919 թ. փետրվարի 3-ին**, օրինակ, նա ակնարկեց, որ ամերիկացիները դեմ են եվրոպական գործերում իրենց երկիրը ներգրավելուն, բայց միաժամանակ նախագահին մոտիկ կանգնած մարդիկ լրացուցիչ բացատրություններ էին տարածում, որ նա հակականգնած մարդիկ լրացուցիչ բացատրություններ անել Հայաստանի հարցում³: **Ժամանակ չկորցնելու համար, որպեսզի աջակցի Ազգերի լիգայի կանոնադրությանը, Վիլսոնը ձեռնարկեց մի փոթորկահույզ ծանապարհորդություն՝ փետրվարի կեսերին նավարկելով Միացյալ Նահանգներ, Ելույթներ ունենալով արևելյան ծովեզերքից՝ Բոսթոնից մինչև Վաշինգտոն և Փարիզ վերադառնալով մարտի 14-ին: Նրա ծանփորդությունն անորոշ վիճակում թողեց մանդատի խնդիրը Հայաստանի վեհաժողովում, բայց նախագահը մշտապես գիտակցում էր դրա կարևորությունը: Անգամ, երբ դեպի տուն էր նավարկում բաց ծովերով, ճիշտ մոտեցումներ էր փնտրում՝ իր անտրամադիր երկրին համոզելու**

¹ Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, նշված աշխատությունը, էջ 813:

² Miller, Documents, Vol. I, p. 74; Lloyd George, նշվ. աշխ., հ. I, էջ 117-118. Բրիտանական կայսերական պատվիրակության հանդիպումների մասին տե՛ս նաև Britain, Cab 29/28:

³ David Hunter Miller, The Drafting of the Covenant, 2 vols., New York, 1928, Vol. I, p. 47.

⁴ Thomas A. Bailey, Woodrow Wilson and the Lost Peace, New York, 1944, p. 170.

⁵ Ամերիկյան հովանավորության մասին հայկական խնդրագրերի նշումներ կան՝ US Archives, RG 256, 183.9 Armenia/3/131/2 ; Գ.Գ. Պատ. Դիւան, գործ 230/129: Տես նաև Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, նշված աշխատությունը, էջ 342-343.

¹ Paris Peace Conference, Vol. III, p. 785-786; Miller, Documents, Vol. XIV, p. III, 130-131; Charles Seymour, ed., The Intimate Papers of Colonel House, Boston and New York, 1928, Vol. IX, p. 319-320.

² Miller Documents, Vol. XIV, p. 104-105. Տե՛ս նաև Charles T. Thompson, The Peace Conference Day by Day, New York, 1920, p. 164-166.

³ Ազգերի լիգայի հանձնաժողովի այս հանդիպման վերաբերյալ հայտարարությունը Հայկական հարցի առնչությամբ տե՛ս «New York Times», 4 փետրվարի, 1919 թ., էջ 1-2:

համար: Հարցի քննարկումը սկսվեց ծովափ դուրս գալու հենց առաջին օրը՝ փետրվարի 24-ին, երբ նա Բոսթոնում, իր ազդեցիկ հակառակորդի՝ Հենրի Զաբոտ Լոքի իսկ հարազատ բնօրրանում, դիմեց 7.000 համակիրների՝ «Մտածել եք դուք Հայաստանի տառապանքների մասին», բացականեց Վիլսոնը: «Դուք չզլացաք ձեր դրամը, որպեսզի հայերին օգնեք նրանց տառապանքներից հետո, այժմ դուք այնպես գործի դրեք ձեր ուժը, որ նրանք վերստին երբևիցե չտառապեն»²:

Երկու օր անց Ներկայացուցիչների պալատի և Սենատի արտաքին հարաբերությունների հանձնախմբերի անդամների հետ Սպիտակ տանը կայացած խորհրդատվորական նախագահը հույս հայտնեց, որ Միացյալ Նահանգները կստանան հայկական մանդատը³: Այնուհետև, փետրվարի 28-ին, նա հայտնեց Դեմոկրատական կուսակցության ազգային վարիչ մարմնին, որ ինքը պատասխանել է պարտավորությունը ստանձնելու Դաշնակիցների ճնշման այն իմաստով, որ վստահ չէր, թե ժողովուրդը կհամաձայնի դրան, և որ ինքը «կատարելապես պատրաստ էր գնալ տուն, շրջագայել երկրում և տեսնել, արդյո՞ք համաձայն կլինեն...»:

1919 թ. հունվարի 30-ին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և ճապոնիայի ներկայացուցիչների հատընտիրը հավաքվել էր Փարիզի արտգործնախարարության շենքի շքեղագարդ դահլիճում: Նրանք մեկ անգամ ևս քննարկեցին օսմանյան կայսրության ճակատագրին վերաբերող հարցերը:

Վերջնականապես որոշվեց. Թուրքիային նախկինում պատկանող մի շարք երկրահատվածներ, այդ թվում և Հայաստանը (ներառյալ Կիլիկիան), դնել առանձին պետությունների հովանավորության ներքո, որոնք պետք է գործեին որպես Ազգերի լիգայի մանդատատեր: Այդ որոշման երկրորդ կետում մասնավորապես արձանագրված էր. «Մի շարք պատճառներով և հատկապես թուրքերի կողմից սուբյեկտ հանդիսացող ժողովուրդների պատմականորեն սխալ կառավարման և վերջին տարիներին հայերի և այլոց սարսափելի կոտորածների պատճառով դաշնակից և միացյալ տերությունները համաձայն են, որ Հայաստանը (և այլ տարածքներ) պետք է ամբողջապես անջատվեն թուրքական կայսրությունից»⁴:

Հայկական պատվիրակության պահանջները ներկայացնելիս Լլոյդ Ջորջը բաճառեց այսպես. «Կազմավորել հայկական անկախ պետություն դաշնակից մեծ տերությունների հովանավորության ներքո, որոնցից մեկը կգործեր որպես մանդատատեր՝ որոշակի ժամկետում նոր պետության կազմակերպման և կառավարման համար...»⁵:

Դաշնակիցների խորհրդակցությունում մշակվեցին այն սկզբունքները, որոնցով պետք է ղեկավարվեին Ազգերի լիգայի անունից հանդես եկող մանդատատեր երկրները: Գլխավոր խնդիրն էր համարվում նպաստել մանդատի տակ վերցվող երկրի զարգացմանը: Ստեղծվեց «Թուրքիայում մանդատատեր երկրների միջազգային հանձնաժողով», որը տեղերում վիճակն ստուգելուց հետո պետք է համապատաս-

խան առաջարկներ ներկայացնեի Փարիզի խորհրդատվորակին, բացահայտեր օսմանյան բռնատիրությունից անջատվելիք երկրների առկա կացությունը¹:

1919 թ. ապրիլի 2-ին ԱՄՆ-ի պետական քարտուղար Ռ. Լանսինգը Փարիզից Վ. Վիլսոնին ուղղած հաղորդագրության մեջ շեշտում է, թե Լլոյդ Ջորջը, Կլեմանսոնը և Օռլանդոն որոշել են լիազորներ առաքել Թուրքիայի այն վայրերը, որոնք կվերցվեն մանդատային հսկողության ներքո: Նրանք պետք է ներկայացնեին իրավիճակը տեղերում: Սակայն եվրոպական երեք տերություններն իրենց ներկայացուցիչները չեն առանձնացրել Թուրքիա ուղարկելու համար:

Լ. Լանսինգի առաջարկով՝ արեզիդենտ Վ. Վիլսոնն ԱՄՆ-ի վրա վերցրեց հանձնաժողովի առանձնացման և Թուրքիա ուղարկելու պարտականությունը: Մարդաշատ հանձնաժողովի ղեկավարներ նշանակվեցին Հենրի Չ. Քինգը և Չարլզ Ռ. Քրեյնը: Դեկավարների անուններով էլ հանձնաժողովը կոչվեց Քինգ-Քրեյնի հանձնաժողով:

Քինգ-Քրեյնի հանձնաժողովը 1919 թվականի հունիսի 4-ին դուրս գալով Փարիզից, հունիսի 10-ին ժամանեց Կայֆա (Սիրիա): Այստեղ մեկ շաբաթ աշխատելուց հետո մեկնեց Կիլիկիա, հանդիպումներ ունեցավ տեղի հայ և թուրք բնակչության հետ, փաստեր հավաքեց, ապա ուղևորվեց Կոստանդնուպոլիս: Հուլիսի 23-ին հանձնաժողովը Թուրքիայի մայրաքաղաքում էր և լրջագույն հետաքրքրվում էր քաղաքի, Նեղուցների, Անատոլիայի և հատկապես Հայաստանի վիճակով: Նա պարբերաբար հանդիպումներ էր ունենում Կ. Պոլսում հաստատված բազմաթիվ ազգերի ղեկավարների հետ, շոշափում նրանց տրամադրությունները, գրառում վերջիններիս սպասելիքները մեծ տերություններից²:

1919 թ. օգոստոսի 1-ին հանձնաժողովն ընդունեց Կ. Պոլսի հայկական պատվիրակությանը՝ Չավեն եղիյան պատրիարքի գլխավորությամբ³: Հայկական պատվիրակության կազմում էին և՛ արևմտահայեր, և՛ արևելահայեր: Նրանց պահանջները, սակայն, տարբեր էին:

Արևմտահայերը պահանջում էին վեցը վիլայեթներ, Կիլիկիան, ճավահանգիստներ Սև և Միջերկրական ծովերում: Արևելահայերն իրենց պահանջների մեջ չափավոր էին: Սրանք որոշակիորեն առաջարկում էին մանդատային համակարգ, ընդ որում, հայոց մանդատը տրամադրում էին ԱՄՆ-ին:

Ամերիկյան հանձնաժողովի անդամները, երբեմն իրարից մեկուսի, հանդիպումներ էին ունենում նաև հայ քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ: Դժգոհ մնալով Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ղեկավարության հետ ունեցած զրույցներից, Չարլզ Քրեյնը որոշեց հանդիպել ռամկավարներին: Ասուլիսը տեղի ունեցավ 1919 թ. օգոստոսի 10-ին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի շենքում:

Ռամկավարների պատվիրակության կազմում էին Հովհաննես Հակոբյանը, Արամ Ինժիճյանը և Հովհաննես Շահնագարը: Ամերիկացի սենատորի հարցերին պատասխանելու լիազորությունը վստահված էր Հովհաննես Հակոբյանին⁴: Չափազանց հետաքրքրական այդ ամբողջ հարցազրույցը շուրջ երեք տասնամյակ մնացել

¹ Հունվարին Սպիտակ տան քարտուղար Թոմասին համառոտ խորհուրդ էր տվել Վիլսոնին՝ եվրոպայից վերադառնալուց անմիջապես հետո ելույթ ունենալ Նյու Ինգլանդում: Թոմասին մշում էր, որ նախագահը վաղուց չէր եղել երկրի այդ մասում, և որ հասարակական աջակցության եռանդուն դրսևորումը կարող էր թուլացնել սենատոր Լոքի դիրքերը: Տես *Joseph R. Tumulty*, Woodrow Wilson as I Know Him, Garden City, N. Y., 1921, p. 517.

² "New York Times", 25 փետրվարի, 1919 թ., էջ 1; "Current History", Vol. X, pt. 1, April, 1919, p. 87.

³ "Christian Science Monitor", 27 փետրվարի, 1919 թ., էջ 1.

⁴ *Давид Ллойд Джордж*, Правда о мирных договорах, том второй, перевод с английского, Москва, 1957, стр. 392.

⁵ Տես նույն տեղում, էջ 393:

¹ Այս խնդիրները քննվել են *Գալուստ Գալոյան*, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 135: Հաջորդ էջերի շարադրանքը կազմելիս օգտագործել ենք *Գ. Գալոյանի* վերոհիշյալ մենագրության 193-200-րդ էջերում գետնի վրա դրված նյութերը:

² *Քինգ-Քրեյնի* հանձնաժողովի պատմության մասին տես *Սողոմոնյան Ս. Ս.*, Քինգ-Քրեյնի հանձնաժողովը և Հայաստանի մանդատը, «պատմության հարցեր», պրակ 2, Երևան, 1999:

³ Տես *Սողոմոնյան Ս. Ս.*, Քինգ-Քրեյնի հանձնաժողովը, «Հայկական հարց, Հանրագիտարան», Երևան, 1996, էջ 460-462:

⁴ *Գաբրիել Լազեան*, Հայաստանը եւ Հայ դատը հայ-ռուս յարաբերութիւններու լոյսի տակ, Երևան, «Արամ», 1991, էջ 202-208:

էր մահուդի տակ: 1961 թվականին միայն *Միքայել Նաթանյան* իր խմբագրած «*Պայքար*» թերթի դեկտեմբերի 5-ի համարում հրապարակեց այդ ասուլիսի սղագրությունը:

Հարցազրույցի վերլուծության մանրամասները թողնելով աշխատության մյուս բաժնին, այստեղ ընդհանրացնենք, որ *ռամկավարները մեծ տերություններից պահանջում էին ծովից-ծով Հայաստան, ներառյալ Կիլիկիայի ողջ տարածքը:*

Ամերիկացին հարցնում է.
«*Մր Քրեյն. - Ի՞նչ է Հայաստանի մանտային մասին ձեր տեսակետը:*

Հովհ. Յակոբյան. - Հայաստանի մասին մեր տեսակետը պարզել է առաջ թոյլ տուէք ինձի Հայաստանի անկախութեան մասին յայտնել մեր բաղձանքները, որ ամբողջ հայութեան բաղձանքներն են: Մենք կը պահանջենք Անկախ եւ Միացեալ Հայաստան, որ իր մէջ պարունակէ Ռուսահայաստան, Թրքահայաստանի վեց նահանգները եւ Կիլիկիան ազատ մուտք ունենալով Սեւ ծովու եւ Միջերկրականի վրայ: Հայաստանը պիտի դրուի Ազգերու Ընկերակցութեան հովանին տակ եւ անկէ բղխած ռեւէ դաշնակից պետութեան հոգատարութիւնը սիրայօժար պիտի ընդունինք: Մենք համկիր ենք դաշնակից բոլոր պետութեանց՝ Ֆրանսայի, Իտալիոյ եւ Անգլիոյ, սակայն նախըտրութիւն կուտանք Ամերիկայի Միացեալ Նահանգաց, եթէ ան ընդունէր»:

Մր Քրեյն. - Չէք կարծեր որ այդ սահմանները ընդարձակ են հայութեան թիւին համեմատութեամբ:

Հովհ. Հակոբյան. - Հայաստանի տնտեսական ապագան ապահովելու համար սահմանները կենսական են հայութեան եւ թէ այդ հողամասերու մէջ մենք այսօր ալ մեծամասնութիւն ունինք բոլոր միւս ցեղերու վրայ: Ռուսահայաստանի հայութեան թիւը ձեզի ծանօթ է. Վանի, Սուշի, Պուլանդզի, Ալաշկերտի, Բասենի շրջաններու մէջ միայն վերապրող հայութիւն մը կայ, որ հիմա Կովկաս կը գտնուի: Կիլիկոյ մէջ 120.000 հայ կայ այսօր: Խարբերդ քաղաքի շրջակայից մէջ 10.000 հայ, ու այսպէս ամէն տեղ ահագին թիւով վերապրողներ կան: 400.000էն աւելի թրքահայեր կը գտնուին Կովկասի մէջ, պատրաստ օր մը առաջ իրենց բնակավայրերը վերադառնալու: Մինչ թրքական բարլամէնթի մէջ եղած պաշտօնական յայտարարութեան համաձայն, Ռուսիոյ գրաւած երեք վիլայէթներէն փախած գաղթականներէն 500.000 հոգի սովի եւ համաճարակներու զոհ երթալով բնաջինջ եղած են: Պատերազմէն առաջ հայերը վեց վիլայէթներու մէջ աւելի էին, քան ոչ միայն թուրքերը այլ բոլոր մահմետական ցեղերը, քիւրտ, չերքէզ եւ նոյնիսկ զրզըլպաշ եւ եզիտի ցեղերն ալ միասին հաշուելով: Եթէ դուք բարի ըլլաք ինձ թոյլ տալ պիտի ըսեմ որ Թուրքիոյ մէջ երբեք ճշմարիտ վիճակագրութիւն եղած չէ եւ թուրքերու ցուցուցած վիճակագույցներուն երբեք կարելի չի վստահել:

Վերջապէս ես կ'ուզեմ ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն կէտի վրայ որ Անկախ Հայաստանի յայտարարութենէն յետոյ, Թուրքիոյ եւ աշխարհի ամէն կողմը ցրուած հայութիւնը պիտի վերադառնայ իր հայրենիքը: Վերջերս Պեսարապիոյ, Ռումանիոյ եւ Պուլկարիոյ հայերը սկսած էին վաճառել իրենց կալուածները, Հայաստան գաղթելու համար: Միայն պատրիարքարանէն տրուած հրահանգի վրայ էր որ այս կանխահաս շարժումը կասեցաւ»:

Չարլզ Քրեյնը բավարարված լինելով տված հարցերի պատասխանից՝ շնորհակալությամբ հեռացավ պատրիարքարանի շենքից:

¹ *Պայքարի էջ Լազեան*, նշված աշխատությունը, էջ 203:

² Նույն տեղում, էջ 203-204:

Չարմանալի է, բայց փաստ, որ *մինչև վերջերս* ըստ արժանվույն չէր գնահատվում *հինգի, տասի և տասնհինգի* խորհուրդների հիմնարար անդամներից մեկի, գլխավոր դաշնակից *Իտալիայի* թափած ծով ջանքերը *Հայոց խնդրի լուծման*, եվրոպական մեծերի դռները դոփող, դիվանագիտական առաքելությամբ պարապող, երկթև հայ բանագնացներին ցույց տված նրա անզուգական օգնության համար: Դրա բազում պատճառներից գլխավորն այն էր, որ *Հռոմն ու Վատիկանը*, իրենց արխիվներում ընդարմացած, խնդրին վերաբերող նույնիսկ հույժ կարևոր վավերագրերը պահում էին գոց դռների ետևում, և հետաքրքրասեր ընթերցողները մնում էին զրկված եղած փաստերին գոնե ծանոթանալու հնարավորություններից: Պակաս խոչընդոտ չէր նաև *իտալերենին* կատարյալ տիրապետողների սակավությունը, որպեսզի նրանք կարողանային դրանք հայոց լեզվով թարգմանել և մատչելի դարձնել հայ ընթերցողին:

Այդ հնարավորությունները վերջերս ստեղծվեցին: Նախ բացվեցին Հռոմի արտգործնախարարության արխիվադարանների դռները, ապա հրապարակ իջավ *Արամայիս Բալոյանը*, որը թարգմանչի վարպետացած գրչով հայտնաբերեց, թարգմանեց և ծանոթագրեց իտալական փաստաթղթերը, դրանցով իսկ *Նոր լույս սփռեց հայ ժողովրդի պատմության մի շարք խնդիրների վրա*¹:

Ժողովածուի երկրորդ հատորի սակավէջ, բայց շնորհալի գրչով գրված առաջաբանում կարդում ենք. «Ի հետևանք նրա, որ Հայաստանը պաշտոնապես դեռ ճանաչված չէր և իրավունք չուներ մասնակցելու վեհաժողովի աշխատանքներին, հայկական պատվիրակությունների գործունեությունը սահմանափակվում էր հիմնականում տարբեր երկրների դեկավարներին խնդրագրեր ուղարկելով և առանձին հանդիպումներով, որոնց ընթացքում փորձ էր արվում ներկայացնել Հայաստանում տիրող ծանր իրավիճակն ու պատերազմի ընթացքում կրած կորուստների հետևանքները՝ փորձելով եվրոպական տերությունների միջոցով հասնել Հայկական հարցի արդարացի լուծմանը: Եվ չնայած Փարիզի վեհաժողովում Թուրքիայի հետ պայմանագրի վերջնական մշակումը մնաց անավարտ, հայկական պատվիրակությանը, այնուամենայնիվ, հաջողվեց հասնել նրան, որ դե ֆակտո ճանաչվեց Հայաստանի Հանրապետությունը, և առաջարկվեց հայերի պահանջների մասին մի հուշագիր պատրաստել, որը կներկայացվեր տերություններին»:² Փոքր-ինչ բացեց փակագծերը:

1918 թ. սեպտեմբերի 6-ին Իտալիայի Նախարարների խորհրդի աշխատակազմի ղեկավար *Պետրոցիանին* երկրի արտգործնախարար *Սոնինոյին* հեռագրում է, թե «*օգտվելով առիթից... ուղարկում եմ մի հեռագիր, որում կոչ է արվում Հայաստանը ճանաչել որպես պատերազմող երկիր*»²: Նույնաբովանդակ հեռագիր է ուղարկվում նաև Իտալիայի վարչապետ *Վիտորո Էմանուել Օրլանդոյին* (5-ը սեպտեմբերի), որում ասվում է. «Հայաստանի անկախության Բոլոնիայի կոմիտեն, Համաձայնության երկրներին վերջնական հաղթանակ մաղթելով, կոչ է անում, որպեսզի Իտալիայի կառավարությունն *առաջինը ճանաչի Հայաստանը որպես պատերազմող դաշնակից երկիր*»³:

Իտալիայում ստեղծվել էր «*Հայաստանի անկախության իտալական կոմիտե*», որի կազմում էին իտալահայեր, ինչպես նաև իտալական խորհրդարանի գույգ պալատների մի շարք պատգամավորներ: Այդ կոմիտեն 1918 թ. հոկտեմբերի 6-ին

¹ Տե՛ս «Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923 թթ.», *հատոր Բ*, 1918-1923, նյութը հավաքեց, կազմեց, թարգմանեց, առաջաբան գրեց և հրատարակության պատրաստեց *Արամայիս Բալոյանը*, Երևան, 2010: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ:

² Նույն տեղում, էջ 18:

³ Նույն տեղում:

հետևյալ դիմումն է ուղարկում դաշնակից տերությունների, հատկապես Իտալիայի բարձրաստիճան ղեկավարությանը: Ահա կոչատեսք այդ գրությունը.

Հայաստանի անկախության իտալական կոմիտեի կոչը

Յոռն, 6 հոկտեմբերի, 1918 թ.

Հաշվի առնելով, որ հայ ժողովրդի իրավիճակն արդեն իսկ ընդգրկված է նախագահ Վիլսոնի կողմից մատնանշված դրույթներում, որպես պայքարի մեջ գտնվող ազգի քաղաքական վերակազմավորման հիմնարար ուղեցույց, հայտարարում ենք, որ հայ ժողովրդի հարցը, նույնիսկ հակամարտության ժամանակ լուծման նպատակով բազմակողմ ծրագրերի առարկա լինելով հանդերձ, Հայաստանի պատմական, բնական, ինչպես նաև քաղաքական անկախության պաշտպանության ուղղությամբ մինչ այժմ որևէ իրական արդյունք չի արձանագրել: Ուստի հիշեցնելով այն բոլոր ճիգերը, որ գործադրել է Հայաստանը թե՛ երկրի ներսում և թե՛ մարտի դաշտում իր խնդրի արդար լուծման ուղղությամբ, նաև ապավինելով Համաձայնության երկրներին, կոչ ենք անում Համաձայնության բոլոր երկրներին և Իտալիայի կառավարությանը, որ հակամարտության կարգավորման խնդիրների մեջ ներառվի նաև Հայաստանը, որը **դե ֆակտո հակամարտող կողմ է և Համաձայնության երկրների դաշնակիցը, և վերջնականապես լուծում տրվի նրա արդար պահանջին, որի համար դարավոր պայքար է մղվել:**

Հայաստանի անկախության իտալական կոմիտեի՝

1918 թ. հոկտեմբերի 23-ին Յոռնում տեղի էր ունեցել մի հավաք, որը միաձայն որոշմամբ Օրլանդոյին էր ուղարկել հետևյալ գրությունը. «Պետնախարար Լուիջի Լուծձատտիի նախագահությամբ Յոռնում երեկ տեղի է ունեցել հայ ժողովրդի կողմից լիազորված ներկայացուցիչների մի հավաք, որին մասնակցում էին ֆինանսների փոխնախարար Ինդրին, ծովային փոխնախարար Տեզոն, արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Դե Մարտինոն, սենատոր Բեդիան, Հայաստանի անկախության իտալական կոմիտեի նախագահ Դի Չեզարոն, պատգամավոր Արկան, անգլիացի պատգամավոր Մարկ Սայքսը և քաղաքական գործիչներ ու մտավորականության շատ այլ ներկայացուցիչներ: Նրանք կոչ են անում, որ **Հայաստանն իր կրած հին ու նոր զոհողությունների, Համաձայնության երկրներից ցուցաբերած օժանդակության համար, ինչպես նաև պատմաբանների կողմից որպես քաղաքակրթության մաս որակված երկիր, անհապաղ ճանաչվի ազատ և անկախ պետություն:**

Բոլորը համոզված են, որ Հայաստանն Արևելքում կլինի զարգացած քաղաքակրթության մի զարդ:

Յոռնի ժողովը որոշել է նաև դիմել անկախ պետությունների հիմնադիր ԱՄՆ նախագահին, ինչպես նաև Ֆրանսիայի, Անգլիայի և Իտալիայի հարգարժան ղեկավարներին՝ Կլեմանտյոյին, Լլոյդ Ջորջին և Օռլանդոյին, որպեսզի վերջերս լեհերի, չեխերի և հարավսլավացիների կառավարությունները ճանաչելու օրինակով անհապաղ նաև Նուբարի գլխավորած ազգային պատվիրակությանը ճանաչեն որպես Հայաստանի կառավարություն:

Ժողովը՝ միաձայն, Համաձայնության երկրների ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա, որ քրիստոնյա ժողովուրդների վրա Թուրքիայի իշխանության տարա-

ծուըն վտանգ է ներկայացնում ինչպես քաղաքակրթության, այնպես էլ աշխարհի խաղաղության համար:

Լուիջի Լուծձատտի, Դի Չեզարո, Բոդիո»¹:

Փարիզի խաղաղության կոնֆերանսի բացումից երկու շաբաթ առաջ Լոնդոնում հաստատված Իտալիայի դեսպան **Իմպերիալին** իր երկրի նախարար **Սոնինոյին** հեռագրով հաղորդում է. «Արդեն մի քանի օր է Լոնդոնում է գտնվում գեներալ Թորգոնը, որը ռուսական զորքերի կողմից Հայաստանը թողնելուց հետո ստանձնեց հայկական զորամիավորումների հրամանատարությունը և ղեկավարեց երգրումի պաշտպանությունը: Տեղեկություններ ունեն, որ նա ցանկանում է հանդիպել անգլիացի ազդեցիկ քաղաքական գործիչների հետ, որպեսզի նրանց մեջ հետաքրքրություն առաջացնի Հայաստանի անկախության նկատմամբ: Նա պատրաստվում է հրապարակել այն բոլոր փաստաթղթերը, որոնք հաստատում են Հայաստանի անկախության հռչակման իրողությունը, որը, գեներալի հավաստմամբ, տեղի է ունեցել անցած տարի երգրումում, երբ ընթանում էր քաղաքի պաշտպանությունը: Գեներալ Թորգոնը մտադիր է այցելել նաև Փարիզ և Յոռն: **Նրա հիմնական համոզմունքն է, որ անկախ Հայաստանի կազմում պետք է ընդգրկվեն Մեծ և Փոքր Հայքերը, ինչպես նաև ողջ Կիլիկիան: Մինչ այստեղից հեռանալը Թորգոնը կհանդիպի նաև ինձ:**

Իմպերիալի»²:

Իտալիային հետաքրքրել է նաև **Կիլիկիայի ճակատագիրը:** Նույն **Իմպերիալին** 1915 թ. հունվարի 20-ին Լոնդոնից Յոռն, Սոնինոյին հեռագրում է, թե անհրաժեշտ է Կիլիկիայի խնդիրն առանձին քննարկման նյութ դարձնել:

Նրա հեռագրում կարդում ենք.

«Կիլիկիան և ինքնորոշումը

1916 թ. Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Իտալիայի կառավարությունների միջև կնքված պայմանագրով նախատեսվում էր, որ Ֆրանսիան ձեռք է բերելու Ադանայի ողջ վիլայեթն ու Քուրդիստանի մի մասը, որը հարուստ է դեռևս չբացահայտված բնական պաշարներով: Այդ պայմանագիրը կնքվեց այն համոզմամբ, որ Ռուսաստանը պատերազմից դուրս էր գալու որպես հաղթած տերություն, իսկ Գերմանիան՝ պարտված, սակայն նրան հնարավորություն էր տրվելու շարունակել իր Բեռլին-Բաղդադ երկաթգծի կառուցումը: Թուրքիայի մասնատման այս ողջ ծրագիրն ուներ Պարսից ծոցի մոտակայքում չափազանց ուժեղ սահմանագիծ ստեղծելու նպատակ:

Անկախ Հայաստանի գաղափարն անշուշտ չէր տեղավորվում հաղթանակած Ռուսաստանի՝ Հայաստանի ռուսական և թուրքական մասերի գրավման ծրագրերում: Կիլիկիայի հայերը թուրքական տիրապետությունից պարզապես անցնելու էին ֆրանսիական իշխանության տակ: Սակայն Յոռնից լեռները գնացին, պրուսական ծրագրերն անհետացան ինչպես Ալեքսանդրի և Նապոլեոնի ծրագրերը, Ռոմանովները նույնպես գնացին, իսկ Հայաստանը հռչակվեց անկախ պետություն (Կարին, հունվար 1918 թ.): Կիլիկիան իր եթնիկական, աշխարհագրական և պատմական հիմքով պետք է նորաստեղծ Հայկական պետության մաս կազմի, որը, եթե ձևավորվի ինչպես հարկն է, ապա ուժեղ պատվար կհանդիսանա հնդկական ճանապարհների երկայնքով: Հայաստանը միշտ էլ արևմտյան քաղաքակրթության սահմանային պատվարն է եղել: Նայելով Հայաստանի դարավոր պատմությանը, տեսնում ենք, որ այն շարունակական և արյունալի պայքար է բարբարոսների, պարսիկների, թաթարների և թուրքերի դեմ:

¹ «Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923 թթ.», էջ 18-19:

² «Իտալիայի արտաքին գործերի նախարարություն... վավերագրեր», էջ 21-22:

³ Նույն աշխատությունը, էջ 27:

Այս պատերազմում նա պայքարեց դաշնակիցների հետ միասին և նահատակվեց հանուն նրանց: Հայաստանի կորուստները չեն կարող համեմատվել Բելգիայի և Սերբիայի կրած կորուստների հետ: Բելգիան ու Սերբիան այժմ վերականգնման և վերածնված վիճակում են հնարավորություն են ստանում, որի իրավունքն ունի նաև Հայաստանը: Դա ոչ թե գթասրտություն է, այլ՝ արդարության վերականգնում»¹: Հայաստանի ապագա պետական սահմանների, նորաստեղծվելիք պետության կարգավիճակի խնդիրները, բնականաբար, իրենց վրա էին սևեռել **Ֆրանսիայի** ուշադրությունը, որի մայրաքաղաքը պատերազմից հետո վերածվել էր **աշխարհի կենտրոնի**: Առաջինն այդ մասին խոսք բացեց պրեզիդենտ **Ռայմոն Պուանկարեն** (1860-1934), որի կոնկրետ հանձնարարականով շարունակվեց գործել վարչապետ **ժորժ Կլեմանսոն** (1841-1929): Փարիզի որոշումը պարզ էր. չհանդիմանել Հայաստան անկախ պետության հայեցակարգի պաշտպաններին՝ պայմանով, որ բանբակացան ընդարձակ դաշտեր ունեցող **Կիլիկիան դրվեր Ֆրանսիայի գերիշխանության ներքո**:

1919 թ. հունվարի 11-ին Ֆրանսիայի ներկայացուցիչ **Բերտելոն**, Միացյալ Թագավորության արտգործնախարար **ժորժ Նատանել Բերգոնին** (1859-1925) հղած նոտայում գրում է. «**Գծագրում էր անկախ Հայաստանի սահմանները՝ առաջարկելով, որ նախկինում Մեծ Հայքի Թագավորություն անուանուած Հայաստանը Ռուսահայաստանի եւ Թուրքահայաստանի միաւորմամբ վերականգնուի իբրեւ լիովին անկախ հանրապետութիւն: Ըստ նրա, Հայաստանի Հանրապետութեան տարածքը պետք է ընդգրկի. ա. Երեւանի Հանրապետութեան ներկայիս տարածքը՝ «ներառյալ Բորչալուի, Վերին Փամբակի եւ Չանգեզուրի այն շրջանները, որոնց այժմ յաւակնում են Վրաստանն ու Ադրբեջանը:**

բ. Թուրքական կայսրութեան երզրումի վիլայէթի արեւելեան մէկ մասը՝ ներառեալ Երզրում քաղաքն ու գաւառը, Մշոյ դաշտը, Բիթլիսի գաւառը եւ Վանա լճի շրջանը՝ մինչեւ պարսկական սահմանը: Իսկ Թուրքիայի, Վրաստանի եւ Ադրբեջանի հանրապետութիւնների, Քրդստանի ֆրանսիական գոտու հետ Հայաստանի սահմանները տեղում պետք է որոշի Միջդաշնային յանձնախումբը»²:

Այսպիսով, մինչև խաղաղության կոնֆերանսն Անտանտի գրեթե բոլոր տերությունների բարձրաստիճան ղեկավարները համաձայն էին օսմանյան բռնապետության մասնատմանը, արդյունքում՝ **ազատ, անկախ, միացյալ Հայաստան պետության ստեղծմանը**: Նրանք դեմ չէին Հայաստանի **Արևելյան և Արևմտյան** հատվածների միավորման, **նոր տերությանը**՝ Տրապիզոնի վրայով դեպի ծով ելք ունենալուն, բոլոր վիլայեթների տարածքների ապառազմականացման: Դեռևս վիճահարույց խնդիր էր մնում **Կիլիկիայի ճակատագիրը**: Կային և՛ թեր, և՛ դեմ կարծիքներ:

Անշուշտ, վերոհիշյալ բոլոր կարծիքները **զատ-զատ** կամ **համահավաք** մինչ այդ իրավական ուժ չէին ստացել, որովհետև դեռևս չէին վավերացվել որևէ միջազգային կամ համաեվրոպական կոնֆերանսի, համաժողովի իրավարար կազմակերպության կողմից: Այդ մասին մտորում էին Անտանտի բոլոր տերությունները: Խիստ զգացվում էր միջազգային համաժողովի գումարման անհրաժեշտությունը:

Երկարատև մտորումներից, թեր ու դեմ կարծիքների քննարկումներից հետո դաշնակիցները հանգեցին խաղաղության կոնֆերանս հրավիրելու մտքին: Որոշվեց այդ կոնֆերանսը հրավիրել **Փարիզում** և քննարկել պատերազմի ժամանակ և պատերազմից հետո ծագած բոլոր խնդիրները, այդ թվում և **Հայկական հարցը**:

Փարիզի խաղաղության կոնֆերանսն իր պլենար նիստը բացեց **1919 թ. հունվարի 18-ին, առավոտյան ժամը 10-ին և ընդմիջումներով աշխատանքները շարունակեց մինչև 1920 թ. հունվարի 21-ը**: Շուրջ **հինգ ու կես ամիս** նիստեր գումարած համաժողովը խիստ ներկայացուցչական էր:

Դաշնակիցները կոնֆերանսի աշխատավայր ընտրեցին Ֆրանսիայի արտգործնախարարության ապակեպատ, շքեղազարդ **Կ'է դը Օրսեի** պալատը, որտեղ նիստերին լիաբերան մասնակցելու իրավունքով հրավիրվել էին **քսանյոթ** տերությունների պատվիրակները:

Տանտիրոջ իրավունքով կոնֆերանսը բացեց պրեզիդենտ **Ռայմոն Պուանկարեն** (1860-1934): Ֆրանսիայի անմահների Ակադեմիայի անդամը, իրավագիտության դոկտորը, չզսպված զայրությով, քննադատության նշանախեց դարձնելով գերմանական միլիտարիստներին, ի սկզբանե առաջադրեց իր ու իր երկրի պահանջները պարտված **Քառյակի** երկրներից:

Վ. Վիլսոնի առաջարկով կոնֆերանսի մշտական նախագահ ընտրվեց վարչապետ **ժորժ Կլեմանսոն**: Կոնֆերանսի հիմնական դերակատարներն էին **Դեվիդ Լյուդ Ջորջը** (Անգլիա), **ժորժ Կլեմանսոն** (Ֆրանսիա), **Վիտալո Էմանուել Օրլանդոն** (Իտալիա), **Վուդրո թոմաս Վիլսոնը** (ԱՄՆ, նրան երբեմն փոխարինում էր պետքարտուղար **Լանսինգը**), **Մակինոն** (Ճապոնիա):

Կոնֆերանսն ընտրեց **Հինգի խորհուրդ, Տասի խորհուրդ, Տասնհինգի խորհուրդ**, յուրաքանչյուրին օժտելով առանձին լիազորություններով: Պարտված երկրների ղեկավարները կոնֆերանսի դահլիճ մտնելու իրավունք էին ստանում, երբ քննվում էին իրենց վերաբերող խնդիրները: Բնականաբար, Ռուսաստանին զրկեցին կոնֆերանսին մասնակցելու հնարավորությունից, իսկ **«Գերմանիան եկավ Փարիզ»**, երբ վճռված էին նրա անդամահատման, գաղութներից զրկվելու խնդիրները:

Հայ ժողովրդի շահերի պաշտպան երկթև պատվիրակությունը Փարիզի հաշտության կոնֆերանսին չէր հրավիրվել: Հաշվի չէր առնվել անուրանալի, բայց դառն այն իրողությունը, որ չնայած իր փոքրաթիվությանը, հայ ժողովուրդն Առաջին աշխարհամարտում մարդկային և նյութական ավելի մեծ կորուստներ էր կրել, քան որոշ խոշոր տերություններ:

Ձայրացած ու վիրավորված **Ավետիս Ահարոնյանն ու Պողոս Նուբար փաշան** սկսեցին միջոցներ որոնել բախտորոշ նման սխալը շտկելու ուղղությամբ: Նրանց զորավիզ կանգնեց վեհափառ **Գևորգ V Սուրենյանցը**, հայ մտավորականության էլիտան և հանուր ժողովուրդը:

Որոշվեց ստեղծել ժավալուն մի գրություն, որը ոչ միայն կներկայացներ հայերի կատարած գործողությունները, **այլև կծնակերպեր ժողովրդի տարածքային և նյութական պահանջներն արդեն կործանման եզրին կանգնած օսմանյան բռնապետությունից**:

Արագ կողմնորոշվելով, պատվիրակները վճռեցին կազմել մի գրություն, այն թարգմանել աշխարհի տարբեր լեզուներով և բաժանել կոնֆերանսը զխավորող տերությունների ղեկավարներին: **Վավերաթուղթ-պահանջագիրը ստեղծեցին Նիկողայոս Ադոնցը, Լեոն** (Առաքել Բաբախանյան), **Վահան Փափազյանը, Արշակ Չոպանյանը, Հովհաննես Խան-Մասեհյանը, Գաբրիել Նորատունկյանը** և այլք: Այն ոչ միայն կլուկտիվ գրչի, այլև կլուկտիվ մտքի ու հանուր հայ ժողովրդի ցանկությունների արտահայտությունն էր, որը, փաստորեն, դարձավ **ծովից ծով Հայաստանի պահանջատիրության հիմնաքարը**:

¹ «Իտալիայի արտաքին գործերի նախարարություն... վավերագրեր», էջ 36:
² Նույնությամբ վերցրել ենք **Ռաֆայել Համբարձումյանի**՝ վերևում նշված շահեկան հոդվածից, էջ 124-125: Տե՛ս նաև «Հայաստանի անկախության ճանաչումը», «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1920, հունիսի 27, էջ 2-3: Տե՛ս նաև **Յ. Բարսեղ**, նշված հոդվածը, էջ 6:

Գրքույկի ձևով (32 էջանոց) հրատարակված «պահանջագիրը» ստացավ «Հայկական հարցը Հաշտության կոնֆերանսի առաջ» վերտառություն¹: Այն համայնաժողովների մակարդակով քննարկվեց և խմբագրվելուց, լրացվելուց հետո 1919 թ. փետրվարի 12-ին ուղարկվեց Փարիզ: Գրությունն ստորագրել էին **Հայկական Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը և Հաշտության կոնֆերանսի Հայկական Հանրապետության պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանը**:

Փաստաթուղթը, թարգմանվելով անգլերեն և ֆրանսերեն, հանձնվեց **Դ. Լյոյր Ջորջին, Ուինստոն Չերչիլին, Ժորժ Կլեմանսոյին, Օրլանդոյին** և համաժողովի շատ այլ ղեկավարների: Նրա գլխավոր պահանջը ձևակերպվել էր այսպես. «**Անկախ Հայկական պետությունը պետք է կազմվի հետևյալ հայկական շրջաններից.**

1. Վանի, Բիթլիսի, Դիարբեքի, Խարբերդի, Սվազի, Էրզրումի և Տրապիզոնի յոթը վիլայեթներից, դուրս թողնելով Տիգրիսից հարավ և Օրդու-Սվազ գծից արևմուտք գտնված շրջանները:

2. Կիլիկիայի չորսը սանջակները, այսինքն՝ Մարաշը, Խոզանը (Սիս), Ջեբել-Բեքեթը և Ադանան՝ Ալեքսանդրետի հետ միասին:

3. Կովկասի Հայկական Հանրապետության ամբողջ տարածքը, որն իր կազմում ներառում է Երևանի գավառն ամբողջությամբ, նախկին Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Գանձակի նահանգի հարավ-արևմտյան մասը, Կարսի մարզը (բացի Արդահանից հյուսիս ընկած տարածքից):

4. Հատուկ շեշտվում էր **Ջավախքը, Լեոնային Ղարաբաղը, Նախիջևանը** Հայկական պետության մեջ մտցնելու խնդիրը:

5. Սահմանները որոշելիս գրությանը կցված էր ռազմագերիների կողմից կազմված քարտեզը, որը ելակետ էր վերցրել 1881 թ. վարչական բաժանումների հիմքերը²:

6. Պահանջներն առաջադրելիս պատվիրակությունը հատուկ շեշտում էր **Տրապիզոնի և Ալեքսանդրետի** սանջակների վրայով դեպի Սև ու Միջերկրական ծովեր հայ ժողովրդի ունենալիք ելքի մասին:

7. Ընդհանրացնելով այդ ամենը, հայ ժողովուրդը բանագնացների բերանով Փարիզում հավաքված աշխարհի մեծերից պահանջում էր թույլ տալ ստեղծելու **ազատ, անկախ և միացյալ Հայաստան, որի կազմում պիտի լինեին Արևմտյան Հայաստանի յոթը վիլայեթները, հայկական Կիլիկիան և Կովկասյան Հայաստանն իր բոլոր հատվածներով: Նոր աշխարհի տարածքը կազմելու էր երկու հարյուր ութսուն հազար քառ. կմ, որն իրավամբ ծովից ծով անուն ստացավ**»:

Հայոց պահանջագիրը կոնֆերանսականներին բաժանելուց հետո պատվիրակներն սկսեցին դոփել կոնֆերանսի «**չորսի խորհրդի**» անդամների դռները և խնդրել թույլտվություն համաժողովին մասնակցելու լիիրավ իրավունքով:

Հայկական պատվիրակությունն այդ պահին իրոք որ **դիվանագիտական մուրհկության** ճանապարհ էր բռնել: Նրանք եղան **Վիկտոր Բերարի** ամառանոցում, ընդունվեցին **Արթուր Ջեյմս Բալֆուրի** կողմից, տեսակցեցին արտագործնախարար **Ս. Պիշոնին**, ապագա նախարար **Արիսթիտ Բրիանին** և շատ այլ կոնֆերանսականների: Կազմված տեղեկանքը բաժանելուց, նրա բովանդակությունը հավուր պատշաճի ներկայացնելուց բացի, հայ դիվանագետները խնդրում էին

իրենց արտոնել կոնֆերանսին մասնակցելու և լիազումար նիստերում ելույթներ ունենալու:

Թեկուզև մարդկային արժանապատվության նսեմացման գնով, նրանք հասան իրենց նպատակին³: 1919 թ. փետրվարի 26-ին պատվիրակության երկու թևերն էլ ելույթ ունեցան Փարիզի կոնֆերանսում: Ըստ որում, Պողոս Նուբար փաշան խոսեց Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի մասին, իսկ Ավետիս Ահարոնյանը պաշտպանեց «**Ռուսահայաստանի**» բոլոր հատվածների, հատկապես արդեն ձևավորված Հայաստանի Հանրապետության շահերը: Վերջում ամփոփելով իրենց առաջարկները, նրանք միավորեցին պահանջները. այն է՝ **ստեղծել միասնական անկախ Հայաստան, մեծ Հայաստան**⁴:

Ա. Ահարոնյանը գրում է. «Ես ելույթ ունեցա. իմ ելույթն անգլիացի սպան թարգմանում էր ժողովականներին: **Հեռացայ սեղանից եւ իմ տեղն անցաւ Պողոս Նուպար Փաշան: Նա աւելի երկարօրէն ծանրացաւ 1) Հայ ժողովրդի թուլ վրայ, ցրելով մեր փոքրամասնութեան մասին մեր հակառակորդների արգումները եւ ցոյց տալով միաժամանակ, որ մեր զոհերն այս պատերազմում, բռնի նուազումը մեր թուի ո՛չ արդար եւ ո՛չ իրաւական արգումներ կարող է լինել մեր դէմ. 2) աւելի մեծ եռանդով ծանրացաւ Կիլիկիայի խնդրի վրայ, պնդելով այդ հայ երկրամասի անհրաժեշտութիւնը մեր պետութեան կենսունակութեան համար:**

Նոյն ձեւով Պողոս Փաշայի ասածները թարգմանուեցին անգլիերէն: Ժողովը ոտքի ելաւ: Պատուիրակներից ոմանք մօտեցան մեզ եւ իրենց գոհունակութիւնը յայտնեցին մեր յիշատակագրի առթիւ»⁵:

Հայկական պատվիրակությանն օգնության հասան Երևանից եկած մի խումբ գործիչներ: 1920 թ. մարտի 16-ին Փարիզից նրանք մեկնում են Լոնդոն, զրույց ունենում «**Հայաստանի սահմանները որոշող Հանձնաժողովի**» անդամների հետ, որի բովանդակած մտքերի մասին Ա. Ահարոնյանը գրում է. «Այսօր երրորդ անգամ լինելով ներկայացանք Յանձնաժողովին Փաշան, ես, զենեռալ Կորգանեան եւ Պատուիրարը:

Ներկայ էին՝ Vansittart, Kamerer եւ գնդապետ Castoldi: Նախագահը յայտարարեց հետեւեալը.

«Conseil Supreme-ը, միաձայն որոշած լինելով կազմել ազատ անկախ հայ պետութիւն, եւ քանի որ մինչեւ այժմ կարելի չ'եղավ որեւէ պետութեան հանձնել Հայաստանի մանդան, ուստի առաջարկուեց Ազգերի Լիգային իր հովանու տակ առնել նորակազմ Հայ պետութիւնը: Յանձնաժողովը հրահանգ ունի հարցնել հայ պատուիրակներին, թէ ի՞նչպիսի կարիքներ կան, որ մանդատը պիտի լրացնի, գինուորական, ֆինանսական, վարչական ինչ կարիքներ կան, եւ ո՞րն է այդ կարիքների չափը»:

Մենք ժամանակ խնդրեցինք պատասխանելու այդ հարցերին: Մեզ տրուեց 4-5 օր ժամանակ:

Ես հարց դրի, թէ որո՞նք են սահմանները Հայաստանի: Դա անհրաժեշտ է գիտեցալ դրուած հարցերի պատասխանելու համար:

Vansittart ասաց ինձ, թէ «իրաւացի էք, բայց թէ մենք գաղտնիք ենք պահում այդ առժամանակ: Դա պարզապէս ձեր շահերի տեսակէտից: Լաւ չէ, որ թուր-

¹ Տե՛ս «Հայկական հարցը Հաշտության կոնֆերանսի առաջ», Թիֆլիս, 1919, Բոստոն, 1919, Փարիզ 1919:

² Նույն տեղում, էջ 7-8:

³ Մանրամասն տե՛ս **Աւետիս Ահարոնեան**, Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լոզան, քաղաքական օրագիր, Պոսթըն, 1943, էջ 11-12:

⁴ Տե՛ս **Ավետիս Ահարոնեան**, նշված աշխատությունը, էջ 14-15:

⁵ Նույն տեղում:

քերն այժմէն իմանան, թէ ի՞նչ է խլուում նրանցից: Այլապէս նրանք կարող են պատրաստութիւններ տեսնել: Սակայն, կարող են ձեզ ասել, որ դուք կ'ունենաք երկու խոշոր հատուածները Հայաստանի՝ կովկասեան ու թուրքական, Վան Բիթլիս, Մուշ, նաեւ երզրում, եւ շատ ւաւելի անդին քան երզրում, բայց առանց հասնելու երզնկային, ի հարկէ մէջ առնելով Մամախաթուն: Մնացածը յոյս ունեն դուք գիտէք»:

Ամախորժ տպաւորութիւն գործեց սկզբում, երբ նախագահը յայտնեց թէ մեր մանդատն առաջարկուած է Ազգերի Լիգային, Փաշան ի պատասխան յայտնեց թէ՝ մենք այդ գիտենք Matin-ից եւ շտապով գրպանից հանելով յիշեալ թերթի մի կտորնը, սկսեց բարձրաձայն կարողալ այդ լուրը:

Այս ժողովից յետոյ՝ Ազնեանի եւ Օհաննէս Խան Մասեհեանի մասնակցութեամբ պատրաստեցինք խորհրդականների վերաբերեալ փաստաթղթերը, ինչպէս եւ մեր զինուորական պետքերի չափը: Այս առթիւ եղած ժողովում Փաշան ներկայացրեց մի ծրագիր, որով մեր անկախութիւնը շատ էր սղմում եւ շատ լայն իրաւունքներ էր արուում մանդատերի ներկայացուցիչ բարձր կոմիսարին եւ մասնաւորապէս ինչ որ մարմնի որը կոչուում է Canseil Mixte - բաղկացած կիսով չափ հայերից եւ պետութիւնների ներկայացուցիչներից, բարձր կոմիսարի նախագահութեան տակ:

Իմ եւ Փաշայի մէջ այս առթիւ բուռն վեճ եղաւ: Փաշան եւ Պատրիարքը պնդում էին թէ՝ մենք անկարող պիտի լինենք մեզ կառավարել, հետեւապէս օտար ներկայացուցիչների իրաւասութիւնը պէտք է շատ լայն լինի, մասնաւորապէս Canseil Mixte-ի: Ես դիմադրում էի եւ դէմ էի մասնաւորապէս Canseil Mixte-ի գոյութեանը:

Ի վերջոյ, փոխադարձ զիջողութեամբ համաձայնութեան եկանք: Ես ընդունեցի, որ **մանդան լինի փոխանակ տասնի քսան տարով**: Փաշան եւ իւրայինները համաձայնութեան հրաժարուել Canseil Mixte-ից եւ խորհրդականներին տրուելիք մի շարք իրաւունքներից:

Ինձ յաջողուեց վերջնական տնօրէն պահել մեր պարլամենտը»¹:

Հայ պատվիրակների անդադրում, հայրենանվեր աշխատանքն անպտուղ չմնաց: Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարութիւնը 1919 թ. դեկտեմբերի 24-ին դաշնակից տերութիւնների կառավարութիւններին է ուղղում մի հուշագիր, որում Հայաստանն առանձնացնելով Վրաստանից և Ադրբեջանից, արձանագրում է.

«Անհրաժեշտ է անմիջապէս ընդունել, որ Հայաստանը Վրաստանից եւ Ադրբեջանից տարբեր վիճակում է, քանզի բոլոր Դաշնակից տերութիւնները պատերազմի ժամանակ քիչ թէ շատ ուղղակի պարտաւորութիւն վերցրեցին **ստեղծել Հայոց անկախ պետութիւն**՝ երոպական կամ ամերիկեան մանդատի ներքոյ: Հայաստանի դէպքում լուծուելիք միակ հարցն այն է, թէ երեւանի հանրապետութեանը որքա՞ն թուրքական տարածք պէտք է աւելացուի՝ Հայկական նոր պետութիւն ստեղծելու համար»: Թուրքիայի կառավարութեան գործողութիւնները որակելով որպէս «մի ամբողջ ժողովրդի սպանութիւն» եւ նկատի ունենալով հայերի ջարդերի համար Թուրքիայի ցեղասպան պետութեան քաղաքական պատասխանատուութիւնը եւ ուրիշ ժողովուրդներին կառավարելու այդ երկրի «անկարողութիւնը»:

Փարիզի հաշտութեան խորհրդաժողովը 1919 թ. յունուարի 30-ին որոշեց դադրեցնել Թուրքիայի տնօրինութիւնը ոչ թուրք ժողովուրդներով բնակեցուած տարածքների վրայ՝ արձանագրելով. «բազմաթիւ հիմնաւորումներով ու յատկապէս նուաճուած ժողովուրդների հանդէպ թուրքերի պատմական չարաշահումների եւ նախորդ տարիներին հայերի ահաւոր կոտորածների պատճառով Դաշնակից եւ Միաւո-

րուած տերութիւնները համաձայնեցին, որ **Հայաստանը, Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը եւ Արաբիան պէտք է լիովին անջատուեն թուրքական կայսրութիւնից**»: Փարիզի խորհրդաժողովը յստակօրէն արձանագրեց նաեւ, որ Թուրքիան քաղաքական պատասխանատուութիւն է կրում հայերի ջարդերի համար եւ այդ պատճառով որպէս ոչ թուրք քաղաքացիներին կառավարելու անընդունակ պետութիւն, պէտք է զրկուի այլազգիներով բնակեցուած տարածքները կառավարելու իրաւունքից:

Մեծ Բրիտանիայի արտգործնախարարութիւնը 1919 թ. մի տեղեկագրում անհրաժեշտ էր համարում Հայաստանը, որպէս ցեղասպանութեան ենթարկուած երկիր, անկախացնել ու անջատել Թուրքիայից. «Այն, որ հայերը պէտք է ազատագրուեն թուրքական ուղղակի կառավարումից եւ անցնեն ռեւ տերութեան կամ տերութիւնների խմբի հովանաւորութեան ներքոյ, թերեւս անվիճելի սկզբունք է»: **Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջը նշում էր. «Հայաստանը մեզ համար եղել է եւ մնում է միանգամայն ուրիշ կարգի հիմնահարց... Դաշնակից տերութիւնները միահամուռ այն կարծիքին են, որ թուրքերին չի կարելի թոյլ տալ օգտուելու իրենց գազանութիւնների պտուղներից, իսկ հայ ժողովրդին պէտք է լիովին վերադարձուի նախնիների ժառանգութիւնը եւ հնարաւորութիւն ընձեռուի վերականգնելու իր երբեմնի հզօրութիւնը**»: **Ֆրանսիայի կառավարութիւնը Բրիտանիայի արտգործնախարար Քերզընին յղած 1920 թ. յունուարի 11-ի նոտայում յայտարարում է. «Հայաստանը, որպէս լիովին անկախ պետութիւն, պէտք է ստեղծուի Ազգերի լիգայի հովանու ներքո»¹:**

Փարիզի կոնֆերանսը վերջավորվեց Վերսալի հաշտութեան պայմանագրով, որն ստորագրվեց 1919 թ. հունիսի 28-ին: Այն մի կողմից ստորագրեցին հաղթող ճանաչված դաշնակից 17-ը տերութիւնները, մյուս կողմից պատերազմում ջախջախված **կայգերական Գերմանիան**: Թուրքիային, հետևաբար և Հայկական հարցին վերաբերող որոշումների կայացումը թողնվեց հաջորդ համաժողովին, որը պետք է գումարվեր Իտալիայի **Սան Ռեմո** քաղաքում:

Հայաստանը Ման Ռեմոյի կոնֆերանսում

1920 թ. ապրիլի 18-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին Իտալիայի ամառանոցային **Սան Ռեմո քաղաքի Դևաշան** վիլայում հավաքվել էին դաշնակից տերութիւնների գերագույն մարմնի ղեկավարները: Նրանք առաքելություն ունեին շարունակելու Փարիզի խաղաղության կոնֆերանսի կիսատ թողած աշխատանքները, հատկապէս վճռել օսմանյան բռնատիրության ճակատագիրը: Մուղրոսի զինադարից հետո սա առաջին այն հավաքն էր, որը նախապատրաստելու էր գրեթէ լեշի վերածված Թուրքիայի տարածքներին տիրանալու խնդիրները²:

¹ **Ռաֆայել Համբարձումյան**, նշված հոդվածը, էջ 122-123: Տե՛ս նաև **Յուրի Բարսեղով**, «Հայոց ցեղասպանութեան համար պատասխանատուութեան հարցը լուծելու ճանապարհները եւ միջոցները, գիտական հիմնաւորում» հոդուածը, որ Հայաստանում Ռուսաստանի դեսպանութեան մշակույթի եւ գիտութեան պատասխանատուի միջոցով նա հրապարակեց Վուրդո Վիլսոնի Իրաւարար վճիռ-քարտեզը հաստատելու տարեկիցին. 2008. Մոյսեմբերի 22-ի գիտաժողովին: Աշխատութեան կրճատ տարբերակը տես «Գոլոս Արմենիի», 2008 թ. յունիսի 5, էջ 6, տես նաեւ՝ **Барсегоев Ю.**, Геноцид армян - преступления по международному праву, стр. 125-126.

² Այս մասին մանրամասն տես. «Սան Ռեմոյի կոնֆերանսը եւ Հայաստանը»: **Ջ. Կիրակոսյանի եւ Ռ. Սահակյանի** առաջարկով հրապարակված Սան Ռեմոյի կոնֆերանսի ամբողջական արձանագրութիւնները՝ անգլերենից թարգմանված հայերենի: Տես «Բանբեր Հայաստանի արխիւների» 3/34, 1972, էջ 21-64:

¹ **Ավետիս Ահարոնեան**, նշված աշխատութիւնը, էջ 51-52:

Սան Ռեմոն տևեց մեկ շաբաթ, այսինքն՝ իր ավարտական նիստը գումարվեց ապրիլի 25-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին: Կոնֆերանսը քննարկեց Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի, Ազգերի լիգայի մանդատների բաշխման, Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ դիրքորոշման կամ հարաբերությունների հաստատման թե ինտերվենցիայի կազմակերպման խնդիրները, Գերմանիայի վաղօրոք ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի ստուգումը և այլ հարցեր:

Կոնֆերանսի որոշմամբ Միացյալ թագավորությունն ստանալու էր օսմանյան կայսրությունից անջատված Պաղեստինի և Իրաքի (ներառյալ Մոսուլը), իսկ Ֆրանսիան՝ Սիրիայի և Լիբանանի մանդատները: Լոնդոնի և Փարիզի կաթինետներն իրար մեջ էին բաժանում նավթով հարուստ Մոսուլի շրջանները:

Սան Ռեմոնի կոնֆերանսը դիմեց ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին՝ Հայաստանի մանդատը ստանձնելու և հանդես գալու որպես միջնորդ նրա վերջնական սահմանների ճշտման հարցում: Որոշվեց Թուրքիայի հետ պայմանագրի Հայաստանի վերաբերյալ մասում արձանագրել, որ Թուրքիան, Հայաստանը և մյուս պայմանավորվող կողմերը համաձայն են դիմել ԱՄՆ-ի նախագահի միջնորդությանը Թուրքիայի և Հայաստանի սահմանների (էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում) հարցում և ընդունել այդ առթիվ նրա որոշումը, ինչպես նաև որևէ պայման, որ նա կառաջարկի Հայաստանի՝ դեպի ծով ելք ունենալու մասին:

Կոնֆերանսը հաստատեց Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը, որը դրվեց Սևրի պայմանագրի ընդունած որոշումների հիմքում:

Կոնֆերանսը Գերմանիայից պահանջեց կատարել Վերսալի պայմանագրի ռազմական և ռեպարացիոն պայմանները: Այսպես կոչված, ռուսական հարցում կոնֆերանսը որոշեց վերականգնել Սովետական Ռուսաստանի հետ առևտրական հարաբերությունները: Միաժամանակ Սան Ռեմոնի կոնֆերանսում գաղտնի համաձայնություն կայացվեց՝ օգնել բուրժուա-կալվածատիրական Լեհաստանին, որը 1920-ի ապրիլի 25-ին հարձակվեց Ուկրաինայի վրա¹:

Սան Ռեմոնի կոնֆերանսի գրեթե բոլոր նիստերին ընդարձակ ճառեր էր արտասանում, բանավեճեր մղում Հունաստանի վարչապետ Վենիզելոսը: Երկարատև պատերազմից հետո Անտանտան ֆիզիկական ու բարոյական հոգնածություն էր զգում: Այլևս չէին բավարարում զինվորական այն միավորումները, որոնք կարող էին վերջնականապես ջախջախել Թուրքիայում ձևավորված, այսպես կոչված, «Կանաչ բանակը»: Մեկ խոսքով՝ թարմ ուժերի կարիք էր զգացվում:

Հունաստանը ուշ մտավ պատերազմի հորձանուտի մեջ և դեռևս պահպանել էր իր հայրենիքի ազատագրման բաղձանքներով տոգորված հույն հերոս ժողովրդի մարտունակ բանակը: Հույները ոչ թե անեքսիա էին անում, այլ գնում էին փրկելու **Զմյուռնիայի, Տրապիզոնի** հունաբնակ նահանգները, **Թրակիան**, այսինքն՝ պատմական Հունաստանի մի սովոր հատված, որը կես հազարամյակ առաջ բռնազավթվել էր օսմանյան թուրքերի կողմից: **Հունաստանի մղած պայքարն արդարացի էր, հայրենամոլեր:** Մեծ տերությունները գիտակցում էին այդ պարագան, դրա համար էլ ձգտում էին նպատակամղված օգտագործել **հունական բանակը**, իբրև փոխհատուցում Վենիզելոսին խոստանալով այն, ինչին երազում էր հույն ժողովուրդը:

1920 թվականի ապրիլի 20-ի նիստում Սան Ռեմոն հավաքվածները քննում էին

¹ ԳԱՀ, հատ. 10, Երևան, 1984, էջ 168: Տե՛ս նաև «История дипломатии», том III, Москва, 1965:

լրացուցիչ զինվորական միավորումներ ստեղծելու, զենքի ուժով ևս Թուրքիային հարկադրելու ենթարկվել Մուդրոսի զինադադարի որոշումներին, կատարելու այն, ինչ կիրանայեին մեծ տերությունները: Միացյալ գորքերի, միաժամանակ ֆրանսիական բանակի գլխավոր հրամանատար **մարշալ Ֆոշը** հարց բարձրացրեց բանակի քանակն այնքան մեծացնել, որ ինքը կարողանա Թուրքիային պարտադրել կատարելու պայմանագրի բոլոր կետերը:

Թողնենք թող խոսեն կոնֆերանսի մասնակիցները:

«**Մարշալ Ֆոշը** ասաց, որ իր ողջ կոմիտեն միաձայն համաձայն է, որ 27 դիվիզիան միմիմուն է: Իրականում, իր կոմիտեում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչները կամենում են առնվազն ևս երկու դիվիզիա, իսկ իտալական ներկայացուցիչները խնդրել են լրացուցիչ 4 դիվիզիաներ:

Սինյոր Նիտտին հարցում արեց, թե Հունաստանը քանի՞ դիվիզիա կարող է տրամադրել:

Պ-րն Վենիզելոսն ասաց, որ հունական վեց դիվիզիաներ կան Զմյուռնիայում, երեքը՝ Արևելյան Մակեդոնիայում, ռազմական պատրաստակաճություն վիճակում և մեկն էլ Եպիրոսում: Այնուհետև Հունաստանը չորս պահեստի դիվիզիա ունի, որոնք հեշտությամբ կարող են ռազմական պատրաստակաճության մեջ դրվել: Երբ մարշալ Ֆոշի կոմիտեն վերջին անգամ հանդիպեց Վերսալում քննարկելու այս հարցը, ներկա էր մեկ հունական ռազմական ներկայացուցիչ և արտահայտել էր իր տեսակետը գորքերի քանակի մասին, որ կպահանջվի պարտադրելու պայմանագիրն ամբողջությամբ վերցրած: Եթե Հայաստանը բաց առնվի, իր ռազմական էքսպերտների կարծիքով, գոյություն ունեցող ուժը բավական կլինի: Մարշալ Ֆոշը գտնում է, որ հավանորեն հունական տեսակետը սխալ է: Իր սեփական կարծիքն այն է, որ եթե Թուրքիան պետք է զինաթափ արվի և փոքրամասնությունների պաշտպանությունը երաշխավորվի, ապա գոյություն ունեցող ուժերը չեն կարող բավարար լինել:

Պ-րն Վենիզելոսն ասաց, որ վախենում է, որ պետք է ուղղի սկզբում տված թվերը: Նա այն տպավորության տակ էր, որ հունական ուժերը բավական կլինեն պարտադրելու պայմանագիրը այն ըմբռնմամբ, որ անհրաժեշտ չի լինի ուժեր տրամադրել Հայաստանին կամ հասնել Թուրքիայի զինաթափմանը: Նա կամենում է մատնանշել, թե որքան դժվար կլինի քշել թուրքական ուժերը դեպի երկրի խորքերը և զինաթափել նրանց: Նա կամենում է, որ պարզ հասկացվի, որ ինքը Հայաստանը լքելու գաղափար չի տվել: Հունական կառավարությունը լիովին պատրաստ է համագործակցել իր դաշնակիցների հետ, որպեսզի փրկի այդ երկիրը: Ինչ վերաբերում է Թուրքիայի զինաթափմանը, նա կարծում է, որ դա մի հարց է, որ պետք է առկախ մնա մինչև պարզվի, թե ինչ թուրքական կառավարություն կարող է լինել 4. Պոլսում, երբ պայմանագիրը կնքվելու լինի և ով պատրաստ կլինի ստորագրել այդ պայմանագիրը¹:

Պ-րն Լյոյո Ջորջը հարցրեց, թե որո՞նք են եկամուտների կենտրոնները և աղբյուրները Թուրքիայում: Իրեն թվում է, թե բոլորովին անհույս է ջանալ որսալ այն մարդկանց, որոնք այնքան գործունյա են, ինչպես «Անգորայի այծերը» ամբողջ Անատոլիայում: Եթե անգամ դաշնակից կառավարությունները 27 դիվիզիա էլ ավել ունենային, այդ գործին վերջ չէր լինի: Ուստի ինքն առաջարկում է, որ դաշնակից կառավարությունները ջանան ձեռք գցել Թուրքիայի կենսական մասերը, այնպիսի վայ-

¹ Սույն նյութերը բառացիորեն վերցված են «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Երևան, 1972, էջ 632-640:

րեր, ինչպես Տրապիզոնը, Բրուսան, Կոնիան և խեղդել Թուրքիան՝ գրավելով ստրատեգիական այդ կենտրոնները: Այս բանն անելու համար հազիվ թե կարիք լինի 27 դիվիզիա օգտագործել: Պ-րն Վենիզելոսն ասաց, որ եթե դաշնակիցներն օկուպացնեն Կ. Պոլիսը և նեղուցները ու կարողանան կտրել, ինչպես պ-րն Լլոյո Ջորջն առաջարկեց, եկամուտների այն աղբյուրները, որոնք Թուրքիան ստանում էր Չմյուռնիայից և այլ տեղերից, Թուրքիան չի կարողանա երկար դիմանալ: Նրա գլխավոր զարկերակները կկտրվեն, և նա ստիպված կլինի տեղի տալ:

Մարշալ Ֆոշն ասաց, որ եթե պայմանագիրը նախատեսում է Թուրքիայի զինաթափումը, քայլեր պետք է ձեռնարկվեն վնասագերծելու երկրի խորքերում ներկայումս գոյություն ունեցող բոլոր զենքերը, որոնցից շատերը թաքցված են: Բայց սա նշանակում է օկուպացնել լայնածավալ մի տերիտորիա: Նույնպես նման օկուպացում կպահանջվի, եթե փոքրամասնություններին համապատասխան պաշտպանություն է ցույց տրվելու: Խոսք չի կարող լինել այն մասին, որ թուրքերը Անատոլիայի խորքերում մեծ քանակությամբ զենք ունեն և ի վիճակի են դաշնակիցներին մեծ անհանգստություն պատճառել: Եթե, սակայն, դաշնակից կառավարությունները մտադիր չեն զինաթափել Թուրքիան և համապատասխան միջոցառումներ ձեռք առնել պաշտպանելու փոքրամասնություններին, ապա շատ ավելի փոքր ուժեր կպահանջվեն, քան հաշվել է իր կոմիտեն:

Մինյոր Նիտտին ասաց, որ ինքը ցանկանում է մեկ այլ հարց տալ: Ենթադրելով, որ Թուրքիան ընդունում է պայմանագիրը, այդ դեպքում Կ. Պոլիսը կկտրվի Ասիայից և նրա նշանակությունը շատ կփոքրանա: Մինչև այժմ Չմյուռնիան, քանի դեռ գտնվում էր թուրքական տիրապետության տակ, տալիս էր թուրքական եկամուտների 30 տոկոսը, մինչդեռ էրզրումը կազմում է դիմադրության հիմնական կետը: Այս պարագաներում Թուրքիան, բնականաբար, ուզում է Չմյուռնիան եկամուտների նպատակով, իսկ էրզրումը՝ որպեսզի նպաստի իրեն ունենալ դիմադրության կենտրոն՝ Մուստաֆա Զեմալի գլխավորությամբ: Էրզրումի գրավման և նրա վրա հսկողություն սահմանելու համար մեծ ուժեր են անհրաժեշտ, քանի որ թուրքական դիմադրությունն, անշուշտ, երկարատև և ուժեղ կլինի: Նա ցանկանում է հարցնել մարշալ Ֆոշին, թե ինչ ուժեր կպահանջվեն՝ ձնելու թուրքական գործողությունները Փոքր Ասիայի հարավում և արևելքում: Մարշալ Ֆոշն ասաց, որ այս հարցը լիովին անդրադարձված է իր զեկուցագրի 4-րդ կետում:

Մարշալ Ֆոշն ասաց, որ թուրքական զորքերը Թրակիայում նշանակալից թիվ չեն կազմում, բայց արագ զորակոչման միջոցով նրանք կարող են շտապ 30 000 մարդ հավաքել, որը համարժեք է մեկ բանակային կորպուսի: Դաշնակիցներն, իր կարծիքով, դժվարություն չեն ունենա այս ուժերի դեմ գործելու, քանի որ բավական մեծաթիվ դաշնակից զորքեր կան, որոնք հեշտությամբ կարող են ուղարկվել համալրման նպատակով: Էրզրումում, սակայն, ակնհայտ է, որ դրությունը բոլորովին այլ է: Դաշնակից զորքերն այնտեղից շատ են հեռու, որպեսզի կարողանան արագ ուժեղացվել և, անկասկած, շատ դժվար կլինի ասել, թե ինչ թվով մարդիկ պետք է մենք հավաքենք, որպեսզի կարողանան դիմագրավել որևէ ստեղծված իրադրության:

Պ-րն Միլերանն ասաց, որ ռազմական էքսպերտների տեսակետները և եզրակացությունները բոլորովին պարզ են, բայց, դժբախտաբար, նրանց զեկուցագիրը հաշվի չի նստում իրական փաստերի հետ, ինչպես որ նրանք դիտվել են Գերագույն խորհրդի կողմից: Այդ զեկուցագրում ռազմական էքսպերտները դիտարկում են երկու տարբեր հարցեր: Առաջին՝ անհրաժեշտ է օկուպացնել Թրակիան, Չմյուռնիան, Հայաստանը, նեղուցները, Հյուսիսային Սիրիան և Միջագետքը:

Այս շրջաններն օկուպացնելու համար էքսպերտներն ասում են, որ 19 դիվիզիա է անհրաժեշտ: Նրանք այնուհետև նշում են, որ այս տարբեր շրջանների փաստական օկուպացումը բավական չի լինի: Նրանք պետք է նաև լայն մասշտաբի ոստիկանական ուժ կազմակերպեն: Այնուհետև, որպեսզի իրագործվի պայմանագրով նախատեսված զինաթափումը և ապահովվի փոքրամասնությունների անվտանգությունը, կպահանջվեն խոշոր ուժեր. այլ կերպ ասած, ևս 8 դիվիզիա անհրաժեշտ կլինի համակենտրոնացվելու համար Հայդար-փաշա-Ալեքսանդրետ երկաթուղուց արևմուտք: Ռազմական էքսպերտները գտնում են, որ միասին վերցրած, առնվազն 27 դիվիզիա անհրաժեշտ կլինի, որոնցից այժմ միայն 19-ն է մատչելի: Պ-րն Վենիզելոսը հաղորդեց նրանց, որ ինքը կարող է տրամադրել լրացուցիչ երեք դիվիզիա, որոնք մատչելի դիվիզիաների ընդհանուր քանակը կհասցնեն 22-ի: Նա կամենում է հարց տալ Խորհրդին, թե ինչպես է նա լրացնելու հինգ դիվիզիայի պակասը:

Պ-րն Լլոյո Ջորջը մատնանշեց, որ Հայաստանի համար չորս դիվիզիա է պահանջվում: Եթե Հայաստանը զանց առնվի, միայն 23 դիվիզիա կպահանջվի և պ-րն Միլերանի կողմից վկայակոչված բացը կկազմի մեկ դիվիզիա: Այս առավոտ նրանք քննարկել են 40 000 հայերի զինելու հարցը, որոնք ի վիճակի կլինեն մղելու իրենց սեփական կոիվը նույն եղանակով, ինչ-որ հույները: Մինչև հիմա ուրիշ ազգեր են կոչվել հանուն հայերի: Առաջարկվեց, որ հայերը պետք է զինվեն և հնարավորություն ստանան անձամբ գործելու: Եթե նրանք ի վիճակի չեն պաշտպանել իրենց սեփական սահմանները, ապա ինքը կարծում է, որ աշխարհում նման մի ժողովրդից ոչ մի օգուտ չկա և դաշնակից կառավարություններից ոչ մեկն այս պարագաներում պատրաստ չի լինի օգնելու նրանց անգամ մեկ միակ գումարտակով: Այդպիսին էր առավոտյան հանդիպման ժամանակ Խորհրդի կարծիքը, երբ նրանք որոշեցին, որ պետք է հարցնել ռազմական էքսպերտներին, թե ինչ քանակությամբ զենք և հանդերձավորում կարող են նրանք ուղարկել Հայաստան:

Պ-րն Միլերանն ասաց, որ ինքն անձամբ բոլորովին պատրաստ է ընդունելու պ-րն Լլոյո Ջորջի առաջարկած լուծումը: Ինքը կատարելապես պատրաստ է օգնել հայերին առաջարկված ձևով՝ զենքով, և ջանալ նրանց դնել մի դրության մեջ, որպեսզի կարողանան պաշտպանել իրենք իրենց: Նա կարծում է, որ հայերը պետք է համապատասխան կերպով նախազգուշացվեն: Պողոս Նուբար փաշան այն կարծիքին է, որ Հայաստանում շուրջ 30 000 մարտիկներ կան, բայց ինքը կարծում է, որ փաշան ինչ-որ լավատես է: Ռազմական էքսպերտները նշեցին, որ մեկ դիվիզիան մոտավորապես 15 000 մարդուց է կազմված: Ինքը համաձայն է, որ Հայաստանին պետք է խնդրել տրամադրել երկու դիվիզիա կամ ընդհանուր առմամբ 30 000 մարտիկներ, բայց դա դեռևս դաշնակից կառավարություններին թողնում է երկու դիվիզիա պակաս ընդհանուր ուժերից, որ անհրաժեշտ են գտել ռազմական էքսպերտները: Նա հարցնում է, սակայն, էքսպերտների կարծիքը հայկական զորքերի իրական արժեքի մասին, և թե կարծո՞ւմ են նրանք, որ հայերն իսկապես 30 000 մարտիկներ կարող են տրամադրել և կարելի՞ է վստահել, որ այդ մարտիկները կկարողանան պաշտպանել իրենց երկիրը: Պ-րն Լլոյո Ջորջն ասաց, որ, իհարկե, այս զորքերը կազմակերպվելու են եվրոպացիների գլխավորությամբ:

Պ-րն Վենիզելոսն ասաց, որ ինքը միայն նոր հնարավորություն ունեցավ կարգալ մարշալ Ֆոշի կոմիտեի զեկուցագիրը: Վերսալում իրենց հանդիպման ժամանակ ռազմական և ծովային էքսպերտները դիտարկել են երկու հնարավորություններ, առաջինը՝ դաշնակից ուժերի կողմից Թուրքիայի տարբեր ստրատեգիական կետե-

րի անհապաղ և միաժամանակյա օկուպացիան և, երկրորդ, պայմանագրի անհապաղ կիրառումը: Էքսպերտներն անկեղծորեն գերադասել են երկրորդ այլընտրանքը, քանի որ, եթե այս ստրատեգիական շրջանները պետք է օկուպացվեն դաշնակից զորքերի կողմից, կպահանջվեն արտակարգ 8 դիվիզիա, կազմակերպելով ընդհանուր առմամբ 27 դիվիզիա: Էքսպերտներն այնուհետև ասում են, որ իրենց ծրագիրը նախատեսում է, իրենց տրամադրության տակ եղած ուժերից ելնելով՝

1. Օկուպացված տերիտորիաների ամրացումը:

2. Իշխանության տակ վերցնել այն տերիտորիաները, որոնք Թուրքիան զիջելու է եվրոպայում:

3. Հսկողության տակ առնել հաղորդակցության ճանապարհները Փոքր Ասիայում:

Հարցն այն է, թե առկա դաշնակից ուժերն ինչպես պետք է լավագույնս տեղակացվեն: Եթե նրանք գնալու են Հայաստան, նաև զինաթափելու են թուրքերին երկրի ներսում և այնուհետև պաշտպանելու փոքրամասնություններին, հսկայաթիվ ուժեր կպահանջվեն: Ինչ վերաբերվում է Հայաստանին, նա համաձայն է, որ եթե իրենք տան հրահանգիչներ, հանդերձավորում և զինամթերք, նա ի վիճակի կլինի երեք կամ չորս ամսում ոտքի հանել երկու դիվիզիա: Ինչ վերաբերվում է Թուրքիայի զինաթափման հարցին, ապա կրկնում է, որ, իր կարծիքով, դա կախված է այն բանից, թե ինչ կառավարություն կհաստատվի 4. Պոլսում և կընդունի թե ոչ պայմանագրի պայմանները: Ինչ վերաբերում է փոքրամասնությունների պաշտպանությանը, ինքը բնավ մտադիր չի եղել զորքեր ուղարկել համապատասխան շրջանները, որպեսզի օկուպացնեն և մնան այնտեղ:

Պ-րն Լլոյդ Ջորջն ասաց, որ դա, իհարկե, բոլորովին անհնար է:

Շարունակելով, պ-րն Վենիզելոսն ասաց, որ իր կարծիքով զորքերը, որոնք դաշնակից կառավարությունները կարող են ունենալ իրենց տրամադրության տակ, բավարար կլինեն ենթադրվող նպատակների համար, բացառությամբ այնպիսիների, որոնք վերաբերում են Հայաստանի պաշտպանությանը, փոքրամասնությունների ապահովությանը և զինաթափմանը: Սրանք, մատնանշեց նա, հարցեր են, որ վերաբերում են 4. Պոլսի թուրքական կառավարությանը:

Լորդ Քերզոնն ասաց, որ պ-րն Վենիզելոսն առաջարկեց այն, ինչ փաստորեն պայմանագրի առաջադիմական իրականացումն է այնքանով, որքանով մեր ուժերը թույլ են տալիս: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա պ-րն Վենիզելոսն ասաց. «Ձեռքեր մատակարարեք այդ մարտնչող ժողովրդին, տվեք նրանց զինամթերք ու հանդերձավորում, վարժեցրեք նրանց զենքերի օգտագործման մեջ և հրավիրեք նրանց պաշտպանել իրենց սեփական սահմանները»: Սակայն ինքը խնդրում է Գերագույն խորհրդին քննարկել, թե որո՞նք են այն սահմանները, որ պետք է մոծվեն պայմանագրի մեջ: Եթե դաշնակիցները ցույց տան պայմանագրում որոշակի սահմաններ, ապա նրանք, իր կարծիքով, պետք է պատասխանատվություն վերցնեն այդ սահմանների ամբողջականության համար: Հայկական սահմանային հանձնաժողովը, որը գումարվեց Լոնդոնում (ինքն անձամբ դրա անդամը չէ), մտադիր է երզրումը հանձնել Հայաստանին, քանի որ եթե այս մեծապես հզոր ամբողջ թողնվի թուրքերի ձեռքին, մշտական սպառնալիք կդառնա Հայաստանի անվտանգության համար: Եվ ապա դաշնակիցների վրա ճնշում գործ դրվեց Հայաստանին դեպի ծով ելք տալու հարցում, հատկապես Տրապիզոնի վրայով: Այնուհետև առաջարկվեց Հայաստանի սահմանն անցկացնել Վանա լճից ներքև, որը կընդգրկի երկրի մի մեծ տարածություն, որտեղ հայերը փոքրամասնություն են կազ-

մում, և որը օկուպացված է թուրքական զորքերի կողմից: Նա անձամբ մտածում է, որ երկար ժամանակ կպահանջվի նախքան Հայաստանը և իր նոր բանակը ի վիճակի կլինեն պաշտպանել իրենք իրենց, առանց արտաքին աջակցության: Դաշնակից կառավարությունները համաձայնվեցին, որ չեն կարող զորքեր ուղարկել Հայաստան: Այդ դեպքում պահպանվելու են պայմանագրում իրենց նշված սահմանները, թե այդ սահմանները պետք է փոփոխությունների ենթարկվեն: Սա, իր կարծիքով, կենսական հարց է և պետք է միանգամից լուծվի:

Շարունակելով, պ-րն Լլոյդ Ջորջն ասաց, որ նշանակալից հունական ուժեր կան Ջնյունիայում: Հետևաբար, միայն երկու տեղ կա, որտեղ դաշնակիցները թույլ են և դրանք են Հայաստանն ու Թրակիան: Մարշալ Ֆոշը նշեց, որ ինքը Թրակիայով մտահոգված չէ, քանի որ այն կտրված է բուն թուրք ազգաբնակչությունից, ինչպես նաև նրանց մատակարարող ռազմական կայաններից: Հետևաբար, նրանք չեն կարող պատերազմ մղել այդ շրջանում: **Մնում է միայն Հայաստանը:** Մարշալ Ֆոշը նշեց, որ դաշնակիցները չեն կարող պաշտպանել փոքրամասնություններին Թուրքիայում առանց ռազմական ուժերի ճնշող ցուցադրման: Ինքն անձամբ կասկածում է, թե արդյոք դաշնակիցները երբևէ կկարողանան իսկապես պաշտպանել փոքրամասնություններին ավազակախմբերից, որոնց անհնարին է հետապնդել երկրի ներսում: Ուժի հետագա ցուցադրումը միայն այն արդյունքը կարող է ունենալ, որ գոյություն ունեցող թուրքական ուժերը կսփռվեն ողջ երկրով մեկ: Կոտորածների վտանգը գլուխ է բարձրացրել անպատասխանատու բանդիտներից, որոնք չեն ճանաչում թուրքական կառավարությանը: Հայաստանը պաշտպանելու երկու եղանակ կա: Առաջինը՝ սպաներով ապահովել, հանդերձավորել և վարժեցնել հայկական նոր բանակը և ապա թույլ տալ Հայաստանին ցուցադրելու գոյության իր իրավունքը: Ասում են, որ հայերը լավ են կռվում, ուստի, հավանաբար, նրանք պետք է որ ի վիճակի լինեն հարկ եղածին պես պաշտպանել իրենց: Գերագույն խորհուրդը ելնում է այն ենթադրությունից, որ Միացյալ Նահանգները Հայաստանի հարցում ոչ մի օգնություն չեն տա: Սակայն ինքը կարծում է, որ դաշնակիցները պարտավոր են Վաշինգտոնի կառավարությանն այնպիսի վիճակի մեջ դնել, որի դեպքում նա կամ պետք է համաձայնվի օգնել և կամ հրաժարվի: Եվ ինքը ենթադրում է, որ այս երկընտրանքը պետք է դրվի նրա առջև: Հանդիպումից անմիջապես առաջ ինքը խոսել է մարշալ Ֆոշի հետ այդ նյութի շուրջ, և մարշալը մեծապես հօգուտ իր առաջարկության արտահայտվեց: Դրա համար էլ նա առաջարկեց, որպեսզի Միացյալ Նահանգներին տեղյակ պահեն, որ դաշնակից տերություններն այժմ իրենց ուսերին անհնարին բեռ են կրում. հետևաբար իրենք պետք է կոչ անեն Միացյալ Նահանգներին իրենց վրա վերցնել այդ բեռի մի մասը և երկու կամ երեք դիվիզիա ուղարկել օգնելու հայկական պետության կազմավորմանը: Եթե Միացյալ Նահանգները հրաժարվեն, ապա թող հրաժարումը որոշակիորեն արտահայտվի: Միացյալ Նահանգների մասնակցելու պահանջը լիովին խելամիտ բան է: Այստեղ դաշնակիցների կողմից իրենց բեռից խուսափելու հարց չկա, բայց արդեն իսկ նրանք չափից դուրս շատ պարտականություններ ունեն՝:

Լորդ Քերզոնը հարցրեց, թե իրեն թույլ կտա՞ն հավելումներ անել պ-րն Լլոյդ Ջորջի ասածներին: Ինքն անձամբ զգում է, որ շատ կարևոր է, որպեսզի ամերիկյան օգնության պահանջը ելնի Գերագույն խորհրդից: Մյուս միակ օրգանը, որ կարող է նման պահանջ առաջ քաշել, Ազգերի լիգան է, բայց Վաշինգտոնի կառավարու-

¹ Կոնֆերանսի նիստերի տղազրությունը և պայմանագրի նախագծի լրիվ տեքստը տե՛ս «Documents on British Foreign Policy 1919-1939» First series, Vol. VIII, London, 1958, pp. 20-26, 35-113.

թյունը հենց նոր հրաժարվել է վավերացնել պայմանագրի այն մասը, որ վերաբերում է Ազգերի լիգային: Կա մի այլ հարց ևս. պ-րն Լյուդ Ջորջը խորհուրդ տվեց, որ Միացյալ Նահանգներին դիմումը կարող է արվել կամ իբրև այն նուտայի մի մասը, որ շուտով ուղարկվելու է նրանց և կամ իբրև առանձին հաղորդագրություն: Ինքն անձամբ գտնում է, որ դիմումը պետք է արձանագրվի այն նուտայում, որ խորհուրդը շուտով հրապարակելու է, և ինքը ենթադրում է, դա ավելի կոժվարացնի Միացյալ Նահանգների համար նուտայի մնացյալ մասի նկատմամբ բժախնդրություն հանդես բերելը: Հետևաբար, ինքն առաջարկում է, որ իրենք կամ պետք է վերանայեն նուտան, որն ուղարկվելու են ի պատասխան պրեզիդենտի վերջին գրության, կամ մեկ լրացուցիչ պարագրաֆ պետք է ավելացնեն: **Քացի այդ, նա առաջարկում է, որպեսզի Միացյալ Նահանգները հրավիրվեն՝ ընդունելու Հայաստանի մանդատը:** Այս առաջարկը դեռևս բնավ չի արվել Միացյալ Նահանգներին, և մինչև այժմ հնարավորություն չի տրվել նրանց կամ ընդունելու և կամ հրաժարվելու մանդատից: Ինքը կարծում է, որ Ամերիկային կարելի է խնդրել օգնություն ցույց տալ երկու եղանակով, և դրանք դաշնակիցները պետք է ներկայացնեն նրա քննարկմանը՝ (ա) ռազմական հարցը և (բ) ֆինանսական հարցը: Իրեն տեղեկացրել են, որ Ամերիկան հեշտությամբ կարող է 10000 կամ ավելի մարդ հատկացնել, և որ նա հավասարապես կտա 4 կամ 5 միլիոն ստերլինգ՝ կամ իբրև կառավարական մուծում, կամ մասնավոր հանգանակության միջոցով: Իբրև եզրակացություն նա առաջարկում է, որպեսզի ողջ հարցը դրվի ամերիկյան կառավարության առջև, և որ այդ կառավարությանը պետք է խնդրել տրամադրել իր ուժերին ներածին չափ հնարավոր օգնություն»¹:

Կոնֆերանսում Հայաստանին վերաբերող բարձրացված հարցերին պատասխանելու առաջարկով խոսելու ձայն տրվեց **Ավետիս Ահարոնյանին:** «Պարոն Ահարոնյանն ասաց, որ իրադրությունը, ինչպես հարցրեց սինյոր Նիտտին, կարելի է բաժանել երկու մասի. առաջինը՝ թուրքերի դրությունը և նրանց ուժերի տեղակայումը. և երկրորդ, հայկական բանակի չափը և պատրաստվածությունը: Հայկական շտաբային սպաները գեկուցում են, որ Մուստաֆա Քեմալի հրամանատարության ներքո գտնվող զորքերը իրականում շատ ավելի վատորակ են, քան պատկերացվում էր: Ավելին, այս զորքերը, փոքր բացառությամբ, կանոնավոր զորքեր չեն: Թերևս նրանք կարող են կազմված լինել շուրջ 1000 կամ 2000 հեծելազորից, բայց մյուս դեպքերում կազմված են քրդերից և գյուղացիներից: Չհաշված կանոնավոր զորքերը, մնացյալները վատ են հանդերձավորված, վատ են վարժեցված և վատ են ղեկավարվում:

Այնուհետև հայկական պատվիրակությունը վկայություն ունի, որի արժանահավատությունը վստահելի է և որը ցույց է տալիս, որ երբ երգրումի նահանգի բնակիչները լսեցին այն հավանականության մասին, որ այդ շրջանը հանձնվելու է Հայաստանին, նշանակալից թվաքանակով սկսեցին լքել և հեռանալ այնտեղից: Շարունակելով, պ-րն Ահարոնյանն ասաց, որ հայերը 20.000-ից 25.000-անոց մի բանակ ունեն: Իրենց գլխավոր դժվարությունը զինամթերքի և հանդերձանքի պակասն է: Ինքը կամենում է հիշեցնել Գերագույն խորհրդին, որ հայկական բանակը հարկադրված է շարունակել պայքարն առանց զինամթերքի կամ դաշնակիցների կողմից որևէ այլ օգնության: Եթե ինքը հավատալու լինի իր սեփական ռազմական էքսպերտներին, որոնք առավելություն են ունեցել ռուսների հետ կողք-կողքի կռվելու պատերազմի ընթացքում, հնարավոր կարող է լինել հաջորդ երկու կամ երեք ամսվա ընթացքում ոտքի հանել 40.000-ից

¹ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 3/34, էջ 38-39:

ոչ պակաս մի բանակ¹: Այդ բանակի համար եական է, սակայն, հանդերձավորվել և զինամթերք ստանալ դաշնակիցներից, որ նրանք վայելեն այն հեղինակությունը, որ կստանան դաշնակից տերությունների հետ համագործակցելուց. առանձնապես նրանք կկամենային մարտնչել դաշնակիցների դրոշմների ներքո: Ամենը, ինչ իրենք խնդրում են, բացի զինամթերքից ու հանդերձանքից, նաև սպաներ են, և եթե դա էլ շնորհիվ իրենց, ինքը բոլոր հույսերն ունի, որ կարճ ժամանակամիջոցում հայկական բանակն ի վիճակի կլինի առաջ շարժվել և գրավել նահանգը: Այնուհետև գործնականում ինքը համոզված է, որ հայերը, զորացած, ինչպես նշեց ինքը վերևում, ի վիճակի կլինեն ոչ միայն երգրումը վերցնել, այլև գրավել մյուս նահանգները, թեև սա կարող է նրանց որոշակի դժվարություններ պատճառել, հատկապես Վանի նահանգի գրավումը: **Ինքը կամենում է նշել, որ երևանը Հայաստանի իսկական մայրաքաղաքը չէ, այլ միայն նահանգային քաղաք: Ով իր ձեռքին ունենա երգրումը, նա էլ ի վիճակի կլինի տիրապետել մնացյալ նահանգին և, անկասկած, ողջ Հայաստանին: Հենց այս պատճառով էր, որ ռուսները երկարատև ռազմարշավ վարեցին, քանի որ պատկերացնում էին, որ երգրումին տիրապետելն անհրաժեշտություն է: Առանց երգրումի անհնարին է պատկերացնել ապահով հայկական պետություն:**

Պրն Լյուդ Ջորջը միջամտեց հարցնելու համար, թե որքա՞ն է փաստորեն գոյություն ունեցող բնակչությունը:

Պրն Ահարոնյանն ասաց, որ Կովկասի հայկական հանրապետության բնակչությունը մինչև 1.292.000 է, ներառյալ ռուսներին, հույներին, քրիստոնյաներին և ասորիներին: Մինչ այս վիճակագրական տվյալները ձեռք են բերվել, մեծ թվով հայեր են վերադարձել իրենց երկիրը: Պատասխանելով մի հարցի, նա ասաց, որ թաթարների թիվը մոտ 300.000 է: Ներկա թվերը, որքանով որ հարցը երգրումի վիլայեթին է վերաբերում, հետևյալն են՝ 240.000 թուրքեր և 230.000 քրիստոնյաներ: Սրանք ցույց են տալիս թուրքերի աննշան գերակշռություն, բայց ինքը կամենում է մատնանշել, որ թուրքերն այս թվի մեջ ներառում են իրենց զինվորական կայազորները, որոնք հաշվում են շուրջ 40. 000 մարդ:

Պրն Լյուդ Ջորջը նշեց, որ թուրքական վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ երգրումի վիլայեթում ավելի քան 800.000 բնակչություն կա:

Պրն Ահարոնյանը կարծում է, որ այս դեպքում թուրքական վիճակագրական տվյալները հավանաբար մեծապես չափազանցված են, մի բան, որ սովորական է: Հայկական վիճակագրական տվյալները պատրաստված են եվրոպական հիմունքներով: Բնականաբար, հավանական է, որ պետք է տարբերություններ լինեն:

Սինյոր Նիտտին ասաց, որ հարցը հետևյալն է: Հաշվվում է մոտավորապես 15.000 թուրք երգրումում և շրջակայքում: Հայերը, թուրքական բանակին դեմ հանդիման գտնվելուց բացի, կռվում են նաև ադրբեջանցիների հետ: Ինքը հարցնում է պրն Ահարոնյանին, այս տեսանկյունից կարո՞ղ է նա լույս սփռել ներկա իրադրության վրա:

Պրն Ահարոնյանն ասաց, որ ինքը ի վիճակի չէ ծիշտ թվեր տալ թուրքական բանակի թվաքանակի վերաբերյալ: Ինքը ցանկանում է ծանոթացնել Գերագույն խորհրդին այն փաստի հետ, որ հայերն իրականում ադրբեջանցիների հետ պատերազմի մեջ չեն: Սահմանների վրա մասնակի կռիվներ են գնում, բայց դա պատերազմական վիճակ չէ: Ավելին, այդ կռիվները կդադարեն, հենց որ տերությունները որոշակիորեն հաստատեն երկրի սահմանները: Հայաստանի Հանրապետության և կառավարության մտադրությունն է բոլոր շրջապատող պետությունների համար լավ հարևան լինել:

¹ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 3/34, էջ 54-55:

(այստեղ պրն Ահարոնյանը հեռացավ նիստերի դահլիճից)»¹:

Նիստում Իտալիայի վարչապետ Նիտտին ընդգծեց, որ Թուրքիայի սահմանների որոշման գործում Հայաստանի հարցը կարևոր տեղ է զբաղեցնում: Առանց երզրումի դժվար է կառուցել Հայաստան պետությունը: Նա հարցրեց, թե, վերջապես, Հայաստան պետությունը Հայաստանի Հանրապետությունո՞վ է սահմանափակվելու, թե՞ ընդգրկելու է նաև երզրումը: Վերջին դեպքում սոսկ ու միայն հայկական զինուժն է երզրումը զրավելու թուրքերից, մինչդեռ այստեղ թուրքերն ունեն 4 դիվիզիա: **Ֆրանսիայի ներկայացուցիչ Բերտելուն իր մտքերն ամփոփեց հետևյալում՝**

ա) Առանց երզրումի չկա Հայաստան:

բ) Ռազմական փորձագետները Հայաստանի դեմ Թուրքիայի հնարավորությունները չափազանցում են:

գ) Պայմանագրով երզրումը Հայաստանին հանձնելը օրենք կլինի Թուրքիայի համար:

դ) Դ՞՞-ը կազմակերպված պետություն է:

Նիստում Բրիտանիայի վարչապետ **L. Ջորջի մտքերն ամփոփվում են հետևյալում՝**

ա) երզրումը Հայաստանին հնարավոր է կցել միայն զենքի ուժով, բայց իր երկիրն այդ դրությամբ Բաթումում ընդամենն ունի 2 զուևարտակ, որտեղի՞ց կտա 2 դիվիզիա այդ նպատակով:

բ) Հայաստանը կարող է համակերպվել առանց երզրումի և Տրապիզոնի:

գ) Դ՞՞-ին պետք է կցել միայն հայահոծ տարածքներ:

դ) Պայմանագիրը թուրքերը չեն կատարի:

ե) Մեծ Հայաստանի ստեղծումը կառաջացնի իրենց հպատակ Հնդկաստանի և այլ երկրների մահմեդականների դժգոհությունը:

զ) Միայն ԱՄՆ-ը կարող է ստեղծել Մեծ Հայաստան:

Դրանից անմիջապես հետո Ֆրանսիայի վարչապետ Միլերանը Լլոյդ Ջորջին առաջարկեց ԱՄՆ-ի նախագահին հարցնել, թե նրա երկիրը կընդունի՞ Հայաստանի մանդատը, եթե բացասական լինի պատասխանը, ապա խնդրել ԱՄՆ-ի նախագահին «Հանդես գալու միջնորդի դերում և ասել, երզրումը պետք է չեզոքացվի՞, թե՞ կազմի Հայաստանի մասը»: Լլոյդ Ջորջը Միլերանի առաջարկին հավանություն տվեց և ասաց. «Կարևոր է ազատվել այս հարցից, որն արդեն երկու օր խլեց, և չպետք է թույլ տալ, որ երրորդ օրն էլ խլի»²:

Կոնֆերանսի 1920 թ. ապրիլի 24-ի նիստում, բացի վերոհիշյալ տերությունների ղեկավարներից, ներկա էին ԱՄՆ-ի դիտորդները՝ Հռոմում ԱՄՆ-ի դեսպան Ռոբերտ Անդերվուդ Ջոնսոնի գլխավորությամբ: Հայաստանի հարցի վերաբերյալ քննարկումներն ավարտվեցին, և ընդունվեց նախագիծ պայմանագրում Հայաստանին վերաբերող դրույթների և նախագահ Վիլսոնին հայ-թուրքական սահմանատուներում որպես միջնորդ հանդես գալու խնդրանքի մասին: **Նիստի արձանագրության այդ հատվածն անհրաժեշտաբար մեջ ենք բերում ստորև. «Մինյոր Նիտտին ասաց, որ երեկ Գերագույն խորհրդի առջև դրված առաջին հարցը երզրումի և Հայաստանի սահմանների վերաբերյալ քննարկումը շարունակելն է: Նախորդ օրը պրն Լլոյդ Ջորջն առաջարկեց, որ պետք է հեռագիր ուղարկվի պրեզիդենտ Վիլսոնին: Ինքը հասկանում է, սակայն, որ դրանից հետո դրության մեջ որոշ փոփոխություն է տեղի ունեցել: Ինքն անձամբ լիովին հակված է ըստ էության համաձայնվել պրն Լլոյդ Ջորջի առաջ քաշած առաջարկության հետ:**

Պրն Լլոյդ Ջորջն ասաց, որ այս առավոտ ինքը հնարավորություն է ունեցել քննարկելու հարցը պրն Միլերանի հետ, որն առաջարկություն ունի անելու Գերագույն խորհրդին:

Պրն Միլերանն ասաց, որ այսօր առավոտյան պրն Լլոյդ Ջորջի հետ ունեցած խոսակցության ընթացքում բրիտանական պրեմիեր-մինիստրը մատնանշեց մի լուծում, որն ինքն այժմ կներկայացնի խորհրդին և որի մասին խորհրդի նախագահը հենց նոր ակնարկեց: Ինքն անձամբ կասկածում է, որ Միացյալ Նահանգները համաձայնվի գործել ըստ էության: Սակայն իրենք չէին ցանկանա վերադառնալ երեկվա դրությանը: Ինքն այսօր առավոտյան առաջարկել է պրն Լլոյդ Ջորջին, որ իրենք պետք է դիմեն Միացյալ Նահանգներին՝ վերցնելու Հայաստանի համար պատասխանատվությունն իրենց վրա: Եթե նրանք հրաժարվեն այդ անել, ապա խնդրել նրան գործել իբրև միջնորդ և այդ առումով էլ որոշել՝ երզրումը թողնվելու է թուրքերի՞ն, դիտվելու է իբրև չեզոք գոտի՞, թե՞ հանձնվելու է հայկական նոր պետությանը:

Մինյոր Նիտտին ասաց, որ ինքն անձամբ ոչ մի առաջարկություն չունի այդ առաջարկության դեմ: Թուրքերը, սակայն, հաջորդ ամսի 10-ին հրավիրված են Փարիզ, ուստի և անհրաժեշտ է մինչև այդ ամսաթիվը պայմանագիրը լինի այնպիսի ձևում, որպեսզի կարելի լինի ներկայացնել թուրքական ներկայացուցիչներին:

Պրն Լլոյդ Ջորջն ասաց, որ իր առաջարկությունն էր՝ խնդրել Միացյալ Նահանգներին ընդունել Հայաստանի մանդատը: Եթե նրանք համաձայնվեն, ինչպես, իր կարծիքով, խորհուրդը հույս ունի, միակ անհրաժեշտ բանը, որ մնում է՝ պայմանագրի մեջ հարկ եղած կետը դնելն է: Եթե նրանք հրաժարվեն, ապա պետք է խնդրել Վաշինգտոնի կառավարությանը հանդես գալ իբրև միջնորդ: Կարելի է պայմանագրի տեքստում նշել, որ երզրումի բախտը պետք է թողնել Միացյալ Նահանգների պրեզիդենտի լուծմանը, որը գործելու է իբրև միջնորդ, և որ բոլոր կողմերը համաձայն են հետևել նրա որոշմանը: Սա է, իր իմացությամբ, պրն Միլերանի առաջարկությունը:

Լորդ Քերզոնն ասաց, որ ինքն այնպես եզրակացրեց, որ պրն Միլերանը նախ և առաջ առաջարկեց Հայաստանի մանդատն առաջարկել Միացյալ Նահանգներին: Եթե հարցն այդ է, իր կարծիքով, պետք է ճշտորեն սահմանել նամակի արտահայտությունները: Իրենց նախորդ հանդիպումներից մեկի ժամանակ Գերագույն խորհուրդն իրեն խնդրեց նախագծել պրեզիդենտին դիմումի մի ձև, բայց այն ժամանակ այնպես հասկացվեց, որ Միացյալ Նահանգները գրեթե որոշակիորեն մերժելու են ընդունել մանդատը: Համապատասխանաբար դիմումը պետք է հիմնվեր այն ենթադրության վրա, որ Միացյալ Նահանգները գուցե պատրաստ լինեն սպաներ տրամադրել, ինչպես նաև խիստ նշանակալից ֆինանսական ներդրումներ անել: Անշուշտ, երբ այս առաջարկությունը խորհրդի առջև էր, պրն Բերտելուն ասաց, որ ամբողջ հարցը, իր բնույթով, գլխավորապես ֆինանսական է և ինքն իր նախագիծը պատրաստեց համաձայն դրան³:

Լորդ Քերզոնն ասաց, որ ցանկանում է մի փոքր կետի վրա կանգ առնել, որն անհրաժեշտ է նախագծող կոմիտեի տեսակետից: Հնարավոր չէ որոշել ներկա Հայաստանը Թուրքիայի հետ կնքվող պայմանագրում, որովհետև դա Ռուսահայաստանն է: Երևանը վերցված է Ռուսաստանից և Թուրքիան ոչ մի առնչություն չունի նրա հետ: Իր տեսակետով, Թուրքիայի հետ հաշտության պայմանագրում կամ չպետք է լինի Հայաստանին վերաբերող բաժին, կամ նոր Հայաստանի սահմանները պետք է սահմանվեն ինչ-որ աստիճանի ճշտությամբ:

Պրն Լլոյդ Ջորջն ասաց, որ ինքն առանձին դժվարություն չի տեսնում անհրաժեշտ նախագիծը պատրաստելու հարցում և լիովին պատրաստ է հանձն առնել դա:

¹ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 3/34, էջ 55-56:

² Տիգրան Սահակյան, նշված աշխատությունը, էջ 243-244:

³ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 3/34, էջ 62:

(Բրիտանական պրեմիեր-մինիստրը հանձն առավ նախագծել մի հողված Չայաստանի սահմանների վերաբերյալ, որը կփոխարինի ներկա հայկական բաժնին և հասցնել այն պրեզիդենտ Վիլսոնի քննարկմանը):

Մինյոր Նիտտին ասաց, որ նախորդ օրը ցերեկվա իրենց հանդիպման ժամանակ պարն Լլոյդ Ջորջը բրիտանական պատվիրակության անունից հանձն առավ այս առավոտ Գերագույն խորհրդին ներկայացնել քննարկման եզրակացությունների որոշ նախագիծ ապագա Չայկական պետության սահմանների վերաբերյալ:

Ապա պաշտոնական թարգմանիչը ֆրանսերեն և անգլերեն լեզուներով ընթերցեց բրիտանական նախագիծը.

(ա) դիմել պրեզիդենտ Վիլսոնին, որպեսզի Ամերիկայի Միացյալ Նահանգները ընդունեն Չայաստանի մանդատը այն սահմաններում, որոնք տրված են Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի առաջին տարբերակում:

(բ) եթե Ամերիկայի Միացյալ Նահանգները չկամենան ընդունել մանդատը, Միացյալ Նահանգների պրեզիդենտին խնդրվում է հանդես գալ իբրև միջնորդ Չայաստանի սահմանների հարցում, ինչպես ասված է ստորև բերվող նախագծային հողվածում:

(գ) Դետևյալ իմաստով հողված պետք է մտցվի հաշտության պայմանագրում՝ Չայաստանի վերաբերյալ:

Թուրքիան, Չայաստանը և մյուս բարձր պայմանավորվող կողմերը համաձայն են դիմել Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտի միջնորդությանը Թուրքիայի և Չայաստանի սահմանների հարցում՝ էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում և ընդունել այդ առթիվ նրա որոշումը, ինչպես նաև որևէ պայման, որ նա կառաջարկի դեպի ծով Չայաստանի անկախ պետության ելքի մասին:

Մինչև միջնորդությունը, Թուրքիայի և Չայաստանի սահմանները մնալու են ներկա վիճակում:

Չայաստանի սահմանները հյուսիսում և արևելքում, այն է՝ Չայաստանի և Վրաստանի, Չայաստանի և Ադրբեջանի համար դեպի ծով ելք տրվելու են Գերագույն խորհրդի կողմից միևնույն ժամանակ, ինչ-որ Չայաստանի և Թուրքիայի միջև, չունենալով նույնիսկ այդ մասին կովկասյան երեք պետությունների կամավոր համաձայնությունը:

(դ) Նախագծային կոմիտեն, անհրաժեշտության դեպքում, խորհրդակցելով կոնֆերանսի մյուս հանձնաժողովների հետ, ուղղումներ կմտցնի համապատասխանաբար պայմանագրի V բաժնի II մասում և կանի մյուս բոլոր դրանից բխող փոփոխությունները:

Պ-րն Բերտելոն ֆրանսիական պատվիրակության անունից ասաց, որ ինքն ընդունում է նախագիծը:

Մինյոր Նիտտին ասաց, որ ինքն առարկություն չունի և պաշտոնապես առաջարկում է ընդունել նախագիծը:

Պ-րն Լլոյդ Ջորջը հարցում արեց, թե եզրակացությունները պրեզիդենտ Վիլսոնին ներկայացնելու են Դոնում Միացյալ Նահանգների դեսպանի միջոցով, որը մասնակցում է իրենց նիստերին, Գերագույն խորհրդի նախագահի միջոցով, թե՛ երկուսն էլ փոխանցելու են դրանք:

Լորդ Զերզոնը հիշեցրեց Գերագույն խորհրդին, որ մի քանի օր առաջ իրեն խնդրել էին ճեպագիր կազմել պրեզիդենտ Վիլսոնին ուղարկելու համար՝ ի պատասխան նրա նոտայի: Դամաձայնվել էին, որ նախագիծը ոչ այնքան դիմում է լինելու Միացյալ Նահանգներին ընդունելու Չայաստանի մանդատը, որքան առաջարկ՝ օգնելու սպաներ և զինամթերք տրամադրելով և ավելի ևս ֆինանսական օգնություն ընձե-

ռելով: Նա հարցրեց, արդյոք ներկա դրությունն անկախ է լինելու նրանից, որը հանձնարարվելու էր իրեն կազմել: Ինքն անձամբ հակված չէ չափից դուրս շատ գրություններ ուղարկել և գտնում է, որ երկու նախագծերը լավ կլինեք միացնել:

Պ-րն Լլոյդ Ջորջը կարծում է, որ կարևոր է առաջին հերթին պարզել, թե Միացյալ Նահանգները պատրաստ է վերցնել մանդատը, նախքան առաջարկելը, որ նրանք զինամթերք և ֆինանսական օգնություն տրամադրեն:

Պ-րն Միլերանը գտնում է, որ Չայաստանի վերաբերյալ Գերագույն խորհրդի եզրակացությունները պարունակող հղվելիք գրության մեջ կարելի է ակնարկել պրեզիդենտ Վիլսոնի նոտայի մասին:

Լորդ Զերզոնը առաջարկեց, որպեսզի բրիտանական պատվիրակությունը հաջորդ օրը նոր նախագիծ ներկայացնի քննարկման:

Դամաձայնվեցին.

(ա) Ընդունել նախագծի եզրակացությունները Չայաստանի վերաբերյալ՝ ներկայացված քննարկման բրիտանական պատվիրակության կողմից:

(բ) Որ բրիտանական պատվիրակությունը Գերագույն խորհրդի քննարկմանն է ներկայացնելու մի նոր նախագիծ հաջորդ առավոտյան, որն արտացոլի արված եզրակացությունները և ակնարկ պարունակի պրեզիդենտ Վիլսոնի նոտայի մասին»:

Սան Ռեմոյի կոնֆերանսի 1920 թ. ապրիլի 20-ի Դոնաստանի վարչապետ Վենիզելոսը, ինչպես նշել ենք քիչ վերևում, համաձայն էր եղել, որպեսզի Անտանտի և Թուրքիայի միջև կնքվելիք հաշտության պայմանագրում Տրապիզոնը զիջվի Չայաստանին: Արժանահիշատակ է, որ դեռևս 1920 թ. հունվարի 1-ին Չայաստանի Դանրապետություն այցելած Պոնտոսի հույն մետրոպոլիտ Թրիսանֆը, որը Վենիզելոսի մոտ գործակիցն էր և Փարիզում Պոնտոսի պատվիրակության նախագահը, ԴԴ կառավարությանն առաջարկել էր կարգավորել հայ-պոնտական փոխհարաբերությունները և աջակցել միմյանց: Այդ ընթացքում նա առաջարկել էր, որ՝

1. Կամ Պոնտոսի Դանրապետությունը դառնա ԴԴ-ի դաշնակցային (ֆեդերատիվ) մի մասը,

2. Կամ Պոնտոսը լինի անկախ, բայց Չայաստանի Դանրապետության հետ կազմի մի ֆեդերատիվ կառուցվածքով պետություն,

3. Երկու անկախ պետություններն իրար հետ կապվեն զինակցությամբ: Պատրիարք Թրիսանֆի և ԴԴ-ի միջև համաձայնություն կայացվեց, որով.

«1. Պոնտոսը մտնում է ԴԴ-ի մեջ որպես նրա ֆեդերատիվ մաս իր ինքնավար Սեյմով:

2. Չայկական և Պոնտոսի պատվիրակությունները Փարիզի վեհաժողովում կգործեն համատեղ:

3. Եթե երկուսն էլ չստանան անկախություն, ապա երկուսն էլ համատեղ քայլեր էին ձեռնարկելու՝ ընդհուպ մինչև ապստամբության բարձրացում, մինչև որ կճանաչվեին նրանց անկախությունները:

4. Այդ պայմանադրությունը համաձայնեցվում է հույն և հայկական պատվիրակությունների գործունեությանը Փարիզում, ինչպես նաև Վեհաժողովի որոշելիք սահմաններին»:

Դաշնակիցների կողմից Սան Ռեմոյում մշակված պայմանագրի նախագիծը, սակայն, չընդունվեց սուլթանական կառավարության կողմից: Նախագծի «քննարկմանը» մասնակցելու նպատակով 1920 թ. մայիսի 11-ին Փարիզ ժամանած թուրքական պատվիրակությանը՝ Թևֆիկ փաշայի գլխավորությամբ,

¹ Տիգրան Սահակյան, Ցավալի պայմանագրեր, Երևան, 2007, էջ 247-248:
² Միմոն Վրացյան, Չայաստանի Դանրապետություն, Երևան, 1993, էջ 383:

առաջարկվեց առանց քննարկման ստորագրել պայմանագիրը: Պատվիրակությունը հրաժարվեց պայմանագիր կնքել վերը թվարկված պայմաններով և մեկնեց 4. Պոլիս՝ իր հետ տանելով պայմանագրի նախագիծը: Տեսնելով, որ անգամ Անտանտից կախված 4. Պոլիսի կառավարությունը չի համարձակվում տերիտորիալ զիջումներ նախատեսնող պայմանագիր կնքել դաշնակից պետությունների հետ, ֆրանսիական դիվանագիտությունն Անկարայի կառավարության հետ համաձայնության գալու և Կիլիկիայում ռազմական գործողությունները դադարեցնելու նոր դիրքորոշում որդեգրեց:

Սան Ռեմոյի կոնֆերանսը փաստորեն փորձաքար էր Առաջին աշխարհամարտի արդյունքներն ամփոփելու՝ հակամարտություններով հարուստ ու դժվարին այդ ճանապարհին: Լոնդոնի և Փարիզի կաբինետների առաջարկով, Գոմի և Տոկիոյի համաձայնությամբ, 1920 թվականի օգոստոսի 10-ին Ֆրանսիայի արվարձանային Սևր քաղաքում գումարվեց միջազգային, մարդաշատ մի համաժողով, որն իր բացառիկությամբ մնաց համաշխարհային պատմության էջերում:

Նայասփանը Սևրի պայմանագրում

Պատմության ետնախորքից սկսած, հայ ժողովրդի հազարամյակների անցած ճանապարհների խաչուղիներում եզակի են, երբեմն էլ հազվադեպ միջազգային իրավական այն ակտերը, որոնք, բախտորոշ դառնալով, խոր ակոս գծեն նրա հետագա զարգացման առաջընթացի մայրուղու կրծքին: Թերևս այդ ընտրամուց էլ առանձնանում է Սևրի Գաշտության պայմանագիրը, որի արդարամտորեն կյանքի կոչելն այսօր, առավել քան երբևէ, հրամայական է՝ ուղղված հանուր հայ ժողովրդին, առավել ևս անթիվ ու անհամար երկրներում դեգերող, հայրենակորույս, սփյուռքահայ դարձած արևմտահայ հատվածի համար:

Ուղիղ հենսունմեկ տարի է մեզ բաժանում այն օրերից, երբ հողագնդի զույգ աշխարհամասերում խարսխված մեծ ու փոքր բազում տերություններ, նրանց կազմում համահավաքված միլիարդից ավելի թվաքանակ ունեցող ժողովուրդները վավերացրեցին, ճանաչեցին Սևրի դաշնագիրը և վերջիմիս դեպի կյանք առաջնորդվելու ճանապարհ մաղթեցին:

Անուրանալի է նաև, որ պայմանագիրն ի տես աշխարհի ստորագրողների շարքերում առաջինն էին օսմանյան Թուրքիայի պատվիրակները, նրանց Փարիզ ժամանելու լիազորությունների արտոնությունը թախանձագին խնդրող Թուրքիայի Մեհմեդ 2 սուլթանը, նրա վախվորած բազմամարդ պատվիրակները:

Թուրքական մեջլիսի անդամները, հոգևոր և աշխարհիկ «բարձրաստիճան թուրքերը» վաղօրոք ծանոթ էին ստորագրվելիք պայմանագրի բոլոր հոդվածներին և այդ պահին կայսրության մնացած հատվածների պահպանությամբ բավարարված էին: Ողջ թուրք ժողովուրդն առաջին իսկ օրերից սկսած երկնչում էր նրանից, թե եվրոպացիներն իրենց հետ կվարվեն այնպես, ինչպես իրենք ժամանակին վարվեցին մվաճած, հպատակեցված, ստրկացրած, ցեղասպանության ենթարկված այլահավատ ու այլազգի ժողովուրդների հետ: Եվրոպան երբեմն ճիշտ, երբեմն համիրավի խղճով վարվեց բարբարոսության օրհրով տառապող այդ տերության ու նրա ժողովրդի հետ:

Պատմության զարգացման հետագա ընթացքն ապացուցեց, որ Եվրոպան այս անգամ էլ կոնկրետ նշանախեցին հարվածելուց վրիպեց: Կարճ ժամանակ անց, այդքան ջանքեր թափած, այդքան զոհեր տված, այդքան արյուն հեղեղած պետությունները ոչ միայն վերանայեցին Սևրի պայմանագրի հոդվածները, այլև մոռացության տվեցին այն:

Ցավալին այն է, որ Սևրը մոռացան ոչ միայն «թշնամի թուրքերը», «բարեկամ եվրոպացիներն ու հատկապես ռուսները», այլև խորհրդային, ապա խորհրդահայ այն պատմաբանները, որոնք ԽՍՀՄ-ի սաստերից երկնչած, Քեմալ-Լենին հակահայ, հակամարդկային դաշինքը գերադասեցին ժողովրդի շահերից: Ես ապրել եմ գաղափարապես դաժան այդ ժամանակատվածում և չեմ մոռացել, թե դրան դեմ խոսողներին ինչ էր սպասվում. ոչ ավել, ոչ պակաս՝ նվազագույնը կուստոմսից զրկվելը, առավելագույնը՝ «տայգայի արջերին անվերադարձ հյուր գնալը»:

Աշխարհն այսօր արմատապես փոխվել է: Այժմ արդեն չի կարելի թուրքական կամ նրանց աշակերտած ֆաշիստական մեթոդներով խեղանդամել ամբողջական ժողովուրդների, տիրանալ նրանց հնամենի ու պատմական հայրենիքներին, անտրտունը մարսել թափած ծով արյան համար հատուցվելիք մեղքերը:

Թուրքերը, այո, ողջ թուրք ազգը, վայրենի ու բարբարոս քրդերը կարմիր ներկեցին ամբողջ ասիական Թուրքիան, արյան հեղեղի մեջ խեղդամահ արեցին հայկական, հունական վիլայեթներում, ասորական ու եզդիական երկրահատվածներում հազարամյակներով ապրող ժողովուրդներին, հաշվի չառնելով ո՛չ նրանց ազգությունը, ո՛չ հասակը, ո՛չ սեռը և ո՛չ էլ ունեցվածքը: Օսմանյան պետության երկնակամարում հինգ տարի անընդմեջ գործում էր մահասարսուռ գերանդին:

Սևրի պայմանագիրը մի պահ թումբ կանգնեց մարդկային համատարած այդ սպանդին, ուղղեց քաղաքակիրթ մարդկության բաց թողած ճակատագրական, բախտորոշ այն սխալները, որոնք կատարվեցին XV հարյուրամյակում, հատկապես Եվրոպան Ասիայի հետ կամրջող գեղատեսիլ, զարմանահրաշ ջրուղիների զույգ ափերին:

Քնա՞ծ էր քրիստոնյա Եվրոպան, թե՞ անուշադիր, երբ զարգացման բարբարոսական աստիճանավանդակի ստորին ծայրին թառած, արտաքինով դեռևս մարդու լիարժեք կերպարանք չստացած, արյունածարավ ու վայրենի այդ ցեղախմբերը զավթեցին ժամանակի քաղաքակրթության միջնաբերդ հանդիսացող մի քաղաք, որը շուրջ հազար տարի անընդմեջ ամբարել էր քրիստոնյա հասարակայնության ստեղծագործական հանձարները: Արևմտյան աշխարհն ուշացավ, գուցե և մեկ րոպեով հապաղեց, որից օգտվելով իսլամի երկրպագուները կարողացան շուռ տալ աշխարհի քայլքի բնականոն ընթացքը:

Աներկբա է, որ այս դեպքում վաճառական Սուլիմանը իր սրագեն հետևորդներով հաղթեց աստվածորդի Քրիստոսի խաղաղապաշտ գավակներին: Այդ հապաղման մեկ րոպեն ի նկատի ունենալով՝ Ստեֆան Ցվայգը ցավով արձանագրում էր. «Սակայն ժողովուրդների պատմության մեջ, ինչպես առանձին մարդու կյանքում, անդարձ կորուսված թույլն ափսոսանքով ետ չես բերի, և հազարամյակն անզոր է ետ վերադարձնելու նույնիսկ մեկ ժամում կորցրածը»¹:

Խոսքը Կոստանդնուպոլիսի թուրքացմանն էր վերաբերում, որի մասին Կարլ Մարքսը գրել էր. «Այն (4. Պոլիսն) հավերժական քաղաք է: Այն Արևելքի Գոմն է»: Տավախարար Ներուն գրում է. «Կոստանդնուպոլիսը կանգնած է հնամենի Եվրոպայի ամենածայրամասում: Այն փոխված է հզորատեսք Ասիայի ափերին և մի տեսակ կամրջի դեր է կատարում երկու ցամաքամասերի միջև: Կամ «Թուրքերն իրենց մայրաքաղաքն անվանում են Ջանլի տարիխ՝ կենդանի պատմություն»²:

¹ Ստեֆան Ցվայգ, Մարդկության աստեղային ժամերը, Երևան, 1986, էջ 31:

² Տես Գայկ Դազարյան, Օսմանյան բռնապետության ներքո ապրող հայ և մյուս ժողովուրդների ցեղասպանության պատմությունը, 1453-1922, հատոր երրորդ, Երևան, 2010, էջ 29:

Այդ քաղաքին տիրեցին թուրքերը, որը մինչև օրս էլ մնում է նրանց գերության մեջ: Սևրը գալիս էր Ստամբուլին վերադարձնելու իր իսկական տիրոջը, **4. Պոլիս** անունը կրողներին, ինչը կրկին չհաջողվեց:

Տիեզերական քաղաքը գրավել էին թուրքերը, զավթել էին իսլամի երկրպագուները և թուրքացրել էին, ջանալով ոչնչացնել այն ամենը, ինչ հայկական կամ հունական էր, այն ամենը, ինչ քրիստոնեական էր: Դա նրանց չէր հաջողվել, բայց հաջողվել էր թողնել քաղաքի գրավման այնպիսի ողբերգական տեսարաններ, որոնք այսօր էլ սահմնակեցուցիչ են: Ուստի որոշեցինք ներկայացնել 4. Պոլսի բռնազավթման պրոցեսից մի հատված:

XV հարյուրամյակի առաջին կեսին Կոստանդնուպոլիսը շարունակում էր ունենալ առևտրատնտեսական ու ստրատեգիական այն կարևոր դիրքը, ինչին տիրապետելիս էր եղել դարեր առաջ: Բյուզանդիայի փառաշուք մայրաքաղաքը մնում էր լայնարձակ, ծովային մայրուղիներով Արևելքն Արևմուտքին աղետոտ երկու ծովերի **դարպասը**: Թևափոր խոսք էր դարձել, **թե ով որ կտիրապետի զույգ նեղուցներին, նա կարող է տիրապետել ամբողջ աշխարհին**:

Այն թուրքերը կանգնած Արևելքից դեպի Եվրոպա խայտող բոլոր ասպատակիչների դեմ, հավասարակշռության պահպանիչը բարբարոսների և քաղաքակիրթ ազգերի միջև: Դժբախտաբար, Եվրոպան չհասկացավ այդ կարևորությունը, ճակատագրական սխալ թույլ տվեց՝ թողնելով օսմանյան ասպատակող թուրքերին հաստատվելու իր սահմանագլխին: **Այդ սխալի համար քաղաքակիրթ մարդկությունը շատ քանակ վճարեց, այսօր էլ շարունակում է վճարել**:

4. Պոլսի նկատմամբ իսլամադավան, մահմեդապաշտ ազգերի ախորժակը դարեր առաջ էր գրգռվել: «Մուհամմեդ մարգարեի» Ղորանը ձեռքն առած, քրիստոնյա ժողովուրդներին սրակոտոր անելով, դեպի Բոսֆորի չքնաղ ափերն էին ձգվում **արարները** (665-870 թվականներին), սակայն զայրույթի մոլուցքով լցված ետ էին շարտվում, քանզի հաջողության հասնել չէին կարողանում: «**Դեռ կանուխ էր վայելելու այն փառքը, - գրում է Գ. Սիրունին, - կամ երանությունը զոր Մուհամմեդ բաժին կհաներ Կոստանդնուպոլիսը գրավող հրամանատարին ու անոր զինվորներուն: Պետք էր վեց դար ևս անցներ, որպեսզի մարգարեին ոսկորները խայտային իրենց գերեզմանին մեջ** (ընդգծումները մերն են - Գ. Ղ.)»¹:

4. Պոլիսն առաջին իսկ հարյուրամյակներից սկսած օսմանյան սուլթանների ուշադրության սևեռակետը հանդիսացավ: Պատմության բեմահարթակ իջած օսմանյան թուրքերը XIV դարասկզբին արդեն դոփում էին Եվրոպայի դռները: Բանական մարդն ապշահար է լինում, զուցե և չի հավատում, թե կարճ ժամանակամիջոցում «գորշ գայլ» պաշտող, ընդամենը երեք հարյուր վրանների մեջ ծվարած բարբարոս այդ ցեղախմբերը, այո, ցեղախմբերը (ոչ թե ժողովուրդը), ահ ու սարսափ տարածելով բովանդակ մարդկության վրա, ինչպես կարողացան ձևավորել մեծագոր, լայնարձակ մի **կայսրություն-սուլթանատ**: Բավական է աչքի անցկացնել այն ցուցակը, ուր քայլ առ քայլ նվաճեցին թուրքերը, զարմանքի, միաժամանակ սարսափի են մատնում բովանդակ աշխարհին իրենց ամեն մի բռնազավթումից հետո²: Հաղթարշավը շարունակվեց: Սուլթան **Բայազետը** չորս անգամ պաշարեց 4. Պոլիսը, սակայն, բարեբախտաբար, որևէ հաջողության չհասավ: Նրա գլխավորած 1391, 1395, 1396, 1400 թվականների արշավանքները Բյուզանդական կայսրության մայրաքաղաքի վրա մատնվեցին անհաջողության: 1412 թվականին **Լենկթեմուրը** կրկնեց գրոհը, նույնպես դատարկածեռն հեռացավ քաղաքից: Նույն բախտին արժանացան սուլթան **Մուրադ Երկրորդի** հարձակումները 4. Պոլսի վրա:

Բախտի դիպվածով, թե իրերի բերումով ավելի ստույգ խնդիրների հասունացմամբ էր պայմանավորված **Մեհմեդ Երկրորդ** սուլթանի (1444-1446, 1451-1481) գլխավորած ահռելի բանակի սրարշավը դեպի Կոստանդնուպոլիս: Ասիական երկրների նվաճումից, **տասներկու մայրաքաղաքներ** զավթելուց հետո նորաթուխ սուլթանը գահակալության առաջին իսկ ամիսներից սկսած որոշեց դոփել Եվրոպայի դարպասները, «վերջապես» տիրանալ հավիտենական քաղաքին: Իհարկե, պատկերացնելով խնդրի դժվարությունը, նա սկսեց նախապատրաստական լուրջ և տևական աշխատանք ծավալել:

Խորհրդային հայտնի պատմաբան **Ա. Ֆ. Միլլերը** (ազգությամբ իրեա և հայացքներով թուրքոֆիլ) գրում է, թե **Ֆատիհ** (այսինքն՝ նվաճող) մականուն ստացած **Մեհմեդ Երկրորդը** նախ հավաքեց շուրջ **երկու հարյուր հազարանոց** մարտական բանակ, կառուցել տվեց և ծով իջեցրեց բազմաթիվ նավեր: Նա ծուլել տվեց հեռահար թնդանոթներ, որոնցից մեկի երկարությունը **ութը մետր** էր և քաշը հասնում էր **երեսուր տոննայի**: Այդ թնդանոթը կարող էր հարվածներ հասցնել չորս կիլոմետր հեռավորությունից³: Այն նախատեսվում էր քաղաքի պարիսպները ճեղքելու համար, որպեսզի իր զինվորները հեշտությանը թափանցեին միջնաբերդ:

Բոսֆորի Եվրոպական ափերին փռված, դարպասի դեր ստանձնած մի հարթության վրա սուլթան Բայազեդի կողմից կառուցված **Անատոլու Չիսար** ամրոցին դեմ դիմաց Մեհմեդ Երկրորդը որոշեց կառուցել ռազմական լուրջ դեր կատարող ևս մի նոր շինություն, որին վաղօրոք **Ռումելի-Չիսար** հորջորջումը տվեց: Բնակավայր-ամրոցի շինարարությունում աշխատում էին վեց հազար շինարարներ և կառուցող բանվորներ: Այն ավարտին հասավ չորս ամիս հետո միայն: Վերոհիշյալ երկու ամրոցներին տիրանալով, թուրքերը փաստորեն Կոստանդնուպոլիսը զրկեցին դրսից մատակարարություն, օգնություն ստանալու բոլոր տեսակի հնարավորություններից⁴:

1453 թվականի մարտի վերջին շաբաթում ավարտվեցին ծրագրված նախապատրաստական աշխատանքները: Թուրքական իսկայական բանակը, որն այժմ գլխավորում էր **Մեհմեդ Երկրորդ** սուլթանը, դուրս գալով իր նստավայրից, ապրիլի 2-ին, Սուրբ Ջատկի տոմարի երկրորդ օրը մոտեցավ քաղաքի պարիսպներին և սկսեց շրջափակման իր գործողությունները: Թուրքերը փակեցին ցամաքի կողմից քաղաքամայր մտնող մանր ու խոշոր բոլոր ճանապարհները: Նրանց ձեռքն անցան **Ոսկե դարպասներից** մինչև **Բերա** տարածվող քաղաքին մատակարարող ուղիները:

Սեղ ճակատամարտ էր սպասվում: Կարծես թե աշխարհի վերջն էր: Այո, քաղաքակիրթ, հնամենի, հարուստ կենսագրություն կերտած, հազարամյակների մշակույթով հայտնի, հանուր մարդկությանը լույս ու գիտություն մատակարարող հանճարեղ մի ժողովրդի ճակատագիրն էր դրվում թղթախաղի դաժան զոհասեղանի վրա: Այո, տգիտությունն էր կոպելու գիտության դեմ, խավարը եկել էր խեղդելու, մթագնելու լույսը, բարբարոսության դաժան մագիլները բկխեղդ էին անելու քաղաքակրթությունը, անբարոյականությունը քայքայելու էր ամեն մի ազգի սրբազան հիմք հանդիսացող ավանդապաշտ ընտանիքները: Մոնղոլական անապատներից դուրս գալով, ամենուր մահ սփռող, ավերածություններ կատարող, ավարածարավ, վայրենի մի ցեղախումբ, Մուհամմեդի «պատգամները» բերանն առած՝ Ասիայից թափանցում էր Եվրոպա, զգուշացնելով, որ շուտով կմտնի նրա տարածքը, աշխարհը կդարձնի իսլամապաշտ, հետևաբար և վերջ կդնի Քրիստոսի ուսմունքին ու քրիստոնյա կրոնի հետևորդ-

¹ **Յ. Ճ. Սիրունի**, Պոլիս և իր դերը, առաջին հատոր (1453-1800), Պեյրուք, 1965, էջ 142:

² Նույն տեղում, էջ 140:

³ **Ա. Փ. Միլլեր**, Краткая история Турции, Москва, 1948, стр. 12-13.

⁴ **Ю. А. Петросян**, Османская империя, могущество и гибель, Москва, 1990, стр. 41.

Ներին: Դժբախտությունն այն էր, որ քնաթաթախ եվրոպան այս ամենը տեսնում էր, վտանգի ժանրությունը գիտակցում, սակայն կանխող համապատասխան միջոցներ ձեռք չէր առնում: Բարձրորդ այդ վիճակից օգտվում էր թուրքական սուլթանը և շարունակում իր բարբարոսությունը:

1453 թ. մայիսի 28-ին **Մեհմեդ Երկրորդ Ֆաթիհ** սուլթանը ժամանեց բանակի գլխավոր շտաբ: Նա շրջում էր զորամասից զորամաս, ստուգում նրանց պատրաստությունը՝ վաղ առավոտյան (ժամը 6-ին) սկսվող ահեղ զոտեմարտին: Մայրաքաղաքում ևս զգում էին վաղվա ահեղ փորձությունների ժամանակի հասունացված լինելու մասին¹:

Երեկոյան սուլթանի հրամանով ողջ քաղաքի շուրջ սկսեցին վառվել խարույկներ: Նրանք փաստորեն հոգեբանական գրոհ էին նախապատրաստում առավոտյան սկսվելիք գլխավոր հարվածին: Ամենուր երաժշտություն էր հնչում, խփում էին թմբուկները: Մուլլաները, դերվիշները Ղորանը ձեռքերին բռնած, շրջում էին խարույկների շուրջը խմբված զինվորների մեջ և նրանց «հոգեբանորեն նախապատրաստում վաղվա հաղթանակին»²:

1453 թ. մայիսի 29-ի լուսաբացին միասնաբար հնչեց թուրքական զորքերին ուղեկցող երաժիշտների նվագախմբերի աղմուկը: Նրանք մարտի էին կոչում քաղաքի չորս կողմում փռված թուրքական ամբողջ բանակին միանգամից՝ ձայն ձայնի տված: **Սկսվեց այն ճակատամարտը, այսինքն՝ այն գրոհը, որը չափազանց թանկ նստեց ոչ միայն հույն, այլև քրիստոնյա ողջ աշխարհի ժողովուրդների վրա:**

Սկզբում ծավալվում էին ուժեղ ձեռնամարտեր: Հույն քաղաքապահները կռվում էին խիզախությամբ, հուսահատությամբ և առյուծի նման ետ էին մղում հարձակվող թվաշատ, արյունածարավ թուրք զինվորներին, բաշխրզուկներին (զինված ելուզակներին)³: Եղան պահեր, որ կարծես թե հրաշք տեղի ունեցավ, այսինքն՝ փոքրաթիվ հույն պաշտպանները քաղաքից դուրս չպրտեցին թուրք զավթիչներին:

Մեհմեդ Ֆաթիհը մի պահ ոչ միայն զարմացած էր, այլ նույնիսկ հուսահատված: Սկզբում նա մտածում էր, թե շատ արագ կկարողանա կոտրել հույների դիմադրությունը և վերջապես տեր կդառնա այդքան ժամանակ երազած քաղաքի միջնաբերդին: Այդպես չեղավ: Հույն ժողովրդի մեջ պաշտպանության պահին վերացան բոլոր տեսակի հակասությունները, և նրանք առյուծների նման տեր կանգնեցին իրենց քաղաքին: **Հայրենիքի սերը գերադասվեց նախկինում ունեցած բոլոր տեսակի վիրավորանքներից ու դժգոհություններից:**

Ապշահար եղած, մեծամտության և ինքնահավանության ախտով տառապող **Մեհմեդ Երկրորդը** հարկադրված էր ուժերի վերադասավորում կատարել, ուժեղացնել հարձակման թափն ու զրոհողների մարտունակությունը: Ժամը 12-ին միանգամից մարտի նետվեցին հատուկ և պահեստային բոլոր զորամասերը, սուլթանի զվարդիան: Համակամ կրակեցին թնդանոթները: **Ուրբան** անվանում ստացած երկարափող, ծանրաքարչ հրանոթն արկերի տարափ տեղաց պաշտպանների և քաղաքի պարիսպների վրա: Մեկ ժամ հետո պատկերը փոխվեց: Ճենովացիների հրամանատար ժուստինիանին՝ վիրավորվելով, լքեց մարտաշարքերը և նավով փախավ Գալատիա: Նրա գլխավորած մարտիկների շարքերում խուճապ առաջացավ: Դրանից օգտվելով, թուրքերն անցք բացեցին սուրբ Ռոմանոսի վանքի մոտակայքի պարիսպների վրա և ներխուժեցին քաղաք: Մարտերը՝ շրջապարսպից դուրս գալով,

տեղափոխվեցին Կոստանդնուպոլսի ներքը, նույնիսկ՝ միջնաբերդ: Տեսնելով, որ պաշտպանությունն անհնար է, կայսր Կոստանդին Դուզասը նետվեց մարտադաշտ, կռվեց խիզախությամբ, զարմանք ու հիացմունք պատճառելով սիրելի զինվորներին, կռվին ակամատես բոլոր հայրենակիցներին:

Դեպքերին տեղյակ գրագետ հույներն ու օտարազգիները պատմել են, որ կայսրի սրի առաջ դիակույտեր էին առաջացել: Ավելին անելն անհնարին էր: **1453 թ. մայիսի 29-ի ցերեկվա ժամը 4-ին մարտադաշտում հերոսի մահով զոհվեց Բյուզանդիայի վերջին կայսր Կոստանդին Պալեոլոգ-Դուզասը: Դրանով իսկ ոչ միայն վերջ դրվեց Պալեոլոգյան դինաստիային, այլև հազարամյա կայսրությանը¹:**

1453 թ. մայիսի 29-ի օրվա երկրորդ կեսին ընկավ Կոստանդնուպոլիսը: Մեհմեդ Ֆաթիհը՝ «հավատարիմ տված խոստմանը», բանակին, իսլամ բաշխրզուկներին (զինված ելուզակներին) և ընդհանրապես իր կողմնակիցներին թուլատրեց **երեք օր ու գիշեր քաղաքի և քաղաքացիների հետ վարվել այնպես, ինչպես ցանկանան, թալանեն և ավերեն այնպես, ինչպես կամենան:** Դաժանություններին չափ ու սահման չկար: Կատարված բարբարոսությունները գրչով ու լեզվով նկարագրել, պատմել հնարավոր չէ: Ուստի թողնենք թող խոսեն օտարները, հատկապես ժամանակակիցները:

Հակոբ Սիրունին մեջբերումներ է անում ֆրանսիացի պատմաբան, ականատես **Գուսթավ Շլիմերգերից**, որն այսպես է ներկայացրել դժոխային այդ տեսարանները. «Ինչ որ տեղի ունեցավ, - գրում է Գուսթավը, - այն ատեն մեծ ոստանին թաղերուն մեջ իբեւ սարսափ՝ վեր է ամեն երեւակայութենէ, ամեն նկարագրութենէ, - ջարդն ու գերունը ընդարձակ քաղաքի բովանդակ բնակչութեան: Խուճապը որ վայրկեանապես յաջորդեց թուրք առաջին հրոսախումբերու մուտքին՝ անօրինակ, զարհուրելի էր: Հեծեծանքներու, աղաղակներու, նզովքներու, անձքներու, Աստոյ եւ սուրբերու ուղղած աղերսանքներու ընդմէջէն, ամեն դասէ, ամեն սեռէ փախստականներու ամբոխը, քանի կը տարածուէր ահռելի լուրը, մէկ քանին միասին առած ինչ որ ամենն աւելի թանկագին ունէր, կը խուժէր դեպի նաւահանգիստ, փրկութեան միակ կարելի ճամբան:

«...Ինչպե՛ս նկարագրել ահաւոր խուճապը այս լայնատարած բովանդակ քաղաքին, սարսափելի զարթնումը քրիստոնէայ այս ամբոխին որ, դէռ երէկ, կ'օրօրուէր յիմար յոյսերով, զարհուրանքը այսքան պճնագեղ, հարուստ, եւ երբեմն անուանի կանանց՝ որ յանկարծակի, երկվայրկեանի մը մէջ դէմ յանդիման կը գտնուէր վայրի գազաններու որոնց միակ մտածումն էր բռնաբարել, ջարդել, գերի վերցնել իրենց դժբախտ զոհերը: Ամեն հրապարակ, ամեն փողոց ահռելի թատրոն էր սարսափելի եւ հոգեւարքի քստմնելի տեսարաններու: ...Անթիվ իսլամ զօրքեր, յաղթանակէն զինովցած եւ ընկճւած անլուր խոնջէնքէն այս երկարատեւ պաշարման»²:

1453 թ. հունիսի 1-ին, ասել է թե՛ հավիտենական քաղաքը բռնազավթելուց երեք օր հետո միայն, **Մեհմեդ Երկրորդը** մտավ Կոստանդնուպոլիս: Լեզենդ է ստեղծվել

¹ Զ. Ե. Սիրունի, նշված աշխատությունը, էջ 158:

² Ю. А. Петросян, Османская империя, могущество и гибель, Москва, 1990, стр. 49.

³ Նույն տեղում, էջ 48-49:

¹ Գ. Ս. Անասյանը, հետազոտելով լատինական սկզբնաղբյուրները, ինչպես նաև դեպքերին ժամանակակից Արախամ Անկյուրացու և Առաքել Բաղիշեցու չափածո գործերը, գրում է, թե կարծիքներ են հայտնվել, որ Կոստանդին Դուզասը մարտադաշտում չի սպանվել, այլ պատրիարքի հետ միասին փախցվել են հռոմ-վատիկան և մի օր կվերադառնան Կ. Պոլիս: Սա լեզենդ է: Սակայն որքան էլ լեզենդ լինի, այնուամենայնիվ, մի կողմից իր մեջ խտացրել է որոշ պատմական տարրեր Կ. Պոլսի անկումից առաջ գոյություն ունեցող քաղաքական իրադրությունից և մյուս կողմից, մանավանդ, արտահայտում է նրա անկման անմիջականորեն հաջորդող շրջանում միաժամանակ ծավալվող քաղաքական-գաղափարական մթնոլորտը: (Գ. Ս. Անասյան, նշված աշխատությունը, էջ 13-15):

² Զ. Ե. Սիրունի, նշված աշխատությունը, էջ 159-160:

սուլթանի ժամանան մասին: Այնտեղ ասված է. Մեհմեդ Ֆաթիհը 1453 թ. հունիսի 1-ին, չորեքշաբթի օրը, «փառահեղ զարդարված», նստած սպիտակաբաշ ձիու վրա, իրեն ուղեկցող բազմամարդ շքախմբով դանդաղ շարժվում էր երեկվա մայրաքաղաքի կենտրոնական փողոցներով և մուտք գործում **Սուրբ Սոֆիայի տաճարը**:

Չնայած տաճարը ավերված էր, կողոպտված, գեղեցիկ զարդաքանդակները նույնպես ավարի էին ենթարկված, սուլթանը բարձրացավ խորանի սուրբ սեղանի վրա, ի հավերժացումն իր հաղթանակի հայտարարեց, որ փոխում է սրբավայրի անունը, այն անվանում է **Այա-Սոֆիա**, դարձնում իսլամական **մեչեդ**: **Հայազգի Տրդատ ճարտարապետի հանձարեղ մատներով վերակառուցված այդ սրբավայրի գլխից անմիջապես իջեցրեցին ոսկեզօծ, բարձրաքանդակ խաչերը և նրանց տեղը դրեցին թուրքական մահիկն ու կիսալուսինը**: Ճիշտ է նկատվում. սուլթանի բարբարոսական այդ քայլը ոչ միայն ուղղված էր հունական ուղղափառ եկեղեցու, այլև հանուր քրիստոնեական աշխարհի դեմ: Սուլթանն էր վիրավորում էր Քրիստոսին, նրա հոգևոր հովանու տակից փորձում էր խլել մի ամբողջ պետություն, մի ամբողջ ժողովուրդ (բարբախտաբար, այդ նրան հավերժորեն չհաջողվեց):

Մեհմեդ Ֆաթիհը հայտարարեց նաև իր մյուս որոշման մասին: Նա փոխեց Կոստանդնուպոլիս պատմական անունը, այն վերանվանեց Ստամբուլի և դարձրեց իր կայսրության նոր մայրաքաղաքը: Այդ նոր անունն ըստ բացատրողների կոչվում է Իստամբուլ (թուրքերեն), Իսլամբուլ (իսլամների բազմություն): Թուրքական իշխանությունը նա հայտարարեց սուլթան-կայսրություն և Ադրիանապոլսից (էդիրնե) նոր մայրաքաղաք տեղափոխվեց 1457-1458 թվականի ծնունդ միայն: Այդուհանդերձ, աշխարհի քարտեզի վրա երևաց մի նոր մայրաքաղաք, որը կենտրոնական քաղաքի, այսինքն՝ պետության առաջին դեմքերի նստավայրի իր դերը կատարեց մինչև 1923 թվականը:

Քաղաքի գրավումից քիչ անց չարաբաստիկ այդ լուրը տարածվեց աշխարհով մեկ: 1453 թվականի սեպտեմբերի 30-ին Դոմի պապը խաչակրաց արշավանքի կոչ արեց Արևմուտքի քրիստոնյա բոլոր տերություններին, նրանցից պահանջեց միասնական բանակ ձևավորել և միասնաբար վերագրավել հավերժական այդ քաղաքը: Ինչպես միշտ, եվրոպայի տերությունների միջև համաձայնություն չստեղծվեց: Դրանից օգտվելով, թուրքերը սկզբում վախվորած, հետո սիրտ առան և շարունակեցին վայելել իրենց ավարը: Մինչև այսօր էլ վայելում են՝ մատերի վրա պարեցնելով քրիստոնյա ողջ աշխարհին:

Քրիստոնյա եվրոպան հապաղեց, ուշացավ մեկ րոպեով, թե մեկ ժամով, միևնույնն է՝ **եվրոպան ուշացավ**...

Սևրի դաշնագիրն իր **արդարամիտ** վաղուց սպասվելիք (շուրջ 500 տարի) որոշումներով գալիս էր շտկելու քաղաքակիրթ մարդկության կատարած ճակատագրական վերոհիշյալ սխալները: **1920 թ. մայիսի 25-ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեվիդ Լլոյդ Ջորջն** իր երկրի լորդերի և համայնքների պալատների միացյալ նիստում անթաքույց հրճվանքով հայտարարում էր, թե. «**Մեզ պետք չէ խղճալ, որ Թուրքիան հեռանում է պատմության բեմահարթակից**»²: Հետևաբար՝ Սևրի պայմանագիրը լուծում էր ոչ միայն Հայաստանին հուզող խնդիրները, այլև լցված էր փոխվրձի զգացումներով, որոնք ծայր էին առել շուրջ կես հազարամյակ առաջ:

Սևրի պայմանագիրը ձևակերպման, ստեղծագործական, բավական բարդ, դժվարին հակասություններով առլեցուն ճանապարհ էր անցել: Նրա սկզբնավորման

ծայրաթելերը պահված էին **Սայբու-Պիկոյի համաձայնագրի** (16. VI, 1916) ակունքներում, ապա շարունակում լրամշակվել **Սուդրոսի գինադադարի** (30. X, 1918), **Փարիզի խաղաղության կոնֆերանսի** (18. I, 1919), հատկապես **Սան Ռեմոյի** (18-26. IV, 1920) վեհաժողովի մասնակիցների հրապարակային և անդրկուլիսյան ելույթների գաղտնուղիներում: Մեկ խոսքով, ո՛չ Վերսալի և ո՛չ էլ Սևրի դաշնագրերն արագ չէին ձևավորվել, որ արագ էլ կնքեին իրենց մահկանացուն:

Պատերազմի արդյունքները կարգավորող այդ զույգ պայմանագրերը ստորագրվում էին Մեմալի աջ ու ձախ ափերին փռված Փարիզի երկու արվարձաններում, որոնցից էլ ստանում էին **Վերսալի և Սևրի** վերտառությունները: Կրկնում ենք նաև, որ եթե Վերսալում վճռվել էր դաշնակիցներ-Գերմանիա փոխհարաբերությունների բազմակնճիռ խնդիրները, ապա Սևրին բաժին էր մնացել **կեսարյան եղանակով** լուծել **գորդյան հանգույցը**, ասել է թե՛ որոշել **եվրոպական Թուրքիային, 4. Պոլսին ու նեղուցներին** տիրանալու խնդիրները, Ասիական Թուրքիան բաժան-բաժան անելով՝ դրանցից ամեն մի մասնիկը վերահանձնել իրենց նախկին **իսկական տերերին** իբրև պատմական մասունքներ:

Մինչև ստորագրման վերջին պահն էլ Անտանտի մեծերը մտնում էին, թե արժե՞ **Թուրքիա պետության անունը թողնել աշխարհի քարտեզի վրա** և, եթե թողնվի, ապա որո՞նք են նրա սահմանագծերը, այսինքն՝ դրանք եվրոպայում էին, թե՞ Ասիայում: **Սկզբում այդպես էր առաջավոր մարդկության, քաղաքակիրթ տերությունների հայեցակարգը, իսկ վերջում...**

Այժմ անդրադառնալով բուն խնդրի պատմության մանրամասներին, որովհետև Սևրի պայմանագիրը համաշխարհային նշանակություն ուներ, իր ստորագրման պահից հետաքրքրել, այսօր էլ հետաքրքրում է ժամանակի թուրքերից և Թուրքիայից տուժած մեծ ու փոքր բազմաթիվ ժողովուրդների, հզոր ու անզոր շատ տերությունների:

Սևրի խաղաղության պայմանագիրը ստորագրվել է 1920 թվականի օգոստոսի 10-ին, Փարիզի Սևր արվարձանում, որտեղից էլ ստացել է իր **մկրտության անվանումը**: Սևրի հաշտության դաշնագիրը ստորագրվեց **մի կողմից Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի** (որպես գլխավոր տերություններ), ապա **Հայաստանի, Բելգիայի, Գոնաստանի, Հեքզաի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Սերբա-խորվաթա-Սլավոնական պետության, Չեխոսլովակիայի** (միացյալ դաշնակից տերությունների), **մյուս կողմից՝ օսմանյան Թուրքիայի միջև**¹: **Ամերիկայի Միացյալ Նահանգներն արարողությանը մասնակցում էր դիտորդի կարգավիճակով:**

Սևրի դաշնագրի լիակատար տեքստի գլխադիր էջում կարդում ենք. «Принимая во внимание, что по просьбе Императорского Оттоманского Правительства Главными Союзными Державами было дано Турции 30 октября 1918 года перемирие, чтобы сделать возможным заключение Мирного Договора;

Принимая во внимание, что Союзные Державы равным образом желают, чтобы война, в которую некоторые из них последовательно были прямо или косвенно вовлечены против Турции и которая источником своим имеет объявление войны, сделанное бывшим Императорским и Королевским Австро-Венгерским Правительством Сербии 28 июля 1914 года, и враждебные действия, открытые

¹ Այս էջերը վերցված են՝ **Հայկ Ղազարյան**, Օսմանյան բռնապետության ներքո ապրող ժողովուրդների ցեղասպանության պատմությունը, հատոր երրորդ, էջ 36-42:

² "The Temis", 25.V. 1920.

Турцией 29 октября 1914 года против Союзных Держав и руководимые Германией, союзницей Турции, уступила место прочному и длительному миру”:

Փաստաթղթի ստորագրման արարողությանը մասնակցեցին ներքոհիշյալ դիվանագետները, պետական բարձրաստիճան պաշտոնյաները, թագավորական և իշխանական գերդաստանների հանրաճանաչ անդամները: **Ներկայացնենք այդ կազմն՝ ըստ երկրների:**

Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչն էր **Ջորջ Ղիքսոն Գրեմը**, որն այդ պահին Անգլիայի դեսպանն էր Փարիզում, ապա Միացյալ Թագավորության **դոմինանտներ. Կանադայից - Ջորջ Խադսոն Պեռլենը, Ավստրալիայից - Էնդրյու Ֆիշերը, Նոր Զելանդիայից - Ջորջ Ղիկսոն Գրեյսենը, Հարավաֆրիկյան Միությունից - Ռեդդինգալդ Էնդրյու Բլանկենբերգը, Հնդկաստանից - Արթուր Հիրցելին** (ստացվում էր, որ Լոնդոնի շահերը պաշտպանում էին յոթ դիվանագետներ):

Ֆրանսիական պատվիրակությունը ևս մարդաշատ էր: Դրանք էին՝ պրեզիդենտ **Ռայմոն Պուանկարեն**, վարչապետ և արտգործնախարար **Ալեքսանդր Միլերանը**, ֆինանսների մինիստր **Ֆրեդերիկա Ֆրանսուա-Մարսիլյան**, առևտրի և արդյունաբերության մինիստր **Ավգուստ Պոլյա-Լուի Իգավկան**, Ֆրանսիայի դեսպան **ժյուլյա Կամբոնան**, գլխավոր քարտուղար **ժորժ Մորիս Պալեոլոգը:**

Իտալիայի պատվիրակությունը գլխավորում էր թագավորը: Անդամներն էին Իտալիայի դեսպանը Փարիզում - իշխան **Լեիլո Բոնին Լանգերսը** և գեներալ **Ջիովանի Մարիետտին:**

Ճապոնիան Փարիզ էր բերել **կայսրին**, ապա Լոնդոնում արևի երկրի դեսպան **Վիկոնտա Հինդահին** և Փարիզում դեսպան **Գ. Կ. Միտոսիին:**

Բելգիայից եկել էին **թագավորը**, պետական մինիստր **ժյուլ Կան-դեն-Գեյվիլյան** և հանրաճանաչ իրավագետ, պատմաբան **Ռուլեն ժեկմենը:**

Լեհաստանի պատվիրակության կազմումն էին **պրեզիդենտը** և Փարիզի նրա դեսպան **Էրազմ Պիլցան:**

Պորտուգալիան եկել էր **պրեզիդենտով** և վարչապետով՝ **Աֆֆոնսո Դեկոստոն:**

Ռումինական պատվիրակության կազմումն էին **թագավորը**, ֆինանսների մինիստր **Նիկոլյա Տիտուլեսկուն** և Փարիզում դեսպան իշխան **Դմիտրի Գինկան:**

Սերբիայից, Խորվաթիայից և Սլովենիայից եկել էին թագավորներն իրենց արտգործնախարարներով:

Չեխոսլովակիայից ներկա էին **պրեզիդենտը**, արտգործնախարար **Էդուարդ Բենեշը** և Լոնդոնում նրա դեսպան **Ստեֆան Օսուսկոն:**

Հեքզաից Սևր ժամանեց թագավորն իր արտգործնախարարով:

Հունաստանը ներկայացնում էին վարչապետ **Էլեֆտերիոս Վենիզելոսն** ու Փարիզում հաստատված հունական դեսպան **Աթոս Ռոմանոսը:**

Այժմ փոքր-ինչ մանրամասները մեր ասելիքը **պարտված Թուրքիայի և հաղթանակած Հայաստանի** պատվիրակությունների կազմի, մինչ այդ նրանց ծավալած գործունեության մասին, որովհետև Սևրում հիմնականում քննարկվում և վճռվում էին այդ երկու երկրների ճակատագրին վերաբերող բախտորոշ խնդիրները:

Մուղրոսի զինադադարից հետո, անշուշտ, ծանր վիճակ էր սպասվում պարտված, տնտեսապես քայքայված, քաղաքականապես լուրջ ճգնաժամի եզրին կանգնած սուլթանական բռնապետությանը: Արդեն իր անկարողությունն ապացուցած **Մեհմեդ VI Վեհաետդին** (1861-1929) վերջին սուլթանը դրությունից ելքը որոնում էր վարչապետների **հարափոփոխությունների** մեջ:

1918 թ. նոյեմբերի 18-ին մեծ վեզիր (վարչապետ) նշանակվեց **Ահմեդ Թաֆիկ փաշան**, որն ունենալով անգլիական կողմնորոշում, բնավորությամբ չոր և դաժան մարդ էր: Դեկտեմբերի 21-ին ցրվեց նրա կառավարությունը և նորանշանակ ներքին գործերի մինիստր **Սուստաֆա Արիֆ բեյը** սկսեց ձերբակալությունները մայրաքաղաքում, ինչպես նաև բազմաթիվ այլ վիլայեթներում: Ժողովրդի դժգոհություններին չափ և սահման չկար: Անհանդուրժողականության ալիքը հասավ դաշնակիցներին:

1919 թ. մարտի 14-ին դաշնակիցների թելադրանքով սուլթանը երկրի մեծ վեզիր նշանակեց **«Ազատություն և համաձայնություն»** կուսակցության առաջնորդ **Դամադ Ֆերիդ փաշային**, որն ավարտել էր **Օքսֆորդի համալսարանը**, այսինքն՝ նախորդի նման ուներ անգլիական կողմնորոշում: **Նա սուլթանի փեսան էր՝**

Սուլթանն ու նորանշանակ վարչապետը ցրեցին թուրքական պառլամենտը, որին հաջորդեց Անտանտի ռազմական նավատորմի մուտքը նեղուցներ: Մեծբրիտանական զորքերը գրավեցին **Սոսուլի և Կիլիկիայի վիլայեթները:** Ֆրանսիական զորքերը գրավեցին Սիրիայից դեպի հյուսիս ընկած **լայն գոտին:** Իտալացիները տեր դարձան հարավարևմտյան Անատոլիային և մտան Կոնիա: 1919 թ. մայիսի 15-ին հունական զորքերը, դաշնակիցների համաձայնությամբ, փառահեղ ընդունելությամբ մտան Հոմերոսի վիճարկվող հայրենիք՝ **Չմյունիա** (Իզմիր) ծովահայաց նավահանգստային քաղաքը: Իր մեծությամբ, գեղեցկությամբ և տնտեսական կարևորությամբ Իզմիրը երկրորդն էր Թուրքիայում՝ 4. Պոլսից հետո: Այսպիսով, Անտանտի տերություններն առայժմ անթաքույց վարում էին Թուրքիան մասնատելու, թուրքական պետականության արդարամիտ ոչնչացման քաղաքականություն:

Սուլթանը, նրա մեծ վեզիրն ու թուրք բարձրաստիճան մյուս պաշտոնյաները դրությունից ելք էին որոնում: Նրանք այս անգամ որոշեցին հատուկ հուշագրով դիմել Փարիզի կոնֆերանսը գլխավորող **Չորսի խորհրդին**՝ խնդրելով ընդունել իրենց պատվիրակությանը և արագացնել թուրքական խնդրի վճռումը:

1919 թ. մարտի 20-ին Թուրքիայի նորանշանակ արտգործնախարար **Ալի Բեմալ բեյը** դիմեց մեծ տերություններին՝ խնդրելով իրեն թույլ տալ ժամանելու Փարիզ և Ֆրանսիայի դիվանագետների հետ քննել այն պայմանները, որոնք կառաջարկվեն հաշտության պայմանագիրը ստորագրելիս: Հունիսի 2-ին 4. Պոլսի ֆրանսիական դեսպանը հաղորդեց Բ. Դան, որ Չորսի խորհուրդը համաձայնել է Թուրքիայի ներկայացուցչությանն ընդունել իր երկրի մայրաքաղաքում:

Կազմվեց թուրքական առաջին պատվիրակությունը, որի ղեկավարներն էին **Դամադ Ֆերիդ և Ահմեդ Թաֆիկ փաշաները:** 1919 թ. ապրիլի 13-ին թուրքական **առաջին պատվիրակությունը** ժամանեց Փարիզ: Ապրիլի 17-ին Դամադ Ֆերիդ փաշան ընդարձակ ճառով հանդես եկավ **Տասի խորհրդի** առջև: Ճառը տհաճ տպավորություն թողեց եվրոպացիների վրա և բացասական պատասխանով թուրքերին առաջարկվեց հեռանալ Փարիզից: Թուրքերը հարկադրված էին գրավոր ընդարձակ հուշագիր թողնել **Տասի խորհրդին** և վերադառնալ 4. Պոլիս: Երկարատև քաջքուկից հետո թուրքական պատվիրակությունը **կրկին հրավիրվեց Փարիզ:** Դա 1920 թ. մայիս ամիսն էր:

Դեռևս **1920 թ. ապրիլի 26-ին**, այսինքն՝ Սան Ռեմոյի կոնֆերանսի վերջին օրը թուրքերն ավարտեցին **այն պատվիրակության կազմավորման պրոցեսը, որը**

¹ **А. М. Шамсутдинов**, Национально-освободительная борьба в Турции (1918-1923 гг.), Москва, 1966, стр. 24-26.

² **У. У. Հասրաբյան, Ս. Ֆ. Օրեշկովա, Յու. Ա. Պետրոսյան**, Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986, էջ 228:

³ Մանրամասն տե՛ս “Севрский мирный договор и акты, подписанные в Лозане”, Москва, 1927, стр. 14-15.

¹ “Севрский мирный договор и акты, подписанные в Лозане”, стр. 3.

պետք է ժամաներ Ֆրանսիա և ստորագրեր Սևրի հաշտության պայմանագիրը: Դա թուրքական **երկրորդ պատվիրակությունն էր:**

Պատվիրակության ղեկավար նշանակվեց **Թևֆիկ փաշան**, անդամներն էին **Ռեշիդ բեյը**, **Ջեմալ փաշան**, մարշալ **Իզզեդ փաշան**, նախկին մեծ վեզիր **Ռիֆադ փաշան**, նախկինում Փարիզում հաստատված դեսպան **Նարի բեյը**, Հռոմում նախկինում աշխատած դեսպան **Սեֆի բեյը**, գլխավոր շտաբի նախկին պետ գեներալ **Շևրեթ փաշան**, արտաքին գործերի նախարար **Ալի Քեմալ բեյը**: Մարդաշատ այդ պատվիրակությունը լրիվ կազմով ժամանեց Փարիզ¹:

1920 թ. մայիսի 11-ին, ժամը 4-ին ժողով Կլեմանսոյին փոխարինելու եկած վարչապետ և արտգործնախարար **Միլերանը** արտաքին գործերի մինիստրության փոքր դահլիճում ընդունեց **թուրքական երկրորդ պատվիրակությանը**: Թևֆիկ փաշային հանձնվեց հաշտության պայմանագրի արդեն ձևավորված վերջնական տեքստը: Պատասխանի համար նրանց ժամանակ տրվեց մինչև հունիսի 11-ը: Թուրքերը խնդրեցին **ևս մեկ ամիս ժամանակ**: Նրանց խնդրանքը կտրուկ մերժվեց:

Թուրքերին հանձնված պայմանագրի ավարտական տարբերակը պատրաստել էին խաղաղության կոնֆերանսի **հինգ հանձնաժողովները**, որոնք հանձնարարություն էին ստացել հանգամանորեն մշակել **Մերձավոր Արևելքի** բաժանարար վավերաթուղթն ու նրան կից գծագրված քարտեզը: Նրանք կոնկրետ որոշելու էին.

1. Հայաստանի հանրապետության սահմանները: 2. Թուրքիայի ֆինանսների վիճակը պարզելուց հետո, ցույց տալ տերության պետական պարտքի չափը: 3. Ուշադիր քննել հույների պահանջած Իզմիրի խնդիրը: 4. Բոսֆորի և Դարդանելի նեղուցներին հսկելու հանձնարարությամբ ստեղծել մասնագիտական հանձնաժողով: 5. Որոշել Թուրքիայի պետական սահմանները եվրոպայում:

Այդ բոլոր առաջադրանքները կատարած, պայմանագրի վերջնական տարբերակը հանձնվեց թուրքերին, նրանցից պահանջելով, առանց ստորակետի փոփոխության, պատրաստվել ստորագրելու Սևրի դաշնագիրը:

Պրոֆ. Յու. Վ. Կյուլչնիկովը գրում է. «Մирный договор между союзниками и Турцией был подписан в Севре 10 августа 1920 г. Еще оставаясь только проектом, он уже вызывал резкие возражения не только со стороны турок-националистов, с самого начала признавших его неисполнимым, но и со стороны многих из союзников. В Сан-Ремо итальянский премьер Нитти заявил, например, что для сохранения такого договора в силе Италия не пошлет ни одного солдата. Резко критиковал договор и Мильеран, считавший, что интересы Франции в нем всецело принесены в жертву английским интересам. Соединенные Штаты, недовольные тем, что турецкий вопрос был разрешен союзниками в противоречии с Вильсоновскими пунктами, а еще более, конечно, тем, что **в Сан-Ремо французы и англичане оставили их без нефти, отказались не только ратифицировать или подписать Севрский мир, но даже и участвовать в его окончательной выработке. Весьма поэтически выразил недовольство Севром Пуанкаре. "Город Севр, - писал он в одном из своих политических обзоров, - также имеет теперь свой цветок в венке мира. Турецкий договор был подписан в местонахождении национальной мануфактуры, среди "biscuits" и "flambées". Он и сам предмет хрупкий; быть может, - разбитая ваза. Не**

отраживайтесь до него. Уже в последнюю минуту противоположные точки зрения Греции и Италии на судьбы острова Родоса чуть было не сорвали все дело. Несколько раз объявлявшаяся церемония подписания несколько раз откладывалась. Она состоялась, наконец, в атмосфере усталости и безразличия, так что разве кое-кто лишь из внимательных наблюдателей заметил не без меланхолии, что ею освящалось резкое понижение французского влияния на Востоке".

Несмотря на всю невыносимую для Турции тяжесть севрских условий, в Константинополе дворец отпраздновал мир устройством торжественного приема с фанфарами союзническим представителям и исполнением союзнических гимнов.

Но ратифицировать подписанный ею мир старая императорская Турция вовсе не спешила. У нее было, правда, превосходное основание для этого: чтобы Севрский мир не оказался мыльным пузырем, нужно было согласие на него не только Константинополя, но и Ангоры. Под воздействием самих же союзников великий визирь послал к Кемалю паше делегата, чтобы узнать, как он отнесется к приезду специальной комиссии из Константинополя для совместного обсуждения вопроса о ратификации. Такая комиссия выехала через некоторое время в Ангору во главе с Иззет пашой и оставалась там до тех пор, пока вопрос о ратификации Севрского договора с ходом дальнейших событий не отпал сам собой. А тем временем союзные державы усиленно настаивали на каком-то своеобразном "условном" или "временном" ратифицировании Блистательной Портой навязанного ей мира и с этой целью выступили даже перед ней с коллективной нотой. Суть комбинации должна была свестись к тому, чтобы до одобрения договора парламентом султан ратифицировал мирный договор начерно или, как сказано только что, временно и условно; по получении одобрения парламента его надлежало снова ратифицировать и уже на этот раз окончательно. **Учитывая состав и настроение парламента, константинопольское правительство отказалось все же пойти на такое своеобразное нововведение в области международного права, и это - несмотря даже на перспективу ультиматума победителей. 23 декабря сенат, а 30 января палата депутатов дали, наконец, свое одобрение на ратификацию Севрского мира, и все как будто пришло в порядок. Тем не менее он так и не был ратифицирован**¹.

Իբրև դիվանագիտական վավերաթուղթ, Սևրի պայմանագիրը ստեղծվել էր միջազգայնագիտական, առավել ևս գրագիտական գրեթե անթերի մակարդակով: Դաշնագրի նախնական **տարբերակը** ձևավորվել էր **Փարիզում**, խմբագրվել, լրացվել և փոփոխվել էր **Լոնդոնում**, որոշ հոդվածներ շտկվել էին Հռոմում (հատկապես **Սան Ռեմոյում**) և **Տոկիոյում**: Այն վերջնական տեսքի էր բերվել **Սևրում** և ստորագրումից հետո էլ **բնագիրը**, ասել է թե՛ վավերացրած միակ օրինակը պահվում էր, այսօր էլ պահվում է թանգարանի վերածված ստորագրավայրի արխիվում:

Դաշնագրի բնօրինակը կազմվել էր **ֆրանսերենով**: Ստորագրումից փոքր առաջ այն թարգմանվել էր **անգլերեն և իտալերեն**: 1925 թ. ֆրանսերեն բնագրից (պրոֆ. Կյուլչնիկովի և Սարանինի գրչով) թարգմանվել էր ռուսերեն, որին կցված է ծավա-

¹ Պրոֆ. Յու. Վ. Կյուլչնիկովի առաջաբանը, էջ 16-17:

¹ «Севрский мирный договор и акты, подписанные в Лозане», со вступительной статьей Ю. В. Ключникова, Москва, 1927, стр. 18-19.

լուն առաջարկ: **Չկարողացանք պարզել, թե երբ և որտեղ էր այն թարգմանվել թուրքերեն: Բայց ստամբուլահայ մեր բարեկամների օգնությամբ գրադարանից «ձեռք բերեցինք» լատինատառ թուրքերենով հրատարակված պայմանագրի տարբերակը և պատմության մեջ առաջին անգամ այդ լեզվով ներկայացնում ենք հայ և եվրոպական ընթերցողի ուշադրությանը: Հայոց լեզվով միայն հայ ժողովրդին վերաբերող հոդվածները ռուսերենից թարգմանված տպագրվել են Երևանում, 1972 թ.՝ պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրած ժողովածուի էջերում:**

Ենթադրում ենք, որ թեկուզ այս քայլերով մենք հեշտացնում ենք հայ և Հայաստանի այն դիվանագետների գործը, որոնք միջազգային դատարան պիտի դիմեն Սևրի պայմանագիրը կյանքի կոչելու, մեր ժողովրդի արդարացի պահանջները կատարելու ցանկությամբ: Հուսանք և սպասենք...

Այժմ անդրադառնանք Սևրի պայմանագրի բովանդակած բուն խնդիրների համառոտագրված ներկայացմանը: Իբրև ընդհանրացում արձանագրենք, որ ժավալուն այդ դաշնագիրը բաղկացած է **433 հոդվածներից**, բաժանված է **13 մասերի**, որոնցից յուրաքանչյուրը կանոնակարգում է մեկ առանձին բնագավառ:

Առաջին մասը (հոդված 1-26) վերնագրված է **Ազգերի լիզայի կանոնադրություն**: Հայտնի է, որ Ազգերի լիզան ձևավորվեց 1919 թ. և նրա կանոնադրությունը վավերացվեց Վերսալի պայմանագրով: Միջազգային մարդաշատ այդ կազմակերպությունը **Վուդրո Վիլսոնի թափած ծով ջանքերի արդյունքն էր՝** չնայած այն պարագային, որ Հայաստանին մերժեց անդամակցել հիշյալ կազմակերպությանը: Այդուհանդերձ, Ազգերի լիզան հետագայում Ֆրիտյոֆ Նանսենի միջնորդությամբ օգնության ձեռք մեկնեց հայ ժողովրդին:

Երկրորդ մասն (հոդված 27-35) ունի **Թուրքիայի սահմանների վերտառություն**, ասել է թե՛ վերաբերում է նաև Հայաստան-Թուրքիա տերությունների սահմանների ջրբաժան գծին¹: Պայմանագրի 27-րդ հոդվածում արձանագրված է.

«Եվրոպական Թուրքիայի սահմանները հաստատվում են հետևյալ կերպ.

1. **Սև ծով** - Բոսֆորի մուտքից մինչև ստորև որոշված կետը

2. **Հունաստանի հետ:**

Պողիմից մոտավորապես 7 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Սև ծովի Բոյուք-դերելի գետաբերանի մոտ ընտրման ենթակա կետից դեպի հարավ-արևմուտք և մինչև Իստրանիա-դերելի ավազանի սահմանագիծը...»:

Ավելի հիմնավոր ներկայացնենք Ասիական Թուրքիայի բաժանման սահմանները, որովհետև Արևմտյան Հայաստանն ու Հայկական Կիլիկիան բռնազավթված էին և մտցված կայսրության տվյալ հատվածում: Այնտեղ ասված է.

«Ասիայում Թուրքիայի սահմանները պետք է սահմանվեն հետևյալ կերպ.

1* **Արևմուտքում և հարավում.**

Բոսֆորի մուտքից մինչև Մարմարայի և Ենթադրում որոշված այն կետը, որը տեղադրված է Միջերկրական ծովի արևելյան մասում, Ալեքսանդրետյան ծոցի մոտակայքում, Կարատաշ-Բուրունի մոտ.

Մարմարայի ծով, Դարդանելի ծոց և Միջերկրական ծովի կղզիներ և նաև այն կղզիները, որոնք գտնվում են Օսմանյան կայսրությանը մնացող ափերից երեք մղոն հեռավորության վրա:

III մասի IV բաժնի և 82 ու 22-րդ հոդվածների պայմանադրությունները:

2* **Սիրիայի հետ՝** այն կետից, որը ենթակա է ընտրության Հասան-Դեղեի մուտքի

արևելյան ափին, Կարատաշ-Բուրունից դեպի հյուսիս-արևմուտք մոտ 34 մ հեռավորության վրա և մինչև այն կետը, որը ենթակա է ընտրության Ջայխուն-Իրմաքե գետի վրա, Բաբելից մոտավորապես դեպի հյուսիս.

գիծը, որը ենթակա է տեղում որոշման, և որն անցնում է Կարատաշից դեպի հյուսիս. այդտեղից մինչև Ֆեզիք-Քալե.

Ջայխուն-Իրմաքեի հոսանքն ի վեր.

այդտեղից՝ դեպի հյուսիս-արևելք և մինչև այն կետը, որը ենթակա է ընտրության Ջայխուն-Իրմաքեի վրա, Դարսբազարից մոտավորապես 15 կմ դեպի արևելա-հարավ-արևելք.

գիծը, որը ենթակա է տեղում որոշման, անցնում է Կարա-Թեփեից դեպի հյուսիս. այստեղից էլ՝ մինչև Ջայխան-Իրմաքեի բաժանարարը, որը գտնվում է Դուլդուլ Դաղից արևմուտք.

Ջայխուն-Իրմաքեի հոսանքն ի վեր.

այստեղից՝ ընդհանուր հարավ-արևելյան ուղղությամբ և մինչև այն կետը, որը ենթակա է ընտրության Իմիր-Մուզի-Դաղի վրա, Գյաուր-Գեուլից մոտավորապես 15 կմ դեպի հարավ-արևմուտք.

գիծը, որը ենթակա է տեղում որոշման, անցնում է երկաթուղուց մոտավորապես 18 կմ հեռավորության վրա և Դուլդուլ Դաղը թողնում է Սիրիային.

այդտեղից դեպի արևելք և մինչև Ուրֆայից (Եդեսիա - Դ.Ղ.) մոտավորապես 5 կմ հեռավորության վրա գտնվող կետը.

համարյա ուղիղ գիծը, որը ենթակա է տեղում որոշման, այն ունի ընդհանուր ուղղվածություն արևմուտքից դեպի արևելք ու անցնում է Բաք, Այնթապ, Բիրիջիքի և Ուրֆա քաղաքները թողնում է Սիրիային.

այդտեղից դեպի արևելք և մինչև գետաբաժանի հարավարևմտյան ժայռամասերը, որը կատարում է Տիգրիսը Ազբեքից մոտավորապես 6 կմ դեպի հյուսիս հեռավորության վրա (Ջեյզիրե-Իբի-Օմարայից 27 կմ դեպի արևմուտք).

համարյա այն ուղիղ գիծը, որը ենթակա է տեղում որոշման, ունի ընդհանուր ուղղվածություն արևմուտքից դեպի արևելք և Մարդին քաղաքը թողնում է Սիրիային.

այդտեղից էլ դեպի այն կետը, որը ենթակա է ընտրության Տիգրիսի վրա և տեղադրված է ընտրության այդ կետից մոտավորապես 10 կմ դեպի հյուսիս.

Տիգրիսի հոսանքն ի վար՝ թողնելով Սիրիային այն կղզին, որի վրա է գտնվում Ջեյզիրե-Իբի-Օմար քաղաքը:

3* **Միջագետքի հետ՝**

այդտեղից՝ ընդհանուր ուղղությամբ արևմուտքից դեպի արևելք և մինչև այն կետը, որը ենթակա է ընտրելու Մոսուլի վիլայեթի հյուսիսային սահմանում.

գիծը, որը ենթակա է տեղում որոշման.

այդտեղից՝ դեպի արևելք և մինչև այն կետը, որտեղ այն հասնում է Թուրքիայի սահմանը Հայաստանի հետ.

Մոսուլի վիլայեթի հյուսիսային սահմանը, սակայն փոփոխված այնպես, որպեսզի գիծն անցնի Ամադիից դեպի հարավ:

4* **Արևելքում և հյուսիս-արևելքում՝**

վերևում որոշված կետից մինչև Սև ծով, Թուրքիայի և Պարսկաստանի միջև գոյություն ունեցող սահմանը և Ռուսաստանի ու Թուրքիայի միջև եղած Նախկին սահմանները, պահպանելով 89-րդ հոդվածի հիմնադրույթները (Վուդրո Վիլսոնի գծելիք սահմանները Թուրքիայի և Հայաստանի միջև Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթներում):

5* **Սև ծովը՝**

Քիչ ներքևում կտեսնենք, որ հիշյալ 89-րդ հոդվածի հիմնադրույթների համա-

¹ Այս խնդիրների մասին տե՛ս. Проф. Ю. В. Ключников, Мирные договоры империалистической войны, в конспективном изложении, изд. Коммунистической Академии, Москва, 1925, стр. 118-147:

ծայն՝ Թուրքիայի արևելյան սահմաններն ամբողջությամբ կից էին դառնում Սևրի պայմանագրի 89-90-րդ հոդվածներով ձևավորված Հայաստան պետության սահմաններին՝ սկսած Պարսկաստանի սահմանից մինչև Սև ծով: 27-րդ հոդվածի համաձայն՝ Թուրքիայի սահմաններից դուրս էին մնում նաև Կարսի, Արդահանի, Բաթումի մարզերի և Սուրմալու գավառի տարածքները¹:

Պայմանագրի երրորդ մասը վերնագրված է «*Политическое положение*» (Քաղաքական իրավիճակը) (հոդված 36-139), որն իր հերթին տրոհվում է *տասներեք* բաժինների:

Առաջին բաժինը վերաբերում է մայրաքաղաք **Կոստանդնուպոլսին** (հոդված 36), որի շուրջ դաշնակիցները մտորում էին պատերազմի առաջին իսկ օրերից, գուցեև դրանից էլ շատ առաջ: Արդյունքում թուրքերը փաստորեն հասան իրենց նպատակին, և Սևրում արձանագրվեց, թե. «Սույն պայմանագրի դրույթների պահպանումով հանդերձ, բարձր պայմանավորվող կողմերը համաձայն են, որ **Կոստանդնուպոլսի նկատմամբ** օսմանյան կառավարության ունեցած իրավունքներին վնաս չպետք է պատճառվի, ինչպես նաև նորին մեծություն սուլթանն ազատ է այնտեղ գտնվելու և **Նրանում պահպանելու օսմանյան կայսրության մայրաքաղաքը**»: Այս կետում թուրքերը փայլուն հաղթանակ տարան: Ի դերև ելան 4. Պոլիսը **վերադարձնելու** դաշնակիցների բազում պլանները²:

Երկրորդ մասի երկրորդ բաժնում (հոդված 37-61) վճռված էին աշխարհին հետաքրքրող, Եվրոպայից Ասիա երթևեկող նավագնացների անցնող **ջրուղիների՝ Բոսֆորին և Դարդանելին** տիրանալու խնդիրները: Սևրի 37-րդ հոդվածում ամրագրված էր. «Նավագնացությունը նեղուցներում, ներառյալ Դարդանելը, Մարմարայի ծովը և Բոսֆորը, այսուհետև պետք է բաց լինեն խաղաղ և պատերազմի ժամանակ բոլոր առևտրական ու ռազմական նավերի և բոլոր ռազմական ու առևտրական օդանավերի համար՝ առանց նավատորմի տարբերության»:

Այդ ջրերը չպետք է ենթարկվեն շրջափակման, պատերազմի ոչ մի իրավունք չի կարող իրացվել և թշնամական ոչ մի ակտ չի կարող կատարվել այնտեղ, բացի Ազգերի լիգայի խորհրդի որոշումների կատարման դեպքերից»³:

Պայմանագրի **երրորդ բաժինը** անդրադառնում էր **Ջյուրդիստանի** խնդրին (հոդված 62-64): 64-րդ հոդվածը նախատեսում էր, որ եթե քրդական ազգաբնակչությունը կղիմի Ազգերի լիգային և **Կպահանցի անկախություն**, ապա նրան իրավունք է վերապահվում անջատվել Թուրքիա պետությունից, կազմավորել ինքնուրույն միավորում՝ իր կազմում վերցնելով նաև **Սոսուլի վիլայեթը**:

Չորրորդ բաժինը քննում էր **Իզմիրի (Չմյուռնիայի - հոդված 65-83)** նույնպես բարդ խնդիրը: 69-րդ հոդվածով պայմանավորվող կողմերը որոշում էին հնամենի հունական այդ քաղաքը թողնել Թուրքիայի կազմում, սակայն Թուրքիան պարտավորվում էր ինքնորոշման իրավունք շնորհել հույն ազգաբնակչությանը, նրան տալով ինքնուրույն ղեկավարներ ընտրելու, նույնիսկ սեփական դրամանիշներ կտրելու արտոնություն:

Հինգերորդ բաժինը (հոդված 81-84) վերաբերում էր **Հունաստանին**: Հունաստանը ստացավ իր հայրենի, բայց վաղուց կորցրած նահանգները. **Թրակիան, Այդոնի-Իզմիրի ողջ վիլայեթը, Կոստանդնուպոլսի** մերձակա շրջանները, հնամենի պոնտական աշխարհը՝ **Տրապիզոնը, Օրդուն, Սամսոնը**: Չորսի խորհուրդը Վենի-

զելոսին իրավունք էր վերապահել զենքով նվաճել և Հունաստանին վերադարձնել հունական ջրերի ողջ ափամերձ շրջանները:

* * *

Սևրի պայմանագրի ստորագրման պահին հայկական և Հայաստանի պատվիրակությունների կազմում ևս արմատական փոփոխություններ էին կատարվել: Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը, հատկապես սփյուռքահայությունը դառն փորձով եկել էր այն համոզման, որ սխալ կլիներ դիվանագիտական աշխարհին ներկայանալ **Ճողված դրությամբ, այսինքն՝ երկու պատվիրակություններով**: Ամիրաժեշտ էր միավորել ազգային ուժերը և պայքարի հրապարակ նետվել **միավորված, համակամ, նպատակների միաձուլված ձևաչափով**:

Հայկական և Հայաստանի պատվիրակությունների կազմում ևս լրիվ փոփոխություններ կատարվեցին: Ամենայն Հայոց կաթողիկոս վեհափառ **Գևորգ Հինգերորդ Տիգրանի Սուրենյանցի** (1847, Թիֆլիս - 1930, Էջմիածին) ջանքերով գրեթե համահարթվեցին տարածայնությունները երկու **պատվիրակությունների միջև**:

Փարիզի խաղաղության կոնֆերանսում արդեն **միասնական** էին հանդես գալիս **Պողոս Նուբար փաշան** (1851, Պոլիս - 1930, Փարիզ) և **Ավետիս Ահարոնյանը**: Նրանց հավատամքն էր դարձել պայքարել **ազատ, անկախ Հայաստան, մեծ Հայաստան, ծովից ծով Հայաստան** ստեղծելու նշանաբանով: Պատվիրակությունների համակամ գործունեությունը կարծես թե հայ ժողովրդին հասցրել էր իր բաղձալի նպատակին: Այդ հաջողությունները գրանցվեցին Սան Ռեմոյի համաժողովում և այժմ Սևրում պետք է ներկա լինե՞ր պատվիրակներից մեկը:

1920 թ. մայիսի վերջերին հայ պատվիրակները դիվանագիտական առաքելության նպատակամղումով կանգ էին առել Թեմզայի ափերին բարձրացող **չքեղ մի հյուրանոցում**: Նրանք ուզում էին մեկ անգամ ևս ստուգել, թե ավանդական թուրքասեր **Անգլիան** այժմ կպաշտպանե՞ր Հայաստանի շահերը: Հոգնատանջ Պողոս Նուբարը Լոնդոնում հիվանդացավ և բուժման խիստ կարիք զգացվեց:

Ավետիս Ահարոնյանը փաստորեն մնաց մենակ իր զույգ օգնականների հետ: **Բայց նրա հետ էր ողջ հայ ժողովուրդը, մասնավորապես փոքրաթիվ լոնդոնահայությունը**: **Լոնդոնում Ա. Ահարոնյանին հանդիպեց մեծահարուստ մի հայ վաճառական և նրան նվիրեց ոսկեծայր հազվագյուտ գրիչ՝ խնդրելով Սևրի բախտորոշ պայմանագիրը ստորագրել իր տված գրչածայրով**: **Ա. Ահարոնյանը կատարեց այդ հայրենասեր հայի խնդրանքը, փաստաթուղթը ստորագրեց նրա նվիրած գրչով և հետո այն հանձնեց թանգարանին, որն այսօր էլ սրբազան մատուցի է վերածվել**:

Պայմանագրի ստորագրման պատմական արարողության ու արարողակարգի մասին թողնենք թող պատմի ամենահավաստի սկզբնաղբյուրը՝ Ավետիս Ահարոնյանը: Մեջբերենք նրա գրառումն առանց որևէ վիրահատության և ավելորդ մեկնաբանությունների: Ա. Ահարոնյանի հուշերում կարդում ենք.

ԹԻՒՐԵԱԿԱՆ ԴԱՇՆԱԳՐԻ ԱՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Օգոստոս 10, 1920, Պարիզ

Կեանքիս ամենաերջանիկ օրն է այս: Երեսուն տարուայ պայքարս, բողոքս, տառապանքս ու յոյսերս պսակուեցին փառաւոր յաջողութեամբ: Թիւրքական դաշնագիրն ստորագրուեց եւ բոլոր **դաշնակից պետութիւնների Համաժողովն այսպիսով հռչակեց Միացեալ, Անկախ, Ազատ Հայաստանը Սևրի սրահում**:

¹ Տե՛ս **Տիգրան Սահակյան**, Յավալի պայմանագրեր, Երևան, 2007, էջ 265-270:

² 4. Պոլիսը թուրքերից ազատագրելու դաշնակիցների ծրագրերի մասին մանրամասն տե՛ս «Константинополь и проливы», под редакцией **Е. А. Адамова**, Москва, 1925, стр. 51-350.

³ Տե՛ս **Ю. В. Ключников**, Мирные договоры..., стр. 119:

Այսօր ճաշից յետոյ, ժամը 4-ին, երկու օթոմոքիլներով մեկնեցինք Պարիզից: Ինձ ուղեկցում էին կինս, խորհրդականներ պ. պ. **Էնֆիաճեան** եւ դոկտ. **Նէվրուզ** եւ երկու քարտուղարներ:

Սերի պալատի առջեւ ձգուող ծառուղին երկու կողմից բռնուած էր գինուած պատույ պահակների երկու շարքով, որի միջով մեր կառքերն անցան մինչեւ հանդիսաւոր մուտքը:

Առաջին յարկի ընդարձակ դահլիճը, ուր բարձրացանք, արդէն շարուած էին պատուիրակների սեղաններն ու աթոռները, եւ նրանց յետեւներում տեղեր պատրաստուած իւրաքանչիւր պատուիրակութեան քարտուղարների համար: Իմ աթոռը գտնուում էր Չեխո-սլովակների եւ ռումէնների ներկայացուցիչների կողքին: Սեղանի վրայ առջեւս մի քարտ կար: «Plénipotentielle de l'Arménie»: «Լիազօր Հայաստանի»:

Իմ դէմ առ դէմ, հակառակ պատի տակ, տեղ ունէր Հունական պատուիրակութիւնը, գլուխ ունենալով Վենիզելուք: Նրանցից վար թիւրքերի տեղն էր: Ճակատի պատի տակ տեղ էին բռնել մեծ Դաշնակիցները:

Հետզհետէ դահլիճը լցուեց պատուիրակներով: Ժամը ուղիղ 4-ին հասաւ Միլըրան, նախագահը Conférence-ի: Եւ գրեթէ անմիջապէս յետոյ ներս հրաւիրեցին թիւրքերին վարի յարկից, ուր նրանք սպասում էին:

Կարգադրիչը, ներս առաջնորդելով թիւրք երեք պատուիրակներին, բարձրաձայն ասաց. Messieurs les plénipotentiaires de l' Empire Ottomane. «Պարոնայք լիազօրներ Օսմանեան Կայսրութեան»:

Ամենքը ոտքի կանգնեցին: Թիւրքերը ողջունեցին գլխի շարժումով եւ բռնեցին իրենց տեղերը:

Տիրեց ընդհանուր լռութիւն: Բոլոր այս ցերեմոնին մահուան պատժի ի կատար ածումի պատկեր ունէր: Պատժուողը Թիւրքիան էր:

Ընդհանուր լռութեան մէջ, ոտքի կանգնեց Միլըրան եւ ասաց հետեւեալը. - Messieurs, Je declare que le traité que nous allons signer est en tout exactement conforme a l'original:

«Պարոններ, կը յայտարարեմ որ Դաշնագիրը զոր պիտի ստորագրենք հիմա, իր ամբողջութեան մէջ ճիշդ կերպով համաձայն է բնագրին»:

Ահա հրաւիրեց թիւրքերին ստորագրել առաջինը:

Տեղից բարձրացաւ Համդի փաշան, նախագահը, եւ հաստատ, վճռական քայլերով առաջացաւ դէպի սեղանը, ուր դրուած էր դաշնագիրը, առաւ իրեն մեկնուած գրիչը եւ ջլուտ շարժումով, արագութեամբ ստորագրեց ցոյց տրուած տեղը: Նրան հետեւեցին իր երկու ընկերակիցները՝ Բիզէ Թէֆլիկ բէյ եւ Բէշիտ բէյ: Վերջինի դէմքը ջղածգաբար շարժուեւ էր, թէեւ նա աշխատում էր առհարկի անյոյզ երեւալ, իսկ Բիզէ Թէֆլիկը ծնօտն էր ջղայնօրէն շարժում:

Ստորագրեցին թիւրքերը եւ շտապով գրաւեցին իրենց տեղերը:

Այնուհետեւ հերթով եկան ստորագրելու Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի ներկայացուցիչները:

Երբ հերթը հասաւ փոքր Դաշնակիցներին, այբբենական կարգով Հայաստանը լինելով առաջինը, ինձ հրաւիրեցին ստորագրել: Ես ստորագրեցի երեք փաստաթուղթ՝ 1) բուն թիւրքական դաշնագիրը, 2) փոքրամասնութիւնների ստատուող Հայաստանի եւ մեծ պետութիւնների մէջ կայացած եւ 3) արձանագրութիւն այն մասին, թէ Իւզօ-սլաւները եւ Հէջազ բացակայ են եւ կարող են ստորագրել:

Երբ վերջացաւ ստորագրութիւնը եւ բազմութիւնը վերկացաւ, Վենիզելուսն առաջինը վազեց դէպի ինձ, ձեռքս բռնեց երկու ձեռքով եւ գրեթէ բացականչեց յուզուած. «Mes félicitations, mon cher président, apres vous, c'est moi qui est le plus heureux pour l'Arménie»:

«Շնորհաւորութիւններս, իմ սիրելի նախագահ. Չեզմէ յետոյ, ես եմ Հայաստանի համար ամենաերջանիկ անձը»¹:

Այսպիսով, 1920 թվականի օգոստոսի 10-ին ստորագրվեց հայ ժողովրդի համար դարերով երազած մի պայմանագիր, որն ի լուր աշխարհի ազդարարում էր մեծ Հայաստանի, ծովից ծով Հայաստանի ստեղծման **երանալետ արարողությունը**: Ամենից առավել ոգևորված էր **Ավ. Ահարոնյանը**, որը պայմանագիրը ստորագրելուց անմիջապէս հետո հեռագրում է Երևանի արտաքին գործերի նախարարությանը: Նրա հեռագրում (տեղադրված է Սիմոն Վրացյանի աշխատության էջերում) կարդում ենք. «Ճաշից հետո, ժամը 4-ին, երկու օթոմոքիլներով Փարիզից հասանք Սևր: Ինձ ուղեկցում էին խորհրդականներ Ա. Էնֆիաջյանը, բժ. Հ. Նևրուզը և 2 քարտուղարներ: **Սևրի հախճապակու հայտնի գեղարվեստական գործարանի գլխավոր դահլիճը պատրաստված էր խաղաղության համաժողովն ընդունելու համար**: Այդ դահլիճի ճակատի պատի տակ տեղ բռնեցին մեծ պետությանց պատվիրակները. աջ ու ձախ պատերի տակ երկու, թևերով՝ փոքր դաշնակիցների տեղն էր: Հայաստանն իր տեղն ուներ ձախ թևում, ռումինների և չեխոսլովակների կողքին, ուր և ես տեղ բռնեցի, մինչդեռ մեր խորհրդականներն ու քարտուղարները տեղավորվեցին պատվիրակների թիկնաթոռների հետևում, հատուկ պատրաստված աթոռների վրա: Իմ առջևի սեղանի վրա դրված էր փոքրիկ քարտ, որի վրա գրված էր Plénipotentielle d'Arménie:

Ժամը 4-ից անց էր, երբ գրեթէ նստած էին բոլոր պետությունների ներկայացուցիչները, ներս մտավ համաժողովի նախագահ պ. Ա. Միլըրան: Բացակայում էին միայն թուրք պատվիրակները, որոնք սպասում էին վարի հարկում: Նախագահի նշանի վրա նրանց ներս բերին, և առաջնորդող սպասավորը մուտքի առաջ կոչեց բարձրաձայն՝ «Messieurs les Plénipotentiaires de l'Empire Ottomane»: Համաժողովը ոտքի կանգնեց ի նշան ողջույնի: Կարմիր ֆեսերը գլուխներին, երկար ռետենգոտ հագած՝ ներս մտան երեք թուրք պատվիրակները, գլխի թեթև շարժումով ողջունեցին համաժողովը և իրենց տեղերը գրավեցին հույներից վեր: Գրեթէ անմիջապէս հետո ոտքի ելավ պ. Միլըրան և ասաց հետևյալը.

«Պարոններ, ես հայտարարում եմ, որ այս դաշնագիրը, որ պիտի ստորագրենք, միանգամայն համապատասխան է երկու կողմերի ընդունածին»:

Ապա հրավիրեց թուրքերին ստորագրել: Ոտքի ելան Համդի փաշան, Ռիզա Թևֆիկ բէյը և Խալիլ բէյը, վճռական քայլերով մոտեցան կենտրոնի սեղանին, ուր դրված էր դաշնագիրը, և իրար հետևից ջղուտ շարժումներով ստորագրեցին այն և գրեթէ հապճեպով գնացին իրենց տեղերը: Այնուհետև ստորագրեցին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչները և նրանցից անմիջապէս վերջը հրավիրեցին ինձ: Այսպիսով, պետությունների այբբենական անվանակարգի շնորհիվ Հայաստանը (Arménie) կրտսեր դաշնակիցների մէջ ստորագրեց առաջինը... Ես ստորագրեցի երեք ակտ. 1) Թուրքական դաշնագիրը. 2) Մեր երկրի փոքրամասնության վերաբերյալ դաշնագիրը Հայաստանի և մեծ պետությունների միջև և 3) Մի արձանագրություն Հէջազի և Հարավ-Սլավիայի բացակայության մասին: Օգոստոսի 15-ին, դաշնագիրն ստորագրելու առթիվ, հանդիսավոր մաղթանք կատարվեց Փարիզի եկեղեցում և ճաշից հետո, ժամը 4-ին, տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն մեր պատվիրակության շինության մէջ: Շատ մեծ բազմություն հավաքվեց տոնելու համար համազգային մեծ օրը՝ ճառեր ու բանաստեղծություններ արտասանվե-

¹ Ավետիս Ահարոնեան, Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լօզան (քաղաքական օրագիր), Պօսթըն, 1943, էջ 88-89:

ցին, հայրենասիրական երգեր երգվեցին ի պատիվ Ազատ և Անկախ Միացյալ Չայաստանի»¹:

Աւրի պայմանագրի երրորդ մասի, այսինքն՝ քաղաքական դրույթներ վերանագրված հատվածի վեցերորդ բաժինը կրում էր **Չայաստան** վերտառությունը, որը և ամփոփում էր հայ ժողովրդի ունեցած դարավոր երազանքի իրականացումը: Մեջբերենք այդ հոդվածներն ամբողջությամբ և նույնությամբ:

Չոդված 88. Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Չայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են Դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն (այս և հետագա ընդգծումները մերն են - Յ. Ղ.):

Չոդված 89. Թուրքիան և Չայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող մյուս կողմերը, համաձայնվում են երզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Չայաստանի միջև սահմանազատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Չայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ:

Չոդված 90. Այն դեպքում, եթե 89-րդ հոդվածի համաձայն՝ սահմանագիծը որոշելիս հիշյալ վիլայեթների ամբողջ տերիտորիան կամ նրա մի մասը հանձնվի Չայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարվում է հանձնված տերիտորիայի նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից: Սույն պայմանագրի որոշումները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տերիտորիաների նկատմամբ, այս պահից սկսած կգործադրվեն նաև այդ տերիտորիայի նկատմամբ:

Չայաստանի սուվերենությանը հանձնվող տերիտորիայի կապակցությամբ նրա վրա դրվող Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների բաժինը և դրանց բնույթն ու այն իրավունքները, որոնցով նա կարող է փաստարկել, կսահմանվեն սույն Պայմանագրի 8-րդ մասի (ֆինանսական դրույթներ) 241-244-րդ հոդվածների համաձայն:

Չաջորդ կոնվենցիաները կկարգավորվեն, եթե դա անհրաժեշտ լինի, այն բոլոր հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն Պայմանագրով և որոնք կարող են ծնունդ առնել հիշյալ տերիտորիայի փոխանցման կապակցությամբ:

Չոդված 91. Եթե 89-րդ հոդվածում նշված տերիտորիայի մի մասը հանձնվի Չայաստանին, ապա Սահմանագծման հանձնաժողովը, որի կազմը կորոշվի հետագայում, կստեղծվի երեք ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ արդեն ընդունված կլինի Չայաստանի և Թուրքիայի միջև տեղում սահմանագիծ անցկացնելու հիշյալ հոդվածում նախատեսվող որոշումը:

Չոդված 92. Ադրբեջանի և Վրաստանի հետ Չայաստանի սահմաններն ըստ պատկանելույն կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ:

Երբ 89-րդ հոդվածում նախատեսված որոշումն արդեն ընդունված կլինի և դրանից հետո այս կամ այն շահագրգռված պետությունները չեն կարողանա ընդհանուր համաձայնությամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կորոշեն Գլխավոր դաշնակից տերությունները, որոնք դրա հետ միասին պետք է հոգ տանեն սահմանազատումը տեղում գծանշելու մասին:

Չոդված 93. Չայաստանն ընդունում է, համաձայնելով դրանք մտցնել Գլխավոր տերությունների հետ պայմանագրի մեջ, այն որոշումները, որոնք այդ տերություններն անհրաժեշտ կհամարեն Չայաստանում այն բնակիչների շահերը պաշտպանելու համար, որոնք ռասայի, լեզվի և կրոնի առումով տարբերվում են ազգաբնակչության մեծամասնությունից:

Չայաստանը նմանապես համաձայնում է Գլխավոր տերությունների հետ Պայմանագրի մեջ մտցնել այն որոշումները, որոնք այդ տերություններն անհրաժեշտ կհամարեն տրանզիտի ազատությունը և այլ ազգերի առևտրի համար արդարացի պայմանակարգը պաշտպանելու համար»¹:

Ինչպես տեսանք, Չայաստանի քաղաքական խնդիրներին էին վերաբերվում պայմանագրի 83-93-րդ հոդվածները: **Դրանք, ծիշտ է, ոչ լրիվ, բայց նայնպես հանուր հայ ժողովրդի դարավոր բաղձանքների դիվանագիտական ձևակերպումներն էին, հույսի նշույլներ խավարապատ անապատների մթնախորշերում:**

Չինգ երկար ու ծիգ հարյուրամյակ էր անցել այն պատմաշրջանից, որը լի էր փոթորկահույզ, անհավասար պատերազմներով, երբ հայ ժողովրդի կարծր կրծքավանդակի վրայով վեր ու վար էին արել մահմեդապաշտ հորդաները, սեփական հպատակների՝ հարկային ծանր բեռի տակ կքած քրիստոնյաների նկատմամբ վարվել էին անասնական ատելությամբ, հարուստ բնություն ունեցող երկիրը վերածել մերկ անապատի: Քանի՞ տասնյակ շեն ու բարգավաճ քաղաքներ էին կործանել օսմանյան զավթիչները, քանի՞ մայրաքաղաքներ էին վերածել սովորական գյուղերի կամ էլ արոտավայրերի: Եվ այդ ամենի հիմնապատճառն ազգային պետականության կորուստն էր, Չայաստան աշխարհի մասնատումն ու բեկորացումը, սեփական բանակի բացակայությունը:

Չայոց առողջ բանականությունը, հոգևոր թե աշխարհական այրերը դեռևս պատմության ետնախորքից սկզբում երազում էին, քիչ անց պայքարում էին օտարի տիրապետությունից ազատագրվելու հույսերով: Նրանց ձգտումն էր սեփական պետության վերընծյուղումը, ժողովրդի փրկությունն իսլամ տիրակալների հայակույլ երախից:

Չայ էլիտան զգալով, որ միայն սեփական ուժերով, ազատագրական ոգորումներով չեն կարող իրողության վերածել իրենց հեռանետ ծրագրերը, փորձեր էր անում դիմել անպայման քրիստոնյա խոշոր որևէ տերության կամ պետությունների օգնության, որպեսզի կարողանար վերականգնել կորցրածը:

XIX դարի վերջին երեսնամյակից հայ բանագնացներն ավելի գործնական քայլերի դիմեցին, որը շարունակվեց հետագա զույգ տասնամյակներին: Չայկական հարցն իրոք դարձավ գորդյան հանգույց Թուրքիայի ու թուրքերի համար և չմարսվող ոսկորի նման դեմ առավ նրանց կոկորդին: Չարմանալի ժողովուրդ ենք եղել, այսօր էլ մնում ենք այդպիսին: Սեփական արյան գույնով ենք ներկել Չայրենիք-Չայաստանը, ամեն մի քարի ու թփի տակ անթաղ մեռելներ ենք թողել, սակայն միշտ էլ փայփայել ենք անկախ պետականության վերականգնման հույսերը: Այդ պարագան առավել հասունացված դիտարկվեց Աևրի պայմանագրի վավերացման պահին, ափսոս, ոչ երկար ժամանակով:

1. Ինչպես տեսանք, **Աևրի համաձայնությամբ օսմանյան Թուրքիան Չայաստանը ճանաչում էր ազատ, անկախ պետություն:** Չայաստանն ազատ ու անկախ էին ճանաչում նաև պայմանագիրն ստորագրող տասներեք մեծ ու փոքր այն պետությունները, որոնք Առաջին աշխարհամարտից իրենց սրերը հարթանակով էին

¹ Միմոն Վրացյան, Չայաստանի Չանրապետություն, Երևան, 1998, էջ 468-470: Տե՛ս նաև մենագրության երկրորդ բաժնի «Պայմանագրեր» գլուխը, տե՛ս նաև Ֆիգրան Սահակյան, նշված աշխատությունը, էջ 262-263:

¹ «Չայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Երևան, 1972, էջ 672-673:

դրել պատյանները: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ավետիս Ահարոնյանը, որպես լիազորված անձնավորություն, **որպես անկախ տերության ներկայացուցիչ, պայմանագրեր էր ստորագրում մյուս բոլոր պետությունների ղեկավարների հետ համահավասար: Մի խոսքով, և՛ իսլամապաշտ թուրքիան, և՛ քրիստոնյա եվրոպան անվերապահորեն ծանաչեցին Հայաստանի անկախությունը:**

2. Թուրքիան համաձայնում էր, կրկնում ենք, թուրքական պետության ներկայացուցիչները համաձայնում էին Արևմտյան Հայաստանի տարածքից երգրումի (Կարինի), Վանի, Բիթլիսի (Բաղեշի), Տրապիզոնի վիլայեթները հանձնել իրենց իսկական տիրոջը՝ Հայաստանին: Դաշնակիցները վավերացնում էին այդ որոշումը՝ միաժամանակ Ամերիկայի պրեզիդենտ **Վուդրո Վիլսոնին** իրավունք վերապահում թուրքիայի և Հայաստանի միջև ջրբաժան գիծն անցկացնել այնպես, որ վերջինս Տրապիզոնի երթուղիներով ազատ ելք ու մուտք ունենար դեպի Սև ծովը:

1920 թ. նոյեմբերի 22-ին Վ. Վիլսոնը ներկայացրեց իր որոշումը, որի համաձայն՝ սահմանը երկու երկրների միջով անցնում էր Կոտուրի կիրճով, ձգվում դեպի Վանա լճի հարավ-արևմուտք և Բիթլիս ու Մուշ քաղաքներից հարավ-արևմուտք: Ընդհանուր տարածքից դուրս էր մնում Վանի վիլայեթի կեսից ավելին և Սղերդի գավառը: Այնուհետև սահմանը ձգվում էր դեպի հյուսիս, անցնում էր զնկայից քիչ հեռու, որոշվում ըստ բնական աշխարհագրական պատմեշի: Դեպի Սև ծով մուտք գործելու համար Հայաստանի համար ելք էր որոշվում Դերսիմից հյուսիս ընկած տարածքը և ապա շարժ դեպի Տրապիզոն ու Ջանիկ:

Համաձայն վիլսոնյան ծրագրի՝ Հայաստանի տարածքը կազմում էր քառասուն հազար քառակուսի մղոն, որը հավասար էր շուրջ 98-100 հազար քառակուսի կիլոմետրի¹:

3. Տարածքի խնդիրն այժմ ընդհանրացնենք. 100 հազար քառակուսի կմ տրվում էր Սևրի Հայաստանին՝ Արևմտյան Հայաստանի երեք հարյուր քառակուսի կիլոմետրից:

Արևելյան Հայաստանի տարածքն **այդ պահին 30 հազար քառ. կմ էր: Կարսի մարզը 17 հազ. քառ. կմ էր: Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանը՝ շուրջ 30 հազ. քառ. կմ էին:** Հետևաբար, Սևրի պայմանագրի ստորագրումով և նրա սահմանած տարածքային պահանջները բավարարելու դեպքում Հայաստանի Հանրապետությունը կունենար շուրջ **հարյուր յոթանասուն հազար քառակուսի կիլոմետրանոց Հայոց հայրենիք, սեփական անկախ պետություն, զինանշան և օրհներգ:** Ահա այս խնդիրների լուծումն էր, որ Հայաստանը դարձնում էր երանավետ երկիր, հայ ժողովրդի այդքան կրած վերջերի սփոփարան: Սակայն միայն դրանք չէին...

4. Հայ գաղթականությանն էր վերաբերում պայմանագրի 125-րդ հոդվածը: Սեջրերենք այն ամբողջությամբ:

Բաժին 12-րդ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

Հոդված 125. Տասնութից բարձր տարիք ունեցող այն անձինք, որոնք սույն Պայմանագրին համապատասխան բնակություն են հաստատել Թուրքիայից անջատված տերիտորիայում, և որոնք ռասայի առումով տարբերվում են ազգաբնակչության մեծամասնությունից, սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո **միամ-**

¹ «Հայկական հարց, Հանրագիտարան», Երևան, 1996, էջ 437: **Յու. Բարսեղովի** (Մոսկվա) Վիլսոնի իրավաբանական պայմանագիրը հոդվածը:

յա ժամանակամիջոցում կարող են քաղաքացիություն ընտրել **հօգուտ Հայաստանի**, Ադրբեջանի, Վրաստանի, Հունաստանի, Հնդկաստանի, Ֆիլիպինների, Սինգապուրի, Սիրիայի, Բուլղարիայի կամ Թուրքիայի, եթե այն պետության ազգաբնակչության մեծամասնությունը, որի օգտին կատարվում է քաղաքացիության ընտրությունը, պատկանում է նույն ռասային, ինչ և քաղաքացիության ընտրության իրավունքը կենսագործող անձը¹:

Այս բաժինը հայ գաղթականությանն իրավունք էր վերապահում բռնագաղթից հետո վերադառնալ իրենց բնօրրանները, դառնալ Հայաստանի քաղաքացիներ: Տեսնում եք, ինչ նուրբ հարցեր չէին վրիպել Ա. Ահարոնյանի ուշադրությունից: Սակայն շարունակենք...

5. Պայմանագրի 4-րդ մասի 142-րդ հոդվածը նվիրված էր ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը: Ահա այն:

Մաս 4-րդ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Հոդված 142. Նկատի առնելով, որ 1914 թվականի նոյեմբերի 1-ից հետո Թուրքիայում գոյություն ունեցող տեռորիստական ռեժիմի պատճառով չէին կարող նորմալ կարգով տեղի ունենալ քրիստոնյաների դավանափոխություններ, այդ ամսաթվից հետո կատարված դավանափոխությունները չեն ընդունվում, և այն բոլոր անձինք, ովքեր մինչև 1914 թվականի նոյեմբերի 1-ը չեն եղել մուսուլման, կդիտվեն որպես ոչ մուսուլմաններ, եթե միայն նրանք, վերականգնելով իրենց ազատությունը, իրենց սեփական կամքով չեն կատարի այն բոլոր ձևականությունները, որոնք անհրաժեշտ են իսլամն ընդունելու համար:

Պատերազմի ժամանակ Թուրքիայում մարդկանց նկատմամբ կատարված վարագոյությունների պատճառած չարիքն առավելագույն չափով քավելու համար օսմանյան կառավարությունը պարտավորվում է իր և օսմանյան իշխանությունների կողմից ցույց տալ ամեն տեսակ աջակցություն՝ 1914 թ. նոյեմբերի 1-ից հետո անհետացած, առևանգված, ներկալված և ազատազրկված ամեն ռասայի և ամեն կրոնի մարդկանց որոնելու և ազատելու համար:

Տուժվածների՝ իրենց, նրանց ընտանիքների և նրանց մերձավորների բողոքներն ընդունելու, անհրաժեշտ հետաքննություններ կատարելու և վերջնական ձևով վերոհիշյալ անձանց ազատելու մասին որոշումներ հանելու գործում օսմանյան կառավարությունը պարտավորվում է դյուրացնել Ազգերի լիգայի խորհրդի կողմից նշանակվելիք խառն հանձնաժողովների գործողությունները:

Օսմանյան կառավարությունը պարտավորվում է հարկադրել, որ հարգվեն այդ հանձնաժողովների որոշումները և ապահովվեն այս ձևով իրենց բոլոր իրավունքները վերականգնած անձանց անվտանգությունն ու ազատությունը»²:

6. Պայմանագրի 144-րդ հոդվածով օսմանյան կառավարությունը չեղյալ էր հայտարարում հպատակների իրավունքները բռնաբարող 1914 թ. հունվարի 1-ից հետո հրապարակված բոլոր հրամանագրերը: Այժմ քրիստոնյա հպատակ ազգերն իրավունք էին ստանում վերստանալ իրենց լքյալ գույքը: Դրա համար Ազգերի լիգայի հսկողության տակ պետք է կազմվեին հանձնաժողովներ: Ահա այդ հոդվածը.

¹ «Ճակատագրական պայմանագրեր», կազմեց Գ. Գ. Ազատյան, Երևան, 1998, էջ 87:

² Նույն տեղում, էջ 88:

«**Հոդված 144. Օսմանյան կառավարությունն ընդունում է լքված սեփականության (Emval-ii-Metruné) վերաբերյալ 1915 թվականի օրենքի, ինչպես նաև այդ օրենքի լրացումների անհրավագիությունը և հայտարարում է դրանք վերացված և ուժը կորցրած ինչպես անցյալում, նույնպես և ապագայում:**

Օսմանյան կառավարությունը հանդիսավոր կերպով պարտավորվում է հնարավորության սահմաններում նպաստել, որպեսզի իրենց օջախները վերադառնան և իրենց գործերը վերսկսեն օսմանյան այլազգի այն քաղաքացիները, որոնք 1914 թ. հունվարի 1-ից հետո գաղթել են գազանությունների հանդեպ ունեցած վախից դրդված, կամ արտաքսվել են բռնադատման որևէ այլ եղանակով: Օսմանյան կառավարությունն ընդունում է, որ օսմանյան հիշյալ քաղաքացիներին կամ նրանց համայնքներին պատկանող այն անշարժ և շարժական գույքերը, որոնք կարող են որոնելով գտնվել, ում ձեռքումն էլ դրանք լինեն, պետք է որքան հնարավոր է շուտ վերադարձվեն (իրենց տերերին): Գույքերը վերադարձվելիս ազատ են լինում որևէ պարտիքներից և սերվիտուտներից, որոնցով նրանք կարող էին ծանրաբեռնված լինել, և վերադարձվեն առանց որևէ հատուցման այժմյան սեփականատերերին կամ գործածողներին, բայց այնպիսի հայցերի պայմանով, որոնք այս վերջինները կարող են հարուցել նրանց դեմ, ումից նրանք այդպիսիք ստացել են:

Օսմանյան կառավարությունը համաձայնում է այն բանին, որ Ազգերի լիգայի խորհուրդը միջնորդ հանձնաժողովներ նշանակի բոլոր այն վայրերում, որտեղ դա կհամարվի անհրաժեշտ: Այդ հանձնաժողովներից յուրաքանչյուրը կազմված կլինի օսմանյան կառավարության մեկ ներկայացուցչից, այն համայնքի մեկ ներկայացուցչից, որն իրեն համարում է տուժված կամ որի անդամն իրեն համարում է տուժված, և Ազգերի լիգայի խորհրդի նշանակած նախագահից: Միջնորդ հանձնաժողովները կվարեն այն բոլոր հարցերը, որոնք նշված են սույն հոդվածում, և դրանք կլուծեն արագընթաց վարույթի կարգով:

Հիշյալ միջնորդ հանձնաժողովներն օժտված կլինեն հետևյալ հրամանները տալու իշխանությամբ.

ա. անհրաժեշտ համարված ամեն տեսակ վերակառուցումների համար օսմանյան կառավարության կողմից բանվորական ուժ մատակարարելու մասին: Այդ բանվորական ուժը կհավաքագրվի այն տերիտորիայում ապրող ազգությանը պատկանող մարդկանցից, որտեղ միջնորդ հանձնաժողովն անհրաժեշտ է համարում հիշյալ աշխատանքների կատարումը:

բ. այն բոլոր անձանց մեկուսացման մասին, որոնք հետաքննությունից հետո կճանաչվեն որպես վայրագությունների կամ տեղահանությունների ակտիվ մասնակիցներ, կամ թե դրանց հարուցողներ. հանձնաժողովը կիրահանգի, թե այդ անձանց գույքի նկատմամբ ինչ միջոցներ պետք է ձեռք առնվեն:

գ. 1914 թ. հունվարի 1-ից հետո համայնքի մահացած կամ անհետացած անդամներին պատկանած բոլոր գույքերի և ամեն տեսակ սեփականության վերադարձման մասին, ընդ որում այդ գույքերը և սեփականությունը պետության փոխարեն կարող են վերադարձվել համայնքին:

դ. 1914 թ. հունվարի 1-ից հետո անշարժ սեփականության վաճառման կամ նրա նկատմամբ սեփականատիրական իրավունքների հաստատման ակտերը չեղյալ հայտարարելու մասին. այդ անշարժ գույքերի (այժմյան) տերերին վարձահատուցելու պարտականությունն ընկած կլինի օսմանյան կառավարության վրա և առիթ չի հանդիսանա իրավունքների վերականգնումն ուշացնելու համար: Միջնորդ հանձնաժողովը, սակայն, կունենա շահագրգռված կողմերի միջև արդարացի համաձայ-

նություններ հաստատելու իրավունք, եթե խնդրո առարկա սեփականության այժմյան տերը վճարել է որևէ գումար:

Օսմանյան կառավարությունը պարտավորվում է հնարավորության սահմաններում դյուրացնել հանձնաժողովի աշխատանքը և ապահովել նրանց որոշումների կատարումը, որոշումներ, որոնք կլինեն անբողբարկելի: Այդ որոշումներին չի կարող հակադրվել օսմանյան դատական կամ վարչական իշխանությունների ոչ մի որոշում»¹:

7. Շատ կարևոր էր պայմանագրի 277-րդ հոդվածը: Այն չեղյալ էր հայտարարում մինչև 1914 թ. օգոստոսի 1-ը, այսինքն՝ մինչև Առաջին աշխարհամարտի սկսվելն ու դրանից հետո կնքված բոլոր այն պայմանագրերը, որոնք վերաբերում էին օսմանյան թուրքիային, Հայաստանին, Ռումինիային: Փաստորեն, չեղյալ էին համարվում Բրեստ-Լիտովսկի, Բաթումիի թալանչիական դաշնագրերը: Հայաստանի Հանրապետությունն իր ձեռքերն արծակ էր համարում միջազգայնորեն պրկված այդ շղթաներից: Բերենք այդ հոդվածը:

Մաս 9-րդ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Բաժին 2-րդ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

«**Հոդված 277. Թուրքիան ընդունում է, որ վերացված են և վերացված են մնում մինչև 1914 թ. օգոստոսի 1-ը կամ այդ օրից հետո և մինչև Ռուսաստանի կամ նախկին Ռուսաստանի տերիտորիայի մի մասը կազմող զանազան պետությունների և կառավարությունների հետ սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը, ինչպես նաև Ռումինիայի հետ 1916 թ. օգոստոսի 15-ից հետո և մինչև սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը կնքված բոլոր պայմանագրերը, կոնվենցիաները կամ համաձայնագրերը**»²:

Սևրի պայմանագիրն արտահայտում էր թուրքական բռնապետությունից ազատագրված մի շարք այլ ժողովուրդների ազգային բաղձանքները և ստեղծում պետական նոր միավորումներ:

Հեջազն անկախանում էր, Պաղեստինը, Սիրիան, Իրաքը դրվում էին Ազգերի լիգայի հսկողության տակ, որն էլ իր հերթին, որպես մանդատային տարածք, հանձնվում էր Ֆրանսիայի ու Բրիտանական թագավորության վերահսկողությանը³: Թուրքիային զրկում էին Թրակիայի վրա ունեցած իր գերիշխանությունից, ինչպես նաև Էգեյան ծովի մեջ խարսխված կղզիներից, Կիպրոսից, Եգիպտոսից և արաբական մյուս բոլոր տիրույթներից: Հունաստանի տիրակալությանն էր հանձնվում Չմյուռնիան, որը կարող էր տիրել նրան, եթե ցանկանար բնակչության մեծ մասը, այսինքն՝ պարզ հանրաքվեից հետո:

Սևրի պայմանագիրը բովանդակում էր իրավական բազմաթիվ այլ ակտեր ևս, որոնք Թուրքիան դարձնում էին նախկին գերիշխանությունից զրկված մի պետու-

¹ «Ճակատագրական պայմանագրեր», 1998, էջ 89-90:

² Նույն տեղում, էջ 91:

³ Սևրի պայմանագրի մասին տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 672-683:

թյուն, վերջինիս պարտադրելով *վարձահատույց* լինել Առաջին աշխարհամարտի ժամանակ հանուր մարդկության դեմ գործած չարիքների գոնե մի մասի համար միայն: Ասում ենք մի մասի, քանի որ օսմանյան կայսրության և հատկապես երիտթուրքերի կատարած անմարդկային գործողությունների մասին եթե գրես՝ *ոչ թուղթ, ոչ էլ թանաք կրավականացնեն*:

Եվ այսպես, մենք ևս գրեցինք և կարդացինք Եվրոպային, Թուրքիային, Հունաստանին վերաբերող պատմության *մի երեսը միայն*, որը, դժբախտաբար, երկար կյանք չունեցավ, նույնիսկ չհասցրեց իրողության վերածվելու: Պատմության մյուս երեսում կանգնեց Մուստաֆա Բենալը՝ ոչ միայն չճանաչելով Սևրի փաստաթուղթն ստորագրող սուլթանի ներկայացուցիչների իրավասությունները, այլև զարմանալի խորամանկությամբ ջանաց կյանք հաղորդել մեռած Թուրքիային, Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ վերականգնել իր տիրույթները, չեղյալ հայտարարել Սևրի պայմանագիրը, գնալ դեպի Մոսկվայի, Կարսի ու Լոզանի պայմանագրերը: Մեջտեղում ամենից շատ տուժեցին Հունաստանն ու Հայաստանը: Այդ մասին ևս, թեկուզ համառոտ, պետք է ներկայացնել *պատմության մյուս երեսը*, որպեսզի ընթերցողը տեղեկանա եղելությանը, ճիշտ է, սրտի խոր կակիծով ու ողբերգությամբ, բայց հասկանա, թե իրերի բերումով հայ ժողովրդին պարգևած երջանկությունն ինչպես փոխվեց դժբախտության:

Ամփոփենք: Հաշվված ամիսներ են մեզ բաժանում ինչպես *Սևրի պայմանագրի* (10.VIII.1920), այնպես էլ ԱՄՆ-ի 28-րդ պրեզիդենտ *Վուդրո Թոմաս Վիլսոնի* (28.XII.1856-3.II.1924), Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման *իրավարարական փաստաթղթի* (22.XI.1920) ստորագրման *իններորդ տասնամյակից*: Պատմական հույժ կարևոր պայմանագրային այդ զույգ փաստաթղթերն իրենց ծննդավայրի արձանագրության պահին, այսօր էլ շարունակում են *անփոխարինելի* ու *բախտորոշ* դեր ստանձնել ինչպես ազատ, անկախ Հայաստանի պետության, առավել ևս աշխարհասփյուռ, հանուր հայ գաղթաշխարհի (Սփյուռքի) սոցիալ-քաղաքական կյանքում:

Փարիզի խաղաղության, միջազգային, բազմամարդ և երկարատև կոնֆերանսի (ընդհատումներով 18.I.1919-21.I.1920), Սան Ռեմոյի խորհրդածողովի (18-26.IV.1920), Սևրի գազաթաժողովի հանձնարարությամբ գործելու լիակատար իրավունք ստացած Վուդրո Վիլսոնը շուրջ 15 պետությունների կամքը կատարելով՝ մասնագիտական, հատկապես աշխարհագրագիտական հմտությամբ Հայաստանը տարանջատեց Թուրքիայից: Ավելին, նա կազմել տվեց իր ստորագրությամբ և ԱՄՆ-ի նախագահական կնիքով հաստատեց մի քարտեզ, որն այսօր էլ շեղև է մնում միջազգային հարաբերությունների պատմության էջերում: Այդ վավերաթղթերը շարունակում են պաշտպանել իրենց իրավաբանական ուժը և միջազգային դատական ատյաններին հիշեցնում են, որ պետք է վերահաստատել և գործադրության կյանք պարգևել դրանց:

Ըստ այդ վավերագրերի, փաստաթղթերի, միջազգային ուժ և գործադրության իրավունք ստացած պայմանագրերի՝ Թուրքիան պարտավորվում էր, համաձայնում էր Հայաստան նորակազմ պետությանը վերադարձնել նրա անկապտելի մասը հանդիսացող պատմական Հայաստանի մի մասը միայն, այն է՝ հարյուր հազար քառ. կմ., որն Առաջին հանրապետության տարածքին գումարվելով՝ կազմում էր 160 000 քառ. կմ տարածք: Թուրքիան ճանաչում էր, պետական ամենաբարձրագույն այրերն ստորագրում էին, թե Հայաստանն այդուհետև ազատ, անկախ պետություն է:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև վիլսոնյան փաստաթղթերին.

Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ) գերտերությունն իր գոյության ավելի քան *երկու հարյուրամյա պատմության ընթացքում ունեցել է քառասունչորս պրեզիդենտ*: Նրանցից հայ ժողովրդի կյանքում խաղացած բախտորոշ դերակատարմամբ առանձնանում է *Վուդրո Թոմաս Վիլսոնը* (1856-1924)¹:

Վուդրո Թոմաս Վիլսոն Ամերիկյան կառավարելով երկու ժամկետում (1913-1921 թթ.), խոր ակոս գծեց ոչ միայն Նահանգների, այլև համաշխարհային պատմության մայրուղիներում: Ըստ *տարահոսանք* արևմտյան պատմագրության *միաբերան* գնահատականների՝ նա իր կերտած բազմահարուստ կենսագրությամբ զբաղեցրեց ԱՄՆ-ի *խոշորագույն, եթե ոչ ամեն ախոշորագույն պրեզիդենտի պատվավոր աթոռը*:

Վուդրո Վիլսոնը մեծ ձևաչափի պետական գործիչ էր: Նախ Պրինստոնի համալսարանի մեծահամբավ ու բոլորանվեր սիրված պրոֆեսորը, քիչ անց նաև բուհն ավարտած բուհի երկարատև ռեկտորը միշտ սովորում էր, ուսումնասիրում էր, հետազոտում էր: Նրա սեղանի մշտական «հաճախորդներն» էին համաշխարհային մեծությունների կենսագրությունները, նրանց աշխատությունները՝ բնագրով թե թարգմանություններով (Վիլսոնը տիրապետում էր լեզուների):

Ջորջ Վաշինգտոն, Աբրահամ Լինկոլն, Նապոլեոն Բոնապարտ, Օտտո Բիսմարկ՝ ահա այն մեծությունները, որոնց անցած ճանապարհի ոչ մի քայլ չէին վրիպում նորաթուխ պրեզիդենտի սևեռում ուշադրությունից: Սակայն Վ. Վիլսոնը ոչ թե պատճենահանում էր նախորդներին, այլ այդ հենքին կոթնած՝ ստեղծում էր նորը, *վիլսոնյանը՝ սեփական ձեռագրով և ինքնատիպ աշխատածով*: Նրա ուղեգծած ճանապարհը գերադասելի էր բոլոր նախորդներից, դրանք ապրած լինեին, միևնույն էր, օվկիանոսի աջ թե ձախ ափերին:

Ամերիկայի 28-րդ պրեզիդենտը հմուտ տնտեսագետ էր: Խորությամբ տիրապետելով համաշխարհային տնտեսության առկա թե հեռակա զարգացման առաջընթացին, նա շախմատային այնպիսի հանճարեղ քայլեր կատարեց, որոնք կարճ ժամանակահատվածում իր կառավարած երկիրը վերածեցին *գերտերության*:

Առաջին աշխարհամարտի սկզբի երեք տարիներին գերադասելով զինված չեզոքության քնդաքականությունը՝ Վ. Վիլսոնն ԱՄՆ-ից տնտեսական, շատ դեպքերում նաև քաղաքական կախման մեջ դրեց պատերազմող զույգ խմբավորումների մեջ ծվարած բազմաթիվ տերությունների: Պատերազմի պահին վարկեր տրամադրելով, ապառիկով զենք և զինամթերք մատակարարելով նրանց՝ նախկինում շատ պարտքեր ունեցողից *դարձավ մեծագումար փողատեր, հզոր տերություն*:

Պատերազմից հետո հաղթող թե պարտված եվրոպական տերությունները ԱՄՆ-ին պարտք էին *տասնկես միլիարդ դոլար* (դոլարի գնողունակությունն այդ պահին շատ բարձր էր): Վիլսոնյան Ամերիկյան *Նյու Յորքի և Վաշինգտոնի պետական թե մասնավոր բանկերում ամբարեց աշխարհում կուտակած ծուլածո ոսկու հի-*

¹ Սույն հատվածը կազմելիս օգտագործել ենք. **Յ. Մ. Գերսոն**, Вудро Вильсон, Москва, 1983. Տե՛ս նաև “Вудро Вильсон, Мировая война, Версальский мир”, Москва-Петроград, 1923. **Գ. Գ. Մաշկյրյան**, Лига наций, Армянский вопрос и Республика Армения, Ереван, 1999. **Բյւզանդա Իլյուշնա**, Лига наций 1919-1934, Москва, 1982. **Ռիչարդ Գ. Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 2005: **Տիգրան Սահակյան**, Վուդրո Վիլսոն. Մարդը և քաղաքագետը, Երևան, 2006: **Նույնի** «Ցավալի պայմանագրեր», Երևան, 2007: **Արմեն Խաչիկյան**, Նախագահ Վիլսոնի Հայաստանի քարտեզը, Երևան, 2010. **Համբարձում Կարապետյան**, Սևրի պայմանագիրը Հայոց ճակատագրում, Երևան, 2004:

տուն տոկոսը: Ահա թե երբվանից Ամերիկյան դարձավ հարուստ Միացյալ Նահանգներ: Ահա թե երբ կռթնելով իր հարստությանը, նահանգներն իրենց կամքը սկսեցին թելադրել աշխարհի գրեթե բոլոր տերություններին¹:

Թոմաս Վիլսոնը միլիարդատեր նահանգների **խոնարի խավերի ծնունդ էր:** Նրա գրագետ, աստվածասեր ու աստվածավախ հայրը՝ **Ջոզեֆ Ռազլես Վիլսոնը** նույնիսկ սեփական առաստաղ չուներ հինգ հոգուց բաղկացած (ուներ ևս երկու դուստր) ընտանիքի գլխին: Քրիստոնեական հավատի քարոզիչը գավառից գավառ շրջելով, միշտ էլ ապրում էր **վարձու բնակարաններում:** Անշուշտ, ապրելակերպի նման չափավորությունն իր խոր կնիքն էր դրոշմել ապագա պրեզիդենտի հոգեկան կերտվածքի վրա:

Ինչքան էլ արտահայտված լինեին ԱՄՆ-ի միլիարդատերերի շահախնդրությունները, ինչքան էլ պաշտպանվեին հարուստ բուրժուազիայի իրավունքները (երբեմն հարկադրաբար), **Վ. Թոմաս Վիլսոնն իր հոգու անկյունում ռամիկների համար տեղ էր պահում: Նա չէր մոռանում երեկվա իր դասակիցներին, անտուն, անօթևան, ընչազուրկ խլեակներին: Նա չէր ուզում պատերազմ, որպեսզի այդ խեղճերը, որպես թնդանոթի միս, չօգտագործվեին պատերազմների բեմահարթակներում և չզոհվեին հարուստների ունեցվածքը կյանքի գնով պաշտպանելիս:**

Վուդրո Վիլսոնը խաղաղության դրոշակակիր էր: Նա, սակայն, ոչ թե **ժամ ժորեսի** կարգի պացիֆիստ էր, այլ **հնդիկ Գանդիի** ուսմունքի հետևորդը: ԱՄՆ-ի պրեզիդենտի մարդասիրությունը, ժողովրդասիրությունը որպես ուսմունք դուրս եկան իր կառավարած երկրի սահմաններից և նրան համաշխարհային փառք բերեցին: **ԱՄՆ-ի 28-րդ պրեզիդենտ Վուդրո Թոմաս Վիլսոնը 1920 թվականի նոյեմբերի 20-ին արժանացավ խաղաղության գծով Նոբելյան մրցանակի:**

Նա փաստորեն Ամերիկայի անդրանիկ այն նախագահն էր, որը դարձավ աշխարհի ամենաբարձր աստիճանի պարզակերպ: Աշխարհը մեծ բավականությամբ ընդունեց Վիլսոնի ստացած պարզաբան: Այդ ամիսներին լույս տեսած ամենատարբեր երկրների պարբերականների էջերը լիքն են Նոբելյան մրցանակակրին ուղղված դիֆերանսներով:

ԱՄՆ-ում մեկ դար շարունակ իշխող էր **Մոնրոյի դոկտրինան**, այն է՝ **«Ամերիկյան ամերիկացիների համար (տրված 1823 թվականին)»:** Ըստ այդ տեսության՝ Ամերիկայի պրեզիդենտներն իրենց կառավարման տարիներին իրավունք չուներին դուրս գալ երկրի սահմաններից, առավել ևս անցնել օվկիանոսի մյուս երեսը:

Վուդրո Վիլսոնն առանց երկնչելու առաջին անգամ խախտեց դոգմատիկ այդ կանոնակարգը. երկու անգամ եղավ Եվրոպայում, շրջեց **Փարիզում, Լոնդոնում, Յոննում, Վիեննայում, Վենետիկում:** Նա աշխարհին ապացուցեց, որ ինքը սիրում է մյուս բոլոր, հատկապես փոքր ժողովուրդներին, Ամերիկայում պայքարում է անազատության դեմ, իսկ Եվրոպայում, Ասիայում ձգտում է վերականգնել ազգերի կորցրած պետական ինքնուրույնությունը:

Վուդրո Վիլսոնն իր հռչակավոր **«Տասչորս կետերով»** շնորհալից հնչեղությամբ մուտք գործեց պատմության էջեր: 1918 թվականի հունվարի 8-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի լիազուստ միստը միաձայն հաստատեց այդ վավերաթուղթը, որն իր սուր ծայրով ուղղված լինելով **հաշտության մասին** լեհիսյան դեկրետի դեմ, միաժամանակ առանց հեղափոխական ցնցումների կապիտալիստական համակարգը փրկում էր վերահաս կործանումից:

Տիտանական ջանքերի շնորհիվ Վ. Վիլսոնը 1919 թ. փետրվարի 14-ին կարողացավ **վավերացնել տալ Ազգերի լիգայի կանոնադրությունը:** Հետագայում ՄԱԿ-ի

հիմնաքարը դարձավ միջազգային հզոր այդ կազմակերպությունը, ԱՄՆ-ի պրեզիդենտն այն համարում էր իր **արու զավակը** (նա ուներ երկու դուստր) և ջանք ու եռանդ չէր խնայում այն ծառայեցնել համուր մարդկության, հատկապես ճնշված, պետականազուրկ ժողովուրդների շահերին:

ԱՄՆ-ի 28-րդ պրեզիդենտ Վուդրո Թոմաս Վիլսոնը դարի զավակն էր, բուրժուական ամենահզոր պետության գերագույն կառավարիչը: Հետևաբար, նա ինչքան էլ ջանար դեմոկրատական սկզբունքներով վճռել աշխարհին վերաբերող բարդ ու բոլոր խնդիրները, միևնույն է, չէր կարող դուրս գալ այն շրջագծից, որը սահմանափակում էր նրա իրավունքները: Պրեզիդենտը պարտավոր էր կատարել Կոնգրեսի, տերության բարձրագույն այլ աստիճանների որոշումները:

Թերևս դրանով էր պայմանավորված, որ Կոնգրեսը մերժեց Վերսալի պայմանագրի վավերացումը, մերժեց ԱՄՆ-ին Ազգերի լիգային անդամ դառնալու վիլսոնյան առաջարկը: Կոնգրեսն իր նախագահին պարտադրեց ռազմական ինտերվենցիա կազմակերպել նորաստեղծ Ռուսաստանի դեմ և հնարավորին չափ արագ տապալել խորհրդային իշխանությունը: Նա երբեմն քայլեր էր անում, որոնք իր կամքին հակառակ էին: Կոնգրեսը ծայրերի չնչին առավելությամբ Վ. Վիլսոնին արգելեց դառնալ Հայաստանի մանդատատեր, որը, սակայն, ոչ միայն բացասաբար չազդեց դեպի հայ ժողովուրդն ունեցած նրա անսահման համակրանքի վրա, այլև առիթ դարձավ ավելի **բացարձակ ու ձեռարձակ պաշտպանել մեր ժողովրդի շահերը:**

Կիսակառույց այդ շենքն ավարտին հասցնելու նրա որոշումները շուտով հնարավորությունների բաց դռներ գտան դաշնակից տերությունների՝ իրեն ուղարկած **դիմում-ուղերձի, խնդրագրի մեջ: Փոքր-ինչ մանրամասները:**

1920 թ. ապրիլի 24-ին Իտալիայի Սան Ռեմո քաղաքի Դևաշան վիլայում կայացավ դաշնակից տերությունների գումարած կոնֆերանսի նախավերջին լիազուստ միստը: **Նիստին մասնակցում էին ԱՄՆ-ից Յոննում Ամերիկայի դեսպան Ռոբերտ Անդերվուդ Ջոնսոնը, Լեյանո Հարիսոնը, Հարթ Անդերսոն կրտսերը:** (Նահանգների ներկայացուցիչները Գերագույն խորհրդի միստին ներկայացան օրվա երկրորդ կեսին (ժամը 4-ին), երբ վճռվում էին **Հայաստանին վերաբերող խնդիրները:**)

Բրիտանական կայսրությունը ներկայացնում էին **Դեվիդ Լլոյդ Ջորջը** (վարչապետ), **Քեդլսթոնի կոմս Քերզոնը** (արտաքին գործերի պետական քարտուղար), **Ռ. Վանսիտարթը**, գնդապետ **Գրիթոն**, քարտուղար **Ս. Հանքին**, փոխգնդապետ **Լ. Սթորը:**

Ֆրանսիայի պատվիրակության կազմում էին **Ալեքսանդր Միլերանը** (վարչապետ), **Բերտելոն** (արտգործնախարար), **Կամբերը:**

Իտալիայից միստին մասնակցում էին **Նիստին** (վարչապետ), **Սցիալոյան** (արտգործնախարար), քարտուղար-թարգմանիչներ **Գարբասոն, Գալլին, Տրոմբետտին, Լեյտենանտ Յանչին:**

Ճապոնիայից կոնֆերանս էին ժամանել **Մացուի**, որի քարտուղարներն էին **Սաիտոն և Սավադան:**

Նիստը նախագահում էր **Նիստին**, ընդհանուր թարգմանիչն էր **Կամբերինգը:**

Նիստում քննարկվող խնդիրների երկրորդ հերթում նախագահող Նիստին՝ դիմելով կոնֆերանսականներին, հայտարարեց. «Նախորդ օրը ցերեկվա իրենց հանդիպման ժամանակ պրն. Լլոյդ Ջորջը բրիտանական պատվիրակության անունից հանձն առավ այս առավոտ Գերագույն խորհրդին ներկայացնել քննարկման **եզրակացությունների որոշ նախագիծ՝ ապագա հայկական պետության սահմանների վերաբերյալ:**

Ապա պաշտոնական թարգմանիչը ֆրանսերեն և անգլերեն լեզուներով ընթերցեց բրիտանական նախագիծը.

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Յ. Մ. Գերսոն**, Вудро Вильсон, Москва, "Мысль", 1983, стр. 3-5.

(ա) Դիմել պրեզիդենտ Վիլսոնին, որպեսզի Ամերիկայի Միացյալ Նահանգներն ընդունի Հայաստանի մանդատն այն սահմաններում, որոնք տրված են Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագծի առաջին տարբերակում:

(բ) Եթե Ամերիկայի Միացյալ Նահանգները չկամենան ընդունել մանդատը, Միացյալ Նահանգների պրեզիդենտին խնդրվում է հանդես գալ իբրև միջնորդ Հայաստանի սահմանների հարցում, ինչպես ասված է ստորև բերվող նախագծային հոդվածում:

(գ) Հետևյալ իմաստով հոդված պետք է մտցվի հաշտության պայմանագրում՝ Հայաստանի վերաբերյալ.

Թուրքիան, Հայաստանը և մյուս բարձր պայմանավորվող կողմերը համաձայն են դիմել Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտի միջնորդությանը Թուրքիայի և Հայաստանի սահմանների հարցում՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում և ընդունել այդ առթիվ նրա որոշումը, ինչպես նաև որևէ պայման, որ նա կառաջարկի դեպի ծով Հայաստանի անկախ պետության ելքի մասին:

Մինչև միջնորդությունը, Թուրքիայի և Հայաստանի սահմանները մնալու են ներկա վիճակում:

Հայաստանի սահմանները հյուսիսում և արևելքում, այն է՝ Հայաստանի և Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև տրվելու են Գերագույն խորհրդի կողմից միևնույն ժամանակ, ինչ որ Հայաստանի և Թուրքիայի միջև, չունենալով նույնիսկ այդ մասին կովկասյան երեք պետությունների կամավոր համաձայնությունը:

(դ) **Նախագծային կոմիտեն, անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով կոնֆերանսի մյուս հանձնաժողովների հետ, ուղղումներ կմտցնի համապատասխանաբար պայմանագրի V բաժնի III մասում և կանի դրանից բխող մյուս բոլոր փոփոխությունները:**

Պրն Բերտելոն ֆրանսիական պատվիրակության անունից ասաց, որ ինքն ընդունում է նախագիծը:

Սինյոր Նիտտին ասաց, որ ինքն առարկություն չունի և պաշտոնապես առաջարկում է ընդունել նախագիծը:

Պրն Լլոյդ Ջորջը հարցում արեց, թե եզրակացությունները պրեզիդենտ Վիլսոնին ներկայացվելու են Ռոմում Միացյալ Նահանգների դեսպանի միջոցով, որը մասնակցում է իրենց նիստին, Գերագույն խորհրդի նախագահի միջոցով, թե՞ երկուսն էլ փոխանցել են դրանք:

Լորդ Զերգոնը հիշեցրեց Գերագույն խորհրդին, որ մի քանի օր առաջ իրեն խնդրել էին ճեպագիր կազմել պրեզիդենտ Վիլսոնին ուղարկելու համար՝ ի պատասխան նրա նոտայի: Համաձայնել էին, որ նախագիծը ոչ այնքան Միացյալ Նահանգներին ուղղված դիմում է լինելու՝ Հայաստանի մանդատն ընդունելու, որքան առաջարկ՝ օգնելու սպաներ և զինամթերք տրամադրելով և ավելի ևս ֆինանսական օգնություն ընձեռելով: Նա հարցրեց, արդյոք ներկա դրությունն անկախ է լինելու նրանից, որը հանձնարարվել էր իրեն կազմել: Ինքն անձամբ հակված չէ չափից դուրս շատ գրություններ ուղարկել և գտնում է, որ երկու նախագծերը լավ կլինեն միացնել:

Պրն Լլոյդ Ջորջը կարծում է, որ կարևոր է առաջին հերթին պարզել, թե Միացյալ Նահանգները պատրաստ են վերցնել մանդատը, նախքան առաջարկելը, որ նրանք զինամթերք և ֆինանսական օգնություն տրամադրեն:

Պրն Միլերանը գտնում է, որ Հայաստանի վերաբերյալ Գերագույն խորհրդի եզրակացությունները պարունակող հղվելիք գրության մեջ կարելի է ակնարկել պրեզիդենտ Վիլսոնի նոտայի մասին:

Լորդ Զերգոնն առաջարկեց, որ բրիտանական պատվիրակությունը հաջորդ օրը քարմ նախագիծ ներկայացնի քննարկմանը:

Համաձայնեցին.
(ա) **Ընդունել նախագծի եզրակացությունները Հայաստանի վերաբերյալ՝ ներկայացված քննարկման բրիտանական պատվիրակության կողմից:**

(բ) **Որ բրիտանական պատվիրակությունը Գերագույն խորհրդի քննարկմանն է ներկայացնելու մի քարմ նախագիծ հաջորդ առավոտյան, որն արտացոլի արված եզրակացությունները և ակնարկ պարունակի պրեզիդենտ Վիլսոնի նոտայի մասին»:**

Հաշտության կոնֆերանսի վերջին օրը, այսինքն՝ 1920 թ. ապրիլի 26-ին վերոհիշյալ նախագիծը փոքրիկ վիրահատություններով միաձայն ընդունվեց չորս մեծ տեղությունների պատվիրակների կողմից: Հաջորդ օրը՝ ապրիլի 27-ին, պաշտոնական կից գրությամբ Հայաստանին վերաբերող բախտորոշ, երանավետ այդ որոշումն ուղարկվեց Ամերիկայի 28-րդ պրեզիդենտ Վուդրո թոմաս Վիլսոնին՝ նրան խնդրելով նախ ընդունել Հայաստանի մանդատը, եթե ոչ, ապա ստանձնել Հայաստան-Թուրքիա սահմանների բաժանարարի պարտականությունները²:

Որոշումը չգաղտնագրվեց մյուս կողմի համար: Ընդհակառակը, 1920 թ. մայիսի 11-ին երկրատեր նիստի նախագահ, Իտալիայի վարչապետ Նիտտիի ստորագրությամբ որոշման տեքստը հանձնվեց նաև մինչ այդ Ռոմ հրավիրված թուրքական պատվիրակությանը: Դաշնակիցները թուրքերին զգուշացնում էին պատրաստվել Սևրի պայմանագրի ստորագրմանը: Ջարմանալի չէր, որ թուրքերն այդ որոշումից նույնիսկ դժգոհության նշաններ ցույց չտվեցին: Ըստ երևույթին, նրանք առավել դաժան վճռի էին սպասում, քանի որ գիտակցում էին, թե ինչպիսի մեղքեր են գործել, ինչ դժբախտություններ են պատճառել քրիստոսապաշտ աշխարհին:

Անպատասխան չմնաց նաև Վ. Վիլսոնին ուղարկված Գերագույն խորհրդի որոշումը: Պրեզիդենտը ոչ երկար մտորումներից հետո հատուկ ուղերձ-նամակով նախ դիմեց ԱՄՆ-ի կոնգրեսին, նրանից խնդրելով համաձայնել, որ ԱՄՆ-ը դառնա Հայաստանի մանդատատեր, ապա ինքը կարողանար ստանձնել Հայաստան-Թուրքիա պետական սահմաններն իրավարար-բաժանարարի դերը:

1920 թվականի մայիսի 24-ին, ասել է թե՛ որոշումը թուրքերին հանձնելուց մեկ շաբաթ անց, Վուդրո Վիլսոնն իր խնդրանքն ուղարկեց կոնգրեսին և նույն օրվա առավոտյան նիստում այն ընթերցվեց կոնգրեսականներին: Նամակ-ուղերձը պատմական էր, ուստի այն ներկայացնենք ընթերցողի ուշադրությանն ամբողջովին:

¹ Կոնֆերանսի նիստերի արձանագրությունները՝ Վալտեր Դիլոյանի թարգմանությամբ, պրոֆ. Ջ. Կիրակոսյանի և Ռ. Սահակյանի առաջաբանով հրատարակվել են 1972: Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 3(34), էջ 19-68: Վերոհիշյալ ընդարձակ մեջբերումը տե՛ս նույն էջ 65-67:
² Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 669-670:

66-րդ Կոնգրեսի 2-րդ նստաշրջան, Ներկայացուցիչների պալատ
Փաստաթուղթ № 791

ՄԱՆԴԱՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

**Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտի ուղերձ-նամակը
Կոնգրեսին՝ որով խնդրվում է գործադիր իշխանություններին
լիազորել Հայաստանին մանդատ շնորհելու իրավասությունը:**

Ընթերցվել է 1920 թ. մայիսի 24-ին, ուղարկվել է
Արտաքին գործերի հանձնաժողովին և հանձնվել տպագրության

Պարոնայք Կոնգրեսականներ,

Մայիսի տասչորսին Միացյալ Նահանգների Սենատի քարտուղարից Գործադիր իշխանության գրասենյակում ստացվել է սույն նախաբանը և որոշումները պարունակող պաշտոնական ուղերձը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սենատի Արտաքին գործերի հանձնաժողովի ենթահանձնաժողովի կողմից անցկացվող լսումներին ներկայացված ապացույց-փաստարկները հստակ կերպով հաստատել են մեզ զեկուցված և Հայ ժողովրդին տառապանք պատճառած ջարդերի և այլ ոճիրների իսկությունը, և

քանի որ Միացյալ Նահանգների ժողովուրդը խորապես ցնցված է Հայաստանում ներկայումս տիրող սարսափազդու, անապահով պայմանների, սովի և թշվառության առիթով, և

քանի որ Հայաստանի Հանրապետության անկախությունը պատշաճ կերպով ճանաչվել է խաղաղության համաժողովի Գերագույն խորհրդի և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության կողմից, հետևաբար, և հենց դրանով պայմանավորված՝

որոշվում է, որ

Միացյալ Նահանգների Սենատը սույնով իր անկեղծ շնորհավորանքներն է փոխանցում Հայաստանի ժողովրդին՝ Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչման կապակցությամբ, հարգելով նրա տարածքային սահմանները՝ առանց կանխակալ կարծիքի և, հետևաբար, Միացյալ Նահանգների Սենատը սրանով հանդերձ հույս է հայտնում, որ հայ ժողովրդին շուտով կհաջողվի ստեղծել կայուն կառավարություն, անձի ազատությունների և իրավունքների հիմնավոր պաշտպանություն, և լիակատար կերպով կյանքի կոչել իր բուն ազգային նպատակները և, հետևաբար,

որոշվում է, որ

Բաթում նավահանգստում, ինչպես նաև դեպի Բաքու տանող երկաթգծի հատվածում Միացյալ Նահանգների քաղաքացիների համար կյանքի և գույքի անհրաժեշտ պաշտպանություն ապահովելու նպատակով նախագահից, պետական շահերի հետ անհամատեղելի չլինելու դեպքում, պահանջվում է՝ Միացյալ Նահանգների ռազմա-նավ և ծովային հետևակային զինուժ ուղարկել այդ նավահանգիստ՝ իրահանգված, որպեսզի այդ ծովային հետևակային ուժերը դուրս գան ափ և պաշտպանեն ԱՄՆ քաղաքացիների կյանքն ու գույքը:

Ես ստացա և կարդացի այդ փաստաթուղթը մեծ հետաքրքրությամբ և բավականությամբ, և պատճառը միայն այն չէր, որ նյութն արտահայտում էր իմ

անձնական գաղափարներն ու զգացմունքները՝ կապված Հայաստանի և հայ ժողովրդի հետ, այլ նաև և հատկապես այն պատճառով, որ այն ինձ համար, կարծես թե նաև Միացյալ Նահանգների ժողովրդի խոսքն է, որում արտահայտված են նրա անկեղծ և իրական համոզմունքները, խորը քրիստոնեական կարեկցանքը և նաև պարտքի զգացումը, որը, իրենց իսկ կարծիքով, մենք պարտավոր ենք ունենալ:

Ես կարող եմ միայն նախախնամություն համարել և ոչ թե սոսկ պատահականություն այն փաստը, որ համարյա նույն պահին ես տեղեկություն ստացա այն մասին, որ պետական գործիչների համաժողովը, որը ներկայումս անցկացվում է Սան Ռեմոյում՝ Կենտրոնական եվրոպայի պետությունների հետ, խաղաղության համաձայնագրի մանրամասները մշակելու նպատակով, որը հնարավոր չեղավ կատարել Փարիզի համաժողովում, պաշտոնապես որոշել է հստակ ուղերձ հղել ԱՄՆ կառավարությանը, որպեսզի այն ընդունի մանդատը: Նրանք նաև ավելացրեցին, որ կատարել են այդ քայլը «ոչ թե ելնելով այն ցանկությունից, որ խուսափեն իրականացնել այն բոլոր պարտավորությունները, որոնք ակնկալվում են նրանցից, այլ որովհետև պատասխանատվությունը, որ նրանք արդեն ստանձնել են՝ կապված Օսմանյան նախկին կայսրությանը վերաբերող կարգավորման հետ, լիովին շահագործում է իրենց իրավունակությունը, և որովհետև նրանք գտնում են, որ Հին աշխարհի նախապաշարումներից ազատագրված ուժի հայտնվելը դաշտում առավել մեծ վստահություն կառաջացնի և կընձեռնի կայունության համար ավելի ամուր երաշխիքներ ապագայում, քան դա կարող էր անել որևէ եվրոպական պետություն»:

Ավելի վաղ Փարիզի համաժողովներում համաձայնություն էր ձեռք բերվել այն մասին, որ այն զաղութների և տարածքների նկատմամբ, որոնք վերջին պատերազմի հետևանքով դադարել են լինել նախկինում իրենց տիրապետող պետությունների հսկողության ներքո, և որոնք բնակեցված են ժողովուրդներով, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն գոյատևել՝ կապված ժամանակակից աշխարհում տիրող լարված իրադրության հետ, պետք է կիրառել այն սկզբունքը, որ այդպիսի ժողովուրդների բարգավաճումն ու զարգացումը քաղաքակրթության սրբագույն պարտքն է, և այդ պարտքն իրականացնելու համար հարկավոր է ապահովել անվտանգության երաշխիքները: Ընդունվել է, որ որոշակի համայնքներ, որոնք նախկինում պատկանել են թուրքական կայսրությանը, հասել են զարգացման այնպիսի փուլի, որ նրանց հետագա գոյատևումն անկախ պետությունների ձևով կարող է ժամանակավորապես ճանաչվել՝ պարտադիր վարչական խորհրդատվություններ և օժանդակություն ցուցաբերելու պայմանով, մինչ այն պահը, երբ նրանք կկարողանան ինքնուրույն գոյատևել:

Այս սկզբունքի իրականացման համար, ինչպես նաև բարի կամեցողությամբ լի, որպեսզի նման խորհրդատվությունները և օժանդակությունը տրամադրվեն Հայաստանին, Սան Ռեմոյում խորհրդակցող պետական գործիչները պաշտոնապես խնդրել են ԱՄՆ կառավարությանը՝ ստանձնել Հայաստանի համար մանդատ ունենալու պարտավորությունը: Ես կարող եմ ի գիտություն Կոնգրեսի ավելացնել, որ այդ նույն նստաշրջանում որոշվել է խնդրել Միացյալ Նահանգների նախագահին՝ պարտավորվել վճռել Թուրքիայի և Հայաստանի միջև սահմաններին վերաբերող բարդ հարցի լուծումը երզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում, և այդ հիմքի վրա համաձայնեցվել է ընդունել նրա որոշումը, ինչպես և ցանկացած այլ պայման, որը նա կարող է առաջարկել՝ կապված Հայաստանի անկախ պետությանը դեպի ծով ելք տրամադրելու հետ: Այս գործողությունն իրականացնելու համար Թուրքիայի հետ համաձայ-

նագրի մեջ, որը ներկայումս գտնվում է ավարտական փուլում, որոշվեց ներառել հետևյալ կետն այն մասին, որ «Թուրքիան և Հայաստանը, ինչպես նաև մյուս Գերագույն համաձայնվող կողմերը համաձայնվում են ներկայացնել Միացյալ Նահանգների նախագահին, որպես արբիտր-հաշտարար, վճռելու երգրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանների հարցը և ընդունել նրա որոշումը, ինչպես և նրա կողմից առաջարկվող ցանկացած այլ որոշում, որ նա կարող է ստորագրել՝ կապված Հայաստանի անկախ պետությանը դեպի ծով ելք տրամադրելու հետ»։ Սույն որոշմանը սպասելու ժամանակահատվածում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմաններ են համարվում ներկայումս առկա սահմանները: Ես իմ պարտքն եմ համարում ստանձնել այս դժվարին և բարդ խնդրի լուծումը:

Սան Ռեմոյի խորհրդի հրավերին ի պատասխան, ես շտապ կերպով խորհուրդ եմ տալիս և խնդրում Կոնգրեսին՝ թույլ տալ Գործադիր իշխանությանը լիազորել Միացյալ Նահանգներին ստանալ մանդատ Հայաստանի համար: Ես կատարում եմ այս առաջարկությունը՝ լրջորեն համոզված լինելով, որ դրա իրականացումը համընկնում է Միացյալ Նահանգների ժողովրդի ցանկության հետ: Հայաստանի նկատմամբ կարեկցանքը հատուկ չէ մեր ժողովրդի մի հատվածին միայն, այլ այդ կարեկցանքն այս երկրում զարմանալի անկեղծությամբ և ինքնամղումով արտահայտվում է քրիստոնեական սովորականների կողմից՝ թե տղամարդկանց և թե կանանց, որոնց ինքնակամ հանգանակություններով էր, որ Հայաստանը փրկվեց իր գոյության համար այդքան ծայրահեղ իրավիճակում:

Իր հոգու խորքում այս հզոր և մեծահոգի ժողովուրդը Հայաստանի հարցը դարձրել է իր սեփական խնդիրը: Հենց այս ժողովրդին և նրա կառավարությանն են ուղղված Հայաստանի պայքարող ժողովրդի հույսը և լրջագույն ակնկալիքները, քանի որ նրանք այժմ դուրս են գալիս աննկարագրելի տառապանքների և փորձությունների ժամանակներից, և ես հուսով եմ, որ Կոնգրեսն իմաստուն կգտնվի՝ ամենաառաջադեմ դիրքերից ընդառաջ գնալով այդ հույսին և ակնկալիքներին: Ինձ անկախության և խաղաղ կյանքի հաստատման համար պայքարող շատ ժողովուրդների պատասխանատու ներկայացուցիչների կողմից տրված ակնհայտ ապացույցներից հայտնի է, որ նրանք նույնպես նայում են Միացյալ Նահանգների կառավարությանն արտասովոր վստահությամբ և համոզվածությամբ, և ես կարծում եմ, որ մենք ամենաքիչը դանդաղեցրած կլինենք քաղաքակրթության հուսադրող գործընթացները, եթե մերժենք այդպիսի ժողովուրդներին նրանց աջակից ընկերը և խորհրդատուներն դառնալու իրենց իսկ խնդրանքն այն դեպքում, երբ մեզ որպես հեղինակություն պաշտոնապես դիմել են՝ հայցելով խորհուրդ և օգնություն:

Ես գիտակցում եմ, որ համոզում եմ Կոնգրեսին շատ լուրջ ընտրություն կատարել, բայց ես կատարում եմ այդ առաջարկությունն այն համոզվածությամբ, որ ես խոսում եմ ամենահզոր քրիստոնյա ժողովրդի ոգուն և ցանկությանը համապատասխան: Հայաստանի հանդեպ կարեկցանքը մեր ժողովրդի սրտում առաջացել է նրա անբասիր խղճի թելադրանքով, զուլալ քրիստոնեական հավատից և քրիստոնյաներին ամենուր աջակցություն ցուցաբերելու նրանց ցանկությունից, որպեսզի նրանք ազատվեն նվաստացուցիչ հալածանքներից, կարիքից և կարողանան ոտքի կանգնել և զբաղեցնել իրենց տեղն աշխարհի ազատ ժողովուրդների շարքում:

Հայաստանի անկախության ծանաչումը մեր կողմից կնշանակի նրա ժողովրդի իրական ազատությունը և երաշխավորված երջանկությունը, եթե մենք խիզախորեն ստանձնենք նրանց ուղղորդելու և օգնելու պարտավորությունը,

որը և նախատեսվում է վերոհիշյալ մանդատի գործառույթներով: Հենց այդ պատճառով, ամենաանկեղծ հույսով լի և համակված այն զգացմունքով, որ ես տալիս եմ այնպիսի խորհուրդ, որից Կոնգրեսը չի ցանկանա շրջվել, ես կոչ եմ անում ընդունել հրավերը, որն այս պահին մեզ պաշտոնապես և հանդիսավոր կերպով ուղարկվել է Սան Ռեմոյի խորհրդի կողմից, որը երբեմնի Օսմանյան կայսրության կառավարության հետ կապված բազմաթիվ բարդություններ և դժվարություններ լուծելու դժվար առաջադրանք է ստացել և նրա կարգուկանոն և տանելի պայմաններ հաստատելու խնդիր է լուծում կայսրության այն հատվածներում, որոնք քաղաքակրթության շահերից ելնելով՝ այսուհետև անհնարին է թողնել թուրքական իշխանության տիրապետության տակ:

Վ. ՎԻԼՍՈՆ, Սպիտակ Տուն, 24 Մայիսի, 1920¹:

Նախքան այդ նամակը, այսինքն՝ դեռևս 1920 թվականի ապրիլի 23-ին ԱՄՆ-ի կառավարությունը դե ֆակտո ճանաչել էր Հայաստանի Հանրապետության անկախության իրավունքը, սակայն առանց նրա պետական սահմանների կանխորոշման: Այժմ Վ. Վիլսոնը Սենատից և հատկապես Կոնգրեսից պահանջում էր իրեն իրավունք արտոնել՝ ստանձնելու Հայաստանի մանդատը, որը կանխավ լուրջ դիմադրության հանդիպեց:

Հարցի քննարկումը սկզբում հանձնարարվեց ԱՄՆ-ի Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովին: Ստաբախումները սկսվեցին մայիսի 25-ին և ավարտվեցին հունիսի 1-ին²:

Չմերժելով Հայաստանին օգնելու անհրաժեշտությունը, սենատորների մեծամասնությունը դեմ արտահայտվեց Հայաստանի մանդատը վերցնելու առաջարկին: Սենատոր Դիտչոկը, արտահայտելով այդ մեծամասնության կարծիքը, մասնավորապես նշեց, որ ԱՄՆ-ը չի կարող իր վրա վերցնել Հայաստանի մանդատի պատասխանատվությունը, բայց առաջարկեց Հայաստանին տրամադրել 50 մլն դոլար՝ Հայաստանի կառավարության կողմից հետագայում պարտքը մարելու հանձնառության դեպքում (ԱՄՆ-ում գյուղատնտեսական գործիքներ, երկաթուղու զարգացման համար անհրաժեշտ նյութեր գնելու, ինչպես նաև կարգավորելու ֆինանսական ու բանկային գործը)³:

Հայկական մանդատի ընդունումը մերժեց ԱՄՆ-ի Կոնգրեսը, սակայն այն հիմք դարձավ Սևրի պայմանագրի 88-90-րդ հոդվածներին և «Վիլսոնյան Հայաստանի» սահմանագծմանը: Այսպիսով, Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրեսը, ծայրերի չնչին առավելությամբ, պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին արգելեց ընդունելու Հայաստանի մանդատը, այսինքն՝ մերժեց նրա խնդրանքը: Սակայն ծավալված պայքարն ապարդյուն չանցավ: Այն հաստատուն հիմք դարձավ Սևրի պայմանագրով վիլսոնյան Հայաստանի սահմանները որոշելիս:

Վուդրո Վիլսոնն իրոք սիրում էր հայ ժողովրդին, ձգտում էր հնարավոր ու անհնարին ամեն բան անել միացյալ, անկախ, մեծ Հայաստան ստեղծելու համար: Ժամանակակիցներն ու հետագա պատմաբանները, ԱՄՆ-ի նախագահի դեպի Հայաստան

¹ <http://www.anca.org/genocide/wilson.php> Տե՛ս նաև աշխատության երկրորդ գրքի չորրորդ բաժնում գետնեղված №8 վավերագիրը:

² Այս մասին տե՛ս Փալուստ Փալոյան, *Նշված աշխատությունը*, էջ 224-230: Տե՛ս նաև Տիգրան Սահակյան, *Վուդրո Վիլսոն, Մարդը և քաղաքագետը*, Երևան, 2006, էջ 37-39:

³ Նույն տեղում, էջ 224-225: Տե՛ս նաև "Congressional Record", Vol. LIX, part 8, p. 7875, 7876:

ունեցած վերաբերմունքով, նրան համեմատում են **Ա. Ս. Գրիբոյեդովի, Վալերի Բրյուսովի, Անատոլ Ֆրանսի, Ֆրիտյոֆ Նանսենի, Յոհաննես Լեփսիուսի, Ֆրանց Վերֆելի, Յու. Գլադստոնի** և օտարազգի շատ այլ այն գործիչների հետ, որոնք անկեղծորեն ցավ էին զգացել մեր ժողովրդի ապրած ծանր, անտանելի ողբերգության համար:

ԱՄՆ-ի Կոնգրեսի Հայաստանի մանդատի ընդունման մերժումը զայրացրեց հայասեր պրեզիդենտին և նրան հարկադրեց, որ առավել գործնական քայլեր կատարեր Հայաստանին օգնելու համար:

1920 թ. նոյեմբերի 22-ին, այսինքն՝ **ԱՄՆ-ի անկախության հարյուր քառասունհինգ թվականին Վուդրո Վիլսոնը** հատուկ նամակով դիմեց Դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի նախագահին, նրան տեղեկացնելով Հայաստանի մասին իր կայացրած որոշման մասին: Մեջբերենք այդ որոշման առաջին հատվածը.

ՆԱԽԱԳԱՅ ՎԻՍՈՆԻ ՆԱՍԱԿԸ

ՆԱԽԱԳԱՅ ՎԻՍՈՆԸ

Դաշնակից տերությունների
Գերագույն խորհրդի նախագահին

Պրն նախագահ,

Գերագույն խորհրդի սույն թվականի ապրիլի 26-ի որոշմամբ ինձ փոխանցվեց պաշտոնական առաջարկ՝ որոշելու Թուրքիայի և Հայաստանի նորաստեղծ պետության միջև սահմանների խնդիրը: Սույն թվականի օգոստոսի 10-ին Սևրի պայմանագիրը ստորագրող տերությունների ներկայացուցիչները համաձայնության եկան ինձ լիազորելու այս պատիվը և հայտնեցին իրենց պատրաստակամությունը՝ ընդունելու այն սահմանները, որոնք իմ կողմից կորոշվեն, ինչպես նաև համաձայնագրին ցանկացած այլ հավելում, որոնք ես կառաջարկեմ, որպեսզի Հայաստանը ելք ունենա դեպի ծով, և ցանկացած միջոցառում՝ այդ կերպ որոշված սահմանի երկարությամբ թուրքական տարածքը ապառազմականացնելու: Սևրի պայմանագրի Մաս III, Բաժին 6, Հոդված 89-ի իրավարար վճռի պայմանների համաձայն՝ ինձ տրված միջնորդային լիազորությունը հստակորեն սահմանափակվում է Թուրքիայի և Հայաստանի միջև երզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում սահմանագծմամբ: Ձեր որոշմամբ ինձ վրա դրված պատասխանատվության լիակատար ըմբռնումով եղա այս դժվարին գործին, պատրաստակամ ծառայելու հայ ժողովրդի, ինչպես և այս տուժած երկրում դեռևս մնացած բնակիչների շահերին՝ ինչ ազգության կամ ինչ կրոնական հավատքի էլ որ նրանք լինեն, ձգտելով գործադրել հնարավորինս առավելագույն արդարամտություն սահմաններձ տարածքներում ապրող բնակչության նկատմամբ՝ լինի այն թուրքական, քրդական, հունական, թե հայկական:

Ձեռնամուխ լինելով այս խնդրին, արդեն իսկ պարզ էր, որ որոշում կայացնելու համար բնակչության առկա էթնիկական և կրոնական բաշխվածությունը չորս վիլայեթներում չի կարող դիտարկվել որպես ուղենիշ, ինչպես աշխարհի այլ մասերում: Էթնիկական նկատառումը այս դեպքում, երբ բնակչությունն ի սկզբանե խառն էր տեղաբաշխված, էլ ավելի մշուշոտ է դարձել հայերի և հույների կոտորածների և տեղահանության զարհուրելի հետևանքների, ինչպես և մահմեդական բնակչության նույնքան սարսափելի կորուստների՝ զաղթականների տեղաշարժի, տիֆի համաճարակի ու այլ հիվանդությունների հետևանքով:

Իրավարար վճռի սահմանափակումը Հաշտության պայմանագրի Հոդված 89-ում նշված չորս վիլայեթներով կարծես պարտավորեցնում և պարտադրում է, որ հայկա-

կան պետությանը այս վիլայեթների սահմաններում տրվի հնարավորինս լայն տարածք, միևնույն ժամանակ նորաստեղծ պետության համար ապահովելով համարժեք բնական սահմանի և աշխարհագրական ու տնտեսական ամբողջականության պահանջները: Անհրաժեշտ է մտքում ունենալ, որ Հայաստանի նորաստեղծ պետությունը, որն, անշուշտ, ներառելու է նաև նախկին Ռուսաստանի անդրկովկասյան հայկական մարզերի մի մեծ բաժինը, սկզբից և եթ գրեթե հավասարապես կիսված մահմեդական ու քրիստոնեական և տարբեր ազգային ու ցեղային պատկանելության բնակչություն կունենա:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ըստ լեզվի և կրոնի կազմված կլինեն թուրքերից, քրդերից, հույներից, ղզլբաշներից, լազերից, ու ուրիշներից, ինչպես և հայերից: Իմ միջնորդային որոշմանը համծնված սահմաններում հայերի, թուրքերի, քրդերի և հույների՝ իրար հակասող տարածքային ակնկալիքները ոչ միշտ է հնարավոր իրար հետ ներդաշնակեցնել: Նման դեպքերում, իմ համոզմամբ, որոշիչ պետք է հանդիսանա ապագա Հայաստան պետության առողջ տնտեսական կյանքի խնդիրը: Ինչևէ, այնտեղ, ուր ճշգրիտ աշխարհագրական սահմանի պահանջները հնարավորություն են տալիս սահմանի երկայնքով ձգվող բոլոր լեռներն ու հովիտները, որոնք առավելապես քրդական կամ թուրքական են, ավելի շուտ թողնվել են Թուրքիային, քան տրվել են Հայաստանին, եթե միայն շուկայական կապերը կոնկրետ քաղաքների հետ չեն պարտադրել դրանք տալ Հայաստանի պետությանը: Բոլոր այն դեպքերում, երբ ցեղային կապերի և սեզոնային տեղաշարժերի վերաբերյալ մատչելի տեղեկատվություն կար, փորձ է արվել հարգել և պահպանել ցեղային միավորումների ամբողջականությունը և քոչվոր անասնապահների տեղաշարժը:

Այնուհետև պրեզիդենտը ներկայացնում է աշխարհագրական, բնապատմական, էթնիկական այն դժվարությունները, որոնք կանգնած էին իր առջև, այդ երկու երկրներն իրարից սահմանազատելիս: Սա փաստորեն կից գրությունն էր, բացատրական, որին հետևելու էր նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը **Հայաստան-Թուրքիա սահմանաքաժանման, Հայաստանին դեպի ծով ելք ունենալու, Հայաստանին սահմանակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ:**

Նույն 1920 թվականի նոյեմբերի 22-ին Վուդրո Վիլսոնը, ի լուր աշխարհի, հրապարակեց կոնկրետացված իր որոշումը Հայաստանի և Թուրքիայի սահմանների վերաբերյալ: Այն տպագրվեց աշխարհի ամենատարբեր լեզուներով և թուրքերենով: Շեշտում ենք՝ **թուրքերենով**, քանի որ այսօրվա թուրքերը հրաժարվում են՝ ասելով, թե իրենք ժամանակին ժանոք չեն եղել նման փաստաթղթի¹:

Մեջբերենք Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի սկզբնամասը միայն.

ՆԱԽԱԳԱՅ ՎԻՍՈՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի՝ դեպի ծով ելք ունենալու, և Հայաստանի սահմանին հարող թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ

Միացյալ Նահանգների նախագահ ՎՈՒԴՐՈ ՎԻՍՈՆԸ ԲՈՒՆՈՒՆ, ՌԻՍ ՈՐ ԴԱ ԿՎԵՐՍԵՐԻ, ՈՂՋՈՒՆՈՒՄ Է.

Նկատի ունենալով, որ 1920 թ. ապրիլի 26-ին դաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը Սան Ռեմոյի կոնֆերանսի ժամանակ առաջարկությունով դիմեց

¹ Քանի որ **որոշման** ընդհանուր տեքստը հայոց և անգլերեն լեզուներով զետեղել ենք մենագրության երկրորդ գրքի երրորդ բաժնում, ուստի այստեղ մեջբերենք միայն առաջին հատվածը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահին՝ հանդես գալու որպես իրավարար թուրքիայի և Հայաստանի միջև, չորս վիլայեթներում՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի սահմանների խնդիրը որոշելու համար:

Նկատի ունենալով նաև, որ 1920 թ. մայիսի 17-ին այս առաջարկությունն ընդունելու մասին իմ համաձայնությունը հեռագրվեց ամերիկյան դեսպանին՝ Փարիզում՝ Գերագույն խորհրդում ներկայացված տեղություններին փոխանցելու համար:

Նկատի ունենալով, որ 1920 թ. օգոստոսի 10-ին լիազոր ներկայացուցիչների կողմից Սևրում հաշտության պայմանագիր ստորագրվեց Բրիտանական կայսրության, Ֆրանսիայի, Իտալիայի ու ճապոնիայի և Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի ու Չեխոսլովակիայի՝ մի կողմից, և Թուրքիայի միջև՝ մյուս կողմից, որ այդ պայմանագիրն ի թիվս այլ դրույթների պարունակում էր հետևյալը:

«ՅՈՒՆԻՏ 89: Թուրքիան և Հայաստանը, ինչպես և մյուս Բարձր պայմանավորվող կողմերը համաձայն են Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի իրավարար որոշմանը՝ հանձնել Թուրքիայի և Հայաստանի միջև Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում սահմանի որոշման խնդիրը և ընդունել նրա որոշումն այս հարցի վերաբերյալ, ինչպես նաև համաձայնագրին ցանկացած հավելումներ, որոնք նա կառաջարկի, որպեսզի Հայաստանը էլք ունենա դեպի ծովը, և որպեսզի հիշյալ սահմանի երկարությամբ թուրքական հարակից տարածքն ապառազմականացվի»:

Նկատի ունենալով նաև, որ 1920 թ. հոկտեմբերի 18-ին Խաղաղության վեհաժողովի Գլխավոր քարտուղարությունը՝ գործելով դաշնակից տերությունների հանձնարարությամբ, Փարիզում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան միջոցով ինձ փոխանցեց վերը նշված պայմանագրի հաստատված օրինակը՝ ուշադրություն հրավիրելով նշված Յոթված 89-ին:

Ըստ այդմ, Թ. Վուդրո Վիլսոնը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը, ում վրա որ այսպիսով դրվել էր իրավարար առաքելությունը, քննելով խնդիրն առավել մատչելի հավաստի տեղեկատվության լույսի ներքո և արդարության բարձրագույն շահերից գործելու մտադրությամբ, սույնով հայտարարում է հետևյալ որոշումը»:

Այնուհետև ոսկերչական ճշգրտությամբ աշխարհագրագիտական և քարտեզագիտական հնուտ ձեռքբերով ներկայացված է այն սահմանագիծը, որը ջրբաժանի դեր կկատարեր դարավոր հակառակորդ երկու երկրների միջև: Այսպիսով, ըստ այդ որոշման կազմվում էր նաև քարտեզ և ԱՄՆ-ի պրեզիդենտի կնիքով, ստորագրությամբ վավերագրվելով, դրվում էր շրջանառության, ավելին՝ գործածության մեջ:

* * *

Այժմ անդրադառնանք ամենից բարդ, միաժամանակ հայ ժողովրդի համար կենսական առավել բախտորոշ նշանակություն ունեցող այն խնդիրներին, թե երկու հատորից բաղկացած ծավալուն սույն մենագրությունն ստեղծելիս որո՞նք են մեր հետապնդած նպատակները:

Ի վերջո, ի՞նչ ենք ցանկանում մենք, ի՞նչ են պահանջում հայ ժողովրդի զույգ հատվածները, այսինքն՝ **քսանամյա երրորդ** հանրապետությունն ու աշխարհով

մեկ տարածված հայրենակարոտ, **ավելի ստույգ՝ հայրենագուրկ սփյուռքահայությունը:**

Մեր բոլորիս պահանջը Թուրքիայից պարզ է, հստակ և կոնկրետացված: Մենք թուրքերից պահանջում ենք ճանաչել Սևրի (10. VIII, 1920) **պայմանագրի լեգիտիմությունը և վիլսոնյան Իրավարար վճռի** (22. XI, 1920) **կենսագործումը:** Ժամանակակից Թուրքիան պետք է ճանաչի հայ ժողովրդի նկատմամբ նախորդների կատարած ցեղասպանությունը, ապա նրան վերադարձնի բռնազավթած սրբազան **հայրենիքն ամբողջությամբ թե մաս-մաս, ինչպես կորոշեն միջազգային իրավաբանական ատյանները:**

Ինձնուրեք տարի է մեզ բաժանում իրավաբանական աշխարհի կողմից միաբերան հաստատված վերոհիշյալ պայմանագրերի ձևակերպումից: Հայ ժողովուրդը մինչև օրս էլ մնում է պահանջատեր, քանի որ դրանք մոռանալն անհնարին է, և մենք առաջնորդվում ենք հանրահայտ սրտամաշ այն սկզբունքով, թե **ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել:**

Սևրի պայմանագիրն ու վիլսոնյան բախտորոշ փաստաթղթերն իրենց ծննդյան օրվանից մինչև այժմ էլ եղել և մնում են **հայ պատմաբանների սկեռուն ուշադրության կիզակետում:** Երեք սերնդի պատկանող այդ պատմաբանների թիվն ահռելի է: Ներկայացնենք դրանցից **հատընտիրը:**

Նիկողայոս Ադոնց (այդ պահին Լոնդոնումն էր), **Լեո** (Առաքել Բաբախանյան – Թիֆլիս - Երևան), **Վահագն Դադրյան** (Վաչինգտոն), **Ռիչարդ Գ. Հովհաննիսյան** (Կալիֆորնիա), **Ջավեն Սըրըրյան** (Բեյրութ), **Մանուկ Ճիզմեճյան** (Ֆրեզնո), **Յուրի Բարսեղով** (Մոսկվա), **Ռուզաննա Իլյուխինա** (Մոսկվա), **Արա Պապյան** (Կանադա - Երևան) և շատ ուրիշներ:

Հայաստանի պատմաբաններից նշենք. **Ջ. Ս. Կիրակոսյան, Ե. Ղ. Սարգսյան, Ռ. Գ. Սահակյան, Գ. Գ. Մախմուրյան, Համբարձում Կարապետյան, Տիգրան Սահակյան, Ռաֆայել Համբարձումյան, Լավրենտի Բարսեղյան, Ստեփան Ստեփանյան, Ստեփան Պողոսյան, Արման Կիրակոսյան:**

Տարբեր կուսակցական պատկանելության տեր, տարբեր կողմնորոշում ու կարողություն ունեցող վերոհիշյալ պատմաբանները **մեկ հարցում միասնական են:** Նրանք **բոլորն էլ** Թուրքիայից պահանջում են ճանաչել Հայոց ցեղասպանության փաստացի կատարված լինելու իրողությունը և հայ ժողովրդին վերադարձնել վերջինիցս բռնազավթած և հանիրավի իր տերությանը բռնակցած **Արևմտյան Հայաստանն ու Հայկական Կիլիկիան:**

Անդրադառնանք վերոհիշյալ հեղինակներից մի քանիսի գրվածքների առանձին այն հատվածներին, որոնք վերաբերում են Սևրի դաշնագրին և վիլսոնյան վճռորոշմանը: 1920 թ. հոկտեմբերի 20-ին Լոնդոնում հաստատված **Նիկողայոս Ադոնցը** (1871-1942) «Հայկական հարցը Սևրում» վերտառությամբ հոդվածում ցնծությամբ է արտահայտվում վերջապես թուրքական բռնապետության մասնատման, թուրքահպատակ փոքր ժողովուրդների, այդ թվում արևմտահայության ազատագրման մասին:

Իրավամբ, հայ պատմագրության գիսաստղի փառքին արժանացած Ն. Ադոնցը գրում է. «Թուրքիայի ճակատագիրը վճռված է:

Քաղաքակիրթ աշխարհը, որ սպասել էր դարեր շարունակ, Սևրի պայմանագրի ստորագրման մասին լուրն ընդունեց թեթևացած շունչ քաշելով:

Թուրքիայի հիվանդ կազմվածքի համար այլ դեղամիջոց չգտնվեց, նրա առողջ մասերը կտրտելուց զատ: Թուրքիան անդամահատված է՝ բոլոր ազգային տարածքներն անջատված են և այժմ անկախ միավորներ են կազմում: Միայն թուրքական Անատոլիան է մնում նրա տիրապետության ներքո, և նույնիսկ որպես այդպիսին էլ

¹ Վ. Վիլսոնի որոշման ամբողջական տեքստը զետեղված է **Երկրորդ գրքի** № 17-19-րդ վավերագրերի մասնաբաժնում:

բաժանված է օտարերկրյա գոտիների, այնպիսի տնտեսական, ֆինանսական և քաղաքական պայմաններով է շղթայված, որ այսուհետև Թուրքիան, թուրքերի իսկ խոսքերով, «թողնվել է առանց աչքերի, ականջների, ձեռքերի կամ ոտքերի»:

Օսմանյան կայսրությունը, անկասկած, կործանված է: Նա ստացավ պատիժ, որին լիովին արժանի էր: Վերջապես եվրոպան քաջություն ունեցավ եթե ոչ ամբողջապես խորտակելու, գեթ դուրս քաշելու թունավոր սողունի ատամները, որին նա դարեր շարունակ սնուցել էր իր իսկ սեփական քաղաքակրթության կրծքին:

Այս անգամ դաշնակից տերությունները որոշակիորեն չեն կարող կասկածվել Թուրքիայի հանդեպ սովորական կողմնապահության մեջ: Նա մերժված է իր սև աներախտագիտության համար, իր դավաճանության և հանցանքների համար՝ իր վաղեմի հովանավորների նկատմամբ»¹:

Մեծ պատմաբանը, աշխարհագրագետն ու ազգագրագետը խորագիտակ հետազոտողի իր գրչով պատմական փաստեր էր մատակարարում Վ. Վիլսոնի լոնդոնյան կաթինետի աշխատողներին, որպեսզի Հայաստանի սահմանները որոշելիս նրանք ճշգրիտ ներկայացնեին սահմանագծերը, տեղանուններն ու անձնանունները: Կասկածից վեր է, որ Վուդրո Վիլսոնի ստորագրած Հայաստան-Թուրքիա սահմանային քարտեզն անցել էր Նիկողայոս Ադոնցի գրչի տակով: Այլապես միայն օտարագրիների աշխարհագրիտությամբ հազիվ թե հնարավոր լիներ նման ճշգրտությամբ, թեկուզ թղթի վրա, կարողանային երկիրը բաժանել հակառակորդ երկու պետությունների միջև:

Մուդրոսն ու Սան Ռեմոն, Փարիզն ու Վերսալն իրենց վրա էին հրավիրել պատմաբան Լեոյի (Առաքել Գարեգինի Բաբախանյան, 1860 Շուշի – 1932 Երևան) խորաքափանց ուշադրությունը: Բայց ամենից տպավորիչն ու ողբերգականը **1918 թ. հունիսի 4-ին ստորագրված Բաթումի պայմանագիրն էր:** Խայտառակ այդ «դաշնագրի» շուրջ ընթացող բանակցություններին որպես **փորձագետ** հրավիրված էր նաև պատմաբան Լեոն:

Նրա ներկայությամբ ստորագրվեց մի փաստաթուղթ, որի համաձայն՝ մի քանի օր առաջ հռչակված Հայաստանի Հանրապետությանը թողնված էր **ինը հազար քառակուսի կիլոմետր տարածություն:** Ձայրացած Լեոն դիմելով թուրք պատվիրակության գլխավոր խալիլ բեյին, հարցրեց, թե այդքան փոքր տարածքի վրա ինչպե՞ս պետք է ապրի մի ամբողջ ժողովուրդ: Ցինիկ թուրքերը պատասխանեցին, թե մենք այդ հողերը ձեզ ենք թողել ոչ թե ապրելու, **այլ իբրև գերեզման ծառայելու նպատակով, որը, մեր կարծիքով, բավարար է:**

Ձարմանալի է, որ **Սարդարապատի և Բաշ-Ապարանի**, ինչպես նաև **Ղարաքիլիսայի** հերոսամարտերից հետո (հաղթանակի լուրը դեռ Բաթում չէր հասել) Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար, գեներալ լեյտենանտ Վեհիբ Մեհմեդ փաշան, որը Բաթումում թուրքական պատվիրակության երկրորդ անդամն էր, իրեն շատ սանձարձակ էր պահում: 1918 թ. մայիսի 29-ին նա Բաթում եկած հայ պատվիրակներին ու նրանց ուղեկցող անձանց, այդ թվում պատմաբան Լեոյին բացեիքաց ասում է. «**Ճակատագիրը կը քշե Թուրքիան արևմուտքեն արևելք. մենք հեռացանք Բալկաններեն կը հեռանանք նաև Ափրիկայեն, բայց մենք պետք է տարածվենք դեպի արևելք, հոն է մեր արյունը, կրոնքը և լեզուն: Եվ ասիկա տարերային ձգողություն ունի: Մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքեստան և Ատրբեջան են: Մենք պետք է ծամփա ունենանք դեպի հոն: Եւ դուք՝ հայերդ, կանգնած եք մեր այդ ծամբուն վրա: Պահանջելով Վանը՝ դուք կը փակեք**

մեր ծամբան դեպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջևանը ու Չանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզ իջնելու Քուրի հովիտը և երթալու Պաքու: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ծամբան դեպի Ղազախ ու Գանձակ: Դուք պետք է մեկ կողմ քաշվեք և մեզ ծամբա տաք: Ահա թե ուր է մեր հիմնական վեճը»¹:

Լեոն վիրավորված էր թուրքերի պահվածքից, սրտում խոր կսկիծ էր անթելում, որ ինքը փոքր ժողովրդի զավակ է և չի կարողանում թշնամիներին այնպիսի հակահարված տալ, որպիսին նրանք երբեք չէին տեսել: Նա երազում էր հայ ժողովրդի համար գալիք երանավետ ժամանակներ, որն, իր կարծիքով, չուշացավ՝ եկավ 1920 թ. օգոստոսի 10-ին:

1925 թվականին «Անցյալից հուշեր, թղթեր, դատումներ» խորագրված իր աշխատության էջերում պատմաբանն ու Բաթումի բանակցություններից վիրավորված հայ քաղաքացին՝ Լեոն, արդեն հպարտությամբ գրում էր. «**Նույն ամռանը (1920 թ. – 3. 7.) օգոստոսի 10-ին ստորագրվում էր Սևրի դաշնագրությունը: Ահարոնյանը նստած էր Անտանտի ամենակարող ներկայացուցիչների հետ, դիմացն ունենալով հաղթահարված Թուրքիայի խղճուկ ներկայացուցիչներին, վորոնք միմիայն աղաչել, շնորհ խնդրել կարող էին: Հայաստանի համար գրված էր դաշնագրության մեջ, թե նա պիտի լինի անկախ պետություն և նրա արևմտյան սահմանը պիտի վորոշե նախագահ Վիլսոնը: Ահարոնյանը ստորագրեց այդ դաշնագրությունը: Ստորագրեց նաև Թուրքիան: Վոսկե գրիչը, վորով Ահարոնյանը ստորագրել էր Սեվրի դաշնագրությունը, գնաց յերկրպագության և հիացմունքի առարկա դառնալու Յեգիպտոսում, Ամերիկայում: Լրագիրները տպում էին այդ գրչի, նրա գծած ստորագրության և, վերջապես, ստորագրողի նկարները:**

Հայությունը, թվում էր, վերջապես հասավ իր դարավոր իղծին: Թվում էր, թե արդարանում էր Յեվրոպայի պաշտամունքը, վոր այնքան նվիրական և ջերմ յեռանդ է յեղել տասնյակ սերունդների համար: Արհամարված, վոչխարների պես կոտորված հայ ժողովուրդը, վերջապես, դառնում էր ոսմանյան գոռոզ ցեղի համար նախանձի առարկա: Կարդացե՛ք 4. Պոլսի այն ժամանակվա լրագիրները: Ազգային սուգ էր թյուրքության համար: Յեվ զսպելով իրանց վիշտը, համեստ գանգուրավորի լեզվով թյուրք լրագիրները մի տեսակ շնորհ էին խնդրում բախտավոր հայերից: Այո՛, բախտավոր էր հայը: Բախտը բարձրացրել էր նրան այնպիսի աստիճանների վրա, ուր յերբեք չէր յեղել նա: Յեվ պիտի կարողանա՞ր նա պահվել այնքան բարձրում»²:

Սևրի պայմանագրի պատմությունը հետաքրքրել է բեյրութահայ պատմաբան, քաղաքական գործիչ **Թորգոմ Վեհապետյանին** (Սիմոն Հովիվյան), որն այդ մասին գրում է. «1920, Ապրիլ 25-ին, Սան Ռեմոյի մեջ կը մշակուին Թուրքիոյ առաջարկուելիք հաշտութեան պայմանները:

Մայիս 11-ին, Վերսալի «ժամացոյց» սրահին մէջ թուրք պատուիրակութեան կը յանձնուի դաշնագիրը, 161 մեծագիր էջերով եւ 433 յօդուածներով, որուն կը կցուին երեք քարտէսներ, Պոլսոյ, Իզմիրի, Կէլիպոլուի եւ արեւելեան սահմաններու մասին:

Դաշնագրին ստորագրութիւնը տեղի կ'ունենայ 1920 Օգոս. 10-ին, Սեւրի մէջ, ներկայութեամբ դաշնակից գլխաւոր չորս պետութիւններուն՝ Անգլիոյ, Ֆրանսայի,

¹ *Ալեքսանդր Խատիսյան*, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1928, էջ 70:

² *Լեո*, Անցյալից հուշեր, թղթեր, դատումներ, Հայոց հարց..., Թիֆլիս, 1925, էջ 47:

¹ *Նիկողայոս Ադոնց*, Հայկական հարցի լուծման շուրջը, Երևան, 1989, էջ 12-13:

Իտալիոյ եւ Ճաբոնի: Կը մասնակցէին նաեւ Հայաստան, Պելճիքա, Յունաստան, Հիւսիսային Ամերիկայ, Փորթուկալ, Ռումանիա, Եւրոպայի եւ Զեմալուքի, որոնք կը նկատուէին դաշնակից փոքր պետութիւններ:

Հայաստանի Հանրապետութիւնը կը ներկայացնէր Աւետիս Ահարոնեան, իրեն ուղեկից խորհրդակցներ ունենալով Ա. Էմֆիաջեանը, Բժ. Յ. Ներուզը եւ երկու քարտուղարներ: Իսկ Թուրքիոյ Կառավարութեան ներկայացուցիչներն էին Համտի Փաշա, Ռիզա Թելֆիք Պէյ եւ Խալիլ Պէյ:

Այստեղ խօսքը տանք Ա. Ահարոնեանին, որպէսզի իր բառերով նկարագրէ խորհրդածողովի վերջամասին տպաւորիչ պատկերը. –

ժամը 4-ից անց էր, երբ նստած էին գրեթէ բոլոր պետութիւնների ներկայացուցիչները, ներս մտաւ Համաժողովի նախագահ՝ Պրն. Միլլըրան: Բացակայում էին միայն թուրք պատուիրակները, որոնք սպասում էին վարի յարկում: Նախագահի նշանի վրայ նրանց ներս բերին, եւ առաջնորդող սպասաւորը մուտքի առաջ գոչեց բարձրաձայն. – «Messieurs les Plénipotentiaires de l'Empire Ottoman».

Համաժողովը ոտքի կանգնեց ի նշան ողջոյնի: Կարմիր ֆետերը գլուխներին, երկար ռետենկոտ հագած՝ ներս մտան երեք թուրք պատուիրակները. գլխի թեթեւ շարժումով ողջունեցին Համաժողովը եւ իրենց տեղերը գրաւեցին, յոյներից վեր: Գրեթէ անմիջապէս յետոյ, ոտքի ելաւ Պրն. Ա. Միլլըրան եւ ասաց հետեւեալը. – «Պարոններ, ես յայտարարում եմ. այս դաշնագիրը որ պիտի ստորագրենք, միանգամայն համապատասխան է երկու կողմերի ընդունածին»:

Ապա հրաւիրեց թուրքերին ստորագրել: Ոտքի ելան Համտի Փաշա, Ռեզա Թելֆիք Պէյ եւ Խալիլ Պէյ, վճռական քայլերով մօտեցան կեդրոնի սեղանին, ուր դրուած էր դաշնագիրը եւ իրար յետեւից ջղուտ շարժումներով ստորագրեցին այն եւ գրեթէ հապճեպով գնացին իրենց տեղերը: Այնուհետեւ ստորագրեցին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի եւ Ճապոնիայի ներկայացուցիչները եւ նրանցից անմիջապէս վերջը հրաւիրեցին ինձ:

Այսպիսով, պետութիւնների այբբենական անունակարգի շնորհիւ Հայաստանը (Arménie) կրտսեր դաշնակիցների մէջ ստորագրեց առաջինը:

Ես ստորագրեցի երեք ակտ. –

1. Թրքական դաշնագիրը.

2. Մեր երկրի փոքրամասնութեանց վերաբերեալ դաշնագիրը, Հայաստանի եւ մեծ պետութիւնների միջեւ:

3. Մի արձանագրութիւն Հեռագի եւ Եւրոպայի բացակայութեան մասին»¹:

Աւրի պայմանագիրը, հատկապէս վիլսոնյան իրավարար վճիռը հիմնավորապէս զբաղեցրել են պրոֆ. **Յուրի Գևորգի Բարսեղովին** (Բարսեղյանին. 1925 թիֆլիս – 2009 Մոսկվա): Հայերի համաշխարհային միության ֆինանսական ու բարոյական հովանավորութեամբ ստեղծագործող բեղմնավոր գրիչ ունեցող հնուտ իրավագետ-պատմաբանը թողել է սովորածավալ **երեք հատորներ**, որոնք ամփոփում են գրեթէ բոլոր այն վավերագրերը՝ նվիրված **թե արևմտահայերի և թե արևելահայերի** ապրած ողբերգությանը **մեծ ու պզտիկ**, ջարդարար թուրք բորենիների կատարածի պատմությանը:

Յու. Բարսեղովը, ամփոփելով տարիներով կատարած իր հետազոտության արդյունքները, 2007 թ. նոյեմբերի 24-ին ինտերնետով տարածեց 16 էջանոց շատ արժեքավոր մի հոդված, որը վերնագրել էր «Арбитражное решение президента США Вудро Вильсона»: Աշխատության արժեքը բարձրանում էր նաև նրանով, որ նրա հեղինակն իրավագետ էր, միջազգային իրավունքի խորագիտակ մասնագետ և վիլ-

սոնյան փաստաթղթերը քննում էր այդ հարթության վրա: Նրա հետազոտության հիմք են ծառայել օտարալեզու աղբյուրներից առանձնացրած քիչ հայտնի կամ անհայտ վավերագրերը:

Պրոֆ. Յու. Բարսեղովը գրում է. «О территориальном разграничении турецкого и армянского государств. Обосновывая необходимость политической санкции за Геноцид армян, заместитель Верховного комиссара Великобритании в Константинополе Вэбб в телеграмме, направленной 3 апреля 1919 г. Парижской мирной конференции, писал: “Чтобы наказать всех лиц, виновных в зверствах над армянами, возникла бы необходимость подвергнуть казни всех турок поголовно, и поэтому я предлагаю, чтобы наказание скорее приняло бы форму расчленения по национальному признаку прежней Турецкой империи и в индивидуальном порядке – форму суда над высшими должностными лицами, теми, кто значится в моем списке, чья судьба будет служить примером для других. Такую позицию занимали все великие державы, участвовавшие в работе Парижской мирной конференции, в том числе США, которые не вели войну с Турцией. В меморандуме президента США В. Вильсона правительству Оттоманской империи, врученном 22 августа 1919 г. Верховным комиссаром США в Константинополе Бристолом, подчеркивалась прямая связь вопроса об отделении Армении с политикой геноцида»²:

1920 թ. հուլիսի 7-11-ը տեղի ունեցավ դաշնակիցների կոնֆերանսը Սպայում: Նրանք քննեցին Թուրքիայի խնդիրը և, իբրև պատասխան, Ալեքսանդր Միլլերանի ստորագրությամբ վերջնագիր ուղարկեցին Ստամբուլ: 1920 թ. հուլիսի 17-ին ստորագրված այդ որոշման մեջ օսմանյան ղեկավարությանը հիշեցնում էին, որ նրանք ցեղասպանության են ենթարկել հայ ժողովրդին, **որի պատճառով էլ Հայաստանը պետք է անջատվի թուրքական պետությունից**, ապա շարունակում. «В течение последних двадцати лет армяне подвергались резне в обстановке беспримерного варварства, а во время войны масштабы совершенных Турецким правительством резни, депортаций и дурного обращения с военнопленными неизмеримо превзошли даже его собственные предыдущие деяния.

Подсчитано, что с 1914 г. оно подвергло резне, под лживым предлогом мнимого восстания, 800 000 армян, включая женщин и детей, и выслало или депортировало более 200 000 греков и 200 000 армян из их мест проживания. Турецкое правительство не только не защитило своих подданных, принадлежащих другим расам, от грабежей, зверств и убийств, но имеется множество доказательств того, что оно несет ответственность за то, что руководило и организовывало зверства против народа, который оно обязано было защитить». По этой причине Союзные державы «не могут внести никаких изменений в положения, которые предусматривают создание свободной Армении с границами, которые президент Соединенных Штатов определит как справедливые и обоснованные»²:

Անդրադառնալով ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի առողջության խնդիրներին, Լլոյդ Ջորջն իր հիշողություններում գրում է. «Но беспокойный дух Вудро Вильсо-

¹ **Թորոնտ Վեհապետան**, Նոր սերունդը քաղաքական նոխազ, Ա. Հատոր. Պէյրոս, 1966, էջ 92-94: Տե՛ս նաև **Գարրիել Լազեան**, նշվ. աշխատ., էջ 158:

² Papers Relating to the Foreign Relations of the United States. 1919. The Paris Peace Conference, Vol. VII, p. 858.

² Documents on British Foreign Policy, 1919-1939. First series. Vol. VIII. 1920, p. 443-449, 543-546, 533-556.

на был не так слаб, как его тело, жизнь в котором едва теплилась. Когда Союзные державы взялись за разработку условий Мирного договора с Турцией без участия Америки, к нашему удивлению, пришло длинное послание, продиктованное парализованным, но все еще неукротимым идеалистом из Белого дома, послание, показывавшее, что интерес его к угнетенному христианскому населению Турецкой империи несколько не ослабел". Это послание подтверждало официальную позицию США по разрешению Армянского вопроса: "В подлинном интересе правительства Соединенных Штатов к плану, касающемуся Армении, не приходится сомневаться, и правительство уверено, что цивилизованный мир ожидает и требует самого благожелательного обращения с этой страной". *Государственный департамент заявлял, что границы Армении "должны быть установлены таким образом, чтобы удовлетворить все законные требования армянского народа и, в частности, обеспечить армянам удобный и свободный выход к морю". Заявив, что "специальные права на Лазистан едва ли обеспечат Армении этот выход к морю, необходимый для ее существования", США выразили, однако, надежду, что "Державы, принимая во внимание тот факт, что Трапезунд всегда был конечным пунктом торгового пути через Армению... решат уступить Трапезунд Армении"*¹:

Հաշվի առնելով ԱՄՆ-ի պրեզիդենտի՝ հայ-թուրքական հարաբերությունների խնդրում ունենալիք բաժանարարի կարևոր դերը, այդ մասին պրոֆ. Յոս. Բարսեղյանի շարադրանքի պարունակած փաստերի անհրաժեշտությունը, որոշեցինք նրա հոդվածի վերջին երեք էջը մեջբերել անբողբոջաբար:

Предложение об арбитраже было сделано президенту США Вильсону и принято им до подписания Севрского мирного договора. О том, что, кроме территориального ограничения объема третейской компетенции, арбитраж не был обусловлен другими требованиями, и что он, в частности, не был поставлен в какую-либо связь с подписанием будущего мирного договора, говорит сам арбитр. В послании Конгрессу 24 мая 1920 г. президент констатировал, что до подписания Севрского договора *"было решено просить президента Соединенных Штатов взять на себя арбитраж в сложном вопросе о границе между Турцией и Арменией в провинциях Эрзерум, Трапезунд, Ван и Битлис и принять его решение на этой основе, так же как и любое условие, которое он может порекомендовать относительно выхода к морю для независимого государства Армения"*².

В сопроводительном письме к арбитражному решению, адресованном председателю Верховного совета Союзных держав, арбитр констатирует: "По решению Верховного совета от 26 апреля этого года мне было направлено приглашение выступить арбитром по вопросу о границах между Турцией и новым государством Армения"³.

В преамбуле самого решения арбитр указывает на приглашение Верховного совета как на правовое основание арбитража: *"Поскольку 26 апреля 1920 г. Верховный совет Союзных держав на конференции в Сан-Ремо обратился*

¹ *Ллойд Джордж Д.* Правда о мирных договорах. М., 1957, т. II, с. 418.

² 66-th Congress. 2nd Session. House of Representatives Doc. № 791.

³ Papers Relating to the Foreign Relations of the United States. 1920. Vol. III, p. 790-795.

к президенту Соединенных Штатов Америки с приглашением выступить в качестве арбитра в вопросе о границе между Турцией и Арменией, которая должна быть установлена в четырех вилайетах — Эрзерум, Трапезунд, Ван и Битлис; и поскольку 17 мая 1920 г. о моем согласии с этим предложением было сообщено телеграммой американскому послу в Париже для передачи державам, представленным в Верховном совете; "...Поэтому я, Вудро Вильсон, президент Соединенных Штатов Америки, на которого таким образом возложили полномочия арбитра..." и т.д'. 17 мая 1920 г., т.е. опять-таки до подписания Севрского договора, президент США сообщил державам о принятии им обязанностей "арбитра армянских границ".

Таким образом, компромисс представлял собой самостоятельное и от Севрского договора не зависящее соглашение об арбитраже между правительствами Великобритании, Франции, Италии и Японии, действовавшими в качестве членов Верховного совета Союзных держав, и Вудро Вильсоном, действовавшим в качестве президента США. Тем самым эти державы согласились, что предписания арбитра будут окончательными, поскольку это касается их. Обязывающую силу арбитража президента США признали все участники компромисса. Она была однозначно подтверждена, в частности, премьер-министром Великобритании Ллойд Джорджем на заседании Верховного совета в Сан-Ремо 24 апреля 1920 г., проходившем в присутствии представителей США. Приведем соответствующее место из протокола заседания: "Г-н Ллойд Джордж подчеркнул, что необходимо только заявить, что, каким бы ни было решение президента Соединенных Штатов, т.е. решит ли он, что вся территория или часть ее должны быть переданы или Армении или Турции, или будет ли Армения иметь доступ к морю, - оно будет принято Союзными державами, а также Турцией. Сам он не испытывает особых трудностей в этом деле, и была бы большая польза, если бы Соединенные Штаты проявили определенный интерес к будущему Армении"².

Поэтому в США отмечали, что "постольку, поскольку это касается Америки и Союзников, отказ или аннулирование Севрского договора не может повлиять на арбитражное решение Вильсона, так как решение президента покоится не на Севрском договоре от 10 августа 1920 г., а на приглашении Верховного совета Союзников от 26 апреля 1920 г. Приглашение Совета и Севрский договор не связаны друг с другом и независимы друг от друга. В приглашении президенту не было поставлено никаких условий"³. Специфика этого арбитража состояла в том, что сторонами в нем выступали прежде всего державы, ответственные за послевоенное мирное урегулирование. Что же касается правительств разграничиваемых сторон, а именно Армянской республики и Османской империи — в то время единственного турецкого правительства, признававшегося международным сообществом, то они вместе с рядом других государств присоединялись к компромиссу, подписав 10 августа 1920 г. Севрский мирный договор. Ст. 89 договора фиксировала, что "Турция и Армения, а также другие Высокие Догова-

¹ Papers Relating to the Foreign Relations of the United States. 1920. Vol. III, p. 795-804.

² Documents on British Foreign Policy, 1919-1939. First series. Vol. VIII. p. 1-230.

³ См. Lausanne Treaty, Turkey and Armenia, N Y., 1926, p. 166.

ривающиеся Стороны соглашаются представить на третейское решение президента Соединенных Штатов Америки определение границы между Турцией и Арменией в вилайетах Эрзерум, Трапезунд, Ван и Битлис и принять его, а также любые меры, которые он может предписать относительно выхода Армении к морю и относительно демилитаризации любой части оттоманской территории, прилегающей к названной границе".

*Абзац 1 ст. 90 дополнительно разъяснял, что "в случае, если установление границы в силу статьи 89 повлечет за собой передачу Армении всей или части территории названных вилайетов, Османская империя ныне же заявляет, что она отказывается со дня решения от всяких прав и правооснований на переданную территорию. Постановления настоящего Договора, применяемые к отделенным от Турции территориям, будут с этого момента применяться и к этой территории"*¹.

В связи с тем, что Османская империя и Армения, а также государства, иные чем первоначальные участники компромисса, присоединились к его условиям через подписание Севрского мирного договора, который не был ратифицирован и юридическую силу не обрел, может возникнуть вопрос об обязательной силе арбитража в отношении этих государств.

Передача Османской империей и Арменией вопроса на третейское решение была совершена в соответствии с действовавшими законами этих стран в качестве национальных, государственных, а не межгосударственных актов и, следовательно, от ратификации международного договора не зависела.

По самой природе арбитража решение арбитра принимается сторонами априорно, оно обязательно для них и в ратификации, естественно, не нуждается. Арбитражное решение, после того как оно вынесено, становится обязательным для сторон и должно добросовестно выполняться. *Турция и Армения, обратившись к арбитражу, согласились, что предписания арбитра, поскольку это касается их, будут окончательными. Они обязались признавать и соблюдать это правоформирующее международное соглашение.*

В соответствии с правом международных договоров пересмотр обязательств, вытекающих из арбитража, возможен только с согласия всех сторон соглашения и в особенности стороны, в пользу которой вынесено арбитражное решение.

Арбитражное решение президента США было вынесено 22 ноября 1920 г. Решением арбитра устанавливалось, что "от персидской границы юго-западнее города Котур пограничная линия Армении определена массивным естественным барьером большой высоты, который простирается южнее озера Ван и юго-западнее армянских городов Битлис и Муш. Эта пограничная линия оставляет, как часть турецкого государства, весь санджак Хаккиари или около половины вилайета Ван и почти весь санджак Сиирт". Это обосновывалось "разумным физиографическим соображением" и подкреплялось тем, что Хаккиари и Сиирт "преимущественно курдские по составу своего населения и экономическим отношениям". Из армянской территории

¹ Севрский Мирный договор и акты, подписанные в Лозанне. М., Литиздат НКВД. 1927, с. 3, 5, 31, 32, 41-43, 67, 68.

*исключалась также верхняя долина р. Большой Заб, по составу населения в значительной степени курдская и несторианско-христианская, а в экономическом отношении являвшаяся частью большой ирригационной системы р. Тигр в турецком Курдистане и в Месопотамии. Далее "граница западнее Битлиса и Муша, идущая в северном направлении недалеко от Эрзинджана", была проложена по "естественному географическому барьеру, который обеспечивает Армении полную безопасность и оставляет Турецкому государству район, курдский в значительной мере". Армянские села и сельские центры, такие, как Кизи и Темран, связанные экономическими и церковными отношениями с Харпутом, остаются турецкими как неизбежное последствие оставления за Турцией Харпута в силу условий арбитража. "От северного края Дерсима решение о характере и направлении границы было в первую очередь подчинено жизненно важному вопросу предоставления государству Армении подходящего выхода к морю"*¹.

По официальному заявлению президента США, такое решение основано на "рассмотрении вопроса в свете относящейся к делу наиболее заслуживающей доверия информации и с осознанием высших интересов справедливости"². Армянская республика, которая тогда включала территории Карсской области и Нахичевана в пределах довоенной российско-турецкой границы, получала приращение, равное примерно половине вилайетов Ван, Битлис, Эрзерум и Трапезунд общей площадью 40 000 кв. миль. По американским подсчетам это составляло около 40% территории исторической Армении в Османской империи.

Сегодня, по прошествии почти 90 лет со времени вынесения этого арбитражного решения, имея в виду изменения в положении затронутых им субъектов международного права и учитывая практически необратимые изменения в составе народонаселения этой территории, постановка вопроса о приведении границ между Арменией и Турцией в соответствие с линией разграничения, установленной арбитражем, невозможно ни в практическом, ни в международно-правовом плане.

На арбитражное решение президента США В. Вильсона можно ссылаться как на авторитетное подтверждение международным сообществом вообще и Соединенными Штатами в частности исторического факта утраты Турцией права осуществлять суверенитет над этой частью Армении как формы политической ответственности государства, совершившего тяжкое преступление против человечности в виде "убийства народа".

Поскольку к В. Вильсону обратились как к президенту США и поскольку он действовал не в личном качестве, а как президент США, то его решение должно рассматриваться как выражение отношения этой державы как к содержанию постановления арбитра, так и к проблеме, породившей необходимость разграничения Армении и Турции, а именно — как следствия утраты последней права осуществлять государственную власть над армянским населением этой территории.

¹ См. Послание президента США В. Вильсона председателю Совета Союзных держав и текст арбитражного решения: Papers Relating to the Foreign Relations of the United States. 1920. Vol. III, p. 790-804.

² См. Текст арбитражного решения.

Сам факт срыва реализации арбитражного решения президента США по армяно-турецкому разграничению, в сочетании с рядом других политико-правовых факторов, подтверждает экспансионизм турецкого геноцидного государства и необходимость установления новых добрососедских отношений между двумя государствами и народами на основе действующих норм международного права.

Սևրի պայմանագրի, հատկապես Վիլսոնյան վավերագրերի հետազոտությանն են նվիրված **իրավագետ և պատմաբան Տիգրան Ղևոնդի Սահակյանի երկու աշխատությունները**¹: Նրա երկրորդ մենագրության 310-312-րդ էջերում կարդում ենք.

Թեև Սևրի պայմանագիրն ընդհանրապես ուժի մեջ չի մտել, բայց ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած հիշյալ միջնորդ որոշումն ուժի մեջ է մտել իր կայացման օրը՝ 1920 թ. նոյեմբերի 22-ին, քանի որ այդ որոշման հիմքը հանդիսացած Սան Ռեմոյի վեհաժողովի 1920 թ. ապրիլի 26-ի որոշման համաձայն, միջնորդ որոշման կայացման պահից է հաստատվում թուրք-հայկական սահմանագիծը: Նախագահ Վիլսոնի միջնորդ որոշումը, Անտանտի Գերագույն խորհրդին 1920 թ. դեկտեմբերի 6-ին ներկայացվելու պահից, դարձել է պարտադիր և ենթակա ի կատար ածման, քանզի այդպիսիք էին Սան Ռեմոյի վեհաժողովի 1920 թ. ապրիլի 26-ի փաստաթղթի պայմանադրույթները: Թեև Սան Ռեմոյի վեհաժողովի նշված որոշումը կայացնելիս, նախագահ Վիլսոնին որպես միջնորդ հրավեր ուղարկելիս, վերջինիս կողմից այդ հրավերն ընդունելիս, միջնորդական գործառնություններ կատարելիս, միջնորդ որոշումը կայացնելիս և այն Անտանտի Գերագույն խորհրդին ներկայացնելիս չի հիշատակվում միջազգային իրավունքի ոչ մի աղբյուր, որի համաձայն **իրականացված լինել այդ ամբողջ գործընթացը, բայց, այնուամենայնիվ, վերջինս խստիվ համապատասխանում է 1907 թ. հոկտեմբերի 18-ին Հաագայում ընդունված «Միջազգային ընդհարումների խաղաղ լուծման վերաբերյալ կոնվենցիայի» (ուժի մեջ է մտել 1910 թ. հունվարի 26-ին) դրույթներին ու նորմերին: Հաագայի այդ կոնվենցիան փոխարինեց 1999 թ. հուլիսի 29-ին նույն քաղաքում ընդունված նույնանուն կոնվենցիային: Հաագայի 1907 թ. հոկտեմբերի 18-ի կոնվենցիան ստորագրել և վավերացրել են աշխարհի շատ պետություններ, այդ թվում՝ Թուրքիան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Հունաստանը, Բելգիան, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբիան, Խորվաթիան, Հնդկաստանը, Շվեդիան, Նորվեգիան, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Նիդեռլանդները, Շվեյցարիան, Լյուքսեմբուրգը, Դանիան, Բուլղարիան, Իսպանիան, Պարսկաստանը, Հինաստանը, Բրազիլիան, Արգենտինան, Հիլին, Կուբան, Պերուն, Ուրուգվայը, Մեքսիկան, Կոլումբիան և այլ երկրներ:**

Կոնվենցիայի խնդիրն էր՝ պետությունների միջև առկա կամ երբևէ ծագող անհամաձայնությունները, ներառյալ ընդհարումները, լուծել խաղաղ ճանապարհով՝ դիմելով մեկ կամ մի քանի պետությունների միջնորդական ջանքերին և օգնությանը: Կոնվենցիայի I բաժնի («Համընդհանուր խաղաղության պահպանման մասին») 1-ին հոդվածի համաձայն.

«Պետությունների միջև հարաբերություններում ուժի գործադրման, ըստ հնարավորին, կանխարգելման նպատակով, պայմանավորվող պետությունները համաձայնում են՝ իրենց բոլոր ջանքերը ներդնել միջազգային անհամաձայնությունների խաղաղ լուծման ապահովման մեջ»²: Կոնվենցիայի II բաժնի («Բարի ծառայություն-

¹ Տե՛ս **Տիգրան Սահակյան**, Վուդրո Վիլսոն. Մարդը և քաղաքագետը, Երևան 2006: Տե՛ս նույնի «Ցավալի պայմանագրեր», Երևան, 2007:

² Կոնվենցիայի այս և մյուս հոդվածների թարգմանությունները ռուսերենից հայերեն – Ս. Ս.:

ների և միջնորդությունների մասին») 2-րդ հոդվածի համաձայն. «Պայմանավորվող պետությունները համաձայնում են, կարևոր տարակարծության կամ ընդհարման դեպքում, նախքան զենքին դիմելը, որքանով որ թույլ կտան հանգամանքները, դիմել մեկ կամ մի քանի բարեկամական երկրների բարի ծառայություններին կամ միջնորդությանը»: Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անկախ այդ դիմումից, պայմանավորվող պետություններն օգտակար ու ցանկալի են համարում, որպեսզի ընդհարմանը չմասնակցող մեկ կամ մի քանի պետություններ, սեփական նախաձեռնությամբ, որքանով որ թույլ կտան հանգամանքները, վեճի մեջ գտնվող պետություններին առաջարկեն իրենց բարի ծառայությունները կամ միջնորդությունը»: Կոնվենցիայի IV բաժնում սահմանվում է «միջնորդական քննության» կարգը: Կոնվենցիայի 56-րդ հոդվածի համաձայն. «Եթե միջնորդ դատավոր է ընտրվում թագավոր կամ պետության գլուխը, ապա միջնորդական քննության կարգը նա ինքն է սահմանում»: Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Միջնորդ դատարանին դիմելն առաջ է բերում միջնորդ որոշմանը բարեխղճորեն ենթարկվելու պարտավորությունը»: Կոնվենցիայի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Միջնորդ որոշումը պարտադիր է միայն վիճող կողմերի համար»:

1920 թ. ապրիլի 26-ին՝ Սան Ռեմոյի Համաժողովի որոշմամբ, ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին միջնորդական առաքելությամբ հանդես գալու վերաբերյալ հղված առաջարկից սկսած, 1920 թ. մայիսի 17-ին նախագահ Վիլսոնի կողմից այդ առաջարկն ընդունելու մասին որոշման ընդունումով և միջնորդական մասնագիտական մարմինների ստեղծմամբ ու դրանց զեկույցները քննության առնելով շարունակած ու 1920 թ. նոյեմբերի 22-ին միջնորդ որոշման կայացմամբ և դեկտեմբերի 6-ին այն Անտանտի Գերագույն խորհրդին հայտնելով ավարտված, ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանագատման, դեպի ծով Հայաստանի ելքի և Հայկական սահմաններին հարող թուրքական տարածքների ապառազմականացման վերաբերյալ որոշումը» խստիվ համապատասխանում է Հաագայի 1907 թ. հոկտեմբերի 18-ի նշված կոնվենցիայի ոգուն ու տառին, սկզբունքներին ու նորմերին:

Սևրի պայմանագրի, Վուդրո Վիլսոնի ծավալած հայապաշտպան գործունեության, ընդհանրապես Հայ դատի պաշտպանների՝ Թուրքիայից ունեցած պահանջների խնդիրները բարձրացրել է նաև Արա Պապյանը: 2006-2009 թվականներին Հայաստանում և Ամերիկայում (Կանադա) հրապարակելով մեծ ու փոքր ծավալի բազմաթիվ ու բազմաբնույթ հոդվածներ, նա Հայաստանի ղեկավարությանն ու հատկապես սիյուռքահայ մտավորականությանը սթափության կոչ է անում՝ հորդորելով Հայկական հարցը բարձրացնելու միջազգային աստիճաններում, ջանալ հասնել նրա արդարացի լուծմանը:

Ա. Պապյանը հետագայում մեկտեղելով իր բոլոր հոդվածները **«Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները»** խորագրով, հրատարակել է դրանք, այն էլ երեք անգամ: Հետազոտողի աշխատանքին մենք դրականորեն ենք վերաբերվում, քանի որ նա հիմնականում գործում է ամերիկյան մայր ցամաքում, իր հայրենասիրական մտքերն ու գաղափարները տարածում է Արևմտյան աշխարհի սովոր հայկական գաղթաշխարհում, կրակը վառ պահում նրանց հայրենակարոտ սրտերում³:

Մեր սույն մենագրությունն արդեն պատրաստ էր հրատարակության, երբ լույս տեսավ Ա. Պապյանի սովորածավալ, անգլալեզու վավերագրերի ժողովածուն, որն

³ Տե՛ս **Արա Պապյան**, Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները (հոդվածների ժողովածու), երրորդ լրանված հրատարակություն, Երևան, 2009, էջ 1-45:

իր էջերում ընդգրկում է Վուդրո Վիլսոնի՝ Հայաստանին վերաբերող ելույթները, ճանքերը, իրավական փաստաթղթերը: **Կասկածից վեր է, որ հեղինակի կատարածն արժանի է ուշադրության և դրական գնահատականի:**

Հայ դատի պաշտպանների ընդհանուր շղթայի կարևոր օղակներից են **Ռաֆայել Համբարձումյանի** բազմաթիվ և բազմաբնույթ հոդվածները, հրապարակումները, հատկապես նրա վերջին աշխատանքը՝ նվիրված **Սևրի պայմանագրին և Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի պատմության հետազոտությանը**¹:

Արժեքավոր, ծավալուն այդ հոդվածի էջերում հեղինակը քննում է Վերսալի ու Սևրի, Փարիզի ու Լոզանի պայմանագրերի բարձրացրած խնդիրները, որը նորույթ է այս բնագավառում, առանձնակի ուշադրությամբ է բարձրացնում Նախիջևանի բռնազավթման, բռնակցման խնդիրը, հնարներ առաջարկում ետ ստանալու **մեր Հայրենիքի այդ կարևոր նահանգը:**

Հոդվածի վերջում զետեղված են իրավագետ-պատմաբանի, քաղաքական կուսակցության առաջնորդի հանձնարարականները՝ Հայ դատի այսօրվա և վաղվա պաշտպաններին: Նա գրում է. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, որպես Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ներկայացուցչական մարմին, հայ թուրքական յարաբերությունները յեմելով վերոնշյալ անհերքելի պատմաքաղաքական իրողությունների վրայ՝ պետք է.

ա. Հայաստան-Թուրքիա, ինչպես նաև Հայաստան-Ադրբեջան եւ Հայաստան-Վրաստան միջպետական յարաբերությունների եւ պետական սահմանների քաղաքական-դիւանագիտական հիմք դարձնի Փարիզի, Սան Ռեմոյի խորհրդածողովներն ու Սեւրի միջազգային դաշնագիրը եւ Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճիռը:

բ. Աշխարհի 10-ից աւելի տէրութիւնների ստորագրութեամբ ընդունուած Իրաւական վճիռ-քարտզը պետք է հռչակի Թուրքիայի իրագործած հայոց ցեղասպանութիւն - Արմենոցիդը, եւ հայրենագրկուած հայ ժողովրդի հայրենաստիութիւնը միջազգայնօրէն հաստատող իրաւագօր պահանջագիր Թուրքիայից:

գ. Բարձրակարգ մասնագետ-փորձագետների մասնակցութեամբ Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճիռը ընդունած երկրների խորհրդարանների հետ սկսի Սեւրի դաշնագրի Հայաստանին վերաբերող յօդուածների քննարկումներ, իսկ ՀՀ կառավարութիւնը նոյն խնդրով բանակցութիւններ վարի նշուած երկրների կառավարութիւնների հետ, որոնք Իրաւարար վճռի կայացման հայցադիմումին մաս կազմելու կամ վճիռը կայացնելու հանգամանքով գտնում են ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճիռն ի կատար ածելուն օժանդակելու պարտաւորութեան ներքոյ:

դ. Օսմանեան կայսրութիւնը ստորագրելով Սեւրի դաշնագիրը՝ դրանով իսկ արդէն ընդունել է իր երկրի ոճիրը՝ հայոց ցեղասպանութիւնը, ուստի ՀՀ կառավարութիւնը պետք է դիմի ՄԱԿ-ի միջազգային դատարան՝ ցեղասպան երկրին պատասխանատութեան կանչելու, պատժելու եւ վնասները յատուցելու հայցով:

ե. Պետական-քաղաքական հիմնաւոր դիրքորոշում արտայայտուելով Մոսկուայի (16 մարտի, 1921 թ.), Ալեքսանդրապօլի (2 դեկտեմբերի, 1920 թ.) եւ Կարսի (13 հոկտեմբերի, 1921 թ.) պայմանագրերի վերաբերեալ, Ռուսաստանի դաշնութեանը պետք է յորդորի չեղեալ յայտարարել նշուած բոլոր օրինամերձ փաստաթղթերի հիմքը հանդիսացող բոլշևիկների կնքած Մոսկուայի ռուս-թուրքական բարեկամութեան պայմանագիրը: Միջազգային կառոյցների (ՄԱԿ, Եւրախորհուրդ եւ այլն) օժանդակութեամբ ու յսկողութեամբ պետք է հասնի այն բանին, որպէսզի այժմ գոյութիւն չու-

նեցող խորհրդային Ադրբեջանին փոխարինող պետութեան, Ռուսաստանի Դաշնութեան, Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ կնքուի Նախիջևանին վերաբերող միջազգային նոր պայմանագիր, որով վերախմբագրուեն Նախիջևանին վերաբերող նշուած ուժակորոյս գործարքները եւ միջազգային իրաւունքին համապատասխան նոր բովանդակութիւն ստանան:

զ. Այժմ գոյութիւն չունեցող խորհրդային Ադրբեջանին փոխարինող պետութեան, Ռուսաստանի դաշնութեան եւ Թուրքիայի հետ Նախիջևանի հարցով նոր բանակցութիւններ սկսելու պահանջը դարձնեն Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան առանցքային ուղղութիւններից մէկը:

է. **Տարբեր լեզուներով բազմաթիւ փաստաթղթերի հրապարակումով միջազգային հանրութեանն ու կառավարութիւններին ներկայացնեն այն անհերքելի իրողութիւնը, որ 1921-1991 թթ. ընթացքում բնիկ ադրբեջանահայերի արտաքսոււմը իրենց բնակավայրերից ցեղասպանութիւն է եւ ենթակայ է պատասխանատութեան ու վնասների հատուցման»¹:**

Անշուշտ, վերոհիշյալ առաջարկների մեջ ուշադրության արժանի մտքեր կան, որոնք պետք է օգտագործվեն մեծ ու պուճուր թուրքերի դեմ հայ մտավորականների մղելիք առաջիկա պայքարի ընթացքում:

* * *

Մայր Հայրենիքն ու հայրենակարոտ հայկական Սփյուռքը **պետական ամենաբարձր մակարդակով**, բայց սրտի խոր կսկիծով պատրաստվում են հավուր պատշաճի, հանդիսավորությամբ նշելու **հայ ժողովրդի ապրած ողբերգության-Ցեղասպանության դարադարձը:**

Վայրենաբարո, բարբարոս թուրք ցեղի երեք սերունդները (1894-1922 թթ.) եղեռնի գոհ դարձրեցին այլազգի հպատակ չորս ժողովուրդների՝ **հայերին, հույներին, ասորիներին, եզդիներին:** Դատարկվեց Արևմտյան Հայաստանը: Երկուսուկես միլիոն քրիստոնյա ժողովուրդներից մարդաթափ անելով երկիրը՝ **Աբդուլ Համիդը, երիտթուրքական բորենիները և հատկապես Մուստաֆա Քեմալ-Կարաբեքիրի** զլխավորած ոհմակն ազգային հարցը լուծեցին թուրքավարի, **ոչնչացման կամ տեղահանության մեթոդներով:**

1. **Չերկարացնենք:** Թուրքական, եվրոպական ու հատկապես հայկական մարդահամարների հաշվարկումով մինչև Աշխարհամարտը Արևմտյան Հայաստանում և ողջ Թուրքիայում ապրում էին **երկուսուկես միլիոն հայեր, մեկ միլիոն ասորիներ, մեկ միլիոն եզդիներ:** **Հիմա դրանք չկան:** Մի՞թե դրանից մեծ ապացույց են ուզում թուրքական Հանրապետության այսօրվա ղեկավարները, որպեսզի խոստովանեն, որ այդ ժողովուրդներին **գենոցիդի են ենթարկել Համիդը, Թալեաթը և Մուստաֆա Կարաբեքիրը:** Դիմելով միջազգային դատարանին՝ մենք այս փաստը կներկայացնենք արդարամիտ հանրությանը և **Նյուրնբերգի նման մեկ այլ դատական ատյանով Թուրքիային կստիպենք նստել մեղադրական աթոռի վրա:**

2. Բարոյական բավարարություն պատճառելով Մեծ եղեռնը վերապրողների զավակներին, նրանց հարազատներին՝ Թուրքիան պարտավոր է հայ ժողովրդին վերադարձնել նրա հնամենի ու պատմական Հայրենիքը՝ **Արևմտյան Հայաստանն ու Հայկական Կիլիկիան**, որոնք այսօր հայագրկված են, անվանափոխված, տիրապետողների կարծիքով՝ **թուրքացած ու քրդացած:**

¹ **Ռաֆայել Համբարձումյան**, Սևրի պայմանագիրն ու Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայկական հարցի հետապնդելու նոր ռազմավարության հիմք: «Պատմություն և մշակույթ», Ա, Երևան, 2011, էջ 117-142:

¹ «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես, Ա, Երևան, 1911, էջ 139-170:

Ահա բռնակցված հայկական նահանգների համառոտ ցանկը. **Երզրումի** (Կարի-նի), **Վանի, Խարբերդի, Դիարբեքի** (Տիգրանակերտի), **Քիլիսի** (Բաղեշի), **Սվա-զի** (Սեբաստիայի), **Տրապիզոնի, Ադանայի, Կարսի** վիլայեթներն իրենց հարակից շրջաններով: Միայն Արևմտյան Հայաստանի և հայաբնակ նահանգների տարածքը կազմում է **280 հազար քառակուսի կիլոմետր**: Հայկական Կիլիկիան ունի **45 հա-զար քառակուսի կիլոմետր տարածություն**: Հետևաբար, թուրքիան պարտավոր է հայ ժողովրդին վերադարձնել շուրջ **երեք հարյուր քառակուսի կիլոմետր տարածք**, որպեսզի այնտեղ վերադառնան աշխարհով մեկ սփռված, եղեռնից մազապուրծ հայկական բեկորները և ծաղկեցնեն իրենց հայրենի օջախնե-րը, տեր դառնան անթաղ մեռելների ոսկորներին:

3. Հայ ժողովուրդը 1915-1922 թթ., բարոյականից զատ, կրել է նաև նյութական մեծ կորուստներ: «Հայ ժողովրդի կրած նյութական վնասների մոտավոր հաշվեկշի-ռը կազմվել է Հայ ազգային պատվիրակության (Նախագահ՝ **Պողոս Նուբար**) և Հա-յաստանի Հանրապետության պատվիրակության (Նախագահ՝ **Ա. Ահարոնյան**) կող-մից և համատեղ ստորագրությամբ որպես հուշագիր ներկայացվել 1919 թ. Փարի-զում հրավիրված Խաղաղության վեհաժողովին:

«Մոտավոր հաշվարկների համաձայն, Առաջին համաշխարհային պատե-րազմի և Ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանում և Հայաս-տանի առաջին հանրապետության տարածքում 1914-1919 թթ. ընթացքում հայ ժողովրդի կրած նյութական վնասների հաշվեկշիռը կազմում է 19 միլիարդ 130 միլիոն 932 հազար ֆրանկ (1919 թ. Ֆրանսիայում գործող գների համապա-տասխան) (ընդգծումները մերն են – Յ. Ղ)»¹: Եթե սրան ավելացնենք, և անպայման պիտի ավելացնենք, տոկոսները, այն էլ միջազգային տոկոսադրույքով, ապա այդ գումարը **կկազմի մոտավոր, պակասավոր հաշվով հարյուր միլիարդ ԱՄՆ դո-լար**:

Թուրքիան հասկանում է, որ եղեռնի ճանաչումից հետո համաշխարհային հան-րության բարոյական, ինչու չէ, նաև ֆիզիկական ճնշման տակ հարկադրված կլինի ժամանակի ընթացքում վճարել այդ գումարները, այնպես, ինչպես Գերմանիան վճարում է իրեններին: Ահա այս պարագան է Թուրքիային վախենալու առիթ տալիս, որպեսզի նա հրաժարվի Ցեղասպանության ճանաչումից: **Սակայն միանշանակ է, որ այսօր կամ վաղը կձանաչվի Ցեղասպանության փաստը, և հայ ժողովուրդն իր դահիճների ժառանգներից կստանա կորցրած արյան գինը, բռնազավթած ունեցվածքի արժեքը, հատկապես՝ սրբազան Հայրենիքը: Մենք դրանում բոլո-րովին չենք կասկածում:**

4. Երիտթուրքերը, նրանց բարբարոսության պակասը լրացնող քեմալականների գայլախումբն առավել դաժան վարվեցին հայկական եկեղեցիների և վանքերի, նրանց սպասավոր հազարավոր հոգևորականների հետ: Թուրքիայում եղած **շուրջ երկու հազար հինգ հարյուր վանքերից ու եկեղեցիներից** այսօր կիսատ-պռատ, վախվորած գործում են **քառասուն-հիսունը**: Քրդերի ձեռքերով հիմնովին քանդվել են **Մշո սուրբ Կարապետի, Վարագի սուրբ Նշան վանքերը**: Առջ ու վաճառքի առարկա է դարձել **Ախթամարի** վանական համալիրի կարգավիճակի, վանքի գա-գաթին խաչ տեղադրելու, թե չտեղադրելու խնդիրը:

Թուրքերը հայերին, բոլորին զանգվածորեն են ոչնչացրել, բայց հոգևոր դասի նկատմամբ կիրառած դաժանությունները վեր են բանական մարդու երևակայությու-նից: Բերենք երկու փաստ միայն, մնացածները թողնելով ընթերցողի խղճին:

¹ «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները», տեղեկատվության հեղինակ՝ պատմական գիտությունների դոկտոր **Լ. Ա. Բարսեղյան**, Երևան, 1999, էջ 13:

1917 թ. ապրիլին Ամենայն Հայոց կաթողիկոսին է ուղարկվել Արսեն Խաչիկյան ստորագրությամբ մի աղերսագիր, որն իր բովանդակված փաստերով գերազանցում է նախորդ բոլոր աղերսագրերին և այժմ էլ խորհել է տալիս, թե այդ ամենին ինչպես է կարողացել դիմանալ մի անպաշտպան ու քաղաքակիրթ ժողովուրդ, հատկապես նրա հոգևորականությունը¹:

Նա գրում է. «Ականատեսներե պատմված և բուն իսկ անձամբ տեսած և հե-տաքրքրված են կառավարութեան անգութ վերաբերումին հանդեպ հոգևոր պաշտո-նից, մասնավորապես: Ահա կերպերը և տեսակները չարչարանքներուն.

I (1) Մորուքները վառել, փետել, ածիլել:

(2) Գլուխնին մեքենային տակ ճգմել ուշաթափութեան չափ:

(3) Կախաղանի վրա հանել և կիսամեռ վիճակի մեջ վար առնել և ստիպել, որ գաղտնիքները պարզի և բռնի ստորագրել կուտան, երբ ենթական ինքնա-գիտակցութենե զրկված է արդեն...

II (4) Ոտքերը բևեռել, խաչել, պայտել այնքան անխղճորեն:

Երկու քահանաներ հատկապես հետևյալ կերպով չարչարվեցան և այդ տանջանքներու տակ հանգան ի Տեր:

(1) Խարբերդեն 31/2 ժամ հեռու Կարմիր գյուղի Տեր Ասատուր քահանան կիսա-խեղդ վիճակի մեջ կախարան բարձրացուցին, հետո վար առին, ստիպեցին, որ զենքերու տեղը հայտնե: Հիշյալը քաջաբար կը դիմադրե, հետո սաստիկ ծեծ, գլուխը արտաքնոցի մեջ կախել շնչահեղձ վիճակով մը երեկոյեն մինչև առա-վոտ... Արժանահիշատակ քահանան թող տվին առավոտ մը, որ զենքերու տեղը հայտնե: Խեղճը փախավ խոյլու ըսված գյուղը և ինքնահոժար ինքզինք քրոր մը ձգեց, ուրկից իսկույն ժամտարմները զինքը դուրս հանեցին, վերջապես եր-կար չարչարանքներե վերջ տապարով գլուխը ջարդ ու փշուր ըրին և մեռա՞վ²...

(2) Բալուխ քահանաներեն տեր Ատովմը ծիու նման թամբեցին 11/2 ժամու չափ տեղ վրան հեծնելով ուժասպառ վիճակի մը հասցնելեն հետո ստիպեցին, որ գաղտնիքները և զենքերուն տեղը հայտնե: Սակայն տոկուն և կորովի կամքով դիմադրած պահուն կը պայտին, հետո կը խաչե՞ն... Տանջանքներուն այս բեռին տակ կավանդե՞ իր հօգի՞ն³:

Թուրք շովինիստների կատարած բարբարոսությունը զայրույթի ալիք էր առաջ բերել ոչ միայն Ամտանտի տերությունների, այլև դաշնակից գերմանացիների շրջա-նում, որոնցից շատերը հարկադրված էին խոստովանել կատարվածի անտանելիու-թյան մասին. «**Ան ծովեն մինչև Ասորիք, - բերում է Հ. Տաշյանը, - քրիստոնեու-թյունը ջնջված է, եկեղեցիները փակված, դպրոցները դատարկված, քահա-նայք ու քարոզիչները սպանված կամ աքսորված: Կիսաարևելյան քանի մը քա-ղաք ի բացառյալ, ամբողջ Անատոլիա իսլամացված է: Տոմարներու մեջ քրիս-տոնեական անվանք ջնջված են և մահմեդական անուններով փոխարին-ված»⁴:** Թուրքական կառավարող եռապետները աշխատեցին հաշվեհարդար տես-նել նաև **Չավեն պատրիարքի հետ:**

Տեսնելով այդ ամենը, Ամենայն Հայոց հայրենամվեր հայրապետը խնդրանք խնդ-րանքի հետևից էր առաքում մեծ տերություններին, հատկապես Ռուսաստանին, օրորվելով ռոմանտիկ այն հույսերով, թե կկարողանա իր հովված հոտն ազատել

¹ **Միսյուիչ Ակունի**, Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը, Կ. Պոլիս, 1921, էջ 173-174:

² «Աղետ և վերապրողներ», «Տեր-Ձոր», Փարիզ, 1955, էջ 64:

³ **ՀՀ ՊՊԿԱ**, ֆ. 57, գործ 125, թերթ 18: Տե՛ս նաև "Геноцид армян в османской империи", Ереван, 1983, стр. 490-491:

⁴ **Տաշեան Հ. Հակովորս վ.**, Հայազգի տարբերութիւնը գերմանական վավերագրերու համեմատ, մասն Ա, Վիեննա, 1921, էջ 26:

Մուհամեդի երկրպագուների մարդակուլ երախից: Վերջապես հալվեց սառույցը, և Ռուսաստանի առաջարկով Անգլիան ու Ֆրանսիան, լուրջ տատանումներից հետո, համաձայնեցին ստորագրել այն փաստաթուղթը, որը ձևակերպվել էր Պետերբուրգի կարիներտում:

1915 թ. մայիսի 22-ին Անտանտի տերությունները ստորագրեցին Թուրքիային ուղղված փաստաթուղթը, որը երիտթուրքերին սպառնում էր հաշիվ տալ հայերի ոչնչացման համար, եթե ոչ այդ պահին, այսինքն՝ պատերազմի ժամանակ, ապա անպայման պատերազմից հետո: Վերջնագրի տեսքով կազմված այդ փաստաթուղթը հասցվեց Կ. Պոլսում նստած ԱՄՆ-ի դեսպան **Յենրի Մորգենթաուին**, որը և 1915 թ. մայիսի 24-ին անձամբ ներկայացավ Բ. Դուռը և հանձնեց թուրքական կառավարությանը:

Այնտեղ գրված էր. «Գրեթե վերջին ամսուան ընթացքին, քիւրտերը եւ Յայաստանի թուրք բնակչութիւնը լծուած են հայերը ջարդելու՝ օսմանեան իշխանութեան գիտակցութեամբ եւ յաճախ՝ օգնութեամբ: Ապրիլի կեսերուն նման ջարդեր տեղի ունեցան Էրզրումի, Դերջանի, Ալանի, Պիթլիսի, Սասունի, Մուշի, Ջէյթունի եւ ամբողջ Կիլիկիոյ մէջ:

Վանի շրջակայքի շուրջ 100 գիւղերու բնակիչներուն բոլորը սպաննուեցան: Բուն քաղաքին մէջ հայերուն թաղը պաշարուած է քիւրտերու կողմէ: Նոյն ատեն Կոստանդնուպոլսոյ օսմանեան կառավարութիւնը կատողած է անպաշտպան հայ բնակչութեան դէմ:

Թուրքիոյ կողմէ գործադրուած այս նոր ոճիրներուն դէմ յանդիման՝ Դաշնակից կառավարութիւնները հրապարակաւ կը յայտարարեն Բարձրագոյն Դռան, **թէ օսմանեան կառավարութեան բոլոր անդամները, ինչպէս նաեւ իրենց գործակիցներէն անոնք, որոնք մասնակից են եղած՝ անձնապէս պատասխանատու պիտի նկատուին այս ջարդերուն համար»¹:**

Ո՛չ մեծ տերությունների սպառնալիքները և ո՛չ ԱՄՆ-ի դեսպան, մեծ հումանիստ Յենրի Մորգենթաուի գթաշարժ թախանձանքները չկարողացան մեղմացնել հայերի նկատմամբ թուրքերի կիրառած անմարդկային քաղաքականությունը: Ընդհակառակը, երիտթուրքերն ավելի կատաղեցին իրենց արարքների մեջ: Յարց է ծագում՝ ո՞րն էր այդ վավերագրի ու նրա առաքողների տված օգուտը հայ ժողովրդին: **Այդ պահին ոչինչ:** Սակայն պատերազմի հաղթական ավարտից հետո, հատկապես Սևրի պայմանագրով բանաձևվեց 230-րդ հոդվածը, որը Թուրքիայից պահանջում էր Անտանտի տերություններին հանձնել հայկական ջարդերի պատասխանատուներին: Դժբախտաբար, Սևրի որոշումները թաղվեցին Լոզանի լաբիրինթոսում, և կարծես թե մոռացվեց հայերի խնդիրը: **Այն կրկին հրապարակ եկավ երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո, հատկապես Նյուրնբերգի և Տոկիոյի որոշումները կազմելու ժամանակ²:**

1948 թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի կոնվենցիան կրկնում է 1915 թ. մայիսի 24-ին արված վերոհիշյալ հայտարարության այն դրույթը, որ ցեղասպանությունը հանցագործություն է՝ ուղղված մարդկության դեմ: Այն մտել է փաստաթղթի 5 (գ) և 6 (գ) հոդվածների մեջ և կրկնվել բառացիորեն: Երևի թուրքերը կարդացել են այդ փաստաթղթերը, վախենում են դրանց գործադրությունից, դրա համար էլ համառությամբ հրաժարվում են Ցեղասպանության ծանաչումից:

¹ **Չավեն Մսրրլեան**, Յայկազեան հայագիտական հանդես, 1997 թ., ժ՛ հատոր, էջ 122: Տե՛ս նաև Ս. Ս. Ա., Department of State, *Foreign Relations of the United States, 1915, Supplement*, Washington, D. C., 1928, p. 981-982:
² **Չավեն Մսրրլեան**, նշված աշխատությունը, էջ 123:

5. Թուրք ջարդարարները ոչնչացրեցին կամ կրոնափոխելով Թուրքիայով **մեկ ցրեցին Յայոց գենոֆոնդը:**

Եվ այսպես, շուրջ 90-ամյա հեռավորությունից գիտական ճշմարտացիությամբ շարադրել հայ ժողովրդի մանուկ սերնդի ապրած անսահման ողբերգության, անտակ ցավերի պատմությունը, մեր կարծիքով, **գրեթե անհնարին է:** Դժվարությունը կայանում է ոչ միայն վիճակագրական, վավերագրական փաստերի բացակայության մեջ, այլև հոգեբանական խնդրի սրտամաշ, զգացմունքային լինելու մեջ, որոնք ազդում են այսօրվա սերնդիս մարդկային արժանապատվության վրա: Մի տեսակ նվաստացած ես զգում քեզ, երբ այդքան բարբարոսություն գործած ռասան՝ իսլամապաշտները, համառությամբ ուրանում են կատարվածը, առանց խղճի խայթի, նույնիսկ համարձակվում են հակառակվել, բարձրագոչել, թե թուրքերն ավելի շատ են զոհեր ունեցել, քան հայ «կոմիտեջիները»:

Մենք այստեղ չենք ուզում իջնել թուրք կեղծարարների սարքած աստիճանավանդակի վրա, այլ հատիկ-հատիկ հավաքած փաստերով ջանում ենք հազարներկերորդ անգամ ապացուցել իթթիհատականների, ապա քեմալականների կատարած **մարդաջարդություն** օսմանյան կայսրությունում, իսկ շարունակությունը՝ Արևելյան Յայաստանում: Ալեքսանդրապոլի և Կարսի ողբերգությունները գլուխգործոցն էին հայ գենոֆոնդի ոչնչացման, բացահայտումը բարբարոսական հակաազգային, հակամարդկային այն ծրագրի կենսագործման, որի հեղինակները մտադրվել էին պատմության բեմահարթակից ընդհանրապես բնաջնջել հայ ժողովրդին՝ ոչ միայն Արևմտյան Յայաստանում, այլև հանուր հողագնդի երեսից:

Այդ պարագան ի նկատի ունենալով, ջանալով հնարավորինս ամբողջացնելու Յայոց ցեղասպանության պատմությունը, մենք այստեղ փորձում ենք ընդհանուր գծերով ներկայացնել նաև աճող սերնդի կրած կորուստների չափը՝ ընթերցողի ուշադրությունը հրավիրելով ոչ թե և ոչ միայն առանձին փաստարկների, այլև ջարդերի իրականացման **հակամարդկային, բարբարոսական եղանակների ու մեթոդների վրա:**

Խնդրի տարրոլունակությունը, հետազոտության համար ընդարձակ էջերի անհրաժեշտությունը մեզ հարկադրեցին կոնկրետաճալ երեք հիմնական ենթահարցերի վրա, դրանք են.

- ա) **մանուկներ, որոնք սպանվել են հրազենով, սրով, քարաջարդմամբ, սովահարությամբ,**
- բ) **մանուկների թուրքացման պրոցեսը, քրդացված հայ երեխաները,**
- գ) **Յայաստանի, Թուրքիայի, Ռուսաստանի և աշխարհի տասնյակ ու տասնյակ երկրներում տեղաբաշխված որբանոցներում ցրված մանուկների հայտնի ու անհայտ ծակատագրերը:**

Նախօրոք արձանագրենք, ավելի ճիշտ վերահաստատենք անվանի մտավորական Բյուզանդ Եղիայանի այն եզրահանգումը, թե 1915 թ. կոտորված արևմտահայության թվին պետք է գումարել նաև «տեղահանութեան ժամանակ հարյուր հազարներով մանուկներ՝ ոչնչացման ենթարկված կամ իսլամացած»¹: Նրա հաշվարկումներով՝ զոհոթթայի ենթարկված **հայ մանուկների թիվը կես միլիոնից ավելի էր:**

Երեխաների նկատմամբ թուրքերի և քրդերի կատարած դաժանությունները ցույց տալու նպատակով բերենք մի քանի փաստեր միայն²:

¹ «Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Յայոց Կիլիկիո 1914-1972», Անթիլիաս, 1970, էջ 249-250: Տե՛ս նաև **Լիպարիտ Ազատեան**, Յայ որբերը Մեծ եղեռնի, Լոս Անճելոս, 1995, հ.1, էջ 35:
² *Quelques documents sur le sort des Arméniens en 1915, Fascicule III, Genève, 1916, p. 162.* Տե՛ս նաև «Յայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 381-384:

Հաջի անունով մի մահմեդական պատմել է, որ «Խարբերդից ու Սեբաստիայից արքունից 18 հազար հայերից մինչև Հալեպ հասել են 350 կին ու երեխա, իսկ երգրունից արքունից 19 հազարից՝ ընդամենը 11 հոգի, մեկ հիվանդ երեխա, չորս աղջիկ և վեց կին: Կանանց և աղջիկների քարավանը 65 ժամում ուղքով անցել է Ռատուլ-Այնից մինչև Հալեպ ձգվող երկաթգծի պաստառը, չնայած այն բանին, որ այդ ամբողջ ժամանակ գործեր տեղափոխող գնացքները դատարկ էին վերադառնում: Մուսուլման ճանապարհորդները, որոնք անցել են այս ճանապարհով, պատմում են, թե այդ ճանապարհն անանցանելի է բազմաթիվ դիակների պատճառով, որոնք այդտեղ ընկած են և իրենց զարշահողությամբ թունավորում են օդը: Հալեպում մնացած արքունիցներից 100-200 հոգին մեռան ծանր ճանապարհից հետո: Երբ կանայք ու երեխաները, որոնք սովից միհարել էին այն աստիճան, որ սկսել էին կմախքի նմանվել, գալիս էին Հալեպ, նետվում էին ուտելիքի վրա, ինչպես գազաններ: Բայց նրանցից շատերի ներքին օրգանների ֆունկցիաները խախտված էին, մեկ-երկու պատառ կուլ տալուց հետո նրանք գոչալը մի կողմ էին նետում»¹:

Հալեպի գերմանական դպրոցի ուսուցիչ դոկտոր Մարտին Նիպագեն հաղորդում է. «Մեր դպրոցի դիմաց, քարվանսարաններից մեկում գտնվում են արքայալների այդ քարավաններից մեկի մնացորդները՝ մոտ չորս հարյուր տանջահար էակներ, որոնց մեջ կա 5-7 տարեկան հասակի հարյուր երեխա: Նրանց մեծ մասը տիֆով կամ դիզենտերիայով հիվանդ է: Երբ մտնում ես բակը, քեզ թվում է, թե դա գժանոց է: Երբ նրանց ուտելիք են բերում, ապա երևում է, որ նրանք մոռացել են ուտելը: Նրանց ստամոքսը, բազմամսյա քաղցից փոքրացած, այլևս սնունդ չի ընդունում: Երբ նրանց հաց են տալիս, նրանք անտարբերությամբ մի կողմ են նետում: Նրանք հանգիստ սպասում են իրենց մահվանը»²:

Թուրքական բանակում ծառայող Ն. Օգանովսկին 1915 թ. սեպտեմբերին «Док» թերթում տպագրած հոդվածում գրել է. «Բայց ամենասարսափելի պատկերները այդ հազվագյուտ ակնատեսը տեսել է Բիթլիսում: Դեռ Բիթլիս չհասած, անտառում նա տեսել է ոչ վաղուց մորթոտված մի խումբ տղամարդկանց և նրանց կողքին էլ՝ երեք կնոջ, միանգամայն մերկ, գլխավայր կախած: Կանանցից մեկի կողքին սողում էր մեկ տարեկան մի երեխա և թափկները պարզում մորը, իսկ մայրը, դեմքն արյունով լցված, դեռ կենդանի, ձեռքերը մեկնում էր երեխային, բայց նրանք չէին կարողանում միմյանց հասնել: Մի քիչ այն կողմում ընկած էին երեք կանանց արյունաշաղախ դիակներ և մի մանկիկ՝ մոր արյունով ողողված, խլվլում էր կանանցից մեկի կրծքի վրա»:

Օրագրի հեղինակը տեսել է, թե ինչպես էին կայմակամի խուլամները իրկիզում երկհարկանի հարուստ մի տուն: Երկրորդ հարկում երևաց մի կին՝ երեխան գրկին: Նա լուսամուտից լուսամուտ էր նետվում. «ամա՜ն» ճչում, բայց ամեն կողմից հանդիպում էր իր վրա ուղղված հրացանների փողերի: Կրակն աստիճանաբար բռնում էր վերին հարկը, ծուխը պատում էր լուսամուտները մեկը մյուսի հետևից, և այդ կինը երեխայի հետ մեկտեղ այրվել է նրա աչքի առաջ»³:

Դեր-Չորը վերածվեց հայոց գերեզմանոցի: Սակայն, դժբախտաբար, շուրջ 200 հազար հայերի ոչնչացմամբ թուրք մարդագայլերը չբավարարվեցին, չկշտացան աննեղ ու անպաշտպան գաղթականների թափած ծով արյամբ: Արյունարբու Չեքի բեյը, հրահանգավորվելով «Թեչքիլաթե մախսուսայի» ղեկավարությունից, որո-

շեց կենդանի մնացածներին տեղահանել Դեր-Չորից և առանձին խմբերով նրանց ուղարկել Սոսուլ:

Սոսուլը հեռու էր: Դրա համար էլ գաղթականների «վերջին հոսքերն» ուղղվեցին դեպի **Շետտասի**, որոնք անցնելու էին **Մարաթի և Սավուրի անապատներով**: Ճանապարհին այդքան բազմությամբ սպանելը, թաղելը, վարակիչ հիվանդություններից խուսափելը հնարավոր չէր: «Հնարամիտ Չեքին որոշեց արհեստական սով առաջացնել, որի ընթացքում մարդիկ սկսեցին ուտել էշեր, շներ, կատուներ, հետո նաև սատկած ձիեր և ուղտերի դիակներ: Երբ նման բոլոր կենդանիներին կերամ, վերջացրեցին, սկսվեց մարդակերություն, որն իր ձևով ու բովանդակությամբ նմանատիպը չի ունեցել մարդկային պատմության ընթացքում:

Բերենք միայն մի ողբերգության նկարագրությունը. «Աղջիկ մը հիվանդ պատկած էր, մեկ քանի օրուան անօթութեամբ: Մայրը գլխուն վերել կը հսկեր: Մօտեն՝ եփող մսի հոտ կու գար: Տղու դիակ մը կ'եփէին անշուշտ:

Աղջիկը կ'ըսէր մօրը:

- Մայր, գնա կտոր մը ուզէ, ալ չեմ դիմանար...

Մայրը կ'երթայ, բայց քիչ ետքը ձեռնունայն կը վերադառնայ:

- Չտուի՞ն, կ'ըսէ աղջիկը. մայր, եթէ մեռնիմ, դուն ալ իմ միսէս չտաս անոնց, միմակդ կեր...

Այսպէս՝ պզտիկները իրենց ողջութեանը վարժուած էին այն գաղափարին հետ, թէ մեռնելէն ետք իրենց դիակները պիտի ուտեն:

Մայրեր՝ այլևս յիմարացած, իրենց զավակները ծախու հանած էին: Կիներ կը գոռային.

- Աղջիկս է, հարազատս է, հոգիս է, կը ծախեմ ու չեմ առնէր, նայեցէ՛ք, չեն առնէր...

Դեղագործ մը, որ հետը թոյն ուներ, դեղահատներ շինած էր, ու բախտաւորներ զանոնք կը գնէին հատը մէկ ոսկիի, վայրկեան մը առաջ ազատելու համար այն անպատում չարչարանքներն:

550 երիտասարդներ, զորս Չեքի պէյ բանտարկեց որովհետեւ զինուորական իշխանութիւնը կ'աշխատէր զանոնք զինուորագրելով ծամբու շինութեանց յատկացնելու, Տէր Չորի գօրանոցին մէջ ամբողջ եօթ օր առանց հացի եւ առանց ջուրի թողուեցան: Իրար բզքտեր, իրար կերեր էին ողջ-ողջ»⁴:

Այսպիսով, 1915-1917 թթ. ընթացքում երիտթուրքական կառավարության կողմից ձեռնարկված հայաջինջ գազանությունների հետևանքով մոտ երկու միլիոն հայեր արքունիցներ, որոնցից մեկուկես միլիոնից ավելին սպանվեց կամ զոհ գնաց սովին ու համաճարակին Միջագետքի անապատներում: Բռնի թուրքացման ենթարկվեցին շուրջ երկու հարյուր հազար հայեր, գերազանցապես կանայք ու երեխաներ⁵:

Երիտթուրքերի կողմից կազմակերպված Հայերի ցեղասպանության մասին գերմանացի նշանավոր հասարակական գործիչ Լեփսիուսը «Գերմանիան և Հայաստանը» իր հայտնի ժողովածուում գրում էր. «Ոչ մի կասկած չկա, որ խոսքը ոչ թե կայսրության անվտանգության նպատակին ուղղված ռազմական միջոցառումների, այլ հայ ժողովրդի ծրագրված ոչնչացման մասին էր»⁶:

Երիտթուրքերը գազանային եղանակով «լուծեցին» Հայկական հարցը: Մեծ եղեցից հետո արյունարբու Թալեաթ փաշան պաշտոնապես հայտարարեց՝ «Չկա այլևս Հայկական հարց, քանի որ չկան նաև հայեր»: Բնաջնջելով և տեղահան

¹ «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 384:

² Նույն տեղում, էջ 147-148:

³ Նույն տեղում, էջ 432-433:

⁴ «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեցի», Պէյրուք, 1965, էջ 497-498:

⁵ «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, Երևան, 1981, էջ 557-558:

⁶ J. Lepsius, Deutschland und Armenien 1914-1918, Potsdam, 1919, S. XXIV-XXV.

անելով արևմտահայությանը, երիտթուրքական կառավարող շրջանները, իրենց կարծիքով, «վերացրին այդ խոչընդոտը», որը խանգարում էր իրենց պանթուրքական, զավթողական ծրագրերի իրականացմանը:

Առաջին համաշխարհային պատերազմում երկրագնդի տարբեր մասերում իրագործված ոճիրներից և ոչ մեկը չի կարող համեմատվել այս ողբերգության հետ: Ինչպես զոհերի քանակությամբ, այնպես էլ նրանց հանդեպ գործադրված դաժանություններով հայերի այս **սպանդ-գեոցիդը** պատմության մեջ հիշատակված բոլոր ջարդերից ամենասուսկալին էր: Երիտթուրքերին հաջողվեց Հայկական հարցն իրենց ցանկացած ձևով վճռել՝ եվրոպական մեծ տերությունների ցուցաբերած հանցագործ վարքագծի ու թողտվության պատճառով¹:

Եղեռնից փրկված սերնդին ևս բաժին էր ընկել դաժան ճակատագիր: Իրենց ողիսականն սկսելով օսմանյան կայսրության մահաբեր ավերից, ցրվելով աշխարհով մեկ, խարսխվելով երկրագնդի **բոլոր** աշխարհամասերում՝ վերապրողները չկարողացան և չէին էլ կարողանա մոռանալ այն ամենը, ինչ տեսան իրենց ծնողներն ու հարազատները: «**Հիշելն ապրել է, մոռանալը՝ մահ**» կարգախոսով սփյուռքահայերն ամեն անկյունում կրկնում են Ավետիս Ահարոնյանի այն հանձնարարականը, թևավոր խոսքերը, թե

**Այսքան չարիք թե մոռանան մեր որդիք
Թող ուղջ աշխարհն հայուն կարդա նախատինք:**

Այո՛, հանուր հայ ժողովուրդը չի կարող մոռանալ իր ծնողների ապրած գողգոթան: Ամեն տարի ապրիլի 24-ին աշխարհի ամեն ծայրերից, մագնիսի նման, դեպի իրեն է ձգում **Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը**, ոչ միայն հարգանքի տուրք մատուցելու զոհվածների հիշատակին, այլև վերապրողների սերնդին, առավելապես երիտասարդությանը պատգամում՝ շարունակել պայքարը **Հայ դատի համաշխարհային ծանաչման, հատկապես Թուրքիայի կողմից ընդունման կարգախոսով**:

Այս բաժինն ավելի պատկերավոր չենք կարող եզրափակել, քան կաներ **Շահանդուխտ** ստորագրությամբ տպագրված մի հողվածի հեղինակը, որը խորագրված է «**Խոսե՛, Դեր Չոր, Նոր սերունդին**»: Այնտեղ գրված է. «**Միամանթոյի, Վարուժանի, Չարդարեանի քերթողութունը, գիր-գրականութեամբ փոխանցուած կտակը պետք է պահուի սուրբ յանձնառութեամբ, գերուխտով**:

Հայորդի՛, բարձրաձայն արտասանէ «Խեղդամահը», «Պարը», «Առկայծ ծրագը», «Բազինի փառաբանութիւնը» եւ միւս կտակները, որպէսզի բոցը մնայ հոգիդ մէջ արծարծ, քահը հերոսներուն բռնես բարձր:

Ու դեռ պիտի երգես երգը Սողոմոն Թեհլիրեանին, պիտի կարդաս «Կտակը» Արշաիր Շիրակեանին, պիտի հաղորդուիս հերոսութեամբը Միսաք Թորլաքեաններու, Տաճատ Թերլեմեզեաններու: Անունները չեն ասոնք միայն, այլ՝ հաղորդութեան համով օծուած խրախոյս եւ զօրութիւն:

Կոմիտասին անունը որ լսես, պիտի հարցնես մօրդ, հօրդ, ուսուցիչիդ, դրացիիդ: Ո՛վ էր այդ վեղարաւորը, որ երգեր կտակեց հայ ժողովրդին ու ինք անմահացաւ. ինչո՞ւ... հարցումիդ պատասխանը պահէ ականջներուդ մէջ ու երգէ «Կոունկ», «Ծիրանի ծառ», որպէսզի քիմքդ քաղցրանայ, հոգիդ պարծենայ, թւերդ թռչք առնեն ու հասնին Հայաստան ու Արցախ՝ նոր երգը հիւսելու հայուն վաղուան:

«Անլռելի Չանգակատուն»ին դողանջն է յիշողութիւնը եղեռնին: Թող

¹ «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 558:

ականջներդ միշտ բաց մնան համերգին դիմաց ողջակիզած ցեղին, ապա երգէ «Տէր Ողորմեա», ու Կոմիտաս Վարդապետ այցի կու գայ քեզ օգնութեան, որ դուն հայ մնաս օտարութեան ավերում: Կոմիտասի երգը Թուր Կեծակին է Մասնայ Դաւիթին, երբ ու երգես «Տըլէ եաման» կամ՝ «Խնկի ծառ», հայոց քաջեր քեզի կու գան օգնութեան, ընկրկումի վարանոտ պահուն որ դուն մնաս անխախտ, կանգուն, որ ժայռանաս հոսանքներուն դէմ խեղդող»¹:

Թուրքական ցեղասպանությունն այսօր ևս շնչում է Բոսֆորի ավերին, քանի որ քրդերի և ոչ թուրք հպատակ այլ ժողովուրդների ցեղասպանությունը շարունակվում է օրը ցերեկով, առանց արգելքի: Թուրքերը, այո, գրեթե ողջ ազգը և ոչ թե միայն կառավարող շրջանները, հայերից և քրդերից գատ, գուցե և ավելին, թունոտ ատելությանբ են լցված Ռուսաստանի, ռուս ժողովրդի, ընդհանրապես սլավոնական ցեղակրոնական միավորման դեմ: Յուքսել Օսման Սերչենգեշտին «Ենի Իսթանբուլում» (Նոր Իսթանբուլ, 2. IX. 1967) գետնոված պանթուրքիստական թույնով ներծծված հողվածում ոչ միայն պահանջում է օսմանյան լայնածավալ կայսրության վերակենդանացումը, այլև նախկին ԽՍՀՄ իսլամաշատ երկրներից «ռուսներին դուրս վճռելը»: Նա գրում է. «**Ռուսները պետք է հեռանան թուրքական երկրներից՝ Կովկասից, Թուրքմենիայից, Ղազախստանից, Ադրբեջանից, Ուզբեկստանից, Յակուտիայից... Կովկասը և Ադրբեջանը պետք է Թուրքիային թողնել**»: **Ճիշտ է բնութագրում պատմաբան, պրոֆ. Մ. Արզումանյանը. «Լինելով բրդոտ ռասիստ, նա լկտիաբար քարոզում էր. «Անատոլիայի ամեն մի անկյունում բնակվող իսլամ թուրքը... ռուսից ավելի քաղաքավարի է, ավելի մարդկային»:**

Թուրք բարբարոսների գործած չարիքների անպատիժ մնալը, անցյալ դարասկզբի Ցեղասպանությունը հավուր պատշաճի չդատապարտելը, թերևս, պատճառներից մեկը դարձավ, որպեսզի հիտլերյան ֆաշիզմը կրկնել գեոցիդը հրեաների, լեհերի, ռուսների և սլավոնական այլ ժողովուրդների նկատմամբ: Բուխենվալդի և Մայդանեկի համակենտրոնացման ճամբարները կարծես թե կառուցել էին այն թուրքերն ու գերմանացիները, որոնք 1915 թ. հսկում էին Դեր-Չորի հայասպան «կենտրոնակայանները»: Քիչ թե շատ բանական մարդ արարածն այլևս չէր կարող դիմանալ սահմնելեցուցիչ այն արարողությանը, երբ տեսնում էր հարյուր հազարավոր 3-5 տարեկան հասակի երեխաների սպանվելուց հետո վառարանում այրված նրանց կոշիկները: **Դրանք Միջագետքում չէին, այլ Արևտյան եվրոպայի սրտում:**

Նյուրնբերգյան դատավարության ժամանակ (20. XI.1945 – 01. X.1946) քննարկվեց երկրորդ աշխարհամարտի գլխավոր հանցագործների հարցը: Այն մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար պետությունների դեկր վարողների նկատմամբ պատմության մեջ առաջին դատավարությունն էր, կայացրած անդրանիկ որոշումը: Միջազգային ռազմական տրիբունալի դատին էին հանձնվել նացիստական Գերմանիայի այն խոշոր հանցագործները, որոնք մեղադրական աթոռին էին գամվել խաղաղ բնակչությանը՝ ընդհանրապես, պատերազմի ռազմագերիներին՝ մասնավորապես, տանջամահ անելու, հասարակական և մասնավոր սեփականությունը հափշտակելու, ստրկական աշխատանքը վերակենդանացնելու, փոքր ու անպաշտպան ժողովուրդների բնաջնջման փորձ կատարելու և նմանատիպ այլ հանցագործությունների համար: Նյուրնբերգյան դատարանի բացահայտումներն ու նրանց նկատմամբ հանած որոշումները Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ՝ հիմնված 12.01.1945) Գլխավոր ասամբլեայի համար հիմք դարձան, որպեսզի անդրադառնար ցեղասպանության հարցին և այդ փաստերից աներ համապատասխան եզրահանգումներ:

¹ «Ազդակ» (բացառիկ համար՝ նվիրված Մեծ եղեռնի 85-ամյակին), Պեյրուք, 2000, 24-ը ապրիլի, էջ 91-92:

Յեղասպանություն էր որակվում ռասայական, ազգային, էթնիկական կամ կրոնական հատկանիշներով բնակչության առանձին խմբերի բնաջնջումը: Գե-նոցիդը XX դարում երկու անգամ ընդունել է ավելի խոշոր չափեր և հետապն-դել է որևէ ժողովրդի ամբողջովին ոչնչացնելու նպատակ՝ ինչպես Թուրքիա-յում հայերի կոտորածը (1890-1922) կամ գերմանական ֆաշիստների կողմից հրեաների և սլավոնների հավաքական, ամբողջական ոչնչացումը (1939-1945):

Գենոցիդը դիտարկվում է իբրև ծանր հանցագործություն՝ գործադրված ընդհանուր մարդկության դեմ, որն ունի հետևյալ որակումները. զավթողա-կան պատերազմների սանձազերծում, պատերազմի օրենքների և սովորույթ-ների խախտում, գերիների նկատմամբ դաժանության դրսևորում, զավթած տերիտորիաների բնակչության բնաջնջում և ստրկացում, անմեղ քաղաքացի-ների տանջահարում, հանրային կամ մասնավոր սեփականության կողոպ-տում, կրոնական կամ քաղաքական շարժառիթներով նրանց հետապնդում: Կոնվենցիայով պատժելի են համարվում նաև ցեղասպանության կազմակեր-պումը, դավադրությունը, հրահրումը, օժանդակությունը: Յեղասպանության համար մեղավորների հանդեպ վաղեմության ժամկետ չի սահմանվում: Նրանց նկատմամբ կոնվենցիան ունի հետադարձ ուժ, այսինքն՝ մեղավորները պատասխանատվության են կանչվում նաև մինչև կոնվենցիան կատարած հանցագործության համար: Ծանր հանցագործներ են ճանաչվում Թուրքիան և Գերմանիան, որոնցից երկրորդը պատժվեց, իսկ առաջինը մինչև օրս էլ մնում է անպատիժ:

Երկրորդ աշխարհամարտի ավարտից մեկ տասնամյակ չանցած՝ Արևմտյան Գեր-մանիայում ծվարած Զիտլերի մաշկափոխված սատելիտները զարմանալիորեն փորձեր էին անում հնացած համարել Նյուրնբերգյան դատավարության որոշումներ-ը, առաջադրում հանցագործության վաղեմության իրավունքի խնդիրը: ՄԱԿ-ի գա-զաթաժողովը ժամանակին հասկացավ նման առաջարկի վտանգավորությունը, ի լուր աշխարհի հայտարարեց, թե նման ոճիրներ, որոնց զոհ են գնացել միլիոնավոր մարդիկ, երբեք արդարացում չունեն և դրանից հանցավորներին չի փրկի նույնիսկ վաղեմության իրավունքը:

Այդուհանդերձ, ՄԱԿ-ը 1967 թ. դեկտեմբերին հերթական անգամ անդրադարձավ գենոցիդի խնդրին, հատուկ կոնվենցիայով մեկ անգամ ևս որոշեց պատերազմի հանցագործների վրա վաղեմության իրավունքը չտարածել: «Կոնվենցիան ելնում էր նրանից, որ «ըստ միջազգային իրավունքի՝ ռազմական հանցագործությունները և մարդկության դեմ ուղղված մյուս հանցագործությունները պատկանում են ամենա-ծանր հանցագործությունների թվին», որ այդպիսի հանցագործությունների նկատ-մամբ ներքին օրենքների կիրառումը «արգելակում է այն անձանց դատական հե-տապնդումն ու պատիժը, որոնք պատասխանատու են այդպիսի հանցագործու-թյունների համար», ուստի և նրանց վրա բուրդովին չի տարածվում վաղեմության ժամկետը»: Վերոհիշյալ բոլոր որոշումները, առավել ևս 1967 թ. ՄԱԿ-ի կոնվենցիան, առանց վերապահումների պետք է տարածել թուրքական շովինիստների վրա, որոնք Զիտլերից առաջ ոչնչացրեցին մեկ ամբողջ ժողովրդի սովոր հատվածին:

Ժամանակին Խորհրդային Միության ղեկավարությունը վերջապես վճռա-կանորեն դատապարտեց Թուրքիայի գործած ոճրագործությունը հայ ժողովր-դի նկատմամբ, ոչ միայն թույլատրեց երևանում կառուցելու Յեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթողը, այլև ԽՄԿԿ Կենտրոնա-կան կոմիտեի գլխավոր օրգան «Պրավդա» օրաթերթում հրապարակեց հոդ-ված՝ «Գենոցիդը ժայրագույն հանցագործություն է մարդկության հանդեպ» վերնագրով: Հոդվածը նվիրված էր Հայոց Մեծ եղեռնի կեսդարյա տարելիցին և

առաջին անգամ նման մակարդակով թույլատրում էր հայ ժողովրդի սզո արա-րողությունը ճիծեռնակաբերդում:

Այդ «հաջողությունը» պայմանավորված էր, նախ, համաժողովրդական այն պոռթկումով, հանրահավաքով, որը բռնկվեց 1965 թ. ապրիլի 24-ին: Ժողովուրդը, հատկապես երիտասարդությունը, որի համբերության բաժակը լցված էր, այլևս չէր կարողանում դիմանալ անարդար լուծյանը և պահանջում էր թույլտվություն՝ ապ-րիլի 24-ը նշելու իբրև սզո օր, և Հայաստանին վերադարձնել նրա անբաժան մասը՝ Լեռնային Ղարաբաղը: Իբրև կանոն, ժողովուրդը չի սխալվում: Նա հասավ իր նպատակին: Իհարկե, չպետք է ուրանալ Հայաստանի այն ժամանակվա ղեկա-վարության հայրենասիրական ոգին, ինչպես նաև այս դեպքում Սփյուռքի զո-րավիզ կանգնելը Մայր Հայրենիքին:

Խնդիրը դրանով չավարտվեց: 1965 թ. հուլիսին Զելսինկիում կայացավ խաղա-ղության, ազգային անվտանգության, ընդհանուր գինաթափման համաշխարհային կոնֆերանս: Միջազգային այդ բարձրապատիվ համաժողովն իր ամփոփիչ արձա-նագրության էջերում միաձայն դատապարտեց բռնատիրությունը, գաղութատիրու-թյունը և ցեղասպանությունը: Առանց զարմանքի նման փաստաթղթում այդ մակար-դակով ուղղակի գնահատական տրվեց նաև Հայոց ցեղասպանությանը: Այնտեղ աս-ված էր. «Այս տարի 50-ամյակն է օսմանյան Թուրքիայի կողմից գործադրված հայկական կոտորածների, ազգային հարցը մի ժողովրդի բնաջնջումով լուծե-լու նպատակով: Այս ցեղասպանությունը խլեց ավելի քան մեկուկես միլիոն ազատասեր հայերի կյանքը, այսինքն՝ հայ ժողովրդի երկու երրորդին»:

Յեղասպանության ճանաչման խնդիրն այսօր վերջապես դարձել է աշխարհի գրեթե բոլոր խոշոր տերությունների ղեկավարության և պառլամենտների ուշադրու-թյան առարկա: Թուրք պետական այրերը, առավել ևս պրեզիդենտն ու վարչապետը, հասկանալով եղելության բացահայտման ու ճանաչման բարդույթը, ամեն միջոցի դիմում են՝ ժխտելու այն, նույնիսկ կատարվածի մեղքը բարդում են «հեղափոխա-կան հայերի» վրա: Թուրքերն սպառնում են բացել Ստամբուլի, Անկարայի, այս վեր-ջերս էլ՝ Բաքվի արխիվները, «նոր նյութեր» դնել գիտական շրջանառության մեջ և ապացուցել ցեղասպանության բացակայությունը կամ «անշնորհակալ» ու «անհնա-զանդ» հայերի մեղավորությունը: Նրանք մոռացել են, որ ցեղասպանության ժամա-նակ իրենց նախորդները թողել են հսկայածավալ նյութեր հայկական ջարդերի մա-սին: Փորձենք դրանցից մի քանիսը միայն վկայակոչել:

1. ՄԱԿ-ի բոլոր կոնվենցիաներով ցեղասպանություն էր ճանաչվում այն հանցա-գործությունը, որը վաղօրոք ծրագրված էր, ուներ իրողության վերածելու համապա-տասխան նպատակադրում: Հայ ժողովրդի բնաջնջման մտահղացումը ձևավորվել էր դեռևս ուշ միջնադարում, կիսով չափ իրականացվել Աբդուլ Համիդի գահակալու-թյան նախավերջին տասնամյակին (1890-1896), ապա Ադանայում (1909) և ավարտ-վել երիտթուրքերի ու քեմալականների տխրահռչակ տիրակալության ժամանակա-հատվածում:

Պատճառները «բազմազան էին», սակայն այս դեպքում նշենք միայն մեկը՝ գլ-խավորը: Պանթուրքիզմի ախտով թունավորված թուրքական ռասան XIX դարավեր-ջին, Արևմուտքի ու հատկապես Ռուսաստանի ծանր հարվածների տակ հերթակա-նությամբ կորցնում էր իր եվրոպական նահանգները: Սլավոնական ազգերը թոթա-փում էին սուլթանական բռնապետության կեսհազարամյա լուծը, վերածվում էին ինքնիշխան պետությունների: Պարագիտային կյանքով ապրող թուրքական կայս-րությունը կորցնում էր և՛ ռազմաստրատեգիական հենակետերը, և՛ հարկերի ու կո-ղուպուտի միջոցով «ձեռք բերված» եկամուտները: Բ. Դուռը խճճվում էր միջազգային պարտքերի բարդ ցանցի մեջ, ոչ միայն վերակենդանանալու հույսեր չէր ներշնչում,

այլև կանգնում էր մահացման իրական վտանգի առջև: Թուրքերը կայսրության վերակենդանացման, նույնիսկ նոր ու ընդարձակ տերության վերականգնելու ելքը տեսնում էին դեպի Առաջավոր Ասիա ծավալվելու, իրենց Արևելքի մահմեդապաշտ ժողովուրդներին միացնելու, «նոր օսմանների ծիերը Աֆղանստանից մինչև Չնդկաստան վրձնացնելու մեջ»: Ձառանցական թվացող նրանց երազանքն էր իրար կարկատել իսլամապաշտ երկրներին, ստեղծել թուրանական նոր և հզոր պետություն: Այդ զառանցանքն այսօր էլ ուժի մեջ է, մանավանդ խՍՀՄ-ի փլուզումից հետո:

Պանիսլամիստների «մտահղացմամբ» իրենց զավթողական այդ պլաններն իրականացնելու ճանապարհին, իբրև «բնական արգելք», կանգնած էին հայ ժողովրդի զույգ հատվածները: Նրանց կարծիքով, և դա թերևս սխալ չէր, Հայաստանն իր աշխարհագրական ու ռազմաստրատեգիական դիրքով խանգարում էր Արևելքում ապրող Մուհամեդի երկրպագուների միավորմանը: Որպես ելք նրանք սկզբում մտադրվել էին կամ տեղահանել, կամ էլ ոչնչացնել արևմտահայությանը:

Յոհաննես Լեփսիուսը Թալեաթ փաշային պատժած Սողոմոն Թեխերյանի դատավարության ժամանակ տված ցուցմունքում, Բեռլինի հրապարակային դատական նիստում հայտարարեց. «Ես 1913-ին Կ. Պոլիս էի: Բանակցությունների միջոցին երիտթուրքերը շատ զայրացած էին, որ հայկական բարենորոգումների հարցը դարձյալ կզբաղեցնե պետությունները... Այն ատեն երիտասարդ թուրքերու կողմը կարտահայտվեր. «**Եթե դուք, հայերդ, բարենորոգումներե ձեռք չեք բաշեր, պիտի պատահի բան մը, որուն հանդեպ Արդուլ Համիդի ջարդերը տղու խաղալիք են** (ընդգծումները մերն են — Յ. Ղ.)»: **Երիտթուրքերը, դեռևս համաշխարհային պատերազմը չսկսված, արդեն բացահայտ հայտարարում էին. «Հայաստանը խանգարում է մահմեդականների միասնությանն ու թուրքական միության ստեղծմանը՝ թուրքական ռասան Կովկասի, Իրանի ու Կենտրոնական Ասիայի նրան ազգակից բնակչության հետ միավորելու ճանապարհով»:**

Մեհմեդ Թալեաթի նման մարդասպանի անթվական մի հրամանագրի մեջ ասված է. «Թերևս ասկից շատ առաջ որոշված էր բնաջնջել հայ տարրը, որ դարեր շարունակ կջանար մեր կայսրության ապահով հիմունքը քանդել և հիմա ալ իրական վտանգի մը ձևեր ստացավ, սակայն դասավորումները չէին թույլատրեր այս սուրբ ծրագիր-նպատակը ի գլուխ հանել: Հիմա, որ բոլոր արգելքները մեջտեղեն վերցված են, պատեհ առիթ կներկայանա մեր հայրենիքը այդ վտանգավոր տարրեն փրկելու: Ստիպողական կհանձնարարենք, որ պետք չէ գութի զգացումներով վարակվիք անոնց թշվառ ու տառապալի կացությունը տեսնելով, բայց անոնց բոլորին ալ սպանդ ի գործ դնել: Ձեր ամբողջ կարողությամբ ջանացեք Տաճկաստանեն, Թուրքիայեն մի անգամ ընդմիշտ հետքը վերացնել «Հայաստան»ի անվան...»: 1914 թ. փետրվարի 22-ին, այսինքն՝ Առաջին աշխարհամարտի բռնկումից շուրջ կես տարի առաջ, երիտթուրքերի կենտրոնական օրգան «Իկդամ» օրաթերթը առաջնորդող հոդվածում պատգամում էր Արևելյան Անատոլիայից, այսինքն՝ Արևմտյան Հայաստանից ողջ հայությանը բռնազաղթեցնել Միջագետք և նրանց փոխարինել մահմեդականներով, նույնիսկ շեշտում՝ **խլամ թուրքերով:**

1915 թ. սեպտեմբերի 9-ին արյունարբու Թալեաթը ծածկագրով Հալեայի կուսակալին է ուղարկում հայասպան ներքոհիշյալ հեռագիրը. «Հայերու համար Թուրքիո հողին մեջ ապրելու, աշխատելու իրավունքները ամբողջովին ջնջված են և այդ մասին կառավարությունը, բովանդակ պատասխանատվությունը ստանձնելով, հրամայած է նույնիսկ օրորոցին մանուկները չթողուլ: Քանի մը նահանգներու մեջ այս հրամանին գործադրության արդյունքները ամտեսված են... Առանց որևէ պատժառաքանություն ընդունելու, կին, թե մանուկ, ինչ որ ալ ըլլան, նույնիսկ շարժվելու անկարող եղողները հանեցե՛ք հոն-

կե և տեղի մի տաք, որ զանոնք պաշտպանե ժողովուրդը, որ տգիտությանը բերմունքով... չի կրնար կառավարության հետապնդած մեծ քաղաքականությունը գնահատել, որովհետև ուրիշ տեղեր անուղղակի կերպով կատարվող բնաջնջման գործողությունները. խստություն, արագություն (տարագրության ընթացքին), ծամբու նեղություններ, թշվառություն, հող ուղղակի կերպով կրնան ապահովիլ, հետևաբար՝ առանց ժամանակ կորցնելու ոգի ի բռին աշխատեցեք... Հաճեցեք Ձեր գործունեության արդյունքները ամեն շաբթու ծածկագրով հաղորդելու»:

Պանթուրքիզմն ու պանթուրանիզմն իբրև գաղափարաբանություն մխրձվում էր ժողով-խորհրդակցության մասնակիցների ուղեղներում: Բանը հասնում է նրան, որ Բեհաեդդին Շաքիրը ցինիկորեն հայտարարում էր, որ եթե թշվառական Սովսեսը, պարապ Հիսուսը և որբ Մուհամեդը կարող էին ստեղծել «աստվածային վարդապետություններ» - իրարից տարբեր ու իրարամերձ տարբեր կրոններ, ապա ինչո՞ւ մենք չենք կարող «ստեղծել և տարածել թուրանի կրոնը և գաղափարը»: Կենտկոմի մյուս անդամ Հասան Ֆեհմին նույնպես «աստվածաբանական մարզանքներ է անում» և ձգտում ցեղամոլության արգահատելի դոկտրինը հիմնավորել կրոնական դոգմաներով. «Արևելյան գիտության և սուրբ օրենքի՝ շարիաթի համաձայն, բոլոր նրանք, ովքեր վնասակար են ծանաչվում, պետք է ոչնչանան: Ամենայն ճշգրտությամբ ապացուցված է, որ հայերը վնաս են բերում: Քանի որ նրանք ապստամբել են մեր «Իթթիհատ վե թերաքքի» կուսակցության դեմ, ստիպել են ազատության հերոս էմվեր փաշային (Վանի նահանգապետ Ջևդեդ բեյին) ամոթալի փախուստի դիմել, ապա պետք է նրանց բոլորին մինչև վերջին մարդը բնաջնջել»: Համաժողովն ավարտվեց: Վերջին նիստի նախագահող Թալեաթի առաջարկով հայ ժողովրդի ոչնչացման կոնկրետացված պլանի իրագործումը դրվեց քվեարկության: Այն ընդունվեց միաձայն: Հայ ժողովրդի նկատմամբ անասնական ատելության մեջ լցված այդ «մարդակերպ հրեշները» բոլոր մանրութները հաշվի էին առել՝ ջարդը «հաջողությամբ» իրագործելու համար: Թուրքական, ժամանակի արևմտաեվրոպական, դժբախտաբար, նաև որոշ հայ հեղինակների գործերում գովասանքի տողերի ենք հանդիպում այն թուրքերի հասցեին, որոնք փրկել են հայերի: Բայց քանի՞սն են եղել դրանք, քանի՞ հայի են ազատել սպանությունից: Որպեսզի պատկերն առավել պարզ դառնա և վեճերի առիթ չստեղծվի, բերենք հետևյալ հրամանը. «Այս հեռագիրը (թարգմանաբար հրատարակել է Արամ Անտոնյանը) հակառակ իսլամական օրենքին, թե «արգելված բանը մի՛ ըներ սպառնալիքի ու սարսափի տակ» կը հայտարարե՛, **թե այն իսլամը, որ կհամարձակի պահել հայ մը, պիտի կախվի իր տան առջև և իր տունը պիտի այրվի: Պահողը, եթե պաշտոնեայ մըն է, պաշտոնանկ պիտի ըլլա և պիտի դատվի պատերազմական ատեանի կողմէ: Հայ պաշտպանողները, եթե զինվորական են, պիտի վտարվին զինվորական ասպարեզեն և պիտի տարվին պատերազմական ատեանի առջև»:**

2. Գենցիդին վերաբերող Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) բոլոր կոնվենցիաների հրապարակած փաստաթղթերում ընդգծված է, որ ցեղասպանությունը՝ կատարված թե՛ պատերազմի, թե՛ խաղաղ ժամանակ, միևնույն է, միջազգային օրենքներով դիտվում է իբրև մարդկության դեմ գործած ոճրագործություն և նրա մտահղացողներն ու իրողության վերածողները պատժվելու են առանց վաղեմության ժամկետի:

Ցեղասպանության երևույթի բնորոշումը տրվել է 1945-1946 թթ. տեղի ունեցած Նյուրնբերգյան միջազգային զինվորական դատարանի կողմից՝ երկրորդ համաշխարհային պատերազմի հանցագործների դատավարության ընթացքում: Դատարա-

նի վճռի 6-րդ հոդվածում հստակորեն արձանագրված է, որ «մարդկության դեմ հանցագործություններ են քաղաքացիական բնակչության նկատմամբ կիրառված սպանությունները, բնաջնջումը, ստրկացումը, աքսորը և այլ դաժանությունները կամ քաղաքական, ռասայական ու կրոնական շարժառիթներով հետապնդումները, որոնք կատարվել են պատերազմից առաջ և պատերազմի ժամանակ...»:

Միջազգային իրավունքի տեսանկյունից «գենոցիդ» տերմինը կամ ցեղասպանություն հասկացողությունը համակողմանիորեն իր ձևակերպումն է ստացել Միավորված ազգերի կազմակերպության 1948 թվականի դեկտեմբերի 11-ին ընդունած բանաձևի մեջ, որը հիմք դարձավ 1948 թվականի դեկտեմբերի 9-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված համաձայնագրի համար: Այն այսօր հայտնի է հանրությանը որպես «Կոնվենցիա ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի ենթարկելու մասին»: Կոնվենցիան սահմանում է, որ ցեղասպանություն է համարվում ամեն մի գործողություն, որն իրագործվում է բնաջնջման մտադրությամբ, ամբողջովին կամ մասամբ, ազգային, բարոյական, ռասայական կամ կրոնական խմբի հանդեպ՝ հետևյալ դեպքերում.

ա. խմբի անդամների սպանությունը.

բ. խմբի անդամներին լուրջ մարմնական կամ հոգեկան վնասներ պատճառելը.

գ. կանխամտորեն խմբի համար կյանքի այնպիսի պայմանների պարտադրումն այն հաշվով, որպեսզի դրանք հանգեցնեն ամբողջապես կամ մասնակիորեն ֆիզիկական ոչնչացմանը.

դ. հարկադիր միջոցների նախատեսում, որով կանխվում են ծնունդները խմբի ներսում.

ե. մի խմբի երեխաներին բռնի տեղափոխելը մեկ ուրիշ խումբ:

Միավորված ազգերի կազմակերպության նույն կոնվենցիան միաժամանակ սահմանել է պատժի ենթակա հետևյալ գործողությունները.

ա. ցեղասպանությունը.

բ. գաղտնի համաձայնությունը ցեղասպանություն գործելու համար.

գ. ցեղասպանության ուղղակի և մասսայական հրահրումը.

դ. ցեղասպանություն կատարելու փորձը.

ե. մասնակցությունը ցեղասպանությանը:

SEÑOR PAZ AGUIRRE. — A pesar de ello, nos va a ser imposible concurrir, porque debemos atender compromisos contraídos con anterioridad. Además, no pensábamos que tema de tanta importancia como éste se trasladara para esa fecha.

Esta es la situación que se nos crea. Así como hay sectores que no pueden concurrir el lunes, nosotros no podemos hacerlo el martes.

SEÑOR SANTORO. — Con la diferencia de que el martes está fijada sesión ordinaria.

SEÑOR PAZ AGUIRRE. — Perfectamente de acuerdo. Pero, naturalmente, los compromisos los contraemos todos en función de nuestras necesidades, cosa a la que tenemos derecho. En consecuencia, a la hora 20 tendríamos que abandonar el recinto, lo que nos impediría participar en la discusión y, por supuesto, en la votación.

21

Por lo tanto, propondríamos que el cuarto intermedio fuera para el día miércoles, a menos que se trasmeta para que fuera hasta mañana, que sería el día ideal para apurar el trámite de este asunto.

Repito que, lamentablemente, el día martes no vamos a poder estar presentes.

22

SEÑOR PRESIDENTE (Caputi). — Antes de continuar con el tema, la Mesa da cuenta que ha integrado la Comisión de Constitución y Legislación, para estudiar el asunto relativo al traslado de Fiscales, con los miembros de la de Asuntos Administrativos, señores senadores don Guido Machado Brum, y don Agustín C. Caputi.

En consideración la moción presentada por el señor senador Montaner y modificada por el señor senador Ferreira Aldunate, en el sentido de que se pase a cuarto intermedio hasta el día martes, figurando en primer término de la Orden del Día, la exposición del señor senador Beltrán, relativa a la personalidad de don Arturo Lussich y, en segundo término, el problema de las Intendencias.

SEÑOR HIERRO GAMBARDELLA. — ¿Me permite, señor Presidente?

SEÑOR PRESIDENTE (Caputi). — Tiene la palabra el señor senador.

SEÑOR HIERRO GAMBARDELLA. — El día martes, señor Presidente, nuestro sector no va a poder estar presente cuando se trate un problema en el cual son necesarios todos los votos del Senado. Por lo tanto, ese día sería aventurado tratar el proyecto que se relaciona con el financiamiento de los déficit municipales. Habíamos propuesto que se tratara mañana, pero dicha moción no tiene ambiente, en función de que, con anterioridad, había sido citada la Comisión de Asuntos Internacionales, para tratar temas muy importantes.

Votaríamos, en consecuencia, el pase a cuarto intermedio hasta el día martes, pero estableciendo que el asunto relacionado con los Municipios se consideraría el día miércoles porque no queremos arriesgarnos a perder un asunto tan importante por la carencia de votos, ya que varios de nuestros compañeros tienen compromisos ineludibles para ese día.

SEÑOR PRESIDENTE (Caputi). — Se votaría el pase a cuarto intermedio para el día martes, estableciéndose que el asunto relacionado con los Municipios se trataría el miércoles.

SEÑOR MICHELINI. — ¿Me permite, señor Presidente?

SEÑOR PRESIDENTE (Caputi). — Tiene la palabra el señor senador.

SEÑOR MICHELINI. — Repito, por lo que ya expresé hoy, que no vamos a votar intermedios que coincidan con días de sesiones ordinarias, porque ello significaría la eliminación de la hora previa. Voto intermedios para cualquier día en el cual no esté prevista ninguna sesión ordinaria, y esto lo hago como norma de trabajo y, precisamente, en defensa de los señores senadores que quieren plantear asuntos también importantes.

Por ejemplo, no entiendo cómo todavía no se ha planteado el problema de la huelga de bares y almacenes, si hoy hubiese hora previa, debía haberse planteado, porque es un hecho inusitado en el país. Más de nueve mil establecimientos han cerrado sus puertas, y todos los señores senadores hemos recibido delegaciones que han venido a plantear una situación angustiante y una protesta generalizada contra la política del Gobierno.

SEÑOR ERRO. — Cerraron por segunda vez.

SEÑOR MICHELINI. — Esto, no se plantea, señor Presidente, nada más que porque algunos señores senadores tienen que retirarse. Si el martes se elimina la hora previa, tampoco podría denunciarse y entonces el Senado deja de ser lo que ha sido, tradicionalmente, al ocuparse de temas que tienen plena vigencia en el país, para convertirse en un Cuerpo absolutamente rígido, donde las mayorías, imponen no sólo una orientación, sino, además, una norma de trabajo que no estamos dispuestos a aceptar en la medida de nuestras fuerzas.

Por todas estas razones, señor Presidente, es que no voto el intermedio para el día martes.

SEÑOR FERREIRA ALDUNATE. — Pido la palabra.

SEÑOR PRESIDENTE (Caputi). — Tiene la palabra el señor senador.

SEÑOR FERREIRA ALDUNATE. — Vamos a votar el régimen de cuarto intermedio para el día martes, a pesar de que comprendemos la exactitud de todas las razones que esgrime el señor senador Michelini y de la conveniencia evidente de preservar el instituto de la hora previa, precisamente, para resguardarla, ya que tenemos que recurrir a este subterfugio de su aparente eliminación, para restituirla. Si se incluye en primer término de la Orden del Día, la exposición del señor senador Beltrán, es porque éste está inscripto desde hace cuatro meses en la hora previa, y todavía no ha podido hacer uso de la palabra.

SEÑOR TERRA. — Sustituye la mía, señor senador.

SEÑOR FERREIRA ALDUNATE. — Es verdad que sustituye al señor senador Terra; pero también es verdad que dicho señor senador ingresó a la hora previa de rondón, y no por el procedimiento reglamentario a que había acudido el señor senador Beltrán. Si hay un señor senador que solicita el derecho de hacer uso de la palabra, en la hora previa, y plantando cuestiones de orden dentro de ella, se le frustra ese derecho, estoy dispuesto a votar el intermedio por eso.

En cuanto al día para el cual solicitamos el cuarto intermedio, también queremos ser muy claros. Lo que solicitamos es que el Senado funcione los días reglamentariamente indicados, porque, de lo contrario, es absolutamente imposible ordenar el trabajo de los legisladores. Todos nosotros prevenimos nuestras posibilidades políticas, partiendo del supuesto de que tenemos que estar en Montevideo los días martes y miércoles en que hay sesión, y los jueves, que es cuando funcionan las Comisiones. El viernes y los dos últimos días de la semana los dedicamos a nuestras actividades políticas imprescindibles.

24

SEÑOR TERRA. — ¿Me permite, señor Presidente?

SEÑOR PRESIDENTE (Caputi). — Tiene la palabra el señor senador.

SEÑOR TERRA. — El señor senador Ferreira Aldunate dice que entré de rondón en la hora previa y no por el procedimiento reglamentario a que había acudido el señor senador Beltrán. La verdad es que me anoté para hacer uso de la palabra en la hora previa en el mes de marzo.

SEÑOR BELTRAN. — En el mes de abril.

SEÑOR TERRA. — En el mes de marzo, o sea antes que el señor senador. Pero, respetando y comprendiendo las razones de fecha que puede tener el planteamiento del señor senador Beltrán, estamos dispuestos a votar el cuarto intermedio propuesto, pero señalando que no queremos que se siga postergando ni media exposición.

SEÑOR FERREIRA ALDUNATE. — Retiro lo de "rondón", pero me quedo con la circunstancia de que cuando logró su turno en la hora previa, el señor senador Terra insumió bastante más de una hora y lo demuestra el hecho de que todavía estamos con el asunto.

SEÑOR TERRA. — Lo que sucedió, es que con anterioridad se plantearon muchos otros temas.

SEÑOR PRESIDENTE (Caputi). — La Mesa aclara que entre los oradores inscriptos para hacer uso de la palabra en la hora previa, no figura el señor senador Terra.

El señor senador puede solicitar que su exposición figure a continuación de la del señor senador Beltrán.

SEÑOR TERRA. — Eso es lo que voy a solicitar.

SEÑOR PRESIDENTE (Caputi). — ¿Acepta la modificación el señor senador Ferreira Aldunate?

SEÑOR FERREIRA ALDUNATE. — No acepto nada que demore el tratamiento urgente, como aquí se ha demostrado, de los recursos para los Municipios. Al día siguiente estoy dispuesto a asistir a una sesión extraordinaria al solo efecto de oír la finalización de la exposición de hora previa, y posterior en este caso, del señor senador Terra.

SEÑOR TERRA. — ¿Me permite, señor Presidente?

SEÑOR PRESIDENTE (Caputi). — Tiene la palabra el señor senador.

SEÑOR TERRA. — Si lo de que no figuro entre los oradores inscriptos en la hora previa es un chiste, vaya y pase; pero que estoy anotado desde el mes de marzo y que se demoró mi exposición, es la pura y estricta verdad. Por lo tanto, solicito que no haya más postergaciones. Si el cuarto intermedio es para el miércoles, reclamo mi derecho a hacer uso de la palabra el martes; y si es para el martes, reclamo que a continuación de la exposición del señor senador Beltrán, o antes de ella —me avengo a cualquier fórmula— se trate este tema antes de entrar a considerar los recursos para las Intendencias.

En cuanto a que mi exposición haya durado una hora, señalo que no es así, porque en la hora previa se plantearon cantidad de asuntos chicos, por lo que el hecho de que ella finalice, no significa que yo haya hablado todo el tiempo.

25

SEÑOR PRESIDENTE (Caputi). — En la moción que se va a votar, no se incluye lo que acaba de proponer el señor senador Terra, que se trataría por separado.

Se va a votar si se pasa a cuarto intermedio hasta el próximo miércoles y se suspende la sesión ordinaria.

SEÑOR FERREIRA ALDUNATE. — Entonces, en la sesión del martes, puede hacer uso de la palabra el señor senador Terra.

SEÑOR PRESIDENTE (Caputi). — Si no se hace uso de la palabra, se va a votar la moción formulada.

Los señores senadores por la afirmativa, sirvanse indicarlo.

(Se vota.)

—17 en 21. Afirmativa.

26

El Senado pasa a cuarto intermedio hasta el próximo miércoles.

(Así se hace, siendo la hora 18 y 20 minutos, presidiendo el señor senador don Agustín C. Caputi, y estando presentes los señores senadores Barbot Pou, Beltrán, Costanzo, Melogoyen, Erro, Ferreira Aldunate, Grauert, Heber, Hierro Gambardella, Mederos, Michelini, Montaner, Ortiz, Paz Aguirre, Rath, Santoro, Terra, Vasconcelos, Vaz, y Zabala.)

Dr. JORGE SAPELLI
Presidente

Dr. José Pastor Salvatierra
Dr. Mario Farachio
Secretarios

Dr. HUGO GRACERAS SCALITTI
Director General del Cuerpo de Traductores

INDICE DE NUMERALES

Numeral	Página
1	2
2	2
3	3
4	3
5	3
6	3
7	5
8	6
9	6
10	6
11	6
12	7
13	7
14	7
15	8
16	8
17	8
18	8
19	9
20	9
21	10
22	10
23	11
24	11
25	11

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

1. ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ
 ՍՏԵՂԾՎԵԼԻՔ ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ ԵՎ ՄԻԱՅՅԱԼ
 ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՂՋԱԿԻՉՎԵՅ ՔԵՄԱԼԱԿԱՆ
 ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԼԵՆԻՆՅԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
 ԶՈՀԱՍԵՂԱՆԻ ՎՐԱ:

2. ՄՈՍԿՎԱՅԻ (1921 Թ. ՄԱՐՏԻ 16-Ի) ԵՎ
 ԿԱՐՍԻ (1921 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի)
 ՀԱՅԱԴԱՎ ՈՒ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ,
 ԴՐԱՆՔ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ
 ՀՈՒՅԺ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ:

ԿՅՈՒ ԿՆԳ. Կ523
 ԼԱՆ-11

Depósito Legal N° 29,358/

Գլուխ ութերորդ

**Անկախ Նայասպանը ողջակիզվեց
քեմալական Թուրքիայի և լենինյան
Ռուսաստանի զոհասեղանի վրա**

«Մեր դապը արդար է, մեր պահանջները պեպք է որ իրագործվին: Կայանավոր Մասիսի կապանքները պեպք է որ փշրվին, և հայ ժողովրդի անմահության այդ վեհափառ խորհրդանիշը պեպք է որ ազապագրվի օգտարի լուծեն: Անհիշարակ ժամանակներն ի վեր մեր նախնիներու քրտինքով ռոռզված և արյունով նվիրագործված Հայոց Հայրենիքին վրա պեպք է որ վերահասապարվի հայ ժողովրդի հարազապ պեպական իշխանությունը:

Հայ ժողովրդի մեծ բանասպեղծ և մեծ հայրենասեր Բաֆֆին իր սրտի խորեն արչակեց հեպեյալ մարգարեական ճիշը, երբ Հայասպանի ազապագրումը փակավին շապ անհույս և հեռավոր կրվեր -

*«Արդյոք գալո՞ւ է մի օր, ժամանակ,
Տեսնել Մասիս գլխին մի դրոշակ,
Եվ ամեն կողմից պանդուխտ հայորդիք
Դիմեն դեպ յուրյանց սիրուն Հայրենիք»:*

«ԼՐԱԲԵՐ» (ԱՄՆ), 1947

**1. Երկիշխանության հասապարումը Թուրքիայում,
Մուսապաֆա Քեմալն ու քեմալիզմն Էնիկյուրիում-Անկապայում**

Ռուսաստանում Զոկտեմբերյան հեղաշրջման իրականացումից հետո ժողկոմ-խորհի նորաթուխ նախագահ Վ. Ի. Լենինն անդրանիկ դեկլարացիաներից մեկով դիմեց աշխարհի ժողովուրդներին, հատկապես Արևելքի ճնշված ազգերին՝ հայտարարելով, թե ՌՍՖՍՀ-ն այսուհետև դիվանագիտական հարաբերություններ է հաստատում գաղութային շղթաները փշրած բոլոր տերությունների հետ, առանց պայմանների ճանաչում է նրանց **սուվերենությունը**:

1921 թվականն այդ բնագավառում աննախադեպ առաջընթացի տարի եղավ: ՌՍՖՍՀ-ի արտաքին գործերի կոմիսար (ժողկոմ) **Գեորգի Վասիլևիչ Չիչերինը** (1872-1936) և նրա աջ բազուկ ու առաջին տեղակալ, հայազգի **Լևոն Միխայլովիչ Կարախանը** (1869-1937) առանց լուրջ դժվարությունների **բարեկամության** պայմանագրեր ստորագրեցին **Սոնդոլիայի, Աֆղանստանի, Իրանի** հետ: Դիվանագի-

տական հարաբերություններ հաստատվեցին կովկասյան նորընծա պետությունների հետ, որոնք միայն երեկ էին դուրս եկել Ռուսական կայսրության կազմից:

Ընդհանրապես բարդ էին մնում կնճռոտ խնդիրներով առկայություն **ռուս-թուրքական** հարաբերությունները, քանի որ կային հավերժական հակասություններ՝ եկած պատմության ետնախորքից:

Պատմաբանի հետադարձ հայացքով դիտարկելիս ակնհայտ էր, որ Ռուսական կայսրությունը՝ **Պետրոս Մեծից** (1672-1725) սկսած **Նիկոլայ Երկրորդով** (1868-1918) եզերված, միշտ էլ թունք էր կանգնել ընչաքաղց օսմանյան սուլթանների ծավալապաշտական նկրտումներին, ուղղակի արգելք էր դարձել համաթուրքական առավել ընդարձակ (կարծես թե եղածը քիչ էր - Գ. Ղ.) տերություն հաստատելու՝ նրանց ծրագրերի իրականացմանը:

Վերջին երեք հարյուրամյակների ընթացքում տասներեք լուրջ կոնֆլիկտներ են ծագել **Պետերբուրգի** և **Ստամբուլի** միջև: Դրանցից **ինն** ավարտվել են ռուս-թուրքական լայնահուն, զոհառատ պատերազմներով: Հզորացող, օր առ օր ընդարձակվող Ռուսաստանը թուրքիայից մաս առ մաս պոկում էր նրա տիրակալած երկրամասերից և դրանցից շատերը միացնում իրեն (ինչպես Դրիմի ընդարձակ թերակղզին, որն այսօր կոչվախնձոր է դարձել սլավոնական զույգ պետությունների միջև):

Թուրքերի դեմ ռուս զինվորի տարած փայլուն հաղթանակների արգասիքն էին Բալկանյան թերակղզու վրա **վերականգնված** սլավոնական պետությունները, որոնց մայրաքաղաքներում այսօր էլ ծածանվում են ազգային դրոշմերը, ամեն օր և ամենուրեք հնչում են օրհներգերը: Անկասկած, այդ պրոցեսին զորավիգ կանգնելը մասամբ, մեծ մասամբ պայմանավորված էր քրիստոնեական պաշտամունքով: Ժողովուրդներն այս պրոցեսում իրար օգնում էին անշահախնդիր, հայրենասիրական մղումից դրդված:

Ցարիզմն, անշուշտ, սեփական շահերն էր հետապնդում և ինքը ևս վարում էր նվաճողական քաղաքականություն: Անկախ դրանից, սուլթանական դարավոր բռնապետությունից ազատագրված յուրաքանչյուր ժողովրդի կյանքում Ռուսաստանն ազատարարի դեր էր կատարում: Ծիշտ է, ոչ բոլոր երկրներն էին բաղձալի նպատակների հասնում, բայց հասնողները՝ **Հունաստան, Բուլղարիա, Սերբիա, Չերնոգորիա** և այլն, այսօր էլ գիտակցում են, որ եթե չլիներ ռուս ազատարար զինվորը, իրենք մեկուսի չէին կարող դիմագրավել օսմանյան ռազմական հզոր մեքենային:

Արձանագրենք, որ Թուրքիայի դեմ Ռուսաստանի ծավալած ռազմական ու դիվանագիտական արդարամիտ գործողություններին ամենուրեք խանգարում էին Արևմուտքի մեծ կամ փոքր տերությունները: Ամենաճակատագրական պահերին **Իշխանաց կղզիների** մոտ խարխիս էր գցում բրիտանական նավատորմը, պատերազմով սպառնում ռոմանովների դինաստիային և սուլթանին անրապնդում կամ Դուլմա-Բախչեում, կամ էլ Երլըզ Բեռլեում: Լոնդոնը Ստամբուլի հետ դարեր շարունակ կապված էր թուրքասիրական իր **բնագրով**, չհասկանալով, թե ինչպիսի վնաս է պատճառում քրիստոնեապաշտ մարդկությանը, հպատակ փոքր ու մեծ այլ ազգերին:

Կայզերական Գերմանիան օսմանների հետ կապված էր «հավերժական դաշինքով», որի արդյունաբերական ու գյուղատնտեսական կոնցեսիաները շաղ էին տրված Թուրքիայի և՛ եվրոպական, և՛ հատկապես ասիական նահանգներում: Բեռլինը հետևողականորեն մարզում էր թուրքական բանակը, նրան զինում և հանդերձավորում գերմանական զենքով, չպատկերացնելով, թե ինչպիսի վնաս է պատճառում իր կրոնակիցներին: Աշխարհին երկու աշխարհամարտ **պարզևս** յունկերական կայսրությանը դաշնակից էր պետք, և այդ «հավատարիմ» զորակիցը սուլթանական

տերությունն էր: Մեծ մասամբ հակառուսական պայքարի բովում Լոնդոնին և Բեռլինին ձայնակցում էին Փարիզն ու Չոնոնը: Վիեննան ծանրութեթև էր անում, ապա նոր կողմնորոշվում հարցերը լուծելիս:

Այսպիսով, իբրև ընդհանրություն, երբեմն նաև իբրև կանոն, վերելքի ճանապարհ բռնած լայնարձակ Ռուսական կայսրությունը, Թուրքիայի գլխին գեղք կախելիս, հաճախ կռվում էր ողջ Արևմտյան Եվրոպայի դեմ՝ եթե ոչ մարտադաշտում, ապա անպայման դիվանագիտական վիճասեղանի շուրջ: Այստեղ էր ծնվել «հավերժական բարեկամներ կամ հավերժական թշնամիներ չկան, այլ կան միայն մերկապարանոց հավերժական շահեր» թևավոր արտահայտությունը:

Նման միջանկյալ մտքեր բերելիս, զարմանքից քար ես կտրում, քանի որ այս պարագայում մենք տեսնում ենք հակառակը, հակամարդկայինը, հակաազգայինը: Առաջին աշխարհամարտից հետո, **միայն հետո**, Թուրքիային ու թուրքերին իր գիրկն առած՝ ոչ միայն դատապաշտպանի, այլ նաև նույնիսկ մարտնչող զինվորով ու ամեն ինչով սնունդ մատակարարող դոնորի նման նրանց էր պաշտպանում **լենինյան Ռուսաստանը**, նույնպես հանուն սեփական շահերի, իհարկե, զոհասեղանի վրա բարձրացնելով հավատակից **եղբայրական հույն ժողովրդին** և դաշնակից **Հայաստանին**:

Այս ամենը ճակատագրական դեր խաղաց **Էլլադայի** հերոսների կյանքում, որոնք 1821-1828 թթ. Ռուսաստանի բացառիկ օգնությամբ էին անկախություն ձեռք բերել՝ թոթափելով օսմանյան բռնապետական լուծը: Հայաստանը ռուսական պետության մի մասն էր, և հայ զինվորները հազարներով կռվում էին ռուսական դրոշի ներքո, կռվում էին Ռուսաստանի թշնամի **Թուրքիայի դեմ**:

Այժմ Թուրքիան եղբայրն էր Լենինյան Ռուսաստանի, իսկ Հունաստանն ու Հայաստանը իմպերիալիստական զավթողական երկրներ էին, Ռուսաստանին թշնամի: Ինչո՞ւ, որո՞նք էին դրանց պատճառները:

2. Նախ Կոստանդնուպոլսի մասին

Այն (Կ. Պոլիսը) հավերժական քաղաք է: Այն Արևելքի Հոռնն է:
ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

Կոստանդնուպոլիսը կանգնած է հնամենի Եվրոպայի ամենաձայրամասում:
Այն փռված է հզորարեք Ասիայի ափերին և մի տեսակ կամրջի դեր է կատարում երկու ցամաքամասերի միջև:
ՋԱՎԱՀԱՐԱԼ ԵՆՐՈՒ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ (Κωνσταντινούπολις), Կ. Պոլիս, Բյուզանդիոն (Βυζαντιον, Βυζαντις) իբրև թագավորանիստ քաղաք կոչվել է նաև Βασιλεύουσα πολις թագավորական քաղաք (ռուսերեն՝ Царьград), Ստամբուլ (թուրքերեն՝ İstanbul), Հոռնեական կայսրության (330-ից), Բյուզանդիայի (395-1453) և Օսմանյան կայսրության (1453-1923) մայրաքաղաք: Հիմնել է **Կոստանդին Մեծը** 324-ին, Բյուզանդիոնի տեղում՝ **Նոր Հոռն անունով**: Մայրաքաղաքի պաշտոնական հռչակումը տեղի է ունեցել 330-ի մայիսի 11-ին և շուտով, ի պատիվ հիմնադրի, կոչվել է **Կոստանդնուպոլիս**:

¹ Կոստանդնուպոլիս քաղաքի, հատկապես այնտեղի **հայ զաղուքի** պատմությամբ մենք սկսել ենք զբաղվել դեռևս 1967 թվականից: Տես **Հայկ Ղազարյան**, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 392-436: **Գ. Բարթիկյան**, **Գ. Ղազարյան**, **Կոստանդնուպոլիս** բառ-հոդվածը, **ԳՄԳ**, հատ. 5, Երևան, 1979, էջ 616-619: **Նույնի** «Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին», Երևան, 2001, էջ 577-583: **Նույնի** «Հայ ժողովրդի ցեղա-

Հունական աշխարհահռչակ այս քաղաքը, անկասկած, հարուստ և անկրկնելի կենսագրություն է կերտել: Նախ, ողջ հողագնդի երեսին այն միակ քաղաքն է, որը փռված լինելով զույգ աշխարհամասերի վրա, իր աշխարհագրական դիրքով, փաստորեն, **Եվրոպան կամրջում է ասիական մայրցամաքի հետ:** Թերևս նման դիրքն է (ունեցել է տեղանքի բարձրաճաշակ ու անզուգական ընտրողներ) նաև պատճառը բարձրածայնելու, թե աշխարհում միայն երեք քաղաքներ կան՝ **երեք մայրաքաղաքներ**, որոնք և՛ իրավաբանորեն, և՛ հզորությամբ իրար շարունակում են:

Այդ մայրաքաղաքներից առաջինը **Հռոմն** էր, հնամենի ու հզոր **Հռոմեական կայսրության մայրաքաղաքը:** Երկրորդը՝ **Կոստանդնուպոլիսն** էր, որն Արևմտյան կայսրության խաղաղ բաժանման ճանապարհին ստանձնեց նոր տերության մայրաքաղաքի դերը և շատերի կողմից երկար ժամանակ **երկրորդ Հռոմ** անվամբ էր անվանակոչվում: Այժմ **երրորդ Հռոմի** մասին...

Ռուսական մեծ իշխան (ցար) **Իվան Վասիլևիչ Չորրորդը** (1530-1584) վայրիվերումներով ապրած իր գահակալության տարիներին ընդարձակեց մոսկովյան տերության սահմանները, նվաճեց բազում երկրներ, այդ թվում՝ **Կազանի և Աստրախանի** խանությունները (Սիբիրը վասալական կախման մեջ դրեց իրենից): Նա, փաստորեն, ավարտեց հայրենական հողերի միավորումը մեծ տերության շուրջ: Աննախադեպ ակտիվ և հաղթական արտաքին քաղաքականություն վարելու շնորհիվ **Իվան Ահեղը** (սեփական որդուն սպանելու պատճառով ստացավ այդ հորջորջումը) աշխարհի աչքում բարձրացրեց և՛ իր, և՛ իր կառավարած տերության միջազգային հեղինակությունը: Նա ունեցավ շատ դաժան անձնական կյանք, ամուսնացավ **հինգ անգամ** (կանայք շուտ-շուտ մահանում էին), վեցերորդ կին վերցրեց **Անաստասիային:** **Այս կինը սերում էր բյուզանդական պալեոլոգիական կայսերական դինաստիայից, ավելի ստույգ՝ այդ տոհմի վերջին շառավիղն էր:**

Նկատի ունենալով Ռուսաստանի աննախադեպ հզորացումն ու Բյուզանդական արքայական տոհմի շառավիղների հետ ստեղծած խնամիական կապերը, քաղաքակիրթ աշխարհում սկսեցին լուրեր պտտվել, թե **Մոսկվան երրորդ Հռոմն** է, Կ. Պոլսի շարունակությունը: Ավելացվեց նաև, թե չորրորդ Հռոմ չի եղել և չի էլ լինելու: Հետագա դարերի պատմությունը փաստացի վավերացումն է մարգարեական նման կանխատեսման:

Կոստանդնուպոլիսը (կրճատ **Կ. Պոլիսը**) իր հարուստ, երբեմն հերոսական, շատ դեպքերում ողբերգական կենսագրությամբ իրավամբ ինքն է նվաճել համաշխարհային, բայց սեփական փառքը, անվերապահորեն արժանացել համամարդկային ճանաչման: Քաղաքը շուրջ տասնվեց հարյուրամյակ անընդմեջ եղել է իրար հակադիր, բայց ճակատագրի բերումով իրար հաջորդող երեք հզոր կայսրությունների մայրաքաղաքը: Անշուշտ, պակաս դեր չեն խաղացել աշխարհագրական դիրքն ու պատմության քառուղիներում գտնվելը: Ի դժբախտություն քրիստոնյա աշխարհի, Կ. Պոլիսն այսօր էլ ի չարն է գործադրում Միջերկրականի նեղուցներին տիրակալ լինելու պարագան:

Աշխարհահռչակ, նույնիսկ միայն անունով հեռվից մարդկանց առիճնող այս քաղաքն օժտված է բնական, աշխարհագրական անկրկնելի դիրքով: Այն կառուցված է յոթ բլուրների վրա, շրջապատված աշտարակավոր պարիսպներով և՛ ծովի, և՛ ցամա-

սպանությունն օսմանյան կայսրությունում», Երևան, 2004 (երկրորդ հրատարակություն), 2007, էջ 269-281: Թեմային վերաբերող շարադրանքի մեծ մասը թարգմանաբար հրատարակել ենք **Ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն և թուրքերեն** լեզուներով տպագրած մեր մենագրությունների էջերում:

քի կողմից: Կ. Պոլսի աջակողմում փռված են Բոսֆորի և Ոսկեղջյուրի նեղուցները, քիչ հեռվից երևում է Մարմարայի ծովը: Հանդիպակաց կողմում է գտնվում քաղաքի եվրոպական հատվածը: Մասնավորապես, Բոսֆորի նեղուցի երկկողմյան եզերքներն իրենց գրաված եզակի դիրքով ու ընդգրկած սքանչելի տեսարաններով՝ անզուգական են, անկրկնելի, այնպիսին, որ դրանց նմանակը աշխարհի ոչ մի այլ հատվածում գտնել չես կարող: **«Ուրույն չնաշխարհիկ գեղեցկություն, - գրում է Ս. Ս. Տոցկիանը, - զորս երգած են հանապազ ամեն ազգի բանաստեղծները: Կ. Պոլստ օղբ քարեխառն է: Չորս եղանակներ կանոնավորապես ի հայտ կուգան իրենց բնորոշ հատկություններով (ընդգծումները մերն են - Յ. Ղ.)»:**

Կոստանդնուպոլիսը շուտով դարձավ աշխարհի ամենահարուստ և իր շուքով անցորդներին զարմանք ու հիացմունք պատճառող քաղաքներից մեկը, **եթե ոչ ամենագեղեցիկը:** Կ. Պոլսի ոսկերիչների ստեղծած շեղևները (գլուխգործոցները) սկսում են զարդարել աշխարհի գրեթե բոլոր թագավորների ու բարձրապատիվ հոգևորականների պալատները: Ճանապարհորդները, տեսնելով քաղաքը, վերադարձին թողած իրենց հուշերում զարմանքով են արձանագրում, թե որտեղի՞ց է կուտակվել նման հարստություն և պերճանք: Ամենալուրջ տպավորություն էր գործում **Սուրբ Սոֆիայի** տաճարն իր **թե՛ արտաքին և թե՛ ներքնազարդ** գեղեցկությամբ:

1. Այժմ Արևմուտքի և Ռուսաստանի միջև բացահայտ պատերազմը ոչ միայն Թուրքիային, այլև հատկապես **Կ. Պոլսին և զույգ նեղուցներին տիրանալու համար էր:** Ռուսաստանը բաց աչքերով չէր կարող տեսնել, որ իր ձեռքից խլում են տնտեսական, առավել ևս ռազմաստրատեգիական նման պատմեշները: Վ.Ի.Լենինն այդ պահին քաղաքը գեներով գրավել չէր կարող, ուստի օգտագործում էր թուրքերին և նրանց ձեռքով նեղուցների դռները բացում էր իր նավերի առջև, զոցում Անտանտի էսկադրաների դեմ: Հետևաբար, երրորդ Հռոմը (Մոսկվան) ձգտում էր չկորցնել այն, ինչ իր նախորդները ձեռք էին բերել հարյուրամյակների ընթացքում:

2. Հեղափոխական Ռուսաստանը տեսնելով, որ իրենց հունտած սերմերը ծլարձակում են աշխարհի շատ երկրներում, այսինքն՝ արագորեն խորհրդային կարգեր են հաստատվում ամենուրեք, իրենք ևս ձգտում էին համաշխարհային հեղափոխության հաղթանակին, ասել է թե՛ մեծ տերության կարկատմանը: Մեծ, ընդարձակ նորաստեղծ կայսրության վերընձյուղումը բոլշևիկյան ծրագրային փաստաթղթի առաջին կետերից մեկն էր, **եթե ոչ ամենաառաջինը: Հետևաբար, առաջնորդվելով՝ «նպատակը արդարացում է միջոցները» հանրահայտ տեսությամբ, Քաղբյուրոն իր հաշվով (սխալ դուրս եկավ) Քեմալին օգտագործում էր Թուրքիան դարձնելու այդ մեծ տերության հատվածներից մեկը:**

3. Բոլշևիկյան կուսակցության աքիլեսյան գարշապար սկզբից մինչև վերջ էլ մնաց **Ազգային հարցը:** Չնայած 1912 թվականից սկսած **Ստ. Շահումյանը, Վ. Ի. Լենինին** գրած նամակներով, «Պրավդա»-ում հրատարակած հողվածներով սկզբնավորում էր ազգային խնդրի մասին տեսության ներմուտը կուսակցության ընդհանուր ծրագրում, բայց դրանք բավարար չէին: Լայնարձակ կայսրության մեջ ապրող բազմազգ ժողովուրդների ազգային նուրբ զգացումներին լրջորեն բավարարություն չէր տրվում: Ստեղծված Ազգությունների կոմիսարիատը գլխավորում էր մի մարդ (Ի. Վ. Ստալինը), որը, վրացիներից բացի, թունոտ ատելությամբ էր լցված մյուս ազգերի, հատկապես ռուսների և հայերի նկատմամբ: Թերևս այդ **բացթողումն** էր ԽՍՀՄ-ի նման գերտերության հեշտագին փլուզման պատճառը:

¹ Ս. Ս. Տոցկեան, Արևմտահայ աշխարհ, Նիւ Յորք, 1947, էջ 543:

4. Խորհրդային նորաստեղծ պետության բարձրագույն ատյաններում աշխատում էին այնպիսի պետական գործիչներ, ովքեր իսլամապաշտ ազգերի նկատմամբ **մի տեսակ թուլություն ունեին**: Դրանց թվում էին Վ. Ի. Լենինը, Ի. Վ. Ստալինը, Լ. Դ. Տրոցկին, Կամենևը և շատ այլ անձնավորություններ, որոնք, տարված համաշխարհային հեղափոխության հաղթարշավի մոլուցքով, մոռանում էին ազգերի և ազգային պետությունների նախասիրությունները, որից առավել տուժում էին փոքրիկ Հայաստանն ու հայ մեծ ժողովուրդը:

Ահա սրանք էին քեմալական շարժման հաջողության նախադրյալները, որոնցից շատ վարպետորեն օգուտ քաղեցին նրանք՝ արդեն կործանված, գետնաքարշ վիճակի մեջ ընկած թուրքիան ու ավարածարավ, դեռևս նոմադական, բարբարոս մակարդակի վրա մնացած թուրքերն ու քրդերը:

Հետևաբար, թուրքիան հարկադրված էր օգնության խնդրանքի ձեռք կարկառել Խորհրդային Ռուսաստանին՝ առաջնորդվելով այն սկզբունքով, թե խեղդվողն օժից էլ է պաշտպանություն հայցում: Ռուսաստանն էլ ոչ լռակյաց սպասում էր թուրքիայից եկող բանազնացներին, կարծես թե պատրաստ զորավիգ կանգնելու մի տերության, որին կարող էր օգտագործել Անտանտի տերությունների ծրագրած հակա-խորհրդային արշավանքների դեմ:

Իրադրության նման հասունացումը կատարվեց Հայաստանի և Հունաստանի հաշվին՝ մեծ զոհերի պատճառ դառնալով վերոհիշյալ երկու ժողովուրդների կյանքում:

Դիմենք պատմության զարգացման հետագա ընթացքին:

* * *

1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի զինադադարին ընդմիջումներով հաջորդեց Փարիզի խաղաղության կոնֆերանսը (1919 թ. հունվարի 18-ից մինչև 1919 թ. հունիսի 28-ը): Արդեն ակնհայտ էր, որ երբեմնի լայնարձակ օսմանական կայսրության տարածքը դրված էր բաժան-բաժան լինելու իրական վտանգի տակ:

Սուլթան Մեհմեդ VI Վեհաետդինը (1861-1929) մեկընդմիջտ կորցրել էր սեփական իշխանությունը, հետևաբար և հեղինակությունը ոչ միայն եվրոպական տերությունների, այլև նացիոնալիստական թույնով վարակված իսլամապաշտ ժողովուրդների աչքում: Երիտթուրքական ցեղասպան շնագայլերը ճողոպրել էին Գերմանիա: Բարձրագույն Դռան մեծ ու փոքր պաշտոնյաները թաթախված էին կաշառակերության, հանցագործության անմաքուր տակառի մեջ: Երկրին նոր ղեկավար էր պետք, այնպիսին, որը կարողանար խճճված այդ կոփկից գլուխ հանել և թուրքիան փրկել վերջնական կործանումից:

Չարմանալիորեն ոչ շատ արագ, բայց և այնպես գտնվեց այն մարդը, որին կվստահվեր թուրքիայի ապագան: Այդ անձնավորությունն արդեն գեներալի կոչման հասած **Մուստաֆա Քեմալն էր**, մի մարդ, որը հայ և հույն ժողովուրդների կյանքում այնքան ողբերգական դեր էր կատարելու, և որի դաժանության պատճառով մոռացության էին տրվելու Աբդուլ Համիդի, և երիտթուրքերի գործած չարագործությունները:

Սկսվեց Մ. Քեմալի պաշտոնավարման արագ վերելքը: 1919 թ. մայիսի 4-ին քիչ առաջ Բեռլինից վերադարձած Մուստաֆա Քեմալը «բարեկամների միջնորդությամբ ու երաշխավորությամբ» ստացավ թուրքական **իններորդ բանակի** տեսուչի պաշտոնը, մի բանակի, որը տեղակայված էր Արևելյան Անատոլիայում և Աևծովյան առափնյա շրջաններում:

Նշանակման վայրը մեկնելուց առաջ, մայիսի 13-ին նրան ընդունելության «արժանացրեց» մեծ վեզիր **Դամադ Ֆերիդ փաշան**: Թուրքական արքունիքի երկրորդ մարդը նորանշակ գեներալին հայտնեց, որ IX բանակի տեղակայված շրջաններում արտակարգ ուժեղացել են անկազմակերպ, պարտիզանական խմբավորումները, որոնց հպատակեցումը եթե չստացվի, ապա ոչնչացումը պետք է լինի Մ. Քեմալի թիվ մեկ խնդիրը¹: Նա միաժամանակ սուլթանին հայտնեց, թե զոհ է նորանշանակ գեներալի հետ ունեցած ճեպագրույցից:

1919 թ. մայիսի 15-ին Մ. Քեմալին անսպասելիորեն ելլողը Քեռշք գրույցի հրավիրեց սուլթան Մեհմեդ VI-ը, ինչը լուրջ իրադարձություն համարեց գեներալն իր ամբողջ կյանքում: Նրանք քայլելով գրուցում էին լայնարձակ պալատի ընդունարանի դահլիճում: Այդ պահին սուլթանը Քեմալի թևից բռնելով մոտեցրեց դեպի ծովը նայող պալատի լուսամուտին և ցույց տվեց, թե անգլիական զինվորական եսկադրան ինչպես է անարգել լողում «թուրքիայի ջրերում»: Նա Քեմալին ասաց. «**Դու ինքդ տեսնում ես, որ ես արդեն կորցնում եմ կողմնորոշումս, թե ինչ կարելի է անել, որպեսզի փրկենք պետությունն ու ազգը**»² (ընդգծումները մերն են - Հ. Դ.):»:

Համապատասխան հանձնարարականներ ստանալով վարչապետ մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշայից, Մուստաֆա Քեմալն ուղևորվեց Անատոլիա³, որտեղ պետք է «ոչնչացներ պարտիզանական խմբավորումները»: Մ. Քեմալը կատարեց ճիշտ հակառակը: Չանցած երկու շաբաթ, նա սուլթանին հայտնեց, որ ոչ թե պետք է ցրել այդ խմբերը, այլ ժամանակն է նրանցից «**կղզող բանակ**» կազմակերպել և պայքարել երկրի անվտանգության վերականգնման նշանաբանով:

Մ. Քեմալի երկրորդ նամակը սուլթանին հասավ 1919 թվականի հունիսի 24-ին, որը լուրջ անհանգստություն առաջացրեց Ելլողը Քեռշքում: Սուլթանը ներքին գործերի մինիստր **Ալի-Քեմալ բեյին**, բոլոր վիլայեթների նահանգապետներին (վալիներին) կարգադրեց թույլ չտալ պարտիզանական շարժման ուժեղացումն իրենց կառավարած երկրահատվածներում: Չբավարարվելով դրանով, Մեհմեդ VI-ը սուլթանական հրամանագրով պաշտոնապես պահանջեց, որ Մ. Քեմալն անմիջապես վերադառնա Ստամբուլ:

Ստանալով սուլթանի հրամանագիրը, 1919 թ. հուլիսի 8-ին Մ. Քեմալը պատասխանեց, որ ինքն իրեն **ազատված է համարում այդ պաշտոնից, սակայն մնում է Անատոլիայում այնքան ժամանակ, քանի դեռ չի վերականգնվել իր հայրենիքի անկախությունը**: Նա իր դժգոհությունն էր հայտնում Փարիզի խաղաղության կոնֆերանսի որոշումներից և այլևս չէր ենթարկվում սուլթանին: Այդ պատասխանով, փաստորեն, Մուստաֆա Քեմալը դարձավ «խռովարար գեներալ» և սկսեց իր պայքարը ոչ միայն Անտանտի բանակի, այլև սուլթանի ու դեռևս նրան զորավիգ կանգնած կառավարական զորքերի դեմ⁴:

1919 թ. հուլիսի 20-ին **Ամասիայում** հավաքվեցին Քեմալի համախոհները: Այնտեղ էին ժամանել Մ. Քեմալը, նախկինում ծովային մինիստր **Ռաուֆ բեյը** (Օրբա), թուրքական բանակի XX կորպուսի հրամանատար **Ալի-Ֆուատ փաշան** (Ջեբետյո), գնդապետ **Քյազիմ բեյը** (Դիրիկ) և սրանց մտերիմներն ու համախոհները⁵:

¹ *Мустафа Кемаль*, Воспоминания президента Турецкой республики, Москва, 1927, стр. 41.

² *Мустафа Кемаль*, Путь новой Турции (1919-1920), том III, Москва, 1934, стр. 21.

³ *А. М. Шамсутдинов*, Национально-освободительная борьба в Турции 1918-1923 гг., Москва, 1966, стр. 175.

⁴ *Мустафа Кемаль*, նշված աշխատությունը, հատ. II, էջ 30-31:

⁵ *A. F. Cebesoy*, Milli Mücadele Hâtıraları, s. 72.

Ամասիայի համաժողովում քննարկվեց կապիտուլյացիայից հետո Թուրքիայում տիրող իրավիճակը: Կարծիքներ փոխանակվեցին նման ճգնաժամից դուրս գալու ուղիների վերաբերյալ: Որոշվեց նախ համալրել ընդդիմադիրների շարքերը, ապա նոր կազմով հավաքվել Սվազում, որտեղ և մտածել ապագա գործելակերպի, կողմնորոշման, օտար ո՞ր երկրից օգնություն խնդրելու մասին: Հուլիսի 21-ին, այսինքն՝ մեկ օր ուշացումով, Ամասիա ժամանեցին բանակի III կորպուսի հրամանատար **Րեֆետ բեյը** (Բեյե), XV կորպուսի հրամանատար **Քյազիմ Կարաբեքիրը** (հայ ժողովրդի ամենամեծ դահճապետը), XVII կորպուսի հրամանատար **Ջեմալ փաշան** (Մերսինլին): Սրանք Ամասիա հասան այն պահին, երբ հավաքն արդեն ավարտված էր, սակայն ոտքի վրա ոչ միայն համաձայնեցին կայացած որոշումների հետ, այլև իրենց ստորագրությունները դրեցին արդեն կազմված փաստաթղթերի տակ:

1919 թ. հուլիսի 21-ին Մ. Քեմալն ընտրվեց **Արևելյան վիլայեթների ընկերության նախագահ, որը պետք է պաշտպաներ այդ հատվածի հասարակայնության իրավունքները**¹:

Ստանալով առաջին հավաքի մասնակիցների վստահության քվեն, Մուստաֆա Քեմալը 1919 թ. հուլիսի 22-ին գաղտնի շրջաբերականով դիմեց թուրքական բանակի բոլոր զորամասերի հրամանատարներին, քաղաքական և կրոնական բարձրաստիճան գործիչներին՝ առաջարկելով հավաքվել **Սեբաստիայում** և համընդհանուր պայքարի համար տակտիկական ուղիներ կանխորոշել²: Քեմալի սեպարատիստական գործողությունները լուրջ անհանգստություն պատճառեցին Երլըզ Քեռեքում թառած սուլթանին ու նրա շրջապատին: Մեհմեդ Վեհանտդինը հարկադրված էր կրկնել իր հրամանագիրը՝ Մ. Քեմալից պահանջելով շտապ վերադառնալ մայրաքաղաք, իսկ հավաքի մասնակիցներից՝ շտապ հեռանալ իրենց աշխատավայրերը: Ստանալով կողմնակիցների համաձայնությունն ու պաշտպանությունը, 1919 թ. հուլիսի 24-ին Մ. Քեմալն այս անգամ ավելի կոշտ պատասխանեց սուլթանին, որտեղ ուղղակի ասում էր, թե այլևս չի հպատակվում նրա ու Բարձրագույն Դաճան հրամաններին: Նա միաժամանակ շտապ փոխեց հաջորդ, միջանկյալ համաժողովի ծրագիրը և հավաքի վայրը:

1919 թ. հուլիսի 29-ից օգոստոսի 7-ը **Էզրումում** կայացավ Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության ընկերության կոնգրեսը, որին արդեն մասնակցում էին **54 պատգամավոր**³ Բիթլիսից, Կարինից, Սվազից, Տրապիզոնից: Միաձայն նախագահ ընտրվեց Մուստաֆա Քեմալը³:

Կոնգրեսն ընդունեց մանիֆեստ, որի մեջ ասված էր, որ թուրք ժողովուրդը թույլ չի տա Արևելյան Անատոլիայի անդամահատումն ու ստրկացումը: Այն ընտրեց ներկայացուցչական կոմիտե՝ վեց մարդուց բաղկացած, Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ: Այդ կոմիտեն, ըստ էության, դրեց նոր իշխանության հիմքն Անատոլիայում, սակայն իր առաջին կազմով ոչ մի անգամ չհավաքվեց, քանի որ Մուստաֆա Քեմալը չէր վստահում այդ կոմիտեի քուրդ ներկայացուցիչներին: Եվ, այնուամենայնիվ, Էզրումի կոնգրեսը հող նախապատրաստեց Սվազի կոնգրեսում ապստամբական շարժումը ղեկավարող կենտրոնի կազմակերպման համար:

1919 թվականի սեպտեմբերի 4-12-ը Սվազում կայացավ Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության ընկերությունների համաթուրքական հիմնադիր կոնգրեսը: Կոնգրեսին մասնակցեցին 33 պատգամավորներ

¹ *А. М. Шамсутдинов*, նշված աշխատությունը, էջ 72.

² *Ալի Ֆուատ Ջեքսոյ*, Մոսկվա Հաթրալարի (Մոսկվայի հուշեր), էջ 25:

³ *Мустафа Кемаль*, *Путь новой Турции*, том II, Москва, 1934, стр. 75-80.

Էզրումից, Սամսունից, Չորումից, Յոզղաթից, Էսկիշեհիրից, Աֆիոն-Կարահիսարից, Դենզլիից, Բուրսայից, Կաստամունուից, Նիկոնից, Իսկյուտարից, Կեսարիայից: Մյուս վիլայեթներն իրենց պատգամավորները չէին ուղարկել կամ չէին կարողացել ուղարկել կոնգրեսի: Սվազի, ինչպես և Էզրումի կոնգրեսում ներկա էին գլխավորապես սոցիալապես ունևոր խավերի ներկայացուցիչներ՝ կալվածատերեր, առևտրականներ, մոլլաներ, սպաներ, պաշտոնյաներ, իրավաբաններ և թուրք մտավորականության ներկայացուցիչներ: Կոնգրեսի պատգամավորների թվում էին Մուստաֆա Քեմալ փաշան, Ռաուֆ բեյը, Բեքիր Սամի բեյը, Չյուսրև Սամի բեյը, Նեջիբ Ալի բեյը, Իսմայիլ Ֆազիլ փաշան և ուրիշներ:

Թեև Սվազի կոնգրեսին մասնակցում էին ավելի քիչ պատգամավորներ, քան Էզրումի կոնգրեսին, նրա որոշումներն ավելի կարևոր նշանակություն ունեցան ծրագրի հիմունքները մշակելու համար: Սվազի կոնգրեսը հաստատեց Էզրումի կոնգրեսի որոշումները, արտահայտվեց դրանք ամբողջ Թուրքիայի վրա տարածելու օգտին: Կոնգրեսն ընտրեց նոր ներկայացուցչական կոմիտե (16 հոգուց)՝ նույնպես Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ, որը փաստորեն իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ իշխանությունը երկրում, բացի Ստամբուլից և օտարերկրացիների կողմից օկուպացված տարածքներից:

Սվազի կոնգրեսի ժամանակ սուլթանական կառավարությունը փորձեց օգտագործել քրդերի դժգոհությունը Մալաթիայում և այն ուղղել նոր շարժման դեմ: Սակայն այդ փորձն անհաջողության մատնվեց:

Սվազի, ինչպես և Էզրումի կոնգրեսներն անցան երկիրը մասնատման սպառնալիքից փրկելու լուրճագի ներքո: Կոնգրեսը մշակեց անկախության պայքարի հիմնական սկզբունքները և հաստատեց ծավալուն ծրագիր: Այն որոշում ընդունեց, որի մեջ նշվում էր, որ Մուղղոսի զինադադարով որոշված սահմաններում գտնվող տարածքները կազմում են միասնական, անբաժանելի ամբողջություն, որի ոչ մի մասը և ոչ մի պատրվակով չի կարող օտարվել օսմանյան պետությունից: Սվազի կոնգրեսը հռչակեց նրա մասնակիցների վճռականությունը՝ պայքարելու ամեն մի ինտերվենցիայի և թուրքական տերիտորիայի որևէ մասի ամեն մի օկուպացիայի դեմ:

Սվազի կոնգրեսի որոշումներն ընդհանուր առմամբ չափավոր բնույթ ունեին: Դրանք իրենց առջև խնդիր չէին դնում անհապաղ ստեղծել հեղափոխական կառավարություն, որն ընդունակ կլիներ գլխավորելու ժողովրդի պայքարը Անտանտի տերությունների ու ներքին ռեակցիայի դեմ: Ավելին, կոնգրեսն արտահայտեց իր նվիրվածությունը սուլթանական գահին և Ստամբուլում մեծ տերությունների ներկայացուցիչներին դիմեց մի նամակով, որում աշխատում էր ապացուցել Անատոլիայի ազգային շարժման խաղաղասիրական բնույթը⁴: Կոնգրեսը բավարարվեց միայն պահանջելով, որ Դամադ Ֆերիդ փաշայի կառավարությունը հրաժարական տար և փոխարինվեր նոր կառավարությամբ:

1919 թվականի հոկտեմբերի 2-ին սուլթանը ստիպված եղավ Դամադ Ֆերիդ փաշայի կաբինետը փոխարինել Ալի Ռիզա փաշայի գլխավորած կառավարությամբ: Սուլթանի ու նրա շրջապատի մտահոգացմամբ, Ալի Ռիզա փաշան պետք է վերջ դներ ազգային շարժմանը, անցկացներ դեպուտատների պալատի ընտրություններ և հաշտության պայմանագիր ստորագրեր դաշնակիցների հետ⁵:

⁴ *Մ. Ա. Հասրաթյան, Ա. Ֆ. Օրեշկովա, Յու. Ա. Պետրոսյան*, Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986, էջ 231:

⁵ Նույն տեղում, էջ 231-232:

Անատոլիական շարժման ճնշման տակ սուլթանական կառավարությունը համաձայնեց հրավիրել օսմանյան պառլամենտ (մեջլիս): Ընդ որում, դաշնակից տերությունները հույս ունեին պառլամենտի օգնությամբ սաղմի մեջ խեղդել քեմալական շարժումը: 1920 թվականի հունվարի 12-ին Ստամբուլում բացվեց օսմանյան պառլամենտը: Հունվարի 28-ին այն ընդունեց «Ազգային ուխտը», որը հռչակեց թուրքիայի անկախության և ամբողջականության իրավունքը: Մուղրոսի գինադարի ստորագրման պահին, գոյություն ունեցած սահմաններում, թուրքիայի համաձայնությունը շահագրգռված մյուս պետությունների հետ ստորագրելու համաձայնագիր ներկայացրեց մասին՝ ի շահ համաշխարհային առևտրի զարգացման, ազգային փոքրամասնությունների իրավունքների ճանաչմանը երկրում, ինչպես նաև պահանջում էր վերացնել քաղաքական, իրավաբանական և ֆինանսական բնույթի բոլոր խոչընդոտներն ազգային ու տնտեսական զարգացման ճանապարհին և մի քանի այլ միջոցառումներ:

Մեջլիսի ընդունած այդ ակտից անհանգստացած՝ ներքին և արտաքին ռեակցիան որոշեց դիմել ռեպրեսիաների: Սուլթան Մեհմեդ VI-ի (Վեհաետդինի) համաձայնությամբ 1920 թվականի մարտի 16-ին անգլիական զորքերն ավի դուրս եկան Ստամբուլում, և քաղաքը պաշտոնապես հայտարարվեց օկուպացված: Ստամբուլում ու նրա շրջակայքում դաշնակիցներն ունեին հունական երկու գունդ, ֆրանսիական մեկ և անգլիական երեք դիվիզիա: Ամերիկյան և իտալական ջոկատների հետ միասին օկուպացիոն զորքերի թվաքանակը Ստամբուլում հասել էր 60 հազար մարդու¹:

Դաշնակիցները ռազմական դրություն մտցրին Ստամբուլում ու նրա շրջակայքում, ցրեցին դեպուտատների պալատը, ձերբակալեցին և Մալթա կղզի աքսորեցին շատ դեպուտատների ու աչքի ընկնող քաղաքական գործիչների, որոնք պաշտպանում էին ազատագրական շարժումը: Հակասուլթանական կազմակերպություններին պատկանելու համար մարդկանց դատապարտում էին մահապատժի: Կառավարական հիմնարկները, թերթերը, հանդեսները դրվում էին օկուպացիոն իշխանությունների խիստ վերահսկողության տակ, իսկ «կարգուկանոնն ու հանգստությունը» պահպանում էին դաշնակիցների ոստիկանությունը և թուրքական ժանդարմերիան: Սուլթանը ստորաքարշություն էր անում օկուպանտների առջև: Դաշնակիցների պահանջով սուլթանական կառավարությունը Ստամբուլում նորից գլխավորեց Դամադ Ֆերիդ փաշան: Այդ կառավարությունն ակտիվորեն հանդես եկավ անատոլիական շարժման դեմ: **Շեյխուլ-իսլամը (մուսուլմանական հոգևորականության ղեկավարը) անատոլիական շարժումը հայտարարեց խռովարարական, իսկ Մուստաֆա Քեմալ փաշային՝ հանցագործ: Որոշ ժամանակ անց զինվորական դատարանը Ստամբուլում Մուստաֆա Քեմալին հեռակա կարգով դատապարտեց մահվան:**

Այդ ամենը ժողովրդական գայրոյթի ալիք առաջացրեց: Ամբողջ երկրով մեկ միտինգներ և ցույցեր տեղի ունեցան՝ «Կորչեն օկուպանտները», «Մահ օկուպանտներին» լուզուզներով: Ներկայացուցչական կոմիտեն, իր վրա վերցնելով ժամանակավոր կառավարության ֆունկցիաները, դիմեց երկրի բնակչությանը և ամբողջ աշխարհի մուսուլմաններին, որոնցում կոչ էր անում օգնություն ցույց տալ «օտարների» դեմ թուրքերի մղած պայքարին: 1920 թվականի մարտին կոմիտեն որոշում ընդունեց Անկարայում նոր մեջլիս (պառլամենտ) հրավիրելու մասին, որը ստացավ **Թուրքիայի Ազգային մեծ ժողով (ԹԱՄԺ) անունը:**

1920 թվականի ապրիլի 23-ին Անկարայում գումարվեց մեջլիսը, որը բաղկացած էր մեկ պալատից և ընտրվում էր գաղտնի քվեարկությամբ: Առաջին գումարման

մեջլիսում (1920 թվականի ապրիլի 23 - 1923 թվականի ապրիլի 23) ընտրվել կամ ուղարկվել էին 233 դեպուտատ, և 105 դեպուտատ էլ Անկարա էին ժամանել Ստամբուլից՝ այնտեղի դեպուտատների պալատը ցրվելուց հետո: Դեպուտատների մեջ կային կալվածատերեր, վաճառականներ, առևտրականներ, կուլակներ, ինչպես նաև հոգևորականության, սպայության, պաշտոնեության և մտավորականության ներկայացուցիչներ: Ազգային փոքրամասնությունները ներկայացված էին գլխավորապես քուրդ, լազ և չերքեզ դեպուտատներով: Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ ընտրվեց Մուստաֆա Քեմալ փաշան (կողմ՝ 110, դեմ՝ 10 ձայն):

Ազգային մեծ ժողովն իրեն հռչակեց որպես միակ օրինական իշխանությունը Թուրքիայում: Սուլթանի ու նրա կառավարության բոլոր կարգադրությունները, որոնք հրատարակվել էին Ստամբուլի օկուպացումից հետո (1920 թվականի մարտի 16), հայտարարվեցին չեղյալ: ԹԱՄԺ-ում կենտրոնացվել էր և՛ օրենսդիր, և՛ գործադիր իշխանությունը: 1920 թվականի մայիսի 3-ին ԹԱՄԺ-ը Մուստաֆա Քեմալ փաշայի գլխավորությամբ ընտրեց 11 մարդուց բաղկացած կառավարություն, որը սկսեց մեջլիսի անունից իրականացնել գործադիր իշխանությունը:

Իր քաղաքական ու տնտեսական թուլության հետևանքով ազգային բուրժուազիան հանդես եկավ կալվածատերերի հետ սերտ դաշինք կնքած: Այդ դաշինքը որոշեց Թուրքիայի նոր պետական իշխանության բուրժուա-կալվածատիրական տարրերը: Պաշտպանելով իրենց դասակարգային շահերը, բուրժուազիան և կալվածատերերը թույլ չտվեցին, որ աշխատավոր զանգվածները մասնակցեն պետության կառավարմանը: Մինչդեռ բանվորների և գյուղացիների ներկայացուցիչների բացակայությունը Թուրքիայի գերագույն մարմնում սկզբունքորեն ազդեց ինչպես նոր կառավարության քաղաքականության վրա, որն անհետևողականություն և տատանումներ ցուցաբերեց Անտանտի տերությունների և սուլթանական շրջանների հետ ունեցած հարաբերություններում, այնպես էլ նոր իշխանության կառուցման սկզբունքների վրա, որոնք դուրս էին եկել բուրժուա-կալվածատիրական պահանջների շրջանակներից, թեպետև էական նշանակություն ունեին Թուրքիայի առաջընթացի համար:

Հակապետական շարժման զարգացումն Անատոլիայում ուժեղացրեց սուլթանի և Անտանտի տերությունների անհանգստությունը: Այդ շարժումը ճնշելու նպատակով սուլթանական իշխանություններն Անատոլիա ուղարկեցին «խալիֆայական բանակը»: Բացի դրանից, զանազան վայրերում նրանք մի քանի ապստամբություններ հրահրեցին ԹԱՄԺ-ի կառավարության դեմ: Սակայն «խալիֆայական բանակը» ջախջախվեց Անատոլիայի պարտիզանական ջոկատների կողմից, ապստամբությունները նույնպես ճնշվեցին: Այդ ժամանակ Անտանտի տերությունները, որոնք երկյուղ էին կրում Թուրքիայում ունեցած իրենց շահերի համար, որոշեցին Անկարայի կառավարության դեմ պայքարելու նպատակամղել Հունաստանը, որին խոստացել էին տարածքային զգալի ձեռքբերումներ¹:

Ամփոփենք. 1918 թ. վերջին, առավել ևս 1920 թ. առաջին երեք ամիսներին օսմանյան նախկին կայսրության հողի վրա ձևավորվեցին **երկու իշխանություններ**՝ յուրաքանչյուրն իր մայրաքաղաքով, իր սահմանադրությամբ, իր կառավարությամբ, իր բանակով և իր օրենսդրությամբ:

Իբրև մայրաքաղաք Ստամբուլը մնաց Մեհմեդ VI Վեհաետդին սուլթանին և մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշային, որոնք Անտանտի աչքում դիտվում էին իբրև **օրինական** իշխանության ներկայացուցիչներ և Թուրքիա – Եվրոպա բոլոր որոշումները

¹ *Мустафа Кемаль, Путь новой Турции, том III (1920-1921), Москва, 1934, стр. 1-5.*

¹ Այս և նախորդ էջերը վերցրել ենք «Թուրքիայի պատմության ուրվագծեր» աշխատության 229-232-րդ էջերից:

ստորագրվում էին սրանց մասնակցությամբ: Սուլթանի արտգործնախարարը ստորագրեց Սուլթոսի զինադադարը, Փարիզի խաղաղության կոնֆերանսի որոշումները, Սան Ռեմոյի և հատկապես **Սևրի բախտորոշ** պայմանագրերը: Քեմալը հետևողականորեն մերժեց ճանաչել բոլոր այդ պայմանագրերն իբրև իրավաբանական ակտեր:

Իհարկե, հանուր առաջավոր մարդկության ճնշման տակ թուրքական սուլթանը ընդունեց երիտթուրքերի կատարած չարիքը՝ **հայ ժողովրդի նկատմամբ իրականացրած Ցեղասպանության քաղաքականությունը**: Սուլթանի բարձրագույն հրամանով կազմակերպվեց երիտթուրք-մարդասպանների դատավարությունը: Գերագույն պատիժ սահմանվեց գլխավոր մեղավորներին: Ճանաչվեց հայերի ունեցվածքը («լքյալ գույք»), որոշվեց դրանք վերադարձնել նախկին տերերին:

Ստամբուլը, Բ. Դուռը, Երլըզ Զյոշը, հանուր **հին թուրքիան** ստորագրեցին միջազգային այն վավերագրերը, որոնք ընդունում էին **Հայաստան նորաստեղծ տերության գոյության փաստը 170 հազ. քառ. կմ տարածքի վրա**: Այդ տարածքից իննսուն հազար քառ. կմ մինչ այդ թուրքահպատակ էր: Իսկական թուրքիան նոր Հայաստանին ծովային ճանապարհ էր (Տրապիզոնի վրայով) տալիս՝ դեպի Եվրոպա ելք ունենալու նպատակով և այլն, և այլն, որոնք, դժբախտաբար, չիրականացվեցին, որովհետև պատմության բեմահարթակ իջավ **«երկրորդ» թուրքիան՝ Սուստաֆա Քեմալի գլխավորությամբ**:

1920 թվականի ապրիլի 24-ին նոր մայրաքաղաքում (**Անկարայում**) հրավիրվեց թուրքիայի Ազգային մեծ ժողովի՝ մեջլիսի նիստը, որտեղ ձևավորվեց երկրորդ թուրքիայի կառավարությունը: Դեռևս ապրիլի 20-ի ժամը 10-ին Անկարայում հայտարարվել էր ԹԱՄԺ-ի (Թուրքիայի Ազգային մեծ ժողովի) անդամների **«Ազգային երդման»** արարողությունը: Երդումից հետո ընտրվեց նախագահություն: Երկրի նախագահ ընտրվեց **Սուստաֆա Քեմալը**, իսկ Ազգային ժողովի նախագահ հաստատվեց **Ջալալլետդին Արիֆ բեյը**: Համապատասխանաբար փոխնախագահներ ընտրվեցին երկրում հայտնի աստվածաբաններ **Արդուլախրիմ Չելեբի էֆենդին և Ջեմալլետդին Չելեբի էֆենդին**¹:

1920 թվականի ապրիլի 20-ին դեպուտատներից (մեջլիսի անդամներից) առանձնացվեց ութ հոգանոց **ժամանակավոր խորհուրդ**, որն իր հերթին մայիսի 3-ին մեջլիսի հաստատմանը ներկայացրեց կառավարության վերջնական կազմը: Մայիսի 5-ին ձևավորվեց կառավարությունը հետևյալ կազմով. մինիստրների խորհրդի նախագահ ընտրվեց **Սուստաֆա Քեմալը**, արտաքին գործերի նախարար՝ **Բեքիր Սամի բեյը**, ներքին գործերի նախարար՝ **Ջիմի բեյը**, արդարադատության (юстиции) նախարար՝ **Ջելալլետդին Արիֆ բեյը**, ազգային պաշտպանության նախարար՝ **Սուստաֆա Դեզի փաշան**, հասարակական աշխատանքի նախարար՝ **Իզմաիլ-Ֆազալ փաշան**, ֆինանսների նախարար՝ **Խակի Բեխաշ բեյը**, էկոնոմիկայի նախարար՝ **Յուսուֆ Քեմալ բեյը**, առողջապահության նախարար՝ բժիշկ **Ադնան բեյը**, լուսավորության նախարար՝ **Ռիզա Նուրի բեյը** և գլխավոր շտաբի պետ հաստատվեց գնդապետ **Իսմետ բեյը**²:

Պետության ղեկավար կազմի անվանակարգից, նախարարների զբաղեցրած բնագավառներից եթե դատելու լինենք, ապա աներկբա կարելի էր եզրակացնել, որ

¹ Архив внешней политики Российской империи (АВПРИ), Турецкий стол (новый), фонд 24, дело 30, лл. 11-12.

² *Мустафа Кемаль*, Путь новой Турции, том III, Интервенция союзников, греко-турецкая война и консолидация национального фронта 1920-1921 гг., Москва, 1934, стр. 5-25.

երեկվա բռնապետական թուրքիայում ձևավորվել էր հանրապետական վարչակարգ, դեմոկրատական այնպիսի մի տերություն, որին նույնիսկ ժերուկ Եվրոպան կարող էր նախանձել: Իրականում այդ ամենը կեղծ էր, վարպետորեն սարքված, որպեսզի ժողովրդին ձգեն դեպի իրենց և հենվելով անգրագետ, քաղաքականությունից ոչինչ չհասկացող, խոստումներով կերակրվող **թուրք նացիոնալիստների բիրտ ուժի վրա**, փրկեն օսմանյան կայսրության տարածքային ամբողջատիրությունը:

Ծնվել էր մի նոր գաղափարաբանություն - **քեմալիզմ**, որն իր դաժանությամբ, մարդատյացությամբ, այլազգի հպատակ ժողովուրդների բացարձակ ոչնչացման հնարներով գերազանցում էր **Չինգիզ խանին ու Լենկթեմուրին, Արդուլ Համիդին և երիտասարդ թուրքերին**: Պանթյուրքիզմն ու պանիսլամիզմը քեմալիզմի համեմատությամբ մնում էին մանկական, անվարժ խաղեր: «Ուսմունքի» դաժանությունն առավել արտահայտչական էր ազգային խնդիրները լուծելիս:

Թուրքիայի ապագա արդարադատության նախարար **Մախմուդ էսադը Անկարայի մեջլիսի բեմից հայտարարեց, թե. «Մենք ապրում ենք այն թուրքիայում, որն ամենաազատ երկիրն է աշխարհում: Այն մարդիկ, որոնք չեն պատկանում թուրք ազգին, այսինքն՝ թուրք չեն, նրանք ունեն միայն մեկ իրավունք - այն է. իրավունք ունեն միայն լինել ծառաներ, լինել ստրուկներ: Եվ այդ ճշմարտությունը թող իմանա և՛ բարեկամը, և՛ թշնամին: Թող իմանան նույնիսկ լեռները** (ընդգծումները մերն են - Յ. Ղ.)»³:

Մ. Քեմալի թևավոր խոսքն էր. **այլևս օտտոմանյան ազգ չկա**. առաջիկայում թուրքիայում մնալու է **միայն մեկ ազգ - թուրք ազգը**: **«Թուրքիան միայն թուրքերինն է»**. ահա նրա գլխավոր լոզունգը, որն օրական հազար անգամ արտասանվում էր թուրքիզմի և քեմալիզմի ջատագովների շուրթերից⁴:

Անկարայի համաժողովի բեմից իրար հաջորդող բանախոսները կրկնում էին. **«Ազգայնականությունը մեր գործունեության միակ նպատակն է: Մենք պետք է ամեն գնով թուրքացնենք բոլորին, նրանց, ովքեր ապրում են մեր հասարակության մեջ»**⁵: Քեմալիստները, իշխանության գալով, իրաժարվեցին բազմազգ տերությունը պաշտպանելու գաղափարից և նախընտրեցին **միաէթնիկական** թուրքական պետության ստեղծումը, որը պետք է դառնար ոչ միայն օսմանյան թուրքերի, այլև թուրանական-իսլամական բոլոր ժողովուրդների համաձուլման հիմքն ու դրոշակակիրը: Չարգացնելով երիտթուրքերի կողմից հայ ժողովրդին ցեղասպանության ենթարկելու քաղաքականությունը, Քեմալը բացահայտ հայտարարեց, թե ոչնչացնելու է **հայերի և հույների** մնացած մասերին, ծուլելու է **քրդերին և եզդիներին**⁶:

Մենք այստեղ ներկայացրեցինք այն ճանապարհը, որով անցնելով՝ Սուստաֆա Քեմալը դարձավ կատարյալ պատուհաս օսմանյան կայսրության հպատակության տակ ապրող քրիստոնյա մյուս բոլոր ժողովուրդների, հատկապես վիրավոր ու ծանր հարվածներ ստացած **հայ և հույն ժողովուրդների գլխին**: Նրա մշակած քեմալիզմն իբրև գաղափարաբանություն՝ իր դաժանությամբ գերազանցելով Արդուլ Համիդին ու երիտասարդ թուրքերին, **դարձավ հիմնաքարը հիտլերյան ֆաշիզմի**,

³ *А. Касавб*, Жизнь взаимы (содружество НГ, 1999, 26 окт.). Տե՛ս նաև *Александр Сваранц*, Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Москва, 2009, стр. 72.

⁴ *Александр Сваранц*, նշված աշխատությունը, էջ 73:

⁵ *А. Колесников*, Народные дома в общественно-политической и культурной жизни Турецкой республики, Москва, 1986, стр. 65.

⁶ *Мустафа Кемаль*, Путь новой Турции, том IV, Москва, 1934, стр. 321-324.

մարդկությանը պատճառելով երկրորդ լայնամասշտաբ ցեղասպանությունը՝ հրեաների Չոլոքոստը:

Երզրումի և հատկապես **Սվազի** կոնգրեսների որոշումները հանձնարարական դարձան Քեմալի, նրա «աջ բազուկ» Քյազիմ Կարաբեքիրի համար՝ սանձազերծելու պատերազմ Արևելյան Հայաստանի դեմ: Քեմալն ու Կարաբեքիրը ի սկզբանե իրենց հարվածի սուր ծայրերն ուղղեցին Կարսի մարզի և նրա հարակից տարածքների բռնազավթման համար ծավալած պայքարի ուղղությամբ: 1920 թ. հունվարին նրանք որոշումներ կայացրեցին, որոնք «Ազգային ուխտ» հռչակված մարմնին հանձնարարում էին Բաթումի մարզի, Կարսի, Արդահանի և Հայաստանի ու Վրաստանի մի քանի այլ շրջանների ընդգրկումը թուրքական նոր պետականության կազմում: Անկարայի (Անգորա) կառավարությունը վճռեց վերստին խլել այն տարածքները, որոնք Թուրքիային էին անցել Վրաստանի և Հայաստանի Հանրապետությունների կառավարությունների հետ 1918 թ. Բաթումում կնքված պայմանագրերով:

Քյազիմ Կարաբեքիրի հուշերից երևում է, որ Հայաստանի Հանրապետության վրա նախահարձակման նախապատրաստություններն սկսվել էին դեռ 1919 թ. կեսերին¹:

Քեմալը փետրվարի 6-ի այս որոշման մասին գրեց Արևելյան ռազմաճակատի հրամանատար Կարաբեքիրին, որ գարնանն արդեն ավարտի իր զինյալ ուժերի համալրումն ու վերազինումը՝ Հայաստանի վրա հարձակվելու համար: Ապրիլի կեսերին Կարաբեքիրը հեռագրեց Անկարայի ղեկավար շրջաններին. «Մոտ օրերս ես պետք է հաղորդեմ այն մասին, որ Հայաստանը ջնջված է աշխարհի քարտեզից»²:

Սակայն Անկարայի կառավարությունը տվյալ պահին տակավին հույս ուներ գործարքի մեջ մտնել Անտանտի երկրների հետ և այդ պատճառով միառժամանակ հետաձգեց Հայաստանի վրա նախահարձակումը: Քեմալը Կարաբեքիրին հեռագրեց. «Քանի դեռ խաղաղության համաժողովում մեր նկատմամբ ընդունվելիք որոշումը վերջնականապես պարզված չէ, ներքին և արտաքին իրադրությունից ելնելով՝ ներկայումս ձեռնադրել չէ գրկվել դաշնակից տերությունների հետ համաձայնության գալու հնարավորությունից: Հայաստանի վրա հարձակումը առիթ կծառայի, որ դաշնակից տերություններն ու Ամերիկյան պատերազմ հայտարարեն»:

Անկարայի կառավարությունը չէր կարող Հայաստանի դեմ զինարշավն սկսել՝ դեռ չպարզաբանած նաև Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը: Այդ նպատակով, միառժամանակ Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար, Քեմալը 1919 թ. հոկտեմբերին Մոսկվա ուղարկեց 1918 թ. Անդրկովկաս ներխուժած երիտթուրքական զորքերի հրամանատար Խալիլ փաշային: Վերջինս, Չիչերինի և Կարախանի հետ զրուցելուց հետո, Հայաստանի վրա նախահարձակման համար Կարաբեքիրի զորքերի բուռն նախապատրաստությունների օրերին՝ 1920 թ. հունիսի 4-ին, Մոսկվայից գրում էր Քեմալին. «Մեզ ի գիտություն հայտնեցին, որ անհրաժեշտ է հրաժարվել Հայաստանի դեմ (զինական) գործողությունից»³:

3. Խորհրդա-թուրքական բանակցությունները Մոսկվայում: Մոսկվայի կոնֆերանսի առաջին շրջափուլը

Մուստաֆա Քեմալի զավթողական պլանների չար մտահղացումները ստացել էին «Ազգային պայքարի ծրագիր» կամ կարճ՝ «Ազգային ուխտ» հորջորջումը: Այդ փաստաթղթի առաջին տարբերակը մշակվել էր դեռևս **Սվազի** (Սեբաստիայի) կոնֆերանսում (1919 թ. սեպտեմբերի 4-12-ին):

1920 թ. հունվարի 28-ին մի կողմից քեմալականների, մյուս կողմից Անտանտի տերությունների բացահայտ ճնշման և սպառնալիքի ազդեցության տակ Ստամբուլի Ազգային ժողովը (մեջլիսը) հարկադրված էր հաստատել այդ վավերաթուղթը, նրան տալով «Ազգային ուխտ» վերնագիրը: Եթե համառոտագրված բնութագրենք, ապա «Ազգային ուխտը» արտացոլում էր Քեմալի և Կարաբեքիրի հայասպան ազգային քաղաքականության հիմնական սկզբունքները⁴:

Որպեսզի ընթերցողին, հատկապես **հայ և հույն** ընթերցողին լիարժեք պատկերացում տանք նման «փաստաթղթի» մինչև օրս հայ ժողովրդի ուսերին նստած լինելու անսահման ծանրության մասին, հրապարակենք այն ամբողջությամբ:

Չոդված 1.

Օսմանյան կայսրության այն տարածքների ճակատագիրը, որոնք բնակեցված են բացառապես արաբական մեծամասնությամբ, և որոնք 1918 թ. հոկտեմբերի 30-ին՝ զինադադարի կնքման պահին, գտնվում էին թշնամական բանակների օկուպացիայի տակ, պետք է որոշվի տեղացի բնակչության ազատ (արտահայտված) կամքի համաձայն: Ձիճադադարի գծի այս և այն կողմերի վրա գտնվող կայսրության մասերը, որոնք բնակեցված են օսմանյան-մուսուլմանական մեծամասնությամբ, որի հիմնական տարրերը միավորված են կրոնական ու կուլտուրական կապերով, և որոնք տոգորված են միևնույն իդեալներով, ոգեշնչված են իրենց էթնիկական իրավունքների և իրենց սոցիալական դրության նկատմամբ փոխադարձ հարգանքով, կազմում են մի ամբողջություն, որը չի հանդուրժում որևէ պատրվակի տակ ո՛չ փաստական, ո՛չ իրավական անջատում:

Չոդված 2.

Ինչ վերաբերում է երեք՝ **Կարսի, Արդահանի և Բաթումի սանջակներին, որոնք բնակչությունը ազատագրվելուց հետո հանդիսավոր քվեարկությամբ հաստատել է մայր-հայրենիքի գիրկը վերադառնալու իր կամքը, ապա սույն ուխտը ստորագրած (պառլամենտի) անդամները հնարավոր են համարում, անհրաժեշտության դեպքում, երկրորդ ազատ հանրաքվեի անցկացումը:**

Չոդված 3.

Արևմտյան Թրակիայի իրավական ստատուտը, որի սահմանումը գտել էին, որ կախված էր Թուրքիայի հետ հաշտություն կնքելուց, պետք է հիմնված լինի բնակչության ազատ արտահայտված կամքի վրա:

Չոդված 4.

4. Պոլսի՝ կայսրության մայրաքաղաքի և խալիֆայության ու օսմանյան կառավարության նստավայրի, ինչպես նաև Մարմարա ծովի անվտանգությունը պետք է պաշտպանված լինի ամեն տեսակ չարամիտ նկրտումներից:

Այս սկզբունքը հաստատելուց և կենսագործելուց հետո (սույն) ստորագրողները

¹ *Мустафа Кемаль, Путь новой Турции, том III, Москва, 1934, стр. 313.*

² *Քեմալ Կուտայ, Մշակած աշխատությունը, էջ 36:*

³ *Նույն տեղում, էջ 38:*

⁴ «Հայկական հարց. Հանրագիտարան», Երևան, 1996, էջ 17: *Ռ. Սահակյանի* «Ազգային ուխտ» բառ-հոդվածը:

պատրաստ են հարել մեկ կողմից՝ օսմանյան կառավարության և մյուս կողմից՝ շահագրգռված տերությունների միջև փոխադարձ համաձայնությամբ ընդունված այս կամ այն որոշմանը, որպեսզի ապահովվի նեղուցների բացումը համաշխարհային առևտրի և միջազգային հաղորդակցությունների համար:

Չորված 5.

Փոքրամասնությունների իրավունքները մեզ մոտ կվավերացվեն ճիշտ այն հիմունքներով, որպիսիներով դրանք մյուս երկրներում հօգուտ փոքրամասնությունների սահմանված են Անտանտի տերությունների, նրանց հակառակորդների և նրանց միացած մի քանի տերությունների միջև հատուկ սրա համար (ad hoc) կնքված կոնվենցիաներով:

Մյուս կողմից՝ մենք հաստատ համոզված ենք, որ դրացի երկրներում մուսուլմանական փոքրամասնությունները իրենց իրավունքների առումով կօգտվեն նույնպիսի երաշխիքներով:

Չորված 6.

Մեր ազգային և տնտեսական զարգացումը հնարավոր դարձնելու և երկիրն ավելի այժմեական, ճշտորոշ գործող վարչակարգով ապահովելու նպատակներով, (ստորև) ստորագրողները... անսահմանափակ անկախությամբ և գործողությունների լիակատար ազատությամբ օգտվելու հնարավորությունը դիտում են որպես մեր ազգային գոյության անհրաժեշտ (sine qua non) պայման: Ուստի մենք ընդդիմանում ենք ամեն տեսակ իրավական կամ ֆինանսական սահմանափակումներին, որոնք կարող են խանգարել մեր ազգային զարգացմանը:

Այս սկզբունքներին չպետք է հակասեն այն պարտավորությունների կարգավորման պայմանները, որոնք կարող են դրվել մեզ վրա¹:

Թուրքական «Ազգային ուխտ»-ի 1-2-րդ հոդվածների մի քանի դրույթներ խախտում էին 1918 թ. հոկտեմբերի 11-ի Կոմպիենի, 1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարի պայմանագրերը, **1918 թ. հունվարի 13-ի ՌՍՖՍՀ-ի կառավարության որոշումը Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չեղյալ հայտարարելու մասին: «Ազգային ուխտ»-ում Թուրքիայի սահմանները գծվում են ոչ թե 1914 թ. օգոստոսի 1-ի՝ Առաջին աշխարհամարտի սկսման օրվա դրությամբ, երբ Կարսի մարզը և Սուրմալուի գավառը չէին մտնում օսմանյան կայսրության կազմի մեջ, այլ այդ սահմանները գծվում են 1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարի կնքման օրվա դրությամբ**, երբ նշված տարածքներն օկուպացված էին օսմանյան կայսրության զորքերի կողմից: Իրավական առումով դրանք օսմանյան կայսրության տարածքներից դուրս էին հետևյալ հիմքերով՝ ա) Կարսի, Արդահանի, Բաթումի մարզերը թեև 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի պայմանագրով բուլղարիայից և Ռուսաստանը հարկադարանքի ուժով զիջել էր Թուրքիային, բայց 1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի, նոյեմբերի 11-ի Կոմպիենի զինադադարների, ինչպես նաև 1918 թ. նոյեմբերի 13-ի ՌՍՖՍՀ-ի կառավարության որոշմամբ չեղյալ էր հայտարարվել: Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածով հիշյալ տարածքների՝ Թուրքիային հանձնելու վերաբերյալ դրույթը ևս վերացվել էր: **Դրա գլխավոր պատճառներից մեկն էլ այն էր, որ Կարսը, Արդահանը և Բաթումը Ռուսաստանը Թուրքիային էր զիջել Գերմանիա-Թուրքիա-Ավստրիա-Յուգոսլավիա-Ռուզարիա բլոկի ռազմական ճնշման շնորհիվ**²:

¹ *МПНВ*, 4. III, 810-811. Փաստաթուղթը վերցված է *Տիգրան Սահակյան*, «Ցավալի պայմանագրերը» աշխատությունից, Երևան, 2007, էջ 206-208:

² Նույն տեղում, էջ 208:

Չայ և հույն ժողովուրդների սրտում ցայսօր նստած այդ ցավոտ վերքին մենք կանդրադառնանք սույն բաժնում, այն էլ առանձին գլխով: Սակայն այստեղ արձանագրենք նման կեղծարարության ու հատկապես ճշացող անօրինականությանը վերաբերող միայն մի երկու փաստերի: Դրանց մի մասը հանրահայտ են, սակայն որոշ վավերագրեր էլ նոր են, որոնց իմանալն այսօր շատ անհրաժեշտ է Չայաստանի Չանրապետության այն դիվանագետներին, որոնք թուրք խորամանկ «իրավաբանների» հետ վիճասեղանի մոտ են նստում և դեմ առ դեմ խոսելով, քննարկելով, վճռում են այդ բարդ խնդիրները: Ցավոք, թուրքերը տեղյակ լինելով՝ փաստորեն շատ վարպետորեն կեղծում են դրանք, մինչդեռ մերոնք, չտիրապետելով իրական նյութին, հաճախ տեղի են տալիս «հարևաններիին», հանում են որոշումներ, որոնք ցավացնում են հայ ժողովրդի սիրտը, տրորում են դարերով նրա մարմնի վրա առաջացած կոշտուկները:

Կնճռոտ այս խնդրին ժամանակին հիմնավոր պատասխան է տվել Չայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար **Գրիգոր Արտեմի Չարությունյանը (Չարությունով, 1900-1957):**

1946 թվականի փետրվարի 2-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատության թեկնածու առաջադրվելու առիթով Երևանի Լենինյան շրջանի աշխատավորության ժողովում արտասանած նախընտրական իր ճառում, անշուշտ, Գիտությունների ակադեմիայի կողմից ստուգված փաստական մակարդակով փաստառատ պատասխան է տվել Թուրքիայի վարչապետ **Սարաջօղլուին**: Թողնենք թող խոսի ՉԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գր. Չարությունյանը:

Նա ասում է. «Թուրքական կառավարության նախագահ Սարաջօղլուն 1946 թ. հունվարի 6-ին հանդես է եկել թուրքական մամուլի ներկայացուցիչների առաջ մի հայտարարությամբ, որով նա շոշափել է Թուրքիայի նկատմամբ Սովետական Միության տերիտորիալ պահանջների հարցը:

Իր այդ ելույթում Սարաջօղլուն ասել է, որ Ղարսի և Արդահանի օկուպները չեն զավթվել Թուրքիայի կողմից, այլ նրան են միացվել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածի հիման վրա 1918 թվին կատարված հանրաքվեի ժամանակ, այդ տերիտորիաներում ապրող բնակչության ազատ կամքով:

Սարաջօղլուի ելույթը լայնորեն մեկնաբանվում է թուրքական մամուլում և հաղորդվել է «Ռոյտեր», «Ֆրանս Պրես» և մի քանի այլ երկրների գործակալությունների միջոցով:

Սարաջօղլուի ճառի առթիվ անհրաժեշտ է ասել հետևյալը: Ինչպես հայտնի է, 1918 թվի մարտի 3-ին կնքված Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ Թուրքիան և Ռուսաստանը պետք է իրենց զորքերը դուրս բերեին Թուրքահայաստանի տերիտորիայից: Մասնավորապես ռուսական զորքերը պետք է ազատեին Ղարսի և Արդահանի օկուպները, այդ օկուպների բնակչությանը հնարավորություն տային հանրաքվեի միջոցով հաստատել նոր կարգ:

Սովետական Ռուսաստանը 1918 թվի հունվարի 11-ին իր N 37 դեկրետով պաշտպանեց Թուրքահայաստանի հայերի ազատ ինքնորոշման իրավունքը: Այդ իրավունքի իրագործումը ժողովրդական Կոմիսարների Սովետը հնարավոր էր համարում միայն հայ ժողովրդի ազատ ռեֆերենդումի համար բացարձակապես անհրաժեշտ մի շարք նախնական երաշխիքների պայմաններում, այսինքն՝

1. Չորքերը դուրս բերել «Թուրքահայաստանի» սահմաններից և անհապաղ կազմակերպել հայ ժողովրդական միլիցիա՝ «Թուրքահայաստանի» բնակիչների անձնական և գույքային անվտանգությունն ապահովելու նպատակով:

2. Հայ գաղթականների, ինչպես նաև զանազան երկրներում սփռված պանդուխտ հայերի անարգել վերադարձը «Թյուրքահայաստանի» սահմանները:

3. Պատերազմի ժամանակ թյուրքական իշխանությունների կողմից Թյուրքիայի խորքը բռնի կերպով քշված հայերի անարգել վերադարձը «Թյուրքահայաստանի» սահմանները:

Հետևելով այդ սկզբունքներին, Սովետական Ռուսաստանը Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն իր զորքերը ետ կանչեց Ղարսի և Արդահանի օկրուգներից: Սակայն թյուրքական կառավարությունը, օգտվելով ռուսական զորքերի մեկնումից և խախտելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածի պայմանները, օկուպացրեց Ղարսի և Արդահանի օկրուգները: Թյուրքերը հակառակ նշված սկզբունքներին, թալանեցին և կողոպտեցին հայ բնակչությանը՝ ռազմական օկուպացիայի ռեժիմ մտցնելով այդ օկրուգներում: Նրանք ոչ միայն խոչընդոտ հանդիսացան հայ գաղթականների վերադարձին, ոչ միայն պատերազմի ժամանակ Թյուրքիայի խորքը քշված բնակչությանը արգելեցին վերադառնալ իրենց հայրենի օջախները, այլև հալածանքների և ֆիզիկական ոչնչացման ենթարկեցին Ղարսի և Արդահանի օկրուգների սահմաններում մնացած հայերին: Թյուրքական զորքերը իրի ու սրի մատնեցին այն բոլորը, ինչ որ կապված էր հայի անվան հետ: Այդպիսով, թյուրքերը Ղարսի և Արդահանի օկրուգներում լիկվիդացնելով բնակչության հիմնական մասին՝ հայերին, անցկացրին, այսպես կոչված, «հանրաքվեն», որի հետևանքով այդպիսի պայմաններում հարցը չէր կարող չկամխորոշվել Թյուրքիայի օգտին:

Սարաջօղլուն իր ելույթում թվեր է բերում հանրաքվեին բնակչության ունեցած մասնակցության մասին: Նա հայտարարել է, որ հանրաքվեին մասնակցել է 87 հազար 530 մարդ, որոնցից 84 հազար 124 մարդ արտահայտվել են միացման օգտին, 1924 մարդ դեմ են քվեարկել և 1482 մարդ ձեռնպահ են մնացել քվեարկությունից: Եթե հանրաքվեի արդյունքների վերաբերյալ այդ թվերը համադրենք սովետական տվյալների հետ, ապա այդպես կոչված «հանրաքվեին» մասնակցել է ոչ թե 87.530 մարդ, ինչպես նշում է Սարաջօղլուն, այլ ընդամենը մոտ 11 հազար մարդ, որոնցից այդ օկրուգները Թյուրքիայի հետ միացման օգտին քվեարկել է 8 հազար 500 մարդ, իսկ դեմ՝ 2 հազար 300 մարդ: Թաքցնելով այդ հանրածանոթ փաստերը, թյուրքական պրեմիեր-մինիստր Սարաջօղլուն հայտարարել է, որ այժմ այնտեղ ոչ մի հայ չկա: Հայտնի է, որ 1917 թվին, չխոսելով նախապատերազմյան 1913-1914 թվերի մասին, Ղարսի և Արդահանի օկրուգներում ապրում էր մոտ 400 հազար մարդ, ըստ որում բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էին հայերը: Թյուրքական կառավարության կողմից հայերին կոտորելուց, արտաքսելուց և հայկական մարզերը, այդ թվում՝ Ղարսի և Արդահանի օկրուգները մաքրելուց հետո զարմանալի չէ, որ այժմ այդտեղ ոչ մի հայ չկա:

«Հանրաքվեի» նման անցկացումը ֆարս է հիշեցնում: Սովետական կառավարությունը, բնականաբար, անօրինական է ճանաչել այդ և իր 1918 թվի սեպտեմբերի 20-ի նոտայում թյուրքական կառավարությանը հայտնել է, որ ինքը չի կարող համաձայնվել Ղարսի և Արդահանի օկրուգների բնակչության, այսպես կոչված, «կամքի արտահայտման» արդյունքներին և իր մարզերում նոր կարգ հաստատելու վերաբերյալ այդ բնակչության իրավունքը համարում է չօգտագործված, իսկ հիշյալ օկրուգներում նոր կարգի հարցը թողնում է բաց:

Այսպիսով, 1918 թվին անցկացված հանրաքվեի վկայակոչումը թյուրքական կառավարության պրեմիերի կողմից, որի նպատակն է իրավաբանորեն Թյուրքիային ամրապնդել 1918 թվին բռնի ուժով զավթած Ղարս և Արդահան օկրուգները, անհիմն է, քանի որ հանրաքվեն կատարվել է մեկ կողմից, խախտելով Բրեստ-Լիտովսկի

պայմանագրի 4-րդ հոդվածով նախատեսված պարտադիր պայմանները: Այս մասին Սովետական կառավարությունը ժամանակին հայտարարել է 1918 թվի հոկտեմբերի 10-ի նոտայում, որտեղ նշվել է Թյուրքիայի կողմից այդ օկրուգների ապօրինի զավթումը և Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածով նախատեսված պայմանների լիակատար խախտումը:

Ինչպես երևում է ասվածից, պատմական իրադարձությունները խեղաթյուրելու միջոցով 1918 թվին Ղարսի և Արդահանի օկրուգների բռնի զավթումը անցկացված հանրաքվեով արդարացնելու փորձը, որպիսի հանրաքվեն իր ժամանակին չի ճանաչվել Սովետական կառավարության կողմից, մի փաստարկում է, որը չի կարող ուշադրության չառնվել: Թյուրքիայի կողմից բռնի կերպով զավթված այդ և մյուս հայկական մարզերը վերադարձնելու վերաբերյալ հայերի պահանջը արդարացի պահանջ է:

Հայ ժողովուրդը, - ասում է ընկ. Գր. Հարությունյանը, - որն այնպես ակտիվորեն մասնակցել է թյուրք կառավարության ագրեսիայի դեմ մղվող պատերազմներին, հայ ժողովուրդը, որն այնպես արիաբար մարտնչել է Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ, հավատացած է, որ **նրա արդարացի պահանջները այս անգամ արդեն կբավարարվեն**¹:

Դժբախտաբար, այդ անգամ էլ հայ ժողովրդի անքակտելի իրավունքները չհարգվեցին, անշուշտ, նորից աշխարհի «մեծերի»՝ Անգլիայի և ԱՄՆ-ի կառավարող շրջանների խՍՀՄ-ին բացահայտ պատերազմ հայտարարելու պատճառով:

Կարսի մարզի և Սուրմալուի գավառի բռնազավթման խնդիրը, այդ առիթով Սարաջօղլուի՝ ստախոսություններով համեմված հայտարարությունը բողոքի բուռն ու լայն ալիք առաջացրեց հայկական սփյուռքում, ինչպես նաև խՍՀՄ կենտրոնական մամուլում, հատկապես տեղեկացված գիտական հաստատություններում: Բերենք դրանցից միայն մեկը:

1946 թվականի հունվարի 15-ին «Новое время» երկշաբաթյա հանդեսում խՍՀՄ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտոր պրոֆ. **Վասիլի Խվոստովը** (հետագայում խՍՀՄ ԳԱ ակադեմիկոս) «Несколько справок» խորագրված նամակում (այն ուղղված էր պարբերականի խմբագրությանը), իբրև սովորական, բայց տեղեկացված ընթերցող, հիմնավորապես անդրադառնում է Կարսի և Արդահանի խնդրին, վարչապետ Սարաջօղլուի հիմնազուրկ հայտարարությանը:

Քանի որ խնդիրը լուրջ է և այսօր էլ գտնվում է գիտական ու քաղաքական շրջանների տեսադաշտում, ուստի պրոֆ. **Վ. Խվոստովի** նամակի հիմնական հատվածներից մեջքերումներ անենք (ընթերցողներից ներողություն ենք խնդրում քաղվածքների ընդարձակության համար): Քաղվածքները հրապարակում ենք բնագրով՝ ռուսերենով, որպեսզի նրանց հավաստիությունը երբևէ կասկածի տեղիք չտա:

Վ. Խվոստովը 1946 թվականի հունվարի 15-ին գրում է. «В начале января на конгрессе турецких журналистов с речью на тему, по праву ли владеет Турция областями Карса, Ардагана и некоторыми другими, выступил г-н Сараджоглу. Известно, что зарубежная армянская общественность берет под сомнение турецкие права на эти территории. Г-н Сараджоглу, разумеется, с этим не согласен, о чем он и сообщил конгрессу турецких журналистов.

Речь г-на Сараджоглу заинтересовала нас как любопытный феномен. Никог-

¹ «Սովետական Հայաստան», 1946, փետրվարի 3, կիրակի, N 29 (7566):

да еще в летописях международного права факт поголовного истребления местного населения не приводился в качестве аргумента, обосновывающего права виновника этого преступления на территорию истребленных.

Г-н Сараджоглу хочет, по-видимому, открыть новую страницу в области международного права, когда он пытается обосновать права Турции на районы Карса и Ардагана следующим доводом: "Там не проживает ни одного армянина". Позволительно спросить г-на Сараджоглу: почему же там нет ни одного армянина? Ведь в одной только Карсской области в 1916 году проживало около 100 тысяч армян. Куда же теперь девались эти армяне? Кто виноват в том, что их там больше нет?

С точки зрения этической-правовой концепции г-на Сараджоглу, достаточно вырезать какой-либо народ, чтобы приобрести право на его землю и вдобавок еще право возмущаться, когда уцелевшие представители этого народа за границей посмеют заявить, что, по их мнению, эти земли принадлежат им. Покойный кровавый султан Абдул-Гамид был скромнее. Он не возмущался, а смущался, когда ему напоминали об истреблении армян.

Помимо ссылки на резню, г-н Сараджоглу обосновывает права Турции на Карс и Ардаган еще и другим аргументом. Он напоминает, что в 1918 году здесь был проведен плебисцит, в котором 85 125 человек высказались за присоединение к Турции, 1924 человека - против этого и 1483 - воздержались. Но на территории, отторгнутой турками от России, даже если не считать возвращенного впоследствии Батума, проживало свыше полумиллиона людей¹!

Ясно, что в "плебисците" приняло участие лишь небольшое меньшинство населения отторгнутых областей. Остальные жители либо бежали от турок - кто вместе с уходившими оттуда русскими войсками, кто в горы - либо же не успели скрыться и были турками вырезаны.

Вообще организация плебисцита турками была незаконным актом, нарушившим в свое время даже навязанный Советскому Союзу грабительский Брест-Литовский мирный договор. В самом деле, абзац 2-й статьи 4-го упомянутого договора гласил:

"Округа Ардагана, Карса и Батума также незамедлительно очищаются от русских войск. Россия не будет вмешиваться в новую организацию государственно-правовых и международно-правовых отношений этих округов, а предоставит населению этих округов установить новый строй в согласии с соседними государствами, в особенности с Турцией".

Приведенная статья отнюдь не давала Турции права проводить плебисцит. По ее смыслу плебисцит должно было организовать само местное население и согласовать свое решение с Турцией, но также и с другими соседями: последнего сделано не было. Нарушение Брестского договора было зафиксировано в ноте народного комиссара иностранных дел РСФСР от 20 сентября 1918 года. Этой нотой советское правительство заявляло о незаконности плебисцита. В ней читаем:

¹ Считаю Карсскую область и отошедшие к Турции части Эриванской губернии и Батумской области.

"Статья 4-я Брест-Литовского договора представляла населению округов Карса, Ардагана и Батума, входивших ранее в состав Российской Республики, право "установить новый строй в согласии с соседними государствами, в особенности с Турцией".

Судьбы указанных округов, их международно-правовое положение должны были быть установлены волеизъявлением населения этих округов. Между тем, сейчас же после заключения договора, округа эти были заняты турецкими военными силами и к ним был применен режим военной оккупации, сопровождавшийся недопустимыми грабежами и насилиями над мирным населением. Одновременно с введением турецкой администрации был произведен принудительный набор мужского населения свыше 19 лет.

Население, свободным выражением воли которого должен был быть установлен новый строй, было заранее терроризировано и поставлено в условия, при которых право, предоставленное населению трех округов, превращалось в открытое издевательство над ним. Накануне голосования почетные граждане, влияние которых могло бы быть не в пользу Турции, высылались, арестовывались, а во многих случаях даже расстреливались. Голосование происходило явно под контролем турецких властей, намечавших при этом жертвы для своей мстительности и своих предстоявших репрессий. Результаты голосования при таких условиях не могли быть не предрешены.

Считая такое насилие над населением отторгнутых от России округов существенным нарушением статьи 4-й договора, Советское Правительство настоящим заявляет, что оно не может согласиться с результатами так называемого волеизъявления населения округов Карса, Ардагана и Батума, и считает право этого населения установить новый строй своих областей неиспользованным".

Эти и другие нарушения Брестского договора со стороны Турции заставили советское правительство в этой же ноте констатировать, что "действия Оттоманского правительства фактически отменили" Брест-Литовский договор.

Турция вынудила нас отдать ей все эти области в 1918 году, пользуясь тогдашней временной слабостью Советской России. Но в основе владения лежит захват этих областей турками. Ссылки на "плебисцит" ровно ничего не доказывают.

Заметим, что в прошлом суверенитет Турции в отношении ее армянских подданных не раз брался под сомнение ввиду известного всему миру трагического положения армян в Турции. В 1878 году, например, этот суверенитет был ограничен Берлинским конгрессом. Берлинский трактат установил международное покровительство над армянским народом в Турции со стороны держав - участниц Берлинского конгресса. В статье 61-й Берлинского трактата читаем:

"Высокая Порта обязуется осуществить без промедления улучшения и реформы, отвечающие местным потребностям в провинциях, населенных армянами, и обеспечить их безопасность от черкесов и курдов. О мерах, принятых ею с этой целью, она будет периодически сообщать державам, которые будут наблюдать за их проведением".

В 1895 году после очередной резни, учиненной турками, британское правительство предлагало на основе этой статьи Берлинского трактата международное вмешательство в защиту многострадального армянского народа.

В правомерности турецкого суверенитета в отношении армянских областей усомнились также участники Парижской мирной конференции 1919 года и, в частности, президент Вильсон. Ллойд-Джордж в заявлении от 5 января 1918 года также требовал признания за Турецкой Арменией “особых национальных условий” существования.

Как известно, творцы Севрского мирного договора 1920 года предусматривали уже не ограничение турецкого суверенитета в духе Берлинского трактата, а отделение от Турции областей, населенных армянами. Статья 89-я передавала определение границ между Турцией и Арменией на третейское решение президента Соединенных Штатов, предусматривая, однако, что границы эти пройдут в вилайетах Эрзерума, Трапезунда, Вана и Битлиса, и что Армения получит выход к морю.

Как видим, в “моральных” и “правовых” титулах Турции на армянские и “очищенные” от армян области сомневались не одни только представители армянского народа.

...Г-н Сараджоглу обвиняет двух тбилисских ученых, выступивших на страницах “Коммунисти” за возвращение Грузии грузинских областей, захваченных Турцией, в том, что они якобы не знают истории. Напрасно. Не они, а он сам не тверд в этой полезной науке”¹.

Москва, проф. В. Хвостов

Վարսի մարզում կեղծ հանրաքվեի անկցկացման փաստերի բացահայտմանն են անդրադարձել **Ի. Վ. Ստալինը, Վ. Մ. Մոլոտովը, Գ. Վ. Չիչերինը, Լ. Վ. Կարախանը, Ա. Վիշինսկին**, խորհրդային ժամանակի ցեղասպանագետ պատմաբանների մի հսկա պլեթադա, որոնց կարծիքները ներկայացնում ենք սույն մենագրության մեկ այլ բաժնում: Այստեղ բավարարվենք բերված զույգ կարծիքներով և շարունակենք հետևել խորհրդա-թուրքական հարաբերությունների զարգացման հետագա ընթացքին:

* * *

1920 թ. ապրիլի սկզբներին Մուստաֆա Քեմալը, իր հետ վերցնելով արդեն քեմալական հորջորջում ստացած շարժման ողջ ղեկավարությանը, Անկարան հռչակեց «նոր Թուրքիայի» մայրաքաղաք, այնտեղ հրավիրեց մեջլիսի առաջին նիստը: Երկու օր անց, այսինքն՝ **ապրիլի 24-ին**, հայտարարվեց Ազգային մեծ ժողովի բացումը, որտեղ և կազմվեց առաջին կառավարությունը՝ Քեմալի գլխավորությամբ, վերջինիս վերապահելով նաև ամբողջ բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնը:

Մուստաֆա Քեմալը, կազմելով առաջին կառավարությունը կամ հավաքելով այն թիմը, որը պետք է ղեկավարեր երկիրը մինչև Ազգային մեծ ժողովը, երկու հանգամանք էր հաշվարկել: Նախ՝ նա իր թիմակիցներ էր դարձրել ընդունակությամբ, հեղի-

¹ “Новое время”, Москва, 1946, 15 января, двухнедельный журнал.

անկությանը ու կարողություններով **իրենից ցածր կանգնած, համեմայնդեպս, իրեն զիջող** այն անձնավորություններին, որոնց կարելի էր հեշտությամբ ենթարկել իրեն, անվերապահորեն հպատակեցնել առաջնորդին:

Իսկ որտեղի՞ց միանգամից այդքան նվիրյալներ: Նա այդ մասին էլ էր մտածել: Նախագահը պաշտոնների էր հրավիրում իր շրջապատի մարդկանց, հիմնականում իր մտերիմ ընկերներին, զինվորական ուսումնարանի և զինվորական ակադեմիայի համակուրսեցիներին, երիտթուրքական շարժման ժամանակ ենվերին չսիրող և իրեն համակրող անձնավորություններին, որոնց բարեհաճ վերաբերմունքը դեռևս թարմ էր նրա հիշողության ծալքերում:

Առաջին իսկ ամիսներին Քեմալին շրջապատող խմբավորման կազմում ընդգրկվեցին **Իսմեթ Ինենյուն** (քիչ անց՝ վարչապետ), **Ռեջեֆ Փեջևի** (ժողովրդահանրապետական կուսակցության գլխավոր քարտուղար), **Շյուքրու Քայային** (ներքին գործերի նախարար), **Բեքիր Սամի բեյը** (արտաքին գործերի նախարար), **Ջելալ Քայարը** (հետագայում տնտեսության նախարար) և այլ անձնավորություններ: Սրանցից բացի, նրա մտերիմների ցանկում հաճախ հիշատակվում են **Քյազըմ Օզալփը, Շյուքրյու Քայան, Ալի Ֆեթհին, Ալի Ֆուատ Ջեբեսոյը, Քյազըմ Կարաբեքիրը, Յուսեյն Ռաուֆ Օրթայը**:

Այսպիսով, կազմվել էր մեջլիսի ղեկավարության կորիզը, գրեթե իրար մեջ էին բաժանել պաշտոնները, ուղքի էին կանգնեցրել զինվորական ավագանուն: Անհրաժեշտ էին գտնում իրողության վերածել Հայաստանի և Վրաստանի մի քանի շրջանների զավթումն ու մտցնելը թուրքական տերության կազմի մեջ: Նրանք մեռած Թուրքիային կենդանության շունչ էին հաղորդում, իհարկե, նոր զավթումների մեթոդով: Իմիջիայլոց, քեմալականների զավթողական պլանները ձևավորվել էին դեռևս 1919 թվականից, այսինքն՝ Սուդրոսի զինադադարի ստորագրումից անմիջապես հետո:

Քյազըմ Կարաբեքիրի հուշերից երևում է, որ Հայաստանի Հանրապետության վրա հարձակման նախապատրաստություններն սկսվել էին դեռ 1919 թ. կեսերին: Նա գրում է. «Մայիսի 3-ին ժամանեցի սիրելի Էրզրում: Ինձ միացավ 9-րդ զորաբանակի հրամանատար գնդապետ Ռյուշտի բեյը: Այդ օրը մենք նրա հետ երես առ երես զրուցեցինք: ...Նրան ասացի. «... Որպեսզի երկրում ամուր խաղաղություն ապահովենք, առաջին իսկ պատեհ առիթի, որպես պատանդ, պետք է գրավենք **Նույնիսկ ամբողջ Հայաստանը**: Ընդհանուր իրադրությունը դրա համար նպաստավոր է դարձել... **Ինչ էլ որ լինի, պետք է հայերի և հույների հետ հաշիվները մաքրենք**: Անտանտի հետ պատերազմող բուլշևիկյան Ռուսաստանն իր գործողություններն ուղղել է Կովկաս: **Մոտ ժամանակներս ո՛չ Կարսում, ո՛չ էլ Բաթումում անգլիական զորք չի մնա**: Իմ որոշումը հետևյալն է. առանց ժամանակ կորցնելու զգալի չափով վերակազմակերպել իրավունքների պաշտպանության ընկերությունը և փաստական որոշումները Էրզրումի համագումարում վերածել ազգային նկրտումների՝ միաժամանակ մեր զորքերին նախապատրաստելով երկարատև գործողությունների:

...Եթե որևէ կողմից մեր շրջանի վրա հարձակում գործվի, **ապա պատասխանատվությունը բարդել Հայաստանի վրա**»²:

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Սուրեն Բաղդասարյան**, Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ., Երևան, 2001, էջ 92-94:

² **Քյազըմ Կարաբեքիր**, Եզվ. աշխ., էջ 22, վերցված է **Երվանդ Սարգսյան**, Եզված աշխատության էջ 137-138:

1920 թ. սկզբին Մ. Քեմալի գլխավորած ներկայացուցչական կոմիտեի նիստում ընդունվեց հետևյալ որոշումը. «Արևելյան ճակատում պաշտոնական կամ կիսապաշտոնական զորաշարժ անցկացնել և սկսել զորքերի կենտրոնացումը՝ կովկասյան արգելապատնեշները թիկունքից լուծարքի ենթարկելու համար»¹: Քեմալը փետրվարի 6-ի այս որոշման մասին գրեց Արևելյան ռազմաճակատի հրամանատար Կարաբեքիրին, որ գարնանն արդեն ավարտի իր զինյալ ուժերի համալրումն ու վերագինումը Հայաստանի վրա հարձակվելու համար: Ապրիլի կեսերին Կարաբեքիրը հեռագրեց Անկարայի ղեկավար շրջաններին. «Մոտ օրերս ես պետք է հաղորդեմ այն մասին, որ Հայաստանը ջնջված է աշխարհի քարտեզից»²:

Սակայն Անկարայի կառավարությունը տվյալ պահին տակավին հույս ուներ գործարքի մեջ մտնել Անտանտի երկրների հետ և այդ պատճառով միառժամանակ հետաձգեց Հայաստանի վրա հարձակումը: Քեմալը Կարաբեքիրին հեռագրեց. «Քանի դեռ խաղաղության համաժողովում մեր նկատմամբ ընդունվելիք որոշումը վերջնականապես պարզված չէ, ներքին և արտաքին իրադրությունից ելնելով՝ ներկայումս ձեռնադրել չէ զրկվել դաշնակից տերությունների հետ համաձայնության գալու հնարավորությունից: Հայաստանի վրա հարձակումը առիթ կծառայի, որ դաշնակից տերություններն ու Ամերիկան պատերազմ հայտարարեն»³:

Անկարայի կառավարությունը չէր կարող Հայաստանի դեմ զինարշավն սկսել՝ դեռ չպարզաբանած խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը: Այդ նպատակով, միաժամանակ Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար, Քեմալը 1919 թ. հոկտեմբերին Մոսկվա ուղարկեց 1918 թ. Անդրկովկաս ներխուժած երիտթուրքական զորքերի հրամանատար խալիլ փաշային: Վերջինս, Հիչերինի և Կարախանի հետ զրուցելուց հետո, Հայաստանի վրա նախահարձակվելու Կարաբեքիրի զորքերի բուռն նախապատրաստությունների օրերին՝ 1920 թ. հունիսի 4-ին, Մոսկվայից գրում էր Քեմալին. «Մեզ ի գիտություն հայտնեցին, որ անհրաժեշտ է հրաժարվել Հայաստանի դեմ (զինական) գործողությունից»:

Անդրկովկասի նկատմամբ թուրք ազգայնականների նվաճողական-ծավալապաշտ քաղաքականությունը երևում էր նաև Քեմալի կողմից 1920 թ. ապրիլի 26-ին խորհրդային կառավարությանը հղած նամակից⁴:

Փորձենք մի փոքր ավելի մանրամասնել, ոմանց կարծիքով՝ պատմական, բայց իրականում՝ չարաբաստիկ այդ նամակի բովանդակությունը, քանզի այն ծանր, շատ ծանր ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի զույգ հատվածների ճակատագրի վրա: Իմիջիայլոց, այսօր էլ վավերաթղթի շոշափուկները շարունակում են ամենուրեք զգացնել տալ, խաթարել բնականոն այն հունը, որով կկարողանա գնալ մեր ժողովուրդը: Ինչ որ է, շարունակենք մեր ասելիքը:

Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նորահաստատ նախագահ Մուստաֆա Քեմալի և Մեջլիսի բազմաթիվ այլ անդամների ստորագրությամբ ուղարկված վերոհիշյալ նամակը թվագրված էր՝ **1920 թ. ապրիլի 26, Անկարա:** Այն ուղարկվում էր խորհրդային Ռուսաստանի Քաղբյուրոյին, վերնագրելով՝ «**Թուրքիայի Ազգային մեծ ժո-**

¹ *Мустафа Кемаль*, Путь новой Турции, том III, Москва, 1934, стр. 313.

² *Քեմալ Կուտայ*, նշվ. աշխ., էջ 36:

³ *Տե՛ս Ալի Ֆուատ Տերետոյ*, նշվ. աշխ., էջ 482 (թուրքերեն):

⁴ *Երվանդ Սարգսյան*, նշվ. աշխ., էջ 138:

ղովի առաջին առաջարկությունը Ռուսաստանի խորհրդային կառավարությանը»¹: Եթե կոնկրետացնենք և ինչպես շատերն են արել՝ առանց նույնիսկ նամակի բնագիրը տեսնելու, մենք այդ փաստաթուղթը պետք է որ վերնագրենք՝ **Մուստաֆա Քեմալի առաջին նամակը՝ ուղղված Վ. Ի. Լենինին**:

Քեմալի նամակը Մոսկվա է ուղարկվել Բաքվի վրայով, իհարկե, ոչ միայն այդ ժամանակվա փոստային և հեռագրական անբավարար պայմանների պատճառով, այլ որպեսզի այդ օրերին խորհրդային դրոշ պարզած թուրք «փոքր եղբայրները» ավելի վաղ իմանային այդ մասին, քան Մոսկվան ու Քաղբյուրոն:

Նամակի մասին առաջինը հիշատակում է 11-րդ Կարմիր բանակի հետ Հյուսիսային Կովկասից Բաքու ժամանած կովկասյան բյուրոյի անդամ Սերգո Օրջոնիկիձեն: 1920 թ. մայիսի 24-ին Վ. Ի. Լենինին, Ի. Վ. Ստալինին և արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Լևոն Կարախանին ուղղած հեռագրում Օրջոնիկիձեն հաղորդում է, թե՛ «**Այսօր ստացվեց նամակ Քեմալ փաշայից, որտեղ նա խնդրում է օգնություն և առաջարկում է միություն** (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»²: Նամակը Վ. Ի. Լենինին և Քաղբյուրո է հասել 1920 թ. հունիսի 1-ին³:

Նամակի տակ գրված է՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պրեզիդենտ (այդ ժամանակ նա դեռ նախագահ չէր ընտրվել - Հ. Ղ.) **Մուստաֆա Քեմալ: Փաստաթուղթը ծավալով մեծ չէր: Այն բովանդակում էր երեք կետ: Դրանք էին. 1. «Մենք պարտավորվում ենք մեր բոլոր ջանքերն ու ռազմական գործողությունները միավորել ռուսական բոլշևիկների հետ՝ նպատակ ունենալով պայքարել իմպերիալիստական կառավարությունների դեմ և հասնել նրան, որ ճնշված բոլոր ժողովուրդներն ազատվեն նրանց տիրապետությունից»:**

Արևելքի և հատկապես իրենց սեփական գերիշխանության տակ դարերով տանջամահ եղած ժողովուրդների արյան մեջ թաթախված թուրք բորենիները երկերեսանի ծաղրածուի դիմակ հագած՝ Լենին ու բոլշևիկ էին խաղում Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի ու հատկապես Զմյուռնիայի բեմերի վրա: Թուրքական «բոլշևիզմն» իրեն բացահայտեց նամակից մի քանի ամիս անց:

2. «Եթե խորհրդային ուժերը նպատակ ունենան դիվանագիտական ճանապարհով, նույնիսկ հարկ համարեն ռազմական միջամտությամբ ստիպել Վրաստանին անգլիացիներին դուրս մղել Կովկասից, ապա Թուրքիայի կառավարությունն իր վրա պարտավորություն է վերցնում ռազմական արշավանք կազմակերպել «իմպերիալիստական Հայաստանի դեմ» և հասնել նրան, որ եղբայրական Ադրբեջանի Հանրապետությունը կամավոր դաշինքի մեջ մտնի խորհրդային պետությունների հետ»:

Սիրելի ընթերցող, Քեմալն Ադրբեջանին **եղբայրական** էր համարում, իսկ Հայաստանին ու Հունաստանին՝ **իմպերիալիստական**: Մնում էր ողբալ, թե ջարդված, բեկորացված, հայազրկված, սովի ու հիվանդությունների ճիրաններում տառապող, այդ պահին խղճուկ տեսք ստացած երկիրն ինչն՞վ էր դարձել իմպերիալիստական փուշ, որը խրվել էր և՛ Թուրքիայի, և՛ խորհրդային Ռուսաստանի աչքերի մեջ:

3. «Որպեսզի, նախ, կարողանանք դուրս մղել իմպերիալիստական այն ուժերին, որոնք զավթել են մեր երկրները, ճնշում են մեր ժողովուրդներին, ամրապնդելով մեր

¹ Архив внешней политики Российской империи (այսուհետև՝ *АВПРИ - ՌԿԱՐԱ*), фонд 04, опись 39, папка 262, дело 52987, лист 1.

² Государственный исторический архив Российской Федерации (այսուհետև՝ *ГИАРО - ՌՏԴՊԱ*), фонд 130, опись 4, дело 496, лл. 73а-74а.

³ *АВПРИ*, фонд 04, опись 39, папка 262, дело 52987, лл. 5-6.

ներքին ռեսուրսները շարունակենք ընդհանուր պայքարն ընդդեմ իմպերիալիզմի, **Խորհրդային Ռուսաստանից խնդրում ենք, առաջին օգնության կարգով, մեզ տալ հինգ միլիոն թուրքական լիրա ոսկու տեսքով**»:

Թուրքիան Ռուսաստանից խնդրում էր իրեն ուղարկել նաև գենք, ռազմամթերք, որոնց քանակը կորոշվեր բանակցությունների ընթացքում: Քեմալը պահանջում էր իրեն տալ սննդամթերք, ռազմական տեխնիկա, բժշկական սարքավորումներ՝ դրանցով ապահովելու թուրքական այն գործափաղորումները, որոնք խորհրդային տերության առաջին իսկ պահանջի դեպքում կարշավեին դեպի Արևելք:

Մ. Քեմալի նամակը հանգամանորեն քննարկելով Վ. Ի. Լենինի նախագահությանը անցկացված Քաղբյուրոյի ընդլայնված նիստում, որոշվեց պատասխան ուղարկել Անկարայի կառավարությանը: Պատասխանը կազմեց Գ. Չիչերինը և իր իսկ ստորագրությամբ Անկարայի կառավարությանն ուղարկեց 1920 թ. հունիսի 4-ին, այսինքն՝ երեք օր հետո միայն:

Պատմության մեջ Վ. Ի. Լենինի նամակ հորջորջում ստացած այս վերջին փաստաթուղթն ավելի բազմաբովանդակ էր, քան Քեմալի գրությունը: Նամակի սկզբում, Չիչերինը Վ. Ի. Լենինի բերանով, նախ, շնորհավորում էր Քեմալին՝ Անկարայում թուրքական նոր պետության ստեղծման առիթով, ապա շնորհակալություն հայտնում Ռուսաստանին, ավելի ճիշտ, խորհրդային իշխանությանն արած նրա օգնության առաջարկի համար¹:

Պատասխանն ամփոփող 8 կետերի բովանդակությունը հուշում է այն իրողությունը, որ Վ. Ի. Լենինն ու մոսկովյան բոլշևիկներն այդ նամակին շատ ավելի լուրջ էին վերաբերվել, քան կսպասեին թուրքերը: Անդրադառնալով պատասխանին.

1. Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, առանց երկմտելու, առաջինը, դիվանագիտորեն ճանաչում էր Անկարայի կառավարությունը՝ առաջարկելով դեսպանության կամ հյուպատոսության իրավասությամբ ներկայացուցչություն հաստատել Մոսկվայում: **Մուստաֆա Քեմալն այսպիսի վերջավորության ոչ միայն չէր սպասում, այլ, նույնիսկ, չէր էլ երազում**: Ամտանտի բանակների սմբակների տակ տրորված երեկվա ցեղասպան տերությունը, որի դամբանական էր երգում անգլիացի դիվանագետ **Ասկվիթը**, այսօր, դեռևս Սևրը չստորագրված, դառնում էր պետություն, ճանաչվում մի հզոր երկրի՝ Ռուսաստանի կողմից: Միայն այս կետը բավարար էր եզրակացնելու, թե Վ. Ի. Լենինն ու Մոսկվան «փրկում էին» Քեմալին, ինչին նա արժանի չէր: Սակայն Քաղբյուրոն ուներ նաև իր պահանջները: 2. Առաջարկում էր նոր պետության կազմում մտցնել միայն **անվիճելի** տարածքները, ընդգծում ենք **անվիճելի** բառը, քանզի ո՛չ Գ. Չիչերինը և ո՛չ էլ հայազգի Կարախանը համաձայն չէին լինի հայկական ու հունական հողերը մտցնել Թուրքիայի կազմի մեջ: 3. Առաջարկվում էր Արաբիան (ըստ երևույթին՝ Իրաքը) և Սիրիան հայտարարել անկախ պետություններ: 4. Ազգային մեծ ժողովում որոշում ընդունել, ըստ որի՝ **«թուրքական»** (սա իրենց տերմինն է - Յ. Ղ.) **Չայաստանին, Քյուրդիստանին, Բաթունի մարզին և Արևելյան Թրակիային հնարավորություն ընձեռել, որպեսզի միայն հանրաքվեի միջոցով նրանք վճռեն իրենց ճակատագիրը: Իհարկե, ինքնին հասկանալի է, որ այդ հանրաքվեին պետք է մասնակցեին նաև այն փախստականները, որոնք ժամանակին հարկադրաբար թողել էին սեփական բնակավայրերը**»: 5. Սև ծովի և նեղուցների հարցը քննել առանձին կոնֆերանսում: 6. Ոչնչացնել բոլոր տեսակի կապիտուլյացիաների ռեժիմը, ու չեղյալ հայտարարել արտասահմանյան կապիտալիստներին Թուրքիայի ունեցած պարտքերը: 7. Չեզո-

¹ АВПРИ, фонд 04, опись 39, папка 262, дело 52987, лл. 5-6.

քացնել արտասահմանյան բոլոր պետությունների ազդեցությունը Թուրքիայի վրա, ինչպիսին էլ դրանք լինեն²:

Պատմական նամակին տրվում էր պատմական պատասխան, այն է. Խորհրդային Ռուսաստանը դիվանագիտական գերագույն խողովակով **առաջինն էր ճանաչում Անկարայի** կառավարությունը: Ավելին. խորհրդային արտոգործողկոմը, անկասկած, Վ. Ի. Լենինի հետ համաձայնեցրած, Մուստաֆա Քեմալին հիշեցնում էր, որ նախագահը և Ազգային մեծ ժողովը պարտավոր են «Թուրքահայաստանին» սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունք վերապահել: **Չայամետ** ռուս խորհրդային դիվանագետը «հույս էր հայտնում, որ դիվանագիտական բանակցությունները թույլ կտան Թուրքիայի ու Չայաստանի միջև չգծված այնպիսի սահմանագծեր հաստատել, որպիսիք **պահանջում են արդարությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Խորհրդային կառավարությունը միշտ պատրաստ է շահագրգռված կողմերի հրավերով ստանձնել միջնորդի պարտականություններ** (ընդգծումները մերն են - Յ. Ղ.)»³:

Դժվար է ասել՝ վերոհիշյալ գրության տողամեջերում խոսում էր հայ ժողովրդի ցեղասպանության վիշտը կիսող Գ. Չիչերինը, թե նրա առաջին տեղակալ, ազգությանը հայ **Լևոն Կարախանը**: Դա միևնույն է, քանի որ նամակում դեռևս Թուրքիային 5 միլիոն ոսկե ռուբլի տրամադրելու և թուրքական ազդեցության Անդրկովկասում սանձահարելու բոլշևիկյան հետագա պլանների մասին խոսք չկար:

Մենք Լևոն Կարախանին հիշեցինք՝ հետևյալ փաստն ի նկատի ունենալով: 1920 թ. մայիս-հունիս ամիսներին Մոսկվայում տեղի էին ունենում Չայաստանի Չանրապետության պատվիրակության և խորհրդային դիվանագետների բանակցությունները՝ հատկապես Արևմտյան Չայաստանի խնդրի վերաբերյալ: Չայոց պատվիրակությունը գլխավորում էր մեծ գրող ու քաղաքական գործիչ **Լևոն Շանթը**: Ռուսաստանի կողմից քննարկմանը մասնակցում էր նույնպես հայ **Լևոն Կարախանը**⁴:

Չայաստանի Չանրապետության պատվիրակությունը չէր բավարարվում Վանի, Մուշի, Բիթլիսի վիլայեթներով, ինչպես այդ առաջարկում էր խորհրդային կառավարությունը, այլ պահանջում էր նաև Արևմտյան Չայաստանի մյուս վիլայեթները ևս:

Լևոն Շանթի պատվիրակության անդամ Չանբարձուն Տերտերյանն իր հուշերում գրում է Մոսկվայում խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովոմի տեղակալ Լևոն Կարախանի հետ ունեցած հանդիպման մասին: Կարախանը, Տերտերյանին ցույց տալով Չայաստանի Չանրապետության քարտեզը, ասել է. **«Դուք դաշնակցական եք, իսկ ես՝ կոմունիստ, բայց մենք երկուսս էլ հայ ենք, մեզ համար թանկ են հայ ժողովրդի շահերը, այժմ համաձայնեք ձեր հանրապետությանը միացնելու այդ երեք վիլայեթները, հետո կտեսնենք»**⁵: Չայաստանի պատվիրակությունը չընդունեց այդ առաջարկը, բանակցությունները ձախողվեցին:

Ինչպես տեսնում ենք, այդ օրերին հայոց ճակատագրով հետաքրքրվում էին հայ ժողովրդի բոլոր զավակները, իհարկե, յուրաքանչյուրը յուրովի և յուրաքանչյուրն իր կուսակցության շահերն ի նկատի ունենալով: Այնուամենայնիվ, Լ. Կարախանը, եթե

² АВПРИ, фонд 04, опись 39, папка 262, дело 52987, лл. 5-7. Տեսալը Չիչերինը գրել է ֆրանսերենով, որի ռուսերեն թարգմանությունը տպագրված է "Известия" թերթի, 1920 թ. հունիսի 9-ի համարում:

³ Նույն տեղում, թերթ 6:

⁴ **Երվանդ Սարգսյան**, Դավադիր գործարք..., էջ 142-143:

⁵ **Մ. Ավետյան**, Յուշամատեան, գոր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 193:

չկարողացավ ազդել Վ. Ի. Լենինի, ապա անպայման կազդեր իր ավագ գործընկերոջ՝ Գ. Չիչերինի վրա:

Խորհրդա-թուրքական մոսկովյան երկարատև բանակցությունները, ի վերջո եզերվելով Չայաստանին և հայ ժողովրդին մեծ վնաս պատճառելու, նույնիսկ վերջինիս զոհելու հաշվին, **ի սկզբանե ազնիվ չէին**: Մենք միայն նկատի չունենք այն հանրահայտ իրողությունը, թե դիվանագիտական նման հարաբերություններն ընդհանրապես անբարոյական են եղել, այլ նաև կոնկրետ Վ. Ի. Լենինի և Մ. Քեմալի կողմից փոխադարձ, իրար տված բացասական բնութագրումները: Դիմենք փաստերին:

1920 թ. հոկտեմբերի 28-ին Ռուսաստանի և Չայաստանի Չանրապետության պատվիրակությունների միջև կայացված համաձայնությունը, այնուհետև Չիչերինի 1920 թ. նոյեմբերի 11-ի ռադիոգիրը, ուր նա հաղորդում էր Մուստաֆա Քեմալին, Կարաբեքիրին, Ս. Վրացյանին, Լեգրանին, որ Խորհրդային Ռուսաստանը ստանձնում է միջնորդությունը Չայաստանի և Թուրքիայի միջև:

1920 թ. դեկտեմբերի 10-ին Չիչերինը նկատում է, որ «Անտանտի և քեմալականների միջև հաշտության փորձը գլուխ չի գալիս»: Միաժամանակ նա չէր ժխտում, որ «**քեմալականների աջ թևը ներկա պահին չի կարողանա քաղաքականությունը շեշտակի շուռ տալ մեր դեմ և կարող է լուրջ խարդավանքով և մեզ համար վնասակար դիվանագիտական գործողություններով խանգարել մեզ**»:

Նույն օրը Խորհրդային Չայաստանի արտգործոց Ալ. Բեկզադյանն Անկարայի արտաքին գործերի մինիստր Ահմեդ Մուխտարին հղած իր նոտայում մատնանշում էր, որ «թուրքական հրամանատարության օկուպացրած մարզերում ձեռնարկվում են այնպիսի գործողություններ, որոնք չէր կարելի այլ բանով բացատրել, քան նրանով, որ շարունակվում է հին՝ Չայաստանի նկատմամբ **անհաշտ թշնամական քաղաքականությունը**»¹:

Այդ օրերին անդրադառնալով քեմալական շարժման սոցիալ-քաղաքական ելույթին, նրա պարագլուխների դիվանագիտական զիզագներին, Արևմուտքի հետ մերձենալու նրանց հակումներին, Վ. Ի. Լենինն ուղղակի հայտարարում է, որ «**Թուրքիայում իշխանության գլուխ կանգնած են կադետները, օկտյաբրիստները, նացիոնալիստները, որոնք պատրաստ են մեզ ծախել Անտանտին**»²:

Ինչպես նախորդ էջերում շեշտեցինք, Քեմալի և քեմալականների որդեգրած գաղափարաբանությունը **թուրքիզմն էր**՝ «դասակարգային հենարանը», որը մինչև օրս էլ մնացել է ռազմատենչ, թուրքերից բացի, մյուս բոլոր ազգերի նկատմամբ ատելությանը լցված **թուրքական բանակն էր**:

Վերակենդանացման նշաններ ցույց տալու առաջին իսկ պահից Անկարայի կառավարության անթաքույց պլանները դարձան մուսուլմանական ընդարձակ, լայնարձակ կայսրության կարկատումը, համաթուրքական այնպիսի միավորման ձևավորումը, որի մասին նույնիսկ չէին երագել Չիչերինը և առաջին օսմանները:

Եիշտ են նկատել հնուտ թուրքագետներ Ե. Ղ. Սարգսյանն ու Ռ. Գ. Սահակյանը, որ քեմալական շարժումն իր խանձարուրի մեջ ունեցավ նաև մի այլ առանձնահատկություն, որը բնորոշ էր բոլոր երկրների նորաթուխ ազգային բուրժուազիային: Այն որոշ շրջափուլում հակաիմպերիալիստական էր, նույնիսկ ազգային-ազատագրա-

կանի «թիկնոց էր հագնում», իսկ մյուս կողմից՝ իրապես նվաճողական էր, հատկապես Արևելքում ընդունեց նվաճողական, իմպերիալիստական գաղթողական բնույթ՝ այս պարագայում ուղղված մնալով Թուրքիային հարևան Անդրկովկասի ու նրա ժողովուրդների, առավել ևս հայ ժողովրդի զույգ հատվածների դեմ³:

Մ. Քեմալի երկրեսայնությունն անթաքույց էր: Առաջին ամիսներին քեմալականներն իրենց հայտարարում էին այնպիսի հեղափոխականներ Արևելքում, ինչպիսին բուլշևիկներն էին Ռուսաստանում և Արևմուտքում: Նրանց զինվորները սկզբնական շրջանում չէին վարանում իրենց գլխարկների ճակատին ամրացնել հնգաթև աստղ՝ կարմիր գունավորմամբ: Անատոլիական 15-րդ կորպուսի հրամանատար գեներալ **Քյազիմ Կարաբեքիր փաշայի արտահագուստը Բեքիր Սամի բեյն իր հետ Մոսկվայից էր տարել Անկարա**:

Խաբեությունը, բարեբախտաբար, թե դժբախտաբար, երկար չտևեց: Ասում են՝ մախաթը պարկի մեջ երկար չես պահի: Դեռևս 1919 թ. սեպտեմբերի 22-ին Սեբաստիայի համաթուրքական համագումարում Մուստաֆա Քեմալը հայտարարեց. «**Ինչ վերաբերում է բուլշևիզմին, ապա նկատի ունենալով մեր կրոնը, մեր ավանդույթներն ու մեր սոցիալական կարգը, ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ ուսմունքը հաջողության որևէ հեռանկար չունի մեր երկրում: Թուրք ժողովուրդը պատրաստ է անհրաժեշտության դեպքում նույնիսկ պայքարելու դրա դեմ**»⁴: Սա դեռ սկիզբն էր, սակայն շարունակենք:

1920 թ. օգոստոսի 14-ին թուրքական պատվիրակությունը Մոսկվայում «բուլշևիկ էր խաղում», Լենինին հավատացնում Ռուսաստանի հանդեպ ունեցած իր նվիրվածության մասին: Նույն օրը Անկարայում արտասանած ճառում Մ. Քեմալը հայտարարում էր. «**Բոլորին հայտնի է, որ մեր տեսակետները և սկզբունքները բուլշևիկյան չեն, և առ այսօր մենք բացարձակապես ու երբևէ չենք մտածել, որևէ ջանք չենք գործադրել, որպեսզի մեր ժողովրդին հարկադրենք ընդունելու բուլշևիկյան սկզբունքները: Մենք համոզված ենք, որ մեր ազգի, կյանքի ու ապագայի երաշխիքները կապված են ազգային իդեալների և սկզբունքների հետ (ընդգծումները մերն են - Յ. Դ.)**»⁵:

Երվանդ Սարգսյանը գրում է, թե «թուրք պատմաբան Յահյա Օքչուն իր «Թուրք-ռուսական պայքարի պատմություն» գրքում ընդգծել է. «**Մեծագույն թուրքի, մեր Աթաթուրքի բառերով ասած, թուրք ժողովրդի մեծագույն թշնամին բուլշևիկն է, որին պետք է ոչնչացնել այնտեղ, որտեղ կհայտնվի**»⁶: Իսկ այս խոսքերը վերաբերում են այն ժամանակաշրջանին, երբ Խորհրդային Ռուսաստանը նշանակալից օգնություն էր ցույց տալիս Թուրքիային, հասկանալի է՝ զենքով ու ոսկով: Այդ ավելի քան կենսական օժանդակությունը քեմալականները հատուցելու էին Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ «բարեկամական» վերաբերմունքով, որի մասին իրանում Թուրքիայի ներկայացուցիչը հայտարարել էր, թե «**Բուլշևիկների հետ մեր բարեկամական հարաբերությունները սոսկ ձևական (երևութական) բնույթ են կրում**»:

Դժբախտաբար, ռուսական բուլշևիկները, չտեսնելով կամ չտեսնելու տալով, սատար էին կանգնում քեմալականներին: Ավելի ծանր ողբերգությունն այն էր, որ հայ

¹ «Չայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Երևան, 1972, էջ 60:

² *В. И. Ленин, Полное собр. соч.*, т. 42, стр. 125.

³ Տես *Ե. Դ. Սարգսյան, Ռ. Գ. Սահակյան*, Չայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 50:

⁴ *Երվանդ Սարգսյան*, Դավադիր գործարք..., էջ 152, տե՛ս նաև «Նոր Ստամբուլ», 10.XI.1965 (թուրքերեն):

⁵ *Мустафа Кемаль*, Путь новой Турции, том III, Москва, 1934, стр. 314.

⁶ *Օքչու Յահյա*, Թուրք-ռուսական պայքարի պատմությունը, Անկարա, 1949, էջ 239 (թուրքերեն):

բուլղարացիների մեծ մասը ևս հավատում էր քեմալականների նման կեղծիքին: Երկու խումբն էլ մինչև գլխի ընկան, արդեն ուշ էր, եղածը եղել էր, Հայաստանի զույգ հատվածները քեմալականներից այնպիսի հարվածներ էին ստացել, որ մինչև օրս էլ դեռ ուշքի գալ չեն կարողանում: Այդուհանդերձ, շարունակենք:

Նախքան Վ. Ի. Լենինին ուղղած՝ Քեմալի նամակի առաջումը, թուրքական դիվանագետների մի ամբողջ խումբ էր ժամանել Մոսկվա՝ հանձնարարություն ունենալով բարեկամության կամուրջ գցել թուրքիայի և Ռուսաստանի միջև, հատկապես նյութական և ռազմական օգնություն պոկել խորհրդային երկրից և բանակը վերագինելուց հետո՝ հարձակվել «իմպերիալիստական Հայաստանի (sic!)» վրա:

Ռուսաստանի կենտրոնական արխիվներում այդ մասին հետաքրքիր ու արժեքավոր նյութեր են պահպանվել: Հայտնի է դառնում, որ թուրքիայից Ադրբեջանի վրայով, նախքան նամակը, հերթականությամբ Մոսկվա էին ժամանել թուրքական բանագնացներ՝ **Խալիլ փաշան, Ֆուատ Սաֆուրը, Բեքիր Սամի բեյը** և ուրիշներ:

Թուրք դիվանագետները Մոսկվայում բանակցություններ են վարել Գ. Չիչերինի և Լ. Կարախանի հետ: Այլ փաստաթղթերն ասում են, որ նրանք աներևույթ կապված են եղել նաև Ի. Ստալինի, Լ. Տրոցկու, Ռադեկի, Կամենևի և որոշ դեպքերում էլ՝ Ս. Օրջոնիկիձեի ու Ն. Նարիմանովի հետ:

1920 թ. մայիսի 15-ին կայացած ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի նիստին մասնակցում էին Լենինը, Կամենևը, Ստալինը, Տոմսկին, Պրեոբրաժենսկին, Կալինինը: Քննարկվում էին **Խալիլ փաշայի** առաջարկները ռուս-թուրքական հարաբերությունների մասին: Որոշվում է **ընդունել Չիչերինի առաջարկները**, ապա Օրջոնիկիձեից հարցում անել Խալիլ փաշայի անձնավորության վերաբերյալ: Երրորդ կետով Չիչերինին արտոնվում էր նպատակահարմարության դեպքում կազմակերպել Խալիլ փաշայի և Վ. Ի. Լենինի հանդիպումը, ավելի կոնկրետ - **առանձնազրույցը**¹:

Լրացուցիչ այլ աղբյուրները վկայում են, որ Քաղբյուրոյում խոսվել է թուրքիային ոսկի և ռազմամթերք տրամադրելու մասին: Միաժամանակ հանձնարարվել է այդ մասին չբարձրաձայնել և նույնիսկ Կրեմլի պատերից դուրս չհանել²:

1920 թ. հունիսի 4-ին թուրքերին օգնություն ցույց տալու մասին ստեղծվել է երկու վավերագիր: Առաջինը Գ. Չիչերինի՝ Ս. Քեմալին ուղղված նամակն էր, որտեղ համաձայնեցնելով Վ. Ի. Լենինի հետ, նա ձևակերպել է խորհրդային արտաքին քաղաքականության հիմնական այն սկզբունքները, որոնք վերաբերում էին թուրքիային: Այս նամակով առաջին անգամ խոսք է գնացել Մոսկվայում թուրքական-քեմալական հյուպատոսություն հիմնելու մասին:

Երկրորդ նամակը Մոսկվայից Ս. Քեմալին է ուղարկել Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից Խալիլ փաշան: Նա զեկուցում էր Քեմալին. «Մենք զրուցեցինք Կարախանի, Չիչերինի և Կամենևի հետ: Թեման Դուք էիք և ձեր վիճակը: Քաղբյուրոն որոշել է օգնել թուրքական Ազգային շարժմանը, սակայն հրապարակայնորեն չհայտարարել այդ մասին: Ռազմական ժողովրդական կոմիսար Տրոցկին հրաման է ստացել անմիջապես զենք ու զինամթերք ուղարկել: Մեզ զգուշացրին նաև, որ, ելնելով տիրող իրադարձություններից, առայժմ ձեռնպահ մնանք Հայաստանի դեմ ռազմական գործողություն սկսելուց: **Մրանք անհամբերությամբ սպասում են Ազգային մեծ ժողովի պատվիրակության ժամանմանը Մոսկվա:** Չեր կառավարու-

¹ Российский государственный архив социально-политической истории (այսուհետև՝ **РГАСПИ**), фонд 1, опись 163, дело 65, лл. 39-40 (копия).
² **АВПРИ**, фонд 04, опись 39, папка 232, дело 52989, лл. 1-2.

թյունն այսուհետև կճանաչվի, և բուլղարացի պատվիրակությունը կուղարկվի Անկարա (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»³:

1920 թ. հուլիսի 2-ին Գ. Չիչերինը նամակ է գրել Ս. Քեմալին, որտեղ, նախ, կրկին անդրադարձել է խորհրդա-թուրքական հարաբերությունների առավել ջերմացմանը, որոնց մասին Անկարայում պիտի պատմեր Խալիլ փաշան: Նամակը պատիվ չէր բերում Չիչերինին, քանզի թուրքիան նա համարում էր **«իմպերիալիզմի գոհ»**, իսկ Փոքր Ասիայում կռված թուրքական բանակի ավերածությունները բնութագրում իբրև **«հերոսական սխրանքներ»**: Ամաչում ես կարողալ այդ մարդու գրած սույն տողերը, որտեղ թուրքերի կռիվները ցարական Ռուսաստանի և ռուսական բանակի դեմ համարվում են հերոսություն⁴:

1920 թ. հուլիսի 4-ին Տուապետից Բեքիր Սամի բեյը Գ. Չիչերինին նամակ է գրում, որտեղ Ռուսաստանին առաջարկ է անում միջնորդ հանդիսանալ թուրքիայի, Հայաստանի և Պարսկաստանի միջև սահմանային վեճերը լուծելու հարցում: Թուրք նացիոնալիստի այդ գրությունից պարզվում է. 1) Չիչերինը Քեմալին ևս մի նամակ է գրել հունիսի 2-ին: 2) Թուրքիան սահմանային վեճերն ուզում էր լուծել ըստ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի որոշումների: 3) Անկարան ուզեցել է հունիս ամսին հարձակվել Հայաստանի վրա, Մոսկվան դեմ է եղել դրան: Թուրքիան Ռուսաստանի պահանջով կանգնեցրել է ագրեսիան Հայաստանի նկատմամբ⁵:

1920 թ. հուլիսի 31-ին Բեքիր Սամի բեյը Չիչերինին է ուղարկել հերթական նամակը: Այնտեղից պարզվում է, որ արդեն Մոսկվայում գտնվող թուրքական միսիայի անդամներին ընդունել է Լ. Կարախանը, այն էլ հուլիսի 27-ին: Բեքիր Սամին՝ դժգոհելով հանդիպման արդյունքներից, Չիչերինին խնդրում է ճշգրտել երկրորդ հանդիպման օրը և ժամը, քանի որ վիճակը թուրքիայում գնալով դառնում է ճակատագրական: Նա խնդրում է «արագացնել քեմալականներին տված օգնության խոստումն իմպերիալիստների դեմ մղվող նրանց պայքարում»⁶:

Շատ հետաքրքրական է 1920 թ. օգոստոսի 2-ին 11-րդ բանակի 28-րդ հրաձգային դիվիզիայի ղեկավարության **գրությունը**՝ ուղղված Դրաստամատ Կանայանին՝ Դրոյին: Այնտեղ ասված է. «Ձեր զորքերը **ենգելյուրդի գրավման պահին հակշտակել են մեր միսիային պատկանող գույքը և այլ արժեքները, որոնք ուղարկվում էին Թուրքիա:** Այդպիսի գործողությունները հանդիսանում են ՌԱՖՍՅ-ի և Հայաստանի միջև եղած բարեկամական հարաբերությունների խաթարման սկիզբ»⁷: Պարզից էլ պարզ է, որ թուրքիան օգոստոսին արդեն զենք ու զինամթերք էր ստանում «եղբայրական» Ռուսաստանից, «իմպերիալիստական Հայաստանի» վրայով՝ նրա դեմ պատերազմի պատրաստվելու նպատակով:

1920 թ. օգոստոսի 10-ին թուրքական միսիայի ղեկավարը, այսինքն՝ Բեքիր Սամի բեյը դիմում է Գ. Չիչերինին՝ խնդրելով արագացնել բանակցությունների ավարտը և սկսել կոնկրետ գործողություններ⁸: Նա հայտնում է, որ Անկարայի կառավարությունը խիստ անհանգստացած է բանակցությունների ձգձգումից, քանի որ 1) հունական զորքերը, անգլիացիների պաշտպանությամբ և օգնությամբ, շարունակում են հարձակումները, 2) ֆրանսիական զորքերն արդեն տիրացել են **Կիլիկիայի** մեծ մասին, 3) Հայաստանի կառավարության գործողությունները մեր սահմանների

³ *Karabekir K. İstiklal Harbimiz. Türkiye Yayınevi. İstanbul, 1964, s. 799-800.*
⁴ **МИД СССР**, Документы внешней политики СССР, Москва, 1959, том III, стр. 11.
⁵ **АВПРИ**, фонд 04, опись 39, папка 232, дело 52987, л. 9.
⁶ **АВПРИ**, фонд 132, опись 3, папка 2, л. 1, копия.
⁷ «Բանքեր Հայաստանի արխիվների», 1980, N 2, էջ 26:
⁸ **АВПРИ**, фонд 132, опись 3, папка 2, дело 1, л. 4, копия.

վրա գնալով դառնում են անտանելի, 4) շուրջ մեկ ամիս է ինչ մեր միսիան Մոսկվա-յում է, սակայն բանակցությունների ավարտը չի երևում:

Թուրք դիվանագետի լացակումած խորհրդածությունները սխալ չէին և այդպես էլ կավարտվեին, եթե քեմալականներին օգնության փրկարար ձեռք չմեկնեի խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը՝ բուլշևիկների կուսակցությունը:

1920 թ. օգոստոսի 11-ին կայացավ ՌԿԴ(բ) ԿԴ-ի Քաղբյուրոյի արտահերթ նիստ, որին մասնակցում էին Լենինը, Տրոցկին, Կրեստինսկին, Տոմսկին, Պրեոբրաժենսկին, Ֆինին, Ուդալցովը և Չոֆը: Լավեց «**Չիչերինի զեկույցը Թուրքիայի և Հայաստանի մասին**»: Որոշվեց «**Համաձայնվել ընկ. Չիչերինի հետ**»¹: Դժբախտաբար, արխիվում չի պահպանվել Չիչերինի զեկույցման տեքստը: Այստեղ մեր ուշադրությունը գրավեց այն փաստը, որ Քաղբյուրոն անդրադարձել է Հայաստանին և Թուրքիային վերաբերող խնդիրներին **իրար հետ կապակցված**:

Պակաս հետաքրքրական չէր աղաղակող այն փաստը, որ նույն օրը գաղտնագրված հեռագրով Բելոստոկից Ֆելիքս Չերժինսկին Վ. Ի. Լենինին է հաղորդում, թե. «Ստալինի խորհուրդն այսօր կկատարվի: **Այսօր գիշեր Գերմանիայից եկել է Էնվեր փաշան երկու այլ թուրքերի հետ: Նրանք արդեն մեզ մոտ եղել են, օղաչուներ են: Նրանց ուղարկում ենք Սմիլգե** (ընդգծումները մերն են - Յ. Ղ.)»²: Տեսնում եք՝ ինչպիսի՜ հոգատարություն հայ ժողովրդի ոխերին թշնամու նկատմամբ:

Քաղբյուրոյի օգոստոսի 11-ի նիստի որոշումներից Գ. Չիչերինի ու հատկապես Լ. Կարախանի՝ իրենց նկատմամբ ունեցած վերաբերմունքից թուրքական պատվիրակությունը դժգոհ էր: Նրանք ամեն ինչ անում էին, որպեսզի Ռուսաստանից շատ և շատ զենք ու զինամթերք ստանային, դրանցով զինեին Կարաբեքիրի դրոշի տակ համախմբված թուրք ու քուրդ **խաժամուժին**, անցնեին սահմանը և հարձակվեին Հայաստանի Հանրապետության վրա:

1920 թ. օգոստոսի 13-ին Գ. Չիչերինը Վ. Լենինին մի կարճ գրություն (записка) է ուղարկում: Այնտեղ ասված է. «**Ընկ. Լենին. Մեծարգո Վլադիմիր Իլյիչ: Անգորայի թուրքական կառավարության պատվիրակությունը խիստ պնդում է, որ Դուք նրան ընդունեք: Ի նկատի ունենալով, որ մենք նրանց բոլոր պահանջները վատ ենք կատարում**, այն դեպքում, երբ նրանց և մեր հարաբերությունների դրական մնալը մեզ շատ պետք են նաև այս պահին, ուստի խնդրում ենք բավարարել թուրք նա-ցիոնալիստների ցանկությունները, ընդունեք նրանց և Ձեր մերժումով չվիրավորեք նրանց: Եթե Դուք մերժեք նրանց ընդունելը, ապա նրանք կհամոզվեն, որ մենք սառը վերաբերմունք ունենք իրենց նկատմամբ (ընդգծումները մերն են - Յ. Ղ.)»:

Կարդալով Գ. Չիչերինի գրությունը, Վ. Ի. Լենինը մակագրեց. «**Կապվել Կարախանի հետ և ընդունելությունը նշանակել առավոտյան 12-ին**»³:

1920 թ. օգոստոսի 14-ի առավոտյան ժամը 12-ին Վ. Ի. Լենինն անձամբ ընդունեց թուրքական պատվիրակության ղեկավար Բեքիր Սամի բեյին: Խոսակցությունը բավական երկար տևեց: Թուրք նացիոնալիստը «բողոքեց Հայաստանի Հանրապետությունից, նրա պատվիրակությունների այն կեցվածքից, որոնք, թողած ամեն բան, ծեծում են Արևմտյան իմպերիալիստների դռները»:

Ե՛վ Լենինը, և՛ Բեքիրը շատ լավ գիտեին արդեն ստորագրված Սևրի պայմանագրի մասին, սակայն լռում էին, որպեսզի դիվանագիտական իրենց պարտությամբ

¹ Российский государственный архив социально-политической истории (այսուհետև՝ РГАСПИ), фонд 17, опись 163, дело 86, л. 13. Подлинник, опись 3, дело 103, л. 26, копия.

² РГАСПИ, фонд 5, опись 1, գրք 995, թերթ 2, պատճեն:

³ РГАСПИ, фонд 2, опись 13, дело 15016, папка 2, л. 1, գրությունն իսկականն է՝ Լենինի ձեռագրով մակագրված:

ավելի չբարդացնեին վիճակը: Ավելին, թուրքական միսիան Մ. Քեմալի հանձնարարությամբ, Բեքիր Սամի բեյի բերանով Վ. Ի. Լենինից համաձայնություն խնդրեց, որպեսզի **Թուրքիան պատերազմ հայտարարի Հայաստանի Հանրապետությանը**, և Կարաբեքիրի գլխավորած 15-րդ կորպուսն արդեն շարժվի դեպի Արևելյան Հայաստան⁴:

Բեքիր Սամի բեյը Վ. Ի. Լենինից պահանջեց նաև Թուրքիային տրամադրել խոստացված ֆինանսական օգնությունը, այն է՝ **հինգ միլիոն թուրքական ոսկի ռուբլի (լիրա)**: Թուրքի ավտորժակը բացվել էր: Ոսկուց բացի, նա պահանջեց ըստ պայմանավորվածության իրենց տալ **200 հազար հրացան, 350-400 թնդանոթ, 500 գնդացիր, 20 ինքնաթիռ, 100 բեռնատար և 40 մարդատար ավտոմեքենա: Ռուսաստանը քեմալականների համար էրգրումում զինագործարան պիտի կառուցեր, տարեկան հինգը հազար փուխ նավթ մատակարարեր թուրքական բանակին**⁵:

Սիստին ներկա էր և սղագրում էր **Լևոն Կարախանը**: Վ. Ի. Լենինը, լսելով Բեքիր Սամի բեյի պահանջները, զգալով դրանց սանձարձակության ձևն ու կատարման աննպատակահարմարությունը, սկսեց պատասխանել կետ առ կետ: Վ. Ի. Լենինը ևս «**դժգոհ էր**» Հայաստանի Հանրապետության ղեկավարությունից: Նրան դուր չէր գալիս, որ Հայաստանի մի պատվիրակությունը՝ Լևոն Շանթի գլխավորությամբ, բանակցություն էր վարում Մոսկվայում, իսկ մյուս պատվիրակությունը՝ Ավետիս Ահարոնյանի ղեկավարությամբ և Պողոս Նուբար փաշայի մասնակցությամբ, Ամստերդամի ղեկավարության միջնորդությամբ հետ ձևավորում էր Սևրի պայմանագիրը: Վ. Ի. Լենինը դժգոհ էր, որ ՀՀ Դաշնակցության կուսակցության ղեկավարներն այդքան դաժան վարվեցին մայիսյան ապստամբության ղեկավարների հետ: Նրա գերխնդիրն էր այդ պահին Ադրբեջանից հետո խորհրդայնացնել և՛ Հայաստանը, և՛ Վրաստանը: Սակայն հարցերը լուծում էր գերագույն զգուշավորությամբ:

Այդ օրերին խորհրդային Ռուսաստանի դեմ պատերազմ էին սկսել լեհերը: Դիվանագիտության բեմահարթակ էին իջել Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայաստանի մանդատին տեղ էր կանգնում պրեզիդենտ **Վուդրո Վիլսոնը**: Թուրքիայի պատերազմն ընդդեմ Հայաստանի, Ռուսաստանի օգնությամբ, նշանակում էր Վ. Ի. Լենինի համար նոր, բարդ, գրեթե անլուծելի խնդիրների ստեղծում, ինչին նա չզնայ: Նա կտրուկ պահանջեց հետաձգել Հայաստանի դեմ պատերազմ սկսելու նախապատրաստությունը, թուրք-հայկական սահմանների կարգավորման խնդիրը քննել Լևոն Շանթի պատվիրակության հետ՝ բանակցային սեղանի շուրջ:

Վ. Ի. Լենինը համաձայնեց, սակայն, քեմալականներին տրամադրել **խոստացված ֆինանսական ու ռազմական օգնությունը**: Հետագոտելով թուրք-ռուսական դիվանագիտությանը վերաբերող արխիվային հսկայական փաստաթղթերը, մասնավորապես 1920-1922 թվականների, կարելի է կարծել, թե այդ «**անպատիվ կոնտրիբուցիան**» հավերժորեն կախված էր Ռուսաստանի ոտքերից, և նա տալիս էր, տալիս ու չէր պոծում: Բերենք այդ փաստերից մի քանիսը միայն, որոնք հաստատում են մեր վերոհիշյալ թեզը:

1920 թ. օգոստոս ամսին, այսինքն՝ Լենինի հետ հանդիպումից քիչ անց, թուրքերը

⁴ Капелан А. С., В. И. Ленин основоположник дипломатии социалистического государства, Москва, 1970, стр. 42-43. Այս և հետագա նյութերն օգտագործել են հայ պատմաբանները, տես է. Ա. Չոհրաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, էջ 47-48:

⁵ Մանրամասն տես Капелан А. С., նշվ. աշխ., էջ 43-44: Տես նաև է. Ա. Չոհրաբյան, նշվ. աշխ., էջ 46: «Документы внешней политики СССР», том II, Москва, 1958, стр. 726.

Ռուսաստանից միանգամայն անվճար ու անվերադարձ ստացան **6000 հրացան, հինգ միլիոնի հասնող փամփուշտ**: Սեպտեմբերի առաջին տասնօրյակում Հայաստանի վրայով, **հասկանում եք՝ Հայաստանի տարածքով**, սկզբում, այսինքն՝ խոստացածի մի մասով քեմալականներին «հաջողությամբ» հասցվեց 200,6 կգ ձուլածո ոսկի¹:

1920 թ. օգոստոսի 22-ին Վլադիկավկազում նստած Սահակ Տեր-Գաբրիելյանից Գ. Չիչերինը պահանջում էր պայմաններ ստեղծել, որպեսզի ռուսական զենքն ու զինամթերքը Հայաստանի վրայով ապահով հասցվեն քեմալականներին²: Նույն օրվա ժամը 18.45-ին Չիչերինը հեռագրում է Բ. Լեգրանին, զգուշացնելով, թե Վրանգելի էմիսարները տեղյակ են թուրքիա ուղարկվելիք բեռների մասին, ուստի անհրաժեշտ է Ս. Օրջոնիկիձեի հետ միասին կազմակերպել, որպեսզի դրանք՝ իբրև «դիվանագիտական կապոցներ», անձեռնմխելիության իրավունքով Հայաստանի վրայով տեղափոխվեն թուրքիա³:

1920 թ. սեպտեմբերի 8-ին թուրքիայում հաստատված ՌՖՍՄ-ի ներկայացուցիչ Ն. Ուլամալը Ռուսաստանի արտգործնախարարությանը հեռագրում է, թե երգրումում նստած Քյազիմ Կարաբեքիրին և Ջելալ Էդդին Արիֆին է հանձնվել **երեք արկղ ոսկին**: Այդ հանձնումը կատարվել է Ս. Քեմալի կարգադրությամբ: Ոսկու ընդհանուր քաշը **երկու հարյուր կիլոգրամ և 635 կամ 900 գրամ է**⁴: Հետաքրքրական է, որ ոսկով լցված արկղերը համարակալված են եղել, որոնցից 120՝ առաջինը, 624՝ երկրորդը, 720՝ երրորդը: Այդ նշանակում էր, որ մյուս համարներով թվագրված արկղերում եղել են զենք ու զինամթերք:

1920 թ. նոյեմբերի 19-ին Գ. Չիչերինը հերթական նամակն է ուղարկել Ի. Ստալինին: Այնտեղ նշվում է, թե Բեքիր Սամին շատ պահանջկոտ է դարձել իր գործողությունների մեջ: Նրան կարելի է բնութագրել իբրև «**մեծ շորթողի (вымогатель)**, որը կարող է շատ հարցերում դիմել Ձեզ: Աշխատեք կանխել նրա պահանջկոտությունը»: «**Ինչ վերաբերվում է նրանց տրամադրելիք զենքի քանակին, ապա որոշված է՝ առաջին երկու ամսում մենք թուրքերին պետք է տանք 35.000 հրացան: Մինչև Ձեր Մոսկվա գալը մենք թուրքերին պետք է մատակարարենք ևս 6000 հրացան**»⁵:

Այստեղ ավելացնենք այն, որ նոյեմբերին Կարաբեքիրը կատաղի արյունախում գործողություններ էր ծավալում Արևելյան Հայաստանի տարածքում և մոտենում էր երկրի մայրաքաղաքին: Այդ օրերին Խորհրդային Ռուսաստանը, մասնաբաժիններով, առանց հապաղման զենք էր տրամադրում Հայաստանի ռիսերին թշնամուն:

Հետաքրքիրն այն էր, որ դեռևս նամակը չստացած, նույն նոյեմբերի 13-ին Ստալինը Չիչերինին գրություն է ուղարկել, այնտեղ ասելով, թե ուզում է Օրջոնիկիձեին նամակ գրել, առաջարկելով՝ «**ոչ մի հարցում չհավատալ քեմալիստներին**», շրջանցելով Կարաբեքիրին, Քեմալից թույլտվություն ստանալ Խորհրդային պրոպագանդա մղելու թուրքական բանակում և «առայժմ զենք չտալ թուրքերին...»⁶:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք վերևի շարադրանքը, մեր հրապարակած

¹ Է. Ա. Չոհրարյան, նշված աշխատությունը, էջ 79: Տե՛ս նաև ՍԼԻ ԴՅԱ, ֆոնդ 48, ցուցակ 2, գործ 11, թերթ 109:

² ԲԿԱՍՍՊ, фонд 64, опись 1, дело 21, л. 37.

³ Նույն տեղում, թերթ 74:

⁴ АВПРИ, фонд 04, опись 39, папка 232, дело 52993, лл. 33-34, копия.

⁵ Նույն տեղում, фонд 04, опись 51, папка 321, дело 54870, лл. 2-3, копия.

⁶ ԲԿԱՍՍՊ, фонд 558, опись 2, дело 1, лл. 1-2.

փաստերն այլևս կասկած չեն թողնում, որ Խորհրդային Ռուսաստանը Վ. Ի. Լենինի, Ի. Ստալինի, Լ. Տրոցկու, Ֆ. Չերժինսկու և այլոց մակարդակով օգնության ձեռք է մեկնել «պատմության բեմահարթակից անհետանալու բացահայտ վտանգի առաջ կանգնած քեմալական թուրքիային», նրա մեռած մարմնի մեջ «կենդանացնող» դեղամիջոցներ է ներարկել: Այդ բոլորը կատարվել է Հայաստանի ու հայ ժողովրդի հաշվին, «համուն համաշխարհային հեղափոխության հաղթանակի» ստահող և կեղծ լոզունգներով:

Այս խնդիրը 70 տարի շարունակ մնացել է ընդարմացված վիճակում, արխիվները փակված են եղել Խորհրդային պատմաբաններիս առջև: Ճիշտն ասած, լենինյան գվարդիայի գործադրած հակահայկական բացահայտ այլաճակությունների մասին գաղտնածածուկ պայմաններին մենք չէինք էլ կարող հավատալ: Այդ էր պատճառը, որ այժմ ինչպես բոլորի, այնպես էլ մեր լեզուն բացվելուց հետո ջանացինք խոչորների կողքին թեկուզ մանր փաստեր ևս հրապարակել, այն էլ այն փաստերը, որոնք պահվել են **խորհրդային, մոսկովյան արխիվներում**, և որոնք աներկբա են դարձնում քեմալականների զինումը բոլշևիկյան զենքով:

Ինչպես սկզբում ասացինք, բերված փաստերն ու դրանց հետևած շարադրանքը հարցի մեկ երեսն էր, մեծ եղբոր Խորհրդային երեսը: Ուստի որոշեցինք «չնեղացնել» մյուս եղբայրներին, այսինքն՝ այն **թուրք պատմաբանների հրապարակած փաստերը, որոնք երբեմն մնում են եզակի՝ իրենց և լենինյանների հակահայ մուր զործարքները բացահայտելիս**:

Թեկուզև համառոտ, բայց և այնպես, դիմենք ականատեսների և գործողություններին մասնակիցների թուրքալեզու հուշերին, որոնք ժամանակին թարգմանաբար գիտական շրջանառության մեջ են դրվել Սփյուռքում: Մենք կարողացել էինք դրանք և չէինք հավատացել:

Սփյուռքում բոլշևիկների ձեռքով թուրքերին զինելու մասին շատ է գրվել, սակայն դրանցից ամենափաստառատն ու հավաստին Գաբրիել Լազյանի գործերն են: Նրա «Հայաստանը եւ Հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ» աշխատությունը երկար տարիների հետազոտության արգասիք է, դրա համար էլ 1991 թ. վերահրատարակվեց երևանում⁷:

Թուրքերենին կատարյալ տիրապետած Գ. Լազյանն արձանագրում է, թե զենեքալ Ալի Ֆուատ Ջեբեսոյը Առաջին աշխարհամարտում պաղեստինյան ռազմաճակատի թուրքական զորքերի գլխավոր հրամանատարն էր: Պատերազմից հետո նա զինվորագրվեց քեմալականներին և կրկին դարձավ թուրքական արևմտյան զորքերի հրամանատարը:

Քեմալը, լավ ճանաչելով Ջեբեսոյին, վստահ լինելով, թե նա ինչպիսի **հայատյաց** թույն է մթերում, վերջինիս կանչեց Անկարա և 1920 թ. նոյեմբերին նշանակեց իր տերության ներկայացուցիչը Մոսկվայում: Ալի Ֆուատն այդ պաշտոնում մնաց մինչև 1922 թ. հունիսի 2-ը: Այսինքն՝ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը կնքելիս նա Մոսկվայում էր եղել: Բնականաբար, դեսպանը Կարաբեքիրի առաջին ձեռքն էր, գիտեր այնպիսի մանրամասներ, որոնց մասին, նրանից բացի, ոչ ոք չգիտեր:

Գ. Լազյանը բերում է թուրք դիվանագետի գրած հուշերի հատորը՝ «Մոսկվա հաթրալարի» (Մոսկովյան հուշեր) վերնագրով, քաղում շատ նյութեր, որոնցից մենք կանոնադրենք թուրք դեսպանի առանձնագրույցը Ի. Ստալինի հետ:

⁷ Գաբրիել Լազյան, Հայաստանը եւ Հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, «Աղանա», 1991, էջ 241:

Այդ գրույցի բառացի թարգմանությունն է.

«Ստալին եւ Հայաստանի հարցը:

«Մեր այն հարցումին, թե Հայաստանի հարցի մասին (բանակցութիւններու ատեն) պիտի խօսուի՞ թէ ոչ», ան (Սթալին) ըսաւ.

«Դուք Չեզի Հայաստանի խնդիրը լուծեցիք: Եթէ չլուծուած բան մը դեռ մնացած է, ան ալ լուծեցէք, բայց ժամանակը ճշգրտապէս մեզի իմացուցէք»:

«Այս պատասխանը տուաւ: Յետոյ հարցուց, թէ Կիւմրի (Ալեքսանդրապոլը) ե՞րբ պիտի պարպենք: Դաշինքի պայմանները երբ գործադրուին, անմիջապէս պիտի պարպենք եւ Կիւմրին, սեփականացնելու մտադրութիւն չունինք, ըսի իրեն»:

«Ընկեր Սթալինի տրուած այս կտրուկ եւ գոհունակութեան արժանի յայտարարութենէն ետք իրեն մնաք բարով ըսինք»:

Ալի Ֆուատը դժգոհ է մնացել Գ. Չիչերինի և Լ. Կարախանի հետ ունեցած հանդիպումներից: Սակայն **Ռադեկը** նրա հետ ունեցած առանձնագրույցում ասել էր. **«Դուք հայերին ջարդեցիք, մի մասը մնաց: Երբ մյուս մասն էլ կոչնչացնեք, ձեր արժեքը մեր աչքում ավելի կբարձրանա: Հաղորդեք հայերին ջարդելու պահը»**²:

Մոսկվայում եղած օրերին մտերմություն էր հաստատվել Էնվեր փաշայի և Ալի Ֆուատի միջև: Սրանք հայ ժողովրդի երկու այն դահիճներն էին, որոնք փախել էին երիտթուրքերի նկատմամբ կայացրած մահապճեհից և իբրև որջ ընտրել էին Մոսկվան: Իսկ Մոսկվան նրանց ոչ միայն փայփայում էր, այլև վստահում մինչև վերջ:

Գ. Լազյանը բերում է հայերիս խելագարեցնող հետևյալ միտքը. «Էնվեր փաշան հետագային, 1921 Յուլիսի 16 թուակիր նամակով մը, ուղղուած Մ. Քեմալին, ներկայացնելով իր կատարած գործերը, կը յիշատակէ, որ առաջին անգամ ինք ստացած է ռուսերէն **«մաս մը ոսկի եւ տասնեւիսնգ հազար հրացան եւ այլ զինատեսակներ»**: Բոլշևիկներն այսպէս էին լուծում հայկական հարցը:

Հայ ժողովրդի ողբերգության գործում փոքր չէին Մոսկվայում հաստատված Խալիլ փաշայի «սխրանքները»: Նա Էնվեր փաշայի հորեղբայրն էր, Առաջին աշխարհամարտի ժամանակ «գտնվեցավ Իրաքի և Կովկասի ճակատների վրա»: Ձինադարից հետո անգլիացիները նրան բանտարկեցին և հանձնեցին թուրք կառավարությանը: Ճարպիկ ու արյունախում զինվորականը կարողացավ թուրքական բանտից փախչել և, ողիսականն սկսելով Անատոլիայից, Մ. Քեմալի օգնությամբ ապաստանեց Մոսկվայում:

Ռուսաստանի մայրաքաղաքում նա «մեծ համարում ձեռք բերեց», հանդիպումներ ունեցավ Չիչերինի, Կարախանի և այլոց հետ, օգտվելով նյութական հսկայական միջոցներ տնօրինելու իրավունքից՝ զենք, զինամթերք ստացավ բոլշևիկներից և առաքեց Թուրքիա: «Ալի Ֆուատի այն հարցումին, թէ ի՞նչ օգնութիւններ կրցաւ ապահովել, Խալիլ փաշա կը պատասխանէ:

«Քանակը այժմ չեմ հիշեր. **ժովի ճամբով զէնք, ռազմամթերք դրկեցի եւ անձամբ հարիւր հազար ոսկեդրամ արժեքով ձոյլ ոսկի յանձնեցի Գարաթօտ գտնուող զօրաբաժնի հրամանատար ճաւիտ պէյին»** (էջ 137)³:

Կարողում ես այս և նման բազմաթիվ տողեր և մնում ես ապշած: Ռուսաստանի երիտասարդ հանրապետությունը ծանր կացություն էր ապրում դիվանագիտորեն

¹ **Գարրիէ Լազեան**, Հայաստանը եւ Հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, «Արանա», 1991, էջ 244:

² Նույն տեղում, էջ 247:

³ Նույն տեղում, էջ 249:

չճանաչված, չորս կողմից թշնամիներով շրջապատված, բայց ոսկի էր շաղ տալիս թուրքերի գլխին: Հասկանալի է, թե նրանք ինչքան բարձր էին «գնահատում» Քեմալին:

Քեմալականների՝ Հայաստանում կատարած բարբարոսությունների գործում, Կարաբեքիրից հետո, երկրորդ խոշոր դեմքը **Բեքիր Սամի բեյն** էր: **Նա ճարպիկ էր, խաբեբա, բանսարկու, տեղն եկած պահին հոգին «տասը փարայով սատանային կվաճառեք»:** **Այդ մասին գիտեին ռուս բոլոր գործիչները, սակայն Քեմալին «չնեղացնելու» վախից, զիջում էին նրա բանազնացին:**

Մյուս խնդիրների քննարկումը թողնելով այլ էջերին, այստեղ նկատենք, թե նա ինչպիսի խորամանկությամբ էր հայագգի Լևոն Կարախանից պոկում զենքն ու զինամթերքը, ուղղելով հայ ժողովրդի դեմ: Գիտեր Կարախանն այդ, թե ոչ, դժվարաճանաչ էնք ասել:

1920 թ. օգոստոսի 2-ին Բեքիր Սամի բեյը Մոսկվայում ընդունվեց Լ. Կարախանի կողմից: Զրույցը բավական երկար տևեց, որի մասին Ալի Ֆուատ փաշան «Մոսկովյան հուշերում» գրում է.

«Գարախան նոր հաւաստիքներ կուտայ, թէ «25 փութ (հազար քիլոկրամ) ոսկի, չորսական թնդանօթով երկու մարտկոց, վեց հազար հրացան, հարիւր գնդացիք եւ առատ ռազմամթերք պատրաստ են ու պիտի դրկուին Խալիլ փաշայի եւ Էնկիւրիի դեսպանատան քարտուղարին հետ, որոնք պիտի ընկերանան Հայաստան գացող պատուիրակութեան: Հրաման տուած ենք, որպէսզի ի նպաստ Ազրպէյջանի գրաւուին Ղարաբաղի, Նախիջեւանի, Ալապտօզի եւ Չանգեզուրի շրջանները: Մինչեւ որ Լեհաստանէն նոր ուժեր գան, անելի ընդարձակ շարժումներ կարելի չէ եւ եթէ Հայաստան յարձակի Օլթիի վրայ, որուն երեսփոխանը Ազգ. ժողովին անդամ է, պատճառ պիտի դառնայ, որ սովետական կառավարութիւնը խիստ քաղաքականութիւն մը որդեգրէ: Տեսակցութիւնը այս ձեւով վերջացաւ»:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության սահմանի վրա կանգնած քեմալական բանակը սպասում էր հարձակման հրամանի, Կարաբեքիրի հոխորտմամբ՝ օր առաջ **«Հայաստանը ջնջել աշխարհի քարտեզից»:**

«Հասունանում էր» քեմալականների արշավանքը **Արևելյան Հայաստան**, նախ, նպատակ հետապնդելով չեղյալ հայտարարել Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածները, ապա, իրոք, պատմության բեմահարթակից իսպառ վերացնել հայ ժողովրդի մնացած բեկորները, որտեղ էլ նրանք գտնվելիս լինեին:

Այն ցեղասպանության երրորդ շրջափուլն էր, որն, իրերի բերումով, մինչև օրս պատշաճ ուշադրության չի արժանացել: Փորձենք, մասամբ լրացնելով այդ բացը, կատարել մեր ընթերցողի պահանջները:

Մոսկվայում թուրք պատվիրակության ծավալած կուլիսյան և անդրկուլիսյան բանակցություններին զուգընթաց, ընդհատումներով, մայրաքաղաքում իր աշխատանքն էր շարունակում **ռուս-թուրքական առաջին կոնֆերանսը**, որը «կոչված էր» իրավաբանորեն ձևակերպելու երկու տերությունների միջև հաստատվելիք օրենսդրական ակտերը, մեղմացնելու հայ – թուրք թշնամական հարաբերությունները, **վճիռ տալու Հայկական հարցի նոր ձևակերպումներին:**

Կոնֆերանսին մասնակցելու նպատակով Անկարայից Մոսկվա ժամանող թուրքական պատվիրակությունը, իր մայրաքաղաքից դուրս գալով 1920 թ. մայիսի 11-ին, ազերի և Դաղստանի մուսուլմանների մեջ հակախորհրդային, **հակահայկական** պրոպագանդա մղելով, այսինքն՝ թույն մատակարարելով, առանց աճապարանքի անցավ Տրապիզոն և այնտեղով **Մոսկվա հասավ հուլիսի 19-ին**, այսինքն՝ 69 օր հետո:

Կոնֆերանսի թուրքական պատվիրակության կազմի մեջ մտնում էին **Բեքիր Սամի բեյը** (արտգործնախարար, որը հայ ժողովրդին ոչ պակաս վնաս պատճառեց, քան Կարաբեքիրը), **Յուսուֆ Քեմալ բեյը**, «խաղաղության դոկտոր (sic)» **Իրահիմ Թալիհն**, Լազիստանից ընտրված մեջլիսի պատգամավոր **Օսման բեյը**, թուրքական բանակի գլխավոր շտաբի սպայակույտի ներկայացուցիչ **Սեյֆի էֆենդին**¹:

Քաղբյուրոյի որոշմամբ Ռուսաստանի կողմից բանակցությունները վարելու էին **Գ. Վ. Չիչերինը** (արտգործոժողկոմ), նրա առաջին տեղակալ **Լևոն Կարախանը**, ժողկոմխորհրդի տնտեսական և իրավաբանական բաժնի պետ **Ալեքսանդր Սարանինը**, արևելյան գործերի գծով փորձագետ **Անատոլի Ադամովը**²:

Չենվելով թուրքական աղբյուրների վրա՝ Գ. Լազյանը պատմում է, թե. «Արտաքին գործավար Չիչերինը Պեքիր Սամիի պատուիրակությունը կ'ընդունի 1920 Յուլիս 24ին: Տեսակցութեան ներկայ կը գտնուի նաեւ արտաքին փոխ գործավար հայազգի Գարախան: Չիչերին կը յայտնէ, որ հիմնական խնդիրներու շուրջ արդէն հասկացողութեան եկած էին ճեմալ եւ Խալիլ փաշաներուն հետ, կը մնար ճշդել մանրամասնութիւնները: Պեքիր Սամի կը փութայ պատասխանել, թէ ճեմալ եւ Խալիլ թուրք Ազգ. ժողովին կողմէ պաշտօնական հանգամանք ըստացած չէին եւ անձնական հանգամանքով նախաձեռնութիւն ստանձնած էին: Այս տեսակցութենէն անմիջապէս ետք Պեքիր Սամի կը հեռագրէ Անգարա, թէ թուրք պատուիրակութիւնը ջերմ ընդունելութեան արժանացած է եւ բոլշեւիկները խոստացած են անգլիացիներուն հետ կնքելիք հաւանական համաձայնութեան ընթացքին նկատի ունենալ նաև թուրքիոյ տեսակէտը»³:

Դեպքերի զարգացման ընթացքին ուշադրությամբ հետևում էր գեներալ Ալի Ֆուատ փաշան: **Ալի Ֆուատ փաշա Ջեքեսոյը** Առաջին աշխարհամարտի տարիներին գլխավորում էր Պաղեստինում տեղակայված թուրքական բանակը քեմալականների տիրապետության առաջին տարում, այսինքն՝ մինչև Իսմեթ Ինենյուն, հանդիսանում էր բանակի արևմտյան հատվածի ողջ զորքի փաստացի գլխավոր հրամանատարը (իրավականորեն բանակի գլխավոր հրամանատարն էր Մուստաֆա Քեմալը):

1920 թվականի նոյեմբերի 21-ին նա նշանակվեց Մոսկվայում թուրքիայի դեսպան, ուր մնաց մինչև 1922 թ. հուլիսի 2-ը: Ստացվում էր այնպես, որ թուրք այդ գիշատիչը մասնակցել էր Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի ձևավորման գործողություններին, ուրիշ, ճշմարիտ խոսքով ասած՝ Հայաստանի ծվեն-ծվեն անելուն: Ալի Ջեքեսոյը հետագայում հրատարակել է իր հուշերը, դրանք վերնագրելով **«Մոսկվա հաթարլարի»** (Մոսկովյան հուշեր):

Թուրք դահճապետը պատմում է, որ 1920 թ. հուլիսի 24-ի գիշերը իրենց պատվիրակությունը երկրորդ անգամ տեսակցություն ունեցավ Լևոն Կարախանի հետ, որոնք ըստ Ջեքեսոյի.

«Մերինները շեշտած են հայկական ճամբան բանալու անհրաժեշտութիւնը, որպէսզի մեզի անհրաժեշտ զէնք եւ պիտոյք արագօրէն Անատոլու փոխադրուին: Իսկ Գարախան, Լեհաստանի կարեւորութիւնը վեր առնելով, դժուար պիտի ըլլայ, կ'ըսէ, հոնկէ ուժեր քաշել եւ ճամբան բանալ: Առանց պատճառի Հայաստանի վրայ յարձակում մը յոռի տպաւորութիւն պիտի ձգէ արեւմտեան ու ամերիկեան պետութիւններուն վրայ: Հայաստան դրկուած պատուիրակութիւնը, հայ կառավարութեան ընդդիմութեան պատճառով, չէ կրցած սահմանը անցնիլ: Քաղաքական ձեռնարկ-

¹ **Գարրիէ Լազեան**, Հայաստանը եւ Հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, «Աղանա», 1991, էջ 249 (երկրորդ հրատարակություն):

² **ԱՅՊՐՄ**, Турецкий стол (новый), фонд 39, папка 41, дело 30, лл. 21-22.

³ **Գ. Լազեան**, նշված աշխատությունը, էջ 250:

ներու սկսուած ըլլալով, այս մէկ երկու շաբթուան ընթացքին կը յուսայ, որ ճամբան պիտի բացուի» (էջ 63):

Պեքիր Սամի կը պատասխանէ. «Մեր ներկայ կացութիւնը թոյլ չի տար նոյնիսկ երկու շաբաթ սպասել»:

Գարախան նոր հաւաստիքներ կուտայ, թէ «25 փութ (հազար քիլոկրամ) ոսկի, չորսական թնդանօթով երկու մարտկոց, վեց հազար հրացան, հարիւր գնդացիք եւ առատ ռազմամթերք պատրաստ են ու պիտի դրկուին Խալիլ փաշայի եւ Էնկիւրիի դեսպանատան քարտուղարին հետ, որոնք պիտի ընկերանան Հայաստան գացող պատուիրակութեան: ՀՐԱՄԱՆ ՏՈՒԱԾ ԵՆՔ, ՈՐՊԵՍԶԻ Ի ՆՊԱՍՏ ԱԶՐՊԵՅՅԱՆԻ ԳՐԱԻՈՒԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ, ՆԱԽԻՋԵԻԱՆԻ, ԱԼԱԿԵՕԶԻ ԵՒ ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ՇՐՋԱՆՆԵՐԸ: Մինչեւ որ Լեհաստանէն նոր ուժեր գան, աւելի ընդարձակ շարժումներ կարելի չէ եւ եթէ Հայաստան յարձակի Օլթիի վրայ, որուն երեսփոխանը Ազգ. ժողովին անդամ է, պատճառ պիտի դառնայ, որ սովետական կառավարութիւնը խիստ քաղաքականութիւն մը որդեգրէ: Տեսակցութիւնը այս ձեւով վերջացաւ» (էջ 63):

Որոշապէս կը պարզուի Գարախանի խօսքերէն, որ իրենք հրաման տուած են, որպէսզի Ղարաբաղ, Նախիջեւան, Ջանգեզուր գրաւուին ի նպաստ Ազրպէյջանի: Իսկ Օլթիի վրայ հայերու կողմէ յարձակում մը պատրուակ պիտի ծառայէր «խիստ քաղաքականութեան»:

1920 թ. օգոստոսի 4-ին գումարվեց մոսկովյան կոնֆերանսի երկրորդ նիստը, որտեղ ռուսական կողմից այն վարելու էր եկել Լևոն Կարախանը, որն իր հայ լինելու պատճառով վստահության չէր արժանանում քեմալականների կողմից:

Այդուհանդերձ, խորհրդային Ռուսաստանն առաջադրեց **ազգագրական սահմանների** սկզբունք, որը հիմնվում էր մինչև համաշխարհային պատերազմը գոյություն ունեցած ազգամիջյան փոխհարաբերությունների իրողությունների վրա: Ելնելով դրանից, խորհրդային կառավարությունն առաջարկեց կազմակերպել (ազգաբնակչության) փոխադարձ վերաբնակեցում այնպես, որ սահմանի երկու կողմերում ստեղծվի միատարր ազգագրական հողատարածք: Կարճ ասած, խորհրդային կառավարությունն առաջ քաշեց «թուրքական հին սահմանի այնպիսի ճշգրտում, որի շնորհիվ, մի կողմից՝ վերակշռաբար մահմեդական ազգաբնակչությամբ հողատարածքներն անցնեին թուրքերին, իսկ մյուս կողմից՝ Հայաստանին անցնեին այն հողատարածքները, որտեղ մինչև 1914 թ. հայկական մեծամասնություն էր առկա»²:

Բեքիր Սամին ոչ միայն չհամաձայնեց Լ. Կարախանի առաջարկին, այլև ինքը բարձրացրեց թուրքիայի նոր պահանջները, այն է. սահմանը Հայաստանի և թուրքիայի միջև գծագրել ըստ Բրեստի (1918 թ.) նախատեսումների, անվերապահորեն ճանաչել **«Ազգային ուխտը»**: Այդ նշանակում էր, որ թուրքիան ուզում է բռնազավթած պահել ոչ միայն ողջ Արևմտյան Հայաստանը, այլև նաև տիրանալ **Կարսի, Արդահանի և Բաթումի** մարզերին:

Լ. Կարախանը չափազանց շատ համարելով Բեքիր Սամի բեյի պահանջները, նրան առաջարկեց հանդիպել այդ պահին Մոսկվայում գտնվող **Լևոն Շանթի հետ**, միաժամանակ ընդունել, որ Բրեստի պայմանագիրը չձեռնարկված արդեն վախճանվել է: Ռուսական դիվանագետը ուղղակիորեն ընդգծում էր «Ազգային ուխտը» չճանաչելու փաստը, հետևաբար և թուրքիային **չէր զիջում Կարսը, Արդահանը, Բաթումը**³:

¹ **Գ. Լազեան**, նշված աշխատությունը, էջ 250-251:

² **АВН СССР**, том II, стр. 658. Տե՛ս նաև «Լրաբեր հասարակական գիտությունների», 1992, N 1, հունվար -մարտ (583), էջ 30-31:

³ **Գալուստ Գալոյան**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 263:

Թուրքական պատվիրակությունը վայնասուն բարձրացրեց Լ. Կարախանի առաջարկներից, պահանջեց, իբրև հայի և կողմնակալի, նրան հեռացնել բանակցությունների սեղանից: Թուրքական շանտաժը զարմանալիորեն հաշվի առնվեց: Կարախանին փոխարինեց Գ. Չիչերինը, և ոչ միայն այդ: Բեքիր Սամի բեյին օգոստոսի 14-ին ընդունեց Վ. Ի. Լենինը (մենք այդ հարցերին անդրադարձել ենք նախորդ էջերում), նրան խոստացավ արագացնել զենքի, զինամթերքի և **10 միլիոն** ոսկե ռուբլու տրամադրման պրոցեսը: Կողմնակի բազում փաստերը վկայում են, որ Վ. Ուլյանովը զարմանալի դժգոհություն ուներ Չայաստանի Հանրապետության ղեկավարության վարած թե՛ ներքին, թե՛ հատկապես արտաքին քաղաքականությունից: Դրա համար էլ նա գաղտնածածուկ համաձայնություն էր տվել Բեքիր Սամի բեյին, թե **քեմալականները կարող են հարձակվել Չայաստանի վրա**, պայմանով, որ գրավեն միայն **«կանխատեսված»** նահանգները, որոնք **Ալլահը գիտեր**: Այդքանից հետո էլ թուրքերը դժգոհ էին, դրա համար էլ մեկ անգամ ևս բանակցություններն ընդհատվեցին:

1920 թ. օգոստոսի 17-ին բանակցությունները վերսկսվեցին բարձր մակարդակով: Թուրքական պատվիրակներն առաջարկեցին կնքել պաշտպանողական և հարձակողական դաշինք: «Այս առաջարկը, - գրում է թուրք պատմաբանը, - հենվելով Բեքիր Սամի բեյի՝ կառավարությանը ներկայացրած զեկուցագրի վրա, բոլշևիկները չէին կարող ընդունել. նրանք չէին կարող դաշնակցել ոչ կոմունիստական երկրի հետ: Այդ ժամանակ թուրքերն առաջարկեցին կնքել բարեկամության և եղբայրության պայմանագիր, որն ավելի ցանկալի էր Ռուսաստանին... Բոլշևիկները թուրքերի համար անսպասելի պահանջներ առաջադրեցին»: Այդ պահանջներից մեկը վերաբերում էր Չայաստանին, որի հետ Ռուսաստանը օգոստոսի 10-ին համաձայնագիր էր կնքել, ըստ որի **Շահթախթի-Ջուֆա երկաթուղին տրվել էր Չայաստանին**: Լսելով այս մասին, թուրքական պատվիրակությունը մտադրվեց թողնել Մոսկվան՝ դառնությամբ բողոքելով Չիչերինին, որ նշված երկաթուղին Չայաստանին տալը նպաստում էր կովկասյան ճանապարհը փակելուն: Չիչերինը հարկ է համարել բացատրել, որ համաձայնագիրը կնքվել էր Կովկասում Ռուսաստանի ներկայացուցչի նախաձեռնությամբ, և այնտեղ ոչինչ չէր ասվում Ռուսաստանի կողմից տարանցիկ ճանապարհը բացելու կապակցությամբ: Չիչերինը կրկնել է Լ. Կարախանի ասածը, որ Ռուսաստանը չի կարող պաշտպանել թուրքերի ձգտումը՝ իրենց ուժերով բացելու այդ ճանապարհը, քանի որ այն անխուսափելիորեն կհանգեցնեի պատերազմի Թուրքիայի և Չայաստանի միջև¹:

Ռ. Սալահինը՝ հենվելով Բեքիր Սամիի վկայության վրա, գրում է, որ բանակցությունների ժամանակ Չիչերինը պնդել է, թե «Թուրքիան Չայաստանին պետք է տա Վանի և Բիթլիսի արևելյան մարզերից որոշ տարածքներ»: Բեքիր Սամին հայտարարել է, որ «Թուրքիայում հայկական վիլայեթներ չկան», որ հայերը ոչ մի տեղ մեծամասնություն չեն կազմում... Չիչերինը հիշեցրել է, որ Ռուսաստանը կօգնի Թուրքիային, եթե նա Չայաստանին զիջի նշված տարածքները: Բեքիր Սամին Ռուսաստանի այդ պահանջը համարել է համազոր Անտանտի վարած քաղաքականությանը, որը ձգտում էր «Թուրքիայի մասնատմանը»: Չիչերինը չի համաձայնել այդ գնահատականին, ընդգծելով, որ Անտանտի տերությունները ցանկանում են ստեղծել մեծ Չայաստան, ընդգրկելով Սվազն ու Տրապիզոնը, մինչդեռ Ռուսաստանը պարզապես խնդրում էր Արևմտյան Չայաստանից մի փոքր տարածք միացնել Չայաստանին:

¹ Լույսնությամբ վերցված է *Փալուստ Փալոյանի* նշված աշխատության 264-265-րդ էջերից:

Բեքիր Սամին պատասխանել է, որ այդ խնդրով պետք է խորհրդակցի իր կառավարության հետ: Իսկ Անկարայում նա խորհրդային Ռուսաստանի այդ պահանջախնդրությունը բացատրել է Չայաստանը զավթելու նրա մտադրությամբ²:

Մուստաֆա Քեմալը խորհրդային Ռուսաստանի խնդրանքը՝ Արևմտյան Չայաստանից (հայկական պատմական տարածքներից) մի փոքր հատված Չայաստանին տալու վերաբերյալ, գնահատել է որպես «իմպերիալիստական» պահանջ և հանձնարարել է Բեքիր Սամիին հայտարարելու խորհրդային Ռուսաստանի կառավարությանը, «եթե ռուսները ցանկանում են, որպեսզի թուրքական ազգը շարունակի պայքարն ընդդեմ իմպերիալիզմի, ինչպես առաջ էր, նրանք անմիջապես պետք է հրաժարվեն իրենց պահանջներից և ստորագրեն բարեկամության մասին պայմանագիր»:

Թուրքիայի այս կոշտ դիրքը բացատրվում էր նրանով, որ Մուստաֆա Քեմալը հասկանում էր, որ Ռուսաստանը Անտանտի դեմ մղվող պայքարում ստիպված էր դիմելու մահմեդական աշխարհի օգնությանը: Բայց քեմալականները հասկանում էին նաև, որ առանց Ռուսաստանի օգնության այդ փուլում չէին կարող պաշտպանել Թուրքիայի անկախությունը: Ուրեմն, անկախ նրանց միջև եղած հակասություններից, նրանց միավորող գործոններն ավելի ազդու էին:

Ռուս-թուրքական առաջին բանակցություններն ավարտվեցին **1920 թ. օգոստոսի 24-ին**: Կազմվեց **«Ռուսաստանի և Թուրքիայի միջև պայմանագրի նախագիծ»**, որը **նախաստորագրվեց կողմերի պատվիրակությունների ղեկավարների կողմից: Բեքիր Սամին հայտարարեց, որ չի կարող ստորագրել պայմանագիրն առանց նրա նախագիծն իր կառավարության հետ համաձայնեցնելու: Բանակցություններն ընդհատվեցին: Թուրքական պատվիրակությունը վերադարձավ Անկարա՝ իր հետ տանելով իրենց չբավարարող պայմանագրի նախագիծը**:

Քանի որ 1920 թ. օգոստոսի 24-ին կազմված «Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվելիք պայմանագրի» տեքստը նախագիծ էր և նույնիսկ իր ժամանակին չբացահայտված մեջ չէր դրվել, ուստի մենք ևս (ավելորդ կրկնություններից խուսափելու նպատակով) բավարարվում ենք այդ փաստաթղթի սոսկ վերահրատարակությամբ, անշուշտ, նույնիսկ առանց թարգմանության²:

Приложение 1

ПРОЕКТ ДОГОВОРА МЕЖДУ РОССИЕЙ И ТУРЦИЕЙ, выработанный в августе 1920 года

Правительство РСФСР и Правительство Великого Национального Собрания Турции, единодушно разделяя принципы братства наций и воодушевляемые желанием установить между ними постоянные сердечные отношения и неразрывную искреннюю дружбу, основанную на взаимных интересах обеих Стран, решили заключить настоящий Договор дружбы и назначили для сего и т. д.

¹ *АВПРИ*, фонд 148, опись 3, папка 2, л. 5.

² Այս տեքստը վերցրել ենք *Փալուստ Փալոյանի* մեմագրության 267-268-րդ էջերից:

Статья I

Каждая из Договаривающихся Сторон соглашается в принципе не признавать никаких мирных договоров или иных международных актов, к принятию которых понуждалась бы силой другая из Сторон, а посему Правительство РСФСР соглашается ни в коем случае не признавать никаких международных актов, касающихся Турции и не признанных Национальным Правительством Турции, представленным ныне ее Великим Национальным Собранием.

Под понятием Турция в настоящем договоре подразумеваются территории, включенные в Национальный Турецкий Акт от...

Статья II

Обе Договаривающиеся Стороны признают, что все заключенные до сего времени между обеими Сторонами договоры не соответствуют обоюдным интересам. Вследствие сего они соглашаются посчитать означенные договоры отмененными и не имеющими силы.

Статья III

В целях облегчения во всех отношениях непрерывной связи между обеими странами обе Договаривающиеся Стороны обязуются принять, по взаимному согласию, все необходимые меры, дабы обеспечить в возможной скорости беспрепятственное железнодорожное движение между обеими странами в целях установления в наикратчайший срок между Россией и Турцией средств сообщения, могущих быть использованными для перевозки людей и товаров.

Статья IV

На граждан обеих Договаривающихся Сторон, находящихся на территории другой Стороны, будут распространяться все права и обязанности, вытекающие из законов страны, в коей они находятся, за исключением обязанностей по национальной обороне, от коих они будут освобождены.

Вопросы, касающиеся семейного права, права наследственного и дееспособности граждан обеих сторон, также составляют исключение из постановлений настоящей статьи. Они будут разрешены особым соглашением.

Статья V

Обе Договаривающиеся Стороны согласны применить принципы наибольшего благоприятствования к гражданам каждой из Договаривающихся Сторон, пребывающим на территории другой Стороны.

Статья VI

Дабы обеспечить открытие проливов и свободное прохождение через них для торговых сношений всех народов, обе Договаривающиеся Стороны соглашаются передать окончательную выработку международного статуса Черного моря и проливов особой Конференции из делегатов прибрежных стран, при условии, что вынесенные ею решения не нанесут ущерба полному суверенитету Турции, равно как и безопасности Турции и ее столицы Константинополя.

Статья VII

Обе Договаривающиеся Стороны соглашаются заключить в ближайшем времени соглашения, разрешающие все экономические, финансовые и иные вопросы, необходимые для укрепления между обеими Странами отношений дружбы, указанных во вступлении к настоящему договору.

Статья VIII

Дипломатические и консульские отношения будут восстановлены по подписании настоящего договора, и в ближайшем времени должна быть заключена Консульская Конвенция.

Այսպիսով, նման տխուր վերջավորությամբ ընդհատվեցին Մոսկվայի կոնֆերանսի ռուս-թուրքական միստերը, որոնք վերսկսվեցին միայն 1921 թվականի մարտ ամսին: Սակայն մինչ այդ ինչքա՛ն ջրեր հոսեցին անհանգիստ աշխարհում, ինչքա՛ն վնասակար իրադարձություններ կատարվեցին Հայաստանի կյանքում:

4. Հաշտության պայմանագիր՝ ստորագրված Հայաստանի Հանրապետության և ՌՍՖՍՀ-ի միջև 1920 թ. հոկտեմբերի 28-ին

1920 թ. մայիսի 4-ին Հայաստանի Հանրապետության արտգործնախարար **Համո Օհանջանյանը** (1873-1947) կառավարության հանձնարարությամբ դիմեց ՌՍՖՍՀ-ին, խնդրելով բանակցություններ սկսել **հայ-ռուսական** պայմանագիր կնքելու նպատակով: Նոտայածև այդ գրության մեջ արձանագրված էր. «Հիմք ընդունելով բանվորների, զինվորների, գյուղացիների դեպուտատների խորհուրդների **երրորդ** համագումարի որոշումը, որը հռչակեց Հայաստանի ինքնորոշման ազատությունը, ինչպես նաև ԺԿԽ-ի նախագահ Լենինի 1918 թ. հունվար 13 (1917 թ. դեկտեմբերի 31) **«Թուրքահայաստանի մասին»** գրությունը, ՌՍՖՍՀ-ի կառավարությանն առաջարկվում է բանակցությունների մեջ մտնել Հայաստանի հետ, նրա անկախության և սուվերենության ճանաչման հիմքի վրա երկու պետությունների միջև պայմանագիր կնքել: Իմ կառավարության լիազոր պատվիրակությունն արդեն մեկնել է Ձեր հանրապետության սահմանը, հանձնարարություններ ունենալով վարելու բանակցությունները»¹:

Ստանալով այդ ռադիոգիրը, Գ. Վ. Չիչերինը Հայաստանի արտգործնախարարությանը պատասխանեց. «Սույնով խորհրդային կառավարությունն իր համաձայնությունն է հայտնում Հայաստանի Հանրապետության հետ պայմանագիր կնքել՝ երկու ժողովուրդների միջև բարեկամական և ամուր հարաբերություններ հաստատելու համար: **Խորհրդային կառավարությունը սպասում է Ձեր պատվիրակությանը** (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»²: Հայաստանից ստացած գրությունը թվագրված էր մայիսի 4-ին, իսկ պատասխանը՝ **մայիսի 17-ին**:

Հայաստանի և՛ տնտեսական, և՛ քաղաքական վիճակը ծանր էր, դրա համար էլ շտապում էին օր առաջ դաշինք կնքել Ռուսաստանի հետ՝ ակնկալելով նրա օգնությունը: Մոսկվա մեկնող պատվիրակության կազմը հաստատվել էր դեռևս 1920 թ. ապրիլի սկզբներին: Դրանք էին՝ **Լևոն Շանթը** (1869-1951), **Համբարձում Տերտերյանը** և **Լևոն Չարիֆյանը**: Պատվիրակությունը 1920 թ. ապրիլի 30-ին

¹ **ԱՎՔՐԻ**, фонд 148, опись 3, папка 2, л. 5.

² Սույն տեղում, քերթ 101:

Երևանից դուրս գալով՝ գնացքով մեկնում է Մոսկվա: Մայիսի 1-ին հասնելով Թիֆլիս՝ նրան միանում են Ղարաբաղի հայրենակցական միության կողմից առաջարկված **Արամայիս Երզնկյանը** և **Սիմոն Փիրումյանը**: Վերջիններս հանձնարարություն ունենին օժանդակել Շանթի պատվիրակությանը, որպեսզի **Ղարաբաղը միացվեր Հայաստանի Հանրապետությանը**¹:

Պատվիրակության քարտուղար էր նշանակվել **Սարգիս Այդինյանը**, որը պաշտոնապես հաստատված չէր, սակայն կամովին մեկնում էր Մոսկվա՝ «հայրենիքին օգտակար լինելու ջերմ ցանկություններով»: Բանազնացներն ունենին **Ժածկազիր** և գրավոր հանձնարարականներ, այն է՝ թե ինչ շրջանակներում պետք է քննարկեն առաջադրվելիք խնդիրները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Շանթի պատվիրակությանը (հետագայում այդ անունով մտավ պատմության մեջ) լիազորել էր «Մոսկվայում ընդունելի դարձնել հետևյալ կետերը».

«1. Հայաստանի Հանրապետության ծանաչումը, սահմանների մեջ ներառնելով նաև Լեռնային Ղարաբաղը.

2. Սկզբունքով ընդունելի դարձնել տաճկահայ հողամասերի կցումը Հայաստանին.

3. Խորհրդային Ռուսաստանը միջամուխ չպետք է լինի Հայաստանի ներքին գործերին ուղղակի կամ անուղղակի ծանապարհներով.

4. Հիւսիսային Կովկասում եւ Ռուսաստանում ապրող հայերին իրաւունք պէտք է տրուի իրենց շարժական գոյքերով եւ ամբողջ ունեցվածքով գաղթել Հայաստան.

5. Կայսերապաշտական պատերազմի պատճառով Հայաստանի աշխատաւորութեան հասցուած նիւթական վնասների հատուցում, եւ այլն»²:

Երկաթգծի անկանոն աշխատանքի պատճառով պատվիրակությունը Մոսկվա հասավ մայիսի 29-ին: Երկու օր հանգստանալուց հետո, **հունիսի 1-ի գիշերվա ժամը 12-ին** բանազնացներին հրավիրեցին արտգործկոմիսարիատի գրասենյակ, որտեղ ստուգվեց նրանց լիազորությունների իսկությունը: Հայտնվեց, որ բանակցություններ վարելու են կոմիսար **Գ. Վ. Չիչերինը** և նրա տեղակալ **Լևոն Կարախանը**: Բանակցություններն ընթանում էին գիշերվա ուշ ժամերին: Իրար փոխարինում էին **Չիչերինն ու Կարախանը**:

Համբարձում Տերտերյանը պատմում է. առաջին իսկ հանդիպման ժամանակ, այսինքն՝ հունիսի 1-ին, գիշերվա ժամը 1-ին. «Չիչերինը բարի գալուստ մաղթելով Հայաստանի Հանրապետության պատուիրակության, իր խնդակցութիւնը յայտնեց մեր ժամանման առթիւ եւ հաստատեց Խորհրդ. իշխանութեան «անկեղծ ցանկութիւն»ը բարեկամական յարաբերութիւններ ստեղծելու Հայաստանի կառավարութեան ու հայ ժողովրդի հետ: Յետոյ, անմիջապէս անցաւ բուն նիւթին, առ ի համառօտ ամփոփումը հետեւեալն է.

Տաճիկները իրենց՝ բուլշեիկներին պէտք են: Իրենք համաձայնուել են իրենց զինուորական եւ տնտեսական օժանդակութեամբ դուրս շարտելու նրանց երկրից եւրոպական աշխարհակալ «գաւթիչներ»ին: Տաճիկները պատրաստ են անմիջապէս գործողութիւնների անցնել, սակայն մտահոգուած են, որ Հայաստանի կառավարու-

¹ **Պարրիէ Լազեան**, Հայաստանը եւ Հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991, էջ 232: Այս մասին մանրամասն հուշեր է գրել **Համբարձում Տերտերյանը**, տպագրել «Հայրենիք» (Բոստոն) ամսագրի 1954 թ. N 2-ում, էջ 8-12:

² **Պարրիէ Լազեան**, նշված աշխատությունը, էջ 232:

թիւնը, որպէս Ղաշնակիցների կողմնակից, կարող է հարուածել իրենց թիկունքից: Չե՞ք ՀՐԱԻՐԵԼ ԵՆՔ, ՈՐՊԵՍԶԻ ՀԱՇՏԵՑՆԵՆՔ ՉԵ՞ք ՏԱԾԻԿՆԵՐԻ ՀԵՏ ԵՒ ՈՐՈՇ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ՍՏԱՆԱՆՔ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՄԸ ՄԵ՞ք ՂԱՇՆԱԿԻՑ ՏԱԾԻԿՆԵՐԻ ԹԻԿՈՒԼՔԻՑ ՉԻ՞ ՀԱՐՈՒԾԻ: Քանի որ ռուս-տաճկական համագործակցութիւնը այս րոպէիս Խորհրդային Ռուսաստանի համար մահու եւ կենաց խնդիր է, ռուսի անհրաժեշտ է այդ խնդիրների վերաբերմամբ ճշդել Հայաստանի կառավարութեան դիրքը եւ վերաբերմունքը:

Չիչերինի այս ամփոփ գեկուցումից հասկացուեց, որ Խորհրդային կառավարութիւնը պարզապէս ուզում է Միջևորդի դեր կատարել մեր եւ տաճիկների միջեւ բարի դրացիական յարաբերութիւններ ստեղծելու համար, պայմանով, անշուշտ, որ մենք ձեռք քաշենք Ղաշնակիցներից եւ ամբողջապէս Մոսկուայի իրաւասութեանը յանձնենք մեր դատի լուծումը, **ՂՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՎ ԱՅՆ՝ ՕԳՈՍՏՈՍ 10-ին Սեւրում ԳՈՒՄԱՐՈՒԵԼԻՔ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻՑ**»:

Համբարձում Տերտերյանը շարունակում է, որ «Վերոհիշյալ խնդիրների վերաբերմամբ երեւանում բնաւ խօսք չէր եղել, եւ մենք նախապատրաստուած չէինք շեշտակի դրուած հարցերին որոշ պատասխաններ տալու: Մենք լիազօրուած էինք միայն՝ «Մոսկուային ընդունելի դարձնել տաճկահայ հողամասերի կցումը Հայաստանին».

Տաճկահայաստանի անկախութեան եւ նրա սահմանների վերաբերմամբ Սեւրի մէջ հետագային կայանալիք որոշումներից հրաժարուելու մասին խօսք չէր եղել եւ 1920 թ. պայմաններում չէր էլ կարող լինել: Բացի այդ, մեզանից պահանջուում էր նաեւ որոշ երաշխիքներ տալ, որ Հայաստանի կառավարութիւնը թիկունքից պիտի չհարուածէր բուլշեիկների ղաշնակից տաճիկներին:

Ի՞նչ երաշխիքներ: Անշուշտ, իրական երաշխիքներ եւ ո՛չ թէ թղթի:

Խնդիրը առաջադրուած էր պարզ ու շեշտակի: Մեզանից պահանջում էին ճշդել Հայաստանի կառավարութեան դիրքը ու վերաբերմունքը Խորհրդային Ռուսաստանի եւ Տաճկաստանի հանդէպ:

Ճրագիրը պարզ էր, տաճիկների նպատակն էր՝ Ռուսաստանի միջոցով մեր կառավարութեան վրայ ճնշում գործ դնել, որպէսզի մենք ձեռք քաշէինք յարթական Ղաշնակիցների օժանդակութիւնից ու Սեւրի դաշնագրից»:

Բանակցությունների առաջին իսկ օրը պարզվում է, որ Հայաստանի և Ռուսաստանի հետապնդած նպատակները ոչ միայն իրարից զանազանվում էին, այլև տրամագծորեն իրար հակառակ էին: Այդուհանդերձ, բանակցությունները չվիժեցնելու նպատակով հայ պատվիրակները պնդում են Արևմտյան Հայաստանն իրենց հանձնելու առաջարկի վրա: Չիչերինն առարկում է, ասելով. որ այնտեղ հայ բնակչությունն այլևս չկա: Ընդհանուր համաձայնությամբ, մեկ շաբաթով միստը հետաձգվում է, որպէսզի Շանթի խումբը վիճակագրական տվյալներ պատրաստի Արևմտյան Հայաստանի և արևմտահայության վերաբերյալ:

Շանթի պատվիրակությունը մոսկվաբնակ հայ մտավորականության օգնությամբ լարված աշխատանք էր ծավալել՝ պահանջված փաստաթուղթն արագ պատրաստելու նպատակով: Օգտագործում էին բոլոր հնարավորությունները: **Համբարձում Տերտերյանը**, բարձրաձայնելով, որ ինքը ծանոթ է **Ալեքսանդր Մյասնիկյանի** հետ, փորձեց դիմել նրա օգնությանը: Հայ զորավարն այդ օրերին կռվում էր լեհերի դեմ: Եվ հանկարծ շաբաթվա վերջին Մյասնիկյանը Մոսկվա գալով ընդունեց

¹ **Պարրիէ Լազեան**, նշված աշխատությունը, էջ 232-233: Տե՛ս նաև **Համբարձում Տերտերյան**, Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները, **Լևոն Շանթի** պատվիրակություն, «Հայրենիք» ամսագիր, 1954, N 1, էջ 8:

3. Տերտերյանին, հանգամանալից գրույց ունեցավ նրա հետ և խոստացավ իր օգնությունը: Ցավոք, Ա. Մյասնիկյանը շատ շուտով վերադարձավ լեհական ճակատ և այլևս հայտնի չէ, թե նա օգնե՞լ է Շանթի պատվիրակությանը, թե՞ ոչ:

1920 թ. հունիսի 16-ին կայացավ ռուս-հայ բանակցությունների երկրորդ փուլը, որին արդեն մասնակցում էին պատվիրակության բոլոր անդամները, այսինքն՝ կազմը լրիվ էր: Երկրորդ հավաքի մասին Համբարձում Տերտերյանը հիշում է. «Տաճկահայաստանի մասին մեր տեղեկագիրը ներկայացնելուց մօտաւորապես մի շաբաթ յետոյ, Յունիսի կեսերին, մեզ նորից հրաւիրեցին տեսակցութեան: Այս տեսակցութիւնը անելի արդիւնաւետ եղաւ: Մենք ընդառաջեցինք Սովետական կառավարութեան ՄԻՋՆՈՐԴԻ դեր կատարելու ցանկութեանը՝ Հայաստանի կառավարութեան եւ Մուստաֆա Քեմալի միջեւ: Չիչերինը Խորհրդային Ռուսաստանի անունից խոստացաւ հայերին բաւարարել՝ Տաճկահայաստանի որոշ հողամասերը միացնելով Հայաստանին եւ նրան ապահովելով ելք դէպի Սեւ ծով:

Ազերբեջանի հետ եւս մեր սահմանների խնդիրը որոշուեց մօտաւորապես կարգադրել հետեւյալ ձեւով. - Նախիջեւանի շրջանը եւ Չանգեզուրը անվերապահօրէն պիտի համարուէին հայկական հողամասեր, իսկ Ղարաբաղը պիտի նկատուէր վիճելի, որի իրաւական վիճակը որոշուելու էր հետագային ժողովրդական հանրաքուէով:

Բացի այդ բաւարարում էին մեր պատուիրակութեան մի շարք կարելուր առաջարկները տնտեսական ու մշակութային խնդիրների վերաբերեալ: Մոսկուայում եւ Ռուսաստանի այլ քաղաքներում կենտրոնացած հայ մշակութային վերաբերեալ գրականութիւնը յանձնուում էր Հայաստանին, թոյլատրուում էր հայ գաղթականութեան եւ ընդհանրապէս Ռուսաստանում ապրող բոլոր հայերին իրենց ամբողջ շարժական ունեցուածքով փոխադրուել Հայաստան: Մեր երկրի փոխադրական քայքայուած միջոցները մասամբ վերականգնելու նպատակով՝ Հայաստանին ծրիաբար պիտի տրամադրուէին մի քանի տասնեակ շոգեշարժեր եւ վագոններ, ինչպէս եւ պիտի տրամադրուէր բաւարար քանակութեամբ վառելիք (նավթ) ինքնարժէքով: Խորհրդային Միութիւնը յանձնառու էր լինում անվճար փոխանցել Հայաստանին նաեւ մանրահատի եւ կտոր գործելու երկու գործարան իր սարքուկարգով: Բացի այդ, որպէս օժանդակութիւն հայ ժողովրդին, Խորհրդային Միութիւնը կանխիկ պիտի վճարէր Հայաստանի կառավարութեան 2 1/2 միլիոն ռուբլի ոսկով, պիտի տրամադրէր երկրագործական գործիքներ, հացահատիկ եւ այլն:

Չիչերինը խոստացաւ շտապ ձեւակերպել բանաւոր կայացած համաձայնութիւնը եւ ռուս-հայկական դաշնագրի բնագիրը մի երկու օրից ներկայացնել ստորագրութեան: Կայացած համաձայնութեան մասին անմիջապէս տեղեկացրինք երեւան եւ սկսեցինք պատրաստութիւն տեսնել մեկնելու համար: Անցաւ երկու-երեք օր: Բայց դաշնագրի ստորագրութիւնը ձգձգուում էր՝ մեզ համար անյայտ պատճառներով: Պարզ էր, որ կայացած համաձայնութիւնը անակնկալ եւ անախորժ արգելքներ էր հանդիպել թանձր վարագոյրի ետեւում»¹:

Ոգևորված պատվիրակության հետ վարած բանակցությունների հաջողություններով, Գ. Վ. Չիչերինը 1920 թ. հունիսի 17-ին (այսինքն՝ հանդիպումից մեկ օր անց) համառուսաստանյան Կենտկոմի ընդլայնված նիստում կարդացած իր զեկուցման մեջ հայտնում է. «Հայաստանում կառավարությունը բուրժուական է, բայց չնայած դրան Հայաստանում ևս լայն մասսաների ճնշումը հասցրել է այն բանին, որ կառավարությունը համաձայնել է մեզ հետ հաշտվել, համաձայնել է Անտանտի կառավարությունների համեմատությամբ մեզ հետ հաստատել ավելի սերտ բարեկամա-

կան հարաբերություններ: Հայաստանում ևս մենք նպատակ ենք դնում կոմունիստներին զերծ պահել հետապնդումներից, և հենց որ Հայաստանի հետ մենք հաստատենք սկսված բանակցություններով նախապատրաստվող մշտական հարաբերությունները, մեր ներկայացուցչությունը Հայաստանում կսկսի հետևել այն բանին և կմտածի այն մասին, որպեսզի Հայաստանի կոմունիստները ունենան ազատ գործունեության և ազատ ազիտացիայի հնարավորություն:

Դեռ ավելին, մենք այդ երկրներում ամենուրեք թշնամի ազգությունների տերիտորիալ գծություններում հանդես ենք գալիս որպես հաշտարարներ և միջնորդ դատավորներ, և նրանք բոլորը համաձայնել են այն բանին, որպեսզի մեր զորքերը գրավեն վիճարկելի տերիտորիաները, և որպեսզի խառն հանձնաժողովները մեր նախագահությամբ լուծեն վիճարկելի տերիտորիաների հարցերը: Նրանք բոլորը գիտեն, որ Սովետական Ռուսաստանը հանդիսանում է բոլոր փոքր ազգությունների անշահախնդիր բարեկամը, որ յուրաքանչյուր ազգություն հարձակումների դեմ, նրա ազգային գոյության սպառնալիքների դեմ միայն ի դեմս Սովետական Ռուսաստանի կարող է գտնել պաշտպանություն և հովանավորություն: Եվ մենք այդ նույն դերը կխաղանք Հայաստանի և Թուրքիայի միջև, ճիշտ այնտեղ, որտեղ սերունդների կյանքի ընթացքում տեղի է ունեցել մշտական կոտորած, ճիշտ այնտեղ, որտեղ լուկ Սովետական Ռուսաստանն է ի վիճակի իր հեղինակության շնորհիվ, և՛ այս, և՛ մյուս ազգի ժողովրդական մասսաների վրա ունեցած իր ազդեցության շնորհիվ թե՛ մեկ, թե՛ մյուս կողմին հետ պահել ազգային կոտորածից, մյուս ազգին բնաջնջելու ձգտումից:

Մենք կապեր ենք հաստատում թուրքական կառավարության հետ, որը Փոքր Ասիայում Անտանտի գիշատիչ կառավարությունների դեմ պայքարում է իր գոյությունը պահպանելու համար: Մենք այդ կառավարությանը դիմել ենք մի նոտայով, որն արդեն հրապարակված է: Մենք մտադրվել էինք մոտ ապագայում Փոքր Ասիա ուղարկել մեր ներկայացուցչությունը: **Սոսկվայում է գտնվում հայտնի թուրքական գործիչ Խալիլ փաշան, որը ներկայացնում է Փոքր Ասիայի թուրքական հեղափոխական կառավարությունը: Մենք գիտենք՝ հենց այն պատճառով, որ թուրք ժողովուրդը դարձել է Անտանտի գիշատչության զոհը, հենց այդ պատճառով էլ նա Սովետական Ռուսաստանին դիտում է որպես միակ բարեկամի, որը լիովին անշահախնդիր է:** Բայց մենք Թուրքիայի հետ բարեկամական հարաբերություններ ենք հաստատում սոսկ այն պայմանով, որպեսզի Թուրքիայի և դրացի ժողովուրդների միջև, ինչպիսին է հայ ժողովուրդը, իրականացվի փոխադարձ սահմանազատում, որպեսզի դադարեն փոխադարձ կոտորածները: Այնտեղ ևս մենք հանդես ենք գալիս որպես հաշտարարներ, և Թուրքիան, նաև Հայաստանը, արդեն համաձայնվում է, որպեսզի մենք լինենք միջնորդներ, որպեսզի մեր ազդեցության տակ թուրք և հայ ժողովուրդների միջև վերացվեն ցայժմ անելանելի հակասությունները, որոնք այդքան երկար ժամանակ թունավորում էին նրանց գոյությունը:

Այսպիսով, Արևելքում մենք հետզհետե անմիջական կապ ենք հաստատում այն ժողովուրդների հետ, որոնք պայքարում են կապիտալի ճնշումից ազատվելու համար»¹:

1920 թ. հունիսի 19-ին Օրջոնիկիձեն Չիչերինին հեռագրեց. «Ադրբեջանը հավակնություն ունի Ղարաբաղի, Չանգեզուրի, Նախիջևանի և Շարուր-Ղարալազյազի գավառների նկատմամբ: Ղարաբաղում և Չանգեզուրում հռչակվել է խորհրդային իշխանություն, և հիշյալ տարածքներն իրենք համարում են Ադրբեջանի Խորհրդային Հան-

¹ «Հայրենիք» ամսագիր, 1954, N 1, հունվար, էջ 14-15:

¹ ДВП СССР, т. 2, стр. 657-658.

րապետության մաս: Նախիջևանն արդեն մի քանի ամիս է, ինչ գտնվում է ապստամբ մուսուլմանների ձեռքում: Շարուր-Ղարալագյազի գավառի մասին ես տվյալներ չունեմ: Ադրբեջանն առանց Ջանգեզուրի և Ղարաբաղի ոչ մի կերպ յուր գնալ չի կարող: Ընդհանուր առմամբ, իմ կարծիքով, անհրաժեշտ է Մոսկվա հրավիրել Ադրբեջանի ներկայացուցիչներին և նրանց հետ լուծել Ադրբեջանի և Հայաստանի հետ առնչվող բոլոր հարցերը: Դա պետք է անել մինչև Հայաստանի հետ պայմանագրի կնքումը»¹:

Պայմանագրի ստորագրումը կարծես թե ոչ շաբաթների, այլև օրերի և ժամերի հարց էր: Սակայն հանկարծ ամեն ինչը սառում է և սկսվում է **անորոշության շրջան**: Հ. Տերտերյանն ու Լևոն Շանթը, անտեղյակ անդրկուլիսյան բանակցություններից, այդ կասկածյալ լռության պատճառը որոնում են Բաքվում, որտեղ այդ ժամանակ ապաստան էին գտել **Անաստաս Միկոյանը, Ավիսն ու Սարգիս Կասյանը**: Հանրապետության ղեկավարությունն այն կարծիքին էր, որ բուլշևիկները չափազանց դժգոհ մնալով մայիսյան ապստամբության ժամանակ գործադրված դաժանություններից, պատժում են ՀՀ Դաշնակցության կուսակցության վարիչներին: Թերևս դրա մեջ ճշմարտության հատիկներ կային, սակայն դրանք չէին միակ ու հիմնական պատճառները:

Սև ամպերը Հայաստանի երկնակամար էին թափանցում «եղբայրական Ադրբեջանից» և քենալական թուրքիայից, որոնց դիվանագիտական էմիսարները վխտում էին Մոսկվայի բարձրագույն ատյաններում, ընդհուպ մինչև Քաղբյուրո և Լենին:

Թուրքիայի հետ այդ օրերին բանակցությունները շարունակվում էին, որի ընթացքում և՛ Վ. Ի. Լենինը, և՛ հատկապես Ի. Վ. Ստալինը որոշակիորեն զգում էին, որ թուրքական պատվիրակությունը դժգոհ էր մնացել Գ. Վ. Չիչերինի՝ Հայաստանին ցուցաբերած վարքագծից: Նրանք արտագործողկոմի նուղակի ճնշում էին, որպեսզի սրբագրեր իր պահվածքը Շանթի պատվիրակության նկատմամբ: Եվ եղավ այդ: Գ. Չիչերինը հատուկ առաջարկով դիմեց հայ պատվիրակությանը, պահանջելով **Ղարաբաղը զիջել Ադրբեջանին, Ջանգեզուրը վիճելի համարել, դրանց փոխարեն ստանալ Նախիջևանը**:

Դեպքերի զարգացումը, սակայն, ավելի առաջ վազեց, քան կընթանար դիվանագիտական փաստաթղթերի ձևակերպումը: Շանթի պատվիրակները Մոսկվայում իմացան, որ խորհրդային XI Կարմիր բանակը Ջանգեզուրի վրայով մտել է Նախիջևան, «որպեսզի թուրքերին (ազերիներին - Հ. Ղ.) պաշտպանի Հայաստանի Հանրապետության բանակի հարձակումներից»²:

1920 թ. հուլիսի սկզբներին «մեզ նորից հրավիրեցին արտաքին գործոց կոմիսարիատ, - գրում է Համբարձում Տերտերյանը, - որտեղ Չիչերինը Կարախանի ներկայությամբ հայտնեց մեզ, որ խորհրդային կառավարութունը նպատակահարմար է գտնում բանակցութունները փոխադրել Երեւան եւ այդ իմաստով առաջարկութուն է արուած Հայաստանի կառավարութան:

Երեւանում բանակցութուններ վարելու համար, խորհրդային կառավարութունը նշանակել էր իր լիազօր ներկայացուցիչը՝ յանձինս Լեզրանի, որին յանձնարարուած էր տեղումը ծանօթանալ Ջանգեզուրի բնակչութեան ցանկութիւնների հետ եւ ըստ այնմ կարգադրել Ջանգեզուրի խնդիրը: Ինչ վերաբերում էր միւս երկու վիճելի շրջաններից՝ Ղարաբաղին ու Նախիջևանին, խորհրդային կառավարութեան տեսակէտը մնում էր նոյնը, ինչ որ մեզ արդէն յայտնել էին, այն է՝ Նախիջևանի շրջանը Հա-

¹ «*Насоранъ Карабахъ в 1918-1923 гг.*», с. 505-506. Տե՛ս նաև *Տիգրան Սահակյան*, նշված աշխատությունը, էջ 315-316:

² *Գաբրիէ Լազեան*, նշված աշխատությունը, էջ 237-238:

յաստանին, իսկ Ղարաբաղը՝ Ազրբեջանին: «Ցանկալի կը լինէր, - անելացրեց Չիչերինը, - եթէ ձեր պատուիրակութիւնը հանդիպում ունենար Լեզրանի հետ, նախ քան նրա մեկնումը Մոսկուայից»¹:

1920 թ. օգոստոսի 6-ին Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության պատվիրակներ Ա. Ջամալյանը և Ա. Բաբայանը Բ. Լեզրանին հանձնեցին Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքվելիք պայմանագրի այն նախնական պայմանները, որոնք առաջադրում էր իրենց կառավարությունը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվելիք պայմանագրի նախնական պայմաններ էր համարում.

«1. Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչումը՝ նրա ներքին գործերին բոլորովին չմիջամտելու պայմանով:

2. Պայմանավորվող կողմերի՝ միմյանց դեմ ուղղված ռազմական ամեն կարգի գործողությունների դադարեցումը:

3. Բոլոր տիպի վերջնագրերի ու ագրեսիվ քայլերի դադարեցումը, ինչպես տեղական խորհրդային իշխանությունների ու ռազմական հրամանատարության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության զինվորական ջոկատների կողմից:

4. Խորհրդային զորքերի ետ քաշելը նրանց կողմից զբաղեցված շրջաններից և հայկական Ղարաբաղում ու Իջևանի գավառում status quo ante վիճակին վերադարձը:

5. Հայկական Ղարաբաղի սահմաններում և Ելիզավետպոլի գավառում զորամասեր չմտցնելը:

6. Հայաստանի սահմանների մոտ խորհրդային զորքերի կենտրոնացման դադարեցումը:

7. Իջևանի գավառում բանտարկված պաշտոնական անձանց ազատումը և նրանց անկաշկանդ վերադարձը Հայաստան...»²:

Խորհրդային Ռուսաստանը ևս իր նախնական պայմաններն էր առաջադրել: Դեռևս մեկ ամիս առաջ, հուլիսի 6-ին, արդեն մեզ հայտնի Լուկը Թիֆլիսից իր կառավարությանը տեղյակ էր պահել, որ Ռուսաստանը Հայաստանի հետ պայմանագիր կնքելու նախնական պայման էր համարում **Ղարաբաղի, Ջանգեզուրի, Շարուր-Ղարալագյազի և Նախիջևանի տարածքները «Ռուսաստանի խորհրդային զորքերի կողմից ժամանակավորապես օկուպացնելը»**, մինչև որոշվի Ադրբեջանի և Հայաստանի միջև սահմանների հարցը³:

Ըստ օգոստոսի 10-ի համաձայնագրի՝ դադարեցվում էին ռազմական բոլոր տեսակի գործողությունները Ռուսաստանի և Հայաստանի միջև: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ հայկական զորքերը զբաղեցնելու էին Շահթախթից մինչև Բազարչայի արևմուտք ընկած սահմանագիծը: Ռուսական զորքերը ժամանակավորապես օկուպացնելու էին Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի վիճելի տարածքները: Ընդ որում, վերապահություն էր արվում, որ այդ տարածքների պատկանելիության հարցը լուծվելու էր Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվելիք պայմանագրով: Պայմանավորվող կողմերը պարտավորվեցին ձեռնպահ մնալ վիճելի տարածքներում և սահմանային գոտում զորքեր կուտակելուց: Շահթախթի-Ջուլֆա երկաթուղին թողնվեց Հայաստանի տնօրինությանը, վերապահությամբ, որ այն չէր օգտագործվելու ռազմական նպատակներով: Ռուսաստանը դեռևս չէր հայ-

¹ *Գաբրիէ Լազեան*, նշված աշխատությունը, էջ 237-238:

² *АВПРИ*, фонд 148, опись 4, папка 5, дело 43, лл. 2-3.

³ *Գալուստ Գալոյան*, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 252-254:

տարարում, որ դե-յուրե ճանաչում է Հայաստանի անկախությունը: Օգոստոսի 10-ի համաձայնագրի կնքումը, սակայն, ժամանակավոր պարզություն մտցրեց Հայաստանի և Ռուսաստանի հարաբերություններում: Այդ նույն օրը Լ. Շանթի ղեկավարած պատվիրակությունը թողեց Մոսկվան¹:

Հայաստանի Հանրապետության և ՌՍՖՍՀ-ի միջև կնքվելիք **բուև** (և ոչ թե նախնական համաձայնագրի - Հ. Ղ.) **պայմանագրի** տեքստը մշակելու, հոդվածները համալրելով՝ խմբագրելու աշխատանքները շարունակվեցին Երևանում՝ 1920 թ. հոկտեմբերի 13-ին և ավարտվեցին նույն ամսվա 28-ին:

Ընթերցողի մոտ տարակարծություն չթողնելու մտահոգությամբ մեջբերենք պայմանագրի ամբողջական տեքստը, առանց ստորակետի փոփոխության²:

**ՌՌՍՖՍՀ-ԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵՂԵՐԱՏԻՎ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ ՈՐՈՇՄԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Թարգմանություն ռուսերենից
28 հոկտեմբերի, 1920 թ.

ՌՍՖՍՀ-ի կառավարության լիազոր Բորիս Վասիլևիչ Լեգրանը և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորներ Լևոն Շանթը, Համբարձում Տերտերյանը և Լևոն Ջարաֆյանը 1920 թվականի հոկտեմբերի 28-ին իրենց լիազորագրերը փոխանակելով և դրանք գտնելով պատշաճ ու սահմանված ձևի, համաձայնության եկան հետևյալի շուրջ.

1. Մեկ կողմից ՌՍՖՍՀ-ի կառավարությունը և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստանձնում են սույն արձանագրությանը առդրվող հաշտության պայմանագրի նախագիծը և նրան վերաբերող բոլոր լրացումներն ստորագրելու պարտավորություն, պայմանով՝

1) Որ ՌՍՖՍՀ-ի և Ադրբեջանի ՍՍՀ-ի կառավարությունները ճանաչում են վիճարկելի մարզերի - Նախիջևանի և Ջանգեզուրի գավառների - տերիտորիաների նկատմամբ Հայաստանի Հանրապետության անսասան իրավունքը և այդ գավառների սահմաններից դուրս կբերեն այն բոլոր զորամասերը, որոնք գտնվում են ՌՍՖՍՀ-ի և ԱՍՍՀ-ի հրամանատարության ենթակայության տակ:

2) Որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իրեն հերթին, անվերապահորեն կիրառարվի որևէ պահանջներից այսպես կոչված Ղարաբաղի մարզի նկատմամբ: Բացառությամբ այն անկյունի, որն առաջացնում են Նոր Բայազետի գավառի արևելյան սահմանագիծը և Շարուր-Ղարալագյազի գավառի արևելյան սահմանագծի և Ջանգեզուրի գավառի հյուսիսային սահմանագծի մի մասը՝ Գիկալդաղ սարից դեպի Չիչաքլի սարն ընթացող պայմանական գծով (քարտեզի մասշտաբը՝ 1 մատնաչափում 10 վերստ):

¹ «Ժողովուրդ», 14-ը օգոստոսի 1920 թ.:

² «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», Երևան, 1972, էջ 457-458:

3) Որ ՌՍՖՍՀ-ն ուշադրության առնելով Հայաստանի աշխատավոր ժողովրդի աղետալի դրությունը, որպես անվերադարձ փոխատվություն տալիս է ոսկով երկու և կես միլիոն ռուբլի:

II. Հայաստանի Հանրապետությունը, ելնելով Թուրքական Հայաստանի մարզերում վիճարկելի տերիտորիալ հարցերը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության հետ բարեկամաբար լուծելու դիտավորություններից, պատրաստ է այդ հարցերի լուծման գործում ընդունել ՌՍՖՍՀ-ի կառավարության օժանդակությունն այն բանից հետո, երբ՝

1) Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունն իր զորքերը հետ կքաշի մինչև 1914 թ. ռուս-թուրքական նախկին սահմանագիծը:

2) Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը կիրառարվի Բրեստ-Լիտովսկի պայմանագրից և Բաթումի կոնվենցիայից:

3) Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունն անվերապահորեն ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունն այն սահմաններում, որոնք որոշված են ՌՍՖՍՀ-ի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված հաշտության պայմանագրով:

Վերոնշյալ պայմանների կատարումից հետո, ՌՍՖՍՀ-ի բարեկամական օժանդակությամբ, լրացուցիչ կմշակվեն վիճարկելի տերիտորիալ հարցերի խաղաղ լուծման հիմունքները:

Ի վավերացումն որի երկու կողմերի լիազորները սեփական ձեռքով ստորագրեցին սույն արձանագրությունը և այն հաստատեցին իրենց կնիքներով:

Բնագիրը կազմված և ստորագրված է երկու օրինակով:

ԼԵԳՐԱՆ

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ
ՀԱՄԲԱՐԶՈՒՄ ՏԵՐՏԵՐՅԱՆ
ԼԵՎՈՆ ԶԱՐԱՖՅԱՆ

Եզրափակիչ որոշման այս արձանագրությունը ստորագրելուց (հոկտեմբերի 28) հետո Բ. Լեգրանը մեկնեց Բաքու՝ ՌՍՖՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ կառավարությունների հավանությունը ստանալու նպատակով: Սակայն նոյեմբերի 4-ին Բաքվում գումարված ՌԿ(բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի կոմկուսի ԿԿ քաղբյուրոյի միացյալ միստը, որին մասնակցում էր նաև Ի. Վ. Ստալինը, մերժեց պայմանագրի նախագիծը: Պարտվելով թուրք-հայկական պատերազմում (1920-ի աշուն)՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ՌՍՖՍՀ պատվիրակության հետ շարունակվող բանակցություններում (նոյեմբերի 30-դեկտեմբերի 2) այլևս չէր կարող պնդել պայմանագրի այս նախագծի վրա:

Այսպիսի տխուր վերջավորություն ունեցավ հանձարեղ գրող, բայց ոչ երբեք դիվանագետ **Լևոն Շանթի** պատվիրակության առաքելությունը: Սակայն այն առավել ողբերգական հետք թողեց **Մոսկվայի** (1921 թ. մարտի 16) և **Կարսի** (1921 թ. հոկտեմբերի 13) պայմանագրերի պատմական ատաղծը ձևավորելու պրոցեսում:

Գլուխ իններորդ

Մովեպա-թուրքական երկրորդ կոնֆերանսը և 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը

1945 թվականի հունիսի 25-ին Հ Չոնսունը բողոք էրեանը և մեկնեց Մոսկվա: Նույն օրվա ժամը 10-ին քերթերի քրքակիցների վրած հարցերին պատասխանելիս անգլիացին ասաց. «Ես լիովին և ի սրբե համաշայն եմ որ Թուրքիայի կողմից իված մարզերը պեպք է որքան կարելի է շուր վերադարչնել Հայաստանին: Ամերիկահայերի ազգային խորհրդի հայտարարությունը, իմ կարծիքով, միանգամայն արդարացի է ու հիմնավոր: Թուրքիան դիտարկույալ կերպով չգճգում էր իր իված մարզերի վնդեսական կանոնավոր զարգացումը: Դրանց բնակչությունը մինչև այժմ էլ անհամաշայտրեն քիչ է, այն ժամանակ, երբ նրանց օրինական բնակիչները ցրված են անբողջ աշխարհում» «Թուրքիան, - այնուհերև ասաց Հ Չոնսունը, - աներեակայելի անզբությանբ բնաջնջում էր հայ բնակչությանը: Հաղթող տերություններն Առաջին համաշխարհային պատերազմից հեպո հայտարարեցին, որ արդարացիությունը պահանջում է այդ մարզերը վերադարչնել նրանց օրինական տերերին: Այն, ինչ որ գրված է այն ժամանակ, պեպք է այժմ կենսագործվի»

ՀՅՈՒԼԵՏ ՋՈՆՍՈՆ, 1945, հուլիսի 6
Երևան ժամանած բրիտանական արքեպիսկոպոս,
որին ընդունել էր Ի. Ստալինը

Ուս-թուրքական մոսկովյան առաջին անհաջող կոնֆերանսի ավարտից (VIII - 24. 1920) անցել էր վեց ամիս: Պատմության համար նշված ժամանակահատվածը մի ակնթարթ էր, սակայն լի հիշարժան այնպիսի իրադարձություններով, որոնք ոչ միայն ցնցեցին առանց այդ էլ անհանգիստ աշխարհը, այլև արմատապես փոխեցին ուժերի հարաբերությունը՝

Երեկվա սրտակից բարեկամներն այսօր դարձան հակառակորդներ. ավելին և անսպասելին՝ անցյալ օրվա թշնամիները փոքր անց վերածվեցին դաշնակիցների և զինակիցների:

Համաշխարհային պատմության բեմահարթակի վրա այդքան արագ կատարվող և կատարվելիք փոփոխություններից ճարակորեն օգուտ քաղեցին քեմալականները, որոնք իրենց ցեղասպանական-նվաճողական գործողություններն իրականացնում էին Ամտանտի դեմ պայքարի կարգախոսով, իսկ բուն Հայաստանի դեմ

պատերազմը հռչակում էին որպես «Անտանտի դաշնակից հայկական իմպերիալիզմի դեմ պայքար»։ Քեմալական հրամանատարությունը հայտարարեց, որ իր զորքերը մարտնչում են «Անտանտի գործակալ դաշնակների» դեմ հանուն «դաշնակների լծից հայ ժողովրդի ազատության»։ Ամենուրեք և ոչ առանց հաջողության տարածվում էին լուրեր այն մասին, որ քեմալականներն իբր ճիշտ ու ճիշտ **այնպիսի հեղափոխականներ են, ինչպիսիք բոլշևիկներն են**։

Խորհրդային Ռուսաստանի պաշտոնական շրջանները փառաբանում էին քեմալական շարժումը՝ չտեսնելու տալով նրա հակախորհրդայնությունն ու ծավալապաշտ նկրտումները։ Քեմալական թուրքիան դիտվում էր որպես Արևելքում սոցիալիստական հեղափոխության դրոշակակիր։ Բոլշևիկյան կուսակցության ղեկավարության համար փոքր ժողովուրդների հարց գոյություն չուներ։ Ահա թե ինչ է գրել «Իզվեստիա» թերթը 1920 թ. նոյեմբերի 22-ին¹։ «Անդրկովկասի կոմունիստական կուսակցությունը, որի համար գոյություն չունեն ազգային հարցեր որպես այդպիսիք, պետք է իրադարձությունները գնահատի համաշխարհային հեղափոխության հիմքերի ամրապնդման տեսակետից։ Ինչպես Հայաստանի դաշնակցականները, այնպես էլ Վրաստանի մենշևիկները մեզ համար այն խոչընդոտող քարակույտն են, որից հարկ է մաքրել հեղափոխության հաղթարշավը դեպի Արևելք։ Կուսակցության բոլոր ուժերը ներդրված են այդ խոչընդոտող վերացնելու գործին։ Այդ նույն նպատակն է հետապնդում նաև Խորհրդային կենտրոնական իշխանությունը»։ Բոլոր դեպքերում միամիտները հրապուրվեցին քեմալականների «հեղափոխականության» խայծով և ընկան թուրքերի թակարդը։ Քեմալականների քարոզչության հաջողությանը քիչ չնպաստեցին Հայաստանի Հեղկոմը ղեկավարող հայ բոլշևիկները, որոնք դաշնակցականների հեղինակությունն ամեն գնով գցելու իրենց ջանքերում մինչև կոկորդները խրվեցին ազգավնաս դիրքորոշման մեջ²։

Քեմալականների նկատմամբ Կրեմլի ունեցած ռոմանտիզմը ևս հարկադրեց Գ. Վ. Չիչերինին, Վ. Ուլյանովի հատուկ հանձնարարությամբ, 1920 թ դեկտեմբերի 9-ին նոտայով դիմել Թուրքիայի կառավարությանը, հայտնելով, որ ՌՍՖՍՀ-ն ուրախությամբ է ընդունում Անկարայի առաջարկը՝ Մոսկվայում ռուս-թուրքական կոնֆերանսը շարունակելու վերաբերյալ։ Սա փաստորեն լինելու էր նախկինում դադարեցված առաջին կոնֆերանսի շարունակությունը, որին, Գ. Վ. Չիչերինի կարծիքով, այս անգամ պետք է որ մասնակցեին և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի խորհրդային կառավարությունների պատվիրակները³։

Գ. Չիչերինը շարունակում էր. «Համոզված լինելով, որ չորս տերությունների մոսկովյան կոնֆերանսը կարևոր հետևանքներ կունենա եվրոպական միլիտարիզմից Արևելքի ազատագրման համար, հետևանքներ, որոնք մինչև իսկ այժմ չեն կարող գնահատվել, սովետական կառավարությունը շեշտում է այդ կոնֆերանսի շուտափույթ հրավիրման անհրաժեշտությունը։ Սովետական կառավարությունը կարգադրել է, որ ապահովված լինի թուրքական կառավարության պատգամավորների անարգել ուղևորությունը դեպի Մոսկվա։ Միաժամանակ սովետական կառավարությունը հրավեր է ուղարկում Ադրբեջանի և Հայաստանի սովետական կառավարություններին»⁴։

¹ «Известия», 22, XI, 1920, N 271(584).

² «Լրաբեր հասարակական գիտությունների», 1992 հունվար-մարտ, 1(583), էջ 30-31։ Ե. Ղ. Սարգսյան, Քեմալականների 1920-1921 թթ. արշավանքն Անդրկովկաս և 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը։

³ «Документы внешней политики СССР» (далее ДВП СССР), том III, Москва, 1958, стр. 371-372.

⁴ Նույն տեղում, էջ 372։

Ծանոթանալով Չիչերինի համաձայնագրին, Մ. Քեմալը շատ կարևորություն տալով այդ հավաքին՝ անձամբ զբաղվեց պատվիրակության կազմի ընտրության, նրանց անցնելիք ճանապարհի կանխորոշման և բանակցությունների ժամանակ ունեցած լիազորությունների չափաբաժնով։ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) կառավարությունը, կարճ ասած՝ Մուստաֆա Քեմալը, պատվիրակության կազմում մտցրեց տերության Ազգային մեծ ժողովի ժողովրդական տնտեսության ժողովրդական կոմիսար, նույն ժողովում Կասսամոնիից դեպուտատ Յուսուֆ Քեմալ բեյին, թուրքական Ազգային մեծ ժողովի լուսավորության ժողովրդական կոմիսար, նույն ժողովում Սինոպից դեպուտատ դոկտոր Ռիզա Նուրի բեյին և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի լիազոր-դեսպան, Անգորայի կողմից Ազգային մեծ ժողովի անդամ Ալի Ֆուատ (Ջեբեսոյ) փաշային, որոնք իրենց լիազորագրերը փոխանակելով՝ դրանք գտան պատշաճ և օրինական ձևի և համաձայնեցին մեկնել Մոսկվա։ (Հայ ժողովրդի երդվյալ թշնամի Բեքիր Սամի բեյն այս անգամ պատվիրակության կազմում չկար։ Նա մերթ Լոնդոնում էր, մերթ Փարիզում և պայքարում էր Սևրի պայմանագրի որոշումները չեզոքացնելու նշանաբանով)։

Մ. Քեմալն այստեղ ևս խարդախությամբ գործեց։ Թողած եվրոպական Թուրքիան, ծովային ճանապարհները, փոխադրական բազմաթիվ ու այլ միջոցները, նա ընտրեց պատվիրակներին Արևմտյան Հայաստանի տարածքով ուղարկել Կարս քաղաք, որտեղ նախնական բանակցություններ վարելուց հետո միայն կանցնեին Մոսկվա։

1920 թ. դեկտեմբերի 14-ին դուրս գալով Անկարայից (Անգորայից), թուրքական պատվիրակությունը շարժվեց Վան, Կարին գծով, ականատես եղավ Քյազիմ Կարաբեքիրի գլխավորած XV բանակային կորպուսի հորդաների ձեռքով ցեղասպանության ենթարկված վիլայեթներին, հայազրկված Հայաստանի ողբալի վիճակին։ Քեմալական «բոլշևիկները» այնպիսի բարբարոսություններ էին կատարել Արևելյան Հայաստանում, հատկապես Կարսում ու Ալեքսանդրապոլում, որ քարերն էլ էին ողբում անթաղ մեռելների փոխարեն։

Թուրքական պատվիրակությունը՝ հրժվանքով դիտելով հայերից դատարկված Հայաստանը, առանց աճապարելու, մեկ ամսում միայն հասավ Կարս քաղաք։ 1921 թ. հունվարի 15-ին Կարսի կառավարությունը շարված ասկյարները շուքով ու հանդիսավորությամբ դիմավորեցին իրենց բանազնացներին։ Այստեղ էր եկել ՌՍՖՍՀ-ի ներկայացուցիչ Բուդա Մոդիվանին, որը հանձնարարություն ուներ նախնական բանակցություններ վարելու քեմալական պատվիրակների հետ։

Ազգությամբ վրացի Բ. Մոդիվանին առաջին իսկ պահից, ոչ առանց զարմանքի, սկսեց պաշտպանել թուրքերի առաջարկները՝ շատ հեշտությամբ հրաժարվելով ոչ միայն ողջ Արևմտյան Հայաստանից, այլև Կարսի մարզից, որը դեռևս 1878 թվին էր անցել Ռուսաստանին։ Ծանոթանալով Բ. Մոդիվանու «քեմալապաշտ» վարքագծին, Բորիս Լեգրանը երևանից հեռագրում էր Ստալինին, Չիչերինին և Օրջոնիկիձեին՝ ահազանգելով, թե. «Մոդիվանու հաղորդումներից երևում է, որ նկատի ունենալով թուրքերի հրաժարումը միջնորդությունից, նա ընդհանրապես հարկավոր չի համարում թուրքերին ներկայացնել որևէ պայման Հայաստանի վերաբերյալ։ Գտնում են, որ դա սխալ է և անհրաժեշտ է Մոդիվանուն անհապաղ ցուցում տալ Հայաստանի կողմից ընդունելի պայմանների վերաբերյալ»⁵։

Դեռևս 1920 թ. նոյեմբերի 28-ին Մ. Օրջոնիկիձեին տված ռադիոհեռագրում Բ. Լեգրանն արձանագրում էր, որ «Թուրքերը ոչ միայն Հայաստանի վզին են փաթա-

⁵ ЦПА ИМЛ при ЦК КПСС, фонд 85, папка 14, дело 17, л. 19, 1920 г.

թում ծանր պայմաններ, այլև ուզում են մեզ հեռացնել և իրենց բռնում պահել նախաձեռնությունը: Դրուքունը պահանջում է արագ, որոշակի լուծումներ: Մեզ պետք են Կովկասում գործելու ինքնուրույն ծրագրեր, որոնց հետ թուրքերը ստիպված պիտի լինեն հաշվի նստել»: Լեգրանը հաղորդում էր նաև, որ Մոսկվայից «ամբողջովին գտնվում է թուրքական պլանների ազդեցության տակ»: Մոսկվայից բացահայտորեն համերաշխում էր Ք. Կարաբեքիրի այն կարծիքին, թե «**հայերը թուրքերին մեծ վնասներ են պատճառել, հետևաբար նրանց ոչ մի զիջում անելու անհրաժեշտություն չկա**»: Մեկ այլ առիթով թուրքամուլ վրացին Քյազիմ Կարաբեքիրին բնութագրում էր իբրև «անկեղծ ռուսֆիլ և անբասիր ու ազնիվ մարդ»:

Գ. Վ. Զիչերինը ոչ միայն դժգոհ էր, այլև սաստիկ գայրացած, որ ՌՍՖՍՀ-ի ներկայացուցիչը նման անմարդկային վարքագիծ էր որդեգրել: Նա Մոսկվայում կարգի հրավիրեց, որին ի պատասխան վերջինս 1920 թ. հունվարի 20-ին մյուս վրացուն՝ Օրջոնիկիձեին, նամակ է գրում՝ շեշտելով, թե «Զիչերինը գրում է իմ զիջողականության մասին... Եիշտ է, մենք պետք է հոգ տանենք Սովետական Հայաստանի մասին, բայց պակաս կարևոր չէ, որ պետք է հոգատար լինենք նաև թուրքերի նկատմամբ: **Ներկա պահին գործի այդ կողմն ավելի կարևոր է**»:

Իր դավաճանական մաշկը փրկելու և սեփական տեսակետներն անցկացնելու նպատակով Բ. Մոսկվայից փաստորեն վաճառվողի ճանապարհ էր բռնում: Իր և արտագործողի միջև ծագած անհամաձայնության մասին նա ծածուկ նամակ է գրում Թուրքիայի նորանշանակ արտաքին գործերի նախարար Ահմեդ Մուխթարին (սա փոխարինել էր Բեքիր Սամի բեյին) և կարծես թե թուրքից օգնություն է հայցում: «Չուշացավ օգնությունը»:

1921 թ. հունվարի 30-ին Ահմեդ Մուխթարը Գ. Վ. Զիչերինին ուղղեց հատուկ հուշագիր, որտեղ հայտնեց. «Շտապում են տեղյակ պահել Ձեզ, որ մեր կառավարությունը կից Ձեր ներկայացուցչի հայտարարությանն այն նամակում, որում նա պաշտոնապես ՌՍՖՍՀ-ի անունից հայտարարում է, **թե խոսք չի կարող լինել Թուրքիայի կողմից Հայաստանին տարածքային զիջումներ անելու մասին, մեզ լիովին բավարարում է**»: Այնուհետև նա հայտարարում է, թե այլևս լուրջ դժվարություններ չկան մոսկովյան բանակցությունների համար, ուստի Անկարայի պատվիրակությանը հրաման է արձակված շտապ մեկնել Մոսկվա:

1921 թ. հունվարի 31-ին Կարսից դուրս գալով, Ք. Կարաբեքիրի էմիսարներով շրջապատված, թուրքական պատվիրակությունը կրիայի քայլերով բռնեց Ռուսաստանի մայրաքաղաքի ճանապարհը: Նա Թիֆլիս հասավ փետրվարի 2-ին, որտեղ **տասը օր** դեգերելով, ողջագուրվեց վրաց մեմշևիկների հետ, նրանց խոստումներ տվեց, փոխարենը երաշխիքներ վերցրեց և գոհ ու շնորհակալ (վրաց հյուրասիրությունից) շարժվեց դեպի Ապշերոնյան թերակղզին:

Ազերիների մայրաքաղաքը մեծ ոգևորությամբ ընդունեց «ավագ եղբայրներին», ընդունեց հաղթարշավն ազդարարող ծնծողաների տակ, համոզված լինելով, որ մոսկովյան ֆորումը և՛ **Ղարաբաղը**, և՛ հատկապես **Նախիջևանը** կհանձնի իրենց: Եվ վերջապես, ծանծրանալով իսլամապաշտ «եղբայրների ծափող-ջույններից», ի վերջո, գործի լծվելու ցանկությունից դրդված՝ փետրվարի 19-ին

¹ Մ. Վ. Արզումանյան, Ղարավոր գոյամարտ, Երևան, 1989, էջ 551:

² Նույն տեղում:

³ ЦПА ИМЛ при ЦК КПСС, фонд 85, дело 106, л. 1.

⁴ "Документы внешней политики СССР", том III, стр 469. Տե՛ս նաև Մ. Վ. Արզումանյանի նշված աշխատությունը, էջ 552:

Խարկովի վրայով նրանք ժամանեցին Մոսկվա: Քեմալականները շատ հանգիստ էին և դեռևս աշխատանքը չսկսած, կարծում էին, թե հաղթանակն իրենցն է լինելու:

Թուրքերի փոխարեն անհանգիստ ու մտազբաղ էին ռուսները՝ **Քաղբյուրոն ու արտագործողկոմը**: Մոսկվան ևս առանձնացրեց կոնֆերանսի իր օրինավոր պատվիրակությունը: Ռուսական պատվիրակության կազմն այս անգամ փոքրաթիվ էր: Նրա կազմում էին արտագործողկոմ **Գ. Վ. Զիչերինը** և համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ **Ջելալ-Էդդին Կորխմազովը** (կրոնով իսլամապաշտ, կողմնորոշումով թուրքապաշտ):

Անսալով թուրքերի բացահայտ բողոքին և Ստալինի ընդհատակյա դժգոհությանը, իբրև հայի, Լևոն (Լև) Կարախանին հանել էին պատվիրակության կազմից: Փոխարենը թուրքերը դեմ չէին եղել, որ դիտորդի կարգավիճակով, նույնիսկ ելույթ ունենալու իրավունքով կոնֆերանսին մասնակցեն «**քրիստոնյա թուրքեր**» **Ի. Ստալինը, Լ. Դ. Տրոցկին և Ա. Շախբախտինսկին**: Այսպիսով, ձևավորվեց երկու տերությունների պատվիրակությունների կազմը: Մնում էին մյուս երկուսը՝ Հայաստանն ու Ադրբեջանը:

Այս բնագավառում ևս խնդիրներ առաջացան: Զիչերինը վաղօրոք առաջարկել էր կոնֆերանսն անցկացնել չորս տերությունների մասնակցությամբ, այն էլ կամ Երևանում, կամ Բաքվում: Այդպես էլ Անկարան լիազորել էր իր պատվիրակությանը, այսինքն՝ նրան **արտոնել էր բանակցությունների մեջ մտնել ոչ միայն Հայաստանի և Ադրբեջանի, այլև Վրաստանի ու Դաղստանի կառավարությունների հետ**:

Մոսկվայում նրանք մտափոխվեցին: Ալի Ֆուատ Ջեբեսոյը գիշերային երթերի, ներքին հանդիպումների ժամանակ համոզվելով, որ իրենց պաշտպանում են Վ. Ի. Լենինը, Ի. Վ. Ստալինը, Լ. Դ. Տրոցկին, Ռադեկը, **որոշեց հերթական անգամ ստել**: Նա հայտարարեց, թե ինքն իր կառավարությունից լիազորություններ չունի ՌՍՖՍՀ-ից բացի այլ հանրապետությունների պատվիրակությունների հետ հանդիպելու: Այդ խնդիրը ծածկագրով համաձայնեցրեցին նաև Անկարայի, ասել է թե **Ահմեդ Մուխթարի**, ընդհուպ մինչև **Ս. Քեմալի** հետ:

Ճշմարիտն ասած, թուրքերի առաջարկը ռուսների սրտովն էր, քանզի 1921 թ. փետրվարի 18-ին Հայաստանում ապստամբություն էր բարձրացվել: Սիմեոն Վրացյանի գլխավորությամբ ստեղծվել էր «**փրկության կոմիտե**», բոլշևիկները Երևանը հանձնել էին Հայ Բեղափոխական Դաշնակցության կուսակցությանը: Դեռևս արևելքում, Խորհրդային Հայաստանի արտագործնախարար Ալեքսանդր Բեկզադյանի լիազորությունները «փրկության կոմիտեն» չէր ճանաչում և նույնիսկ Երևանից Մոսկվա հեռագրվեց և այդ մասին հայտնվեց Գ. Վ. Զիչերինին:

Ս. Վրացյանի հեռագիրը փաստորեն Գ. Վ. Զիչերինին հանեց կոնֆլիկտային վիճակից: Նա մերժեց «փրկության կոմիտեի» ներկայացուցչի մասնակցությունը Մոսկվայի կոնֆերանսին, և հայկական **բազմաձյուղ խնդիրները քննում էին Ռուսաստանի մայրաքաղաքում**՝ առանց Հայաստանի որևէ ներկայացուցչի մասնակցության: **Դրանից թև առած թուրք, վրացի, ռուս և հրեա գործիչները** վերաձևեցին Հայաստանի քարտեզը այնպես, ինչպես հնարավոր էր, այնպես, ինչպես կարող էին:

Հայաստանը համաշխարհային հեղափոխության զոհասեղանին ողջակիզելու քաղաքականությունը սկզբնավորվել էր Վ. Ի. Լենինով և աստիճանաբար արմատավորվում էր Քաղբյուրոյի անդամներից մեծ մասի ուղեղներում: Համարձակ այս եզրահանգումը հաստատում են **Ասքանազ Մուսվաթյանն ու Ալեքսանդր Բեկզադյանը**: Նրանց միջև կայացած հեռախոսազրույցի համաձայն, երբ 1920 թ. դեկտեմբերի 13-ին հայ կոմունիստները, **Սահակ Տեր-Պարրիելյանի** գլխավորությամբ, եղան

Մոսկվայում, ընդունելություն գտան Վ. Ի. Լենինի մոտ (Կրեմլում), ուր և տեղի ունեցավ ներքոհիշյալ գրույցը (բերում ենք ռուսերենով, որպեսզի հավաստիությունը կասկածի տակ չդրվի): Ահա այդ հաղորդումը.

**ЗАПИСЬ ТЕЛЕФОННОГО РАЗГОВОРА НАРОДНОГО КОМИССАРА ИНОСТРАННЫХ ДЕЛ АРМЯНСКОЙ ССР А. БЕКЗАДЯНА С ЧЛЕНОМ РЕВКОМА АРМЕНИИ А. МРАВЯНОМ И Г. АТАРБЕКОВЫМ
о позиции В. Ленина, И. Сталина и других советских руководителей по Армянскому вопросу
(26 декабря 1920 г., перевод с английского)**

Мравян - Атарбеков

Скажи нам, в каком состоянии находятся турецкие переговоры, что тебе надо сообщить в Москве, как обстоят дела с продовольственным снабжением, с армией, короче, обо всем.

Бекзадян

Я скажу вам обо всем через минуту. Вначале сообщите, что происходит в Москве и кто приезжает.

Мравян

Позиция Москвы не совсем ясна. Заседание Политбюро по вопросу о Закавказье, а также об Армении состоится после съезда. Я и Саак (по-видимому, речь идет о Сааке Тер-Габриэляне. - Ред.) представили доклад Крестинскому, изложив нашу точку зрения. *Мы посетили Ленина, Троцкого, Чичерина и Караханна.* Сталина не смогли увидеть, поскольку он лежит с приступом аппендицита.

Выслушав нас, Ленин сказал, что он понимает социальную сущность ангорского правительства и согласен с тем, что оно выступает против коммунизма, но он убежден, что существует брожение среди турецких крестьян и в качестве свидетельства этого привел большевистское восстание в Кони. По его мнению, если произойдет столкновение между частями Красной Армии и турецкой армией, то это плохо кончится.

На наше категорическое заверение, что это не произойдет, последовал ответ: *“Я думаю иначе”. Далее он сказал: “Поймите, товарищи, даже если это не произойдет, Россия в настоящий момент не хочет и не может воевать, особенно из-за Карса”, который, по мнению Ленина, является турецким городом.*

Когда мы указали на ужасное положение армянского народа, на опасность подрыва авторитета Коммунистической партии в глазах армянских трудящихся, мы получили следующий ответ: *“Мы временно вынуждены пожертвовать интересами армянских трудящихся ради интересов мировой революции. Эстония, Латвия и Литва разделили такую же судьбу.*

Вы должны знать, что мы даже не остановились перед разрывом с нашими латвийскими товарищами, часть из них вышли из партии. Все, что мы можем сей-

час сделать для Армении, - это дать ей продовольствие и деньги, а также разместить, насколько это возможно, такое количество войск на территории Армении, чтобы сделать Ангору более сговорчивой. Но запомните, товарищи, мы не собираемся воевать из-за Армении с кем бы то ни было, особенно с Кемалем».

Что же касается других вопросов, *то он отослал нас к Троцкому и Сталину.* Троцкий очень приветливо принял нас. Как сказал он, новый бронированный кулак готовится для Закавказья. Возможно, что весною Антанта предпримет новую интервенцию, для этой цели воспользуется Грузией. Эта угроза нас не беспокоит. Но первая задача Ревкома - укрепить Красную Армию. С этой целью он предлагает мобилизовать всех офицеров и рядовых, которые служат сейчас в Красной Армии в России, и отправить их в Армению, чтобы они могли образовать костяк армии. Он настаивает, чтобы все дашнакские офицеры были отправлены в Россию, а их место заняли русские¹.

Վ. Ի. Լենինի՝ Հայաստանի և Կարսի մասին ունեցած «ուրույն» դիրքորոշման վերաբերյալ պահպանվել են նաև այլ վկայություններ: 1920 թ. դեկտեմբերի 13-ին ծագումով դարաբաղի հայ ականավոր բուլշևիկ Սահակ Տեր-Գաբրիելյանը ևս, երբ ընդունվում է Վ. Ի. Լենինի կողմից, նրան է հաղորդում հետևյալը. 1) Հայաստանում գոհվում է 600.000 հայ զաղթական: 2) Առանց Կարսի Բաքուն վտանգի մեջ է: Տեր-Գաբրիելյանը դրանով Լենինին փորձել էր համոզել, որպեսզի վերջինս Կարսի մարզը պահեր ՉՍՄ-ի կազմում: Բայց Լենինը մնում է անդրդվելի, ինչը երևում է դեկտեմբերի 14-ին Չիչերինին Լենինի հղած գրությունից, որտեղ վերջինս Չիչերինին հանձնարարում էր հիշյալ երկու հարցերն անջատել իրարից, հայ զաղթականներին օգնել, իսկ երկրորդ հարցի (Կարսի) մասին ոչ մի բան չէր ասում: Դա նշանակում է, որ «Լենինը Տեր-Գաբրիելյանի նման չէր մտածում»... և Կարսի գիջումը թուրքիային արդեն վճռված էր²:

Վ. Ի. Լենինի և հայ կոմունիստների միջև եղած խոսակցությունը լրտեսական ցանցի միջոցով ընկել է նաև անգլիացիների ձեռքը: Բեյրութահայ պատմաբան *Ջավեն Սըրրյանը* «երեք դաշնագրեր» աշխատության էջերում, բրիտանական արխիվներից նյութեր քաղելով, գրում է. «Սովետական Ռուսիոյ կառավարութեան այս դիրքը անելի կը պարզաբանուեր Սովետական Հայաստանի պետական իշխանութիւններուն, երբ Սովետ. Հայաստանի Արտաքին Գործոց նախարար Ալ. Բեկզադեան 26 դեկտեմբեր 1920-ին հեռաձայնային խօսակցութիւն կ'ունենար Մոսկուայէն նոր վերադարձած Հայկական ՍՄ րեկավարներէն Ասքանազ Մռավեանի եւ Ազրպէյճանի մօտ հայկական դիւանագիտական ներկայացուցիչ՝ Աթաբեկովի հետ: Սոյն խօսակցութիւնը ըստ երեւոյթին լրտեսուած է Անդրկովկասի մէջ բրիտանական ներկայացուցիչ՝ Գնդապետի տեղեկալ Սթըքսի միջոցով եւ 2 փետրվար 1921-ին Լոնտոն՝ Ֆորէյն Օֆիս եւ Կ. Պոլսոյ բրիտանական բարձր գոմիսերութեան «գաղտնի» մակագրութեամբ փոխանցուած:

Խօսակցութեան ընթացքին Մռավեան կը յայտնէ թէ այցելած են Լենինի, Թրոցքի-ի, Չիչերինի եւ Գարախանի, բայց չեն կրցած տեսնել Ստալինը, որ հիւանդ էր: Լենին իրենց յայտնած է որ «Անգարայի կառավարութեան ընկերային կարեւորութիւնը կ'ընթրնէ եւ համաձայն է որ այս ոյժը կոմունիզմի թշնամի է, բայց թէ համոզուած է թէ քրքական գիւղացիութեան մօտ անհանդարտութիւն մը կայ եւ իբր փաստ կը նշէ

¹ Armenia. Political and Ethnic Boundaries. 1978-1948. Anita L. P. Burdett (ed). Archive Editions, 1998, p. 654-656.

² В. И. Ленин, Собр. соч., том 52, стр. 33.

Գոնիայի բուլժեիկեան ապստամբութիւնը: Իր կարծիքով՝ եթէ Կարմիր Բանակի մի-աւորներ թրջական բանակին հետ շփման գան, այս վերջիններուն ի վնաս պիտի ըլ-լայ»: Ապա՝ Մոսկուէն կը յայտնէ թէ մեր բոլոր յստակ եւ մեկին ժխտումներուն, թէ այս կարելի չէ ակնկալել, **Լենին կը յայտնէր թէ «ինքն այլապէս կը խորհի», աւելցնելով թէ՝ «հասկցէք ընկերներ, նոյնիսկ եթէ այս ջրլլար պարագան, այս պահուն Ռուսիան չ'ուզէր եւ չի կրնար կռուիլ, մասնաւորաբար Կարսի վրայ»:** Մոսկուէն կ'աւելցնէ թէ **Լենինը Կարսը թրջական քաղաք կը նկատէ:** Մոսկուէն կը յայտնէ թէ երբ շեշտեցինք հայ ժողովուրդի սարսափելի կացութիւնը եւ որ հայ աշ-խատաւոր դասակարգին առջեւ Կոմունիստ Կուսակցութիւնը կրնայ վարկաբեկուիլ, Լենին կը յայտնէ թէ պատրաստ է ատոր ու կ'աւելցնէ թէ ժամանակաւորապէս պար-տաւորուած ենք զոհելու հայ աշխատաւոր դասակարգերու շահերը «Յամաշխար-հային Յեղափոխութեան» շահերուն»¹:

Դիմենք մեկ այլ հեղինակի կարծիքի: 1920 թ. օգոստոսի 14-ին Սևրից չորս օր հետո Բեքիր Սամի բեյը շանտաժի գնով և Կարախանի քարտուղարութեամբ Կրեմլում ընդունվեց Վ. Ի. Լենինի կողմից: Ոմանց կարծիքով, նրանց երկարաշունչ գրույցը ցայսօր մնացել է **մտքի գաղտնարաններում:** Մինչդեռ այդպէս չէ:

Բեքիր Սամին, բարոյական մասաժի ենթարկելով համաշխարհային հեղափոխու-թյան առաջնորդին, նրան շահագրգիռ, բայց կեղծ խոստումներ տալով՝ հասավ աներևակայելի հաջողությունների: Վ. Ի. Լենինն այդ **հանդիպման ժամանակ նախ համաձայնեց**, որ Կարաբեքիրը հարձակվի Արևելյան Հայաստանի վրա (մինչ այդ Ռուսաստանը դեմ էր թուրք-հայկական պատերազմին), սակայն գրավելով երկրի մի մասը, հասնելով Սարիղամիշ, այնտեղ պետք է կանգ առներ: Այստեղ են ասել. գայ-լին թողնում են ոչխարի փարախ, մի ոչխար տալիս են ուտելու, դրանից հետո ասում են կանգ առ: Այո, ք. Կարաբեքիրը գրավեց Արևելյան Հայաստանի մեծ մասը և չորքէց երևանի դարպասներին դեմ հանդիման: Նա, բնականաբար, խախտեց պայմանա-վորվածությունը:

Այդ հանդիպման պահին Վ. Ի. Լենինը հայ ժողովրդի գլխին կախեց երկրորդ մա-հացու հարվածը: Նա թուրք բանագնացի բերանով Մուստաֆա Քեմալին խոստա-ցավ, որ ոչ միայն կպատռի Սևրի պայմանագրի արձանագրությունները, այլև թուրքերին կհանձնի Կարս քաղաքը, որն ըստ Կրեմլի առաջնորդի **«երբևէ հայկա-կան չէր եղել»:**

Այս հարցերը նորահայտ նյութերով հետազոտել է անվանի թուրքագետ, պրոֆ. Ե. Ղ. Սարգսյանը, որի շարադրանքն այստեղ գետեղելով, մենք նպատակ ենք հետապնդում ցույց տալու, թե ինչի էին ընդունակ և՛ Վ. Ի. Լենինը և՛ չարությամբ նրա կրկնօրինակը հանդիսացող Ի. Վ. Ստալինը:

Պրոֆ. Ե. Ղ. Սարգսյանը գրում է, թե. «Դեռ մինչև թուրքական զորքերի Հայաս-տան ներխուժումը, Անկարայի և Խորհրդային Ռուսաստանի կառավարությունները պայմանավորված են եղել այն բանի շուրջ, որ հարձակման անցնելու դեպքում **թուրքերը Սարիղամիշի գծից այս կողմ չանցնեն:** Այդ են վկայում Թուրքիայի ար-տաքին գործերի նախարարության քաղաքական բաժնի պետ Հիքմեթի հաղորդա-գրություններից մեկի հետևյալ տողերը. «Իրադրությունների ճնշման ներքո հար-կադրվեցինք հարձակողականի անցնել Հայաստանի դեմ, հնարավորություն չունենալով մեր առաջխաղացքը քննարկել Խորհրդային Ռուսաստանի հետ: Համա-

¹ Translations of crown-copyright records in the Public Record Office, London, appears by permission of the controller of H. M. Stationery Office, F. O. 371/6266 E 2303. Տե՛ս նաև **Ջաեմ Սուրուբան**, երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի դաշնագրեր, 1920-1921), Պէյրուք, 1979, էջ 95:

ծայն Խորհրդային Ռուսաստանի հետ մեր համատեղ որոշման, հարձակման դեպքում մենք Սարիղամիշից այն կողմ պետք է չանցնեինք»¹:

Անկարայի և Մոսկվայի միջև մման պայմանավորվածության գոյությունը հաս-տատել է նաև Ստալինը՝ Կովկասյան բյուրոյի 1920 թ. նոյեմբերի 4-ի նիստում: Նա ասել է. «Քեմալի համար հարցը դրված է այնպես, որ նա պիտի հարձակվի մինչև Սա-րիղամիշ: Մոսկվայից Քեմալին հեռագիր է ուղարկված, սակայն հայտնի չէ, թե նա ստացել է, թե ոչ»²: Այն, որ այդպիսի պայմանավորվածություն, իրոք, եղել է, հաս-տատվում է նաև թուրք զավթիչների դեմ ռազմական օժանդակություն ընձեռելու՝ Հայկական կառավարության խնդրանքին Լենինի պատասխանով. «Ռուսաստանը պատրաստ է կարգն ու անվտանգությունը պահպանելու համար զորք ուղարկել»:³ Հենց այստեղ էլ, Հայաստանի հասցեին ամենայն համակրանք հայտնելով, Լենինը չզլացավ Կարսի վերաբերմամբ հայ ժողովրդին խորհուրդ տալ՝ **«Մոռանալու իր հավակնությունները, քանի որ Կարսի մարզը երբևէ հայկական չի եղել»**⁴:

Խորհրդային Ռուսաստանի ղեկավարների մեջ կային նաև ազնիվ, տեղի ունեցող երևույթներն ու դեպքերը օբյեկտիվորեն գնահատող համաշխարհային հեղափոխու-թյան ցնորքից հեռու կանգնած մարդիկ: Այդպիսիներից էին Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը, նրա տեղակալ Լ. Կարախանը և Հայաստանում Ռու-սաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը: Նրանք ամեն կերպ ձգտում էին ցույց տալ, որ քեմալականները Հայաստանի և Վրաստանի նկատմամբ շարունակում են երիտթուրքերի զավթողական, ջարդարարական, պանթուրքական քաղաքականու-թյունը: Այդ մասին ժամանակին Բ. Լեգրանն ասել է. «Քանի դեռ թուրքերը կշարու-նակեն իրենց քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, պետք չէ նրանց ընդ-հանրապես հավատալ»:⁵ Լեգրանն այնուհետև նշել է. «Թուրքերի նվաճողական-ազ-գայնամոլական նկրտումների առկայությունը Կարս-Ալեքսանդրապոլի, իսկ գուցե և Աջարիա-Բաթումի նկատմամբ, առավել կամ նվազ անկասկածելի է»⁶:

Դեպի Հայաստան իրենց զինարշավով քեմալականները նաև նպատակ էին հետապնդում Հայաստանին ջախջախելուց հետո ռազմական միակողմանի ակտով պատռել Սևրի պայմանագիրը և դրանով իսկ ներգործել Թուրքիայի նկատմամբ Ան-տանտի երկրների քաղաքականության վրա: Անգլիական «Թայմզ» թերթը 1920 թ. դեկտեմբերի 23-ին այս կապակցությամբ գրում էր. «Մուսթաֆա Քեմալը Հայաստան ներխուժեց Կարսն ու Արդահանը բռնագրավելու համար: Նրան թվաց, որ Հայաս-տանն իր ձեռքում պահելով, կկարողանա ճնշում բանեցնել Թուրքիայի նկատմամբ Անտանտի և ԱՄՆ-ի քաղաքականության վրա»⁷:

Վերադառնանք Ի. Վ. Ստալինի՝ հայ ժողովրդի ճակատագրում խաղացած չարա-բաստիկ դերի ներկայացմանը: Այդ մեծ թեմայից առանձնացնենք միայն Մոսկվայի կոնֆերանսին վերաբերող փաստերն ու փաստաթղթերը, քանզի դրանք այնքան շատ են, որ սույն աշխատության էջերում չեն կարող տեղավորվել:

1921 թ. փետրվարի 21-ին թուրքական պատվիրակությունը հանդիպում ունեցավ Գ. Վ. Չիչերինի հետ: Ծավալվեց բանավեճ: Արարողությանը ներկա էր Լևոն Կարա-խանը, որը Ստալինի սաստերից երկյուղելով, լռելու կեցվածք էր ընդունել: Բնակա-

¹ ԳԳ ԿԱԱ, ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 255, թերթ 94:

² ИМЛ ЦПА, фонд 558, опись I, дело 1986, л. 1-2.

³ "Бюллетень" МИД РСФСР, 23.02.1921, с. 31.

⁴ АМИД СССР, фонд 32, дело 7, л. 104.

⁵ Այս փաստերը վերցրել ենք Ե. Ղ. Սարգսյանի «Քեմալականների 1920-1921 թթ. արշավանքը Անդր-կովկաս և 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը» խորագրված հոդվածից: «Բանբեր հասարակական գիտությունների», 1992, N 1(583), էջ 26:

նաբար, Ալի Ֆուատ Ջեբեսոյը հանդիպումից դժգոհ դուրս եկավ արտգործոժողովումի նստավայրից: Թուրքերն անմիջապես որոշեցին այցելել Ազգային գործերի կոմիսար «Յոզեֆ Ստալինին»:

Փետրվարի 22-ին Ի. Ստալինն ընդունեց քեմալականների պատվիրակությանը **լրիվ կազմով**: խոսակցությունն սկսվեց գիշերվա **ժամը 10-ին և տևեց մինչև առավոտ**: Թուրք «կեղծարար» **Ռ. Լ. Սալլահին** հաղորդում է, որ Ի. Ստալինը քեմալական պատվիրակությանը խոսք տվեց, թե. «Ռուսաստանը կշարունակի օգնել Թուրքիային բացահայտ, երբեմն էլ գաղտնի կերպով և հավաստիացրեց, որ բանակցությունների ժամանակ Ռուսաստանը չի բարձրացնի **Հայկական հարցը**»¹:

Սակայն Ի. Ստալինը վաղուց էր սկսել իր հակահայկական գործողությունները: Այդ կեցվածքը նրա մոտ ոչ թե էպիգոդիկ բնույթ էր կրում, այլ հայեցակարգ (կոնցեպցիա) էր, մշակված և կիրառվում էր հետևողականորեն: Դեռևս նախքան Մոսկվայի խորհրդաժողովի վերսկսելը, 1921 թ. փետրվարի 12-ին, **Ստալինը նախագուշացրել էր Լենինին** այն մասին, որ Գ. Չիչերինին թույլ չտրվի Հայկական հարցն արժարժել այնպես, ինչպես նա արել էր առաջին խորհրդա-թուրքական ծախողանքով ավարտված խորհրդաժողովում. «Ընկեր Լենին, - գրում էր նա, - ես միայն երեկ իմացա, որ Չիչերինն ինչ-որ մի ժամանակ թուրքերին պրովոկացիոն պահանջ է ուղարկել **Հայաստանի օգտին Վանը, Մուշը և Բիթլիսը՝ թուրքերի խոշոր գերակշռություն ունեցող թուրքական այդ նահանգները, Հայաստանի օգտին դատարկելու վերաբերյալ**: Իմպերիալիստական այդ պահանջը չի կարող մեր պահանջը լինել: Անհրաժեշտ է Չիչերինին արգելել ազգայնականորեն տրամադրված հայերի թելադրանքով հուշագրեր ուղարկելու թուրքերին»²: Ինչ խոսք, Ստալինի դիրքորոշումը ձեռնտու էր թուրքական պատվիրակությանը: Ա. Ֆ. Ջեբեսոյը գրել է. «Ինձ հաղորդեցին, որ մոսկովյան խորհրդաժողովին գործուն մասնակցություն է բերելու ընկեր Ստալինը»: Այնուհետև խոսելով Ստալինի հետ իր հանդիպման մասին՝ նա ավելացրել է. «Ոչ մի բան չփոխանակվեց Թուրքիայի կողմից իր հողատարածքի մի մասը Հայաստանին հանձնելու մասին»³:

1921 թ. նոյեմբերի 30-ին, երբ 11-րդ Կարմիր բանակը Իջևանի վրայով առանց որևէ դիմադրության մոտենում էր Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքին, Ի. Ստալինը, անհանգստացած այդ հաղթարշավով, ծածկագիր հեռագիր է ուղարկում Ա. Օրջոնիկիձեին և Բ. Լեգրանին: Այնտեղ սևով սպիտակի վրա գրված է. **«Կարսի համար կովել քեմալականների հետ պետք չէ**, բայց նրանց ուղղակի ամեն բան զիջելն էլ չի կարելի: Անհրաժեշտ է Հայաստանի համար քեմալականներից պոկել Ալեքսանդրապոլը, որ դառնում է սովետական»: Նա այժմ էլ տարակուսում է Հայաստան Կարմիր բանակի զորամասեր մտցնելու առթիվ, գտնելով, որ թուրքերը խորամանկորեն «մեզ անժամանակ կոնֆլիկտի մեջ կմտցնեն Անտանտի հետ և կարծակեն նրա ձեռքերը Բաթումում դեսանտ հանելու համար»: Ստալինն առաջարկում է «ամբողջովին հիմնվել սովետական ազիտացիայի վրա, հատկապես Քեմալի բանակում, մերկացնել քեմալականների երկդիմությունը, թող թուրքական կոմունիստները լայն ազիտացիա ծավալեն հանուն Թուրքիայի դաշինքի Ռուսաստանի հետ ընդդեմ Անտանտի»⁴:

¹ **Salahi R. S.**, Turkish Diplomacy 1918-1923..., p. 61. Տե՛ս նաև **Գալուստ Գալոյան**, նշված աշխատությունը, էջ 441:

² **ЦПА ИМЛ**, фонд 598, опись 1, дело 5214, л. 2.

³ **Ali Fuat Cebesoy**. Moskova Hatıraları, s. 146. Տե՛ս նաև **Ե. Ղ. Սարգսյանի** նշված աշխատությունը, էջ 30:

⁴ **ЦПА ИМЛ** **пр. ЦК КПСС**, фонд 50, папка 14, дело 17, л. 6. Տե՛ս նաև **Մ. Վ. Արզումանյան**, Դարավոր գոյամարտ, Երևան, 1989, էջ 552:

1921 թ. փետրվարի 22-ին, գիշերվա ժամերի ընթացքում, Ի. Ստալինը զրույց ունեցավ քեմալականների պատվիրակության հետ (լրիվ կազմով՝ **Յուսուֆ Քեմալ բեյ** - ղեկավար, **Ալի Ֆուատ փաշա Ջեբեսոյ** և **Ռզա Նուրի բեյ** - անդամներ): Նրանց զրույցը վերաբերում էր Հայաստանին և Հայկական հարցին: Այդ զրույցը սղագրել է Ալի Ֆուատ փաշան, հրապարակել **«Մոսկով հաթրալարի»** (Մոսկովյան հուշերը) աշխատության էջերում (թուրքերեն), որի ռուսերեն թարգմանությունը հրապարակել է **Յու. Գ. Բարսեղովը**:

Սիւս այդ սղագրության ռուսերեն բնագիրը (նույնպես առանց թարգմանության, որպեսզի շահենք ընթերցողի վստահությունը):

ЧЛЕН ДЕЛЕГАЦИИ ПРАВИТЕЛЬСТВА БНСТ АЛИ ФУАТ ДЖЕБЕСОЙ о решающей роли И. Сталина на Московской конференции и о поощрении им геноцида армян

<...> После Ленина Сталин был вторым человеком во власти. Он, возможно, с согласия Ленина, сосредоточил в своих руках все влияние и всю власть. Тот факт, что нам было официально заявлено, что Сталин будет активно участвовать в работе Московской конференции, было намеком на то, что неуместная анти-турецкая политика Комиссара иностранных дел Чичерина будет пересмотрена. <...>

Сталин и Армянская проблема

В ответ на наш вопрос, будет ли вопрос об Армении обсуждаться [на Конференции], Сталин ответил:

«Вы все сами полностью решили проблему Армении. Если все еще остается какая-то проблема, действуйте и решайте ее, но абсолютно необходимо, чтобы вы информировали нас, когда это произойдет».

... После вызвавшего у нас удивление однозначного удовлетворения, которое Сталин вселил в нас, мы покинули его.

Сталин пожаловался на жесткие ограничения, присущие поведению дипломатов; он заметил:

«Почему-то они неспособны придать обсуждению надлежащее направление с учетом требований новой идеологии и мышления. В результате в ходе наших переговоров мы были очень требовательными для того, чтобы добиться своей цели в той обстановке, которая господствовала в кабинетах Комиссариата иностранных дел. Если бы не вмешательство Сталина в этом плане, то Московская конференция продолжалась бы, по всей вероятности, гораздо дольше; либо мы не добились бы тех результатов, которых достигли»¹.

Ինչպես նախորդ էջերում հաղորդեցինք, քեմալականների պատվիրակությունը Մոսկվա մեկնելու ճանապարհին շուրջ տասը օր եղավ Բաքվում: «Փոքր եղբոր» մայ-

¹ **Ali Fuat Cebesoy**. Moskova Hatıraları (21/11/1920-2/6/1922). "Vatan" Neşriyatı. İstanbul, 1955, s. 121, 140. Տե՛ս նաև **Ю. Г. Барсегов**, Геноцид армян, ответственность Турции и обязательства мирового сообщества, том 2, часть 1, Москва, 2003, стр. 422.

րաքաղաքում, ըստ երևույթին, նրանք պայմանավորվել էին Ադրբեջանի ղեկավարության հետ, որպեսզի սրանք միջնորդեն Վ. Ի. Լենինին՝ խնդրելով զորավիզ կանգնել քեմալականների պահանջների լուծմանը:

1921 թ. փետրվարի 21-ին Նարիման Նարիմանովը Վ. Ի. Լենինին գրում է ներքոհիշյալ նամակը.

**ПИСЬМО ПРЕДСЕДАТЕЛЯ РЕВКОМА АЗЕРБАЙДЖАНА
Н. НАРИМАНОВА В. ЛЕНИНУ
с повторным предложением исключить
Армянский вопрос из переговоров
с турецкой делегацией ввиду свержения советской власти в
Армении (21 февраля 1921 г.)**

Дорогой Владимир Ильич!

Я прошу обратить серьезное внимание на доклад тов. Каминского. Вам уже известно, что советская власть в Армении свергнута. Ввиду этого я полагал бы, что Армянский вопрос в переговорах с турецкой делегацией не должен играть роли. О подробностях доложит Вам тов. Каминский. Я прошу Вас обратить внимание также [на] деятельность Особого отдела в Азербайджане. Съезд АКП резко отрицательно отнесся к деятельности Особого отдела.

Мы сейчас находимся в 4 верс[тах] от Тифлиса!

С коммун[истическим] приветом

Н. Нариманов

Пометка рукою В. Ленина: "в архив".

Այսպիսով, Վ. Ի. Լենինը, Ի. Վ. Ստալինը, նրանց ծայնակցող Լ. Դ. Տրոցկին, Կամենևը, Զինովևը, Ռադեկը, կրտսեր թուրք Նարիման Նարիմանովը, ասել է թե «լենինյան գվարդիայի» ներկայացուցիչները (բացառությամբ Չիչերինի, Լեզրանի, Կարախանի, Ս. Ս. Կիրովի), բացահայտորեն բռնել էին «հեղափոխական թուրքիայի» պաշտպանության և «իմպերիալիստական Հայաստանին» զոհելու ուղեգիծը: Այդ մասին փաստերն առատ են, ուստի բավարարվենք վերևի մեջբերումներով և **չարունակենք**, ավելացնելով նաև, որ պատմությունը երբեմն հանդես է գալիս ճշմարտացի ուղիով, երբեմն՝ ֆարսի ձևով:

1921 թ. փետրվարի 26-ին, առավոտյան ժամը 10-ին, արտգործող կոմստի շենքում (Սմոլենսկի հրապարակ N 7 տուն) բացվեց սովետա-թուրքական երկրորդ կոնֆերանսը, որը հիմնականում «լուծելու էր» Հայաստանին և հայ ժողովրդին վերաբերող ծակատագրական խնդիրներ, սակայն առանց Հայաստանի և հայ ժողովրդի գոնե ֆիզիկական մասնակցության: Կոնֆերանսականներն առաջնորդվում էին «Ուժեղների մոտ միշտ էլ թույլն է մեղավորը» թևավոր ասացվածքով:

Մոսկվայի կոնֆերանսը մեծ շուքով ու հանդիսավորությամբ բացեց ՌՍՖՍՀ-ի պատվիրակության ղեկավար, արտգործող կոմ Գեորգի Վասիլևիչ Չիչերինը:

¹ РГАСПИ. фонд 2, опись 1, дело 24504, лл. 1-2. Подлинник. Автограф.

Տասը թուփեանոց նրա բացման ճառն անփոփում էր այն իրադարձությունների հայելապատկերը (երբեմն ուղիղ, երբեմն շիվ), որոնք կատարվել էին Եվրասիայի հողի վրա վերջին հինգ տարիների ընթացքում: Ահա նրա բացման ճառը բնագրով, առանց կրճատումների...

**РЕЧЬ НАРОДНОГО КОМИССАРА ИНОСТРАННЫХ ДЕЛ РСФСР
Г. ЧИЧЕРИНА
на открытии Московской конференции по заключению
русско-турецкого договора (26 февраля 1921 г.)**

Конференции, которую я имею честь открыть, суждено создать эпоху в истории Востока и окончательно закрепить тесное и прочное единение между народами России и Турции, проникнутыми одинаковым решением защищать против всякого внешнего гнета и посягательств на право народов располагать своей судьбой и самим регулировать вопросы своего политического и социального бытия...

Тяжелые испытания приходится пережить тому и другому народу. Трудящемуся русскому народу удалось отразить внешнее нападение и победить внутренних врагов лишь ценой большого напряжения всех жизненных сил. Укрепившись в процессе беспримерных испытаний, выпавших на ее долю, Советская Россия стала естественной союзницей всех народов, борющихся за свободу, а в том числе - и турецкого народа, неразрывную дружбу с которым мы сегодня провозглашаем. Точно так же новой Турции приходится созидать свою новую мощь в неслыханной борьбе, так же, как и русскому народу, народу турецкому выпадает на долю стать одновременно героем и жертвой своих беспримерных страданий. Временами казалось, что он находится на краю пропасти и почти поглощен бездной. И только благодаря изумительному мужеству турецкого рабочего, крестьянина, отражавших на поле битвы насильников, ему открылся путь к новому будущему. В силу Севрского договора Турция утратила свою столицу, побережье Средиземного моря, две трети Малой Азии отошли в сферу влияния Франции и Италии, и даже на том небольшом клочке территории, которая осталась турецкому народу, ему приходится быть вечным рабом и данником крупного финансового капитала Западной Европы. Вторжение греческих войск должно было сломить его сопротивление. Преклоняясь перед изумительным героизмом крестьян и рабочих, приведшим к полному изменению положения, я счастлив в то же время отметить, что моральная и политическая помощь, оказанная нами Турции, нашей естественной союзнице, и установившаяся между нами связь с начала прошлого года также способствовали достижению сих результатов. Ныне, когда на очереди стоит вопрос о пересмотре Севрского договора, когда Константинополь начинает ступешиваться перед Ангорой, когда делегация Великого Национального Собрания приглашена на Лондонскую конференцию, которая, по всей вероятности, закончится отсрочкой, а не отказом, мы вполне сознательно можем заявить, что, наряду с героизмом турецкого солдата, все это является до известной степени делом наших рук.

Конференция, которую мы открываем сегодня, должна закрепить это единение, столь важное для обеих стран, и довести до благополучного конца дело, начатое нами в прошлом году. Дружба народов Востока является для нас основным условием нашей международной жизни, и точно так же дружба с нами должна быть положена Турцией в основу ее политического положения. Наша нравственная и политическая сила неотделима от нашего союза с народами Востока, борющимися за свое освобождение. Соединяющая нас дружба должна развиваться в обоюдных наших интересах, в интересах всех народов, борющихся против идущей извне тирании. Эта дружба должна найти свое выражение в формальном и окончательном договоре, объединяющем оба наши народа...

Вместе с тем, турецкий народ заявил нам в прошлом году через своих представителей, что он готов признать в проливах, в коих он является господином, установление специального режима, обеспечивающего свободу торговли и гарантирующего интересы стран, естественно в этом нуждающихся, стран, прилегающих к Черному морю.

Итак, никакие разногласия не могут нас разделить. Турецкий народ должен прежде всего быть хозяином у себя дома. Он не должен дольше оставаться рабом международного капитала, и со всей прежней системой иностранного вмешательства должно быть покончено. Россия показала при разрешении этого жизненного вопроса пример, аннулировав все свои иностранные долги, и потому мы находимся в благоприятном положении для обсуждения сего вопроса с турецким народом. При ведении открываемых переговоров мы прежде всего и с особым вниманием отнесем к интересам трудящихся масс. Они хотят через наше посредничество заключить союз, ибо они образовали новую Россию и вдохнули новую жизнь в старую Турцию. Действительно, только в трудящихся массах и только в них заключается сила и вся жизнь народов и государств. И так как эти массы ведут борьбу в Турции и России, мы можем быть уверены, что никакая сила в мире не будет в состоянии их сломить. Единственным их представителем в Турции является Великое Национальное Собрание. Они грудью защищают свою свободу. Они восстали, чтобы отразить иностранных насильников, и каковы бы ни были трудности, которые им придется еще преодолеть, только их участие в борьбе обеспечит победу. Час победы вскоре пробьет. Он приближается с каждым днем, и сегодня конференция явится новым этапом, придающим обоим народам новую силу.

В этих мыслях и с этой уверенностью объявляю Конференцию открытой¹.

¹ *АВПР*, фонд 04, опись 39, папка 232, дело 52998, лл. 25-29. Копия. Опубликовано в *МИД СССР*. "Документы внешней политики СССР", том. III, Москва, Госполитиздат, 1959, стр. 683-684.

ОТВЕТНАЯ РЕЧЬ ГЛАВЫ ТУРЕЦКОЙ ДЕЛЕГАЦИИ ЮСУФА КЕМАЛЯ на открытии Московской конференции по заключению русско-турецкого договора (26 февраля 1921 г.)

Прошу, г[осподин] Комиссар, разрешить мне выразить мои чувства на моем родном языке.

В своей речи г. Комиссар выразил похвалу турецкому рабочему народу и турецким солдатам, борющимся за независимость своей родины. Приношу ему за это бесконечную благодарность. Необходимо, однако, одновременно выразить похвалу русскому народу и Красной Армии.

Люди обеих наций гибли под буржуазным гнетом той же системы принуждения. Наши народы насильно были брошены в борьбу друг против друга во имя "восточного вопроса". Вопрос этот не могли разрешить империалисты, - и Турция сама разрешила собственный вопрос.

Турция подверглась таким притеснениям, что горький опыт научил ее надеяться только на свои собственные силы.

Севрский договор уничтожает Турцию, но он существует только в воображении тех, кто составил его, и турецкий народ никогда его не поймет. В тот момент, когда он решил бороться до конца, он видит перед собой пример другого народа, преследующего более высокий идеал, и между ними, естественно, возникает соглашение в целях совместных действий. Я убежден, что при сложившихся условиях исторический детерминизм заставил бы наши оба народа прийти к соглашению даже в том случае, если бы это противоречило желаниям правителей. Воздержусь от приведения здесь исторических фактов, но смею уверить всех трудящихся в России, крестьян, рабочих и солдат, что турецкий народ чистосердечно протягивает им свою руку.

Пусть Лондон пересматривает Севрский договор. Мы слишком хорошо знаем, в каком смысле может быть произведен этот пересмотр и какую выгоду он сулит турецкому народу. Допустимо ли, чтобы империализм отказался от своих требований?

Мы же избрали более верный путь. Географические, исторические, экономические и политические условия указали нам путь в Россию. Перед представителями новой России говорю со всей присущей турку искренностью: верьте в нас. Пусть совещаются те, кто направляет мировую политику, они бессильны изменить ход истории. И все происходящие между ними совещания не заставят нас сойти с правильного пути, на котором мы стоим.

Окинем взглядом настоящее положение: перед нами два доблестных народа, которые хотят избавиться от ига мирового капитализма. Новая Турция обладает новым источником энергии: турецкий народ начал сознавать сущность экономического господства. Он знает, что в экономической независимости кроется главный фактор жизни нации, и такая Турция несомненно сумеет вновь себе завоевать полную свободу. Как Вы только что заявили, общность интересов наших народов заставляет нас объединить наши усилия для того, чтобы придать новую

силу нашим народам и подчинять все наши начинания общности действий и стремлению [к] сотрудничеству. Между нами уже велись переговоры о заключении договора: мы твердо убеждены, что он возрастет в объеме и силе. Мы разделяем все ваши положения о совместной работе. Таким образом, существующий между нами естественный договор будет определен во всех деталях и предстанет пред всей Вселенной. Мы должны объявить не только Азии, но и народам Запада и империалистам о соглашении между московским правительством, являющимся очагом коммунизма, и Турцией, очагом стремлений к освобождению восточного мира. Это соглашение покажет всей Вселенной, что в нем кроются свобода народов и право каждого на свободное и независимое существование у себя на родине, что у нас нет никаких видов на ту или иную территорию, подобно тому, как у тех, кто заседает в Лондоне. Такое противопоставление доказывает, что мы одни лишь являемся носителями свободы народов. Обе нации борются за одинаковый и общий им идеал, и если бы договор не был заключен между ними, вина всецело падет на тех, на ком лежал долг это сделать.

Турецкая делегация, проникнутая сознанием своего долга, желает приступить к переговорам с этим сознанием в возможно близком времени прийти к удовлетворительным результатам¹.

Երկու գործողություններով չարաբաստիկ այդ «թատերախաղի» բացման արարողության ավարտից հետո, կողմերն անցան իրենց առջև դրված գործնական խնդիրների քննարկմանը, որը մեծ մասամբ արդեն ձևական բնույթ էր կրում: Ձևական էին, քանզի զույգ պատվիրակությունների առաջնորդների բացման խոսքերը «ծրագրային» էին, կազմված կոնֆերանս գալուց բավական առաջ, և բովանդակում էին այնպիսի մտքեր, որոնք բազմիցս հնչել էին և՛ Կրեմլում, և՛ Անկարայում, և՛ Վ. Ի. Լենինի, և՛ Ս. Քեմալի շուրթերից:

Ընթերցողին հիշեցնենք, որ Գ. Վ. Չիչերինը հայտարարեց, որ նոր դարազուլիս է բացվում Արևելքի ժողովուրդների պատմության մեջ: Նա պարսավեց ցարական կառավարությանը, որը «**ձգտում էր խաչ բարձրացնել Սուրբ Սոֆիայի տաճարի գլխին**», դատապարտեց Արդուլ Չամիդի վարչակարգը և գովաբանեց «հեղափոխական թուրքիան», որը Ռուսաստանի «բարեկամն ու դաշնակիցն է», և որի ժողովուրդը «**հինքը պետք է լինի իր տան տերը**»: **Չիչերինը խիստ քննադատեց Սևրի պայմանագիրը, ըստ որի թուրքիան «կորցնելու էր իր մայրաքաղաքը: Փոքր Ասիայի երկու երրորդը գտնվելու էր Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ազդեցության տակ**»:

Ձուգահեռ անցկացնելով Ռուսաստանում Յոկտեմբերյան հեղափոխության և Արևելքում ծավալված շարժումների միջև, Չիչերինը նշեց այդ շարժումների ազգային բնույթը, ընդգծելով, որ դրանց շարժիչ ուժն օտար և սեփական կապիտալի ճնշումը կրող գյուղացիությունն ու մանր արհեստավորական խավերն են: «Ես ուրախ եմ նշել, - հայտարարեց Չիչերինը, - որ թուրքիային, մեր բնական դաշնակցին, մեր կողմից ցույց տրված բարոյական և քաղաքական օգնությունը և անցյալ տարվա սկզբներից մեր միջև կապերի հաստատումը ևս նպաստեցին...» Թուրքիայի տարած հաղթանակներին: Չիչերինը հպարտությամբ էր նշում, որ այդ հաղթանակները

¹ АВРР, фонд 04, опись 39, папка 232, дело 52998, лл. 29-36. Копия. Опубликовано в МИД СССР. "Документы внешней политики СССР", том. III, Москва, Госполитиздат, 1959, стр. 685.

«թուրքական զինվորների հերոսությանը զուգընթաց... հայտնի չափով մեր ձեռքի գործն է»:

Ռուսաստանի պատվիրակության ղեկավարը հավաստիացրեց, որ Խորհրդային Ռուսաստանը հրաժարվում է Կ. Պոլսին տիրանալու ցարիզմի քաղաքականությունից, և որ «**Կ. Պոլիսը եղել է և կմնա որպես թուրքական քաղաք... Կ. Պոլիսը պետք է լինի Թուրքիայի ազգային մայրաքաղաքը: Նրան կից ծովափը նույնպես պատկանում է Թուրքիային**»²:

Իր բացման խոսքում Չիչերինը հարկ համարեց կարևորել միայն Սևծովյան նեղուցների հատուկ կարգավիճակի հարցը: Դիվանագիտական լեզվով այդ նշանակում էր, որ մյուս հարցերում թույլատրելի էին սակարկությունները:

Պատասխան խոսքով համոզեց եկավ **Յուսուֆ Քեմալ բեյը**: Նա հայտարարեց, որ «աշխարհագրական, պատմական, տնտեսական ու քաղաքական պայմանները» Թուրքիային ուղի են ցույց տվել դեպի Ռուսաստան: **Նա «թուրքերին հատուկ անկեղծությամբ» կոչ արեց՝ «հավատացեք մեզ»: Եվ հավատացին: Այդ հավատով Չիչերինը հայտարարեց, որ «Նոր Ռուսաստանի մերձավոր բարեկամ է դարձել ոչ թե Արդուլ Չամիդի հին թուրքիան, ոչ թե Բրեստ-Լիտվսկի Թուրքիան... այլ նոր, վերակառուցվող Թուրքիան**»²:

Ոգևորված Գ. Վ. Չիչերինի ճառի բովանդակությունից, թուրք «եղբայրները», «հեղափոխության զինվորներն» առաջարկեցին **երկրորդ կոնֆերանսի** որոշումների հիմքում դնել 1920 թ. օգոստոսի 24-ին մշակված, բայց չընդունված պայմանագրի նախագիծը: Ընդունվեց առանց առարկությունների, միայն առաջարկվեց այն մշակել, համալրել նոր հոդվածներով:

Կոնֆերանսի մարտի 2-ի նիստում ելույթի խոսք վերցրեց **Ալի Ֆուատ** փաշան (**Ջեբեսոյը**): Նա, չկասկածելով իր հաջողությունների վրա, «պահանջեց», այդ արդեն «պահանջեց» ճանաչել 1920 թ. հունվարի 28-ին ընդունված «Ազգային ուխտը», որի համաձայն՝ թուրքերը գտնում էին, որ **իրենց տարածքը պետք է ճանաչել այն նահանգները, նվաճված երկրներն ու երկրամասերը, որոնք դեռևս ամփոփված էին օսմանյան կայսրության կազմում 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարի ստորագրման պահին**: Ավելին, ողջ Արևմտյան Հայաստանն ու Հայկական Կիլիկիան կուլ տալուց զատ, Թուրքիան բռնազավթում էր դեռևս 1878 թվականին ազատագրված **Կարսի, Արդահանի և Բաթումի** շրջանները, որը ցավացնում էր ոչ միայն առանց այդ էլ վիրավոր հայ ժողովրդի սիրտը, այլև տրորում էր վրացիների կոշտուկները: **Ահա այստեղ էր, որ սկսվեց խայտառակ աճուրդը, վաճառաչահ առևտուրը՝ նույնպես ի հաշիվ Հայաստանի և հայ ժողովրդի**:

Մաս-մաս արված այս առաջարկներից, նրանց հաստատումից կամ մերժումից հետո թուրքական պատվիրակությունը 1921 թ. մարտի 10-ին կայացած նիստի առաջին իսկ րոպեների ժամանակ, անսպասելիորեն, նախագահող Գ. Վ. Չիչերինի վիճաբեղանի վրա դրեց Մոսկվայի պայմանագրի մի տարբերակ, որի մասին, իրենցից բացի, ոչ ոք չգիտեր:

Մեջբերենք այդ «**հակածրագրի**» («контрпроект») տեքստը, նույնպես առանց ստորակետ իսկ փոփոխելու: Ահա այն.

¹ Տե՛ս **Փալուստ Փալոյան**, նշված աշխատությունը, էջ 441:

² Նույն տեղում, էջ 442:

**ТУРЕЦКИЙ КОНТРПРОЕКТ
[Московского договора]
(февраль-март 1921 г.)**

Правительство Российской Социалистической Федеративной Советской Республики и Правительство Великого Национального Собрания Турции, разделяя принцип братства наций и права народов на самоопределение, отмечая существующую между ними солидарность в борьбе против империализма, равно как и тот факт, что всякие трудности, созданные для одного из двух народов, ухудшают положение другого, и всецело воодушевляемые желанием установить между ними постоянные сердечные взаимоотношения и неразрывную искреннюю дружбу, основанную на взаимных интересах обеих сторон, решили заключить договор о дружбе и братстве и назначили для сего...

Статья I

Каждая из Договаривающихся Сторон соглашается не признавать никаких мирных договоров или иных международных актов, к принятию которых понуждалась бы силою другая из Договаривающихся Сторон. Правительство РСФСР соглашается не признавать никаких международных актов, касающихся Турции и не признанных Национальным правительством Турции, представленным ныне ее Великим Национальным Собранием.

Под понятием Турции в настоящем договоре подразумеваются территории, включенные в Национальное турецкое соглашение от 28 января 1336 (1920) года, выработанное и провозглашенное Оттоманской палатой депутатов в Константинополе и сообщенное прессе и всем державам.

Северо-восточная граница Турции определяется: линией, которая, начинаясь у деревни Сарп, расположенной на Черном море, проходит через гору Хедис-Мта, линией водораздела горы Шавшет - горы Канни Даг, она следует затем по северной административной границе Ардаганского и Карсского санджаков по тальвегу рек Арпа-чай и Аракс до устья Нижнего Кара-су (подробное описание границы определено в приложении 1-м (А) и (Б) и на прилагаемой карте, подписанной обеими Договаривающимися сторонами).

Статья II

Турция соглашается уступить Грузии сюзеренитет над портом и городом Батумом и территорией, лежащей к северу от границы, указанной в Статье 1-й нынешнего договора, и составлявшей часть Батумского округа, при условии, что

1) население местностей, указанных в настоящей статье договора, будет пользоваться широкой автономией в административном отношении, обеспечивающей каждой общине ее культурные и религиозные права, и что населению будет предоставлена возможность установить земельный закон, соответствующий его пожеланиям.

2) Турции будет предоставлен свободный транзит всяких товаров, отправляемых в Турцию или из нее, через Батумский порт, беспошлинно, без учинения

каких-либо задержек и без обложения их какими бы то ни было сборами, с предоставлением Турции права пользования Батумским портом без взимания за то специальных сборов.

Статья III

Обе Договаривающиеся стороны согласны, что Нахичеванская область в границах, указанных в приложении 1-м (В) настоящего договора, образует территорию под покровительством Азербайджана, при условии, что Азербайджан не уступит сего протектората третьему государству.

В образующей треугольник зоне Нахичеванской территории, заключенной между тальвегом Аракса, линией горы Дагга (3829) - Вели Даг (4121) - Багарзик (6587) - Кемурлу-Даг (6930), линия границы сказанной территории, начинающаяся от Кемурлу (6930), переходящая через гору Серай Булак (807) - станцию Арарат и оканчивающаяся у скрещения Кара-Су с Араксом, будет исправлена Комиссией, состоящей из делегатов Турции, Азербайджана и Армении.

Статья IV

Денонсация прежних договоров между Россией и Турцией.
(Ст. X русского проекта)

Статья V

Отмена режима контрибуций.
(Ст. IX русского проекта)

Статья XII

Россия обязуется принять в отношении закавказских республик шаги, необходимые для признания этими республиками в договорах, которые будут заключены между ними и Турцией, статей настоящего Договора, непосредственно их касающиеся¹...

1921 թ. մարտի 10-ից սկսած Մոսկվայի կոնֆերանսի մասնակիցները, հաշվի առնելով թեր ու դեմ կարծիքները, հողված առ հողված մշակում էին կայացրած որոշումները, ապա դրանք հանձնում ստեղծված երեք հանձնաժողովների (իրավաբանական, քաղաքական և խմբագրական) ձևակերպմանը: Մարտի 15-ին ավարտվեց այդ պրոցեսը և մարտի 16-ին ստորագրվեց (կարծիքներ կան, որ պայմանագիրը **ստորագրվել է մարտի 18-ին**) Մոսկվայի սովետա-թուրքական պայմանագիրը:

Պայմանագիրը բաղկացած էր 16 հոդվածներից և 3 հավելվածից: **Նրա վերջնական տեքստը ստորագրեցին Գ. Վ. Չիչերինը, Ջ. Կորխմազովը՝ Ռուսաստանի կողմից, Յուսուֆ Քեմալ բեյը, Ռզա Նուրի բեյը, Ալի Ֆուատ փաշան (Ջեթեսոյ)՝ Թուրքիայի կողմից:**

Պայմանագրի առաջին հոդվածը որոշում էր. «Պայմանագրովորող կողմերից յուրաքանչյուրը սկզբունքորեն համաձայնվում է չճանաչել ոչ մի հաշտության պայ-

¹ **АВПРИ.** фонд 04, опись 39, папка 232, дело 52997, лл. 41-44. Подлинник. Текст на французском языке. Лл. 50-51 об. Копия.

մանագիր կամ միջազգային որևէ այլ ակտեր, եթե պայմանավորվող կողմերից մյուսին ուժով են հարկադրում ընդունել այդպիսիք: Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության կառավարությունը համաձայնվում է չճանաչել Թուրքիային վերաբերվող և այսօր Թուրքիայի Ազգային մեծ ժողովը ներկայացնող *Նրա ազգային կառավարության կողմից չճանաչված որևէ միջազգային ակտ*:

Թուրքիա հասկացության տակ սույն պայմանագրում հասկացվում են այն տերիտորիաները, որոնք մտցված են 1920 (1336) թվականի հունվարի 28-ի թուրքական Ազգային ուխտի մեջ, որը 4. Պոլսում մշակել և հռչակել է օսմանյան դեպուտատների Պալատը և հաղորդել է մամուլին և բոլոր պետություններին»¹:

Ակամայից անմեղ թվացող այս հողվածը հայ և հույն ժողովուրդների համար ամենավտանգավորն ու կործանարարն էր: Սրանով, բացի Ռուսաստանից, դեռևս ոչ մի պետության կողմից դիվանագիտորեն չճանաչված քեմալական Թուրքիան չէր ճանաչում Փարիզի խաղաղության կոնֆերանսի, Լոնդոնի զույգ համաժողովների և հատկապես Սևրի պայմանագրի (1920 թ. օգոստոսի 10-ի) որոշումները Հայաստանի և Հունաստանի վերաբերյալ ընդհանրապես:

Հայտնի է, որ Սևրի պայմանագրի 88-րդ հոդվածով սուլթանական Թուրքիան Հայաստանը ճանաչում էր իբրև *ազատ, անկախ պետություն*: 89-91-րդ հոդվածներով Սևրը Արևմտյան Հայաստանի Տրապիզոնի, Վանի, Երզրումի, Բիթլիսի վիլայեթներից ոչ միայն առանձնացնում էր տարածքը և տալիս էր Հայաստանին, այլև նրա համար, որպես դուռ, բացում էր դարպասները (Պոնտոսի վրայով) դեպի Վրաստան և այնտեղից էլ Եվրոպա:

Իննսուն հազար քառակուսի կիլոմետրանոց Արևմտյան Հայաստանը (առայժմն այդքան) միացվում էր Արևելյան Հայաստանին: Ընդհանուր Հայաստանի նոր պետության տարածքը կազմելու էր *170 հազար քառ. կմ*: 1920 թ. նոյեմբերի 22-ի որոշմամբ, ԱՄՆ-ի արեզիդենտ Վուդրո Վիլսոնը ճանաչում էր այդ պայմանները, ընդունում Հայաստանի մանդատը և խոստանում վերջապես գորավիզ կանգնել «քաղաքակիրթ, քրիստոնեապաշտ, հնամենի այդ ժողովրդին»:

Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունը, խախտելով միջազգային բոլոր նորմերը, ապօրինաբար չեղյալ էր հայտարարում համաեվրոպական, նույնիսկ համաշխարհային այնպիսի որոշումներ, որոնք ժամանակին ստորագրել էր նաև Թուրքիայի օրինավոր կառավարությունը: Եվ դժբախտությունն այն է, որ մինչև օրս էլ շարունակում են անխախտ մնալ նման մեռելածին որոշումները, ժամկետը կորցրած վիճակում՝ չեն իջնում միջազգային հարաբերությունների բեմահարթակից:

Ավելի ողբերգական էին, ցավոտ, ժողովրդին մինչև օրս էլ մեծ վիշտ պատճառող որոշումները Կարսի և Բաթումի մարզերի վերաբերյալ: Ինչպես վերևում նշեցինք, սովետական կառավարությունը ճանաչեց 1920 թ. հունվարի 28-ի այն որոշումները, որոնք ընդունվել էին Ստամբուլի մեջլիսի կողմից և երաշխավորվել ԹԱՄՄ-ի նախագահությունում: Դրանցից էին այն սահմանների հաստատումը, որոնք ընկնում էին Թուրքիայի հյուսիս-արևելքում և սահմանակից էին Սովետական Ռուսաստանին:

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», Ջ. Ս. Կիրակոսյանի առաջաբանով և խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 500 (ժողովածուի մասին տե՛ս *Հայկ Ղազարյանի* գրախոսականը, «Սովետական Հայաստան» օրաթերթ, 23-ը մարտի, 1972: «Աշխարհ» (Փարիզ), 2-ը հունիսի, 1972):

Ելնելով այդ որոշումներից, «առաջնորդվելով երկու տերությունների միջև բարեկամական հարաբերությունների հաստատվածությունից», Սովետական Ռուսաստանը համաձայնվում էր քեմալական *Թուրքիային թողնել Կարսի, Արդահանի և Արդվինի* օկրուգները, որոնք մինչև 1918 թվականը գտնվելիս էին եղել Ռուսաստանի կազմում: Մարզի ընդհանուր տարածքը կազմում էր 19,915 քառ. կմ, բնակչությունը՝ 492 հազար մարդ (սրա մեջ չէր մտնում Սուրմալուի օկրուգը, որի մասին չարաբաստիկ վերջնական որոշումը կայացվեց Կարսի կոնֆերանսում): Սրանց փոխարեն թուրքերը «մեծահոգաբար» Բաթումը թողեցին Վրաստանին¹: Անվանի թուրքագետ, պրոֆ. *Երվանդ Ղազարի Սարգսյանը*, բերելով բազմաթիվ նորահայտ փաստեր, դրանք ամփոփում է այսպես.

«1921 թ. մարտի 16-ին կնքված «բարեկամության և եղբայրության» քալանջիական հակահայկական պայմանագրի հիմամբ, Թուրքիային անցան Կարսի մարզը (որի կազմի մեջ էին մտնում Կաղզվանի, Արդահանի, Օլթիի, Կարսի օկրուգները) և Սուրմալուի գավառը: Ինչ վերաբերվում է Արևմտյան Հայաստանին, ապա նրա հարցը նույնիսկ չարժարծվեց: Ի դեպ, թուրք պատմաբանները չեն էլ թաքցրել իրենց խորը գոհունակությունը: Բիյիկլիօղլուն գրել է. «Մարտի 16-ի պայմանագրով Արդահանը, Կարսը և Արդվինը առանց հանրաքվեի անցան Թուրքիային, Բաթումի փոխարեն մենք ստացանք Սուրմալուի գավառը և Ադրբեջանի հոգատարության ներքո ստեղծվեց Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը (5,5 հազար քառ. կիլոմետր տարածքով) այն պայմանով, որ Ադրբեջանն այդ հողատարածությունը չզիջի մի երրորդ պետության»² (այսինքն՝ բուն իրավատեր Հայաստանին): Ավելին, Մոսկվայի պայմանագրի հիմամբ «Ռուսաստանը պարտավորվում է անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ նախաձեռնել անհրաժեշտ քայլեր, որպեսզի նրանք Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում պարտադիր ճանաչեն սույն պայմանագրի այն հողվածները, որոնք անմիջականորեն իրենց են վերաբերում»³:

Կարսի մարզի «վաճառքի» (այն էլ շատ էժան գնով) պատճառների մասին բազում կարծիքներ են մոզոնվել: Խորհրդային շատ պատմաբաններ, ցավալի է, որ նաև հայ վաստակաշատ պատմաբաններ (Բ. Բորյան, Աշ. Հովհաննիսյան, Գալուստ Գալոյան, Ա. Հակոբյան և այլք) կարծիքներ են հայտնել, թե ռուսները Կարսը «նվիրեցին» թուրքերին, որպեսզի դրանով պատժեն այդ պահին ապստամբ վիճակում գտնվող ՀՀ Ղազնակցության կուսակցությանը, այսինքն՝ Հայաստանում հաստատված «փրկության կոմիտեին», որի նախագահն էր հանրապետության վերջին, միայն տասը օր տևողությամբ վարչապետ *Սիմեոն Վրացյանը*: Նման վարկածը, անշուշտ, հիմքեր ունի կարծիք ձևավորելու համար, քանզի երկրի համար ճակատագրական այդ պահին ապստամբվելը ժամանակավորեպ էր, ինչպես տեսանք՝ նաև խիստ վնասաշատ: Սակայն միայն այդ չէր Կարսը թուրքերին հանձնելու պատճառը:

Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո խաչաձևվում էին հայ և վրաց ժողովուրդների շահերը Կարս-Բաթում փոխհարաբերությունների վերաբերյալ ռազմական և դիվանագիտական խաչմերուկներում: Ընդհատակից թե բացահայտ,

¹ Պայմանագրի ամբողջական տեքստը տե՛ս «Документы внешней политики СССР», том III, стр. 597-604: Բաթումի մասին որոշումը տե՛ս «Бюллетень центрального статистического управления», Москва, 1921, N 55, стр. 10.

² *Tevfik Bıyıklıoğlu*. Atatürk Anadolu'da, 1917-1921, Ankara, 1959, s. 21.

³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 16. 3. 1921:

նման խնդրի լուծման համար իրար դեմ պայքարում էին հայ և վրացի քաղաքական ու պետական այն գործիչները, որոնք ազատ մուտք ու ելք ունեին մոսկովյան Կրեմլում, Քաղբյուրոյի բաց ու փակ նիստերին: Բնականաբար, վրացիներն այս ճակատամարտում հաղթեցին:

Ի. Ստալինը, Ս. Օրջոնիկիձեն, Բ. Մոկվանին ոչ մի պահ բաց չէին թողնում թուրքերին օգնելու, հայերին վարկաբեկելու, միայն թե Բաթումը մնար Վրաստանի կազմում: Դա կարող էր լինել, եթե Կարսն այդ պահին, Սուրմալուն էլ քիչ անց հանձնեին քեմալականներին: Թուրք-վրացական առևտուրն այս բնագավառում, որը վարվում էր վարագույրի ետևում, հաջող ընթացք ստացավ սկզբում, ինչպես նաև վերջում, այսինքն՝ հաջողությունից հետո, երբ արդեն բացահայտ էր:

Համենայնդեպս, Բաթումի և Կարսի իրար հետ փոխանակման համար մղվող դիվանագիտական մրցամարտերն առավել թեժ բնույթ ստացան: Չնայած Ի. Ստալինն ու Մ. Շախախախինսկին իրենց գիշերային ընդունելություններով կաշառում էին թուրքական պատվիրակությանը, միևնույն է, Գ. Վ. Չիչերինը և նրան միայն գաղտնածածուկ հուշող Լ. Կարախանն ականջալուր էին հայ ժողովրդի դեմ հյուսված, խճճվածությամբ անգերազանցելի սարդոստայնին և ձգտում էին իրենց ուժերի ներածին չափ դիմագրավել թուրք-վրացական դիվանագիտական արշավանքին¹:

Մոսկվայի կոնֆերանսում և ընդհանրապես սովետա-թուրքական բանակցությունների ընթացքում բավական մեծ տեղ են գրավել հակամարտությունները Նախիջևանի խնդրի «անօրինական» լուծման ժամանակ: Դժվար էր կուլ տալ և մարսել մի նահանգ, որն ի սկզբանե եղել էր հայկական, հայաբնակ, որի խոստում վկաներն էին թերևս բազմաթիվ խաչքարերի անտառներն իսլամական մեջեռների ու մինարեթների շրջապատում:

Նախիջևան-Նախճավան երկրամասն անհիշելի ժամանակներից եղել է պատմական Հայաստանի անբաժան մասը: Նա փռված էր Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Նախճավան և Գողթն գավառների, մասամբ նաև Այրարատի և Սյունիքի փեշերի վրա: Քաղաքի հիմնադրման մանրամասները կապվում են Նոյ նահապետի՝ Մասիսի գազաթից իջնելու հետ:

Նախիջևան քաղաքի և հատկապես շրջակա գյուղերի բնակիչները եղել են միայն հայեր. **այն հայ էր և Հայաստան:** Միջնադարում երկրամասի կրօնավանդակի վրայով վերուվար անող թուրք, սելջուկ, արաբ, մոնղոլ, պարսիկ ասպատակիչները, գայթակղվելով երկրամասի աշխարհագրական զեղեցիկ դիրքով, հողերի բերրությամբ, առևտրական ճանապարհների խաչմերուկի դերակատարությամբ աստիճանաբար հիմնավորվել են այստեղ, մասամբ միայն փոխելով բնակչության դեմոգրաֆիկ կազմը:

Նախիջևանը XV-XVIII դարերում Սեֆյան Պարսկաստանի գերագահության տակ էր, որոնք և XVIII հարյուրամյակի կեսերին այստեղ ձևավորեցին վարչական նոր միավոր, այն է՝ **Նախիջևանի խանություն:** 1826-1828 թթ. ռուս-պարսկական հաղթական պատերազմից հետո Նախիջևանն ազատագրվեց պարսկական լծից և միավորվելով Երևանի խանության և Օրդուբադի շրջանի հետ՝ ատաղձ դարձավ կազմավորելու **Հայկական մարզը**²:

Փետրվարյան հեղափոխության հաղթանակի առաջին իսկ ամիսներին Նախիջևանում հաստատվեցին Ռուսաստանի ժամանակավոր կառավարության վար-

չական օրգանները: 1918 թ. հուլիսին թուրքական զորքերը ներխուժեցին Նախիջևան, սակայն Ապրակունիսի ճակատամարտում ջարդ ուտելով զորավար Անդրանիկի գլխավորած բանակից՝ ետ շարվեցին: Անդրանիկը Նախիջևանը հայտարարեց սովետական և հեռագրով դիմեց Ստ. Շահումյանին՝ խնդրելով ճանաչել հայկական այդ հանրապետությունը:

Թուրքերը, օգտվելով Անդրանիկի զորքերի կատարած տեղաշարժերից, հարձակվեցին Նախիջևանի վրա, գրավեցին այն և դաժան դատաստան տեսան տեղի հայ բնակչության հետ: Օսմանյան զորքերը հեռացան Նախիջևանից (XII-1918), որոնց տեղը շտապ լցվեցին **Ադրբեջանի մուսավաթականները**՝ երկրամասում ձևավորելով **«Արաքսի Հանրապետություն»:** Հայաստանի նորաստեղծ հանրապետությունը չէր կարող հաշտվել Նախիջևանի կորստի հետ:

1919 թ. մայիսի 14-ին հայոց զորքը պատերազմի դաշտում տարած հաղթանակով ազատագրեց ողջ Նախիջևանը և վերացրեց նաև, այսպես կոչված, «Արաքսի Հանրապետությունը»: 1920 թ. հուլիսին Նախիջևան մտան Սովետական Ռուսաստանի XI Կարմիր բանակի զորամասերը և երկրամասում հաստատեցին խորհրդային իշխանություն: Ահա այդպիսին էր վիճակը Նախիջևանում, երբ սկսվեցին սովետա-թուրքական բանակցությունների նախ առաջին, ապա երկրորդ շրջափուլերը, որին և հաջորդեց երկրամասի ճակատագրի «չարաբաստիկ լուծման» արարողությունը:

Մոսկվայի պայմանագրի երրորդ հոդվածի որոշմամբ՝ «երկու պայմանավորվող կողմերը համաձայն էին, որ Նախիջևանի մարզը՝ սույն պայմանագրի 1-ին (Ը) հավելվածում նշված սահմաններում, կազմի ինքնավար տերիտորիա՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության:

Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի պատվիրակներից կազմված հանձնաժողովը կշտկի Նախիջևանի տերիտորիայի եռանկյունի կազմող գոտու՝ արևելքում Արաքսի հնահունի և արևմուտքում Դաղնա (3829) - Վելի-դաղ (4121) - Բագարջիք (6587) - Քյոմուրլու-դաղ (6930) լեռների վրայով անցնող գծի միջև պարփակված տերիտորիայի սահմանագիծը, որն սկսվում է Քյոմուրլու դաղ (6930) սարերից, հետո անցնում է Սերայ Բուլաք սարի վրայով դեպի Արարատ կայարանը և վերջանում է Քարասուի և Արաքսի տրամախաչման տեղում»³:

Բացե՛ք փակագծերը. խորհրդային Ադրբեջանի պետական իշխանությանն էր անցնում Նախիջևանի գավառը, Շարուր-Դարալազյազի գավառի մեծ մասը, երևանի գավառի մի մասը: Սակայն նախօրոք զգուշացվում էր, որ Ադրբեջանը այդ տարածքը չի կարող հանձնել, նվիրել կամ զիջել մի երրորդ պետության: Այս կետով նախատեսվում էր, որ Ադրբեջանը զրկվում էր Նախիջևանը Հայաստանին երբևէ զիջելու իրավունքից:

Նախիջևանը Հայաստանի Հանրապետության և նրա իրավահաջորդ ՀՍՀ-ի սեփականությունն էր, պատմական Հայաստանի անբաժան մասնահատիկը, որը 1920 թ. օգոստոսի 9-ին բռնազավթված էր Անկարայի Ազգային մեծ ժողովի և ՌՍՖՍՀ-ի կողմից համատեղ իրականացված ակտի արդյունքում: Եվ այս երկու ազդեցությունները համաձայնվում են Հայաստանի սեփականությունը հանդիսացող Նախիջևանը, ինքնավար կարգավիճակով, դնել Ադրբեջանի խնամակալության տակ: Ընդ որում՝ պայմանագրում խոսք անգամ չկա ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ Ադրբեջանի համաձայն լինել-չլինելու մասին: Ազդեցությունները համաձայն են և վերջ: Նրանք Մոսկվա-

¹ Մանրամասն տե՛ս *АВПРИ*, фонд 04, опись 39, папка 232, дело 12(52998), лл. 37-41.

² Սույն շարադրանքը քաղել ենք «Հայկական հարց. հանրագիտարան» աշխատության 351-րդ էջում գետեղված **Կ. Խուդավերդյանի** «Նախիջևան» բառ-հոդվածից:

³ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 501:

յի պայմանագրի կողմ չհանդիսացող Հայաստանը և Ադրբեջանն էլ ընդգրկում են Նախիջևանի սահմանները ճշտող հանձնաժողովի մեջ¹:

Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածով նախատեսվում էր, որ «Ռուսաստանը պարտավորվում է Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի այդ հանրապետությունների կողմից թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում անպատճառ ճանաչվեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք վերաբերում են իրենց»²:

Պայմանագրի մյուս հոդվածները կողմերին պարտադրում էին ճանաչել Արևելքի ժողովուրդների ազատության և անկախության իրավունքը, համաձայնվում էին Սև ծովի և նեղուցների միջազգային ստատուտի վերջնական մշակումը հանձնել ակամերձ պետությւնների ապագա կոնֆերանսին (հոդվ. 5), ընդունում էին, որ երկու երկրների միջև կնքված այլ պայմանագրերը կորցրել են իրենց ուժը, իսկ խորհրդային Ռուսաստանը «թուրքիային համարում է ազատ՝ առաջներում թուրքիայի և ցարական կառավարության միջև կնքված միջազգային ակտերի վրա հիմնված դրամական կամ որևէ այլ պարտավորություններից» (հոդվ. 6): Ուժը կորցրած էր համարվում կապիտուլյացիաների ռեժիմը (հոդվ. 7), կողմերը պարտավորվում էին «իրենց տերիտորիաներում արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի կամ նրա տերիտորիայի մի մասի կառավարության դեմ ստանձնելու հավակնություն (հոդվ. 8)»³:

Մոսկվայում ստորագրված պայմանագիրն աղետ էր ցեղասպանության երկու շրջափուլ ապրած, վիրավոր ու որդեկորույս Հայաստանի համար, որը **պաշտպանվելու իրական հույսերը կորցրած**, սպասում էր թուրք-քեմալականների՝ Ռուսաստանի օգնությամբ պատրաստվելիք նոր ու առավել ուժգին հարվածներին: Կրկին մոլլաները սպիտակ չալաններ էին կապել գլուխներին, կրկին մեջտեմների գավիթներից հնչում էին թուրք «հոգևոր դասի» բարբառանքները՝ Հայաստան երկրի վերջին բեկորները ոչնչացնելու հորդորներով: Եվ այդ բոլորն այս անգամ ձևավորվեց, խրախուսվեց համաշխարհային հեղափոխության մայրաքաղաք Մոսկվայում:

Ողջ հայ ժողովուրդը սգի մեջ էր: Հայաստանը՝ կորցնելով Մուղղոսն ու Փարիզը, Լոնդոնն ու Սևրը, այժմ կանգնած էր կոտրած տաշտակի՝ մոսկովյան փաստաթղթերին դեմ առ դեմ: Ասում են, հույսը վերջում է մեռնում: Նման ռոմանտիկայով տարված՝ սկսեցին բողոքի հեղեղներով ողողել Կրեմլն ու Գ. Վ. Չիչերինի ղեկավարած կոմիսարիատը, մտածելով, որ ինչ-որ բան կկարողանան փոփոխել:

Առաջինը բողոքեց Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար **Ալեքսանդր Բեկզադյանը**⁴: Նա կծու խոսքեր էր գործածել մինչ այդ հայ ժողովրդի բարեկամ ճանաչված **Գեորգի Չիչերինի** հասցեին, նրան հանիրավի մեղադրելով թուրքերին իր պաշտպանության տակ առնելու մեջ: Ռուսաստանի կոմիսարը, չկարողանալով կուլ տալ վիրավորանքի այդ դառը դեղահաբը, պատասխան գրություն էր ուղարկել Մոսկվայում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ **Սահակ Տեր-Գաբրիելյանին**:

Այդ գրության մեջ ասված էր. «Հարգելի ընկեր Տեր-Գաբրիելյան, ստացել եմ ընկ. Բեկզադյանի ստորագրությամբ ռուս-թուրքական կոնֆերանսում Ռուսաստանի պատվիրակության դեմ մեղադրանքներով լի դիմումը: Դիմումը ելնում է նրանից, որ

իրք թե մեր կողմից ոչ մի քանք չի գործադրվել Կարսը պաշտպանելու համար: Ընկ. Բեկզադյանը գործն այնպես է ներկայացնում, կարծես թե բանակցություններն սկսվել են մեր քաղաքական հանձնաժողովի առաջին նիստով:

Այնուամենայնիվ, - շարունակում է Չիչերինը, - ընկ. Բեկզադյանն իր գրությունում գործն այնպես է ներկայացնում, կարծես թե մինչև կոնֆերանսի բացումը ոչինչ չի եղել: Նրա գրությունը բացահայտորեն նախադրված է այն նպատակին, որպեսզի ինչ-որ ընթերցողների կամ ունկնդիրների առջև մեղքը բարդի ռուսաստանյան պատվիրակության վրա, իսկ իր վրայից մաքրի, հանի ամեն մի պատասխանատվություն: Նրա կողմից գործերի ոչ ճիշտ պատկերացման հետ ես ոչ մի կերպ չեմ կարող համաձայնել:

Ապա նա գրում է այն մասին, որ բանակցությունների արդյունքները բացատրվում են Կենտրոնական կոմիտեի կողմից հրահանգների բացակայությամբ: Նրան չէր կարող հայտնի չլինել, որ բանակցությունների յուրաքանչյուր քայլն ուղեկցվել է Կենտրոնի որոշմամբ: Պայմանագրային գիծը սահմանվել է կատաղի բանավեճերից հետո, ընդ որում՝ քայլ առ քայլ տեղի են ունեցել փոխադարձ զիջումներ և մեր կողմից զիջումներն ընդունվել են Կենտրոնի կողմից: Չի եղել ոչ մի կարևոր հարց, որի վերաբերյալ Կենտրոնը չընդուներ որոշում: Դա ևս հայտնի էր Հայաստանի պատվիրակությանը և նրա հակառակ հայտարարությունները, որոնք տեղ են գտել ընկ. Բեկզադյանի գրությունում, կարող են բացատրել միայն ցանկությամբ՝ իր համար բարեհաճ իմաստով ազդել ինձ համար անհայտ ընթերցողների կամ ունկնդիրների վրա: Ես վճռականապես բողոքում եմ այդ կարգի գործողությունների դեմ՝ իրավունք վերապահելով ինձ մերկացնել այդ կարգի հայտարարությունների բնույթը»⁵:

Չիչերինի այս պատասխան-նամակը մեջբերեցինք ամբողջությամբ, հաշվի առնելով նրա կարևորությունը՝ հասկանալու համար ինչպես խնդրո առարկա հարցի պատմությունը, այնպես էլ այն մեխանիզմները, որոնք գործել են ռուս-թուրքական բանակցությունների ընթացքում:

Չի կարելի չնկատել, որ Չիչերինը զգացել է պատմության առջև իր և իր երկրի ղեկավարության պատասխանատվության չափն այն անարդարությունների համար, որոնք պայմանագրով ամրագրվել են և դատապարտելի են: Նա ավելի շուտ ինքնահանգստացման, քան ճշմարտության բացահայտման համար է փորձել ինքնաարդարացման դիմել:

Այսուհանդերձ, չի կարելի չդատապարտել նաև Հայաստանի կառավարության և Մոսկվայում գտնվող նրա պատվիրակության սպասողական պասիվ դիրքը: Թույլ էր տրվել միջազգային իրավունքի նորմերի կոպիտ խախտում, երբ երկու երկրներ լուծել էին երրորդ երկրի կենսական շահերը շոշափող հարցեր, առանց վերջինիս համաձայնության: Հայաստանի կառավարությունը պարտավոր էր հենց բանակցությունների սկզբում հանդես գալ հայտարարությամբ, որ առանց իր մասնակցության կնքվող ռուս-թուրքական պայմանագիրը, որը շոշափելու էր Հայաստանի շահերը, նա չի ընդունի⁶:

Բողոքի ակցիաներ ուղղեցին Կրեմլին Փարիզում ու Լոնդոնում դիվանագիտական մուրհիկությամբ պարապող **Ավետիս Ահարոնյանն ու Պողոս Նուրբար փաշան, եգիպտահայերն ու փարիզահայերը, ողջ Հայկական Սփյուռքի զրազետ ու հայրենամկեր մասը**: Այստեղ են ասել, որ ոչ միայն ուշ էր, այլև՝ խստորեն ուշա-

¹ «Ցավալի պայմանագրեր», էջ 385:

² «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 501:

³ «Հայկական հարց. հանրագիտարան», Երևան, 1996, էջ 338: **Է. Չոխրաբյանի** բառ-հոդվածը:

⁴ **ԱՎՊՐԻ**, фонд 04, опись 39, папка 232, дело 12(52998), л. 60.

⁵ Չիչերինն իր հուշերում գրել է, որ ամեն երեկո, բանակցություններից հետո, Լենինը հեռախոսով մամրամասն տեղեկանում էր, թե ինչ է արվել այդ օրը խորհրդաժողովում:

⁶ **ԱՎՊՐԻ**, фонд 04, опись 39, папка 232, дело 12(52998), лл. 65-67.

⁷ Այս փաստերը քաղել ենք **Գալուստ Գալոյանի** նշված աշխատության էջ 454-459-ից:

ցած: «Մեծ ու փոքր թուրքերը» տոնում էին իրենց տարած աներևակայելի հաղթանակը և ոգևորված դրանից՝ անընդհատ մեծացնում էին իրենց պահանջները ՌՍՖՍՀ-ի կառավարությունից: Երբ որևէ ուշացում էին նկատում, անմիջապես դիմում էին Արևմուտքին սպառնալիքով: Նրանք սերտել էին իրենց գաղափարական սնունդ մատակարարող «գորշ գայլերի» թելադրած ուսմունքը և այն գործածում էին սկզբում Հայաստանի, այժմ էլ Ռուսաստանի դեմ:

Քեմալն ու Կարաբեքիրը կուլ տվեցին Հայաստանի զույգ հատվածները, մարսեցին այն, այժմ էլ **զենք ու ոսկի էին պահանջում**, «փաստորեն, ստրուկի նման իրենց ծառայող լենինյան Ռուսաստանից», որպեսզի վերջնական հաշվեհարդար տեսնեն «**իմպերիալիստական հունաստանի հետ**» և վերջնականապես ապահովեն կայսրության ամբողջականությունը:

Կոնֆերանսը չավարտված, վերջին նիստում ամբիոն բարձրացավ թուրքական պատվիրակության ղեկավար **Յուսուֆ Քեմալի** տեղակալ **Հիքմեթ բեյը** և կոկորդիլուսի արցունքներ թափելով՝ «ներկայացրեց քեմալականների ծանր կացությունը»: Թուրքը և՛ փող էր պահանջում, և՛ ռազմամթերք, այլապես իրենք ստիպված են լինելու նույն խնդրանքով դիմել Ֆրանսիայի և Անգլիայի օգնությանը: Անշնորհակալ պատվիրակությունը ծայնակցեց նրան, և Ռուսաստանը հարկադրված էր այս անգամ էլ զիջել:

Մոսկվայի կոնֆերանսը որոշեց թուրքիային անհատույց տրամադրել այս անգամ ոչ թե **հինգ**, այլ **տասը միլիոն** ոսկե լիրա: Բացի դրանից, Սովետական Ռուսաստանը Անկարայի կառավարությանը հանձնեց (Հայաստանի Հանրապետության տարածքով և Տրապիզոնի վրայով) 33275 հրացան, 57986000 փամփուշտ, 327 գնդացի, 54 թնդանոթ, 129479 արկ, 1500 սուր, 20000 հակազազ և մեծ քանակությամբ այլ ռազմական հանդերձանք: 1921 թ. հոկտեմբերի 3-ին Տրապիզոնում թուրքական հրամանատարությանը հանձնվեցին երկու ծովային կործանիչներ՝ «Ժիվոյ» և «Ժուտկի»: 1921 թ. Սովետական Ռուսաստանը քեմալականներին էր հանձնել 6,5 միլիոն ռուբլի ոսկով, ապրիլին՝ 4 միլիոն, մայիսին և հունիսին՝ 1,4 միլիոն, նոյեմբերին՝ 1,1 միլիոն¹: Մնացած **երեք և կես միլիոն լիրան** Քեմալին տրվեց (բարեխղճորեն) 1922 թվականի մարտին, այսինքն՝ **Սաքարայի** ճակատամարտից ճիշտ վեց ամիս առաջ: Անկարա ուղարկվեց ռուս զորավար Մ. Վ. Ֆրունզեն, որպեսզի Քեմալի հետ մշակի «**իմպերիալիստական հունաստանի քախքախման պլանը**»: Այստեղ են ասել, որ մեկնաբանություններն ավելորդ են:

Այսպիսով, 1921 թ. մարտի 16-ին (ոմանց կարծիքով՝ մարտի 18-ին) ավարտվեց Մոսկվայի ազգադավ, հայադավ, հունադավ, խայտառակ կոնֆերանսը՝ իբրև եզրափակիչ ակտ ընդունելով մեկ այլ որոշում: Պայմանագրի 15-րդ հոդվածում նախատեսվում էր. «Ռուսաստանը պարտավորվում է Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի այդ հանրապետությունների կողմից թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում **անպատճառ ճանաչվեն սույն Պայմանագրի** այն հոդվածները, որոնք անմիջաբար վերաբերում են իրենց»: Պայմանագրի 16-րդ հոդվածը հայտարարում էր, որ **դաշնագիրը ենթակա է վավերացման**, և վավերագրերի փոխանակումը **կկայանա Կարսում**, որքան հնարավոր է կարճ ժամանակամիջոցում: Պայմանագիրն ուժի մեջ կմտներ վավերագրերի փոխանակման պահից սկսած:

Մոսկվայի պայմանագիրը գծագրեց **Կարսի ապագա կոնֆերանսի գործողության սխեման և դաշնագրի բովանդակած գրեթե բոլոր հոդվածները**:

¹ «Документы внешней политики СССР», том III, Москва, 1959, стр. 675. Տե՛ս նաև **Է. Ա. Չոխրաբյան**, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 1979, էջ 319:

Գլուխ տասներորդ

Կարսի կոնֆերանսը

և

1921 թ. հոկտեմբերի 13-ի

Կարսի պայմանագիրը

Сталин. ...Предложение об исправлении границы - может быть, это могло напугать турок? Но речь шла о восстановлении границы, которая существовала до Первой мировой войны. Я имею в виду район Карса, который находился до войны в составе Армении, и район Ардагана, который до войны находился в составе Грузии. Вопрос о восстановлении старой границы не возник бы, если турки не поставили бы вопрос о союзном договоре между СССР и Турцией. А союз - это значит, что мы обязуемся защищать границу Турции, как и Турция обязуется защищать нашу границу. Но мы считаем, что граница в районе Карса и Ардагана неправильна, и мы заявили Турции, что, если она хочет заключить с нами союз, нужно исправить эту границу, если же она не хочет исправлять границу, то отпадает вопрос о союзе. <...>

И. В. Сталин, 23.VI.1945, Берлин-Потсдам

В. М. Молотов. С нашей стороны имеются два вопроса, которые следует урегулировать. Заключение союзного договора означает, что мы должны совместно защищать наши границы: СССР - не только свою границу, но и турецкую, а Турция - не только свою, но и советскую границу. Однако в некоторых частях мы считаем границу между СССР и Турцией несправедливой. Действительно, в 1921 г. от Советской Армении и Советской Грузии была отторгнута территория - это известная территория областей Карса, Артина и Ардагана. Вот карта отторгнутой турками территории. (Передает карту.) Поэтому мною было заявлено, что для того, чтобы заключить союзный договор, следует урегулировать вопрос об отторгнутой от Грузии и Армении территории, вернуть им эту территорию обратно.

В. М. Молотов, 22.VI.1945, Берлин-Потсдам

Арутинов Г. А. Во всех этих случаях ЦК КП(б) Армении и Совнарком Армянской ССР придерживались следующей линии: по вопросу о репатриации зарубежных армян на родину - разъясняли, что правительство Армении, положительно относясь к возвращению армян-беженцев на родину, ввиду сложности осуществления массового переселения, изучает этот вопрос для предстоящего рассмотрения Совнаркомом Армянской ССР. По вопросу о воссоединении армянских территорий, отошедших к Турции в 1921 году, мы разъясняли, что вопрос о границах с Турцией связан с международными интересами Советского Государства и, по-видимому, встанет при предстоящих переговорах Советского Союза с Турцией по заключению нового договора.

СЕКРЕТАРЬ ЦК КП(б) АРМЕНИИ
Арутинов Гр., 16.VI.1945, Ереван

Карпетян С. К. Никогда не следует забывать, что Турция таит в себе потенциальную опасность для СССР вообще, а для закавказских народов, в частности, как показал опыт двух последних мировых войн. Турция открыто и замаскированно сотрудничала с германским империализмом в его агрессии против России. Турция, бывшая не раз орудием германских империалистов в борьбе против России, может и впредь стать таковым в руках других империалистических стран.

С возвратом одной только Карсской области, Сарикамыша, Ардагана, Артвина, Олти и Сурмалинского уезда Советскому Союзу, страна получит исключительно важные по своему значению военно-стратегические, естественные позиции в виде Агрыдакского, Армянского хребта, реки Аракс, Карачай, Арпачай, Кара-су, Чороха и др., а линия границы отодвинется от важных промышленных и административно-культурных центров Закавказья более чем на 200 километров.

НАРОДНЫЙ КОМИССАР
ИНОСТРАННЫХ ДЕЛ АРМЯНСКОЙ ССР
С. К. Карпетян, 3.V.1945, Москва

1921 թվականի մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված «**Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության**» պայմանագիրն իրավական ուժ և գործադրելու լիարժեք հնարավորություն կատարեց այն պահից սկսած, երբ Անդրկովկասյան երեք հանրապետություններն էլ, իրենց հերթին, հաստատեին դաշնագրում տեղ գտած (իրենց վերաբերող) հոդվածները (հոդված 16-րդ) և որևէ վայրում փոխանակեին ԹԱՄԺ-ի դիվանագիտության ներկայացուցիչների հետ¹:

Մոսկվայի դաշնագիրը միաժամանակ կողմերին նույնիսկ «**պարտադրում**» էր այդ վավերացման խնդիրը լուծել «արագ», որպեսզի կյանքը բնականոն հունի մեջ մտներ Անդրկովկասում: Այդ պրոցեսը պետք է կատարվեր **Բաքվում, Թիֆլիսում**

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Երևան, 1972, էջ 504:

կան **Կարսում**, Ռուսաստանի համար միևնույն էր: Հաջորդ պայմանագիրն ստորագրվեց Կարսում, ստացավ Կարսի պայմանագիր անվանումը և ճակատագրորեն **բացասական, ողբերգական** դեր կատարեց Հայոց պատմության էջերում:

Ոչ միայն Հայաստանի, այլև Ռուսաստանի և Անդրկովկասի քաղաքական կյանքում անջնջելի բացասական հետք թողած Կարսի պայմանագրի մասին ստեղծվել է ծավալուն, միաժամանակ իրար հակադիր և իրարամերժ հայեցակարգեր զարգացնող գրականություն: Դժբախտաբար, դրանցից և ոչ մեկը այնպիսի ծանրակշիռ աշխատություն չէ, որն այսօր ընդունելի լինի երկու կողմերի համար էլ: Ավելին, խնդիրը պարբերաբար քաղաքականացնելով, երկու կողմերից գրված աշխատությունները տառապում են միակողմանիությամբ, նույնիսկ փաստերի աղավաղումներով, որի պատճառով գրեթե հարյուրամյա հեռավորությամբ ապրող հարցասեր ընթերցողը դժվարանում է պարզել աջն ու ահյակը:

Կարսի պայմանագրի պատմության վերաբերյալ, բնականաբար, բազմաթիվ աշխատություններ, հուշագրություններ, «վավերագրերի» կեղծապատիր ժողովածուներ են հրատարակ նետել և՛ պաշտոնական, և՛ անպաշտոն թուրք պատմաբանները: Հավատարիմ իրենց նախորդների «դավանած սկզբունքներին», այս պատմաչրջանի թուրքերը պատվերներն ստացել էին **Մուստաֆա Քեմալից**, հետագայում՝ նաև **Սարաջողուից**, հետևողականորեն, անխղճորեն կեղծել են փաստերը, իրողությունը շրջել են գլխիվայր, հավատարմորեն ծառայել են **պանթուրքիզմին**, հատկապես՝ **քեմալիզմին**:

Թուրքական պաշտոնական պատմագրության «գլխագիր» «**Tarih**»-ը (պատմություն) անխղճորեն է աղավաղում Մոսկվայի և Կարսի պայմանագրերի կատարած անփոխարինելի դերը Թուրքիայի ռազմաքաղաքական կյանքում: Նա ուրանում է ռուսների ցույց տված օգնությունը քեմալականներին այն պահին, երբ Եվրոպան խեղդամահ էր արել օսմանյան պետությանը¹: **Ամեն Շուքրու Էսմերը** ուտող ուրացողի նման մեջտեղ է գցում այն տեսակետը, թե ռուսները Թուրքիայի հետ պայմանագիր չէին ստորագրի, եթե Քեմալի հորդաները **Սակարիա** գետի մոտ հաղթանակ չտանեին հույն «իմպերիալիստների դեմ»²:

Խորհրդա-թուրքական, առավել ևս հայ-թուրքական հարաբերությունների անցյալ դարի 20-ական թվականների պատմությունը կոպիտ ու քիտո ձևով է աղավաղել **Ալի Ֆուատ Ջեբեսոյը**: Առաջին աշխարհամարտի տարիներին թուրք զեներալ-փաշան գլխավորում էր պաղեստինյան ռազմաճակատում կրվող երիտթուրքական բանակը: Քեմալականների հրատարակ նետվելուց սկսած Ջեբեսոյին վատահվեց արևմտյան ռազմաճակատի հրամանատարի պարտականությունը, որին շուտով փոխարինեց Իսմեթ - Ինենյու գետի մոտ տարած հաղթանակից հետո՝ **Իսմեթ Ինենյուն**³:

Ալի Ֆուատը 1920 թ. նոյեմբերի 21-ին նշանակվեց Քեմալի դեսպանը Մոսկվայում: Այդ պաշտոնում նա մնաց մինչև 1922 թ. հուլիսի 2-ը: Ստացվեց այնպես, որ թուրք զեներալն անմիջական մասնակցություն ունեցավ **Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի** շուրջ ծավալված բանավեճերին և տեղյակ էր մանրամասնություններին: Հետագայում նա գրեց և 1955 թ. հրատարակեց «Մոսկովյան հուշերը» վերնագրված կեղծարարության անփոխարինելի նմուշը⁴: Հուշերը

¹ Թուրք պատմաբաններից քաղված նյութերը վերցրել ենք **С. В. Хармандарян**, «Карсская конференция 1921 г. и ее предистория» հոդվածից («Բանբեր Հայաստանի արխիվներ», 1963, N 3(6), էջ 177-180):

² Ahmet Şükrü Esmer, Siyasi tarih (1919-1939), Ankara, 1953. S'bu նաև Tarih, IV, Türkiye Cumhuriyeti, İstanbul, 1934, s. 103-104.

³ **Պարրիշ Լազեան**, Հայաստանը եւ Հայ դատը, Երևան, 1991, էջ 241:

⁴ **Ali Fuat Cebesoy**, Moskova hatıraları (21.XI.1920-2.VI.1922), İstanbul, 1955.

բաղկացած են երկու հատորից: Երկրորդ հատորում հեղինակը մանրամասնորեն ներկայացնում է, թե Հայաստանի «փրկարար» որակված Ի. Ստալինը, Լ. Դ. Տրոցկին, Ռադեկը, Ջինովկը ինչպես կարողացան օգնել էնվեր և Ջեմալ փաշաներին «ավարտելու» հայ ժողովրդի ցեղասպանության պրոցեսը: Ավելի մտատանջիչ են այն փաստերը, որոնք ցույց են տալիս **Կարսի, Արդահանի, Իգդիրի, Նախիջևանի «ընծալարներում» ընծալական թուրքերին**¹:

Ալի Ֆուատը մի տեսակ գովասանքով է խոսում Բեքիր Սամի բեյի և իր մոսկովյան առաքելության, Վ. Ի. Լենինի հետ ունեցած հանդիպումների մասին, ապա նրանից ոչ միայն զենք, զինամթերք ստանալու թույլտվության վերաբերյալ, այլև «արտոնությունը՝ Հայաստանի մյուս մասն ասպատակելու»: Նա ցինիկորեն հայտարարում է, որ 1920 թ. սեպտեմբերը սկիզբն էր արևելահայության «վերջին բեկորների ոչնչացման»: Եզրակացությունը «համոզիչ է»: Սեպտեմբերի 22-ին Ք. Կարաբեքիրի արյունածարավ հորդաներն այս անգամ էլ ներխուժեցին Արևելյան Հայաստան, դեկտեմբերի 2-ին հայոց վզին փաթաթեցին Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագիրը, 2 օր հետո ռուսական XI բանակը երկրում հաստատեց խորհրդային իշխանություն: Թուրք «պատմաբան-դիվանագետը» պարծենալով է արձանագրում, որ դեպքերի նման զարգացումից հետո «հայասեր» Գ. Չիչերինն ու հայազգի Լ. Կարախանն հիմնավորապես մոռացան Արևմտյան Հայաստանի, Սևրի պայմանագրի նախկինում անընդհատ պնդած պահանջները և սկսեցին բավարարվել սոսկ Ալեքսանդրապոլը ետ ստանալու **«թախանձանքով»**: **Դժբախտությունն այն է, որ այս հարցերում թուրք ջարդարարի կարծիքներն իրողությունից այնքան էլ չէին շեղվում**:

Թուրքական «պատմաբանների» պաշտպանողական, միաժամանակ հարձակողական կեցվածքն առավել սուր կերպարանք ստացավ, երբ երկրորդ աշխարհամարտից հետո Ի. Վ. Ստալինը և Վ. Մ. Մոլոտովը **Բեռլինի-Պոտսդամի** կոնֆերանսում բարձրացրեցին **Կարսի մարզի** վերադարձի խնդիրը: Անկարան գալարվում էր զայրության: Իրար հետևից լույս աշխարհ էին գալիս հայ ժողովրդի պատմությունն աղավաղող աշխատություններ:

Թուրքական այս շրջափուլի կեղծարարների մեջ ջանում է առաջնության դափնին ոչ ոքի չզիջել **Կրդզիոլլի Ֆահրեդդինը**: Չնայած գիրքը վերնագրված է **«Կարսի պատմություն»**, հեղինակը շոշափում է ավելի լայն ու բազմաբնույթ խնդիրներ²: Նա իրականում յուրովի է շարադրել հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ հնագույն ժամանակաշրջաններից սկսած մինչև XVI դարի սկիզբը (I հատոր): Աշխատության մեջ լայնորեն օգտագործված են Ջեքի Տոգանի, Շենսեդդին Գյունալթալի, Մ. Յընանչի, Էս'ատ Ուրասի և պանթուրքիստ այլ պատմաբանների աշխատությունները³:

Ջարգացնելով իր նախորդների առաջ քաշած կեղծ թեզերը, հեղինակը խորացնում է դրանք սեփական տեսակետներով և «փաստարկներով»՝ Հայաստանում ամենուր և պատմական բոլոր շրջափուլերում թուրքեր գտնելու հատուկ նպատակադրումով:

Թե ինչ շարժառիթներով ու ինչ նպատակով է գրել իր այս աշխատությունը թուրք հեղինակը, գաղափար ենք կազմում՝ կարդալով նրա գրքի առաջաբանը: **«Իմ այս**

աշխատությունը պատասխան է քաղաքական այն պրոպագանդային, - ասում է նա, - որ բոլշևիկյան Ռուսաստանը տանում էր 1945 թ.: Այդ պրոպագանդայի նպատակը մեր ձեռքից Կարսն ու Արդահանը խլելն էր: Գիրքը, - շարունակում է նա, - ուղղված է այն հայ ու վրացի գիտնականների դեմ, որոնք պնդում են այս երկրամասի նկատմամբ ունեցած իրենց ինչ-որ «պատմական իրավունքների» մասին»⁴:

«Սկսած 1717 թ., Վենետիկի մի փոքրիկ կղզում սեբաստացի Մխիթար աբբայի հիմնադրած «Հայ Մխիթարյան միաբանության» գիտնականները, Կ. Պոլսի, Թիֆլիսի և հատկապես Եվրոպայի կենտրոններում կրթություն ստացած ու հայոց ազգային պատմությունն ու մշակույթը պրոպագանդող հայ լուսավորիչները, - գրում է նա, - Արևելյան Անատոլիայի (իմա՝ Հայաստանի) սելջուկներից առաջ եղած պատմությունն ու մշակույթի հուշարձանները միայն և միայն իրենց են վերագրել և այդ մասին եվրոպական լեզուներով աշխատություններ են հրատարակել»: «Պետերբուրգի գիտությունների ակադեմիան էլ, - շարունակում է նա, - պաշտպանել է այս կեղծ թեզը և ձգտել է այն ծառայեցնել ցարական Ռուսաստանի հետամտած նվաճողական քաղաքականությանը Մերձավոր Արևելքում: Գրվել ու հրատարակվել են բազմաթիվ հաստատվոր հատորներ, որոնք այսօր էլ դարսված են Եվրոպայի տարբեր գրադարաններում: Պատմության բնագավառում սեփական կադրեր չունենալու հետևանքով, այդ գրքերը, - շարունակում է նա, - ...մեզ վախ են ներշնչել ու ստիպել նահանջել»⁵:

Այսօր, ուրախությամբ ուզում է հավաստիացնել Կրդզիոլլին իր ընթերցողներին, «վախենալու ոչինչ չունենք արդեն: Իմ քսանամյա երկարատև ուսումնասիրությունները բերել են ինձ այն եզրակացությանը, - գրում է նա, - որ Արևելյան Անատոլիայում անցյալում իշխած համարյա բոլոր հայ նախարարական տների ներկայացուցիչներն ունեն թուրքական ծագում»⁶: «Առաջավոր Ասիայի և առհասարակ Թուրքիայի պատմության համար խոշոր նշանակություն ունեցող այս գյուտի համար... հազար փառք են հղում բարձրյալ Ալլահին ու ինձ շատ երջանիկ են համարում»⁷, - ավելացնում է նա:

Եվ այսպես. կեղծիք և զառանցանք, զառանցանք ու կեղծիք, - ահա Էսատ Ուրասների և Ֆահրեդդին Կրդզիոլլիների «պատմագիտական» մարզանքների բովանդակությունը: Պատմության նենգափոխման նման օրինակն իսկապես արտառոց է և ծիծաղելի⁸:

Արևմտյան Եվրոպայի պատմաբաններն էլ իրենց հերթին են աղավաղել խորհրդա-թուրքական 20-ական թվականների փոխհարաբերությունների պատմությունը: Բրիտանական հետազոտողները, հատկապես **Արնոլդ Թոյնբին և Էդվար Վերեխոլդը**, ճշմարտորեն ներկայացնելով հայ ժողովրդի ցեղասպանության պատմությունը, միաժամանակ գիտակցորեն նսեմացնում են Կարսի պայմանագրի խաղացած դերը Թուրքիայի կյանքում: Ցավալին այն է, որ նրանք և՛ գիտեն ճշմարտությունը, և՛ աղավաղում են իրողությունը⁹:

¹ *F. Kurzoğlu*, Kars tarihi, այսուհետև՝ «Kars tarihi», էջ XIII.

² Նույն տեղում, էջ XIV-XV:

³ Նույն տեղում, էջ XV:

⁴ Նույն տեղում, էջ XVI: Տե՛ս նաև *Մ. Կ. Չուլալյանի* հոդվածը, էջ 273:

⁵ *Մ. Կ. Չուլալյան*, նշված հոդվածը, էջ 279:

⁶ *Arnold Toynbee and Kirkwood Kenneth*, Turkey, London, 1926; *John Parker and Charles Smith*, Modern Turkey, London, 1940, p. 386. Տե՛ս նաև *С. В. Хармандарян*, «Карсская конференция 1921 г. и ее предыстория» («Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, N 3 (6), էջ 181):

¹ *Ali Fuat Cebesoy*, Moskova hatıraları (21.XI.1920-2.VI.1922), İstanbul, 1955, գիրք երկրորդ, էջ 297:

² Թուրք այս հեքիաթասացի մասին ժամանակին քննադատական հոդված է տպագրել *Մ. Կ. Չուլալյանը*, որտեղից էլ քաղում ենք նյութերը. տե՛ս «Պատմության նենգափոխման մի արտառոց օրինակ» («Պատմա-բանասիրական հանդես», 1966, N 1(32), էջ 271-275):

³ *Fahrettin Kurzoğlu*, Kars tarihi, c. 1, İstanbul, 1953. (*Ֆահրեդդին Կրդզիոլլի*, Կարսի պատմություն, հատ. Ա, Ստամբուլ, 1953):

Կարսի պայմանագրին սուբյեկտիվ գնահատական են տվել նաև ամերիկյան պատմաբանները, հատկապես Երկրորդ աշխարհամարտից հետո տիրապետող սառը պատերազմի տարիներին ստեղծված գործերը: Դրանցից իր սուբյեկտիվությամբ առանձնանում է **Այվոր Սպեկտորը**, որը «Խորհրդային Միությունը և մուսուլմանական աշխարհը 1917-1956 թվականներին» մենագրության էջերում՝ զարմանալիորեն թերագնահատում է ԱՄՆ-ի կատարած դրական դերը հայ ժողովրդի ճակատագրում, նույնիսկ չի հիշատակում **Վուդրո Վիլսոնին**, սակայն միայն դատապիտակում է ԽՍՀՄ-ի քաղաքագետներին, որոնք Պոտսդամում բարձրացրեցին Կարսի պայմանագրի չեղյալ հայտարարելու խնդիրը: Նա չի բարձրաձայնում, որ **Տրումենն** ատոմային ռումբով սպառնաց թուրքիայի «սահմանախախտներին»: Հարցը վախճանվեց, և հերթական անգամ տուժեց առանց այդ էլ տուժած հայ ժողովուրդը:

Ցավալի է, բայց փաստ է, իրողություն, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի պատմությունն ամենից շատ աղավաղել են **խորհրդային** պատմաբանները 70 տարիների ընթացքում: Ջարմանալի չէ, որ այդ բանակի շարքերը խտացրել են նախ Խորհրդային Հայաստանի պատմաբանները՝ գիտակցաբար, թե հարկադրաբար, դժվար է առանձնացնել:

Խորհրդային պատմաբանները Կրեմլից տեսական հրահանգներ էին ստացել, որ 20-ականների նախաշեմին բուլշևիկները ձգտում էին համաշխարհային հեղափոխության հաղթանակին «որքան շուտ՝ այնքան լավ, որքան շատ՝ այնքան դյուրին» կարգախոսով: Քաղբյուրոն միշտ կրկնում էր, որ Վ. Ի. Լենինի և Մ. Քեմալի աղերսները հեղափոխական էին և ուղղված էին «միջազգային իմպերիալիզմի գործակալներ դարձած հունական և հայկական ընդվզումների դեմ»: Գոցվում էին կենտրոնական արխիվների «վտանգավոր ֆոնդերը», ստեղծվում էին «հույժ գաղտնի» մակագրությամբ պահվող ահռելի քանակությամբ այնպիսի վավերագրեր, որոնք կարող էին հակառակն ապացուցել: Կուսակցական սաստեր, երբեմն էլ պետական անվտանգության ծառայությունների պատժամիջոցներ էին սպասվում հակառակը գրելու, նույնիսկ բանավոր բարձրաձայնելու համար:

Մոսկվայի, հատկապես Կարսի կոնֆերանսների, դրանց հաջորդած պայմանագրերի պատմությանը նվիրված ահռելի քանակության մենագրություններից և հոդվածներից առանձնացնենք ներքոհիշյալները²: Իբրև ընդհանրություն, բոլոր հեղինակներն էլ մեծ զովեստով են խոսել Կարսի հայաստան պայմանագրի և՛ ձևի, և՛ բովանդակության մասին:

Հայ և հույն ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի, խորհրդաթուրքական հարաբերությունների պատմության աղավաղման, Կարսի և Մոսկվայի

պայմանագրերի բոլորանվեր գովաբանման դասական օրինակ է Մոսկվայում հրատարակված Աբդուլա Միրզանովիչ Շամսուտդինովի «Ազգային-ազատագրական պայքարը Թուրքիայում 1918-1923 թթ.» մենագրությունը¹: Ազգությամբ թուրք այս հեղինակը, տիրապետելով արևելյան լեզուներին, աշխատելով ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Ասիայի ժողովուրդների ինստիտուտում, իրար հետևից հրատարակում էր գրքեր, գրքույկներ, հոդվածներ, որոնց էջերում վարպետորեն պաշտպանում էր թուրքերի հայաստան ու հունաստան քաղաքականությունը՝ **Քեմալ Մուստաֆայի և Կարաբեքիր Քյազիմի** գլխավորությամբ:

Ա. Մ. Շամսուտդինովը Մ. Քեմալի և քեմալիզմի դատապաշտպանն էր, դատապարտում էր Սևրի դաշնագիրը և հրժվում, որ միջազգային հանրությունն ի վերջո ինքն իրեն հրաժարվեց «**Նմանատիպ որոշումներից**»: Նա մանրամասն շարադրել է Մոսկվայի կոնֆերանսի (էջ 192-198) և ռուս-թուրքական «**բարեկամության և եղբայրության**» անուն ստացած պայմանագրի պատմությունը, գտնելով դրա «**համամարդկային նշանակությունը**»: Թուրք, բայց սովետական «պատմաբանի» աշխատության հաջորդ գլուխը նվիրված է Կարսի պայմանագրի (էջ 211-226) պատմությանը: Նա փաստորեն բացում է խաղաքարտերը, տեղեկություններ հաղորդում, որ Կարսի պայմանագրի որոշումները պայմանավորված էին Քեմալի և Կրեմլի գաղտնածածուկ որոշմամբ, որի համաձայն թուրքերը կհարձակվեն «իմպերիալիստական Հայաստանի» վրա, կջախջախեն նրա ռազմական հզորությունը և «դաշնակցական սեպարատիստներին» (էջ 218-219) կստիպեին երկիրը հանձնել բուլշևիկներին: Լենինյան հակահայկական ծրագիրն իրականացվեց ամթերի:

Ցավալի է, շատ ցավալի, բայց փաստ է, որ հակահայկական, հակամարդկային այդ աշխատության խմբագիրն է մոսկվաբնակ բանասեր-պատմաբան, հայագի «պրոֆեսոր» **Ա. Պ. Բազիյանցը**: Հայոց մոր արգանդից ինչե՛ր ասես որ չեն ծնվել: Մի կողմում **Անդրանիկն** ու **Նժդեհն** էին, մյուս կողմում՝ **Սկաչկոն** (Արտաշես Կարինյան) ու **Ա. Բազիյանցը**:

Այսպիսով, խորհրդային ռուսաստանյան պատմաբանների բանակը, Կարսի պայմանագրի գնահատականները տալիս, ոչնչով չէր տարբերվում թուրք պաշտոնական պատմագրությունից: Հայեցակարգը նույնն էր, ճշմարտացի վավերագրերը դեռևս գաղտնագրված:

Կարսի պայմանագրի պատմությանն են անդրադարձել Հայաստանի և հատկապես սփյուռքի հայ պատմաբանները: Տվյալ պարագայում հիշատակության արժանի են **Ս. Վ. Խարմանդարյանի**², **Ա. Ա. Եսայանի**³, **Է. Ա. Չոհրաբյանի**⁴, **Ե. Ղ. Սարգսյանի**⁵, **Ռ. Գ. Սահակյանի**⁶ և այլոց մենագրությունները, փաստառատ ծավալուն հոդվածները: Հայաստանի վերոհիշյալ գիտնականները գիտական շրջանառության մեջ են դրել արժեքավոր փաստեր, սակայն **ստալինյան-սուլովյան** վարչակարգերից

¹ *Spectator Ivor, The Soviet Union and the Muslim World, 1917-1956, Washington, 1957.*

² Кандидатские диссертации: *П. П. Удовиченко*, Из истории отношений между Украинской ССР и Турцией в 1921-1922 годах (Киев, 1952) и *М. А. Керимова*, Борьба советских республик за прочный мир и добрососедские отношения с Турцией в 1920-1922 гг. (Карсский договор 1921 г. между Закавказскими советскими республиками и Турцией), (Москва, 1953). *П. П. Удовиченко*, Из истории внешней политики Украинской ССР (1921-1922), изд. Киевского Госуниверситета им. Т. Г. Шевченко, 1957, на украинском языке, специальная глава посвящена отношениям между Украинской ССР и Турцией в 1921-1922 гг. (стр. 26-62). В опубликованной статье *М. А. Керимова* "Закавказские советские республики и Турция (1920-1922 гг.)", к сожалению, Карсской конференции уделена одна страница (см. "Ученые записки Института востоковедения", том 19, 1958). То же и в брошюре *С. И. Кузнецовой* "Установление советско-турецких отношений", где всему вопросу о Карсской конференции уделены лишь две страницы. Տե՛ս նաև **Ս. Վ. Խարմանդարյանի** նշված հոդվածը, էջ 178:

¹ *А. М. Шамсутдинов*, Национально-освободительная борьба в Турции 1918-1923 гг., Москва, 1966.

² *С. В. Хармандарян*, "Карсская конференция 1921 г. и ее предистория" հոդվածից («Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, N 3(6), էջ 177-208):

³ *Ա. Ա. Եսայան*, Կարսի պայմանագրի 50 տարին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, N 7(355), հուլիս, էջ 65-70:

⁴ *Է. Ա. Չոհրաբյան*, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 1979, էջ 265-304:

⁵ *Ե. Ղ. Սարգսյան*, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում, Երևան, 1964, էջ 512-520:

⁶ *Ռ. Գ. Սահակյան*, Սովետա-թուրքական հարաբերությունների հակագիտական լուսաբանումը, Երևան, 1964:

երկնչելով, իբրև կանոն, հարկադրված են եղել գովեստի անհարկի էպիտետներ շռայլել Վ. Ի. Լենինի, լենինյանների հասցեին: Գովասանքի չափաբաժինն այնքան մեծ է, որ դրանց գործերն ընթերցելուց հետո անհրաժեշտություն է զգացվում մաքրաջրել (ասել է թե՛ ժավելի մեջ դնել):

Մոսկվայի և հատկապես Կարսի կոնֆերանսների, այնտեղ ստորագրված պայմանագրերի պատմությանն են անդրադարձել ՀՀ ԳԱ ակադեմիկոսներ **Գ. Ա. Գալոյանն ու Գ. Ա. Ավետիսյանը**, իրար հաջորդելով, երկուսն էլ եղել են ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեններ, հարկադրված անցկացրել են, իրողության են վերածել այն կուրսը, որը թելադրել է կոմկուսի ղեկավարությունը: Կարճ ասած, զույգ ակադեմիկոսներն իրենց կյանքի կեսդարյա հետազոտությունները ստեղծելիս սակարկության մեջ են մտել սեփական գիտական խղճի հետ և, հուրախություն բուրդիս, վերջապես դարձի են եկել՝ ստեղծել ճշմարտացի մեմագրություններ:

1999 թվականին լույս տեսավ Գ. Ա. Գալոյանի «Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ.» խորագրված աշխատությունը, որը ոչ միայն նոր ասելիք ուներ հայ ընթերցողին, այլև ազդարարում էր պատմաբանի հեռացումը նախկին շեղ ճանապարհից և դառնալ հայրենամուտ հետազոտող:

Գ. Գալոյանը, պրպտելով **Լոնդոնի արխիվների** համապատասխան ֆոնդերը, աշխատելով **Մոսկվայի բազմաթիվ արխիվներում**, գիտական շրջանառության մեջ է դրել հսկայական թվով նոր փաստեր, որոնք ճշմարտացիորեն են ներկայացնում Մոսկվայի և Կարսի կոնֆերանսների ծավալած գործողությունը: Ուրախալի է, որ այդ փաստերից հանված եզրակացություններն էլ ճշմարտացի են, որոնցից շատերն օգտագործել ենք մեր սույն մեմագրության էջերում:

Անգուզական են ակադեմիկոս Գ. Ա. Ավետիսյանի ծառայություններն այս բնագավառում: Պատմաբանը կյանքի վերջին տասնամյակին մի շարք աշխատություններ է ստեղծել, որոնցից առանձնանում են «Գրիգոր Հարությունյան» մեմագրությունը, հուշագրությունը, վավերագրերի ժողովածու: Աշխատությունն արմատապես հեղաբեկում է Գրիգոր Արտեմիչի մասին մինչ այդ իշխող կարծիքները, և մեկ հարվածով առջև կանգնում են հայրենամուտ, խիզախող բարձրաստիճան պետական գործիչն ու նրա կենսագիր ակադեմիկոս Զրանտ Ավետիսյանը:

Կարսի կոնֆերանսի պատմությանն է անդրադարձել Հայաստանի առաջին հանրապետության վերջին վարչապետ, Հայաստանի «Փրկության կոմիտեի» նախագահ **Սիմոն Վրացյանը** (որի հետ անձամբ ծանոթացել են Բեյրութի Փալանջյան վարժարանում 1968 թ.): 1921 թվականից սկսած, հաստատվելով արտասահմանում, Ս. Վրացյանը ստեղծեց «**Հայաստանի Հանրապետությունը**»՝ շահեկան, փաստառատ իր մեմագրությունը, որի վերջում գետեղված են «խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթից վերցված (1921 թ. հոկտեմբեր ամսվա համարներից) Կարսի կոնֆերանսի արձանագրությունները¹:

Այդ փաստաթղթերի առջև դրված է միայն մեկ էջից բաղկացած բացատրական լղարիկ մի գրություն, որից պարզ է դառնում, որ նախկին վարչապետը տվյալ պահին մտատանջվում էր, թե ինչո՞ւ բանակցություններ վարեց Զ. Կարաբեքիրի հետ, ինչո՞ւ

բարձրացրեց ժամանակավրեպ ապստամբությունը, ինչո՞ւ հայկական պատվիրակությանը զրկեց Մոսկվայի կոնֆերանսին մասնակցելու հնարավորություններից:

Կարսի պայմանագրի պատմությանը մի փոքրիկ, բայց «հուզաթաթալ» ենթագլուխ է նվիրել **Գաբրիել Լազյանը**²: Սրտի կսկիծ կա նրա շարադրանքի մեջ Հայաստանի այդ մասի կորստի պատճառով: Նա գրում է. «Ռուսաստանը Կարսի դաշնագրով ահաւոր հարուած մը տուաւ Զայաստանին անոր հողերը նուէր տալով զինակից Թուրքիոյ»³:

Երկրորդ աշխարհամարտից հետո Բեյրութը վերածվեց հայաշատ, ծաղկուն մի գաղթավայրի, որտեղ խարսխված հայ մտավորականության փաղանգը մեծ գործեր կատարեց ցեղասպանության պատմության հետազոտման, հայոց պահանջատիրությունն առավել արմատականորեն դնելու գործում: Ստեղծվեցին փոքր ու մեծ ժավալի բազում աշխատություններ, որոնց շարքում թերևս առաջին տեղը բռնեց **Զավեն Սարղլեանի «Երեք դաշնագրեր»** մեմագրությունը⁴: Աշխատության հեղինակը սթափ հայացքով, անկողմնակալ ձևով է շարադրում մեր ժողովրդի համար ցավազին այդ հարցի պատմությունը:

Զ. Սարղլեանի փոքրածավալ, բայց խորաթափանց այդ մեմագրությունը գրված է սկզբնաղբյուրների, հատկապես Լոնդոնի արխիվներից հայտնաբերված թարմ, մինչ այդ չօգտագործված նյութերի հիման վրա: Այն նոր խոսք է ասում պատմագրության բնագավառում, գիտական շրջանառության մեջ դնում փաստեր ու փաստաթղթեր, որոնք մինչ այդ անծանոթ էին հայ ընթերցողին և ընթերցողին ընդհանրապես:

Վերջին զույգ տասնամյակներին առավել ակտիվ էր Մոսկվայում ստեղծագործող հայ պատմաբանների այս բնագավառում ծավալած գործունեությունը: Նման աշխուժությունը պայմանավորված էր նախ հայրենասիրական նոր մղումներով, առավել ևս մինչ այդ զոց մնացած, «**հույժ գաղտնի**» մակագրության տակ պահված արխիվների դռների բացվելով: Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում խարսխված բազմաթիվ արխիվների թվաշատ ֆոնդերն իրենց նախկին կեցվածքը փոխեցին և սկսեցին առատ նյութեր մատակարարել հետազոտողներին:

Իրար հաջորդելով, լույս աշխարհ եկան մոսկվաբնակ հայ պատմաբանների, իրավաբանների, միջազգայնագետների հոդվածներ, մեմագրություններ, վավերագրերի ժողովածուներ: Այդ ամտառի կաղնին պրոֆ. **Յու. Ա. Բարսեղովն էր**, որի իրապարակած **Նոահատորյակը** հեղաբեկում է ցեղասպանության, հատկապես ռուսթուրքական, հայթուրքական հարաբերությունների մասին մինչ այդ տիրապետող դարձած բյուր կարծիքները⁵:

Պրոֆ. Յու. Բարսեղովն առաջիններից մեկն էր, որը թույլտվություն ստացավ մտնելու Քաղբյուրոյի արխիվները, հետազոտելու Վ. Ի. Լենինի, Գ. Վ. Զիչերինի, Ի. Վ. Ստալինի, Լ. Գ. Տրոցկու և բարձրաստիճան այլ պաշտոնյաների ֆոնդերը: Պատմաբան իրավագետը դրանցից առանձնացրեց վավերագրեր, որոնք բացահայտում են Կարսի պայմանագրի ստորագրման հակահայկական փաստաթղթերը: Նա նոր նյութերին կոթնած՝ շարադրեց Մոսկվայի և Կարսի կոնֆերանսների պատմությունը⁶: Մի-

¹ **Գալուստ Գալոյան**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., ՀՍՀ ԳԱ, Երևան, 1999 (540 էջ ծավալով):

² «Գրիգոր Հարությունյան, Կյանքը և գործունեությունը», ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 2000: Կազմողներ՝ **Նամի Միկոյան և Զրանտ Ավետիսյան**: Պատասխանատու խմբագիրներ՝ **Զրանտ Ավետիսյան, Սուրեն Ավետիսյան**:

³ **Սիմոն Վրացյան**, Հայաստանի Հանրապետությունը, երկրորդ հրատարակություն, Երևան, 1998:

⁴ Տես նույն տեղում, էջ 678-684:

⁵ **Գաբրիել Լազյան**, Հայաստանը եւ Հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991, էջ 289-292 («Կարսի դաշնագիր»):

⁶ Նույն տեղում, էջ 292:

⁷ **Զավեն Սարղլեան**, Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի դաշնագրերը 1920-1921 թթ.), Պէյրութ, 1979:

⁸ **«Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества»**, составитель, отв. редактор проф. Ю. Г. Барсегов, том I, Москва, 2002, том II, 2004, том II, часть II, 2005.

⁹ Նույն տեղում, հատոր 2, մաս 2, էջ 422-426, 431-442:

ակ պակասությունն այն է, որ պրոֆ. Յու. Բարսեղովը, չտիրապետելով հայոց և հատկապես օտար լեզուների, իր շարադրանքի պատմական ատաղծ է դարձրել միայն **ռուսալեզու** սկզբնաղբյուրները: Այսուհանդերձ, նրա կապիտալ աշխատությունները լրացնում են այդ բնագավառում մինչ այդ եղած բացը և ամբողջացնում են խնդրի պատմությունը բազմաթիվ կողմերից:

Այսպիսով, Կարսի պայմանագրի մասին, շուրջ մեկ 90-ամյակում ստեղծվել է ծավալուն գրականություն, որից ջոկ ջոկելով միայն մի մասը, հետազոտեցինք և ձգտեցինք շարադրել այդ խնդրի պատմությունը **նորովի, յուրովի, անկողմնակալ, առանց տուրք տալու քաղաքական կոնյունկտուրային, առանց սակարկության մեջ մտնելու մեր գիտական խղճի հետ:**

Աշխատության ստեղծագործական պատմությունը երկար ժամանակ է պահանջել և լուրջ, տքնաջան աշխատանք: Հետազոտելով եղած ծով գրականությունը, մենք հարկադրված ենք եղել այնպիսի արպտումներ կատարել, որի արդյունքում հայտնաբերված նյութերը հնարավորություն տան մեր ընթերցողին նոր խոսք ասելու:

Նման մտահոգությամբ տարիներ շարունակ (ընդմիջումներով 4 տարի) աշխատել ենք Մոսկվայի արխիվներում: Հատկապես նոր նյութեր ենք քաղել Վ. Ի. Լենինի, Ի. Վ. Ստալինի, Լ. Դ. Տրոցկու, Գ. Վ. Զիչերինի, Լ. Կարախանի և այլոց անձնական արխիվներից: Նոր նյութեր ենք քաղել Հայաստանի երկու արխիվներից, որոնց հայրենամկեր տնօրեններ **Ամատունի Վիրաբյանը և Ավագ Հարությունյանը** ինձ են տրամադրել խնդրին վերաբերող նոր վավերագրեր: Դրա համար նրանց հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Այսպիսով, մենք ձգտել ենք Կարսի պայմանագրի մասին նոր խոսք ասել: Թե որքանով է դա մեզ հաջողվել՝ կասի անկողմնակալ ընթերցողը:

* * *

1921 թվականին Մոսկվայում ստորագրված ՌՍՖՍՀ – Թուրքիա «բարեկամության»¹ Ի. Ստալինի հավելմամբ, և «եղբայրության» անվանակոչված պայմանագիրը գործադրվելու վերջնական հնարավորություն կատարող անդրկովկասյան երեք հանրապետությունների կողմից վերաքննելուց և վերահաստատելուց հետո միայն: Դաշնագրի 16-րդ հոդվածը պարտադրում էր, որ այդ պրոցեսը պետք է կատարվեր որքան հնարավոր է շուտ և այն էլ Անդրկովկասի տարածքում:

Մուստաֆա Քեմալը, սակայն, այժմ արդեն չէր շտապում, քանզի գրպանումն ուներ **Ալեքսանդրապոլի** բունեթանգը, մտքում պահած Զ. Կարաբեքիրի այն հայտարարությունը, թե շատ շուտով «**Հայաստանը կբնաջնջի երկրագնդի երեսից**»: Այդ օրերի թուրքերը, շնորհիվ խորհրդային Ռուսաստանի զորակցության, այլևս Սարդարապատի և Բաշ-Ապարանի քյոթակ կերած հորդաները չէին: Այժմ քեմալականները հաղթողի կեցվածքով, արդեն հասած մայրաքաղաքի դարպասներին, արևելահայության նկատմամբ վարվում էին փոխվրեժի զգացումով, ջանում շարունակել պատերազմը, եթե ՌՍՖՍՀ-ն այս անգամ էլ չխանգարեր իրենց:

1921 թ. հուլիսի 10-ին Կոմիտերնի երրորդ կոնգրեսի 22-րդ նիստում Հայաստանի հեղկոմի առաջին նախագահ, Հայաստանի կոմկուսի պատվիրակ **Սարգիս Հովհաննեսի Կասյանը (1878-1937) ամբիոնից, ի լուր աշխարհի, բարձրաձայնեց.** «Միակ վտանգը, որ մեզ կարող է սպառնալ, դա Թուրքիան է: Մեր սահմանների վրա Թուրքիան դեռևս շարունակում է իմպերիալիստական ձգտումներ ցուցաբերել... Մենք անկեղծորեն ցանկանում ենք նրա հետ հաշտ ապրել, և մեզ մոտ թշնամանք չկա, բայց եթե նրա կողմից մեզ որևէ իրական վտանգ սպառնա, ապա հայ բանվոր-

ներն ու գյուղացիները զենքը ձեռքերին կպաշտպանեն իրենց ազատությունը, իրենց հայրենիքը»¹:

Դեռևս 1921 թ. հունվարի 19-ին Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ **Ալեքսանդր Արտեմի Բեկզադյանը (1881-1939)** Թուրքիայի արտգործնախարարի պաշտոնակատար Ահմեդ Մուխթարին է հղում բողոքի վերջնագիր, որտեղ թվարկում է այն զազանությունները, որոնք կատարել էին Կարաբեքիրի հորդաները **Կարսում և Ալեքսանդրապոլում:**

Ա. Բեկզադյանը բողոքում է, թե. «խորը ավիսսանքի զգացումով Հայաստանի սովետական կառավարությունն ստիպված է Ձեր ուշադրությունը սևեռել բռնազավթված, ծայրամասային մեր գավառների աննորմալ դրության վրա, որը դառնում է խրոնիկ և համընդհանուր: Հայաստանի Սոցիալիստական Սովետական կառավարության ստացած միանգամայն հավաստի տեղեկությունների համաձայն, **Կարսի և Ալեքսանդրապոլի** գավառներում, չեզոք գոտում բռնազավթող ջոկատները խաղաղ, աշխատավոր բնակչությանը ենթարկել են և ենթարկում են բռնությունների, կողոպուտների և սպանությունների: Ձեր գործերի գրաված շրջաններում ամենուրեք բռնագրավված է և Թուրքիա ուղարկված Հայկական ՍՍՀ-ի պետական գույքը, կողոպտման է ենթարկվում մասնավոր ունեցվածքը, հափշտակվում են անասունները և բռնագրավվում բնակչության սննդամթերքների վերջին պաշարները: Այսպես, Ալեքսանդրապոլ քաղաքից վերջին ամսվա ընթացքում արտակրված է տառացիորեն ամեն ինչ՝ գյուղատնտեսական մեքենաները, շոգեքարշերը, հեռագրային և հեռախոսային ապարատները, ավտոմոբիլային մասերը, շարժական գույքը և այլն: Գավառը ավերված է, բոլոր անասունները քշված-տարված են: Թուրքիա ուղարկելու համար Նալբանդ կայարանում են կենտրոնացվում մերձակա գյուղերում բռնագրավված հսկայական քանակությամբ հացահատիկը: Այսպիսով, բնակչությունը դատապարտված է սովամահության:

Տասնութից մինչև 50 տարեկան հասակի բոլոր աշխատունակ տղամարդիկ քշված-տարված են: Նրանցից խլել են վերնազգեստը և փոխարենը տվել պարկացու կտորից կարված հագուստ: Այդ բոլոր մարդիկ հարկադիր աշխատանքների են ուղարկված Սարիղամիշ և Էրզրում: Փոխադրագնացներով Ղարաքիլիսա ժամանած զաղթականներին ձեր օկուպացիոն ջոկատի ներկայացուցիչները փորձում են էրզրում ուղարկել ծանր աշխատանքների, որոնք կատարվում են վերը հիշատակված պայմաններում:

Ձեր գործերի կողմից Կարսի գրավումից հետո առաջին երեք օրվա ընթացքում կողոպուտները, բռնություններն ու սպանություններն ընդունեցին համընդհանուր բնույթ և վերածվեցին կազմակերպված թալանի և իսկական կոտորածի: Այդ չարագործությունները շարունակվում են մինչև հիմա, թեև ավելի փոքր չափերով: Ամբողջ վառելիքը բռնագրավված է, ընդ որում՝ նույնիսկ որբանոցները չխուսափեցին այդ բռնագրավումից: Տղամարդկանց քշել են Սարիղամիշ և Էրզրում, պարենամթերքը բռնագրավված է, անասունները հափշտակված են: Աղբուլաղի և Համամլվի շրջաններում զինված ասքյարների առանձին ջոկատներ ներխուժում են գյուղերը և կողոպտում, բռնաբարում ու սպանում բոլորին:

Այդպիսի մի դեպք դեկտեմբերի 13-ին տեղի է ունեցել Քուլուջա գյուղում: Թուրքական 36-րդ եզերական գնդի ջոկատներից մեկի կողմից դեկտեմբերի 26-ին Քաֆթարլու գյուղի գրավումից հետո այդ գյուղի **ինն կոմունիստներ** (Վարդ Տեր-Պետրոսյանը, Պետրոս Մանասյանը, Իգնատիոս Վարդանյանը, Մարտին Մուրադյանը,

¹ "Бюллетень третьего конгресса Коминтерна", 1921, 19. VII, N 22, стр. 492.

Ստեփան Մուրադյանը, Մանվել Համանյանը, Թոմաս Աթոյանցը, Խաչատուր Կուզիկյանցը և Մանվել Ասլանյանցը), որոնք գտնվում էին հիշյալ ջոկատին տեղավորողների թվում, իրենց առաջադրված խնդիրը կատարելուց հետո զազանաբար սպանվեցին գյուղի գոմերից մեկում: Այդ թշվառների դիակները գյուղից դուրս բերվեցին նույն գյուղի բնակիչ Ստեփան Բոյաջյանի սայլով, իսկ հետո կոտորածի ականատեսի մեջ վերացնելու նպատակով՝ սպանեցին նաև սայլի տիրոջը:

Հունվարի 13-ին մի խումբ ասքյարներ առանց որևէ պատճառի հարձակվեցին Քանլար գյուղի վրա և բացեցին ուժեղ կրակ: Չեզոք գոտու սահմանակից գյուղերում խաղաղ հայ զեղջուկների կողոպուտներն ու սպանությունները դարձել են սովորական երևույթ: Լոկ միայն զավառային չորրորդ տեղամասային կոմիսարիատում գրանցված են այդպիսի սպանությունների ավելի քան երկու հարյուր դեպքեր: Գավառի ազգաբնակչությունն ահաբեկված է, բնակիչների տնտեսությունները քայքայված են, անասունները քշված-տարված են և հարկերի անընդհատ հավաքման պատրվակի տակ գյուղացիներից խլել են առաջին անհրաժեշտության առարկաները: Ջինված ջոկատների ասպատակությունները չեզոք գոտու սահմաններում ընդունել են մշտական բնույթ, և այդ ասպատակությունների շարունակությունն սպառնում է այնպես ամայացնել այդ գոտին, ինչպես ամայացված է Ալեքսանդրապոլի գավառը, որտեղ ավերված է մոտավորապես 55 գյուղ:

Իսկ ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլի բնակչությանը, ապա չնայած կապի ասպարեզում ձեր ստեղծած բոլոր դժվարություններին, և չնայած հեռագրային հաղորդումների, մինչև իսկ Յեղափոխական Կոմիտեի հաղորդումների վրա սահմանված վերահսկողությանը, ինչպես նաև հակառակ այն բանի, որ դուք հրաժարվել եք մեր ընկերներին անցագիր տալ, մենք, այնուամենայնիվ, կարողացել ենք ծշտել, որ ձեր ջոկատների ջանքերով օկուպացված քաղաքի Յեղափոխական Կոմիտեի իշխանությունը վերածվել է պատրանքի և, որ այդ իշխանությունն իրական կոռուպցիայի լոկ այն ժամանակ, երբ դա անհրաժեշտ կլինի ձեր զինվորական հրամանատարությանը: Ձեր անընդհատ պահանջներն ու վերջնագրերը՝ ուղղված Յեղկոմին, որի ֆունկցիաները որպես սովետական մարմնի ոչ մի առնչություն չունեն այդ պահանջների հետ (հարկադիր աշխատանքների համար մարդկանց հայթայթումը, 10 հազար հրացանների հանձնումը, ասքյարի սպանության մեջ մեղադրվող մարդկանց հանձնումը, ասքյար, որին հայտնի չէ ո՞վ, ե՞րբ, որտե՞ղ և ինչպե՞ս է սպանել և այլն), Ալեքսանդրապոլի Յեղկոմին Ալեքսանդրապոլում տեղավորված օկուպացիոն ջոկատի ձեռքին դարձրել են գործիք և այդպիսով Հայաստանի Յեղկոմին հարկադրել ընդունել, որ այդ մարմնի հետագա գոյությունը կարող է միայն աշխատավոր մասսաների և քաղաքի բնակչության աչքում վարկաբեկել սովետական իշխանության գաղափարը: Ուստի Հայաստանի Յեղկոմը գտավ, որ անօգուտ է այդ մարմնի գոյությունը: Այնտեղ, որտեղ գոյություն ունի մի այնպիսի ռազմական օկուպացիա, որն ընդունակ է ստրկացման և ամայացման նմանօրինակ գործողությունների, այնտեղ չի կարող գոյություն ունենալ բանվորների և գյուղացիների իշխանություն:

Հիշյալ փաստերի անաչառ վերլուծությունը միանգամայն ակնհայտ է դարձնում, որ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության կառավարությունը չի կարող իրավամբ իրեն պատկանող տերիտորիայում հանդուրժել այնպիսի գործողություններ, որոնց նպատակն է երկրի տնտեսության քայքայումը և որոնք բնակչությանը մատնում են քաղցի ու բնաջնջման: Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության կառավարությունն իր պարտքն է համարում, նկատի առնելով վերոշարադրյալը, ձեր հրամանատարության գործողություն-

ները դիտել որպես փաստեր, որոնք հաստատապես կհարուցեն թուրքական բանակների հաջողության հետևանքով ձեր զորքերի կողմից ժամանակավորապես օկուպացված գավառների ամայացումն ու լիակատար քայքայումը: Ձեր բանակում, ինչպես բոլորին հայտնի է, իշխող խստագույն կարգապահությունը, սովետական իշխանության հանդեպ ձեր զինվորների ունեցած անկեղծ համակրանքը, մեզ ոչ մի հնարավորություն չեն տալիս ենթադրելու, որ վերը թվարկված բռնության փաստերը հանդիսանում են կամայականության ակտեր, մի բան, որով լրջորեն խորանում է կատարված վայրագությունների նշանակությունը:

Սովետական Հայաստանի ժողովրդի անունից, ժողովուրդ, որը երազում է խաղաղ ու ստեղծագործ կյանքի նորմալ պայմանների հաստատման մասին, ժողովուրդ, որը հարելով սովետական իշխանությանը, արտահայտել է իր նախորդների ազգայնական լծից ազատագրված հեղափոխական Թուրքիայի հետ հաշտ ու եղբայրաբար ապրելու իր բուն ցանկությունը (ահա այդ ժողովրդի անունից) ես ստիպված եմ հայտարարել Ձեզ, որ վերոհիշյալ փաստերը այնպիսի հայտանիշներ են, որոնք կարող են խանգարել Սովետական Հայաստանի և հեղափոխական Թուրքիայի հեղափոխական խնդիրների իրականացմանը:

Համոզված լինելով, որ այդ փաստերի գնահատումը մեր միջև չի հարուցի տարածայնություններ, իմ կառավարությունը չի կասկածում, որ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունն առանց հապաղելու ձեռք կառնի անհրաժեշտ միջոցներ, որպեսզի արգելվի նմանօրինակ փաստերի կրկնումը: Այդ բանին նա կարող է հեշտությամբ հասնել, եթե թուրքական օկուպացիոն զորքերը դուրս բերի Ալեքսանդրապոլի գավառից և Կարսի գավառի հյուսիսարևելյան շրջաններից:

Համոզված լինելով, որ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը չի կարող ժխտել այս պահանջների արդարացիությունը, Հայաստանի ՍՍՀ-ի կառավարությունն սպասում է Ձեր կառավարության հույժ շտապ պատասխանին, որտեղ հաղորդված կլինի այժմյան աննորմալ դրությունը լիովին վերացնելու համար ձեռք առնվող միջոցների մասին, մի բան, որը կհանդիսանա դրացի Սովետական Հայաստանի նկատմամբ Թուրքիայի ունեցած դիտավորությունների վկայությունը:

Հայաստանի Սոցիալիստական Սովետական Հանրապետության Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա. ԲԵԿՉԱԴՅԱՆ

Այս նոտային և 1921 թ. հունվարի 8-ի նոտային Թուրքիայի արտաքին գործերի կոմիսար Բեքիր Սամին 1921 թ. փետրվարի 5-ին պատասխանեց մի նոտայով, որի մեջ, մասնավորապես, ասված էր.

«Մենք գտնում ենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը մարմնավորում է իր մեջ ոչ թե բռնություն, այլ արդարություն, և որ նրա կատարումն անհրաժեշտ է Կովկասում կայուն խաղաղություն հաստատելու համար: Այն փաստը, որ պայմանների դեմ առաջ չի քաշված ոչ մի իրավական փաստարկ, բավարար չափով վկայում է մեր պնդումների արդարացիությունը: Մեզ զիջված բոլոր մարզերը բնակեցված են գլխավորապես թուրքերի կողմից, և մինչև իսկ դաշնակների տեռորի շրջանում այդ բնակչությանը ներկայացնող որոշ դեպուտատներ մասնակցել են մեր Ազգային մեծ ժողովի նիստերին: Այսպիսով, տերիտորիալ հարցը ենթակա չէ որևէ առարկությունների: **Բացի դրանից, Ձեր կառավարությունը, պայմանագրի**

ուժով, ունենալով մեկ անգամ ևս հանրաքվե անցկացնելու իրավունք, կարող է օգտվել այդ իրավունքից: Իսկ ինչ վերաբերում է հայկական բանակի տրամադրության տակ եղած զենքը հանձնելու մեր պահանջին, ապա այն միանգամայն հիմնավորված է, որովհետև Հայաստանը, որին չի սպառնում որևէ հարձակում իմպերիալիստական տերությունների կողմից, կարիք չունի մեծ սպառազինության, այն ժամանակ, երբ այդ տերությունները բոլոր կողմերից նեղում են մեզ, և մենք Կովկասում կարող ենք հանգիստ լինել սոսկ այն դեպքում, երբ կհասնենք զինաթափության: Այս կարծիքն առանձնապես համոզիչ է դառնում, երբ հաշվի է առնվում ձեր կողմից հարուցվող միջադեպերի հաճախացումը: Բացի դրանից, մենք մեր մտադրությունների անկեղծությունն ապացուցել ենք նրանով, որ Հայաստանին տվել ենք երկրի ներսում իր հայեցողությամբ ամրանալու լիակատար իրավունք և պահանջել ենք հանձնել լոկ այն զենքը, որը կարող էր ծառայել հարձակողական նպատակների համար: Մենք մեր հնամենի թշնամիների՝ կապիտալիստական պետությունների դեմ ենք ուղղելու այն զենքը, որի հանձնումը պահանջում ենք, և ինչքան ավելի ուշացնեք այդ զենքի հանձնումը, այնքան ավելի կուշանա Ալեքսանդրապոլի և Հայաստանին վերադարձվելիք մյուս մասերի էվակուացիան: Հայ ռազմագերիները ազատ կարձակվեն այն ժամանակ, երբ դուք կվավերացնեք պայմանագիրը և կսկսեք այն փաստորեն կիրառել: Երբ հայկական տիրապետության տակ չեն մնա գերազանցապես թուրքերով բնակեցված տերիտորիաներ, և թուրքական տիրապետության տակ չեն մնա գերազանցապես հայերով բնակեցված տերիտորիաներ, այդ ժամանակ միայն երկու ժողովուրդների միջև կհաստատվի խաղաղություն և իսկական եղբայրություն:

Ավարտելուց առաջ ես ցանկանում եմ նաև ժխտել այն մեղադրանքները, որոնք Դուք բարդում եք մեր զորքերի վրա: Պատերազմի ժամանակ թուրքական բանակի վարքն այնքան օրինակելի էր, որ այդ բանի հետ համաձայնվել են նույնիսկ ամերիկացիները, որոնք, ինչպես հայտնի է, մեր նկատմամբ ունեն աչառու վերաբերմունք: Միանգամայն ակնհայտ է, որ այդ բանակը հաշտության կնքումից հետո չէր կարող թույլ տալ այնպիսի գործողություններ, որպիսիք դուք վերագրում եք նրան: Ինչ վերաբերում է բռնագրավումներին, որոնք համաձայն Ձեր հայտարարության իբր թե տեղի են ունեցել Ալեքսանդրապոլում, ապա իրականում դրանք կատարվել են այդ քաղաքի Հեղափոխական կոմիտեի կողմից, որը կոմունիստական սկզբունքների համաձայն անց է կացրել մասնավոր անձանց պատկանող արժեքների ազգայնացում: Մենք հերքում ենք նաև այն զրպարտությունները, ըստ որոնց մենք իբրև թե այդ Կոմիտեին խանգարել ենք ազատ աշխատել: Մենք միշտ, ինչպես դաշնակների տապալումից առաջ, նույնպես և դրանից հետո, պաշտպանել ենք հայկական կոմիտեին և օժանդակել, որ այն կանգնի իշխանության գլուխ: Հիշյալ Կոմիտեն հունվարի 2-ին Երևանից եկած գործակալների համառ պահանջով հրաժարական տվեց՝ նպատակ ունենալով մեզ մեղադրել այն բանի մեջ, թե մենք խանգարում ենք նրան աշխատել, բայց հենց որ մեր զինվորական պարետը մեր վարքի անկեղծությունն ապացուցելու համար հայտնեց նոր ընտրություններ անցկացնելու իր մտադրությունը (Կոմիտեն) հետ վերցրեց իր հրաժարականը:

Չնայած այս բոլոր փաստերին, ես հայտնում եմ Ձեզ, պ-րն Կոմիսար, թուրք ժողովրդի՝ Հայաստանի աշխատավոր ժողովրդի հետ հաշտ ու խաղաղ ապրելու ջերմ ցանկությունը, պայմանով սակայն, որ կղաղարեցվեն բոլոր պրոպոկացիոն ելույթները, որոնք կարող են միայն սրել փոխադարձ հարաբերությունները, որ բարեխղճորեն կկատարվեն Ալեքսանդրապոլի պայմանագրի կետերը, որոնք կազմված են այնպես, որպեսզի բավարարվեն արդարության և հավասարության սկզբունքները, որոնց ջա-

տագովները մենք կցանկանայինք լինել և, վերջապես, որպեսզի բավարարվեն Թուրքիայի, Հայաստանի և Ռուսաստանի աշխատավոր ժողովուրդների իսկական շահերը այն պայքարում, որը նրանք մղում են արևմտյան իմպերիալիզմի դեմ»¹:

Թուրք դիվանագետի տված պատասխանն առավել զայրացուցիչ էր, քանզի Կարաբեքիի հորդաները գազանաբար հռչակում էին անպաշտպան արևելահայությանը, կողոպտում նրա ունեցվածքը, ավերակակույտերի վերածում երբեմնի շեն ու բարգավաճ երկիրը: Հայաստան գալով **Ալեքսանդր Մյասնիկյանը** հետազոտել է վիճակը և այդ մասին հատուկ զեկուցագրով դիմել **Գ. Վ. Հիչերինին**:

Ըստ այդ զեկուցագրի, ոչ լրիվ տվյալներով, պատերազմի տարիներին և նրանից հետո թուրքական «կանոնավոր» զորքերն ու անկանոն խուժանը **կոտորեցին 198 հազար մարդ և կողոպտեցին ու ոչնչացրին 18 միլիոն ռուբլու (ոսկով) հարստություն**: Միայն Ղալթաղչի գյուղում հետազայում (թուրքերի գնալուց հետո) հայտնաբերվեցին «11.836 թաղված դիակներ, որոնց 90 տոկոսը կանայք ու երեխաներ էին, իսկ 10 տոկոսը՝ տղամարդիկ: Դիակների վրա եղած վերքերի հետքերից երևում էր, որ կոտորածը տեղի էր ունեցել գազանաբար, օրինակ, դիակների վրա կարելի էր տեսնել սվիճի ու դաշույնի 10-15 վերք, բազմաթիվ դիակներ առանց գլուխ էին և ամենասոսկալի այլանդակված ձևով, իսկ սպանվածների մի մասը վառվել է շենքում»: Մի այլ հաղորդագրության մեջ նշվում է, որ թուրքերը «Ալեքսանդրապոլի և Ախալքալաքի շրջանում սրի են քաշել մոտ 30 գյուղ, փրկվածների մի մասը գտնվում է ամենաթշվառ դրության մեջ... Կոնֆիսկացիայի ու բռնագրավման գործում թուրքերն իրենց գերազանցել են: Դուրս է տարվում բացարձակապես ամեն ինչ, նույնիսկ կրոնական բովանդակություն ունեցող նկարները... նրանք փողոցներում նույնիսկ օրը ցերեկով կողոպտում են քիչ թե շատ լավ կոշիկներ կամ վերարկու ունեցող քաղաքացիներին»²:

Այսօրվա Հայաստանի սահմանագլխին կանգնած Կարս քաղաքի մասին մի փոքր մանրամասնենք:

Քյազիմ Կարաբեքիի գլխավորած քեմալական բարբարոսներն արևելահայության նկատմամբ կիրառած վայրագություններով ձգտում էին գերազանցել Էնվերի բանակի մարդասպաններին, կողոպտիչներին: Կարսի գրավման ժամանակ թուրքերի վայրագություններին ականատես Ռուսինիայի քաղաքացի Վ. Ինեսկուն 1921 թ. հունվարի 27-ին գրած իր մամակով հաղորդում է. «Ես թուրք բժիշկ Նուրի-բեյից իմացա, որ քաղաքում սպանվել են 8 հազար հայեր (կանայք, երեխաներ ու տղամարդիկ), սակայն իմ դիտումներով սպանվածների թիվը պետք է լինի 10-12 հազարից ոչ պակաս: Տները ամբողջովին կողոպտված են... Ալեքսանդրապոլից մինչև Նալբանդ կայարանը ամեն ինչ գտնվում է թուրքերի ձեռքերում և այդ շրջանում... ոչնչացվել է 140 հայկական գյուղ և գլխովին սրի են քաշվել 18-ից մինչև 45 տարեկան տղամարդիկ: Մի խոսքով, այդ շրջաններում մնացած հայերի, ինչպես և գերիների դրությունը հուսահատական է: Շատ գերիներ սառչում են և շատերը մահանում քաղցից»³: (Մենք գիտակցաբար ենք կրկնել վերոհիշյալ երկու ընդարձակ պարբերությունները):

¹ «Документы внешней политики СССР», том III, Москва, 1959, стр. 481-488. Տե՛ս նաև «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», Երևան, 1972, էջ 482-485:

² Մ. Վ. Արզումանյան, Դարավոր գոյամարտ, Երևան, 1989, էջ 542: Տե՛ս նաև Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 438-439:

³ «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», стр. 395-397. Տե՛ս նաև Ե. Ղ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 498:

Մեկ այլ փաստաթղթով հաղորդվում է, որ Կարսի գրավման ժամանակ թուրքերի բարբարոսությունները շարունակվում էին երկու շաբաթ անընդմեջ: Սպանվածների թիվն անհամար էր. «Գրավելով Կարսը, թուրքերն անմիջապես ձեռնամուխ եղան այնտեղից Սարիղամիշ ու Կարին փոխադրելու այն ամենը, ինչ իրենցից արժեք էին ներկայացնում՝ զենք, արկեր, մեքենաներ գործարաններից և արհեստանոցներից, տնային կահ-կարասի և այլն»¹:

Մոսկվայի պայմանագրի ստորագրումից **երեք ամիս հետո** Ք. Կարաբեքիրի հորդաներն իրենց ասպատակությունները շարունակում էին Արևելյան Հայաստանում, իհարկե ավելի դաժան, ավելի անմարդկային: Այնքան ծանր էր դրանց ազդեցությունը, այնքան հնչեղ վերջիններիս արծազանքը, որ դրանց ծայրը հասնում էր Մոսկվա և լուրջ մտահոգություններ առաջ բերում Կրեմլում:

1921 թ. հունիսին **Գ. Վ. Չիչերինը** հեռագրում է Հայռեկոմի նախագահ **Սարգիս Կասյանին** և նրան ցավ է հայտնում Թուրքիայի բռնազավթող զորքերի ծավալած հայասպան գործողությունների առիթով: Նա հեռագրում է.

Երևան, ընկեր Կասյանին

Ռուսաստանի Սովետական կառավարությունը խոր հուզմունքով իմացավ Հայաստանի եղբայրական Սովետական Ռեսպուբլիկայի և, մասնավորապես, նրա օկուպացված մասերի ծանր դրության մասին: **Մեզ ծայր աստիճան հուզեցին և վշտացրին Ալեքսանդրապոլի շրջակայքում օկուպացիոն զորքերի կատարած էքսցեսների և Ալեքսանդրապոլի Ռևկոմի ծանր դրության վերաբերյալ լուրերը:** Մենք այդ առթիվ արդեն դիմել ենք թուրքական կառավարությանը և դեռ ամենավճճական ձևով կպնդենք, որ թուրքական իշխանությունները փոխեն իրենց վերաբերմունքը Հայաստանի եղբայրական Սովետական Ռեսպուբլիկայի նկատմամբ: Սովետական Հայաստանի հետ կապի անբավարարությունը ծանր է անդրադառնում նրա նկատմամբ մեր քաղաքականությունն անցկացնելու, բանվորա-գյուղացիական սովետական ռեսպուբլիկաների լիակատար համերաշխության, բոլոր տեսակետներից Հայկական Սովետներին լիակատար և բազմակողմանի օգնություն ու աջակցություն ցույց տալու վրա: Կանենք ամեն բան, որքան ներում են մեր ուժերը՝ Հայկական Ռեսպուբլիկայի հետ ավելի սերտ կապ ստեղծելու և Սովետական Հայաստանի եղբայրական աշխատավոր մասսաներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար:

Արտգործող կոմ. Չիչերին

Քենալական թուրքերի, ասել է թե՛ Կարաբեքիրի հորդաների Արևելյան Հայաստանում կատարած բարբարոսությունների բացահայտմանն է անդրադարձել **Ս. Խ. Կարապետյանը** դեռևս **1965 թ. հրապարակած** «1920 թվականի հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը» իր աշխատության էջերում: Ճիշտ է, **պրոֆեսորը թունդ լեմինյան էր, սակայն** դա չէր խանգարել նոր փաստեր դնել գիտական շրջանառության մեջ և ցույց ռալ թուրքերի իսկական դեմքը:

Ս. Խ. Կարապետյանի բերած փաստերի համաձայն՝ քենալականները հակասովետական քաղաքականություն էին վարում Հայաստանի սովետական իշխանու-

թյան նկատմամբ 1920 թվականի վերջերին և 1921 թվականի սկզբներին: Սկզբից և եթ ավետք է նշել, որ Թուրքիան սվիններով դիմավորեց Հայաստանում սովետական կարգերի հաստատումը և բոլոր միջոցները ձեռք առավ՝ այն շուտափույթ տապալելու համար: Թուրքիան ամենևին չթաքցրեց իր թշնամական վերաբերմունքը դեպի Սովետական Հայաստանը: Նա բացարձակ կերպով հայտարարեց, որ չնայած սովետական կարգերի հաղթանակը Հայաստանում իրենց համար անսպասելի էր, բայց այն բոլորովին չի քանդում իր պլանները: Հայաստանի և Սովետական Ռուսաստանի կառավարությունները վճռականորեն մերկացնում էին քենալականների հակասովետական քաղաքականությունը: 1921 թվականի հունվարի 7-ի նոտայով Սովետական Հայաստանի կառավարությունը մատնանշում էր թուրքական կառավարության այն բարբարոսական քաղաքականության մասին, որ տարվում էր թուրքական բանակի և վարչակազմի կողմից Հայաստանի օկուպացված շրջաններում: Նոտայում, որպես փաստ, նշվում էր 1920 թվականի դեկտեմբերի 26-ին Քավթառլի (այժմ Փանիկ) գյուղում ինը երիտասարդ կոմունիստների և քաղաքում **ռևկոմի** տասը միլիցիոներների գնդակահարությունը: Ալեքսանդրապոլի Ռևկոմի 1921 թվականի հունվարի 25-ի հայտարարության համաձայն, Ալեքսանդրապոլից և գավառից Թուրքիա էր ուղարկված 15 հազար մարդ, և 5000 մարդ գնդակահարվել կամ անհետ կորել են: Կարս քաղաքում թուրքերը գնդակահարել էին 12 հազար մարդ: Բայց ամենասոսկային Համանլուի շրջանում տեղի ունեցածն էր: Ըստ Սովետական Հայաստանի կառավարական հանձնաժողովի 1921 թվականի մայիսի 11-ի արձանագրության, թուրք ջարդարարները Աղբուլաղ գյուղում սպանել էին 1186 մարդ, Ղալթախչիում՝ 2100, Ղարաբոյախում՝ 11000 մարդ: Հողափոսերում գտնվել էր 11886 դիակ, որոնց 80 տոկոսը կանայք և երեխաներ էին²:

Նույն ջարդերի մասին է գրում Հայաստանի Ռևկոմի նախագահի տեղակալ Ա. Մռավյանը՝ Ս. Օրջոնիկիձեին ուղարկած իր զեկուցագրում: Այստեղ ասված է, որ թուրքերը վերջնականապես լկտիացել են, քանում են կիսաքաղց երկրի վերջին հյուսիսը: Երկիրը դատապարտված է սովամահության: Տեղի են ունենում սոսկալի գազանություններ: Պարզ է մի տեղեցնց, կոտորել ամբողջ ազգաբնակչությանը³:

Սովետական Հայաստանի կառավարությունը 1921 թվականի հունվարի 18-ի՝ թուրքական կառավարությանն ուղղված նոտայում առանձնապես նշում էր այն սոսկալի վիճակը, որ ստեղծել էին թուրքերն օկուպացված շրջանների աշխատավորության համար: Այնտեղ մասնավորապես ասված էր, որ օկուպացիոն իշխանությունները հավաքում են 18-ից մինչև 50 տարեկան հասակ ունեցող տղամարդկանց, խլում են նրանց հագի շորերը, հագցնում պարկեր և սառնամանիքի պայմաններում ուղարկում աշխատանքի:

Թուրքերի կողմից Հայաստանի օկուպացված շրջաններում հայ ժողովրդի թալանի և կոտորածների մասին Մոսկվա ուղարկած իրենց նամակում գրում են Վլադիկավկազից հայրենիք վերադարձող հայ գաղթականները: Այդ փաստաթղթում կարդում ենք. «Մենք՝ փախստական հայերս, խոր ուրախության զգացումով ողջունեցինք սովետական իշխանության հաստատումը Հայաստանում: Մենք հավատում էինք, որ հասել է ժամանակը, երբ իր բոլոր ներքին թշնամիներին հաղթած Ռուսաստանը իր հզոր ձեռքը կմեկնի օգնելու բազմատանց հայ աշխատավոր ժողովրդին, որը ներգրավվել է պատերազմի մեջ Քենալի դեմ և ուժասպառ է լինում անհավասար պայքարում... Քենալը ուժեղ տեմպերով ավերում է Սովետական Հայաստանը, թա-

¹ Центральный государственный архив Красной армии (այսուհետև՝ **ЦГАКА**), фонд 109, опись 3, дело 241, л. 12.

² **ՀՍՄՀ ԳՅՍԸ ԿՊՍ**, ֆոնդ 114, գործ 13, թերթ 55: Տե՛ս նաև «Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Երևան, 1960, **ՀՍՄՀ ԳՍ** հրատարակչություն, էջ 542:

³ Տե՛ս **ՀՍՄՀ ԳՊԿՍ**, ֆոնդ 4/114, գ. 75, թ. 12:

² Տե՛ս նույն տեղում, գործ 3, թ. 16-17:

լանում է աշխատավոր գյուղացիների վերջին ունեցվածքը, վիթխարի կոնտրիբուցիաներ է դնում, ամբողջ աշխատունակ բնակչությանը հավաքում և քշում է էրզրում՝ տաժանակիր աշխատանքի, իսկ Հայաստանի սովետական հիմնարկներին բոլորովին հաշվի չի առնում և արհամարհում է նրանց: Իրերի նման դրությունը այլևս շարունակվել չի կարող, քանի որ սպառնում է վերջնականապես քայքայել և կործանել Սովետական Հայաստանը: **Այժմ, ինչպես միշտ, հայերի բոլոր հայացքներն ուղղված են Ռուսաստանին... Մեծ հույսով նայում ենք Ռուսաստանի բանվոր-գյուղացիական կառավարությանը և սպասում նրա հզոր ու վճռական քայլին, որ կարող է խելքի բերել Քեմալին և փրկել Սովետական Հայաստանը հետագա ավերումներից»¹:**

Թուրքերի կողմից հայերի նկատմամբ նոր կոտորածներ սարքելու մասին 1920 թվականի դեկտեմբերի կեսերին մի գրությամբ Վ. Ի. Լենինը Չիչերինի ուշադրությունն է հրավիրում այն հարցի վրա, թե ստացված տեղեկությունների համաձայն՝ Թուրքիան պատրաստվում է կազմակերպել հայերի նոր կոտորածներ, հարկավոր է շտապ օգնություն՝ կանխելու այդ վտանգը:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո էլ թուրքերը շարունակեցին հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման քաղաքականությունը: Օկուպացված շրջաններում սպանությունները, թալանը, տարբեր ձևերով ու մեթոդներով բռնությունները, պետական և մասնավոր գույքի ոչնչացումը և այլ դաժանությունները շարունակվեցին մինչև թուրքերի էվակուացիան Ալեքսանդրապոլից ու գավառից:

Սովետական Հայաստանի պետական հանձնաժողովի տվյալներով, Ալեքսանդրապոլի և գավառի օկուպացված շրջաններում թուրքերի կողմից սպանվեց ու թուրքիա գերության ուղարկվեց **150** հազար մարդ, իսկ թուրքերի հասցրած նյութական վնասը կազմում էր **19 743 680** ռուբլի ոսկով:

Առանձնապես ծանր վիճակ ստեղծվեց Ալեքսանդրապոլի **ռևկոմի** համար: Ինչպես արդեն նշվել է, Ալեքսանդրապոլի կազմակերպությունը լուրջ սխալ կատարեց՝ քեմալական բանակը համարելով ռևոլյուցիոն: Նա 1920 թվականի նոյեմբերի 6-ին ստեղծեց հեղկոմ և այն հայտարարեց Սովետական Հայաստանի հեղկոմ (երբ Հայաստանում դեռ սովետական կարգերը չէին հաղթանակել), որն անգիտակցաբար սկսեց զործակցել թուրք ռեակցիոն, հակասովետական հրամանատարության հետ: Այդ հեղկոմի կազմի մեջ մտնում էին բոլշևիկյան կուսակցության նվիրված ընկերներ Մ. Գրիգորյանը (մախագահ), Ն. Կուրդիյանը, Ա. Մովսիսյանը, Ն. Ստեփանյանը, Ջ. Աշրաֆյանը և ուրիշներ:

Թուրքերը, իհարկե, փորձ արեցին հեղկոմին օգտագործել իրենց հակասովետական քաղաքականությունը կիրառելու համար, բայց վերջիններիս վայրագությունները տեսնելով՝ հեղկոմը շուտով համոզվեց, որ ինքը խաբված է, սկսեց շտկել իր սխալները: Այս գործում նրան օգնեց Հայաստանի ռևկոմը: 1920 թվականի դեկտեմբերի 5-ին ռևկոմի նախագահ Ս. Կասյանի և ՌՍՖՍՌ լիազոր-ներկայացուցիչ Բ. Լեգրանի ստորագրությամբ հեռագիր ուղարկվեց Ալեքսանդրապոլ, որով խիստ դատապարտվում էր Ալեքսանդրապոլի ռևկոմը, որն իրեն ինքնագլուխ հայտարարել էր Հայաստանի ռևկոմ և ընկել թուրքական հրամանատարության ազդեցության տակ²:

Թուրքերի՝ Արևելյան Հայաստանում կատարած վայրագությունների մասին փաստերի հեղեղ է պահպանվել: Բավարարվենք վերոհիշյալով, հավելելով, որ Քե-

¹ **ՀՍՍՌ ՀՈԿՊԱ**, ֆ. 114, գ. 3, թ. 34:

² **Ս. Խ. Կարապետյան**, 1920 թվականի հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Երևան, 1965, «Հայաստան» հրատարակչություն, էջ 45-50:

մալը ձգձգում էր նոր պայմանագրի ստորագրումը, որպեսզի այս հատվածն էլ վերջնականապես մաքրեր հայ բնակչությունից: Դժբախտաբար, նրանց հաջողվում է անմարդկային այդ ծրագրերն իրողության վերածելը:

Մ. Քեմալը ձգձգում էր նոր պայմանագրի ստորագրման գործը, մտքում պահած լինելով Ալեքսանդրապոլի հրեշավոր դաշնագրի գոյության փաստը: Հայաստանի Հանրապետության բազմաթիվ վերջնագրերին Կարաբեքիրը վերաբերվում էր լռությամբ և անտարբերությամբ: Գործին խառնվեց Ռուսաստանը:

1921 թ. ապրիլի 3-ին Գ. Վ. Չիչերինը խստաշունչ նոտայով դիմեց Մոսկվայում նստած թուրքական դեսպան Ալի Ֆուատին, նրանից պահանջեց. **«Թուրքական զորքերի անհապաղ էվակուացումը Ալեքսանդրապոլից, որպեսզի խուսափենք այնպիսի անախորժ հետևանքներից, որոնց կարող է հասցնել այդ քաղաքի շարունակվող օկուպացիան թուրքերի կողմից** (ընդգծումները մերն են - Գ. Ղ.)»³: Կարաբեքիրը չընդառաջեց Չիչերինի պահանջին: Վերջինս հարկադրված հեռագրեց **Գ. Վ. Օրջոնիկիձեին**, ապա **Մոկիվանուն**, նրանց հրամայելով Անկարայից (Անգորա) պահանջել «անհապաղ Ալեքսանդրապոլը ազատել թուրքերից»⁴:

Գ. Չիչերինը հանձնարարում էր, թե. «Մեր անունից կտրուկ բողոք հայտնեցեք Կարաբեքիր փաշայի այն հայտարարության դեմ, թե նա չի ցանկանում ազատել Ալեքսանդրապոլը և Ազգային մեծ ժողովի կառավարությանը հաղորդեցեք, որ մենք վճռականապես պնդում ենք, որ **թուրքական զորքերն անհապաղ հեռանան Մոսկվայում որոշված սահմանից այն կողմը**: Մատնանշեք այն բանը, թե ինչ ճակատագրական հետևանքներ կարող է ունենալ թուրքական զորքերի ընդհարումը կարմիրբանակային զորամասերի հետ, այլև այն, որ բոլոր սովետական հանրապետությունները սերտ և անխախտելի դաշինքի մեջ են գտնվում Սովետական Ռուսաստանի հետ»⁵:

ՉԻՉԵՐԻՆ

Անկասկած է, որ Կարաբեքիրը կատարում էր Քեմալի գաղտնածածուկ հրամանները և դիմադրում խորհրդային կոմիսարի պահանջներին, այն ժողկոմի, որը ոսկով ու զենքով սնում էր քեմալական բանակին: Դրանից զայրացած, Գ. Չիչերինը բացատրական գրություն ուղարկեց Թիֆլիսում գումարվող թուրք-Անգրկովկասի կոնֆերանսի մասնակիցներին, շեշտելով, կրկնելով, թե «Ռուս-թուրքական կոնֆերանսի ժամանակ մենք միլիոն անգամ հայտարարել ենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը չենք ճանաչում, և եթե թուրքերը առաջ քաշեն այն, պետք է ամենակատեգորիկ կերպով հայտարարել, որ նա ուժի մեջ չէ: ... **Ալեքսանդրապոլի պայմանագիրը այնքան հրեշավոր է, որ նրա ամեն մի մատնանշում պետք է ամենակտրուկ հակահարված ստանա, կարելի է հայտարարել, որ Ռուսաստանյան հանրապետությունը ոչ մի բանի առաջ կանգ չի առնի, եթե Ալեքսանդրապոլի պայմանագիրը ճանաչելու համար Հայաստանին ստիպելու փորձը կրկնվի**: ...Թուրքիայի հետ պայմանագրերում կովկասյան հանրապետությունների սովետերությունը խախտող ոչ մի որոշում մենք չենք ճանաչի...»⁶:

1921 թ. ապրիլին Չիչերինը հարկադրված էր նորից հեռագրել Գ. Վ. Օրջոնիկիձեին, հայտնելով. «Ալի Ֆուատն ինձ խոստացել է անհապաղ ազատել Ալեքսանդրա-

³ «Հայաստանը միջազգային փաստաթղթերում...», էջ 509:

⁴ Նույն տեղում, էջ 510:

⁵ «Ղոկտեմբերյան Սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում», էջ 514:

⁶ **ՀՍՍՀ ՀՅՍԵ ՊԿԱ**, ֆոնդ 4/1143, ցուցակ 2, գործ 63, թերթ 47:

պոլը: Նրան իսկույն ևեթ հաղորդում եմ **Կարաբեքիի խուլիգանության մասին, մատնանշելով, որ թուրքիայի և սովետական Հայաստանի միջև պատերազմը կնշանակի պատերազմ թուրքիայի և սովետական Ռուսաստանի միջև**»¹:

ԶԻՉԵՐԻՆ

Մ. Քենալը, զգալով դրության ավելի քան լրջությունը և նոր պատերազմի վառողի հոտն առնելով, Ք. Կարաբեքիին հրամայեց զորքերը ետ քաշել Ալեքսանդրապոլից: Թուրք վանդալներն ավերելով, հրդեհելով, կողոպտելով գավառը, 1921 թ. ապրիլի 22-ին սկսեցին թողնել Ալեքսանդրապոլը²:

Թուրքիայի ռազմական նախարար, միաժամանակ գլխավոր շտաբի պետ Քենալ Ֆեզի փաշան իրական լուրեր էր «հայթայթել» Հայաստանում ապրող մուսուլմաններից, որ սովետական XI Կարմիր բանակը Կրեմլից հրահանգ էր ստացել՝ թուրքերի չնահանջելու դեպքում մտնել Ալեքսանդրապոլ և հաղթարշավը շարունակել մինչև ռուս-թուրքական 1914 թվականի սահմանները³: Կարաբեքիը հարկադրված էր ենթարկվել Անկարայի հրամանին, սակայն զորքերի ետ քաշելու պրոցեսն ավարտվեց մայիսի 25-ին միայն:

Մ. Քենալը, կորցնելով «իր համար նպաստավոր այդ պայմանները», որոշեց կիրառել հակադարձ գործողություններ: Նա արտգործնախարարի պաշտոնից ազատեց Բեքիր Սամի բեյին և իբրև մասնավոր անձ ուղարկեց Արևմտյան Եվրոպա, դիվանագիտական մուրիկության: Խորամանկության մեջ հավասարը չունեցող այդ դիվանագետը խնդիր ուներ Թուրքիան մերձեցնել Անտանտի տերություններին, հատկապես Անգլիային և Ֆրանսիային, եթե պետք լիներ՝ կապերը խզել Ռուսաստանի հետ: Անշնորհակալության ինչպիսի՞ օրինակ, այստեղ են ասել՝ նրանք գործում էին ժողովրդական ասացվածքին համապատասխան, այսինքն՝ **«ուտող ուրացողի պես»**:

1921 թ. մայիսին Անգլիայի արտգործնախարարությունում ստացված տեղեկությունների համաձայն, Բեքիր Սամի բեյը Եվրոպայում ակտիվ հակառուսական կամպանիա էր տանում: Նա հանդիպումներ էր ունենում Անդրկովկասի հանրապետությունների նախկին կառավարությունների ներկայացուցիչների հետ՝ փորձելով նրանց միջոցով ազդել թուրք-անդրկովկասյան բանակցությունների վրա: Այդպիսի հանդիպումներից մեկի ժամանակ նա չի թաքցրել, թե ինչ նպատակներ է հետապնդել Սուստաֆա Քենալի կառավարությունը՝ մերձենալով Խորհրդային Ռուսաստանին: «Ինչպես ձեզ հայտնի է, - ասել նա, - ես Եվրոպա եմ եկել հատուկ հրահանգով», որի նպատակն է եղել պարզել, թե ինչով կօգնեն դաշնակիցները Թուրքիային՝ Մոսկվայի հետ Անկարայի հարաբերությունները խզվելու դեպքում: **«Անկարայի հարաբերությունները Մոսկվայի հետ, - հայտարարել է նա, - ժամանակավոր են և ոչ կայուն:** Թուրքերը Ռուսաստանի օգնության կարիքն են ունեցել՝ նրանից դրամ, զենք ու ռազմական հանդերձանք ստանալու համար, որպեսզի ի վիճակի լինեն շահելու պատերազմն ընդդեմ իրենց թշնամիների, որոնց մեջ, դժբախտաբար, մտնում է նաև Մեծ Բրիտանիան»⁴:

¹ «Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 511:

² **Չալեն Մարրեան**, Երեք դաշնագրեր, էջ 125:

³ Այս և հաջորդ հարցերի պատմության վերաբերյալ անգլիական աղբյուրներից նյութեր է քաղել և հրապարակել **Փալուստ Փալոյանը**, տես նրա «Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ.», Երևան, 1999, էջ 461-465:

⁴ **Փալուստ Փալոյան**, նշված աշխատությունը, էջ 462: Տես նաև Public Record Office, FO 371/6272, p. 160.

Բեքիր Սամին Լոնդոնում հայտարարել է, որ Փարիզում տեսակցել է Բրիտանի հետ և հարցրել է նրան՝ «Եթե մենք ցանկանում ենք շահել Ֆրանսիայի համակրանքը, Ֆրանսիան կուզենա՞, որպեսզի Թուրքիան իր հարաբերությունները խզի Ռուսաստանի հետ: Բայց այդ դեպքում Ֆրանսիան մեզ կտրամադրի՞ դրամ, զենք և ռազմական հանդերձանք, որը առատորեն ստանում ենք Մոսկվայից»: Պ-րն Բրիտանը, - վկայում է Բեքիր Սամին, - պատասխանեց, որ «Ֆրանսիան դա չի կարող անել, քանի որ Թուրքիայի հետ դեռ հաշտություն չի կնքել: Բայց Ֆրանսիան կարող է այդ օգնությունը ցույց տալ այլ ճանապարհով: Ֆրանսիան պատրաստ է կովկասյան հանրապետություններին մատակարարել (նկատի ունի տապալված կառավարությունները) դրամ, ռազմական հանդերձանք կամ կարող է այլ կարգի օգնություն ցույց տալ, եթե վերջիններս Ֆրանսիայի կոնցեսիաների երաշխիք տան մասնավորապես Բաքվի շրջանում և ճանաչեն Ռուսաստանի հին պարտքերի իրենց բաժինը: Այդ ճանապարհով Թուրքիան կարող էր օգնություն ստանալ այս հանրապետությունների միջոցով»¹:

Անտանտան, մասնավորապես Մեծ Բրիտանիան էլ իր գաղտնագրված քայլերն էր շարունակում անել քենալականների հետ: Ծովային այդ հրեջը սպասում էր հույն-թուրքական հաջող կամ անհաջող պատերազմի ընթացքին, նոր ըստ այդմ կայացներ իր որոշումը: Բարեբախտաբար, հույներն այդ տարում հասան անկանխատեսելի հաջողությունների:

Հունական բանակի գերագույն նպատակն էր՝ հիմնովին ոչնչացնել թուրքական բանակը և տիրանալ Անկարային: Օգնության նպատակով Սև ծովում գտնվող դաշնակիցների նավատորմն առափնյա շրջաններով լողալով, կրակահերթերով ավերում էր թուրքական բնակավայրերը և հունական բանակին հասցնում զինամթերք և սննդամթերք: Վիճակն այնպիսին էր, որ դաշնակիցները բոլորովին չէին կասկածում հույների հաղթանակի վրա²:

Արևմտյան ռազմաճակատում թուրքերն ունեին 50 հազար սվին, 5 հազար սուր, 160 հրանոթ, 440 զնդացիր: Գերագույն գլխավոր հրամանատարության կարգադրությամբ հարավային և արևմտյան ռազմաճակատները միավորվեցին իրար և միասնական հրամանատար նշանակվեց **Իսմեթ փաշան** (հետագայում վերանվանված **Իսմեթ Ինենյու**):

Թուրքական արևմտյան ռազմաճակատի զորքերը բաղկացած էին ինքնուրույն հինգ խմբավորումներից: Առաջին խումբը տեղակայված էր **Ինենյու** գետի շրջակայքում, որը գլխավորում էր գնդապետ **Իզզեդին բեյը**: Երկրորդ խմբավորումը նստած էր **Աֆիոն-Կարահիսարի** շրջանում և գտնվում էր **Խալիլ բեյի** հրամանատարության տակ: Երրորդ խումբը նստած էր **Կյուտախիայում**, որն ուներ հրամանատար **Արիֆ բեյին**: Չորրորդը՝ **Եսկիչեհիրումն** էր, հրամանատարն էր **Սամի բեյը**: Հինգերորդ խմբավորումն իր նստավայրն էր ընտրել Եսկիչեհիրի և Կյուտախիայի մեջտեղի տարածքը, հրամանատարն էր **Ֆահրեդդին բեյը**:

Հունական բանակի հարձակողական մարտերը սկսվեցին **1921 թ. հուլիսի 9-ին առավոտյան ժամը 7-ին**: 15-օրյա արյունահեղ, երկուստեք զոհառատ մարտերն ավարտվեցին **հունական բանակի փայլուն հաղթանակով**³: Հուլիսի 12-ին հույները գրավեցին Աֆիոն-Կարահիսարը, 17-ին՝ Կյուտախիան, 20-ին՝ Եսկիչեհիրը: Թուր-

¹ **Փալուստ Փալոյան**, նշված աշխատությունը, էջ 462-463:

² **Ա. Մ. Շախմուդինով**, նշված աշխատությունը, էջ 243-244:

³ **Կ. Շեֆ**, Оккупация Смирны греками и национально-освободительное движение в Анатолийской Турции. - "Армия и революция", 1922, N 5, стр. 118-121. Տես նաև **Ա. Մ. Շախմուդինով**, նշված աշխատությունը, էջ 243-244:

քական գործերը հունական բանակի կողմից ստացած սպասելի և անսպասելի հարվածներից շճած, հարկադրված էին թողնել **Սակարիա** (որի անունով էլ կոչվեց ճակատամարտը) գետը և մի կերպ դիրքավորվեցին Անկարայից հիսուն կիլոմետր բաժանող լեռնոտ մի տարածքի վրա:

Այսպիսով, հունական բանակի ձեռքն անցան այնպիսի խոշոր քաղաքներ, ինչպիսիք էին Կյուտախիան և Եսկիշեհիրը, Անկարան Բաղդադի երկաթգծին կապող բոլոր մայրուղիների, հատկապես առևտրատնտեսական ճանապարհների: Բացի դրանից, թուրքերը ռազմադաշտում թողեցին սպանված **վեց հազար սակյար**, տաս հազարից ավելի ռազմագերիներ, մեծ քանակությամբ զենք և զինամթերք: Հունական բանակի **Սակարիայի** ճակատամարտում տարած հաղթանակը մեծ ոգևորություն առաջացրեց Հունաստանի ողջ տարածքով մեկ: Ժողովրդի ոգևորությանը չափ ու սահման չկար: Այդ ուրախությունը բանակի և նրա հրամանատարության հետ կիսելու նպատակով հուլիսի 28-ին ռազմաճակատ ժամանեց **Հունաստանի թագավոր Կոնստանդինը**, որը և ընդունեց հունական բանակի գլխավոր հրամանատարի պարտականությունները: Թագավորի նոր հրամանով Հունաստանից և Թրակիայից ռազմաճակատ տեղափոխվեցին նոր դիվիզիաներ, ռեզերվում պահված ուժերը ևս դրվեցին գործողության մեջ, ստեղծվեցին մատակարարման և բանակին նյութապես բավարարելու նոր բազաներ:

Թուրքիայի և թուրքական բանակի դրությունը ճակատագրական էր, բացահայտ կործանման էր հասել: Ժողովրդի դժգոհության ալիքը ծփում էր ամբողջ երկրով մեկ: Ազգային ժողովի (այսինքն՝ մեջլիսի) դեպուտատների հուսահատությանը չափ ու սահման չկար: Սակայն, սթափվելով ստացած ծանր հարվածներից, թուրքական Ազգային մեծ ժողովը (ԹԱՄԺ) Մուստաֆա Քեմալին նշանակեց զորքերի գլխավոր հրամանատար, օժտեց անսահմանափակ լիազորություններով և հանձնարարեց փրկել դրությունը: Քեմալը գործի անցավ, իհարկե՝ օգտագործելով խորհրդային Ռուսաստանից ստացած առեղծված օգնությունը:

Սակարիայի ճակատամարտը Մ. Քեմալին **հարկադրեց** նորից լավացնել հարաբերությունները Կրեմլի հետ, անդրադառնալ կիսատ մնացած այն գործերի վճռմանը, որոնք առաջադրվել էին Մոսկվայում կնքված ռուս-թուրքական «բարեկամության և եղբայրության (sic)» պայմանագրով, այսինքն՝ անդրադառնալ անդրկովկասյան խնդիրներին:

Սկսվեց աշխատանքի աշխուժացումը: 1921 թ. հուլիսի 20-ին խորհրդային Ռուսաստանը հաստատեց Մոսկվայի պայմանագիրը: Դրան հաջորդեց թուրքական մեջլիսի որոշումը, որը կայացվեց հուլիսի 31-ին: Այդ որոշումներով հաստատված վավերագրերն իրար փոխանցվեցին 1921 թ. սեպտեմբերի 23-ին՝ Կարսում, այսինքն՝ կոնֆերանսի բացումից տառացիորեն 4 օր առաջ: Եվ այսպես, շուրջ չորս ամսվա լռությունից հետո նոր պայմանագրի կնքման համար ծավալվող աշխատանքներն արդեն նոր թափ ստացան և սկսեցին հանրության սեփականություն դառնալ հրապարակավ:

Չմոռանանք ասել, որ դեռևս **1921 թ. ապրիլի 18-ի լույս 19-ի գիշերը** Ադրբեջանում Թուրքիայի դիվանագետ-ներկայացուցիչ **Մահմուդ Շևքեթը** հանդիպում էր ունեցել խորհրդային Ադրբեջանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար **Միրզա Դավուդ Հուսեյնովի** (1894-1938) հետ՝ իր խնդրանքով: Թուրք դիվանագետը, հասկանալի է, որ Մ. Քեմալի հանձնարարությամբ, փորձել է ճեղք բացել **Անդրֆեդերացիայի** կազմավորման պատրաստվող երեք հանրապետությունների միջև: Նրան այդ չէր հաջողվել: Նույն օրվա առավոտյան Մ. Գ. Հուսեյնովը խոսակցության բովանդակությունը հեռագրով հաղորդել է Մոսկվա, Թիֆլիս, Երևան:

Թողնենք թող խոսի ադրբեջանցի դիվանագետը:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ Մ. Դ. ՀՈՒՍԵՅՆՈՎԻ ՀԵՆԱԳԻՐԸ ՈՍՖՍՈ ԱՐՏԳՈՐԾԺՈՂԿՈՄ Գ. Վ. ՉԻՉԵՐԻՆԻՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԹԱՄԺ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ ԿԱՐԱԾ ԻՐ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաղորդված է Բաքվից, 1921 թ. ապրիլի 18-ի լույս 19-ի գիշերը

Մոսկվա, արտգործոժողկոմ ընկեր Չիչերինին.
Թիֆլիս, Լիազոր ներկայացուցիչ ընկ. Լեգրանին, պատճենն - ընկ. Օրախելաշվիլուն.
Երևան, ընկ. Մռավյանին, պատճենն - ընկ. Օրջոնիկիժեի

Ապրիլի 10-ին ես գրուցում էի Ադրբեջանում Թուրքիայի դիվանագետ-ներկայացուցիչ Մահմուդ Շևքեթի հետ, որը, նշելով Ադրբեջանի հատուկ դիրքը որպես Արևելքի երկիր, ցանկություն հայտնեց ունենալ հատուկ հարաբերություն Ադրբեջանի հետ և մոտ օրերս ձեռնամուխ լինել Թուրք-Ադրբեջանական կոնֆերանսին: Ես նրան պատասխանեցի, որ մենք չենք կարող թույլ տալ, որ Ադրբեջանի և Թուրքիայի փոխհարաբերությունները լինեն մեկ, իսկ Թուրքիայի և Հայաստանի կամ Վրաստանի՝ այլ: Նշելով սովետական երկրների շահերի ու նպատակների ընդհանրությունը, ես նրան հայտնեցի, որ ձեռնամուխ է արված Անդրկովկասյան ռեսպուբլիկաների միավորմանը՝ Անդրկովկասյան երկաթուղիների միասնական վարչության, արտաքին առևտրական գործունեության միավորման ստեղծման և Անդրկովկասյան բոլոր ռեսպուբլիկաների միասնական տնտեսական խորհրդի ստեղծման ուղղությամբ: Ուստի, հայտնեցի ես Մահմուդ Շևքեթին, Անդրկովկասյան ռեսպուբլիկաները պետք է միասնաբար կնքեն պայմանագիր Թուրքիայի հետ: Ի պատասխան դրա Մահմուդ Շևքեթը հայտարարեց, որ պատվիրակությունն ունի հանձնարարագրեր պայմանագրեր կնքելու Ադրբեջանի հետ առանձին և առանձին Վրաստանի հետ, իսկ Հայաստանի հետ պայմանագիր կնքելու համար թուրք պատվիրակությունը հանձնարարագիր չի ստացել: Նկատի ունենալով ստեղծված դրությունը ես համաձայնություն հայտնեցի պատվիրակության Կարս մեկնելուն, ուր Քյազիմ Կարաբեքիրի հետ միասին, զուգե և իր կապուբլիկաների հետ պայմանագիր կնքելու հանձնարարագրերի հարցը: Թուրքերի հայտարարությամբ ապրիլի 19-ի երեկոյան իրենց համար պատվիրված է գնացք... ապրիլի 18-ին իմ կողմից Մահմուդ Շևքեթին հանձնված է հայտագիր այն մասին, որ մոտակա ժամանակներս մենք ուղարկում ենք Անգորա մեր ներկայացուցչությունը: Խնդրում եմ շտապ Ձեր ցուցումները: N 1005:

Արտգործոժողկոմ Գ. Հուսեյնով'

Թուրքերի հետ ունեցած բանակցությունների մասին Մ. Դ. Հուսեյնովն ուղարկում է երկրորդ հեռագիրը: Այն առաքված էր ապրիլի 20-ին, ժամը 15⁰⁰-ին: Ահա այդ հեռագրի տեքստը.

¹ Ադրբեջանական ՍՍՌ ՀՈՍԵԿՊԱ ԱՐԽԻՎ, ֆոնդ 28, ցուցակ 2, գործ 27, թերթ 87: Վերաթարգմանել ենք ռուսերենից և ճշգրտումներ կատարել: Հայերեն թարգմանության առաջին տարբերակը տե՛ս «Լեհինյան ուրիով», ՀԿՊԿ Կենտկոմի ամսագիր, 1965, N 2, փետրվար, էջ 82-83:

Թիֆլիս, Օրջոնիկիձեին, պատճենն - Օրախելաշվիլուն:
Պատճենն - Երևան, Մռավյանին:

Ընկ. Չիչերինին իմ կողմից ուղարկված է հետևյալ հեռագիրը. «Այսօր ես և Շախ-
տախտինսկին գրուցում էինք թուրքերի հետ, որոնք, պարզվում է, խիստ դժգոհ մնա-
ցին մեզնից առաջարկության համար՝ խոսել միայն Անդրկովկասյան-թուրքական
կոնֆերանսի մասին: Մտքերի երկարատև փոխանակությունից հետո թուրքերը հա-
մաձայնեցին Անդրկովկասյան-թուրքական կոնֆերանսին [այն] պայմանով, որպեսզի
միացյալ կերպով մշակված պայմաններն առանձին-առանձին ստորագրվեն յուրա-
քանչյուր ռեսպուբլիկայի հետ: Մենք դրա հետ համաձայնեցինք: Թուրքերը պնդում
են կոնֆերանսի վայրը մշակել Կարսը, պատճառաբանելով, որ այնտեղից իրենց
հեշտ կլինի կապվել Անգորայի հետ: Ադրբեջանի կողմից մենք համաձայնություն
հայտնեցինք Կարսի վերաբերյալ, միաժամանակ նշելով Վրաստանի և Հայաստանի
հավանության անհրաժեշտությունը: Կարծում ենք, որ մեր հիմնական պայմանի ըն-
դունմամբ կարելի է համաձայնել»: Հայտնում են Ձեզ ի գիտություն, որ այսօր երեկո-
յան ժամին թուրքական պատվիրակությունը Յուսուֆ Քեմալի գլխավորությամբ մեկ-
նեց Կարս՝ Ալեքսանդրապոլի վրայով: Խնդրում են հաղորդեք Ձեր նկատառումները:
N 594:

Հուսեյնով՝

Այսպիսով, սայլը տեղից շարժվեց (*երանի չշարժվեր* - Հ. Ղ.): Թուրք-ադրբեջա-
նական սեպարատ բանակությունների արդյունքում որոշվեց կոնֆերանսի վայր
ընտրել Կարս քաղաքը: Ինչպես Ռուսաստանը (Չիչերինը), այնպես էլ Անդրկովկասի
երեք հանրապետությունները միաբերան մերժեցին Հայաստանին բանակություն-
ների ընթացքից դուրս թողնելու առաջարկը: Որոշվեց նաև մինչ այդ հրավիրել Անդր-
կովկասյան հանրապետությունների ղեկավարների խորհրդակցություն:

**1921 թվականի մայիսի 7-ին Բաքվում բացվեց Անդրկովկասի երեք հանրա-
պետությունների համաժողովը՝ ընդլայնված կազմով: Խորհրդակցությանը
մասնակցեցին Կովկասյան ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի
անդամ Օրջոնիկիձեին, Անդրկովկասյան հանրապետություններում ՌՍՖՍՀ լիա-
զոր ներկայացուցիչ Բ. Վ. Լեգրանը, Վրաստանի ՍՍՀ ներկայացուցիչ Մամիա
Օրախելաշվիլին, Հայաստանի ՍՍՀ ներկայացուցիչ Մ. Ա. Բեկզադյանը և Ադր-
բեջանական ՍՍՀ ներկայացուցիչներ Միրզա Դավուդ Հուսեյնովը և Բեյբութ
Շախտախտինսկին:**

Նախագահում է Օրախելաշվիլին, քարտուղարն է Ա. Ա. Անդրեևը:

«Լենինյան ուղիով» ամսագիրը հրապարակում է այդ խորհրդաժողովի արձա-
նագրությունը: Ըստ այդ հրապարակման.

¹ Ադրբեջանական ՍՍՀ ՀՈՒՍԵՅՆՈՎ արխիվ, ֆ. 28, ց. 2, գ. 27, թ. 164, թարգմանությունը ռուսերենի վա-
կերացված պատճենից: Տե՛ս նաև «Լենինյան ուղիով», 1965, N 2, էջ 83:

Խորհրդակցությանը մասնակցեցին. Կովկասյան ռազմաճակատի ՌՈՒՍ-ի անդամ
Օրջոնիկիձեին, Անդրկովկասյան ռեսպուբլիկաներում ՌՍՖՍՐ լիազոր ներկայացու-
ցիչ Բ. Վ. Լեգրանը, Վրաստանի ՍՍՐ ներկայացուցիչ Մամիա Օրախելաշվիլին, Հա-
յաստանի ՍՍՐ ներկայացուցիչ Մ. Ա. Բեկզադյանը և Ադրբեջանական ՍՍՐ ներկայա-
ցուցիչներ՝ Միրզա Դավուդ Հուսեյնովը և Բեյբութ Շախտախտինսկին:

Նախագահում է Օրախելաշվիլին, քարտուղար է Ա. Ա. Անդրեևը:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՀԱՐՑԸ: Քննարկելով այն
հարցը, թե կարելի է ներկա խորհրդակցությունը համարել Անդրկովկասյան ռես-
պուբլիկաների կոնֆերանս, որոշվեց ներկա միտքը համարել նախնական խորհր-
դակցություն, որից հետո, Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ղեկավարների Մոսկ-
վայից վերադառնալուց և ներկա խորհրդակցության օրակարգում դրված հարցերը
տեղեկություն, այսինքն՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի կողմից քննարկելուց
հետո զումարել Անդրկովկասյան ռեսպուբլիկաների կոնֆերանս Երևան քաղաքում:
ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Ե ՀԵՏԵՎՅԱԼ ՕՐԱՎԱՐԳԸ.

1. Անդրկովկասյան ռեսպուբլիկաների միացյալ կոնֆերանսը Թուրքիայի Ազգա-
յին մեծ ժողովի կառավարության հետ:
2. Անդրկովկասյան-թուրքական կոնֆերանսի վայրը և ժամանակը:
3. ԹԱՄԺ կառավարության հետ Անդրկովկասյան ռեսպուբլիկաների բանակցու-
թյունների հիմքերը:
4. Անդրկովկասյան ռեսպուբլիկաներից յուրաքանչյուրի հետ կապված հարցերի
քննարկման կարգը:
5. Լրացումներ և փոփոխություններ ի զարգացում Մոսկվայի պայմանագրի՝

Խորհրդակցության որոշումների կմախքը թելադրել էր **Գ. Վ. Չիչերինը**, նրան
լրացրել էր Գ. Կ. Օրջոնիկիձեին, որը մտքում պահած ուներ Բաթումի մարզը Վրաս-
տանին թողնելու որոշումը (համաձայնեցրած Ի. Վ. Ստալինի և Բ. Մոլոտովի հետ):
Ընթերցողի ուշադրությանը ներկայացնենք բուռն մտաբախումներից հետո
ստեղծված այն որոշումները, որոնք փաստորեն դարձան Կարսի կոնֆերանսի
ձևակերպած փաստաթղթերի հիմքերը: Ըստ այդ որոշումների՝

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԹՈՒՐԹԵԱՅԻ
ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԺՈՂՈՎԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ: Քննարկելով կոնֆերանսի հարցը,
խորհրդակցությունը որոշեց, որ սպասվող կոնֆերանսում բոլոր Անդրկովկասյան
ռեսպուբլիկաները, այսինքն՝ Ադրբեջանական Սոց[իալիստական] Սով[ետական]
ռեսպուբլիկան, Վրաստանի Սոց[իալիստական] Սով[ետական] ռեսպուբլիկան և Հա-
յաստանի Սոց[իալիստական] Սով[ետական] ռեսպուբլիկան հանդես կգան միացյալ,
որպես մեկ պայմանավորվող կողմ:

ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ: Կոնֆերանսի ժամանակի և տեղի հարցի
մասին խորհրդակցությունը որոշեց, որ այն չի կարող տեղի ունենալ՝ մոտ օրերս
Մոսկվա մեկնող Անդրկովկասյան Սովետական ռեսպուբլիկաների ներկայացուցիչ-
ների վերադարձից շուտ: Ինչ վերաբերվում է կոնֆերանսի հավաքման վայրին, ապա

¹ «Լենինյան ուղիով», 1965, N 2, էջ 84:

այդպիսինը ցանկալի է նշանակել Բաքուն կամ Թիֆլիսը: Խորհրդակցությունը չէր հանդիպի խոչընդոտների՝ նշանակելու այդպիսի վայր Կարսը, եթե ԹԱՄԺ-ի կառավարությունը հատկապես կցանկանա այդ, սակայն բոլոր դեպքերում հավաքման տեղի հարցը չի կարող դրվել ուլտիմատիվ [պահանջի] ձևով:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՔԸ: Խորհրդակցությունը որոշեց բանակցությունների և հետագա պայմանագրի հիմքում հենակետ ընդունել Մոսկվայի մարտի 16-ի պայմանագիրը:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՀԵՏ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՊԱԿԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի հետ Թուրքիայի [կողմից] պայմանագրային հարաբերությունների հաստատման հետ կապված հարցերն առանձնապես սուր են, խորհրդակցությունը որոշեց. առաջիկա կոնֆերանսում պնդել, որ առաջին հերթին քննարկվեն Հայաստանի հետ Թուրքիայի [կողմից] պայմանագրային հարաբերությունների հաստատման հետ կապված հարցերը, երկրորդ հերթին՝ Վրաստանի հետ և երրորդ՝ արդեն Ադրբեջանի հետ:

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ի ԶԱՐԳԱՑՈՒՄ ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ: Մոսկվայի պայմանագրի 3-րդ պարագրաֆով Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչներից [կազմված] հատուկ հանձնաժողովին տրված է իրավունք՝ ուղղելու Հայաստանի և Նախիջևանի սահմանը, ուստի նկատի առնելով, որ այդ հարցն անհրաժեշտորեն կկանգնի Անդրկովկասյան-թուրքական կոնֆերանսի առջև, խորհրդակցությունը որոշեց, իսկույն ևեթ միջոցներ ձեռք առնել տեղում Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչների կողմից ուսումնասիրելու սահմանի ճիշտ որոշման հարցը, ազգագրական սկզբունքի, նմանապես և տեղական բնակչության կողմից այդ հարցի շուրջը հաստատված հայացքներին համաձայն:

Նախագահ - (ստորագրություն) Մ. Օրախելաշվիլի:

Անդամներ - (ստորագրություններ) Բ. Շախտախտինսկի, Դ. Հուսեյնով:

Քարտուղար - (ստորագրություն) Ա. Անդրեև:

Այսպիսով, նախքան Կարսի կոնֆերանսն ու Կարսի պայմանագիրը, Կրեմլը Քաղբյուրոյի արթուն հսկողությամբ գծագրում էր այն ճանապարհը, որով պետք է ընթանային Անդրկովկասի պատվիրակները: Թուրքիայի հետ միշտ արթուն կապերի մեջ մնալով, ՌԱՖՍԴ-ի առաջնորդները ջանում էին կատարել Մ. Քեմալին տված իրենց խոստումները, այն է՝ մազ անգամ չչեղվել Մոսկվայի պայմանագրի ընդունած որոշումներից:

* * *

1921 թվականի սեպտեմբերի 26-ին, առավոտյան ժամը 10-ին Բագրատու-նյաց Հայաստանի երբեմնի մայրաքաղաք Կարսում բացվեց մի կոնֆերանս, որն առաքելություն ուներ դաժան մկրատով կոտորակել այս անգամ էլ Արևելյան Հայաստանի սրբազան հողատարածքը, նրանից բռնազավթել, խլել, օտարել շուրջ 27 000 քառ. կմ հող հայրենին:

Կարսի կոնֆերանսում Հայաստանի երկրորդ հանրապետությունից մասնակցում

¹ Հայկական ՍՍՌ ՀՈՍՇԿՊԱ արխիվ, ֆ. 113, ց. 3, գ. 21, ք. 71-72 (տե՛ս նաև Ադրբեջանական ՍՍՌ ՀՈՍՇԿՊԱ արխիվ, ֆ. 28, ց. 2, գ. 27, ք. 29-30) - թարգմանություն ռուսերեն բնագրից: Տե՛ս նաև «Լե-նինյան ուղիով», 1965, N 2, էջ 85:

էին արտագործող կոմ **Ասրանազ Մռավյանը** և ներքին գործերի ժողկոմ **Պողոս Մա-կինցյանը**: Ադրբեջանական ՍՍՀ-ն ներկայացնում էր պետական վերահսկողության նախարար **Բեյրուք Շախտախտինսկին**, Վրացական ՍՍՀ-ն՝ ռազմական և ծովային գործերի նախարար **Շալվա Էլիավան**, արտագործող կոմ և ֆինանսների կոմիսար **Ալեքսանդր Սվանիձեն**: Թուրքիայի կողմից մասնակցում էր Ազգային մեծ ժողովի կառավարությունը՝ Ադրիանապոլսի կողմից Ազգային մեծ ժողովի դեպուտատ, Արևելյան ռազմաճակատի հրամանատար **Քյազիմ Կարաբեքիր փաշան**, Բուրդու-րի կողմից Ազգային մեծ ժողովի դեպուտատ **Վելի բեյը**, Հանրային աշխատանքների պետական քարտուղարի նախկին օգնական **Մուխթար բեյը**, Ադրբեջանում Թուր-քիայի լիազոր ներկայացուցիչ **Մեհմուդ Շևրեք բեյը**¹: Ռուսաստանի կողմից, իբրև ներկայացուցիչ, կոնֆերանսին մասնակցում էր տարիներ շարունակ Լեհաստանում և Լիտվայում իր հեղափոխական գործունեությունը ծավալած, սոցիալ-դեմոկրատի-այի ավագագույն անդամ, ականավոր դիվանագետ, այդ պահին բուրժուական Լիտ-վայում ՌԱՖՍԴ-ի հյուպատոս **Յակով Գանեցկին** (Ֆյուրստենբերգը): Նրա թեկնածու-թյունն ընտրել էին Անդրկովկասի երեք հանրապետությունների ղեկավարները:

Բանակցություններն ընթանում էին մի կողմից՝ **ԹԱՄԺ-ի** ներկայացուցիչների, մյուս կողմից՝ **Անդրկովկասի** երեք հանրապետությունների միացյալ պատվիրակու-թյան միջև: Խորհրդային Ռուսաստանը փաստորեն միջնորդի դեր էր ստանձնել: Ստուգվեցին պատգամավորների լիազորությունները հաստատող մանդատները, որոշվեցին օրակարգի մանրամասները, ապա թուրքական երաժիշտների ծնծղաների տակ երգվեց ինտերնացիոնալը (**սա ծիծաղելի չէ, երբ հայոց ու հունաց մսից ու արյունից չկշտացած թուրքերը երգում էին ինտերնացիոնալ**): Քանի որ Կարսի բոլոր կանոնավոր շենքերը թալանված էին, ուստի կոնֆերանսը գումարվեց կայարա-նամերձ **վազոն-տնակում** (մինչև օրս էլ կանգուն է, որի նկարը տեսեք գրքի էջերում):

Անդրադառնալով «Կարսի խորհրդաժողովի» պատմությանը, **իհարկե, իր մաշկը փրկելու**, Ալեքսանդրապոլի ավելի խայտառակ պայմանագրի ստորագրման մեղքը քավելու ետադարձ հայացքով, Սիմոն Վրացյանը «Հայաստանի Հանրապետություն» իր աշխատության վերջում գետեղում է կոնֆերանսի վեց միստերի արձանագրու-թյունները, որոնք քաղել էր **«Խորհրդային Հայաստան»** պաշտոնական օրաթերթի 1921 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին տպագրած նյութերի շարքից:

Ընթերցողին չձանձրացնելու, ավելորդ կրկնություններից խուսափելու նպատա-կով մենք էլ բառացիորեն արտատպում ենք այդ նյութերը, որոնք սկզբնաղբյուրի ուժ ունեն և վավերական են, քանզի գետեղված են եղել երևանում լույս տեսնող պաշ-տոնական պարբերականի էջերում: Ահա դրանք.

ԱՌԱՋԻՆ ՆԻՍ

«Առաջին միստը տեղի ունեցավ խորհրդաժողովի բացումից անմիջապես հետո, սեպտ. 26-ին: Նախագահում էր Կարաբեքիր Քյազիմ փաշան: Թուրք պատվիրակու-թյան կողմից Կարաբեքիրը արավ հետևյալ երկու առաջարկները.

1. Նիստերի արձանագրությունները կատարել ֆրանսերեն լեզվով, որից հետո թարգմանվի թուրքերեն, ռուսերեն, հայերեն և վրացերեն լեզուներով:

2. Դաշնագրությունները կնքել երեք հանրապետությունների հետ առանձին-ա-ռանձին պայմանագրերով:

Անդրկովկասի հանրապետությանց պատվիրակություններից Կարաբեքիրի առա-ջին առաջարկն ընդունվեց, բայց և կտրուկ կերպով մերժվեց նրա երկրորդ առաջարկը:

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում», էջ 518-519:

Թուրք պատվիրակության նախագահը հայտնեց, որ իրենք՝ իրավասություն չունենալով հավաքական դաշնագիր կնքելու առանձին-առանձին դաշնագրերի տեղ, այս հարցի մասին չեն կարող վճիռ տալ, որով ստիպված են հեռագրով հրահանգ սպասել Անգորայից:

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍ

Երկրորդ նիստը տեղի ունեցավ սեպտ. 27-ին: Նիստի սկզբին Կարաբեքիրը ներկայացրեց հետևյալ երկու առաջարկները, որոնք ընդունվեցին.

1. Մոսկվայի դաշնագրի անփոփոխ ընդունումը, հակառակ պարագային դադարեցնել Խորհրդաժողովի աշխատանքները, մինչև որ նոր հրահանգներ ստացվին Անգորայից:

2. Մանր և զուտ տեղային նշանակություն ունեցող սահմանային հարցերի համար կազմել տեղվույն վրա ճշտող հանձնաժողովներ:

Անդրկովկասյան հանրապետությունների կողմից ընկեր Գանեցկին ներկայացրեց հետևյալ երկու սահմանագծային պահանջները, որոնց առաջինը վերաբերում էր Անհի ավերակներին, և ասաց. «Դա հայերի համար ունի պատմական և գիտական մեծ արժեք»: Երկրորդը՝ Կողբի պահանջն էր, որ իր աղահանքերով ներկայացնում է համակովկասյան նշանակություն:

Թուրք պատվիրակության նախագահը հայտնեց, որ իրենք ոչ մի իրավասություն չունին Մոսկվայի դաշնագրով գծված սահմանի մեջ փոփոխություն կատարելու, և դրա համար Անգորայից հրահանգ պետք է ուզել:

Վերոգրյալ հարցերի վիճաբանությունից հետո ընկեր Գանեցկին ժողովին ներկայացրեց մի շարք գյուղերի անուններ՝ հարց դնելով, թե ո՞ւմ պետք է պատկանին:

Կարաբեքիրը շեշտեց, որ վերոհիշյալ հարցերը սահմանափակ, զուտ տեղական նշանակություն ունին, որով առաջարկեց նրանց ճշտումը թողնել տեղվույն վրա գործող հանձնաժողովներին, առաջարկեց սահմանագծումների համար մեկ-քանի ընդունված կանոններ, որ ընդունեցին նաև Անդրկովկասյան պատվիրակությունները:

Ըստ այդ կանոնների, սահմանագիծ կարելի չէ ընտրել այն գյուղը, որից կարող են գյուղի բնակիչների համար տեղական նշանակություն ունեցող դժվարություններ ծագել: Եթե սահմանի վրա ծոր կա, այդ ժամանակ ծորը կլինի սահմանը, եթե բլուրներ կան, բլուրները բարձրագագաթից երկուսի կկիսվին, իսկ եթե տափարակ դաշտ է, կամ բլրակները անկանոն են, իբրև սահման կընդունվի մի ուղիղ գիծ, որ երկուսի կբաժանե դաշտը:

ԵՐՐՈՐԴ ՆԻՍ

Երրորդ նիստը գումարվեց սեպտ. 28-ին: Նիստի սկզբին ընկ. Գանեցկին հարց դրեց նիստերին նախագահելու խնդիրը և առաջարկեց, որ «ընդունված կանոն է մեջընդմեջ նախագահել»: Այս առաջարկությունը առանց վիճաբանության ընդունվեց թուրք պատվիրակության կողմից:

Կարաբեքիրը հայտնեց ժողովին, որ ստացել է պատասխան Անգորայից՝ դաշինքը ստորագրելու ձևի մասին, և թե թուրք կառավարությունը մնում է իր նախկին տեսակետի վրա՝ առաջարկելով կնքել դաշնագրությունը երեք հանրապետությունների հետ առանձին-առանձին:

Ընկ. Գանեցկին կրկնեց իր առարկությունները և ասաց, թե իրենք հաստատ են մնում իրենց տեսակետի վրա:

Այս խնդիրն անորոշ կերպով փակվելուց հետո թուրք պատվիրակությունը կարողացավ Բաթումի մասին իրենց ունեցած պահանջները:

Բաթումի մասին թուրք պատվիրակության արած առաջարկը մանրամասն քննադատության ենթարկվեցավ Գանեցկիի կողմից, որ առաջարկեց մի մասնավոր հանձնաժողով ընտրել այս խնդրով զբաղվելու համար: Նա շեշտեց, որ Թուրքիան պետք է ունենա ազատորեն օգտվելու իրավունք Բաթումի նավահանգստից, բայց թուրք պատվիրակության առաջարկների մեջ գտավ որոշ հակասություն Մոսկվայի դաշնագրի հետ, որ հիմք է կազմում Կարսում կատարված բանակցությանց:

ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍ

Չորրորդ նիստը ամբողջապես հատկացվեց դաշնագիրը ստորագրելու ձևի մասին առաջ եկած անհամաձայնությունը հարթելու խնդրին, որ տեղի տվեց երկար վիճաբանությունների:

Թուրք պատվիրակությունը հայտնեց, որ իրենք կհամաձայնին դաշնագիրը ստորագրել այն պայմանով, որ դաշնագրի մեջ առանձին-առանձին բաժանված լինեն Ազրբեջանին, Վրաստանին և Հայաստանին վերաբերող խնդիրները:

Այս առաջարկն էլ վճռաբար մերժվելով՝ Անդրկովկասի հանրապետությանց պատվիրակները առաջարկ ներկայացրին ուղղակի Անգորայի հետ հարաբերության մեջ մտնել՝ մի բացատրողական հեռագիր ուղարկելով, ուր գրված լինի այն բոլոր պատճառները, որոնք ստիպում են իրենց դաշնագիրը կնքել հավաքաբար, առանց առանձին բաժանումների և պայմանագրությունների: Թուրք պատվիրակությունը ևս խոստացավ իր կողմից մի նոր հեռագիր ուղարկել Անգորա, և այս խնդիրը փակված նկատեց:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍ

Հինգերորդ նիստը բացվեց երկուշաբթի օրը, հոկտ. 10-ին, ժամը 3-ին: Այս նիստում կարողացվեց դաշնագրի հոդվածները, որոնք, փոքրիկ փոփոխությունների ենթարկվելուց հետո, վերջնականապես ընդունվեցին երկու կողմերից էլ: Այդ հոդվածները մշակված էին պատվիրակությունների անպաշտոն նիստերում: Այս տեսակ ինը նիստեր տեղի ունեցան:

Այս նիստում թուրքերի և Անդրկովկասյան հանրապետությունների պատվիրակությունների կողմից եղան պաշտոնական հայտարարություններ՝ համապատասխան հոդվածների ընթերցումից հետո: Հայտարարությունները արձանագրվում էին քարտուղարների կողմից, նկատի առնվելու համար երկուստեք իրենց առաջիկա փոխհարաբերությունների ընթացքին:

Այս հայտարարությունները վերաբերվում էին կետերին, որոնց շուրջ երկու կողմի պատվիրակությունները չէին համաձայնած և կամ համաձայնվելով հանդերձ՝ ընդդիմացել էին դաշնագրերի մեջ իբրև հոդված մտցնելու:

Սահմանագծումի խնդիրներին վերաբերող հոդվածի ընթերցումից հետո Անդրկովկասի պատվիրակությունների կողմից ընկ. Գանեցկին արավ հետևյալ հայտարարությունները, որոնք, խորը լուռության մեջ, ազդու տպավորություն թողին:

Առաջինը Անհի և երկրորդը Կողբի մասին էր:

Մենք այն հույսը ունեցինք, որ թուրք պատվիրակությունը դրական պատասխան պիտի տա Անհի մասին Հայաստանի արած պահանջին, որ զուրկ էր ամեն տեսակ զինվորական, տնտեսական և աշխարհագրական նկատառումից և մեզ համար ունի զուտ գիտական կուլտուրական արժեք: Վերջին պահուն ինչպես

Կողբի, նույնպես և Աճիի մասին թուրք պատվիրակությունը մերժողական պատասխան տվեց, առարկելով, թե Աճին Ախուրյանի արևմտյան եզերքին է գտնվում, ուստի հայերին տրվելով՝ կխախտվի Մոսկվայի դաշնագրի սկզբունքը:

Ահա այս առթիվ Գանեցկիի հայտարարությունները. «Անդրկովկասյան հանրապետությունների պատվիրակությունները ամենախորունկ ցավով արձանագրում են Աճիի մասին իրենց արած առաջարկի մերժումը: Աճին ներկայացնում է հայերի համար ազգային-պատմական և գեղարվեստական արժեք: Ավելացնում ենք նաև, թե Անդրկովկասի ժողովուրդները այդ մերժումը պիտի ընդունին ծշմարիտ ցավով:

Կողբի աղահանքերը՝ ունենալով համակովկասյան նշանակություն, որովհետև տարիներով նրանք հայթայթել էին Անդրկովկասի աղի պահանջը, մենք նախապես ներկայացրել էինք Կողբի աղահանքերը Հայաստանին թողնելու մի առաջարկ: Բայց նկատելով այս մասին թուրք պատվիրակության առարկությունները՝ մեր այս առաջարկը փոխել էինք, վերածելով այն Կողբի աղահանքերը Հայաստանի կառավարության մենաշնորհ տալու առաջարկին:

Թուրք պատվիրակությունը ներկայումս մերժում է նաև այս առաջարկը. մենք արձանագրում ենք նշանակություն ունեցող այս խնդրի մասին և անցնում ենք ուրիշ հոդվածների քննության»:

Թուրք պատվիրակության նախագահ Քյազիմ Կարաբեքիր փաշան ի պատասխան Գանեցկուն, հայտնապես նեղված եղանակով, հետևյալ հայտարարությունները արավ.

«Աճիի մասին մեր մերժումը Մոսկվայի դաշնագիրը չխախտելու սկզբունքի մեջ է կայանում: Այսուհանդերձ, ամեն ապահովություն կտրվի այնտեղ ապրողների և գիտական աշխատանքներ կատարողների համար»:

Մերժելով Կողբի մասին եղած առաջարկները՝ Քյազիմ Կարաբեքիր փաշան հայտարարեց, թե Կողբը առաջվա պես պիտի գոհացնի Անդրկովկասի պահանջը:

Նախիջևանի անկախության վերաբերյալ հողվածի ընթերցումից հետո Քյազիմ Կարաբեքիր փաշան մի քանի հարցումներ արավ Նախիջևանի ինքնավարության վերաբերող մի շարք խնդիրների շուրջ:

Ազրբեջանի ներկայացուցիչ Բեհրուք Շահտախտինսկին պատասխանեց այդ հարցումներին: Մոսկվայի դաշնագրի տրամադրության համաձայն, Նախիջևանը ինքնավարություն է ստանում Ազրբեջանի հովանավորության տակ:

Քյազիմ Կարաբեքիր փաշայի հարցումները հետևյալ կետերի շուրջ էին. պաշտոնական լեզվի, կրթական, ամուսնական, գերիների, կրոնական ազատության և այլ խնդիրների:

Թուրքական նավերին և ապրանքներին տրվելիք մի քանի առավելությունների վերաբերյալ հողվածները Անդրկովկասյան պատվիրակությունների կողմից երկրորդ անգամ փոփոխության ենթարկվեցին և հետո ընդունվեցին: Այդ հողվածների համաձայն՝ Թուրքիան իրավունք պիտի ունենա առանց տրանզիտի իր ապրանքները անցկացնել Վրաստանից Թուրքիա: Թուրք նավերը պիտի վայելեն մասնավոր առավելություններ:

Թուրք պատվիրակությունը հետաքրքրվեց նաև Աջարիայի ինքնավարությամբ. Վրաստանի պատվիրակ Շալվա Էլիավան ցույց տվեց այդ մասին հրատարակված դեկրետը:

Գերիների վերադարձին և 1918-ից ի վեր Թուրքիայի դեմ գործող թրքահպատակների վերաբերյալ հողվածի առթիվ Գանեցկին դիտողություն արավ պայմանաժամի մասին:

Քյազիմ Կարաբեքիր փաշան հայտարարեց, թե առանց պայմանաժամին սպասելու արդեն իսկ գերիները ազատ պիտի արձակվին և համապատասխան հրամանագիրն էլ իր ժամանակին պիտի հայտարարվի:

Գանեցկին Անդրկովկասի պատվիրակության կողմից շնորհակալություն հայտնեց:

ՎԵՅԵՐՈՐԴ ՆԻՍ

Վեցերորդ և վերջին նիստը տեղի ունեցավ հոկտ. 13-ին, ժամը 12-ին:

Նիստը բացեց Գանեցկին, որ առաջարկեց ստորագրել պատրաստված դաշնագիրը:

Ստորագրության արարողությունը կատարվեց հանդիսավոր կերպով: Պատվիրակություններից գատ, ներկա էին քաղաքային և զինվորական իշխանությանց ներկայացուցիչները, որոնք ութի կեցած էին: Ներկա էին նույնպես թուրք սկաուտներից մի տասնյակ պատանիներ:

Խոր լռության մեջ կարդացվեց ֆրանսերեն բնագիրը, որից հետո ստորագրվեցին նիստերի արձանագրությունները:

Ժամը մեկուկեսին կատարվեց դաշնագրի ստորագրումը: Կարսի բերդից, ստորագրության պահուն, արձակվեցին թնդանոթի չորս հարվածներ, և թուրքական նվազախումբը նվազեց Իստերնացիոնալը և թուրք ազգային քայլերգը:

Այբուբենի կարգով ստորագրեցին Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի և Ռուսաստանի ներկայացուցիչները:

Ստորագրվելուց հետո ճառեր արտասանեցին Քյազիմ Կարաբեքիր փաշան և հետո Գանեցկին, որից հետո խորհրդաժողովը փակված հայտարարվեց»¹:

Կարսի պայմանագիրը գրեթե նույնությամբ կրկնում էր Մոսկվայի պայմանագրի հիմնական սկզբունքները: Այն բաղկացած էր համառոտ ներածությունից, քսան հողվածից և **երեք** հավելվածից: **Առաջին հողվածով ԹԱՄժ-ի և Անդրկովկասի** պետությունները «վերացված և ուժը կորցրած են համարում այն պայմանագրերը, որոնք կնքվել էին ներկայումս պայմանավորվող կողմերի տարածքի կազմի մեջ մտնող տարածքներում իրենց սուվերեն իրավունքները կենսագործող պետությունների միջև...»²: Դրանով իսկ չեղյալ հայտարարվեց **Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-ի պայմանագիրը**, ինչպես նաև բոլոր մյուս պայմանագրերը. բացառություն էր կազմում Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ին ստորագրված ռուս-թուրքական **բարեկամության և եղբայրության** (sic) դաշնագիրը:

Երկրորդ հողվածով երկու կողմերն էլ չէին ծանաչում այն պայմանագրերը, որոնց ստորագրումը բռնի ուժով էր պարտադրված եղել: Չարաբաստիկ այդ հողվածը վերաբերում էր 1920 թվականի օգոստոսի 10-ին Փարիզի արվարձաններից մեկում ձևակերպված Սևրի դաշնագրին: Այդ դաշնագիրը ստորագրման պահից նույնիսկ գիշերային քնի մեջ հանգիստ չէր տալիս Մուստաֆային, դրա համար էլ նա ամեն ինչի գնում էր, որպեսզի չեղյալ հայտարարի այն: Այժմ Քեմալը յոթերորդ երկնքում էր, քանզի նման որոշմամբ նա ոչ «միայն քավում էր սուլթանի գործած մեղքերը» (պայմանագիրը Ստամբուլում էր ստորագրել), այլ և

¹ Միմն Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, Երևան, 1998 (երկրորդ հրատարակություն), էջ 678-683:

² «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում...», Երևան, 1972, էջ 518:

Հայաստան պետությանը զրկում էր իննսուն հազար քառակուսի կիլոմետր տարածքից, Տրապիզոնի վրայով դեպի ծով ու եվրոպա դուրս գալու իրական հնարավորություններից:

Երկրորդ հոդվածով Հայաստանի երկրորդ հանրապետությունը ստորագրություն էր դնում մի փաստաթղթի տակ, որն իր երկիրը զրկում էր Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթներից, Տրապիզոնի նահանգի մեծ մասից: Արևմտահայության ողջակիզված մասի հետ մեռնում էր նաև կենդանի մնացածների փայփայած «վառ հույսերը»՝ կորուսյալ հայրենիքը ետ ստանալու ռոմանտիկ երազանքը:

Երրորդ հոդվածը չեղյալ էր հայտարարում կապիտուլյացիաների այն խստաշունչ ռեժիմը, որի սարդոստայնի մեջ տասնամյակներ շարունակ խճճվել էր «հիվանդ մարդ» որակված սուլթանական տերությունը: Թուրքիայի տկար ուսերի վրայից միանգամից թոթափվում էր միլիարդի հասնող պարտքերի բեռը:

Չորրորդ հոդվածով «Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը (ըստ ռուսական Գլխավոր շտաբի քարտեզի - մասշտաբը՝ 1/210000 - մեկ մատնաչափում՝ 5 վերստ) որոշվում է այն գծով, որն սկսվում է Սև ծովի ափամերձ Սարպ գյուղի մոտից, անցնում է Խեղիս-մթա սարի վրայով, Շավշետ սարի - Կանիդաղ սարի ջրբաժան գծի երկարությամբ, այնուհետև առաջ է գնում Արդահանի և Կարսի սանջակների՝ հին հյուսիսային վարչական սահմանագծերի՝ Արփաչայի և Արաքսի գետերի հնահունի ուղղությամբ մինչև Ստորին Կարա-սուի գետաբերանը: (Սահմանների մանրամասն նկարագրությունը և նրանց վերաբերող հարցերը որոշված են I և II հավելվածներում և առդրվող քարտեզի վրա, որն ստորագրել են պայմանավորվող երկու կողմերը: Պայմանագրի տեքստի և քարտեզի միջև անհամապատասխանություն լինելու դեպքում, վճռական նշանակությունը տրվում է տեքստին:)

Բնության մեջ պետական սահմանագծի մանրամասն որոշումն ու անցկացումը, ինչպես նաև սահմանանշանների տեղադրումը կատարելու է խառն սահմանային հանձնաժողովը, որին մասնակցում են պայմանավորվող կողմերից հավասար թվով անդամներ և ՌՍՖՍՀ-ի ներկայացուցիչը»¹:

Այս հոդվածը երկրորդ ծանր հարվածն էր հասցնում հայ ժողովրդին: Այն կրկնում էր Մոսկվայի ռուս-թուրքական դաշնագրի առաջին հոդվածի երրորդ մասը, ըստ որի ՌՍՖՍՀ-ն, առանց Հայաստանի ներկայացուցչի մասնակցության, Կարսի մարզը և դրան գումարած Սուրմալուի գավառն իբրև նվեր, բայց իբրև մանրադրամ չպրտում էր Թուրքիայի հայակուլ երախը:

Այդ մասին պրոֆ. Ե. Ղ. Սարգսյանը դեռևս 1992 թվականի հունվարին գրում է. 1921 թ. մարտի 16-ին կնքված «բարեկամության և եղբայրության» թալանչիական հակահայկական պայմանագրի հիմամբ, Թուրքիային անցան Կարսի մարզը (որի կազմի մեջ էին մտնում Կաղզվանի, Արդահանի, Օլթիի, Կարսի օկրուգները) և **Սուրմալուի գավառը:** Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա նրա հարցը նույնիսկ չարժարժվեց: Ի դեպ, թուրք պատմաբանները չեն էլ թաքցրել իրենց խորը գոհունակությունը: Բիյուբլիօղլուն գրել է. «Մարտի 16-ի պայմանագրով Արդահանը, Կարսը և Արդվինը **առանց հանրաքվեի** անցան Թուրքիային: Բաթումի փոխարեն մենք ստացանք Սուրմալուի գավառը և Ադրբեջանի հոգատարության ներքո ստեղծվեց Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը (5,5 հազար քառ. կիլոմետր տարածքով) այն պայմանով, որ Ադրբեջանն այդ հողատարածությունը չզիջի մի երրորդ պետության»² (այսինքն՝ բուն իրավատեր Հայաստա-

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում...», էջ 519-520:

² Tevfik Biyiklioglu. Atatürk Anadolu'da, 1917-1921, Ankara, 1959, s. 21.

նին): Ավելին, Մոսկվայի պայմանագրի հիմամբ «Ռուսաստանը պարտավորվում է Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ նախաձեռնել անհրաժեշտ քայլեր, որպեսզի նրանք Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում պարտադիր ճանաչեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջականորեն իրենց են վերաբերում»³:

Մոսկվայի պայմանագրի վերոհիշյալ սկզբունքները, առանց եական առարկությունների, վերահաստատվեցին Կարսի կոնֆերանսում և Կարաբեքիրն անտրտունջ ստացավ Կարսի մարզի և Սուրմալուի տարածքը՝ շուրջ **քսանհինգ հազար քառ. կիլոմետր:**

Պայմանագրի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն, ՌՍՖՍՀ-ն իրեն չպատկանող Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը զիջում է որևէ պետություն չներկայացնող Անկարայի Ազգային մեծ ժողովի ինքնահռչակ կառավարությանը, թեև գրվում է, որ դա արվում է հօգուտ Թուրքիայի, բայց այդ դրությամբ Թուրքիա պաշտոնական անվամբ պետություն չկար, այլ կար Օսմանյան կայսրություն, որի օրինական կառավարությունը Մոսկվայի այդ պայմանագրի ստորագրողը չէր: Ստացվում էր մի իրավիճակ, որ առանց Օսմանյան կայսրության պաշտոնական համաձայնության ու ստորագրության, ՌՍՖՍՀ-ը նրան էր զիջում ոչ թե իրեն, այլ Հայաստանին պատկանող Կարսն ու Սուրմալուն: Մոսկվայի պայմանագրի «կողմ» Անկարայի Ազգային մեծ ժողովն Օսմանյան կայսերական պետության լիազորությունն անգամ չէր ստացել այդ պայմանագրի ստորագրման համար:

Հիշյալ հանգամանքների ուժով Մոսկվայի պայմանագիրն անօրինական էր և չէր կարող դառնալ 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում կնքվելիք պայմանագրի հիմք: Սրան պետք է ավելացնել նաև այն, որ Օսմանյան կայսրությունը ներկայացնող կառավարությունը 1920 թ. օգոստոսի 10-ին կնքել էր Սևրի պայմանագիրը և այն Մոսկվայի պայմանագրի կնքման պահին ոչ վերացրել էր, ոչ էլ դրանից հրաժարվել:

Մոսկվայի պայմանագրի անիրավաչափությունը կայանում է նաև նրանում, որ այն չի ճանաչում ինքնահռչակ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից չճանաչված որևէ միջազգային ակտ, տվյալ դեպքում՝ Սևրի պայմանագիրը և Վիլսոնի կայացրած միջնորդ որոշումը: Մինչդեռ Սևրի պայմանագիրն ու Վիլսոնի որոշումը լույս աշխարհի էին եկել Օսմանյան կայսրության միջազգայնորեն ճանաչված օրինական կառավարության համաձայնությամբ:

Պայմանագրի հերթական **հինգերորդ հոդվածը** պակաս ողբերգական չէր ամբողջ հայ ժողովրդի, հատկապես Հայաստան տերության համար: Այնտեղ ասված էր. «Հոդված 5. Թուրքիայի կառավարությունը և Սովետական Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունները համաձայն են, որ սույն պայմանագրի III հավելվածում նշված սահմաններում **Նախիջևանի մարզը** կազմի ինքնավար տերիտորիա՝ Ադրբեջանի խնամակալության ներքո»³:

Ընդամենը չորս տողից բաղկացած այս որոշման մեջ վիշտ կա, կորուստ, որը մինչև այսօր էլ անդառնալի է:

Անշուշտ, հարցասեր ընթերցողին այսօր էլ կհետաքրքրի, թե իրո՞ք նորաստեղծ Հայաստան պետությունն այդքան դյուրին ձևով, կամովին իր պատմական հայրենիքի սրբացած այդ հատվածը կնվիրեր **կրտսեր թուրքերին**, հետև էլ կխնդրեր վերջիններին չհրաժարվել առաջարկվող «փեշքեշից»: Քանի որ նման պնդումները կեղ-

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 16.3.1991: Տե՛ս նաև Ե. Ղ. Սարգսյան, 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը («Լրաբեր հասարակական գիտությունների» 1992, N 1(583), հունվար-մարտ, էջ 32):

² **Տիգրան Սահակյան**, Ցավալի պայմանագրեր, Երևան, 2007, էջ 385:

³ «Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում...», էջ 520:

ծիք են, ուստի փոքր-ինչ խորանանք պատմության հեռավոր էջերի մեջ, մանավանդ, երբ այսօր էլ խնդիրը դիվանագետների վիճասեղանից դեռևս չի իջել:

Նախիջևան - Նախճավան, Նախաիջավան երկրամասն ընկած է Մերձարաքսյան հարթավայրի Նախիջևան և Ջաբրիչայ գետերի ստորին հոսանքաշրջանում: Պատմականորեն քաղաքը մտնում էր Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի կազմի մեջ, փռված էր Երասխի Նախճավան վտակի աջ ափին:

Ըստ Բիբլիական սրբազան ավանդույթի, Նախիջևանը պատմական Հայաստանի հնագույն բնակավայրերից էր, որը հիմնել էր Արարատի գագաթից իջած Նոյ նահապետը 3669 թվականին: Քաղաքի անվան ստուգաբանությունը հաստատում է ասվածի ճշմարտացիությունը - այն է՝ **Նախա - իջևան**: Օտար, հատկապես հույն և հռոմեացի հեղինակներն իրենց աշխատությունների բազմաթիվ էջերում տեղեկություններ են հաղորդում, որոնք ապացույց են ոչ միայն բնակավայրի մ.թ.ա. I-II հազարամյակի գոյության փաստի, այլև նրա հայաբնակ ու հայկական լինելու վերաբերյալ:

Հայոց հնադարյան պատմիչներն, իբրև **հայկական հնաքաղաք**, Նախիջևանի մասին առատ տեղեկություններ են հաղորդում՝ հիմք տալով ապացուցելու վաղ միջնադարից առաջ էլ նրա հայաշատ լինելու փաստը: IV-X հարյուրամյակներում նշանավոր դարձած այդ քաղաքը իբրև հայրենական կալվածք, պատկանելիս է եղել **Մարզպետունիներին**¹: Քաղաքն ու գավառը լուրջ դերակատարություն են ունեցել Արշակունիների ողջ գահակալության ժամանակաշրջանում: Փալստոս Բուզանդը հիշատակում է, որ պարսից Սասանյան թագավոր Շապուհ Երկրորդը 361 թ. Նախիջևանից գերեվարել է 2 հազ. երդ հայ և 16 հազ. երդ հրեա բնակիչների:

Նախիջևանը լուրջ դերակատարություն է ունեցել արաբական տիրապետության ժամանակահատվածում և մեծ զոհեր տալով (653 թ. «Կրակի տարում»)՝ շարունակել է մնալ հզորագույն քաղաքների շարքում: Բագրատունյաց գահակալության երեք հարյուրամյակում Նախիջևանը անվանակոչվել է **«առաջին հոյակապ և հռչակավոր մայրաքաղաք»**:

Նախիջևանում առաջին անգամ թուրք տարրը սկսել է հաստատվել XI դարում, ապա աստիճանաբար ավելացել է սելջուկ թուրքերի, օսմանցիների և պարսից շահերի արշավանքների ժամանակ: Քաղաքը լուրջ հարված է ստացել 1605 թ. Շահ Աբասի գաղթի ժամանակ, սակայն նորից վերակենդանացել և առևտրաշահ է դարձել 1639 թ. թուրք-պարսկական դաշնագրից հետո:

XVII դարակեսին Սեֆյան Իրանն այդ տարածքում ձևավորել է Նախիջևանի խանությունը: Այն առևտրական աղերսներ է հաստատել «մոտավոր և հեռավոր երկրների հետ», ձևավորել հայ արհեստավորների և հայ ու հրեա վաճառականների մի ստվար դաս: 1828 թ. փետրվարի 10-ին թուրքմենչայի պայմանագրով գավառն իր կենտրոնով ազատագրվել է պարսկական տիրապետությունից, Երևանի խանության տարածքին միացվելով՝ ձևավորել է **Հայկական մարզը**, որը խոստացված հայկական ինքնուրույն պետության նախատիպն էր:

Փետրվարյան հեղափոխությունից հետո Նախիջևանում հաստատվեցին Ռուսաստանի ժամանակավոր կառավարության մարմիններ: 1918 թ. հունիսին օսմանյան զորքերն Անդրկովկաս կատարած արշավանքի ժամանակ հարձակվեցին Նախիջևանի վրա: Գավառում ջարդեր կազմակերպեցին: Ճիշտ այդ պահին քաղաք

¹ Բաբվի և Անկարայի կեղծարարների, այսինքն՝ Նախիջևանը «թուրքացնողների» երեսին շոնդալից ապտակ իջեցնելու նպատակով ենք մենք կազմում սույն տեղեկանքը, որն ամփոփում է հանրահայտ ճշմարտություններ միայն: Այդ փաստերը հիմնականում վերցրել ենք ակադեմիկոս **Ս. Տ. Երեմյանի** բառ-հոդվածից: Տե՛ս **ՉՄԳ**, հատ. 8, Երևան, 1982, էջ 165-167:

մտավ զորավար Անդրանիկն իր հարվածային զորամասերով: **Ապրակունիսի** տակ (հունիսի 17-ին) տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ՝ Անդրանիկը փայլուն հաղթանակ տարավ և Նախիջևանը հայտարարելով խորհրդային հանրապետություն, հեռագրեց Բաքու՝ Ստեփան Շահումյանին, և նրան խնդրեց ճանաչել նորաստեղծ այդ պետությունը:

Թուրքերը քայքայիչ արշավանք ծավալելով տեղի ադրբեջանցի բնակչության մեջ, ներսից պառակտում առաջացնելով՝ հուլիսի վերջին կարողացան վերագրավել քաղաքը:

Առաջին աշխարհամարտում կրած խայտառակ պարտությունից հետո, Մուղրոսի գինադադարով պայմանավորված, թուրքերը հեռացան Անդրկովկասից, այդ թվում Նախիջևանից (1918 թ. դեկտեմբերին): Դրան հաջորդեց մուսաֆաթականների մուտքը երկրամաս, որտեղ և ստեղծեցին «Արաքսի հանրապետություն»: Սակայն 1919 թ. մայիսին Հայաստանի զորքերը ետ վերադարձրեցին իրենց հայրենիքի այդ հատվածը, ցրեցին «Արաքսի հանրապետությունը»:

Դրությունը կտրուկ փոխեցին ռուսական զորքերը: 1920 թ. հուլիսին Ռուսաստանի XI Կարմիր բանակը գրավեց Նախիջևանը, և այնտեղ հայտարարվեց խորհրդային իշխանություն: Մեկ տարի չանցած՝ Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագրով Վ. Ի. Լենինը Նախիջևանը նվեր տվեց Ադրբեջանը գլխավորող Նարիման Նարիմանովին, որը չիրաժարվեց գայթակղիչ նման նվերից:

Չավեշտական, միաժամանակ ցավալին, ողբերգականն այն էր, որ Մուստաֆա Քեմալը, օգտվելով Կրեմլի վարած **հակահայկական**, միաժամանակ թուրքոֆիլական (կեղծ) քաղաքականությունից՝ Նախիջևանը ոչ միայն խլեց Հայաստանից և նվիրեց Ադրբեջանին, այլև պայմանագրի 5-րդ հոդվածում արձանագրեց, որ ազերիներն այնուհետև մարզը ոչ մեկին վերահանձնելու (ի նկատի ունեին Հայաստանը) իրավունք չունեն:

1923 թ. փետրվարի 18-ին, ԽՍՀՄ կառավարության համաձայնությամբ, Նախիջևանը **հայտարարվեց իբրև ինքնավար երկրամաս**, որը մեխանիկորեն 1924 թ. փետրվարի 20-ին («հոբելյանական մեկ տարի անց») հռչակվեց **Նախիջևանի Ինքնավար Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն՝ Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում**:

Փաստորեն խախտվեցին, կոպիտ կերպով ոտնահարվեցին Մոսկվայի պայմանագրի 3-րդ և Կարսի պայմանագրի 4-րդ հոդվածներն իրենց հավելվածներով: Ադրբեջանը, եթե իրավունք չունեն Նախիջևանը հանձնել իսկական տիրոջը՝ Հայաստանին, բնավ երբեք էլ իրավունք չունեն այն մտցնել իր պետության կազմի մեջ, սեփականացնել:

Այսօր, առավել ևս 100-ամյա հեռավորությամբ, օրինակ, իրավական կլինի չեղյալ հայտարարել Նախիջևանի վզին փաթաթված բռնազավթիչ պայմանագրերը և սրբազան այդ նահանգը վերադարձնել մայր հայրենիքին՝ Հայաստանի Հանրապետությանը:

Ադրբեջանն իր ավագ եղբոր՝ քեմալական թուրքիայի հետ միասին, գիտակցելով խնդրի բարդությունը, որոշեցին թուրքավարի վերաբերվել Նախիջևանի հայ բնակչության հետ: Նրանք սկսեցին այնպիսի քաղաքականություն վարել հայերի հետ, որ վերջիններս հարկադրված լքեցին իրենց բնակավայրերն ու բռնեցին գաղթականության ճանապարհը: Եթե փետրվարյան հեղափոխության օրերին (1917 թ. փետրվար)

¹ «Հայկական հարց. Հանրագիտարան», Երևան, 1996, էջ 351, 4. **Խուդավերդյանի** «Նախիջևան» բառ-հոդվածը:

րի 20-ի մարդահամարով) Նախիջևանում բնակվում էր 53,9 հազար հայ՝ կազմելով ընդհանուր բնակչության 40%-ը, ապա 1926 թ. հայերի թիվը նվազելով հասավ 11,2 հազարի:

Ղարաբաղյան շարժման առաջին իսկ ամիսներին հայերն ամբողջովին լքեցին իրենց բնակավայրերը և ցրվեցին Հայաստանով և Ռուսաստանով մեկ: Նախիջևանը հիմնովին հայազրկվեց: Թուրք-ազերիները տեսնելով, որ այլևս ջարդելու մարդ չի մնացել, սկսեցին վանդալիզմը հայկական խաչքարերի, գերեզմանաքարերի, եկեղեցիների դեմ: Սա ցեղասպանության մի յուրօրինակ եղանակ էր, որը խստագույնս դատապարտվում է միջազգային օրենքներով, բայց ե՞րբ և ինչպե՞ս, դեռևս անհայտության մեջ է:

Ամփոփենք Կարսի պայմանագրի առաջին վեց հոդվածների բովանդակած որոշումները: Այդ հոդվածներով քենալական թուրքիան անտրտունջ մարսելով Հայերի ցեղասպանությանը ապրած ողջ ողբերգությունը, չեղյալ հայտարարել տալով **Սևրի պայմանագիրը, դրանցով իսկ սեփականացրեց Արևմտյան Հայաստանի 290 հազար քառ. կմ տարածքը, Հայոց Կիլիկիան՝ 45 հազար քառ. կմ:** Այդ ամենը քիչ համարելով, թուրքերն իրենց բռնակցեցին (отторгнали - Ի. Վ. Ստալինի բառն է 1945 թ.) Կարսի մարզն իր չորս օկրուգներով (**Կարս, Արդահան, Օլթի, Կաղզվան**)՝ **18 հազար 600 քառ. կմ տարածություն:** Իսկ ի՞նչ անուն տանք այն որոշմանը, երբ Արևելյան Հայաստանի սիրտը համարվող **Սուրմալուի գավառը ևս իր Իգդիրով** նույնպես անցավ քենալականներին (նոտավորապես 5000 քառ. կմ):

Կարծես մորթազերծված վիճակում մահմեդական **մեծ ու փոքր** գիշատիչների միջև բաժան-բաժան էր արվում Հայաստան աշխարհը: Քենալական թուրքիան՝ ավարտելով Աբդուլ Համիդի և երիտթուրքերի ծավալած ցեղասպանության պրոցեսը, ոչնչացնելով իր հպատակության ենթակա հայերի վերջին մոհիկաններին, դատարկելով նաև Արևելյան Հայաստանի մի ստվար հատվածը, ձգտում էր կերածի մարսմանը, բարբարոսության օրինականացմանը: Եվ նա անտրտունջ հասավ իր նպատակին:

Մոսկվայի, առավել ևս անօրինական Կարսի պայմանագրերով թուրքերը պատմության էջերից բնաջնջեցին **Սուդրոսի «գինադադարը», Բաթումի, Բրեստ-Լիտովսկի, Փարիզի ու Լոնդոնի** և վերջապես իրենց ուսերին ծանրացած **Սևրի դաշնագրերը:** Քենալականներն այժմ Հայաստանի գլխին խաղում էին այն դերը, ինչ Արևմուտքը՝ մկրատը ձեռքին կտրատում էր թուրքիայի տարածքը պատերազմից անմիջապես հետո: Միայն մեկ և շատ էական տարբերությամբ: Անտանտի «որոշումները մնացին թղթի վրա», աստիճանաբար վերանայվեցին, բռնակցվեցին, իսկ ռուս-թուրքական անօրինական պայմանագրերը դեռևս չստորագրված՝ արդեն կիրառված էին:

Թուրքիան խլել էր Արևմտյան Հայաստանը, Հայոց Կիլիկիան, Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, որոնց ընդհանուր տարածքը կազմում էր 350 000 քառ. կմ: Չավելշտականն այն էր, որ Ս. Քենալն ու Ք. Կարաբեքիրն իրենց դժգոհությունն էին արտահայտում, քանզի նրանց չէր հաջողվել լեգիտիմացնել Ալեքսանդրապոլի բունեբանգը, չէին հասել իրենց գլխավոր նպատակին, այն է. **«Հայաստան անունը բնաջնջել քարտեզների վրայից»:**

Մուսուլմանական երկրորդ երկիրը, այսպես ասած, փոքր եղբայրը՝ **Ադրբեջանը**, ևս իր ցանկացած համեղ պատառները բռնազավթեց Հայաստան աշխարհից: Կարսի պայմանագրով Բաթուն երևանից խլեց, բռնազավթեց Նախիջևանի գավառը՝ շուրջ հինգ հազար քառ. կմ տարածքով: Բայց դրանով ազերիները չբավարարվեցին:

1921 թ. հուլիսի 5-ին Կրեմլի ոչ միայն լուռ, այլև բարձրաձայնող համաձայնու-

թյամբ, Ռուսաստանի կոմունիստական կուսակցության Անդրկովկասյան երկրային կոմիտեում «քննարկվեց» **Լեռնային Ղարաբաղի**, ասել է թե՛ պատմական Հայաստանի անբաժան մասն հանդիսացող **Արցախի** խնդիրը: Տասնմեկ անդամից բաղկացած չարաբաստիկ այդ կոմիտեոն «որոշեց» (**ամոթ է. ինչ որոշում**) Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում, նրան տալով լայն ինքնավարության իրավունքներ (ինչպես հիմա է խոստանում պատիկ Ալիևը): 1923 թ. հուլիսին Բաթուն որոշեց Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում ձևավորել Լեռնային Ղարաբաղի **ինքնավար մարզ**, մայրաքաղաք - կենտրոն ընտրելով Ստեփանակերտը:

Այս դաժան, անօրինական, հակաազգային, հակահայկական որոշմամբ էլ պատիկ թուրքերը չբավարարվեցին: Նրանք պահանջում էին նաև Շարուր-Ղարալագյազի ողջ գավառը, Սյունյաց աշխարհն ամբողջովին: Ծով արյան գնով հայ ժողովուրդը (զորավար Նժդեհի գլխավորությամբ) կրծքով պաշտպանեց այդ հատվածները և այստեղ գոնե հասան հաջողության:

Թուրքալեզու մահմեդական **«եղբայր»** երկու ժողովուրդների քաղաքական դեկավարներ **Մուստաֆա Քեմալի և Նարիման Նարիմանովի** պահանջները բավարարելուց հետո Կրեմլին մնում էր մտահոգվել նաև Վրաստանի մասին: Չէ՞ որ Ռուսաստանով մեկ տարածված էին վրացի «հեղափոխականներ», որոնք նույնպես ձգտում էին **նոր տարածքների ձեռք բերման:**

Կարսի պայմանագրի 6-րդ հոդվածը որոշում էր **«Վրաստանին զիջել Բաթու՛ւ՝ քաղաքի ու նավահանգստի և սույն պայմանագրի 4-րդ հոդվածում նշված սահմանագծից դեպի հյուսիս ընկած և Բաթումի մարզի բաղադրիչ մասը կազմող տերիտորիայի սյուզերենությունը՝ պայմանով, որ.**

1) սույն հոդվածում նշված վայրերի բնակչությունը վարչական առումով կօգտվի տեղական լայն ինքնավարությամբ, որը յուրաքանչյուր համայնքին կապահովի կուլտուրական և կրոնական իրավունքներով, և բնակչությունը հնարավորություն կունենա հիշյալ վայրերում սահմանելու իր ցանկություններին համապատասխանող հողային օրենք:

2) Թուրքիային կտրվի Բաթումի նավահանգստի վրայով Թուրքիա կամ այնտեղից ուղարկվող ամեն տեսակ ապրանքների ազատ, անմաքս տրանզիտի իրավունք, տեղի չեն ունենա խափանումներ, ապրանքների վրա չի դրվի ոչ մի տեսակի տուրք: Թուրքիային կտրվի Բաթումի նավահանգստից օգտվելու իրավունք և դրա համար նրանից չեն գանձվի հատուկ տուրքեր:

Այս հոդվածը կյանքում կիրառելու համար սույն պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո շահագրգռված կողմերի ներկայացուցիչներից կկազմվի հանձնաժողով»¹:

Վրաստանին Բաթումը վերադարձնելու որոշումը ևս կայացվում էր Հայաստանի հաշվին: Այստեղ արդեն հայտնի էր դառնում, որ Ի. Վ. Ստալինն ու նրա թիմակիցները ի սկզբանե **Սուրմալուն զիջում էին Թուրքիային, որպեսզի դրա փոխարեն ստանային Բաթումի մարզը: Գործարքը կնքվել էր անդրկուլիսներում, դեռևս մոսկովյան ռուս-թուրք բանակցությունների ժամանակ և այժմ հաջողությամբ ապրում էր հաղթական իր վերջավորությունը:** Շարունակենք...

Սև ծովի և նեղուցների միջպետական ստատուտի մշակումը հանձնվելու էր սևծովյան պետությունների կոնֆերանսին (հոդ. 9): 10-րդ հոդվածով պայմանադիր կողմերը պարտավորվում էին թույլ չտալ իրենց տարածքներում այնպիսի կազմակերպությունների կամ խմբերի գոյությունը, որոնք պայմանավորվող մյուս կողմի

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում...», էջ 521:

դեմ պայքարելու նպատակ ունեն: Մնացած հողվածներով որոշվում էին կողմերի քաղաքացիների իրավական դրությունը մյուսի տարածքում, միմյանց քաղաքացիների նկատմամբ առավելագույն բարենպաստման սկզբունքի կիրառում, զիջվող տարածքների բնակչության տեղափոխման իրավունքը, սահմանվում ռազմագերիների և զաղթականների փոխանակման կարգը, առևտրական հարաբերություններ հաստատելու, տնտեսական, ֆինանսական և այլ հարցեր կարգավորելու համար հանձնաժողովներ ստեղծելը, հյուպատոսական համաձայնություններ կնքելը և այլն¹:

Կարսի կոնֆերանսում շոշափվեց նաև ցավալի, սրտամաշ, Հայաստանին առավել ողբերգական կացության մեջ դնող մի խնդիր ևս, որին ծանոթացողները, թեկուզև այսօր, չեն կարող անծծքի կույտեր չբարդել և՛ Թուրքիայի, և՛ նրան սատարող ՌՍՖՍՀ-ի գլխին:

1921 թ. սեպտեմբերի 27-ին, այսինքն՝ Կարսի կոնֆերանսի երկրորդ նիստում, Ռուսաստանի ներկայացուցիչ **Յակով Գանեցկին** առաջադրեց սահմանագծային փոփոխության երկու պահանջ, որոնք չէին բարձրացվել Մոսկովյան կոնֆերանսում: Ըստ երևույթին, Հայիեղկոմի հանձնարարությամբ, Ասքանազ Մռավյանն էր **խնդրել** ոչ ռուս ծագում ունեցող այդ դիվանագետին, բարձրաձայնելու **Անիի ավերակների և Կողբի աղահանքերի խնդիրը՝ պահանջելով գոնե այդ երկու «պստիկ վայրերը» վերադարձնել իր տիրոջը՝ Հայաստանին:**

Յա. Գանեցկին ասաց. առաջինը՝ դա Անիի ավերակների հարցն է, որը «հայերի համար ունի պատմական և գիտական մեծ արժեք», երկրորդը՝ «Կողբի պահանջն էր, որն իր աղահանքերով ներկայացնում է համակովկասյան նշանակություն»²: Գանեցկու առաջարկից շանթահարված Ք. Կարաբեքիրը, խոսելու տոնը բարձրացնելով, պատասխանեց, թե նման պայման չի արձանագրվել Մոսկովայի պայմանագրում, հետևաբար ինքը պետք է հարցում անի Անգորայի (Անկարայի) կառավարությունից, ապա նոր պատասխանի:

Սեպտեմբերի 28-ին գումարված երրորդ նիստում Գանեցկին առաջարկեց կոնֆերանսը նախագահող Ք. Կարաբեքիրին փոխարինել մեկ ուրիշով, ապա պնդեց իր նախկին առաջարկի վրա: Կարաբեքիրին փոխեցին, որը կոնֆերանսականներին հայտնեց, թե Անգորայից դեռևս պատասխան չի ստացել **Անին և Կողբը Հայաստանին վերադարձնելու մասին:**

Հոկտեմբերի 10-ին, կոնֆերանսի հինգերորդ նիստի վերջում, մյուս բոլորի հայտարարություններից հետո Յա. Գանեցկին, Անդրկովկասի միացյալ պատվիրակությունների անունից բարձրանալով ամբիոն, հուզմունքով պահանջ ներկայացրեց, որի բառերը լսվեցին խոր լռությամբ և **«ազդու տպավորություն գործեցին»:**

Նա ասաց. առաջինը Անիի և երկրորդը Կողբի մասին է: Մենք հույս ունենք, որ թուրք պատվիրակությունը դրական պատասխան պիտի տա Անիի մասին Հայաստանի արած պահանջին, որ զուրկ էր ամեն տեսակ զինվորական, տնտեսական և աշխարհագրական նկատառումներից և մեզ համար ունի զուտ գիտական, կուլտուրական արժեք: Վերջին պահին, ինչպես Կողբի, նույնպես և Անիի մասին թուրք պատվիրակությունը մերժողական պատասխան տվեց, առարկելով, թե Անին Ախուրյանի արևմտյան եզերքին է գտնվում, ուստի հայերին տրվելով՝ կխախտվի Մոսկովայի դաշնագրի սկզբունքը:

¹ «Հայկական հարց. Հանրագիտարան», Երևան, 1996, էջ 181: **Է. Չոհրաբյանի** «Կարսի պայմանագիրը» բառ-հոդվածը:

² **Միմեն Կրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1998, էջ 679:

Ահա այս առթիվ Գանեցկու հայտարարությունները. **«Անդրկովկասյան հանրապետությունների պատվիրակությունները ամենախորունկ ցավով արձանագրում են Անիի մասին իրենց արած առաջարկի մերժումը: Անին ներկայացնում է հայերի համար ազգային-պատմական և զեղարվեստական արժեք: Ավելացնում ենք նաև, թե Անդրկովկասի ժողովուրդները այդ մերժումը պիտի ընդունին ճշմարիտ ցավով:**

Կողբի աղահանքերն ունենալով համակովկասյան նշանակություն, որովհետև տարիներով նրանք հայթայթել էին Անդրկովկասի աղի պահանջը, մենք նախապես ներկայացրել էինք Կողբի աղահանքերը Հայաստանին թողնելու մի առաջարկ: Բայց նկատելով այս մասին թուրք պատվիրակության առարկությունները՝ մեր այս առաջարկը փոխել էինք՝ վերածելով այն Կողբի աղահանքերը Հայաստանի կառավարության յեռաշնորհ տալու առաջարկին:

Թուրք պատվիրակությունը ներկայումս մերժում է նաև այս առաջարկը. մենք արձանագրում ենք նշանակություն ունեցող այս խնդրի մասին և անցնում ենք ուրիշ հողվածների քննության»³:

Թուրքական պատվիրակության ղեկավար Քյազիմ Կարաբեքիր փաշան, ի պատասխան Գանեցկու պահանջին, «սրտնեղված տոնով» հայտարարություն արեց, որտեղ ասված է. «Անիի մասին մեր մերժումը Մոսկվայի դաշնագիրը չխախտելու սկզբունքի մեջ է կայանում: Այսուհանդերձ ամեն ապահովություն կտրվի այնտեղ ապրողների և գիտական աշխատանքներ կատարողների համար»:

Մերժելով Կողբի մասին եղած առաջարկները՝ Քյազիմ Կարաբեքիր փաշան հայտարարեց, թե «Կողբը առաջվա պես պիտի գոհացնե Անդրկովկասի պահանջը»⁴:

Այդ մասին **Չավեն Մսրրլեանը** գրում է. «Դուրս գիջողություն չէր ըներ քեմալական Թուրքիան, որ անպատկառօրէն իր յափշտակած հայկական հողերէն չէր ուզեր հայոց, որոնք վարչաձեւ փոխած ըլլալով յուսացեր էին Քեմալի կարծեցեալ փրո-սովետ կեցուածքէն օգտուիլ, զիջիլ նոյնիսկ **Բագրատունեաց երբեմնի մայրաքաղաք հազարումէկ եկեղեցիներու աւերակներով լի միջնադարեան հայկական ժառանգ՝ Անի քաղաքը**, որ հայկական սահմանէն 200 մեթր անդին կը սկսի ներս, դէպի բռնագրաւեալ հողերը տարածուիլ: Անիի աւերակները, որոնք կը գտնուին Ախուրեան գետի աջ ափին, սահմանափակուած են՝ Անի գետակով, Իգածորով, Ծաղկոցածորով եւ Գայլածորով՝ 1500 մեթր բարձրութեամբ եռանկիւնաձեւ հրուանդանի մը վրայ, շուրջ 150 հեքթար տարածութեամբ»⁵:

Թուրքական պատվիրակության Կարսում պահած վարքագծից դժգոհ էին ոչ միայն Անդրկովկասի պատվիրակները, այլև ՌՍՖՍՀ-ի ներկայացուցիչը:

Կոնֆերանսի օրերին Գանեցկին արտաքին գործերի ժողկոմ Գ. Վ. Չիչերինին հեռագրում էր. «Թուրքերը հանձնաժողովում խիստ պահանջկոտ են, Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ անվստահության տպավորություն են թողնում և փորձում են բոլոր հարցերը լուծել ստրատեգիական տեսանկյունից... թուրքերի վարքագիծը կովկասյան ընկերների վրա ծանր տպավորություն է թողնում»⁶: Ապա ավելացնում է. «Կարսի բանակցությունների ընթացքում Անդրկովկասյան սովետական հանրապետությունների պատվիրա-

¹ **Միմեն Կրացյան**, նշված աշխատությունը, էջ 682:

² Տե՛ս նույն տեղում:

³ **Չավեն Մսրրլեան**, Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի դաշնագրերը, 1920-1923 թթ.), Պէլրուք, 1979, էջ 136:

⁴ **ՉՍՄ** Հոկտեմբերյան հեղափոխության կենտրոնական պետական, պատմական արխիվ, ֆոնդ 40/113, ցուցակ 3, գործ 19, թերթ 88:

կուրթունքները միշտ հաշվի էին նստում թուրքերի ցանկությունների հետ և փոխադարձ զիջումներ կատարելու պատրաստակամություն ցուցաբերում, սակայն թուրքերը բոլորովին հաշվի չէին նստում նրանց միանգամայն արդարացի և ընդունելի՝ թուրքիայի շահերին չվնասող պահանջների հետ»: Այդ պատճառով էլ ռուսաստանյան պատվիրակության ղեկավարը դառնությամբ գրում էր. **«Թուրքերի վարքն այնպիսին է, որ ակամա քեզ հարցես տալիս՝ ինչո՞ւ մենք նրանց համար այնքան զոհաբերություն կատարեցինք»**¹:

Նորահայտ փաստաթղթերի ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց այն եզրահանգմանը, որ Խորհրդային Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Գ. Չիչե-րինի և քաղբյուրոյի ու կենտրոնական կոմիտեի միջև քեմալական Թուրքիայի նկատմամբ գոյություն ունեին տարբեր տեսակետներ: Այդ փաստաթղթերը բացահայտում են բանակցությունների անդրկուլիսյան խաղերը և պատահական չէր, որ դրանք սկզբից մինչև վերջ ընթացան հակահայկական ոգով՝ կանխորոշելով թուրքական պատվիրակության հաջողությունը: Լենինը, Ստալինը, Տրոցկին հակառակ Չիչերինի արդարացի, օբյեկտիվ տեսակետին, թելադրում էին նրան «հեղափոխության դրոշակակիր քեմալական Թուրքիայի պահանջները ինչ գնով էլ լինի բավարարել»:

Կարսի պայմանագրով Խորհրդային Հայաստանի կառավարությունը պայմանագրի հաստատումից հետո դիվանագիտական ներկայացուցչություն հաստատեց մարզկենտրոնում, որը գործեց մինչև 1922 թվականի նոյեմբերի 22-ը, այնուհետև փակվեց: Երևանի մեջ Թուրքիայի ներկայացուցչությունը գոյատևեց մինչև 1923 թ. սեպտեմբերի 4-ը, և այն նույնպես հեռացավ, այսինքն՝ մեխանիկորեն փակվեց:

Կարսի դաշնագիրը գործածության մեջ մտավ 1922 թ. սեպտեմբերի 11-ին, երբ, ըստ նախնական որոշման, Երևանի մեջ տեղի ունեցավ փաստաթղթերի փոխանակում:

Չավեն Մսրրլեանը, ամփոփելով այս «թատերախաղի» արարողությունը, եզրափակում է այսպես. «Արդարև պայմանագրով վերջ կը դրուեր Թուրքիոն եւ Անդրկովկասեան սովետական հանրապետութիւններու, մանավանդ Սովետական Հայաստանի միջեւ ծագող ընդհարումներուն, որոնք արդիւնք էին 2 դեկտեմբերի 1920-ի Ալեքսանդրապոլի նուստացուցիչ դաշնագիրը պարտադրելու թրքական ջանքերուն: Միւս կողմէ, վերջ կը դրուեր քեմալականներու բռնագրաւչական ձգտումներուն՝ Անդրկովկասի մէջ: Սակայն, դաշնագիր մըն էր, որ կը վաւերացնէր պատմականօրէն հայկական բռնագրաւեալ հողերու Թուրքիոյ փոխանցումը: **Խաղաղութիւն էր հիմնուած անարդարութեան վրայ, որ մեզի՝ հայերուս անընդունելի է եւ կը մնայ, որքան ատեն որ Արարատը, Անին, Կարսը, Կողբը, Սուրմալուն եւ այլն կը մնան թրքական լուծի տակ»**²:

Բագրատ Արմենակի Բորյանը (1882-1938), որը եղբայրն էր Բաքվի 26 կոմիսարներից մեկի՝ Ա. Բորյանի, պատասխանատու աշխատանքներ է կատարել Մոսկվայում, եղել էր ԽՍՀՄ ԿԳԿ անդամ, գրել էր երկհատորանոց աշխատություն և դրա համար **վճարել կյանքով**: Այդ աշխատության երկրորդ հատորում Կարսի պայմանագրի մասին կարդում ենք. **«Ավելի ծանր և ավելի աննպաստ խաղաղություն, քան Կարսին է, պատմության էջերում հազիվ թէ կարելի լինի գտնել**: Խորհրդային Հայաստանի համար այդ ծանր խաղաղությունը, որի նմանը պատմության մեջ գոյություն չի ունեցել, թելադրված էր **«հեղափոխական»** Թուրքիայի կողմից, հեղափո-

¹ **Ա. Ա. Եսայան**, Կարսի պայմանագրի 50 տարին («Լրաբեր հասարակական գիտությունների»), 1972, N 7(355) հուլիս, էջ 66-67:

² **Չավեն Մսրրլեան**, նշված աշխատությունը, էջ 140:

խական պատերազմի մեջ հաղթանակած հայ աշխատավոր ժողովրդին, որը հեղափոխական խանդավառությամբ աջակցեց դաշնակցականների կառավարության պարտությանը և «բոլշևիկյան» Թուրքիայի հաղթանակին»¹:

Նա շարունակում է. «Կարսի պայմանագիրն ամենավատթարն ու ամենախայտառակ խաղաղությունն էր Հայաստանի համար»²: Կամ. **«Կարսի մեջ խորհրդային արևելյան քաղաքականության ծանապարհին և ի շահ համաշխարհային խաղաղության վաճառքի դրվեց Հայաստանը»**³:

Գարրիել Լազյանը «Հայաստանը և Հայ դատը» աշխատության էջերում տակավին 1941 թվականին Կարսի պայմանագրի մասին գրում է. «Ռուսաստանը Կարսի դաշնագրով ահաւոր հարուած մը տուաւ Հայաստանին անոր հողերը նուէր տալով զինակից Թուրքիոյ: Կ'ըստի թէ Ասքանազ Մուսեան չէր ուզած ստորագրել դաշնագիրը եւ Ռուսաստանի պարտադրանքով ստորագրած էր. ժամանակ մը ետք խորհրդաւոր պայմաններու տակ անձնասպան եղաւ Մուսեան: Առաջին Համաշխարհային պատերազմին հողային այնքան մեծ կորուստներու ենթարկուած Թուրքիան, հողերու կը տիրանար բացառապէս Հայաստանի ճակատին վրայ եւ այս՝ շնորհիւ ռուսերորք բարեկամութեան»⁴:

Ռուբենը (Ռուբեն Տեր-Մինասյան) հայ ազատագրական շարժման վետերաններից էր: Նա (1882-1951) եվրոպական փայլուն կրթություն էր ստացել, երկար ժամանակ աշխատել էր Կարս քաղաքում, հեղափոխությունից հետո զբաղեցրել Առաջին համառապետության գինվորական նախարարի պաշտոնը: Ռուբենը հեղինակ է մի շարք աշխատությունների, որոնց մեջ շատ արժեքավոր է **յոթ գրքից** բաղկացած «Հայ հեղափոխականի մը հիշատակներ» խորագրված նրա վավերական հուշագրությունը:

Ահա Ռուբենի կարծիքը 1920-1921 թթ. դեպքերի, հատկապես Կարսի պայմանագրի վերաբերյալ: Նա գրում է. «Յետոյ 1919-ին գետին պատրաստվեցավ թուրք-բոլշևիկյան գործակալութեան, որը յանգեցաւ Մոսկուայի, Բագուի համաձայնութեանց: Մէկ կողմէ իթթիհատական պարագլուխներ Թալաթ, Ճեմալ, Էնվեր փաշաները, Տրք. Նազըմ, Քիչիւք Թալաթ, Պեհեմետին Շաքիր եւ ուրիշներ, միւս կողմէ քեմալական Թուրքիոյ վարիչներ Պեքիր Սամի, Ալի Ֆուատ եւ այլ համաձայնութիւն կայացուցին Մոսկուայի եւ Բագուի մէջ գործակցելու բոլշևիկներու հետ, որու փոխարէն Հայաստան պիտի վերացուէր եւ անոր ճանապարհները պիտի յանձնուէին Թուրքիոյ: Եւ մինչ Հայաստանի կառավարութիւնը կը ճգնէր հավաքելու իր կորած նահանգները, այդ երկու ուժերը՝ թուրքն ու բոլշևիկը, կ'որոշէին եղածն ալ խլել Հայաստանի ձեռքէն:

1920-ի ամառը վայրկեան հասած նկատուեցաւ վերջ տալու Հայաստանի անկախութեան եւ զայն բաժնելու ռուսներու եւ թուրքերու միջեւ: Քեազիմ Քարապէքիր փաշան հնչեցուց ահազանգը՝ խնդրելով բոլշևիկներէն ամեն գնով առաջ շարժուելու եւ գրաւելու Նախիջեւանը, Խալիլ փաշան թրքական զօրքերով ուղղուեցաւ Շուշիի վրայով Չանգեզուր եւ բոլշևիկ Վէլիքանովն է, որ ռուս զօրքերը ուղղեց Հայաստանի վրայ, մէկ մասը դէպի Դիլիջան, միւս մասը Ղարաբաղ-Նախիջեւան: Երբ Քարապէքիրի բաղձանքը կատարուեցաւ բոլշևիկներու կողմէ, ինքն ալ հարաւէն շարժուեցաւ եւ գրաւեց Ղարսն ու Սուրմալուն: Ի զուր անցաւ փոքրիկ Հայաստանի պայքարը: Հայաստան վերացաւ եւ ստեղծուեցաւ Խորհրդային երկիր, որու սահմանը Արաքսն է, այսինքն՝ Սուրմալուն թողուած է տաճի-

¹ **Ե. Ա. Борян**, Армения, международная дипломатия и СССР, Москва, 1929, том II, стр. 163-164.

² Նույն տեղում, էջ 300:

³ Նույն տեղում, էջ 164:

⁴ **Գարրիել Լազեան**, Հայաստան եւ Հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, «Աղանա», 1991, էջ 292 (երրորդ հրատարակություն):

կին եւ այսօր Թուրքիան տեր է Մասիսի երկու դռներուն: Այն, որուն Տաճկաստան ձգտեցաւ դարեր շարունակ եւ չի կրցաւ ձեռք ձգել ոչ պարսիկներէն եւ ոչ ալ ցարեական Ռուսիայէն, այսօր տիրացաւ շնորհիւ բուլշեւիկներուն»¹:

* * *

Կարսի պայմանագրի ստորագրումից 4 օր հետո, այսինքն՝ 1921 թ. հոկտեմբերի 17-ին, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն լսեց Ասքանազ Մռավյանի զեկուցումը Անդրկովկասի հանրապետությունների Բաքվում գումարած խորհրդակցության և Կարսի կոնֆերանսի մասին: Գրեթե ձևական բնույթ կրող այդ համաժողովում շատ քիչ ելույթներ եղան, քանզի բոլորը սրտի խորը ցավով էին ընկալել ընդունված որոշումները, հատկապես **Սուրմալուի գավառի** բռնագավթման և ԱՄԻի ավերակները ետ չտալու որոշումները: Մռայլ էր **Ալեքսանդր Մյասնիկյանի** ելույթը, որին հաջորդեց որոշման ընդունումը, որը **հավանություն** էր տալիս պատվիրակության գործունեությանը²:

ՀԿԿ Կենտկոմը Անդրֆեդերացիայի ստեղծումից հետո, այսինքն՝ 1922 թ. մարտի 19-ին կրկին անդրադարձավ Կարսի պայմանագրի վավերացման հարցին և որոշեց առաջիկայում դրական լուծում տալ այդ խնդրին³: Սակայն, երբ Անկարայում Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Աբիլովն այդ մասին հայտնեց Թուրքիայի արտգործնախարար Յուսուֆ Քեմալին, ապա վերջինս պնդեց, թե նման վավերացումը չի բավարարում Անկարային, ուստի այն պետք է հաստատվի զատ-զատ հանրապետությունների համապատասխան ատյաններում⁴:

«Ադրբեջանի և Վրաստանի հետ պայմանագրերը մեզ հատկապես չեն հետաքրքրում, - հայտարարեց Յուսուֆ Քեմալը: - Ինչ վերաբերում է Հայաստանի կողմից պայմանագրի վավերացմանը, ապա դա կարևոր է և մեզ խիստ հետաքրքրում է...: Ձեզ հայտնի է, որ մենք հրավիրված ենք արևելյան հարցի վերաբերյալ կոնֆերանսին: Մինչդեռ Արևմուտքում հայկական հարցի շուրջը խոսակցություններ և քննարկումներ են տեղի ունենում: Հնարավոր է, որ այդ կոնֆերանսում Անգլիայի կամ Ամերիկայի կողմից առաջ քաշվի այդ հարցը: Այն ժամանակ, մենք մեր ձեռքում ունենալով պայմանագրեր ինչպես հայ դաշնակցականների, այնպես էլ հայ կոմունիստների հետ, կարող ենք հանդես գալ մեր շահերի պաշտպանությամբ: Իսկ եթե Կարսի պայմանագիրը վավերացվի ոչ թե յուրաքանչյուր հանրապետության կողմից առանձին-առանձին, այլ միության խորհրդի կողմից, ապա այդ ժամանակ կոնֆերանսում կարող են պնդել, թե դա հայ ժողովրդի կամքով չի տեղի ունեցել, այլ մյուս երկու հանրապետությունների ճնշմամբ»⁵:

